



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ,
ԵՐԵՎԱՆ 1977

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

Դ Ե Ր Ե Ն Ի Կ
Դ Ե Մ Ի Ր Ճ Յ Ա Ն

Ե Ր Կ Ե Ր
Ե Ր Կ ՈՒ Գ Ր Ք Ո Կ

Մ Ա Ն Ր Ա Պ Ա Տ ՈՒ Մ Ն Ե Ր
Ե Ր Գ Ի Ծ Ա Ն Ք

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

Դ Ե Ր Ե Ն Ի Կ
Դ Ե Մ Ի Ր Ճ Յ Ա Ն

Ե Ր Կ Ե Ր
Ե Ր Կ ՈՒ Գ Ր Ք Ո Կ

Գ Ի Ր Ք Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Մ Ա Ն Ր Ա Պ Ա Տ ՈՒ Մ Ն Ե Ր
Ե Ր Գ Ի Ծ Ա Ն Ք

ԽԱՂ

Գյուղացին ինչպե՞ս է անցնում քաղաքի փողոցներով: Արդյոք մտի՞կ է տալիս շորս կողմը, մի բան տեսնո՞ւմ է... Կարծես այո, կարծես՝ ոչ: Աչքերի մեջ ինչ-որ մշուշ կա, դեմքը կենտրոնացած, մտքերով ծանրաբեռնված: Ասենք նա գործով է եկել քաղաք:— Մախի, փոխանակի՝ գնա տուն: Թերևս միայն այդ:

Բայց մի անգամ մի գյուղացի խուրջինն ուսին՝ կանգնել էր մանկապարտեզի առջև:

Դասամիջոց էր կարծեմ: Բայց ո՞վ գիտե, գուցեև դա՞...

Երեխաները դուրս էին թափվել փողոց ու վժվժում էին մայթին թափած աղյուսի ու ավազի վրա: Գյուղացին աչքերը լարած հետաքրքիր հետևում էր նրանց: Երեխաները գոգնոցներում միմի աղյուս, ոմանք էլ իրենց փոքրիկ թիակներով ավազը պատգարակի վրա ածած՝ կրում էին բակը, վարպետների մոտ: (Ներսը ինչ-որ տուն էին շինում):

— Ի՞նչ կար հետաքրքիր այդ մանուկների խա՞ղի, թե «դասի» մեջ:

Շատ բան: Ախր շինարարություն՝ քաղաքացի թե գյուղացի հասակավորների ձեռքով նա շատ էր տեսել և էլ չէր նայում: Եվ որ դպրոցի երեխան շինարարություն խաղա, այդ էլ էր տեսել շատ: Բայց որ մանուկը շինարարության մասնակցի անմիջապես...

Ես չէի նկատել: Բայց նա նկատեց...

Գյուղացին մանր ու շարաճճի ժպտում էր: Հետո գլուխը թափ տվեց ու գնաց իր բանին: Նրա աչքերում սրբվել էր սովորական մշուշը՝ աչքերը պայծառ էին, իմաստավոր:

ՍՏԵՂԵԱԳՈՐԾԸ

— Աերոպլանը թռա՛վ, աերոպլանը թռա՛վ...— ճշում էր մի երեխա փողոցում և այնպիսի ահազանգի ձայնով, կարծես երկրագունդը թռավ:

Դեմքը շառագունած, աչքերը կրակված, հիացած՝ կասես հրաշքի էր հանդիպել:

— Աերոպլանը թռա՛վ, աերոպլանը թռա՛վ...— գոռում է դողալով հուզմունքից, ականջիս տակին վազվզելով դես ու դեն:

Աերոպլանն էլ ի՞նչ է՝ մի ծտի պես ծալած թուղթ, որ երբ փոքրիկ օդաչուն գցում է մի մետր վեր՝ մի վայրկյան թռչում է և իսկույն հավորեն (այլ ոչ արծվորեն) իջնում գետին ու մնում տըպկած:

Երբ ականջս ծակելով մի անգամ էլ ճշաց «աերոպլանը թռավ»:

— Ո՛ւր է թե թռավ,—ասի ես,— տե՛ս, տպկել է գետնին:

Տղան ուղղակի հանգավ կրակի պես:

— Յա՛... դրո՛ւստ որ...

Ու այնպես կտորած ժպտով, շփոթ, մոլոր նայեց գետնին, շուրջը, հետո ինձ՝ կարծես ուզում էր փնտրել կորած իսկական մի աերոպլան:

Ձկար աերոպլանը, շկար հրաշալի արծվային սլացքը արմաստ լեռներից ու փերուզ ծովերից վեր: Կար մի թղթի ճմլած կտոր:

Ո՛ւ, փոքրիկս, ներիր, որ քեզ խաբեցի — աերոպլանը կա՛ր, աերոպլանը կա՛: Դա քո ստեղծագործ ոգին է, որ ստեղծեց:

Եվ աերոպլանն այդպես էլ ստեղծված է...

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՈԾԸ

Արդյոք ո՞րն է լինելու սովետական ոճը:

Դա իսկույն կզգաք՝ եթե մի քիչ երկար աչքերդ փակեք ու նայեք:

Ձեր տեսողական դաշտում կրանկի կայծակնային զիզազանների,

սլացիկ գծերի մի հսկայական փոթորիկ, հետո հետզհետե կպարզվի գերակշիռ գծերի լեյտմոտիվը, և ձեր առջև կկանգնի մի հույսահապ ամբողջություն:

Դեպի լայնքը՝ շեշտակի:

Դեպի վեր՝ շեշտակի:

Դա գործարանաշարանների, հեռացող ջրանցքների, կամուրջների, հիդրոպատավարների երկայնաձիգ տողերն են:

Համարձակ դեպի հեռուն:

Որոնք պիտի մխրճվեն կոլտնտգիզանտների, հսկայական կամբինատների, փախչող դաշտերի միագծություն ոլորտներում. մյուս կողմից՝ տիտանական էլեատորների, ռադիոկայանների երկնակարկառների սլացիկ ծառացումը:

Խիզախ՝ դեպի երկինք:

Նրա գույների մեջ պիտի տիրապետի հնոցների ծխասնն ու բոցակարմիրը, հանքահորերի, երկրային ընդերքի լավայական ալը պողպատի զուսպ սառնաշողյունի հետ:

Նրա ձայների մեջ՝ միլիոնավոր ոտքերի անլուելի տրոփը պիտի հիշեցնի անխոնջ օվկիանի հավիտենական դղորդը եզերքներին:

Նա սիմֆոնիկ է լինելու գերազանցապես և մշտարնույթը հերոյիկ ու ֆուզայիկ, ուր պիտի մոնչան համաշխարհային սոցիալական մրրիկները, փոթորկալի ֆորտիսիմոնները, կայծակնային կոն-ֆուռկոնները, ուր նորանոր ուժերի կուտակները անհամբեր զեղումներով պիտի մակընթանան ցնցահարող սինկոպներով և ուր գիզանտ-մուրճերի մարտելներով համերաշխված անդանտներին պիտի ընկերակցի հավիտենական քաղաքների կոնտրաբասների անլուելի լեգատոն:

Ալեկոծ, հուժկու մրրկահույզ, բայց հաղթական հանգիստ:

Շարունակ անավարտ, մշտանորոգ, վերակառուցվող ինչպես բնությունը՝ շինանյութերի կուտակումներից խոյացած շենքերը գոտկող տախտածեղունների զիզազանները պիտի մտնեն նրա ոճի մեջ իբրև հավերժ կառուցվող կյանքի սիմվոլ գիծը:

Ինչպես օվկիանը, ինչպես լեռնագագաթը, ինչպես բնությունը նա՛ այդ ոճը կլինի պարզ, մոնումենտալ, վսեմ:

ՄԱՅՐԸ

Անցնում էի գետափով: Մարգագետնի վրա մի քանի կով ու եզներ էին արածում: Դալար խոտը ցողաթուրմ էր ու առատ: Եվ անասունները մեծ ախորժակով ծամում էին երկրի հյութեքով լի խոտը: Նրանք ցրված էին և գլուխները կախ:

Նրանցից երկուսը միայն կանգնած էին մեկուսի: Մինը երբեմն դունչը քսում էր դալարին, թեթև պոկում ու ծամում: Իսկ մյուսը լիզում էր նրան: Լիզում էր գավակը, մեջքը, դունչը: Ապա զազարում էր, նայում նրան, կրկին լիզում:

Մյուսը կարծես չէր նկատում այդ:

Մի փոքր ուշով նայեցի նրանց երկուսին:— Դե, իհարկե, մայր ու զավակ էին...

Եվ նոր նկատեցի — զավակն ավելի քնքուշ մորթ ուներ և ավելի միամիտ, անփորձ աչքեր... Հասել էր, մեծացել, մարմնով համարյա հավասարվել մորը: Եվ արդեն վերջին օրերն էին՝ շուտով նա կգնար իր սայլին, լծին ու ճիպոտին: Իր անուրախ կյանքը: Այլևս կարիք չկար նրան խնամելու, հսկելու, անգամ լիզելու: Բայց... մայրական սիրտ է, ասում է չլինի՝ թե մի բանի կարիք է զգում, չլինի՝ թե... Մի խոսքով՝ չի համբերում, կրկին, մի փոքր, էլի՞ գուրգուրում է, շտկում մազերը, լիզում...

Քիչ է մնում լացդ գա խանդաղատանքից...

ԳԱՐՈՒՆ

Բարձրանում էի փողոցով դեպի բլուրները:

Արև օր էր և լուռ շորս կողմս: Հագիվ մի որևէ անցորդի քայլեր վրդովում էին փողոցի լուռությունը: Հեռվից միայն լսվում էին ծտերի մոլեգին դժժոցը և երեխաների սուր կանչերը: Առուն թրջում էր, զարթնած հողի հոտն էի առնում:

Հարթ մայթի վրա երեխաները, դե նրանք կլինեին, ուրիշ էլ ո՞վ, կավճով գրել էին՝ գարուն:

Անհուն զգացմունքով կարդացի այդ բառը և լցվեցի նրա

իմաստով: Ի՞նչ լավ էին արել, գրել էին՝ գարուն: Դա շատ գեղեցիկ բառ է, այո, դա ամենալավ բառն է աշխարհիս երեսին: Դա մանկությունն է, պատանեկությունն, դա սե՛ր է, կյանք է, ուրախություն:

ԾԱՆՃԸ

Նա վերջինն է իմ բնակարանում: Ինչպես է վերապրել նա դժնի դեկտեմբերը, ինչպես է հայտնվել այս հունվարին՝ անհասկանալի է: Բայց նա ապրում է և թույլում սենյակից սենյակ, պատուհանից պատուհան: Մեկ նստում է գրքիս վրա, թևիս, մեկ ճախրում է օդում: Բայց մեկ էլ որ չի՞ գալիս՝ բը՛ր՛զ՝ ականջիս մոտով սլանում անցնում, իսկույն երևակայությանս մեջ պատկերվում է ամառը, անտառի մի ոսկելույս բացատ, ծառերի շշուռը, մեղուների բզզունները, գետի խշշոցը և հեռավոր կանչը՝ չգիտես հովվի՞, թե ինչ դաշտային աշխատողի...

Խոտերում օրորվում են ծաղիկները, վերևից ժպտում է երկնքի խոր, թավիշ կապույտը:

Եվ այսբան պատկերները զարթեցնում է իմ մեջ մի ճանճ...

Ո՛չ, չի նեղացնում, ուրախացնում է ինձ, գլուխը քա՛րը, թուղ ապրի այս մեկ ճանճը:

ԼՈՒՍԱՆԿԱՐ

Անցնում էի գավառական քաղաքով, գնացի այցելության մի վաղեմի բարեկամ լուսանկարչուհու: Նա ինձ հետ շատ էր մտերիմ եղել իմ պատանեկության խենթ օրերին:

Օրը ամպամած էր, մռայլ, երբ ձգտում ես մի հարմարավետ, մտերմիկ անկյան:

Մտա ընդունարանը: Նա ինձ ընդունեց այն մտերիմ, բարի

ժպիտով և մեղմաձայն բարևով, որ իսկույն շերմացնում է մար- գու հոգին և հանգստացնում է, տրամադրում:

— Ես իսկույն կգամ, կխոսենք երկար, մի՛ ըրպե,— ասաց բարեկամուհիս և դուրս գնաց ընդունարանից:

Ես մնացի՛ սպասելով նրան:

Ընդունարանը մի կռկիկ սենյակ էր, մեղմ լուսավորված ու խաղաղ: Գեղեցիկ լուսանկարներ, բարեկամուհուս խոտապահանք ճաշակով՝ հատուկ ընտրված իր համար, պատերից խաղաղ նա- յում էին և կենդանացնում սենյակի լուսթյունը:

Մի լուսանկար նրանցից գրավեց ուշադրությունս: Դա մի դե- ուհաս կին էր: Գեղեցիկ էր նա՝ շեմ կարող ասել: Բայց որքան ուշով ու երկար նայեցի — վերին աստիճան հետաքրքրական դա- ուավ և գրավիչ: Եվ կանացի էր և արծվենի, հպարտ: Նա նայում էր՝ ճակատը մի փոքր բարձր պահած: Բայց ինչ որ ամենից ավելի գրավիչ էր նրա մեջ, — դա անհուն մտերմությունն էր, ուղղակի հարազատությունը:

Ես այնպես զգացի, որ նրա հետ կարելի էր դիմանալ կյանքի բոլոր ձախորդություններին: Նրա հետ կարելի էր ստեղծագործել, տանել պայքարի բոլոր պերիպետիաները: Նրա հետ կարելի էր աշխարհն ըմբռնել իր ողջ խորությամբ: Տխուր օրեր չէին լինի: Նա ինքը մի անսպառ ուրախություն կլիներ... Եվ ի՞նչ կլինի՝ եթե պատահեմ նրան... Հը՞...

Երբ բարեկամուհիս ներս մտավ՝ ես հայացքս չհեռացնելով լուսանկարից՝ վեր կացա և մոտեցա պատին.

— Սա ի՞նչ լուսանկար է:

— Ախ, նա ձեր ուշադրությունը գրավե՛ց...

— Նայում եմ և ուղղակի կասեմ. արտակարգ դեմք է: Ի՞նչ խորակտեր:

— Այո, վսեմ խորակտեր և սրտալի մարդ, այն որ ասում են՝ իսկական մարդ, հազվագյուտ:

— Եվ գեղեցիկ, — հարեցի ես:

— Այո՛, նա ափսոս անցյալ տարի վախճանվեց...

— Ա՛խ, նա մեռա՞ծ է...

Անցնում էի Թբիլիսիի աղմկալի փողոցներից մեկով: Մի ցանկապատ բակի մեջ հավաքվել էր երեխաների բազմություն: Տան կենդանիքը դուրս էին եկել պատշգամբ և զսպված ժպիտե- ռով նայում էին ներքև: Երեխաների բազմության միջից, որ զար- մացած և զվարճանալով նայում էր բակում կատարվող մի բանի՝ երբեմն լսվում էր մի քրքիչ ու իսկույն դադարում:

Ներս մտա բակը: Մի հասակավոր կինտո կրկին կինտոյա- կան կարտուզ գլխին, կողերյոկը ականջին թեքած, ալիխառն կարճ խուզած կզակով, արխալուղով ու լայն շավարի մեկ տոտը բաց թողած, մյուս տոտը գուլպայի մեջ, ուսից կախել էր շարմանկան և պտտեցնում էր կոթը:

Բայց ի՞նչն էր զվարճալին և հետաքրքրականը՝ շարմանկան ձայն չէր հանում: Ոչ մի հնչյուն: Անգամ չէր լսվում շարմանկայի կոթի պտտվելու ֆստոցը, իսկ ինքը՝ կինտոն՝ լուռ էր և լուրջ:

Չէր նայում ոչ ոքի, չէր արձագանքում, ոչ մի նկատողության, ոչ մի ծիծաղի: Վերևից երբեմն դրամներ էին նետում ներքև, նրա ոտների մոտ: Չէր նայում:

Չես հասկանում չէ՞ր կարողացել, թե՞ չէր կամենում նորոգել կտորված շարմանկան, կատա՞կ էր անում այնպիսի լուրջ դեմքով: Եվ ի՞նչ էր նվագում՝ լուսթյուն, թե՞ անցյալ:

Բայց նրա անձայն շարմանկայի վրա դեռ մնում էին ծաղկա- վոր նախշերը, իսկ իր՝ կինտոյի հագուստի, կեցվածքի և կոմիկ- լուրջ դեմքին՝ հին օրերի հումորն ու աշխույժը:

ՀԱԿԱՌԱԿՈՐԳՆԵՐ

Նրանք, այդ երկու երաժիշտները՝ իրար թշնամի էին: Ավելի ճիշտը՝ միևն էր թշնամի մյուսին, անտաղանդը և անհաջողակը: Մյուսը՝ տաղանդավորը պաշտպանվում էր միայն իր նախանձորգի հարձակումներից, ու երբեմն էլ, երբ սա շափից գուրս էր գալիս և փրփրալի կատաղությամբ շարախոտում էր իր մասին, տաղան-

դավորը մի զայրալի խոսք էր ասում, թերևս վիրավորիչ խոսք:

Անտաղանդը զրպարտում էր իր արվեստակցին, թե սա է պատճառն իր անհաջողության: Հարձակվում էր նաև հասարակության վրա, որ սա կողմնակալ և նախապաշարյալ վերաբերմունք ունի դեպի տաղանդավոր երաժիշտը և անարդար է դեպի ինքը:

Բայց, ինչպես միշտ, բնությունն ու հասարակությունն անտարբեր են այդ գանգատների ու հարձակումների դեմ: Եվ ահա տաղանդավորը բարձրանում էր օրեցօր դեպի իր փառքի գագաթնակետը, մինչ անտաղանդը տանջվում էր անփառունակ: Առաջինին հոբելյան տվին, համազգային պարծանք կոչեցին:

Անցավ ժամանակ, և տաղանդավորը մեռավ: Համազգային սուգը, որով արձագանքեց հասարակությունը այդ թանկագին կորուստի համար՝ ծանր ու չափազանց ուռեցրած թվաց անտաղանդին:

Սակայն մի գաղտնի ուրախություն սողաց նրա սիրտը: Ա՞, տաղանդավորը գնաց, և ասպարեզը մնաց... երևի՛, արդե՛ն... անտաղանդին: Կարծես եկավ ժամանակը, որ հիմա էլ սա ճաշակի փառքի երջանկությունը: Եվ այդպես էլ պիտի լիներ անշուշտ: Չէ՞ որ ասպարեզն էլ թափուր է:

Բայց օրեր անցան, մեջ ընկավ անտաղանդը, ջանք թափեց և սպասեց հետևանքի:

Ոչ մի հետևանք: Հասարակությունն անտարբեր էր, ինչպես և առաջ:

Տաղանդավորն էլ մեռավ, բայց անտաղանդը երջանկություն ձեռք չբերեց: Անտաղանդություն՝ ինչպես մշուշ՝ եկավ ավելի թանձր պաշարեց անտաղանդ վերապրողին:

Տխուր, անմխիթար օրերը շարունակեցին անցնել անպտուղ, անհետևանք, անփառունակ...

ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ջլապինդ բազուկները լարած, քլունգը պրկուն ձեռքերում շարժելով նա զարկում էր սարի կրծքին, շարժում, տեղահան էր ուզում անել մեծ քարաբեկորը:

Նա մերկացել էր, և ուռուցիկ կրծքի վրայով կաթում, գլորվում էին քրտնքի կաթիլները: Իսկ շառագույն դեմքը ժպտում էր:

Երբեմն էլ ատամները պինդ սեղմելով կծկում էր դեմքի մկանները, զայրանում և մոնչալով քլունգը ետ էր տանում ու ուժգին հարվածում սարի կրծքին: Ապա կրկին խաղաղ քանդում էր քարաբեկորի շուրջը պնդացած քարահողը:

Երբեմն էլ կատակով փնթփնթում էր ու երգում:

Մոտեցա.

— Հը, դժվա՛ր է:

Զդադարեց հարվածելուց: Միայն հարվածների ոխթմի միջով դեպի իմ կողմը նետեց.

— Բա ի՞նչ... զոռո՛վ կլի, խաթրով չի՛ ըլի:

— Աշխատա՞նքը:

— Աշխատանքը: Խաթրով չի՛ տա, զոռո՛վ կտա:

— Ծշմարիտ է:

— Բա՛... կովե՛նք, որ վերցնենք:

Ասաց, ուժգին հարվածեց ու երգեց, ինչպես կռիվ մտնող մարտիկ:

ԵՐԱԺԻՇՏ

Նստած էր երաժիշտը դաշնամուրի մոտ և շարադրում էր մի վսեմ սիմֆոնիա: Ի՞նչ վսեմ. մի նորօրինակ, ինքնատի՛պ ստեղծագործություն: Ալեգորոն հյուսվում էր անդանտեի հետ, ընդհատվելով մի ինչ-որ շարաճճի սկերցոյով, կրկին վերադառնում հիմնական շափին, որպեսզի հանկարծ գրոհի մի բուռն պրեստոյով: Քրտինքը հեղեղում էր ստեղծագործողի ջերմ ճակատը, նա հևում էր և գրում, գրում:

Եվ նա չէր նկատել, թե ինչպես իր հետևից թաքուն ներս էին մտել մի խումբ քննադատներ, որ դառն ճղավոցներով խորհրդակցում էին երաժշտի սիմֆոնիայի մասին: Առավելապես նրանք զայրացած էին այն խրոմատիկ զամմաներից, որ զլխավոր թեմայից անկախ ընկերակցում էին սիմֆոնիային և խլացնում այն:

Անդանտեն շատ էր անհարմար կցվում ալեգրոյին, սկերցոն խան-
գարում էր նրա վեհաթյանը՝ միջամտելով տեղի-անտեղի: Իսկ
այդ խրոմատիկ գամմանե՛րը, որ խենթացնում էին մարդու:

Հանկարծ քննադատներից մեկը բռնեց երաժշտի ականջից.

— Սա ի՞նչ սկերցո է: Ո՛ւր է քո անդանտեն:

Երաժիշտն ականջն ուսին քսելով ազատեց և ետ դարձավ
դեպի քննադատը: Բայց այդ վայրկյանին մյուսներն սկսեցին քա-
շել նրա ականջը և ճղավել:

— Ինչո՞ւ չես ավարտում ալեգրոն, ալե՛գրո տուր, ալե՛գրո...

— Քողեք, հարկավոր չէ, բոլորովին հարկավոր չէ այդպես, —
խնդրում էր նրանց երաժիշտը, — ախր, ինչացո՞ւ է այդ ձևը, —
այ, սպասեցեք բացատրեմ, նու, ի՞նչ կարիք կա այդպես անելու...

Այդ ժամանակ քննադատներից մեկը եղունգով ճանկեց երա-
ժշտի ականջը և ճվաց.

— Փակի՛ր խրոմատիկ գամման:

— Բայց նախ լսեցե՛ք ինձ, ես շատ հարգում եմ ձեր կարծի-
քը... լսեցե՛ք, սիրելի՛ բարեկամներս...

Հանկարծ երաժիշտը զարթնեց ավելի սուր մի ծակոցից: Ոչ
ոք չկար սենյակում: Ինքը անկողնում էր, քնած: Միայն ականջն
խսկապես ճանկոտված էր:

Առնետներն էին...

ՍԵՂԱՆԸ

Ով գիտե ինչ բուսեի կամ ինչ տրամադրության մեջ գրասե-
ղանին մոտեցած էր փոքրիկ երեխան: Նրան սիրող հայրն ասել էր.

— Այ, ես որ մեռնեմ՝ իմ այս գրասեղանը քեզ կմնա:

Երեխան ուրախացած այնուհետև ուշի ուշով զննում էր հոր
գրասեղանը և երազում, որ մի օր էլ ինքը կնստի նրա մոտ և
կսկսի գրել, կարգալ, ծխել, աչքերը կխախուսի նայել հեռուն, պա-
տուհանից դուրս:

Եվ օրեցօր սպասում էր այդ օրվան: Մի երկու անգամ անհուն
բաղձանքով դիմեց հորը.

— Ես է՞լ այս աթոռին կնստեմ, ես է՞լ այս գրչով կգրեմ, և
ե՞րբ կլինի:

— Կլինի, բալիկ ջան, կլինի:

— Ախր ե՞րբ է, ե՞րբ...

Փոքրիկն այրվում էր բուռն ցանկությունից: Բայց հայրը կըր-
կին իր տեղն էր, դարձյալ նույն դիրքի մեջ և գրասեղանը դեռ չի
անցնում փոքրիկին:

Մի օր էլ անհամբեր ու արտասովակալած դիմեց հորը.

— Բա ե՞րբ պիտի գրասեղանն իմը լինի:

Հայրը կրկին կատակեց.

— Այ, երբ որ մեռնեմ:

— Ասում ես, ասում ու չես մեռնում: Բա ե՞րբ պիտի մեռնես:
Հայրը ծիծաղեց. հետո մտախոհ ժպտով նայեց իր զավակին,
որ նույնպես տխուր նայում էր իրեն:

— Կլինի՛, բալի՛կ ջան, կլինի՛, — շշնջաց հայրը մեղմ ու
խուլ, և թախծալի նայեց մեռնող վերջալույսին, որ խորին տրտմու-
թյամբ մարում էր լեռների հետևում:

Երեխան հուսալից, բայց և համակված ինչ-որ վեհ մտքերով
նայեց հորը և սկսեց երազել:

ԻԷՍՊՈՆԱՏՆԵՐ

Արվեստի թանգարաններից մեկի վարիչն է: Սիրում է իր
գործը: Հավաքել է բավականին նյութեր: Կարգավորել է, սիստեմի
վերածել, բաժանել. — արկղների, դարակների, էպոխաների, ըստ
անձերի ու նյութերի:

Ուսումնասիրողներ է հավաքագրել:

Գրել է տալիս և ինքն էլ գրում է մոնոգրաֆիաներ՝ կլասիկ ու
կենդանի նշանավոր անձերի մասին: Շարունակում է հավաքել ամեն
տեսակ նյութեր, պատառիկներ՝ հներից, նորերից, ինչ որ պիտի
զառնա պատմության ուսումնասիրության առարկա:

Մի հիշատակարան էլ ունի՝ դա իր անձնական գիրքն է առ-
այժմ, ուր ամեն օր, ամեն դեպք գրի է առնում նշանավոր ժամա-

նակակիցների, նրանց հետ կապված մարդկանց պատմածներից՝ դեպքեր, խոսքեր, կատակներ... Ամեն, ամեն բան պիտի անցնի, գնա թանգարան, դառնա ցուցահանդեսների էքսպոնատ և քարանա:

Եվ այդպես վարվելով իրերի, դոկումենտների հետ՝ կամաց-կամաց այդպես էլ սովորել է նաև իր շուրջն ապրող կենդանի մարդկանց: Անցնում են նրանք, դառնում թանգարանային էքսպոնատ:

Նրա ապագան անցյալն է. անցյալ կատարյալը:
Թուշում է մտքով նա դեպի այդ ապագայի գիրկը: Եվ ի՞նչ...
Ամեն, ամեն ինչ այնտեղ անցել է արդեն, դառել անընդհատ հուշ:

ՄՈՒՐԱՑԻԿԸ

Հենակն աչ թևի տակ, փայտե պրոտեզը ձախ ոտին և մուրացկանի պրոֆեսիոնալ աղաչական ժպիտը շրթունքներին անցնում էր նա ամառանոցի փողոցով:

Երբեմն կանգ էր առնում, ճակատի քրտինքը սրբում և դեմից եկող ամառանոցավոր մեկին ձեռքը մեկնում՝ ողորմություն հայցելով:

Ստանալով կամ մերժվելով՝ նա շրթունքների արանքում մի քանի բառ էր ծամծմում դառը մաստակի նման և մոմում ու լնզլնգալով անցնում առաջ:

Ուշի ուշով նայեցի նրան և հանկարծ հիշեցի: Ծանոթ մուրացկան էր: Հաճախ տեսել էի նրան քաղաքում ողորմություն հայցելիս: Նույն աղաչական կոտրված ժպիտը, նույն լնզլնգոցը, նույն անորոշ բրթմնջոցը դառնացած շրթունքներին:

Մոտեցավ ինձ և ձեռք մեկնել էր ուզում, որ խոսեցի հետը:

— Դու քաղաքի՞ց ես եկել:

— Հա:

— Հիմա էլ այս գյուղո՞ւմ պիտի ապրես:

Մուրացկանը տխուր ծիծաղեց.

— Չէ, ջանք, ի՞նչ էստեղ ապրել: Քաղքցի մուշտարիներ-

րիս հետ եկել եմ ամառանոց: Էնոնք կերթան քաղաք, ես էլ հետները կերթամ:

— Հիմա հասկացա,— ասացի ես:

— Ապա ի՞նչ,— տխուր խոսեց մուրացկանը:— Իմ մարդիկս են, ուր էնոնք՝ էնտեղ էլ ես: Իմ էլ կյանքս էս է:

Նայում ենք իրար: Ծա նայում եմ նրան՝ նոր սկսվող ծիծաղս արդեն սառած աչքերիս մեջ: Նա էլ՝ անկարող ծիծաղելու և ի՞նչ էր վիճակը, որ ծիծաղեր, նայում էր աչքերիս տխուր, խորը մարդկային վշտով...

Օ՛, ԵՐԵՍԱՆԵ՛Ր, ԵՐԵՍԱՆԵ՛Ր...

Կավիճն ուղակի դադար չունի այս շարաճճիների ձեռքին: Ուր հասնում են, գրոտում են՝ պատերը, մայթերը, սանդուղքները, իրարու մեջքի վրա:

Ահա մեկը, անշուշտ մի տղա, գրել է պատին. «Սիրուշը հիմար է»: Տեսնես վրե՞ժն է հանել խեղճ աղջկանից կամ շարզագամունք է դրդել դիմելու՝ իր դասընկերուհուն հրապարակով անարգելու այս միամիտ միջոցին:

Մեկ ուրիշը՝ երևի մի տղա, մյուսի մասին գրել է. «Սատկի Ռուբենը»: Երևի սա էլ խփել է նրան կամ խլել նրա խաղալիքը:

Օ՛, սիրելի՛ երեխաներ, սիրելի՛ Գուրգեն կամ Սուրեն՝, դու, որ այդ Սիրուշին այսպես անփույթ ու հեշտ հիմար ես ասում հիմա և անարգում՝ կարո՞ղ ես երևակայել, մի օր կգա, որ այդ Սիրուշը կդառնա քո ամենախոր սիրո առարկան, այնպես կտանջի, կտորրի քեզ, այնպես կբարկացնի սիրտդ, որ երբ քո բազմաթիվ սիրո ակնարկներին մերժումով պատասխանած, կյանքից հուսահատ՝ մի օր էլ նրա գողունի ժպտի մեջ, աչքերի խորքում կնկատես առաջին սիրո թաքուն ցուլքը, որքա՞ն երախտագետ պիտի լիտես նրան, որ քեզ փրկեց, կյանք տվեց: Պիտի երգես, վրնջաս նժույզի պես, զտնես որ աշխարհն ուրախության ծով է, իսկ դու՛ վայելքի մակույկ նրա մեջ: Պիտի ոգևորվես, ձգտես գործունեա-

թյան, փառքի, սխրագործության, հերոսության, անգամ աշխարհը վերափոխելու:

Իսկ դո՛ւ, ո՞վ Բարկեն, որ գրում ես Ռուբենը սատկի՝ գիտե՞ս, որ դու և նա պիտի դառնաք մտերիմ ընկերներ, և երբ մի օր մարտի դաշտում լսես, որ նա ծանր վիրավոր է, որ նրան բերել են հիվանդանոց վիրահատելու, որ նա հազիվ թե ապրի՝ պիտի գլխիդ խփես մի այնպիսի ցավով, որ կարծես արտիզ մեջ դաշույն են խառնում:

ԲՆՈՒԹՅՈՒՆ

Օրն այսօր դերասանի է նման: Մեկ մոայլվում է, ամպակուտակ ունքերը վրա տալիս, մեկ պայծառացնում է դեմքը և մտախոհ աչքերով նայում, երբեմն փոթորկում է, գոռում, շանթում հիազարհուր, երբեմն լաց լինում ողբաձայն, որ մի փոքր հետո քրքջա լիաթոք ու ազատ: Ներկայացում է կատարյալ: Օրն այսօր դերասանի է նման:

Ո՞վ բնություն, ի՞նչ ես զայրանում, գոռում, տանջվում, ծիծաղում, ի՞նչ ես խորհում: Դերասա՞ն ես դու, խա՞ղ ես խաղում, դերե՞ր զանազան, և ուրիշներին ես ներկայացնում:

Իսկ դո՛ւ, դու ի՞նչ ես, ո՞վ ես դու, ի՞նչ է քո իսկական իսկությունը:

Բա՛ց դեմքդ, ո՞վ անհանգիստ բնություն:

ԱՆՅՅԱԼԻ ՀՈՒՇԵՐ

— Լավ հիշողություն ունեմ, դա՛ է վատը:

Այսպես ասաց ինձ մի օր մի ծանոթ երաժիշտ: Ասաց տխուր շեշտով, գլուխը ծանր շարժելով և մտքերով խորասուզված ինչ-որ հուշերի մթին անգունդը:

Ես առարկեցի:

— Լավ հիշողությունը զանձ է, բարեկամս: Դա օգնում է զըլխում պինդ պահելու որքան գիտելիքներ, որքան գեղեցիկ բաներ: Երաժիշտն առարկեց:

— Օ՛, մի՛ ասեք: Այնպիսի՞ մանրամասնություններով հիշում եմ ով ինձ վիրավորեց, ո՞րտեղ և ի՞նչ խոսքերով, այնպե՛ս հիշում եմ խոթ մանկությունից մինչև այս հասակս բոլոր տգեղ ու վիրավորիչ դեպքերն ինձ հետ, ուրիշների հետ... Անհամա՛ր, անվե՛րջ... և այդ ամենն այնքա՛ն կենդանի, վառ, ուժեղ, կարծես այս բոպեխ է կատարվում այդ բաները: Դաժա՛ն բան է...

Ես հարցրի:

— Բայց չէ՞ որ ձեր ուժեղ հիշողությունը դառն ու տխուր դեպքերի հետ պետք է նաև ձեր հոգում զարթեցնի պայծառ անցքեր, ուրախ ժամեր:

Երաժիշտը թախծալի նայեց աչքերիս մեջ և գլուխը տխուր թափահարելով պատասխանեց:

— Ա՛խ, տխուր, վիրավորիչ, տգեղ դեպքերի հուշերը թունավորում են բոլոր պայծառն ու գեղեցիկը: Վիշտը, վատը ուժեղ են տպավորվում, վերքը սպիներ է թողնում, մինչև ուրախությունը ցնդում է արևի շողքի պես անհետ ու անվերադարձ:

ԱՔՈՎՅԱՆԸ

Հայրը պատմում էր, և սենյակի մտերիմ լուսության մեջ նրա պատմությունը հեքիաթի նման կախարդիչ էր դառնլ՝ թեև պատմում էր մեծ հայրենասերի մասին:

Իսկ փոքրիկը հմայված լսում էր և երազում: Նա իր մանկական աչքերով կարծես տեսնում էր այդ անձնվեր, խանդավառ գրողին, հետևում էր նրա բոլոր շարժումներին:

Հայրն էլ տարված էր իր նյութով: Նրան թվում էր, թե ինքն էլ նվազում է մի երկարաշունչ, սքանչելի սիմֆոնիա:

Երաժշտական գրվազների պես հնչեց գրողի բարձրանալը

Արարատ, նրա Դորպատի երազներն ու հայրենակարոտը, նրա վերադարձը հայրենիք, նրա վսեմ ստեղծագործությունը, նրա այրվելը հայրենիքի սիրուց և անհայտացումը:

Հայրը վերջացրեց և սկսեց ծխել: Եվ սենյակի խորին լուսթյան մեջ՝ փոքրիկը ոտների ծայրերով մոտեցավ փարվեց հորը, նայեց շուրջն ու փսփսալով հարցրեց.

— Հիմա Աբովյանի ոտնատեղերը կա՞ն Արարատի վրա:

.

ԱՆՄԻՏ ՀԱՐՑԵՐ

Մա՛րդ զարմանալի: Քեզ բնությունը կանչել է կյանք, որ գործդ կատարես. աշխատես, պայքարես, ստեղծագործես, վայելես, ուրախանաս, պարես, երգես և հետո,— դե ի՞նչ անենք... գնաս:

Իսկ դո՞ւ, գործդ թողած՝ ընկել ես բանի հետևից. ո՞ր բերին քեզ, ինչո՞ւ բերին աշխարհ, ո՞րտեղից, ո՞ր ես տանելու:

Մեկը հարցնի քեզ,— ախր քե՞զ ինչ, ի՞նչ ես մաշում կյանքդ, ապրիր էլի՞:

Անմի՛տ, անմի՛տ:

«ԱՐՎԵՍՏԻ ՕՐԵՆՍՊԻՐԸ»

Մի հնդուհավ եմ հիշում: Դատարկ բակի մեջ մենակ շրջում էր գոռոզ ու մեծամիտ: Այնքան զբաղված չէր կուտ ու խոտ որոնելով, որքան ուշքը տվել էր ձայներ որսալու օդի մեջ... Չայներ... օ՛, նրանցով լիքն էր օդը: Կյանքն ապրում էր և ձայներ էր արձակում ամենուրեք: Փողոցներն եռում էին մարդկանց բազմությամբ, աղմկում էին երեխաները, հեռվից հոսում էին Շոպենի վճիտ հընչյունները:

Հնդուհավն այդ բոլորն իրեն էր վերագրում: Ուղղակի իր հաս-

ցին, վիրավորիչ էր համարում այդ ձայները, զայրանալով ուռչում էր, փքվում և հանկարծ ղլվլում.

— Ա՛լղըլի-վուլի-ղուլի...

Այսինքն՝ այդ ո՞վ էր, ո՞ւմ էր ակնարկում, ի՞նձ, ինչպե՞ս համարձակվեց: Ասացեք նրան, որ այստեղ հանճար է վիրավորվում, գեղարվեստական խոսքի մեծագույն օրենսդիրը...

Ղլվլում էր այսպես և հետո զլուխը... օ՛, այդ հիմարակա՛ն, գոռոզությունից կապտած, ինքնաբավականությունից կարմրած, տխմար մտքերից անճոռնիացած, շլինքը կախ, զլուխը բարձրացնելով վեր՝ նայում էր շուրջը իբրև մի հրաշափառ հիմարություն:

Կուշտ էր նա, հղիացած էր տափակ, ապաշնորհ մտքերով, հանգիստ ու ապահով էր նա իր փառքի հաստատունության մասին և կարծում էր թե աշխարհն ուշաթափված է իր՝ շգիտես ո՞ր մոնումենտալ գործի գեղեցկության ու վեհության առաջ:

Եթե հազա՛ր հառաչանք կարողանար մարդու թեթևացնել այդ կոշմարային պատկերից...

ԿՈՇԿԱԿԱՐԸ

Կոշկակարի փոքրիկ մի արհեստանոցի առջև երեխաներ էին հավաքվել ու հետաքրքիր նայում ներսը: Այնտեղ մի առանձին բան չկար: Սովորական՝ մի տուփի շափ ծակուռ, որի մեջ հագիվ երկու մարդ կտեղավորվեին: Եվ իրոք՝ այնտեղ մի արկղի վրա նստած էր կոշկակարը, որ զլուխը կախ՝ կոշիկ էր կարկատում: Նրա կարկատած կոշիկն էլ մի երևելի բան չէր, ոչ էլ արհեստանոցի պատին կպցրած մի երկու խունացած պատկերը կարող էին գրավել փոքրիկների ուշադրությունը: Բայց երեխաները հո՞ խրմբով պաշարել էին արհեստանոցը:

Այնտեղ, վարպետի կողքին նստել էր մի տասը տարեկան տղա և շատ վարժ կարկատում էր կոշիկի տակը: Մերթ կուրծքը հպում էր կոշիկին և սուր դանակով կտրում կոշկատակի եզերքը, մերթ բզով ծակում ու շպիլկան դնելով մեջը, մուրճով շնորհալի զարկում պնդացնում, մերթ թեւը փաթաթում խոզի մազին, մոմում, սրբում:

Չէր նայում երեխաներին, լուրջ իր գործին էր: Վարպետը չէր խանգարում երեխաներին: Գործը գնում էր առաջ: Իսկ երեխաները տարված, ժպիտները դեմքերին սառած և աչքերը լայն բացած նայում էին փոքրիկ աշակերտին:

Փո՛քր էր, գրավո՛ւմ էր...

ՁԻՆ

Ձիերը կանգնել՝ չէին գնում: Բաց ֆուրգոնը բեռնավորված էր քարով. պետք էր շենքի բակից անցնել և տանել ներսի բակը: Բայց ձիերը չէին շարժվում: Գուցե հոգնած էին, գուցե ֆուրգոնի ակները քարերի, կոշտերի դեմ առել՝ խանգարում էին ֆուրգոնը շարժել:

Սակայն բեռը ծանր չէր, և թվում էր, որ ձիերը կարող էին քաշել ֆուրգոնը: Ֆուրգոնապանը մտրակը պտտեցրեց օդի մեջ, ձիերը մի շարժում արին, բայց հանկարծ շինության վրա աշխատող մշակներն օգնելու համար վրա վազեցին և սկսեցին ձեռքերով ձեռնել ձիերից մեկին: Սա կանգնեց: Մշակները փայտերը վերցրին, որ խփեն:

— Մի ձեռքը,— խիստ ձայնով արգելեց նրանց ֆուրգոնապանը և ձեռքը բարձրացնելով պաշտպանեց ձիերին:

— Բա ո՞նց, շեն գնում,— բացատրեցին մշակները:

— Ոչինչ, հանգիստ թողեք:

Մշակները ետ քաշվեցին և զարմացած նայեցին անփույթ ֆուրգոնապանին: Սա ետ քաշվեց և ծխախոտ վառեց, ու ծխելով մեղմ նայեց ձիերից մեկի կողմը, որին զարկել էին մշակները: Անցավ մի երկու րոպե: Ֆուրգոնապանը քթի տակ ժպտաց, մոտեցավ ձեռնված ձիուն և ականջին շատ փաղաքշտ ու մտերմական ձայնով մեղմ ասաց.

Ну, Ва-аська, пое-едем!

Ձին շարժվեց: Մյուսն անմիջապես հետեց նրան: Գնացին:

Ձին նեղացել էր...

«Հարվածայինների օրվա» նիստը ընթանում է աղմուկի ու ժխորի մեջ: Զեկուցողը ճգնում է դոսոցով ծածկել այդ աղմուկը: Սակայն ո՛վ է աղմկում: Ուշացածների կոշիկները, պատըշգամբների տախտակների ճոճոցը, աթոռների ոտները և... ծծկերները:

Բայց մի ծծկեր ուղղակի ոեկորդ է խփում: Շոգից, նեղվածքից քրտնաթոր մայրն իր լի ստինքներով չի կարողանում փակել նրա ուսիկ, անքաղաքավարի կոնչոցը: Մշջում է նա, լափլփում ստինքը, հետո ղնճրտում ու հանկարծ այնպես է ճղավում՝ կարծես միջից կես արին: Մյուս ստինքն է պահանջում:— Հրամայվում է մյուսը: Էլի՛ ղնճրտոց, էլի՛ ճղավոց...

Ի՞նչ է պահանջում՝ գուցե լափել մո՞րը, սրա՞հը, ամբողջ աշխա՞րհը... Կատարյալ սլատիժ մոր կրծքին և անհանգստություն հարևան շրջապատի համար:

Եվ հարց է ծագում՝ ինչո՞ւ շեն թողել տանը. կամ վերջապես ինչո՞ւ շեն դուրս տանում այդ... նոր անհանգիստ մարդուն, որ երեկ աշխարհ եկել՝ այսօր հանգիստ չի տալիս ժողովականներին:

Բայց... ո՞ւմ մոտ թողնեն տանը: Ո՞վ տանի դուրս: Հա՞յրը՝ նա բանվոր զեկուցողն է հենց: Թերևս կասեք մա՞յրը: Նա հարվածային բանվորուհի է և ժողովական...

Եվ քանի՞ հազարավոր զեկուցումներ, քանի՞ ժողովներ, երեկույթներ, ներկայացումներ լցված են այժմ այսպիսի ժխորալի ճղավոցներով, ուր այս փոքրիկ նոր մարտիկները ուժգին ճիչերով պահանջում են իրենց կյանքը և աճում հարվածային մայրիկի գրկում...

ԵՐԱԽՏԱՎՈՐ ԳԱՅԼԵՐԸ

Չէ՛, սիրում եմ նրանց, այդ գայլերին... Խորապես հարգում եմ, անլափ երախտապարտ եմ նրանց: Ուղղակի նրանց եմ պարտական իմ առողջությունը: Նրանք ինձ տալիս են, ի՞նչ եք կար-

ծում, դեղորանք, երկաթի կաթիլներ, էլեկտրորուծում... Ո՛չ իհարկե: Ի՞նչ բաներ են սրանք: Նրանք ինձ շնորհում են ամենաճիշտ բուժման միջոցներ, բնության ամենամեծ բարիքը:

Երբ մտնում եմ անկողին և ինձ պաշարում են զանազան հոգսեր կամ զբաղեցնում ինչ-որ արտառոց միտք և քունս խանգարում՝ ես ինձ հանձնում եմ զանազան երևակայական արկածների: Իբրև թե մենակ անցնում եմ անտառի միջով: Ձմեռային խուլ, ահավոր գիշեր է: Ահա լսվում է մի ոռնոց... Հետո երկրորդը, երրորդը: Ահա բացատում երևացին նրանք՝ գայլերը... Նրանք տեսնում են ինձ և... վազում դեպի ինձ... Ես մազլցում եմ բարձր ծառի վրա: Սկսվում է պաշարումը: Փաթաթվում եմ տաք մուշտակիս մեջ և սպասում լուսանալուն և անցորդներին:

Սահում են իբրև թե ժամերը, ես բոլորովին էլ չեմ շտապում: Հանկարծ հիշում եմ, որ գրպանումս ատրճանակ կա: Հանում եմ, հանգիստ նշան բռնում գայլերից մեկի վրա և կրակում: Գայլն ընկնում է վիրավոր, մյուսներն հարձակվում են վրան և սկսում նրան լափել: Հետո կրակում եմ երկրորդին, երրորդին: Ժամանակ է անցնում: Գայլերն սպասում են իմ իջնելուն: Չեմ իջնում և ապահով բարձրությունից տաք, անվտանգ դիտում եմ նրանց, որ ճրագների նման նայում են ինձ, բայց ձեռները չեմ ընկնում և հետո...

Ջարթնում եմ: Առավոտ է: Քնել եմ ամենաարդար, անվրդով քնով, կազդուրված ու պատրաստ նոր օրվա աշխատանքի:

Չէ՛, սիրում եմ այդ գայլերին:

ՖԻԶԻԿՈՍԸ (Արտակարգ դեպք)

Երազումն էր այդ, թե՛ վառ երևակայություն, հալյուցիանացիա. նա զգաց օդի սուլոց ականջի տակին և հանկարծ ընկավ լուսնի սառ մակերևույթի վրա:

Այո, լուսնի սառ մակերևույթի վրա:

Նա շատ պարզ ըմբռնեց այդ: Նա ֆիզիկոս էր: Ի՞նչ ըմբռնել տեսավ. շոշափեց լուսնի սառ գետինը: Նայեց շորս կողմ. հրաբխային խառնարաններ, շոր ձորեր, կնճոռոտ դաշտավայրեր:

Ելավ նստեց:

Այո, լուսնի վրա է: Հեռու երկնքում ահա մի խոշոր մոլորակ է փայլում պղնձի խիստ գույնով: Հասկացավ. դա մեր երկրագունդն էր: Իսկ իր շուրջը ոչ ցերեկ էր, ոչ աղջամուղջ, ոչ խավար էր, ոչ երեկո: Ինչ-որ մոխրագույն, պղտոր լույս: Ոչ մի ձայն, ոչ մի շարժում:

Արկածյալը կրկին նայեց շուրջը, հեռուն: Մտածեց, լավ մտածեց — այո, լուսնի վրա է ինքը: Լավ հասկացավ այս: Այստեղ չկա ոչ մի արարած, ոչ մի էակ, ոչ մի շունչ: Եվ ո՞ւր, ո՞ր կետում, գտնվի նա, այս դժբախտ մարդը, որ միևնույն մենակությունը չլինի, այս անմարդ, անէակ մենակությունը:

Ոչ ոք չկա ամբողջ լուսնի վրա...

Սակայն ի՞նչ, ֆիզիկոսը վեր կացավ և սկսեց գնալ...

ՊԱՌԱՎԸ

Աշխույժ փողոցը լիքն է երեխաների կանչերով, տրամվայի զնգոցներով և անլուելի, անորոշ մարդկային խոսակցության սիմֆոնիայով:

Երիտասարդ արևը խաղում է երկնքի թավիշ մովի մեջ: Ծընձղուկները ծառերի վրայից հարձակվում են ինչ-որ շոր հացի կտորի վրա, իսկ փողոցի բացվածքից երևում են կապույտ լեռների ալիքները՝ ձյունեղեն փրփուրները գազաթների:

Գարուն է:

Մի ուրախ պառավ նստել է դռան առջև քարին և գիրկն առել մի փոքրիկ երեխա: Թոռն է անշուշտ: Փոքրիկը ձեռները պարզում է, որ բռնի... ծառը, շենքերը, աշխարհը... Ու ժպտում է: Ժպտում է և պառավը: Նա երկու ձեռները մատները հագցրել իրար՝ պինդ բռնել է խայտացող երեխային: Չլինի թե ընկնի: Ու կպել է նրան:

Ինձ թվում է նա էլ կառչել է երեխային... չի՛նի թե ինքը ընկնի
անէության մեջ:

Ու փարված կյանքին ժպտում է նա...

ՄՐՁՅՈՒՆՆԵՐ

Մրջյուններ էին վխտում ճանապարհի վրա: Վազվզում արագ-
արագ, խաշաձևում ճանապարհը, կտրում-անցնում ամեն ուղղու-
թյամբ: Եվ ինչ-որ շատ էին նրանք: Ահա նրանցից դիակիկներ
կան այստեղ, այնտեղ: Այդ անցորդներն են ոտնակոխ արել
նրանց, և երևում է, որ ամեն բոպե վտանգված է նրանց կյանքը:

Բայց... սա՞ ինչ բան է: Նրանք այստեղ մինչև անգամ բո՛ւյն
ունեն: Ահա՛ թե ինչ: Եվ բույնը ուղղակի ճանապարհի վրա: Պա-
շար են կրում, ձվիկներ են դրել արևի տակ չորացնելու, հող են
դուրս ածում բնից: Մարդիկ կարգին գործի վրա են այստեղ, աշ-
խատում են տենդորեն: Բայց ի՞նչ խելք է այսպիսի զոհերով, այս-
քան անցորդների սարսափելի կոշիկների արանքում (երևակայո՞ւմ
եք...) բույն ունենալ, չհեռանալ այստեղից, ապրել հանգիստ, աշ-
խատել, դեռ ուրախանալ, հուսա՛լ: Եվ մինչև անգամ տեկ...

Եվ նրանք չեն հեռանում, ապրում են այստեղ, աշխատում,
ուրախանում, հուսում: Եվ տե՛ւմ...

«Է՛հ, հայրենիք է» — խորհեցի անցա: Կներեք, չգիտեմ, ար-
դո՞ք մրջյուններն է՞լ այդպես կնայեին գործին:

Գոնե ես այդպես խորհեցի:

ՎԱՂԵՄԻ ՎԱԼՍ

Հրճվալից մի վալս եմ լսում: Նվագախմբում առանձնապես
տեսնող սուլում, շնկշնկում, գծվում է ֆլեյտը: Ի՛նչ քաղցր է, ինչ

թախծալի քաղցր: Ախ, գիտեմ, այդ սուլումը՝ իմ պատանեկությու-
նը, իմ գիժ, անհոգ պատանեկությունը:

Կարելի է այսպիսի խոսք ասել՝ սիրելի, ինչպես վաղեմի
վալսը:

ՔՐՔԻՁԸ

Հեռու մայթից մի բարձրաձայն խմբական քրքիչ է լսվում:
Կարծես գարնանային ջրեր են կարկաչում, հնչում՝ թռած քարե-
քար, բուռն ցալքուններով:

Աղջիկներ են դրանք:

Միալար հոսում է օդում նրանց քրքիչը: Երբեմն էլ հանկարծ
այնպիսի մի ժխորով է պայթում այն, կարծես նորանոր ջրեր խու-
ժեցին ջրերի մեջ:

«Անպատե՛ա՛ն ոչինչ չի պատահել այնտեղ: Գիտեմ, երիտա-
սարդ են, ծիծաղում են որևէ մի դատարկագույն բանի վրա» — խոր-
հում եմ ես իմաստունի հատուկ լրջությամբ:

Բայց թո՛ղ, ի սեր չգիտեմ, ինչո՞ւ և ո՞ւմ:

Որքա՛ն կկամենայիր նաև դո՛ւ ծիծաղել, քրքջալ այդպես որևէ
մի դատարկագույն բանի վրա:

Երիտասարդությո՛ւն:

Ամենախմաստուն բանը աշխարհիս երեսին:

ՊԱՐՏԻՉԱՆԻ ԿՈՉԸ

Մի պարտիզանի էին կախում ֆաշիստները: Ողջ ավանի բնակ-
չությանը հրացանի կոթերով հավաքել էին հրապարակը, որ տես-
նեն, սարսափեն և հնազանդվեն ֆաշիզմին: Բնակիչները աչքները
գետնին էին գցել, որ չտեսնեն հրապարակի մեջ ծառից կախված

պարանը, որ օձի պես օղակվել, կախվել էր և որի տակին բերել կանգնեցրել էին պարտիզանին:

Պարտիզանը մռայլ և հպարտ նայում էր բազմությանը: Նա այնպես էր սպասում մահվան, ինչպես մարտական պարտքի կատարմանը: Նա ցավում էր, որ բռնվել էր, բայց և չէր վախենում մահից: Դա էլ գործ է, այդտեղ էլ պիտի օգտակար լինել: Եվ պարտիզանը գործի անցավ: Մինչ օղակը գցում էին նրա վիզը, որ հետո աթոռը դուրս քաշեն ոտերի տակից՝ նա հանկարծ կրակվեց, դեմքի ու վզի մկանները ուռեցին, դողացին, և նա հրացայտ աչքերը բազմությանը սևեռելով՝ ուժգին մոնչաց.

— Վրեժխնդիր եղեք:

Հրապարակը ավելի լռեց: Սպառնալի այդ լռության մեջ զգացվեց, թե ինչպես բազմությունը կլանեց այդ խոսքերը:

Եվ հանկարծ այդ լռությունը պատռվեց, և նրա խորքից դուրս թռավ մի պատասխան գոչ.

— Կլինե՞հ՛նք վրեժխնդիր...

Ցաղիստները իրար անցան: Նրանք հարձակվեցին դեպի ձայնը և շարագույժ սպառնալիքով գոռացին.

— Ո՞վ էր, ո՞վ էր...

Ձայնը լռել էր, ձայնողը կորել բազմության մեջ: Սկսեցին որոնել: Բայց ո՞րտեղ կգտնես դրան: Նա թաքնվեց ողջ Ուկրաինայի մեծ սրտի մեջ. գնա գտի՛ր նրան:

ԵՐԵՒԱՅԻ ԾԻՉԸ

Կայսրանը որոտում է: Ռազմաճակատ մեկնողներին ճանապարհ է դնում ահագին բազմությունը: Գնացքը լիքն է. նստում են հետզհետե: Մեկնողներից ոմանք դեռ պլատֆորմի վրա են՝ իրենց հարազատների կողքին: Հրաժեշտի խոսքեր: Ասվում են, իսկույն մոռացվում և կրկին ասվում: Ասում է սիրտը, որ լեզու չունի:

Վերջին զանգը դողանջեց: Սուլեց: Շչակը ճչաց: Բազմությունը ցնչվեց, թնդաց. «Բարի ճանապարհ»: «Գնաք բարով»: «Վերադարձեք հաղթանակով»:

Գնացքը շարժվեց: Իրար սեղմելով բազմությունը հոսեց գնացքի կողքից:

Մի երեխայական ճիչ միայն հանկարծ, կարծես մի բան հիշեց, մի սուր բան. մի բան, որի մասին լսել էր, սովորել, խաղացել էին բեմի վրա, տեսել էր նկարների մեջ միայն և հիմա հանկարծ իրականություն դառավ.

— Պա՛պա, պա՛պա, սպիտակների ձեռը չընկնե՛ս, խփի՛ր նրանց...

ԱՏԱՄՆԵՐ

Նա ռազմաճակատում իրեն համար մի նոր գործ է գտել, նոր արհեստ, ոսկի ատամներ է պոկում բերաններից, հավաքում մի տոպրակի մեջ:

Առաջ սկսեց պոկել սպանված բանակայինների բերաններից: Հետո սկսեց վիրավորներին սպանել և ատամները հանել: Վերջն անցավ առողջ գերիներին և թիկունքում մնացած գյուղացիներին:

Հարստանալու կրքով մոլեգնած նա մի զուլփ ոսկի ատամներ է որոնում: Ամենուրեք ոսկի ատամներ, որ հավաքում է ու հավաքում իր տոպրակը: Ազահության կրակն այրում է նրա սիրտը. գազանային ուրախություն է լցվում նրա անասնական աչքերը, երբ նա զգում է, որ իր ոսկիների տոպրակը լցվում է, ծանրանում ու մեծանում:

Այսպես կարելի է սնդուկներ լցնել, միլիոններ կիտել, ուռճանալ: Կիրքը արբեցրել է նրան: Նա այլևս մարդ չի տեսնում իր շուրջը, այլ ոսկի ատամներ, մանր, միջակ, խոշոր, փայլուն, որ լցվում են նրա տոպրակները, ծոցերը, սնդուկները, իր տունը, քաղաքը, հայրենիքը...

Եվ այլևս նա մարդ չէր որոնում, ավելորդ էին բերանները, դեմքերը, զլուխները, աչքերը, մարմինները: Ավելորդ էին մարդիկ: Նա ատում էր մարդկանց, մարդիկ խանգարում էին նրան՝ փախցնելով, թաքցնելով ատամները, որոնց ծարավից այրվում էր նա անասնական տանջանքով:

Եվ ահա մի օր նա տեսավ մի ատամ, որ զարհուրելի կրճտոցով փայլատակեց մի բերանի մեջ: Նայեց այդ ատամի շուրջը և տեսավ մի սարսափելի դեմք, մկանային, հուժկու ձեռներ, որ սվիճը սեղմած վազեցին գեպի նա և խոցեցին նրա ազահ սիրտը:

Մի վայրկյանում նա առաջին անգամ վերջապես տեսավ մարդուն: Դա մի զարհուրելի էակ էր:

Սարսափելի մի ատամ...

ՊԱՐՏԻՉԱՆԻ ԳՆՂԱԿԸ

«Իմ գնդակն իմ սրտից է թռչում»...

Սրտից և ոչ հրացանից:

Դա պարտիզանի գնդակն է: Այդպես պարտիզանն ասաց: Դա այն մարդու խոսքն է, որ աչքով տեսել է երեսանների խողխողումը, նրանց մայրերի բռնաբարումը, գյուղացիների խոշտանգումները, թշնամու դաժան բռնություններն ու բորենական ծիծաղը...

Այո՛, ոչ հրացանից, սրտից է թռչում պարտիզանի գնդակը գեպի թշնամին: Սիրտը, սիրով գեպի մարդը լցված սիրտը շորանում է, հրացան է դառնում, գնդակ է նետում հիմա...

ՄԱՂԻԿՆԵՐ...

Մաղիկներ, սիրունաչիկ, սիրելի՛ ծաղիկներ, ի՞նչ գործ ունեք դուք այստեղ, այս համաշխարհային, ահեղաշունչ արհավիրքի օրերին:

Մի՞թե չի հասնում ձեզ այս զարհուրելի հրետանիների ահագնազորոգ բառաչը: Մի՞թե չի խեղդվում ձեր նազանի շունչը վառողի այս թանձրամած ամպերի մեջ:

Նայում եք այնպես մեղմ և հեզ ժպտում:

Ահա փնջել են ձեզ, շուկա են բերել ձեզ, որ գնաք տները՝ աչք ուրախացնելու:

Ձեզ նայում եմ և միտքս գնում է հեռուն, հեռուն, ահեղ մարտերի դաշտերը, ուր դարձյալ այսպես գեղեցիկ ու հեզ, ինչպես այժմ ամեն րոպե դուք մարդու աչքի առջևն եք:

Ահա անցնում են սաղավարտավառ հերոսները գյուղերի ու քաղաքների միջով և դուք մատաղահաս աղջիկների ձեռքից նետվում եք հերոսների կրծքին:

Ահա օրորվում եք ընկած հերոսների գլխին և նայում էլի այսպես մտերիմ, դիպչում նրանց այտերին:

Մաղիկներ, դուք գնում եք նստում նաև նրանց շիրիմների վրա ու վճիտ աչքերով էլի այսպես հեղանազ նայում, նայում...

Ի՞նչ եք ուզում ասել, սիրելի՛ ծաղիկներ...

ՌԱԴԻՈՎԱԳՈՐԴՈՒՄ

Ջութակի հնչյուններ են ոստոստում, երբեմն սուրում, երբեմն մարում և մերթ հանկարծ սլանում երեկոյան ջիճջ օդի մեջ: Հրաշալի թռչուններ են դրանք, որոնց շարժմանը հետևել չես հասցնում:

Մի երջանիկ երիտասարդ կոմպոզիտոր է անցնում Հայպիգի գմբուխտի դաշտերով: Հովը խաղում և շշնջում է նրա երկար մազերի ու լայնաթև փողպատի հետ: Նա կլասիկ է. հայեցողական մեղանխուիկ և հավասարակշիռ ու հանգիստ...

Բայց հովը նրա մազերի խոփվների մեջ դեռ խաղում է նրա պատանեկան օրերի «Ամառային գիշերվա երազի» ոտմանտիկական թրթիռներով: Նրա շուրջը ծաղկող գերմանական գյուղերի կոկիկ տների բնակիչներն իրենց հարսանիքներում եկեղեցուց հարսին տուն բերելիս նվագել են տալիս այդ ուվերտյուրի «Հարսանեկան երգը»: Դա ամենաժողովրդական եղանակն է Գերմանիայում:

Երիտասարդը հրեական խանդավառությամբ (նա չի զգում այդ) խորհում է Հերդերի մասին, որը պատմությունը դիտում էր իբրև պրոցեսի պրոգրեսիվ զարգացում, ըստ որում, այդ պրոգրեսի

հիմքն էր համարում հումանիզմի նվաճումները՝ բանականություն, բարոյականություն և ազատություն: Նա առաջ է քաշում մարդկային բանականությունը, ժողովրդական ոգին...

Երիտասարդի սիրտն ուռչում է այդ վեհ մտքերի երազանքից: Զուլթակի հնչյունները հովի պես օրորվել սկսեցին անտառի բացատներում...

Երիտասարդի հոգում արձանի պես վեր ելավ մի հոյակապ դեմք: Դա նա էր, որ վերակույց երկրի ոգուն և որոնում էր բացարձակ ճշմարտություն, և հետո գնաց կլասիկ խաղաղության աշխարհը, այդ գեղեցիկ երևակայությունը:

Բայց շութակի հնչյունները ուրախությունից իրենց կորցրած ճախրում են և պարում անհնարին արագությունամբ: Ահա, ահա նրանք օդում կղիպչեն մի բանի և կփշրվեն արծաթ ալիքների պես:

Այդպես էլ եղավ. նրանք ցնդեցին... Հենց որ նրանց դիպավ ռադիոյի խոպոտ շունչը:

Մենդելսոնի Բարթոլոմի կոնցերտը վերջացավ: Այժմ լսեցեք... Զարթնում եմ: Խուլ որոտում է Լեիտանի պատմական դարձող ֆրագը:

«Սովետական ինֆորմբյուրոյի կողմից»:

Գետնի մեջ կենդանի թաղվում են հրեաները և նրանց ճիշերը խլանում են հողի տակ... Գեղջկուհիները երեխաները գրկներին վազում են բոցերի մեջը... Թնդանոթներն ավերում են, հրդեհները լափում են և՛ Մենդելսոնին, և՛ ինչ որ գեղեցիկ է թե «երևութապականություն» և թե իսկության մեջ:

ԱՇՈՒՆ

Մի դեղնահեր կնոջ դեմք է գծագրվում աչքերիս՝ հեռավոր մի երկրում, չգիտեմ Բեռլինի՞, թե վեստֆալիական մի փոքրիկ քաղաքի անդորր տան պատուհանի մեջ:

Լարված է նրա մտտ դեմքը: Նա հիմա ընդոստ վեր կթռչի աթոռից: Բայց դեռ աականջ է դնում տան միջանցքի ոտնաձայներին:

Նրան թվում է. թե փոստային պաշտոնյան է մտել միջանցքը և քայլում դեպի իր բնակարանը: Անպատճառ նա է... Չարածպիտ կծկվում են նրա ներվային այտերը, և նա գող կատվի դեղին աչքերը լայնացրած, զգույշ սողոսկումով վեր է կենում: Ահա և շարժվում է դեպի դուռը, որ դիմավորի փոստաբերին: Մի վայրկյան վառվում է նրա երևակայությունը և ազահ գազանային կրքից աչքերը պսպղում են շարախինդ երջանկությամբ:

Դա Ֆրիցն է՝ նամակ է կամ ավելի շուտ ծանրոց:

... Մետաքսեղեն՝ վարդի և շուշանի տերևների պես ծալ-ծալ իրար վրա... Մի բրիլիանտ պսպղուն աստղի նման դուրս է ճառագայթում փոքրիկ տուփի բամբակի միջից... Կզաքիսի վզնոց՝ շքեղ մուշտակի մետաքս աստառի մեջ կծկված... Իսկ հատակին բուրում է նրբակերտ կոշիկի ազնիվ հոտը...

...Իրե՛ր, իրե՛ր՝ խլված մի հեքիաթական, վայրենի, հարուստ, ատելի երկրի բնիկներից՝ ատրճանակների, գնդացիների, հրդեհների ճարճատյունների մեջ... Երջանիկ կողոպուտ...

Դողում է կրքից և դուռը բաց անում...

Հողի ծանր, անճոռնի մի կույտ է ուռել հեռավոր այն երկրի գետնի երեսին: Մի աններդաշնակ փայտե խաչ անխնամ, հապճեպ հյուանած՝ խրվել է այդ կոշտերի մեջ և մի սառ սաղավարտ կոշմարային կրիայի պես կծկվել է խաչի տակ...

Աշունը մաղում է վերից՝ մա՛նր, սա՛ռն, անվե՛րջ, հավիտյա՛ն...

ՀԱՅՐ

Երբ հարկ եղավ քաղաքը արագ կարգով էվակուել՝ ողջ ընտանիքը շատ մտածեց, թե ինչպես հետները տանեն տան զառամած տատիկին:

Մտածեցին, մտածեցին՝ բան դուրս չեկավ: Պետք եղավ թողնել նրան:

Միևնույն է, իրենք պետք է ոտքով գնային:

Զյուն, սառնամանիք, հոգնութիւն, արկածներ...

Հետո՛ տատիկն էլ համարյա կույր էր. բավական խուլ, բավական խարխուլ մի շինվածք: Կգար՝ կմնար ճանապարհին... սոսկալի տեսարան:

Իսկ այստե՛ղ՝ դե, ի՞նչ կարող ես անել՝ ճակատագիր է. մի բան կլինի. գուցե գտնվեն բարի մարդիկ. գուցե շուտով քաղաքը ևս կառնվի Կարմիր Բանակի զենքով: Մի կերպ կաղատվի նաև խեղճ տատիկը:

Երիտ ժամանակներ են. հնար որ չկա՛ չկա:

Այդպես էլ եղավ: Իրենք թողին քաղաքը անցան սառած գետը, գնացին արևելք: Հետո կատարվեց այն, ինչ ենթադրում էին: Շատ նեղութիւն քաշեցին և բոլորովին չզղջացին, որ պառուվին թողել են տանը: Այստեղ հիմա արդեն պարզ էր. որ նա անսպասան կմնար ճանապարհին:

Օրեր անցան, և քաղաքը ետ առնվեց Կարմիր Բանակի կողմից: Փախստականներից շատերն իսկույն վերադարձան հայրենի քաղաքը: Ընտանիքը ուշացավ. նա հեռու էր գնացել և դեռ նոր էր ճանապարհ ընկել դեպի տուն:

Մի օր, և դա քաղաքի վերագրավման շորրորդ օրն էր, երբ արդեն վերականգնվել էր լույսը. չրմուղը և փոերը՝ փախած ընտանիքի հարևաններից մի քանիսը ներս մտան նրանց բնակարանը՝ նայեն ինչպես է տան վիճակը:

Եվ ո՛վ հրաշք...

Պառավն ապրել էր ձիշտ է՛ տաժանելի օրեր էր քաշել: Համարյա կիսամեռ: Թե ի՞նչ էր կերել. ո՞րտեղից գտել և արդյոք կերել էր, թե ապրել իր հոգեվարքը: Զես հասկանա: Ինքն է՛լ կարգին մի բան չասաց այդ մասին:

Մոտեցան պառավին: Թույլ ընկած էր անկողին: Մեռնո՞ւմ է, ի՞նչ է... Ո՛ր, կարծես ապրում է, ուզում է ապրել: Միայն չի տեսնում, չի հասկանում, թե ի՞նչ են ուզում իրենից: Նստել՝ խոսում են, նա էլ լսում է ու լռում:

Գնացին ու շտապով հացի քարտ հանեցին նրա համար: Հաց բերին:

— Առ, անուշ արա,— ասացին նրան:

— Ի՞նչ է դա,— խոպոտ ու մռայլ հարցրեց պառավը:

Նա շար հայացքով նայեց իր այցելուներին: Զի հասկանում ուղբեր են...

— Ստացիր հացդ, կեր, ուժի եկ:

Պառավին նստեցրին տեղում, մոտեցրին հացի բոքոնը նրա մոմե ձեռներին: Նա շոշափեց բոքոնը: Բռնեց, պինդ սեղմեց, տարավ թթին և բոքոնի ձեկց, հոտից հանկարծ ժպտաց կույր աչքերով և ծոր ափեց:

— Ի՞նչ, ուրեմն եկե՛լ է Սովետական իշխանութիւնը...

ԶԱՎԱԿՆԵՐ, ՄԱՅՐԵՐ

Օ՛, երբեմն ինչե՛ր են քաշում մայրերը:

Երբեմն չգիտես ինչ անես, ինչ ասես:

Դե իհարկե՛ իսկապես կարելի է, և կանենք և կասենք ինչ-որ պետք է անենք, ասենք:

Ես հիշում եմ մի գեպք. քաղաքացիական պատերազմի ժամանակ կար մի մայր, որի մի որդին Կարմիր Բանակումն էր, մյուսը՝ սպիտակգլարդիականների մեջ:

Դեռ որդիները զարմանքով, զայրույթով, առևշուրթամբ կմտածեին իրար մասին: Սպիտակգլարդիականը մի անգամ տեսավ մորը և ասաց. «Ինչպե՞ս եղավ, ինչպե՞ս համարձակվեց անցնել կարմիրների կողմը: Իրան այրելն անգամ քիչ է»: Մյուսն էլ պատահեց մորը. «Ախր ինչպե՞ս եղավ, ինչպե՞ս համարձակվեց մտնել սպիտակների մեջ: Ես ցույց կտամ նրան դավաճանել ժողովրդին»: Լսո՞ւմ էր այս ամենը նրանց մայրը:

Մի անգամ էլ տեսավ նա նրանց միասին, երբ կարմիրբանակային որդին ընկավ սպիտակների ճանկը և նրան տանում էին զնդակահարելու, և այս տեսարանին ներկա էին երեքով. երկու եղբայրները և մայրը...

Պատկերացրեք այս մոր սիրտը:

Իհարկե, մենք գիտենք, թե ի՞նչ կանեինք և ի՞նչ կասեինք, թե կարմիրբանակայինին և թե սպիտակգլարդիականին:

Բայց մա՛յրը, մա՛յրը...

Իսկ ահա Հայրենական պատերազմում մարտնչող որդիներից մեկն իր և եղբայրների անունից այսպես գրեց իրենց մորը:

— «Այնպե՛ս արա, որ մենք հպարտանանք մեր ծնողով»:

Մի ուրիշ որդի գրում էր.

— «Մենք ոչնչացնում ենք մարդկության թշնամուն: էլ ի՞նչ՝ գու, էլ ի՞նչ՝ ես»:

Բայց ահա մի մայր էլ այսպես գրեց իր զավակին.

— «Միայն առա՛ջ. ո՛չ մի քայլ ետ. մի՛ խնայիր կյանքդ. ազատեցե՛ք Ուկրաինա՛ն»:

Ահա:—

Զավակնե՛ր...

Մայրե՛ր...

ԼՔՎԱԾ ԾՈՒՆԸ

Առաջ սիրելի էր նա այն տան մեջ և բոլորի փայփայանքին արժանացած: Շոյում էին, խաղում հետը, կերակրում, զրոսանքի տանում:

Բայց այն տանը հայտնվեց մի սիրունիկ մանուկ, և բնականաբար, չգիտեմ ինչպես՝ շանը մոռացան: Դե նա էլ մի փոքր ծերացել է և մոտենում է իր վախճանին:

Հաճախ տեսնում եմ նրան մի անկյունում կծկված:

Հազիվ լսելի նվում է...

Մեղքանո՛ւմ եմ...

ՀԱՇՄԱՆԴԱՄԸ

Տրամվայի վագոնը քանի զնաց այնքան լցվեց բազմությամբ, որ սկսեցին իրար սեղմելով ճիգեր անել մի կերպ տեղավորվելու: Պետք է խոստովանեմ, այնքան նեղվածք էր, որ մեծ փափկանկա-

տությունների ոչ մի հնար չկար: Զգիտեմ ինչպես, որտեղ, բայց կանգնեցի մի կերպ:

Բազմությունը շէր կարողանում տեղավորվել, մարդիկ հըրմըշտկվում, մեղադրում իրար, վիճում և անդադար ալեկոծվում էին ետ-առաջ, ետ, այս կողքի, այն կողքի:

Ուշադրությունս գրավեց կողքիս երկու հենակները թևերի տակ մի երիտասարդ հաշմանդամ կիսազինվորական զգեստով: Չեռքին մի ինչ-որ մեքենայի մաս ունեւր, ըստ երևույթին իր արհեստի գործը, որ ձեռքի երկաթի մատներում պինդ սեղմել՝ երբեմն նայում, սրբում, շոյում էր:

Բազմությունը շէր հանգստանում և շարունակելով իր ալեկոծումը, տանում, բերում, տրորում էր նաև ամենից շատ... հաշմանդամին: Բայց նա շէր բողոքում: Միայն հոգածու դեմքով, հանգիստ կարգադրում էր. «Դուք այստեղ նստեք, բեռը դրեք իմ կողքին, ընկեր, տեղ տվեք մորը, երեխան ինձ տուր...»

— Ընկեր, դո՛ւք նստեք, դո՛ւք ախր, դուք, որ իսկի՛ էլ չպետք է կանգնեք,— ասաց կողքին կանգնած մի կին:

Հենց ահա այդ էր, որ նա շէր նկատում: Զլսեց, շարունակեց ուրիշներին տեղ զիջել, տեղավորել, հանգստացնել:

Ո՛րտեղից էր բերել նա այս... հոգածությունը, ուրիշներին պաշտպանել, իրեն մերժել, ուրիշներին զիջելը, զոհելը: Որտեղի՞ց էր, ուզում եմ ասել. այս գեղեցիկ սովորույթը, իրեն համար աննկատելի, բնական դառած գիծը: Հասկանալի էր. և այսպիսի՞ բաներ էր զիջել նա «այնտեղ»... Իհարկե այնտեղից էր այս: Նայեցի նրա հոգածու, մի փոքր թախծոտ դեմքին և խոստովանում եմ՝ հարգեցի նրան և խորին ակնածանք զգացի դեպի նա:

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ

Շատ հերոսների վերջին խոսքերի մասին լսել ենք: Ռազմադաշտերում, կախաղանների տակ նրանք դիմադրել են մահին խիզախորեն, քաջաբար և թողել արիասիրտ մարտնչողների հիշելի խոսքեր: Ազնվություն ու վեհություն է բխում նրանց խոսքերից,

նրանք վառել են մեր սրտերը, նրանք հիացք են զարթեցրել մեր հոգում:

Սակայն այն, որ ասաց հույն հայրենասեր Կոստաս Ցակոսը Ֆաշիստների դատաստանի վճռով կայանալիք իր մահապատժից առաջ՝ գերազանց է բոլոր լաժներից: «Մահն իսկ անակնկալի շքերից ինձ: Ես գիմավորում եմ այն այնպիսի զգացմունքով, ինչպես գնայի տոնակատարության: Ո՛չ մի արցունք իմ մահվան առթիվ. ո՛չ թե արցունքների, այլ երգերի՝ է արժանի խիզախների մահը»:

Այո, ե՛րգ, միայն ե՛րգ Կոստաս Ցակոսին, հզոր երգի՛ է արժանի նա: Ե՛րգ՝ դա՛ գերազույն է մարդկային հոգու թռիչքի՝ ընդդեմ թշնամու հարվածի, ընդդեմ մահի:

ԱՍՊԵՏՆ ԻՔ «ՌՈՂԵՆԻ»

Մտա մեքենագրուհու մոտ մի փոքրիկ բան թելադրելու: Այնտեղ նստած էր քառասունի մոտ մի առողջակազմ երիտասարդ: Ասել նրա համար մոայլ՝ չէր կարելի. բայց ինչ-որ ապրածի, շատ բաներ տեսածի, տաժանելի կյանքից խրատվածի տպավորություն էր թողնում նա:

Նա նստած էր անշարժ, թևերը կրծքին խաշած և խստահայաց, ներշնչված աչքերով նայում էր մի կետի:

Եվ զգացվում էր, որ խորասուզվել էր մի մտքի մեջ:

Ես թելադրեցի մի մանրանկար, որ գրել էր մեր գրողներից մեկը: Այնտեղ նա խոսում էր մահապատժի ենթարկված հերոսների վերջին խոսքի մասին: Որ շատ գեղեցիկ բաներ են ասել նրանք: Որ սակայն Հունաստանի հայրենասեր Կոստաս Ցակոսը ասել է. «Ո՛չ մի արցունք իմ մահվան առթիվ: Ո՛չ արցունքների, այլ միայն երգերի է արժանի խիզախների մահը»: Այո՛, ե՛րգ — ասում է հեղինակը, — միայն ե՛րգ Կոստաս Ցակոսին. հզոր երգի է արժանի նա: Ե՛րգ՝ դա՛ գերազույն է մարդկային հոգու թռիչքի՝ ընդդեմ մահի և թշնամու հարվածի: Դա կլինի և՛ պատկ, և՛ պատիվ, և՛ տոնակատարություն հերոսին»:

Ես կրկնեցի վերջին խոսքերը:

— Եշտ մտ ճշմարիտ է, — լսվեց անձանոթի թավ բարիտոնը գրամեքենայի փակող շխկոցների մեջ, որ իսկույն կտրեցին, և նրա խոսքը գամվեց սենյակի լուսնյան մեջ:

Ուրեմն նա հետևում էր իմ թելադրությանը: Անսպասելի էր: Ես նայեցի նրան: Մենք համարեցինք մեզ ժանոթացած: Ես հարցրի նրան.

— Հավանեցի՞ք:

— Շատ ճշմարիտ է, — կրկնեց նա միայն իր խոսքը, — «Այո, միայն ե՛րգ, ո՛չ մի արցունք»:

Մենք սկսեցինք զրուցել: Մեքենագրուհին, որ ըստ երևույթին նրա ազգականուհին էր, սկսեց իր թղթերը շոկշիկել, դարսել: Խոսքը փոխվեց զանազան նյութերի վրա: Դուրս եկավ, որ նա զխավոր հաշվապահ է եղել մի խոշոր արդյունաբերական օբյեկտի, եղբայրական ռեսպուբլիկաններից մեկում:

Ինչպես եղավ, խոսք բացվեց ապրուստի մասին: Նա ասաց իր ոտճիկը՝ շատ համեստ բան:

— Երևի այլ եկամտի աղբյուր չունեք, — ասացի ես:

— Ո՛չ, — գամեց նա, կարծես անխորժելով:

— Եվ չեք էլ ունենա:

— Ո՛չ, — դարձյալ գամեց նա:

Ես սպասեցի և կրկին.

— Գուցե մի հնա՛ր կարող եք գտնել:

Նա խիստ նայեց աչքերիս մեջ, և հանդիմանորեն.

— Ի՞նչ հնար...

— Որևէ... Ի՞նչպես ասեմ... կողմնակի աշխատանք... կոմբինացիա (ինչո՞ւ ասացի այս հիմար բաները՝ չգիտեմ)...

Նրա աչքերը ծաղրեցին.

— Նախ՝ ես ո՛րտեղից ունեմ ինձ համար ժամանակ և հետո՛ ի՞նչ կոմբինացիա... ես ինքս եմ որսում այդ կոմբինատորներին, հանձնում դառախազին:

Ես ճնշվեցի: Միայն մեղմելու համար խոսքս՝ ասացի.

... — Ուրեմն պետք է շատ հաշվով ապրեք:

— Եվ ապրում եմ շատ հաշվով, — շեշտեց նա, — ապա ի՞նչ: Ժամանակն այդպես է: Խի՛ստ: Հիմա եթե կասեն՝ «ապրել հաշվով»՝ «և՛, ապու: հաշվով» (ձեռքը ատավի է բռնում քունքի

մոտ)։ կասեն՝ «նեղութիւններ կրել», «կա՛, նեղութիւններ կրել»։ «կովել»՝ «կա՛, կովել»։ «մեռնել»՝ «կա՛, մեռնել»։ Ապա ի՞նչ։ Այդպե՛ս պետք է լինենք։ Պատրաստ ամե՛ն բանի։

Ես զորացրված զինվորական եմ, կովել եմ Հայրենական պատերազմում։ այդպես եմ տեսել, այդպես եմ արել։

Եվ (սրտաշարժ պարզութիւն)։ չէր ուզում երևի սին խոսքեր ասած լինել) հանեց ծոցատետրը. այնտեղ իր լուսանկարն էր. զինվորական՝ մայրի աստիճանով, կուրծքը լի շքանշաններով...

Քերես նա խստագնում էր, փայտը ծոում, գուլները թանձրացնում։

Երևի։ Չգիտեմ։

... Բայց ազդե՛ց։

ԾԱՆՈԹՍ

Նրան ճանաչում էի։ Հասարակ երիտասարդ էր։ Հետը ոչ կապ, ոչ մի առանձին զգացում դեպի նա՝ համակրանք, հակակրանք։ Կար իրեն համար։ Միայն ճանաչում էի և ուրիշ ոչինչ։

Նա պատերազմ գնաց։

Մի օր էլ լսեցի, որ նա սպանված է։

Չգիտեմ ինչու՝ սկսեցի այնուհետև մեկ-մեկ հիշել նրան։ Ու քանի միտքս զբաղվում էր նրանով, այնքան ափսոսում էի նրան, վշտանում անգամ։ Եվ ասում էի՝ տես, երբ կար, կարևոր չէր թվում, սպանվեց՝ կարիքն զգացվում է։ Կենդանութիւն էր, լավ էր՝ ջերմացնում էր կյանքը։ Ուրեմն նա կարևոր անհրաժեշտութիւն էր կյանքում և ես չէի նկատում, որ մեկ-մեկ մարդուց է բաղկացած կյանքը։ Եվ ահա այդ կյանքը չկա, հանգավ կրակը՝ իր շափով սառեցրեց կյանքը։

Այնուհետև ո՛րքան երազել եմ, թե ինչ լավ կլիներ, որ նա չսպանվեր։

Քանկացավ նա ինձ համար անսպասելիորեն, անհուն կերպով։

Բայց մի օր, ի՞նչ եք կարծում, նրան տեսա փողոցում։ Նա կենդանի էր մնացել։ Զարմացա, չհավատացի աչքերիս։

Օ ի՞նչ ուրախ եմ, ի՞նչ ուրախ եմ։ Նրա գտնվելը, հավատացե՛ք, դեպք եղավ ինձ համար։ Կարծես մի շատ թանկարժեք նվեր եմ ստացել։

Որովհետև գտնվեց մա՛րդը նրա մեջ, — խորհեցի շատ նրա մասին՝ իմաստավորվեց, «կիսատը» դառաւ լրիւ մարդ...

ԱՐՁԸ

Մի սպիտակ արջ էր փախել գազանանոցից։ Քաղկոմից գանգահարեցին զինվորական իշխանությանը, որ զինվորներ ուղարկեն ոչնչացնելու նրան՝ երկուդ կրելով, որ անշուշտ կարող է վնասել բնակիչներին։

Զինվորներն եկան ավտոմատներով պաշարեցին արջին։ Հենց այն է հրամանատարը կարգադրում էր, որ կրակեն արջի վրա՝ մի սիբիրյակ նրանից թույլտվութիւն խնդրեց՝ փորձել արջին վերադարձնելու գազանանոց։ Հրամանատարը թույլ տվեց։ Զինվորը անվախ մոտեցավ արջին, կանգնեց շատ մոտ և... ականջի տակ ինչ-որ բաներ փսփսաց, խոսեց, և արջը, կհավատա՞ք, իսկույն գլուխը կախեց ու հանդարտ վերադարձավ գազանանոց։

Բայց ի՞նչ մի այնպիսի բան ասաց զինվորը, ի՞նչ հասկացրեց արջին։ Անշուշտ ոչինչ արտակարգ ու հանճարեղ։ Արջն էլ հո լեզու չի՞ հասկանում։ Պարզ է, գազանին ազդեց հանգիստ, բարյացակամ ձայնը, խաղաղ հայացքը, վստահ շարժումները...

Գազա՞նն անգամ հակամետ է դեպի խաղաղ կյանքը։

ԱՐՅՈՒՆՔ

Արցունքը անգույն հեզուկ է՝ բաղկացած իննսունութ ամբողջ մեկ տասներորդական տոկոս ջրից, մեկ ամբողջ բառասունվեց տոկոս օրգանական աղբրից և զրո ամբողջ շորս տասներորդական տոկոս սեղանի աղից:

Բայց արդյո՞ք այդպես:

Օ՛, եթե արցունքներն իրենք լեզու առնեին և ասեին, թե ինչ են իրենք իսկապե՛ս...

ԵՐԿՐԱԳՈՒՆԿ

Երկրագունդը մղվում է առաջ տիեզերյան տարածության մեկ և ոչինչ բան չի կարողանա կանգնեցնել նրան, փոխել ուղղությունը: Ի՞նչ ենք մենք նրա առաջ: Չնչին փոշիներ:

Սակայն ոչ, այդ շնչին փոշիներն են, որ երկրագունդ են դառնել: Նրանք են երկրագունդ ստեղծողները:

Այդ նրանք են, որ գոյություն ունեն... իբրև երկրագունդ:

ՄԻ ՐՈԳԵ

Մեկ մեկ թվում է թե կյանքը հեղեղի պես արագ սլանում է, շալվվում է իզո՛ւր, անմտորե՛ն, հիմարարա՛ր...

Կծկվում ես, ուզում ես բռնել, պահել, որ շշուալվի՛, շհատնի՛...

ՄԻ ԵՍՑ ԳԱՐՁ ԾԵՄԵՐՏՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի սկզբից (որ նա չի ունեցել) մինչև նրա վախճանը (որ չի լինելու)՝ ոչ մի հրաշք չի պատահել: Ամեն ինչ, որ պատահել է՝ եղել է, լինում է և կլինի օրինաչափ ու բնական:

Սակայն ամենից զվարճալիին այն է, որ անգամ հրաշքը, որ պատկերացրել է այնքան դարերում մարդկությունը — այդ հրաշքը ինքը ևս չունի ոչ մի հակաբնական, գերբնական ուժին: Նրան ստեղծող միտքը բխեցրել է բնականից, բնականին նման, օր պատկերի բնականին»:

Բնականից դուրս ոչինչ չկա:

ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

Մեքենաների դրդոց է լսվում ինչ-որ տեղից: Հանգստանում եմ. սիրտս լցվում է քաղցր ուրախությամբ և ջերմությամբ: Աշխատում են այնտեղ. աշխատանքի ձայներ են դրանք: Ինձ սիրտ են տալիս դրանք. լավ է կյանքը, կյանքն ապրում է այնտեղ:

Եվ վերցնում եմ գրիչս:

ԳԱՐՆԱՆ ԱՆՁՐԵՎ

Քարնան վերջն էր: Սկսեց մի բարակ անձրն անուշ ցողալ: Զրե՛րը օձերի նման արագ-արագ սողեսող վազվեցին ճաքճքված հողի վրայով:

Այգու կավն պատին հենված կանգնել էի: Տեսնեմ ինձնից ոչ շատ հեռու պատի անկյունում նույնպես մի գյուղացի է կանգնել և նայում է դաշտին: Նրա գոհունակ դեմքին մի մանր

ժպիտ էր խաղում: Եվ նկատեցի, որ մեղմաձայն էլ խոսում էր անկյունից այն կողմ ինչ-որ մեկի հետ: Անշուշտ իր կովն էր, կամ եզը, որոնց ես չէի տեսնում:

Մի փոքր մոտեցա:

— Խմի՛ր, ազի՛ր շան, խմի՛ր, օխա՛ա՛ա՛յ,— ասաց նա խանդաղատած, ջերմագին սիրով:

Գնացի նրա մոտ: Այս ո՛ւմ հետ է: Պատի տակ ոչ ոք չկա: Նրա առջև սևահողն էր գոմշի նման փոված և իր ճաքվածքի երախով ֆոտացնում, խպշտում էր կենսալի ջուրը:

ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Երկու երեխա՝ քույր և եղբայր կովում էին տան առջև, մայթի վրա դեմ-դիմաց նստած:

— Դու լավ կանես՝ ձայնդ կտրես:

— Լավը դո՛ւ կանես. դո՛ւ ձայնդ կտրի, ապա ի՞նչ ճաշեր են, որ պատրաստում ես:

— Ես ի՞նչ մեղավոր եմ: Տվածդ ի՞նչ փող է, որ կարգին մը-թերք բերեմ, կերակուր եփեմ:

— Դու որ անշնորհք ես՝ մթերքն ի՞նչ մեղավոր է, անխելք:

— Անխելքը դո՛ւ ես:

Մի փոքր լուում են: Ապա կրկին մի այլ վեճ, այլ վիրավորա-կան խոսքեր:

Տարօրինակ գործի վրա են կարծես: Բայց հասկանալի է. իրենց տան դեպքերն են խաղում, իրենց կովարար ծնողների: Ու պահանջում են՝ ա՛յս գնիր, ա՛յն կարիր, ա՛յս ձեռք բեր, ա՛յս պատրաստիր: Ու իրար հայհոյում են: Հետո տղան վրա է վազում որ... «կնոջը» ծեծի:

Մնողներ, զգո՛ւյշ երեխաներից՝ նրանք ձեզ են խաղում:

Վե՛հ գործեր կատարեցեք:

Խոսեցեք Հայրենիքի՛ մասին:

Հերոսական, սխրագործական դեպքերի՛ մասին:

Ասպետներ՝ եղբք, գեղեցիկ եղբք:

ՄՏՔԵՐ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Մարդ այն ժամանակ է ապրում կյանքը, երբ չգիտի իր մահվան օրը, երբ չունի այնպիսի հիվանդություն, որից մեռնելու ժամանակը կամ գոնե հիվանդության մահացու լինելը հայտնի է իրեն:

Հե՛նց որ իմացավ, նա արդեն մեռնող մարդ է, մեռնում է արդեն, դա՛ է արդեն մահը, դա մահ է:

Կյանքը պարագոքս է: Մենք միայն ապրում ենք և միայն մեռնում: Մեկն ու մեկը դրանցից:

Մահի ժամանակ հո չենք իմանա կյանքը: Դա պարզ է: Բայց կյանքի ժամանակ էլ երբե՛ք չենք իմանում մահը:

ՆՎԻՐԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Մա՛յր... ո՛րքան նվիրական անուն: Բնության պես խորի-մաստ, ամենակարող:

Եվ կարծում եք միայն երեխա՞ն է, որ նեղն ընկած ժամա-նակ «մայրիկ» է կանչում:

Որքան պատահած կլինի վտանգավոր, ծանր հիվանդ պա-հին մտածել ես միամտորեն, որ մայրդ գար, նա կօգներ:

Շուրխովը մեկին պատմել է, որ Հայրենական պատերազ-մում մարտի ժամին իր կողքին կանգնած մի հայ մարտիկ ընկեր ծանր վիրավորվեց ու ընկավ և մեռնելիս հայերեն անծանոթ մի խոսք ասաց: Ու Շուրխովը միտն էր պահել այդ խոսքը և հե-տո հայերին հարցրել,— ի՞նչ է նշանակում «օ՛ֆ, մայրի՛կ»: Ար-

դյուք ձեզ չի՝ պատահել երազում, վտանգի պահին կանչել:

— Մայրի՛կ...

Գուք մի՛ ծիծաղեք, ինձ պատահել է: Զարթնել եմ ու ի՛նչս
ծիծաղել վրաս, բայց և լաց եմ եղել խանդաղատանքից:

ՄԻ ԳԵՂԵՑԻԿ ԱՂՋԻԿ

Մի գեղեցիկ ազգիկ պիտի մեռնի այս առավոտ: Բժիշկները
ոչ մի հույս չեն տալիս:

Բայց ինչպե՞ս պիտի լինի դա...

Ախր արդեն զարունն եկե՛լ է: Ախր ծառերը ծաղկե՛լ են, անդը-
թորեն գեղեցիկ փթթե՛լ են: Լեռները մանուշակագույն փայլո՛ւմ
են հեռվում:

Այսքան էլ սև առավոտ...

ԼԵՁՈՒ

Նրանք, երկուք, հանդիպեցին իրար: Զեր սպասում նրանցից
մեկը, որ մյուսը կենդանի է: Լսել էր, որ նրան դժբախտություն է
պատահել, որ նա չէր դիմանա այդ դժբախտությունը, կմեռներ:

Եվ ահա՛, ի՛նչ ուրախալի բան՝ նա կենդանի՛ է...

Իրար էին նայում և չէին խոսում: Ըխշտը՝ չէին կարողանում
խոսել: Խռչքը քիչ էղավ:

Զկար այն խոսքը...

Միայն նայում են իրար և...

— Հը՛մ,— ժպտում է սա:

— Չա՛,— ժպտում է վյուզը:

Կրկին նայում են իրար ոտից գլուխ ու լի... ժպտում:

— Չա՛, հը՛մ...

Ի՛հ: Նախամարդի՛կ են, ի՞նչ են, թե՛ ապագայի մարդիկ: Ո՞ւր
կորավ լեզուն, այսքան միլիոնավոր տարիներին լեզուն... «Հա՛,
հը՛մ», սրանով խոսք ու զրո՞ւյց կլինի:

Բայց տե՛ս, եղա՛վ:

Եվ որքա՛ն նրբություններ, խոր մտքեր այս մի «հըմ, հա»-ի
մեջ...

ՄԻ ՄԱՅՐ՝ ՈՐԴԵԿՈՐՈՒՅՄ

Մի մայր կար որդեկորույս: Մենք, երեխաներ անգետ ու ան-
ցավ՝ միշտ պատահում էինք նրան: Այդ մոր զավակը խելահաս
էր: Երբեմն հիվանդությունը ծանրանում էր, և նա օրերով կոր-
չում էր սրա-նրա տունը, փողոցներում, դաշտերում: Գնում տուն
էին բերում:

Հարազատները, որոնց խնդրում էր մայրը՝ տուն բերել իր
զավակին՝ նեղվում էին, անիծում խելագարին, տրտնջում էին, որ
նրա պատճառով հարկ էր լինում զիջել մոր պահանջներին, աղա-
չանքներին: զնալ բերել, պահել նրան, սնել վերջապես:

Տանջվում էր պատավը, շգիտեր ինչ անել:

Մի անգամ էլ ձմռան բուքի օրերին խելագարը գնաց դաշ-
տերն ու անհետ կորավ: Անշուշտ սառեց կամ գայլերին զոհ
դնաց:

Երբ մորը հայտնեցին նրա մահը, սաստիկ վշտից մայրն
սկսեց... պարե՛լ, երգե՛լ...

Զարմացանք, անգամ զվարճացանք:

Եվ այնուհետև պատահում էր, որ մայրը այստեղ-այնտեղ
նստում, խոսում էր իր կորած զավակի մասին: Մենք, երեխաներս
մոտ էինք գնում, որ նայենք: Նա լաց էր լինում, ծնկները ծեծում,
հառաչում: Եվ ծալապատիկ նստած տեղը այս-այն կողմ էր
շրջվում և ուրիշիկ վշտում:

— Վո՛ւշ Կարապե՛տս, վուշ Կարապե՛տս:

Ուղղակի պարում էր:

Նայում էինք քրեխաներս, ծիծաղում ու Գեոանալով կրվնում

էինք նրա պարային շարժումներն ու խոսքերը՝ «վուշ Կարապետը», «վուշ Կարապետ»:

Զվարճանում էինք անվերջ:

Անցել են շատ, սարսափելի՛ շատ տարիներ, և ես գրող եմ դառել, բայց հիմա չեմ կարող նկարագրել այն զգացումը, այն ծանր թախիծը, որով լցվում եմ, երբ հիշում եմ որդեկորույս մորը:

Միայն այդ խոր ցավը, որ մտել է սիրտս իբրև պատիժ՝ կարողանում է մի փոքր մեղմել իմ մանկական հանցանքը՝ ծիծաղը այն տարաբախտ մոր վշտի վրա:

Եվ ո՞րքան կյանքումս բարձրացրել է ինձ այդ վիշտը, ազնւ-վացրել, կրթել...

ԳՐԱԴԱՐԱՆ

Մի ամբողջ մարդկութան աչքեր նայում են այս պահարաններից:

Բազմահազար այս գրքերում մտածում և լուծում է պայքարող, հիացող և թախծող մի մարդկություն:

Ահա սեղանների շուրջը բազմաթիվ գլուխներ, նույնպես խորհող և ստեղծագործող՝ կթվել են այդ գրքերից շատերի վրա: Մարդկային հոգու անհուն աշխարհը:

Ի՞նչ են որոնում նրանք այդ գրքերում: Կյանք և հավերժութի՞ւն:— Ապրե՛լ, մնալ անվե՛րջ, հասնել ապագայի՞ն, գնալ նրա հետ դեպի անմահութի՞ւն...

Բայց սա ի՞նչ է թրթռում օդի մեջ:

Պլպլացող փոքրիկ աղոտ լույսի պես անցնում է նա այդ գլուխների վրայով, կտրում գրադարանի տարածությունը:

Օ՛, ցեցն է դա:

Ցեցը՝ գրադարանների տխուր բնակիչը: Սպառնալիքը ամեն տեսակ գրքերի: Այնքան փոքրիկ է նա, բայց ինչքան մեծ սպառնություն է փչում նրա թևիկներից: Չար մահվան շունչ կա այդ

սառնության մեջ: Ես կարծեմ տեսնում եմ նրա փոքրիկ միկրոսկոպիկ դեմքը, որ անհուն թախիծով և իրոնիայով նայում է շորս կողմ... Նայում բոլոր ստեղծագործողներին, մտածողներին, հավերժության համար գրողներին:

Կարծեմ ժպտում է նա օձային ժպտով, թե՛ մռայլվում է իբրև մահվան դիմակ:

Եվ ճախրում է նա այդպես մարդկային մտքի և ստեղծագործության վրայով: Իմաստության վրայով:

Զգո՛ւյշ նրանից: Դա մտքի, հոգու ցեցն է:

ՄԱՀԸ ԻՆՔԸ

Ե՛վ բժիշկն է հայտնել, և՛ ամեն ինչ պարզ է, վերջացել է, պատրաստ է — հիվանդը պիտի մեռնի: Հաշտված են ամենքը բոլորովին:

Բայց բոլորովին այլ բան զգացվեց և խորը ազդեց, երբ հիվանդը մեռավ:

Մեկ ուրիշը ատելի, անտանելի մարդ էր, և ամենքն ուզում էին, որ մեռնի:

Հիվանդացավ. անբույժ էր. վճուճած էր, որ կմեռնի: Եվ մեռավ:

Բայց ի՞նչ, ոչ ոք ուրախ չէր:

Մի ծանր լուռություն տիրեց նրա սենյակում, որ ժայռի պես ճնշում էր:

Ի՞նչ սենտիմենտալություն, ի՞նչ պատիվ նրա հանդեպ — կասի որևէ մեկը մեզանից:

Ո՛չ, դա մարդկությունն է, այդ պատիվը մարդու մարդկայնության «պաշտոնին» է տրվում, որ ամեն մարդու պոտենցիալում կա: Դա նրա մարդկային իրավունքն է: Հակառակ իրեն՝ մարդը ունի այդ իրավունքը:

Մարդո՛ւ իրավունքը: Նա մարդ է...

ԱՊՐՈՂԸ

Ինքու. ուսուցիչ էր: Մի ծեր հայր ունեւր, մի կին, որ հիվանդ էր, պահանջկոտ, դժգոհ, քմահաճ: Պիսի մեռներ — հաստատ էր այդ: Հայրը ուտել էր ուզում (սովի ծամանակն էր). չէին տալիս: Քոլորը գնում էր հիվանդին: Եվ մի օր հայրը մեռավ: Նա, որ առողջ էր: Բայց դեռ մնում էր մեռնող հիվանդը, դեռ երկար տարիներ չէր մեռնում, դեռ մնում էր ու տանջում, տանջում, տանջում...

Ե՛—Ե՛—Ե՛Ս!.. Ե՛—Ե՛—Ե՛Ս...

Նախասովետական յամանակ խմբագիրը մի տեղեկագրական ակնարկ էր տպել իր ամսագրում, իր ստորագրութեամբ: Խմբագիրը վաղուց մեռել էր: Ամսագրի աշխատակից մի գրող շարունակ գանդատվում էր, որ խմբագիրը իր չեմ հիշում՝ հոգվածն էր յուրացրել, թե՞ մտքերը, թե՞ գրողը պատմել էր նյութը, թե՞ գրած էր տվել այն:

Հիշում եմ կաֆեում մինչև հոգու խորքը զայրացած գրողը խոսում էր այդ մասին, փաստարկում, ճշգրտում, ապացուցում, իր այլ հոգվածները մեջ բերում, նշում որոշ բառեր, դարձվածքներ, Եվ բուռնցքով թակում էր օդը: Խեղդված ձայնով վնգում էր, Եվում:

— Ե՛-Ե՛-Ե՛ս եմ գրել, Ե՛-Ե՛-Ե՛ս եմ գրել, Ե՛ս, Ե՛ս, Ե՛ս:

Պետք էր տեսնել, թե ինչպես էր դողում նա, թե այդ պահին ինչպես էին ուռչում նրա վզի երակները, ինչպես կապուտկում էին նրա դեմքի մկանները, ինչպես արյուն կոխած աչքերի բիրերը դուրս էին բնկնում, շարութեան թուլմով պսպղում:

Օ՛, այն մինչև հոգու հատակը: ատելավառ հայացքը: այն կիրքը, այն վրդովմունքը, այն աններող ոգին, երբ կոկորդոս խեղդվում էր բառը և նա դողահար վնգում էր:

— Ե՛-Ե՛-Ե՛ս եմ գրել, Ե՛-Ե՛-Ե՛ս, Ե՛-Ե՛-Ե՛ս...

Ո՛րք է հիմա այդ եսը: Կարելի լինե՞ր գտնել այն խմբագիրն, խոստովանել տալ, որ յուրացրել է այս գրողի հոգվածը: Ապա և գտնել պատն և ասել. այո՛, այո՛, այո՛, դո՛ւ ես գրել, դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ: Կարո՞ղ է այս գրողը հիմա լսել այս, հասկանալ, գոհանալ... Ո՛րտեղից...

Ավա՛ղ, նա հիմա միայն մի՛ բան է կարողանում անել.— փոշիանալ և փոշիանալ: Ինչպես «ամենահանցավորը», «ամենատելի» այն մարդը, որ (ո՛վ ո՞ճիր) յուրացրել է այս գրողի հանճարի արգասիքը:

ԵՐԵՆԱՆ

Որդեգրել են երեխային, և նա առաջին օրերից ազատ էր պահում իրեն, պահանջում էր, զայրանում, թավալվում հատակին, ոտներով ծեծում:

Բայց որքան սաստկացնում էր այս բաները, որքան շատ էր նեղութուն տալիս, ավելի էին սիրում նրան, կապվում հետը:

Այդպես է: Նեղութունը, ջանքը, տանջանքը, հոգսը՝ կապում են...

Մի անգամ էլ ծանր հիվանդացավ, հազիվ մահից ազատվեց: Ավելի՛ և ավելի՛ ուժեղ կապվեցին:

ԿԱՏՈՒՆ

Չագեր ունի, ուստի և ինչ տալիս ենք իրեն՝ չի ուտում, տալիս է նրանց:

Ուղղակի սպառվում է սննդից զրկվելով: Ստիպում ենք՝ համատում է, չի ուտում: Փակում ենք խոհանոցում, միտք դնում առջևը: Գործը չի աւտում. կանչում է ձագերին: Նրանք շարվում

են փակ դռան մոտ, իսկ նա մլաւում է, կանչում: Ուղղակի լաց է լինում:

Բայց և չի կարողանում մինչև վերջը զսպել նաև ի՛ր ախորժակն ու քաղցը:

Եվ... ուտում է... աղիոզորմ լաց լինելով:

ԿԱՏԱԿՆԵՐ



Արևածաղիկը ողջ օրը հետևում է արևի շարժմանը և շարունակ դեմքը նրան դարձրած այդպես պահում է նրա ծագումից մինչև մայրամուտը:

Իսկական արևապաշտ:

Զրադաշտական...



Երևակայեցե՛ք: Ամբողջ կյանքում լարված հետևում էր իր առողջության, կատարում էր առողջ կենցաղի բոլոր կանոնները, զգույշ էր ամեն մի վնասակար բանից և ի՞նչ... վերջը... շատ երկար ապրեց:

Իսկ նրա բարեկամը, որ ընդհակառակը, անհոգ էր այս բոլոր բաներում, անկանոն կյանք էր վարում, երևակայեցե՛ք... նա ևս երկար ապրեց:

Բայց ահա արդեն մի ուրիշը, որ և հետևում էր, և չէր հետևում կենցաղի կանոններին... նա ևս երկար ապրեց:



Փոքրահասակների ուսուցչուհին ելույթ ունեցավ գրողների գրական երեկոյին: (Ավելորդ է ավելացնել՝ մեծահասակների...):

Հիմա՛ խոսում է այսպես.

— Երեխանե՛ր: Ուրեմն այսպիսով մենք տեսնում ենք... պետք է կարծել որ... Ես հույս ունեմ, որ երեխանե՛ր, դուք մեր մանուկների ընթերցանության համար կտաք լավ գրքեր... Ուրեմն այսպիսով, երեխանե՛ր, սպասում ենք ձեր պարտականության ևստարմանը:

Շատ ծիծաղեցին:

Հազիվ գլխի ընկավ...



Շատ գրողներ նման են շոֆերի, որը մեքենան քշելիս՝ կարծես ստարտից թռչում է դեպի ֆինիշ, շտապում է արագ հասնել տեղ և տանից-օջախից հեռու — եթե երկու բոլակ ուշ հասնի: Նըրան շահագրգռում է այս երկու կետերից վերջինը միայն:

Ինձ՝ իբրև գրողի շահագրգռում է այս երկու կետերի միջին տարածությունը: Այնտեղ է կյանքը, ապրումները, խոհերը, տարածության զգացումը և ամեն բան:

Մի՛ թուեք, կա՛նգ առեք ճանապարհին, դիտեցե՛ք, խորացե՛ք:

ՄԵԾ ՍԻՐՏԸ

Հուշակավոր գյուտարարներ չէին Մոսկվայում ապրող Գավրիլին ամուսինները: Մարդը գիտությունների դոկտոր չէր. նա սովորական հաշվապահ էր գործարանում: Իսկ կինը՝ տան տնտեսուհի: Մի վաղամեռ զավակ էին միայն ունեցել: Ապրել էին անզավակ և ծերացել: Կյանքը շորացել էր աշնան դաշտի պես և սկսեց փչել սառնաշունչ հյուսիսը: Ի՞նչ էր սպասում ավելի հետո: Խորին ծերություն, մոայլ տխրություն և մահ:

Հնար չկար առաջն առնելու: Մերություն, մահի դեմ ի՞նչ հընար:

Թերևս մի գերհանճար գիտնական անի նաև այդ անհնարին գյուտը...

Բայց ամուսիններն այդ գյուտն արին: Հենց ուղղակի ժերու-
թյան և մահի դեմ: Եվ ի՞նչ եք կարծում՝ վիտամիններ, հանքա-
յին շրե՞ր, կոմի՞ս...

Ո՛չ այս և ո՛չ այն:

Նրանք որդեգրեցին պատերազմի զոհերի որբ երեխաներ: Առաջ
ևկավ մեկը: Սա եղավ գարնան ավետաբեր ձնծաղիկը: Դրան հե-
տևեց մանուշակը և մյուս ծաղիկները: Եկան իրար հետևից վեց
երեխաներ և տունը լցրին այնպիսի մի գարնան բուրմունքով ու
չերմությամբ, որի դեմ ոչ մի ծերություն և մահ չէին համարձակ-
վում գրոհել:

Մտայլ սենյակները լցվեցին թռչունների ճովողյունով: Ե՞րգ,
խա՛ղ, ծիծա՛ղ... Մեկը նկարում է, մյուսը նվագում, երրորդը
տիկնիկ է խաղում, չորրորդը նստում է պապիկի ծնկան, մյուսնե-
րը տատիկի ծնկներին, զրուցում, քրքջում, կատակում...

Ահա շարվել են սեղանի շուրջը՝ գեղեցիկ, ուշիմ, առողջ: Հրա-
շալի երեխաներ: Եվ ի՞նչ ուրախություն, ա՛յդ ասա:

Եվ հիմա ծերության ժամանակ էլ չկա: Եվ ո՛ւր է նա: Հազիվ
մարդ ու կին հասնում են մանկության գործերին. ա՛յս մանկա-
պարտեզ է, ա՛յս դպրոց է, ա՛յս ծնողական ժողով է: Մերության
մի բույս իսկ ժամանակ չկա...

Մա՛հը, ո՛ւր է նա: Թող և նա՛ գա: Նրա համար է՛լ ժամանակ
չի լինի:

Ամուսինները, որ կորցրել էին իրենց երիտասարդությունը,
ինչպես երևաց մի բան չէին կորցրել և դա փրկեց նրանց: Եվ
ի՞նչ էր դա, որ դառավ գյուտ ծերության և մահի դեմ: Հանճարեղ
ինտուի՞ցիա և երջանիկ վայրկյա՞ն:

Ինչո՞ւ չէ: Այո, հանճարեղ ինտուիցիա և երջանիկ վայրկյան,
և թե կարելի է այդպես կոչել մեծ սիրտը:

ԳՈԳՈՒԻ ԱՐՁԱՆԸ

Պատմում են, որ Հայրենական պատերազմի ժամանակ ֆա-
շիստները վայր գլորեցին Գոգոլի արձանը և գնացին:

Բայց ինչո՞ւ արին այդ Գոգոլին ոչնչացնելու համա՞ր:
Կարելի է ոչնչացնել մի շենք, ավերելով, ցրիվ տալով, ջար-
դելով գերանները... Բայց ի՞նչ կարելի է անել իրեն՝ Գոգոլին, վայր
գլորելով նրա արձանը և գնալով:

Գոգոլը կծիծաղեր, թշնամու հետևից կնետեր իր խոսքի նետը
և կսպաներ:

Օ՛, որբան վտանգավոր է ձեռք բարձրացնել Գոգոլի վրա:

Հասարակ լուսանկարներ են, որոնց նայում եմ հաճախ:
Մարդկային փաստաթղթեր: Գործիքը եղել է մարդկանցից, նրանց
կյանքի մի վայրկյանը և դրոշմել հասարակ թղթի վրա: Եվ այդ
վայրկյանը մնացել է, քարացել պատկերազարդ հանդեսի մեջ:

Լուսանկարների բնութագծերը, նրանց գործերը, կյանքն ամ-
բողջ՝ բոլորը կա նրանց հայացքում, գեմքին, կեցվածքում, պաշ-
տոնի հանգամանքներում...

Կա ամբողջ մարդը, որ չես թաքցնի ոչ մի կերպ, որ միշտ
հայտնվում է, ուր էլ լինի:

ԲՈՔՈՆԸ

Շարքով կանգնեցրել են գերիներին նրանց հաց բաժանելու
Բարի կարմիրբանակային իր լայն կրծքին բոբոններ գրկած
անցնում է նրանց առջևով և ամեն մեկին տալիս երկուական բոբոն:
Առատ, թող ուտեն...

Նրանք առել են այդ բոբոնները:

Նայում ես, թե ի՞նչպես են ստանում նրանք բոբոնը: Նրան-
ցից մեկը հացը գոհունակ պահում է մի թեի մեջ և ուղիղ զինվո-
րավարի ձգվում: Այսինքն՝ «զգաստ»... Նրա համար ամեն ինչ

գիսցիպլին է. գնալ կովի, երբ հրամայում են, սպանել, երբ հրամայում են, գերի ընկնել, հաց ստանալ և զգաստ կանգնել, երբ ինչպես նրան թվում է այդ, հրամայում են:

Բայց այդպես չի կանգնած նրա կողքինը:

Սա հացերը սեղմել է մի թևի մեջ, մյուս թևը թափով վայր է կախել:

Վայր է հակված նաև նրա գլուխը: Գեմքը մտախոհ է, աչքերը սևեռել է գետին: Անհանգիստ է: Նա խոր ապրումներ ունի: Խնչ է մտածում նա:

Խնչ է մտածում նա:

Արդյոք ափսոսում է, որ իրեն պոկել են սպանելու, ավերելու գործից: Ինքնասիրութունն է վիրավորվել՝ թշնամու ձեռքից հաց բնդունելով: Գուցե տենչում էր ձեռ գցել մի ամբողջ երկիր և ոչ թե մի բոքոն և դա զայրացնում է նրան:

Գուցե խելքի է գալիս՝ թե ինչացո՞ւ էր այս պատերազմը:

Թվում է, թե նա մտածում է այդ հացի մասին, թե ինչպես է ձեռք բերում այն:

Ո՞վ գիտե:

Մտածի՛ր, մտածի՛ր: Այդ հացը, որ դու բռնել ես քո գեների սովոր ձեռքում՝ բուսել է մի արդար երկրի աշխատավորի ձեռքով:

Դա երկրի մարդու հացն է, որ ապրեցնում է աշխարհը և քեզ, որ այս ըոպելիս բռնադատված ես մարդկայնորեն ստանալու և մարդու պես ապրելու նրանով:

Առայժմ այդքանը՝ սոցիալիստական բոքոնը...

ՀԵՐՈՍԱՄԱՅՐԸ

Որքան նման է նա իր զավակին: Կարծես իր զավակն է ծնել նրան: Դե այդպես է՝ լուսանկարիչը նկարահանել է նրան հետո, երբ արդեն հռչակվել է նրա զավակը: Նա հայտնի դառավ հերոսացածի շնորհիվ: Որքան նման է նա իր զավակին... Ահա նրա կամքի ուժով սեղմված շրթունքները, նրա բաց ու շիտակ գեմքը, անձնվիրության պատրաստ հայացքը:

Կանգնած է մայրը, նա բանվորուհի է, գործարանում, սեղանի մոտ, մկրատը ձեռքին և մի պահ մտորմունքի մեջ խորասույզ՝ նայում է հեռուն: Իսկ հեռուն, մայրը գիտե ինչ-որ մի տեղ օդում, կրակի մեջ այրեց իրեն. նրա զավակը՝ հայրենիքի հաղթության համար:

Այդ իմացել է, գիտե մայրը...

Ի՞նչ չի ողբում նա: Աշխատում է:

ՄԵՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Ամբողջ աշխարհը նրանց է նայում, իսկ նրանք չեն նայում ոչ ոքի:

Նրանք հասարակ են, պարզ, մարդկային: Նրանք փոխում են ամբողջ աշխարհը, նրանք գործեր են կատարում, որոնց դիմաց զարմացած ու հիացած է ամբողջ աշխարհը:

Սակայն նրանք չեն էլ տեսնում այդ, չգիտեն:

Միայն երբեմն ծիծաղում են նրանք՝ երեխաների պես...

Իսկակա՞ն սասունցի դավիթներ...

ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆԸ

Դիմել է ՀԿԵՄ կազմակերպության, որ կամենում է մարտի գնալ իբրև կոմերիտական: Ցանկությունը հարգել են, նա քաջարի և անձնվեր մարտիկ է, և ահա քաղաքական բաժնի պետը ժպտալով նրան հանձնում է կոմերիտականի տոմսը: Նա ձեռքը մեկնել է, որ ընդունի:

Բայց նախքան տոմսն ստանալուն ներկայանալը... Լավ հագնվել է, պատրաստվել: Ֆրանստավարի, կոկ սանրվել է, ճակատին ձեփել սև փայլուն մազերը, գլխարկը ծռել և խնամքով

գրել մազերի վրա, օձիքը կանանավոր կոճկել... Մաքուր ածիլված
գեմքը մի փոքր շարաճճիորեն ծպտում է:
Երևում է, որ մի թիչ զարգարվել է քաշարիությամբ, սիրում
է կովել... Դե, կարիճ է, երիտասա՛րգ...

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ

Կովերի նախիրը, ոչխարի հոտը իրար մեջ անցած, հորթերի
հետ խառն անցնում են գաշտով: Մի քանի մարդ էլ բշտում են
նրանց շտապով: Առատ խոտը տրորվում է նրանց կճղակների
տակին: Իսկ շուրջը դաշտեր են՝ ընդարձա՛կ, ազա՛ա, անծալ-
բածի՛ր:

Բայց սա նախիր չէ և ոչ էլ հոտ: Սրանց դուրս շեն բերել գյու-
ղից արածելու և ոչ էլ բշտում տուն՝ կթելու:

Սրանց բշտում են հրդեհված, վտանգված գյուղերից, ազատաժ-
վերահաս թշնամուց, հապճեպ սախում արագ անցնել դաշտա-
վայրը:

Բայց ո՛ր են բշտում, ի՞նչո՞ւ, ի՞նչ կարիք կա հեռանալ այս
խոտավետ, խաղաղ դաշտերից: Այս լայնարձակ արոտներում
կարելի է ազատ ապրել, շնչել աշխարհում:

Խեղճ անասուններ, ի՞նչ լեզվով հասկացնես նրանց երկոտնյա
զազանների տաժանամիտ արարքները: Որ պետք է գնալ, աղատվել
նրանցից, որ պետք է շտապի՛լ, շտապի՛ւ...

Եվ ահա կովերից մեկը դունչը հպել է գետնին և հանգիստ
պոկում է հյութալի խոտը:

ԳԵՂՁԿՈՒՂԻՆԵՐԸ

Կայնալին, հեռածիգ գեափով ձգվում է և գնում կորում
հեռվում, հորիզոնի մեջ, գետն ի վե՛ր, մի մեծ բազմություն կա:

Նանց: Գեղջկուհիներ են, բահերով փորում են մի երկայն փոս:
Ջրա՛նցք է սա, որի միջով պիտի հոսի կենարար ջուրը գեպի
անվերջ դաշտավայրերի հողը: Շուտով, ահա շուտով կբացվի
գյուղական մեծ հանդեսը, դրոշակներով ու ծաղիկներով զարդար-
ված գյուղացիք կգան դիմավորելու կապուտաշյա արծաթահեր հե-
ղուկին: Նա կվազի և տենչանքով կփարվի սևաշյա հողին: Եվ կծրն-
վեն բյուրավոր ծաղիկներ, դաշտերում կալեկոծվեն ոսկեծղի
արտերը և երկրի դուստրերն ու պատանիները երգելով կանցնեն
կերթան հեռուն, հեռուն:

Չո՛ւր մտքեր. սա մի երկար, շարագույժ խրամատ է. այստեղ
մարտ պիտի մղվի՝ կատաղի, համառ և արյունահեղ...

Մի պառավ կին, սակայն թողել է մի պահ փորելը և կոր
մեջքը դրստած նայում է դեպի գետը, դեպի հեռուն: Նայում է և
մտածում: Նա պնդակազմ է կոճղի պես, կարճավիզ ու կոացած:
Նա լիքն է ցասումով, անեծքով... ո՛չ, ավելի սարսափելի մի
ուժով: Ահա՛, ահա՛ վայր կշարտի նա բահը, աշխատավոր ձեռքը
կկարկառի օդի մեջ և գերբնական ուժով կորոտա դեպի հեռուն
մի ինչ-որ սասանիչ խոսքով և դրանից կավերվեն երկրներ, կկոր-
ծանվեն պետություններ և աշխարհը ջրաձգորեն կցնցվի...

ՄԱՂԸ

Հասարակ լուսանկարը կանգնեցրել է նրա ողջ կյանքը.
և՛ զազանաբար սպանությունները, և՛ խժոժությունը, և՛ սարսափ
սփռելը, և՛ կանանց, երեխաների խոշտանգումները: Նա պիտի
հրդեհներ ամբողջ երկրներ, պետք է տիրեր ողջ աշխարհին: Ահա
այստեղ դադար առավ ամեն բան:

Ընկած է նա մեջքի վրա, թևերը տարածել այդ օտար երկրի
ընդարձակ դաշտի վրա:

Նրա կողքին դադար է առել նաև նրա անհանգիստ մոտոցիկլը,
որի հետև կաշվե պատյանի վրա նկարված է ոսկերոտի և գանգ:
Մա՛հ:

Ամենուրեք հոնդացնում էր նա իր այդ գանգակիր մեքենան և սլանում: Մահվան կրթով մոլեգնած՝ անցնում էր մարդկության բնակարանի՝ աշխարհի վրայով, նայում էր՝ երկրներ, ժողովուրդներ, և նրանց ուսերին տեսնում էր միայն գանդեր, գանգեր...

Ծարավի էր մահվան...

Մահ տվեք նրան, միայն մահ:

Եվ ահա գտել է նա այն, ինչին ձգտում էր մոլեգին ազահոթյամբ:

Բայց մահը, որ նա գտել է՝ այնպես չէ այլանդակ ու շար, ինչպես նկարված է նրա մեքենայի պատյանին: Ո՛չ, Իսկական մահը, ավելի զթառատ, քան ինքը, մի խաղաղություն է դրոշմել նրա դեմքին և հանգիստ փակել է նրա ազահ աչքերը:

ՎԻՅՅՈՒՇԱՆ

Շատ է երիտասարդ: Ուղղակի բաց թողնես՝ գնա ֆուտբոլ խաղա կամ հեծանիվ նստի և զբոսնի դաշտերում: Եվ հիմա, որ ամբողջ մի լայնածավալ երկրի հերոս է, կրծքին «Ոսկե աստղ» նրան երևի թվում է, թե ինչ-որ պատահաբար եղավ այդ:

Նա բարանել է թշնամու մի ինքնաթիռ, որ կամենում էր ուռմբեր թափել կանանց և երեխաների գլխին:

Լուսանկարել են նրան իր ծնողների հետ: Աչում կանգնած է մայրը, ձախում՝ հայրը: Սրանք էլ շատ հասակավոր չեն:

Ահա մայրը. դե՛ նա ավելի իրավունք ունի, քան մի փոքր խստակյաց հայրը. մի թևով գրկել է իր անտանների շարաճճի գավակի երկու ուսը:

Հայրը զուսպ է և լրջադեմ:

Տարօրինակ պատկեր է ստացվել...

Կարծես հերոսը շարաճճի տղա լինի, որ իր խաղի ժամանակ մի շատ վտանգավոր գործ է կատարել և ազատել մահից հարյուրավոր կյանքեր:

Եվ ծնողները շփտեն՝ կշտամբե՞ն նրան. «Վիտյուշա, ախր ինչպե՞ս կարելի էր...», թե՞ գովեն նրա սխրագործությունը:

Մտղներն իրար են նայում...

Եվ ահա այդ թեթև երկյուղի հետ խառն նրանց հայացքը լցրել է մի երջանիկ գյուտի ուրախությունն ու հպարտությունը:

— Ախր նա հիմա ամբողջ աշխարհի առաջ հերոս է... իրենց վիտյուշան...

ՆԱԽԻՐԷ

Բուքը խելագարվել, մոլեգնորեն զզզում էր անծայրածիր տափաստանը: Հովիվները շղթա կապած հուսահատ կովում էին բուքի դեմ, կատաղի ճիգեր էին թափում ահաբեկված նախիրը քշելու, փախցնելու դեպի արևելք:

Ժողովրդական մի հոծ զանգված նահանջի մեջ էր:

Հարկավոր էր իրենց զցել որևէ ապաստան, փրկել նախիրը, այլապես նա կթափվեր գետին, կմնար ձյան վրա:

Շատ վաղուց բուքի համատարած վարագույրի մեկ երկու բուպե բացված ճեղքից երևացել էր հեռավոր մի գյուղ:

Այնտեղ էին շտապում հասնել հովիվները, և կովերը կփռվեին, եթե գյուղը հեռու չլիներ: Հովիվներն իրենք էլ շշմել, վայրենացել էին անքնությունից, հողնածությունից: Հույսները կտրվում էր:

Եվ իրոք էլ բան դուրս չեկավ, անասունները վերջնականապես ուժասպառվեցին և սկսեցին մեկ-մեկ շոքել և տփկած մնալ՝ մերկ ստինքները խրելով սառը ձյան մեջ:

Ահա այստեղ էր, որ հովիվները խելքները կորցրին, կորցրին ամեն հասկացողություն: Ի՞նչ, կովերը սառը ձյան վրա թափվա՞ծ...

Դա արհավիրք էր արդեն: Խելքից մտքից վեր բան: Դա ամենամեծ սարսափն է գյուղացու համար, որ միայն գյուղացին կհասկանա: Կաթի, անասունի շահից զրկվելու վտանգը: Ամենեվին ոչ:

Այդտեղ ուրիշ բան կար: Արդյոք ինչ-որ մնացո՞ւկ նախնական մարդուց: Դա մի փոքր նման է այն զգացումին, որ լուռ դաշ-

տալ գնալիս տիրում է մարդու: Հանկարծահաս երկրաշարժ, և
ահա լսում ես երկրի անդունդներից հասնող մի օտարոտի որոտ-
մունչուն: Մի տեսակ «երկրագնդի ձայնը»: Կամ երբ հանկարծ
տեսնում ես լեռան ահագին լանջը գահավեժ իջնում է խոր ձորը:

Հովիվներից մի քանիսը սարսափահար վազեցին դեպի գյու-
ղը, լուր հասցրին: Եվ ահա ուրիշ տեսարան բացվեց: Իրար ձայն
տվին այնտեղի գյուղացիները և սահնակներով հասան աղետի
վայրը: Նրանք ևս սարսափահար եղան, հեռվից տեսնելով գետ-
նամած նախիրը:

Եվ կատարվեց մի իսկական մեծագործություն: Խորին ակնա-
ծանքով, խնամքով, գուրգուրելով՝ թռկերը պեցեցին կովերի փորնե-
րի տակ, բարձրացրին սահնակների վրա և տարան իրենց տաք
գոմերը:

Փրկվեցին այնքա՛ն սիրելի կովերը: Ի՛նչ հաճույք և հան-
գըստություն:

Բայց արժի խորհել արժն սարսափի մասին.

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԲՐԻԳԱԴԸ

Հասարակ լուսանկար է «Советский Союз» ժուռնալի առա-
ջին էջում: Տարին հազար ինը հարյուր հիսուն և մեկ, համար
տասնմեկ:

Ես կխնդրեի նայել:

Դա մի վեհ պատկեր է:

Լենինի անվան գյուղատնտեսական արտելի կոլտնտեսա-
կաններ: Ստորագրել են Համաշխարհային Խորհրդի Խաղաղու-
թյան Պակտի դիմումի տակ: Առջևում բրիգադիր Սոկոլովան է
սեզանի հետև կանգնած, մի ձեռքում գրիչը, որով ստորագրել է
մյուսը՝ թղթի վրա:

Վճիռն արձակված է: Բոլորն ստորագրել են և կանգնել իրենց
բրիգադիրի հետևը հպարտ ու վճռական պողանքով:

Նրանք հասարակ գյուղացիներ են, ազնիվ աշխատավորներ,

բայց և հրաշալի հագնված են, կերպարանքները կիրթ, տեսքերն
ինտելիգենտ, աչքերը իմաստնալի:

Իսկ ֆունի վրա ցորենի հսկա դեզն՝ է նրանց աշխատանքի
արդյունքը:

Պետք է նայել սակայն նրանց աչքերին: Ի՛նչ ազնիվ կշտամ-
բանք. պահա՛նջ: Նրանք պարզորեն խոսում են.

— Ահա, ստորագրեցինք: Եթե դուք կարծում եք, թե մենք
չգիտենք, թե ինչեր եք անում դուք այդտեղ՝ դիտցեք, որ դա շատ
լավ գիտենք:

Եթե դուք ուզում եք իմանալ, թե ինչ ենք վճռել մենք՝ ահա՛.
աշխատել և ազնվորեն ու հաստատ պաշտպանել խաղաղությունը:
Իսկ եթե դուք կարծում եք, թե մենք մոռացել ենք մեր վեր-
քերն ու կորուստը:

Եթե դուք կարծում եք, թե մենք մոռացել ենք Մոսկվան, Լե-
նինգրադը, Ստալինգրադը, Օրյոլ-Կուրսկը և Բեռլինը:

Այդ մե՛նք ենք:

Մի՛ վախեցնեք մեզ:

էյ դո՛ւ-ո՛ւր...

ՊԱՏՐԱՆՔ

Երազո՞ւմն է սա, թե՞ արթմնի:

Ի՛նչ առասպելական ֆիգուրներ են եկել շարվել գետնի այս
մեծ պատովածքի եզրին և ինչ-որ զոհերի սպասում:

Հսկայական ընձուղտի երկարածիգ վզների վրա թռչնի երկա-
րակառուց գլուխներ:

Իսկ գետնի վրա քառակուսի ձևով ծանրացել, ճնշում են հողը
չորս-չորս, կարճ ու հաստ ոտներ:

Իխտիոզավրեն՞ր են, թե՞ նրանց կմախքները:

Երևի հազարավոր դարերը ետ են դառել, երկրի՝ պատմու-
թյունը կրկնություններ է անում՝ տանելով մեղ դեպի այդ հրեշ-
նների դարերը:

Եվ նրանք եկել են ճարակելու, ոչնչացնելու մեր անտառներն ու դաշտերը, կործանելու քաղաքներն ու շենքերը:

Եվ ի՞նչ սարսափ. պետք է կրկին սկսենք անցնել վայրենի, բարբարոս դարաշրջաններ:

Իրոք՝ երազում ենք տեսնում սրանց, թե՞ արթմնի:

Ո՛չ երազ. ո՛չ առասպել:

Ոչ իխտիոզավրներ և ոչ նրանց բրածո կմախքները:

Գրանք կոմունիզմի քայլող էքսկավատորներն են:

Սա մեր հրաշալի իրականությունն է:

Եվ դարերը շեն շրջվել ետ, դեպի մղձավանջային մի պատմություն, այլ ընդհակառակը՝ հսկայաքայլ առաջ են սլացել դեպի ապագան:

Սլացել են կոմունիզմի՞ն ընդառաջ:

Կոմունիզմն է սկսվում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՎՈՒՄՅԱՆ

Չեմ գիտեր թե 1800 քանիի՞ն աշխարհ եկավ այս հանճարը, սակայն աղեկ գիտեմ, որ աշխարհ դալուն պես անմիջապես ածիլվեցավ և հրամայեց, որ սենյակին կահկարասին փողոց թափեն. որով հասկցվեցավ թե... ուժիսոր մը աշխարհ եկավ:

Անշուշտ հայոց կաթողիկոսի մը պես վարվեցավ, որովհետև ամեն հայ կաթողիկոսի պարտականությունն է կարծելը, թե ամեն բան իրենցմով կսկսի և իրենցմով կվերջանա:

Աթոռները և սեղանները (որ սենյակին մեջ անկարգություն կծառայեն) փողոց նետել տալեն քիչ ետքը օրորոց մը պահանջեց: Երբ օրորոցը բերին և անոր ձողեն կախած հուլունքները տեսավ՝ շատ սրտողեցավ և՝ «Այս հուլունքներուն հետ քիչ մ'ալ դափնի կախեիք նե՛ զե՛շ կըլլար, ավանակներ», — ըսավ ու սկսավ լալ աղաղա գերասանը:

Դափնին բերվեցավ, որ օրորոցին ձողեն կախվեցավ և անոր շուքին տակ քնացավ Օվիկ, որ շատ դափնի պիտի տեսներ ապագային... «սուպ»-երուն մեջ:

Սակայն ճշմարիտն ըսելու է: Որքան որ նեղսիրտ էր Օվիկ, այնքան ալ դյուրին համոզվող էր: Երբ բարկացած ըլլար և օրորոցին մեջ լար, անմիջապես տնեցիք քովը կուգային և կծափահարեին, որով և ձայնը կկտրեր Օվիկ:

Կերածն էր կաթ, դափնի և քիչ մըն ալ գովեստ, որով և կահեր և կմեծանար:

Իր դերասանական և ուժիսորական գործունեությունը շատ վաղ սկսավ ի գործ դնել:

Փողոցին շնորհ կրոներ և ընչացքներն ու դունչերուն մազերը կխուզեր: Իսկ երբ իր խաղընկերները սխալմամբ իրենց տունը գային՝ երեսներուն «վաքս» կքսեր, վրանին կպոռար, կգանահարեր, և երբ ամեն բան կատարյալ կըլլար՝ ձեռները գրպանը կդնէր և գոհունակությամբ կխնդար իր բրածին վրա:

Հայրը իր գավկին ընդունակությունները տեսնելով՝ հուսահատեցավ և դինքը պատժելու համար ներսխայան դպրոցը դրկեց... որով պատժեց ներսխայան դպրոցը... որ ուժիսոր չէր սակայն: Ազգային վարժարանը Օվիկին ալ դիմացավ, ինչպես և շատերուն գիմացի էր:

Քանի մը տարի աշակերտությունը ըրավ, որ ավելի վարժապետություն էր, քան աշակերտություն: Օր մը դասատուն նկատողությունը ըրավ ուղիղ նստելու՝

— Գլոթե ասանկ կհրահանգե իր «Կանոնք դերասաններու համար»-ին մեջ, — կպատասխանէ Օվիկ՝ մազաչափ մը տեղեն չի շարժելով:

— Բայց... բայց... բայց, չեմ գիտեր Գլոթեին հրահանգներն ի՞նչ առնչություն ունին դասին հետ, — կպոռար հուզված գասատուն:

— Առնչությունը վերջեն կիմանաք, — կըսեր Օվիկ, մազաչափ մը տեղեն չի շարժելով:

— Շատ հանդուգն եք, — պոռաց գասատուն:

— Գեշ չէ, խճճումը կսկսի, — նկատեց Օվիկ, մազաչափ մը տեղեն չի շարժելով:

— Դուրս կորեք սրկե, — պոռաց գասատուն սրդողած:

— Տոմարթիք վայրկյան մը, — մոմաց Օվիկ, առանց տեղեն շարժելու:

— Հսել է ե՞ս պիտի երթամ, — ըսավ գասատուն և հեռացավ դասարանեն:

— Խաղը լուծվեցավ, — դիտեց Օվիկ, առանց մազաչափ մը տեղեն շարժելու, — տղայք, խենթի պես կսիրեմ բեմը, խենթի պես... սակայն ի՞նչ հոյակապ տեսարան. տեսա՞ք աչքերուն թիբերը դուրս ինկան: Իրավցնե, գեղեցիկ վերջաբան:

Ըսավ, վճռական շարժումով մը տեղեն ելավ ու՝ շիփշիտակ ամբիոնը:

— Տղայք, ահ, սիրելի ընկերներ...

Ավելի մեծ մոնոլոգի մը պիտի գային ընկերները՝ հիմ այդ ժամանակ դպրոցին տնօրենը ներս չի գար և դուրս չաղաչի ապագա մեծ ուժիսորը, որ ղեկն ու ղեկավարությունը քիչ մը յուրովի կըմբռներ:

Դասագիրքերը ձեռքը տվին և սանդուղքներեն վար հրավիրեցին զինքը:

— Պիտի փնտրեն զիս, — մրմոաց Օվիկ փողոց ելնելով: — Այս մարդերը հանճարը չեն սիրեր. էհ, իրենց բանն է, թող չսիրեն: Ծ՞ս կըրկվիմ, թե՞ իրենք: Անշուշտ իրենք, ձգե, ձգե, խերն եմ անիծեր:

Այս մտմտութեով հասավ տուն:

Սանդուղքներեն վեր ելնելու ատեն ոտքին տակը փայլուն բան մը նկատեց: Վերցուց, տեսավ որ փառասիրություն է. խընամբով գրպանեց գայն ու սենյակ մտավ:

1906-ին հին գրավաճառե մը գիրք առած ատեն «Մարդակազմություն» մը ձեռքն ինկավ: Տարավ տուն. կարդաց և մարդուն դեմքին նկարագիրին մեջ ընչացքներու մասին համաձայնություն մը գտնելով, անմիջապես նոր մարդակազմության ձեռնարկի մը ձեռնարկեց, որու մեջ կճգներ փառավորապես ապացուցանել թե մարդուս ընչացքները աչքերուն ու ճակտին միջև ըլլալու են և ոչ թե քիթին ու բերանին, ինչպես կուզեն հաստատել ոմանք, հետևապես ածիլելու է զանոնք:

Անգամ մը Ղարաքիլիսա գացի քիչ մը օդ առնելու: Գնացքեն իջնելուս պես երկու դերասան զիս շրջապատեցին, որ տոմսակ առնեմ: Դարավոր փորձը զիս ըսավ, թե սա մարդերեն չպիտի խալսիմ, ուստի և աղաչեցի իրենց, որ վարոնց տոմսակ մը տան ինձի:

Տոմսակը առնելով և փոխարենը դրամ տալով իրենց, վախով հարցուցի.

— Աս տոմսակը, որ առի, թատրոն ալ պիտի գամ:

— Գալն ալ խո՞սք է:

— Հսել է քաշելիք ունիք:

— Ի՞նչ, — պոռացին դերասանները երեսս ի վաք... Հսել է մենք ազգին չե՞նք ծառայեր: Հսել է ասոր-անոր տոմսակ տալով գեշություն կրնեք ազգին: Վա՛յ ապերախտներ, վա՛յ:

Ըսին ու գլուխներն թափահարելով մեկնեցին ինձմե և թողին, որ առնեմ օղը, որո համար Ղարաքիլիսա գացեր էի։
Իրիկունը թատրոն ճամփա ընկած ատենս բարեկամի մը հանդիպեցա։

- Ո՞ր կերթաս,— հարցուց։
- Թատրոն,— ըսի,— դուն չե՞ս գար։
- Չէ,— ըսավ,— իմ ակոսաներս աղեկ են։
- Ակոսանե՞րդ։
- Այո, ակոսաներս, ինչո՞ւ կզարմանաս։
- Ակոսաներուն և թատրոնին մեջ ի՞նչ առնչություն կա,—

հարցուցի։

Առնչությունը վերջեն կիմանաս, գնա խերը տես,— ըսավ բարեկամս ու քովի փողոցը շիտկեցավ։

Տարակուսանք մը եկավ վրաս։ Խենթ պիտի կոչեի բարեկամս, եթե թատրոնին մոտեցած ատենս հանկարծ կանչվոտուք մը ականջըս շխածներ։

Մտա թատրոն... և ո՞վ նկարագրության աստվածներ... շքեղորհ տվեք նկարագրելու այն տեսարանը, որուն հանդիպեցա։ Ա՛հ, շքեղորհ տվեք, կամ ինքներդ նկարագրեցեք Դանթեի մը գրչին արժանի։

Բեմին վրա Սևուճյան աղջիկ մը ափ առեր վրան անանկ կպոռար, որպես թե ան իր սիրեկանը ըլլար և ժամը 7-ին ալ ժամադիր եղած և քառորդ մը ուշացած ըլլար։ Տաճիկ հարկահանի մը պես օձիքը բռնած երեսն ի վար կպոռար, թնդանոթի մը պես կորոտար, կփրփրեր, կզալարեր, քուլիսին տախտակներուն կզարնըվեր, երբեմն ալ սանկ աղաչավոր դեմք կառներ, սուր աչքերով կնայեր աղջկան ու հանկարծ կպոռար...

Աղջիկը բեմին անկյունը քաշվեր կզոզար։ Հանկարծ Սևուճյան հարձակվեցավ վրան ու ալ չեմ գիտեր ինչպես ըրավ... Սուր ճիչ մը պատռեց օդը... Խ՛նչ կրնար ըլլար։ Մոտեցա ունկնդիրներին մեկուն, հարցուցի։

- Ըսե, աստ՞ու սիրուն, աս ի՞նչ ճիչ է։
- Բան մը չիկա, ըսավ, կարծեմ աղջկան ակոսան կքաշե։
- Սակայն երկար քաշեց, ատամի բան չէ։
- Ատամը հաստ ըլլալու է,— դիտեց խոսակիցս, որ պարկեշտ գավառացի մըն էր։

Ճիչը սաստկացավ. անանկ կուզար ինձի, թե բեմին վրա կատուներու պարկ մը ափ առեր կգանահարեին, անանկ ճղրտոց մը աշխարհք բռներ էր։

Հասարակությունը կիսնդար և կծափահարեր։ Կարծեմ ատամը հանվեցավ և հասարակության ի ցույց դրվեցավ։

Եթե չեք ձանձրանար, ձեզ դեպք մը պատմեմ։

Հազար ինը հարյուր չեմ հիշեր քանիին երկու բանաստեղծ՝ մեկն ավագ, մյուսը կրտսեր՝ Բաքու գնացին՝ Եվրոպա երթալու միջոց գտնելու... փողոցներուն մեջ։

Քանի մ'օր փողոցները պտտելի և բացի պարապուծենե ուրիշ բան մը չի գտնելին ետքը, երբ կեսօրե վերջ փողոցի մը անկյունը կեցած կհարցնեին իրարու.

— Այսօր ո՞ր պիտի քնինք։

Դիմացի մայթեն զանգրահեր պատանի մը մոտեցավ իրենց և ներկայանալի վերջ՝ ըսավ.

— Կարելի՞ է ներկայանալ։ Սևուճյան։ Գիտե՞ք, բարեկամներս, ամեն օր ճաշես ետքը, կուգամ հոս և բարեկամ մը, ծանոթ մը կբռնեմ, տունս կտանիմ և դերասանություններ ընելով ճաշակներին կկրթեմ։ Խ՛նչ ընելու է, ազգը խավարյալ է, կվարձեմ... սակայն... չի կարծեք թե ձեզի վարձեցի...

— Ո՛չ, քա՛վ լիցի։

— Լավ թեյ կունենանք և քիչ մըն ալ ապուխտ։

— Ասյո՞ւխտ,— ըսին պուվետները,— ա՛հ, երանի վայրկյան մը շուտ ձեզի հանդիպեինք ու ձեր արտասանությունը լսեինք... Օ՛ն, ուրեմն, առաջ,— գոչեցին պուվետները և առաջ ընկան։

Սևուճյան ետևներեն հևհև կընթանար։

1916

ՄԻՇՈ

Շատ կցկտուր և հապճեպ եղավ սրա աշխարհ գալը։
Իբրև մի թեթև էսքիզ կամ կրոթի, ի միջի այլոց, կրծած մատիտի ծայրով։

Նափի կամ գործարանի տեղափոխության պես բան: Այսինքն՝ մասնիրով:

Իրա համար էլ կիսատ պոստ ու անկարգ տեղ հասավ:

Ճակատի կեսը ճամփին կոտրվեց, քիթը կորավ, շատ փրնտրեցին, վերջը ուրիշը գտան, բերին-գրին տեղը:

Բայերը պակասավոր ստացվեցին. բազմաթիվ ենթակա մնաց մյուս աշխարհում, շողկապները գողացվեցին...

Մի խոսքով՝ ստացվեց մի մարդ, որի ոճը կարելի էր կոչել ուստոստուն:

Մի տեսակ՝ Allegro capricioso կամ squerzo:

Ութ տարեկան էր, որ իր ընտանիքի հետ Քիֆլիս գնաց և սկսեց զանազան պանսիոններ մտնել ու դուրս գալ: Հետո սկսեց գիմնազիա մտնել: Ու երբ հաջողությամբ այդ գործն էլ վերջացրեց, եղբայրը, Լևոն Մանվելյան, նրան էջմիածին տարավ: Որ մի քիչ էլ ճեմարան մտնի:

Տեսչի հարցին՝ թե «Ի՞նչ գիտես», Միշոն կարճ պատասխանեց — «Ոչինչ»: Բայց տեսուչը համենայն դեպս մի քանի հարց տրվեց: Միշոն շատ դարձացավ:

— Եթե դուք գիտեք, ինձ ինչո՞ւ եք հարցնում. իսկ եթե դուք չգիտեք՝ ես որտեղի՞ց իմանամ:

Գրանով էլ վերջացավ առանց սկսվելու ճեմարանական ուսումը:

Երեք տարի ճգնեց ճեմարանի շուրջը և շորրորդ տարին սիրահարվեց մի աղջկա վրա և խելքը առժամանակ կորցրեց: Եղբայրը նրան ուղարկեց Քիֆլիս՝ հաշվապահական կուրսերը, որպեսզի հաշվապահություն սովորի և մի քիչ իրեն հաշիվ տա, թե ի՞նչ է անում, ի՞նչ է ուզում դառնալ:

Բայց Միշոն փոխանակ կուրսերը մտնելու՝ դուրսերը մտավ և սկսեց Գալավինսկի բուլվարն ուսումնասիրել: Եղբայրն իմացավ, որ Միշոն կուրսերը չմտած արդեն դուրս է եկել՝ դայրացած նամակով հարցրեց, թե ինչ է պատճառը:

Միշոն պատասխանեց.

— Ավելի լավ է մի տեղից դուրս գալ. քան մտնել, որովհետև ուր էլ մտնենք՝ մի օր պիտի դուրս գանք:

Գպրոցները չընդունվելու գործը ոսկե մեղալով վերջացնելուց հետո՝ Միշոն վերջապես մտածեց իրագործել իր մանկության վա-

ղեմի սպառնալիքը հայ թատրոնի դեմ: Եվ իրեն տվեց դերասանության կամ, ինչպես ասում են, նվիրվեց թատրոնին: Իհարկե, ինչպես միշտ և ամենքը, առանց հարցնելու, թե թատրոնն էլ ուզո՞ւմ է այդ նվերը:

Եվ իր արվեստը կատարելագործելու համար տնային ստուդիա սարքեց տանը, ուր սովորում էին իր եղբորորդին, քույրը և բարձերը: Երբորորդին ծառայում էր իբրև Կարլ Մոոր, քույրը՝ Ամալիա, իսկ բարձերը՝ իբրև Դեզդեմոնա: Առավոտից մինչև երեկո գոռում էր սրանց վրա, խեղդում էր բարձերը և շնչաստացու ընկնում հատակին:

Եղբայրը տեսնելով այս տեսարանները՝ մի օր ասաց.

— Ներիր, Միշո, եթե ես իմանայի, որ դերասան դառնալու համար էիր ուսումից փախչում, մի՞թե ես չէի հասկանա, որ այդ պետք է քեզ և մի՞թե կխանդարեի:

Այսպիսով Միշոն ուղիղ երեսուն տարի առաջ մտավ հայ թատրոն, և որքան ձեռքից-ուտքից քաշեցին՝ դուրս չեկավ այնտեղից:

Միաժամանակ նետվեց գրականություն:

Ու համառությամբ կպավ այս երկու արվեստին:

— Ես կգրեմ, ես կխաղամ:

Ոմանք կարծում էին, թե այս ասպարեզներն էլ կմտնի ու դուրս կգա: Բայց սխալվեցին:

— Բավական է որքան ես դուրս եկա. հիմա էլ թող թատրոնն ու գրականությունը ինձանից դուրս գան:

Երեսուն տարի Յագո, Շիլոկ և Ֆրանց խաղաց, խեղդվեց բեմի վրա ու... խեղդեց իր հերոսներին:

Շեքսպիրն ու Շիլլերը տեսնելով, որ վերջը իրենց էլ պիտի խեղդի՝ գիմեցին Երևանի մի խումբ գործիչներին:

— Մի հորելյան տվեք դրան, թող մեր օձիքը բաց թողնի:

Կազմվեց մի «ֆրկություն կոմիտե», որ տանելով Միշոյի երեսնամյա բեմական և գրական գործունեությունը, մտադիր էր նրա բոլոր խեղդվելու շվանները ծախել և հորելյանի ծախսերը ծածկել ու մի բան էլ շահել:

Միշոն միաժամանակ գրագետ լինելով՝ 900-ական թվերից մեծ ծառայություն է մատուցել հայ գրականության՝ մտցնելով հայ վեպի ու դրամայի մեջ ամերիկյան ոճ: Հերոսները հանդես են

գալիս և իսկույն ծլկվում են: Միրում է առաջ հերոսներին ծո-
վում խեղդել, ապա հանդես բերել, որ քիչ խոսեն:

Համառոտագիր հեղինակ է: Շատ գրվածքներ ունի, որ չի
գրում:

— Այդպես ավելի գեղարվեստական է: Կարճ ու թեթև:

Միշտն կարճառոտ հասակով, համառոտ վերարկուով և մանր
ժպիտով մարդ է:

Բայց երեք բան ունի, որ երկար է. մազերը, բարությունը և
համառությունը:

Միշտ պատանի է: Հորելյանից հետո էլի սկսնակ կդառնա:

Միրում է միշտ կոկորդի ցավ ունենալ և վիզը մի բան փաթա-
թել:

Ինչպես որ գրվածքները մի-մի պատառ թերթերի վրա են,
քիչ-քիչ ու կցկտուր, այնպիսի մկրտված ու ալլակերպ զգեստներ է
սիրում հագնել:

Երեք բան քաղցր է Միշոյի մեջ. ժպիտը՝ դեմքի վրա, խոսքը՝
բերանում և միջոցը՝ գրպանում:

Սահուն է, ինչպես մուգիկական ֆրագա կամ մենուետ:

Ման գալու ձևն էլ առանձին է՝ վետ-վետ:

Նավակի պես կգա. և եթե աղջիկ էլ չես, որ փախցնի՝ համե-
նայն դեպս էլ կմոտենա, մի երկու խոսքի ալիք կտա ու սուրալով
կհեռանա:

Բայց երբեմն էլ այնպես վազել գիտե, որ կարծես Օթելլոյի
ամենադրամատիկ տեղը խոսքը մոռացել է և վազում է կորցրած
հուշարարի կոկորդից բռնելու:

Միշտն ընդհանրապես բարի ու հեզ մարդ է: Երկու քաղցր
խոսքով կարող ես իրեն լավ կողոպտել:

Բայց երբեմն էլ այնպես ծածուկ և երկարատև խոռվել գիտե,
որ իսկի չես նկատի, ոչ էլ ինքը կասի: Եվ անպատճառ դատարկ
բանից:

Այստեղ արդեն իսկական եպիսկոպոս է:

1924

Մեկից 1876-ին. Եվ այն էլ առանձին պայմանով: Որ աշխար-
քի միգանսցենան ինքը պիտի մշակե: Համաձայնեցին. հաշվե-
լով որ աշխարքը սովոր է, որ եկողը միշտ իր գլխին միգանսցենա
որոշող դառնա: Ուստի և աշխարք գալուն պես իրենց տան կահկա-
րասին փողոց նետել տվեց, սեղաններն ու աթոռները ստիպեց որ
պատերից կախեն, և այս խառնաշփոթությունից հասկացվեց, որ
մի ռեժիսոր-դերասան ևս եկավ աշխարք: Հետո օրորոց պահան-
ջեց և մեջը պառկելով, սկսեց իր ապագա գործունեության ծրագի-
րը մշակել: Եվ արդեն օրորոցում իր ամպլուան որոշեց: Լացը:
Հենց որ տեսնում էր, թե իրեն ուշ չեն դարձնում՝ լաց էր լինում:
Անմիջապես հարևան աղջիկները գլխին էին թափվում և սկսում
էին ծափահարել, որից կտրում էր ձայնը:

Երբ մի քիչ մեծացավ, սկսեց շներին ու կատուններին կովաց-
նել, որպեսզի դրաման ուսումնասիրի: Մի անգամ էլ, երբ էդիպ
արքան մշակելու համար հարևան տղայի աչքը հանեց՝ ծնողները
իրենից ազատվելու համար տարան Ներսիսյան դպրոցի բակը և
իրենք ետ փախան տուն: Այստեղ մնաց Ալիխանյանը յոթ տարի,
և դասատուները ավարտելով նրան՝ 1896-ին դպրոցը հեռացավ
նրանից: Անմիջապես մտավ Աբելյանի խումբը և վերջինս նրան
տանելով Հյուսիսային Կովկաս՝ պանդոկներում վարժեցնում էր
խաղալ... բակարա և պրեֆերանս: Հենց այդ պանդոկներում Ալի-
խանյանը ուսումնասիրեց և մշակեց ինքնատակովի դերի պանդոկին
վերաբերող մասերը և դառավ ինքնատակով... ներեցեք՝ դերասան:

Շատ արագ որոշեց իր դերերը և արագ էլ առաջ եկավ: Մա-
նավանդ որ համակրելի ու գեղեցիկ էին թե իր ընտրած դերերը և
թե... ինքը: Վանահայրության հետ շատ էլ գլուխ շունեցավ և սի-
րելով ծովն ու Սեդան՝ գերազանց արեղայությունը: Ալիխանյանի
դեմքը, ինչպես և խարակտերը, մի փոքր դժվար է նկատելու: Ինչ-
պես և հասկանալը Ցար Իոհան Ֆյոդորովին: Օսվալդ, Միշկին,
Աբեղա, Ցար Իոհան, ինքնատակով—ահա դերեր, որ դժվարացնում
են հարցը: Իհարկե նրա գլխավոր գիծը բարությունն է և ար-
վեստի շափազանց սերը: Փորձիր մի քանի հոգով գնա մոտը թե՛

— Ընկեր Ալիխանյան, Քոի ճամփան ո՞ր կողմն է ուզում
ենք ընկնել մեջն ու խեղդվել:

Բարեժպիտ կպատասխանեմ.

— Ուղիղ գնացեք և ապա ծովեցեք աշ:

— Մենք ուզում ենք կամուրջի վրայից ընկնել:

— Սկզբունքով դեմ չեմ և շատ համակիր եմ ձեր ծրագրին, և մինչև անգամ ավելի լավ, միևնույն է. միայն հետևեցեք սցենարին, որ մատչի սխալ շանք և գլխիվայր ընկնեք, որ շարժումը շնորհալի դուրս գա, մնացածը նաջաք չէ: Կարող եք և առանց գրիմի:

Հասարակությունը շատ է սիրում Ալիխանյանին: Եվ որպեսզի հիշվի նրանից՝ միշտ ընծաներ է մատուցում նրան: Ինքն էլ շատ է սիրում խանութպաններին և որպեսզի չմոռացվի նրանցից՝ ամեն մեկից մի ապրանք է վերցնում պարտքով և ուշացնում է:

Մի ունայնություն փոս ունեցավ իր կյանքում: Իր դրամարկը, որ երբեք լավ չլցվեց: Ճիշտ է, եղան տարիներ, որ «կանգնում էր փոսի վրա», բայց 14 թվականից դեռ տախտակ է դնում վրան և այնպես է կանգնում: Եղած ժամանակ շոռայում է, շեղած ժամանակ՝ սակավապես է: Մի պատառ հաց ու պանիր, մի կտոր էլ ծափահարություն՝ և նա արդեն գոհ է:

Միշտ քանգատվում է, որ աշխարհի բեմադրությունը գեղեցիկ չէ, որ ինքը այդ բեմադրությունը գեղեցկացնելու պայմանով է աշխարհ եկել: Իսկ երբ իրեն առաջարկում են որ բեմադրե՝ հիմա հազար փորձ է պահանջում: Չար լեզուներ կան, որ բամբասում են թե ծուլ է: Ես այդ կարծիքին չեմ: Ինքն էլ է բողոքում և 20 տարի է ուզում լրագրում հերքել այդ կարծիքը, բայց... ծուլանում է:

Թափի առաջի տակ է ծնված Ալիխանյանը: Չնայած իր ստանդական կյանքին՝ միշտ անել դրությունից դուրս է պրծել երջանիկ արարով: Ամենից շատ վտանգվել է գարադնիչներից, բայց իր բախտը՝ Օսիպը միշտ իր ժամանակին հասցրել է պոչտեմեյտ տերի կատրը:

Մակայն նա իր բոլոր մանր մունր մեղքերը քաղում է գեղեցիկի այն սկզբունքով, որ նրա պաշտամունքն է եղել միշտ:

Նրա կյանքը մի ներդաշնակ երգ է, որի մեջ լավում են սքանչելի տերցիաներ, եռյակներ: Այսպես՝

Երեք տեղ ամենից շատ խաղացել է Ալիխանյանը աշխարհի վրա, — բեմի վրա, կանաչ սեղանի վրա և փափուկ սրտերի վրա:

Փափկասիրտ է, փափկաձայն է և փափկակյաց: Կամ՝ գեղեցիկ խոսում է, գեղեցիկ խաղում է և գեղեցիկ... խոսափում:

Ալիխանյանը գեղեցկադեմ և համակրելի տղամարդ է: Միշտ կյանքն անցկացնելով սիրանուշենբրի և միգանուշենբրի հետ՝ ձևերով և շարժումներով միանգամայն բարեկիրթ եվրոպացի է:

Այնպես է ծպտում երեսիդ՝ կարծես Սեդայի հայրը լինես: Եվ փողոցում այնպիսի քայլվածք ունի, որ թվում է թե վանահոր հետ կռվել է և հայր Անտոնի լառան է փնտրում, որ ծկվի:

1924

ՀԱՄԱՌՈՏ ԱՆՄԱՀՆԵՐ ԵՎ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՄԱՀԿԱՆԱՅՈՒՆԵՐ

(Կեպ մոտավոր հայ անյայից)

19... Թիվ հսկա 20

Ես մեր Գալուստի քաղաքական մեթոդին հավան չեմ:

Այդ մարդը չկարողացավ եվրոպացի դառնալ:

Կպել է հին ասիական մեթոդի պոչից ու պոկ չի գալիս:

Շատ անգամ ենք վիճել հետը:

Նա ասում է. — պետք է մեր հիմնարկներում տեղավորենք միմիայն մեր լիդերներին ու գլխավոր ընկերներին, իսկ երկրորդականներին պետք է դուրսը պահել, որ ինքնուրույն աշխատանքի չլինելով՝ գլուխը չբարձրացնեն, հնազանդ մնան կազմակերպություն: Երբեմն ասում է, պետք է բերանները մի-մի բան գցել, որ կախված մնան կազմակերպության լիդերներից:

Դա ի՞նչ մեթոդ է:

Այդ մեթոդով մենք պետական ապարատ չենք ստեղծի: Իսկ ես կասեմ, որ մեր բոլոր ընկերներին պետք է ապրուստի լայն միջոցներ տալ, տեղավորել հիմնարկներում, որպեսզի վարժվեն մեծ գործառնությունների: Թող սխալներ գործեն, թող թեկուզ գողանան, պանամաներ ստեղծեն, թող մի լավ խճճվեն մեջը, վնաս չունի: Յա թո, երբ կարողանան ճարպկորեն տակից դուրս գալ՝ դուր

կունենաք պատրաստի պետական մարդիկ: Դա քաղաքական փորձառութեան շկոյա է:

Այ-շի, ինչիս է պետք, թե այս ինչը գող է, այն ինչը՝ խարդախ, երրորդը՝ սրիկա: Եթե այդ գողը, խարդախը, սրիկան իմ ապսպրած պետական գործն առաջ կտանի — ուրիշ ի՞նչ եմ ուզում: Պետք է գործնական լինել:

Սա անգլիական մեթոդ է:

Թողնենք անգլիականը, վերցնենք ամերիկյանը: Մարդը գողանում է, գողանում, ու մեկ էլ տեսար՝ պուպուստ — դուրս եկավ հանրապետութեան նախագահ:

Տունդ չբանդվի Սայուզ Գարադով... ինչ հսկայական սիստեմի գործ է:

Մեր ընկերներն այդտեղ քաղաքականորեն բացվեցին, շկոյա անցան, և մենք այժմ ունենք վարժ տնտեսական կառավարիչներ, որակյալ ազնետներ և այլն, և այլն:

Չէ, պետք է պետականորեն նայել խնդիրների վրա: Մեկ պետք են մեծ մասշտաբի մարդիկ: Եվ մեր Գալուստի ուղեղը եվրոպական չէ: Քանի անգամ ասել եմ իրան, տնաշեն, մի քիչ հետևիք եվրոպական դիպլոմատներին, փոխվիր: Բայց ո՞ւմ ես ասում: Ասիական շարժու պես պազել է իր պզտիկ առուտուրի կողքին ու իր թել-ասեղից դենը բան չի տեսնում:

Ժամանակը մի քիչ ուրիշ տեսակ ժամանակ է: Կովկասի գործերն ուրիշ կողմն են շուտ գալիս: Այս մեր նորաստեղծ Արարատյան Ռեսպուբլիկան, իմ վարավորդով, մեծ ապագա է խոստանում:

Այ, գործ:

Մրա մոտ ի՞նչ են Սայուզ Գարադով, Ազգային Խորհուրդ, կոոպերացիա: Սա ֆիրմա է, դուքան չէ:

Այ, այստեղ կարող ես ասել՝ ВОТ где оборот!

Մի տեսակ պետք է լրջանալ, փոխվել: Պետք է խելացի դառնալ, ուղղակի որոշել և արհեստական կերպով անել այդ: Ի՞նչ կա, վարժութեան բան է, կարելի է այսպիսի որոշում անել: Սա եվրոպական ձև է: Երեկ առավոտ Երևանից հեռագիր ստացա, որով հրավիրում են Երևան, Հայաստանի կառավարութեան մեջ բարձր պաշտոնի: Հեռագրում ասված է. բարձր պետական պաշտոն: Ուրե-

մըն կամ մինիստրական խորհրդի նախագահ, կամ մինիստր, կամ պառլամենտի նախագահ:

Անմիջապես զգացի, որ փոխվում եմ: Ես հիմա պարզ գիտակցում եմ, որ ուրիշ մարդ եմ: Մի ամբողջ երկրի բախտ ինձ է հանձնվում: Ես եմ լինելու երկրի փաստական ղեկավարը: Հանաք բան չէ: Պետք է ուղեղը մի տեսակ լարել, խորագնին մտածել, քմբրոնել, թե ինչ է կատարվում:

Շտապում եմ Թիֆլիսից մեկնելու: Ուստի և պետք է շտապ կարգով վերջացնեմ մասնավոր գործերս: Միքայելյան փողոցի նոր տուն գնելու հոգսը թողնում եմ եղբորս: Երկու տուն ունեմ գնած — այդ էլ հետը՝ երեք: Առայժմ բավական է: Մյուս առևտրական ձեռնարկներս կտամ հորս: Սայուզ Գարադովից կա մի որոշ գումար, որ Սոնիչկան՝ ամուր պահում է: Առևտրական գործերս չեմ դադարեցնի: Գուցե Երևան — Բաթում գծով ապրանքների փոքրիկ կոմբինացիաներ էլ սարքեմ: Դա հեշտ է: Կապրենք մի կերպ: Վաղը գնամ Սայուզ Գարադովից լիկվիդացիոնս ստանալու, որպեսզի մյուս շաբաթ մեկնեմ Հայաստան: Սպասում եմ մինիստրական սալոն-վազոնին:

Ջարմանալի բան է: Ինչպե՞ս կյանքը փոխվեց: Ո՞վ կմտածեր: Հայ դիտի, հա՛, շորս տարի առաջ ծխական դայրոցի վարժապետ էի: Տեսնենք, մեծ պերսպեկտիվների առաջ ենք:

Նոր էր Սաշան (դյուցազնիս անունն է) ներս մտնում դիվանագիտական միսիայի սրահը, որ՝

— Վա, Սաշա, քու հոգուտ մեռնեմ, այստե՞ղ ես:

Ու մի գավառական քրտնած թաթ բամփում է նրա ուսը:

Կամավոր Վաղոն է, լագանի կլոր ժպիտը երեսին, բերանը բաց — պաստայալի դվոր:

Միծաղում է:

— Մի քիչ քաղաքավարի, — կես կատակ, կես լուրջ մրմնջում է Սաշան: «Սաշա՞ն» որն է: Պաշտոնական անձի հետ ես խոսում:

— Չէ, չէ, դուն ու քու աստվածդ, ի՞նչ ես:

— Մինիստր:

— Ճժե կոնրկիս, ջանրմ, մինիստր: Գլուխս շատ բարակ բա-

¹ Կինն է:

ներս չի պահի: Վազն անցի, երթանք Ավետիքի պաղվալը: Կա-
մավորական թրջոց ունինք:

— Ձեմ կարող, պետական գործեր ունեմ,— ասում է Սաշան
և ուզում է վազոյի թաթից ունն ազատել:

Բայց վազոն՝

— Մեմ կուռեցնես, քելե, ջանքմ: Պետական գործը չորս գոռ-
շի կանեմ՝:

— Ձէ, ճշմարիտ, չեմ կարող, դիպումատիկական գործ ունեմ:

— Գրե ըշշոտիս, ջանքմ, դիպումատի գործն ի՞նչ հայի բան
է: Մերն ան է՝ արող գրվինք, պատվով մեռնինք: Ըղորթ. Սաշա
ջան, երթանք: Էնպես մե խաշըմ ուտեցնեմ, որ պապդ գերեզմա-
նին մեջ զգտա:

Բայց Սաշան հեռանում է:

Վազոն՝ հետևից.

— Հայոց ազգը վարմացուցիք:

— Աս վո՞վ էք,— հարցնում է վազոյի ընկերը:

— Ձե՞ս ճանչե, ծո: Դիմանի կովին, մե պոպոզավարիմ հետ,
որ եկել՝ գրլիներուս կեցցե Հայաստան կբոռային, ու իրենք Սայուզ
Փարագովի ապրանքները կզարնեին:

— Ըսե տիլավոյ կոխսա՞ պրծի:

— Հըպը ի՞նչ: Ֆոտոտը՝ ճղե Կարապետ, այստեղ՝ մինիստո:

Ու ընկերոջ թևից քաշելով.

— Մո քելե, քելե: Ֆոտո ֆոտոսա չէ, որ գան քովդ չՎազո ջան՝
ըսեն: Աստեղ բերանդ չես կքնա բանա, ձեռաց թաքառամիլ
կենեն:

Ու ձեռքն օդի մեջ ցայելով.

Այ-հույ, մինիստո (...) չեղած՝ աթար դառաք:

19... 24 հոկտեմբերի

Մինիստրական սալոն-վագոնը դարձյալ չեկավ: Սոնիչկայի
ասի՝ եկ խորհուրդ անենք դիպումատիկական միսիայի ներկայա-
ցուցչի և ընկերների հետ, տեսնենք՝ եթե գտնե այս մի անգամը
շատ էլ անպատշաճ չի լինի, որ մասնավոր վագոնով գնանք՝
գնանք մասնավոր վագոնով: Այ-չի, ճամփին ո՞վ պիտի իմանա,
թե մինիստր եմ:

Բայց Սոնիչկան կատաղեց: Լա՛ն՝ անգամ չի ուզու:՞ մասնավոր
վագոնի մասին:

Սպասենք մի օր էլ:

19... 25 հոկտեմբերի

Գնում եմ գիպումատիկական միսիա իմանալու, թե ինչ եղավ
սալոն-վագոնը: Բարկուլթունս գալիս է: Ի՞նչ է մտածում կառավա-
րությունը...

19... 26 հոկտեմբերի

Առենք՝ Սոնիչկան էլ դրուստ է ասում: Քաղաքական շուտ-
յո ունի: Դիպումատիկական կյանք է, իր մաներներն ունի:
Ճիշտ է՝ Հայաստանում սովն ու տիֆն սպառնական շահերի են
հասնում, բայց պետք է սառնասիրտ լինել և շտապելուց
սայթաքում չանել: Պետք է սալոն-վագոնով գնալ: Անդլիա-
ցիք լավ են այդ կողմից: Սառն են, և աղետի ժամանակ իրենց
դիրքը չեն կորցնում: Ինչ իմանամ, ախպեր, պետք է վարժվել,
чорт возьми.

Այն օրը շատ ջիգրս եկավ, երբ կամավոր վազոն դիվանա-
գիտական միսիայում ինձ «Սաշա» ասավ համարյա դիվանագի-
տական կորպուսի առջև: Մեկը հարցնի նրան, թե՞ ես ձեք ի՞նչ
«Սաշան» եմ: Դեռ նա տգետ կամավոր է: Մեր կրթված ընկեր-
ները — նրանք էլ, մեկ էլ տեսար փողոցի մյուս մայթից ձեն
տվին՝ «Սաշա, Սաշա»: Ինչպե՞ս կարելի է: Այդ ո՞ր անգլիացին
կհամարձակվի ինչո՞նի փողոցում կլոյդ Ջորջի հետևից կանչել
«Լլոյդ, կլոյդ»...

Ձէ, պետական մտածողություն չունենք: Սովոր չենք չիպլո-
մատիկական մաներների: Մեր գլխավոր շարիքը: Սոնիչկայի շուտյոն
պետական է: Մենք պետք է փոխվենք:

Որոշեցի իմ բոլոր շարժումներս, խոսքս, ոճս մշակել: Քիչ
խոսել ամենքի հետ և խոսել դիպումատիկ ոճով: Հիմի իմ ամեն
ծպտունս, խոսքս քաղաքական մեծ նշանակություն ունի:

19... 28 հոկտեմբերի

Տեսա՞ք դուռումսաղ շուն-շանորդին...

Մինիստրական սալոն-վագոնը եկավ, բայց մի քչի-փողոցու

պատճառով այս անգամ չեմ կարող մեկնել Հայաստան: Մնում է մյուս գնացքին:

Լածիրակը պահպանողական լրագրում հողված է գրել և ինձ խառնել այն բամբակի պատմության մեջ, պարզապես գող դուրս բժրելով: Պետք է մնամ Քիֆլիս, աշխատեմ մի կերպ, ընտանեաբար վերջացնեմ խնդիրը: Անհարմար է, հիմար գրության մեջ եմ ընկնում:

Եվ ժամանակ գտավ իշու ձագն իր հին հաշիվները մաքրելու:

Ի՛, հայ շե՞ն: Նախանձն ուտում է, է՛, կտրաքվեն, չեն կարող մարսել բարձր պաշտոնս: Մինն ասի, թե՛ տո, էջ քյոփօղլի, շատ էլ իմ արածի մեջ մի փոքրիկ թյուրիմացություն կա, նու, շատ-շատ մի սխալմունք: Դրա համար կարելի՞ է մի կոտորված ժողովուրդ պատժել, վտանգել, ինձ այստեղ պահելով:

Նու, սա ի՞նչ բարքերի այլանդակություն է. ի՞նչ անազնըվություն... Ի՞նչ արքերի լրջությունը չեն ըմբռնում անասունները:

Եվ վերջապես, ի՞նչ եմ արել բամբակի գործի մեջ, որ այդքան ուռեցնում են: Առևտրական գործ էր: Կոմիտեի որոշմամբ ես պիտի բամբակը ծախսի իտալական ֆիրմային: Կոմիտեն գին էր նշանակել փթիկ մի որոշ գումար: Ես այդ գնով էլ կարող էի ծախել: Բայց ես ինքս ճամփին մի տեսակ՝ գնեցի այդ բամբակը և ավել գումարով ծախեցի իտալական ֆիրմային: Դա մի առևտրական խաղ էր իտալական ֆիրմայի գլխին: Հայաստանին ի՞նչ վնաս: Նու, մեջը մի փոքրիկ աշխատանք արի: Ես չեմ հասկանում, թե այդ պարոնների սիրտն ինչի՞ է այդքան ցավում իմ պերիալիտական, իտալական բուրժուազիայի ավելորդ կոպեկների համար:

Տեղը որ դա, բերանները մի արշին կճոթոնեն և մարքսիզմից կճառեն: Դեռ չեն քաշվի՞ իրանց սոցիալիստ կանվանեն:

Զէ... փոքր ազգ ենք, գծուծ ժողովուրդ:

Քյո՛ւ...

Ռազմախ չկա, ուզմախ: Ափսոս չե՞ն ուունները:

Երկտող՝ Գալուստին.—

— Գալուստ ջան.

Արշակ Կոլմանյանի հողվածն իմ դեմ՝ պահպանողականների դավադրությունն է մեր նորաստեղծ պետության դեմ:

Ես դիպլոմատիկական գործերով եմ զբաղված և ժամանակ չունիմ հերքելու: Կանչեցեք Կոլմանյանին մասնավոր բացատրության և հասկացրեք, որ իր արածը պետական դավաճանություն է: Կիրակի ճաշին տղերանց առ և արի մեզ մոտ: Նանը խաշ է գրել: Սոնիչկան սպասում է բոլորիդ:

Քո Սաշա:

Երկտող՝ ընկ. Քուլուբեկյանին.—

Ընկեր Քուլուկ.

Իմ դեմ գրած հողվածն ուղղակի դիպչում է մեր պետականության: Կոլմանյանին պետք է լռեցնել:

Կիրակի ճաշին արի: Տղերքը մեզ մոտ կլինեն: Կավ խաշ պիտի ուտացնեմ քեզ:

Քո Սաշա

19... 28 հոկտեմբերի

Ինչ դանդաղորդ մարդ է այդ Գալուստը: Բան խնդրեցի, ապա՞ թե անի: Անտարբեր է. չի ըմբռնում պետական վտանգը: Քուլուկն էլ ասում է՝ թող մեր խմբագրությունը մտածի այդ մասին: Չարժե կաղամակերպություններին հանձնել այդ խնդիրը: Դե որ պետական մտածողություն չունենանք՝ իհարկե, ամեն բան էլ չարժե:

Երկտող՝ պահպանողական թերթի խմբագիր Չապարյանին.—
Սիրելի Չապար.

Կոլմանյանի հողվածի տպագրությունը քեզնից չէի սպասի: Դու ինքը շատ լավ գիտես, որ դա թյուրիմացություն է: Ոնց ես անցկացրել այդ հողվածը՝ չգիտեմ: Ես կգամ քեզ մոտ անձամբ բացատրելու:

Լսիր: Սոնիչկան կիրակի օր ճաշ է սարքում մեր բոլոր ընկերների համար: Ասում է՝ եթե Չապարը չգա, չգիտեմ ինչ կանեմ: Այնպես որ, սպասում ենք: Անպատճառ գաս: Վերջերս չես երեվում, մեր տղա:

Քո Սաշա:

Տիկին Սոնիչկայի քաղաքային նամակն իր ընկերուհի Վա-
սիային։

Միրելի Վառյա.

Սաշան մինիստրի պաշտոնով գնում է Երևան։ Հեռագրով
կանչել են։ Սպասում ենք մինիստրական սալոն-վագոնին, որ
հատկապես այդ նպատակով Հայաստանի կառավարությունն
ուղարկելու է Երևանից։ Խնդրում եմ կիրակի օրը գաս մեզ մոտ
ճաշի։ Ես ուզում եմ քեզ ցույց տալ նոր բալնի և պաշտոնական
այցելությունների շորերս։ Սաշան ասում է, որ օտար պետություն-
ների ներկայացուցիչների հետ շատ պիտի ճաշկերույթներ լի-
նեն։ Նանք, մայրիկս և Նախշուն-բաջին էլ հետներս են լինելու։
Չնայելով, որ նանի գլուխը հինա էինք դրել, բայց այսօր հրեկո-
յան բաղնիս պիտի տանենք, որովհետև շատ շտապում ենք։ Հա-
յոց կառավարությունն անհամբեր մեզ է սպասում։

Արի, սպասում ենք։

Քո Սոնիչկա

Մի ուրիշ նամակ.—

Միրելի Մանյա.

Սաշան մինիստրի պաշտոնով Երևան է գնում։ Սպասում ենք
մինիստրական սալոն-վագոնին որ հատկապես այդ նպատակով
ուղարկելու է Հայաստանի կառավարությունը Երևանից։ Իմաց
տուր Գարինկային, Լիզին, Օլիային, ու միասին կիրակի օրը եկեք
մեզ մոտ ճաշի։

Քո Սոնիչկա

— Անուշ բաղնիս ըլի, Նույնվար բաջի, իմանալուս Ըրեվան
եք գնում։ Ի՞նչ խաբար ա, խե՞ր ա։

— Հա, Օսան ջան, գնում ենք։ Ընտեղի Հայոց կառավարութի-
նը մենձ զուլուզ ա տվել տղիս։

— Ի՞նչ զուլուզ։ Նույնվար բաջի։

— Մինիստր ա կանչված։

— Մինիստրի։ Ասել ա դուքան-բազարը վերջացնո՞ւմ ա։

— Դուքանը պատիկ տղիս ա թողնում, Օսան ջան։ Ազգի,

հնկերության գործ ա, ի՞նչ արած, որ կարգադրութիւն ա, գնալ
պրտի Ըրեվան մեզը նստի ու ընտեղանց Օսմանլիա տիրութեան հե-
տը խոսալ պտի, որ բալքի բարիշուքին գցի հայի-թուրքի մեջ։

— Աղլի, աղլի, էն ի՞նչ խաբար ա։ էն ո՞վ ա էն անղգամ
կնիկը։

Մի հավլարբեցի կնիկ Սոնիչկայի ձեռից ուզում է խլել վեղ-
րոն։

— Ո՞ւր ես տանում, էս իմ վեղրոն ա։

— Թո՛ղ ասում եմ, դու չես իմանում՝ թե ում հետ ես խոսում։

— Կուզիս թագավորի կնիկը եղի, շատ վե՞ճա ա, տուր վեղ-
րոն։

Քաշում է։

— Դու մինիստրի կնոջից վեղրո խլե՞ս։

— Խնչեմ վրեղ. մինիստրի կնիկ ես։ Շատ եմ վախում, այ։
Բաց թող վեղրոն։

Խլում է։

Սոնիչկան կատաղում է.

— Ես քեզ բռնել կտամ։ Այդ ո՞ւմ ես հայհոյում, անղգամ։

— Բանիդ գնա, թե չէ՝ ծամերդ կփաթաթեմ, հա։ Յիսեմ մար-
դուդ գլուխը, քաղցած վարժուպետի մինը կըլի հալբաթ։

Սոնիչկան հիստերիկայի մեջ է.

— Ո՞վ կա այդտեղ. սա ի՞նչ անղգամություն է. շուտ արեք,
ասեք հեռագիր տան Հայոց կառավարության։

— Աչքն էլ կարեմ Հայոց կառավարության։ Շատ ես քրք-
րըրվում։

Երեկո։

— Սաշա, լսո՞ւմ ես։ Ես գնացի դիպլոմատիական միսիան։
Ասում են սալոն-վագոնը եկել է։ Գնանք, էլի։ Ես չեմ կարող այս
գոնհիկ քաղաքում մնալ։

— է՛հ... սպասի, դրա ժամանակը չի։

— Ի՞նչ է պատահել։ Չլինի՞ պաշտոնը ուրիշին են տվել։
Լուռթլուն։

— Չէ, Սաշա, գրուստ: Խայտառակ բան է. բոլորին ասել եմ, ու վաղն էլ ընկերուհիներս ու ընկերներդ պիտի գան ճաշի:

— Թող գան:

— Ուրեմն դեռ մինի՞ստր ես:

— Բա ի՞նչ զահրումար եմ:

— Ապա ինչի՞ ես թթվել:

— Այ-շի, թող է: Ինձ լրագրում գող են դուրս բերել:

— Դա ի՞նչ խայտառակություն է: Հեռագիր տուր Հայոց կառավարության: Ի՞նչ գողություն, ի՞նչ ես ասում:

— Ջանըմ, էն բամբակի պատմությունն է:

— Ահ-հա... Ես որ քեզ ասում էի:

— Հետո՞, ի՞նչ էիր ասում:

— Լավ, Սաշա ջան, ինչո՞ւ ես նեղանում: Քեզ չէի՞ ասում, որ ամեն բան ամենքին մի պատմի: «Ընկեր, ընկեր» ասում ես ու գաղտնիքներդ բաց անում: Ա՛յ, տեսնում ես ինչ են անում ընկերներդ:

Լուսթյուն, Սաշայի միտքն ուրիշ տեղ է: Շրթունքները երկու տաշտի պես իրար վրա դրած՝ գլխիկոր մտածում է:

— Հետո՞, պիտի հերքե՞ս լրագրում:

— Ջանըմ, ի՞նչ ես կպել, վազ չես գալիս:

— Բա որ գողությունը վրադ հաստատվի՞:

Սաշան վեր է կենում:

— Տո, դրանց օխտը պորտն էլ... ինձ ոչինչ չեն կարող անել:

— Դե, հերքիր լրագրում: Դու էլ նրանց գողությունները բաց արա:

— Ո՛չ, ես իմ վեհանձնությունը չեմ կորցնի:

— Ա՛յ, միշտ էդպես ես: Ուրիշին ազնվություն կանես, իսկ փոխարենը չես պահանջի:

էլի նայում է Սաշայի դեմքին.

— Լավ: Հերքելու չե՞ս:

— (Լեզվի ծայրով) Մը... (ծխում է): Զի կարելի: Հիմա չի կարելի:

— Մեթոդական սխալ կլինի: Նոր եմ անցնում պետական բարձր պաշտոնի: Ղալմաղալը լավ չէ: Պետք է խելացի լինել:

— Ես դրա մեջ ոչ մի խելք չեմ տեսնում: Քեզ լրագրում

պարզապես գող են անվանում, դու լուում ես: Ո՞նց ես անցնելու մինիստրական պաշտոնիդ:

— Լլոյդ Ջորջը ո՞նց է անցել, Գրեյը ո՞նց է անցել:

— Լլոյդ Ջորջը, Գրեյը էդպես չեն անի:

Սաշան կատաղում է (շուրթերի լագանները ծոմոկելով):

— Դո՞ւ ինչ ես դուրս տալիս: Լլոյդ Ջորջի տաքտիկը հիմի ե՞ս եմ հասկանում, թե դու: Քաղաքական պայքար է, մեթոդ է պահանջում: Մինիստրի վրա ընտրական պայքարի ժամանակ ամեն բան կխոսեն: Պետք է սառն ու խելացի լինես:

— Քեզ գող են դուրս բերում, դու սառն ու խելացի եղիր:

Սաշան ոչխարի բերանը ծամածոտում է և բռունցքը սեղմում.

— Բանը չհասնի լրագրական կամպանիայի: Թե չէ՞ թե նըրանք իմ կոմբինացիան գողություն կանվանեն՝ ես նրանց էն գողությունները բաց անեմ, որ դուն ես իմ պարուն: Ես որ գող եմ, ապա ո՞վ էր գաղթականական կոմիտեի պահեստից հիսուն թոփ չիթ թոցնողը: Հողվածադիրը չէ՞ր: Ես որ ձայն չեմ հանում՝ բան գիտեմ: Սպասի մի պաշտոնի անցնեմ:

— Ի՞, էդպես որ ազնիվ ես պահում քեզ, մինիստր էլ որ դառնաս՝ ավելի շատ կգրեն:

— Չեն գրի: (Գլուխն արգահատանքով շարժում է, և դեմքը դառնացնում): Հավատացնում եմ քեզ, Սոնիչկա, չեն գրի: Դեռ կզան ոտքերս կլիղեն, պաշտոն կխնդրեն: Ես էլ կտամ:

— Քո թշնամիներին: Փոխանակ պատժելո՞ւ:

— Ինչի՞ եմ պատժում: Դեռ գողություններ, զեղծումներ էլ անել կտամ ու ձայն էլ չեմ հանի:

— Դա ինչո՞ւ համար:

— Ընենց: Դիպլոմատիական խաղ է:

— Հազիր թող կեղտերի մեջ թավալեն, ձեռս փաստեր տան, որ հետո, երբ ուզենամ բաց թողնեմ, երբ ուզենամ հուպ տամ, դարձնեմ հլու-հպատակ...

Եվ, վերջապես, մինիստրությունն ուրիշ մեթոդի բան է: Հավատացնում եմ քեզ, Սոնիչկա, այս բոլորը կաճցնի: Մենք մեծ Հայաստան ենք ստեղծում: Ամեն դատարկ բանի առջև որ կունգ առնես, ո՞ւր կմնաս: (Խոսքը փոխելով): Չանաղը չբերի՞ն փոնից:

— Շատ ես քաղցած երկի:

Քոռանամ ես: Ո՞ւր է, Սերոբին ուղարկեի փուռը: Դեռ չի

եկել: (Վեր է կենում տեղից): Դու էլ շատ ես գործով տարվել: Սա-
յուզ Գարադովը շղառնա, որ շաբաթներով միայն գիշերներն էին
ընթրում:

— Փող էինք դատում, Սոնիչկա խանում: Տունդ որ վանքի
պես տնքում է, որտեղի՞ց է:

— Ինչ որ է, մի քիչ քեզ հետևիր, առողջութունդ վտանգում
ես:

— Հասարակական գործ է, ի՞նչ անեմ: Ժամանակ կա: Սաղ
օրը ժողովի ենք: Պետական գործը եկել շոքել է վզներիս:

— Ժողով, ժողով, զահլա տարաք:

— Սաշա (մանր ժպտալով): Դու ժողովները հետո տես, երբ
դիպլոմատիական մարմինների համար ճաշերի պատրաստություն
կտեսնենք ու...

Ներս է մտնում մի տեսակի Սերոբ, նման բոլոր սերոբներին,
միայն մի քիչ թաթոսավուն՝ կլոր ձվածեղի պես ժպտալով:

— Պարոն ջան, ճամփու գառը մորթել տվի: Խաշլամա անեմ,
թե՞ ժառիտ:

— Ժառիտ արա:

Սոնիչկա.— Ինչի՞ ուշացար:

Սերոբ.— (Լավաշի շուրթերը բանալով՝ ծիծաղում է):

Սոնիչկա.— Ի՞նչ ես տնկվում: Հաց գցի:

Սերոբ.— (Սոծրակը քորելով): Պարոն ջան, հիմի ըսել է,
մեկը Հայաստան ենք:

Սաշա.— (Խաշած ոչխարի ատամները ցցելով՝ ժպտում է):
Հը, գիտակցո՞ւմ ես, Սերոբ: Հապա՞, մենք հիմի անկախ պետու-
թյուն ենք:

Սերոբ.— (Քաշալերված առաջ է դալիս): Պարոն ջան, նոր
քիլըմ առաջ փոնչուն քովն էի: Քու վրագ խոսք եղավ, հարցուց,
թը ի՞նչ գործի ես, ըսի աղաս մինիստո է:

— Լավ հասկացրի՞ր, որ իսկական մինիստր եմ:

— Հըսը ի՞նչ: Ըսի աղաս Հայոց մինիստո է:

— Հետո՞, ի՞նչ ասավ:

Սերոբ.— (Ժպտում է): Ի՞նչ պիտի ըսե: Ուրախացավ:

Սաշա.— (Վեր թռչելով և արագ անցուդարձ անելով): Ա՛՛:
մեծ օրեր ենք ապրում: Անկախ Հայաստանը փաստ է այլևս: Ծիշո
է, կոտորվեցինք, բայց կոտորածներն անհրաժեշտ էին, իրենց

օգուտը տվին: (Խոսքը փոխելով): Դե, հաց գցեք, հաց, ես սովից
մեռա:

— Սոնիչկա, վերջապես վաղը գնում ենք: Դիպլոմատիական
վագոնները եկան:

— Դիպլոմատիական վագոնները, վագոններն է՞լ դիպլոմա-
տիական են լինում:

— Ը՛, ուզում էի ասել գնացք: Մի խոսքով՝ վաղը գնում
ենք:

Սոնիչկան վեր կացավ:

— Վերջապես:

— Մեկ հետ են ամերիկյան ներկայացուցիչները և գերա-
զույնը:

Տղերքը ներս են լցվում ուրախ բացականչություններով:

Գալուստն է. Քուչուկը, ալեքսյուցի Չաթուլպաշյանը, բյուսա
Կարապետը, «խողովակ» Մկրտիչը, կամավոր Վաղոն, որի սիրտը
շահել էին, նաև Կոլմանյանը, որ թեև բաց էր արել Սաշայի գո-
ղությունը, բայց փողոցում պատահել իրար՝ հաշտվել էին:

— Սա՞ ինչու համար եկավ, — դժգոհեց Սոնիչկան Սաշա-
յի ականջին:

— Սոնիչկա ջան, վնաս չունի, մի նեղանա, շատ լավ տղա է,
սիրտը բարի է, գիտե՞ս:

— Տիկին Սոնիչկային մեր շնորհավորանքը:

— Մեր ողջույնները Հայաստանի Հանրապետական կառավա-
րության ներկայացուցչին, — գոսաց Գալուստը:

— Շնորհակալ եմ, համեցեք, տղերք, նստեցե՛ք:

— Նոյնվար բաջի, շնորհավորում ենք:

— Ապրիք, բալիքս: Տառոսը ձեր ծնողին:

Բոլորը նստում են: Ամբողջ սենյակը բռնում է աջիցս զրույ-
ցը, խաշի հոտը, անկախ Հայաստանի քաղաքական պիտակետիվ-
ները...

— Պարոններ, — վերջերց բաժակը Գալուստը, — պարոն-
ներ, վաղը մենք ճանապարհ ենք դնում մեր կառավարության
սյունքներին, որոնց հետ միասին առաջին անգամ Հայաստան պիտի
ժամանեն նաև Հյուսիսային Միացյալ Նահանգների ներկայացու-
ցիչները: Ես առաջարկում եմ խմել Սաշայի կենացը, կցելով այս

կենացին նաև գերագույնի կենացը, որ դժբախտաբար այստեղ չէ:

— Ուռա՛:

Խմում են:

— Գերագույնն է՛լ է վաղը գնում:

— Անպատճառ, հեռագիր եկավ, սպասում են:

— Զանրմ, էդ գերագույնն ո՞վ է — խմբագրատուն եմ գնում գերագույն, միսիա եմ գնում՝ գերագույն:

— Վահ, չգիտես ով է գերագույնը:

— Գերագույն. դա ի՞նչ ջանավար է:

— Ավագ Սագինյանը:

— Ավագ Սագինյանը, է՛, ինչի՞ են ասում գերագույն:

— Նախագահն է բարձրագույն մարմնի:

— Վահ, տո էդ միթե՞լը...

— Ա-հա՛յ,— բերանը պատռեց Վաղոն,— քյոփոզլու երկիրը Եվրոպա դառավ:

— է, լրջություն պահեցեք, եղբայր,— հանդիմանեց Սաշան,— դիպլոմատիական կյանքի սովոր չեք:

— Դե, մեր մեջն ենք խոսում, մի նեղանա:

— Լավ, բայց էդ դանդալոշին ո՞նց ընտրեցին նախագահ:

— Ախպեր ջան, բանն ինչո՞ւմն է,— մեջ ընկավ Քուչուկը,— կազմակերպչական ժողովում հարցը որ դրվեց, դրա թեկնածու-թյան ժամանակ ամենքն էլ միաբերան ասին, որ, նու, միթե՛լ է, դանդալոշ է: Բայց դեռ ընկան, դեն ընկան, ու վերջը բոլորն էլի կանգ առան էդ դանդալոշի վրա:

— է, չէ՞ին կարող չընտրել:

— Չընտրել չէր կարելի, ստաժ ունի:

— Ի՞նչ ստաժ:

— Նախ՝ տարիքը, ամենամեծն է մեր մեջ, երկրորդ՝ բարի մարդ է, տեսքով, միտքով լավ տպավորություն կթողնի եվրոպական դիպլոմատների վրա: Կտեսնեն բարի, համակրելի մարդ է, կհամակրեն մեր դատին, մեր պետության, զորք կուղարկեն: Հետո երրորդ... նու, գլխավորապես տարիքը: Ծիշտ է՝ միթե՛լ է Այսինքն՝ այն մտքով եմ ասում, որ դանդաղ է:

Սաշան բերանը թթվացրեց և ծոցը խղճահարություն մտրեց.

— Ախր, տղերք,— թափ տվեց գլուխը,— միթե՛լս ո՞րն է: Մի

բիլ դիպլոմատիարար մտածեցեք, ի՞նչ ասել է՝ միթե՛լ: Նու, մարդը հանգիստ մարդ է, դանդաղ է շարժվում, խոսում: Եթե կուղեք զա էլ դիպլոմատիական մաներ է, շտապել, ձգձգել, հոգնեցնել: Եվ ա՛հ այդ գործի համար գերագույնը շատ հարմար է: Այդպես պիտի անենք օրինակ՝ Մոսկվայի հետ, ինչպես Տաճկաստանի, Ադրբեջանի, Վրաստանի հետ:

— Բայց համա լավ անուն են գտել՝ գերա-գույն—երազեց «խողովակ» Մկրտիչը,— էդ ո՞վ հնարեց տո:

— Կարծեմ ինքը՝ Սագինյանը:

— Չէ, ջանրմ, Հայոց կառավարության տերմինն է: Ոմանք էլ ասում են Երևանի կոմենդանտն է հնարել: Հեռագրի մեջ ասված էր. «Ждем Керакуйна»: Շատ մտածեցինք, թե ինչ բան է, վերջը գրություն որ եկավ, հասկացանք:

— է, տղերք, «Գերագույն, գերագույն», բայց իմ փորը վեց-վեց է անում:

— Սեղանը պատրաստ է, պարոններ, համեցեք,— վեր կացավ Սոնիչկան և ամենքին հրավիրեց սեղանատուն: Սկսվեց կերուխումը: Սեղանի զլխին նստեցին Գալուստն ու Սաշան, որը շամփուրը կուլ տված սալդաթի պես թիք ու ձիգ նստեց ու սկսեց ֆասոն բանեցնել: Իհարկե, այդ ֆասոնը երկար շտեկեց: Հիմարական ծիծաղը, որը վաղուց խտտացնում էր նրա կուրծքը՝ հանկարծ ճայթեց, և նա, երկար ատամները թափելով դուրս, բաց արեց ընդարձակ բերանը, հետո կամաց-կամաց շիկնեց, ընկավ սենտիմենտալիզմի մեջ:

— Զա՛ն,— գոռում էին տղերքը:

— Զա՛ն, տղերք, ջա՛ն,— գոռում էր Սաշան, գինով ու ողբ-վորված,— Կոլման ջան,— դիմեց իր զեղծումը բաց անող հող-վածագրին,— Կոլման ջան, խոսենք, վիճենք, պայքարենք, գաղափարական շիտակությունը, ազնիվ հակառակությունը իր տեղը, քեֆն իր տեղը: Այնտեղ կովենք, այստեղ քեֆ անենք:

— Պարոններ, բաժակները լցրեք,— որոտաց Գալուստը: Լըց-րին: Սկսեց.

— Պարոններ, մենք կանգնած ենք նոր դարաշրջանի առջև: Անկախ Հայաստանը փաստ է այսօր: Մենք հիմի երկյուղ ենք ազդում մեր հարևաններին: Եվրոպական դիպլոմատիան ստիպված եղավ ճանաչել մեզ: Մենք պետություն ենք հիմի իր բոլոր ֆունկ-

Գիտենք: Մեզ մնում է ամբողջացնել Հայաստանը և նվաճել մեր դարավոր թշնամուն: Առաջարկում եմ խմել Հայաստանի դիպլոմատիական աշխարհի մեծ ներկայացուցչի կենացը. Սաշա ջան, կենացդ:

— Սաշա, կենացդ: Ուա...

Վերջապես վեր կացավ Սաշան.

— Պարոններ... Մեծ Հայաստանի ողնաշարը... Նախընկածի

մաք-մուտքը, Տրապիզոնի ծով-կիքը... Միջերկրականի բաց ծովը, Սև փակ ծովը... Հայաստանի երեք ներքին ծովակները, Կովկասյան լեռնաշղթայի փակ դռները... անգլիական քաղաքակիրթ աշխարհը, Ռուսաստանի մեռած արջը... խորտակված տևտներ... Պարսկան կեցցե մեծ Հայաստանը...

Սալոն-վագոն...

— Նոյեմբար բաջի, լա՛վ ես, տեղդ լավ, ուհաթ ա՛:

— Լավ եմ, որդի ջան:

— Հա, դե ղոշաղ կաց: Հայաստանը տղիդ տերությունն ա,

— էլ ա քու տունդ:

— Հալբաթ որ, որդի ջան:

— Ո՛ւր, ո՛ւր, ո՛ւր եք քշում իշի պես, չեք տեսնում, միևիստի վագոն ա...

Ու կատաղի կոմենդանտը ետ է բռնում դեպի սալոն-վագոնը խուժող գաղթականներին և գյուղացիներին:

— Ի՞նչ անկիրթն եք, հիմար եք, — ճշում է Սոնիչկան, — ախր ո՛ւր եք լցվում, չե՞ք տեսնում էնտեղ միևիստը է նստած: Ի՞նչ է խալիս եք:

Պատժորմից դեպի վագոնն էր շարժվում ինչ-որ մի թափառաման երևույթ:

Մի ճաղատ երիտասարդ թեանցուկ արած մի տիպարն էր հասկավոր մարդու և մյուս թևը նրա կնկան՝ գոռգոռալով առաջ է մղվում և քարշ տալիս իր բեռը, որ, անշուշտ, «գիպլոմատիական» էր:

— Ճամփա տվեք, գերագույնը անցնի, ճամփա տվեք, Հայաստանի քաղաքացիներ:

— Քաշվեցեք, ինքը եկավ, — գոռաց կոմենդանտը և սկսեց ոտով բռնել գյուղացիներին:

Բայց ամբոխը մեծանում էր, սեղմվում, գոռում, ալեկոծվում: Գերագույնը քրտինքների մեջ էր: Հապիվ մշմշալով և լընգ-լընգալով ճամփա էր բանում ամբոխի միջից:

Սոնիչկան հիստերիկա ընկավ, կոմենդանտն սկսեց գյուղացիներին ծեծել, իսկ Սաշան զլուխը պատուհանից շոտկի պես դուրս հանելով՝ բռունցքներն ուղղեց ամբոխին:

— Սա ի՞նչ անկարգությունն է, ճամփա տվեք կառավարության:

— Բա մե՞նք ոնց աճենք, սլաբոն ջան, — գոռում են ամբոխից ու ավելի առաջ մղվում է:

Սոնիչկան արդեն ծվում է.

— Միլիցիա կանչել տուր, Սաշա, սա ի՞նչ լրբությունն է:

— Իսկապես որ միլիցիա: Տո, հայվաններ, չե՞ք լսում, որ ասում են ճամփա տվեք կառավարության: Առանց կառավարության դուք ի՞նչ եք:

Երկաթուղու միլիցիան միջամտում է, և ամբոխը հեռանում է: Գերագույնին բռնում են դեպի վեր, վագոնը:

Ինչ-որ արարածներ, հավելյալ արժեքների պես կաշում են գերագույնին և ներս խցկվում: Երբ ներս մտան վագոնի միջանցքը՝ շնայած վագոնի «գիպլոմատիական» լինելուն, կամ հենց շնորհիվ դրա, որովհետև հայկական գիպլոմատիական վագոն նքշանակում է Հայոց վանք, կոնսիստորիա գաղթականական պունկտ, լցվել էին ինչ-որ անխուսափելի քելեխիներ, հորելյանչիներ, թաղամանչիներ — տիպեր, որ միշտ հայտնվում են ազգային հանդևների, թաղումների՝ և հոբելյանների ժամանակ. հանդիսավոր տիպեր, որոնցով լիքն է մեր օրհնյալ հայ-լուսավորչական Հայաստանը:

Երբ վանեցի վաճառականներ՝ խորջինները թևքերին ներս էին խցկվում և, սրան-նրան հրմշտելով աջ ու ձախ, հարցնում.

— Ո՛ւր է գերագույնը, հօգուտ Հայաստանի առաջարկ մ'ունինք:

— Դուրս կորեք, սա ձեք տեղը չէ, — նկատեց մի ինչ-որ տիպ, որի ով կնեկը ոչ մի հեղինակ չի գտել և որոշել:

Վանեցիք ուրարտական համառությամբ ներս պրծվելով՝
իրենց խորշինները խոթեցին կուպեն.

— «Ձեր տեղը չէ՞: Տեսա՞ր զևզեկի կտորը, ինչո՞ւ, մենք ազգ
չենք, էշակ քերթա... վա՛յ պապանքն շանընա, վայ...»

Վերջապես գերագույնը ներս մտավ կուպեն և բաղնիսից եկա-
ծի պես քրտինքը սրբեց.

— Օ՛ֆ, այ քեզ հայկական պետություն: Գնացքը շարժվեց:

— Վա՛յ, ես ձեր հոր հոգին... — մռնչաց ամբոխը գնացքի
հետևից:

Վերջապես բոլորը նստեցին կուպեներում մի ծայրից մյուսը,
ծախու սամովարների պես կարգով՝ գերագույնը, նրա կնիկը՝ տի-
կին Սոֆիան, Քաշալ Պետրոսը, հետո գալիս էին ամերիկյան ներ-
կայացուցիչները, Նոյեմբար բաշին, Սաշան, Սոնիչկան, Առյուծյան
սրբազանը, որ էջմիածին էր գնում, երեք վանեցի վաճառական-
ները՝ իրենց ուրարտական քթերով, երկու շեխ առևտրական ֆիր-
մաների ներկայացուցիչներ, մի քանի անակնկալ տիպեր, որ ըս-
տանձնեցին անհայտ ու անակնկալ պաշտոններ:

Բոլորի տրամադրությունը գերազանց էր: Սաշան, որ երկար
ժամանակ չէր կարող բերանը փակ պահել և ծիծաղը զսպել՝ թեև
կարիք էր զգում ատամները ցույց տալու՝ աշխատում էր ֆասոնը
պահել, ուստի և ցիլինդրը ձեռին լուսանկարվող ֆելտֆեբելի պես
անշարժ նստած էր: Լուրջ էր և ծանրագագաթ գերագույնը, որ Հա-
բեշտանի թագավորի պես բազմած էր փափուկ նստարանին և
բաղնիսի ավազան մտած մսավաճառի պես մշմշում էր: Սափրիչի
լրջություն էր պահում Քաշալ Պետրոսը, որ կովկասյան ֆրոնտի
բուլոթ «участка»-ներում պտտեցրած էր քաշալը փայլեցնելով
պսպղեցնում էր իր սայուզ գարագույնյան կրիսայի աչքերը:

Առյուծյան սրբազանը մի «տեր ուղղյա» ասաց գերագույնին և
Սաշային ու, իր համահայկական քիթը մխրճելով մի զարհուրելի-
րեն լայն զունավոր թաշկինակի մեջ, աղմկալի խնչեց, ապա սըր-
րեց իր բաշի քրտինքը՝ մռնչալով:

— Շինեցավ տունն Թորգոմյան...

Գնացքը սլանում էր: Ոչ ոք չէր խոսում. միայն գերագույնը
բրբեմն տնջում էր իր ահռելի ցիլինդրի տակ, որ ֆարրիկայի

ծխնելույզի պես տնկված էր նրա գլխին՝ շնայած, որ վագոնում
շոգ էր:

— Ինչպե՞ս եք, գերագույն, հանգի՞ստ եք, — հարցրեց Առ-
յուծյան սրբազանը:

— Գիշերները չեմ քնում, սրբազան հայր:

— Ինչո՞ւ, գերագույն:

— Է՛հ, Հայաստանի գործերը... հոգսը մեծ է, սրբազան...

Եվ գերագույնը հորանջեց: Սրանից վարակվելով զարհուրելի
սրբազանն իր հերթին բացեց իր անհուն երախը և նույնպես հո-
րանջեց:

Սոնիչկայի տրամադրությունը այնքան էլ լավ չէր — դիպլո-
մատիական վագոնում «հաղար տեսակ մարդ կար»:

Վերջապես գնացքն աչքերը շուտ մոտեցավ Արարատյան
Ռեսպուբլիկայի սահմանին: Սաղախլուում վրացիները վագոնները
քթվեցին և բավական հայկական «ոչիլ» հանեցին:

Գնացքը սուլեց և անցավ սահմանը: Գերագույնը մի անգամ
միայն եզան աչքերով նայեց պատուհանից դուրս և այնուհետև
անշարժացավ:

Շուտով վագոնում ամեն ինչ լռեց: Ամենքը միայն իրար էին
մտիկ տալիս և օրորվում: Գերագույնը շղիմացավ իր դիպլոմա-
տիական կեցվածքին, ցիլինդրը հանեց, դրեց ցանցի մեջ, պառկեց
ու մի րոպեից հետո սկսեց մի աննկարագրելի խումփոց:

Այդ խումփոցը հիշեցնում էր ինչ-որ մի արտաոռոց օրկես-
տըր, ուր կարծես մասնակցելիս լինեին, բացի սովորական գոր-
ծիքներից, ինչ-որ փուքսեր, եռացող ու խլիլխլիլացող կաթսաներ,
բամբաձայն թմբուկներ, մի շարք սուլիչներ, ոռնացող վիլոնչիլ-
ներ և հաշող շեփոռներ...

Ինչ-որ հուսահատ կովի, փոթորկալի իրարանցման ձայներ
էին գալիս նրա փորից, կրծքից ու ռունգներից, գոռում-գոշում
էին այդ սիմֆոնիայի մեջ, խեղզում, խեղզում էին և լեղապա-
տառ օգնություն կանչում: Դա խումփոց չէր, այլ կատարյալ պազ-
րում, կոտորած, ինչ-որ մի հայրենասիրական ատակա, ուր առա-
ջամարտիկ գեներալը սուրը պլոկած, աչքերը պեծին տալով նա-
յում է զորքին և գոռում.

— Հառա՛ջ, հանուն հայրենիքի... — և զորքը մղվում է դեպի
շահատակություն:

— Վա՛յ, վա՛յ, վաաա՛յ,— լսվում էր այդ պատերազմում, և հանկարծ երբ գերագույնը շուռ էր գալիս կողքի վրա՝ խսկույն գաղաթում էր ամեն բան, և խորհրդավոր լուսթյուն տիրում:

Ապա ինչ-որ մի թմբուկ պայթում էր, մի փուքս պատովում, ապա թնդանոթները թնդում էին, շեփորները հնչում և նորից պատերազմն սկսվում: Այս խումփոցով Արարատյան նորակազմ կառավարությունը մտավ Շիրակի դաշտը:

Ուլուխանլու:

Ուրեմն մոտ էր Երևանը, նորաթուխ, տնայնագործական Հայաստանի մայրաքաղաքը:

Արդեն վաղուց լույս էր:

Մեծ Մասիան արևելյան բախկալի պես ծալապատիկ նստել էր՝ առջևը դրած գլուխ շաքարը՝ Փոքր Մասիսը:

Եվ ծխում էր իր դայլանը:

Գնացքը կանգ առավ Երևանի կայարանում:

Բոլորը պատրաստվեցին դուրս գալու:

Քաշալ Պետրոսը մոտեցավ վագոնի դռան և ապա վազեց ներս:

— Գերագույն, եկել են ձեզ գիմավորելու:

Գերագույնը հազաց և եպիսկոպոսաբար վեր կացավ, ցիլինդրը դրեց: Սաշան՝ ոնց որ ձմերուկն այգու պատի վրա՝ գլուխը կախեց պատուհանից դուրս և նայեց:

Անահնկալ բան:

Պլատֆորմը բռնված էր գիմավորող բազմությունմբ, որ կառավարական բարձր շրջաններից էին: Կայարանում կանգնած էր պատվավոր պահակ, քիչ հեռու կոմենդանտական բատալիոնը և օրկեստրը:

Ներս մտավ մի սպա և, մոտենալով գերագույնին, հրավիրեց դուրս:

Գերագույնը վեր կացավ, և ցիլինդրը զլխին պարավոզի պես երկաց սանդուղի վրա: Օրկեստրը նվագեց բարի գալուստ:

Առաջ վազեց կոմենդանտը և «չեատ» տալով՝ գեկուցեց գերագույնին:

Գերագույնը տեսնելով այդ «չեատը»՝ ինքն էլ իր ցիլինդրի «եզրին» «չեատ» բռնեց ու այգպես էլ մնաց:

Առաջ եկավ մի ճառախոս և ողջունեց գերագույնի ժամանումը: Բարեկեցին նաև Սաշային, որ շատ դժգոհ էր իրեն արած ընդունելությունից:

Երբ ճառը վերջացավ՝ բոլորը կանգնեցին, սպասելով ինչ-որ բանի:

Հանկարծ գերագույնը շուռ եկավ և վազեց դեպի իր վագոնը:

— Այ տղա, շեմոդանները մոռացանք, չզողանան:

Կոմենդանտը ժուլիկ ժպիտով կտրեց գերագույնի առաջը և հանդստացրեց:

— Չեմոդաններն ավտոմոբիլի մեջ են, գերագույն:

Գերագույնը հոտ եկավ ու կանգնեց: Սպասում էին ինչ-որ արարողությունների:

Այդ ժամանակ մի խումբ գյուղացիներ, որ զարմացած ու հետաքրքիր նայում են գերագույնին, որին իբրև «շտատսկի» մարդու «վայենինները» «չեատ» են տալիս՝ հեռոճեստե համարձակվելով առաջ եկան ու՝ երբ մոտ էին կանգնած կոմենդանտին՝ նրա թևը բռնեցին և գերագույնին ցույց տալով հարցրին.

— Ո՞վ է...

Կոմենդանտը, որի տրամադրությունը բարձր էր, կատակեց՝

— Անգլիայի թագավորի փեսան է:

Գյուղացիք իրար հրելով կամաց-կամաց առաջ եկան ու, երբ բավական մոտ էին կանգնած գերագույնին՝ նրանցից մինը սիրտ արավ ու դիմեց գերագույնին.

— Աղա ջան, մի բան պիտի խնդրվենք:

— Ի՞նչ խնդիր ունեն Հայաստանի քաղաքացիներն իրենց գերագույնին:

— Պիտի խնդրվենք, որ մեզ Անգլիայի հպատակ գրես:

— Եվ ինչո՞ւ ոչ Հայաստանի հպատակ,— հարցրեց գերագույնը սրբազանի պես:

— է, աղա ջան, հեռի ձեզնից, ի՞նչ ոտներին ա Հայաստանը: Հազիր Անգլիայի հպատակ գրես, բալքի հացից-մացից մի բան ընկնի բերաններս— սովից կոտորվեցինք:

— Ոչ,— պատասխանեց գերագույնը բարի ժպիտով,— դուք պիտի Հայաստանի հպատակ մնաք:

— Բա հաց չի՞ գալու, հաց:
— Դեհը քաշվեցեք, դեհը,— գոռացին ինչ-որ պաշտոնյաներ
գյուղացիների վրա և նրանց հեռացրին:
Մի րոպեից հետո բոլորն ավտոմոբիլների վրա էին, որ դռ-
դռալով ու փոշու ամպեր բարձրացնելով սլացան դեպի Երևան
քաղաքը:

Գյուղացիք մնացին կայարանում:
— Վայ, ես ձեր ցիլինդրներին նստեմ, հա, տեսա՞ք էս ղու-
ռումսաղներին:
— Ուղե՞ր էին, գյաղա:
— Այ-շի, սոված վարժապետներ, ըղրանց... էն ինքը...

ՂԻՊՏԻՄԻՁՄ

Մի բարեկամ ունեի, որ մի բարեկամ է ունեցել սրանից մի
երեսուն տարի առաջ, որ սրան տեսնելով իրենց հիմնարկում շատ
ջերմեռանդ աշխատելիս՝ ասել է. խնայիր քեզ, ինչո՞ւ ես կյանքդ
զուր տեղը մաշում:

Աշխարհիս երեսին, ասում է, պետք է իմանալ, որ կարևորն
այն չէ, ինչ որ կարևոր է, այլ կարևոր է այն, ինչ որ կարևոր չէ—
ահա թե ինչն է կարևոր:

Բարեկամիս բարեկամի այս ասածի վրա միտքս մի բան
ընկավ:

Սրանից մի տասը տարի առաջ Բաքվի նավթահանքերում
բանվորական թեյարանի կառավարիչ էի:

Ընդարձակ սեղանատուն, ահապին կաթսաներ, ծառայողների
շտատ և այդ ամենի զլխին Սավետ Սյեզդի մեծավորների կանանց
մի խումբ, որ սեղանատան գերագույն հսկիչն ու հովանավորն էր:

Մի ռուս իվանով ծառայող ունեինք, որ կաթսաներում թեյի
ջուրն էր տաքացնում:

Հիմի՞ առավոտ է, բանվորները լցված սեղանատանը թեյի
են սպասում: Շտապում են, որ թեյ խմեն, դեհն բանելու: Ժամա-
նակ չկա: Ես իրար եմ անցնում, մոտենում եմ պատին ու այս
կողմից ձայն եմ տալիս իվանովին:

— Իվանով, կիպի՞տ...
— Նե-ե՛տ իշշո...
Խայտառակ բան: Բանվորներն առանց թեյի վեր են կենում,
գնում գործի:
Հետևյալ օրը մի կերպ շուրջ ետում էր: Երրորդ օրը էլի մի
կերպ: Բայց չորրորդ, հինգերորդ օրը...

— Իվանով, կիպի՞տ...
— Նե-ե՛տ իշշո...
Կանչեցինք իվանովին և հանդիմանեցինք.
— Սիրելիս, սա իմ թևը չէ, բանվորների թեյն է: Մարդիկ
գալիս են թեյի և հաճախ գնում առանց թեյի: Դու ծառայող ես,
պետք է ժամանակին հասցնես: Ի՞նչ բանի ես:
— Որ չի ետում՝ ի՞նչ անեմ:
— Պատճառն ի՞նչ է:
— Չեմ իմանում, կաթսաները վատ են:
— Անկարելի է: Երևի մազութը ուշ ես վառում, ուշ էլ ետում
է:

— Ուզում ես կեսգիշերին վառե՞մ:
— Չեմ իմանում, մի բան արա, թե չէ խայտառակություն է:
Մյուս առավոտ իվանովը վաղ է վեր կենում: Այս անգամ
հույս կա, որ թևը ժամանակին հասնի: Եվ ահա, երբ բանվորնե-
րը նստարանների վրա շարված սպասում են՝ դառնում են դեպի
պատը:

— Իվանով, կիպի՞տ...
— Նե-ե՛տ իշշո...
Դարձյալ կոտորվելուն— բանվորները գնում են առանց թեյի:
Ինժեներ կանչեցինք, եկավ, նայեց, ասավ՝ կաթսաները կար-
գին են: Մնացինք շվարած: Ես սկսեցի անհանգստանալ, կասկածել:
Չլինի՞ ժուլիկություն է անում, ծուլանում է, ուշ կրակ անում:
Բայց հիմի ե՞ս էի մեղավոր, որ պատճառը չէի գտնում, ինժեներն
էր մեղավոր, որ, գուցե, լավ չնայեց, չհասկացավ, թե՞ իվանովն
էր սուտ ասում՝ բայց բանը նրանումն էր, որ գործը առաջ չէր
գնում:

Վարչությունից մարդիկ եկան, կանչեցին իվանովին՝ թե դու
մեր գործին չես գալիս, դու ծուլ ես, անճարակ ես: Քեզ չենք կա-
րող բավարարել և բանվորներին զրկել: Ազատ ես:

Իվանովս ուսերը թոթվեց, մի քիչ ոտի վրա տրորվեց. արդա-
րութեան մասին բացատրութիւններ տվեց, բայց անհաջողակ
մարդու ճա՞րն ինչ, շորերն առավ կոնատակը ու գնաց արդարու-
թիւն որոնելու:

Ես էլ գնացի շուկա ուրիշ ծառայող գտնելու: Դես-դեն աչք
ածեցի, մի լեզգի գտա: Տեսա աչքաբացի մեկն է: Կզա՞ս: Կզամ:
Խոսեցի, պայմանավորվեցի, բերի. կանգնեցրի գործի գլխին: Է՛,
Աբղուլ, հիմա դու գիտես, ոնց պիտի անես:

Էս Աբղուլս էր՝ անցավ գործի ու ոնց որ դանակով կտրես՝ թե-
յի հարցը վճուեց:

Առավոտները, ժամանակն է, թե ժամանակից վաղ է՝ հենց
բանվորները գալիս շարվում են սեղանների մոտ ու ձայն են տա-
լիս.

-- Աբղուլ, կիպի՞տ:

— Ձեռաց.

— Ղիպիտ,— գոռում էր լեզգու արտասանութեամբ:

-- Բաց թողեք ծորակները:

Եվ ջուրը բաց են թողնում, սեղանատունը տաքանում է, հինգ
հարյուր մարդ թեյ է խմում, քեֆը գալիս է:

Գործներս ճամփա ընկավ: Ոգևորվեցի: Ախր լավ է, երբ մե-
քենան սարքում ես ու բանի գցում, ոնց որ նժույզ նստես ու գնաս
Առավոտները ամենից շուտ էի գնում սեղանատուն: Հա՛ Պետրոս,
հացը կտորի, հա՛ Հակոբ, շաքարը բեր, Մաշա՛, գավաթները շա-
րի: Բանվորները գալիս են, նստում:

— Աբղուլ, կիպի՞տ:

— Ղիպիտ,— կայցնում է ձյութի պես:

— Բա՛ց արեք ծորակները:

— Գործ չէ, ջիրիդ է, մաղերով ջուր ենք կրում: Գործը դողած
է ձեռներիս:

— Մալադեց, Աբղուլ, այ շոխ սաղօլ, Աբղուլ, ապրես Աբ-
ղուլ,— ձայն են տալիս բանվորները, ես էլ ուրախանում եմ: Բո-
լորս էլ գոհ ենք արագաշարժ լեռնցու ծառայութիւնից: Ի՞նչ ծա-
ռայութիւն— փրկութիւն: Իվանովն էր— դանդաղ, անձարակ
«կիպիտ», «նե՛տ»: Սա «ղիպիտ» է, բայց ամեն օր իր ժամանա-
կին հասցնում է: Այսպիսով, գնաց կիպիտը, եկավ Ղիպիտը:

Գործը դրստեցինք:

Մի առավոտ, հենց որ բանվորները եկան և արտասանվեց
«Աբղուլ, կիպիտ-ղիպիտը»՝ պատահաբար անցա Աբղուլի բաժի-
նը: Ներս մտա, ասի, տեսնեմ, ո՞նց է սա կրակի պես հասցնում:
Չլինի խեղճ մարդը կեսգիշերին է վեր կենում, թե ինչ է ժամա-
նակին թեյ պիտի հասցնի: Եվ մտածեցի, որ մինչև այն ժամանակ
այս մասին չեմ մտածել: Ախր նա էլ մարդ է: Ներս մտա՝ այնտեղ
չէր: Մի բոպե դուրս էր գնացել:

Պատահամբ բաց արի կաթսաների խուփը: Եվ ի՞նչ տես-
նեմ — ջուրը շէր եռում:

Սա ինչ բան է, երբ «ղիպիտն» ասվեց՝ օգնականս ուղարկեցի,
որ գնա տեսնի ջուրը եռո՞ւմ է:

Գնաց եկավ, թե ջուրը չի եռում: Երրորդ-չորրորդ օրը նույն
ժամը: Պահո, ասի: Այս մեր Աբղուլն ուրեմն ամբողջ վեց ամիս
«ղիպիտ» էր ածել բանվորների փորը... այ քեզ բան: Դե, գնա՛:

Աբղյոք շարունակե՞մ պատմութիւնը: Կարիք չկա:

Երբեմն միտս է ընկնում այս դեպքը և մտածում եմ. տեսնես
ինչ եղավ խեղճ կիպիտը և ուր է ճարպիկ Ղիպիտը:

Բայց կիպիտն ու Ղիպիտը աշխարհի ցավերից մինն է: Ինչ-
քան Ղիպիտներ անցյալում հում ջուր են ածել բանվորների փորը
և ինչքան անճարակ եմ եղել ժամանակին բռնելու նրանց:

Հիմա, մեր այս խիստ դարում, Ղիպիտների համար տեղ
չկա: Հիմա կիպիտներն են, որ գլուխները քարին են տալիս,
քարը գլուխներին ու կարողանում են եռացնել մեր պետութեան
ջուրը:

Բայց Ղիպիտը կենսունակ էր և բախտավոր, մին-մին ստվերի
տակ կուզենար փորձել բանեցնելու իր արհեստը՝ եթե չլիներ
ԲԳՏ-ն, որ իսկույն նրա գլխին տալով այդ Ղիպիտիզմը վերածում
է կիպիտիզմի:

1924 թ.

ՄԻԱՄԻՏ ՆՈՐԵԿԻ ԱՐԿԱՄՆԵՐԸ

(Նվեր բնակարանային բաժնի վարիչին և «Շինարար» ընկերությանը)

Քե թիֆլիսում, թե թիֆլիսի ճամփին ղեկի Երևան և թե Երևանում քանի անգամ, որ խոսք է բացվել Երևանի արժեքների մասին՝ նկատել եմ մի բան: Օրինակ՝ երբ մի երևանցու հարցնում եք, թե «լավ, այդքան որ գովում եք Երևանը՝ ի՞նչ կա Երևանում»՝ խոսակիցդ միշտ կենդանանում է և պատասխանում:

— Ի՞նչ եք ասում, ինչե՛ր չկան մեր Երևանում:

— Օրինակ, ի՞նչ կա:

— Ի՞նչ. խաղող, կոնյակ... և վերջապես Մասիսը:

Ուրիշները մի քիչ ավելի են խմբադրում: Երբ հարցնում ես՝ ի՞նչ կա Երևանում:

— Ի՞նչ. այ, խաղող, կոնյակ, իշխան ձուկ... և վերջապես Մասիսը: Թիֆլիսում մեկին հարցրին.

— Լավ, ասում եք՝ գամ Երևան: Երեսուն ութլի ոռճիկ որ տան՝ ինչպե՞ս ապրեմ ընտանիքով:

— Այո, երեսուն ութլի կստանաք, և կապրեք հիանալի Ափսոս չէ՛ Երևանը: Լավ կտեղավորվեք ձեզ համար, այնպես էլի... և դիմացներդ Մասի՛սը...

Վերջապես մի օր պայթեցի.

— Ախպեր ջան, ոռճիկիս մեջ Մասի՞սն ինչ գործ ունի Մասիսը կուտվի: Փռնչին որ գա տունս պարտքն ուզի՝ Մասի՞սը պիտի տամ իրեն, թե՞ փորս, որ ցավի՝ վրան Մասիսը պիտի դրնեմ: Ինչ իդեալիստներ եք երևանցիքդ: Մասիսը շինել եք վալյուտա:

Իհարկե, երբ եկա Երևան և տեսա Մասիսը՝ ասացի վնաս չունի, երես պարզ անող բան է: Եվ իբրև միակ արժեքավոր բանը Երևանում ծոցատետրիս մեջ գրեցի.

«Առայժմ Մասիսը»:

Դե Մասիսը լավ բան է, բայց սենյակը ավելի լավ բան է՝ ասում է շինական առածը: Ուստի գալուս պես՝ սկսեցի սենյակ արոնել:

Մի օր բարեկամիս հետ նստել Երևանի «Տաղավարում»

խոսում էինք Մասիսի գեղեցկության և Երևանի բնակարանային պայմանների մասին:

— Ասացե՛ք խնդրեմ, — դիմեցի նրան, — ի՞նչ դրուժյան մեջ է իսկապես Երևանի բնակարանների խնդիրը:

— Լավ դրուժյան:

— Եվ ի՞նչպես եք գտնում Երևանի սենյակները:

— Ես պարզապես ոչ մի սենյակ չեմ գտնում:

— Ի՞նչպես: Ես եկել եմ պաշտոնով և պիտի ապրեմ Երևանում: Ասել է չպիտի՞ կարողանամ այս շաբաթ մի սենյակ ձարել:

— Այս շաբա՞թ: Ի՞նչ եք ասում: Դուք ո՞րքան ստաժ ունեք:

— Ի՞նչ ստաժ:

— Սենյակ որոնելու և չգտնելու ստաժ:

— ...

— Այո, ամեն մարդ Երևանում պետք է մի երկու տարի որոնի, սպասի, պայքարի, սենյակ չգտնի և ստաժ ձեռք բերի:

— Եվ, երբ ստաժ է ձեռք բերում՝ սենյակ ձեռք է բերում:

— Ոչ:

— Ի՞նչպես:

— Այն ժամանակ նա պիտի սպասի, որ սենյակ ձեռք բերի:

— Բայց այդքան երկար սպասողներ կա՞ն:

— Սպասողներ կա՞ն: Սենյակի սպասելու և չգտնելու գործում հայտնի դարձած մարդիկ կան Երևանում: Կան հին գործիչներ այդ ասպարեզում, որոնք արդեն հոբելյար են դառնում:

— Այդ ի՞նչ դժվար բան է եղել Երևանում սենյակ ձարելը:

— Դժվար: Ավելի հեշտ է Եվրոպայում հեղափոխություն ձեռք բերելը՝ քան Երևանում սենյակ:

Մեզ մոտեցան մի քանի բարեկամներ ևս: Ես դիմեցի դրանցից մեկին:

— Դու՞ք էլ Երևանումն եք ապրում:

— Ո՛չ:

— Ուրեմն ինձ պես նորե՞կ եք:

— Ոչ: Ես երկու տարի է Երևանումն եմ: Միայն՝ Երևանում չեմ ապրում:

— Ապա՞:

— Թիֆլիսում: Գիշերում եմ Թիֆլիսում, իսկ Երևանում ցե-

րեկում եմ միայն: Այսպիսով շաբաթներով քնում եմ, շաբաթնե-
րով արթուն մնում:

— Իսկ դուք ո՞րտեղ եք ապրում,— հարցրի մյուսներին:

— Առայժմ մենք չենք ապրում: Միայն գիշերում ենք գրա-
սեղանների վրա:

— Տալօրինակ բաներ եք ասում:

Այս խոսակցությունները սկսեցին անհանգստացնել ինձ:
Սկսեցի մտահոգվել: Ի՞նչ պիտի լինի վիճակս:

Այդ տեսնելով ներկաներից մինը, մի ազնվադեմ երիտա-
սարդ, ինձ աչքով արավ: Վեր կացանք:

— Մի փոքր հեռանանք այստեղից,— ասաց նա:

Երբ մի փոքր հեռացանք՝ նա սկսեց.

— Ի՞նչ լավ եք արել, որ եկել եք Երևան: Կխոսենք, կմխի-
թարվենք: Մի բարեկամ շունեմ, որ սիրտս բաց անեմ:

— Գծբախտություն հո չի՞ պատահել ձեզ:

— Այո: Մեծ գաղտնիք գիտեմ: Ասել չեմ կարող ոչ ոքի:
Բայց պահելուց էլ հիվանդանում եմ:

— Սիրահարված եք:

— Ի՛հ, հիմա ո՞վ է սիրահարվում:

— Հա, իմացա... (ականջին) ձեզ հետևում են:

— Ինչե՞ր եք ասում: Ես համակիր եմ:

— Գուցե օգնեմ ձեզ: Ինչո՞ւմն է բանը: Բացատրեցեք:

— Գնանք մի ապահով տեղ:

Գնացինք Երևանի բերդի ավերակները: Նստեցինք քարափին
և այն է ծանոթս ուզում էր սկսել՝ մոտակա պատի հետևից մի
կասկածելի մարդ մոտեցավ մեզ և սկսեց դիտել ձորը:

— Քրեական խուզարկու հո չէ՞,— հարցրի ծանոթիս:

— Ո՞չ:

— Բայց միևնույն է: Ես լոյալ քաղաքացի եմ:

— Ես էլ:

— Դե ուրեմն ասացեք ձեր գաղտնիքը:

— Գիտե՞ք ինչ,— հանկարծ վճռեց ծանոթս,— ապա մոտե-
ցեք այդ մարդուն և հայերեն ասացեք, որ Ղանթարի մոտերք
մաքսանենդ ապրանք են ծախում:

Գնացի անծանոթի մոտ և ասացի:

Անծանոթը ժպտաց, բայց նշանացի պատասխանեց, որ չի
հասկանում:

Ես վերադարձա տեղս և խնդրեցի ծանոթիս, որ վերջապես ասի
իր գաղտնիքը:

Բարեկամս ականջիս փսփսաց.

— Ես հավատում եմ ձեր ազնվության և գաղտնապահության.
ես ազատ սենյակի տեղ գիտեմ:

— Ի՞նչ եք ասում:

— Այո:

— Բայց դուք սենյակ ունե՞ք:

— Երկո՞ւ հատ:

— Կավ, ձեզ ի՞նչ կա որ, գիտե՞ք՝ գիտե՞ք:

— Վախենում եմ մի օր բերնիցս թոցնեմ և լուրը հասնի
գործկոմին: Պիտի կասկածեն, որ ինչ-որ խնամիրական կապեր
ունեմ տանտիրոջ հետ: Այլապես ի՞նչպես կարելի է այդպիսի
գաղտնիք իմանալ կամ ասել:

Երևանում ամենքը սրտաբաց, անձնվեր, պարզ մարդիկ են:
Անգամ սիրուհու նամակը կկարդան մոտո, բայց սենյակի գաղտ-
նիք չեն ասի:

— Դուք կարո՞ղ եք այդ սենյակի տեղն ասել ինձ:

— Այո, միայն հեռվից:

Գնացինք: Յույց տվեց տունը: Գնացի գտա սենյակը: Հարևա-
նին հարցրի սենյակի մասին:

— Այո,— ասաց,— սենյակ կար, որովհետև տեղը թոքախտ
ուներ և գնացել էր Դիլիջան մեռնելու:

— Հետո՞, մեռա՞վ,— ուրախացա ես:

— Ո՞րտեղից: Դիլիջանի բժիշկները չկարողացան մեռցնել:
Ճիշտը որ խոսենք՝ առողջացրին: Ասենք՝ բժշկի լա՞վը երբ ենք
տեսել որ...

Հուսահատ վերադարձա Տազավար: Բարեկամներս դեռ այն-
տեղ էին:

Տխուր նստած էի:

Այդ ժամանակ եկավ ծանրախոս և լրջդեմ մի մարդ: Սառնո-
թացրին հետը և հայտնեցին ցավս:

Անծանոթը խոժոռ նայեց ինձ և հարցրեց.

— Ինչպե՞ս է ձեր շնչառությունը:

— Վատ չէ:
 — Պնդակա՞զմ եք:
 — Բավականին:
 — Ուրեմն մի հուսահատվեք: Շուտով բնակարանային բաժինը պիտի սեղմի:
 — Բնակարանները:
 — Ոչ, ամբողջ քաղաքի բնակչությունը: Եվ եթե սեղմելուց չջախջախվեք կամ չխեղդվեք՝ սենյակ կստանաք:
 — Հուսահատական բաներ եք ասում,— սրտնեղեցի ես,— սա ի՞նչ տեսակ քաղաք է: Չեմ մնա, կգնամ Քիֆլիս:
 — Ջանր՛մ,— ձայն տվեց վերջապես մի հասակավոր բարեկամ,— ինչո՞ւ եք Քիֆլիս գնում:
 — Ապա ի՞նչ անեմ, սենյա՞կ դառնամ:
 — Ոչ, մնացեք Երևանում և ուղղակի դառեք սենյակի տեր: Ինձ լսեցե՛ք: Երևան ասածդ վագոնի պես բան է: Տեղ բռնածները նորեկին ասում են տեղ չկա, տեղ չկա, բայց վերջը, երբ ներս ես խցկվում, տեղ են անում: Երևանը ժլատ մարդ է, փող չի տալիս, բայց որ զոռում ես՝ ցույց է տալիս իր ոսկիները: Դուք ինձ լսեցե՛ք: Երևանում ով որ ուզում է սենյակ ունենալ՝ պետք է անցնի շորս շրջան. պարազիտային, սիմբիոտիկ, ազատ և տնատիրական: Գալիս ես Երևան՝ իջնում ես ծանոթի մոտ և խնդրում միայն մի գիշերվա տեղ: Մնում ես ամբողջ ամիս և ուտում ես հյուրընկալիդ:

Այս պարազիտային շրջանն է: Հետո հյուրընկալի քեզնից ազատվելու համար սկսում է քեզ էլ մասնակից անել տալ տան ծախսերին: Այս սիմբիոտիկ շրջանն է: Քիչ հետո հյուրընկալի դառնում է քո հյուրդ և սկսում է քո գրպանից ուտել: Ստիպված ես լինում այդ անախորժ հյուրից ազատվելու համար գերմանական հաշիվ մտցնել և ստիպել «հյուրիդ», որ ինքն իր համար ծախսի, դու քեզ համար: Բաժանվում եք: Այս ազատ շրջանն է: Արդեն դու մի սենյակի մեջ ես, որի տերը դու ես, և եթե տեղափոխելու լինեն՝ մի սենյակ կտան միշտ: Այդ տնատիրական շրջանն է: Տեսնո՞ւմ եք, եկաք անսենյակ և դառաք սենեկատեր:

Մի օր մի պատահական դեպք ինձ հույսեր ներշնչեց: Գնացել էի բնակարանային բաժնի վարիչի մոտ, տեսա, որ սաստիկ տխուր և շարացած էր:

— Ի՞նչ է պատահել,— հարցրի:

Վարիչը հուսահատ նայեց ինձ.

— Ի՞նչ պիտի պատահի ավելի սարսափելի: Եղբայր, մի կողմից մեր պետությունը ջրանցքներ է անցկացնում, մյուս կողմից ճահիճներ է շորացնում: Կրճատված է մալարիան:

Արդեն կոոպերացիան սկսում է հաղթել: Սա չվերջացած՝ արգեն գործարաններ, տնտեսական շինարարություն: Մյուս կողմից էլ Զագսը ծնում է ու պսակում, պսակում ու ծնում: Աստծու սիրուն, այս ի՞նչ բարեկեցություն է, այս ի՞նչ բազմացում է:

Գրպանո՞ւմս պիտի տեղավորեմ այսքան բնակչությունը:

— Ինչպե՞ս էր 1918, 1919 թվականներին:

— Թվականներ: Ոսկի՛ ասա: Հրաշալի սով կար, մալարիա կար, կոտորած կար: Ո՞վ էր տեսել բնակարանային կրիցիս: Մեռելադուլ էր շորս կողմդ: Ախպե՛ր, քի՛չ կերե՛ք, քի՛չ աճեցե՛ք, կոտորվեցե՛ք:

— Լավ, հիմա ի՞նչ ենք անելու:

— Մտադիր եմ փախչելու:

— Ա՛խ, ո՞ր էր մի այդպիսի բան աներ ընկեր վարիչը: Զեռաց նրա սենյակը...

— Ավտոմոբիլ բերե՞մ:

— Ոչ, մնա առայժմ:

Շատ առողջ և եռանդուն երիտասարդ է, բայց հույս ունեմ, որ մի օր նրա համար այդ ավտոմոբիլը կբերեմ...

— Ուռոա՛, սենյակի տեղ եմ գտել...

Վազեցի բաժնի վարիչի մոտ օրդեր ստանալու: Բայց որովհետև հիմի սաստիկ խորամանկ եմ դառել այդ հարցում՝ ուզում էի այնպես անել, որ հա՛մ վարիչից օրդեր վերցնեի, համ էլ վարիչը չիմանար: Ո՞վ է իմանում: Հազար խաթա կա աշխարհում:

— Ի՞նչ եք կամենում,— հարցրեց վարիչը:

— Ոչինչ,— ասացի,— եկել եմ Մասիսը դիտելու ձեր պատըճամբից:

Վարիչը նայեց աչքերիս խորազնին հայացքով և հանդարտ ժպիտով ասաց.

— Զուր մի ընկնեք դեսուդեն: Մեզ չեք կարող խաբել: Ո՛ւր է սենյակը:

— Ես սենյակի տեղ չգիտեմ:

— Ես ձեզ զգուշացնում եմ (վեր կացավ և մոտեցավ հեռախոսին...)... Շո՛ւտ, ասե՛ք, ո՛ւր է սենյակը: Եթեք տարի է մարդ է սպասում:

— Սա Խ՞նչ բան է,— բարկացա ես,— հազիվ մի սենյակ եմ գտել, այն էլ... ես կգնամ ժողովուրդս, իրեն կասեմ...

Վարիչը ժպտաց:

— Հա՛. շե՛ն տուն հարս գնացիք: Հենց սենյակը իրեն է պետք...

Վերջապե՛ս: էլ սենյակի կարիք չունեմ: Հայտնեցեք բնակարանային բաժնի վարիչին: Այսօր առավոտյան ժամը 10-ին ինքնասպանություն գործեցի:

1924 թ.

ԾՈՎԱՅԻՆ

Դեսուքը կատարվել է շատ տարիներ առաջ, երբ ես ուսանող էի:

Երբ մտավ ժնկի ուսանողական ընթերցարանը — այդ ժամանակ մի շորս-հինգ ուսանողներս կարդում էինք — իսկույն ուշ դարձրինք իր կերպարանքին:

Դա դեմք չէր, այլ դիմակ:

Գոնե այդպես թվաց:

Կարծեմ հենց այդպես թվաց, որովհետև աչքերն անբնական խոր էին ընկած:

Աչքերի տակ երգու կապտադույն երիզներ:

Պարզապես հիվանդ էր:

Եկավ, նստեց աթոռին, աչքերը սևեռեց պատի մի կետին ու...

Ի՞նչ պիտի անի: Ի՞նչ մարդ է...

Շփոթված թողինք մեր ընթերցումը, մոտեցանք իրեն:

— ...ներողություն... ր՛... Ի՞նչ կկամենայիք. բարեկամ,— ասաց մեզնից մեկը:

Հարևանցի և տազնապալից նայեց մեզ: Զխոսեց:

Երևի իտալացի շրջիկ երաժի՛շտ է:

Յուդից պսպղացող կատելյուկը ձեռին՝ բերանը բաց հետում է:

Հայացքը միշտ պատին է:

Չէ. ինչ-որ մի բան պիտի անի...

Ընթերցարանի մեջ... անծանոթ մարդ:

Շո չպիտի ուշաթափվի: Հա՛:

— Այ տղա, ջո՛ւր: Կաթ հասցրեք, ով է իմանում, թունավո...

— Շո՛ւտ, բժի՛շկ...

Վազում են բժշկի:

Շրջապատել ենք:— Ո՛վ եք, բարեկամ...

Անծանոթը դեմքը ծոմոնց ու.

— Հայ եմ,— կերկերաց աղիողորմ ձայնով ու... հանկարծ փոտալով՝ ներեցեք պարզությանս՝ ծովային հիվանդություն դրսեվորվեց:

Մենք իրար անցանք: Զուր ենք խփում ճակատին, քունքերն ենք տրորում: Զարկերակ, սիրտ, ստամոքս և այլն. ճակատը բռնել, կոմպրես ենք դնում սրտի գդալի վրա...

Բժիշկը հասավ: Շարանյանը:

Ազդային հիվանդն ընկել էր հատակին:

Զափազանց մանրամասն քննեց, նայեց հարցական...

— Բժիշկ, հո... թունավոր...

— Ոչ: Ստամոքսի խոց ունի կամ խլիրտ: Նշաններ կան appendicit-ի, այո, carcinom epithelialis...

Իհարկե՛ հիվանդանոց: Եվ անմիջապես:

Դեղ գրեց «համենայն դեպս՝ եթե այսօր, վաղը տեղ չլինի հիվանդանոցում...»:

Երբ գնաց՝ օտարականն իսկույն աչքերը բացեց և աղերսալի նայեց մեզ: Կարծես մի քիչ հանգստացավ:

— Շատ խղճացինք իրեն: Թշվառ մարդ: Որտեղի՛ց որտեղ: Խեղճ հայի ճակատագիր: Աբդուլ Համի՛դ... Հայոց հա՛րց...

Մեջներս մի 10 ֆրանկ հանգանակեցինք, տվինք իրան:

Հիվանդը թոնթորաց:

— Մի... այնպիսի... գիշերվա տուն... չկա... հիվանդանոց մի տարեք:

Մտանք թևերը, տարանք ապաստարան:

Մի երկու շաբաթ անց՝ նստել ենք ընթերցարանում:
Հանկարծ նամակ: Քաղաքային: Բաց ենք անում: Ստորագրու-
թյունը Պետրոս Պետրոսյան:

Սա ո՞վ է:

— Կարդա, տեսնենք:

«Մեծապատիվ ազգային ուսանող աղաներ.

«էդ, ամեն օր որ տեսության եք գալիս հիվանդանոց, էդ խա-
բեբա անարխիստին, մրգերով ու շաքարահացերով որ տրաքեց-
նում եք, մի չէր լինի, որ իմ կողմն էլ մտիկ տաք, գաք, հարցնեք,
թե՛ «հարիֆ, մեռա՞ր, ապրեցի՞ր»: էդ ամենը որ լվլվում են՝ մենք
էստեղ ազգ չե՞նք: Ամոթ ձեզ, որ ուսանողներ եք»:

Մնացինք շվարած: Գրում է կանտոնային հիվանդանոցից:

Այ տղա, ի՞նչ անարխիստ հիվանդ կա հիվանդանոցում, ո՞վ
է նրան այցելում ու սրան անտես առնում:

— Գնա տես ի՞նչ մարդ է, ի՞նչ բան է, — ասում են ինձ ըն-
կերներս:

Գնում եմ:

Դե, ասում եմ, նահապետական մարդ կլինի լուսավորչախառն
սիրտը նեղանում է հիվանդանոցում, գնանք մխիթարենք:

Տանձ-խնձոր եմ առնում ու գնում կանտոնային հիվանդա-
նոց:

Ներս եմ մտնում և մահճակալների շարքում որոնում եմ
համարը:

Մեկն ինձ ձեռքով է անում.

— Արի՛, արի՛...

— Ներեղություն, Պետրոսյանը դո՞ւք եք:

— Տո, արի՛, արի՛: «Պետրոսյանը դո՞ւք եք», կարծես ուս-
պուրիկի նախագահն եմ: Եկուր հոս, նստե, էֆենդըմ, — խառնում
է արևելյանն ու արևմտյանը:

— Պուսեցի՞ եք:

— Հին նախիջևանցի որ լինեմ՝ ի՞նչս կպակասի: Նստե, նա-
յենք, բարեկամ:

— Կարծեմ մի տեղ...

— Կարծեմս ո՞րն է, ջանք, էն օրը որ բծիշկը եկավ ու փո-
րիս մեջ լատիներեն հիվանդություն գտավ, նա եմ:

— ...

— Հա, հա՞ նա եմ:

— Ինչպե՞ս եք այժմ, առողջացա՞ք...

— Նստե, ջանք: Աղա ազգային ուսանող: Ոնց էլ ձևերը
գիտե՞ք, — «ինչպես եք այժմ, առողջացա՞ք»: է՛, լավ: Գարդակ
խոսք. ի՞նչ էն լածիրակ անարխիստին, որ ամեն օր բերում եք,
չի՞ լինի մի բան, մի կերակուր էլ ինձ բերե՞ք՝ ես բերանս պցեմ:
Անոթի մեռա է՛:

— Ինչպե՞ս, այստեղ չե՞ն կերակրում:

— Տո, ոնց թե չեն կերակրում: Ուսանող մարդ ես, հիվան-
դանոցում չեն կերակրի: Վանք է, վա՛նք շան տեղը: Կերակուրներ
են տալիս, որ՝ վայ պապամ, հերս գերեզմանում սնգսնգում է: Ես
քեզ ասում եմ կերակուր բեր, դու էլ բեր:

— Ապա ասում եք այստեղ լավ կերակուր կա: Չե՞ք ուտում:

— Տո, շատ էլ ուտում եմ, է, ի՞նձ ինչ...

— ...

— Ուտելը՝ ուտում եմ, աղա ջան, շատ եմ ուտում, բայց բո-
լորն էլ, ոնց որ էն օրը տեսար...

— Դե որ չեք մարսում, էլ դրսից կերակուր ինչի՞ եք ուզում:

— Ապա ինչո՞վ ապրեմ այստեղ հիվանդանոցում:

— Հիվանդանոցում ինչո՞ւ եք մնում:

Հանկարծ գլխի եմ ընկնում:

— Հա, դուք բնակարան չունեք:

— Բա՛ս, փող էլ չունեմ: Հիմի էստեղ եմ ապրում:

— Էն շան որդին էլ չեկավ:

— Ո՞վ:

— Էն պաստոր Ֆան է, ինչ զահրումար է:

— Ա՛խ, միսիոներ Ֆա՛նը, նա որ Փոքր Ասիայում որբանոց-
ներ ուներ — հայտնի հայասեր քրիստոնյա, միսիոներ կապիտա-
լիստը...

— Ուրեմն դուք ստիպված եք այստեղ սպասելու նրան:

— Հապա: Մի ամիս է՛ գնացել է Բեռլին: Չի գալիս, որ ճան-

կեմ մի քանի ֆրանկ: Մեռա սովից է՛, ազգային ազա ուսանող: Ես էլ ասում եմ՝ դրափց մի քիչ կերակուր բերեք մի փորումս հարսանիք սարքեմ: Կերակուրներ են բերում, ջանս դող է ընկնում, օգուտն ի՞նչ:

— Ուրեմն ախորժակ ունեք, միայն... չեք մարսում:

Ձեռքով է անում և աչքերս է ծակում խորամանկ ժպիտով:

— Ո՞վ չի մարսում: Ժներ կխժռեմ: Ջանք, գլուխդ մի ցավացնի շատ: Դու ուսանող ես, ուսումդ արհեստն է, չէ՞: Ես էլ իմ արհեստն ունեմ:

— Ի՞նչ արհեստ:

— Մովային հիվանդություն, աղաս:

— Հա՛հա՛հա՛...

— Ապա ինչ գիտեիր: Դրանով եմ գլուխս պահում: Հը՛, — քմծիծաղում է, — էս արհեստովս Փարիզը կերա: Բոլոր քաղաքամասի հիվանդանոցները հերթով մտա, ապրուստ արի, մինչև որ դուրս արին: Էլ հիվանդանոց չմնաց, բոլորը կերա ու թափեցի:

Միծաղում է:

— Էն օրն էլ ինչ իրար անցաք, հայ ջուր, հայ կաթ, հայ բժիշկ — կասես հայոց ազգը կործանվեց: Էն տասը ֆրանկը ժամանակին որ տայիք — ի՞նչ հիվանդություն: Հա: Ապաստարանից որ դուրս արին, մի երկու օր դուրսն ապրեցի: Փողս որ հատավ՝ գնացի կաֆե «Լիրիկի» առաջ գետնի վրա նստեցի: (Նրստարանի վրա որ մի տարի նստե՛ս՝ հարցնողդ ո՞վ է: Էդպես եմ անում, որ ժանդարմը գա): Եկավ: Թե փաշափոռն ունե՛ս: Փաշափոռն: Ձէ: Դե, վեր կաց գնանք: Ուզա՞ծս ինչ է: Վեր կացա, զընում ենք: Ոնց որ տիրացուն ժամի բաները գիտե, էնպես էլ ես, գիտեմ ուր է տանում, ի՞նչ կասեն, ես ի՞նչ կասեմ: Դու քո պրոֆեսորի, համալսարանի բաները գիտես, չէ՞. էնպես էլ ես: Որ հասանք ոստիկանատուն՝ ժանդարմը դուրը բացեց, առաջ ընկավ, ես հետևեցի: Էն է՛ մատս թքոտեցի, կոխեցի ժիլետիս գրպանը: Էնտեղ լեղակ ունեմ: Ներկեցի ու աչքերիս տակին նախշեցի:

Դիտեմ դործս:

Մտանք ներս: է, հարցրին՝ ո՞վ ես, փաշափոռն ունե՞ս: Հը՛... Փաշափոռն ասելս գիտեր: — Բերանս ծովոտեցի, ախպեր ջան, բերնիցս հանեցի «փաշափոռն» ու, պալատները ջանեա, առաջները փռեցի: Խե, խե, խե... որ փաշափոռնը տեսան՝ «մոսիո, մոսիո,

տիեն, քե սը քը սե...»: Իրար անցան ձեղ պես: Հայ բժիշկ, հայ կառեթ, Կառեթը հասցրին: Ախպեր ջան, կառեթը բերին թևերս ընկան ու կամացուկ տարան եպիսկոպոսի պես առոք-փառոք բազմեցրին մեջը: Հիմի՛ (բարբառը փոխում է) անձս կտանեն կոր: ջանքը տորտոզալով կտանեն ու անանկ կամաց կքշեն կառեթը՝ կըսես ձենապակի ըլլամ, չըլլա թե՛ կոտրիմ:

Բերին հիվանդանոց, պառկեցրին:

Եվ հիմի տեղս լավ է, բարեկամ: Բայց ինչ անեմ էստեղ: Ե՛րբ պիտի գա էն եկեղեցականը: Անոթի մեռա: Սրանց մոտ չեմ կարող ուտել: Կերա թե չէ՛՝ ձեռաց պիտի իրանց ետ տամ: Թե չէ՛՝ դուրս կանեն:

Մի բան բեր: Աստծու սիրուն, բեր, ծածուկ դիր բարձիս տակ, գիշերներն ուտեմ, մինչև էն շան որդին գա մի բան շանթեմ:

Ասում են շանթվող է, քրիստոնյա անասուն է: Ուզում եմ «ներքեները» գնամ: «Վերեները» — Եվրոպան՝ կերա:

— Ուր ես ուզում գնալ:

— Մարսիլիա: (Բարբառը փոխում է): Կըսեն աղակ հայ վաճառականներ եկած են: Երթամ ուտեմ: Անկե հտքը Հոռոմ պիտի երթամ: Տեսնիմ Փափը կուտվի՞:

— Արհեստներդ բավական դժվար է եղել, բարեկամ:

— Հա մի՛ չէ: Բայց վնաս չունի: Այս արհեստովս ամբողջ եվրոպայի երեսը տորտոզեցինք: Փառք Աստծու...

Հրածեշտ տվի ու դուրս եկա:

Ուսանողներս որոշեցինք անպայման ճամփու ծախս հավաքել և քաղաքից «ոտղ անել» այդ անախորժ ծովային հիվանդությունը: Ո՞վ գլուխ ունի: Եվ ուսանողական մի խորամանկություն արինք: Որոշեցինք փողը ձեռք չտալ. այլ երկաթուղու տոմս առնել ու ճամփել Մարսել:

Մե՛ք հույս ունեինք, որ մինչև միսիոներ Ֆանի ժնե վերադառնալը՝ մեր «հիվանդը» չի դիմանա և դուրս կգա հիվանդանոցից: Այդպես էլ հայտնեցինք իրան:

Բայց մինչ դրամ կհավաքեինք, վրան մի տառն օր անցավ: Վերջապես հավաքեցինք: Ես հայտնեցի իրան: Համաձայնվեց մեկնել:

Երբ տոմսն առել, իրան էի սպասում կայարանում՝ հանկարծ տեսա, որ շփոթված ինձ է որոնում:

— Հը՛, էլի ծովային հիվանդութ՞յուն:

— Հո տոմս չառա՞ր:

— Առա:

Խորտակվեց, թևերը հուսահատ կախեց ու...

— Ախրը, ջանըմ... է՛է՛է՛... ինչո՞ւ առար: էդպես տուն կը- քանդե՞ն:

— Ի՞նչ եղավ: Ուրախ չե՞ք:

— Զանըմ, քո գլխու գործեր ինչո՞ւ ես բռնում:

Փողն ինձ տայիր, ջանս: Ախր Մոսիոն էլ տոմս առավ: Երկու հատն ի՞նչ անեմ: է՛է՛է՛... ափսոս իմ 15 ֆրանկը: Հիմի ճամ- փին էլի արհեստ պիտի թափեմ, որ գլուխս պահեմ: Հոգիս ելավ, է: Սաղ Եվրոպան պիտի թափեմ, ի՞նչ է:

1924 թ.

ՊՈՒԱՆԿԱՐԵ-ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՂԱՐԱՔԻԼԻՍԵՑԻ ԲԻԶԱՆ

Ամսի շորսին Ղարաքիլիսան ևս տոնեց համաշխարհային պա- տերազմի հեղինակների դեմ ունեցած իր ատելութ՞յան տասնամ- յակը:

Երևանի Զինտրիբունալի անդամների և տեղական ծառայող- ների նախաձեռնությամբ կազմվեց մի քաղաքական դատ իմպի- րիալիստական պատերազմի մեղավորների դեմ:

Վախեցա՞ն այդ մեղավորները փոքրիկ Ղարաքիլիսայից...

Կվախենան մի օր...

Եթե ամեն տեղ էլ այսպես կազմակերպեն քաղաքական դա- տերը և... այնպիսի հետևանք ունենա դատը, ինչպես որ ունեցավ Ղարաքիլիսայում:

Իհարկե, այդ ներկայացում-դատը սարսափելի չէր միայն մի քանով, այն է, որ ՚հծածախս պատրաստութ՞յուններ չունեի:

Թատրոնական շենքը՝ իր բեմով ու դահլիճով՝ նախկին Աստը-

ծու տանն էր — Ղարաքիլիսայի դաշտում, որի դեկորները դիմացի անտառն էր, լուսավորութ՞յունը՝ երկնքի հաշվին:

Ժողովուրդն ու զորքը բոլորվել էին թատրոնի շուրջը և սպա- սում էին ներկայացման սկսվելուն:

Եվ ի՞նչ ներկայացում:

Գլխապտույտ իմպրովիզացիա: Հավաքվում են մի տեղ — հարմար չէ:

Վերցնում են թատրոնը — մի սեղան դատավորների համար, մի ճոճոան նստարան վկաների համար, մի խարխուլ նստարան էլ մեղապարտների համար և գաղթում են ուրիշ տեղ ու վերջապես աստանդական մեթոդը թողնելով, ձեռ են զարկում նստակյաց թատրոնին:

Դատական կազմը:

Նախագահ՝ ոուս բանվոր: Մի ֆրանսիացի և մի գերմանացի բանվոր՝ դատավորներ: Մեղադրում է երրորդ Ինտերնացիոնալի ներկայացուցիչ Սոկոլով, պաշտպանում է երկրորդ Ինտերնացիո- նալի ներկայացուցիչ Վանդերվելդե:

Մեղադրվում են՝ Նիկ. Նիկ. Ռոմանով, Լորդ Ասկվիտ, Վիլհելմ Բ., Ռայմոնդ Պուանկարե:

Վկաներն են՝ Վերման — գերմանացի կապիտալիստ, Պինչ- բրենդ — անգլիացի կապիտալիստ, քահանա Տրեգուրով, մի գեր- մանացի սպա, Տոմսոն — անգլիական բանվոր, Պուսոս — ինժե- ներ-հնարիչ, Իվան Բեդնյակով, նեգր Զիմ Մարան, մի քանի ներ- կայացուցիչներ գաղութային ժողովուրդների — հնդիկներ, նեգրեր...

Եվ՝ Ղարաքիլիսայի գյուղացիութ՞յունն ու կարճիրբանակային- ները:

Ահա դաշտում հավաքված բազմութ՞յունն իրար է անցնում. — գյուղից բերում են Վիլհելմին, Պուանկարեին, Ասկվիտին, Ռոմա- նովին, տերտերին: Աղմկալի թափորը երեսանների ժխորի հետ դալիս է: Մեղադրյալներին տանում են վրանը:

Արդեն մի բազմութ՞յուն շրջապատել է վրանը և իրար բռնելով ներս է խցկվում «դատապարտյալներին» տեսնելու: Վիլհելմի և մյուս «աշխարհականների» հանցանքը համարելով դատարանում պարզվելիք բան, իսկ տերտերինը արդեն պարզ՝ մոմոում են նրա հասցեին:

Նորից աղմուկ. «դատարանը գալիս է»:

— Կանդնեցեք:

Բուրբը կանդնում են:

Գալիս է դատական կազմը:

Նախագահը՝ ուստի բանվորը, որի դերի մեջ զարմանալի թափանցիկ երևում է ընկեր վարդան Բաղդասարյանը. որովհետև իր միակ գրիմն իր ակնոցներն են, որ և սովորաբար կրում է ամեն օր, բեմից դուրս եղած ժամանակ, — հայտարարում է դատավարությունն սկսված:

Կանչում են վկաներին, ստուգում, ապա և մեղադրյալներին, և խաղն սկսում է:

Իհարկե, մեր «գերասանների» խաղի համար չի կարելի ասել, թե այնքան էլ չափազանց գեղարվեստական է: անկարելի է նաև այդ խաղը մեղադրել կլասիկականության համար. ճիշտ է. կակազում են առանց հուշարարի օգնության, բայց հպարտ են, որ դերասան չեն:

Բայց մարդիկն իրենց գործը լավ են տեսնում:

Խաղն սկսված է: Բայց, ով նախատինք, դերակատարները պակաս են: Պետք են մի քանի տեղացի գյուղացիներ, որ պիտի նստեն արևելյան ժողովուրդների մեջ և տեղին ռեպլիկ պիտի տան, որոշ շափով, պիտի մասնակցեն խաղին: Պետք են մի քանի ծեր ու ջահել գյուղացիներ: Եվ ահա, Ջիմ Մարան նեգրը, մրտ երեսով և ճերմակ վիզ ու ականջներով (գրիմը կիսատ է մնացել...) ընկել է ժողովրդի մեջ, արտիստ է որոնում:

Բռնել է մի բիծայի:

— Գնանք բիծա...

— Ախր ո՞ւր... բալա ջան:

Գնանք. մի փոքրիկ դեր կա, էն էլ դու խաղա:

Ի՞նչ, բիծան խաղա՞:

Վաթսուն տարի է բիծան. ապրում է Ղարաքիլիսայում և իր այդ հրկար կյանքում տեսել է նաշալնիկ, գուբերնատոր, պրիստավի մտրակ, կոռ ու բեգյար, վերջապես վայելել է պատերազմի տեսակները, տեսել է երեք, թե չորս պետություն իր գյուղում, բայց որ ինքը բեմ պիտի դուրս գար և դերասանական տաղանդ ունեն՝ այդ մասին ոչ մի տեղեկություն չէր ունեցել: Հիմի եկել են իրեն բեմ են քարշ տալիս:

— Չէ, ջանքում:

Շրջապատել են, համոզում են: Թող բեմ դուրս գա, վնաս չկա, «չեկան» այստեղ գործ չունի:

Բիծան տարակուսում է: Գնա, թե չգնա:

— Ախր գամ, ի՞նչ անեմ:

— Արի, ոնց որ մենք կխաղանք, դու էլ էնպես կխաղա:

Լավ: Եթե ճակատագիրը որոշել է, որ բիծան վաթսուն տարեկան հասակում պիտի նվիրվի արտիստական գործունեության... է, թող լինի:

Դատավարությունն արդեն սկսված է, որ բիծան և մի քանի երիտասարդ գյուղացիներ «բեմ» են դուրս գալիս: Նստում են ծալապատիկ «արևելյան ժողովուրդների մեջ» ու սպասում են իրենց հերթին: Ղարաքիլիսայի ժողովուրդն ու կարմիրբանակայիններն էլ շրջան կազմած, որը գետնի վրա է նստած, որն էլ... իր ոտի վրա, ու ականջ են դնում:

Ինչե՞ր են ասում տեսնես: Գրական բառեր, օտար սերմիներ, բարդ ձևակերպություններ: Հանդիսականները դեռ բան չեն հասկանում: Մանավանդ որ դերակատարներն էլ ցածր են խոսում, կակազում են, հետևի շարքերից էլ զինվորները և ուշացած հանդիսականները բռնում են: Առաջ են մղվում, նրանք էլ են ուզում հասկանալ, տեսնել՝ ինչո՞ւմն է բանը:

Բայց ասա քիչ-քիչ կարգի է գալիս ամեն ինչ: Ահա ծանոթ բառեր, հասկանալի մտքեր:

Պատերազմի մասին է խոսքը:

Պատերազմի՞:

Եվ հայ գյուղացուն ծանոթ, շատ ծանոթ նյութ է:

Եվ նա ականջները սրում է:

Ահա մի ցիլինդրավոր պարոն, անունը Պուանկարե, ինչ-որ բաներ է բացատրում: Ասում է, 1871 թվին Գերմանիան թալանեց Ֆրանսիային, խլեց էլզաս-Լոթարինգիան: Հինգ միլիարդ ֆրանկ կոնտրիբուցիա դրեց Ֆրանսիայի վզին: Այդ «անարդար» ակտը խոր խոցեց հայրենասեր ֆրանսիացիների սիրտը: Ֆրանսիան պահանջում էր վրեժ: Հասավ այդ վրեժի օրը: Ճիշտ է, Ֆրանսիան չէր, որ առաջինը պատերազմ հայտարարեց Գերմանիային: Բայց միևնույն է, եթե Գերմանիան չհայտարարեր, Ֆրանսիան ինքը կհայտարարեր: Պուանկարեն չի զզջում պատերազմի համար, քանի որ դրանով Ֆրանսիան լուծեց իր վրեժը «տեսնական վայրենիքե-

րից», և հիմա Գերմանիան հեծում է Ֆրանսիայի ոտների տակ:

Հայ գյուղացիությունն ու կարմիր Բանակն ուշի-ուշով լսում է Պուանկարեին:

Նախագահ.— Որքա՞ն մարդու կյանք արժեց այդ պատե-
րազմը:

Պուանկարե.— Մոտ 20 միլիոն, շնչաված վիրավորներն ու հաշմանդամները:

Հարցուփորձում են մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին:

...Նշանակում է՝ դուք ոչ թե միայն պատերազմի դեմ չեք եղել, այլ դուք նրա զլխավոր կազմակերպիչներից մեկն եք...

Նիկոլայ Նիկոլաևիչ.— Ես կատարել եմ իմ պարտքը հայրենի-
քի հանդեպ:

Գատախազ.— Պատերազմն արդյոք օղտակա՞ր էր արդյունա-
բերողների համար:

Նիկոլայ Նիկոլաևիչ.— Իհարկե: Չէ՞ որ նրանք էին զորքին մատակարարում:

Գատախազ.— Եղե՞լ են դեպքեր, երբ ամբողջ զորամասեր նստում էին խրամատներում՝ փամփուշտ շունենալու պատճառով:

Նիկոլայ Նիկոլաևիչ.— Եղել է:

Գատախազ.— Պատահե՞լ է, որ մի զինվոր կրակում էր, իսկ մյուսն սպասում էր, որ առաջինն սպանվեր, որ վերցնի նրա հրացանը:

Նիկոլայ Նիկոլաևիչ.— Պատահել է:

Գատախազ.— Դուք կովո՞ւմ էիք նրանց դեմ, որոնք քարոզում էին պատերազմի դեմ:

Նիկոլայ Նիկոլաևիչ.— Իհարկե: Խմբերով գնդակահարում էինք Հայ գյուղացիությունն ու կարմիր Բանակը լսում են այս ամե-
նը: Հետաքրքրությունն աճում է:

Առաջ են գալիս Ասկվիտը, Վիլհելմը:

Ապա խոսեցնում են վկա Վերմանին: Նա կապիտալիստ է, սիրում է իր Գերմանիան, որը նրա աչքում ամենաբարձր կուլտու-
րական երկիրն է աշխարհիս երեսին: Նա իր կուլտուրան կրում է, տանում իր սվինների վրայով: Գերմանիայի պատերազմը նա հա-
մարում է պաշտպանողական:

Եվ այսպես մինչև վերջը.— Գաղութները լավ բան են, նրանք չզարգացած արդյունաբերություն ունին, այնտեղ կարելի է մշակած

պարանքներ ներմուծել և արտահանել հում նյութեր: Օրհնվի նա, ով ստեղծել է գաղութը:

Նախագահ.— Ուրեմն կապիտալիստական երկրների ընդհա-
րումներն այդ գաղութների համար են լինում:

Վերման.— Այո:

Եվ «գաղութը», նոր ազատագրված «գաղութը» լսում է այդ ամենը:

Հանդես է գալիս անգլիական կապիտալիստը:

Նա էլ նույնն է ասում:

— Լավ: Բայց այդ ամենն ի՞նչ կապ ունի հայ գյուղացիու-
թյան հետ, որի արյունը թափվեց աշխարհիս բոլոր գյուղացիու-
թյան հետ գերմանական, ավստրիական և այլ ֆրոնտներում:

Մի՞թե այդ ամենն իր առջև տնկված խրտվիլակների հա-
մար էր:

Եվ իսկապես, սրանք մարդիկ էին և ոչ թե խրտվիլակներ:

Քսան միլիոն երիտասարդ կյանքեր այս ըոպպիս գետնի տակ փտում են այդ խրտվիլակների համար:

Նայում են այս ամենին հայ գյուղացիությունը և թարմ երի-
տասարդ զինվորները:

Եվ ծիծաղում են, առաջ զվարճանալով, բայց հետզհետե մի ուրիշ տեսակ...

Լավ: Բայց այս ամենին մի արդարադատություն չկա:

Ինչպես չէ: Ահա առաջ է գալիս Երկրորդ ինտերնացիոնալի
ներկայացուցիչ, Անգլիայի բանվոր Տոմսոնը:

Լսեցեք, լսեցեք, վերջապես խոսում է բանվորը:

1914 թվին Անգլիայում առաջ եկավ արդյունաբերական մեծ կրիզիս: Անդործությունը մեծացավ: Գերմանիան վաղուց սկսել էր մրցել մեզ հետ և սպառնում էր ճզմել մեր արդյունաբերությունը: Ընդհանրապես գերմանացիք շատ հանդուգն էին պահում իրենց: Նրանց մեքենաները ծախվում էին մեզ մոտ, Մեծ Բրիտանական կայսրության մեջ: Նրանք ուզում էին մեզ վաճել մեր գաղութնե-
րից: Բայց մենք՝ անգլիացիներս, օրենքի և արդարության մարդիկ ենք: Մենք չէինք ուզում պատերազմել: Բայց երբ Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին՝ մենք այստեղ արդեն միջամտեցինք: Պատերազմն իհարկե մեծ զոհեր է տալիս, բայց պետք էր «արդարությունը» վերականգնել:

Կեցցե՛ք, լավ բանվոր է...

Ուրեմն, սա էլ պատերազմի կողմնակի՞ց է:

Նախագահ.— Դուք պրոֆմիթյան քարտուղար եք: Ասացե՛ք, բանվորներն ինչպե՞ս էին վերաբերվում դեպի պատերազմը:

Տոմսոն.— Բանվորները կողմնակից էին պատերազմին:

— Սուտ է, սուտ է,— խոսում են «դահլիճից», կորչի երկ- լորդ Ինտերնացիոնալը:

Դրսի «դահլիճն» էլ վրդովվում է...

Մեղադրող.— Դուք ասացիք, որ Գերմանիան ուզում էր իր գերիշխանությունը տարածել գաղութների վրա: Իսկ Անգլիան նույն բանը չէր անում:

Տոմսոն.— Անգլիան կուլտուրայի և արդարության երկիր է: Ժողովուրդները սիրով են ընկնում նրա գերիշխանության տակ:

Մեղադրող.— Իսկ հայտնի՞ է ձեզ, որ ձեր կապիտալիստները գաղութներն են տանում իրենց ապրանքները և դրանից էլ Հընդ- կաստանում չի կարողանում արդյունաբերություն զարգանալ:

Տոմսոն.— Ճշմարիտ է: Մեր գաղութները լավ են ապրում: Նրանք զո՛հ են:

— Սուտ է, լոնցրեք դրան,— գոռում են կրկին «դահլիճից»: Բոլորը նայում են այն կողմը:

Գոռացողը նեղր Զիմ Մարանն է, հնդիկները և այլ նեղրերը. նրանց ձայնակցում են Ղարաքիլիսայի երիտասարդ գյուղացիները և... բիձան:

Բիձան արդեն հոսանքի մեջ է ընկել: Եվ իր առաջին դեբյուտն արտիստական աշխարհում նրան ևս ոգևորել է:

— Մի հավատաք էդ լրբին: Սուտ է,— գոռում է նա և բռունցքը ցույց տալիս:

Առաջ է գալիս նեղր Զիմ Մարանը և խոսք է խնդրում նա- խագահից: Նրան ձայնակցում են արևելյան ճնշված ժողովուրդ- ների ներկայացուցիչները: Բիձան ևս:

— Ընկեր նախագահ,— ասում է հնդիկը,— մենք ներկայա- ցուցիչ ենք ճնշված ազգերի, գաղութային ժողովուրդների, մենք չենք կարող այլևս լսել այդ անգլիացու սուտը: Ամոթ այդ բան- վորին, որ այդպես է խոսում: Մենք խոսք ենք ուզում, որ ասենք ճնշված ազգերի ճշմարիտ խոսքը:

Նախագահը խոսք է տալիս: Նրանք հեռանում են «խորհրդ-

դակցելու»: Եվ ահա նրանցից մեկը, նեղր Զիմ Մարանը, առաջ է գալիս:

Նախագահ.— Ձեր անունը, ազգանունը, սոցիալական դրու- թյունը:

Նեղր.— Մազումով բանվոր, բանել եմ ամերիկյան պլանտա- ցիաներում:

Նախագահ.— Ձեր զբաղմունքը:

Նեղր.— Աֆրիկական ժողովուրդների կոմունիստական պար- տիայի քարտուղար:

Նախագահ.— Ի՞նչ կարող եք ասել ներկա գործի մասին:

Եվ նեղրը խոսում է: Խոսում է Արևելքի, Հարավի բոլոր ճնշված ժողովուրդների անունից: Յույց է տալիս նրանց տան- ջանքները կապիտալիստական եվրոպայի և Ամերիկայի բռնակա- լության տակ, անվերջ շահագործումը, գյուղերի բնաջնջումը, գրն- գակահարումները, բռնի, տաժանելի աշխատանքները: Գանդատ- վում է Երկրորդ ինտերնացիոնալից, որը ոչ թե դեմ եղավ պա- տերազմին, այլ աջակցեց իմպերիալիստներին:

«Ավստրալիայի, Կուբայի, Հնդկաստանի, Ասիայի, Աֆրիկա- յի ժողովուրդները խնդրում են ինձ՝ հաշիվ պահանջել իմպերիա- լիստներից, որոնք հարկերով, զորահավաքներով, տեղորոշումով ավերեցին իրենց երկրները և շարունակում են ավերել: Մենք դատ ենք պահանջում իմպերիալիստներից և կապիտալիստներից մեր տանջանքների համար, մենք խնդրում ենք աշխատավորների մի- ջազգային եղբայրություն, որ նա խիստ և արդար դատ կատարի բռնավորների գլխին:

— Դատ արեք,— գոռում են «դահլիճից» արևելյան ժողո- վուրդները:

— Դատ արեք, կորչեն գնան էդ անիծածները,— գոռում է բիձան:

Նա արդեն դերի մեջ է. հոսանքը տարել է նրան գցել արևել- յան ճնշված ժողովուրդների շարքը:

Եվ բիձան բռունցքը կատաղի սեղմած դատ է պահանջում Վիլհելմի, Անմանովի, Ասկվիտի, Պուանկարեի համար համաշ- խաբհային բանվարական ատյանից:

Եվ հանաք չի անում: Գլխի է ընկել, թե ինչո՞ւմն է խաղը:

Առաջ են բերում «գիտնական» Շարլ Պուսսոյին:

— Ձեր անո՞ւնը:

— Շարլ Պուսսո:

— Ինչո՞վ եք զբաղվում:

— Վարիչ եմ «Վիկտորիա» ընկերության քիմիական գործարանի լաբորատորիայի՝ կիոնում:

— Դուք գազե՞ր եք շինում:

— Այո:

Այո, գազեր են շինում: Այդ գազերը կարելի է անբուպլանից թափել թշնամու երկիրը և անվերջ կոտորել: Մի քանի օրում կարելի է ջնջել նրա զորքը:

Կարմիր Բանակը մոմոտ է: Արդեն նրա համբերությունը հատնում էր, երբ կապիտալիստները բացատրում էին պատերազմի պարագաները և չբեղանում, մեղքը գցելով «թշնամու վրա, նա արդեն ռեպլիկներ էր նետում Վիլհելմին, Ռոմանովին, Պուանկարեին:

«Խանգարելով դատավարության բեմադրությունը»...

Այստեղ մի բան կպատահի, մտածում էս ակամա:

Ամենքը լարված են:

Եվ ահա հանդես է գալիս վկա Իվան Բեդնյակովը:

Նա արտիլերիստ էր, կովել էր խրամատների մեջ՝ չիմանալով ո՞ւմ համար: Արյուն, սով, նեղություն, մահ... վատ էին կերակրում, ինտենդանտները գողանում էին: Հանկարծ՝ ուսուցիչ Բայց Կերենսկու կառավարությունը նորից զինվորներին քշում է պատերազմ: Գալիս են բոլշևիկները և վերջ տալիս պատերազմին: Եվ Իվան Բեդնյակովը խնդրում է հատուցանել պատերազմի հեղինակներին՝ անթիվ զինվորների տանջանքների և մահվան փոխարեն...

Կարմիր Բանակը «դահլիճի» հետ ձուլված՝ դատ է պահանջում:

— Պատժեցե՞ք, պատժեցե՞ք էդ անիծածներին, — գոռում են զինվորները:

Նոսում է մեղադրողը: Նրա ճառը լսվում է ոգևորությամբ: Բիձան տմբտմբացնում է փափախը և շիբխին տալիս: Զինվորների շարքերը սեղմվում են: Դատապարտյալները, որոնց պահակ

էին կանգնած 6—7 կարմիրբանակային, հիմի օղակված են գյուղացիներով ու կարմիրբանակայիններով:

Ահա հանդես է գալիս պաշտպան Վանդերվելդեն: Նա իրեն չի ընդունում պատերազմի պաշտպան, նա էլ գիտե, որ պատերազմը մեծ շարիք է ժողովուրդների համար: Բայց պատերազմով շահագրգռված են նաև բանվորները: Չէ՞ որ պատերազմով պաշտպանվում է բանվորների հայրենիքը:

— Կորչի Դեղին ինտերնացիոնալը, — լսվում է «դահլիճից»:

— Ռա՞դ արեք դրան, տվե՞ք դրան, — լսվում են ձայներ, որ իսկական բարկության արտահայտություններ են:

Վանդերվելդե. — Իսկ ի՞նչ են անում Կոմինտերնի ղեկավարները: Նրանք ինքներն են բանվորներին քաշում նոր պատերազմի մեջ:

— Սո՞ւտ է, սո՞ւտ է, — գոռում են բոլոր կարմիրբանակայինները:

Բիձան էլ...

Վերջապես կարողում են դատավճիռը:

— Բոլոր մեղադրյալներին զնդակահարել:

— Ճշմարիտ է, զնդակահարե՛լ:

Հանդիսական կարմիրբանակայինները, գյուղացիք խոնվում են մեղադրյալների շուրջը, գոռում են, պահանջում են պատիժը գործադրել...

«Նաղը» վերջացել է:

Բայց ո՞ւմ համար: Դերակատարները՝ դատական մարմինը, վկաները և մեղադրյալները (Երևանի Զինարիբուճակի անդամներ, տեղական պարտիականներ և այլն) ուզում են հեռանալ «բեմից» և դնալ իրենց գրիմները հանելու:

Բայց՝ բարով եկար: Կարմիրբանակայիններն ուզում են պատիժը գործադրվի:

Շրջապատել են մեղադրյալներին և զլխներին տալիս են...

«Պահակները» պաշտպանում են, բայց կարմիրբանակայինները համառորեն պահանջում են մեղադրյալներին: Ի՞նչ պիտի անեն...

Մեղադրյալներին մի կերպ տանում են վրան և դռներին կանգնած պաշտպանում են: Հիմի էլ վրանն են պաշարել և պա-

հանջում են, որ Պուանկարեն, Վիլհելմը, Ասկվիտը և Նիկոլակերը դուրս գան:

Ո՞ւր դուրս կգան որ...

Հետզհետե գրիմները հանելով դուրս են գալիս դատական կազմի անդամները՝ ընկ. ընկ. Բաղդասարյան, Բալաշյան, Տիրոսյան, նեգր Շիրինյան, և սրանցից ոչ ոքի մտքով չի անցնում, թե ի՞նչ դրուժյան մեջ են խեղճ Պուանկարեն իր ընկերներով:

Վերջապես «կոմենդանտ» ընկ. Հարությունյանը դիմում է գինվորական կտրուկ միջոցի և սթափեցնում է մեր լինչական երիտասարդներին:

Ասենից գերազանց խաղը սրանցն էր, իհարկե...

Մի կերպ գլուխներն ազատում են ընկ. «Պուանկարեն» իր ընկերներով և ծլկում, ազատվելով մի դրուժյունից, որ գերազանցապես «խսկական» էր:

Ա՞յ քեզ թատրոն:

Ո՞ւր է իրականությունը, ո՞ւր է խաղը, ո՞ւր են արտիստները և ո՞ւր է հասարակությունը:

Մարդ մտածում է, թե որքա՞ն բարդ օրենքներ ունի ստեղծագործությունը, հասարակական հոգեբանությունը, որքա՞ն մեծ է կոլեկտիվի մասնակցությունն ստեղծագործության մեջ:

Բայց այս մասին այլ անգամ:

Մանավանդ որ վախենում եմ ես էլ ենթարկվեմ լինչի դատաստանին մեր քննադատների կողմից:

Որովհետե նյութը պայթուցիկ է:

1924 թ.

ՂԱՐՁՅԱԼ ՄԻ «ՆԱ»

Ձէի կարծում, թե սա Երևանում կլինի:

Աբովյանի անկյունում, բազմության միջից հանկարծ գինե դուրս լողաց, վրիպակի պես կամ ինչպես ալիքների վրա ծածանվող հաստակազմ ձեռագիր Ավետարան: Կանգ առաւ: Արդեն տիպ էր գառել: Իր տեսակի մեջ հազվագյուտություն:

Կատաղի ունիկում, Գլխին՝ պատմություն տեսած մի յուղալի ծանր կեպի, Հյուսիսային Միացյալ Նահանգների շալվարը հագին, զարհուրելիորեն հաստ կոշիկներով, որ մինչև աշխարքի վերջը հերիք են:

Նայեցի վրան:

Կատարյալ պաշարված բերդ, որ նախագրուշուժյուններով մտել է իր պինդ պատյանի մեջ ու պաշտպանվում է եղունակներից ու ժամանակներից:

Դժգոհ երևաց ինձ:

Մոտեցա.

— Հը, բարով, ո՞նց եք:

— Ի՛հ...

Եվ տխուր նայեց հեռուն:

Շատ դառնացած հայացք ուներ:

— Ինչո՞վ եք զբաղվում:

— Գասերով՝ ինչով պիտի զբաղվեմ:

— Հետո, գո՞հ եք, աշխատո՞ւմ եք:

— Ի՛հ... Ի՞նչ եք ասում: Թողնո՞ւմ են, որ աշխատենք:

— Ի՞նչ եք ասում:

— Անտանելի ճնշում են, եղբայր:

Ես դեմ չեմ, թող ամեն ինչ սովետական լինի: Ես չնքս սովետական օրիննուացիայի մարդ եմ և ուզում եմ սովետական շինարարությանը մասնակցել: Երևակայեցեք, կրոնի դասերը վերջնականապես հանել են:

— Մի՞թե, չգիտեի:

— Այդ դեռ ոչինչ: Առաջարկեցի մի դասագիրք, որի մեջ բացառապես Գամառ-Քաթիպայի, Սիամանթոյի և Բաֆֆու երկերից էի դրել: Թույլ չտվին:

— Վա՛հ, ի՞նչ եք ասում: Հետո, ի՞նչ արիք:

— Վերջը տեսա, որ ամեն բան մերժում են, առաջարկեցի, որ տիրացուական մի ընծայարան բանալու իրավունք տան: Մինչև անգամ այդ էլ մերժեցին:

— Վա՛հ...

— Ձէ, սրանց հետ գործ չի կարելի տեսնել:

— Սարսափելի բան է:

Բաժանվեցինք:

Նայեցի՛ հաստ կոշիկներին, հետո գանգին, և տեսա, որ մարդը կատարելապես իրավունք ուներ:

1924 թ.

ՆՈՐ-ՆՈՅԱՆ ԼԻԱԿԱՏԱՐ ՏԱՊԱՆ

Բանվորական կացարաններ հիմնող Բաֆվա Խորհուրդը դիմել է Քիֆլիս և Նուրա իրենց հետ միասին ներկայացուցիչներ ուղարկել արտասահման՝ այդ գործն ուսումնասիրելու: Երե Քիֆլիսը կամ Նուրանը ինչ-ինչ պատճառներով չմասնակցեն, Բաֆվա Խորհուրդն ինքը մենակ կուղարկի իր ներկայացուցիչներին («Заря Востока»):

— Երևանն ինչո՞ւ չպիտի ուղարկվի:

Ով երեկոյան գեփյուղուներ...

Չէ, չեղավ...

Ձեփյուղուներ երեկոյան, ով...

Բայց ավելի լավ է խոսենք Երևանի տան, նրա բակի մասին:

Երևանի տունը: Ի՞նչ կարելի է ասել նրա մասին:

Այն տունը, որին ներկա եմ ես, տուն չէ՝ բոշայի ջվալ. դա կատարյալ հայկազյան բառարան է:

...Мюр и Мерлиз

Չորս ընտանիք իզդիրցի է՝ անպատճառ: Երեք ընտանիք վանեցի է՝ անխուսափելիորեն: Մի ընտանիք սարատովցի: Երկուսը ղուրդուղուլցի: Մի ընտանիք մանչեստրցի: Մոլլահասանլուեցիներ, փարիզեցիներ, քյավաոցիներ, մինչև անգամ երևանցիներ: Մի երկու հարյուր մարդ ելումուտ է անում տան միակ նեղ դռնից:

Ջբաղմունքներն ու հասարակական դիրքերն ե՞ք ուզում:

Ուսուցիչներ, վարժապետներ, բիրդան աղաներ, մշակներ, մի ինժեներ, երկու նախկին որբ, ինչ-որ կիսագաղթականներ, պաշտոնաթող վարդան Մամիկոնյաններ, վերակազմյալ նէպմաններ, վերլուծյալ բուրժուաններ, նախկին կամավոր զինվոր և այժմ ակամա տնատեր վաղոն:

Եթե սրանց վրա ավելացնենք մի պատմաբան, երկու երաժիշտ, մի Մատթեոս Ուսայեցի, չորս բանաստեղծ, որ պարտա-

դիր է, մի դերասան, մի քանի մեխանիկներ, նորընծա դոնապանը, հետո՞ ես:

Ուրեմն կստանանք ստուգապատում և լիակատար պատմությունն հայոց ուրարտացիներից մինչև պատկոմները:

Դա մի կատարյալ մուգեյ է ցեղագրական, ազգագրական, ճյուղագրական բաժիններով՝ Հայաստանի հին ու նոր կուլտուրան, կենդանիները, բույսերը, գործիքները, հազուստները...

Հայաստանի քարտեզը, երեք լճերով բակի մեջ, որից մինը գոյացել է ճամփան կորցրած առվի ջրից, երկրորդը՝ լվացքաջրից, երրորդը՝ համամարդկային ջրից:

..Մի խոսքով Մեծ Հայաստանը ծովից ծով:

Եվ եթե մի երկրորդ ջրհեղեղ պատահի ու տակովն անի ամբողջ աշխարհը, դեռ մինչև անգամ Երևանը ամբողջ ու մի Երևանից այս մի տունը միայն իբրև ամբողջացրած և վերամշակած Նոյան տապան ջրի երեսը մնա՝ հայությունն իր բոլոր նմուշներով և կուլտուրական պատմությամբ ազատված է:

«Կորչելու ազգ չենք իսպառ»:

Պետք է տեսնենք այս տան բակը:

Անկյուններում, ամենուրեք լիքը հանգիստ պողաներով կիսավել է աղբը, ուրարտական ծագում ունեցող, ժառանգական ազգային աղբը, Հայկի ժամանակից անձեռնմխելի:

Պատերին՝ իբրև բաղարջներ կամ աֆիշներ, փակցված է հարազատ աթարը, Անկյունում՝ մի գուլթան, մի կարկանած սայլ:

Բակոնի տակին նահապետական բառաչը կթու կովի: Բակոնի վրա մի ալրաթաթախ և շուրթաների օրիորդ շխխկացնում է իր ունիզտոնը: Նրա կողքին սանդի մեջ բլդուր է ձեծում մի մոկացի կնիկ: Հենց նրա հետևի պատուհանից լսվում է Մոցարտի 28-րդ սոնատան, որ նվագում է կոնսերվատորիայի աշակերտուհին:

Բակում վերջին դատաստանային մի ժխոր ու գոռոց է: Ամենաքիչը՝ մարդ են սպանում: (Ի՞նչ, քաղաքում միլիցիա չկա): Ոչ: Գաղթական կանաչք են, հանգիստ զրուցում են առօրյա գործերի մասին:

Եվ հավե՛ր, հավե՛ր, հավե՛ր...

Կչկչում են, կոկոում, ծղրտում — Խ. Աբովյանի ամբողջ բառարանն այբից մինչև հ, օ, ֆ:

Ահա դիմացի կորիզորից, որ դերասանի բնակարանն է՝ լավում են նրա սրտապատառ ռեպլիկները:

Բակի մեջտեղ վանեցի մի ազրեսիվ ընտանիք իմպերիալիստորեն փոռել է իր ձմեռվա ցորենը: Բալկոնների թոկերից կախած են ամեն ուղղությամբ լվացք. Մշու թումպաններ, Հյուսիսային Միացյալ Նահանգների վիզիտկաներ, Քյավառի արխալուղներ: Ինչ-որ բաստումաներ և շիրեր են շարած բժշկի բնդունելության պլակատի վրա:

Բակի միջով անցնելիս ամեն բոպե տանտիկինները պատըզգամբներից ասածու ցասումի պես թափում են ամեն տեսակ լվացքաչրեր. ուղիղ բակի մեջ:

— Ինչպե՞ս, հենց բակի մե՞ջ, ուղղակի գլխի՞դ:

— Ամեն անգամ գլխիդ չեն թափում, մեծ մասը թափում են ուսիդ, մեջքիդ, թևիդ:

— Լավ, դրա դեմ ո՞չ մի միջոց չկա:

— Ինչպես չէ, Պետք է հանել թաշկինակը և հազուստը սրբել:

— Իսկ չի՞ կարելի խուսափել թրշվելուց:

— Ոչ, դրա համար պետք է մեծ և բավականին բարդ տեխնիկա: Պետք է լավ հմուտ լինես ռազմական կանոնադրության Գնանք, ընթերցող, շինության ներքը:

Միայն եթե կարողանանք ներս մտնել: Եվ սա նրանից է կախված, թե դուք թատերական ո՞ր ուղղության կողմնակից եք:

Ուղղություն:

Այո, Երևանի տունը Մեյերխոլդյան թատրոն է, պետք է կոնստրուկտիվ մեթոդով ներս մտնեք:

Նախ պիտի տեսած լինեք «Անսանձի սանձահարումը» և օգտվելով նրանից՝ մեջքով պիտի բարձրանաք սանդուղներից մինչև պատշգամբ, պիտի մտնեք կորիզոր, այնտեղից՝ մի սենյակի Ապա կողքի պատուհանից պիտի դուրս գաք երկրորդ պատշգամբ և գլուխկոնձի տալով պիտի ընկնեք ուրիշ սանդուղներից ներքև: Եթե մեռաք, էլ մի շարունակեք գնալը, իսկ եթե ողջ մնացիք, հետևյալ սանդուղներից բարձրացեք վեր: Ահա այստեղ, առաջին կորիզորը ձեր բարեկամի բնակարանն է: Ամբողջ սենյակում մի տեղադրված կա և մի մարդու տեղ՝ աթոռի վրա: Բարեկամդ վեր է կենում՝ դուք նստում եք, դուք նստում եք, նա վեր է կենում:

Կատարյալ կոնստրուկտիվ դինամիկա: Այնպես որ նախկին գանդաղ երևանցին այժմ ամենապահանջկոտ ամերիկյան ֆիլմի հերոս կարող է դառնալ:

Ահա մեկի ննջարանը մտել է մյուսի խոհանոցը:

Մեկը լվացվում է մյուսի գրասենյակում: Միևնույն կորիզորում թիֆլիսեցու խորովածը, մոսկվացու ռոտսբիֆը և տձվժը trio են նվագում:

Ժամացույցի, լրագրի, քաղաքի նորությունների կարիք չունիս: Ամեն բոպե, ամեն կողմից ամեն բանի մասին խոսում, հարցնում, տեղեկացնում են և դու լսում ես: Գաղտնի խոսակցությունը զուր բան է: Առանձին սենյակ չկա, մեջտեղ պատ չկա: Շատ-շատ մի կապերտ բաժանում է քեզ ինչ-որ մի դմյունացուց:

Թափանցիկ ընտանիքներ: Եվ թափանցիկ հոգեբանություն:

Ինչպես տեսնում եք, Երևանի տունն իր բակով բավականին խնդիրներ է դնում նորընծա ղոնապանի առջև: Բայց ավելի բարդ խնդիրներ՝ կուլտուր-սոցիալական ղոնապանի առջև: Ինչպե՞ս բաժանել, ինչպե՞ս մաքրել այս ամենը:

Անշուշտ, այդ խնդիրները կլուծվեն: Բայց ես նայելով այս ամենին՝ ուզում եմ Գոգոլի նման բացականչել. «Куда ты, русь?», ներեցեք՝ Эривань:

Բայց այս ողևորությունը հետաձգում եմ ավելի պատեհ առիթի, երբ մյուս անգամ ընթերցողին կառաջնորդեմ Երևանի քաղաքամասերը և կնկարագրեմ «Աստաֆյան» փողոցը, Նորբը, Կոնդը, տնտեսական և մտավորական ղանթարները, կոոպերատիվ եկեղեցին, կամ թե ինչպես պատահեցի ինձ համար մի սարսափելի մարդու և թե ինչպե՞ս, ինչ պատահեց:

1924 թ.

ՎԱՐԺԱՊԵՏ

Եթե քահանա լինեի՝ նրա անունը կդնեի Բամ Փորոտան:

Բայց չկարծեք, թե ռազմական մի անձ է դուրս գալու գրությունս մեջ՝ ինչպիսի ռազմական որ կարծում եք այդ Բամ Փորոտանը:

Թթու և մըզմըզ տիպ է՝ ինչպես և այդ Բամ Փորոտանը:

Կոնսիստորիական տիպ, որ ապրելով ու վերապրելով բոլոր տասնամյակներն ու ռեժիմները՝ ոտը բարեբախտ կերպով գցեց մինչև սովետական կարգերը:

Ու այս բուսիս դեռ կա: Պաշտոնի... մեջ է:

Թեև պատերազմի տարիները թողեց վարժապետությունն ու անցավ ուրիշ պաշտոնների, բայց վրայից մի հոտ կա՝ որ ամենեվին չգնաց:

Հայ վարժապետի հոտը:

Նշանազգեստն էլ պահել է, այսինքն՝ մազոտ դեմքը և վեր քաշած քիթը՝ կարծես աշխարհքն արտաքնոց լինի կամ հենց նոր անգլիական աղ է խմել:

Դա մի շարժական մուգեյ է 900-ական, 90-ական, 80-ական թվերի, ոչ այնքան «ստույգ», բայց հանրածանոթ պատմություն հայոց:

Հիմա ծեծած ալրի տոպրակի է նման. լավը գնացել է, վատը մնացել:

Ասենք լավ ժամանակն էլ մի բան չէր:

Աշխարհք որ եկավ՝ բերանը թթվեցրեց: Արդյոք սխալ էր սարքված, իրենք չէին տեղը, մարդիկ իրենց դասերը չէին իմանում, թե ինչ:

Մարդը մի անգամ չհավանեց աշխարհքի շենքսին և ինչ ուզում է լինի՝ չպիտի հավանի:

Բայց հետաքրքիր է, թե արդյոք ինքն ինչպե՞ս էր պատկերացնում աշխարհքը, որ հիմա ծուռն է երևում իրան:

Ով է իմանում, երևի մի այնպիսի բան, որ աշխարհքում եղած ոչ մի բանի նման չէ: Ինչ որ մի բան, որ Մխիթարյան, Խորենացիական ոճի պես մի բան ունի իր մեջ. կամ, ինչպես ասեմ, որ հասկանալի լինի. ինչ-որ եկեղեցական, ծխական բան և այնպիսի մի բան, որ վարժապետի բան է: Այսպես, երևի, աշխարհքը նրա ցանկացած ձևով պիտի լիներ մի ինչ-որ հսկայական կանոնավոր բուֆետի սեղան՝ գորոցներով. մեջներն այբբենական կարգով դասավորած՝ անասունները ջոկ, մարդիկ ջոկ, իհարկե, լուսինն անպատճառ քառակուսի, երևի ուղտը՝ ժապավենաձև, մարդ էլ եռանկյունի գլխով: Մարդկային ունակություններն էլ փոշիացրած, կշռած, առանձին թղթերի մեջ ծալած ու համարակալած: Եվ

ամեն գզրոցի վրա մակագրած՝ «հիացմունք՝ չափավոր», «սերձամլացրած», «հեղափոխություն՝ զգուշ» և այլն:

Մի ժամանակ, երբ վարժապետ էր՝ սովորցնում էր: Վերջն այնքան սովորցրեց, ուղղեց, սովորցրեց, ուղղեց, որ մոռացավ սովորելը: Հիմա միայն ուղղում է: Ուղղում է և՛ ծուռը, և՛ շիտակը ու այնքան ուղղում է, որ վերջը... ծուռն է:

Չի խոսում, — փնթփնթում է: Կարծես բնավորության խրոնիկական կատար ունի, կարծես վրեժ է լուծում: Ժողովներում, երբ մի հասարակական աղետ է կատարվել և պետք է օգնության հասնել՝ նայում ես — ահա նստած է նա իբրև Ռամզես Երկրորդ: Ինչ-որ տխրաշուք բուֆ պես բան կա իր էություն մեջ: Մեծ պասվա մի օբյեկտիվ տխրություն: Մեկ էլ տեսար՝ այն կողմից ժանգոտված ու հին պատի ժամացույցի պես անակնկալ խոչնդացրեց ու զարկեց:

— Ես ժամանակին ասել եմ... Երբ է ասել, ինչ է ասել, ով է իմանում:

Ինչո՞ւ ինձ չէին հարցնում:

Եվ ուրախ է: Աղետի մասին իր խոսքը կատարվել է: Ըստ երևույթին ընդհանրապես հեզաբարո է, և իր հիմնարկի մեջ հանգիստ աշխատում է: Բայց դպրոցական ժողովների մեջ իր ժամանակին շատ խոռվահոյզ է եղել: Ռեպլիկ տալ, գոռալ, պատիվ պահանջել, տեսուչ վոնդել, եպիսկոպոսին դիմադարձ կանգնել... այս ամենն իր կարգին: Համառ է լիթակցի պես և հիշաշար հընդունավի նման:

Եվ մեծ ինտրիգան, բայց... արվեստի համար:

Ժողովը վերջացել է. ժամը 1-ն է գիշերվա, ամենքը հոգնել են, արդեն վերջին հարցը քվեարկում են:

Հանկարծ ձայն է խնդրում:

— Ես բողոքում եմ նախագահի դեմ: Ինչո՞ւ: Բանից դուրս է դալիս, որ վեց ամիս առաջ ձայն է խնդրում եղել, չեն իմացել, չեն տվել: Եվ խոռվել է, վեց ամիս է չի մասնակցում, չի խոսում, հիմա է ձայնը բարձրացնում:

— Ես պահանջում եմ մտցնել արձանագրության մեջ, որ...

Ամեն հայկական գործի հիմնադրություն այս տիպի ձեռքով է կատարվել Դրանից է, որ ամեն հայկական գործ մեռած է ծընվել: Տուր ձեռքը մի կենդանի գործ՝ ձեռաղ կանչնացնի: Ինչպես

մի արջ, որ կենդանուն նախ սպանում է, հետո հոտեցնում և ապա միայն... ուտում:

Այլապես ստորութուն կլինի: Վարժապետ է՝ եզր կբարձրացնի կտուրը — դանակի մոտ:

Միշտ վեճ է հարուցանում այնտեղ, ուր ամենքը միմիայն համաձայն են: Դժվարացնելու հնարը կգտնի այնտեղ, ուր բանը միմիայն հեշտ է: Իսկական տաղանդ է գործը դժվարացնելու, խճճելու, դարձնելու անհնարին:

Հակառակ խոսք ասելու սիրուց՝ համաձայն է իր ոտնիկը պակասեցնելու քվե տալ:

Չեղավ մի անգամ, որ բերնից մի բարի խոսք թոցներ: Ինչ ուշում է, թող ձեռնարկի դպրոցների վարչությունը, հասարակությունը, ռեդկուցիան՝ հորելյան, թաղում, ռեդկուցիա, ռեակցիա, դրոսանք, սովյալներին օգնություն, ջրանցք, պատույրի կայան:

Չեղք թափ է տալիս. «Բան չի դուրս գա»:

Մի բան կգտնի, որ բացասի: Ցույց տվեք Միքելանջելոյի արձանները, — կնայի, կնայի և կասի.

— Մարմարը Հայաստանի չէ:

Երբ հետո խոսում է՝ մի քիչ հետո նկատում ես, որ կարծես քեզ չի նայում, այլ մի ինչ-որ առարկայի:

Ասենք նա քեզ վրա նայում է իբրև շարադրության տետրակի վրա, և այն էլ չի նայում, այլ սրբագրում է:

Հենց ինքդ նրա համար մի տառասխալ ես: Երբեք շմտածեց ամուսնության մասին: Դա կարող էր մեծ տառասխալ լինել իր կանոնավորապես տխուր կյանքի մեջ: Չսիրեց էլ — ծախսեր կարող էր լինել:

Մի մարդու միայն նախանձեց. այն գիտնականին, որ գտավ արևի բծերը:

Մի անգամ բազմության մեջ հարցրի իրան.

— Ի՞նչ կարծիք ունեք Սովետական կառավարության մասին:

Սարսափով բերանս փակեց:

— Լոցեք, ի՞նչ եք անում...

Հարցս կրկնեցի մի քիչ հետո: Նա գունատվեց, նայեց լոր կողմ, տարավ ինձ մի անկյուն և լավ ապահովվելով, որ մեզ ոչ ոք չի լսում՝ ականջիս փսփսաց.

— Լավ կառավարություն է: Երբեք «բուլշևիկ» չի ասում: «Մեծամասնական...»:

1924 թ.

ՆՈՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս օրերս Արուվյանով ներքև էի գնում, հանկարծ դիմացից աչքովս ընկավ մի կերպարանք, որ ծանոթ թվաց:

Մոտեցա, տեսնեմ որ շտառն է: Ութսունական թվականների մի հնամաշ սերթուկ հագին, կուզը դուրս, ծնկները ծալված, թոնթորալով գնում էր:

— Բարև, ընկեր շ:

Ակնոցների արանքից կողքանց աչքերիս նայեց և թթու ձայնով ծոր տվեց.

— Բարև, հա, դո՞ւք եք:

— Ինչպե՞ս եք, ընկեր շ, հիվանդ հո չե՞ք:

— Մայասիլ ունեմ... Ի՛ի՛ի՛ի... հիմիկվա ժամանակ ի՞նչ եք հարցնում: Հետինք եղան առաջինք, և առաջինք՝ հետինք:

Ապրուստ չկա, կարգին պաշտոն չկա:

— Դպրոցը թողե՞լ եք:

— Տան պատճառով «սեփականատեր» ես՝ ասին, պրոֆմիությունից հանեցին, հետո էլ դպրոցից կրճատեցին: Տունն էլ, ի՞նչ տուն: Մի սենյակ է ձեռիս: Մնացածը ուսանող-մուսանող, ծառայող-մատուցող: Քրեհը քիչ — արի ապրի:

— Հիմա ոչ մի գործ չունե՞ք:

— Ի՛հ, ունեմ: Յ-ի պաշտոնը բարձրացրին և նրա ցրիչի պաշտոնը ինձ տվին: Ախր, այս ծեր հասակիս ի՞նչ լայնեզ էր ինձ այդ պաշտոնը: Հոգնում եմ: Կրծքի հետց էլ ունեմ: Գոննիյա կենսաթոշակ նշանակեին, Անցյալ տարի հորելյանի մասին խոսեցին, այն էլ... է՛հ... Ասած է՝ խաղ շատ գիտեմ, բայց ձայն չունեմ: Յ-ն իր բանը լավ դրստեց: Առաջ ո՞վ էր ծպտուն լսում: Չայնց

փորն ընկած բառի վերջը շատ անգամ լեզուն պապանձվում էր
Հիմա ձայնը աշխարհք է բռնել: Հազար պաշտոն ունի:

Շարունակ ս-ի, ւ-ի հետ թևանցուկ բռլթա է տալիս: Առանց
նրա խորհրդի ոչ ւ-ն է գործ տեսնում, ոչ ե-ն: Ռոճիկն էլ կարգին:
Բախտի բան է:

Ահա նայեցեք, ում վեզն է ալշու եկել:

— Ո՞վ է:

— Չեք ճանաչում, Ք-ն է: Պորտֆելը թևի տակին անցնում է
ու դեան էլ չի նայում: «Սպեց» է. ամսական 300 ռուբլի է ստա-
նում:

— Բայց գտման ժամանակ քաղզրագիտությունից կտրվեց,—
մեջ ընկավ Ը-ն և ծիծաղելով մոտեցավ մեզ:

Հ-ն հազաց ու հառաչեց.

— Է՛, հիմի նոր հավեր են եկել, երկաթե ձվեր են ածում,
Հիմի թ-երն են մանկավարժները... «Դալտոն պլան, կոմպլեքս»...
Նոր մեթոդներով են պարապում... Մենք ի՞նչ...

— Վնաս չունի, վարժապետ, վնաս չունի, մխիթարեց Ը-ն, մի
հուսահատվեք, ամեն բան կլավանա:

— Է՛, նո՞ր պիտի լավանա:

Հ-ն հեռացավ մոմոալով: Սերթուկը կարկատած էր արդեն,
այն սերթուկը, որ միայն ս. Սահակ և Մեսրոպի տոնին էր հագ-
նում դպրոցական հանդեսում ճառ ասելու համար:

— Է, ինչ կա, ինչ չկա,— դարձա Բ-ին:

— Զանսաղություն:

— Այս ինչ բան է,— ասացի,— չորս կողմ եմ նայում, բոլորը
հին ծանոթներ են, բայց օտարի պես են մտիկ տալիս: Թե ես եմ
փոխվել:

— Ուղղագրությունն է փոխվել, դրանից է:

— Երևի:

Նստեցինք բուլվարում և սկսեցինք զրույց անել:

Հանկարծ գլուխս բարձրացրի, տեսնեմ առջևնիրս է կանգնել

Բ ասոր և ձեռք մեկնել է մեզ:

— Եղբայր ջան, մի կոպեկ տաք:

Հանեցի մի հինգ կոպեկանոց և տվի իրեն:

— Որտեղացի՞ ես:

— Շորագլայցի:

— Ինչո՞ւ ապաստարան չես գնում:

— Տեղ չկա:

— Սուտ կըսես,— միջամտեց վանեցի Խ-ն, որ արկղը կախել
վզից՝ ծխախոտ էր ծախում,— ամեն անգամ իրեն ապաստարան
կտանեն՝ կփախչի: Զրի ապրել կուզես:

— Քու գործդ ինչ գործ է, այ օղուլ,— միջամտեց լենինական-
ցի Ը-ն, որ գետնին նստել, կոշիկ էր սրբում,— կառուպականերուն
մեջեն պապիրոսը կհանես, ջոկ կծախես՝ խուժանին վրա՝ կխոսես:

— Բ-ն բամփեց Խ-ի գլխին ու փախավ: Խ-ն ընկավ հետևից:

— Իմպերիալիստական պատերազմն է մեղավոր,— փիլիսո-
փայեց ինվալիդ Զ-ն, որ նեցուկը թևի տակին կաղալով անցնում
էր մոտից:

— Ինչ է անում Ս-ն,— հարցրի Բ-ին:

— Ո-ն «տատանվող» տարր է: Յ-ի հետ մի բան է ասում,
Ի-ի հետ ուրիշ բան: Իսկ երբ երեքը միասին են՝ ուրիշ երգ է եր-
գում: Սուտափուս իր գործերն է դրստում: Շկուռնիկ է:

Զեմ սիրում: Եթե Ե-ն երկերեսանի է, Ո-ն եռերեսանի է:

— Այն մյուսն ո՞վ է, Ի-ն չէ՞:

— Նա է:

— Ի՞նչ է անում:

— Նէպման է, սպեկուլյացիայով է պարապում:

Մոտեցավ մեզ, խունացած էր մի քիչ, բայց աչքերը պըս-
պըստում էին:

— Ինչպե՞ս եք, քաղաքացի Ի: Ինչպե՞ս է ձեր դրությունը:

— Տնաշեն, էն ծով կարողությունս Վ-ն ձեռքս առավ՝ դրու-
թյուն եք հարցնում: Տներ ունեի, մուլք, զավոդ, բոլորի տերը հի-
մի Վ-ն է: Վ-ի աշխարհք է հիմի: Եվ քիթը խփշտեց Վ-ն:

— Գործ ունե՞ք:

— Հա, Ե-ի հետ մի ընկերովի մանրածախսի դուքան ունեմ
ներքևի ծայրում: Համա ինչ, առուտուր չկա, ապրանքը քիչ, մուշ-
տարին գալիս է, ետ դառնում: Գործ չլինելուց՝ Ե-ին թողնում եմ
դուքանում, ես շատը բազարում ոտի վրա առուտուր եմ անում
մենակ:

— Բայց, էլի գլուխս պահում եք:

— Հա դե, իհարկե: Վայեննի կոմունիզմի ժամանակ Վ-ի

ահից վեց ամիս տնից դուրս չեկա: Աղաթը խեր Ռ-ին, սովի տա-
րին հարեանութուն արավ. ընտանիքս պրծացրից: Վերջը նէպը որ
եկավ, շունչ քաշեցի մի քիչ: Հիմի էլ նոր խաթա: Վ-ն կոտպերա-
տիվ խանութներ է բաց անում: Այն օրը եկավ խանութս նայեց:
Վախում եմ խլեն:

— Լավ կլինի, վնաս չունի, մի հուսահատվեք:

— Է՛է՛է՛... Լավը Օ-ն արեց, որ ժամանակին արտասահ-
մանյան բանկերում փող դրեց ու փախավ արտասահման, հիմի
ասում են լավ ծխախոտի ֆիրմա է բաց արել: Է՛, ծառայութուն,
գնամ, տյուկ են բաց արել, տեսնեմ ինչ բան է:

— Վայեննի կոմունիզմի ժամանակ վեց ամիս չեկա էր նըս-
տած, — ասաց Ր-ն, — մեյդանում ոսկու սպեկուլյացիա էր արել:

— Իսկ ինչո՞վ է զբաղված Ի-ն:

— Առաջ կուպլետներ էր ասում երեկույթներում: Հետո Գե-
դաշխը գտեց, որովհետև Ի-ի հետ միացած բիրժայում սպեկուլ-
յացիայով էր պարապում (Ի): Հիմի պարի ուսուցիչ է, շարունակ
ուկերաններ էր անում դամաներին և հրավիրում պարելու:

Այդ միջոցին էջմիածնի կառքից վայր իջավ Ե-ն:

— Աստված օգնական, հայր սուրբ, — դիմեցի իրան:

— Աստված պահապան, բարի ողջույն հրամանոցդ: Ինչ
պե՞ս եք:

— Շնորհակալ եմ, դուք ինչպե՞ս եք, հայր սուրբ:

— Փառք ամենակարողին: Ժողովուրդը որ բարգավաճի, մենք
նրա ազոթարարն ենք:

— Եվ ինչպե՞ս եք այս նոր իրավակարգի հետ... և մասնա-
վորապես ի՞նչ դրության մեջ եք ընդհանրապես... կարծեմ նոր
կարգերը մի քիչ...

— Մի քիչ, հա, իհարկե... բայց մենք էլ, իհարկե, աշխատում
ենք բարեկարգել եկեղեցին: Եվ եթե ամեն մեկս մերովսանն, ըստ
չափու կարողության մասնակցում ենք խորհրդային շինարարու-
թյան՝ տերութունն էլ զորավոր կլինի:

— Կարծեմ ձեր քաղաքական իրավունքները...

— Չէ, ինչու: Մատենագրության մեջ 7-րդ թիվն եմ և եկե-
ղեցական լեզվի մեջ իբրև գրաբար գոյութուն ունեմ: Շուտով կրա-
րեկարգենք եկեղեցին և «սրանք» վերջ ի վերջո պիտի ընդունեն,

որ առանց կրոնի. — ըհը, (հազաց և լիոտեց հայր սուրբը) և բար-
լավ մնաք:

Դիմացի մայթից անց էր կենում Ֆ-ն:

— Սա ի՞նչ է անում: Իսկի չի երևում մեջտեղ:

— Ֆ-ն: Քաշված է իր համար, ինչպես և հեղափոխութունից
առաջ: Անգործ է: Կարծեմ օտարազգի բաների բառարան է կազ-
մում: Դե, գերմանական համալսարանի աստվածաբանի դրությու-
նը ինչ կլինի հիմա: Մարդը գնաց աստվածաբանութուն ուսումնա-
սիրեց, որ զա ազգին սովորեցնի՝ ազգն էլ վերջացավ, աստվածա-
բանութունն էլ: Հայերին ասիացի է ասում և քիթը վեր պահած
շարունակ եվրոպական բառերով է խոսում. պրոֆեսոր, ֆիզուրա,
ֆաունա, ֆանտազիա...

Այդ ժամանակ բազմության միջից անց էր կենում մի կոկո-
զավիզ մարդ, զլուխը բարձր բռնած և արհամարհոտ: Մոտեցավ:
Պոլսական Մ-ն էր:

— Աղբար, կխենթանամ կոր: Երկու ամսե ի վեր Մարտեխա-
յեն եկած եմ հոս՝ բնակարան չի կա: Օթեյը սուղ է: Դուք ո՞ւր
կապրեք, ընկ. Դեմիրճյան:

— Բնակարանային կրիզիսի մեջ: Ինչպե՞ս եք:

— Ինձի հասկացուցեք թե աս Ա-ն ո՞վ է:

— Թղթակից է: Ի՞նչ կա:

— Թղթակից, կըսեք: Զեզեկի մեկն է, ջանքմ: Ամեն տեղ
պարապ կպտտի, ուր կերթամ, հոն է: Իրեն ըսի թե միտք մ՛ունեմ
իմ անունով դպրոց մը բանալ Հայաստանին մեջ, ինչո՞ւ «խորհրդ-
դային Հայաստան» և ուրիշ լրագիրներն այդ մասին հոգվածներ
չեն գրեր՝ ահռաները կբանա, վրաս կխնդա: Շատախոսի մեկն է,
ձգե պե:

Ճաշից հետո որ բուլվար գնաք, կտեսնեք բարեկամներին, որ
հանգիստ զրույց են անում նստարանների վրա շարված...

յ ու ի Ե մ ծ ձ հ թ ա ն :

1924 թ.

ՄԵՐԿԵՐԻՈՍ ԱՂԱ

...Երբ գնացքը հասավ Երևանի կայարանը՝ Մերկերիոսը գլուխը ձմերուկի նման դուրս կախեց վագոնի պատուհանից։

- Ընկեր Մերկերիո՞ս, բարո՞վ եկար։
- Տղե՛րք, ընկեր Մերկերիոսը եկել է։
- Վա՛յ, ընկեր Մերկերիոս, էս ո՞ր քամին քեզ դես բերեց։
- էսօ՞ր դուրս եկար Լենինականից։ Ընկեր Մերկերիոս։
- Ա՛յ տղա, շեմոգանները վեր բերեք, ի՞նչ եք կանգնել։

Մերկերիոսը կողքանց մտիկ տվեց բարևողներին։ Ոչ մեկը ծանոթ չէր։ Դրանք շուրջ-հինգ երիտասարդներ էին. իրար այնքան նման, որքան գիշերվա լույս անավոտվա լվին։ Հենց լվերի պես էլ վեր թռան վագոնը և թափվեցին նորեկ գույգի վրա։

— Է՛, լա՛վ, խեղճ ըլի, ընկեր Մերկերիոս, էս շոգի՞ն, էս կրակի՞ն։

— Գործով Երևան եմ եկել։ Հըմը՛... հըմը՛, դուք վո՞վ եք, ի՞նչ գործի մարդ եք։

Երիտասարդները կյանքներում առաջին անգամ կարծես մտածեցին այդ հարցի մասին, մի քիչ իրար նայեցին կոտորած ժպիտներով և ծոծրակները քորեցին։

Միայն մեկը լվուտեց.

— էնպես... քաղաքի գործերի շուրջը աշխատում ենք։

Հետո իսկույն մտավ Մերկերիոսի թևը և վրա բերեց.

— Է՛, Լենինական, ի՞նչ կա, ինչ չկա։ Ակոփ աղան ե՛րբ մեռավ։

Մյուսը ձեռքով շանթեց դեպի Մերկերիոսի ճամպրուկները։

— Իջի՛ր, ընկեր Մերկերիոս, քույրիկ ջան, համեցե՛ք։

— Ջանըմ, Ակոփ աղայի հերն էլ անիծած, ամեն բան էլ,— գոռաց Մերկերիոսը,— դուք վո՞վ եք, ի՞նչ գործ ունիք ընծի հետ։ Հիմի գանգատ կուտամ վրաներդ, ի՞նչ իրավունքով ընծի կհարցնիք, թե ե՛րբ եկա Լենինական ու յա թե չէ՛ ո՞ր քամին բերեց։ Դուք վո՞վ եք օր իմ օղլուշաղիս հետ զրցիք, յա թե չէ՛՝ ձեզի ի՞նչ հաշիվ թե ես Երևան ինչու եկա։ Ի՞նչ մարդու թաքարլամիշ կենեք, հայվաններ, կորե՛ք ձեր բանին։

— Լղտորներ,— ձայնագրեց Մերկերիոսի կնիկը,— վրաներդ չեք աշե՛ եկել մա՛րդ կխելոցներ։ Զեր հոր տեղն է, ո՞ւմ վրա

կխնդաք, մենք ձեր մեյմո՞ւնն ենք, եկել մասխարա կըցկեք մարդու։ Բարուցիս վրեն խնդացեք։

Երիտասարդները խնդացին ու հեռացան։

— Լավ արիք, որ գլխներիցդ ուղ արիք,— ասաց Մերկերիոսին մի բաղաձայն, հիսուն տարեկան մարդ, որ մի տեսակ խառնուրդ էր կոտրն ընկած վաճառականի, գավառական արբակատի, հին կոնստիտուցիայի գրագրի և նոր միջնորդի՝ ամեն տեսակ գործերի։

— Վո՞վ գիտե՞ ինչ պոչ քաշող շուն շանորդիք էին։ Ես ընծի համար Լենինականու Երևան գուքամ կառավարության գործերով է՛, էս կրնա՞մ ամեն բոսի կամանդի ըսել թե ինչ գործով գուքամ, յա թե չէ՛՝ էնոնք ի՞նչ իրավունք ունին իմ սրտս իմանալու։ Ես շուրի մեջը սըռ բացո՞ղ եմ։ Յա թե չէ՛՝ էս էնոնց գիտցած մա՞րդն եմ, որ էնոնք ընծի ձեռք առնին։ Ես Լենինականու քաղքին մեջ գուբեռնաթորի անուն ունիմ։ Թող գան իմ մաղազիներուս աշեն՝ հտե վրես խնդան։— Մո դուք ո՞ւմ կուռեցներ,— վերջացրեց Մերկերիոսը ուղղակի դառնալով դեպի այն կողմը, որտեղից վաղուց արդեն հեռացել էին երիտասարդները։

— Այդպես է, այդպես է,— ասաց անծանոթը,— առաջ մեծերից էինք վախենում, հիմի էլ փոքրերից ենք վախենում։ Ուրիշների էլ մեզանից վախենալու ժամանակը նոր էր գալիս՝ էս բալշեկուլուցները վրա հասավ։ Հա՛յ գիտի Աբասթումա՞ն...

Ու հանդարտ վերցրեց Մերկերիոսի ճամպրուկներից մեկը։

— Դո՞ւ ինչ մարդ ես,— հարցրեց Մերկերիոսը տարակուսած։

— Ֆայթոնո՞վ պիտի գնաք, եղբայր Մերկերիոս, թե ավտոմոբիլով,— ասաց տխուր և գործնական եղանակով անծանոթը։

— Ֆայթոնով պիտի երթամ,— հըմը... դուն վո՞վ ես։

— Դե, համ գնանք, համ խոսենք այդ մասին։

Ու ճամպրուկը բռնած առաջ եկավ։

— Ժամանակը, սիրելիս, վատ ժամանակ է,— շարունակեց անծանոթը,— ամենամոտ բարեկամիդ էլ շես կարող մի բան հավատալ։ Այս կողմը համեցեք, ընկեր Մերկերիոս,— անծանոթ տիկնոջ հետ էլ ծանոթանանք։ Ես երևանցի եմ. քաղաքի մեջ ինչքան որ ծանոթ կա՝ բոլորը ճանաչում են ինձ. ես էլ, այնպես, կառավարության գործերի մեջ... կամ։ Զորս կողմերդ լավ մտիկ

տվեք՝ բան-ման շթոցնեն: Կգան, խոսքի կրոնեն, կասեն գնանք, բռն,— շխոսք հետները:

Այսպես խոսելով հասան կայարանի հետևը:

— Նստենք,— ասաց անծանոթը և դարձավ դեպի վանեցի կառապանը, որ ատամները օդի մեջ բռնած բերանբաց ժպտում էր Մերկերիոսին նայելով:

— է, համեցեքի՞ ես սպասում,— հանդիմանեց անծանոթը կառապանին,— ընկեր Մերկերիոսի ճամպրուկը վերցրու:

— Ծսի՞մ...,— կմկմաց կառապանն ու ճամպրուկը խլեց:

Նստեցին կառք: Կառապանը մտրակեց ձիերին ու քշեց դեպի քաղաք, ճամփին գոռալով իրենից ստորադաս կառապանների վրա, ինչպես ընդունված է օրհնյալ Հայաստանում, որ նվիրապետական կարգով շոֆերը գոռում է ֆայտոնի կառապանի վրա, ֆայտոնի կառապանը սայլի կառապանի վրա, սայլի կառապանը իշատերերի վրա՝ համեմելով իր գոռոցը գուլնգուլն հայհոյանքներով ըստ աստիճանի և ըստ շափ ու կարողության:

— է՞, պատմի տեսնենք, եղբայր Մերկերիոս, ուրի՞շ,— ասաց Մերկերիոսի նոր բարեկամը՝ գրպանից համրիչը հանելով:

— Զանսաղություն: Ախպորս ըսեմ՝ քրոջդ հետ լենինականու եկանք Երևանու բաղբը պտտելու, էտև պիտի էջմիածին երթանք մեռոնեփեք:

— Հա՛, շատ լավ եք արել, երևելի լավ եք արել, հենց իսկ Երևանա խաղողի, պամիդորով խորովածի, մեկ էլ էջմիածնա ուլտի լավ ժամանակն է,— ասաց Մերկերիոսի նոր բարեկամը ուրախացած:

— Մեռնիմ իրեն, խոստըցեր եմ,— կովի պես ծոր տվեց Մերկերիոսի կնիկը և քիթ ու բերանը լացակումած ծոմռելով՝ երեսը խաշակնքեց:

— Եսուն տարի էդ գործի մեջ ենք. եսուն տարի սազ Շորգյալու նախիրները մենք մատաղ կենենք:— Ներողություն, անունդ ընծի բաշխե՛ս:

— Գասպար Մակարիչ:

— Ընկեր Գասպար Մակարիչ, ես ամեն մեռոնեփեքի էջմիածնա մեջ եմ: Ես աս մեր հիմիկվան նոր հեղափոխական, կոմունիստական մարդոց զուռնով պար խաղցող մարդ չեմ: Մերը՝ հին օրենքն է:

— Լավը հին օրենքն էր:

— Հին մարդ ենք, հին էլ կմնանք:

— Հին մարդը հին էլ պիտի մնա:

— Ես էնպես մարդ եմ որ՝ օխտը տարվա սված խոսքի տերն եմ:

— Մարդ պիտի օխտը տարվա սված խոսքի տերը լինի:

Այս խոսակցությանը հասան բուլվար, թատրոնի առաջ:

— Որտե՞ղ պիտի իջնեք,— հարցրեց կառապանը:

— Գաստինիցա,— ասաց Մերկերիոսը:

Կառապանը ներողամտաբար ժպտաց և ասաց, որ այդ տեսակ բաներ չկան Երևանում:

— Ի՞նչ խայտառակ քաղաք է, ինչի՞ գաստինիցա չկա: Ուխտավորը գա՛ ո՛ւր պիտի իջնի:

— Երևան գաստինիցա որ եղներ՝ Եվրոպա կհիշվեր,— ասաց կառապանը:

— Նեղություն մի քաշի, պարոն Մերկերիոս,— ասաց Գասպար Մակարիչը,— համեցեք մեր տուն:

— Ախ ինչի՞ գաստինիցա չեն շինե,— գոռաց Մերկերիոսը՝ կարծես կարող էին իր համար խսկույն հյուրանոց շինել:

— Այ օղույներ, մեր Գյումրվա ծծկեր տղեն էլ իրա ջերեն տասը գաստինիցա կհանե. գաստինիցեն ի՞նչ է օր չեք շինե,— շարունակեց Մերկերիոսը անհայտ հասցեով գոռգոռալով:

— Երթանք, ջանքմ,— կողքից բղավեց Մերկերիոսի կնիկը,— տղամարդություն բանեցնելու տեղը չէ. բոբրոռալով գաստինիցա՞ պիտի շինես:

— Գնանք, պարոն Մերկերիոս,— պնդեց Գասպար Մակարիչը,— հայ չե՞նք, հայ քրիստոնյային որ դուրսը թողնենք՝ աստծոն ի՞նչ պատասխան տանք:

Կառապանը քշեց ու ինքն էլ մեջ ընկավ:

— Զանքմ, խայ ազգ հեշ դուրսը կթողնվի՞:

Ու մտավ Երևանի այն փողոցները, ուր մտնողը պետք է նախապես որոշի թե ուզո՞ւմ է կրկին դուրս գալ, և եթե ուզում է դուրս գալ՝ պետք է առաջուց նշաններ դնի և պատրաստություն անանի:

Կառքը քշեց, գնացին, գնացին և հետզհետե ընկան այնպիսի անել փողոցներ ու վերջն էլ այնպես խցկվեցին մի նեղվածքում,

որ այդտեղից դուրս գալու համար հարկավոր էր մեկ ուրիշ փողոց գտնել և այնտեղից գալ այդ փողոցից դուրս գալու համար:

Մնացին ցեխի մեջ: Կառքի հետևից և առջևից այնքան անցորդ մարդիկ ու էջեր հավաքվեցին, որ սկսվեց վերագնահատական խոսքեր պատմության փաստի առջև: Իշատերերն սկսեցին հայհոյել կառապանին:

— Խի՞ Դաշլի-Քուչով շեկար, հայվան:

— Վէ՛ր Դաշլի-Քուչով գայի, — գոռաց կառապանը:

— Քանի՞ Դաշլի-Քուչա կա, հայվան:

— Է՛, հա՛, քանի՞ Դաշլի-Քուչա կա, — պնդեց կառապանը:

— Հա՛, քանի՞ Դաշլի-Քուչա կա, — ավելի պնդեց իշատերը:

Ոչ մի եզրակացություն չգալով, թե քանի Դաշլի-Քուչա կա՝ սկսեցին անցնել պատմական փաստաբանություն:

— Տո, քյոփօղլի, դու վանեցի շե՛ս, — հարցրեց իշատերը, և շսպասելով պատասխանի՝ ավելացրեց, — տո, վանեցիներդ չէի՞ք, որ հայոց թագավորությունը կործանեցիք:

Կառապանը գոռաց ձիերի վրա. կարծես նրանք էին մեղավոր, որ փողոցը նեղ էր ու ցեխ:

— Կացեք, ձեր խաշիվ կթամուզեմ, շան ձիեր, — գոռաց ու սկսեց կատաղի մտրակել ձիերին և ամեն հարվածի հետ այնպես էր նվում, որ կարծես թե կյանքի և մահու մկրատի արանքն ընկած փններ:

Երևի կսպաներ ձիերին՝ եթե անսպասելի կերպով կառքը դուրս չգար ցեխ ու նեղ տեղից:

Վերջապես կառքը գնաց ու կանգնեց մի տան առաջ, որ Պի-զայի աշտարակի պես ծովել էր:

— Է՛, հասա՛նք, համեցե՛ք, — ասաց Գասպար Մակարիչը և իջավ: — Պարոն Մերկերիոս, կառքի փողը շտաս, ես պիտի տամ: Մուկուչ, շառնես, — ասաց կառապանին և հեռացավ դեպի դռները:

Մերկերիոսը վճարեց կառապանին և իջավ:

— Վառինկա, — ձայն տվեց Գասպար Մակարիչը՝ բանալով բակի դուռը:

Այնտեղից դուրս եկավ մի տեսակ վառինկա, որ կատվի աչքեր ուներ և այդ աչքերով մտիկ տվեց եկողներին ու ձեռաց հասկանալով բանի էությունը՝ առաջ եկավ:

— Ներս համեցեք, այս կողմ համեցեք:

Ու ամուսնու հետ վերցնելով հյուրերի կապոցները՝ բարձրացան այնպիսի մի սանդուղքով, որ թոքախտ ընկած մարդու պես սկսեց նվալ ու հազալ, և հետո ծոմովելով աջ ու ձախ, բարձրացավ պատշգամբ: Այստեղից էլ մի հառաչանքի կամուրջով անցան դիմացի պատշգամբը և վերջապես կանգ առան մի սենյակի առջև:

Իրիկնադեմին, ուշ նստեցին թեյի՝ պատշգամբի վրա, որտեղից մի ընդարձակ տեսարան էր բացվում դեպի տան բակը: Այդ բակը մի տեսակ բակ էր, որի բնույթը հրապարակախոսական էր: Նախ, ծաղկաքանդակ պատշգամբից մինչև մյուսը երկսեռ սպիտակեղեն էր կախված շորանալու համար: Բազմաթիվ լվացքաջրեր՝ սկիզբ առնելով սենյակների և խոհանոցների դռներից, գնում լրջվում էին մայր առվի մեջ, որը Նեղոսի պես աղբով առլեցուն՝ հոսում էր բակի միջով դեպի փողոց: Դռնապանը հին աղբի բլուրի ստորոտում նստել մածնի կճուճն էր լվանում առվի մեջ:

— Է՛, ընկեր Մերկերիոս, — ասաց Գասպար Մակարիչը, երբ նստեցին թեյաբեղանի շուրջը — թուրքն ասում է՝ բիր գյորանդա՛յոլդաշ, իբի գյորանդա՛ կարդաշ: Մի կոնյակ, հը՛, չշպրտե՛նք:

— Ատկազ շենք էնե:

— Անուշներ:

— Զանդ անուշ:

— Ուխտներդ ընդունական:

— Ամեն:

Այդ ժամանակ պատշգամբի սանդուղքներից վեր բարձրացավ մի ալրաթաթախ, ներկված սևաշյա օրիորդ, որը եթե շրջազգեստի կարճության կողմից ուժեղ խնայողություն էր, մարմնի մասերի ցուցադրման կողմից ուժեղ շոքայություն էր: Նա քթի տակ մի ռուսերեն ռոմանո մոմալով եկավ ու անցավ նրանց մոտով:

— Ժենյա՛, ինչ շուտ վերադարձար, — հարցրեց տիկին Վառինկան, — եկ թեյ անուշ արա:

Ժենյան ներս գնաց, վերաթաթախվեց պուդրու մեջ և դուրս եկավ:

— Մանոթացեք խնդրեմ, օրիորդ Ժենյա Մոսեսովնա և մեր հյուրեր՝ ընկեր Մերկերիոս և տիկին Դոխո:

Օրիորդ Ժենյան նստեց Վառինկայի կողքին:

— Ի՞նչ նորութիւն, ժենյա,— հարցրեց Գասպար Մակարիչը
— Ոչինչ,— ասաց ժենյան,— այսօր պատահեցի Վարդուշին,
հարցրի՛ պսակվո՞ւմ ես, ասաց տեսնեմ, մի շաբաթ Կոլյայի հետ
պսակվեմ, տեսնեմ, թե քեֆովս շեղավ, Միշայի հետ կպսակվեմ:
Մերկերիտը ականջները սրեց:
Օրիորդ ժենյան դարձավ դիմացի պատշգամբում նստած մի
երիտասարդ տիկնոջ:

- Լիզա՞, ո՞նց ես, աղջի:
- Լավ եմ, շնորհակալ եմ, դու ո՞նց ես:
- Կանք էլի: Հալա էլի առաջվա մարդիդ կշտի՞ն ես:
- Հալա էն: Մարուսեն ի՞նչ ա անում:
- Կարելի ա էգուց էլօր Կոլի հետ զագս գնա: Համա...
- Համա ի՞նչ:

— Ասում ա՛ ուզում եմ առաջ Սաշի հետ քիչ պսակվեմ, տես
նեմ թե յուր շքանք՝ էն վախտը Կոլի հետ կա ու կա:

Մերկերիտը ականջները տնկեց:
— Լա՛վ, դո՛ւ երբ ես ամուսնանում,— հարցրեց Գասպար

Մակարիչը օրիորդ ժենյային:
— Ի՛հ, դարդս կտրվել ա,— ասաց ժենյան,— համ մարդի
գնամ, համ աշխատեմ: Թե պիտի ծառայութիւն մեջ ըլեմ՝ ինչի՞ն
ա պետք մարդը:

- Ապա ո՞նց ես ուզում:
- Ո՞նց: Մարդս աշխատի, ես տանը մնամ, այ թե օնց: Ախր,
թե պիտի աշխատեմ՝ մարդը կա ու կա, զուր աշխատելս ո՞րն ա:
- Ի՞նչ տեսակ մարդ էլ որ ըլի, քեզ համար մի՞ն ա, ջահել

չլառավ...
— Զանըմ, թող մարդս աշխատի, ինձ ազատ թողնի տանը՝
կուզի ջահել ըլի, կուզի պառավ: Մինա ինձ համար:

Մերկերիտը հագաց:
— Է՛հ, գիշեր եղավ, շերթա՞նք քնելու,— կողքից բզեց Գո-

խոն Մերկերիտին:
Մերկերիտը վեր թռավ:
— Ի՞նչ կա:
— Երթանք քնինք:
— Կեցի:
Եվ տեղում դրսավելով՝ ձայնը մաքրեց և ասաց.

— Զանըմ, ափսոս չէ՞ զագսը: Զագսը հոգի է: Էս մեր երի-
տասարդները ամեն բան խելքով շափել կշռել, ամեն բանին
մանդրն ու խոշորը ջոկել՝ զագսը հաստատեր են: Զագսին մեջը,
իմ գաղափարովս, շատ մեծ սուեր կան, էտիկ վերը կիմանանք:
Մենք մեր երիտասարդներուն շենք հավնի, հըմը տեսաք, զագսով
կպսակվինք. զագսով կբաժանվինք, սրտերուս ուզածին հետ կապ-
րինք, շուգածին ճամփու կղեննք: Էսիկ ո՞ւմ շնորհքն է, հըլքըթ օր
երիտասարդներուն: Էդ զագսը ինգելիզի խելք է:

Գոխոն նորից կոզքը բզեց.
— Ե՛լ ել, բյուբյուլ ես կտրե... քիչ կանուխ ելլենք, ս. Սար-
գիս պահենք. տըլքը խորաթանները փոր շեն կշտացնե:

Մի քիչ էլ խոսեցին դեսից դենից ու գնացին պառկելու:

Առավոտը վաղ ուխտավոր ամուսինները մածոն: և ձվի հետ
զարթնեցին:

- Լավ ձո՛ւ ո՛ւ... Լավ մածո՛ւ ո՛ւն...
- Է՛յ, Լավ ձո՛ւ,— ճղավեց Վառինկան պատշգամբից. ես
քեզ ցուց կտամ Լավ ձու ծախել, օնց որ երեկ ծախեցիր: Մըն էլ
Լավ ձու ես ծախել՝ միլիցին իմաց կտամ:

Գոխոն վեր կացավ ու շնայելով շոգին՝ հագավ վերարկուն և
շալը դցելով զլիսին, Վառինկի հետ եկեղեցի գնաց:

Մերկերիտսն էլ դուրս եկավ պատշգամբ և նստելով սեղանի
մոտ, սկսեց համրիչը քաշել և հետը մրթմրթալ.

- Է՛յ, յե՛թ, թո՛ւ...
- Ճաշին մոտ ժամանակ Գասպար Մակարիչը Մերկերիտին ու
Գոխոյին տարավ քաղաքում ման ածելու: Աբովյան փողոցը մտան,
ուր Մերկերիտը մի քանի անգամ քիթ ու բերանը դիպցրեց դեմից
եկողներին:

— Առաջդ աշե,— զայրացած նկատեց Գոխոն:
Հենց այդ ասելիս մի մշակ հետևից բռթեց Գոխոյին:
— Ետեղ աշե,— նկատեց Մերկերիտը և ինքը դիպավ մի
ուրիշի:

Գասպար Մակարիչը կանգ առավ մի կինոյի աֆիշի առջև:
«Գի-տա-կան, սենսա-ցիա՛ա՛ա՛ կարդաց նա, ականջները

գնելով և շտկելով,— «Երիտա-սա՛ա՛ա՛րդացում... 6 մասից բաղ-
կա-ցած»... «Պրոֆեսոր՝ Շտեյնա... ար փորձերից»:

— Յի՛ոք է, ի՛նչ բան է,— հարցրեց Մերկերիտը:

— Կինո, մարդ են ջահելացնում: Կուզե՛ք իրիկնասպահին
գնանք:

— Ա շոտ՞ժ, էրթանք: Դոխո՞, ի՛նչ կըսես:

— Բան չունի՞ս, փողի տուզախ,— քրթմնջաց Դոխոն,— դուն
էտոնք թող, ֆայթոնի աշե, էջմիածին երթանք:

— Ջանըմ, կինո էլ կերթանք, էջմիածին էլ: Հը՞, Գասպար

Մակարիչ:

Մերկերիտն ու Գասպար Մակարիչը խորհուրդ արին և վճռե-
ցին այսպես. նախ՝ գնում են կառք վարձում վաղը չէ մյուս օր
էջմիածին գնալու, իսկ երեկոյան գնում են կինո, «Երիտասարդա-
ցո:մը» տեսնելու:

Երեկոյան գնացին կինո, հետները վերցնելով նաև տիկին
Վառինկային և օրիորդ Ժենյային:

Կինոջամ շատ զարմանալի բաներ տեսան: Հազար տեսակ
մկներ, ճագարներ, խոզեր, մարդիկ պառավ գալիս էին, ջահել
գնում, որից Մերկերիտը զարմանք էր մնացել:

— Տեսա՞ր զազրանիչնի Եվրոպան,— ասաց նա, երբ դուրս
եկան.— խելքի մաշինա է էղե էտոր հնարողը: Դոխո՞, հավնա՞ր:

— Կռետիկ էր, անղարյա, պոշ բան, ափսոս փողին,— մըրթ-
մըրթաց Դոխոն:

— Ինչպե՞ս էր,— հարցրեց Գասպար Մակարիչը օրիորդ Ժեն-
յային:

— Մարդ որ ունենամ՝ ամեն շաբաթ կուղարկեմ էդ բժշկի
մոտ,— ասաց Ժենյան և բզեց Վառինկայի կողը:

Երկուսն էլ փոթկացին:

Հետևյալ երեկոյան Մերկերիտը մենակ նստած էր, երբ ներս
մտավ Գասպար Մակարիչը:

— Է՞, պատրա՞տ եք,— ասաց համրիչը քաշելով,— վաղ
գնում ենք էջմիածին:

— Ինձի աշե,— ընդհատեց Մերկերիտը,— ձեր Երևնու բժիշկ-
ները մարդ ջահելցնել կրնա՞ն:

— Մարդ ջահելացնե՞լ: Ինչո՞ւ չէ: Եթե ճաշակիդ գալիս է՞ փո-
ղի բան չէ՞:

— Երեսուն տարեկան կրնա՞ն դարձնել:

— Քսա՞ն ինչի շես ասում:

— Խոսքի օրինակ՝ մարդ էնքան ջահելնա, օր օրփեարի ջա-
հել կնիկըմ առնե:

— Ջահել որբեայրի կնկան ջահել էլ որ չլինես՝ կառնես:

— Իսկ ջահել աղջկա՞:

— Ավելի շուտ ջահել աղջիկը կդա:

— Ասովա՞ծդ սիրես...

— Ազնիվ խոսք: Վազելով կգա:

— Հը՞... է՛հ, երևընցիք էդ թարաֆեն ի՛նչը են:

— Երևանցիք շաբաթը մի կնիկ են փոխում:

— Վաճառականե՞նքն էլ:

— Վաճառականները որ գործերը թողած՝ հա հին կնիկները
փոխում, նորերն են առնում:

— Վա՛յ իմանսըզներ: Հասակավորնե՞րն էլ կնիկ կփոխեն:

— Ավելի շատ կնիկ են փոխում հասակավորները, որ ջահե-
լության պակաս թողածի տեղը հանեն:

— Ըսենք, կյանքի համար լավ բան է:

— Կյանքի համար լավը կուզես՝ հենց դա է:

— Առողջություն էլ է:

— Ի՛նչ խոսք:

Երեկոյան Մերկերիտը ճոխ ընթրիք տվեց ի պատիվ Գասպար
Մակարիչի, տիկին Վառինկայի և օրիորդ Ժենյայի, որը հատուկ
այդ առթիվ հիմնավորապես ներկվել էր, և նստելով Վառինկայի
կողքին, Մերկերիտսի դիմաց, բզում էր Վառինկայի կողը և կըշ-
կըշում էր՝ մեկ-մեկ աչքով անկով Մերկերիտին:

Շատ կենացներ խմեցին. տիկին Վառինկան Ժենյային խընդ-
րեց, որ երգի. Ժենյան երգեց. «Քո աչերն են մեղավոր»:

Մերկերիտը կենացի ճառ ասաց.

— Այս հարկիս տակը մենք կգտնվինք... ներողություն... իմ
զաղափարս... ես իմ զաղափարիս էնպես կզարնեմ օր՝ մենք պար-
տական ենք երիտասարդության կենացը խմելու: Ես կառաջարկեմ
օրիորդ Ժենյայի կենացը...

— Ուռա՞... — խմեցին...

— Զխկո՞ւմ,— ասաց կամաց Դոխոն:

Երբ գնացին քնելու՝ Գոխոն սուր-սուր մտիկ տվեց Մերկերիտ-
սին։

— Գո՛ւ ինչ էս էրկու օրս բյուրբյուլ ես կտրելի։ Աշըղ Փայ-
լուլի՞ն ես։ Ուխտ ես էկե, թե կավալեոհա կխաղաս։

— Ուխտը տեղեն չի փախչի։ Լուսավորության աշխարհք է.
կավալեոհա՞ս որն է...

— Սո՛ւա, սո՛ւա, քնե։ Օյիներ մի խաղա։ Ո՛ւխտ ես էկե, թե
ժենյաներուն քամավելու քոնցոմուլ չես։

— Է՛, ի՞նչ մտածեցիր, գնո՛ւմ ենք էջմիածին — հարցրեց
Գասպար Մակարիչը հետեյալ առավոտ մոտենալով Մերկերիտսին։

— Մտածեցի, որ էջմիածին չերթամ։

— Ասել է՛ հոր-Վիրապ ես ուզում։

— Խոր-Վիրապ էլ չեմ ուզե։

— Ինչո՞ւ Սեա՞ն ես գնում։

— Ջանքմ, էդ Սեաններն ու Խոր-Վիրապները հըլը թող։ Ուրիշ

մտքի եմ։

— Ուրիշ մտքի՞։

— Հա։ Քեզնե ի՞նչ սրտ պահեմ՝ կնկանես գուզեմ բաժնըվիմ։

— Ուզում ես բաժանվե՞լ, — ասաց Գասպար Մակարիչը իր
արհեստին հատուկ ժպիտով նայելով Մերկերիտսին։ Է՛, ի՞նչ կա,
եթե իրար հարմար չեք՝ պարտավորություն է։ որ բաժանվեք։

— Էդպես չէ՞, տեսա՞ր իսկական զագոանիչնի զարգացած
մարդը։ Մեր քաղաքը՛ն է, ջանքմ, բաժնովիլու խոսք չենես, թե չե՛
մարդու թաքարլամիշ կենեն։ Հարի՛Ֆ, լուսավորութենեն շատ հա

մնացինք։ Խավար ապրելն էլ բանքմ չէ։

— Խավար ապրելը շատ վատ բան է։

— Խախը կապրի, քե՛Ֆ կքաշե, մենք ծում ու պաս ենք, ջա-
նքմ...

— Մում ու պասը լավ չէ։

— Հիմի խոսքն օր տեղն եկավ՝ թաքավորցենեմ խոսքս։ Գուզեմ
մե քիչըմ ջահելնամ։ Էս ձեր էրկնու բժիշկները կըրնա՞ն ընծի ջա-
հելցնել։

— Հարյուր տարեկանին ջահելացրին, քեզ ի՞նչ է եղել որ...

— Յանի ըսենք շահելնամ էլ՝ եռանդս մեջս կեփի, տեղն
եկած տեղը՝ ջահելեն ջահել եմ։

— Քեզ ի՞նչ կա որ...

— Յանի խոսքի օրինակ կըսեմ։

— Ասա, վնաս չունի։

— Հիմի նազդի վրա՛ էս մեր օրիորդ ժենյալին շե՛նք կրուսա
առնե։

— Որ ջահելանաս՝ ինչո՞ւ չէ։

— Գուն ու քու աստվածդ։

— Ճշմարիտ աստված։

— Է՛, ի՞նչըղ էնենք։ Կըսեմ՝ երթանք ջահելցնող բժշկին բով։

— Չէ, այդ բժիշկը դեռ մնա. ես բժշկի հետ առաջ պետք է
տեսնվեմ։

— Հը՛...

— Հա՛...

— Հասկցա՛ւ։ Կա՛վ, Ըսել է առաջ երթանք զագսին թարա՛ֆը։

— Ջագսի՛ն... — ծամծմեց Գասպար Մակարիչը, — զագսին
չգնանք դեռ։ Առաջ գնանք մի տեղ, բարեկամ մարդու մոտ, որ ճա-
նապարհ ցույց տա։

— Է՛, հիմիկվընեն թեզը շկա, երթանք։

— Գձանք։

— Ես գործի մեջ մե քիչըմ չուստ եմ։

— Չուստը լավ է։

— Փափա-մափա մարդ չեմ սիրե։

— Չսիրելու բան է։

Գնացին դուրս։

Գասպար Մակարիչը Մերկերիտսին զանազան ծուռ ու շիտակ
փողոցներով տարավ Կոնդի կողմերը։ Կանգ առան մի ցածրիկ
տան առջև և գլուխները կուցնելով մտան մի բակ, այնտեղից էլ
մի պստիկ սենյակ, ուր մի շիլ մարդ խեթ-խեթ մտիկ տվեց այ-
ցելուններին։

Գասպար Մակարիչը աչքով արավ Մերկերիտսին և մոտենա-
լով շիլ մարդուն, սկսեց ականջին փսփսալ։ Շիլ մարդը հանեց ակ-
նոցները, թաշկինակով սրբեց, դրեց աչքերին և նրանց արանքից
զարձյալ նայեց Մերկերիտսին։

— Բանն ինչո՞ւմն է, — հարցրեց նա շոր։

— Ջագսը գո՞ւն ես։

— Այս մարդը զագսի շուրջը աշխատում է և գործերին մոտ

մարդ է, — ասաց Գասպար Մակարիչը, և աչքով արավ Մերկերիոսին: — Ասա խնդրի՞րք:

- Ըսել կուզեմ օր, ես կխնդրվիմ օր կնկանես բաժնեք ընծի:
- Քանի՞ տարի է ամուսնացած եք:
- Երեսունհինգ տարի:
- Ինչո՞ւ ես ուզում բաժանվել:
- Մարդ ու կնիկ իրար շրոնեցինք: Բնավորութուններս իրար

չփաթթեց:

- Բնավորութուններդ շրոնեց: Լավ: Հետո՞:
- Իրար հարմար չեկանք: Սխալվել ենք:
- Է՞, երեսունհինգ տարի է պսակված եք՝ նո՞ր իմացաք, որ

բնավորութուններդ իրար շրոնեց:

- Նոր իմացա, — ասաց Մերկերիոսը և մի քիչ շփոթվեց:
- Շատ եք ուշացել: Գլխավոր պատճառը պետք է գտնեք՝ թե

ինչու եք բաժանվում:

— Գլխավոր պատճառը էն է, օր... ներողութե՛ն, եղբայր չան, խոսքի օրինակ, ես ձեզի պիտի ըսեմ, օր ես հիմի նոր գա-
զափարով գուզեմ ապրեմ, նոր աշխրթի գուզեմ խառնվիմ:

- Բաժանվելուց հետո ուրիշի հետ պե՞տք է ամուսնանաք:
- Է՛հ թե պարտք է՝ կամուսնանամ:
- Պարտք չէ: Բայց ամուսնանալ ուզո՞ւմ եք: Ուզում եմ ասել՝

արտով ուզո՞ւմ եք:

- Գուզեմ, արտով գուզեմ:
- Ուրեմն դիմում գրեցեք, ես վաղը կտանեմ զագա:
- Այդ մենք չենք կարող, Խորեն Համբարձումովիչ, դու պի-
տի գրես, — վրա ընկավ Գասպար Մակարիչը:

— Շատ դժվար գործ է, — ծամծմեց շիլ մարդը, — երեսուն և
հինգ տարի է անցել:

— Լավ, լավ, վնաս չունի, գործը տես, ընկեր Մերկերիոսը
ծախսից փախչող մարդ չի: Մի երկու հարյուր մանեթը դատարի
բան է:

— Բանը փողը չէ: Գլուխ պիտի կոտրենք: Լավ: Մի բան կա-
նենք:

Գասպար Մակարիչը Մերկերիոսին աչքով արավ և այնպես
սարսափով նայեց նրան, որ Մերկերիոսը հանեց քսակը և հաշ-
վելով երկու հարյուր ութիսն՝ դրեց շոր մարդու առաջը:

Չոր մարդը նայեց Գասպար Մակարիչին, իսկ սա՛ պատուհա-
նից դուրս, և հարցը վերջացավ: Դուրս եկան փողոց:

- Է՛, հիմի մնաց ժենյան...
- Ժենյա՞ն, հա՛. ամենից դժվարը ժենյան է. բայց վնաս
չունի, մի 500 մանեթով կվերջանա:
- Ի՞նչ կըսես:
- Այո՛, ընծայի, հրավերքի, հետո բժշկի...
- Բժշկի, դրուստ ըսիր: Հըմը, էրթա թող:
- Ես ժենյային «կհամոզեմ»:
- Հա՛, հա՛, դու էնոր անկաճը լից, ծախսի առաջ մի կայնի:
Բան չունի՞ս, աշխրթի քիչըմ համ առնենք...

Հետևյալ առավոտ վաղ Գոխոն բզեց Մերկերիոսի կողքը:

— Ե՛լ, զանգերը զարկին, էրթանք սուրբ Սարգիս համբու-
րենք:

- Դու գնա համբուրե, ես ետև գուբամ:
- Ետև գուբա՞մս որն է: Ել:
- Չէ, դու գնա ժամ, թեզ արի, որ քեզ ճամփու պիտի դնեմ

Գյումրի:

- Ճամփու պիտի դնես Գյումրի՞... Ինչո՞ւ:
- Գործ պատահավ:
- Ի՞նչ գործ:
- Մասնավոր, կառավարության գործ:
- Միլիցե՞ն է կանչե:
- Զանըմ, բժշկի քով պիտի երթամ, բալնիցա պիտի պառ-
կիմ, ղալաններս կցավի՞ն:
- Խելըռե՞ր ես, ես օղլուշաղ տեղովս ո՛ւր պիտի երթամ: Չէ,
մեջը ֆենթիֆիլուշքեմ կա: Ի՞նչ գործ է:
- Էտիկ կնիկմարդու բան չէ: Տե՛, տե՛, մի ուշացնե. պոյեզ-
դը գնաց:

- Մտքեդ հանե: Ես տեղես հեչ չեմ խթխթա:
- Է՛, ըսել է՝ շըսե՞ս խաթի մեջ ընկանք:
- Խելքդ տե՞ղն է, ինչ կըսես. ես միտքդ կհասկնամ. բալըե-
վի՛կ ես դառե:
- Հա՛, բալըեկի եմ դառե:
- Մեղա՛, կեցար, կեցար՝ բալըեկութենդ նոր բռնեց: Բոյդ

թաղեմ. տանը մեջ ինչի՞ բալշեիկ չէիր: Գյուժրի օրը տասն անգամ
բալշեիկութենե յախա թափ կուտայիր:

— Լուսավոր չէինք, չէինք հասկնա:

— Է՛, էրեան էկար, լուսավորցա՞ր:

— Բալշեիկի աշխարհք է, գլուխդ կմտնի՞: Մենք էլ բալշեիկի
պես պիտի շալենք: էդ ուխտ-մուխտ, տերտեր-մերտեր՝ վրես գրե.
սուտ բաներ են:

— Հիմի հասկցանք. էդ ամենը մի ղախպա աղջկա խաթե՞ր
կըսես: Քոնցոմո՞ւ ես, անաստվա՞ծ ես:

— Հա՛, քոնցոմոլ եմ, ըսա՞ծդ ինչ է:

— Կիտի՛, քյոփակ շուն, — ծղրտաց Դոխոն և վեր կենալով
նստեց Մերկերիոսի կրծքին:

Այս ձայնի վրա Գասպար Մակարիչը և Վառինկան ներս վա-
զեցին: Հասան և մյուս հարևաններն ու հանդիպեցին այնպիսի մի
տրյուկի, որ «Ծրիտասարդացման» կինոն էլ շուներ:

Դոխոն մի առանձին ջերմեռանդությամբ թակում էր Մերկե-
րիոսին: Մերկերիոսը շապկանց դուրս վազեց. պատշգամբ: Դոխոն
ընկավ նրա հետևից:

— Քոնցոմոլի՛ս աշեցեք, օճա՛խ կբանդե:

Ու բռնելով Մերկերիոսի ականջից, ցած քաշեց:

— Աղջի՛, աղջի՛, — լիտսեց Մերկերիոսը:

— Տիկին Դոխո, — հասավ Գասպար Մակարիչը:

— Տիկին Դոխո, — ասաց Վառինկան:

— Տիկին Դոխո, — խնդրեցին հարևանները:

— Կեցեք՝ ես էսօր հախեն գամ: Ազապ աղճիկ գուզես հա՛,
առ քեզի ազապ ախճիկ, — ու նորից սկսեց հասցնելը:

Այդ ժամանակ վրա հասավ օրիորդ Ժենյան, որ հետաքրքրված
գալիս էր տեսնելու, թե ինչ աղմուկ է:

— Արի՛, արի՛ մազերդ կտրեմ, ղանջըդ, — ծղրտաց Դոխոն
ու հարձակվեց օրիորդ Ժենյայի վրա: Ժենյան փախավ:

— Տիկին Դոխո, հանգստացեք:

— Սո՛ւս կեցեք, պոչ քաշող շուն շան որդիք. էրիկ-կնիկ կբա-
ժանեք, հա՛:

Ու մի հատ էլ Մերկերիոսի վախկոթին հասցնելով՝ հրեց գեպի
սենյակը:

— Տե՛, շամադանները կապե:

— Սո՛, ծո՛, ծո՛... ծո՛ էս էղավ հայութե՛ն, ծո՛ էս քրիստո-
նեութե՛ն է, — կակազեց Մերկերիոսն ու ներս ընկավ սենյակը:

Մինչ ամուսինները ճամպրուկներն էին կապում, հարևաններն
ու Գասպար Մակարիչը կանգնել սպասում էին վերջաբանին:

Տիկին Վառինկան փախել էր Ժենյայի հետևից:

Փողոցից մի կառք էր անցնում: Դոխոն դուրս վազեց, կանչեց
կառապանին և ճամպրուկները տալով Մերկերիոսի շալակը՝ հե-
տևից բզեց դուրս:

— Տե՛, յալլա՛, քեզի տանիմ էջմիածին, որ քոնցոմոլդ գլխեդ
հանեմ, Կավալեոյայի՛ս աշեցեք... աշըդ Փայլուդի՛ կխաղա... կի-
տի՛ քյոփակ...

1925 թ.

ՊԱՆԻԿԱԶԻ ԱՂՃՈՆ

Իմ հարևան Աղճոն տագնապալից մարդ է և տագնապալից է
ամբողջ ընտանիքով: Առավոտից մինչև երեկո, երեկոյից մինչև
գիշեր, շատ անգամ նաև գիշերն ինչ-որ խուճապային իրադարձու-
թյուններ են կատարվում նրա տանը:

Տղան լիբը բրնձի ջվալներ է բերում առն, ինքը դուրս է
ցատկում և վազելով՝ մոթալ, ցորեն, կարտոֆիլ, կաղամբ է հասց-
նում, թափում: Աղջիկները փողոցներն ընկած՝ ձու, պանիր, յուղ,
հավ են հավաքում:

Ասում եմ՝ ձմեռնամուտ է, երևի մարդը պաշար է տեսնում:
Բայց Աղճոյի պաշարն անհնարին ծավալ է ընդունել:

Յորենը, յուղը, փայտը, հին շորերը, լոբին, ձեթը, ածուխը
լցվել են մարագը, այնտեղից եկել մտել են սենյակը, թախտերի
տակ, թախտերը բարձրացրել դուրս են գցել բակը:

Ընտանիքը դուրսն է գիշերում:

Աղճոն լեզուն կախ, քրտինքը շոշոալով՝ վազում է դուրս, վա-
զում է ներս:

Մի բոպի դադար էլ որ լինում է, ընտանիքի անդամներից
մեկն ու մեկը քիթը հանելով դրսի գոնից, փողոցն է նայում: Մեկ
էլ հանկարծ իրար հետևից ջվալ, նավթի աման, զամբյուղ առած՝
ամբողջ ընտանիքը վազում է շուկա:

Ի՞նչ է պատահել. շեմ հասկանում:

— Աղճո, ի՞նչ է պատահել:

Աղճոն հետո է միայն և վազում:

Մեկ էլ ներս է ընկնում:

— Կնիկ, ճաղի ալյուր էլ եկավ:

— Բեր:

— Քալամ էլ կա:

— Հասցրու:

Տղան է վազում լեղապատառ:

— Հայրիկ, կլիզմա գտա:

— Քանի՞ հատ է:

Մերժել չկա: Ամեն բան առնում, լցնում են տունը:

Եվ դա տուն չէ. դեպո է, պահեստ, ունիվերսալ մագազին:

Հանկարծ ներս է ընկնում աղջիկը:

— Աման, մարե, պոչն եկավ:

— Վայ, զուլում, տեսա՞ր զուլումը:

Ու ամբողջ ընտանիքը նորից լեղապատառ վազում է:

— Աղճո, ի՞նչ պոչ, ի՞նչ է ասում:

— Կոոպերատի պոչ է:

— Լավ, ինչի՞ ես վախենում:

— Վախենա՞լ, աման, մի ասի, ամեն պոչ տեսել եմ, չեմ վախեցել, գելի պոչ, արջի պոչ... ամա ես կոոպերատի պոչ զբժմեն մոոցուց:

— Հիմի ի՞նչ բանի վրա ես:

— Պաշար եմ տեսնում:

Վերջին օրերս Աղճոն իր տազնապով իմ մեջ այն միտքը զարթեցրեց, որ խեղճը պաշար է տեսնում հին իմաստով, երբ ձյունը գալիս ճամփաները փակում էր. կամ զորքը գալիս, «պաշարում» էր բերդը:

Մի օր փողոցում իրեն բռնեցի:

— Աղճո, մի բանի գեղատուն, փուռ, գործարան են ծախում, էժան է, կառնե՞ս:

Խելքը վրան չէ:

— Թանկ ու աժա՞նը կը հարցնես, բեր, ջանքմ:

— Մի բանի հատ էլ նահանգ, իրենց բերքով, պաշարով անասուններով:

— Ո՞ւր է, ջանքմ, բեր:

— Կառնե՞ս:

— Աստծու սիրուն, բեր:

— Կամ ինչո՞ւ հեռու գնանք. մի ամբողջ պետություն՝ իր վարչությամբ, զորքով, հանքերով ու արդյունաբերությամբ:

— Ջանքմ, բե՛ր, բե՛ր, բե՛ն՛բ, բե՛ն՛բ...ր, կառնե՞մ, հասկըցա՞ր...

— Շատ լավ, կբերեմ, առ տունդ դիր ու ձմեռս հանգիստ նստիր: Թե չէ՝ մեկ-մեկ տուն վազեցնելով ե՞րբ պիտի վերջացնես, սիրելիս:

Ասում եմ՝ Աղճոյին մի հատ դագաղ առաջարկեմ, թող պառկի մեջը, ինքն էլ ազատվի, մենք էլ:

1925 թ.

ՄԵՐ ԾԱՆՈԹՆԵՐԸ

Հոովմեական պատրիկի պես, իբրև տոգա՝ քրքրված ջվալն ուսերին գցած և կրծքի վրա հանգույց արած, աստծու կոշիկներով (սեփական կաշույց)՝ քամսվում է խանութների դռներին:

Փորը, նաև կուրծքը, նաև ոտները և նաև ամբողջ մարմինը մերկ:

Օթելլոյի գրիմը: Նրա տուալետը քամին է, արևը, ցուրտը և ծուխն այն խարույկի, որ փողոցի մեջտեղ վառում է նա:

Եվ հանգիստ ու պահանջկոտ մի եղանակ էլ ունի:

— Եղբայր, մի կոպեկ տա՛ս:

«Խուժան» է:

Առաջ այս անունը դրին թալանող և անկանոն զորքի վրա. հետո զորքի հետևից գնացող թալանող բազմության վրա, վերջը դրին սրա վրա:

Հազիվ 10—12 տարեկան:

Մի կոնսերվի դատարկ տուփ ունի ձեռին — միակ շարժական

կալվածքը հեղուկ նվերների համար և մի կենդանի ինվենտար՝ շունը, որի հովանավորն է նա:

Արդեն անցյալ ունի: Տրադիցիաներ, ընկերների մի դաս:

Բնակվում է... երկրագնդի վրա:

Նրա աչքը բաց արեց, տեսավ իր գլխին մի անհուն կապույտ: Նրա մահճակալը մայթն է: Նրա բնակարանային բաժնի վարիչը բնությունն է, որ նրան հատկացրել է մի ընդարձակ առանձնա-սենյակ — ամբողջ աշխարհը: Տանտեր, տանվարձ, ջրի, էլեկտրա-կանության վարձ, օտարազգի լեզու է նրա ականջին: Տունը նրա համար այն շենքն է, ուր ուրիշներն են ապրում:

Նրբեք դուռը լայն շքացեց: — Միշտ կիսաբաց: Եվ ամենաշա-տը ներս մտավ մինչև նախասենյակը:

Ճաշարանատերը նրա համար մի մարդ է, որի պաշտոնն է խուժան տեսնելուն պես լիմոնադի խցանի նման վեր թռչել, նրա հետևից հասնել և վզակոթին տալ:

Մինչդեռ ճաշարանի ծառայողն այդ վզակոթի մեջ միշտ մի քիչ կոտրիտ է դնում և տալիս նրան:

«Խուժանը» ինչ-որ կոնցեսիաներ, գանձելի գումարներ, հա-տուկ գործարքներ ունի իր կլիենտների հետ, արտակարգ և հիմ-նական ֆոնդեր:

— Եղբայր, 3 կոպեկը տվիր, 2-ը մնաց: Դե 2 կոպեկը տուր:

— Լավ, կորի՞, ուրիշ անգամ:

— Չէ՛, չմի տուր ու պրծի: Հետո մտքիցդ կընկնի:

Մինչև ճաշ գլուխը դնում է շան փորի վրա ու քնում:

Նրբեմն զարթնում է, ճմլկոտում, թևի տակերը բորում և կե-քուն, մեքենաբար մրթմրթում:

— Եղբայր, մի կոպեկ տաս:

Ու կրկին գլուխը կախում է վար ու քնում:

Մնացած ժամանակը զբաղված է դուան շեմքի վրա, ընկերոջ կրծքին նստելով և բուկը խեղդելով:

— Այ տղա, ի՞նչ ես անում:

Պատասխան չկա:

— Մնողներ ունե՞ս:

— Չէ, մեռել են, — լիտտում է հարևանցի ու էլի խեղզում

ընկերոջը:

Ճաշի ժամ է: Ահա գալիս են նրա մյուս ընկերները, սեն-

տորների պես, նույնպիսի տոգաներով և բռնում են դուան կոթը: Շուտով գալիս են ճաշելու խուժանների կլիենտները: Գործարքն սկսվում է:

— Հսոր կոսվետը շտվիր, եղբայր:

Բայց խուժանը ուրիշ տնտեսական բազաներ ունի:

Շուկան:

Նրկու կատեգորիայի մարդիկ կան, որոնց հետ խուժանն ամենօրյա կոնտակտի մեջ է:

Գյուղից շուկա մթերք բերող գյուղացին և շուկայից մթերքը տուն տանող տանտիկինը:

Նրկուաի բեռն էլ թեթևացնողը խուժանն է:

Տները, բնակարանները, սրահները, ննջարանները խուժանի համար «արտաքին աշխարհ» է, «դուրսը»: Նրա ներքին աշխար-հը, «ներսը» քաղաքն է, փողոցը:

Եվ երբ ահա մթնում է, մարդիկ «դուրս են գնում» և տունը

խաղաղվում է՝ խուժաններն էլ գնում են իրենց ննջարանը — այ-

սինքն որտեղ որ վերջին վայրկյանին կանդնած էին՝ տեղնուտեղը

վաչր են թավովում, ծածկվում իրենց տոգաների տակ ու սկսվում

է քաղցր զրույցը քաղցինբով ու պղպեղի հայհոյանքներով համե-

մած: Այս զրույցի մեջ մշակվում է խուժանական ոճը, նրա էպո-

սը — իլիականը և մանավանդ Ողիսականը: Այստեղ պատկերա-

վորվում է Ցիկլոպ խանութպանը, որ նրանց վրա դուռը դռից

փակել է, ուզեցել է թակել, բայց նրանք դուրս են պրծել: Այստեղ

գծագրվում է գեղեցկուհի Կալիպսոն բանկոտպի ճաշարանի առջև,

նկարագրվում են Ալքինոյի խաղողի և այլ մրգերի տեսակները:

Նրանի այգիներում, նավսիկեյայի լվացքը մեյդանի կղզիներում

և այլ սխրագործություններ:

Եվ երբ մի օր (դա շուտով կլինի) խուժանը դեգերելով ու

սխրագործելով իրեն բաժին ընկած ծովից ափ դուրս կգա մեզ մոտ

ու նստած կլինի մեր կողքին՝ նրա Հոմերոսը մի օր կպատմի երե-

վելի դրվագներ:

1925 թ.

Միայն պիտի խուզվեի ու ածիլվեի:

Ուրիշ ոչինչ:

Բայց այդպես չի լինում, երբ մտնում ես սափրանոց: Միշտ մի ուրիշ բան կպատահի այնտեղ: Մինչև անգամ փիլիսոփայական նոր սխտեմներ:

Այդ սափրանոցը ես մի քանի անգամ էի մտել և... կենդանի դուրս եկել:

Այդ էլ շնորհիվ իմ վախկոտություն:

Բայց միշտ մտահոգ եմ մտել այդ սափրանոցը և էլ նախախնայ հեռացել այնտեղից՝ ասելով.

— էլի կյանքը ամենից լավն է:

Հազար բան մտքովդ անցնում է:— Արդյոք սափրիչը լվացվե՞լ է քեզից առաջ: Ածելին վարակված չէ՞: Բամբակը ուրիշի վերքին կպած չէ՞ եղել: Կամ հանկարծ մեկը շքոթի՞ սափրիչին, սա էլ իր ածելով ընկնի կոկորդիզ վրա ու... լավ է շարունակեմ:

Սափրանոցի շորս պատի երկայնքով, հայելիների առաջ կանգնած են ուրիշ մի քանի սափրիչներ:

Նրիտասարգ տղաներ են: Անհոգ ասում-ծիծաղում են: Պրոֆ-միուսթյան հոտը գալիս է վրաներից: Տեղկոմի հարցեր: Կոուպե-րացիա, ակումբ, կինո...

Քաղաքավարություններ են անում.

— Համեցեք: Ներեցեք: Կկամենայի՞ք պուդրի:

Կամ՝ կատեգորիկ հրամայականներով.

— Ժամը շորսից առաջ: Եվ ոչ մի կերպ չի կարելի: Պրոֆ-միուսթյունը մեզ թույլ չի տա:

Մեկ-մեկ էլ երեսդ կտրում են.

— Ներողություն, իսկույն կախտահանեմ:

Բայց նա լուռ է ձկան պես: Հասակավոր սափրիչ է: Կուզե բարձել, կյանքի ծեծը կերել, հիմի գլուխը կախ իր գործին է:

Եվ հերթի գորությունամբ ես նստած եմ ահա նրա բազկաթոռին: Զրակալած խոշոր աչքերը աչքերիս մոտեցրած՝ մի հիվանդ բարի ժպիտով ինձ է նայում.

— Խուզե՛մ:

— Այո: Եվ... ածիլեցեք:

Գործի է անցնում:

Շատ մեղմ է, շափազանց փափուկ: Այնպես զգույշ է շորս կողմդ պտտվում, կարծես ոչ թե միայն դու ես մի փխրուն արա-րած, այլ ավելի ինքը, որ կարող է փշրվել:

Ժպտում է յուրովի:

Խոսում ենք. բայց հատընտիր:

— Պրոֆմիուսթյան անդամ եք:

— Անդամ ենք:

Իհարկե, ծանր արժանապատվություն:

Արդեն մտել է իր դերի մեջ:

Զի խուզում — ծես է կատարում, նվիրագործում է, արձանագործում:

Եվ իր արհեստի ինչ-որ մաներներն ունի: Աչից ձախ, ձախից աչ անցնելիս մի տեսակ սպեցիալ ժպիտներ, որոնց նշանակու-թյունը կապված է մի անվերծանելի միստիցիզմի հետ:

— Վարպե՞տ եք:

Գլխով մի երկարավուն «այո» է անում վերից վար:

Նրևում է, որ արժանապատվությունից ցած է համարում այդ «այո»-ն խոսքերով ասել:

Արդեն մկրատը սողոսկում է ծոծրակիս վրա: Բայց — դա օրենք է հին — մին կպչում է, հազար շրթաշրթակում: Մեջը բան չկա:

— Ընկերներդ էլ պրոֆմիուսթյան մե՞ջ են:

— Սայուզի մեջ են, ամա վարպետ չեն:

— Մի՞թե վարպետ չեն:

Իր արհեստին հատուկ մի բազմադեմի ժպիտ է սմբում նրա դեմքին մի պահ և ապա.

— Ո՞նց կարան, որ վարպետ ըլեն:

— Հետները ո՞նց եք:

— Յուլա ենք գնում:

— Ակումբ գնո՞ւմ եք, դասախոսություններ լսո՞ւմ եք:

— Գնում ենք, ոնց չենք գնում. ամեն բան ոնց որ իր կարգն ա, անում ենք:

— Դե լավ է, որ թե՛ դուք, թե՛ նրանք պրոֆմիուսթյան մեջ եք: Միասին ձեր գործը առաջ կտանեք:

Նայում եմ իրան — չէ — բաներ կան մեջը: Արդեն իսկ իր

ճերմակ զգեստավորման մեջ մնացորդ կա ինչ-որ արևելյան մի, հանգիստավորութեան:

— Մկրտաներն ու ածելիները սրբո՞ւմ եք:

Կարծեմ դրական մի բան է ասում:

— Իսկ ձեր երիտասարդ ընկերները, ինչպե՞ս, նրանք էլ սրբո՞ւմ են:

Մի բարի կոտրած ժպիտով.

— Է, սրբում են, ամա (ունքերը վեր է քաշում) խամ են, բանի ոլորը շեն իմանում: Ածելի-մկրատ սրբելը որ տերութունը կարգադրում ա, էդ ամենը նրանց համար ա ասած: Թե չէ՛ խոսքի օրինակ՝ իմ ձեռից իրա օրումը մարդ չի վնասվի:

— Ինչո՞ւ:

— Էն պատճառի որ՝ քառասուն տարի ա էս գործի միջին եփվել ենք: Ինձ համար ի՞նչ նշան:

Ու կամաց-կամաց պատմում է: Բաբու, Գանձակ, Թիֆլիս, Բորժոմ հազարավոր մարդիկ անցել են նրա ածելի տակով: Մաշի է ամբողջ բյուրոկրատիան, բուրժուազիան, ազգային դեմքերը, ամբողջ ինտելիգենցիան:

— Պատերազմի տարին Բաբվի վոկզալի նաշալնիկը, իմ լավ բարեկամն էր, — ինձ բերեց ու դրեց (չբախտած աչքերը ժպտում են, ձայնը քաղցրանում է) վակզալի պարիկմախեր: Ինքն էլ մեկ լավ էնպես պայծառ մարդ էր (ձեռքով ցույց է տալիս):

Եվ երազում է ժպտում:

Մեր խոսակցությունը մտերմական ձև է ընդունում: Բայց խոսելու մի տարօրինակ եղանակ ունի:

Օրինակ՝

— Շա՞տ մնացիք Բաբվի կայարանում:

Ականջիս փսփսում է.

— Երկու տարի՞, — կրկնում եմ ստուգելու համար. թե արդյո՞ք ճիշտ չէ՞ր, որ անմեղ բան ասաց և ծածկելու կարիք չունեիր:

— Հա, երկու տարի, — կրկնում է նորահասրի ամոթխած, բայց գավադրական մեղմությամբ:

— Էն ա, որ Ադրբեջանի տերությունը եղավ, ես ու ախպեր եկանք Թիֆլիս: Մի լավ մոսին թվանք առա ես: Ախպերս ու ես էս թվանքը բանդեցինք, շորերի մեջ լավ փաթաթեցինք, գրինք սը-

դուկը: Առավոտը գնում էինք գործի (ձայնը ցածրացնում է), իրիկվան գալիս էինք տուն:

— Գալիս էիք տո՞ւն:

— Հա, — ասում է դարձյալ կոնսպիրատիվ ձայնով:

Ձեմ հասկանում ինչու է անում այսպես:

— Գալիս էինք տուն, մեզ համար քնում: Ու էն ա էդ թվանքը միշտ էնտեղ, սնդուկի մեջ կար: Լավ, փառավոր, ինչպես ամեն բան կարգին: Ես պարիկմախերի մոտ էի, ախպերս էլ «ոտի վրա աշխատում էր»:

— Բիրժո՞ւմ:

— Բիրժում, Սալդատսկի բազարում, բան: Ազգային գործումն էլ կար:

— Այս, կուսակցական էր:

— Կուսակցությունի մեջ էր, կամավոր գործ էր եղած իր ժամանակին:

— Ֆրոնտո՞ւմ եղել է:

— Էն ա էդտեղ եմ գալիս:

Հա:

էսպես պարիկմախություն էի անում: Վերջը ախպերս ասավ, որ պետք ա գնանք: էն ա, հատիսովի Հայաստանի ժամանակը ախպերս ու ես մեր թվանքը վերցրինք ու էնպես սնդուկով տարանք Երևան: էնտեղ իմ ախպերը մի քիչ փող ուներ, բերինք խանութ բաց արինք մեյդանի վրա:

Շատ մեկ երևելի առևտուր կար: Ամերիկայի կաթը, լավ բյազը, ֆրոնտի ապրանքը, բրինձը, ամեն բան, ոնց որ իրա կարգին: Առավոտը գնում էինք դուքան, իրիկունը գալիս տուն: Հա:

էդ թվանքն էլ էնքան լավ, փաթաթած թախտի տակին, դայիմ պահում էինք:

— Ախ, թախտի տակին էիք պահում:

— Հա, բա՞ս (շատ լուրջ) պահում էինք ու էնպես ամեն բան լավ իրա կարգին:

Վերջը Ձանգիրասարի պատերազմը որ ընկավ՝ ախպերս խանութը մեծացրեց:

— Ձանգիրասար գնա՞ց:

— Էդտեղ եմ գալիս: էդ ժամանակ չալթուկը, բրինձը, ապ-

բանքը շատ էժանացավ: Էն ա, ախպերս էժան առնում էր, ծախում էինք ու...

— Նղբայրդ կովին մասնակցե՞ց:

— Էնպես որ, բաներ շատ եղան: Ու էսպես մի քանի ամիս որ անցավ, ախպերս դուքան բազարին վերջ տվեց, ասավ զնանք Քիֆլիս: Էն ա, վերջ տալն էր, եկանք Քիֆլիս, էտ թվանքն էլ (ողջունալից ժպտում է) էնպես լավ երևելի փաթաթած բերինք մինչև Քիֆլիսի վակզալը: Էստեղ մենշեկները եկան, որ թվանքը բռնեն:

— Բռնեցի՞ն:

— Չէ, չբռնեցին: Ու էսպես անփորձ թվանքը բերինք իմ քեռու տունը, էնտեղ վեր եկանք ու... (ձայնը իջեցնում է) իմ քեռու տանն էլ ապրում էինք:

— Մոսինն ի՞նչ արիք:

— Մոսինը ծախեցինք:

— ...

Բայց նա շարունակում է ավելի քաղցրաձայն, ինչպես մի արևելյան սրտառուչ սիրավեպ:

— Էն ա, էդպես եկանք նոր գործի մտանք Քիֆլիսում: Էդ ժամանակները բալչեկությունն էլ ընկավ ու ախպերս դուքանբազարը թողեց:

— Թողե՞ց:

— Հա:

Նոր նկատեցի, որ մեր խոսակցությունը աննկատելիորեն դարձել էր ինչ-որ վերին աստիճանի վտանգավոր մի կոնսպիրացիա:

Վախենո՞ւմ էր, ինչ է:

Բայց «ցենզուրական» տեղերը բավական բարձր էր խոսում: Ինչո՞ւ էր անմեղ, հիմար տեղերը ձայնը իջեցնում:

Հիմի բանն այն էր, որ իմ դրությունն էր դառնում տրագիկոմիկ: Կարծես ինչ-որ մի սարսափելի դավադրությունն էս մասնակցում:

Բայց վարպետս ախորժակի եկած տարվել էր իր պատմությամբ:

— Էդ առաջին տարին քիչ դժվար էր: Չայ, շաքար չէր ճարվում, Ամա հիմի ապրանքը էժանանում է ու...

Չայնը ուզում էր ցածրացնել:

— Բարձր խոսեք, ի՞նչ կա ցած խոսելու:

— Ես էլ էդ եմ ասում:

Բայց ես ուզում էի վերջ տալ:

— Զիտկայում եղե՞լ եք:

Ինչ-որ մի բան լիոտաց, որից հասկացվեց, որ դեռ չի եղել Հերթը հասնում էր ածիլվելուն: Գնաց տաք շուր բերելու:

Ուրիշ տագնապ:

Անպատճառ ածելին կեղտոտ է, ու վրձինը պիտի քսի շուր-թերիս:

Ի՞նչ անեի: Հրաժարվե՞մ:

Բայց արդեն բթամատը սավանի հետ խոթում է օձիքս ու բկիս արանքը: Ուշ է: Ուստի և ինձ հանձնում եմ նախախնամության: Ես փորձում եմ մի փոքր ինիցիատիվ վերցնելու:

— Գիտե՞ք, այնպես սրեք, չկտրի: Երեսիս մորթը կակուղ է:

— Հա, ըլում ա: Կակուղն էլ ա ըլում, կոշտն էլ:

— Շուտ-շուտ ե՞ք սրում ածելիները:

— Ածելիի տեսակը գիտե: Կա որ՝ զագրանիչնի ա: Ընդրա սրելու հանգը ուրիշ տեսակ ա: Կա որ՝ դովմյեննի ա: Էն էլ ուրիշ տեսակ ա սրվում: Նոր զագրանիչնի էլ կա: Ընդրա ոլորքն էլ մեկ ուրիշ ջուռա ա:

— Լավ, հիմի ձեռքինդ այս բոպեիս ո՞ր տեսակիցն է:

Ինչպես ոսկերիչը մի հազվագյուտ բանվածք ցույց կտա. —

— Էս մեկը հին քյոհնա ածելի ա:

— Ասել է, որ լավ սրեք՝ չկտրի:

Իսկույն շպտասխանեց:

Մի ուրիշ հարց էլ տվի.

— Այդ ածելին լավ սրեո՞ւմ եք:

Ունքերը վիր քաշեց ու շատ լուրջ ձևով բացատրեց.

— Էն մարդը որ վարպետ ա՝ բանի ոլորքը նա գիտում ա: Այ, էս իմ ածելին (կարծես սկիհ է ցույց տալիս, այնպես է մատները շոտում) էս իմ ածելին սրբած շրբած դիփ մին ա: Իսկի մեկ ահալու բան չկա իմ ձեռքին:

Էն... Աֆանասիյ Եփորիչ Կարակոզովը հո ճանաչո՞ւմ ես, էն սուղեբնի պրոկուրորը որ էր: Մեկ շատ երևելի, կոխտա վիզով մարդ էր: Երեսին մին շատ խալեր ունիր: Այ, ընդրա երեսը վեք

անկը մեկ խլապոտնի բան էր: Ամա ես էնպես մի հանգի վեր էի
անում որ... շատ մեկ երևելի:

Եվ հայելու մեջ երևում էր, որ վարպետս ինչպես էր մտել իր
արհեստի իսկական պոեզիայի մեջ:

— Իբր ժամանակին՝ էլ պրոկուրոր, էլ կազնաշնչի, էլ վար-
ժապետ չեմ թողել ամենքի երեսը վեր եմ արել... (հիշում է, ժրպ-
տում յուրովի) էն սուղերնի պրիստավ Մառտոզովինը... ո՞նց չէ,
լավ, էնպես իբր կարգին:

— Սպասեցե՛ք. ներողություն, մի փոքր զգուշ:

— Իմանում եմ:

— Չե՛ք կարի:

— Վախիլ մի: Ո՞նց ա կարելի, որ կարեմ:

— Բայց բան է, աշխարհ է, պատահեց:

— Վարպետը չի կարա կարի:

— Շատ էլ վարպետ եք. որ կարեց, ի՞նչ կասեք:

Կանգ առավ ու ամելին ձեռին արձանացավ: Ապա, հանքերը
վեր քաշելով, այս անգամ լուրջ եզանակով իրահանգեց.

— Կա վարպետ. ամա կա վարպետի վարպետը: Էս ամելին,
որ էզ քյոհնա վարպետի ձեռին լինի՝ իբր օրումը չի կարի:

Օրհնք չի:

Եվ աչքով նշան արավ իր երիտասարդ բնկերները կողմը:

— Այ, բնարանք. որ սուղերի մեջ են. հենց դիտում ես ամեն
բան կարա՞ն սովորին: Անմեղ երեխեք են:

Այ ժպտում է հեղինակավոր ու հովանավոր ժպտով:

— Հին վարպետը որ կա՝ ամելիի խափաթը ես ա գիտում:

Ախր ամելին որ կա՝ ամելի ա: Անելիի շնչն էլ ամելի կա:
Այ, էս իմ ամելին կաշա ա՝ ամա փափուկ պիտի ամելին: Էն մե-
կեր (աչքով ցույց է առելու) փափուկ ա. ամա կաշա պիտի ամե-
լին: Քար շահած ամելիի հանգն աչքիլ ա. ամա կա ամելի. որ
կաշի ա տեսած ըլում. նրա հանգն էլ մեկ աչքիլ տեսած երևելի
ա...

Յվ զարհուրանք — կարեց... Եվ հիմնավորապես:

Վեր թառ:

— Էէէ... տեսա՞ք սեզ կարեցիք:

— Հա, ըլում ա:

— Ըլուման ո՞րն է: Մա ի՞նչ բան է...

— Հաջաթ չի: Բամբակը կորրոկով լավ ընպես կգնեմ վրան,
էն ա անվնաս իրա համար կանցնի: Իմ կտրածիցը մեկ վնաս չկա:
Ընդրա փրա տեղը կա, յա թե չէ՝ դամարը: Էզ տեղերքը որ չկտրես՝
էլ հաջաթ չի: Էն պատճառի որ...

1925 թ.

ՀԵՌԱԳԻՐ

Նապոլեոն Կորկոտյանը Թիֆլիսում հանդիպել էր Երևանից
եկած Քանկազիզ Վուվունիկյանին, սիրահարվել էր և առաջարկու-
թյուն արել: Քանկազիզի ծնողներն ու եղբայրը տվել էին իրենց
համաձայնությունը և որոշել ամուսնությունը կատարել Երևանում
անցյալ աշնան:

Նապոլեոնը շատ էր վառվել Քանկազիզի սիրով և առաջին
ամիսները նամակներով զեղում էր այդ սերը, բայց քանի զնաց,
այդ սերը այնքան թնդացավ, որ էլ նամակով անկարելի էր հա-
ղորդել:

Նապոլեոնը սկսեց հեռագրով խոսել իր սիրո, ինչպես ասում
են, առարկայի հետ:

Քանկազիզն էլ իր հերթին անցավ հեռագրի ձեռին: Այնպես որ՝
երկու սիրահարների համբույրները տաք-տաք հասնում էին և
հրամցվում ըստ պատկանելույն:

Գործնական էլ բան էր: Որովհետև լավ որ մտածես, կանա-
նես, որ սիրո համբույրը թոնրի հացի պես բան է — քանի տաք է՝
կուտվի, սառավ թե չէ...

Բայց երբ է տեսնված, որ Ռումեո-Կորկոտյանը և Ջուլիետա-
Քանկազիզը կարողանան մի «հալալ» համբուրել իրար:

Որովհետև շատ էլ Նապոլեոն Կորկոտյանը սիրում է Քան-
կազիզ Վուվունիկյանին: Դա էն չի նշանակում, որ հեռագրատան
աշխատակիցներն էլ պետք է սիրեն:

Եվ ահա հեռագիրներն սկսեցին տեղ շահանել:

Թե ինչպես կարող է ենթադրել Նապոլեոն Կորկոտյանը, որ
իրեն չի սիրում Քանկազիզ Վուվունիկյանը: Ենթադրեց, որ զնա-
ցել են էջմիածին, այդ պատճառով էլ չի հեռագրում պատասխան

համբույրը: Ոչինչ, կսպասի: Զանը սաղ ըլի Թանկազիզի, թող գնա ման գա, սիրտը բացվի:

Դա է գլխավորը:

Հեռագրում է նաև Թանկազիզը: Հեռագիրը տեղ չի հասնում:

Դե ինչպես կարող է ենթադրել Թանկազիզ Վուվունիկյանը, որ իրեն չի սիրում նապոլեոն Կորկոտյանը: Սա էլ ենթադրեց, որ իր սիրո, ինչպես ասում են, առարկան գնացել է Կախեթ գործով կամ զբոսնելու և ժամանակ չունի ուղարկելու հերթական համբույրը: Ոչինչ, կսպասի:

Եվ սարքեցին Թանկազիզի ծնողներն ու եղբայրը քեֆ մեծ: Եվ հրավիրված էին բոլոր բարեկամներն ու ծանոթները: Կերան, խմեցին, պարեցին, երգեցին և քեֆի ամենահանդիսավոր մոմենտին թամազան առաջարկեց հեռագրով խմել նապոլեոն Կորկոտյանի կենացը: Կազմեցին հեռագիրն այսպես.

«Բոլոր բարեկամներով, ազգականներով ու ծանոթներով խմում ենք սիրելի նապոլեոնի թանկագին կենացը: Ուռա...

Բարեղամ, Ռոզա, Թեաթորոս, Ժոռա, Մկրտիչ, Թանկազիզ Վուվունիկյաններ, Զորաբաբել Պանիրյան, էդվարդ Բոշայան, Թոշնիկ Բաղդասարյան, Սաշա Զարխչյան, Սվետլանա Տեր-Մկրտչյան, Ռոզալիա Յունկուշյան...

Եվ այլ բարեկամներ, ազգականներ ու ծանոթներ»:

Հեռագիրը տարան հեռագրատուն, և ինչպես մեծ մասամբ հանկարծ պատահում է՝ տեղ չհասավ...

Նապոլեոն Կորկոտյանը տեսնելով, որ լուսթյունը երկար տեղեց, մի հեռագիր ևս տվեց Երևան:

Ոչ մի պատասխան:

Թանկազիզը ևս հեռագրեց նապոլեոնին. թե ինչ է պատահել սրան: Ոչ մի պատասխան:

Եվ սրտմտեց նապոլեոն Կորկոտյանը Թիֆլիսում՝ շատանալով համբույրի պատասխանը Թանկազիզ Վուվունիկյանից, և պատահեց զործ մեծ.— հեռագրեց երրորդ անգամ:

Ոչ մի պատասխան:

Սկսվեց կասկածների էպոխան: Զլինի ուրիշին է սիրում նապոլեոն Կորկոտյանը, չլինի ուրիշին է սիրում Թանկազիզ Վուվունիկյանը:

Եվ ահա նապոլեոն Կորկոտյանը՝ Թիֆլիսում և Թանկազիզ

Վուվունիկյանը՝ Երևանում սկսեցին մտածել, որ լավ կլինի անցնել զործնակամին: Հանդիպել և ամուսնանալ: Մանավանդ որ՝ պայմանագրված աշունը հասել էր, և օրը մոտենում էր: Հոկտեմբերի 1-ը:

Երևանից Թանկազիզի եղբայրը՝ Մկրտիչը հեռագրեց այսպես. «Պատրաստվում ենք հոկտեմբերի 1-ին և սպասում քո գալըստյան:

Մկրտիչ Վուվունիկյան»:

Ով զարմանք: Հեռագիրը տեղ հասավ: Ուրախացավ նապոլեոն Կորկոտյանը, ներեց Թանկազիզին և նրա հարազատներին, գնեց նոր շորեր, փողկապներ, կոշիկներ և իրերը կապեց: Եվ այն է՝ հայելու առաջ կարճ բեղերն էր սրում, որ շեմողանը վերցնի ու ճանապարհ ընկնի Երևան՝ հայրը հանկարծամահ եղավ: Արի ու էջը ցեխից հանի: Ուղտի պարն էլ կամուրջի վրա կբռնի: Ծարն ինչ: Հեռագրեց Երևան այսպես.

«Հայրս վախճանվեց, սպասեցեք միառժամանակ: Բոնապարտ Կորկոտյան»:

Հեռագիրը տեղ չհասավ...

Եվ ահա Երևանում սեպտեմբերի վերջի օրը սպասում են նապոլեոն փեսացուին:

Զերեաց ո՛չ փեսացուն, ո՛չ էլ հեռագիր կամ նամակ: Հարսանիքը հետաձգեցին և հեռագիր տվին, թե ե՞րբ է գալու, ի՞նչ պատահեց:

Ոչ մի պատասխան:

Անցնում է մի շաբաթ: Հեռագիր: Ոչ մի պատասխան: Նապոլեոնը, որ հոր թաղմանն սպասում էր իր Թանկազիզին կողմից մարդ կամ հեռագիր, նույնպես մնաց վիրավորված կացության մեջ: Եվ որոշեց այսպես. քանի որ իր ասպագա աներանք պատշաճ պարտքը չկատարեցին՝ ինքը այլևս առաջինը խոսելու պարտավոր չէ: Թող նրանք խոսեն:

Վիրավորվեցին նաև Թանկազիզները: Եթե իրենց փեսացուն ոչ գալիս է, ոչ էլ լուր տալիս՝ կսպասեն: Թող առաջինը փեսացուն ցույց տա ուշադրության նշանները:

Անցավ մի քանի շաբաթ, նապոլեոնը, որ այսպես թե այնպես

սիրում էր Քանկազիզին՝ վճռեց ինքը խզել լուծվունը և հեռագրեց այսպես.

«Эривань, Мкртичу Вувуникяну. Завтра выеду ночным, встречайте, Наполеон Коркотян».

Եվ առանց պատասխանի սպասելու վերցրեց շեմոդանն ու ճամփա ընկավ դեպի Երևան:

Քանկազիզին ամուսնացրել էին քաղաքում հայտնի փեսացու Վիկտոր Անտերյանի հետ:

Ահա թե ուր է հասնում մեր հեռագրատան ծառայողների անմեղ մի սովորույթը — հեռագիրը տեղ չհասցնելը: Նրա հեռագիրները գեռ գնում են, և նրանք տեղ կհասնեն և մի օր ցրիչը կմտնի նրանց բակը ու կկարգա բարձրաձայն. «Քանկազիզ Վուվունիկյան» և այդ ժամանակ Քանկազիզ Անտերյանը երեսան գրկին գուրս կգա պատշգամբ և քմծիծաղով կստանա քարթու համբույրը նապուխտն Կորկոտյանի, որը շունեցավ իմաստություն ոտով և անձամբ տանելու իր հեռագիրները, հեռավոր սերը... Աշուղ Ղարիբի պես:

Երևի ընթերցողները ինձ հետ համաձայն կլինեն, որ մեծ մխիթարություն չէ հեռագրի ստացականները ձեռքին գնալ Վուվունիկյանենց հարսանիքը և ծեծ ուտել: Ես ընգտնում եմ, որ ամբողջ սովետական հասարակայնությունը Բոնապարտ Կորկոտյան չէ, և միշտ փեսացուական հեռագրեր էլ չի տալիս առ խանումն Քանկազիզ: Բայց շատ կարևոր անձնական ու, որ գլխավորն է՝ հասարակական նշանակություն ունեցող հեռագրերն էլ երբեմն կամ կորչում, կամ ուշանում են շնորհիվ հեռագրատան բյուրոկրատների չերմեռանդություն: Ես ձեռքիս ունեմ ստացականներ կրկու հատ ինձ ուղարկած հեռագրիների, որ ահա վեց ամիս է չեն հասնում ինձ: Ես սպասում եմ: Եվ ափսոս, որ սայլով չեն ուղարկել, որովհետև սայլը կարծում եմ Երևանից Թիֆլիս և ես՝ վեց ամսում, անշուշտ, կհասնեմ:

Չէ, գուր չեն ասել հեռ-ա-գիր...

1925 թ.

Պատին է ամրացված նա, գանգատների արկղն իբրև մի հնադարյան ամրոցի պատ ներկայացնող բարելյեֆ կամ իր ռան վերև շեղակի ծածկ արած և փեղկերը կողպած մի խանութ, որի տիրոջ մուրհակը բողբոջ է գնացել բանկի կողմից:

Հետզհետե մամուռ, հնամյա մատուռ է դառնում, որի վրա ժամանակի ժանգն ու փոշին գալիս նստում է, ուր տաքին մի անգամ միայն գուցե ուխտավոր բազմությունը գալիս պատերին մոմեր է կպցնում, քարերը մրրկում և ապա հեռանալով լքում:

Անվերծանելի, կիսաընթեռնելի գրություններ կան վրան, դեղնամած թղթի երեսին — «մագաղաթ գոգցես» փակագրեր, — անհիշելի ժամանակների հիշատակարան արդյոք, թե՛ ուրարտական մի որևէ Արգիշտի Թագավորի արձանագրություն, որի ընթերցումն արգեն վաղուց մասնագիտական մի կնճիռ է: Օրենքների՝, թե հրահանգի մի հատված, որ հնէաբանական-ազգագրական հետաքրքրություն ունի:

Երբեմն ինչ-որ ամբարի տպավորություն է անում, ուր պահված է տան անպետք իրեր, որ մի անգամ տնեցիք որոշել են ծախել կամ վառել, բայց ժամանակ չեն գտնում: Եվ ամբարը մնում է փոշեթաղ թեև, բայց անխախտ՝ իր տեղը:

Ինչ կա իսկապես այդ փոքրիկ շինություն մեջ: Արդյոք խավար և դատարկ տարածություն, թե որևէ իր: Վրայի փոշին մատնում է նրա անվրդով և մոռացված գոյությունը: Թղթերի պահեստ է երևի, կամ ավելի ճիշտը՝ ձեռագրերի թանգարան, ուր խնամքով պահվում են ֆակսիմիլներ երևելի և աներևույթ մարդկանց:

«Այսօր ճաշեցի, և կերակուրը սրտիս թթվեց: Ինչ է մտածում այս մասին ճաշարանի վարչությունը: 1925 թվականին մայիսի 3»:

Ստորագրությունը չի կարդացվում:

«Ահա մի ամիս է ճաշում եմ այստեղ և չեմ գտնում դանձիք-չրավիբում եմ ճաշարանի վարչության ուղարկությունը:

1925 հունվար: Ես»:

«Ինչո՞ւ ճերմակ լուբիա, տոմազես և կանաչ բիրթար չի գտնվիր այս ճաշարանի մեջ: Նմանապես վարչությանը կհանձնարարենք հետևելու, որ սուրճը ջեզվեներու մեջ եփեն: Տիրատուր Սեմարճյան»:

Հին, մոռացված փողոցի կամ «ջանգալ» անսպասելի ծանոթի պես աչքովդ է ընկնում այդ արկղը և ասում ես. «Տես է՞, սա կա՞ գեո»:

Բայց ճաշարանի կյանքը գնում է իր կարգով:

— Ստեփան, էս ինչ տեսակ կատլիտ էր: Յուղը անպիտան, ծա՞նր:

Մառայողը ծիսական մեքենայությամբ լսում է թթված հաճախորդին և ափսեները հավաքում՝ հովվերգորեն հանգիստ: Կարծես այդպես էլ պիտի լինի: Միայն աչքի տակով մտիկ է տալի հաճախորդի թթված դեմքին և սպասողական դիրք է բռնում, որ նա վերջացնի իր գանգատների ցիկլը:

Վերջացավ թե չէ՝ Ստեփանն անուշ համակերպությամբ և զըրմականորեն լուրջ հեռանում է՝ տանելով ափսեները:

Ամեն բան այդպես պիտի լինի իբրև: Եվ իսկապես: Օրական մի հարյուր անգամ գանգատների արկղի կողքով անց է կենում կառավարիչը՝ մտմտալով ընթրիքի պատրաստության մասին: Այդ արկղի մոտով անց են կենում հաճախորդները: Բուժետում մշտապես իր գործին է ծառայող կինը:

Նույն կերակուրը, նույն մարդիկ, նույն ծանր յուղի անախորժ զգացումը քիմքերի վրա և նույն գանգատների ծիսական կրկնությունը:

Ինչպես, օրինակ.

— Այսօր էլի քամի է:

— Հա՛:

Եվ հետզհետե ճաշարանի կյանքը մտնում է գործի — խոհանոցն իր վատ կերակրի լաբորատորիայով, ծառայող կինն իր ձվածեղի ժպիտով, հաճախորդն իր ավանդական թթվածություններով:

Եվ միայն գանգատների արկղն է, որ անցյալ տարվա ճանճի պես կպել է պատին, չորս կողմը փոշու բակ արած՝ մի նանիթ փիլիսոփայություն փչելով պատից:

Քունդ տանում է ճաշարանի գաղջ օդի մեջ, որին խառն են անվերծանելի ծագման ինչ-որ հոտեր: Աչքերդ փակվում են:

— Եզրայր ջան, մի կոպեկ տա՞ս:

«Ենուժան» է, կանգնել է առջեզ պարտատիրոջ պես:

1925 թ.

ՂԱՅԼԱՆԻ ԶՐՈՒՅՑՆԵՐ

էսօր, ընթերցող, մի քիչ քեֆս լավ է: Հարբած չկարծես: Տրամադրությունս այն տեսակներից է, որ չեմ կարողանում ման գալ այս Արթվանում: Գնանք մի քիչ ներքև, մեյդանի կողմը, նստենք մեր այվանում, թիկն տանք մի-մի մութաքիթի, զրույց անենք:

Ասում է՝ անցյալ տարի մարդու մինը մի տան հիմքը փորելիս է լինում, մին էլ բացվում է մի մառան, անկյունում մի խորշ, որի մեջ գտնում է...

— Ոսկի՞...

— Ոչ, գտնում է մի կարաս, վրան ծեփված մի խուփ: Քանդում է ծեփը և տեսնում է միջին...

— Ոսկի՞...

— Տեսնում է միջին մի փոքրիկ գանձանակ: Կոտրում է և մեջը գտնում է...

— Ոսկի՞...

— Ո՛չ, մեջը գտնում է մի փտած փալաս, մեջին մի ուրիշ փալաս, վերջը մի դեղին թղթի կտոր, որի վրան գրված է լինում. «Ղայլանիդ վրա երեք կրակ դիր»:

— Տարօրինակ և հիմար բան չէ՞: Ախր իսկապես ինչի է թաղել կարասը, ինչի՞ է թաքցրել թղթի կտորը: Եվ վերջապես, իբրև թե ի՞նչ — «ղայլանիդ վրա երեք կրակ դիր»:

— Ահա դրի երեք կրակը: Հետո՞:

— Բայց հետաքրքիր է, թե ի՞նչ է նշանակում այդ խոսքը:

— Մի շտապիր, կիմանաս: Ես էլ մի օր մտքի ծովն ընկա, ուզեցի գտնել էդ խոսքի իմաստը: Եվ վերջը գտա, կարող է պատահել, որ էդ կարաս թաղող մարդն ուղեցել է ձեռ առնել: Ո՞վ է իմանում: Բայց ինչու էսպես, չէ, ասենք՝ օրինակ՝ էդ մարդը ուզեցել է մի պատահական ավանտյուրիստի դաս տալ: Մտածել է, թե երևի կգա, կփորի, կփորփրի, հանկարծ բահը կխփի կարասին ու ազահ ուրախությամբ վրա կպրծնի, «ոսկի է»: Բաց կանի գանձանակը, հետո փաթաթանը, սիրտն անհամբերությունից կճաքի ու վերջապես վերջին փաթաթանը բաց կանի — հը՛, ոսկի՞ է: Ո՞նց չէ, բուռդ դեմ արա:

Ձէ, բարեկամ, դեռ շատ կա մինչև էդ ոսկին: Խելքդ ո՞ւր է: Ախր ո՞նց ես ուզում: Ես աշխատեմ, դառը քրտինք թափեմ, ոսկին

գատեմ, դնեմ կարասը, դու գաս պատրաստ դոնես, ածես գըր-
պանդ, գնաս քեֆ անես ու դեռ վրաս էլ ծիծաղե՞ս:

Դրա համար էլ մարդն ասում է.

«Ղայանիդ վրա երեք կրակ դիր»:

Դիր, ախպեր ջան, մի կրակ ու ծխիր: Մինչև էդ կրակը կանց-
նի՝ կրքերդ կհանգստանան: Հետո մի կրակ էլ դիր ու ծխիր: Հետո
մտածիր: Մինչև էս կրակն էլ կանցնի՝ ազահությունդ կհանդարտ-
վի: Անցա՞ջ ազահությունդ: Մի կրակ էլ դիր: Ծխիր: Այստեղ խելքդ
տուն կգա: Կմտածես, կտեսնես, որ ոսկի փնտրելով, թաղած կա-
րասներ բանալով, դրա համար շարշարվելով ու վերջն էլ հիաս-
թափվելով փոր չի կշտանա: Խե՛ղ տեղը չէ, խաբվա՞ծ ես, ազա՞հ
ես, վնաս չունի, մարդ է՝ կպատահի:— Ղայանիդ վրա երեք կրակ
դիր»: Ղայանն իմաստություն կբերի: Ծխիր ու մտածիր — մինչև
կհասնես ոսկի իմաստության, չէ թե ոսկու, այս մեկը լավ իմա-
ցիր:

1925 թ.

ՉԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԵՋ

Մարդիկ տարօրինակ և զարմանալի հատկություններ ունեն:

Օրինակ՝ տեսնում ես մեկը հրաշալի հոգևոր է, հայտնի իրա-
վարան, հրաշալի մաթեմատիկոս, ունի առաջնակարգ գրագարան,
մասնակցում է գիտական արշավանքների, գյուտեր էլ ունի արած:
Բայց կնոջը ծեծում է:

Մի ուրիշը երևելի բժիշկ է, դիագնոզների կախարդ, կոնսու-
լտանտների օրենսդիր, անսահման էրուդիցիա ունի ոչ միայն իր,
այլև ուրիշ շատ մասնագիտություններում:

Բայց երբ բաղնիս է գնում՝ ամբողջ մի ժամ գլուխը գնում է
սարսափելի տաք ջրի խողովակի տակ:

Մի երրորդը՝ որակյալ աշխատող է, արեստի հոգին, գործը
գողում է նրա ձեռքի տակ. ամբողջ շաբաթ իրան ուտում, կտրա-
տում է ու գործ է շուռ տալիս:

Բայց շաբաթ երեկո եղավ թե չէ՝ հրացանն առնում է ու թող-
նելով կին, երեխա, ընկեր, ամեն բան, գնում է որսի և միայն վե-
րադառնում կիրակի կեսգիշերին:

Մի չորրորդը՝ տեսնում ես պատվական ընտանիքի մարդ,
բարեխիղճ ծառայող, լավ տնտեսագետ, ընկերության մեջ բարի,
հեղահամբույր, հետո՝ շատ ազնիվ մարդ, ու երբ խոսում ես հետը
կարգին, նորմալ դատում է, շատ կետերում միանգամայն համա-
ձայն ես հետը:

Բայց «գրում է»...

Արդյո՞ք սրանք լավ մարդիկ են: Եվ արդյո՞ք սրանք իրենք
իրենց նման են: Զգիտես. սա հոգեբանները գիտեն: Բայց քերա-
կաններին եթե հարցնես՝ կասեն — սրանց մեջ մեծ տարբերություն
կա: Ես էլ եմ կարծում: Կնոջը ծեծելը, բաղնիսում գլուխը մի ժամ
տաք ջրի մեջ պահելը, որսի գնալը մասնավոր հաճույքներ են: Իսկ
«գրելը» հասարակական: Ահա թե ինչու առաջինները գրվում են
առանց շակերտի, մինչ վերջինը դրվում է շակերտի մեջ:

«Դրում ես», «ծառայում ես հասարակության», «գիտություն մը
ես պարապում», «սպեց» ես, կոպեկ էլ չես պահանջում իբրև
վարձ, պատրաստ ես շարունակ «գրել», «դրամաներ», «վեպեր»,
«բանաստեղծություններ»: Գիշեր-ցերեկ «մշակել», «վերամշակել»,
կամ որևէ գործի «ուղղություն տալ», գործը «դնել» իր «խսկական»,
«գործնական» հիմքերի վրա, «մեքենայացնել» աշխատանքը, —
բայց երբ «սկսում ես», տեսնում ես, որ երկու կողմից ինչ-որ մի
բան խտտացնում է կողքերդ, թե ականջներդ, երկու կողմից աչքեր
են ընկած վրադ, որ քեզ ինչ-որ կասկածի են ենթարկում, ասեմ լի
հեզնում են, թե՛ ուղղակի քեզանից մի բան թաքցնում են:

Դա շակերտներն են:

Դու ընկել ես շակերտների մեջ:

Անցյալ օրը մի «կաշեգործի» կալանավորեցին: «Կաշեի ար-
դյունաբերության համար»:

«Սեփական գործարան» ունենալու համար:

Առանց պատշաճավոր թույլատվության:

Բայց մարդը «սպեց» էր «կաշվի» և լայն մատչատարով էր գոր-
ծը բռնել: «Բանվորներ» չէր պահում, ինքն էր հում նյութը մատա-
կարարում, ինքը մշակում տեխնիկայի վերջին խոսքի համաձայն

և դուրս էր բերում նուրբ, գեղեցիկ և ավելի դիմացկուն կաշի, քան «Կաշվարդինը», քան պետականը: Այդ զարմանալի կաշին այն հատկությունը ուներ, որ մի անգամ հագնելով միշտ մնում էր վրադ: Միայն հագնելով կաշին պետք է շարունակ «ուտես» և «մարսես»:

Պետությունը փակեց այդ «գործարանը» և մեր «կաշեգործը» այժմ ուղղիչ տանն է:

Ասում են Զանգվի ջուրը լավ քիմիական հատկություն ունի կաշվի մշակման համար: Բայց մեր шкурник-ները գործ են ածում ուրիշ ջրեր ևս:

Նրանք ուզում են մրցել պետական կաշվարդյունաբերության հետ, ուստի և իրենց «գործարանները» դնում են «գիտական հիմունքների» վրա: Նրանք իրենց «գործարանները» բաց են անում կոոպերատիվ խանութներում, տնտեսական այլ ձեռնարկներում, դրամարկղների հարևանության մեջ, ուր «կաշին» ավելի լավ է «փափկում», «հաստանում» և «մշակվում», քան Զանգվի վրա շինած պետական գործարանը:

Քայց մի դժբախտություն կա, որ նրանց «ինիցիատիվը» խեղդվում է հենց իր բնում, և մեր այդ «шкурник» կաշեգործները ուղղիչ տանը նստում են «անգործ»:

1925 թ.

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս քանի օրերս էլ էյնշտեյնի թեորիայով եմ զբաղված, ընթերցող:

Գիտության եմ տվել ինձ և զլիափորապես նրա համար, որ ինչպես երևում է, միայն գիտությունը կարող է ազատել մի շարք... ճշմարտություններից:

Այդ էյնշտեյնը դուր է գալիս ինձ:

Դուր է գալիս նրանով, որ ոչինչ հաստատ բան չի ասում: Չի հաստատում, չի էլ հերքում: «Նայած թե» — ասում է, «Ինչի՞ և

ի՞նչ հարաբերությամբ»: Ամեն բան քշում է դեպի հարաբերակա-նություն և քեզ ազատում է գլխից էլ, գլխացավանքից էլ:

Հիմա տարված եմ նրա գրքի ընթերցանությամբ: Ուղղակի թաղվել մեջը՝ դրանից էլ դուրս չեմ գալիս:

Իհարկե, մի քիչ լավ չեմ հասկանում, թե այդ ինչպես է, որ առաստաղից մինչև հատակը երկու ուղիղ զուգահեռ գծեր չի կարելի քաշել:

Իրանք ուղիղ զուգահեռ չեն լինի գործնականում, որովհետև եթե այդ գծերը շարունակենք մինչև երկրի կենտրոնը՝ նրանք կմիանան: Այստեղ մի քիչ կանգ եմ առնում: Բայց վերջն ասում եմ. ինչ անենք, թող այդպես լինի. ի՞նչ եմ կորցնում: Օգուտս ի՞նչ, եթե ուղիղ զուգահեռներ գործնականում գոյություն ունենային կամ ոչ մի տեղ իրար շհանդիպեին: Իմ փողոցի մայթին էլ գործնականի մեջ ուղիղ չէ: Մեկ ընկնում եմ վիճերը, մեկ բարձրանում գագաթները, կամ ուզած վարիչիս չեմ կարողանում իր գրասենյակում պատահել — երբ գնում եմ հարցնում, ասում են նոր գնաց ուրիշ տեղ:

Հետո գիտությունը մի լավ կողմ էլ ունի, որ ամենածանր վիճակից անգամ այնպես է հանում, ուրախացնում, որ զարմանում ես, թե ինչպես այսպես հեշտ ու հաճելի լուծվեց հարցը:

— Անասելի ցավեր ունես աղիքներիդ մեջ, որ երբեմն խփում է ստամոքսիդ, երբեմն մեջքիդ, տաքություն է գալիս վրադ, ճանկըռտում ես բարձերդ ու գոռում:

Գալիս է բժիշկը և ինչ. «ապպենդիցիտ» է, ուղղակի appendicit: Մա ինչ բան է: Դուրս է գալիս միայն հայերեն իմացած տեղովդ նախ և առաջ կլասիկ հին լեզվով հիվանդություն ունես, երկրորդ՝ քառասուն տարի է, որ ո՛չ խոսել, ո՛չ գրել ես լատիներեն, այդ լատիներենն աղիքներիդ մեջ է և մարսել ես օրգանիզմիդ մեջ:

Ուրեմն ես, այս ինչս, այս ինչ գյուղացի. ասենք դուրդուղուլեցիս կամ ճաթողոսնցիս հիվանդ եմ appendicit-ով... Ու մինչդեռ իմ համազուղացիներս, ով գիտե, որ մոլլադուրսունցիները մեռնում են թուրքերեն բառերով, մենք քաղաքում, հիվանդանոցների մեջ մեռնում ենք կուլտուրական լեզուներով և Մ. Աբեղյանի, ու բժշկական նոր բառարանների հայացրած տերմիններով:

Հիմա զբաղված եմ տարածության հարցով:

Չափում եմ մի քանի երկրների, քաղաքների, ավանների և այլն հեռավորությունները:

Մի քիչ դժվար եղավ և բավական ժամանակ խլեց, բայց հաշվեցի և գտա, որ Երևանից Թիֆլիս 500 վերստ է: Հիմա հաշվում եմ, թե՞ Թիֆլիսից Երևան քանի վերստ է:

Դա որ իմանամ՝ ինձ համար ավելի հեշտ կլուծվի այն տանջող հարցը, թե ինչու Երևանից Թիֆլիս նամակը հասնում է 3 օրում, իսկ Թիֆլիսից Երևան 5—6 օրում:

Դա լավ կլինի: Գուցե դուրս կգա, որ Թիֆլիսից Երևան 1000 վերստ է. հանգիստ կսպասեմ նամակի և շեմ ջղայնանա:

Մեր հիմնարկներից մինը (ինչպես ինձ հաղորդեց մի շատ պատասխանատու անձ) փոստով մի ծրար էր ուղարկել Քանաքեռ, որ տեղ էր հասել մի ամսում: Ես պատճառը չէի հասկանում: Նախ մտածեցի, որ երևի տեղը սար է, փոստը դժվար է բարձրանում: Դա չհամոզեց, Հիմա էյնշտեյնի թեորիայով գտա, որ Երևանից Քանաքեռ ոտով 5 վերստ է, իսկ փոստով հինգ հազար:

Դուք երևակայում եք, ընթերցող, մի այսպիսի գրություն:

Սիրահարված եք և ձեր սիրո առարկան Քանաքեռումն է: Նամակ եք գրում ձեր աներայցուհին, թե Կոնդի փողոցներից մեկում ոտս կոտրել եմ, շեմ կարող գալ պսակադրության, կգամ մի շաբաթից հետո, սպասիր: Բայց հիվանդությունը տևում է մի ամիս. պատասխան չկա. ո՛չ նա է գալիս ձեզ տեսության, ո՛չ դուք եք կարող գնալ: Մի ամիս անց վեր եք կենում անկողնից ու շտապում Քանաքեռ: Բայց հենց մտնում եք ձեր սիրո առարկայի փողոցը, ձեր աներայցուհին եք պատահում:

— Նամակս ստացա՞ր:

— Ի՞նչ նամակ. ոչինչ չենք ստացել: Որտեղի՞ց:

— Երևանից, գրել էի, որ ոտս կոտրվել է, ուշանալու եմ մի շաբաթ:

— Այդ մեկը ստացանք:

— Հետո:

— Սպասեցինք մի շաբաթ, որ չեկար, էլի մի շաբաթ սպասեցինք, նամակ գրեցինք, որ եթե էլի ուշանաս՝ աղջիկը հետ կլինի: Տեսանք որ չես պատասխանում, էլ չսպասեցինք:

— Ինչպե՞ս...

— Շողոյին պսակեցինք...

Հիմի ասեք, ընթերցող, ձեր նամակը և ձեր աներայցուհի գրածը գործնականում որտեղ պիտի պատահեն իրար:

Չէ, էյնշտեյնը լավ թեորիա ունի:

1925 թ.

ԿՅԱՆՔԻ ԾԱՄԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Դայլանի գրույցներից)

Հակոբիկի լղար կերպարանքը, թույլ շարժումները, նվազ ձայնը ցույց են տալիս, որ խեղճի գրությունը մտահոգիչ է, պետք է լուրջ քննել մարդու գրությունը, հնար մտածել: Մարդը հիվանդ է պարզապես:

Բայց չգիտես ինչու՞ մարդամեջ դուրս գալիս հենց մոտենում է մի խմբի, ձայն են տալիս:

— Հակոբիկ, ո՞նց ես:

Եվ առանց պատասխան առնելու՝ ավելացնում:— Ինչ լավ կազդուրվել ես, Հակոբիկ:

Ու ամեն կողմից խոսք-խոսքի հետևից.

— Հակոբիկ, եկա՞ր: Հը, ի՞նչ կասես: Չէ, լավ էս, լավ:

— Այ տղա, տեսեք ինչ լավ առողջացել է Հակոբիկը:

— Հակոբի՛կը, հա, շատ լավ է երևում աչքիս:

— Ջանըմ, Հակոբիկն ինչ հիվանդ է որ...

— Հակոբիկի հիվանդությունը մի պատահական բան էր, անցավ գնաց:

— Գնաց ու ոնց գնաց:

— Քե՞ք արա, Հակոբիկ, լավ ես:

— Չէ, էլ շատ մի խոսի, որ լավ լավ ես, է, գնա ու քե՛քիդ ման արի:

— Ճիշտ է ասում, գործերդ լավ են:

Ի՞նչ գործերը լավ: Մարդը շոր տառեխ է գառել, փորք կպել է մեջքին: Մեռնում է: Հակոբիկը լսում է նրանց, լսում, թույլ-թույլ

հետև է ու երկար շարժանալով փողոցում մնալ՝ դառնում է սուս, տնքում է, տնքում ու պառկում:

Հիմի էլ տանը: Բարեկամները.

— Հակոբիկ, պառկե՛լ ես:

— Մրսած ես մի քիչ: Վնաս չունի, քրտնես՝ կանցնի:

— Տո, իհարկե կանցնի, ի՞նչ բան է մրսածութունը: Հենց

վաղը վեր կկենա:

— Զանք, Հակոբիկին ի՞նչ է եղել, որ երկարացնում եք բանը: Ի՞նչ մրսածութուն, ի՞նչ բան — հոգնած է մարդը: Կհանգրստանա, վաղը էլի վեր կկենա:

Սեղանը սարքում են, ու սկսվում է քեֆը:

— Հակոբիկը հենց այս րոպեիս էլ առողջ է:

Զուր է լսում բժշկին:

— Ո՞վ է հիվանդ, Հակոբի՞կը: Տո, մերը չմեռնի Հակոբիկի:

Տասն առողջ մարդ կմաշի:

— Բան ասիր: Ուրիշ բան է Հակոբիկը: Այ, ջանքմսքն Հակոբիկ:

— Հակոբիկ, կենացդ:

— Հակոբիկ, մի էս դոլմից մի փսսե ածենք, լազաթին կեր:

— Խաշ կուզե՞ս, Հակոբիկ:

— Տո, ինչի՞ չի ուտի: Հիվանդ հո չէ: Բերեք:

Հիվանդ չէ: Այսպես են եզրակացնում բարեկամները:

Հակոբիկն էլ ուրիշ տեսակ եզրակացրեց:

Գիշերն ուղղակի մեռավ: Կարճ և ազդու: Կարծես ջգրու: Դե գնա:

Բարեկամներն իրար նայեցին:

Պահո, բանն այսպես էր եղել: Տեսար Հակոբիկ, վայ Հակոբիկ: Այ տղա, էս ի՞նչ բան էր: էս ո՞նց եղավ:

Ոնց պիտի լիներ: Շատ պարզ: Մինչդեռ Հակոբիկի բարեկամները շարունակ զբաղված էին նրա առողջութունը վկայելու խոսակցություններով, փոքրիկ բացիլները կատարում էին բնության գործը, օրենքը: Այն օրենքը, որ ասում է, թե՛ հրե թոքերի մեջ բացիլներ են ընկնում, հրե այդ թոքերը թույլ են, հրե միջոցներ են ձեռք առնում դիմադրելու և միջոցներ ձեռք չեն առնում, հրե գիտեն, և չգիտեն, հրե չեն ուզում գիտենալ և օգնելու փոխարեն

զբաղված են գովելով ու սիրտ շահելով — բացիլները կատարում են իրենց պարտականությունը, և Հակոբիկը մեռնում է:

Ատեիլի բացիլներ...

Ոչ: Ատեիլի շողոքորթություն:

Ահա տեսեք, Հակոբիկի դագաղը մշակի մեջքին դրած տանում են, որ նրան ներփակեն: Ահա Հակոբիկի «բարեկամները» բերանբաց նայում են ու հարցնում.

— էս ո՞ւմ դագաղն է:

— Հակոբիկի:

— Հակոբիկի դագաղը: Վահ, ի՞նչ գեղեցիկ է:

— Լավ, ամուր դագաղ է:

— Արժե, շատ լավն է: Բարով մաշի:

Դե գնա:

Ինչ անի Հակոբիկը. — կյանքն այսպես է ծամածռում բերանը:

Այն օրն էլ մտել էի մի առևտրական հիմնարկություն՝ բանման առնելու: Վճարելու ժամանակ մոտեցա կասսային: Նստած է մի օրիորդ՝ դժգոհ և թթված:

Տալիս եմ միոռուբիանոց թղթադրամ: Նս է տալիս 97 կոպեկ:

Կանգնած սպասում եմ:

— Երեք կոպեկ չկա, — ասում է նա պրոֆիլ նայելով ինձ:

Կարծես թե նա սպասում է, որ ես մանր տամ, ու սխալվեցի բերնից բաց թողի.

— Ապա ինչպես անենք, օրիորդ:

Իսկույն դրամատիկական կերպարանք է ընդունում, բերանն արհամարհոտ ծռում է, հանելով մի 5 կոպեկանոց՝ շարտում է:

— Առե՛ք:

Մի քիչ նեղությունս եկավ: էս ո՞ր դրամատիկական կուրսերն է ավարտել, կամ ո՞ր ազնվազարմ ցեղից է սա, ո՞ր դիրքից ընկել է, ջիզր ունի, և ջիզրն էլ ինձնից է հանում:

Հարգելի ալրաթաթախ օրիորդ: Բանաստեղծը ես եմ, ու բանաստեղծ դու ես դառնում, որ ես քեզ տնտեսագիտության դաս տամ: Ինչի՞ ես շարտում ավելորդ 2 կոպեկը: Սա ուրիշ տեղեր շարտում եմ, որովհետև ես բանաստեղծ եմ: Դու երեք կոպեկը պիտի ետ տաս, որովհետև դու պետության կյանքի մեջ տնտեսագիտության

գիտ հո, և 2 կոպեկ էլ չպիտի շարտես, որովհետեւ դու բանաստեղծ չես: Այս դասն ինձնից չպիտի լսես, սիրասուն օրիորդ: որովհետեւ ես տնտեսադես չեմ և խնդրեմ այդ նազուտուզերը թող, որովհետեւ դու բանաստեղծ չես: (Կրկնիր սկզբից մի տասն անգամ): Եվ ցտեսություն:

1925 թ.

ԵՐԵՎԱՆ

Երևանը լուրջ քաղաք է: Այնքան լուրջ, ինչպես մի բիրդան աղա (հանկարծ աղա): Բայց ավելի ճիշտը մի երեկվա Գալո ափու, որ այսօր իսկական Գալուստ է դառել:

Իհարկե, այդ աղայությունը բախտավորության մտքով, թե չէ գրպանում մի փոքր СКВОЗНОЙ է: Մեր Գալուստն իսկական գեղացի է, մի ժամանակ աղաների ձեռին շորացած: Դեպքն այսպես պատահեց: Եկան թե՛ «Գալո ափու, մուշտուղներս պատրաստիր՝ տղեդ կառավարություն է դառել: Ըստուց գենը դուն ու քու տղեդ ձեր գլխի տերն եք»:

Այդ էր... տղեն կառավարություն դառավ, հորն էլ գցեց իր գործերի մեջ, ու հետևյալ օրը, Գալոն որ դուրս եկավ մեյդան, ամեն կողմից ձեն տվին.

— Աչքդ լուս, եղբայր Գալուստ, տղեդ կառավարություն է:

— Աչքի լսով մնաք, շնորհակալ եմ:

Բայց սարսափելի լուրջ է: Իհարկե թեև լուրջ, բայց և բարի: Հիմի ընկել է մի քիչ անսովոր դրության մեջ: Կյանքը նրան գրել է մեծ խնդիրների առջև: Հիմի գործերը շատացել են: Գործերունի Մոսկովի հետ: Կապիտալիստական Եվրոպայի հետ առևտուր է սկսել: Բաժբակ, կոնյակ, բրինձ է տանում, մահուդ է բերում: Հյուր է գնում, հյուրեր է ընդունում. պետք է հյուրասիրել: Եվ երեկվա Գալոն հիմի ստիպված է գալուստավարի շարժվել: Ռեք փոխել է, համավոր է խոսում, վարվում: Noblesse oblige

(ազնվությունը պարտադրում է): Բայց ոչինչ, մեր Գալոն կարպետը շրից հանում է:

Տղեն էլ, լավ մաշինիստ, գործից հասկացող բանվոր՝ եկավ թե չէ՝ հոր վրա — գլուխը դրստեց, սուլբրի տեղ սապոգ հագցրեց ու հիմի նախկին Գալո ափուն, այսօր ընկ. Գալուստ՝ լավ է, իրա համար կա և իսկի այնուամենայն էլ չի գցում: Դե, իհարկե, շավարի ծնկները կարկատած է, բայց վնաս չունի, բանկոտպի խանութից առած «Ֆարրիչնի» վերարկուի տակից չի երևում:

— Ափու ջան, գնանք բանկոտպից մի շավար առնենք:

— Բան չկա, որդի: Էս տարի յուր երթանք, գալ տարի մայիսի մեկին կառնենք: Տունը շատ պակաս բան կա:

Եվ, իհարկե, երբ հյուրեր են գալիս՝ ընկեր Գալուստը վերարկուով է ներկայանում: Եվ երբ օթախ են մտնում, վերարկուն հանում՝ կարկատանը երևում է, բայց այդ հյուրերն էլ իր նման հոր տղերք են. — շորապանցի Դաթիկոն, ազգամցի Ալին կամ կուբանցի Տիմոֆեյն իրենք գեղացի են և տանու մարդիկ:

Հեր ու տղա աշխատում են:

— Ափու ջան, ես էն մեր վերի հին տունը քանդում եմ: Նոր ձևի բաղ պիտի գցենք, կողքին էլ էլեկտրակայան:

— Դու գիտես, որդի, ինչինները դու, հասկացողը դու, ոնց որ գիտես:

Ինքը Գալոն էլ ժիր գյուղացի է, լավ բաղ է մշակում, արտ է ցանում:

Ահա այսպես հին Ռուսաստանի մի մոռացված ծայրամասի քաղաք Երևանը դառավ մայրաքաղաք: Կինո, համալսարան, մատենադարան, թանգարան, էլեկտրականություն, ջրանցք, բուլվար, թատրոն և հիմնարկություններ, հիմնարկություններ...

Գնանք, ընթերցող, մի քիչ ման գանք մեր Երևանի փողոցներում: Ահա այս նախկին «Առևտրական» փողոցն է, որ հիմի «Աշխատանքի» փողոց է, «Շուկայի» փողոցը — «Մարտի փողոց», «Անգլիական» փողոցը — «Կոմունարների» փ., «Քիֆլիսը» տվել են «Սայաք Նովային»: «Բաղնիկի» փողոցը «Մ. Գորկուն»: Բաֆֆին իր պարսկական քարվանսարայումն է: «Շարիաթին» հակադրված է «Օմար Խայամը»: Սա սկզբունքն է: Նորոգված է և նորոգվում է նաև փողոցների դիրքը: Գնանք Արովյան փողոց: Մի ժամանակ հեռվից այս փողոցին նայողը պիտի կարծեր, թե ամբողջ հայ ազ-

զը կաղ է, այնքան որ մայթերը դար ու փոս ունեին: Հիմի աչքդ խփիր ու գնա:

Բայց ուրիշ տեսակ փողոց է: Եթե որևէ մեկին ձեր ազգականներից, ծանոթներից կորցրել եք և որոնում եք՝ էլ հայտարարություն տալու և լրագիր հարստացնելու կարիք չունեք: Ձեր ծանոթը կամ ազգականը, որ մի տարի առաջ Յապոնիա կամ Յեյլոն էր՝ անպատճառ այս փողոցումն է:

Տեսնում եք ինչ բազմություն է: Գլխավոր մասսան երիտասարդությունն է. կարմիրբանակային պատկոմական, ուսանողական: Ահա այն բազմությունն էլ բանաստեղծներ են, երաժիշտներ, գրողներ: Կան բավականին կրճատված և զտված մարդիկ: Ապա գալիս են՝ տերտերներ, նախկին շինովնիկներ, որ կորած բազաժի պես ժպտում են հեռվից, հին-հին դարուց մնացած նոր դարականներ, ութսունական, յոթանասունական, հիսնական թվականների պեղածո մարդիկ: Աբովյան փողոցը հայ երևելի և աներևույթ գործիչների հատուկ անունների բառարան է: Մայր մատյան: Ժապավիսյալ և կնքյալ: Ահա ավանակներին հեծած՝ փողոցը խաչածնելով անց են կենում մարդիկ, որ մի անգամ նստել են և ստորություն են համարում իջնել: Ընթերցող, եկեք մյուս մայթով անցնենք, որովհետև այս մայթը բռնված է մայթի մեջտեղ կանգնածներով:

— Զի՞ կարելի խնդրել, որ ճամփա տան:

— Ոչ, չի կարելի խնդրել: Եթե խնդրեք՝ սրանք իբրև Հայկի շառավիղ՝ կնեղանան և պատիվ կպահանջեն:

Այս փողոցի նշանակությունը շատ մեծ է: Այստեղ են մեր քաղաքի կուլտուրական և անկուլտուրական տարրերը շփվում... իբրար: Իհարկե այստեղի շփվելը մի փոքր հայկական մասշտաբով է, այսինքն այնպես են բռնում իրար...

— Ահա ինձ էլ բռնեցին:

— Այո, հարվածային աշխատանք է Աբովյան փողոցում: Զգույշ, մարդ է գալիս սաստիկ: Տակը չընկնենք:

— Ես ազատվեցի:

— Բայց ես տուժեցի... ինձ դիպավ: Սպասեցեք մի բողի,

հետևից հասնեմ:

— Ներեցեք ինձ, բարեկամ, որ դուք ինձ դիպաք:

— Ոչինչ, ոչինչ:

Շարունակենք մեր զբոսանքը: Ուրեմն այսպես: Այս փողոցը քաղաքի ընտիր մասն է: Այստեղ է զարգանում մեր... մեր խոսակցական լեզուն, որովհետև ամենից շատ կուլտուրական տարրեր այստեղ են ամեն տեսակ նյութերի մասին... խոսում:

— Ինչո՞վ են զբաղվում այստեղ զբոսնողները:

— Սրանք առավոտը դուրս են գալիս տնից գործի, գալիս անցնում են այս փողոցով՝ գնում են ուրիշ փողոցներ, հետո ետ են դառնում, կրկին անցնում այս փողոցով, ապա շուտ են գալիս նորից անցնում, այնուհետև էլի են անցնում, կրկին, դարձյալ մի քանի անգամ ևս, հետո, երբ վերջացնում են և հոգնում, այս փողոցի ճաշարաններում ճաշում են ու երբ շատ նստելուց հոգնում են, վեր են կենում զբոսնելու և հանգստանալու:

— Սպասեք, սպասեք: Այս Կիրակոսյանը միաժամանակ քանի տեղ է լինում:

— Ինչպե՞ս թե:

— Ախր նոր անցավ մեր մոտով: Հիմի սա նույն Կիրակոսյանն է, թե ուրիշ...

— Այստեղ պատահում է, որ նույն մարդիկ միաժամանակ մի քանի տեղ են երևում: Շատ ենք պատահում միևնույն տեղը:

Այստեղ մարդու հետ առավոտը ծանոթանում եք, հետո այնքան հաճախ եք պատահում, որ մի ժամից հետո մտերմանում եք, ճաշից հետո — շատ հին ծանոթներ եք, երկկոյան արդեն մոռանում եք իրար:

Գնանք մի քիչ ներքև:

— Սպասեցեք, սա ի՞նչ բազմություն է, վակզա՞լ է, թե մարդ են սպանել այստեղ:

— Ոչ, կոպերատիվ խանութներ են, դրանից է բազմությունը: Այդ խանութներում հերթով... հերթ են ծախում, մանավանդ շատ էժան ժամանակ: Սրանից հետո, եթե ժամանակի կամ հերթի կարիք ունենաք՝ մասնավոր վաճառականի մի դիմեք, այստեղ եկեք:

Ահա սա էլ մեր բուլվարն է. տեսնում եք այս ամպհովանին, կամ ինչպես այստեղ են ասում տաղավարը: Այստեղ են անցկացնում ամառը մեր մտածողները և այս հովանու տակ նստած կշռում են և փոխանակում իրենց մտքերը: Սա Երևանի մտավոր դան-

թարն է: Այս ամառը ուզեցի մի քանի միտք փոխանակել՝ առնող շեղավ:

Սա էլ մեր պիտական թատրոնն է: Ունի պիտական դրամատիկ և բավականին դրամունակ խումբ: Պատերազմից առաջ այս շինություն մեջ կեսգիշերից մինչև առավոտ մարդիկ թուղթ էին խաղում սեղանների վրա, իսկ հիմա դերասանները «Առավոտից մինչև կեսգիշեր» դրամա են խաղում բեմի վրա: Ժամանակին աչքի ընկնող և մանավանդ աչքից ընկնող պիեսներ են խաղացվել այստեղ թե՛ ինքնուրույն, թե՛ թարգմանական: Թարգմանական պիեսներից հիշեմ՝ «Հասկելի գեկույցը», «Հարբորդի ճառը», ինքնուրույն պիեսներից՝ «Հայկական պառլամենտ...»:

Դեպի աջ թատրոնից՝ մի նեղ փողոց է ծովում: Ուղիղ որ գնաք, կհանդիպեք մի բաղնիսի, որը շինված է նրա համար, որ նորոգվի: Ավելի հեռուն մի հայոց եկեղեցի կա, ուր հայ և ռուս քահանաներն ընկերովի ժամերգություն են կատարում: Կեցցե եկեղեցական կոռպերացիան, Կամ՝ կոռպերատիվ եկեղեցին: Միևնույն է: Գնանք ներքև: Ահա և շուկան: Այստեղ է մարմնավոր գանձարը, Երևանի փողոց, բավական տուզ: Ահա գետնի վրա մի տասնյակ գյուղացի յախնիով քրեղաններն առաջներն դրել, իրենք էլ ծալապատիկ շարվել են մի ֆրոնտ, բրդում են ու խոթում, բարի ախորժակ:

— Այս ի՞նչ ցիլինդրավոր ամերիկացիներ են:

— Ամերիկացի չեն: Այս ցիլինդրներն են ամերիկացի, այսինքն դրանց գլխի ամանները, թե չէ՝ բովանդակությունը Թորգոմյան — հայկական է: Սրանք էքստերիտորիալ ամերիկացիներ են, որ բնակվում են ամերիկյան զգեստների մեջ: Սրանք տյուկորսներ են, իրենց բախտը տյուկից են հանում: Սրանց շնորհիվ է, որ մի որևէ քյավառցի վաճառականի կնիկ կամ հին շինովնիկ, կամ գյումրեցի սպեկուլյանտ, որ մինչև տյուկը Վարդիշաղ բաջի էր կամ Բողդան Թաթոսիչ, հիմի վրան նայես՝ լեզի Վարդիշաղ և կամ միտք Բողդան Թաթոսիչ:

Սակայն ով սարսափ... փախչենք: Ահա գեմից գալիս է մի մարդ, որից ես ամենից շատ եմ սարսափում:

— Փո՞ղ եք պարտ:

— Երանի չէր: Մի օր հանաք արի հետը, թե՛ ինչ շախավ

մարդ ես: Սաստիկ զայրացավ և խոստացավ ինձ սպանել: Այո, այո, սպանել:

Երևանցիք հանաք չեն սիրում:

Երևանը շատ լուրջ քաղաք է:

1925 թ.

ԶՂԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՄՍ

Երբ մտա գրասենյակ, շղային բարեկամս խոռված սրբի սկս նստած էր սեղանի մոտ և հոգնած, բորբոքված աչքերով նայում էր պատին:

— Կարծեմ այսօր հանգստի օր է,— ասացի ես և ուրախուրախ նստեցի սեղանի մոտ, որ մի զրույց սկսեմ:

— Հանգստյան օ՞ր,— ցնցվեց բարեկամս,— տանջանքի օր է, մահվանս օրն է,— և հուսահատ դառնությամբ նայեց աչքերիս:

Ու հեռախոսի լսափողը, որ բռնել դրել էր սեղանին՝ տարավ ականջին, լեց ու «ախ» քաշեց:

Մոտեցա ականջին և մեղմ ձայնով հարցրի.

— Դրամի պակասություն հո չունե՞ք:

— Երանի այդ լինելը: Դժբախտությունս շատ մեծ է:

— Ուրեմն սենյա՞կ չունեք:

— Ես այդ տեսակ ումանտիզմով չեմ զբաղվում:

— Գուցե ձեր հարևանը կեղտոտ է ապրում և կեղտը մինչև ձեր սենյակն է գալիս լցվում:

— Է, ինչ անեմ, ես հո էսթետ չեմ:

— Հասկացա, ձեր բակում կենողները ամեն գիշեր քեֆ են ուրբում և մինչև լույս բոռբուլով խանգարում ձեր քունը:

— Դրանով զբաղվելն էլ սենտիմենտալություն է:

— Ուրեմն շատ պարզ է. դուք հիմնարկներն եք այցելում, տեղեկանք հավաքելու և ձեր ոտներն ուռել ու մրմնջում են կրկար կանգնելուց և սպասելուց:

— Ինչ արած, ես հո ուղիտ չեմ, որ շտապեմ: Այնպիսի մի հիվանդութեան մեջ եմ, որ դրանք ինչ:

— Ուրեմն ես ոչինչ չեմ հասկանում, բարեկամ, խնդրեմ բացատրեցեք. ինչպես է, որ դուք հիվանդ եք ասում ձեզ, երբ Երևանի այս շորս տրոպիկ դժբախտութիւններէց զերծ եք: Դուք հոգեկան հիվանդութիւն ունեք. դիմեցեք հոգեբույժներին:

— Դիմել եմ, բայց չեն կարողանում օգնել: Դա արտաքին հիվանդութիւն է:

— Ոտների կողմն է:

— Ոչ. Արուսեան փողոցի երկու կողմն է, և ես չեմ հիվանդը, այլ ինձ հետ խոսողները:

— Լավ, ուրիշները հիվանդ են, ձեզ ինչ. հեռախոսով հո չեք վարակվի, վերջապես այդ ի՞նչ նոր հիվանդութիւն է:

Բարեկամս ներվայնացավ.

— Զանքմ. ի՞նչ նոր հիվանդութիւն: Հին է և քերականական հիվանդութիւն է: Սրան կասեն բայապակասութիւն:

Ահա տեսեք, ըստեհիս մեկը հետս խոսում է: Սկսել է մի սըրբազան պատմութիւն. գիրք ծննդոցից պատմելով հասել է ջրհեղեղին և Նոյին: Տապանի վրա են դեռ: Ու դեռ երբ պիտի տապանից իջնենք, երբ պիտի հասնենք Հայկ Նահապետին և ապա հերթով գանք Հայաստանի խորհրդայնացման և վերջապես իրան, որ իմանանք, թե ինչ է ուզում:

— Բայց դուք իրան չե՞ք լսում:

— Օգուտ չունի: Ինչքան լսում եմ՝ դեռ միևնույն տեղն ենք:

Սպասում եմ, որ գա հասնի մինչև զլխավոր միտքը:

— Բայց ինչպե՞ս կիմանաք այդ:

— Երևի կզանգահարի:

— Եղբայր, ի՞նչ փափկանկատ եք, դիմեցեք իրեն և պահանջեցեք թող կարճ ասի, ինչ է ուզում:

— Ի՞նչ, ուզում եք փորձեմ: (Բռնում է ականջին լսափողը): Ընկեր: Ազամը, Նոյը, Մաթոս-աղան, Հայկ Նահապետը, ինչպե՞ս և մյուսներն իրենց ասելիքն ասեցին, դուք ձերը ասեք: Ի՞նչ եք կամենում:

Զայն (լսափողից).— Ահա բացատրում եմ: Մի՞թե չեք լսում:

— Լսում եմ, բայց դուք բացատրեցեք, թե դուք ինչ եք ուզում, դուք: Քանզի, շինել, վերաբանգել, վերաշինել:

Զայն (լսափողից).— Ախր, այն էի ասում, որ մանկավարժական ժողովը, որի մասին ես հայտնել եմ ձեզ մի ամիս առաջ, որ տեղի ունեցավ դպրոցական շենքի անհարմարութիւնները քննելու համար, այն որ...

Բարեկամս դողում էր արդեն:

— Լավ, լավ, բայց բայն ասեք, բայը,— այդ բոլորը ինչ...

— Հայ-հո՛ւյ,— ձեռքերը տարավ բերեց բարեկամս,— չկա... բայը չկա...

Եվ հանկարծ սարսափած ինձ նայեց.

— Հը, ի՞նչ պատահեց.

— Տեսար ի՞նչ եղավ... Նորից սկսեց: Հիմա ի՞նչ անեմ:

— Եղբայր, կարճ ու կտրուկ պահանջեցեք, որ վերջացնի,— ջղայնացա ես և վեր կացա, որ օգնեմ բարեկամիս:

— Իսկապես որ բայապակասութիւն:

— Ի՞նչ եք ասում,— գանգատվեց բարեկամս,— ի՞նչ է սրա մոտ նավթի կրիզիսը, շաքարի պակասութիւնը, արյան պակասութիւնը: Մեր հեռախոսողները ո՛չ հեռախոսն են խնայում, ո՛չ գործը, ո՛չ մեր ականջը, ո՛չ ժամանակը: Բայ չկա, բայի սով է շորս կողմը: Նավթ մի բերեք— բայ բերեք վագոններով:

Հանկարծ վճռական կերպով լսափողը դրեց ականջին.

— Ընկեր, վերջապես կարճ ու որոշ ասեք. ի՞նչ եք կամենում:

— Փող:

— Ի՞նչ փող:

— Դռների և լուսամուտների նորոգութեան:

— Ո՞ր դռների և լուսամուտների:

— Դպրոցի:

— Ո՞ր դպրոցի:

— Ախր չեք թողնում որ բացատրեմ:

— Որտեղի՞ց եք խոսում, ո՞վ եք, ի՞նչ է ձեր ազգանունը:

— Այ, բացատրեմ:

— Ազգանունը ի՞նչ բացատրելու բան է, ի՞նչ եք երկարացնում: Ասեք, վերջապես:

— Այ, անդամ եմ:

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ, ասեք, բացատրեցեք ի՞նչ եք ուզում: Կարճ ասեք: Բացատրեցեք,— գոռաց ու լսափողը զարկեց սեղանին:

Բացատրեցե՛ք,— լսափողը շարդեց: Բացատրեցե՛ք,— մազերը փե-
տեց: Բացատրեցե՛ք,— աթոռները շարդեց: Շորերը պատոեց —
թուով դեպի պատուհանը, ապակիները փշրեց և ընկավ բակը: Բա-
ցատրեցե՛ք,— գոռաց ու վազեց փողոց, այնտեղից էլ քաղաքից
դուրս:

Հիմա ես մտածում եմ, թե ինչ բացատրենք հոգեկան հիվանդ
բարեկամիս, որ այս բոպեիս խելագարանոցումն է, որ թեև հիմա
սենյակ էլ ունի, հարևանն էլ կեղտոտ չի ապրում, կենողներն էլ
քեֆերով չեն խանգարում քունը, հիմնարկներից էլ տեղեկանք չի
հավաքում, որ ապրում է մի տան մեջ, ուր բայ կա — ասում եմ,
ի՛նչ բացատրենք հիմա մի մարդու, որն այդքան երջանիկ է, բայց
այժմ այլևս խելք չունի այդ երջանկությունը հասկանալու և ուրա-
խանալու:

է՛, անիծյալ բախտ: Քանի աշխարհքում ենք ապրում, խելք
ունենալը չի թողնում, որ երջանիկ լինենք, իսկ երբ ընկնում ենք
խելագարների տունը, խելք չունենալն է արգելում, որ հասկա-
նանք այդ երջանկությունը:

1925 թ.

ՖԵԼԻԽՏՈՆԻՍՏԻ ԱՐԿԱՄԵՆԵՐԸ

(Կառակ ընկերական)

Իբրև թե գործերս քիչ էին թարսված՝ «Խորհրդային Հայաստա-
նի» խմբագրությունից էլ կանչեցին, թե հնգամյակի համար նյութ
հասցրու: Երգիծանք:

— Բայց ի՞նչ գրեմ,— տարակուսեցի ես,— նյութ չկա: Կու-
զեք Երևանի ջրի կամ... Մասիսի մասին գրեմ:

— Ուրիշ նյութ չունե՞ք:

— Հայկոպի նավթի մասին գրեմ:

— Հին նյութ է: Եվ հետո՝ ուշ վրա հասաք. ուրիշները գրե-

ցին:

— Ափսոս... է, կուզեք բանկոտպի ճաշարանի մասին գրեմ:
— Հա, գրեցե՛ք: Նոր բան կա՞:
— Ինչպես չէ: Գները բարելավել են և ճաշը 50 կուպեկից 60
կուպեկ են շինել:

— Դա բարեփոխություն է և շինարարությունն է վերաբերում:
Դուք իբրև ֆելիետոնիստ՝ թերությունների մասին պիտի գրեք:
Հուսահատությունից թևերս թուլացան: Որտեղի՞ց գտնեմ թե-
րություն:

— Գնացե՛ք, ման արե՛ք քաղաքում և ինչ որ տեսնեք՝ ուղղա-
կի գրի անցրեք:

Դուրս եկա փողոց: Անկյունում պատահեց պատահարների
խրոնիկյորը: Մոտեցա նրան:

— Բարև,— ասի,— գործերդ ո՞նց են:

— Ալտոմոթիլի պես են. հենց մի քիչ գնում են թե չէ՝ մեկ
էլ ստո՛ւպ, կանգ են առնում կոտրված:

— Ի՞նչ ես գրելու հնգամյակի առթիվ:

— Ինչ կա՞ ինչ գրեմ: Գողություն չկա, մարդասպանություն
չկա, հեղեղն էլ աստված տա: Պատահարին 25 կուպեկ լրավարձ
եմ ստանում: Դրանով գլուխ կպահվի՞: Երեկ չեմ ճաշել:

— Մեծ քաղաքի պես օրական մի 7—8 պատահար պատա-
հար կամ ամառվա պես մի հեղեղ գար՝ թագավորի պես կապրեիր:

— Այդ բախտը մեզ ո՞վ է տվել:

Եղբայր, Հայաստանը հետամնաց երկիր է: Ի՞նչ են հասկա-
նում պատահարի ճաշակը: Այսպիսի անկուլտուրական երկրում,
իհարկե, պատահարի պահանջ չի լինի: Քո գործերն ինչպե՞ս են:

— Բաղնիսի տաք ջրի պես, ձեռաց կտրվում են,— ասի ես,
հառաչելով բավական խոր:

Կանգնե՛ցինք փողոցի անկյունում մոլորված՝ ֆելիետոնիստ
և խրոնիկյորը:

Եվ, իրավ, մի՛ կարծեք, ընթերցող (եթե, իհարկե, ընթերցող
ունեմ), մի՛ կարծեք, թե հանաք եմ անում, ողբալի է ֆելիետո-
նիստի վիճակը Երևանում:

Ֆելիետոնի գործ չկա:

Ֆելիետոնի նյութ տվողները պետք է լինեն հիմնարկները,
չենքերի գործիչները, ծանոթները, մարդիկ առհասարակ: Պետք է

դրանք թերութիւնն ունենան, որ ֆելիետոնիստի համար գործ բացվի:

Դուք երեակայր՞ում եք, թե ինչ սարսափելի վիճակ պիտի ստեղծվեր, եթե մի օր հանկարծ դադարեին հիվանդութիւնները, անիրավութիւնները, դժբախտ պատահարները, հեղեղները, գողութիւնները աշխարհում: Ի՞նչ կլինէր դրամատուրգների, բժիշկների, միլիցիոներների, ինժեներների, դատավորների դրութիւնը:

Մեր Երևանի հիմնարկների մարդկանց ամենամեծ թերութիւններն այն է, որ ոչ մի թերութիւն չունեն: Երևանում թերութիւն մեծ պակասութիւն կա:

— Զանքում, սուս կաց, ի՞նչ շինարարութիւն, բոշ բան է,— մոմաց ընկերս,— ահագին մի երկիր չի կարողանում գոնե այնքան թերութիւն ու պատահար ունենա, որ գրականութիւն մի կարևոր ճյուղ ինչպես երգիծանքն է՝ ծաղկի կամ... խրոնիկան:

Սա խրոնիկա չէ, այլ խրոնիկական հիվանդութիւն:

— Ճշմարիտ աստված,— ասի ես,— կամ պիտի թողնեմ պաշտոնս, կամ պիտի դիմեմ մեր հիմնարկներին, ծանոթներին, բարեկամներին, և պիտի խնդրեմ, թե ի սեր երգիծական ճյուղի, ի սեր մարդկութիւն, թերութիւն ունեցեք:

— Կլինի՞ որ:

— Ի՞նչ ես ասում. յուրաքանչյուր հիմնարկ մի-մի պատիկ թերութիւն որ ունենա՞ մի կոկիկ երգիծաբանական գործ կստեղծվի ինձ համար:

— Հիմնարկնե՞րը... այդքան մարդասիրութիւն: Հույսդ կտրի:

— Է, լավ,— ասի ես,— ասենք թե՛ ես մի կերպ մի երկու թերութիւն կսազեցնեմ: Դու ի՞նչ ես անելու: Քեզ համար հո մարդ չի՞ սպանվի՞ պատահար դառնալու համար:

Ընկերս հուսահատ վճռականութեամբ աչքերիս նայեց և ասաց.

— Գիտես ի՞նչ, ես մի պատահար պատահեցնելու եմ, եթե միայն կարողանամ օգտվել...

— Ինչպե՞ս...

— Ուզում եմ տոների նախընթաց օրը ինքնասպանութիւն գործել: Դա կլինի ամենալավ և միաժամանակ ճշգրիտ լուրը: Բայց չգիտեմ լրավարձը ինչպես ստանամ: Ավանս չեն տալիս: Մահից

հետո գուցե հնար չլինի ստանալու: Մահից առաջ էլ «լուրը» ինչպե՞ս տամ իրանց:

— Ես կտանեմ:

— Վախենամ գրասենյակում ձգձգեն: Գիտես հո...

— Ես քեզ պարտք կտամ. միայն մի թուղթ տուր՝ ես ստանամ քո լրավարձը:

Ընկերս համաձայնեց: Նրա գործը հաջողվեց: Մնացի ես:

— Լսիր, ի՞նչ եմ ասում,— հանկարծ գոռաց ընկերս,— դիմիր ինտելիգենցիային: Էլի ինչքան չլինի՞ նա կունենա թերութիւն:

— Որտեղի՞ց: Հենց նոր մոտներն էի: Մարդիկ իրենք կարիք ունեն թերութիւն, որ խոսքի նյութ լինի:

— Այո, դա է մնում: Բայց հիմնարկներն էլ գիտես...

— Արի գնանք հիմա դիմենք,— քարշ տվեց ընկերս: Գնացինք, բայց ես հույս չունեի:

Մտանք մի հիմնարկութիւն, որ Աբովյան փողոցի աջ կողմն է ընկնում, և դիմեցինք վարիչին.

— Ընկեր վարիչ, արդյոք ձեր հիմնարկում գրականութիւն մի հատուկ ճյուղի համար մի որևէ թերութիւն չկա՞, հաղորդեք մեզ:

— Զգիտեմ,— պատասխանեց վարիչը դժվարանալով,— գուցե լինի, գուցե և ոչ. պետք է փնտրել թղթերի մեջ. բայց թղթերն էլ այնպես խառնափնթոր վիճակի մեջ են, որ այս ընդհանուր անգամ չի կարող գլուխ հանել: Գանձապահը կարող էր թողթերի մեջ նայել և ձեզ ասել, բայց նա էլ բռնված է վատնումի համար: Եկեք երկու շաբաթ հետո:

— Երկու շաբաթ հետո՞, շատ ուշ կլինի:

Հեռացանք: Գնացինք մի ուրիշ հիմնարկութիւն, որ Աբովյանի ձախակողմումն է: Գիմեցինք վարիչին.

— Ընկեր վարիչ, արդյոք ձեր հիմնարկի մեջ որևէ թերութիւն չկա՞:

— Այս ընդհանուր խոսքով,— պատասխանեց վարիչը,— միայն խնդրեմ, հերթի սպասեք:

Նայեցինք՝ որ բավական բազմութիւն սպասում էր հերթի, մենք էլ նստեցինք: Սպասեցինք մի ժամ, երկու ժամ...

— Ընկեր վարիչ, մենք գործ ունենք, հնգամյակը մոտենում է...

— Ոչինչ չեմ կարող անել, սիրելիս: Տեսեր ինչ բազմութիւն է հերթի սպասում:

— Մի խոսք միայն, կա՞, թե չկա:

— Չեմ կարող ասել: Մրանք էլ մի-մի խոսքի են սպասում: Հերթը ձեզ հասնի, կասեմ:

Վարիչը շատ քաղաքավարի էր: Նա մինչև անգամ բոլոր սպասողներին պատմեց, թե ինչ հնարքներ է մտածում ամենքին բավարարելու և միաժամանակ կարգը պահելու համար:

Վերջապես շորս ժամից հետո հերթը մեզ հասավ: Ուրախացած վրա ընկանք:

— Հը, թերութիւն կա՞:

— Չկա դժբախտարար, շատ ցավում եմ,— ասաց վարիչը և քաղաքավարի զուգի տվեց:

Հառաչեցինք, ինչքան որ կարելի է հառաչել նման դեպքերում, և դուրս եկանք քոռ-փողման:

Գիմեցինք մի ուրիշ հիմնարկի, որ գտնվում է շուկայի կողմերը:

Վարիչն անդործ նստած էր, և երբ ներս մտանք՝ աչքերը հանց մեզ:

— Ընկեր վարիչ,— ասի ես,— իմ ընկեր խրոնիկյորը հուսահատութիւնից ուզում է ինքնասպանութիւն գործել...

— Գիմում գրեցեք,— ասաց ցրված վարիչը:

— Ահա բերանացի դիմում ենք:

— Այո, բայց ինչպես մտցնենք գործերի մեջ:

— Հնար չունենք դիմում գրելու, մարդը վաղը չէ մյուս օրը մեռած է լինելու:

— Գիմեցեք սոցապին:

Հրաշալի միտք: Այդպես էլ կանենք: Տեսա՞ր ցրվածութիւնն ինչ օգուտ տվեց: Կդիմենք սոցապին, կասենք՝ կա՞մ դյուրութիւն առ, կա՞մ գործ, կա՞մ կենսաթոշակ:

Գնացինք, սակայն ով դժբախտութիւն, «Մինչև ամսի 15-ը գիմումներ չեն Ընդունվում»:

Ընկերս քայլերը ծոցեց:

— Ո՛ւր,— հարցրի ես:

— Գնամ մի ատրճանակ գտնեմ: Հուսահատութիւնս բռնեց:

Ես էլ ճամփաս ծոցցի դեպի նորք: (Միակ վայրը բոլոր հուսահատների):

Եվ ահա անցնում էի մայթով, տեսնեմ փողոցի միջով մի 43 տարեկան մարդ նստել է մի Յ տարեկան էշի վրա՝ զնում է: Էշն առանց այն էլ սաստիկ ծանրաբեռնված էր, հագիվհագ էր շարժվում, բայց մեր հեծյալն ուրիշ մտքերով էր զբաղված: Նրան եկան միացան ուրիշ քսանհինգ հեծյալներ ևս: Նայեցի հեծյալների այս շարանին,— բոլորն էլ 30—40 տարեկան, ոտները գետնին քսելով գալիս են: Մոտեցա այդ հանդիսավոր շքերթի պետին.

— Ո՛ւր ես գնում,— հարցրի:

Նա մտիկ տվեց ինձ.

— Ի՞նչ մասշտաբով ես հարցնում:

— Ինչ մասշտաբով... Նու... Երևանի մասշտաբով:

— Այգի եմ զնում,— ասաց նա:

— Իսկ ձեր այգին որտե՞ղ է:

— Նորքի ֆրոնտում: Ինչո՞ւ ես հարցնում:

— Ոչինչ, ուզում եմ իմանալ, թե ի՞նչ նպատակով ես նստել էշի վրա:

— Իմ էշն է՝ նստել եմ, ինչ նպատակ:

Մոտեցա նրան և ցած ձայնով ասի.

— Ես մի բան եմ ուզում իմանալ.— Արդյոք միլիցիական կարգադրութիւն կա և հատուկ օրե՞նք է, որ դուք բոլորդ ամբողջ ժամանակ իշի վրա նստած պիտի լինեք, թե՞ պակենական անխախտ կտակ կա: Կամ գուցե դրա համար ոտճիկ եք ստանում և ձեր պաշտոնն է՝ իշից վայր շիջնելը...

— Ձանըմ, մեր էշն է՝ նստել ենք, ի՞նչ կտակ, ի՞նչ բան:

Այն ժամանակ ես դիմեցի բոլորին մի հարցումով, որ բաղկացած էր երեք մասից: Առաջին մաս,— արդյոք նրանք գիտե՞ն, որ նստած են իշի վրա. երկրորդ մաս,— զգո՞ւմ են, որ էշը սաստիկ ծանրաբեռնված է: Երրորդ մաս.— Եթե զգում են այդ, ուրեմն ի՞նչ միջոցների են դիմել այդ աննորմալ երևույթի առաջն առնելու համար:

— Բարեկամներս,— ասի նրանց:— Ահա տարի ու կես է Երևանումն եմ: Ամեն օր փողոցներում տեսնում եմ շարունակ 30—40 տարեկան առույգ, գեր տղամարդիկ նստած 2—3 տարեկան էշերի վրա: Հանապազ նստած եք իշի վրա և ցած չեք գալիս:

Շատերը ձեռնից իշի վրա են ճաշում, ընթրում ու քնում: Մի խոսքով՝ բնակվում եք իշի վրա և չգիտեմ՝ իսկի ձեր տանն էլ լինո՞ւմ եք: Կյանքներդ անց եք կացնում իշի վրա և վայր եք գալիս երևի այն ժամանակ, երբ նա սատկում է: Սա օրե՞նք է: Ես կդիմեմ ուր հարկն է և իշապաշտպան մի ընկերություն կհիմնեմ:

Նրանք ինչ-ինչ բացատրություններ տվին, որից երևում էր, որ ունեին իրենց առարկությունները: Բայց դա վերաբերում է հին կենցաղին: Նայեցի իշին: Իսկապես որ նրա աչքերն էլ այդ էին ասում:

— Մինչև կենցաղը չփոխվի՝ ես իմ բնակիչներից չեմ ազատվի:

Ուռա: Գտա նյութս: Հին կենցաղը: Գնամ և գրի անցկացնեմ:

Հետևյալ առավոտ վաղ նստած էի խմբագրատանը և ուրախ-ուրախ գրում էի դեպքը, որ հանկարծ ներս մտավ երեկվա իշաբնակը: Նա շատ սպառնալի և կասկածելի հայացքով ինձ նայեց ու հարցրեց.

— Սա՞ է խմբագրատունը:

— Կարծեմ... սա է... — կմկմացի ես աչքս նրա աջ ձեռին, որ քամակին էր դրել, երևի մահակը բռնած:

Բայց և երևում էր, որ ինձ չճանաչեց:

— Եթե խմբագրին եք ուզում, ընկեր, գնամ կանչեմ:

— Չէ, կաց. ինձ հասկացրու, թե ո՞վ է, որտե՞ղ է խայտառակություն գրող Դ. Դեմիրճյանը:

— Դ. Դեմիրճյանը: Հա: Դա մի շատ շնորհալի բանաստեղծ էր, բայց մեռավ ընթերցող չունենալու պատճառով: Հիմի նոր գրող է նշանակված, — ասի ես ու լեզուս կծեցի...

Բարեկամս փնջացնում էր:

— Բայց բանն ինչո՞ւմ է, ընկեր, գուցե բացատրեք, — հարցրի ես:

— Հաշիվ ունեմ հետը: Ասում են վրաս բան է գրելու:

— Թող գրի, ի՞նչ կլինի:

Չորս կողմ նայեց ու ձայնը մեղմեց.

— Մեծ խայտառակություն է, ջանք: Ամբողջ քաղաքը վաղը պիտի կարդա, որ մենք իշի վրա նստած քաղաքի միջով անցել

ենք: Ախր, հոգիս, մենք բարեկամ, ծանոթ ունենք: Դրանցից մինն էլ որ իմանա, խաղք ու խայտառակ կլինենք:

— Հա, ճիշտ է:

— Բայց, սիրելիս, — մեղմացրի ես, — ախր ճիշտ է, որ դու իշով անցել ես փողոցի միջով: Չէ՞:

— Դրուստ է, անցել եմ, ի՞նչ կա որ:

— Եվ ճի՞շտ է, որ քեզ ողջ քաղաքը տեսնում էր:

— Ղորթ է, և տեսնում է, տեսնի, ի՞նչ կա որ:

— Մանոթներդ էլ:

— Հա, դրուստ է: Ի՞նչ կա որ...

— Է, լավ. հիմի մեր մեջը խոսանք. եթե խոսքի՝ հեռի ձեզանից այդ Դ. Դեմիրճյանը այսքանը միայն գրի, թե այսինչ մարդը քաղաքի այսինչ փողոցում իշի վրա նստած գնում էր, կենդանա՞ս:

— Նեղանա՞մ: Արյունահեղություն կանեմ: Կսպանեմ՝ աստ. ծու մեծ անունը վկա:

Հողվածը թողի: Սա էր պակաս, որ Երևանում ծեծի էլ ենթարկվեի:

Դե գնա ու սրանից հետո գլուխ պահի Երևանում: Բոլորք նեղանում են: Բանի մասին չես կարող գրել:

Չէ, Երևանը շատ լուրջ քաղաք է:

Ի՞նչ անեմ:

Ես էլ որոշեցի ինքնասպանություն գործել:

Առավոտ: Այսօր ուզում էի ինքնասպանություն գործել, բայց ժամանակ չունեմ, որովհետև գիշերս խրոնիկյորն ինքը գնացել է ինքնասպանություն գործելու: Դամբանական եմ պատրաստում կեղծ-դասական ոճով, և լավ բան է դուրս գալիս:

Երեկո:

Անիծվի այսպես բախտը:

Խրոնիկյորը չսպանվեց: Ամբողջ օրը ման եկավ քաղաքում ու գլուղերում և բնակչության մեջ մի ատրճանակ էլ չգտավ:

1925 թ.

**ՓԵՄԱՆԱԿԱԿԻՑ ՎՅՐԳ ԱՐԲՈՑ,
ՄԱՐԳԱՐԵՒՑ, ԳՊՐԱՑ ԵՎ ՓՔՐԻՍՆՆՈՑ ԵՎ
ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ**

Ինչպես երևում է՝ փողը լավ բան է եղել Եվ մինք թուրքովին տեղեկություն չենք ունեցել այդ մասին: Մինչդեռ ապրել է պետք և հեշտ բան չէ ապրելը, ու դեռ պետք է աշխատես, որ ապրես: Ահազին գլխացածանք:

Տեսնես ինչպես պիտի պահեր իր գլուխը Սողոմոնի փմաստունը, եթե մեր ժամանակ ապրիր... Յովետական Միության մեջ: Երեկ դիմելով Լոռաշխին և մերժվելով՝ կփորձենք փնտրել Քյավառի մի խուլ անհյուն գրքացույթյամբ դուրսը պահելու:

Այդ հաշվով Աղնքսանդր Մանեղոնացին կոզակների առաման պիտի դառնար Վրանգելի բանակում: Վարդան Մամիկոնյանը կամ բանդիտ պիտի լիներ Գիլիջանի շոսսեի վրա. կամ «ոտի վրա» առուտոր պիտի աներ Երևանի Ղանթարի տեղ: Գուցե Գավիթ մարգարեն մի փոր հաց աշխատեր մեր Շիրակի գյուղերում աշուղություն անելով կամ դառնալով մղզախ Յոթվերքի ժամում:

Իսկ եթե ազնիվ աշխատանք լայնդ անելու հարկադրվեին՝ անշուշտ Մովսես մարգարեն գրասենյակ պիտի մաքրեր գաղթականական կոմիտեի գրասենյակում և Հովհաննես Մկրտչի քիսաչի պիտի դառնար Կոմունիստի բաղնիսում: Քրիստոս՝ իբրև սկզբբունքի մարդ՝ կերթար Սարգարաբաղը անապատն էլք մի քառասուն օր մտածելու, բայց վերջը տեսնելով, որ «ոչ միայն բանիվ կեցցե մարդ, այլ հացիլ», կգար խնդիրը կտար Հողժողկոմատին, որ իրեն Արագածի վրա արոտներ տրվի խաշնարածությունը պարապելու: Կամ ո՞վ գիտե, գուցե անցագիր խնդրեր Ամերիկա գնալու և գաստրոլով քրիստոնեություն անելու այնտեղի պաստորների և սոցիալ-դեմոկրատների օգնությամբ:

Այ, Քրիստոսի առաքյալների գործը շատ դժվար կլիներ: Անշուշտ, կմեղադրվեին իբրև ս. հոգի վաճառողներ, փահլաններ, պրիզոններ և ձերբակալվելով կբերվեին շրջանային գատարան:

Քրիստոնեական մեթոդը Միության մեջ չի անցնում: Կա՞վ կիրառություն ունի արտասահմանում և այդտեղի մարգարենները ժամանակակից մեթոդով են ապրում: Մենք գիտենք, որ Պողոս առաքյալն իր հոգի քուրձը ո՛չ լվաց, ո՛չ էլ հանեց վրայից մինչ

կյանքի վերջը: Քրիստոսը մի անգամ գնաց բազմիս, այն էլ ստահամամբ: Բայց եվրոպացի սրբերը հիմի ավտոմոբիլներով հանքային ջրեր են գնում: Բուրդ եվրոպացի մարգարենները, դպիրները, փարիսեցիք պուդինգ են ուտում: Մանժետավոր առաքյալներ, ցիլինդրավոր մարգարեններ, պուդրի քսած դպիրներ, դուխի ցանաձ փարիսեցիներ լիքն են Եվրոպա և Ամերիկա: Այ, օրինակի համար Գամպերսը, իսկական ամերիկյան Քրիստոս՝ սմոկինգը հագին 43 տարի առաջ ստեղծեց աշխատանքի գաշնակցությունը և նախագահեց նրան մինչև մահը: Եվ մարդն «աշխատեց» հաշտեցնել բանվորներին կապիտալիստների հետ («Երանի խաղաղարարաց», «սիրեցեք զթշնամիս ձեք», «բարի արարեք ատելյաց ձերոց» — Ղուկաս, գլ. ԺԲ.): Ճիշտ է, բանվորները շարիեցին կապիտալիստներին, բայց ինքը սիրեց: Այն էլ ճիշտ է, որ թեև ինքն առում էր կամունիստներին և ասված է, թե՛ «Բարի արարեք ատելյաց ձերոց», բայց 1919—20 թվերին նա հանդես եկավ կոմունիստների դեմ:

Բայց սա՞ իբրև հալածիչ դիվաց: Այսպիսով, ծառայեց կապիտալին, աղայից աշխատանքին, տվեց կայսեր դրամը կայսեր, աստծու դրամը աստծուն, իրա դրամն էլ իրան, վերջն էլ զառամեց, մեռավ: Նրա մահով բուրժուազիան կորցրեց իր լավագույն բարեկամին: Բայց մարդն իր կյանքն ապահովեց մինչև մահ, մահից հետո էլ մահն ապահով է ու ապահով: Օր էր, կյանք էր, անց կացավ, գնաց:

Վերցնենք ուրիշ մարգարեններ: Շատ ազնիվ մարդ էր Բաուերը, նախկին պրիսոնները գերման կոռուպարություն: Նաև շատ ազնիվ մարդ էր Վեյսը՝ սոցիալ-դեմոկրատական կուսակցության պարագլուխը:

Պատվական մարդիկ էին Շելդեման և Հելման: Իսկը Մովսես մարգարեն էր новейшего поколения. հիմի ազնիվը ազնիվ՝ բայց ասված է. ոչ միայն ազնվություն կեցցե մարդ, այլև ավտոմոբիլիլ, սմոկինգիլ, հանքային բազնիսիլ, պուդինգիլ... և սովորաբար մարդիկ՝ մեծ մասամբ ազնիվ են մինչև բանվելը:

Բանն այսպես պատահեց: Բարմատ «եղբայրներ» կան Գերմանիայում, շատ խոնարհ: Բարմատ «եղբայր» մեծապես օգնեցին Շելդեման՝ Բաուեր Հելման և Վեյսը, սրանց համար մեծ դրամներ էր վարկ միջնորդելով պետական բանկում: Մարկը ընկավ. խո-

նարհ «եղբայրները», «բարձրացան» ու լավ դրամ զարկեցին: (Որ խոնարհեցուցանե զանձն յուր՝ բարձրասցի): Բացի այս՝ բարի առաքյալները՝ բանվորական շարքերը ստվարացնելու համար օգնեցին, որ վերոհիշյալ խոնարհ եղբայրները մտնեն սոց. դեմ. պարտիայի մեջ:

Պետք է ասել, որ նախ աստժու, Բարձրատ «եղբայրներն» էլ պատվի տակ շմնացին:

Վելյը, Շեյդեմանը, Հելմանը մի-մի տասնյակ հազար ռսկի մարկ ստացան բարձրատներից: Իսկ Բաուերը մի միլիոն ռուբլի՝ մեր դրամով. դրամ տալու այդ ձևը զանազան նշանակություն ունի տարբեր լեզուներում: Դա անգլերեն նշանակում է ընծա: Ամերիկյան անգլերենում նշանակում է պարզևաբաշխություն, ֆրանսերեն նշանակում է՝ շնորհակալություն: Զենդերենում ուղղակի նշանակում է՝ անվնաս բան: Միայն ԽՍՀՄ-երենում նշանակում է կաշառք, բայց դա էլ, ինչպես բացատրում են քաղաքակիրթ Եվրոպայում՝ լեզվի բարբարոսության և անզարգացած լինելուցն է:

Բայց եթե մարդիկ մեծ մասամբ ազնիվ են մինչև բռնվելը, այնպես էլ կեղտոտ են մինչև խոստովանելը: Բաուերին սեղմեցին, գուրս արին պատգամավորությունից: Մարդն իսկի ձայն չհանեց, սուսուփուս, ամենայն խոնարհությամբ քաշվեց և միլիոն ռուբլին տարավ իր «քուլֆատը» կերակրելու: Լավ փող է (որ խոնարհեցուցանե զանձն յուր՝ բարձրասցի) — կարող է պատահել, նորից հանդես կգա:

Հիմի այս առաքյալները հալածված են ԽՍՀՄ լրագրերում: Ի՞նչ վնաս. — «երանի որ հալածյալ իցեն վասն իմ»: Այդ դրամները, որ Եվրոպայում և Ամերիկայում ստանում են բանվորների առաջնորդները, ավելի հասկանալի են զենդերեն բացատրությամբ: Վելյ, Շեյդեման, Գամպերս, Բաուեր իրենց ընտրության ժամանակ բանվորներին խոստացել են երկու բան. — Առաջին, որ կատեղծեն նախանձելի վիճակ բանվորների համար: Եվ երկրորդ՝ կատեղծեն աննախանձելի վիճակ իրենց ընտրվողների համար:

Այդպես էլ եղավ: Առաջնորդները հարստացան, որով և բանվորները կարող էին նախանձել սրանց, իսկ բանվորներն աղքատացան, որով և առաջնորդները ոչինչ շունեին բանվորներին նախանձելու: Օրինակ՝ Մակդոնայլը թագավորի պես ապրեց:

Ահա այսպես, մինչդեռ շատ գլուխներ կան, որ մարդկանց են

պահում, մարդիկ կան, որ իրենց գլուխն են պահում: Առաջինները պարագլուխներ են, երկրորդները՝ գլխապահներ: Եվ մինչդեռ առաջինները հազիվ են պահում իրենց ուսերի վրայի գլուխը, երկրորդների գլուխները մինչ օրս էլ մնացել է ուսերի վրա... Եվրոպայում:

Ականջդ խոսի Հովհաննես Մկրտիչ:

1925 թ.

ՑԱՆԿՈՎ

(Պարտեւ)

Ցանկովը Բուլղարիայում: Դա հետաքրքիր տեսարան է: Լավ չեմ տեսել դեմքը լրագրերի պղտոր նկարներում, բայց այս բոպիս պարզ պատկերացնում եմ այդ տարօրինակ պրոֆեսորին, կարինետում նստած, գլուխը կախ, եզան աչքերը շոած և ակնոցների վերի արանքից խեթ-խեթ մտիկ տալիս. ու երբ իրան ասում են, թե վառնայում ռուսներ են երևացել՝ մրթմրթում է.

— Ուրեմն կոմունիստներ են — ձերբակալել:

Ուղղագիծ որոշում — ախր հին վարժապետ է (ուսուցիչ) մրթմրթում է:

Այո, դա նույն պրոֆեսոր վարժապետն է իրա համար մի քիչ ավելի ընդարձակ դպրոցում, որ կոչվում է Բուլղարիա:

Տեսնես զգո՞ւմ է, որ իր դպրոցի և Բուլղարիայի մեջ տարբերություն կա, թե՞ ոչ:

Բուլղորվին — նրա մեջ նստած է հին ծիրած պրոֆեսոր վարժապետը, որ դաս է տալիս:

— Ապա՞, ապուշներ, եթե մեր քաղաքում՝ ուր, 20,000 մարդ կա՞ 5000 մարդ կախեմ, 5000-ն էլ գնդակահարեմ — ինչքա՞ն կմնա:

— 10,000, վարժապետ:

— Ճիշտ է: Այս գործողությունը կոչվում է՝ հանումն:

Վարժապետ է — քառակուսի, եռանկյունի, քաղցմանկյունի, քաղց միևնույն է անկյուն ունի ուղնորով:

Հա՛յ գիտի մեր ԳԾ-ական թվերի դասաւանդան դպրոց...:

Մանկավարժական ժողովում վարժապետները որոշում են պատժել մի ամբողջ դասարան, ինչ-որ շարութեան համար: Որոշումը պիտի գործադրվի հետևյալ օրը: Հետևյալ օրը ինչ-որ բան է պատահում և խանգարում է պատժի գործադրումը: Մյուս օրը էլի մի բան է պատահում և խանգարում: Երրորդ օրը կիրակի է լինում: Երկուշաբթի ավագը հանկարծ գնում է էջմիածին, վերադառնում 3 օրից հետո: Անցնում է մի շաբաթ, երկու և դեպքը մոռացվում է բոլորովին:

Դպրոցը խաղաղ է: «Չար» դասարանն էլ իր համար գլուխը կախ աշխատում է:

Մի օր էլ, երբ ամբողջ դպրոցում խաղաղ դասավանդություն է՝ հանկարծ մի զարհուրելի աղմուկ է լսվում դպրոցում: Ավագը դուրս է թռչում իր դասարանից և ինչ է տեսնում: «Չար» դասարանից երեխաները լացով-կոծով, գոռալով դուրս են փախչում:

Վերջին դատաստանի իրարանցում:

Գասերն ընդհատվում են:

— Ի՞նչ է պատահել, պարոն Պուղուկյան:

— Ինչպե՞ս թե ինչ է պատահել... Մանկավարժական ժողովը չէ՞ր վճռել պատժել այս դասարանը:

— Կա՛վ, հետո՞:

— Հետո, հետո: Պատիժը գործադրեցի:

— Վա՛հ:

Բայց ժամանակն անցել էր, և փառարանք իրան չու՛վ էր պահում, խնդիրը մոռացված էր...

Նշանակություն չունի: Մանկավարժական ժողովում ասված է. պատժել «չար» դասարանը — վերջացավ:

Որոշումը պիտի գործադրվի:

— Կավ — թող գործադրվի, բայց դրա էլ ժամանակք, վերջապես, մեթոդը, տակտիկան կա: Վերջապես, առիթը:

Հա, առիթը մի քիչ դժվար է և «վարժապետս» մի քիչ շարժարվեց, որ առիթ գտնի:

— Ապա, Սետուկյան, ո՞վ էր մեր ազգի հիմնադիրը:

— Հայկ Նահապետը:

— «Հայկ Նահապետը»... այ՞ո՞ւ, «Հայկ Նահապետը» (կըճտում է ասամեհրը)— գիտեմ, թե ինչպես է այդ «Հայկ Նահապետը»:

Ճիշտ է, ինքն իրան ուտում է վարժապետը, բայց առիթ չկա: — Թաթիկյան — դու: Զիչյան, դո՞ւ (բայց արդեն կատաղում է)...

Բոլորը դասը գիտեն, կատարյալ խայտառակություն: Ե՛լ ահա...

Հանկարծ քանոնք վեցնում է ու.

— Հայկ Նահապետը, հա՛... Հայկ Նահապետը, — ու սկսում է զարհուրելի մի մեծ — վայնասունը պցում դպրոց:

Հիմի Ցանկովն է: Անշուշտ Բուլղարիայի «գյուղացիական» դասարանի շարութեան հարցը դրված է եղել Չեմբերլենի և մյուս երկրների «մանկավարժական» ժողովում: Որոշած են եղել պատժել շար դասարանը: Ցանկովը պատժեց բավական ուշ և երկարացրեց գործը: Բայց մի անակնկալ էլ հետը պատահեց. «չար» աշակերտները վարժապետի աթոռի ոտը հանեցին, ու Ցանկովը կլտիպուղ վուվեց հատակին:

Բայց աշխարհիս երեսին ոչ մի վարժապետ չի հաղթվել: Ցանկովը շարունակում է իր գործը: Մարդը հաշվում է:

— Բուլղարիայում և ամբողջ աշխարհում քանի մարդ կա: Հինգ հարյուր միլիոն: Որքա՞ն է բանվոր ու գյուղացի: Ասենք 9—10-րդ մասը: Ուրեմն եթե այդ 9—10-րդ մասը կոտորենք — մնացածը բուրժուանե՞ր են: Այո՞:

— Գեներալ Մոռոզով — կամ շգիտեմ այնտեղ — գեներալ Կուլակով:

— Ի՞նչ է:

Այսօր շարդիր Բուլղարիայի բոլոր գյուղացիներին (մնացածն էլ մյուս երկրներում թող չարդեն) և մի հաշվետվություն պատրաստիր բեր մանկավարժական... թո՛ւ, միշտ սխալվում եմ՝ մի-նիստրական նիստին:

— Այդքա՞նը:

— Այո, այդքանը: Աշխարհքում կմնա 1—10-ը և 50 տարում կդառնա 500,000:

«Ինչ-որ հարկավոր էր ասացուցանել»:

— Այո, սիրելիք:

«Վարժապետ» — այստեղից շատ հեռու չէ «վարչապետ» — այստեղից էլ շատ հեռու չէ «վաշտապետ» Բուլղարիայի պատժիչ գործամասերի:

1925 թ.

ԱՆԳՈՐԾ ՖԵԼԻԵՏՈՆԻՍ

Ողբալի է Ֆելիետոնիստի վիճակը Երևանում:

Գուրս եմ գալիս խմբագրատնից և, ինչպես Ադամը դրախտից ելնելիս իր մերկությունը թզենու տերևներով ծածկեց, ես էլ իմ անգործությունը պորտֆելով ծածկելով ման եմ գալիս քաղաքի փողոցներում:

Իհարկե, այս դրության մեջ, Ֆելիետոնիստը կրնկնի հոգեկան կրիզիսների մեջ:

Սրանից մի տասը օր առաջ նորքի կողմերն էի գնացել:

Ասացի՛ գնամ բնության գիրկը, գուցե բանաստեղծության դործ բացվի այնտեղ:

Նստած էի Գետառչայի ափին և նայում էի ալիքներին: Երկար նայելուց զգացի, որ ես ու գետը իրար հասկանում ենք: Սկսեցի խոսել հետը:

— Ո՛ւր ես գնում,— հարցրի:

— Երևան եմ գնում:

— Երևա՞ն: Այս տարի ինչ-որ շատ ես գալիս քաղաք, ի՞նչ է պատահել:

— Դե՛, միշտ էլ չի կարելի մնալ գյուղերում ու վայրի ձորերում. պետք է քաղաք էլ գալ: Հիմա այդ պահանջը կա:

— Մի՞թե:

— Իհարկե:

Ամառս որ եկա՝ պիտի տեսնեիր, թե ինչ փառավոր ընդունելություն եղավ: Շնորհակալ եմ, միլիցիան, քաղաքացիք մեծ պատվով դիմավորեցին: Հեռագրեր գնացին Քիֆլիս, Բաբու, Մոսկվա...

Չէ՛, մի կասկածի, իմ պահանջս մեծ է քաղաքում: Եվ ես ձեզ ասեմ: Հիմա Հայաստանի բոլոր ջրերն ընդունել են այդ օրինակացիան: Մեր լողունգն է. «Երեսներդ դեպի քաղաք»:

— Այո, Արփաշայն ու Զանգուն մեծ պատվով ընդունված են լենինականում և Երևանում, բայց քեզ այդպիսի ընդունելություն չեն անի: Այնպես որ՝ մի գնա:

— Ինչպե՞ս թե, Արփաշայն ու Զանգուն աստղե՞ր են իջեցնում երկնքից: Ես ինչո՞վ եմ պակաս նրանցից:

— Արփաշայն ու Զանգուն խորհրդայնացած գետեր են, նրանք կարգով, կանոնավոր հուններով գալիս են քաղաք: Բայց դու լեհաստանի կամ Ճապոնիայի ջրերի պես ես հեղեղում: Քո արածը բանդիտիզմ է, սիրելիս: Արի՛, ինձ լսի՛ր, մի՛ գնա: Այդ քեզ համար պատրաստվում է մի հիմնավոր բիդոնե, անկյունավոր հուն: Քեզ կդնեն հաստատ հունի մեջ, Այն ժամանակ՝ համեցեք:

Գետառչայս մի քիչ կոտրվեց.

— Լավ, դե թող մի քիչ շտապեն, շինեն այդ հունը:

— Շուտով, շուտով,— ասացի ես և վեր կացա:

— Այո: Լավ կլինի: Ես սիրում եմ քաղաքը: Բավական դեղագործություն սովորեցի հիվանդանոցների պահեստներում, ծանոթացա Բաֆֆու և Նալբանդյանի գրվածքներին, ուսումնասիրեցի պահեստի գործը պաղվալներում, շատ բան տեսա, իմացա: Վերջպես քեզ բան ասեմ: Կարծում ես, թե գետերս սիրում ենք մեր ճամփից դուրս ուրիշ տեղեր գնալ, եթե մեր առջև արգելք կա: Ո՛ր ջուրն է վեր բարձրանում: Ճամփա ցույց տվեք, գնանք: Չեք ուզում, իսկի էլ չենք գա:

— Չէ՛, չէ՛, արի՛, սիրելիս: Մենք բոլոր գետերը պիտի խորհրդայնացնենք:

Ես վեր կացա:

— Ո՛ւր,— հարցրեց Գետառչայը:

— Գնում եմ հիվանդանոց պառկելու: Իսկ դո՞ւ, ի՞նչ ես անելու, ո՞ւր ես գնում:

— Ես էլ գնում եմ իմ հունս— Նալբանդյան փողոց:

— Բարի՛ գիշեր:

— Քեզ լույս բարի:

1925 թ.

ԲՆԵՐԱՏԱՐ ԳՆԱՑՔՆԵՐ

Աշխարհիս երեսին ամեն բան իր գոյութեան իմաստն ունի:
Ճշմարիտ բան է այս:

Օրինակ՝ ինչո՞ւ համար է դեղատունը: Իհարկե նրա համար,
որ մեռնելիս՝ լատիներեն բառերով մեռնենք:

Սպիտակոպոսը նրա համար է, որ երեսին մորուք լինի:

Մանրէաբանական ինստիտուտները նրա համար են, որ մեզ
համար նորանոր հիվանդությունների բացիլներ գտնեն — կարծես
հին հիվանդությունները բավական չէին մարդկային ցեղը ուղն-
շացնելու:

Բանկոտպի ճաշարանը նրա համար է, որ գնանք նստենք և
պատառաքաղներով շիզիլիկացնենք շշերի վրա:

Սպեցը նրա համար է, որ հեշտ գործը դժվարացնի:

Այո, բարեկամներս, ես այսպես եմ նկատել կյանքը:

Հավը ձգտում է փրավի և ոչ մի ուժ չի կարող նրան փոխել
տալ իր օրինետացիան:

Անցյալ օրը, «Խորհրդային Հայաստանում» կարդացի մի այս-
պիսի թղթակցություն:

Ղարաքիլիսա կայարանում գնացք է նստում լենինականի
կայարանի մի ծառայող կին: Ներկայացնում է ձրի երթևեկելու
տոմսը և հենց տեղնուտեղը նկատում է, որ անձնական վկայա-
կանը կորցրել է: Խնդրում է վերահսկիչից, որ թույլ տա մինչև
լենինական գնալ, որտեղ խոստանում է սուգանք տալ, որովհետև
փող չունի մոտը: Գնացքի կոնդուկտորներն ասում են, որ ճանա-
չում են կնոջը և երաշխավորում են, որ կվճարի: Վերահսկիչը
կտրականապես մերժում է և... կնոջ երկար աղաչանքից հետո՝
բռնում է նրա ուսերից և հրելով վագոնից դուրս է հանում:

«Զգիտեմ որքան է իրավացի վերահսկիչ խեղճանի վարմուն-
քը, — ասում է թղթակիցը, — բայց միայն կուզենայի խնդրել՝ չի՞
կարելի արդյոք, որ համապատասխան մարմինները նրա թուքը
վերադարձնեն իրեն և վտարեն նրան իսպառ խորհրդային ծառա-
յությունից»:

Ինչո՞ւ վտարեն...

Գուցե ք. խեղճանը վարվել է կանոնների համաձայն: Գուցե
խեղճանին կարելի է կշտամբել այն բանի համար, որ նա չի օգնել

կնոջը մի կերպ պարտք վերցնելու (հենց կոնդուկտորներից) և
փրկելով մի կողմից երկաթուղային կանոնները, մյուս կողմից՝
օգնել մի խեղճ ծառայող կնոջ...

Խնդիրը սրանում չէ: Սա շատ մտածեցի, սկսեցի հարց տալ
ինձ.

Ինչո՞ւ համար է գնացքը:

Գնացքը նրա համար է, որ նրանով երկաթուղային տոմսեր և
անձնական վկայականներ տեղափոխեն:

Այս դեպքում ինչ պիտի աներ թղթատար գնացքի վերահսկի-
չը: Նրա համար վագոնով գնացողը տոմսն է, անձնական վկայա-
կանը և ոչ թե անձը: Խեղճը պահանջում է վկայական, իրեն ներ-
կայացնում են անձ: Ինչին է պետք անձը:

Սվ մարդս տոմսը պահում է վագոնում, անձը նետում է վա-
գոնից դուրս, ինչպես որ թատրոնների մուտքի մոտ տոմսը ձղում
են, արմատը գցում դեն:

Այս ամենը լավ: Բայց թղթակիցը չի հարցնում, թե վնիկը որ
վագոնից իջավ — ի՞նչ եղավ:

Հայտնի չէ: Կորավ:

Դա վնաս չունի, որովհետև անձնական տոմսը տանն է, գըլ-
խավորը փրկված է, պրծավ գնաց:

Հիմի դուք երևակայում եք վերոհիշյալ անձնական տոմսի
հպարտությունը իր վկայելի անձի առջև, որն իմացել է իրեն տըր-
ված պատիվը, որ եթե ինքը մեռնակ լիներ վագոնում առանց իր
անձի՝ իրեն դուրս չէին գցի:

Բայց՝ այսպես թե այնպես՝ ամեն մի վկայականի՝ քիչ թե
շատ՝ պետք է մի անձ: Վերոհիշյալ վկայականը պետք է որսնե իր
անձը: Բայց եթե չգտնի՝ դատարկ բան է, չաթժե գարդ անել —
անձեր շատ կան լենինականում, — թող վկայականը գիմն ուր
հարկն է և կստանա նոր անձ, միայն մի փոքրիկ ձևականություն:
Այդ վկայականը մի հայտարարություն պիտի տա «Խորհրդային
Հայաստանում» այս ձևով.

«Կորցրել եմ վկայելի անձս՝ ստացած լենինականի Խորառ-
ծառից (համարը չեմ հիշում):

Համարել անվավեր»:

1925 թ.

Սա էլ դասախոսութեան ու ժողովի տիպ է: Դասախոսութիւնը սկսվեց թե չէ՝ անխուսափելի ինչպես օգոստոսի ճանճ, ներս կմանի ա կգա կնստի առաջին շարքերում:

Տխուր է, ինչպես ձանձրացած սուրբը:

Հատուկ պաշտոնով է գալիս դասախոսութեան և ոչ թե հետաքրքրութեամբ:

Դասախոսը ազատ է խոսելու ինչի մասին կուզի. քաղաքական, ամուսնալուծական, երաժշտական, կոոպերացիա, — միևնույն է, նա չպետք է լսի: Ամբողջ դասախոսութեան ժամանակ շվեյցարի լլին բնած է:

Բայց բավական է դասախոսը խոսքը վերջացնի: Մեկ էլ տեսաք՝ անդիմադրելի, ինչպես բնական պահանջ՝ զարթնեց ու ձեռք մեքենայաբար տնկեց վեր: Քնատ է թեև, բայց խոսք է պահանջում:

Պիտի ընդդիմախոսի, արդեն դրա համար է եկել: Նա էլ դրա մարդն է: Ուղղակի հակաճառութեան մեքենա:

Ու սկսում է: Մի ջախջախված ձայն էլ ունի, որ պատուով կաշիկի տեմբրն է հիշեցնում և տեղ-տեղ էլ պայթուցիկ է, ինչպես ժակված փուչիկ:

Նախ զարմանում են, թե ինչի՞ է խոսում: Բայց մի քանի խոսքից հետո նկատում ես, որ նրա խոսելն էլ իր անհրաժեշտութիւնն ունի:

Նրա պարտականութիւնն է հիմարութիւններ ասելը: Ուրիշ բանի իրավունք չունի. ու երբ խոսում է՝ նոր ես տեսնում, որ ինչպես ամեն բան, հիմարութիւնն էլ տաղանդի բան է. նա էլ իր վարպետն ունի, հատուկ պաշտոն է, մասնագիտութիւն, որ ամեն մարդ չունի:

Ամենահաստատ վալյուտան: Այնպիսի հմտարութիւններ կասի. որ յոթը տարի կշարշարվես՝ նմանը չես կարող ասել, բայց նա ձեռաց հնարը գտնում է: Մարդը ստած ունի, փորձված է, հիմարութիւնը նրա պաշտոնն է:

Շեքսպիր հիմարութեան:

Անցյալ օրը մի դասախոսութեան ժամանակ հանդիպեցի իրան: Նոր էր իջնում ամբիոնից՝ քրտնած, ինչպես քիստալի:

— Բարեւ,— ասի,— ո՞նց եք: Սայուզում գրված եք:

— Ո՛չ, սայուզում չեն ընդունում:

— Լավ կլինե՞ր ընդունվե՞իք:

— Իհարկե: Ահագին նալոգ են առնում: Տեսնե՞ք, մենք էլ, հակաճառողական մի տրեստ ենք հիմնում և մտադիր ենք կոնցեսիա վերցնել և կապիտալը կենտրոնացնել Երևանում:

— Ներեցեք,— ընդհատում եմ.— հիմի այդ հակաճառութիւնների համար ոտճի՞կ եք ստանում, թե հատուկ արտոնութեան ունեք, կամ գուցե միլիցիան է ստիպում:

— Ի՞նչ եք ասում, ջանքւմ, ազատ շինարարութիւն է. նէպ, на хозяйственный расчёт, գործում ենք:

Շատ եմ սիրում իրան. բոլոր դասախոսութիւններին գալիս է: Եվ եթե նրան լսելը տոմսակով լինե՞ր և տոմսակը հարյուր մանեթ արժենար՝ շալվարս կծախեի և սպիտակեղենով կվազեի իրան լսելու:

1925 թ.

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄՈՐՈՒՔԸ

Մոկաց աշխարհում, ով գիտե, գուցե և Ապարանում, բայց և ինչո՞ւ ոչ Քանաքեռում կամ հենց ուղղակի Երևանում՝ ինչպես ընդունված է՝ մի մարդ ու կնիկ են լինում: Շատ ջահել՝ շատ սիրով: Շատ սիրով, շատ միամիտ: Օրվա մեկ օրը ամուսինք մի փոքրիկ հայելի է գտնում: Բերում է հայելին դնում (առանց մեջը նայելու) իր բարձի տակ. կինը հայելին տեսնելով՝ հետաքրքրվում, վերցնում նայում է մեջը: Ով սարսափ: Սա ի՞նչ կնկա պատկեր է: Ի՞նչ գործ ունի այդ կնիկն իր ամուսնու հետ: Դժմում է ամուսնուն.

— Չե՞ւ ամաչում, էս ի՞նչ կնիկ է բարձիդ տակին:

— Ի՞նչ կնիկ:

— Այ, էս կնկա պատկերքը:

Մարդը առնում է հայելին, նայում է և գուցե՞ր գցում:

— Անզգամ, էս ի՞նչ մարդ է քո բարձի տակին: Մարդ ես ճարել, հա՞:

— Զանըմ, կնկա պատկերք է:

— Շատ մի պցի, տղամարդու պատկերք է:

Մի փոքրիկ ծեծ՝ ինչպես ընդունված է՝ տեղի ունենալով տարակուսված ամուսինները դիմում են հարևանին: Սա նայում է հայերուն և ասում է. «էս մեր գյուղի գզիրն է»: Մի ծեր մարդու են ցույց տալիս՝ ասում է՝ ժամկոչն է: Ճարահատված՝ տանում են դեղի տերտերի մոտ:

— Տեր ջան, մի մտիկ տուր, ասա՛ էս ի՞նչ առակ է:

Տերտերն ուշի-ուշով նայում է հայելու մեջ և հարցը լուծում.

— Սա ո՛չ կնիկ է, ո՛չ տղամարդ և ո՛չ ուրիշ բան. սա ինձ ձեռնադրող եպիսկոպոսն է՝

Տեսե՛ք՝ մորուքը:

Եպիսկոպոսն ու մորուքն այնպիսի արգումենտներ են, որից դենը ոչ մի հարցապնդում չարժե անել:

Մարդ ու կնիկ դառնում են տուն: Հայելին մինչև օրս տերտերի մոտ է, եպիսկոպոսի մորուքն էլ մեջը:

Երբ ման եմ գալիս Երևանի (և ինչո՞ւ ոչ նաև Լենինականի, Ղարաբաղիսայի, նաև Թիֆլիսի) բուլվարներում, փողոցներում և հիմնարկներում՝ ասուլիսի ժամանակ՝ ինչպես ընդունված է՝ նաև հարց է լինում այն մասին, թե.

— Ի՞նչ կա, ի՞նչ չկա:

Երբեմն նաև թե.

— Ինչպե՞ս է ձեր դրուժյունը:

Երբեմն էլ ուղղակի.

— Ինչպե՞ս եք գտնում մեր երկրի դրուժյունը:

Այնպիսի բազմազան պատասխաններ ենք ստանում, որ կարող եք զուխներդ կորցնել եթե բավական ամուր չբռնեք:

Այսպես, անցյալ օրը մի շատ հարգելի բարեկամի հարց տվեցի՝ թե ինչպե՞ս է գտնում նա մեր երկրի դրուժյունը:

Նա հաստատուն շեշտով պատասխանեց.

— Շատ վատ: Եվ ասեմ՝ ինչու. նախ՝ հիմնարկները չեն հանձնված այնպիսի մարդկանց, որոնք ունեն երեսուն-քառասուն տարիների փորձ: Ոչինչ չեն հարցնում մեզանից: Չկա սխտեմ, չկա մեթոդ, արդյունաբերությունը գտնվում է ամենա-

հետամնաց աստիճանի վրա: Ոչ ոք ոչինչ չի հասկանում: Դպրոցները միանգամայն անսխտեմ, և այլն, և այլն:

Բարեկամիս մի ուղղում ուղեցի անել:

Ընդհատեց և շարունակեց.

— Միանգամայն հակառակը, — ոչ մի ուղղություն չկա, ոչ մի ծրագիր, ամեն բան պատահաբար է արվում: Ես միանգամայն ուղիղն ասող մարդ եմ և շատ լավ գիտեմ այդ ամենը:

Բարեկամս ուղիղ քչեց ու գնաց այդ ուղղությամբ, և ես ոչինչ տուարկել չհարողացա:

Մոտ օրերս էլ մի ուրիշ բարեկամի պատահեցի և խոսքը դեռ-դեն շուռ տալուց հետո՝ հարցրի իրեն, թե ինչպե՞ս է գրտնում մեր երկրի դրուժյունը: Բարեկամս, որ ստամոքսի խրոնիկ կատարով էր տառապում տարիներե ի վեր՝ ճորաց.

— Ի՞նչ ի՞նչ երկիր. ի՞նչ դրուժյուն: Ամեն բան քայքայված է և հույս չկա վերաշինության: Սարսափելի վիճակ է և օրըստօրի վատանում, կործանվում, ոչնչանում է ամեն բան:

Չարժե խոսել, ափսոս չե՞ս:

Շատ պիտի շարունակեր բարեկամս այս տխուր վեպը՝ եթե ստամոքսային սուր ցավերը չստիպեին շտապել տուն:

Ես այս բարեկամներիս խոսքերի մեջ գտա մի բան, որ շատ ծանոթ թվաց ինձ, և մտածեցի, որ այդ բանը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ վերոհիշյալ հայելին և եպիսկոպոսի մորուքը:

Մի ծանոթի, որ նոր էր եկել Երևան՝ հարցրի, ինչպե՞ս եք գտնում մեր երկրի դրուժյունը:

— Հոյակապ: Հիանալի: Կարող եմ ասել՝ սքանչելի: Խաղողը մանավանդ գերազանց է և ես գտնում եմ, որ մեր երկիրը միանգամայն և կատարելապես վերաշինված է: Ես ուղղակի զարմացած եմ: Երջանկություն — ահա մի բառով մեր երկրի գրուժյունը:

«Եպիսկոպոսի մորուքը», — մտածեցի ես և երջանկորեն քաժանվեցի իմ բարեկամից:

Բայց Հայաստանում բավական եպիսկոպոսի մորուքներ կան:

— Մեկն անգործ է, — և ահա Հայաստանը լիքն է անգործությամբ, Հայաստանն ամբողջ անգործ է: Մյուսը ոտնիկը ուշ է ստացել, և ահա սրա եպիսկոպոսի մորուքը մասյլ գույներով է ներկված:

Մի եպիսկոպոսի մորուք կար թիֆլիսում, որի համար Հայաստանը վրան խաչ քաշած երկիր էր, որովհետև Երևանից իրեն չէին հրավիրել հատուկ պայմաններով և որոշ ոռճիկով:

Սով. Հայաստանի հայելիների մեջ շատ եպիսկոպոսական մորուքներ կան, և մորուքների էլ զանազան տեսակներ կան:

Ինչպիսի անհատ, այնպիսի մորուք: Ամեն մարդ իր մորուքն է տեսնում Սով. Հայաստանում: Եվ մորուքների էլ հատուկ տեղերը կան և ժամանակները:

Մեյդանում ուրիշ տեսակ եպիսկոպոսի մորուքներ կան, բովվարում՝ ուրիշ: Այլ է լենինականցու մորուքը, այլ՝ թիֆլիսեցու: Արտասահմանի եպիսկոպոսի մորուքն արտասահմանյան է և միանգամայն տարբեր երկրի մորուքներից, բայց այս ամենի մեջ մի բան նման է — հայելին և մեջը նայողները:

Ով որ եպիսկոպոսի մորուքը չի ուզում տեսնել՝ պետք է խուզի այդ մորուքը և հայելին իր երեսից դարձնի դեպի առարկաները:

1925 թ.

«ԳՐԱՆԻՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»*

— Այս ի՞նչ աղմուկ է քաղաքում:

— Դա Աղաբեզն է, կարագ է ուտում իր տանը:

Թույլ տվեք, սիրելի ընթերցող, որ այսպես սկսեմ վեպս, որովհետև հենց այսպես, — այսինքն այս հարց ու պատասխանով էլ սկսվեց երևանյան խաղաղ առավոտներից մեկը:

Հարց ու պատասխանը տեղի ունեցավ մեյդանի կողմերը, երկու անհայտ գյուղացիների մեջ, որ այս ասելուց հետո մտան ամերիկյան շուկան շալվար քնելու:

* Այս ստեղծագործության առաջին կեսը սպաղրվել է 1926 թվականին, «Կարմիր մոծակ»-ի № 1, 2, 3-ում: Երկրորդ կեսը ձեռագիր վիճակում պահվում է ՀՍՍՀ Գրականության և արվեստի թանգարանում: Մ. Խ.:

Եվ ուրիշ ոչինչ:

Մնացածը խաղաղ ու սովորական էր մեր օրհնյալ Երևանում: Նույն խանութների հորանջող ճարտարապետությունը, նույն իշական տողանցքը քնած հեծյալների՝ մինչև գետին հասնող և գետինը գծող իրենց ոտներով: Նույն գյուղացիները, որ քնած տեղից վեր թռչելով քաղաք էին շտապել առևտրականներից խաբվելու:

Միայն առևտրական շենքերի առջև մի կառք կանգնեց, որի մեջ նստած էր մի երիտասարդ, շատ ծանր պորտֆելով: Այս երիտասարդը կառքից իջնելիս ծույլ-ծույլ նայեց մայթում կանգնած երկու գյուղացու, որ կարող էին ապարանցի լինել: Այս գյուղացիներն էլ երիտասարդին նայեցին: Այսքանը:

Պետք է ասեմ, որ այդ առավոտ ես շատ լուրջ պատճառներ ունեի մեյդանի կողմերը գնալու: Պետք է գտնեի իմ բարեկամներին:

Ես և Մուկուչը (իմ երիտասարդ բարեկամներից մինն է, որի հետ անպատճառ կծանոթացնեմ ձեզ) մի կարևոր գյուտ արինք անցյալ գիշեր, որը միանգամայն պիտի հեղաշրջի սովետական տնտեսությունը — այնքան որ մեծ էր նրա նշանակությունը: Ես ուզում էի հավաքել բարեկամներին, հայտնել գյուտը, և եթե կհամաձայնվեին, հիմնել մի գիտական-առևտրական ընկերություն՝ գյուտը կիրառելու:

Կանգնեցի Ղանթարի մոտերքը և աչքս պեցցի չորս կողմ, որ նրանց գտնեմ:

— Ժամի քանի՞սն է, — հարցրի մի մարդու, որ հին ժամացույցներ ուսից կախած, ծախում էր: Այս մարդը, որ ոչ մի տեսակ մարդու նման չէր, այլ միայն իրեն էր նման՝ չորս կողմը նայեց և ասաց.

— Տասը, ճիշտ:

— Ինչպե՞ս իմացաք, — հարցրի զարմացած:

— Այ, այն կատվի աչքերից, — պատասխանեց նա, — տեսեք աչքի ոսպը որքան մեծ է: Հիմա քանի օրը վեր գա, ոսպը կփոքրանա: Ճիշտ կեսօրին ամենից փոքր ժամանակն է: Նայեցեք, այն հիմնարկի վարիչն ուշացել է: Ասել է՝ նա իր ժամացույցով է գնում հիմնարկ — որ ճիշտ չէ, իհարկե:

— Լավ, այդ ժամացույցներդ ո՞ւմ եք ծախում, — հարցրի ես հետաքրքրվելով:

— Այսպէս՝ ծառայող-մառայողի: Ընդոտ ասած՝ նրանց էլ պէտք չեն այս ժամացույցները: Ամենալավ ժամացույցը հատուն է:

Սա շնորհակալութիւն հայտնեցի այս տարօրինակ մարդուն և գնացի Վաղոյի խանութը, որ մտտիկ շարքերումն էր: Վաղոն այն երիտասարդն է, որին մի անգամ իշի վրա տեսնելով՝ այդպէս գրել էի, թե՛ տեսաւ իշի վրա, որ նա զրպարտութիւն համարելով՝ եկավ խմբագրատուն բարոյական բազմարարութիւն պահանջելու ֆիզիկապէս և իր պատիվը վերականգնելու: Բայց մենք հետո բարեկամացանք, և նա հիմա իմ սնունդով է երդում: Նա մեծ այգիներ ունի Ղամաբուրի կողմերում և շատ լավ ողա է: Վաղոն խանութում չէր՝ բայց այնտեղ էր կրճատված քարեկամ: Սա շատ և՛ ուզում, որ ժանոթ լինեք նրա հետ: Քսանիկ թվականից շարունակ մտնում է հիմնարկները ծառայելու ու կրճատվում է շարունակ և, որովհետև մոր արգանդումն էլ բավական կրճատված է եղել, ուստի կարճատևացն էլ է և քանի կրճատվում է՝ այնքան բիթը կախում է ու կրկարացնում: Նա մի խոշոր կարտուզ ունի մինչև սպանդնեք խոտ և մի երկար վերարկով՝ մինչև կրունկները: Ետունակ մտտնոց է և տարականխ պէս անակնկալ երևում է ամեն տեղ:

Ես նրան հայտնեցի, որ կարեւոր գեպք է պատահել, պետք է գտնել մեր ընկերներին:

— Նոր հիմնարկ է բացվել, — հարցրեց նա ներքին շուրթը կախ գցելով:

— Ի՞նչ, — ասի ես, — հիմա էլ կարիք չկա ոչ մի հիմնարկի: Սա և Մուկուչը այնպիսի գլուտ ենք արել, որ ցկյանս ապահով ենք ոչ միայն ես, դու և մեր ընկերները, այլև Սովետական Հայաստանը:

Կրճատված բարեկամս, որ միշտ տխուր քթով էր ման գալիս քաղաքում, մի քիչ ուրախացավ:

— Ի՞նչ գլուտ է դա:

— Գլուտը հետեւյալն է (բայց սա խիստ գաղտնի եմ հայտնում քեզ): Ե՛նք գտել ենք Հայաստանի գրանիտից աղյուս պատրաստելու մի եղանակ:

Կրճատված բարեկամս, որ սմբել էր իր վերարկուի և կարտուզի մեջ, ոգնու պէս քիթը սրեց դուրս և նորից հարցրեց.

— Ի՞նչ տեսակի աղյուս է լինելու դա:

— Աղյուսը, — բացատրեցի ես, — այնպիսի հատկութիւն պիտի ունենա, որ նախ սովորական աղյուսից անհամեմատ պինդ լինի: Իհարկե, դա ավելի պինդ չի լինի գրանիտից. բայց աղյուսից ավելի դիմացկուն լինելով՝ շենքերի հիմքերի և ստորին մասերի համար հիանալի նյութեղեն է: Հայաստանը անսպառ ու անհատնում գանձարան է ամեն տեսակ քարերի և մասնավորապէս գրանիտի, ուստի և կարելի է մեծաքանակ աղյուս պատրաստել և արտահանել թե՛ Հայաստանում և թե՛ Միութեան բոլոր նահանգները մասսիվ շենքերի հիմնարկատե համար:

— Կիր, — վեր թռավ կրճատված բարեկամս: — Մեր կոտայքում վարմանալի շատ քար կա: Ապարտանում, Զանգեզուրում, Սարգաբաբադում... Բոլորը քար է:

— Գրեա՛մ: Քարից ավելի ի՞նչ կա Հայաստանում: Եվ ահա այդ հարստութեանը պիտի շահագործենք ամենալայն շահերով: Բարեկամս անցուդարձ արավ, հառաչեց և քիթը խփշտեց:

— Ապա ինչ գիտես, — ասի ես, — մենք հարուստ երկիր անենք, և քեզ նման գործունէ մարդիկ անգործ են: Չէ, մեծ գործ ենք ստեղծելու, և դու էլ կազատվես խրտինդ կերպով կրճա...

Բառը շվեքացրի, որովհետև կրճատված բարեկամս այդ բառը չէր սիրում և հետո չէր ընդունում: Նա ասում էր, որ երբ կրճատելու հարկ լինի՝ ավելի շուտ Հայաստանը պետք է կրճատել, քան թե՛ իրան, որովհետև եթե Հայաստանում մի ամենակարեւոր շինարարական ուժ կա՝ դա ինքն է, ու միայն նախանձոտ և խարդախ մարդիկ են, որ իրան չեն գնահատում և շարունակ կրճատում են:

Նա սաստիկ հետաքրքրվեց այդ գլուտով: Մենք գնացինք սրճատուն մեր մշտե բարեկամներին որոնելու: Այնտեղ ոչ ոք չկար՝ բացի վառարանից: Նստեցինք և սկսեցինք սպասել նրանց: Եվ իսկապէս նրանք մեկ-մեկ եկան: Սո ուզում եմ ծանոթացնել ձեզ նրանց հետ ևս: Նրանցից մինը ջղային բարեկամս է. այն մարդը, որն իր հետ հեռախոսների ասածներում բայ չգտնելով՝ խենթացավ և հիվանդանոց տարվեց: Այնտեղ նրան շատ դարմանալի մեթոզով բժշկեցին: Բացատրեցին, որ հեռախոսները գործ են ածում բայ, բայց այդ բայերը ինչ-ինչ պատճառներով մնում են երկաթալարերի մեջ և թող նա հասկանա ինչ բայ որ ուզում է. բայը բայ է: Նա ինքն էլ համոզվել էր և ասել թե՛. ւլավ, էլ թող

բայ չլինի: Եվ վերջապես ինչնեբրի՞ս է պետք բայր: Դա քերականութուն է»:

Այնպես որ խնդիրն այդ կերպ էլ լուծվել էր, և ջղային բարեկամս առողջացել էր և հիվանդանոցից դուրս եկել: Նա դեռ ջղային է: Բայց տեսնենք, շատ ջղային մարդ է, ևս ուզում եմ, որ նա անպատճառ լինի մեր կոմպանիայի մեջ: Նա մեզ պետք է «կապի» համար:

Մեր բարեկամներից մյուսը մի շատ կարդացած երիտասարդ է, որին կոմունիստները տատանվող ինտելիգենտ են ասում: Մենք համաձայն չենք դրան, ճիշտ է, նա սովորություն ունի միշտ Աբովյան փողոցով դեպի վեր գնալու՝ այն ժամանակ, երբ պետք է դեպի ներքև գար, և ներքև է գալիս, երբ այդ ժամանակ դեպի վեր պիտի գնար, ինչպես նաև կեսօրին հերքում է մի միտք, որ առավոտը կատաղի պաշտպանում էր, բայց մեր կոմպանիայում այնպես է կարծվում, որ դա բոլորովին էլ տատանվելու նշան չէ: Ընդհակառակն, դա ապացույց է նրա հաստատամտության: Որովհետև ինչ ընդհանրացում է, ինչ մտքի վրա կանգնած է լինում, այդ ընդհանրացում է, պիտի ասեմ, շատ հաստատ և անատատան կերպով: Մենք որոշել ենք անուշադիր թողնել պարտիականների այդ կարծիքը և վճռել ենք հարգել մեր բարեկամին և հենց նրանց ջգրու մեր բարեկամին կոչել (այո՛, այո՛) «Տատանվող ինտելիգենտ»:

Իհարկե, մեր բարեկամները շատ են, և ես նրանց հետ կծանոթացնեմ «ընթացքում»: Բայց անհրաժեշտ եմ համարում խոսել Մուկուչի մասին:

Մուկուչը մեր կոմպանիայի ամենակարևոր անդամն է: Նա քսան-քսաներկու տարեկան, «շուն կերած» տղա է: Շատ ձիթեք ունի. օրինակ դերասանական, բայց կյանքի մարդ է, սիրում է կյանքի գործը: Ուստի և անհանգիստ ընկած է դեռ ու դեն: Մի քանի տարի առաջ նա հիմնարկ էր «ուռցնում» իր համար պաշտոն ստեղծելով, մնում էր այնքան, մինչև կզգար, որ հիմնարկը պիտի կրճատվի, ու դեռ չկրճատված՝ անցնում էր ուրիշ հիմնարկ, և այդպես մինչև վերջ: Վերջերս թողել է այդ գործը: Հետո կտեսնենք, թե ինչ տղա է: Առայժմ այսքանը բավական է:

Մենք նստեցինք խորհրդակցության: Նախ Մուկուչը բացատ-

րեց գյուտի տեխնիկական կողմը, ապա ես բացատրեցի նրա նշանակությունը:

Տատանվող ինտելիգենտը (կրկնում եմ դա «նրանց» բառն է), լսելով մեր զեկուցումը, ճակատը կնճռոտեց և հարց տվեց.

— Արդյոք այդ գրանիտը, որից աղյուս պիտի շինվի՞ նախապես պետք է մի փոփոխություն ենթարկվի:

Ես մի քիչ վախեցա և բացատրեցի.

— Գրանիտը պետք է նախապես փշրվի մեքենայի կամ քիմիական միջոցներով:

— Հետո նո՞ւյն կերպ պետք է պնդացվի,— նորից հարցրեց տատանվող ինտելիգենտը շեշտ նայելով աչքերիս:

— Այո, մեքենայով էլ պետք է մամլվի և պնդացվի,— պատասխանեցի ես՝ արդեն անհանգիստ:

— Միանգամայն երևելի և չափազանց մեծ օգուտ է,— ասաց՝ անսպասելի ինձ համար՝ տատանվող ինտելիգենտը և այնպես հաստատ, համոզված տոնով, որ ես չգիտեի ինչ անեի ուրախությունից, մինչ կարծում էի, պիտի հակառակի:

Եվ ընդհանրապես այդ օրը ոչ ոք չէր առարկում.

Մուկուչն ու ես առաջարկեցինք ընկերություն հիմնել այդ գյուտի կիրառման համար, թեև կարելի էր երկու հոգով առաջ տանել գյուտի հարցը և պատենտ վերցնել: Բայց որոշեցինք նախ սոցիալիստորեն նայել խնդրի վրա, մեկ էլ, որ գյուտը շատ մեծ բնագավառներ է ընդունելու և մեզ մարդիկ էին պետք:

Մենք որոշեցինք անցնել գործի:

Տատանվող ինտելիգենտը հարցրեց.

— Ինչպե՞ս պիտի կոչվի մեր ընկերությունը:

— «Գրանիտ ընկերություն»,— ասաց մեր ընկերներից մինը:

— «Գրանիտ աղյուսային ընկերություն»,— ասաց մյուսը:

— Ոչ,— հակառակեց տատանվող ինտելիգենտը,— պետք է կոչել «Որձաքարային աղյուսագործական ընկերություն». դա հայերեն է:

Ես նկատեցի՝ քանի որ մեր ձեռնարկը համամիութենական և միջազգային բնույթ պիտի ունենա, հարմար էր, որ միջազգային բառով լինեի ընկերության անունը.

— Առևտրական տեսակետից էլ հարմար է,— նկատեց կըրձատված բարեկամս:

— Ոչ,— պնդեց տատանվող ինտելիգենտը,— ես քեմ չեմ հայ լեզուն աղավաղելուն և առաջարկում եմ հետևյալ ժողովում գնելու այդ կարևոր հարցը:

— Բայց մենք վաղը պիտի կազմենք կանոնադիրը և ներկայացնենք կառավարության: Ժամանակը ֆանկ է:

Տատանվող ինտելիգենտը լսել անգամ չէր ուզում:

Ես ուզում էի զիջել, բայց այդ ժամանակ կրճատված քարեկամս, որ հնում եղել է քաղաքային դպրոցում, պնդեց, որ քնկերությունը պիտի կոչվի «Гранитно-кирпичное общество»:

Տատանվող ինտելիգենտն աչքերը սրտազարկեց կրճատված քարեկամիս վրա.

— Չե՞ք կարող՝ Հայաստանի բոլոր քաղաքները ուսուցչերը:

— Է՛հ, քարերը հա՞յ են ծնվել,— հեզմեց կրճատված քարեկամը:

— Այո, հայ են ծնվել,— բռունցքը քարեկամի սեղանին տեսց տատանվող ինտելիգենտը:

— Հա՞...

— Հա՛ա...

Ես ու Մուկուչը հանգստացրինք տատանվող ու կրճատված վիճարանողներին, ասելով, որ այդ հարցը կրճենք մյուս ժողովում և կարող ենք մինչև անգամ դիմել հեղինակավոր անձերի՝ հարցը լուծելու:

Տատանվող ինտելիգենտը հանգստացավ մի քիչ, և մենք անցանք հետևյալ օրակարգին, որ Մուկուչն էր մշակել նախօրոք առանց ինձ հարցնելու: Ես վստահ Մուկուչի ձեռնարկումներին, ձայն չհանեցի և առաջարկեցի Մուկուչին զեկուցել և առաջադրել նա առաջարկեց ներկաներին համարել քնկերության հիմնադիր անդամներ, և կազմը լրացնել նոր անդամներով: Մեզ կարևոր են սպեցներ, թղթակիցներ, մամուլի և գրականության ներկայացուցիչներ, առևտրա-արդյունաբերական և այլ հիմնարկների ծառայողներ: Բայց առայժմ պիտի անդամ համարել Միշա Ոսկեբերանին, որ քաղաքում չէ: Նա վաղը կգա:

— Միշա Ոսկեբերանն ինչների՞ս է պետք,— հարցրեց կրճատված քարեկամս:— Նա դժվար է խոստում և խոսեցիս էլ չի հասկացվում, թե ինչ է ասում:

— Միշա Ոսկեբերանը շատ բարեկամներ ունի հիմնարկներ:

րում: Նա մեզ պետք է, որովհետև մենք առավտուրից մինչև երեկո հիմնարկները պիտի ընկենք,— բացատրեց Մուկուչը:

— Լավ, ընտրեցեք, եթե այդքան պետք է գործին Ոսկեբերանը:

Ընտրեցինք միաձայն:

Միշան նրա համար էր Ոսկեբերանն կոչվում, որովհետև բոլոր տատանները ոսկուց են: Ես մի քիչ հույս չունեմ, թե նա գործ կկատարի, բայց վստահ եմ Մուկուչի գործնական խելքին:

Մեր քնկերությունը հիմնվեց: Վաղը կարողում ենք կանոնագիրը, տանում ենք ներկայացնում ի հաստատություն: Այնուհետև, անցնում ենք ընթացիկ գործերի:

Բայց ընկերությունը անվան հարցը մի քիչ մտահոգում է: Տեսնենք:

Հետևյալ օրը «Պրանիտ քնկերության» ժողովը նոր պիտի սկսեինք, որ կրճատված քարեկամս քիթը դռանը ջորդելով՝ ներս ընկավ ու գոռաց.

— Միշա Ոսկեբերանը եկել է:

Տատանվող քարեկամս բարկացավ.

— Այնպես լեղադատատա: ներս ետ ընկե՞ում, կարծես Աբգար թագավորն է եկել...

Մուկուչը կանխելով կոտրել, ոտի կանգնեց և պետեց.

— «Պրանիտ քնկերության» ընդհանուր ժողովը հայտարարում եմ բայցված:

Տատանվող քարեկամս վերցրեց գազազանը, գլխուրդը ու վեր թռավ:

— Ո՛ւր,— հարցրինք վախեցած:

— Ես հաստատ կերպով և վերջնականապես հայտարարում եմ, որ եթե մեր քնկերությանը պիտի գրանիտ կոչվի և ոչ որևէ քարային՝ ապա ես իսպառ հրաժարվում եմ մասնակցելուց:

Մուկուչը քրտնեց.

— Դե, Տատան, հորդ գեթեղժանը կտրես, էլի մի հակառակի:

— Ես այլասեռված չեմ,— պնդեց տատանվողը և քայլերը հաստատորեն ուղղեց դռան:

Մուկուչը հետևեց ընկավ.

— Քեզ հետ եմ, Տատան, ինձ նայե՛, ախր մեր ժողովում լուծվում են շինարարական հարցեր:

Խորհրդային Հայաստանի շինարարությունը...

— Հարկավոր չէ, թող շինարարություն չլինի, եթե մենք պետք է այդպես այլասեովենք:

— Տատանո՞ւք ես ասում, լսիր...

Տատանը դեմքը սարսափելի թթվացրեց.

— Ոչինչ էլ չեմ ուզում լսել, ոչնչից ոչինչ էլ գուրս չի գա, շինարարությունից էլ և ամեն բանից էլ...

— Լավ,— վճռեց Մուկուչը,— թող ընկերությունը կոչվի որ- ձաքարային: Համաձայն էս, դե, եկ նստի:

Տատանը եկավ նստեց:

Մենք ուրախացանք, որ շարը այսպես խափանվեց: Բայց այդ վճռի տպավորության տակ մի քանի բոպե ծանր լուծվում տիրեց:

Այդ ժամանակ ներս մտավ Միշա Ոսկեբերանը: Եվ ձվածեղի պես ծիծաղելով մտեցավ:

— Բարև, էս ինչո՞ւ դայու ճաշարանում չեք նստել, լավ բորշ կա այսօր:

Ոչ ոք նրան չպատասխանեց:

— Մի՛ խանգարի,— նկատեց կրճատված բարեկամս լուրջ և խիստ նայելով Միշա Ոսկեբերանին:

Միշա Ոսկեբերանը զարմացավ: Մեկ-մեկ նայեց մեզ, հետո տեսնելով մեր լրջությունը՝ ինքն էլ ազդվեց ու կամացուկ նստեց: Հետո դարձավ կրճատված բարեկամիս.

— Կաթողիկո՞ս է մեռել:

— Սպասի,— փսփսաց կրճատված բարեկամս,— ի՞նչ կաթողիկոս, Գրանիտ ընկերության ժողովն է:

— Հա՛հա՛հա՛,— ասաց Միշա Ոսկեբերանը՝ կարծես հասկացավ, և, ով գիտե, ի՞նչ հասկացավ. սկսեց ակնածություն մար- յել մեզ և հետևել ժողովին:

Մուկուչը շարունակեց ժողովը.

— Ընկերներ, — ասաց,— լավ կլինի, որ մենք քարտուղար ընտրենք և արձանագրություն պահենք և իբրև հայագետի և հայոց լեզվի դասատու՝ ես առաջարկում եմ ընտրել Տատանին:

— Ոչ, ես հրաժարվում եմ,— ասաց Տատանը,— ես 1921 թվից հետո ոչ մի բան չեմ գրում և չեմ կարդում նոր ուղղագրու- թյամբ:

— Ապա ինչպե՞ս ես լեզուն ավանդում:

— Ես լեզուն թողել եմ, երգեցողությունն եմ դաս տալիս: Մենք զարմացանք:

— Ապա անուն ազգանունդ ինչպե՞ս ես ստորագրում ոտճիկա- ցուցակին մեջ՝ Ղևնդ Քյուրբչյա՞ն:

— Անունս զագսում փոխել եմ Մկրտիչ Գնունի, և հին ուղղա- գրությունը պահել:

— Ջանք, բերեք ես կարձանագրեմ,— ասաց կրճատված բարեկամս:

— Օհո, կրճատ, հայերեն այդքան սովորե՞լ ես,— ուրախա- ցավ Մուկուչը:

— Հնով չէի կարողանում, բայց նորով հեշտ սովորեցի:

Մենք համաձայնեցինք: Բայց Տատանը խեթ նայեց կրճատի կողմը և փնթփնթաց.

— Նոր ուղղագրության ամենամեծ վնասներից այն եղավ, որ ինտելիգենտն ու ռամիկը չես կարող զանազանել — բոլորն էլ միատեսակ են գրում:

— Այսինքն ինչպե՞ս,— հարցրի ես:

— Տգետը չի սխալվում, որ ճանաչվի, թե տգետ է: Մուկուչը, սակայն վերջ տվեց այս խոսակցության.

— Ընկերներ, գործից հասկացող մարդիկ այս առավոտ ինձ բացատրեցին, որ տնտիսորհր մեր ընկերության կանոնագրությունը չի հաստատի, մինչև որ մենք նրան չհամոզենք մեր գյուտի գե- րագույն կարևորությունը Խորհրդային Հայաստանի համար: Պետք է մենք համոզիչ հիմքեր գտնենք և մեջ բերենք մեր դիմումի մեջ: Ո՞րն է մեր ընկերության հիմքը:

— Քարը,— ասաց զղային բարեկամս:

— Այո՞, քարը, բայց ի՞նչ մեկնաբանություն:

— Այն մեկնաբանություն, որ ամբողջ Հայաստանը քար է:

— Ծիշտ է: Ամբողջ Հայաստանը քար է: Ահա մեր գյուտի հիմքը: Այնպես չէ՞, Լավ: Ուրեմն Ջղո, այդպես էլ արձանագրիր. «Ամբողջ Հայաստանը քար է»:

— Եվ մնացել է քարի դարից,— կցեց կրճատված բարեկամս բոլորովին անհասկանալի, թե ինչ ասել է մնացել է քարի դարից:

— Դա ինչո՞ւ համար էր,— բարկացավ Տատանը և կատաղած վեր թռավ:

— Այսինքն ուզում են գրանով տնտխորհին համոզել, որ Հայաստանը քարոտ երկիր է:

— է, տնտխորհը չի՞ իմանում, որ Հայաստանը քարոտ երկիր է: Գու ինչո՞ւ ես գրության ոճին խառնվում:

Այստեղ Մուկուչը վրա հասավ:

— Ես գտնում եմ, որ մեր կրճատված բարեկամը (ներողութուն), ճիշտ է ասում: Իհարկե, ամբողջ Հայաստանը քարոտ երկիր չէ, և ընկերք հիմաբաթյուն է անում (ոչինչ, ներողութուն), բայց խնդիրն այն է, որ մենք տնտխորհին կհամոզենք այն ժամանակ, երբ Հայաստանում շատ քար ցույց տանք: Քար, քար, քար — ասա մեր ընկերության գոյության իմաստը:

— Ծիշտ է, — ասացի ես, — ամբողջ Հայաստանը քարոտ չէ:

— Ե՛հ, — ճատագից կրճատված բարեկամս, — ինչ լավ կլիներ, եթե ամբողջը քար լիներ:

Ինչե՛կ, մե՛ծք տնտխորհին ներշնչելու համար այդպես էլ ձևակերպեցինք. «ամբողջ Հայաստանը քար է և մնացել է քարե դարից»:

— Հիմա, ընկերներ, — ասաց Մուկուչը, — մեզ պետք է մի քիմիկոս, ու գիտական ձևակերպում տա մեր դիմումին՝ նախ մի անգամ փորձ կատարելով՝ գրանիտը աղյուս դարձնելով, ես առաջարկում եմ քիմիկոս Հոփսիմյանին, որը նոր է եկել գավառից և պաշտոն է որոնում: Ո՞վ կանչի նրան:

— Միշա Ոսկեբերանը:

— Ո՞ւմ հետ է ման գալիս, — հարցրեց Միշա Ոսկեբերանը՝ զգալով, որ հիմա էլ իր ընդունակությունները պետք եկան:

— Հա՛ա՛ա՛, այ դա Միշա Ոսկեբերանի գործն է: Գե հարցրու՛ շինարար, ճարտարապետ Կարապետ Կարապետյանին:

Միշան մոտեցավ հեռախոսին և սկսեց.

— Կենտրոն: Կենտրոնն է: Տվեք Կոմունիստի բաղնիս:

— Շինարար ասացին քեզ:

— Գիտեմ: (Լսում է): Բաղնի՞սն է: Բաղնիս: Հա: Շուտ տվեք: Զգալին բարեկամս վեր թռավ ու սիրթնեցավ գնաց խլեց լսափողը Միշա Ոսկեբերանի ձեռքից:

— Կենտրոն: Կենտրոնն է: շատ լավ: Տվեք Շինարար: Շնորհակալություն: (Զանգահարում է): Որտեղի՞ց է, բաղնիսի՞ց: Զե՛

ով ասավ բաղնիսը տաք, է՛: Ի՞նչ եմ անում բաղնիսը: Տվե՛ք Շինարար:

— Ի՞նչ, որտեղի՞ց եք փոսում: Էջմիածնի՞ց: Ի՞նչ է ասում: Ի՞նչը կապեմ էջմիածնի հետ, բաղնի՞սը...

— Ծղբար, հեռախոսով շատ կուշանա, — նեղսրտեց կրճատված բարեկամս:

— Ոտով գնացեք ասացեք:

— Ախր շնն թողնում, որ ես ձեռաց փոսեմ, էհ, — գանգառվեց Վիշա Ոսկեբերանը:

— Ինչպե՞ս թե, Ի՞նչ ես ասում, — զոռաց ջգագին բարեկամս:

— Այդպես է, — բացատրեց Միշա Ոսկեբերանը, — շինարարը, որ ուզում ես՝ տալիս են բաղնիս, հետո էջմիածին, հետո...

Զանգը տվին: Զղային բարեկամս լսափողը դրեց ականջին.

— Ո՞վ է խոսողը: Կենտրո՞նը: Հա, Ի՞նչ եք ուզում: Կենտրոնն եք ուզո՞ւմ: Ինչպե՞ս թե՛ կենտրոնը դուք եք ու կենտրոնն եք ուզում:

Միշա Ոսկեբերանը բացատրեց.

— Այո, պատահում է, որ կենտրոնը փրան փորցնում է և սկսում է փնտրել քաղաքում: Ախր թողեք ես մի քուպետում Շուշանյանին գտնեմ:

— Իրան տվեք հեռախոսը, — ասաց Մուկուչը:

Միշա Ոսկեբերանը առավ լսափողը և սկսեց.

— Կենտրոն: Կենտրոնն է: շատ լավ: Տվե՛ք Կոմունիստի բաղնիս: Բաղնի՞սն է, շատ լավ: Շուտ տվեք կենտրոն. տվեք էջմիածին: Շնորհակալություն: էջմիածինն է: Շուտ տվեք կենտրոն. շատ լավ: Տվե՛ք Պետհրատ: Պետհրատ: Պետրոս, ո՞նց ես, բարև: Շուտ տուր: Կենտրոն: Կենտրոնն է: Տվե՛ք Շինարար: Շնորհակալություն: — Հանկարծ Միշա Ոսկեբերանը սփրթնեց: — Ի՞նչ բաղնիս: Ի՞նչ է ասում, ինչո՞ւ պիտի բաղնիսը լսեր: Կարգը բաղնիսինը չէր: Ես բոլոր ինստանցիաները անցել եմ կարգով: Քու, ես ձեր...

— Ի՞նչ պատահեց:

— Օրիորդը փոխվել է, խամ է:

— Հիմա որտեղի՞ց է:

— Բաղնիսից:

Կրճատված բարեկամս ձեռքերը ցայեց.

— Այ-հույ, հապա դեռ բաղնիսումն ենք: Ե՞րբ ենք հասնելու շինարար...

— Ընկերներ՛ր,— ասաց Մուկուչը,— պետք է շտապել, ընկերներս, շտապել է, Հայաստանի գրանիտը մնաց:

— Եվ քանի դար է մնացել է,— հառաչեց զղային բարեկամս:

— Ջանքով, շուտ անենք,— մրմնջաց Կրճատը,— թե չէ ուրիշները գլխի կընկնեն, իրենք կվերցնեն գործը:

— Գիտե՞ք ինչ,— ասացի ես,— մինչև որ Միշա Ոսկեբերանը կգտնի ճարտարապետ Կարապետ Կարապետյանին, մենք գրենք Գրանիտ ընկերության (ներողություն,) Որձաքարային ընկերության կանոնագիրը, որ ներկայացնենք կառավարության: Համաձայն էք:

Բոլորը համաձայնեցին:

Մուկուչը սկսեց թելադրել.

— Դե, Կրճատ, գրի, «Որձաքարային ընկերության կանոնագիրը»:

Կրճատը վերցրեց գրիչը և հարցրեց.

— Որձաքարային մեծ ո-ով է գրվում:

— Սպասեցեք,— միջամտեց տատանվող բարեկամս և շրթունքները թթվացրեց,— կուզե՞ք գրեցեք «Գրանիտ ընկերություն» — որձաքարայինը այնքան էլ հարմար չէ, մեծ ո-ով է գրվում:

— Այ, կեցցես, Տատանունի, կեցցես,— գոչեց Մուկուչը, Տատանը փոխելով Տատանունիի:

Ու մինչ մենք զբաղված էինք կանոնագիրը խմբագրելով՝ Միշա Ոսկեբերանը շրթունքները հեռախոսի լսափողի մեջ դրած խոսում էր ու տարօրինակ կերպով փնջացնում.

— Հա: Փուհ: Բաղնիսից է: Փուհ: Շուռ տվեք: Փուհ: Շինարար: Հա և փուհ: Չէ, փուհ: Ըմ: Ըմ: Ըմ: Փուհ: Պետկինո: Փուհ: Հա: Փուհ: Կայարան: Փուհ:

Տատանը վեր թռավ և հարձակվեց Միշա Ոսկեբերանի վրա.

— Ի՞նչ ես փչում, հա փչում — Շինարար՛ը շես հասել դեռ:

— Հլա որտեղ ա, որ հասնեմ, ֆայթո՞ն ա... հեռախոս ա, է՛,— արդարացավ Միշա Ոսկեբերանը:

— Դե, գտիր Շինարարը:

— Որտեղի՞ց գտնեմ Շինարարը, ջրբ՛ումս ա: Կամաց-կամաց համբարքով գնում եմ Շինարար:

— Միանգամից գնա:

— Չեն տա:

— Ոնց թե չեն տա,— բարկացավ տատանվող բարեկամս և լսափողը դրեց ականջին:

— Կենտրոն: (Այնտեղից լավեց. ԿԱԿ?): Կենտրո՞ն. (Դարձյալ լավեց. ԿԱԿ?):

— Ես քրդերեն չգիտեմ, հարգելի օրիորդ: Ես ձեզ հայերեն հարցնում եմ — կենտրո՞ն: (Դարձյալ լավեց. ԿԱԿ?): Թո՛ւ,— թեց տատանվող բարեկամս և լսափողը զցեց սեղանի վրա:— Սա այլասեռված հեռախոս է:

— Ախր դրա խասյաթը ես եմ իմանում, է՛, դեպը տուր,— ասաց Միշա Ոսկեբերանը և շարունակեց իր զբաղմունքը: Նա սկսեց շրջել բոլոր հիմնարկները: Տատանը եկավ նստեց իր տեղը:

Մենք շարունակեցինք կանոնագրի մշակումը: Ու մինչ անարգել ու հաջող մշակվում էր և գործը առաջ գնում, հանկարծ նկատեցինք, որ Միշա Ոսկեբերանը մատներն է շթշթացնում և նստած տեղը տփտփալով պարում: Եվ զարմանալին այն էր, որ շատ լուրջ դեմք ուներ:

— Խելագարվել է, ի՞նչ է անում:

Մենք մոտեցանք:

— Միշա, ի՞նչ է:

— Մարաքա յա:

— Ի՞նչ մարաքա, ի՞նչ է ասում: Լսափողը դրի ականջիս: Գավուլ-գուռնի ձեն էր գալիս, հետն էլ յալի թռչողների խոսքերը.

«Մածուն կուզեմ, թան կրեբս,
«Այ կնիկ, քո խոր խերն անիծած».

— Տեսա՞ր «Գրանիտ ընկերությունը», — ասացի ես և լսափողը տվի Մուկուչին:

Մուկուչը լսեց, լսեց և ապա ասաց.

— Ընկերներ՛ր, Երևանի հեռախոսին որ սպասենք, մենք ոչ թե քարի ընկերություն կհիմնենք, այլ կքարանանք, վեր կացեք ոտով գնանք:

— Ոտքով գնանք,— վճռեցինք բոլորս:

— Եղբայր, հազար անգամ ասի ոտով գնանք,— շունչ քա-

շեց կրճատը, — ախր ափսոս չէ՞ ոտը, ոտը անուշ բան է, թե չէ հե-
ռախոսը ի՞նչ, պարապ մարդու համար է, որ չի շտապում:

Մենք դուրս եկանք և քայլերս ուղղեցինք դեպի Շինարար:

Մենք դուրս գալով սրճարանից ճամփա ընկանք դեպի հիմ-
նարկները, որպեսզի գտնենք ճարտարապետ Կարապետ Կարապետ-
յանին:

Կրճատված բարեկամս առաջ էր ընկել և ճամփին պատահե-
լով ինչ-որ ծանոթներին՝ աջ ու ձախ հարցնում էր.

— Ձե՞ք տեսիլ ճարտարապետ Կարապետ Կարապետյանին:

— Ո՛չ, — ասում էին նրանք և հարցնում իրենց հերթին.

— Ի՞նչ կա:

— Գործ կա, — պատասխանում էր լուրջ կրճատված բարե-
կամս և առաջ վազում:

Մենք որոշեցինք հիմնարկներում որոնելով ճարտարապետ
Կարապետ Կարապետյանին, միաժամանակ սեսնվել քարտուղար-
ներին կամ վարիչների հետ և խորհուրդ հարցնել մեր գլուտի, ըն-
կերության և գրանիտի շահագործման հեռանկարների մասին:

Մենք մտանք առաջին իսկ համապատասխան հիմնարկը, որի
սանդուղքներով բազմաթիվ մարդիկ էին ելնում, իջնում այնպիսի
ուռած թղթապանակներով, կարծես թղթի տրանսպորտ լինեին:

Մենք միջանցքով անցանք և կանգ առանք մի դռան առջև,
որի վրա գրված էր. «Քարտուղար», «առանց զեկուցման ներս
չմտնել»:

Բայց նախեցինք շորս կողմ և շփտանք ոչ ոքի, որին հանձնա-
բարեիսք գեփուցել: Բաց արինք դուռը՝ ներսը ոչ ոք չկար: Գնա-
ցինք սանդուղի գլուխը, նստեցինք մի երկար նստարանի վրա:
Ինչ ժամի չափ նստած էինք, որ սանդուղից բարձրացավ մի
երիտասարդ, որ հաց էր ծամում: Մենք նրան հարցրինք, թե որ-
տե՞ղ է բարտոտարը:

Նա երկար ժամանակ ծամեց, որ ինչպես երևաց մեծ ու
անվերջ պատառ էր և չկարողացավ պատասխանել: Մենք սպասե-
ցինք: Վերջապես երևի պատառը կուլ գնաց, որ նա ուշքի գալով
պատասխանեց.

— Քարտուղարը նիստի ա գնացել:

— Իսկ վարիչը որտեղ է?

— Վարիչը հիմի հարցեր տոկոսով ժողովարարհամ կըլի:

Նա սկսեց գնալ-գալ միջանցքում և շվացնել. «Աղջի բախ-
տավոր»: Ըստ երևույթին նրա գործերը լավ էին գնում, որովհետեւ
նա այդ շվոցով ներս ու դուրս էր անում սենյակները, ուր ըստ
երևույթին մարդ չկար: Մարդկանց փոխարեն մնացել էին հեռա-
խոսներն ու սեղանները, որ սպասում էին նրանց գալուստ:

«Աղջի բախտավորը» կամաց-կամաց դառավ «Նազ պար», որ
նա սկսեց շվացնել նշանակալից ուղղումներով և վարիչանտներին
ճոխություններ:

Ես դարձա նրան.

— Դուք այստեղ տեխնիկական ծառայող եք:

— Ի՞նչ մասշտաբով ես հարցնում. — ասաց նա շարունակելով
«Նազ պարը» շվացնել:

— Ոչինչ, այնպես:

— Թե ծառայողի մասշտաբով ես ասում՝ ես էստեղ ժամա-
նակավոր եմ. իսկական մասշտաբով՝ Գյուղխորհրդի անդամ եմ
մեր գեղում: Ինձ բերել են էստեղ, որ փոստիպիլինա քաշեմ մինչի
մեր գեղում լիկվիդացիան վերջանա:

Ու շարունակեց շվացնել:

— Ի՞նչ լիկվիդացիա:

Նա ժպտաց.

— Ընեհեց Գրոնտ էի բաց արել գալա հոգևորականները:

— Ո՞նց:

— Էն ա նստած էի մեր կարանը, մին էլ տեսնեմ մեր տեր-
տերները մասսայի առաջը ընկած փաշ ու խաշվառով գալիս են,
որ գեղի միջով գնան խաշը ջուրը գցեն: Ընեհեց որ մտփկ տվի՝ երե-
վույթները աշքթա դուր չեկավ: Միտս եկավ, որ Գապոնն էլ ըսենց
միջանցքից պրոլետարիատին: Վրդունը տվեց գլուխս, վրա վազեցի,
ձեռս գցեցի էս խաշվառներին ա էն ա ոտքում էի տեքտերներին
թակեմ, մասսան վրա թափվեց: Քեզում էին ինձ ջարդել, բայց
ըստեղ բանվորագյուղացիական տղերքը վրա հասան, ինձ քաշե-
ցին, ազատեցին: Վերջն էլ ինձ ուղարկեցին Սրբախ:

— Հետո՞, պիտի մնաս այստե՞ղ:

— Ձէ, ի՞նչ գործ ունիմ: Էստեղ լավ չի: Կգնամ բանֆակ, որ
մակարդակս բարձրանա:

Նա նորից սկսեց շվացնել, բայց այս անգամ «Նազ պարը»

ինչ-որ բայաթիի նմանեցնելով մոռացավ և անցավ— «Բայաթի քյուրդի»:

Այդ ժամանակ ներս մտավ մի երիտասարդ մարդ, որը այնքան արագ անցավ մեր մոտով, որ կարծես գնում էր հրդեհ հանգցնելու:

— Սա ո՞վ է— հարցրեց Մուկուչը:

— Սա համապատասխան մարմինն ա,— պատասխանեց տեխնիկական ծառայողը:

— Համապատասխան մարմին: Ինչի՞ համար ես ասում համապատասխան մարմին:

— Գազեթում որ մին-մին գրում են, թե «համապատասխան մարմնի ուշադրությունն եմ հրավիրում»՝ սա սկսում ա շարանալ, գոռգոռալ, ուշունց տալ:

— Շա՞տ մարդ է գալիս այս հիմնարկը,— հարցրի ես:

— Շա՛ա՛ա՛տ:

— Ովքե՞ր են գալիս:

— Ինժեներներ, տեխնիկներ, ընկերներ: Էլեմենտներ էլ են գալիս:

— Էլեմենտներ — ո՞վքեր են դրանք:

— Մանդր բուրժուազները:

Բայց այս խոսակցությունները փոր չէին կշտացնի: Իսկ ներսը վարիչի կամ քարտուղարի փոխարեն սեղաններն ու աթոռներն էին, որոնցից մենք ոչ մի խորհուրդ չէինք կարող ստանալ: Ուստի և դուրս եկանք բուլվարը:

— Ջա՛նըմ, քա՛րը մնաց, քա՛րը: Շա՛տ ուշացանք,— տրտընջում էր կրճատված բարեկամս:

— Մնաց՝ մնաց, ի՞նչ ես հենց մի գլուխ վայ տալիս գըլիներիս,— նեղսրտեց Տատանը,— հո չի հալչի:

— Ուրիշները կգտնեն,— ասաց կրճատված բարեկամս հուսահատ: Հետո վեր կացավ, թե.— ես կգնամ փնտրելու ճարտարապետ Կարապետ Կարապետյանին: Մենք համաձայնեցինք:

Մենք նստեցինք մի նստարանի վրա:

Մեր շուրջը նստած էին բազմաթիվ գանազան մարդիկ, որոնք տեսակ-տեսակ լինելով՝ վերջ ի վերջո մի տեսակ էին — անգործ: Նրանք շատ պեսիմիստ բաներ էին խոսում Հայաստանի մասին: Օրինակ՝ որ Հայաստանը հետևյալ շաբաթ կկործանվի, և որովհե-

տև ահա մի քանի տարի է Հայաստանը «հետևյալ շաբաթ» չէր կործանվում՝ նրանք գուշակում էին, թե ուրեմն «մյուս հետևյալ շաբաթ» կկործանվի:

Այստեղ կային նաև մարդիկ, որոնք հնավաճառի կերպարանք ունեին: Հենց մեր կողքի նստարանին նստած էր մի հասակավոր մարդ, որը շատ նման էր Ներսես Լամբրոնացուն (թեև խոստովանանք լինի՝ բոլորովին չեմ տեսել Ներսես Լամբրոնացուն): Նա մի ճենձերային սերթուկ ուներ հագին և կաթուղիկ մորուք՝ գեմքի վրա: Երևի «Մեղու Հայաստանի» թղթակից էր:

Նա մեզ երկար ականջ դրեց և վերջը թուքը կու տալով՝ մոտեցավ մեզ.

— Ներողություն, մի բան պիտի հարցնեմ ձեզ, եթե կարելի է: Հրամանքնիդ, կարո՞ղ եք ասել, թե որտեղ կարելի է գտնել ժողտնտխորհի քարտուղարին:

— Ինչո՞ւմն է բանը:

— Քանի գնում եմ, ասում են՝ նիստ ունի, զբաղված է, իսկ երբ նիստ չեղած ժամանակն եմ գնում՝ այնտեղ չի լինում: Ահա մի քանի ամիս է, չեմ կարողանում տեսնել:

— Ի՞նչ պիտի անեք:

— Մի գյուտ եմ արել և ծրագիր եմ ներկայացրել: Ո՛չ պատասխան եմ ստանում, ոչ էլ կարողանում եմ թուղթս ետ ստանալ:

— Ի՞նչ է ձեր գյուտը:

Նա ավելի մոտեցավ մեզ և կարծես ձեռնարկություն էր սկսելու՝ այնպես սկսեց խոսելու պատրաստություն տեսնել: Հանեց կարմիր թաշկինակը, բաց արեց գլուխը և սրբելով, հետըզհետե իջավ ճակատին, հետո քթին, բերնին, մորուքին ու հետըզհետե անցնելով կրծքին ու փորին, իջավ ոտները և թաշկինակը խնամքով ծալեց, դրեց սերթուկի հետևի գրպանը:

— Ներողություն,— սկսեց նա,— թեև մենք ծանոթ չենք, բայց ես ձեզ հիմի ծանոթացնեմ ինձ հետ: Ծս բնիկ ալեքսանդրապոլցի եմ, այսինքն լենինականցի: Առաջ Թիֆլիս հին գրքեր էի ծախում, վերջը եկա իմ քաղաքս և այնտեղ մի գյուտ արի: Ծս գտել եմ մի մեքենա, որ եթե դնենք շոգեկառքի վրա՝ շոգեկառքը առանց կրակի, շոգու, մի անգամ որ շարժվի՝ էլ անվերջ կերթա:

— Փորձե՞լ եք— հարցրի ես:

— Կարիք չկա փորձելու: Հաստատ է, որ կերթա առանց

կանգնելու: Փորձի համար պետք է 775 ուրիշ: Դիմեցի Լուստոզկոմատ: Ասին այս ամիս փող չունենք:

— Դա շատ երևելի գյուտ է, — ասաց Տատանը և վեր թռավ: — Եվ ինչպե՞ս կարելի է այդ տեսակ մեքենան շօգտագործել: Մեր պետական հիմնարկները չեն հասկանում մեր երկրի շահերը:

Այդ ժամանակ մեզ մոտեցավ մի ուրիշ երիտասարդ մարդ, որ լսում էր մեր խոսակցությունը:

— Յզբա՛յր, — ասաց նա քաջալերված Տատանի խոսքերից, — էդ հիմնարկների պատճառով չէ՞, որ նավթա մեքենա է երեսի վրա ընկած, ուղ դարձնող չկա:

— Նա՛վթ, ի՞նչ նավթ, — հարցրինք մենք անծանոթին, որ աղաճնի թոցնողի կերպարանք ուներ և մի աչքն էլ կույր, — ինչպիսի՞ նավթ է:

— Նա՛վթ, էլի, իսկական, օրինավոր նավթ, ես իմ ձեռքովս գտել եմ, տեղն արել: Բե՛ր բիզնեսները լցրու տա՛ր:

— Որտե՞ղ եք գտել:
— Հիմի՞ ինչ որիս ա... ես քեզ ասում եմ նավթա Բաքվա նավթն ի՞նչ ա մոտը — ջո՛ւր: Նավթ եմ գտել որ՝ իսկական, գուտ, մաքուր՝ էլ մաքրելու կարիք չկա: Ամբողջ Հայաստանի նավթը էն տեղ պատրաստ լիկում ա՛:

— Տեղը ինչպիսի՞ տեղ է, — հարցրեց Մուկուչը:
— Զանըմ, էդ ուրիշ հաշիվ ա: Դուք խե՛նից նավթ պահանջեցեք, գնամ էս բոպեխ բերեմ:

— Եա՛տ խոր տեղ է, — հարցրի ես:
Մարդը իսկույն շաատասխանեց՝ վախենալով, թե նշանները կարող է մատնել:

— Իր տեղումն ա, — ասաց նա:
Այն ժամանակ նս մաներ արիս
— Թրե՛ր շատ ծախս կպահանջվի հոր փորելու, վերջա դնելու, սարքելու:

— Հո՛ր, ի՞նչ է ասում: Ի՞նչ գուտ, մաքուր նավթ ա՞ր
— Ապա դրա մազո՞ւթը ուր է:
— Երազո՞ւթը: Մազութը գետնի տակն ա մեքենան իսկ նավթը

ծծվել ա երեսը:
— Անհավատալի է, — ասացի ես:
Նա գրգռվեց.

— Զանըմ, դու խե՛նից նավթ պահանջիր: Հրեն հողի երեսին պե՛տում ա: Ինքն իրան հողի տակից դուրս ա եկել ու ինչպես ա ճահիճի երեսը բռնել, սեց որ կաթի սերջ: Թր մտիկ տաա, ասածու գոտին օխտը ունեզ խաղում ա միջին:

— Մե՞ծ տեղ է, — հարցրեց Մուկուչը:
— Թի վերստ կըլի՞ Ու հողը ինչպես ա ծծել կշտացիլ նավթով, որ անասունի պե՛նդը փոս անելիս՝ մեջը նավթը լցվում ա:

— Զիտ՞ե ոտը, թե՞ կավի, — հարցրի ես:
— ...Ինչ որիս ա, — զգուշացավ նավթարդյունաբերողը:
— Ի՞նչ ես ասում, — դաբձավ ինձ Մուկուչը, — չպե՛տք է մեր տակիվը ուժեղացնել:

— Պետք է, — ասացի ես, և դարձա:
Այդ խոսակցություն ժամանակ հանկարծ նկատեցինք, որ կրճատված բարեկամս վազելով գալիս էր: Նա հեխհե, քրտեռած մտեցավ ու ասաց.

— Դուա՛՝ ճարտարապետ կարասկետ կարասկետյանի տան հասցեն, գտա:

— Որտե՞ղ է:
— Կոնդ, Փոս փողոց, համար 21 կամ 27:

Մենք վեր կացանք, որ գնանք:
Այդ բուպեխն մի անցարդ կանգ առավ և ասաց.

— Դուք ճարտարապետ կարասկետյանի ստ՛անն եք ուզում:
Աչքակա դժվար կգտնեք:

— Ապա ինչպե՞ս գտնենք:
Անցարդը պատրաստվելով խոսել՝ հազաց ու սկսեց.

— Ես ձեզ ավելի լավ նշանով ասեմ, որ խզի շխալվեք: Առաջ բուվարից դուրս կգաք, կմտնեք մեյդանի ցեխը ու էդ ցեխի հետ կգնաք, կաշխատեք նրա գծից շհոսնալ: Քանի գնաք՝ ցեխը կշատանա ու մի տեղ կբաժանվի՝ աչ ու ձախ մասերի: Դուք բռնեցեք աչը ու հիմա էլ այդ գծով գնացեք. նա ձեզ կառնեք աչ, ձախ, հետո շուռ կտա դեպի ետ, կանցնի Դաշի Քյաշան: Դուք գնացեք: Մի տեղ աչ կողմը պատը ուռած է և դռան առջև շուն կա, պուր կտրած է՝ շմոռանաք, ա՛նունք Փիլո է. կասեք՝ Փիլո՛, Փիլո՛ չի կծի: Երկու տուն անցնելուց հետո փողոցի անկյանում երեք մեծ փոս կա, դիմացը մի աղբի բլուր: Հենց այդտեղ ուղիք կաղբին մի դուռ կա: Դուրը բաց կանեք ու կասեք. «Միլո՛րդ, Միլո՛րդ»: Շունը

կհասնի վրաներդ թե չէ՝ դուռը փակեցեր: Նա կհաշի. նրա ձայնից տնեցիք դուրս կգան: Հարցրեք. «Այստե՞ղ է ապրում ճարտարապետ Կարապետ Կարապետյանը» կասեն. «Այստեղ է ապրում ճարտարապետ Կարապետ Կարապետյանը»:

— Դա ի՞նչ երկար հասցե եղավ,— հեզնեց Տատանը:

— Է՛, դուք կարճով գնացեք,— նեղացավ անծանոթն ու արագ հեռացավ:

Արդեն երեկոյան ժամը յոթն էր, որ մենք ճամփա ընկանք: Մթնշաղին անցանք Դաշլի Քյուչան, քարերը, աղբերը, փոսերը, ավանակները, որ եզերեցին մեզ աջ ու ձախից: Հետո ընկանք Կոնդի աշխարհը ու սկսեցինք որոնել Փոս փողոցը և 21 համարը: Բայց խավարի մեջ ո՛չ փողոց գտանք, ո՛չ համար: Մոտեցանք մի դռան և լուցկի վառելով՝ սկսեցինք համարը որոնել: Դռան վրա կավիճով գրած էր. «Ծս էլ եմ»: Նրա կողքին էլ մատիտով արձանագրած էր «1915 թվին, հուլիսի 15-ին, ես՝ օգմեցի Ներսո հաստորյանցս, գնում եմ քուռտ ջառտելու, ասեք ամեն»:

Եվ ոչ մի համար:

— Էս հո ընկանք կամավորական աշխարհը,— ասաց Մուկուչը:

Մենք սկսեցինք դուռը թակել, որ մի մարդ արարած երևա, բան հարցնենք: Բայց ոչ մի պատասխան: Եվ շուրջը այնպես լուռ էր, կարծես Անի քաղաքումն էինք: Սկսեցինք դուռը սաստիկ թակել: Վերջապես մեկը ներսից, կարծես ձկան փորից, ծոր տվեց.

— Ո՞ո՞ո՞վ է՛ է՛ է՛...

— Ընկե՛ր, մոտ արեք, բան պիտի հարցնեմ,— ասացի ես:

— Դու ո՞վ ես:

— Քաղաքացի:

— Անունդ ի՞նչ է:

— Դերենիկ Դեմիրճյան:

— Որտեղա՞ցի ես:

— Ախալքալաքցի:

— Ի՞նչ ես ուզում:

— Ընկեր, ասացեք խնդրեմ, որտե՞ղ է ապրում ճարտարապետ Կարապետ Կարապետյանը:

— Ճարտարապետ Կարապետ Կարապետյանը:

— Այո, ճարտարապետ Կարապետ Կարապետյանը:

— Ի՞նչ գործի է:

— Ճարտարապետ է:

— Ճարտարապե՞տ: Էստեղ ապրում է մաստարեցի Գրիգորը, զոզցի Ջուրաբը, ապրում է ղարաբոյացի Խաչատուրը, էն կողքի տանը ապրում է վանեցի Մարտիրոսը, բայց որ էստեղ ճարտարապետ Կարապետ Կարապետյանը ապրի՝ էստեղ ոչ մի ճարտարապետ Կարապետ Կարապետյան չի ապրում:

— Փողոցի անունն ի՞նչ է,— հարցրեց Մուկուչը:

— Փողոցի անունը,— հարցրեց իր հերթին անծանոթը:

— Այո, փողոցի անունը:

Անծանոթը շպտասխանեց: Մենք ականջներս սրած սպասում էինք նրա պատասխանին: Սպասեցինք մի, երկու, երեք րոպե, և պատասխանի տեղ լավեց մի խումփոց: Անշուշտ նա էր: Արդեն քնած էր պատուհանի տակ:

— Համեցեք, էս էլ քեզ փողոցի անուն,— ասաց Մուկուչը:

— Կարճ հասցե էինք փնտրում, համեցեք կարճը,— նկատեցի ես,— այն մարդունը ավելի կարճ էր: Հիմի ի՞նչ անենք: Մի քիչ առաջ գնացինք: Փողոցի ծայրին երեք կասկածելի կերպարանքներ երևացին:

— Կանգնեցեք,— ասացին մեզ:

— Ի՞նչ եք կամենում:

— Եկեք մեզ հետ միասին:

— Բայց դուք ո՞վ եք:

— Մե՞նք... ծառայողներ ենք: Գնում ենք տուն, դրա համար էլ խումբ ենք կազմում այստեղ, որ միասին անցնենք շնորհ...

— Շնե՞րը: Մի՞թե այդքան վտանգավոր են:

Խոսքս դեռ բերանումս էր, որ դիմացի պատի տակից մի շուն դիսկուսիոն կարգով մոմոաց: Դրան հետևեց մի ուրիշ մոմոոց: Եվ երկու շուն հարձակվեցին մեզ վրա: Անծանոթները եկան կպան մեզ և շները բոլորիս ենթարկեցին մի այնպիսի բլոկադի, որ Չեմբերլենն անգամ նրանցից ուսանելու բան կունենար: Շները այնպես էին հաշում մեզ վրա՝ կարծես մենք նրանց սաստիկ անձնական վիրավորանք ենք հասցրել: Ամբողջ թաղը արձագանքեց այդ հաշոցին և շները ամեն կողմից հասնելով, սկսեցին մեզ նեղել: Եվ ոչ մի մարդ չէր երևում:

— Լավ, այս թաղում մարդ չի՞ ապրում,— հարցրի ես անծանոթ դժբախտակցիս:

— Մարդիկ էլ կան թաղում, բայց շունք ավելի շատ է,— պատասխանեց նա:

Այդ ժամանակ շները ատամները գցեցին նրա վերարկուին: Նա հանեց վերարկուն և թողնելով շների բերանը, «փախեք» ասավ, «ազատվեցիք»:

Մենք բնազդաբար փախանք, թողնելով, որ շները իրենց հաշիվը վերարկուից պահանջեն:

Երբ հասել էինք փողոցի ծայրը՝ անծանոթը ասաց.

— Փառք աստծու, լավ պրծանք: Հիմար շները հիմա կարծում են, թե ես վերարկուի մեջն եմ: Ո՞նց չէ, փնտրեցեք:

Անծանոթները հեռացան, և մենք մնացինք ինչ-որ մի խավար տեղ, միայն նրանով որոշ՝ որ երևի տիեզերքի մեջ մի որևէ տեղ էինք և ոչ թե նրանից դուրս:

Հանկարծ մի մութ կերպարանք վազելով եկավ դեպի մեզ՝ բռնալուով.

— Էհե՛յ, ո՞վ կա էդտեղ:

— Ի՞նչ է,— հարցրինք մենք վախեցած:

— Չգիտե՞ք, էստեղ մոտիկ տեղ հեռախոս չկա՞, կամ միլիցիոներ չե՞ք տեսել:

— Ինչո՞ւ ես հարցնում:

— Էն տանը քե՛ֆ է, ի՛նչ է, շեմ հասկանում, բայց երկու ժամ է երկու եղբայր իրար կերան Զեմ կարողանում բաժանել:

— Դու ո՞վ ես:

— Ես միլիցիոներ եմ:

Նա վազեց առաջ:

Մենք կանգնել, չգիտեինք ինչ անել: Ուզում էինք ետ գառնալ, մեկ էլ դիմացի մայթից մեկը ձայն տվեց.

— Փիլ՛, Փիլ՛, Փիլ՛...

— Վա՛յ,— ասաց կրճատված բարեկամս,— սա էն անծանոթի ասած շունն է: Ասել է մոտ ենք ճարտարապետ Կարապետ Կարապետյանցին:

Իսկապես որ: Շատ ճիշտ էր: Ակսեցինք վերհիշել, թե ինչպես ասաց անծանոթը: Մտքով անցանք մեզառե՛ք ցեխը նրա ճյուղ-

զազորութեանները, հետո Փիլո շունը, հետո երեք փոսերը, աղբի կույտը...

— Բրավո, գտանք,— ասաց Մուկուչը,— փոսերը մոտ են:

Մենք գնացինք դիմացի ուղղութեամբ: Հազիվ հարյուր քաջ էինք արել, մեկ էլ թըրը՛մփ, բոլորս միասին գործեցինք փոսը:

Այնքան անակնկալ էր այդ անկումը, որ չէինք կարողանում հասկանալ, թե արդյոք որևէ տեղներս ցավում է, թե ոչ: Մինչ կծիկ դառած իրար բռնելով ճիգ էինք անում կանգնելու՝ մեր ապրից մի նվոց լսվեց.

— Ամմմաաա՛ն...

— Վա՛հ, էլի՞ մարդ կա,— զարմացավ Մուկուչը:

— Ամաա՛ն, թո՛ղ, կողքերս փշրեցիք:

— Ո՞վ ես,— հարցրի ես:

— Ճարտարապետ Կարապետ Կարապետյանը,— պատասխանեց աղետյալը և նստեց մեր կողքին:

— Ի՞նչ, ճարտարապետ Կարապետ Կարապետյանը...

Այո, նա ինքն էր: Վերջապե՛ս գտանք:

Ու դեռ փոսից դուրս շեկած լուցկի վառեցինք և դեմ արինք նրա դեմքին: Դա մի պեղածո մարդ էր մոտ 55 տարեկան, փոքրիկ, սրված գեմքով և խուզած մորուքով:

— Մենք ձեզ էինք որոնում: Եկել ենք խորհրդակցելու: Մենք մի գյուղ ենք արել գրանիտից աղյուս պատրաստելու և եկել ենք ձեզ մոտ դրա մասին խորհրդակցելու:

— Դուք ցեմենտ եք ուզում պատրաստել,— հարցրեց ճարտարապետ Կարապետ Կարապետյանը:

— Ոչ,— ասաց Մուկուչը,— մենք ուզում ենք գրանիտից պատրաստել մի այնպիսի աղյուս, որը սովորական աղյուսից շատ պինդ կլինի, թեև ճիշտ է... գրանիտի ամրութեանը չի հասնի: Բայց հույս ունենք, որ դուք մեր գյուղը կենթարկեք քիմիական փորձի և կօգնեք մեզ:

— Ուրեմն դուք ուզում եք գրանիտից այնպիսի աղյուս պատրաստել, որ գրանիտի լափ ամուր լինի:

— Այո:

— Դա շինութեան ո՞ր մասի համար է:

— Միմիայն հիմքի և հիմքից մի քիչ բարձր մասերի համար է:

— Դրա համար դուք պիտի գրանիտի փողուն խառնեք սոսելի շաղախ. այսինքն ցինկի խլորուկ և ցինկի թթվուկ: Բայց եթե ուզում եք ավելի պինդ աղյուս՝ կա դրա լավ շաղախը, որի մասին ես կարողացել եմ էջմիածնի ձեռագրերի մեջ: Եթե ուզում եք գնանք միասին էջմիածին, նայենք մի անգամ ևս այդ ձեռագրի ցուցմունքները և անցնենք գործի:

— Գնանք, իհարկե դուք կմտնեք մեր ընկերության մեջ, — ասացի ես:

— Սիրելիք, ես ինքս հոգով մարմնով ինձ նվիրել եմ Հայաստանին և նրա շինարարությանը: Համեցեք գնանք տունս՝ ևս ձեզ ցույց տամ, թե ինչ հանքեր եմ գտել Հայաստանի համար: Բոլորը շինարարական նյութ է. ինչ տներ, պալատներ պիտի շինեմ դրանցից:

Բայց մենք մոռացել էինք, որ փոսի մեջ էինք և պետք էր դուրս գալ այնտեղից: Շատ մեծ դժվարությամբ, իրար բռնելով մի կերպ դուրս եկանք մթան մեջ ճարտարապետի փեշից բռնած, գնացինք դեպի նրա տունը: Երբ մոտենում էինք նրա տանը, մի պատուհանից մեր ականջին աղմուկ հասավ: Ինչ-որ դուղուկների ու դհոլի և ծափի ձայներ էին գալիս այնտեղից: Պարզապես քեֆ էին անում, պատուհանից երևում էր, թե ինչպես երկու երիտասարդ իրար դեմ պար էին գալիս: Նրանք շատ նման էին իրար: Մինչ մենք դիտում էինք այս ուրախ պարը՝ մթան միջից երկու միլիցիոներ աղմուկով մտան բակը:

— Որտե՞ղ են կովողները, — հարցրին նրանք:

— Արդեն հաշտվել են, պար են գալիս, — պատասխանեցին նրանց քեֆ անողները և շարունակեցին տաշի խփելը:

Միլիցիոներներն սկսեցին դժգոհել:

— Ո՞նց թե հաշտվեցին: Մենք նրանց հոր մշա՞կն ենք, որ էսքան տեղը եկանք:

Բայց նրանք ուրիշ ճար չունեին: Եղբայրները փաստորեն հաշտվել էին, միլիցիոների ուշանալու պատճառով նրանց նորից կոճաքնելու առիթ չկար: Ուստի և միլիցիոներները հեռացան: Մենք գնացինք առաջ: Երբ հասանք ճարտարապետ Կարապետ Կարապետյանի տան բակին, և նա բաց արեց դրսի դուռը՝ ապշած բերանը բաց արեց: Մի սարկավազ, ձեթի թե նավթի ճրագը ձեռքին՝ լուսա-

վորելով մի փլած տնակի ավերակները՝ բերանը բաց նայում էր փլատակներին:

Ճարտարապետ Կարապետ Կարապետյանը վրա թռավ վախեցած

— Վա՛յ, սա ի՞նչ բան է:

— Ի՞նչ է, ո՞ւմ սենյակն է փլել, — հարցրինք մենք:

— Իմ սենյակն է, — լիռտեց ճարտարապետ Կարապետյանը և հարձակվեց սարկավազի վրա:

— Դու ի՞նչ էիր անում, ի՞նչ տեսակ դռնապան ես:

— Ես ի՞մալ էնեմ, — հարցրեց դռնապանը:

— Ինչո՞ւ իմաց չէիր տալիս իր ժամանակին, թե տունը կփլչի: Հիմա ես ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ:

— Ես ի՞մ — մըկա ևս ինձինե՞ր իմ:

— Վայ, շուն շան որդի տանտեր: Տեսա՞ր ոնց խաբեց, փլած տունը քաշեց ջանի՞ս:

Ճիշտ որ դրությունը հուսահատական էր: Հազիվ գտել էինք մարդուն, հազիվ գործը գլուխ էինք բերում և այսպիսի բան:

— Քա՛րը մնաց, քա՛րը ուրիշները կգտնեն, — նվազ կըրճատված բարեկամս, — արի դու Հայաստան շինիր, ընտանիք կեթակրիր: Հալ գիտի Աբասթուման:

1926 թ.

ՏԱԽԻՏԻՏ-ՏԻՊԻՏԻՏ

Թիֆլիսում մի բավականին ինտելիգենտ մարդ կար, որ ասում էր.

— Ջանքմ, Ալեքսանդր II-ի համար գրած էր, որ մեռավ Բոզայում, հետո այս Ալեքսանդր III-ի համար էլ գրեցին, թե մեռավ Բոզայում: Թե որ այդ Բոզան այդպիսի վտանգավոր օդ ունեցող քաղաք է՝ էլ ինչո՞ւ են թագավորները Բոզա գնում:

Հարկ չէի համարում կոտրել սրտացավ բարեկամիս՝ նկա-

տելով նրան, որ դա Բողոք չէ, և ոչ մի թագավոր Բողոքում չի մեկնում, այլ «В Бозе почи»-ը նշանակում է ի տեր հանգչում:

Շուշու կոնսերվատորիայում մի երկարամյա գրագետ կար, որ իր մի ընկերոջը գանգատվում էր, թե ուսերեն բոլոր բառերը հասկանում է, բացի տախտիտ տիպիտիտ բառերից:

Շատ փնտրեց. շատ բառարաններ քրքրեց, բայց չգտավ:

Եվ փնթփնթում էր բոլոր ուս բառարանների վրա. «Ինչ բառարաններ են, բառ չկա մեջները»: Եվ այդպես մինչև վերջն էլ չգտավ ու չգտավ տախտիտ-տիպիտիտը: Բայց ի՞նչ էր դա, — maximum minimum: Մարդը պարզապես կարդում էր ուսերեն տախտիտ տիպիտիտ:

Բայց ավելի համարձակ միամտությամբ հանդես եկավ էջմիածնում մի վարդապետ գրաշար, որ «Արարատ» ամսագրում սպած մի հոդվածի վերջը շարել էր այսպես.

О хетроча, о точес!

Այո, ուղղակի օ խետոռչա, օ տոչես:

Մարդը իրեն հանձնած ձեռագրի տառերին նայել էր և օ tempora, օ mores-ը շարել էր ուսերեն:

Այս բոզան թարգմանություն էր. իսկ տախտիտ տիպիտիտ-ը և խետոռչան շուռ տված բառեր էին, ասենք տառադարձություն, դարձվածք: Բայց այս բոզան, այս տախտիտ տիպիտիտը, այս խետոռչան միայն լեզվի մեջ չէ, որ պատահում են:

Պատերազմը, բայց մանավանդ ռևոլյուցիան շատ մարդկանց հարկադրեց ուղղակի թարգմանել կամ շուռ տալ իրենց հագուստները: Բոլոր դեղնած, կեղտոտ, յուղոտ վերարկուները, շալվարները թարգմանվեցին կամ տառադարձության ենթարկվեցին:

Դրսինը գնաց ներս, ներսինը եկավ դուրս:

Բայց ի՞նչ թարգմանություններ, ի՞նչ տառադարձություններ հանդես եկան: Ի՞նչ առակներ դուրս եկան, ինչեք են ասում այդ թարգմանչական հագուստները:

Ահա մի այդպիսի վերաբեկում: Նայում եմ՝ ինչ-որ արտառոց վանդակներ, անհամոզիչ գծեր... Թյուրիմացություն է առ, թե՛ վերարկուի կտոր: Ո՛չ այս, ո՛չ այն:

Դա ուղղակի բողոք է:

Մյուսը ներկայացնում է դեղին, կանաչ. կապուցա այլ թե-

լերի հյուսվածք: Անտիլյան կզգիների մի էկզոտիկ ցուցահանդես, վայրենիների լեզվով մի տարօրինակ խոսքի նման բան:

Դա տախտիտ տիպիտիտ է:

Մի երրորդն աչնպես է շուռ տված, որ շես իմանում սրա կտորն առաջ բուսակն է եղած, թե անգլիական մահուդ և արդյոք Ֆարթիկի ապրանք է, թե՛ քրդական տնայնագործություն:

Դա էլ խետոռչա է:

Բայց վրայի հագուստը դեռ ոչինչ: Հարկադրածքը ստիպել է և մարդիկ շուռ են տվել հագուստները, այսինքն՝ ենթարկվել են կամ բողոքիայի, կամ խետոռչականության, կամ տախտիտացման:

Ողբալին սպիտակեղենի հարցն է:

Սպիտակեղենը չի թարգմանվում: Այստեղ բողոքով կամ խետոռչայով բան չես շինի: Եվ ոչ էլ տախտիտ տիպիտիտը կօգնի:

Եվ ահա հաճախ բակերի մոտով անցնելիս, երբ դիտում եմ կախած սպիտակեղենները...

Ինչ կատաստրոֆիկ տեսարան:

Ահա մի շապիկ, որ պատռված է ինչպես ավստրիական կայսրություն: Այնքան ճղած է ու կարկատած, վերաճղած ու վերակարկատած, որ դարձել է կարկատանների քարտեզ: Իսկական Բալկանյան թերակղզի: Ինչ-որ լեհական կորիդոններ, չեղք զոնեք: Մերձբալթյան պետություններ իրենց մայրաքաղաքներով: Եվ բոլորը փտած, փտած և այնպես փտած, որ եթե մի ծայրից բռնես՝ կճղվեն: Իսկական փոքր Անտանտ:

Այսպիսի շատ սպիտակեղեններ կան:

Սրանք ռևոլյուցիայից առաջ էլ արդեն հնացած էին: Ռեվոլյուցիայից հետո սկսեցին կարկատվել: Առաջին տարիներում կարկատանները քիչ էին և կտորը գեռ պահում էր կարկատանները: Բայց հետագայում կարկատաններն այնքան շատացան, որ «քնագիրը» կորավ:

Այդ տեսակ սպիտակեղենը վնաս չունի, եթե դուրսը ես շարժվում: Բայց եթե արտակարգ շարժում ես անում՝ խզվում ես ճոխում է: Ուստի և այնպես է հեռու մնալ այնպիսի բաներից, որ կարող են շարժում անել տալ: Հոնտաբություն տալը իբրև, ճառելը շատ վը-

տանգավոր է, որովհետև խանդավառված ժամանակ, երբ ձեռներդ թափահարում ես այ կամ ձախ, մեկ էլ տեսար՝ ճոթոնց:

Այո, սիրելի ընթերցող, ժամանակը թարգմանեց, շուռ տվեց բոլոր վերարկուները, բաճկոնները, շալվարները, կարկատեց բոլոր շապիկները...

Եվ վալ նրանց, ում թարգմանությունը կատարվել է ինտելիգենտ բարեկամի, վարդապետի կամ լսարանցու ձեռքով, կամ կարկատանն արել է Բալթյան պետությունների դերձակը:

Բայց ձեզ մի բան ասեմ: Չե՞ք նկատում, որ կան մի շարք մարդիկ ևս, որ իրենք իսկ թարգմանված են կամ կարկատած: Դուրսը գնացել է ներս, ներսը եկել է դուրս: Տեսնում ես, որ ոմանք, ոչինչ, լավ են թարգմանվել և լավ էլ խմբագրված են: Բայց ոմանք էլ պարզապես խեղճոտա են կամ ինչ-որ բողաջի են նման, կամ հենց ուղղակի տախտիտ տիպիտիտ:

Իհարկե, վերջ ի վերջո, այդ խեղճոտան, բողան և տախտիտն այնքան մեծ վնաս չունեն: Դա վատ թարգմանություն է կամ միամտություն: «Ներքին» շապիկների բանն ասեք, գաղափարների, աշխարհայացքի բանը, որ կամ փտած են լինում, կամ կարկատած: Շատ հիմար բան է այդ ներքին սպիտակեղենը: Ամենափոքր շարժումից ճոթում է: Հիմա շատ մարդիկ զոռ են տալիս կարկատելուն, բայց բան չի դուրս գալիս:

Անցյալ օրերը բարեկամներիցս մինը ճառախոսելիս՝ ճառի մեջտեղը հանկարծ կարմրեց, շփոթվեց ու կանգ առավ:

— Հը, ի՞նչ պատահեց,— հարցրին:

— Ոչինչ,— ասի,— աշխարհայացքը պատռվեց:

Փտած էր:

Երբ դուրս էինք գալիս՝ քիչ էր մնում իրեն մոտենայի և ասելի.

— Սիրելիք, ի՞նչ գործ ունես այդպիսի անվստահելի աշխարհայացքով բեմ ես դուրս գալիս: Նոր աշխարհայացք չունե՞ս, թա՛նկ է, կամ չես ճարում, կամ չես ուզում ճարել՝ հինն էլ տեսնում ես... ճոթում է...

Կամ կարկատիր, կամ դեն գցիր, կամ մի բան արա հոետություն ժամանակ:

Բայց հետո էլ մտածեցի, որ ճոթուներ մի լավ կողմ էլ ունի ճոթուներն ապացույց է, որ աշխարհայացքը փտած է և հիանալի

ազդանշան է, ռեգուլյատոր թե՛ հասարակության և թե՛ իրեն՝ աշխարհայացքի տիրոջ համար:

Կասենք, ախպեր, աշխարհայացքդ հին է, ծակ է:— Ականջդ սուր պահիր և պատրաստ կաց, որ հենց ճոթուներու ձայնը լսես՝ խոսքդ կարճ կապիր և ժամանակին փակիր մտածողությանդ դուռը՝ այսինքն բերանդ:

Եվ հիմա, այս նոր տարվա օրը, մարդ բնական է համարում, որ մի տեսակ ցանկություն է զարթնում նորոգված տեսնել շուրջը ամեն բան: Նայում ենք մեր շուրջը և տեսնում, որ ոմանք նորոգվում են, ոմանք չեն ուզում, ոմանք չեն կարողանում կամ միամտություն մնում են խեղճոտա, բողա, տախտիտ-տիպիտիտ և կամ Բալկանյան թերակղզի:

Ասում են՝ նոր տարի, նոր բարի, Իսկ ես կասեմ՝ նոր տարի, նոր շոր: Ցանկանում եմ ամենքին նոր վերարկու, նոր բաճկոն, նոր շալվար, նոր սպիտակեղեն՝ արտաքին և ներքին: Թե չէ՞ խեղճոտալով, բողալով և կամ կարկատելով շատ հեռու գնալ չեն կարող ո՛չ անհատ մարդը և ո՛չ էլ Բալթյան, Բալկանյան և այլ կարկատած պետություններ:

1926 թ.

ՇՈՑԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱԿԸ

(Եվե բղբակից Ա. Մաքևոյանին)

«Պատիկ երկիր, պատիկ երկիր» ասում ենք Հայաստանին, բայց որ աչքի տակով նայում ես՝ շատ արիստոկրատ բնավորություն ունենք:

Իսկական գտարյուն Հայկազնը, այսինքն նա, ով իր մեջ զգում է մեր ցեղային արյունը, իրեն այնպես է պահում, ինչպես 100 տոկոսով արիստոկրատ:

Ամեն մի հայ մի քիչ Տրդատ Մեծ է: Այդ երևում է նրա կենցաղի ամեն քայլում:

Օրինակ՝ ճամփա տա քեզ, կամ տառաչինը խնդր քեզ ճամփա տա,— անհնարին բան է:

Այդ տեսակ բաներում շատ է մեծափքտ և գոռոզ:

Օրինակ՝ մի տալիսի պատկեր:

Դեպի իրար եք գալիս: Դու շտապում ես, գործ ունես, խոկ նա դանդաղ զրոսնում է: Միևնույն է, նա ծանր էնմեջով գալիս, դեմ է առնում քեզ և սպասում, որ իրեն ճամփա տաս: Եթե նա կանգնած է մայթին, դու պիտի շեղվես դեպի առում, քնկնես մեջք և անցնես: Իսկ եթե նեղ դուռ է, միջանցք, բազմաթյան մեք ու վայ թե խնդրեցիր:

— Հնկեր, խնդրեմ, եթե կարելի է ճամփա տաք:

Եթե խեղճ մտիկ է տալիս քեզ և քեթք շուռ տալիս: Դեռ եզակ ճամփա: Նշանակում է՝ ինքնասիրությանը դիպար:

Ամեն օր Արովյանի մայթին կտեսնեք ութ-ինը հոգի, շղթա կապած, գնում են դանդաղ, շորորալով և ոչ ոքի ճամփա շտալով: Ըամփա աալը մեծ ստորությունն է համարվում մեր աշխարհում:

Բայց ամենից ուշագրավը քաղաքից դուրսն է, ճամփի վրա:

Մի խուլ և համառ պայքար կա շոֆերի և հետևակ ճամփորդի միջև:

Եթե ամեն մի հետևակ մարդ մեզանում Տիգրան Մեծ է, ամեն մի շոֆեր էլ մի Հայկազն է վերից վար:

Եվ այս շոֆեր Հայկազնի և հետևակ Տիգրան Մեծի պայքարն արժե դիտել:

Ճամփա տալ — ասել է հոգի տալ:

Մտածում ես, քե գոնե այս Տիգրան Մեծն իր անձը չվտանգելու համար պետք է որ ճամփա տա:

Անկարելի բան է: Պատվի հարց է:

Եվ ահա պատկեր: Դեմից գալիս է մի որևէ Տիգրան Մեծ: Կամ գնում է: Միևնույն է: Հենց որ տեսնում է ավտոմոբիլը՝ պատրաստվում է ճամփա շտալու: Եթեք Հայկազնը գիտն այդ: Սա էլ պատրաստվում է ճամփա առնելու:

Եվ ահա սկսում է սիգնալ տալը:

— Վախեցնում ես, քիչ չէր լինի...— Ժողովում է Տիգրան Մեծը: Եթեքը գիտն այդ մոմոտը և դիտմամբ սաստկացնում է սիգնալը:

Տիգրան Մեծը ետ չի նայում: Եթեքը դարձյալ սիգնալ է տալիս:

Պետք չի:

Չլսելու է տալիս:

Եթեքը գիտն այդ և արդեն ականջ է ծակում հաշիցնելով իր սիգնալը:

— Հաֆ, հաֆ, հաֆ...

— Չհարումար, — ասում է ինքն իրեն Տիգրան Մեծը:

— Հաֆ, հաֆ, հաֆ...

Կատաղում է շոֆերը:

— Բրբռացրու, ինչքան քեֆդ կտա, — խոսում է ինքն իրեն Տիգրան մեծը:

Եթեք Հայկազնը գիտն այդ:

— Կառա ճամփա, — ղեջրտում է շոֆեր Հայկազնը:

— Կողքով կանցնիս, — ղեջրտում է Տիգրան Մեծը:

Եթեք Հայկազնը շատ ուրախ է, որ Տիգրան Մեծն իրեն ճամփա չի տալիս: «Խիղճը հանգիստ է»: Սիգնալը հազար անգամ տվել է... ուստի և ուզող քշում է Տիգրան Մեծի վրա:

Տիգրան Մեծը գլուխը հազիվ միայն ետ է շրջում և արհամարհական աչքի ծայրով մտիկ տալիս ավտոմոբիլի քթին և... ուրիշ ոչինչ:

Ու ավտոմոբիլը՝ ֆրոթ, — ճանկում է նրա հագուստի փեշք ու թռչում:

— Կերար, ճամփա չտվիր, — ղեջրտում է նրա երեսին շոֆեր Հայկազնը շարախնդաց:

— Կերար, ճամփա առար, — մրմոռում է Տիգրան Մեծը նույնպես շարախնդաց:

— Հաֆ, հաֆ, հաֆ, — գցում է իր հետևից շոֆերը, իբրև հայհոյանք:

— Չհարուզխոտի, — նետում է նրան Տիգրան Մեծը:

— Իհարկե, այս ինքնասիրությանն և՛ պատվի, և՛ արքատոկրատիզմի սպորտը բազմական ծախս է նստում և ազգում է մեր Կենտրոնավարի վրա... պակասեցնելով մեր բնակչության թիվը, բայց այդ շոֆերի գործի հետ առնչության չունի:

Եթեքը առհասարակ լավ ախպեր սղա է լինում: Հոֆիական թեքումով:

Երբ ավտոմոբիլի վրա չէ — հոգի է 1000 տոկոսով: Ընկերական, քաղցր, համեստ, ամոթխած:

Բայց հենց որ նստեց ավտոմոբիլ, գնաց Սոցապ, պատասխանատվությունը թողնում է գարածում:

Շոֆերի քարտեզի վրա քաղաքներ չկան:

Չկան նաև գյուղեր:

Տներ:

Մարդիկ:

Շոֆերի քարտեզը տաբուլառագա է, որի վրա միայն շոսսեն է նկարած:

Գրանից դենը — գլուխդ ապրի:

Շոֆերը չի վախում:

Նրան միայն մի բան է կոտրում — ճահիճը կամ փոսը՝ ջրով լի, ուր խրվում է իր ավտոյի հետ: Այստեղ է, որ գլուխը քարշ, ծոծրակը քորելով մոտենում է Տիգրան Մեծին:

— Մի գոմեշներդ բեր. Լուկաշինի ավտոմոբիլը խրվել է մնացել:

— Ճղի, գիտենք, որ Հայկոոպի ավտոմոբիլն է, էդ ֆանդերն էլ նո՞ր ես սովորել:

Եվ խոնարհված Հայկազնի առաջ Տիգրան Մեծը շատ բարեփառ է լինում, և մի ժամից հետո ավտոմոբիլը դուրս է գալիս ցեխից... Իբրև գոմեշներ:

1926 թ.

ՊՈՆՄ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ

Անցյալ օրերը մի հիմնարկի մեջ հինգ շերտնանոց տվի ծառայողին, որ երեքը վերցնեի և քսան ուրբի ետ տար: Մոռացա քսան ուրբին վերցնելու: Եկա տուն:

Մառայողն էլ «մոռացավ»: Երբ հիշեցի ու գնացի նույն ծառայողին հիշեցնելու՝ «չհիշեց»: Ընդհակառակն՝ պնդեց, որ այդպիսի բան չէր կարող պատահել: Ես էլ պնդում էի, որ «պատահեց»:

Մի տասը բոլակ ճամփա ընկանք մետաֆիզիկայի, իրավագիտության, էտիկայի մշուշապատ աշխարհները և ձեռնունայն վերադարձանք հիմնարկության կասսայի առաջ: Բան դուրս չեկավ: Այն ժամանակ ես դուրս եկա հիմնարկից: Բավականին զայրացա և ուխտ արի ու հաստատ վճիռ կայացրի կլասիկ ոճով մի պոեմ գրել ազնվության մասին և հիմիկվանից բաժանորդագրություն բանալ այդ գրքի տպագրության համար և նախապես դիմել Քաղլուավարին, որ թույլ տա այդ գրելիք պոեմը:

Բարկությունս փոխվեց ծանրաթախիծ տրտմության, և, այն է, դուրս էի գալիս դրսի դռնից, որ պատահեց բարեկամս:

— Հը, հիվանդ հո չե՞ս:

— Ո՛չ, դժբախտություն պատահեց ներսը, — ասացի ես, — մի ծառայող...

— Մեռա՞վ, խեղճ մարդ...

— Ո՛չ, նա այնտեղ շէր, որ մեռներ:

— Ապա ի՞նչ եղավ:

— Մինչև մեռնելը կորավ տեղն ու տեղը:

— Ինչպե՞ս կորավ:

— Քսան ուրբի կորցրի, և որովհետև նա էլ հետն էր՝ կորավ:

— Ինչպե՞ս:

— Քսան ուրբին նրա ձեռքի մեջն էր: Երևի կպած էր ձեռքին, ինչ էր, չհասկացա: Կորավ:

Բարեկամս ծիծաղեց:

— Հանաքի ժամանա՞կ ես գտել:

— Է, որ լուրջ խոսեցի, այն է՝ քսան ուրբին գտա՞ ինչ է:

— Իհարկե լուրջից էլ բան դուրս չի գա: Դու իրավունք չունես, այսինքն ձևական, օրինական հիմք չունես ծառայողից պահանջելու:

— Ապա ազնվությունը...

— Դա հիմք չէ: Օրենքի նախատեսածն ապացույցն ու փաստն է:

— Ուրեմն գնա՞ց քսան ուրբին:

— Այսպես է. պետք է ուշքդ վրադ պահես:

— Իսկ եթե ուշքս մոռանամ:

— Այն ժամանակ հիշողությունդ պիտի պահես:

— Գրա համար է, որ չեմ սիրում մեծ դրամը: Մեծ դրամ ունեցող մարդը պետք է մեծ հիշողություն ունենա, իսկ մեծ հիշողություն համար պետք է պայծառ ուղեղ: Պայծառ ուղեղի համար պետք է կանոնավոր սիրա, կանոնավոր սրտի համար պետք է առատ արջուն, առատ արյան համար հարկավոր է առողջ ստամոքս... սնունդ, իսկ անունդի համար քսան ուրբի փող: Հիմա ես օրտեղից գտնեմ իմ քսան ուրբին (ես գնա նախ կարգով), որ սնունդ ստանամ, ունենամ լավ ստամոքս, սիրտ, պայծառ հիշողություն և կարողանամ մեծ դրամ պահել:

Ամենից լավն իմ կարծիքով հետևյալն է: Վերջացնել բոլոր չերվոնանոցները, ուրբիանոցները, 20, 15, 10, 5, 3, 2 կոպեկանոցները և պահել մի կոպեկը որպես միավոր: Ուզում ես 30 ուրբի տալ ծառայողին — համեցեք քեզ մի քրդական հիանալի միջոց. — ասա ծառայողին ստացական գրի, որ մի կոպեկ ստացավ: Առ ստացականը, տուր իրեն մի կոպեկ: Հետո, դարձյալ գրել տուր մի ստացական. առ, տուր ևս մի կոպեկ: Մինչև երեսուն ուրբի լրանա:

— Օգուտ չունի:

— Ինչո՞ւ:

— Կստանա կոպեկը և ստացականը չի տա:

— Հետևյալ կոպեկը չեմ տա:

— Այն ժամանակ կստանա քսան և ինը ասուրի 20 կոպեկ և վերջին կոպեկի ստացականը չի տա:

— Առաջ ստացականը կպահանջեմ:

— Վերջապես ծառայողը ինքը կարող է քեզանից զգուշանալ և պահանջել, որ առաջ գա՛ւ տա կոպեկը:

— Գրա միջոցն էլ կա: Կասեմ գրի ստացականը և դիր ձախ ձեռիս բթամատի ու ցուցամատի մեջ, ես էլ կոպեկը կդնեմ քո աջ ձեռի ցուցամատի ու բթամատի մեջ և երբ կասեմ — «մեկ, երկու, երեք»՝ դու կոպեկը քաշիր, ես՝ ստացականը՝ փղա՛վ:

— Ոչ: Հենց այդ ժամանակ նա կարող է ստացականը թույլ բռնել և հանկարծ ուժով կոպեկը հտ քաշել: Կարող է ստացականն էլ քաշել նույն ձևով:

— Ապա՞, սիրելիս, ես ուզում էի, որ դա հասնեա այդ ար-

ասուրդին: Հիմա թ՛ե՛ղ ես առաջարկում՝ ուշքս պիտի վրաս պահե՛մ, թե՛ ծառայողը պիտի ազնիվ լինի:

— Ա՛չ, ուշքդ պիտի վթաղ պահես:

— Ա՛չ, սիրելիս, ծառայողը պիտի ազնիվ լինի: Օրենքը՝ օրենք, բայց կա մի արանք, մի շեղոք զոն, որի երկու կողմն օրենքը կանգնելով, մեջտեղը բաց տարածություն է թողնում, ինչպես իմ կոպեկ բռնած ձեռիս ու ծառայողի ստացականի արանքը: Օրենքը չի մտնում այս արանքը և իր սրաշտոնը հանձնում է ազնվության:

Բարեկամս չհամաձայնեց: Ինչպիսի ընկալի:

Ձայրացած հեռացա և որոշեցի ազնվության մասին կլասիկ պոեմը շքեղ այլևս:

Ավելորդ աշխատանք և ավելորդ ծախս: Համ քսան ուրբի կորցնեմ, համ էլ մի 100 ուրբի կորցրածի մասին գիրք գրելով կորցնեմ:

Ինչպես երևում է՝ պետք է էլի լավ ուշք ու հիշողություն ձեռք բերել:

Այդ ոչինչ. ասենք մի կերպ ձեռք կբերեմ այդ հիշողությունը, բայց ո՞րտեղից ձեռք բերեմ մի հիշողություն, որ չմոտանամ այդ... հիշողությունը:

1926 թ.

ՄԻԼՅՈՒՆ ԵՎ ԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Ամսիս 14-ին Կուլտուրայի տան սրահում, միլիցիայի տոնի առթիվ մի երեկույթ էր արվել (տե՛ր, դժբախտարար, հրաժիրված չլի), որտեղ միլիցիան մի ցուցադրական հանգեսով քացաարել էր գողերին ու սրիկաներին բռնելու ճապոնական, եվրոպական, ամերիկյան և այլ սիստեմները:

Մտաւիտրապես մի շաքաթ առաջ էլ միլիցիայի երգվալ հակաակադեմիքը — պարզապես դառնքը — նույն Կուլտուրայի տան նկուղում, ուր Պետհրատի գրապահատն է, կազմակերպել էին

մի գողության ցուցադրական երեկո (որ նույնպես հրավիրված չէի), որտեղ վերոհիշյալ գողերը ցուցահանել էին այն բոլոր տեխնիկական նվաճումները, որ նրանք ձեռք են բերել գողության ասպարեքում ճապոնական, եվրոպական, ամերիկյան և այլ սխտեմներին մեջ:

Կեցցեն գողերը:

Ի՞նչ է նշանակում այս:

Արթնացումն դարավոր քնի՞ց: Կուլտուրական վերե՞լք:

Երևի:

Եվ լավ որ նայում ես, տեսնում ես՝ յուրաքանչյուր գող իր գործունեությամբ ըստ շահու կարողության յուրովսանն աշխատելով սովորական քանդարարության վերելքում՝ գցում է իր համեստ լուման այդ ասպարեզում և իր հերթին առաջադիմում է համապատասխան բնագավառում:

Նախ և առաջ մարդիկ ահագին եվրոպականացման են ենթարկվել:

Ավազակները դարձել են բանդիտներ:

Չափառու-կինտոները՝ խուլիգաններ:

Ուստա գողը դարձել է ռեցիդիվիստ:

Ուրիշ տեղից եկած գողը՝ գաստրալյոր:

Խաչագողը հիմա շանտաժիստ է: (Իզմ):

Թալանչին դարձել է դրամաշորթ:

Ջիբգիրը հիմա գրպանահատ է: (Գրաբար):

Հետո տեսնում ենք, որ գողերը միայն իրենք չէ, որ կուլտուրականացել են: Մշակույթի են ենթարկվել նաև գողության ենթակա առարկաները — գողոնները:

Առաջ ոչխար, դարման, շալվար, փող էին գողանում:

Հիմա գրապիտուլք, գիրք, գրականություն են գողանում:

Սեփ-ի գործիքներ:

Քիմիական բաղադրություններ:— Գիտություն, տեխնիկա՝ Անգրագիտության վերացումն, ինքնակրթություն:

Այս մեծ հառաջադիմությունն է:

Իհարկե, չի կարելի սրտի մեծ ցավով շարձանագրել, որ հայ տիպը կորցնում է իր ազգային հարազատ դեմքը:— Չի կարելի խորապես շահասու, որ միլիցիական նոր սխտեմներն իսպառ վերացնում են պապական յուժբուժը, հարազատ գմբուզը, մեր նա-

հապետական քոթակը, հայրենի շնաթակը, ընտանի շանսատակը և թե ինչպես մեր ճկուն, հյութալի խաչագողը դարձել է խորթ շանտաժիստ և ժողովրդական, կենդանի շիբգիրը այլանդակվել է՝ դառնալով գրպանահատ...

Բայց հառաջադիմությունը պարզ է:

Եվ ահա այստեղ է, որ մեր միլիցիան գողերի արժանապատվությունն ու կուլտուրականությունը շվիրավորելու համար հարկ է տեսնում համապատասխան կուլտուրական կերպեր մտցնել նրանց հետ վարվելու համար:

Ի՞նչ մոտեցում պիտի ունենալ կուլտուրական գողերի հանդեպ:

Մեթոդիկ մոտեցում:

Եթե շատ առաջներում սրիկային բռնում դմբզում, քշում, գցում էին կալանատուն, հիմա պահանջվում է ճապոնական մեթոդով վարվել: Հիմի չի կարելի բռնել, այլ ձեռքակալել:

Չի կարելի դմբզել անհարկի, այլ հարվածել ի պահանջի հարկին և այն էլ որևէ սխտեմով:

Չի կարելի քշել, գցել կալանատուն:

Այլ պետք է մղել և ուղղել դեպի կալանատուն:

Մի խոսքով՝ եթե առաջ գողին գուժանով էինք բռնում, հիմա տրակտորով պիտի բռնենք:

Մի քանի օրինակ:

Հարց: Եթե շարագործն ատրճանակը դեմ արած՝ ուզում է վերագ կրակել: Ի՞նչպես պետք է բռնես նրան:

Ռացիոնալիզացիայով:

Պետք է ձախ ձեռք գցել նրա աջ բազկին և ոլորել վեր, ապա աջ ձեռքի ափի փափուկ տեղով (որ նախապես պիտի կոշտացնել ամենաօրյա մարզանքներով) պետք է հարվածել նրա վզին, որից նա վայր կընկնի, հետո փորին ոտքով հարվածել, որով ատրճանակը ձեռից բաց կթողնի:

Կամ ի՞նչպես պետք է սրիկային միլիցատուն տանել: Եթե նա դիմադրում է:

Այստեղ պետք է մեխանիզացիա:

Միլիցիոններնորից մեկը պետք է մի ձեռքով բռնի սրիկայի ձեռք, մյուս ձեռք գցի նրա մեջքին՝ գոտկատեղում և մի փոքր վեր բարձրացնի սրիկային. մյուս միլիցիոններն էլ պետք է ձեռք գցի

նրա վզակոթին և պինդ բռնած առաջ մղի, որով սրիկան իր հավասարակշռությունը կորցնելու է բերանքսիվայր ընկնելու ահից ոտքերն ինքնաբերաբար առաջ կշարժի և կգնա միլիցատուն:

Սրիկայի ավտոմատիզացիա:

Ինքնագործություն: Ինքնուրույնություն:

Չենք կարծում, թե մեր քաղաքակրթված սրիկաները գծող լինեն այս կուլտուրական պրիոմից:

Այս ամենը լավ: Բայց ի՞նչ պիտի լինի մեր այս երկու կատեգորիաների շինարար և քանդարար գործունեության հետևանքը:

Միլիցիան ուժեղանում է, բայց գողերն էլ սրում են իրենց ընդունակությունները:

Պետք է մեր միլիցիոններին զուլացնենք մի բանում:

Այդ մտավոր զարգացման ֆրոնտն է:

Միլիցիոններ, զգաստ:

Նրան այգտեղ էլ բռնելու համար պետք է զարգացում:

Թող նա գրքեր գողանա: Իսկ դու գիտություն գողացիր:

1926 թ.

ԿՈՒՐՈՐՏ

Անցյալ օրը պատահեցի հին ժանոթներիցս մեկին, քաղաքացի Հնազանդ Պարոնիկյանին, որին երկար ժամանակ շէի տեսել, որը ի դեպ ասած՝ շատ պարկեշտ ու խաղաղ մարդ է: Շատ զարմացա, տեսնելով դեմքի վրա շարվածքներ, առուցքներ, որ բուռնցքի բուլոր հետքերն ունեին իրենց վրա:

— Ներեցեք,— ասացի նրան,— ձեր փողոցում սրիկանե՞ր կան:

— Եվ ոչ մի սրիկա չկա,— պատասխանեց պարկեշտ բարեկամս ինքն ևս զարմանալով իմ հարցի վրա:

— Գուցե ձեր բարեկամների հետ զրամական վեճե՞ր եք ունենում:

— Ոչ մի զրամական վեճ չունեմ իմ բարեկամների հետ:

— Ապա ինչո՞ւ է ձեր գեմքը... ներեցեք, տեսքը ուռած:

— Ախ դե՞մքս,— փողոցից է:

— Կատակ եք անում... փողոցը կարո՞ղ է խփել ձեր դեմքին:

— Փողոցը ինչու պիտի խփի իմ դեմքին. ես ինքս կիսփնմ դեմքս փողոցին:

— Բայց ի՞նչն է ստիպում ձեզ դեմքերդ խփել փողոցին:

— Ստիպում են փոսերը, քարերը, ծուռ մայթերը և այլ այսպիսի հանգամանքներ:

— Ուրեմն ձեր փողոցները այդպես վտանգավո՞ր են:

— Վտանգավոր: Մեր փողոցներում ամբողջ խմբերով մարդիկ են ընդհարվում իրար և խորտակվում:— Դուք այդ մի՞ ասեք, այդ չէ բանը:

— Ապա ինչո՞ւմն է բանը:

— Դուք լինձ այն հարցրեք, թե ինչի՞ց գիտեմ, որ մեր փողոցում փոսեր ու քարեր կան:

— Ինչի՞ց գիտեք:

— Ցերեկից: Երբ ցերեկ է լինում՝ ուղղակի տեսնում ենք այդ փոսերն ու քարերը, որովհետև գիշերները նախաստեղծական քառս է լինում իր թանձր խավարով:

— Խավա՞ր:

Այո, Աստվածաշունչն ասում է, աստվածն ասաց, լինի լույս և եղիվ լույս: Բայց այդպես չէ մեր փողոցում: Մեր փողոցի բնակիչները շատ վաղուց է, ասում են լինի լույս, բայց չի լինում լույս — ընդհակառակը, լինում է մութ: Ասում են կամաց-կամաց բոլոր փողոցներում պիտի լինի լույս: Բայց խնդիրն այն է, որ կամաց-կամաց է լինելու, որով թերևս ապացուցվում է այն միտքը, թե լույսը արագ չի շարժվում և մի վայրկյանում ոչ թե թռչում է հազարավոր մղոններ, այլ կես մղոնն անցնում է երկու տարում:

— Ասացեք, խնդրեմ, բարեկամ, ինչպե՞ս եք գիշերները ձեր փողոցի փոսերով ու քարերով անցնում:

— Միամտությամբ:

— Միամտությամբ, ինչպե՞ս:

— Ինձ համար գնում եմ, մթան ժեղ ինչ խմածում, թե որտեղ փոս կա, որտեղ քար: Միամիտ սառ դեռեմ եմ ուր պատահի և երեկակայեցեք, անվնաս անց եմ կենում: Կան և ուրիշ մեթոդներ

անվնաս անցնելու, դա հարբելն է, բայց բժիշկներն արգելում են խմելը:

— Իսկ ձեր սենյակն ինչպե՞ս եք գտնում մթան մեջ:

— Թյուրիմացությամբ:

— Ինչպե՞ս թե:

— Գիշերը մթնով գնում եմ և միաժամանակ քայլելով պատահաբար մտնում եմ մի որևէ բակ, անցնում եմ մի որևէ սենյակ հարցնելու, թե ո՞ւմ տունն է սա, ի՞նչ համար է, որպեսզի այդ տանից հաշվելով գտնեմ իմ տունը և ինչ եք կարծում, ամեն անգամ Թյուրիմացությամբ ընկնում եմ իմ սենյակը:

— Ինչ բարդ, իտալական հաշվապահությունն է: Շատ լավ, ասենք թե ձեր փողոցներում գիշերը մութ է լինում, և չեք կարող ճամփա գտնել, ցերեկները հո ճամփան երևում է:

— Իհարկե երևում է:

— Ապա ինչո՞ւ չեք փախչում, գաղթում մի ուրիշ կանոնավոր փողոց և ազատվում այդ փոսերից ու խավարից:

— Մենք մեր փողոցից գանգատ չունենք:

— Թողեք, բարեկամս, ի՞նչ եք ասում: Երևակայեցե՞ք, գիշերվա կեսին մեկը հիվանդանում է և կարիք կա բժիշկ հասնելու Այդ դեպքում ի՞նչ եք անում:

— Շատ հասարակ:

— Օրինակ, ի՞նչ:

— Բուրբուրովին բժիշկ չենք հրավիրում:

— Ինչո՞ւ:

— Որովհետև մեր փողոցում ոչ ոք չի հիվանդանում:

— Չի հիվանդանում ոչ ո՞ք: Ինչո՞ւ, ձեր փողոցներում հիվանդություն չկա՞:

— Չի կարող լինել:

— Կլիման առողջարար է:

— Ո՞չ, Կլիման, ընդհակառակն, շատ փոշոտ է:

— Ուրեմն ջուրն է առողջարար:

— Ջուր բուրբուրովին չունենք:

— Ապա ի՞նչն է ձեր առողջության աղբյուրը:

— Մեզ փրկողը մեր փողոցների բնական կուրորտն է, որ

բնակչության համար ուղղակի գյուտ է:

— Հը՞:

— Մեզ փրկում են մեր բուժարանները:

— Հիվանդանո՞ց ունիք:

— Ոչ, Ցեխի վաննաները: Մեր փողոցներում այնպիսի բնական ցեխի վաննաներ ունենք, որ կատարյալ Ախթալա է, որ թեև բնական և դեռևս անմշակ վիճակումն է, բայց շուտով երևի շենքեր կշինվեն դրսի հիվանդների համար: Մեր փողոցներում ունեմտիզմ չկա: Միայն թե հասակավորները բժշկվում են ոտներից սկսած մինչև ծնկան ունեմտիզմը, բայց երեխաները, որ երեկոներն ուշ դպրոցից տուն են վերադառնում, այնպիսի ամբողջական վաննաներ են ընդունած լինում ցեխի մեջ, որ ոչ թե հիմա են բժշկվում ունեմտիզմից, այլև ապագայում էլ և իրենց սերունդն էլ ազատ է ունեմտիզմից: Շատ աշխույժ տեսարան է, երբ դպրոցից գալիս են տուն: Աջնպես են ցեխի մեջ կորած լինում, որ մայրերը նախ չեն ճանաչում իրենց զավակներին և երբ լվանում են նրանց՝ հանկարծ տեսնում են, որ իրենց զավակները փոխա են ընկել, ուրեմն և ուղարկում են ըստ պատկանելույն:

— Իսկ ջրի՞ հարցն ինչպես եք լուծում:

— Կոոպերատիվ տակառ ունենք:

— Կոոպերատիվ տակառ՞ — դա ի՞նչ բան է:

— Դա ջրի սովորական տակառ է, վրան թուրք ջրկիր և առաջը մի ձի: Շարժական կոոպերատիվ է: Գնում է հեռավոր փողոցներից ջուր է վերցնում և բերում բաժանում է իր անդամներին:

— Խելացի բան է:

— Շատ խելացի, միայն վայ աջն բնակչին, որ ջրկիրին մի բանով վիրավորում է: Ջրկիրը ջրից զրկում է ոչ միայն նրան, այլև այն տան բոլոր կենդանիներին: Այդ պատճառով բոլոր բնակչությունը կուլեկտիվ կերպով քաղաքավարի է դեպի ջրկիրը:

— Շատ հիանալի: Բայց չե՞ք կարող դիմել ուր հարկն է, որ ջրի ծորակները շատացնեն կամ կոոպերատիվ խանութներ բանան ձեր թաղերի մոտ: Երեսներդ չի՞ բռնում:

— Երեսներս բռնում է, մանավանդ ձակատներս, որ այնքան բարի ու գերանի ենք խփել մթան մեջ, որ պողպատ են դարձել: Բայց ի՞նչ կարիք ունենք ջրի, լույսի կամ ուրիշ այդպիսի բաների: Մեր թաղերը ձիշտն ասած ավելի ուսցիոնալ պայմանների մեջ են ապրում, քան մյուսները:

— Ինչպե՞ս:

— Այ, ինչպես: Ամառը մեր փողոցներով անցնող կառքերը մեզ խեղդում են փողով: Դա տևում է միմիայն երեք ամիս: Երեք ամիս հիվանդանում ենք և ինն ամիս անցնում ենք ցեխաբուժման, մինչ մյուս թաղերը խեն ամիս հիվանդանում են, և երեք ամիս միայն բժշկվում:

— Մի հարց է: Իսկ այդ ինչպե՞ս եք ձեռք բերում:

— Ցեխը ձեռք ենք բերում երեք միջոցներով. նախ բուժ-թյունը, որ առատ անձրևով առաջացնում է այդ բուժական նյութը, ապա նոր շենքերի համար հավաքված ջրերի լճակները, որ պրոպագանդ են անում մեզ իրենցով և ապա բազմաթիվ կառքերը, էշերը, ձիերը, ավտոմոբիլները, գոմեշոբիլները, որ օրնիբուն անցնելով մերում, կակղացնում և պյուրիֆիկացիայի են ենթարկում բուժանյութը, և ահա նա պատրաստ է գործածուվյալն համար:

— Ռարձն գանգառ շունեք:

— Ի՞նչ գանգառ պիտի ունենանք. մինչդեռ մյուս փողոցներից ոչ մի կառք չի անցնում, մեր փողոցներն իսկական լոռոս են դառել էշերի և եղենբի տաղանցքներից. մենք կալտուրականանում ենք և իսկապես որ դառնում ենք քաղաք:

— Մառայություն:

— Գնաք բարով:

1926 թ.

ԷՇԸ ԵՎ ՀԵՄԱՆԻՎԸ

էշը հին գյուտ է:

Թեև չգիտենք, թե ով է եղել նրա հնարողը, բայց նրանում է, որ շատ հին պիտի լինի, և այդ հնությունից է, որ նրա բոլոր հատկությունները քարացած են:

էշը համառ է և... ուղղագիծ:

Այո, նա ուղղագիծ է գնում: Գուցե կարծվի, թե մաթեմատիկական հաշիվներ է անում, որ այդուց մինչև տուն ամենակարճ ճամփան ուղիղ գիծն է:

Բոլորովին ոչ:— Համառ է, մի անգամ վճռել է ուղիղ գնալ, էլ չի շեղվում:

Զարմանալի է այս համառությունը:

Հետևից է գալիս՝ բոթում է ու անց կենում, առջևից է գալիս, բոթում է, աջ կողմից, ձախ կողմից... նույն բանը:

Երևանում փողոցներ կան, որ վայ, թե փրխսոփայական, վերացական հարցերով զբաղվեցիր ու շուրջը շնայեցիր—վերջացած է բանը: Կամ Կանտի վրա շուռ կգաս կամ Սպինոզայի: Շատ անգամ հնար շունես ինքդ նրան ճամփա տալու: Եվ ահա գալիս է դեմից, տիրոջն էլ մեջքին նստեցրած: Ինքն էլ տեսնում, փողոցը մեծ, ճամփան լայն, կարող է և աջ ծովել և ձախ:

Բան չունես:

Գալիս է, գալիս ու թախկ դիպչում է կոնքիդ ոսկրին...

Ասում ես, նկատում, շատ անգամ գոռում վրան:

Իսկի էլ պետքը չի:

Զի լսում:

Հետևյալ անգամ—նույն բանը...

Ուրի՞շ անգամ—միևնույն բանը:

Մի այլ ուրիշ անգամ — էլի միևնույն բանը:

Համառ է, իր ասածի:

Այդպես է, կողքդ պիտի ջարդվի:

Այս վտանգը միշտ կա: Եվ այս վտանգը միշտ նրանից կա, որ մեր Երևանը դեռ շատ գործ պիտի ունենա այդեգործության, այդե-տերերի և փոխադրական այս վերոհիշյալ միջոցի հետ:

Արդեն գարուն է, և Երևանում այդետեքերը նրան հեծած սկսել են այգի գնալ-գալը:

Մեր մի քանի փողոցների լեյտմոտիվն էշն է:

Արդեն առավոտից մինչև երեկո իշական սուլֆիջո ենք անցնում:

Մի կողմ մնա այս եզրակացությանը և ձայնի մշակման հարցը, ցավն այն է, որ էշը, բացի փոխադրական միջոց լինելուց, նաև զրոսակենդանի է Երևանում:

Ի՞նչ իշարշավներ են մի քանի փողոցներում:

Կատարյալ իշողորմ:

Երևի այս վերջին պահանջը աչքի առաջ ունենալով էլ հնարված է հեծանիվը:

Իբրև մեխանիզացիա:

Ուրիշ կերպ էլ չի լինի: Գուժանը դառնում է տրակտոր, էշն էլ պիտի դառնա հեծանիվ:

Հիմա չգիտեմ՝ ով է արել հեծանիվի գյուտը, բայց երևի այդ հնարողը գյուտն անելիս կամ իբրև մողեղ աշքի առաջ է ունեցել էշը, կամ ուզեցել է հնարել մի այնպիսի մեքենա, որ ունենա իշի բոլոր հատկությունները՝ գնողներին գրավելու համար:

Եվ որքան ճարտարամիտ գյուտ է արել: Որքան հիանալի ստի- լով պահպանված է իշի բոլոր հատկությունները հեծանիվի մեջ:

Օրինակ՝ գալիս է դեմից հեծանիվը: Փողոցը մեծ է, ճամփան լայն, հարթ, ազատ: Տեսնում էլ է, որ ձեռիդ ծանր կապոց ունես կամ գրկիդ երեխա կա, կամ հիվանդ ես՝ չես կարող իսկույն և արագ ճամփա տալ իրեն: Ինչ ուզում ես արա, ուզում ես խեթ մտիկ տուր իրեն, ցույց տուր, որ կամենում ես ճամփա տալ, բայց հնար չունես — հեծանիվի համար միևնույն է: Չի ծովի, չի դան- դաղի: Ուղիղ քշում է վրադ:

Կամ հետևիցդ է գալիս ու փոթորկի պես թռչում ուղիղ, ականջիդ տակով: Ու վայ, թե մտքիդ հետ ընկած այդ վայրկյա- նին աջ կամ ձախ ծովես մի վերշոկ...

Եթե թուլակազմ մարդ ես՝ կտակդ գրիր նախօրոք:

Ասում ես, նկատում, գոռում վրան — բայց հեծանիվի պետքը չի: Շատ համառ մեքենա է, և ավելի վտանգավոր, քան էշը, որովհետև եթե իշի կողը հաստ է, բայց նա կաշի է գոնես, իսկ հե- ձանիվը ամբողջովին մետաղ է:

Մեր մի քանի փողոցներում այնքան են շատացել այդ մեքե- նաները, որ անվտանգ անցնել չի կարելի:

Էլ երեխա գցել տակը, էլ պառավների կծերը կոտրել...

Այս էլ քեզ մեխանիզացիա:

Բայց մեխանիզացիա մեխանիզացիա՝ մի քիչ էլ պետք է պսիխիզացիա և ինտելիզացիա:

«Համապատասխան մարմինների ուշադրությունն ենք հրա- վիրում» — ինչպես ասում են:

1926 թ.

ԱՂՃՈՆ ԷՋՄԻԱՅՆՈՒՄ

Աղճոյի ճամառոտ դուանք. Շուկայական փոխասացություն: Ռեշիտա- տիվ և դուետ: Հին մայրաքաղաքի պարսպները զարքնում են տանական աղաղակներից. «Խարչուն մի շահի»:

Աղճոն ձեռաց դուքան-բազարը սարքեց: Մանրեղենը՝ հայելի, սանդ, ծխախոտ, լուցկի, մաստակ, կանֆետ Երևանից էր բերել, որոնց հետ կային վիլսոնյան շավարներ, վաշինգտոնյան վար- տիքներ, Չիկագոյի գդակներ, իսկ մրգեղենը բարիշիլ էր իր վա- ղարշապատցի բաշանաղ այգետեր Վաղոյի հետ, որ նա պիտի հայ- թայթեր՝ օգուտը կիսովի:

Ընտանիքի մեջ աշխատանքի բաժանումը հենց գլխից հասկա- նալի էր և կատարվեց ավանդական սովորության համաձայն:

Աղճոյի կինը երեխաներն ու անկողին — պաշարն առավ զը- նաց վանքի բակը հոգևոր մխիթարությունը հոգալու՝ ինչպես տնա- յին հոգևոր գործերի վարիչ, իսկ Աղճոն իր տղայի հետ մնաց շու- կայում մարմնավոր մխիթարության հետևելու՝ վարելով արտաքին գործերը:

Եվ ահա խանութը սարքված, պատրաստ՝ Աղճոն սկսեց:

— Պա՛, պա՛, պա՛, պա՛, հասե՛ք, հասե՛ք, լավ հավողը պըր- ծավ, պրծավ, լավ հավողը, լավ հավողը...

Նրան փոխասացության կարգով տղան կցում էր.

— Խարչուն մի՛ շահի, խարչուն մի՛ շահի:

Սա չվերջացրած՝ Աղճոն էր կցում.

...Մի շահի, պա՛, պա՛, պա՛, պա՛... շատը գնաց, քի՛չը մնաց...

Տղան — ...մնաց, պա՛, պա՛, պա՛, պա՛, պա՛...

Երբեմն էլ դուետ էր դառնում.

Աղճոն

Տղան

— Պա՛, պա՛, պա՛ — լավ հավողը,

— Պա՛, պա՛, պա՛ — լավ հավողը,

Նրանց էլ կցվում էին համայն բախկալների բացականչու- թյունները, սրանց էլ մյուս շուկաների ձայները, և ամբողջ Վա- ղարշապատը՝ հին մայրաքաղաքն հայոց, գոռում էր կոլեկտիվ ձայնով.

— Խարչուն մի շահի...

Ու հին պարիսպները՝ այս տոնական ձայներից զարթնած՝ արձագանքում էին.

— Խարչուն մի շահի...
Եվ հովն հայոց իր թևերով տանում էր և ցրում դաշտերում.

— Խարչուն մի շահի:
Խանութի շուքը, ամբողջ շուկայում խոնված էր մուշտարին հայոց:

Առևտուրը ետում էր տենդային արագությամբ: Աղճոն կատաղի ծախում էր, մոլեգին ձախով կակորդը պատռում: Եվ ժողովուրդն ուզում էր, ուզում էր ժողովուրդը:

Աղճոյի խանութի մոտերը մի լույսաբաբարի հիմնարկություն կար, թուրքիկ նարտարապետություն և կոնսարուկով մեթոդով շինած: Հիմնարկի ճակատը մի կապերտ էր, մյուս պատերը յաղաներով դեկորացիա և այս թաթարյանի հիմնարկությունը, որ ներկայացնում էր մի լայնարձակ նեղվածություն՝ լիքն էր բաբոտկազիական համազումարին եկած մի կակիկ բազմություն: Մկաված էր մի պերմանենտ քեֆ, և սազանդարները ձգում էին իրենց պեղածո երգերը:

Դուան մոտ լույսաբաբարի մանդալները ծխում էին և ճենճրպին բուրմոնքով լցնում շուկան, վանքը, վազարշապատը, կարճ ամբողջ տիեզերքը:

Աղճոն վերահաստատում էր իր հին բարեկամությունը, — Աղճո ջան, ես քու հարուզ աստված հրժը դու ինձի հեշ: Աղճոն ոնալիզացիայի ենթարկեց իր բերած ապրանքը. հայելին, կանֆետը, թելը, աստղը, մաստակը, նաև Հյուսիսային Միացյալ Նահանգների թուրքիկ, աստղը, մաստակը, նաև Հյուսիսային Միացյալ Նահանգների շավարները: Մնաց խաղողը, դեղձն ու ձմերուկը, այդ էլ գցեց իր տղի վրա և իր երկարատև զինն ուղղեց դեպի լույսաբաբարային աշխարհը: Այս հիմնարկության միջոց ծանոթ ձայներ էին լսվում, մոտեցավ դուան և վարագույրը ճեղքելով ներս նայեց.

— Էս ինչ է, վաղո, դո՞ւ ետ

— Վայ, Աղճմ, էս որտեղի՞ց:

Առ զյամրեցի վաղոն, վեր թռչելով փաղեց, Աղճոյին քաշեց

ներս.

— Իմանալդ, ո՞ր ես, ես քեզի համար եմ եկն ախր...

— Դու ո՞ր ես, անաստված...

Դե, նստե, նստե... ախպեր տղեք ջան, էս աղբերացուն մեր

Աղճոն է, առ Վրեանու գուրերնիան որան էճանաչե, ախպերացեք ձեռաց:

— Բարով, ախպեր ջան:

— Գինի տվեք Աղճոյին:

— Գինի վերու, Աղճո:

— Անուշ արեք:

— Անուշներ:

— Ջանդ անուշ:

— Ուխտդ ընդունական ըլի:

— Շնորհակալ եմ:

Վաղոն ու իր ընկերները արդեն տղկել էին մինչև սկոթների ծուծը:

Աղճոն էլ առավ առաջին ուղևորական մկրտությունը:

Վաղոն գինու դափաթը ձեռին երերվում էր դեպի Աղճոն, ճակատը խփում ճակատին, ու գինին թափվելով.

— Աղճո ջան, ընձի աշե, ես քու հոգուտ սասկեմ՝ հըմը դու ինձի հեշ...

Քուրոզը (իր կինն է) բերեր եմ ս. մեռն ուխտ: Չորս հարյուր մանեթ իրա ուղուրին վառեր եմ: Աղճո ջան, ընձի աշե: Ահան, տես, էս ախպեր տղեն էլ իմ աղպերացու է, ֆայթմեճի Մուկուշն է, սաղ կավկազու մեջը իրա հատը շկա... էս մարդն էլ իրա օղուշազով ուխտ է եկե... Խե, դու հարդ հոգին... (խփում է մեջքին մուշտով)... Աղճո ջան, ընձի աշե... այ, էս աղբերացու էլ ֆայթմեթի քրեհս 100 մանեթը գինուն կարասը շորցնե պետի գնե մեջը՝ երթա: Աղճո ջան, ընձի աշե... ես քու հորդ հավաար... ներողություն... խմե, խմանալդ, խմե, ներս զարկ, սաղ ըլի վաղան... տունս կծախեմ, քեֆդ շան կտարի: Մենք հաց ազգ ենք... էգ սարր ուխտը, որ եկել ենք... (Մեջքին խփում է) խմե քու հորդ հոգին ու հափաար...

Տուշ...

Աազանդարները գլում են սուշը:

Քեֆի թունդ ժամանակ ներս նայեց Ղարսա կազմեղից եկած տեր Չորաբարիլ քահանան:

— Տերտեր ջան, համեցեք... կարգիդ մասաղ... — գոսաց Վաղան ու ներս քաշեց տեր Չորաբարիլին:

Սա մի տերտեր էր, որի մորուքը կրում էր բոլոր նահանգների

փոշին, իսկ փարաջան ներկայացնում էր մի իսկական ավստրիական կայսրություն, իր հին ու նոր կարկատաններով:

Տեր Զորաբարելը նստեց և շունչ քաշեց.

— Եվ օրհնյալ եղիցի տունն Արամա:

— Գինի տվեք տերտերին... Տերտեր ջան... մեզի օրհնե... քու օրհնանքդ անպակաս էրե էս սուրբ պայծառ օրը... (Մեջքին զարկելով) խմե քու հորդ հոգին ու հավատը...

Այ էդպես... Տուշ...

1926 թ.

ՆՈՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԱՐՎԵՍՏԻ

Առաջ լիրիկ էր:

Ի՞նչ:

Լիրիկ էր՝ ուժեղ և հրապարակախոս...

Աներկբայորեն ղանթարական թեքվածքով:

Լիրա էր նվագում... ներողություն՝ ծախում:

Եվ առնում. իհարկե:

Այնպես որ՝ ամեն օր նրան կարելի էր տեսնել «հրապարակական վայրերում լիրան ձեռին կանգնած:

Երբեմն էլ «նստած»...

Մի շատ անախորժ տեղ... լիրաները ձեռից առնված:

Իհարկե վերջինս պատահում էր 1921-ից, 22-ից սկսած, երբ նա ենթարկվել էր «քննադատության», այսինքն քննության և դատվելու:

Նրա լիրիզմը ծագեց 1918-ին և ծաղկեց 1919, 20, և 21 թրվականներին:

Այդ ժամանակ նա ուժեղ լիրիկ էր և հասավ իր ծաղկման գագաթնակետին:

Բայց հանկարծ դժբախտություն:

Արդեն հայտնի է, որ լիրիզմը հենց այն զլխից մի տևական ուղղություն չէ: Բոլոր լիրիկները կամ սպառվում են, կամ ուրիշ ճյուղ ընտրում:

«Քննադատությունը» ուղղակի «դատապարտեց» լիրիզմը և նրան վերջնականապես նստեցրեց իր տեղում:

Բայց նա չհուսահատվեց: Սկսեց ուսումնասիրել «արվեստի» ուրիշ ճյուղեր, որ առաջ գնա:

Նա սկսեց ուսումնասիրել «նէպոսը»:

Ի՞նչ:

«Նէպոսը» (ն-ն դեն գցենք՝ միևնույն է):

Նա շատ լավ գիտեր, որ լիրիկան նէպոսից առաջ է եղել և անկախ ճյուղ է, և իր կոշումը միմիայն լիրիկականի մեջ է, բայց իբրև կենսունակ «արվեստադետ»՝ հասկացավ, որ նէպիքական ձևի մեջ կարելի է թաքցնել լիրիզմը:

Նա գտավ մի ուղղություն, որ նեպիքականից ազդված է թեև, բայց ունի իր մեջ մի լիրիզմ, մի նեո-լիրիզմ:

Այդ դրամատուրքիան է:

Ի՞նչ:

Դրամատուրքիա, — ք-յով:

Անստորագիր նամակով է լինում այդ կամ այլ ազդու միջոցներով:

Սպառնում էր քաղաքացիներին և դրամ էր գանձում, իբրև տուրք:

Լրագրերն այդ ուղղությունը դրամաշորթություն են անվանում:

Ոչի՞նչ, կարելի է և այդպես:

Բայց քննադատությունն այս անգամ խիստ ուժեղ հարձակում գործեց նրա վրա: Այնպես որ՝ մի օր էլ մեր լիրիկը «նստեց» ուղղի տանը և երկար-բարակ միտք արեց իր ուղղությունների վրա: Լիրիկա...

Նէպիկա...

Դրամատուրքիա...

Ոչ մեկից բան դուրս չեկավ:

Ինչ անում ես «նստեցնում են», ինչ ուղղություն որ բռնում ես «ուղղում» են:

Ավելի լավ է դառնալ պարզ քաղաքացի և նվիրվել սովետական շինարարության:

Սկսեց մեղվաբուծությունը զարգացնել:

Գյուտ արեց:

Նոր սկզբունք գտավ:

«Շինարարական, քաղաքական և սոցիալական»:

Սկսեց փրկիսոփայել. ինչո՞ւ պետք է մեղուները փեթակներու՞մ և դաշտերում աշխատեն բանվորների պես և փեթակատերը վա՛յելի:

Վերջ շահագործման, վերջ ծանրաբեռնություն... կենդանի-ների:

Իրավունք շունես մինչև անգամ կենդանիներ բանեցնելու:

Ի՛նքդ բանիր, ի՛նքդ կեր:

Մեղուներին չվերցրեց:

Շինեց մի մեծ փեթակ, մտավ մեջը և... մեղվի հարցը լուծ-վեց:

Ինչպե՞ս:

Գնացեք տեսեք մեյդանի կողմերը. Ցեխ փողոց № 11 մի խանութ կա, դուռը փակ:

Բացեք դուռը և կտեսնեք մեր նախկին լիրիկին մանդալի առաջ մեղր է շինում... շաքարից:

Ահա քեզ մեղու: Մարդամեղու: Ինքնամեղու:

Ահա քեզ «շինարարություն» քաղցր, ոչ-շահագործական, սո-ցիալիստական:

Ահա քեզ սպեց:

Եվ սպեկ...

(Ուլիանտն էլ կուլ տուր նոր մեղրի պես):

Ապա՛:

1926 թ.

ՀԱՅԸ ԱՄԵՆԱՔՆՔՈՒՇԸ

Երբ առաջին փախստական հայը Հյուսիսային Կովկասից հազար նեղություններով — այսինքն տոմսակներով — երկաթու-ղով մտավ Հայաստանի հողը և կոնդուկտորը Սանահինում նրա-նից տոմսակ պահանջեց՝ նա զարմացած և վիրավորված բացա-կանչեց.

— Մկա սա խայու երկիր չէ՞:

— Հայի երկիր է, հետո ի՞նչ:

— Սա խայու մաշինա չէ՞:

— Հայի մաշինա է, տոմսակ տուր:

— Ի՛նչ կըսես... ծո, մկա դու խայ չե՞ս:

— Է, հայ եմ. զնացք ես նստել, տոմսակ չպիտի՞ ունենաս:

Հայը դառնագին բողբոջեց.

— Ջանրմ, Ռաստով բիլեթ, Բաքու բիլեթ, Թիֆլիս բիլեթ,

մկա խայու երկիրն է՞լ բիլեթ...

Եվ հայն անիծեց իր հավատքը հայի մասին:

Ինչպե՞ս, Գրիգոր Լուսավորչա ցեղից մեկն իրեն այդքան վիրավորի և անգուլթ վերաբերմունք ցույց տա: Էլ ինչո՞ւ համար է Հայաստանը:

Բայց հետաքրքիր է, թե հայ ասելով ի՞նչ է հասկանում հայը:

Ի՞նչ կարծիք ունի հայի մասին:

Գուցե իր երևակայություն մեջ հային ներկայացնում է ամե-նադաժան գծով մի մա՛րդ, համարում է աշխարհիս ամենվատ, ամենազծուծ, ամենաանգուլթ արարա՞ծը, ամենասոսկալի կարծի՞քը հայի մասին:

Ո՛չ. — ամենաքնքուշ կարծիքն ունի հայը հայի մասին:

Եվ դա է, որ նրան ամեն առիթի վիրավորում է մինչև հո-գու խորքը:

Երբ մի հայ տեսնում է, որ դիմացի հայն իր խոսքը չի հաս-կանում՝ իբրև վերջին արգումենտ, գոռում է նրան երեսնիվայր.

— Տո, հայ չե՞ս: Չե՞ս հասկանում:

Եթե Թիֆլիսում կամ այլուր խմբված բազմությունը միլիցիո-ներն ասում է.

— Проходите, проходите!

Հայաստանի միլիցիոները շատ քաղցր և աղաչական դեմքով դառնում է ամբոխին.

— Գնացե՛ք, ձե՛զ մատաղ. մի՛ կանգնեք, ի՞նչ բան ունեք, զնացեք ձեր բանին:

— Ի՛նչ ենք անում որ...

— Հոգի՛ ջան, եղբա՛յր ջան, ես եղբայրաբար ձեզ կխնդրեմ, որ մի կանգնեք. ըստեղ ճամփա յա, փողոց ա, մարդ ա անց կենում:

— Նայում ենք, ի՞նչ ենք անում, ի՞նչ ես քշում, հայ շե՞ս...
Մի քանի օր առաջ տեսարան էր Աբովյան փողոցի ներքևի ծայրին:

Գյուղացին իր շորս-հինգ ոչխարներն առաջն առած, ուզում էր մտնել հենց առաջին վիպասանի փողոցը:

Միլիցիոներն առաջը կտրեց.

— Ո՞ւր:

— Մեր գեղը:

— Լավ գեղ էս էթում՝ ճամփա չկա՞:

— Դե էս է ճամփես՝ գնում եմ:

— Ըստեղ ճամփա չկա:

— Ո՞նց թե չկա:

— Փողոց չկա:

— Սա փողոց չի՞:

— Չէ, ասում եմ, քրիստոնյա ե՞ս, թե չէ:

Գյուղացին նայում է Աբովյան փողոցին և գլուխը օրորում:

— Ինչո՞ւ ես թարսվել, թող գնամ, ուշանում եմ, օրը մթնում ա:

Միլիցիոները սաստիկ հուզվեց.

— Տո, քեզ ասում եմ փողոց չկա, բեխիդ չի մտնում — հայ շե՞ս:

— Վա՛յ ես քո հայ ասողի... է՛ն, է՛ն, է՛ն, է՛ն... — փնթփնթաց գյուղացին և ճամփան ծոցե դեպի Նալբանդյան փողոցը:

Բայց թող ձեզ չզարմացնի և շխարի ուրիշ դեպքերում «հայ» արտահայտությունը հակառակ մտքով:

Օրինակ՝ պատահում է, որ անտոմսակ հայի հայ կոնտրոլորը իջեցնում է գնացքից՝ հայը սաստիկ վիրավորված բողբոլում է և գանգատվում մյուս հայերի մոտ՝ ասելով.

— Իհարկե, անաստվածություն կանի, մարդու տուն կքանդե, հայ չէ՞...

Սա էլ ասում է ամենասաստիկ վիրավորված հայը մյուս հային, մինչև հոգու խորքը վիրավորելու համար:

Թե չէ՛ ամենաքնքուշ բանը հայի համար աշխարհիս երեսին հայն է:

Վաղարշապատցի Վուվունիկ Տեր-Մարությանցը մի նամակ գրեց Երևան իր լավ բարեկամ և հայտնի վաճառական Աղամալ Ղոնդաղսյանցին, թե. — «Չեշուտի խանութ եմ բաց արել Փշու փողոց № 8-ում, բայց վնաս եմ անում: Շատ «խոդի» է ամերիկական շավարները, մի հինգ դուժին որ ղրկես երկու ամիս ժամանակով՝ «աբարոտս կփրկես»:

Նամակը տարավ, գցեց պատից կախած արկղը, ետ դարձավ խանութ և թուքը կուլ տալով՝ աչքը գցեց փոստի ճամփին:

Երկու թե երեք օրից հետո առավոտը վաղ բակում շունը հաչեց:

— Մուկո՛ւչ, փոստն եկավ, գնա նամակը ձեռիցն առ:

Բայց դուրս գնացին՝ որ աղքատն է:

— Ջանը՛մ, դու էլ է՛ս սրտիս փիս ժամանակը... աստված տա, աստված:

Աղքատը հեռանում է:

Օրիորդ Հայաստանն էլ մի նամակ գրեց Երևան պահեստապետ Պարոնիկ Ենգոյանին՝ թե — «Այս կիրակի ճաշից հետո եկեք Ներսիսյան լճի ափը — «այդ մասին կխոսենք»:

Պարոնիկ Ենգոյանը «տանը մնացած» մի քառասուննոց ամուրի էր, որ քսան տարեկան հասակից սաստիկ ուզում էր ամուսնանալ, բայց միշտ մերժվում էր: Միակ դեպքը Հայաստանն էր, որ ինչպես երևում է՝ համաձայն էր հետն ամուսնանալու: Հայաստանը նամակը տվեց փոքր քրոջը, սա էլ տարավ գցեց վերոհիշյալ արկղը:

Սողոմոն հայր սուրբն էլ, որ մորուքը ներկում էր, մոռանալով Երևանում ներկ առնել, գալով էջմիածին՝ սուտ հիվանդացավ և պառկեց: Ճարահատ նամակ գրեց Երևան իր բարեկամ Պրավիդոր Ֆինկելշտեյնին, թե. — «Ներկս հատել է, ես էլ չեմ կարող գալ, խնդրեմ իսկույն մի սրվակ հասցնեք փոստով. ես պառկած եմ»:

Բուլանխցի խասուրը Չավուշյանն էլ մի նամակ գրել տվեց իրենց հարևանուհի պիոներ Մայրիկոյին, Լենինական, համագյուղացի Մագիստրոս Եղիբաշյանցին, թե՛ «շատ նեղն եմ, սրտիդ լմնա, էն Յ մանեթը, որ պարտք ես՝ ղրկե մարդու ձեռքով»:

Մայրիկոն նամակը գրեց ու տարավ գցեց վերոհիշյալ արկղը:

Նամակներ շատ գրվեցին թե՛ այս կարգի և թե՛ անկարգ, և նամակներն աչքերը ճամփին սպասում էին:

Վուվունիկ Տեր-Մարությանը սպասեց մի շաբաթ, երկու շաբաթ: Բայց ապրանքը չէր գալիս:

— Զանըմ, ինչ տեսակ մարդ է: ինչու չի դրկում ապրանքը: Վերցրեց մի նամակ էլ գրեց, թե «Եթե ամերիկյան շալվար չկա՝ վնաս չունի, տեղական գալիֆե դրկիր. շատ խնդրում եմ, պարոն Աղամալ, ինձ ամոթով չանես»:

Օրիորդ Հայաստանն էլ, որ հազիվ էր համաձայնում Պարոնիկ Ենգոյանի հետ ամուսնանալ և թեթև էր նայում խնդրի վրա՝ պատասխան չստացավ: Գա հետաքրքրեց նրան, դիպավ ինքնուրույնությունը բայց ենթարկվեց մի ինչ-որ զգացմունքի, որ վարթնում է, երբ դիմացինդ սառն է: Սիրահարվեց ու գրեց.

«Ընկեր Պարոնիկ, ես համաձայն եմ, խնդրում եմ հետևյալ կիրակի եկեք վերջացնենք...», բազմակետեր ևս շարեց:

Սակայն ոչ մի պատասխան:

Սողոմոն հայր սուրբն էլ մի օր ներկը չգործածելով մորուքը սսիտակ մնաց և այն է, հույս ունեն, որ երրորդ օրը ներկը ստանալով պիտի փրկեր իր մորուքը՝ հանկարծ 20 հոգի հյուրեր եկան այցելության և ինչ տեսան. Սողոմոն հայր սուրբը, որ երեք օր առաջ բոլորովին սև մորուքով «երիտասարդ» հասակավոր էր, արդեն ճեփ-ճերմակել է:

— Հայր սուրբ, հո վատ լուր չեք ստացել, ինչ է պատահել, դժբախտություն...

Էլ բանը բանից անցել էր: Սողոմոն հայր սուրբն արդեն պաշտոնապես ծերացավ: Նա էլ «ժամանակներին» վերագրեց և նկարագրեց իր ծանր վիշտը:

Հյուրերը գլուխները շարժեցին:

— Վիշտն ինչեր չի անի... երեք օրում մարդ սպիտակի...

Բուլանխցի Մազիսարոս Ծշիրաշյանցն էլ կենինականից Երևան գալիս հասնելով էջմիածին կայարան, այնտեղ պատահելով համազուղացի Կոլոտ Պնդուկյանին՝ երեք ուրբի տվեց նրան, թե կտաս խաստուրին:

Բարեխիղճ Կոլոտը բերեց տվեց:

Վուվունիկ Տեր-Մարությանը մի շաբաթ էլ սպասեց, մի եր-

կու օր էլ սպասեց, հա ապրանքը կգա, հա շեշուտը կշատանա Որտեղի՞ց: Պատասխան չկա:

Զանըմ, ինչ խոզ մարդ դուրս եկավ... զայրանում է նա, ու մի երրորդ նամակ է գրում.

«Եթե լավ գալիֆե չկա, թումպաններ դրկիր, սասունցիք շատ են գալիս քաղաք»:

Ոչ մի պատասխան:

— Քո հերն էլ անիծած, — ձեռքը խփեց դախլին Վուվունիկ Տեր-Մարությանցը և մի նամակ էլ հետևից հասցրեց.

«Քեզ պես խոզ ու անաղուհացկեր քրդի շան հետ բարեկամություն անել շարժե...

Մնամ ձեզ բարեկամ Վուվունիկ Տեր-Մարությանց»:

Օրիորդ Հայաստանը սիրուց խենթացած դրություն մեջ էր:

«Եվ ի՞նչ կա այդ վանեցի Պարոնիկի մեջ... չեմ հասկանում: Բայց սիրում եմ նրա հպարտությունը»:

Մի նամակ էլ գրեց.

«Եթե այս կիրակի էլ չգաք՝ ես պատասխանատու չեմ իմ կյանքի համար»:

Մենակ խաստուրն էր, որ գոհ էր իրենից և երեք ուրբու կոշիկ վրձին ու ներկ առնելով՝ սկսեց կոշիկ սրբել ու ապրել:

Բայց ինչո՞ւմն էր բանը, ինչո՞ւ նամակների պատասխանը չէր գալիս: Դրա պատճառը շատ պարզ էր: Նամակները գցելիս են եղել ոչ թե նամակատուփը, այլ Գավգործկոմի բողոքի արկղը, որ չէր բացվում և նամակները երկու տարի գիշերում և ցերեկում էին այն արկղի մեջ:

Երկու տարի մնացել էին արկղի մեջ, և նամակատերերն էլ սպասում էին:

Այս վերջին ժամանակներս պատահամբ բաց են անում արկղը և 2 ֆունտ նամակ հանում... մեծ մասը փչացած, անընթեռնելի:

Բայց դրանց մեջ գտնվեցին ընթերցելիները և ուղարկեցին ըստ պատկանելույն:

Եվ ահա մի բանի օր առաջ Աղամալ Ղոնդաղսազյանը ստացավ Վուվունիկի առաջին և վերջին նամակը, որ գրած էր, թե իրենից ամերիկյան շալվար է ուզում, և որ ինքը խոզ է և անաղուհացկեր քրդի շուն: Շատ ծանր դիպավ սրտին, որ իր սրտակից

բարեկամը և ապրանք է ուզում, և իրեն խոզ է անվանում, ու
ցույց տալու համար, թե խոզը ով է՝ վերցրեց 2 դոժին շալվար ու
գնաց Վաղարշապատ: Փոշու փողոց № 8, հարցրեց և երբ ներս էր
մտնում տեսավ, որ հյուսնը բանում էր մեջը:

— Ո՞ւր է Վուվունիկը:

— Ի՞նչ Վուվունիկ:

— Սա Վուվունիկի խանութը չէ՞:

— Սա կոտպերատիվ խանութ է լինելու: Իսկ Վուվունիկ աս-
ված մարդ չեմ ճանաչում:

Կողքի խանութպանը լսելով այս խոսակցությունը՝ մոտեցավ և
ասաց. որ Վուվունիկը վեց ամիս է, որ մեռել է...

— Վուվունիկը մեռե՞լ է. բա շալվար էր ուզում ինձանից:

— Շալվա՞ր, մեռելի ինչի՞ն է պետք շալվարը:

Աղամալը կորցրեց իրան և զգաց, որ ինչ-որ խելքը սկսում է
վնասվել: Ձեռաց ետ դարձավ, բայց ճանապարհին շատ որ մտա-
ծեց. թե ինչպես կարող է մեռելը նամակ գրել, և շալվար ուզել
իրենից:

— Էս ա՛: Իմ օրն: Էլ էստեղ պիտի մթնե:

Խելագարվեց մարդը: Այսօր նրան տարան համապատասխան
հիմնարկը:

Պարոնիկ Ենգոյանն էլ նամակներն ստանալով այս կիրակի՝
ավտո նստեց և վազեց էջմիածին, լճի ափը: Մի 2 անգամ պտըտ-
վեց շուրջը, մեկ էլ տեսավ, որ օրիորդ Հայաստանը մի երիտա-
սարդի հետ մի 2 տարեկան երեխայի միզեցնում է:

Մոտեցավ.

— Բարև ձեզ, օրիորդ Հայաստան:

Հայաստանը ապշեց, բայց հետո շփոթվեց.

— Բա...րև... ձեզ...

— Կարո՞ղ եմ ձեզ հետ մի բոպե առանձնանալ:

— Չէ, կարիք չկա: Խոսեցեք այդ մասին ամուսնուս հետ,
ես զբաղված եմ իմ երեխայով...

Սողոմոն հայր սուրբն էլ դառել էր ակամա պատկառելի ծե-
րոնի: Ֆինկելշտեյնը ուղարկեց լավ գերմանական ներկ, բայց
օգուտն ինչ: Հայր սուրբը քսեց կոշիկներին...

Իսկ Խաստուրի և Մագսիտրոսի բանն ավելի թունդ եղավ:

Երեկ չէ առաջի օրը Մագիստրոսը ստացավ Խաստուրի նա-
մակը՝ թե երեք ուրլին ուղարկիր:

«Վա՛յ շնչավատ, մկա իրեք մանեթ քանի՞ անգամ տամ»:

Հենց այդ զայրացած բոպեին՝ մեյդանում պատահեց Խաս-
տուրը: Հարձակվեց վրան.

— Տո, լամուկ, հոգի՞ կա մեջը քո փորին, իրեք մանեթս
առար, իրեք մանեթ էլ տա՞մ... Իմանսըզ, ու ա՛ն հա կտաս մի
հատ Խաստուրի գլխին: Խաստուրը շփոթվեց, բայց մինչև թյուրի-
մացության պարզվելը՝ մի քանի հաս էլ ինքը հասցրեց նրա գըլ-
խին, մինչև միլիցիոներն եկավ ու երկուսին տարավ...

Եվ ահա այսպիսի պատմություններ և պատմություններ այս-
պիսի:

Ինչից էլ... Հասարակ պատճառից, նրանից, որ մարդիկ
փոխ նակ իրենց նամակները փոստարկղը գցելու՝ գցել են Վա-
ղարշապատի Գավգործկոմի բողոքի արկղը: Մի արկղ, որի վրա
հսկող լշխատակիցը մի անգամ բաց է արել 1924 թվականին,
Քրիստոսից հետո և մեկ էլ բաց է արել 1926 թվականին դարձյալ
Քրիստոսից հետո... և նամակները կոխանակ այժմ Պետական
թանգարան ուղարկելու՝ ուղարկել են հասցեատերերին:

Այդպիսի բան է բողոքի արկղը: Դա շատ հիմնարկների հա-
մար տխուր անհրաժեշտություն է, քաղաքավարության վնաս: Իսկ
բողոքի թերթիկների համար դա հանգստյան տուն է, մանավանդ
չղային թերթիկների համար: Եթե թերթիկը հայհոյում է, սպառ-
նում է՝ այն ժամանակ բողոքի արկղն ուղղակի ուղղիչ տան խիստ
մեկուսացման բաժինն է: Գնա՛, նստիր ու թթվիր:

Բողոքի արկղը հիմնարկի կամ կայարանի, կամ ճաշարանի
այն խեղճ ծառայողին է նման, որ երբ այդ հիմնարկից, վագոնից
կամ ճաշից դժգոհ ժամանակ աչքդ դարձնում ես նրա կողմը, թե.

— Տեսնում ես, ինչ բաներ են տեղի ունենում ձեր հիմ-
նարկում:

Նա էլ գլուխը ծռած քեզ է նայում և ասում.

— Է՛է՛է՛... «խաղ շատ գիտեմ, ամա ձե՛ն շունեմ», ախր
ո՞ւմ ես ասում, ի՞նչ անեմ ես. դու «նրանց» ասա, և հետո,
ի՞նչ ես կորցրել, ինչի՞՞ ես ման գալիս:

Եվ, իսկապես, ի՞նչ անի հիմնարկի անկյունում կախած խեղճ
բողոքի արկղը, որ նրան եք տանում ձեր բողոքը: Նա ինքը փոշու

մեջ կորած, կեղտոտ, մոռացված մի հին սարայի է նման, ուր անպետք իրեր են ածում: Նրան որ նայում եք, կարծես ասում է ձեզ.

— էհ, քաշալը որ դեղ իմանա՛ իր գլխին կանի:

Երբեմն էլ լավ ներկած են լինում բողոքի արկղները և լավ էլ պահվում են, սրբվում, պլպլացվում. բայց որ վրան ես նայում, ասում է.

— Քանց պուտը կարմիր չկա, բայց որ ճղես՝ սիրտը սև է:

Բողոքի արկղը, գանգատների գիրք — այդ նշանակում է բողոքող արկղ, գանգատավոր գիրք, արկղ, որ ինքն է բողոքում, ինքն էլ է ձեզ հետ միասին գանգատվում: Բայց որ լսող չկա՛:

Բողոքի արկղը նման է մի տան ազգականի, բայց աղքատ վառինկա ձալոյի, որ երբ մեկ-մեկ այցելության է գալիս՝ սկսում է գանգատվել, որ իրան չեն օգնում, չեն հարգում, իրան մոռացել են:

Տանեցիք էլ մոռալ ու անախորժած՝ լսում են, լսում ու վերջը հին շորից-մորից մի բան կամ մի քանի արասի ձեռն են տալիս և ճամփում:

Բողոքի արկղը շատ հիմնարկի համար կույր աղիք է, ավել-լորդ մաս, որ երբ շատ գրգռվում կամ բորբոքվում է, կտրում են և դեն գցում:

1926 թ.

ԲԱՂՆԻՔԸ, ԿԵՆՑԱՂԻ ՈՃԸ ԵՎ... ԼՈՎԱՐՆՈՅԻ ՈԳԻՆ

Եթե եկեղեցին պետք է նկատել իրրև հոգևոր բաղնիս, ապա սրեմն բաղնիսը մարմնավոր եկեղեցի է: Եվ զուր չէ, որ այդ երկուսն իրար կողքի էլ շինված են Երևանում: Մտածեցի, որ այսօր քան տարի հոգևոր ապաշխարությամբ ենք զբաղվել, գնանք մի փոքր էլ մարմնավոր ապաշխարություն տանք ձեզ:

Գնացի:

Փակագծի մեջ տեսե՛մ, որ ես պաշար տեսնող մարդ եմ: Գոնե

Երևանում: Փոստ գնալիս հետս մարկա և գրիչ եմ վերցնում: Ուրիշ հիմնարկ այցելելիս՝ թուղթը միշտ հետս է, որովհետև գիտեմ, ինչ էլ ասեմ՝ թղթասեր վարիչը պիտի խոսքս կտրի — «Գիմում գրեցե՛ք»: Եվ որովհետև օրնիբուն դիմում ենք կամ բողոքում, բացատրում ենք կամ հայտնում, և ամեն ինչ վերածում ենք «թղթի», ուստի միշտ միտս է առածը, թե՛ «Մատիտը մատիտ, թուղթ ու գիմումը ձեռիդ, հիմնարկ որ գնաս, միշտ լինի մոտիդ»:

Բայց այսպես նախատեսող մարդ լինելով, ինչպես եղավ, որ բաղնիս գնալիս հետս տաք ու սառը ջուր շվերցրի՝ այդ շեմ ներում ինձ: Իհարկե, մարդ պիտի փորձանք ընկնի, որ փորձվի:

Մտանք ներս լողանալու կավ, հանգիստ, ամեն ինչ խաղաղ: Գործը շատ հաջող էր առաջ գնում: Իսկական Լոկարնույի համաձայնություն: Զրույց էինք անում լողակիցներիս հետ: Ետեկեցիք Մուսուլինի մասին, Չեմբերլենի խելքի մասին: Հետո անցանք օդերեվութթարանական խնդիրներին: Ու այսպես միամիտ, անհոգ մեր գործին էինք, հանկարծ իրարանցում: Բոլորը վեր թռան և սկսեցին արագ-արագ լողանալ, վազվզել դեսուղեն:

— Բանն ի՞նչ է...

— Տնաքանդ, էլ կհարցնե՞ն: — Զուրը կտրվում է:

— Ինչպե՞ս, — շփոթվեցի ես, — ամբողջ ժողովուրդը սապոնի մեջ կորած — հանկարծ ջուրը կտրվի:

— Բաղնիս է, ապա ինչ գիտես:

— Իսկապես: Նոր հասկացա, որ ինչ որ պարզ չէ կյանքում՝ պարզ է բաղնիսում: Եվ բաղնիսումն ես սովորում այն կենսական իմաստությունը, թե բաղնիսները երբեմն ամենաչոր վայրերն են լինում աշխարհիս երեսին:

Դիմեցի քիսաչուն:

— Զուրը ե՞րբ կգա:

— Երբ որ գա, է՛նա կգա:

— Բայց ե՞րբ կգա:

— Աստված գիտե:

— Ինչպես թե աստված գիտե:

— Ապա ո՞վ գիտե: Ես աստված եմ:

— Հիմա ինչ պիտի անեմ, որ ջուր չգա:

— Ես ի՞նչ գիտեմ:

— Ո՞նց թե:

— Ինչպես թե ոնց: Ես ջուր դառնամ:

Իսկապես որ: Մարդն աստված է՞ր, ջուր կարող է՞ր դառնալ: Այստեղ ես հասկացա, որ շատ բաներ բարդ են բաղնիսում, որ պարզ են փողոցում:

Ես սկսեցի խելք բանեցնել. ուստի և սկսեցի արագ-արագ տաք ջուր հավաքել լազանի մեջ: Երբ լիքը հավաքեցի, տեսա որ ավելորդ գործ էր, որովհետև կտրվողը սառը ջուրն էր: Բարկացած թափեցի տաք ջուրն ու սկսեցի հուսահատ անց ու դարձ անել: Քիսաշին թե՛

— Կնիկմարդ եղիր, ինչ ես վախում: Տես կնիկմարդիկ ինչպես են իրենց պահում մյուս բաժնում:

— Ախր չեմ կարողանում:

— Ապա... կնիկմարդությունը էսպես տեղը կերևա, է՞: Ասում է «կեցութունը որոշում է մտածողությունը»: Ճիշտ է, կեցութունը որոշում է նաև ոճը: Այո, քիսաշին նոր ոճ էր ստեղծում:

Մի քիչ անց հանկարծ գոռացին:

— Լողացեք, սառը ջուրը եկավ:

Ես վրա ընկա սառը ջրին ու սկսեցի պաշար հավաքել: Ով է իմանում... բավական հավաքել էի ու սապոնի մեջ կորած ուզում էի լողանալ՝ հանկարծ տաք ջուրը կտրվեց:

Այստեղ ես վերջնականապես կորցրի ոտքիս տակի ջուրը, ստեղծվեց մի անտանելի սապոն, և ես հնար չէի գտնում այս սապոնից դուրս գալու: Սկսեցի ինքս իմ վրա բարկանալ: Ախր ինչ բան ունեի անսապոն գլուխս դնելու ծորակի տակ: Սավանով սրբվելով դուրս եկա, հագնվեցի: Հետո գնացի կառավարչի մոտ և ասացի:

— Սիրելիս, ինչո՞ւ բաղնիսի մեջ մի օրացույց չեք կախում, որ իմանանք, թե որ օրն է կտրվում տաք ջուրը կամ գալիս սառը ջուրը:

— Ես էլ եմ մտածել, — ասաց նա, — բայց օրացույցը կարող է թրջվել:

— Դատարկ բան: Ինչու պիտի թրջվի: Ձեր բաղնիսում կարելի է լվացք չորացնել: Այս բաղնիս չէ, այլ երաշտ տարի: Պետք է կամ օրացույց կախեք կամ թափոր կատարել տաք: Կանալիզացիայի խնդիր դրեք: Սահարա անապատներ պահելով փոր կկշտանա: Մառայութուն: Մնաք բարով:

Արդեն դուրս էի գալիս փողոց և շուտ էի գալիս նրբափողոցը, որ քիսաշին շապկանց հետևիցս հասավ:

— Արի քիսա քսեմ, ջուրը եկավ:

— Հարկավոր չէ, — ասի, — լավ է երբեք, քան ուշ:

Բարկացած գնացի բանկոտպի սրճարանը: Աշխատակիցը մոտեցավ:

— Ի՞նչ բերեմ:

— Մի սուրճ և երկու նապուլեոն:

Բերեց, խմեցի սուրճը. կերա նապուլեոնը և սկսեցի մտածել աշխարհքիս իմաստություն վրա:

Այո, աշխարհքս բաղնիս է, որտեղ չգիտես, թե երբ է կտրվելու տաք ջուրը և երբ է գալու սառը: Այն էլ չես իմանա, թե որ ջրից պաշար վերցնես — տաքից թե սառից: Եվ այն էլ չես իմանում, թե կարող ես երկուսից էլ վերցնել — որովհետև չգիտես, թե քանի լազան կընկնի ձեռդ — մի, թե երկու:

Շատ բարդ բան է բաղնիսը. թեև նրա մեջ ամեն բան պարզ է կարծվում: Եվ շատ քաղաքագետներ, ինչպես Չեմբերլենը, Բրիանը, Մուսոլինին, նստած Լոկարնոյի մեջ կամ ժնկում, պատրաստում են տաք ջուր, երբ սառը կտրվելու է, կամ սառն են պատրաստում, երբ տաքը չկա:

Եվ շատ հեշտ են կարծում աշխարհքիս բաներն ու չգիտեն, թե երբ է գալու «գողը»:

Նրանք շատ լավ քաղաքագետ կլինեն, եթե նման բաղնիսներ գնալին և եթե մի անգամ քիսաշիական ձեռքի տակից անց կենային՝ ավելի իմաստուն դուրս կգային այնտեղից, քան Լոկարնոյից:

1926 թ.

ՀԱՄԱՌՈՏ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երբ մեր Երևանում կամ հենց Լենինականում, կամ ինչո՞ւ մենակ Երևանում և Լենինականում, — Ստեփանավանում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում կամ հենց հեռու ինչի՞ գմանք, նոր Բայազետում և վերջապես ամբողջ Հայաստանում, — անց ես կենում

մի որեէ թերութեան կողքով, ասենք՝ մարդ են սպանել, տուն են քանդել, կամ տեսնում ես՝ օրինակ՝ Կոմունալ տնտեսութեան տանն ապրող սովետական ծառայողի կնիկը տախտակե հատակի վրա կացնով փայտ է շարդում և միաժամանակ նույն տեղը, ուղղակի տախտակի վրա կրակ է արել և ջուր է տաքացնում, — երբ բակից անցնող այդ տան կենողներից մեկին կանգնեցնելով ցույց ես տալիս այդ երևույթը՝ թե այս ի՞նչ բան է, ինչի՞ է Կոմունալ տնտեսութեան տունը շարդում ու վառում, — ուրիշ կենողն ուսերն է թոթվում և ասում է.

— Ինձ ի՞նչ:

Հետո անցնում ես մի ուրիշ Կոմունալ տնտեսութեան տան առջևով, մտիկ ես տալիս տան բակին և նկատում, որ ահա մի ուրիշ սովետական ծառայողի կնիկ, մի իսկական տոհմական Հայկանուշ կացիոնն առել պատշգամբի ճաղերն է շարդում... սամովար օգեցելու համար:

Գնում ես բակը, մոտենում վերոհիշյալ Հայկանուշ տիկնոջը և հարցնում թե, տիկին, այս ի՞նչ բան է, ինչի՞ ես ճաղերը շարդում:

Նա ծուռ մտիկ է տալիս քեզ և զարմացած ու զայրացած ասում է.

— Քե՞զ ինչ:

Անցնում ես մի տան առջևով և տեսնում, որ լվացքի ջուրը՝ բարեհաճ մասնակցութեամբ բակի աղբի և «այլ մարդկային թերությունների», բակից դուրս է եկել և էքսկուրսիա է գնում Երևանի մյուս փողոցները:

Մոտենում ես տան դռան առջև կանգնած մի կենողի և ասում.

— Բարեկամս, այս ի՞նչ բան է, այս տեղովը հիվանդություն է, զայրանում ես և որպեսզի նպատակիդ հասնես՝ մտնում ես բակն իմանալու, թե ո՞վ է արել այդ:

Եվ տեսնում ես, որ աղբի և «այլ մարդկային թերությունների» հետքը բակով, սանդուղով և պատշգամբով գնում, ուղղակի կանգ է առնում մի սենյակի, այնտեղից էլ մի կոնկրետ անձնավորութեան առջև:

Դուրը ծեծում ես, դուրս ես կանչում այդ աղբի հիմնարկին,

այդ աղբի մեքենայի, այդ աղբի համապատասխան մարմինն և ուղղակի նկատում ես.

— Բարեկամ, այս ի՞նչ բան է, այս ի՞նչ աղբային զեղմունք է...

Աղբի մեքենան, այդ աղբի հիմնարկը, համապատասխան մարմինը տալիս է համապատասխան մի պատասխան.

— Քեզ ի՞նչ...

Ինչ կարող ես անել: Հայկական սովորութեան մի կողքս է այս:

Մարդը երգում է, շվացնում հարևան սենյակում մինչև կեսգիշեր, մինչև լույս բորբոռում, ճշում, հրհում, թմբկահարում, քեզ քնից զրկում:

Երբ նկատում ես՝ ասում է.

— Քեզ ի՞նչ:

Մյուսի աչքի առջև ծեծում են մեկին, արյունլվիկ անում. մտնում ես, նկատում մոտը կանգնածին:

Ասում է, ի՞նձ ինչ:

Այս իհարկե, «կյանքում»:

Հիմնարկներում և մամուլում ուրիշ տեսակ է:

Այստեղ շեն ասում «քեզ ինչ — ինձ ինչ»:

Երբ՝ օրինակ գյուղթղթակից Դժոխքը գրում է թե՛ «Քյոսահասան գյուղի ՓՈԿ-ի նախագահը թույլ է», Քյոսահասան գյուղի ՓՈԿ-ի նախագահը ձեռաց մի թղթակցութուն է ուղարկում լրագրին, թե «գյուղթղթակից Դժոխքի գրածը միանգամայն անտեղի էր. նա ձեռնհաս չէ այդ խնդիրը լուսաբանելու»:

Այսինքն՝ «քե՞զ ինչ»:

Իսկ երբ բանթղթակից Անգութը գրում է, թե՛ «Համար 2 գրնացքի մեքենավարը հարբել էր, տեղկոմի ուշադրությունն եմ հրավիրում», տեղկոմը հերքում է այսպես. — «Բանթղթակից Անգութն անբարեխիղճ է լուսաբանում փաստերը. մեքենավարը ոչ թե երկրորդ, այլ հրրորդ գնացքինն էր»:

Այսինքն՝ «ի՞նձ ինչ»:

Այսպես են բաները մեր օրհնյալ Հայաստանում:

Երբ անհատին շրջապատող կոլեկտիվին ես դիմում, — ասում է՝ «ինձ ինչ», իսկ երբ «ես» կոլեկտիվին պատկանող անհատին ես դիմում՝ ասում է. — «քե՞զ ինչ»:

Եվ մեր օրհնյալ Հայաստանում բոլոր թերութիւնները բաժանված են 2 կարգի. մեկը՝ ինձինչական, մյուսը՝ քեզինչական:

Ոչ ոք ոչ ոքի գործին չի խառնվում:

Լվացքի ջուրը գլխիս թափեցին՝ քե՛զ ինչ. քո գլխին թափեցին՝ ի՞նձ ինչ:

Եվ մի քիչ ապրելով, սովորում ես այս օրհնյալ ձևին:

Երբ տեսնում ես, որ մի Քյոսահասան գյուղի կոոպերատիվում բարձրակրունկ տուֆլիներ են ծախում, բայց սապոն չկա, աղ չկա, կամ երբ շեֆընկերութիւնը միկնուլն գյուղում խոսում է համաշխարհային կոնյուկտուրայի մասին, երբ գյուղը մի փայտե կամուրջ շունի,— պիտի նայես թերութեան ցուցակին. քեզինչական է, թե ինձինչական, որպեսզի հանգիստդ ապահովես: Եվ որովհետև կամ այս է լինում կամ այն, գործդ հեշտանում է. քեզինչական է՝ դարձաբու ինձինչական, ինձինչական է — քեզինչական դարձաբու, պըր-ծա՛վ գնաց:

Շնորհիվ այս սիստեմի՝ հանգիստ, խաղաղ ապրում ենք աղբերի, էշերի, լվացքաջրերի, շների, փոշու հետ և ոչ մի նեղութիւն չենք քաշում:

Նրանք իրենց համար, մենք մեզ համար:

1926 թ.

«ՃԱՌԸՆՏԻՐ» ԸՆԹՐՔԻՑ

Ես ամեն բան հասկանում եմ, մենակ մի բան չեմ հասկանում. թե արդյոք ինչ է հասկանում մի ճաթղոսնցի, մոլլաշուրտնցի, ալիքուչակցի, դուրդողուլեցի կամ ղոնաղոսնցի բատրակ, երբ նստած է ժողովում կամ համագումարում, և ճառախոսը նայելով ուղիղ նրա աչքերի մեջ՝ ճառում է այսպես.

— Նվաճողական կապիտալի առաջխաղացման և նրա իմպերիալիստական ախորժակներին մենք կհակադրենք մեր տնտեսական վերելքը՝ էլեկտրիֆիկացիայի, կոոպերացման, տնտեսութեան ինտենսիֆիկացիայի միջոցով և կապիտալիզմի վարձկանների կամ

բոլոր հիվանդագին թեքումների հանդեպ մենք կյանքի կկոչենք մեր հետևողական մարքսիստական իդեոլոգիան:

Կամ տեսնես ինչ է զգում մի քյափանակցի կամ ջաջուռցի բատրակ, երբ մի ուրիշ ճառախոս իր ճառը սարսափելի արագ ավտոմոբիլի պես քշում է՝ ասենք Երևանից Բասարգեշար և այնպես է թռչում, որ չի հարցնում, թե ճամփին մարդ է, ոչխար է, սայլ է թե ինչ, ու երբ հասնում է Բասարգեշար ու բաղնիսի պես քրտնած դուրս է գալիս իր ճառի ավտոմոբիլից ու իրան հարցնում են, թե.

— Ընկեր, մեր Մկրտչին պատահեցի՞ր Ելենովկայում՝ զարմանում է:

— Ի՞նչ Ելենովկա:

— Նոր Բայազետի ճամփին:

— Ի՞նչ Նոր Բայազետ:

— Սեանա լճի ափին:

— Ի՞նչ Սեանա լիճ...

Զարմացական նշաններ...

Կամ մի ուրիշ ճառախոս:

Կարծես Օղանավային բարեկամների ընկերութիւն լինի:

Այնպես նստած իր բառերի աերոպլանում սավառնում է ամպերի ոլորտը, որ հագիվ է երևում:

Կա մի չորրորդ տեսակն էլ, որ առաջ ճառում է՝ հետո մտածում, թե ինչ պիտի ասի: Ու սկսում է.

— Ը...ը...ը...

— Ըն զատը...

— Իքը...

— Բանը...

Եվ իհարկե, ճառը դառնում է հաբանութիւն, ընդատարանութիւն, իբաբանութիւն, բանաբանութիւն:

Հիմա ասում եմ, աչքի ծայրով բաց անես գյուղացի մարդու ուղեղի ծալքը և ծածուկ մտիկ տաս, թե ինչ է կատարվում այնտեղ:

Մտտ ժամանակներս Ապարանում ներկա եղա մի ժողովի և ճառի ժամին մտիկ էի տալիս գյուղացի պատգամավորներին:

Ըստ երևութիւն ողջ առողջ էին:

Մուշտակների մեջ փաթաթված համբերությամբ «սպասում էին» մարդիկ...

Այսինքն՝ կարկուտ է՝ համբերի՛ր՝ ուր է, ուր չէ կկտրի, կգնանք մեր ճամփան:

Այո, գյուղացին մի լավ ինքնապաշտպանության միջոց ունի:

Զի լսում — պրծավ գնաց:

Ինչքան ուզում ես գլխին օտարազգի կամ Հայկազյան բառաբան կարգա: Բնությունը նրան մի լավ բան է սովորեցրել — քնում է:

Երբ բառերիդ ավտոմոբիլով խճուղին ձևելով քշում ես գյուղացու ուշաքի հոտի դեմ՝ նա հոտը բաժանում է երկու մասի ու ճամփա է տալիս քեզ. Բարով — աստծու բարին: Դու քո ճամփան, ես իմը:

Իսկ երբ մտքերդ տանը թողած, լեզուդ բերում ես ժողով և սկսում ես բառաքաղը, երբ ուրիշները բառաարտը քաղել են՝ այն ժամանակ գյուղացին իր ձմեռվա պաշարը մարագն ու ամբարն արած՝ նայում է քեզ ու մի հատիկ սերմ էլ չի տալիս:

Սէլ, վերջապես, ի՞նչ հարկ կա գյուղացիներին անհասկանալի ճառ ասելու համար՝ բանից գործից պցել նրան:

Ուզո՞ւմ ես գյուղացուն ասել «շարքով ցանի՛ր»։ դրա համար մի հիանալի միջոց ասեմ: Գնա տանը լավ պատրաստվիր, ժոցատետրումդ գրիր ու երբ դուրս կգաս խոսելու՝ ասա.

— Շարքով ցանի՛ր:

Պրծավ գնաց:

Ասա. տրակտոր բերել տանք:

էլ ուսցիտնալ տնտեսությունս որն է կամ գյուղացու ինչի՞ն է պետք ինտենսիֆիկացիան: Ախր երբ մի հակառուտություններ ականջից բռնած տանես գյուղամեջ և ցույց տալով գյուղացիներին ասես՝ «Սա կապիտալիզմի վարձկան» է, կամ մի կուլակի համար, թե «Սա նոր աճող գյուղական կապիտալիզմն է» և կամ միջակ գյուղացու համար ասես, թե «Սա գյուղացիական տնտեսության կենտրոնական դեմքն է»՝ գյուղացին զարմացած մտիկ կտա սրանց ու կասի.

— Իմ գիտենալով էս մեկը խմբապետ Որոտն է, էս մեկը

մեր զոռբա Գիրքորն է, էն մյուսն էլ մեր մաճկալ Սաքոն է, բայց որ սրանք էդ քո ասածներն ըլին — էդ առաջին անգամ եմ իմանում:

1926 թ.

ԷՊԻԳԵՄԻԱ

Եթե նրան տեսնեք մի որևէ գավառական լուսբաժնի շենքի առաջ կամ Թիֆլիսի Հայարտան նախասենյակում ետ ու առաջ շրջելիս՝ այդ ամենաստույգ նշանն է, որ Երևանից լուսծողկոմ է եկել այնտեղ:

Իսկ եթե Երևանում նրան հանդիպեք Լուսծողկոմատի մուտքի մոտ սպասելիս, ապա պարզ է, որ լուսծողկոմը դեռ չի եկել իր պաշտոնատեղին, այլապես նա լուսծողկոմի ընդունարանում կլիներ:

Նրան կարելի է հաճախ հանդիպել նաև Հայծողկոմատի շուրջը, և այդ ամենաանվրեպ նշանն է, որ լուսծողկոմը բողաքից բացակա է:

Մյուս ժողկոմատներն էլ իհարկե իրենց հերթին մի որոշ հերթապահություն ունեն նրանից... ընդունվելու:

Բայց ուր էլ որ գնա պատահաբար, համենայն դեպս օրական մի անգամ աչք է ածում Կենտրոնականի նախագահության կողմը, այն հույսով, թե կարող կլինի մի տեսակցություն հաջողացնել նախագահի հետ՝ հարթելու համար իր բազմաթիվ անհարթ առաջադրություններից մեկը, որը ահա, 5 տարի է, առաջարկում է բոլոր ժողկոմներին, նրանց տեղակալներին, սրանց ֆինբաժինների վարիչներին, սրանց ենթաբաժինների վարիչներին: Բոլոր ժողկոմները և նրանց նվիրապետական կարգը մինչև մատենավորը ճանաչում են նրա քայլերի յուրահատուկ ձայնը նախասենյակում:

Բայց ի՞նչ է նա՝ նկարի՞չ, գրո՞ղ, դրամատուրգ, երաժիշտ, գերասան, գյուղատնտես, պատմաբան, ուսուցիչ, ի՞նչ է նրա մասնագիտությունը, գործը, վերջապես:

Այդ շատ դժվար է ասել:
Այդ մի տեսակ... զբաղմունք է կուսժողովմատի շուրջը, նրա
բնագավառում:

Երբեմն գրում է: Բայց ոմանք գիտեն, որ նկարում է:
Հողժողովմատում կոլեկցիոներ է բույսերի, Պետհրատում,
օրինակ... Թանաք շինող է: Երբեմն կոոպերատոր է, իսկ միշտ...
վաստակավոր ինտելիգենտ, որ իր ձևակերպությամբ կլինի «Կուլ-
տուրական ֆրոնտում աշխատել է 38 տարի»:

Գրողների շրջանում նա միշտ այսպես է սկսում իր խոսքը.
— Մենք, գրողներս: Մեզ, գրողներս: Մեր, գրողների: Մեզ-
նից, գրողներին:

Նույնը նկարիչների շրջանում.

— Կառավարությունը պարտավոր է մեզ, նկարիչներին...

Բայց ինչ են նրա «կոնկրետ» առաջարկները»:

Գրանք մի շարք առաջադրություններ են, որ 1921 թվից
մինչև օրս դեռ որոշ ձևակերպության չեն հանգում. այն է Պետ-
հրատի միջոցով տպագրել իր ձեռնարկները մեղվապահության
մասին: Մի ձեռնարկը բանաստեղծության արվեստի մասին: Մի
տեսրակ... արդեն բանաստեղծություն: Մի գյուղտ նոր քարետախ-
տակների մասին Եղվարդի շուրջը նրա գտած քարերից: Յոթը կտոր
մեծ վեպ շերամապահների կյանքից: Տասը ոտմանս: Մի օպերետ:
Եվ ուրիշ շատ գործեր, որ տեղի սղության պատճառով
առայժմ մեջ չենք բերում այստեղ:

Զգիտենք, ինչ են պատասխանում նրան կուսժողովմատում
այս ամեն առաջադրությունների մասին, բայց որ նա հանապազ
կուսժողովմատի ջենքումն է, նրա մեջն ու շուրջը, նրա պերիֆե-
րիայում, նրա բնագավառում առհասարակ— այդ պարզ ցույց է
տալիս, թե ինչ աստիճանի պաշարված է հիմնարկությունը նրա-
նով:

Նա անխուսափելի է, ինչպես ավտոմոբիլ:

Նա մարդ չէ, այլ էպիդեմիա: Եվ տարածվում է էպիդեմիկ
արագությամբ: Եվ ինչպես ամեն էպիդեմիայի դեմ, այնպես էլ նրա
դեմ՝ միմիայն մի ուղիկով միջոց կա — սպասել, մինչև որ անցնի
հետզհետե:

Նրան ենթակա են բոլոր ժողովմատները, բայց ամենից շատ
կուսժողովմատը, որի համար սպեցիֆիկ հիվանդություն է:

Նրա գործերն անվերջ են, ծրագիրներն անսպառ:

Պլանային:

Մերժվում է մեկը, առաջարկվում է մյուսը:

Նրա բոլոր ձեռնարկները հաճախ և երբեմն էլ միշտ մերժ-
վել են:

Հողժողովմատում նա առաջարկեց հիմնել մի կոոպերատիվ
գյուղ, որի անդամները պետք է լինեն բացառապես բանաստեղծ-
ներ, երաժիշտներ, դերասաններ, նկարիչներ և ժուռնալիստներ:
Նա միայն խնդրեց, որ իրեն տան երկու տրակտոր և 100 հազար
ուրբլի դրամ:

Ասացին՝ կմտածենք այդ մասին:

Բայց ինչով է ապրում նա: Որտեղից է ձեռք բերում իր բազ-
մազբաղ կյանքի միջոցները:

Կուսժողովմատի շուրջը: Երբեմն էլ մյուս հիմնարկությունների
բնագավառում:

Իսկ երբեմն հաջողության աստղը դավաճանում է Երևանում,
այն ժամանակ նա գնում է ավելի խորքերը — Թիֆլիս, ուր տեսակ-
ցում է ամենապատասխանատու տեղերի հետ և այդպիսով շարու-
նակում է իր էպիդեմիկ կյանքը:

Անկասկած է, որ կուսժողովմատում և այլուր նրան մի քանի
անգամ թեթև ակնարկած կլինեն, որ նա զբաղվի՝ առաջին՝ մի որևէ
գործով և երկրորդ՝ այնպիսի մի գործով, որ հասկացվում է իբրև
մի պարզ պարտականություն, այսինքն՝ օրինակ՝ թերթերի և այլ
հրատարակությանց պահեստապետություն, մատենավարություն
և առհասարակ մի այնպիսի գործով, որ իր մեջ գործի բոլոր հան-
գամանքներն ունի:

Բայց նա անց է կենում այդ առաջարկության կողքով:

Այդ իր կյանքում հարևանցի անախորժություն է:

Մի անգամ նրան պատահեցի քաղաքային բուլվարում, ուր
շրջապատված մի քանի ունկնդիրներով, ինչ-որ բան էր բացատ-
րում:

Սովետական կարգերը:

Մի քիչ էլ լենինիզմ:

Հըմ «հեղափոխություն, հեղափոխություն» — ա՛յս է հեղա-
փոխությունը:

— Ի՞նչ կա որ:

— Ջանըս, ինչ հեղափոխություն: Հեղափոխությունն էն կլի-
ներ, որ ամենքս էլ ավտոմոբիլ նստեինք և մեր ուզած տեղը եր-
թայինք. Թիֆլիս, Մոսկվա, Ռուսաստան, օրը տասն անգամ Երե-
վանից գավառ, գավառից Երևան գնայինք, գայինք:

— Ի՞նչ գործ ունենք ամենքս ամեն օր Թիֆլիս, Մոսկվա,
գավառ գնալու գալու:

— Ջանըմ, ի՞նչ... ես եմ ու ուզում եմ ամեն օր քեֆիս հա-
մար ավտոմոբիլ նստել: Հապա ի՞նչ. հիմի բալշևիկություն է, ջո-
կել չի կարելի, ամենքս հավասար ենք: Եվ եթե հեղափոխություն
է՝ պարտավոր են ամենքիս հարցնելու, թե ինչպե՞ս եք ուզում որ
լինի:

— Ի՞նչ հարցնեն:

— Ի՞նչ: Հազար բան կա: Շենքերի մասին, կենսաթոշակի
մասին: Լենինն ասել է՝ ամեն մարդ որ 45 տարին անցավ՝ պիտի
կենսաթոշակ ստանա, տուն-տեղ, տնտեսություն պիտի ստանա:
Լենինը հավասար է խոսել — (էդ խաբարները դու ինձնից իմացիր,
ապա ինչ): Լենինն ասել է. հարուստ, աղքատ ջոկել չի կարելի,
ամենքն էլ հեղափոխական են: Լենինն ասել է. ինչ մարդ ինչ որ
գրեց՝ պետք է տպել: Ինչու «սրանք» չեն տպում: Լենինն ինքն իր
ձեռքով իր գրքերի մեջ գրել է (ես ինքս կարդացել եմ), որ ամեն
մարդ ինչ գյուտ անի՝ ամեն գյուտի համար վարձատրություն
ստանա, և ինչ գյուտ էլ որ լինի, ասել է «ձեր գործը չէ, դուք պար-
տավոր եք լույս աշխարհ հանելու, քանի որ ազատություն է հիմի»:

— Այդ ո՞ր գրքի մեջն է այդպես գրված:

— Ո՞ր գրքի մեջ: Իհարկե «սրանք» այստեղ թաքցնում են,
որ ժողովուրդը չկարդա, քանի որ այդ իրենց դեմ է: Չեն ուզում,
որ գիտությունն առաջ գնա, ու ժողովուրդի աչքը բացվի: Իրենք էլ
գրաբար են խոսում, ռեսպուբլիկա են ասում, որ ժողովուրդը չհաս-
կանա: Հասարակապետություն ասա, ռեսպուբլիկան որն է: Է՞հ
«սրանք» լենինի՞ցմ են հասկանում, որ...

— Դուք ինչպե՞ս եք հասկանում լենինի՞ցմը:

— Ծա իմ խելքով եմ հասկանում լենինի՞ցմը:

— Այսինքն ինչպե՞ս:

— Ինչ որ ըսե լենինի՞ցմը, Լենինը հաստատել է ինձպեսների

համար:

— Ուրեմն լավ բան է արել ձեզ համար:

— Ջանըմ, Լենինն էլ իրա օգուտը շահագործեց: Տեսավ, որ
բուրժուաները թույլ են՝ խփեց, իշխանությունն առավ ձեռներից:
Բայց ի՞նչ օգուտ: Եվրոպա ո՞ր պառլամենտը, ո՞ր մինիստրու-
թյունն ուզում ես գնա՝ Լենին չեն ընդունում:

— Ուրեմն գործը փշացրեց:

— Ինչ որ խե:

Նուսավուկ աչքերը պցում է հեռուն: Եվ բուլվարի աուդիտո-
րիան կիսաժպիտ նայում է նրան:

— Նոր գյուտ արե՞լ եք:

— Մի արմատ եմ գտել, որի ջուրը եթե խմես՝ 25 տարով
կերիտասարդանաս:

Ի՞նչ արմատ է:

— ...Աչքերիդ լույսը կավելանա, եռանդ կգա վրադ և...

— Ի՞նչ արմատ է:

— Ինչ-որ խե, շատ ազդու բան է: Պետք է տանեմ Աստղ-
կոմատ: Բայց օգո՞ւտն ինչ:

— Ինչո՞ւ:

— Հայկական նախանձը կթողնի՞, որ իմ գյուտին պատիվ
անեն, լույս գցեն:

— Այնտե՞ղ էլ արգելքներ կան:

— Ջանըս, սուս կ:սցեք. հայն ի՞նչ հեղափոխական է:

1926 թ.

ԱՂԲԸ ԵՎ ԻՐ ՀԵՂԻՆԱԿԸ

Երևանի քաղաքացիներից շատերն ուշադրություն են գարձ-
րել, որ քաղաքի աղբը դուրս է կրվում ավտոմոբիլով, իսկ մարդ-
կանց հիվանդանոց են տանում կալյասկով:

Եվ վրդովվում են:

Չգիտեմ՝ ինչու:

Մինչդեռ, աղբը որ ավտոմոբիլով են տանում, իսկ մարդուն
կալյասկով — դրա մեջ մեծ խորհո՞րդ կա:

խորհրդածենք մի փոքր:
Ինչ է աղբը:— Մարդկային մի ստեղծագործութուն:
Ինչ է մարդը:— Աղբի հեղինակ:
Ուրեմն ո՞վ է մեղավոր, որ աղբը գոյութուն ունի:
Իհարկե մարդը:
Դե, ուրեմն, թող պատժվի այդ մարդը: Թող նա կալյասկա
նստի, իսկ աղբը՝ ավտոմոբիլ:
Բայց ես ձեզ ուրիշ բան կասեմ:
Թողեք աղբը նստի ավտոմոբիլ:
Թողեք գրավիչ դառնա նրա համար քաղաքից դուրս գնալը:
Թողեք պահանջ դառնա ավտոմոբիլով հեռանալը քաղաքից:
Թող շմնա մեր բակերում, թող դուրս գա քաղաքից, գնա, հե-
ռանա մեզանից:
Եթե այդ լավ կլինի նրա համար, մեզ համար ավելի լավ:
Իսկ մյուս կողմից՝ թողեք, որ քաղաքացին անախորժությամբ
մտածի հիվանդանոց գնալու մասին:
Թող նրա համար հիվանդանոց գնալը դառնա անհրապույր,
անհարմար:
Դժվա՛ր:
Անպատվաբե՛ր իսկ:
Թող նա վախենա այդ կալյասկից:
Եվ այդ սարսափելի կալյասկից հեռու լինելու համար՝ թող
մտածի առողջության մասին:
Թող քիչ տրաքվի, քիչ խմի, քիչ ծխի:
Թող քիչ անցկացնի անքուն գիշերներ քեֆի, շոայլության, շե-
վայտության և անառակության մեջ:
Թող բաղնիք գնա ամեն շաբաթ:
Թող շուտ պառկի քնելու և շուտ վեր կենա:
Մարմնամարդությամբ թող պարապի:
Քիչ զբաղվի թող դատարկախոսությամբ: Թող աշխատի:
Եվ հետո, վերջապես, թող քիչ կեղտոտի փողոցը, բակը,
տունը, սենյակը, հագուստը, մարմինը, մարմնի մեջը... Քիչ հա-
վաքի աղբ, կամ հավաքելուց հետո թող մտածի մաքրության մա-
սին, աղբը քաղաքից դուրս տանելու մասին:
Այո, այո, այո, ոչ թի ավտոմոբիլներ, ոչ թե անրոպլաններ,
այլ ոսկի սինիներ, ադամանդակուռն մատուցարաններ շինենք

աղբի համար, փերուզե սափորներ, մարդարտե կառքեր ընդելու-
զենք, հրեղեն ձիեր լծենք աղբի համար, հրածեշտի խանդավառ
հանդեսներ տանք, փող հարենք, թմբուկ զարկենք, Դավիթ մար-
գարեի պես պարենք, երգենք ու ճամփու դնենք քաղաքից հեռա-
ցող աղբին:

Թող գնա, ինչներես է պետք աղբը. թող գնա, պարարտացնի
մեր դաշտերը, այգիները, ցանքսերը...

Մենք կալյասկով էլ յուր կգնանք, երբ հիվանդանանք:

Ոտով էլ կգնանք, երբ հիվանդանանք:

Վերջապես, իսկի էլ չենք հիվանդանա, չենք գնա հիվանդա-
նոց:

Եթե քաղաքում աղբ չլինի:

1926 թ.

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՍՈՆԵՏՆԵՐ

Ամառը մոտենում է:

Սկսվեց կալոշների և տաք հագուստների վաճառքը... կոո-
պերատիվներում, ջրի կրիզիսը՝ ջրմուղներում, ճաշարաններում,
ավտոների փոշելից վազբերն՝ Աբովյանում...

Եվ մոտ են օրերը, որ մարդիկ գնան ամառանոց... անհանգըս-
տանալու և իրենց ջղերը փոքր-ինչ... գրգռելու:

Պատահական թղթակիցներ շուտով կգրեն լրագրերում.

«Լարաքելիսա այս տարի մեծ թվով ամառավորներ են
սպասվում: Արդեն սկսել են գալ Բաքվից, Քիֆլիսից, Երևանից:

Միջոցներ են ձեռք առնված սանիտարական դրությունը բա-
րելավելու: Եղանակները հրաշալի են»:

«... Դիլիջանում այս ամառ ահագին թվով հովեկներ են սպաս-
վում: Շտապ կարգով վարձվում են սենյակները: Մթերքի ահագին
պաշար կա: Կարգի են բերվում ոռոտողը, զբոսավայրը: Եղանակ-
ներն սքանչելի են»:

«Դարաշիշագում այս տարի բազմաթիվ հովազնացներ
են սպասվում: Արդեն սկսված է ավտոմոբիլային հաղորդակցու-

Քյաներ Ամեն օր փոստ պիտի ստացվի: Նոր աղբյուրներ են բացվելու: Եղանակները շատ դուրեկան են»:

Արգեն Աբովյան փողոցում կսկսվեն խոսակցություններ այն ժամին, թե ով ուր է գնում:

Այդ խոսողները կգտնեն, որ Ղարաքիլիսայում կեղտոտ է և խտեղ, Դիլիջանում սենյակները շատ թանկ են, և մթերք չի լինում, Գարաշիլագում երեխաների դիզենտերիա է լինում վատ ջրի պատճառով, և շարժե գնալ ո՛չ Ղարաքիլիսա, ո՛չ Դիլիջան, ո՛չ Գարաշիլագ:

Եվ մի քանի օրից հետո բոլորը վեր կկենան ու կգնան Ղարաքիլիսա, Դիլիջան և Գարաշիլագ:

Իհարկե, Ղարաքիլիսայում դարձյալ նույն կեղտը կլինի, ինչ-որ սրանից քառասուն տարի առաջ, Դիլիջանում սենյակները թանկ, մթերք չի ճարվի, իսկ Գարաշիլագում երեխաների դիզենտերիա — ինչպես ամեն տարի:

Եվ Ղարաքիլիսայում անձրև կգա շարունակ, ինչպես Դիլիջանում և Գարաշիլագում:

Հետո բոլոր այս ամառավորները, հովեկները, հովագնացները դարձյալ ուխտ կանեն այլևս չգնալ ո՛չ Ղարաքիլիսա, ո՛չ Դիլիջան, ո՛չ Գարաշիլագ:

Եվ այսպես մինչև մյուս տարի, երբ նորից ամառը կգա, կըսկըսվի կալոշների և տաք հագուստների վաճառքը... կոռպերատիվներում, ջրի կրիզիսը՝ ջրմուղներում, ճաշարաններում և այլն...

(Կրկնիր 10 անգամ, կամ՝ ինչքան կուզես):

1926 թ.

«ՄՐՅՄԱՆ ԵՄ ՀՐԱՎԻՐՈՒՄ»

(Նշխուժացման կարգով)

Անապատան երեխաների կոմպանիան իր մրցման հրավերներով մի բիլ հիշեցնում է հարսանիքի կամ որևէ քեֆի ժամանակի պարը:

Դուրուկներն ածում են, դճուրը խփում, հարսանքավորները ծափ են տալիս — բայց պարող չկա: Գլխով-ձեռով են անում — բան չի դուրս գալիս:

Այն ժամանակ Մուկուլը (մուկուլները յարամագ են լինում) հանկարծ գնդակի պես մեջ է նետվում ու սկսում է կարկտի նման ծեծել հատակը: Մեծելով մի 2—3 ուրբի... ինչ եմ ասում՝ ըստե, աչքը գցում է բազմության մեջ թաքնված Սոնիչկային (սոնիչկաները հավլաբարցի են լինում և շարաճճի լեզգիեկա պարող): Սա մի երկու շեմ-շում է անում ու մեկել՝ սահելով կարի մեքենայի ասեղի պես թռթոցանում է 3—4 ըստե:

Սա նշանակում է. «Մուկուլը նվիրելով 2 ուրբի՝ մրցման է հրավիրում Սոնիչկային»: «Սոնիչկան էլ ընդունելով մրցման հրավերը՝ նվիրում է 3 ուրբի»: Այ քեզ մրցման հրավիրել, մրցումը ընդունել և մրցումը տանել:

Բայց պատահում էլ է. որ դուրուկը ածում է, դճուրը զարկում, և Մուկուլը աչքը գցում է ընկ. Թռչնիկի վրա. (Թռչնիկները տնայնագործական բանաստեղծ են լինում, շատ պրոդուկտիվ, շատ ինքնասեր և հարսանիքներում իրենց շատ լուրջ պահող):

Մուկուլը գլուխ է տալիս նրան:

Թռչնիկը նոթերը կիտում է և անպատասխան նայում է մի կողմ:

— Ընկեր Թռչնիկ, տաշի... — գոռում է բազմությունը:

— Դե, վեր կաց, — գոռում է Մուկուլը «դու»-ով և կոպտորեն թևից քաշում:

Քաշեք դրան, քաաաշե՛ե՛ք...

Այդտեղ Թռչնիկը խիստ վիրավորված, որ իրեն պարի են հրավիրել (և ինչու՞ չպիտի հրավիրեին) կատեգորիկ, կտրական հրաժարվում է պարելուց:

— Ընկեր Թռչնիկ, տաշի...

Էլ ինչ «տաշի»... ընկեր Թռչնիկն արդեն սարսափելի վիրավորված, պոմիդորի պես կարմրած, փնշալով դուրս է գնում պատշգամբ...

Սա Երեխաների բարեկամների ընկերության մրցման հրավիրվածներից՝ նրանք են, որ մրցման չեն պատասխանում:

Բայց ահա Մուկուլը սատանայի՞ աչքերը պատպատացնում է

հասարակական գործիչ, ազնիվ և անճոռնի Տեր-Բաղդասարյանի վրա:

— Ուռա՛,— թնդում է բազմութունը այս մազալու ընտրութունից: Բայց բարեսիրտ Տեր-Բաղդասարյանը ձեռաց ընդունում է հրավերը և ֆուրգոնի պես մեջ մտնելով՝ շաղաքքարի փոքր ու մեջքը շուռ է տալիս, կացնի ոտներով համառոտակի քստքստացնում է հատակը և ով գարհուրանք, հանկարծ ծիծաղելով գլուխ է տալիս հայտնի պարուհի նազելաշուք Մարոյին, որը թեև պարի սկզբից իրեն ուտում-կտրատում էր, թե երբ պիտի հրավիրեն պարելու, բայց հիմա ինքն էլ զարմացած նայում է անդշուրաթեք Տեր-Բաղդասարյանին:

Սա էլ նշանակում է պատրաստ լինել նվիրաբերության, բայց սպասել մի «էֆեկտավոր» հրավերի և անակնկալ հրավեր ստանալ մի մարդուց, որ «կամքդ չի հարցրել»:

Եվ ահա, երբ նազելաշուք Մարոն մարեմբում է ունգիի մեղմօրոր մասերում, հանկարծ մեջ է գալիս մի մարդ, որ թեև պարել չգիտե, բայց շատ է սիրում պարել և գոռում է.

— Քյորօլլի ածեք, յոթ օր, յոթ գիշեր պիտի պարեմ:

Ու Մարոյի պարը խանգարելով, Քյորօլլի է ածել տալիս, մեջ է քաշում միլիցայետին, բոլոր հիմնարկների վարիչներին, գործկոմի բոլոր անդամներին և աչքի ընկնող բոլոր մարդկանց, որ իր հետ յոթ օր, յոթ գիշեր պարեն:

Սա էլ Պողոս Աբելյանն է: Տեսնելով, որ կենտապարը քիչ է՝ 204-ին, նրա ճյուղերին, բոլոր պետական, կոոպերատիվ առևտրաարտադրական հիմնարկներին, մեջ է քաշում ընդհանուր Քյորօլլիի:

Եվ խոստովանելով «սրանից հետո ամեն տարի», տասը ուրբալի վերոհիշյալ հիմնարկներին և ամբողջ պետությանը, հրավիրում է նույնն անել:

Լենինականում 21—22 թվականներին ինչ-որ քաղաքային հարկ հավաքելիս քաղաքածայրում մի կնկանից, որ փողն ուզում են՝ ասում են.

— Վնաս չունի, մայրիկ, այս տարի մի ուրբալի կտաս, գալող տարի 50 կոպեկ:

Կնիկը մի քիչ զարմանում է.

— Իհ, կեցի, մըկըր գալող տարի էլ պիտի բուլճեիկ էղնի...

— Պիտի էղնի, մայրիկ ջան, պիտի էղնի:

Այս կնկա միամիտ հարցը ներելի է, բայց ես կուզեի պ. Աբելյանին մի ոչ-միամիտ հարց տալ. այսպես որ խոստանում եք «ամեն տարի» նվիրաբերել անապաստան երեխաների օգտին՝ ուրեմն մենք «ամեն տարի» անապաստան երեխաներ պիտի ունենանք:

Այս գիշեր նստեցի և մի լավ մտածեցի Երեխաների բար. ընկերության կոմպանիայի մասին: Եվ աշխատեցի գտնել մի նպատակահարմար ձև: Եվ գտա: Ահավասիկ: Որոշեցի այս տարի ոչ մի կոպեկ չտալ այդ ֆոնդին: Երկրորդ տարին նույնպես: Երրորդ-չորրորդ տարին դարձյալ ոչ մի կոպեկ: Բայց 1931 թվից ամեն տարի խոստանում եմ 100 ուրբալի անապաստան երեխաների օգտին: Նաև խոստանում եմ 1935 թվականից ամեն տարի 150 ուրբալի «կորչի անգրագիտության»: Եվ մրցման եմ հրավիրում բոլոր քաղաքացիներին:

Այս մրցումը և՛ միտք ունի, և՛ հաջող միտք: Բոլոր քաղաքացիներն էլ կմասնակցեն:

Բայց մյուս կողմից, ես հասկանում եմ Աբելյանի ֆանդը:

Նա հարսանիքի այն պարողներից է, որ թեև գոռում է, թե «Յոթն օր պիտի պարեմ» և լուսադեմին արդեն քնած է լինում կողքի սենյակի բազկաթոռին, բայց հարսանիքի մեջ աշխույժ է մըտցնում, բոլորին պարել է տալիս և ուրախացնում տանտիկնոջ սիրտը:

Ընկեր քաղաքացիներ, անապաստանները տաշի են ասում... Չեք կարող Մարոյի պես, եղեք Տեր-Բաղդասարյանի պես: Մի լինեք ինձ պես առաջիկա հինգ տարում, եղեք բնկ. Աբելյանի պես միայն այս տարի:

Իսկ Թոշիկը— կասեք:

Թոշիկը դեռ պատշգամբում հովին է տալիս իր բարկութունը: Գնացեք դուզուկով ներս բերեք նրան:

1926 թ.

ՆՈՍՏԱԼԳԻԱԿԱՆ ԳՌՆԵՐ

Բարեկամներիցս մեկը, որ մեծ համարում ունի իբրև լուրջ, գործնական և հնարամիտ մարդ՝ կանգնել էր նախաճաշի փողոցի նոր շենքերից մեկի առջև և, մտիկ տալով շենքին, ինչ-որ հաշիվներ էր անում ինքն իրեն:

Մոտեցա նրան:

Թեև սաստիկ մտադրազ էր՝ բայց, ըստ երևույթին, մեծ գոհունակությամբ էր նայում շենքին:

— Ի՞նչ կա, — հարցրի ես՝ ինքս էլ նայելով մեծ շենքի դռներին ու պատուհաններին:

— Հիանալ կարելի է, — ասաց նա՝ շարունակ իր մտքերի հետ, — շատ խելացի և գործնական ձևով է շինած տունը: Անհարմար և վտանգավոր չէ:

— Երկրաշարժի՞ կողմից, — հարցրի ես:

— Երկրաշարժի՞... Հը՛մ, ինչ ասեմ... երկրաշարժը պատահում է դարերի ընթացքում, այդ հաշվի մեջ չէ: Բայց շենքը առհասարակ ճարտարորեն շինած է և անհարմար ու վտանգավոր չէ մուտքերի կողմից:

— Մուտքերի կողմի՞ց, ի սեր աստծո, ի՞նչ եք ասում, — զարմացա ես, — տեսեք ի՞նչ սարսափելի նեղ դռներ են, սեղան, մահճակալ, պահարան չէ, դիվան, լվացարան չես կարող մտցնել այս դռներից, սարսափելի նեղ դռներ են, սրան կասեն հիանալի՞ է...

Բարեկամս ժպտաց:

— Նե՞ղ են ասում եք: Սարսափելի նեղ են, ահեղիորեն նեղ: շենք բանն էլ այն է, թե ի՞նչպես պետք է տնային իրերը այս դռներից մտցնել ներս: Ես այդ մասին մտածեցի: Մահճակալները, սեղանները, պահարանները կարելի է թողնել բարձրացնել և պատուհաններից մտցնել: Բայց մտածում էի, թե ինչպես պետք է մտցնել, օրինակ՝ դաշնամուրը: Այս մասին տարակուսած էի, բայց հանկարծ գտա հնարը:

Այս առավոտ մեր կոնսերվատորիայի վարիչի հետ երկար խոսում էինք երաժշտության մասին, և այդ ժամանակ նա բերանից մի բան բաց թողեց: Նա ասաց, որ շուտով Երևանում կունենանք դաշնամուր շինող հատուկ վարպետ:

— Երաժշտությունն ի՞նչ կապ ունի այս նեղ դռների հետ:

— շենք այդտեղ եմ գալիս: Վարպետը կլուծի այս նեղ դռների հարցը:

— Հասկացա, ուզում եք ասել, որ վարպետն այնպիսի փոքրիկ դաշնամուրներ կշինի, որ այս նեղ դռներով կմտնեն ներս:

— Բոլորովին ոչ, — բացատրեց բարեկամս հանգիստ և խելացի հայացքով, — վարպետը դաշնամուրը կշինի բնական մեծությամբ:

— Ուրեմն դռները կամ պատուհանները կթանդեն, որ դաշնամուրը մտնի նե՞րս:

— Բոլորովին ոչ:

— Ապա ինչպե՞ս եք պատկերացնում:

— Ես պատկերացնում եմ բոլորովին պարզ: Դաշնամուրը կլինի բնական մեծությամբ և կշինվի ոչ թե արհեստանոցում, այլ հենց ուղղակի սենյակի մեջ, ուր նախօրոք կմտնի վարպետը և հետը կվերցնի դաշնամուրի ատաղձը:

Մտածելու բան է...

— Այո, չավ հնարք է, եթե ոչ դռներն իսկապես շատ նեղ են:

— Սարսափելի, ասեղի ծակեր են և ոչ թե դռներ, — քմծծիծաղ տվեց բարեկամս, — գուլպայի թել չի անցնի միջով, այստեղից դեր մա՞րդ կարող է անցնել:

— Կավ ասացիք, — ասացի ես, — իսկապես, եթե գեր մարդ լինի, ինչպե՞ս պիտի անցնի ներս:

— Այդ մասին մտածել եմ և գտել, — հանգստացրեց բարեկամս:

— Գիտեմ, ուզում եք ասել, որ գեր մարդկանց էլ թողով կբարձրացնեն վեր և պատուհաններով կմտցնեն ներս:

— Ոչ, այդ անհարմար է, կարող են գեր մարդիկ վախկոտ լինել, և վերջապես գեր կանայք չեն համաձայնիլ ամեն օր կախաղան ընդունել:

— Ապա ինչպե՞ս պիտի գեր մարդիկ մտնեն ներս:

— Նոստալգիական մեթոդով:

— Նոստալգիական մեթոդով: Դա՞ ինչ մեթոդ է:

— Նոստալգիա նշանակում է հայրենիքի կարոտ, հայրենիքի կարոտից առաջացած հոգեկան հիվանդություն, — հայրենակարոտ, Ահա այդ հիվանդության մեթոդով կարելի կլինի լուծել գեր մարդ-

կանց ներս մտնելու հարցը և ի դեպ ասեմ, այս տունը շինած է նոստալգիական մեթոդով: Դրա համար էլ դռները նեղ...

— Չեմ հասկանում:

— Այ, բացատրեմ: Չէ՞ որ այս տանն ապրող մարդը, եթե քիչ-միչ բարեկեցիկ կյանքով ապրի՝ կարող է հանկարծ աճյալան անգոյշորեն շողանալ, որ եթե դուրսն է՝ ներս չի մտնի, եթե ներսն է՝ դուրս չի գա:

— Իսկապես որ...

— Այո, բայց այդ թերիս է, գործնականում այդպես կլինի: Ենթադրենք՝ այս տանը կենդանի մեկը գնում է ամառային հանգստյան և այնտեղ գիրանում է: Կվերադառնա Երևան իր բնակարանը և դռնով ներս չի մտնի: Կփորձի պատուհանով, և ենթադրենք աճյալան էլ մտնի ներս: Գիտե՞ք ի՞նչ կպատահի:

— Անհարմար բան:

— Անհարմար... իսկ եթե կինն ու երեխաները նե՞րսն են:

— Սարսափելի բան, — այդպես չէ: Ի՞նչ է, կարծում եք հարցը չի՞ լուծվի: Այ այստեղ է, որ նոստալգիական մեթոդը հանդես է գալիս: Մեր հաստացած ամառավորը մի շաբաթ ման կգա դռների առջև, կնայի պատուհանի առաջ կանգնած իր երեխաներին, կնոջը, կտեսնի նրանց արտասուքը և կարոտից հալումաշ կլինի: Այնքան կմաշվի, որ կլղարի: Կլղարի և... պատրաստ է — կմտնի ներս:

Հիմա դուք ժպտացիք: Գիտեմ ինչու: Դուք մտածում եք, որ այդ մարդը գիրանալու քնդունակ է: Կտեսնի իր կնոջն ու երեխաներին ու ուրախանալով, ուտելով խմելով՝ վերջն էլ կգիրանա և աճյալան կհաստանա, որ հիմա էլ չի կարողանա սենյակից դուրս գալ: Կարծում եք հուսահատակա՞ն դրու՞թյուն կլինի: Բոլորովին ոչ: Անել դրու՞թյունը նրան կրկին կզցի տանջանքների մեջ, և մեր հաստամարմին բարեկամն աճյալան կտանջվի, որ... կլղարի և դուրս կգա բնակարանից, իսկ երբ դուրս գա բարեհաջող կերպով՝ նորից կուրախանա և աճյալան կուրախանա, որ կրկին կգիրանա... Չէ, դռները շատ գործնական կերպով են շինած: Իսկը իմաստության դռներ:

1926 թ.

ԵՐԿԱԹՅԱ ՅՈՆԻ

(Աշխուժացման կարգով)

Կարդալով մեր երկրում ամենուրեք ցրված բանգյուղթղթակիցների անունները՝ ինչպես Ասեղ, Կոթող, Մակիչ, Հրնդիչ, Մըկրատ, Մրրիկ, Ռազնոզլազիյ-Դադիվանյան, Գեոփին (կռան), Մողալամ (կլոր քար), Մախաթ, Թոխմախ, Վեզուվի, Փոթորիկ և այլն, մտածում ես. սա ի՞նչ սարսափելի անուններ են. ի՞նչ ահռելի մարդիկ են սրանք, զրչի՞ մարդիկ են, թե՞ կովի, սարսափի, ի՞նչ սոսկալի տեղ է Հայաստանը և երևի մեր երկրում ոչ մի հնար չկա մի գյուղ, մի երկաթուղի, մի քաղաք մտնել, ու վայ, թե սխալվեցիր ու մի փողոց մտար, մի ճամփով անց կացար — հանկարծ մեկ էլ տեսար, որտեղից որ է մի Ասեղ թեղ պիտի մտնի, կամ Մակիչն աչքդ պիտի ծակի, Մախաթը պիտի կողդ խրվի:

Եվ ի՞նչ սարսափելի բան կլինի, եթե սրանք բոլորը երազիդ գան ու կանգնեն գլխավերևդ:

Օրերով մտածում էի այս մասին, սարսափելի անունները կոշմարի պես հետևում էին ինձ:

Եվ ահա այսպես մտածելս ու նրանց երազում տեսնելս չկատարվի՞ հանկարծ:

Ահռելի բան: Իբրև թե վագոն նստել գնում եմ: Միամիտ նստած ժամանակ տեսնեմ ուղիդ դեմուդեմս նստած է Ռազնոզլազիյ-Դադիվանյանը: Նա այնպիսի սոսկալի հայացքով էր մտիկ ալիս ինձ, որ վախից աչքերս կախեցի հատակին: Եվ որպեսզի բոլորովին չտեսնեմ այդ հայացքը՝ աչքերս դարձրի դռան հետևը:

Բայց, ով սոսկում... այնտեղից էլ ինձ էր նայում Ռազնոզլազիյ-Դադիվանյանը: Աչքերս փակ՝ վագոնս փոխեցի և գլուխս կախ նստեցի: Բայց հենց մի քիչ աչքերս բարձրացրի, տեսնեմ դիմացս դարձյալ Ռազնոզլազիյ-Դադիվանյանը: Նայեցի անկյունը՝ դարձյալ Ռազնոզլազիյ-Դադիվանյանը, նայեցի վերևի դարակները՝ դարձյալ Ռազնոզլազիյ-Դադիվանյանը, նայեցի նստարանի տակը՝ դարձյալ՝ Ռազնոզլազիյ-Դադիվանյանը...

Գոռացի ու վեր թռա տեղից... նա էլ վեր թռավ... դուրս վազեցի վագոնից... նա էլ դուրս վազեց... մտա ուրիշ վագոն, նա էլ մտավ վագոն: Հանկարծ ավելի բարձր գոռացի, ցատկեցի

պատուհանից դաշտն ու սկսեցի վազել, մեկ էլ ետ մտիկ տվի, տեսնեմ դարձյալ Ռազնոզլազիչ-Դադիվանյանը և մի խումբ էլ նրա պես սարսափելիներ ընկել են հետևիցս:

— Օգնեցե՛ք,— գոռացի ես ու կանգնեցի: Նրանք վրա հասան ու շրջապատեցին ինձ: Շուտ տվի, որ ետ փախչեմ, մախաթը մտավ աչքս: Ուզեցի փախչեմ դեպի աջ՝ ասեղը թևս ծակեց, ծովեցի դեպի ձախ՝ Հրնդիչը հրեց, գցեց մի կողմ: Վեր թռա, որ փախչեմ, թոխմախն այնպես զարկեց գլխիս, որ շմեցի ու նստեցի տեղճուտեղը: Դրան հետևեց Մոզալամը (կլոր քար), որ վեր ընկավ փորիս, սրա հետևից էլ հասավ Գեոփինը (մեծ մուրճ), որ տվեց մեջքիս:

Մրանք ինձ մեջ առան ու սկսեցին տալ հա տալ: գլխիս, փորիս, մեջքիս, ոտներիս: Այնքան ծեծեցին, որ դառա խմոր, հետո լավաշ, հետո էլ այնքան թակեցին, որ դառա ծեծած կանեփ: Եկավ Իլիկը, սկսեց ինձ մանել: Մանում էր, տալիս Մկրատին, Մկրատն էլ կտրում տալիս էր Մրրիկին, Մրրիկն էլ փշում, գցում էր Զիբուխը, Զիբուխն էլ ծխում էր ինձ ու տալիս քամուն: Հանկարծ մի գոռոց: Տեսնեմ հեռվից ահռելի կերպարանքով արշավում է Փոթորիկը:

Հենց այն է, վրա էր հասնում՝ սարսափից զարթնեցի՝ լավ չտեսնելով նրան:

Շունչս կտրվում էր:

Քրտինքի մեջ կորել էի:

Ամբողջ գիշեր դողալով մտածում էի Փոթորիկի մասին, թե ի՞նչ մեծ փորձանքից պրծա: Եթե սա էլ վրա հասնեիր... Փոթորիկը... բանգյուղթղթակից Փոթորիկը, համահայաստանյան հրահանգիչ Փոթորիկը...

Ամբողջ օրը փոթորկահույզ ման էի գալիս փողոցում: Պատահելով բարեկամիս՝ հարցրի, թե ո՞րտեղ է Փոթորիկը:

— Ուզո՞ւմ ես ծանոթացնեմ հետը:

— Չէ, չէ,— ասացի,— հեռվից միայն ցույց տուր:

Խոստացավ:

Միրտս սկսեց խփել: Նրան երևակայում էի ունքերը շարդախի պես մինչև այտերը կախված, բեղերը մտրակների պես ծոծրակին փաթաթած, մորուքն ամպի պես մինչև փորն իջած: Եվ հետո մի ձայն, մի ահարկու ձայն, մի ամպագոռոտ ձայն, որ Արագածից

որոտալով դմդմբացնելով հասնում է Փամբակ, Լոռի, արձագանքը՝ հցում է Դարալագյազ, Ղարաբաղ:

Պատրաստվեցի ձեռնոցներով, բաշլուղով և մուշտակով հանդիպել նրան:

— Խնդրեմ ծանոթանաք,— ասաց բարեկամս, ցույց տալով մեր առջև կանգնած մի խումբ երիտասարդներից մեկին,— սա է Փոթորիկը:

— Ի՞նչ... Փո... փո... սա՞ է միթե... թորիկը, Փոթորիկը...

— Այո, սա է Փոթորիկը:

Մի հեզահամբույր երիտասարդ մեղմ ժպտալով ձեռք մեկնեց ինձ:

— Ներեցեք,— ասեցի ես,— հո սխալ չլսեցի,— դո՞ւք եք Փոթորիկը:

Հեղաձայն մի բան ասաց, որ կարծեմ «այո» էր:

Նայեցի իրեն. փոթորկի նշույլն անգամ չկար վրան, սա ավելի շատ զեփյուռիկ էր:

Խնդրեմ դարձյալ ծանոթանանք, մյուս բանգյուղթղթակիցների հետ՝

Ասեղ, Մկրատ, Կայծակ, Մրրիկ...

— Ի՞նչ է ասում.

Նորից զարմացա: Նայում եմ բոլորն էլ հեզ, համակրելի, բարի և ուշիմ երիտասարդներ...

— Ներողություն, ընկերներ,— ասացի,— էլ ինչո՞ւ եք անուններդ դրել Ասեղ, Մկրատ, Կայծակ, Մրրիկ. ասացեք Զեփյուռ, Բալասան, Վարդ, Մանուշակ...

Նրանք նշանակալից իրար նայեցին ու լռեցին:

— Ընկեր Դեմիրճյան,— դարձավ ինձ Փոթորիկը,— չգիտե՞ք, կամ չե՞ք կարող մեզ համար մի քիչ ավելի սարսափելի անուններ...

— Ինչնե՞րի՞ց են պետք սարսափելի անունները. բան չունեք. Դուք գրչի մարդիկ, ինչ կսաղի ախր այդ բոլոր սարսափելի անունները:

— Չէ դուք կարող եք, ասացեք:

— Համեցեք, եթե ուզում եք. Դժոխքյան:

— Չեղավ. թույլ է:

— Աղիքպատառողյան:

- Վնաս շունի, բայց էլի ուժեղ չէ:
- Աղիքստառապատառողյան:
- Վատ չէ, բայց մի շաբաթ կդիմանա:
- Լերդ ու թոք շամփրող պատառողյան:

Փոթորիկը տխրեց:

— Ափսոս, չի դուրս գալիս. մենք էլ շատ ենք մտածում մի քիչ ավելի սարսափելի անուններ գտնել՝ չի լինում:

— Ախր ինչների՞դ են պետք սարսափելի անունները. բան շունեք:

— Ի՞նչ եք ասում, թղթակիցը, որ սարսափելի անուն շունե-
նա, թղթակցություն կարող է գրել: Գիտե՞ք ի՞նչ դազանների մի-
ջին ենք ապրում:

— Գազանների՞:

— Բա, նստել եք ձեզ համար ապահով տեղ ու մեր դարդից չեք հարցնում: Ամենաթունդ ֆրոնտը մենք ենք ընկած: Անուններս որ սարսափելի չլինեն՝ գո՞րծ կտեսնենք: Սարսափեցնող անուն պիտի ունենաս, որ գողը, ավազակը, դրամաշորթը, զեղծարարը քաշվեն մի քիչ, մոտ չգան...

— Թող մոտ գան...

— Բո՛ւ, գիտե՞ք ինչ սարսափելի մարդիկ են...

— Է՛հ, ինչե՞ր եք ասում, ոչինչ էլ չկա, ուզում եք լրագրում անուններդ բաց անեմ, տեսեք...

— Չէ, չէ, չէ, ի՞նչ եք անում... Անուններս, որ բացվի, էլ կա-
րո՞ղ ենք ման գալ այսքան պրիզունների, քանդորբազների, գողերի
մեջ, մեզ կուտեն:

Գնում էինք դեպի Աբովյանը վեր:

Շատ տխուր բաներ պատմեց ինձ Փոթորիկը, մյուսներն էլ լրացրին:

— Ապա՞ մի ժպտացեք լրագրում, թե Կիրակոսի աչքի վերև ունք կա, տեսեք, թե ոնց է այդ Կիրակոսը գեղե գեղ ընկած ման գալիս թղթակցին գտնելու:

— Հասկանում եմ, իհարկե, այդպես է: Բայց տղերք, ախր ձեր անուններն էլ... մի քիչ... Ավելի լավ չի՞ լինի մեղմ անուն-
ներ դրեք. բայց պահակներով ման եկեք Հայաստանում:

— Անհուսալի է:

— Լավ, իսկ չի՞ լինի տանկաներով ման գաք:

— Դա կլինի:

— Կամ զրահապատ նստեք մտնեք դյուղերը:

— Շատ լավ կլինի:

— Մի-մի հատ էլ անրուպան վերցրեք, որ երբ մի տեղ ճըշ-
մարիտ խոսք ասեցիք, կամ տեսաք, որ մեկիդ կեղծանունը բաց-
վեց, ձեռաց ոտներդ գցեք անրուպանն ու թռեք Երևան:

— Այն ժամանակ ձեզ պետք է երկաթի մեծ պաշար, որ տանկաներ, զրահապատներ, անրուպաններ շինեք, հիմնեցեք մի զրահատանկային ֆոնդ Հայաստանի կուլակների, գողերի, ավա-
զակների, զեղծարարների ֆրոնտում գործող բանդյուղթղթակից-
ների բանակի համար:

— Արդեն ունենք երկաթե ֆոնդ, թղթակցի անապահովու-
թյան, հալածանքի, սպանության դեպքերի համար:

— Հիանալի բան:

— Մեզնից ով հոնորար չի ուզում վերցնել — գցում ենք եր-
կաթե ֆոնդին:

— Սքանչելի:

— Մեր գողերի ու ավազակների հախից երկաթով պետք է գանք:

— Շատ էլ լավ բան եք անում:

Այդ փորձություններից զերծ մնալու համար շատ գրեցեք և...
քիչ ստացեք հոնորար...

Ե՞րբ պիտի հասնենք այն վիճակին, երբ մեր թղթակիցների անունները դառնան Զեփյուռիկ, Հեզիկ, Քնքուշիկ և հիմնենք մի ֆոնդ, որի նպատակը լինելու մեր բազմաշարժար բանգյուղթղթա-
կիցներին... պաղպաղակ հրամցնելը:

Դա կլինի: Բայց մինչև այդ մեր իրականությունը պետք է ծակել, մտրակել, կոթել, հրնդել, զլխին իջեցնել թոխմախը, կայ-
ծակը, գեոփինն ու մոզալամը, փետուրները հանել երկինք...

Հայաստանի կաշին հաստ է...

1926 թ.

«ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒ ԻՄԱՆԱԼԸ ՅԱՆԿԱԼԻ Է...»

Այսպիսի մի հայտարարությամբ վերջին օրերս «Խորհրդային Հայաստան»-ում պահանջվում են բժիշկներ, մանկաբարձուհիներ, ատամնաբույժներ — Ալավերդու, Ղափանի, Գիլիշանի, Նոր-Բայազետի, Երևանի և շրջանային հիվանդանոցների և բժշկակայանների (դե կարճ որ ասենք), ամբողջ Հայաստանի համար:

Մի քիչ մտածեցի այս մասին: Նախ՝ ի՞նչ է նշանակում «հայերեն իմանալը, ցանկալի է»: Իսկ եթե հայերեն չիմանա բժիշկը՝ կարո՞ղ է չիմանալ: Երևի: Իհարկե: Օրինակի համար, ես ամեն գիշեր անկողնի մտնելիս կանոնավոր կերպով ինձ ու ինձ ասում եմ. «ցանկալի է, որ վաղն աշխարհքը առաքինի լինի»: Բայց առավոտը տեղից վեր եմ կենում և պատուհանից դուրս եմ մտիկ տալիս՝ որ դարձյալ առաքինի չէ:

Այս էլ քեզ «ցանկալի է»:

Եվ մտածեցի, որ պիտի գրեի ոչ թե «ցանկալի, այլ խստագույնս պարտադիր է»: Բայց վերջն էլ մտածեցի, որ պարտադիր պարտադիր ասելը էլ օգուտ չունի: Միևնույնն է՝ ականջի հետև կպցեն, որովհետև եթե իսկապես բանը լուրջի հասնի, ու գնաս քաղաքացիների օձիքից բռնես հայտարարես, որ հայերենը վերջնականապես պարտադիր է և հայտարարես՝ կամ հայերեն, կամ կախաղան՝ այն ժամանակ ամեն օր կկարդաս լրագրում. «Այսօր ևս հրապարակում հայերեն խոսել չուզելու համար 2000 մերադնյա կախվեց... ժպտալով»:

Ահա այս տեսակետից է, որ լավ ու հարմար էր ձևակերպված հետևյալ հայտարարությունը.

«Յանկալի է»:

Այս հո՞ այս: Հիմա էլ մի քիչ երևակայենք, թե ինչ դեբյուտ կունենա այդ «հայերեն լեզու իմանալը ցանկալի է» բժիշկն իր նոր պաշտոնատեղում:

Վեր է կենում մարդը և միամիտ, սուրբ սրտով ճամփա է քնկնում դեպի Մոլլա-Գուրսուն, կամ ինչի՞ Մոլլա-Գուրսուն, ասենք Աղհամզալու կամ Չանախչի... Մի այսպիսի անկյուն մեր օրհնյալ Հայաստանում: Գնում է մարդը գիշերը և հոգնած քուն մտնում: Առավոտը վաղ մեր «ցանկալի է»-ն դեռ անկողնում, ներս է լըծ-

վում (առանց դուռը ծեծելու), արմատական հայերի մի պատկանելի բազմություն:

«Յանկալի է»-ն վեր է թռչում տեղից:

— Что вы, что вы, еще приема нет.

Եվ քնաթափա ու բարկացած մտիկ է տալիս բազմությունը: Բայց բազմությունը Թորգոմյան ցեղի անդորրությամբ, նվիրապետական կարգով սլալում է պատերի տակին, իսկ Աթուն ամին ու Եղսան ազին գնում ուղղակի նստում են բժշկի անկողնի վրա ու կարոտալի աչքերը բժշկին հառած՝ թառանչ են քաշում — ա՛խա:

— Я еще не принимаю!

— Հապա՞, քե մատաղ հապա՞, աչքներս ջուր կտրած ճամփեդ էինք պահում:

— Но, помилуйте, я еще не открыл амбулаторию.

Բայց Աթուն ամին արդեն սկսում է. «Հա, հըմի ասեմ: Էն ա բալա ջան, էն կարևուտի տարին, որ մերու միջին հետի քեզանից, արջի հետ մի քիչ կոխ կպանք, թու էլա, թե ինչ, էն, որ տուն եկա՝ ընկա ղզլա: Էս ղզլան անցավ: Ամա մի ամիս ասեմ կարում չէի, թե ոտս ժաժ տամ: Հիմա իլանջըղա:

— Да, погодите, господа, я ничего не понимаю.

— Ու բսենց մի տասը տարի կա, որ իլանջըղը հոգիս հանում ա: Սընըլի բերի, յախու պցեց, ամա էդ յախուի վրա սըզըլթեն գոռեց...

«Յանկալի է»-ն շվարել է...

— Ախր, բալա ջան մի իմ ցավին էլ մտիկ է՞... — քաշում է թևից Եղսան ազին, — էն «չոռի» տարին, որ մրսեցի, մի քամի մտավ ջանս ու...

Երրորդն է մեջ ընկնում.

— Բժիշկ ջան, արևիդ մատաղ, ախր տղես սաթըլչամ ա, մի ճար արա է:

— Право, я не знаю как.

Առաջ է գալիս մի ատաբազարցի գաղթականուհի.

— Աս սրտիս տակը ցավ մը ունիմ, յավրում: Հոսեն կսկսի, առաջ սըզըլթմիշ կընե, վերջեն պուրղիլամիշ կընե, կելլե, կելլե, կելլե. հոս տեղ սխլթի կուտա: Նոպա է նե՛ չէ նե չէ՛ չիմ գիտեր, մի՞նակ աս ցավը պապահիկիս ըսածին պես սախթեց ինձի, յավրում:

— Чорт знает, что такое?! Уходите отсюда.

«Յանկալի է»-ն բողոքում է. բարկանում: Բայց Ուրարտուի թագավորներից մինչև Սովետական իշխանություն բժիշկ չի մտել գյուղը: Հնար չկա: Վերջը գիշում է.

— Ну, ладно, что у тебя?— դիմում է մեկին:

— Բժիշկ ջան սիրտս ցավում է (ձեռքը փորին է դրել): Հրաշք: Բժիշկը սիրտ բառը գիտե:

— Хорошо, хорошо я тебе пропишу бром.— դառնում է մյուսին.— А у тебя что?

— Լեզու չունեմ, թե հասկացնեմ, բժիշկ ջան:

— Լեզու՞, что такое լեզու:

— Հիվանդը հանում է լեզուն:

— Налет на языке, хорошо, дам хинина.

Մի ուրիշը.

— Բժիշկ ջան, քսան տարի է նամ տեղ քնելուց ջանս շարդոտվում է, մի կապիլի տա՞ս, անցնի:

— Капли! Хорошо, хорошо! Живот болит.

Ահա թե ինչ է նշանակում «հայերեն լեզու իմանալը ցանկալի է»: Բայց, իհարկե, վերջ ի վերջո միակ հնարն այս է: Մենակ մի բան: Հայերենը ցանկալի հայտարարելիս պետք է նշանակել, մատնանշել, թե ո՞ր հայերենի մասին է խոսքը: Շատ հայերեն կա, ես ճանաչում եմ բազմաթիվ մարդկանց, որ ահա քսանհինգ տարի շարունակ ամեն օր խոսք են վերցնում հավաքույթի մեջ խոսելու և ամեն օր ներողություն են խնդրում:

— Я очень извиняюсь, что должен высказаться по-русски.

Այստեղ ենթադրվում է, թե մի օր պիտի հայերեն խոսի: Սա «նիսիս» հայերեն է:

— Կամ մի ուրիշ օրինակ: Խոսում ես հեռախոսով:

— Կենտրոն:

— Центральный.

— Օրիորդ, տվեք համար 99-ը:

— Занят.

Բարկանում ես ու կպցնում.

— Բայց ընդ քո, օրիորդ, հույժ զարմացյալ եմ ընդ մտացք

ծննդականություն, զի ցայժմուսս ոչ գտար ունակ զհայերենի խոսել բարբառ...

— Ах, перестаньте пожалуйста, по Моисею Хоренскому манерничать, я прекрасно понимаю родной язык!

— Այն ժամանակ ինչո՞ւ հայերեն չեք խոսում:

— Я и по армянски говорю!

Այս էլ ոուս-ա-հայերեն է կամ ոուսահայ էսպերանտո:

Դե գնա հիմա:

Բայց ես կասեմ, որ ամենից լավն արել է մեր հիմնարկներից մեկի բաժնի վարիչը: Մի գեղեցիկ երեկո պահանջ էր դրել.

— Եթե վաղվանից սկսած բոլոր գրությունները, դիմումները, հաշիվները հայերեն լինեն՝ ոչ մի թուղթ չեմ կարդա:

Հետևյալ գեղեցիկ առավոտյան ծառայողները ներկայացնում են ոռճկացուցակի թուղթը հայերեն: Կարդում է. կավ: Ա՛յ այսպես: Բոլորը ստորագրել են հայերեն: Հանկարծ:

— Սպասեցեք, ես մեր ծառայողներին բոլորին ճանաչում եմ, մի՞թե մենք այսպիսի ծառայող ունենք:

— Ո՞րը, ինչպիսի՞:

— Այ՛ շովհանեսե Բարսեղի Մարտիրոսյան: Սա ո՞վ է:

— Դա մեր ոուս աշխատակից Իվանն է:

— Իվա՞նը...

— Այո: Իվան Վասիլևիչ Մարտինովը: Ինքն է ստորագրել:

— Բո՞... Հապա:

Այս էլ նրա քյասա հայերենն է:

Կան ուրիշ հայերեններ ևս, որոնց մեջ մինչև անգամ հայերեն բառեր էլ կան: Այնպես որ՝ հայտարարության ժամանակ պետք էր այս տեսակները ի նկատի ունենալ: Բացի այդ, պետք էր ավելացնել. «ցանկալի է, որ բժիշկները իմանան նաև ուրարտերեն, խալդերեն, ասորերեն, պարսկերեն, արաբերեն և տաճկերեն»: Ինչպես և վերևը տեսանք:

Ես որ լինի հայտարարություն տվողը, ուղղակի կգրի.

— «Հայաստանի համար հարկավոր են լեզվագետներ և բարբառագետներ»:

Ցանկալի է, որ բժշկություն ևս իմանան:

«ՔԱՂԱՔԱԳՈՒՑՈՒՆ» ՀԱՄԱՌՈՑ

Այս ի՞նչ թուղթ է կպցրած պատին:

- Երևան քաղաքի ձայնագրողների ցուցակն է:
 - Ձայնագրող, ինչու, ձայները կտրվե՞ն է:
 - Այո «կտրվել է»:
 - Ինչի՞ց է պատահել: Եղանակի՞ց է:
 - Այո, «եղանակից»:
 - Շա՞տ են մրսել:
 - Այո, «շատ են մրսել»:
 - Է՛, լավ, Երևանում ինչքան ցուրտ է լինում, որ...
 - Բժշկի մոտ շե՞ն գնում սրանք:
 - Գնում են, բայց բժիշկն ասում է «դեղ չկա»:
 - Ապա իրար հետ ինչպե՞ս են խոսում, նշաններով:
 - Այո, «նշաններով»:
 - Ապա սրանցից մեկի անունը կարդա մի:
 - Կիրակոս Տեր-Ճգնավորյան:
 - Ջանըմ, դա մեր բակումն է ապրում, մեր տանտերն է:
- Առավոտից մինչև երեկո աչնորես է գոռոռում բակում ապրող մըշակների վրա, որ մեռելներն է գերեզմանից հանում:
- Ձի կարող «գոռալ»:
 - Արի մի օր մեր տուն՝ տես:
 - Ինչի՞ պիտի դամ: Գիտեմ, չի կարող պատահել:
 - Լավ, ի՞նչ մարդիկ են սրանք:
 - Վաճառականներ, սեփականատերեր, նախկին «հայտնի» պաշտոնյաներ...
 - Իսկ տերտերները, տիրացուները...
 - Գրանք, որ այս ցուցակում իսկի չեն կարող լինել: Երանք բոլորովին ձայն չունեն:
 - Ի՞նչ է ասում: Տիրացուն էլ ձայն չունենա՞: Ո՞վ կընտրի նրան տիրացու՝ եթե ձայն չունենա:
 - Եթե նա ձայն ունենա՝ եկեղեցում չեն էլ պահի, դուրս կանեն:
 - Ինչե՞ր են ասում, տիրացուն պիտի կարդա, երգի...
 - Այո, կարող է, բայց առանց «ձայնի»:

- Ախալ ես, գուցե ձեր քաղաքի տիրացուների ձայնն է կտրած, բայց մեր գյուղերի տիրացուները զիլ ձայնավոր են:
- Ձի կարող պատահել: Նրանք այն «քաղաքացիներից» չեն, որ ձայնավոր լինեն:
- Ինչու՞, գյուղացիք ձայն չունեն:
- Ունեն, եթե «այն քաղաքացիներից» լինեն:
- Ջանըմ, դու թարս բաներ ես խոսում:
- Դու էլ շիտակ բաներ ես խոսում:
- Ցտեսություն:
- «Գնաս բարով»:

1926 թ.

ՓՈՍՏՈՒՄ

- Ներեցփք, ընկեր, այստեղ կալո՞ջ են ծախում:
 - Ո՛չ:
 - Ապա ի՞նչ հերթ է սա:
 - Մարկալի հերթ է: Մա փոստն է:
- Անծանոթը հուսահատ մտիկ տվեց ներսը և առանց կալոջի՝ ընկնելով ցեխերը հեռացավ: Իսկ ես մտա փոստը բլանկ առնելու և դրամ փոխագրելու:
- (Ախ, եթե այդ դրամը իմանար, թե իրեն փոխադրելու համար ինչքան են քաշում, կամ հնար լինի, որ դրամն ինքը մեզ փոխադրե՞ր ինքը հերթի կանգնելով...):
- Ասում ենք կռվենք հերթի դեմ: Հերթը ինքն է կռվում մեր դեմ: Արդեն փոստում պլակատ կա. «հերթի կանգնել» և... «բարձր լիտսել»:
- Երկրորդը տեղին է և հոգեբանական: Գիտեն, որ հերթերը ձայների կոնսերվատորիա է, և այնտեղ ենք մշակում մեր արտասանությունը: Հերթ, ի՞նչ հերթ: Հարթուկ... Մարմնիդ վրա ծուռ տեղ ունե՞ս՝ բեր փոստը և գցիր հերթի սեղմիչ մեքենայի մեջ — ձեռաց կղրստվի: Կատարյալ հրմըշտկոց, քոթթոթոց, ճմլոց, ձիթահան:

Ամբողջ հայոց ազգը եկել, խմբվել է մարկայի դռան առջև Ամեն կարգի ծառայողներ, քաղաքացի գյուղացիներ, քաղաքացի քաղաքացիներ, վաճառականներ, հոգևորականությունը, Պետ-թատրոնի դերասանական խումբը՝ ռեժիսորներով և անսամբլով, համալսարանի պրոֆեսորները, քույրս, մեր ամբողջ ազգատոհմը, իմ ու ձեր բոլոր հարազատները բարեկամները, ծանոթները:

Մա՞րդ եք կորցրել: Էլ կարիք չկա Փարիզի «Երևանում» կամ Թիֆլիսի «Մարտակոչում» հայտարարություն տալու, թե.

«Աղաչան Արշուկյանը կփնտրի իր եղբայր Թևաթորոսը, որ վերջին անգամ տեսնված է եղեր Վանա նահանջին, Իզդիրին մեջ»:

Հայտնեցեք այդ Աղաչան Արշուկյանին, որ Թևաթորոսը ողջ առողջ է, լավ բազազիայի գործ ունի ղանթարի մոտերքը և ինքը ապրում է մարկայի հերթի մեջ:

— Ապա ինչո՞ւ իմաց չի տալիս իր տեղը, — կասեք դուք:

Հենց դրա համար էլ մարկա է առնում, որ նամակով իմաց սա, որ ինքն այստեղ է:

Հերթի է կանգնել...

Նաև զուր եք շատերդ լրագրում հայտարարում, թե կորցրել եք ձեր անձնական վկայականները կամ բանկոտպի գրքույկները:

Սկեք փոստը և կգտնեք թե՛ ձեր գրքույկները գտնողներին և թե՛ ձեզ, եթե կորցրել եք:

Փոստի հերթը երկար է: Եվ դասընթացով: Երեքամյա:

Առաջին տարի՝ մարկայի և բլանկի հերթ: Երկրորդ տարի՝ գրչակոթի հերթ, որ բլանկը լցնեք և վերջապես դրամը և բլանկը ընդունող ծառայողի հերթ:

Մարկայի հերթում շատ նոր ծանոթություններ հաստատեցի, բարեկամացա և մտերմացա մի շարք քաղաքացիների հետ և վերջապես բլանկն առնելով՝ դուրս գնացի փոստից մի փոքր էլ օդ առնելու: Հետո գնացի փոստի արտաքին բաժնում դրած սեղանին, որ բլանկը լցնեմ:

Գրչակոթ չկա:

Գիմում եմ ծառայող մի օրիորդի և խնդրում.

— Կարելի՞ է մի գրչակոթ:

— Ոչ: Զի կարելի: Գնացեք այն սեղանը: Եվ ցույց է տալիս արտաքին բաժնի սեղանը:

— Սեղանով բլանկ կգրվի՞: Գրիչ տվեք:

— Այնտեղ գրիչ կա:

— Զկա:

— Ուրեմն քաղաքացիները տարել են:

— Ապա ինչպե՞ս անեմ:

Ուսերը թոթվում է:

Գիմում եմ երկրորդ ծառայողին.

— Ընկեր, վճռեցեք այս հարցը, ես հեռագրով դրամ եմ փոխադրելու, գրիչ չկա, ինչ պիտի անեմ...

— Գնում ենք գրիչը, բայց քաղաքացիները տանում են:

— Բայց ես հիմա ի՞նչ անեմ:

— Հերթի սպասեցեք. մի հատ կա:

— Մի հատ կա, բայց ահագին թվով քաղաքացիներ կան:

— Մենք ի՞նչ անենք:

— Ես ի՞նչ անեմ:

— Ուրեմն մնում է, որ հետս գրիչ բերեմ կամ գուցե փոստ բերեմ:

— Գիտեմ, կբերեք, — խոսում է մի ուրիշ ծառայող, — և, իհարկե, լրագրում էլ կգրեք:

— Հա, կգրեմ էլ:

— Կգրեք, հա:

— Հա...

— Հաա...

Ընդհանուր ճակատամարտը սրանով էլ վերջացավ: Ես պարտվեցի և ստիպված եղա քաղաքացիների բազմության հետ հերթի կանգնել մի հատիկ գրչակոթի, որ մի բախտավորի ձեռք էր ընկել և նրա համար սկսել էր գրել. «Սիրելի մորաքույր»:

«Ստացա նամակդ և ահա պատասխանում եմ...»:

Ե՞րբ պիտի գա այն տեղը, որ գրի. «Համբուրում եմ, քո Վոստրապուհ...»:

Է՛հ, մինչև որ սա իր մորաքրոջը կհամբուրի՝ ընկնենք փիլիսոփայության աշխարհը:

Հին, բարի ժամանակները մի հանգիստ ձև կար նամակի:

Գրում էիր, ծրարում, վրան գրում «Մեծապատիվ Աղաբաբ աղա Աղախանյանցին, յուրախ ծամու ի ձեռն գտցե», հետո գնում էիր Մընկոնեց խանը, գտնում էիր ֆուրգունչի Պոտոյին և առանց հերթի տալիս իրան, որ տանի Օլթի և տեղ հասցնի: Եվ ֆուրգունք

խաղաղ ճոճուալով տանում էր նամակդ և «յուրախ ժամու» հասցնում էր տեղ: Հանգիստ, հեշտ և արագ...

Հիմա ի՞նչ: Հիմա պետք է հերթի մարդ դառնաս, ժամանակ կորցնես, ձայնդ մշակես, ջղեր նվագես...

Բայց ես մի հնար գիտեմ այս դրությունից դուրս գալու: Նախ՝ սեղանը ցեմենտով ամբասցնել հատակին, գրիչները երկաթալարով կապել սեղանին, քաղաքացիներին շղթայով կապել գրիչներին, որ գոնե գրիչի հարցը լուծվի մի կենտրոնական հիմնարկում:

Ապա՝ երբ մի անգամ հերթը քեզ հասավ՝ մի անգամից էլ զնիր Հայաստանի բոլոր բլանկներն ու մարկաները, և այս հարցն էլ այսպես լուծիր:

Իսկ երբ հասար ծառայողին՝ միանգամից ուղարկիր բոլոր դրամներդ, բոլոր խնայողությունդ:

— Բայց մինչև այդ՝ մնաք բարով, ես գնում եմ:

— Ո՛ւր:

— Թիֆլիս, դրամս հեռախոսով փոխադրելու...

— Հեռախոսով:

— Այո: Ատեցի ես հեռախոսն էլ, հեռացանցն էլ, հեռագիրն էլ, ու հիմնարկների գրա-կանությունն էլ...

Ես կտանեմ և սա կլինի հաշտ, հեշտ, հանգիստ ու արագ:

1926 թ.

ՊՈՒԴԲՈՒ, ՄԱՅԹԻ, ՊԱՏԵՐԱՄԲԻ ԵՎ ՀՐԴԵԼԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Պուդրին Երևան են բերում Թիֆլիսից, Մոսկվայից, ձեռքի վրա մին-մին ծախվում է Հուճապատանից եկած գաղթականների գրքապաններում: Հետո մին-մին էլ, երբ բռնված կոնտրաբանտ է լինում և աճուրդով ծախվում:

Այս պուդրու բանը մի քիչ հետաքրքիր է:

Պուդրին որքա է գալիս հեռու կենտրոններին և համար է

ընկնում երկաթուղիներով, նսվերով, ուղտերով: և Լարդկանց ձեռքերով: Գնչեր-ցերեկ մեքենան հեալով թռչում է, ուղտը տնկտընկալով գալիս ու գալիս... և վերջը երևակայում եք, խորհրդավոր, ականակիր գիշեր, Արաքսի ափը, ջրերի կասկածելի շրփոց, ձյունախառն անձրև, հետո մյուս ափին, ժայռի տակ՝ կասկածելի սովորներ... ահա՛ ինչ-որ նավակ... խորհրդավոր սովորները նրատում են մեջը: Նավակը գալիս է մեր ափը... ահա անցան, դուրս եկան ցամաք և ուզում են կածանով դեպի սարը փախչել:

— Շրախք, շրախք...

Պայթում են հրացանները և երկու սովեր փռվում են գետնին:

— Շրախք, շրախք...

Սովերները կանգ են առնում և սահմանապահները կամեջ արած երկու սովերի՝ մաքսատու, են տանում:

Մաքսատուն: Սահմանապահ մասի պետը: Սվիններ, երկու արևահար դեմքով կոնտրաբանտներ ժրնգժրնգացնելով ճերմակ ստամենքը՝ մտիկ են տալիս բանաձևապահներին:

— Ին՞չ էիք անց կացնում:

— Պուդրի:

— Պուդրի՞, դե պառկեցեք ուզողի տանը մեկ տարի, որ խելքներդ գլուխներդ գա:

Եվ Ալին ու Ալեքսանդրը պառկած են ուղղի տանը, փորերի վրա ու միտք են անում, միտք, թե սա ո՞նց եղավ:

— Ալեքսանդր:

— Հը՞:

— Այլի, էս ո՞ւր ընկանք:

— Սուս կաց է, սուս կաց:

Լուռությամ:

— Ալի:

— Հը՞:

— Ախր, մի մտածիր, տասնհինգ տարի է էս գործի վրա ենք:

— Ի՞նչ բանի վրա ենք է... հա փախչել, հա փրավորվել, հա սպանվել: Ախր, ինչո՞ւ համար է: Հասածն ու Պետրոսն էլ սպանվեցին:

— Ախր, ինչո՞ւ համար է:

— Ես գիտե՞մ ինչու համար:

— Ենթադրեցի թան ազիզ խանութի քրոն համար...

— Ինչու համար, թանգազիզ խանութի, նաև մեր հարևան Բավականի, օրիորդ Քիշմիշի, քյավառեցի վաճառականի կնկա՝ Վարդիշաղ խանութի քթերի համար:

Քթեր: Չորս հազար տարի մեր հայ ազգն աշխատանք է գործ դրել այդ քթի շենքի վրա և դուրս է բերել բավականին առատ, արժանապատիվ, հիմնավոր և խիստ կարևոր քիթ:

Ահա այդ քթի համար:

Եվ եթե Ալին ու Ալեքսիբը կամ սպանված Հասանն ու Պետրոսը լավ գիտակցեին կամ տեսնեին այդ քիթը, էլ հավե՞ս կունենային կոնտրաբանդիստ լինելու:

Սահմանապահի ի՞նչ կարիք կա: Այդ քիթը, որ տարվի սահման և ցույց տրվի Պարսկաստանին՝ ոչ մի պուզրի չի անցնի այս կողմը:

Չէ՞ որ կոնտրաբանդությունն էլ մի լոթիություն է, երբեմն հանուն գեղեցկության:

Միայն պուզրի՞ն է: Մեր քաղաքում արդեն սկսել են մի քանի կուլտուրական բաներ ևս գործածել:

Օրինակ, Աբովյան փողոցի վերին մասերում եզատերերն ու իշատերերը սկսել են մայթ գործածել: Իրենց եզներին ու էշերին ըշում են մայթի վրայով:

Եվ լավ են անում, մայթն ավելի հարթ է, քան խճուղին:

Մեր թաղեցի Հայկանուշ խանութը ֆոնդի սենյակի հատակն է գործածում փայտ ջարդելու համար:

Հատակն ավելի հարթ է, քան բակի գետինը:

Մարդը քաղաքակրթվել է:

Բայց Հայկանուշ խանութը հրդեհ էլ է գործածում:

Բենզինը լցնում է «Գրեցի» մեջ և վառում:

— Հրդեհ կրնկնի, Հայկանուշ խանութ:

— Ես գիտեմ իմ բանը:

— Դե, Հայկանուշ խանութը, Հայկ նահապետի թոռունահին, որ կողքին ընկավ, հազար գործկոմ չի հաղթի նրան:

Բակի տեղորն է Հայկանուշ խանութը:

Գորգերը թափ է տալիս գլխիդ, աղբը ածում է գլխարկիդ վրա, պատշգամբը վերածում է արտաքնոցի:

Ոչինչ չես կարող անել:

Մարդը քաղաքակրթվում է:

Նա գիտե, որ կրթված մարդը հատակ պիտի գործածե փայտ ջարդելու համար, պատշգամբ՝ կեղտի համար, գլխարկ՝ աղբաշուրջ թափելու համար, և, վերջապես, հրդեհ, որ իմացվի, թե Հայկանուշ խանութն էլ ազատ է ամեն բան անելու և մեծ քաղաքների սովորույթները մտնելու:

1926 թ.

ԿԱՄ ԵՆԵՐԻՅ, ԿԱՄ ԵՆԵՐԻՆ

Ասում է՝

«Ղանլի դարա» — արյունոտ ձոր... կամ՝ «Զհանդամ դարասի» — դժոխքի ձոր: Կամ՝ «Սախկալ թության» — մորուք բռնող: Կամ՝ «գեղան գյալմազ» — զնացողը ետ չի գա...

Ի՞նչ սարսափելի անուններ, ի՞նչ իսկապես դժոխային վայրեր:

Հիշում եմ փոքր ժամանակս ինչպես էի զարզանդում, երբ անցնում էինք այդ զանլի դարաներով ու ջհանդամ-ցարափներով՝ հասակավոր տղամարդիկ սկսում էին բարձրաձայն կարգալ «Հավատով խոստովանիմը», կանայք «Տեր ողորմյա» էին երգում: Ու մինչև դուրս էինք գալիս այդ Սախկալ թությաններից ու Ղանլի դարաններից՝ հոգիներս արդեն մեղանից առաջ դուրս եկած էր լինում:

Հիմի, Երևանում, բանը մի քիչ ուրիշ տեսակ է:

Որ ասում են՝ Դաշլի-Քյուչա, Նազարովսկի, Արմյանսկի, Թափաբաշ, ինչ խոստովանեմ՝ սարսափս բռնում է:

Եների պատճառով:

«Գեղան-գյալմազ»:

Այո, զնացողը ետ չի գա:

Հենց այն բժիշկը, որին կատաղած շները կծեցին ու զնաց թիֆլիս, շգիտեմ Պասսյոթի կայա՞նը, թե՞ «Պասսյոթի մոտ»:

Գուցե նա ետ գա, բայց շները ձեզ կայմեջ են անում Դաշլի-Քյուչում և ուզում են ընթրել, էլ ի՞նչ ետ կգառնանք, եթե մտնենք շների փորը:

Այլ քեզ և գեղան-գյալմազ:
Երևանի շրջակա փողոցներում այնպիսի տեսարաններ են պատահում, որ կոտորն ընկած կինոներին կարող են փրկել:

Տրյուկնե՞ր եք ուզում — «Նաիրի մի գնաք», գնացիք Թափաբաշ, Մեյդան, Արմյանսկի փողոց...

Անցյալ գիշեր մի այնպիսի տրյուկ արի, մի այնպիսի սալտոմոտալ, որ ես էլ վախեցա:

Անցնում էի նազարովսկիով (երևակայում եք)...

Մուժ գիշեր... Մենակ... Շուրջս աֆրիկյան անասատային լոռթյուն (երևակայում եք)...

Հանկարծ...

Հանկարծ բակերից դուրս են թռչում գամփոններ, բարաքներ, քոթոթներ-բուլդոզներ և շների բոլոր նվիրապետությունը և առանց հարցնելու, թե ո՞վ եմ, ի՞նչ անձնավորություն եմ և որ վերջապես ինձ համար գիտություն և գրականություն և զբաղվող մարդ եմ և ոչ ոքի չեմ դիպչում՝ կալմեջ արին ինձ ու սկսեցին սեղմել պատին: Սկսեցին համա տեսնել և նկատեցի, որ սրանք ընթրիքի պատրաստություն են տեսնում և բանկետ են ուզում տալ:

Ձեռնափայտով խփեցի մի տան պատուհանի և վախեցրի սենյակում նստողներին:

Սրանք դուրս պրծան և ինձ ազատեցին ընթրիքի սեղանին մասնակցելուց՝ իբրև երկրորդ բլյուզ:

Աստված տվեց, հեռվից ճամփորդներ երևացին, որոնց հետ կոռպերատիվ միություն կազմեցինք — փողոցներով անցնողների կոռպերատիվ միություն — և անցանք գնացինք մեր տները:

«Օր առաջին»:

Հիմի լավ եմ, փառք իմ աստծուն՝ ողջ և կենդանի նստած եմ սենյակումս՝ տեսնենք վաղն ինչպես կլինի:

է՛, օրեցօր ապրում ենք:

Եթե այս ձմեռն անցկացնենք և անփորձ գարուն հասնենք՝ երեք քույր մի եղբայր ենք:

Հիմի սկսել են թունավորել կարծեմ... շներին:

Ասում եմ «կարծեմ», որովհետև Սունդուկյան փողոցում ականատես եղա մի գեպի, որ թույնը բերել զցել էին երկրորդ հարկի պատշգամբը և գնացել:

— Չիմացանք ում համար էր:

Պատահաբար շունը կերավ և սատկեց:
Արդյո՞ք այդպես պիտի լիներ...
Եվ հետո ուրիշ հարց:
Եթե շներին են թունավորում — արդյոք որոշված է, թե ո՞ր շներին:

Ասում են թափառական շներին:

Բայց եթե տեր ունեցող շունը բակից դուրս է թռչում և սկսում է «թափառել», դա մտնո՞ւմ է հաշվի մեջ, թե ոչ:

— «Գործից, գործից», գործնական առաջարկ — կասեք դուք ինձ:

Գործնական առաջա՞րկ — համեցեք:

Տան դուրը բաց է մնում՝ թունավորեցեք այդ դուրը: Կապած թուղ կտրո՞ւմ է՝ թունավորեցեք այդ թուղը: Շա՞նը կապողը չի կապում (շարունակեցեք ինքներդ):

Ապա ի՞նչ...

Ընթրիք դառնանք, շներին մեղմով պահեն:

Այսպես է:

Կամ թունավորեցեք բոլոր շներին և մեզ ազատեցեք նրանցից, կամ բոլոր անցորդներին թունավորեցեք և ազատեցեք շներին:

Կարձ՝ կամ շներից, կամ՝ շներին:

1926 թ.

ԿՈՆՅԵՐՏ

Ուշ երեկոյան գնում էի տուն:

Ձյունն այնպես էր թափվում վերևից, որ կարծես մանդատ ուներ: Հեռվից լսեցի մի երկար սուլոց, և գնացի այն կողմ:

Միլիցիոներ էր: Անդադար փչում էր:

Մոտեցա իրեն.

— Կոնցե՞րտ կա:

— Ի՞նչ:

— Կոնցե՞րտ կա, ասում եմ:

— Ի՞նչ կոնցերտ, շե՞ս տեսնում ինչ ձյուն է:
— Ձյունը տեսնում եմ, բայց հեռվից լսելով «ձայներ»՝ եկա տոմս առնելու:
— Ասում եմ՝ կոնցերտ չկա,— կտրեց միլիցիոնները և կրկին սկսեց փշել շվին: Եվ դարձյալ երկար, երկար... մտածում եմ. ինչպես թե կոնցերտ չկա: Կռիվ չի պատահել, մարդ չի ընկել փողոցում, գողութուն չկա, ինչո՞ւ է սա փշում իր շվին: Երևի սիրում է փշել:
Դարձյալ ընդհատեցի նրան.
— Դու երաժշտութուն սիրո՞ւմ ես:
— Ջանրմ, սպասիր է:
— Չէ, իսկապես, երաժշտութուն սիրո՞ւմ ես:
— Ինչո՞ւմն է բանը:
— Սիրելիս,— դարձա նրան,— դու երաժշտական ընդունակութուն ունիս:
— Ի՞նչ ընդունակութուն:
— Երաժշտական: Լավ շվի ես ածում: Եվ դու գիտե՞ս, որ քո նվագածն էլ նոկալուրն է կոչվում: Նոկալուրն — նշանակում է գիշերային երգ: Այդ հանգիստ և մի քիչ թախծալի բնութուն ունի: Քո նվագն էլ այդպես է: Դու իսկական տաղանդ ես, բայց ախոս, որ քեզ լսող չկա:
— Ես էլ էդ եմ ասում,— արթնացավ միլիցիոններս բարկացած,— ամբողջ մի ժամ է փշում եմ, փշում, չկան, չեն երևում...
— Առդիտորիա՞ն:
— Հա, էլի, դոնապանները:
— Դոնապանները... օ՛, դրանք շատ աներաժշտասեր ժողովուրդ են: Դրանցից Մոցարտ չի դուրս գա:
— Բախկալ էլ չի դուրս գա, ի՞նչ Մոցարտ:
— Դոնապանները մի բանի պետք են՝ քնելու:
— Այո, ցերեկը քնում են, ասելով թե գիշերը չեն քնել, գիշերը քնում են՝ ասելով, թե ցերեկը չեն քնել:
— Տեսես՝ ո՞րտեղ են հիմա,— հարցրի ես:
— Որտե՞ղ, գնա տասը ժամ փնտրիր, որ գտնես տեղերը:
— Ապա որ սուր կարիք լինի նրանց գտնելու՝ ի՞նչ պիտի անել:
— Դոնապան պիտի գտնել, որ գնա նրանց գտնելու:

— Զարմանալի ժողովուրդ է:
— Դոնապանները երկու շնորհք ունեն: Մեկ՝ չեն երևում այն ժամանակ, երբ պետք են և երևում են այն ժամանակ, երբ պետք չեն:
Միլիցիոնները նորից սկսեց փշել իր շվին:
— Տես՝ թե չեշուտի համար մեկն էլ ա երևո՞ւմ ա: Ո՞վ ա իմանում, ձյուն է, գիշեր, ի՞նչ կպատահի:
Ես նոր սկսեցի շորս կողմս նայել: Իսկապես, որ էլեկտրասյուների թելերը ծանրաբեռնված, խարխուլ կտուրներին ձյունը դիզված:
— Նայիր,— ասացի ես,— այն տան կտուրը կարող է փլչել:
Միլիցիոններն անհանգիստ շարժում արավ:
— Կարո՞ղ ես մի իմաց տուր տանեցոց, թող դուրս գան կըտուրը մաքրեն:
— Ինչու չէ:
Գնացի, պատուհանը ծեծեցի և կանչե՛ի դուրս, որ կտուրը մաքրեն: Սկսեցին մաքրել:
— Բայց մեկին իմաց տալով բան դուրս չի գա,— ասաց միլիցիոնները և սկսեց կատաղի կերպով փշել իր շվին:
— Այստեղ եմ,— ասացի ես,— էլ ի՞նչ ե՛ ուզում:
— Մի գնա այս շարքի բոլոր սենյակներին էլ իմաց տուր, թող մաքրեն, վտանգը մեծ է:
— Շատ լավ:
Գնացի:
Հետևիցս դարձյալ շվոց.
— Հա, լսում եմ:
— էս շարքը, որ իմաց տաս, շուտ տուր մյուս շարքը և իմաց տալով արի մոտս:
— Շատ լավ, շատ լավ:
Գնացի: Եվ գնալիս մտածում էի, արդյոք դոնապաններն իրենց տեղումը չէին, միլիցիոններն իր տեղում, թե՞ ես իմ տեղում չէի:
Ես իմ տեղումն էի փաստորեն և կատարելապես՝ «դոնապան ոտից մինչև գլուխ», դոնապաններն էլ իրենց տեղումն էին գինու տակառների մեջ, «ոտից մինչև գլուխ»:
Միայն միլիցիոններն իր տեղում չէր: Եթե նա երաժշտութուն է

սիրում, նա պիտի գնա իր կողման հիմնարկը — կոնսերվատորիա: Թե չէ՝ փողոցում ի՞նչ կոնցերտ կարելի է տալ, այն էլ մի այնպիսի խալիսի համար, ինչպես քնած դռնապաններն են:

1926 թ.

ԲԱՆԳՅՈՒՂՋԻՆՈՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՄՐՅԱԿԻՑՆԵՐԸ

- Խորհրդային Զամբյուղի խմբագրութունը որտե՞ղ է:
- Խորհրդային զամբյուղի՞:
- Այո՛:
- Այդպիսի լրագիր չկա Երևանում:
- Կանգնել իրար երեսի ենք նայում, երևում է, որ նորեկ է:
- Ընկեր, գուցե «Խորհրդային Հայաստանի» խմբագրութունն եք հարցնում:
- Ոչ, Խորհրդային Զամբյուղի:
- Այդպիսի լրագիր չկա Երևանում: Կա «Խորհրդային Հայաստան», «Մաճկալ», «Ավանգարդ», «Հայաստանի աշխատավորուհի», «Կարմիր գինվոր» և այլն, բայց «Խորհրդային Զամբյուղ» լրագիր չկա:
- Նորեկը նեղացավ:
- Հինգ տարի է աշխատակցում եմ այդ լրագրին՝ ինձ բա՞ն եք սովորեցնում: Գիտեմ, որ Երևանումն է հրատարակվում, բայց ինչպես է, որ այդ լրագիրը ո՞չ հայտնի է, ո՞չ էլ կարելի է տեղը գտնել: Ո՞ւմ հարցնում եմ, չգիտեմ:
- Կավ, դուք տեսե՞լ եք, կարդացե՞լ եք այդ լրագիրը, որին աշխատակցում եք:
- Ժամանակ չունեմ կարդալու:
- Ինչո՞ւ ժամանակ չունեք կարդալու:
- Որովհետև գրում եմ շարունակ:
- Գրո՞ւմ եք շարունակ...:
- Այո, գիշեր-ցերեկ...:
- Ինչի՞ մասին եք գրում:

- Տարիֆ-տնտեսական, կուլտուր-կրթական, սեկցիոն-կազմակերպչական, կազմա-սեկցիոնական, հրահանգչական, շրջ-հրահանգչական...
- Սպասեցեք...
- Գավառապետական, քաղաքավարական, գլխավարական...
- Կավ, լավ, լավ, լավ, լավ:
- Կամ խնդիրների մասին: Ապա նաև Հապոնա-չինական, չինա-ճապոնական, անգլո-չին-ճապոնական և համաշխարհային խնդիրների մասին...
- Հետո՞, բոլորը տպվո՞ւմ են:
- Բոլորը անխտիր:
- Ինչի՞ց գիտեք որ տպվում են:
- Բարեկամս ինձ միշտ նամակով իմաց է տալիս, որ ինքը տեղեկանում է, որ իմ բոլոր գրութունները հաճախված են Զամբյուղին, Խորհրդային Զամբյուղին:
- Որ այդպես է փնանք գտնենք ձեր այդ թերթը և նրա խմբագրին: Ձեր ազգանունն ինձ բախշեք:
- Չաջողակյան: Ձե՞րը:
- Համարյա ձերի պես մի բան է:
- Ինչպե՞ս թե:
- Այնպես որ... ինչպե՞ս ասեմ... ես իմ աշխատակցած լրագիրը կարողանում եմ գտնել, բայց ես էլ իմ հոգվածները մեջը չեմ կարողանում գտնել:
- Զամբյուղին աշխատակցեք:
- Այդպիսի միտք ունեմ: Որտեղացի՞ եք:
- Թղթաշենցի եմ:
- Հիմա դուք ինչո՞ւ եք եկել:
- Հայաստանի բանգյուղգինթղթակիցների խորհրդակցության:
- Բանի անուն տուր, մենք նրանց չենք հավատում:
- Գո՞ւր, այսինքն, ո՞վ:
- Մենք բանգյուղգինթղթակիցներս: (Այսպես էլ ենք կոչվում):
- Բացատրեցեք բառը, մի քիչ օտարազգի է: Գուր գրո՞ւմ եք, թե թխում:
- Գրում ենք, բայց ուրիշ տեսակ: Մենք նախ և առաջ միև-

նույն միտքը ծեծում, ծեծում, շինում ենք ալյուր, հետը ջուր ենք խառնում...

— Եվ՞ աղ, իհարկե:

— Ո՛չ, առանց աղի, ջուր ենք խառնում ու լավ շաղախում ենք, հետո արագ-արագ տաք-տաք գնդում ենք ու պցում փուռը, հողվածը պատրաստ է:

— Հա, իհարկե, այդ բոլորի համար զամբյուղ է պետք:

— Իհարկե, հիմա ես եկել եմ մեր հայաստանյան խորհրդակցության: Ինքս հրահանգիչ եմ, շրջում եմ խորհրդային Հայաստանի բոլոր անկյունները և կազմակերպում բանգյուղղինթղթակիցներին: Մեր առաջադրած խնդիրներն են՝ «Մեծացնել» խորհրդային Զամբյուղի ծավալը, դարձնել ամենօյա, կազմել առանձին բաժիններ կարկուտ թխթակիցների, գալլ թղթակիցների, բանալ դասընթացներ թխելու, հետո մկրատների հարցը:

— Մկրատների՞:

— Այո՞, ուրիշի հողվածները կտրելու և հողվածի հետ շաղախելու համար: Հետո թուղթսպակոկոպի հարցը:

— Թուղթսպակոկոպի:

— Այո, մենք թուղթ սպառող ենք:

Մենք այսպես խոսելով բարձրացանք դեպի Աբովյան փողոցը:

Ճամփին պատահեց մի ուրիշ նորեկ:

— Ներողություն,— ասաց, չգիտե՞ք որտեղ է «Փոստարկղ»

լրագրի խմբագրությունը:

— Գուցե փոստարկղ բաժինը լրագրի:

— Ո՛չ «Փոստարկղ» լրագիրը, ես նրա աշխատակիցն եմ:

— Ինչե՞ր եք գրում նրա մեջ:

— Ցիտատներ, շարունակ ցիտատներ:

— Շա՞տ եք գրում:

— Ամեն օր:

— Եվ տպվո՞ւմ է:

— Ամեն օր, ամենից շատ տպվող ազգանունը ես եմ: Կանոնավոր տպվում է իմ հողվածիս վերնագիրը, անունս և տեղի անունը, որտեղից ուղարկում եմ:

Մեզ մոտեցան ուրիշ նորեկներ: Ներկայացրեց նրանց Չաչո-ղակյանը:

— Խնդրեմ, ժանոթանաք՝ կարկուտ—թղթակից Հաճախյան,

Անձրև — թղթակից՝ Առատյան, Բորենի — թղթակից՝ Բացառիկյան... Գալլ — թղթակից՝ Երբեմնյան...

Ես նրանց մեկ-մեկ հարցուփորձ արի:

— Որտե՞ղ եք թղթակցում:

— Մի քանի ամիս է էլ չեմ թղթակցում:

— Ինչո՞ւ:

— Գյուղում այլևս գալլ չկա:

— Իսկ դո՞ւք,— հարցրի մյուսին:

— Ես սպասում եմ կարկուտին: Տեսնենք կգա՞, եթե չգա,

հույսս անձրևն է:

— Իսկ դո՞ւք:

— Դեռ բորենի չի երևացել:

— Ուրիշ նյութ չկա գյուղում: Տնտեսական շինարարություն, փօօկ, կոոպերացիա, գյուղտնտեսական հարցեր...

— Դեռ չեն երևացել...

— Գուցե չե՞ք տեսնում:

— Մենք հասանք կոմերիտների ակումբը, ուր տեղի էր ունենում թղթակիցների խորհրդակցությունը: Բեմի վրա էր, ի միջի այլոց, «խորհրդային Զամբյուղի» և «Փոստարկղի» խմբագիրը: Ես ցույց տվի նրան, մեր նորեկները շատ ուրախացան և իսկույն հարցեր ուղղեցին նրան՝ թերթիկներով:

Խմբագիրը կարդաց թերթիկները:

— Ի՞նչ միջոցներ են ձեռք առնված «խորհրդային Զամբյուղի» և «Փոստարկղի» ծավալները մեծացնելու համար: Ընկերներ,— ասաց խմբագիրը,— «խորհրդային Զամբյուղը» մեծացնելու համար գործակալներ են ուղարկված Զանգիբասար և այլ եղեգնուտներ, եղեգնի պաշար տեսնելու, իսկ «Փոստարկղի» համար դիմել ենք «Առևտրի տրեստին» տախտակներ մատակարարելու:

Նորեկները ծափահարեցին, և ուրախ-ուրախ դուրս եկան սրահից, որտեղ նստած էին բանգյուղթղթակիցները՝ բոլորն էլ մռայլ և քթները կախ:

— «Զամբյուղի» մասին մտածում են, «Փոստարկղի» մասին մտածում են, բայց մեր մասին, լրագրի մասին չեն հոգում:

— Տրանջալու իրավունք չունենք, ընկերներ՝,— ասացի ես,— դուք էլ նրանց պես մշակեցիք ձեր նյութը՝ ձեր էլ օրգանը կճո-

խանա: Տեսե՞ք՝ ինչպես կազմակերպված են զամբյուղականները և փոստարկղականները... նրանց ոչ մի հողվածը փուստ չի անցնում: Աշխատեցե՛ք, ընկերներ:

1926 թ.

ԱՌԱՆՑ ՎԵՐՆԱԳՐԻ ՆՎԵՐ ԳՐԶԻ ՄԱՐԴԿԱՆՑ

Այսօր շտապում եմ. խնայողության ուժիմ է, պիտի խնայեմ ժամանակը, եռանդը... և ընթերցողներին:

- Կա՛րճ գրեցե՛ք, — ասում է խմբագիրը:
- Ամփո՛փ, — ավելացնում է քարտուղարը:
- Սե՛ղմ, — փսփսում է տեխնիկական քարտուղարը:
- Կրճատեցե՛ք նախադասությունները, — խորհուրդ է տալիս

թարգմանիչը:
— Վերջին մասը կարող եք հանել, — ասում է բան. բաժ-
նի վարիչը:

— Միջին մասը դեռ գցե՛ք, — նկատում է մի մոտ աշխատա-
կից:

— Առաջին մասը ջնջեցե՛ք, — ասում է ուղարկողը:

Այո, ճիշտ են ասում ամենքը: Ոչ թե պետք է հանել, ջնջել, կրճատել, ամփոփել, սեղմել, այլև շատ անգամ բոլորովին էլ չպի-
տի գրել:

Անգործությունն առաջ է բերում... բանաստեղծություն: Բայց բանաստեղծությունն էլ շատ անգամ չպիտի գրել: Պետք է խնայել խոսքը:

Թանա՛ք, հեղո՛ւկ թանկագին:

Շատերը կարծում են, թե դու ներկ ես ջրախառն կամ ջուր ես ներկախառն, և իբրև ջուր են գործածում քեզ. բանաստեղծները, գրամատուրգները, վիպասանները, թղթակիցները, հողվածագիր-
ները...

Թույլ տուր, ո՛վ թանաք, այստեղ ընդհատեմ գրելս և խնայեմ

քեզ:

1926 թ.

ԱՌԱՋԻՆ ԿՅՐԳԻ, ԵՐԿՐՈՐԳ ԿԱՐԳԻ, ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ... ԳԵՐԵՉՄԱՆՆԵՐ

Երևանում շատ մարդ սովորություն չունի մեռնելու:

Ասենք, ոմանք ուղղակի մոռացել են, ոմանք էլ զգուշանում են բնակարան փոխելու անակնկալ անախորժություններից:

Եվ ինչպես վերջը բացվում է՝ բավականին անհարմարություն-
ներ կան մեռնելու: Ու եթե սխալվում ես, մեռնում՝ այնպիսի մի
խաթի մեջ ես ընկնում, որ եթե հուղարկավոր բազմությունից շա-
մաչես, որ արդեն մի ագամ հրավիրել ես հուղակավորությանդ
հանդեսին՝ ուղղակի փողոցից ետ կդառնաս:

Նախ և առաջ ճանապարհորդ. Այստեղից մինչև կայարան: Գնա,
որ վերջանա:

Ախր իմացել էինք հավիտենականության ճանապարհ, բայց
այդքան էլ հեռու հավիտենականություն չէինք իմացել:

Մեռել կդիմանա — այդքան հեռավորություն:

Եվ ահա հենց ճանապարհ ես ընկնում՝ քեզ ուղեկցում է մի
զարհուրելի ցեխ, ավելի ճիշտ՝ մի երկար ցեխե հողված, որ իբր թե
ընդարձակորեն ուզում է խնդիրը պարզաբանել:

Ու շատախոսում է... խոսքը ձգում, կրկնում միևնույն միտքը,
երբեմն իր գաղափարը խորացնում է մինչև ծնկներդ, երբեմն ըն-
դարձակում, ճապաղում, դառնում է ջրալի, հազար անգամ ծեծված
մտքերի շարան, երբեմն էլ նեղ անձնական խնդիրներ է շոշափում,
դիպչում է անձնականիդ, ու այսպես շարունակվելով մինչև դե-
րեզմանցի դուռը, այնտեղից մինչև գերեզմանդ էլ մի ավելորդ
ոնգյում է տալիս ու նոր միայն համառ թղթակցի պես՝ հարցնե-
լով, թե երբ գա հողվածի տպիկու մասին պատասխան ստանալու,
վերջապես բաց է թողնում օձիքդ:

Ճանապարհին քիչ գլուխդ չի ցավացնում և օրկեստրը: Կլար-
նետը ճշում է վախեցրած հավի պես, բասը խորդում է ծալլ-ծուլլ-
կորնետը զարհուրելի ֆայլշեր է տալիս: Գերեզմանափոքները՝ դեռ
չթաղված՝ փող են ուզում:

— Եղբայր, այստեղ եմ մնալու, հո չեմ փախչելու

— Չէ, տվե՛ք:

Վերջապես մտնում ես բնակարանդ, իսկույն գալիս են բնա-
կարանիդ վարձն են ուզում գլխանց:

- Հավիտենութեան վերջը չի՞ լինի:
- Չէ, տվեք գլխանց:
- Գինն ինչ է:
- 2 և կես, 5, 10, ուրիշ: Ձեր մինիմումն է — 2 և կես ուրիշ:
- 2 և կես ուրիշի՞նչ, ի՞նչ խաբար է. աշխարհքի վերջը հո չի՞:
- Էդպես է. գինը կտրած է, առանց սակարկութեան:
- Իսկ եթե փող չունենամ, չպիտի՞ մեռնեմ:
- Փող չունես՝ մի մեռնի: Պարը մտնողը պիտի շորորա:
- Լավ, այս ի՞նչ հող է, որ այդքան եք գնահատում, բոլորը քար ու ավազ:
- Օհո, ապրանք գտար ու նազ ես անում՝ էս ապրանքի սովի ժամանակ:
- Ջանք, իմ սենյակին ես տալիս էի 1 ու 50 կոպեկ, բայց կարգին սենյակ էր, փողոցի վրա, ջուրը մեջը, էլեկտրական լուսավորութեամբ:
- Ավելի էժանը չունե՞ք:
- Ո՛չ:
- Ջանք, այս ինչ խայտառակություն է: Առաջուց խոսեիք՝ կերթայի նախիջևան, Գիրիջան, Ղարաքիլիսա: Կամ վերջապես չէ՞ մեռնի. զոռի բան է:
- Չեմ ուզում ետ եմ դառնում:
- Կգնամ կոռպերատիվ գերեզմանոց կբանամ: էժան, հատը 20 կ., այնպես որ շատ մարդ կհավանի, մի քանի հատ կառնի: Այնպիսի մի գերեզմանոց բանամ, որ ողջ Երևանը կոռպերանա ու մեռնի:
- Չե՞ք պակսեցնում:
- Չէ, ձեռք չի տալ:
- Բայց ուշ է, տեսնում ես, որ անհարմար է:
- Վճարում ես ու մտնում ես բնակարանդ: Ներսից, իհարկե մոռանում ես բարեկամներիդ ցտեսություն ասել: Նրանք վերադառնում են տները, իսկ դու պառկում ես, ու քունդ բարկությունից չի տանում:
- Ջանք, էս երեք արշին տեղին երկուեկես մանեթ ոնց տաս, է՞:

- Մեկ էլ շորս կողմից ձայն կտան քեզ ծանոթ մեռելներդ.
- Հակոբի՛կ, այ տղա, դո՛ւ ես, ինչի՞ ես բարկացած: Բացատրում ես:
- Դե, լավ, լավ. ինչ եղել է եղել է, պառկի, հանգստացի:
- Ախր երկուեկես մանեթ է, քիչ է մնում հերսից տրաքվեմ:
- Միծաղում են վրադ. կատակի տալիս, բայց դու լուրջ ես դեռ:
- Բարեկամ, ինչո՞ւմն է բանը,— հարցնում ես կողքիդ պառկածներից:— Մյուս հողերը ինչո՞ւ են ավելի թանկ:
- Հարևանդ բացատրում է, որ 5 ուրիշանոց տեղերը նայում են փողոցի վրա, 10 ուրիշանոցները վիլլայի պես են, և՛ հանգիստ, և՛ ազատ:
- Լավ, ինչքա՞ն ժամանակով է տված այս բնակարանը:
- Եթե քրիստոնյա ես՝ մինչև Քրիստոսի գալուստը, իսկ եթե հեթանոս ես՝ մինչև հավիտյան:
- Լավ, եթե մեռելը չկարողանա վճարել մինիմումը երկուեկես ուրիշ:
- Պարզ է, որ պիտի վերադառնա տուն:
- Կարելի՞ է վերադառնալ:
- Հիմի մի քիչ դժվար է: Բայց անցյալ օրը մի մեռել վերադարձավ:
- Հիմա որտե՞ղ է այդ մեռելը:
- Մեյդանում ման է գալիս:
- Վճռել է շմեռնել, մինչև էժանանա:
- Բարկանում ես, գլուխդ թափ տալիս, փոշմանում՝ թե ախր ինչո՞ւ շուտ եկար:
- Ախր կարելի էր սպասել էժանանալուն:
- Իհարկե:
- Ապա մի մեռնեք՝ տեսեք ինչպես կէժանացնեն:
- Այս օրերս մի մարդու պատահեցի, որ մի քիչ ուրիշ կերպ էր դատում:
- Բան չունե՞ք,— ասում էր ինձ,— եթե մեռնելու կլինեք, հեռներդ բահ ու քլունդ վերցրեք:
- Այդ ինչո՞ւ համար է:
- Ինչո՞ւ համար: Ա՛յ, ինչու համար:
- Ձեզ երեք արշին տեղ են տալիս, չէ՞:
- Հրամանք ես:

— էդ երեք արշինը ձերն է, չէ՞:

— Այո՛:

— Փորեցիք էդ երեք արշինը, գնացեք տակը: Ինչքան հող հանեք, ձերն է: Հանեցեք մի հարյուր վազոն, երկու հարյուր, հազար, միլիոն: Հանեցեք ու ձեզ համար տնտեսութիւն սկսեցեք:

— Այդ հիանալի բան է:

— Իհարկե, հիանալի է Եվ այդ երկուեկես, 5, 10 ոտքի սահմանողները մոռացել են այդ հանգամանքը և գերեզմանի տակի տարածութիւնը չեն գնահատել:

Բրավո: Բահ ու քունդ տվեք: Ես դնում եմ:

1926 թ.

ԱՄՍՆԵՂԵՆԻ ՄԱԳԱՋԻՆ ԱՐՈՎՅԱՆԻ ՎՐԱ

Թիթեղե՛ ճերմակ, գեղեցիկ, մաքուր, երկարավուն ամաններ — շղթայով ու կողպեքով Աքովյան փողոցի ծառերի բներին ամրացրած:

Մի գլուղացու հարցրի, թե ինչ բան է այս, ասաց.

— Կաթնամաններ են:

— Իսկ շղթաներն ինչո՞ւ համար են:

— Որ կովը շուռ շտա ամանը:

Հասկացա: Եղավ:— Գլուղկոտպն է դրել, սրանց մեջ կաթ պետք է ծախեն:

Բայց ինչու մեր դռանը չկա — Բաֆֆու փողոցում:

Երևի շուտով այնտեղ էլ կդնեն այդ կաթնամաններից:

Բայց անպիտանները շատ լավերն են, նեղ, երկար, կապելու հարմար: Միայն... շատ են նուրբ և շքեղ: Իհարկե, կաթի համար մի քիչ շքեղութիւն է այդպիսի նուրբ, թանկ ամաններ գործածելը: Ահագին ծախս է և պարզապես շոտլանդացիներ: Կարելի էր ավելի հասարակը գործածել, իսկ սրանք պահել սրահներում, թանգարաններում, այո, այո, իբրև շքեղութեան և արվեստի առարկաներ: Բայց երեկ էջ ուրիշ բացատրութիւն տվին: Ասացին՝ բանկոտպն է դրել իբրև ամանեղենի ռեկլամ: Որովհետև բանկոտպի խանութների վիտրիններում տեղ չկա:

Ինչ անզգուշութիւն... Չէ՞ որ փողոցի երեխաները կարող են կեղտոտել, կոտրել: Վերջապես ոչինչ էլ որ չլինի՝ կարող է մեջը փոշի, կեղտ լցվել:

Եվ արդեն մի քանիսի մեջ մինչև անգամ պապիրոսի կոթեր տեսա...

Ուրքե՛ր են այդ անկարգները. ինչ վայրենութեան: Պապիրոսի կոթերի համար սենյակի հատակ չկա՞, մայթ չկա, վերջապես փողոց չկա՞:

Այսպես մտածելով գնացի գեպի հաճախարան: Ծամփին մի ուսանող պատահեց: Ասացի՝ սրան հարցնեմ

— Հնկեր, այս ի՞նչ ամաններ են:

— Օղերևութարանական կայանի անձրևաշափներն են, — ասաց ուսանողը:

Բայց մի բժշկական ուսանող ասաց, որ այդ ջրամաններ են 1-ին հիվանդանոց-ամբուլատորիա այցելող հիվանդների համար, որ ամառվա շոգին ճամփին չմեռնեն, ալլ ջուր խմելով՝ տեղ հասնեն և ցուցակագրված մեռնեն:

Այստեղ ես ոտիս տակի հողը բոլորովին կարցրի: Վերջապես ի՞նչ ամաններ են. պետք է հաստատ իմանայի, թե ոչ:

Ներքև գալիս տեսա մի խումբ երեխաների, որ հերթով մոտենում էին այդ ամաններին և մեջը պապիրոսի կոթեր էին դրում և թքում ասելով.

— Հլա մի սիֆթա անենք:

Ես մոտեցա միլիցիոներին.

— Այս ի՞նչ բան է, ի՞նչ են անում:

Միլիցիոները ժպտաց.

— Այդպես էլ պետք է. սրանք մոխրաման-խոթամաններ են: Գրված է, որ փողոցը մաքուր մնա:

— Մոխրաման. ինչպե՞ս թե: Մոխրի, պապիրոսի համար բաժակ կամ ափսե չկա՞... Բանկոտպի ճաշադասանամ (որ ալիքի էլ էժան է...) հաճախողները թեյը խմելուց հետո ծխում են և պապիրոսի մոխիրն ու կոթերը հանգցնում ափսեի կամ բաժակի մեջ և թողնում այդպես:

— Ինչո՞ւ մոխրաման չկա:

— Մոխրաման կա: Բայց դեռ ե՞րբ պետք է մեր «կոթված» մաքրաբաժակից անցնի մոխրամանի:

Ես հեռացա միլիցիոններից և սկսեցի մտածել: Ում համար են այդ ամանները: Եթե գյուղացու համար՝ ապա փողոցով ամենից մաքուր անցնողը գյուղացին է: Մարդը քիթը սրբում է փեշով, իսկ նրա թուփունը կոթ չունի, մուշտուկով է: Եթե բանվորի համար է՝ բանվորը իր գործով զբաղված՝ քիթը սրբելու ժամանակ չունի: Եթե ծառայողների համար է՝ նրանք ամբողջ օրն իրենց ծառայատեղումն են և թքի ու ծխախոտի համար հիմնարկների հատակներն են գործածում: Հատակներ, որ ավելի մեծ են, ազատ, հարմար (տեղից շարժվելու կարիք չկա) և գլխավորը... մաքուր (կնիկը ամեն առավոտ ավլում է):

Եթե խուժանների համար է, ընդհակառակն, սրանք ծխախոտի կոթերը հավաքում են և ոչ թե դեն գցում:

Գուցե կարծում են, որ այդ մեր բանաստեղծների, դրամատուրգների, դերասանների և առհասարակ ինտելիգենտների համար է: Բայց սրանք Աբովյանով անցնելիս զբաղված են այնպիսի վերացական հարցերով, որ աշխարհն անգամ չեն տեսնում, ուր մնաց մոխրամանները: Գուցե այդ կառապանների, սալապանների և շոֆերների համար է: Բայց սրանք էլ իրենց ծոծրակը կտեսնեն՝ Աբովյան փողոցը՝ երբեք:

Տեսնենք, ինչ դուրս կգա այս կոմպանիայից: Ինչ էլ որ ասելու լինենք՝ ամանները դրված են, և քաղաքացիները մի որևէ վերաբերմունք պետք է ցույց տան: Լավ որ մտածենք, կնկատենք, որ այդ ամանները քվեատուփեր են, ուր ամեն քաղաքացի պիտի գցի իր քվեն. «կողմնակից եմ մաքրության և դեմ եմ կեղտոտության»:

Այն ժամանակ, ով կողմնակից է մաքրության՝ նա իր քվեն կգցի այդ ամանների մեջ: Իսկ ովքեր հակառակ են, իրենց քվեն կգցեն հենց իրենց հիմնարկի հատակներին: Ձեռնպահներն էլ ամեն տեղ:

Եվ արդեն սկսված է պայքարը: Ոմանք կողմնակից լինելով փողոցի մաքրության, իրենց քվեն գցում են այդ ամանների մեջ, իսկ մյուսները փողոցում, մայթի վրա: Վերջիններից մեկին մոտեցա երեկ և հարցրի.

— Ինչո՞ւ եք փողոցը կեղտոտում:

— Իսկ նրանք ինչո՞ւ են ամանը կեղտոտում: Ո՞րն է գերադասելի, փողոցը մաքուր լինի՞, թե ամանը:

Այսպիսով, քաղաքը կբաժանվի երկու մասի. փողոցակառուցների և ամանակառուների: Եվ վերջը կտեսնենք, որ այս երկու ֆրակցիան էլ միևնույն բանն են սովորեցնում մեզ: Մաքրություն, ամանները կեղտոտելով՝ փողոցը պիտի մնա մաքուր, փողոցը կեղտոտելով՝ ամանները: Բայց որովհետև ոչ մի ֆրակցիան վերջնականապես չի հաղթելու — այսինքն ամանների մեջն էլ կեղտոտ կլինի, փողոցն էլ, — ուստի և մենք կսովորենք, որ փողոցն էլ պետք է մաքուր պահել, ամաններն էլ, կամ եթե կեղտոտվում են՝ թող փողոցն էլ կեղտոտ լինի, ամաններն էլ:

Ես կարծում եմ, որ կգա ժամանակ, որ մենք կսովորենք... ամանների մաքրության: Որովհետև հիմնարկի մեջ աման, մոխրաման, թքաման չգործածողը փողոցում ինչ աման գործածող է...

Դուք երևակայում եք ծառայողի միջակ տիպը, որ սեղանի մոտ նստած՝ ծուլանալով մի քիչ հեռու դրած մատյանը վերցնել՝ կանչում է աշխատակից կնկան ու ասում է.

— Բան, ը, ինչ է անունը, ըն զատը, հա, նազու, մի էն բանը դեսր տու... բանը... ը, դու ասա... էն թավթարը...

Սա է տեղից վեր կացողը և մոխրաման թղթաման, թքաման գործածողը:

Եվ վերջապես շատ հիմնարկներում ոչ մի աման էլ չկա, աստծու հատակն է: Թքիր, գցիր՝ ինչ ուզում ես:

Մնում է գրել քաղաքացիների աստծուն: Դուք ու ձեր աստվածը: Իհարկե, բարեխիղճ մարդիկ էլ են պատահում, որ...

Այ, պատմեմ: Անցյալ օրը շտապ-շտապ մի հիմնարկ էի մըտնում (ուր ոչ մի աման չկար) և պատահեցի մի շատ հարգելի բարեկամի:

Ասացի ինչպես է ձեր առողջությունը:

— Այս բոպեիս, — ասաց ու դուրս վազեց:

Սպասեցի: Հինգ բոպեից հետո վերադարձավ և ասաց. փառք աստծո, լավ եմ, դուք ինչպե՞ս եք:

Այն է՝ պիտի պատասխանեի, որ նորից ներողություն խնդրեց և դուրս թռավ: Սպասեցի: Հինգ բոպեից հետո եկավ, և ես ասի: Շնորհակալ եմ, լավ եմ: Բայց — ասի, ո՞ւր գնացիք այս երկու անգամն էլ:

— Աբովյան փողոց. առաջին անգամ ծխախոտիս կոթը գցելու ամանի մեջ, իսկ երկրորդ անգամ թքելու:

— Մեղ ըլելի, աշքերիդ կպչի, Աղճո,— լացակումեց մյուսը:
— Ազգ ենք, պիտի շնանք բա սնց կլի,— խոսեց Աղճոն խո-
րասույզ ձայնով:

Ու դարձավ կնոջը.

— Մոմերը վերցրի՛ր:

— Վայ, մոմերը մնաց,— վեր թուավ կնիկը օձի կծածի պես
աւ իրեն վար նետեց ֆուրգոնից՝

— Կերավ, կերավ ինձ, էս շան ծիծ կերածը: Ասոված ո՞ւնի
սա, խիղճ ո՞ւնի...

— Այ, ես քո օրենքն ու մասսաբը,— անցավ կլասիկական
լեզվին Աղճոն ու կատաղեց:

Վերջապես կնիկը մոմերի կապոցը ձեռին դուրս վազեց տնից
աւ դուռը կողպելով, եկավ նստեց ֆուրգոնը:

Ամենքը պա ռբաստ էին: -

— Յա սուրբ մեռոն...— ասաց Աղճոն ու մտրակեց ձիերին:
Ֆուրգոնը կշռուաց, խոխոաց, ու գնաց Աղճոն հավատը սրտի
մեջ, սպրաւքը ֆուրգոնում և հայհոյանքը բերանին:

Համ զիարաթ, համ թուշարաթ:

Այսինքն՝ համ ուխտագնացութիւն, համ վաճառականութիւն:

Գեո երկար ժամանակ հարեան կնիկները նայում էին ֆուրգո-
նի հետևից՝ լացակումած աշքերը՝ հեռացող աշքերին:

— Մեղ ըլելի, աշքերիդ կպչի, Աղճո...

1926 թ.

ԱՊՐՈՒՄՆԵՐ ԳԱՇՆԱԿԱՀԱՐ ԵԳՈՆ ՊԵՏՐՈՒ ԿՈՆՅԵՐՏԻՆ

Ծգոն Պետրին...

Ո՞վ:

Ծգոն Պետրին, հայտնի դաշնակահարը: Սրեանի Կուլտուրայի
տան սրահում ունկնդիրների հոծ բազմութիւն: Նա էստրադի
վրա է: Արդեն սկսում է: Բեթհովեն,— «Լուանկայի» սոնատը...

Գո-մի-սոլ, դո-մի-սոլ, դո-մի-սոլ, դո-մի-սոլ:

— Իսկ ինչու այս հիմնարկում չեն դնում այդ ամաններից:
— Որովհետև հիմնարկներում ծառ չկա,— որտեղ կապեն
ամանները:

— Ահա՛ ա՛հա՛...

1926 թ.

ՊՈՉ ԵՎ ՀԱԿԱՊՈՉ

Մեր կենտրոնական փոստը մի որևէ գործով մտնող մարդը
պետք է... անկործ լինի:

Եթե որևէ հիմնարկի ծառայող ես, լավ կլինի արձակուրդ
վերցնես օրապահիկով:

Որովհետև փոստ զնալը նշանակում է գործուղում:

Փոստ գնացողը պետք է նրան տրամդրի իր ետանդը, ժամա-
նակը, անձը, պետք է ուղղակի նվիրվի փոստին:

Փոստը սոլորեցնում է... անհամբերութիւն՝ եթե զանդաղ և
անտարբեր ոմն եք. ձեզ դարձնում է կինդանի և գործունյա մարդ,
ձեզ արտահայտիչ դեմք է տալիս, աշքերը լցնում սրբազան բար-
կութիւն կրակով, դուք դառնում եք մտածող մարդ... ըսյց այս
ամենը .. կանգնած վիճակում, հերթի մեջ, անշարժ:

Իսկապես ասած՝ փոստ գնացողը ո՛չ մտրկա առնելու կա-
րիք պիտի ունենա, ո՛չ նամակ ուղարկելու, ո՛չ դրամ ստանալու և
ո՛չ հեռագիր տալու:

Եթե այս կարիքները չունենք՝ շատ հարմար է փոստի հերթում
կանգնել ու երազել:

Եվ փոստ գնացողն էլ մի բանի վրա է միշտ երազում:

— Գնալ, գնալ մի որևէ փոստ, մարկա առնել, նամակ
ուղարկել, դրամ ստանալ, հեռագիր տալ...

Ահա մի օր էլ այդ երազների մեջ՝ կանգնած էի հերթում և
մտածում էի փոստում անցկացրած օրերիս մասին, երբ ինձ մո-
տեցավ հին բարիկամներիցս մեկը, որին մի տարի է շէի տեսել:

Նա բուլղոսովին սպիտակել էր:

Բարեկեցիք իրար:

— Ինչպե՞ս եք,— հարցրի:

— Ոչինչ, լավ եմ,— ասաց:

— Ներեցեք, իսկ դուք գործո՞վ եք եկել փոստ, թե հենց այն-
պես:

— Հա, այնպես, մի թեթև գործ կա, մասնավոր:

— Կարելի՞ է իմսունալ, ի՞նչ գործ է:

— Կարելի է:

— Ներկ եմ ապսպրել Գերմանիայից, եկել եմ ստանալու:

— Նկարչական դպրոց՞ եք հիմնել:

— Ո՛չ... մորուք եմ ներկում:

— Ձե՞ր մորուքը:

— Այո, և մազերս: Եղբայր, քառասուն տարեկան չկամ, բայց
մազ-մորուքս սպիտակել է:

— Ահա, հիշեցի:

— Ասացեք խնորեմ, կարծեմ ձեր հայրը, քեռին և հորեղ-
բայրը չէին, ո՛ր անցյալ տարի մի օրում մեռան, և այդ պատճա-
ռով դուք մի քանի ամիս... այսինքն ձեր խելքը ձեզ կորցրեց:

— Ոչ, հայրս, քեռիս և հորեղբայրս կատարելապես ողջ և
առողջ են:

— Այո, այո, հիշեցի, ձեր մայրն էր, որ ընկավ վելոսիպեդի
տակ և...

— Առողջ է կատարելապես և վելոսիպեդի տակ էլ չընկավ:

— Այն ժամանակ խնորեմ ինձ հասկացրեք, ինչպե՞ս եղավ,
որ դուք, այսինքն հանկարծ ծերացաք և սպիտակեցիք:

— Հա՛... այդ եք ասում: է՛հ, այստեղ եմ ծերացել, այս փոս-
տում, հերթի կանգնելով:

— Այստե՞ղ...

— Ապա ի՞նչ: Մի տարի առաջ անզուշորեն եկա փոստ դրամ
ուղարկելու: է՛հ. այնպես պատահեց, որ վերջ ի վերջո ուղարկեցի,
բայց այնքան սպասեցի, ջղայնացա կանգնած վիճակում, որ ծե-
րացա: Հիմա ներկին հմ սպասում: Խոստովանանք լինի՝ ուզում եմ
ամուսնանալ:

— Այո՛, մի քիչ որ ամուսնանայիք՝ վատ չէր լինի:

Բարեկամս հառաչեց.

— է՛հ, ծերացանք: Եվ և ինձ ծերացրեց մարկան. ժամերով

սպասում էինք մարկայի: Ժամերով կանգնում էինք պոչի մեջ: Հի-
մա մարկայի հարցը կանոնավորված է: Երկու տեղ մարկա են ծա-
խում, և կարող ես ֆուրգոններով մարկա առնել երկու կրկնա-
վայրկյանում: Հիմա էլ հակապոչն է մեզ տանջում:

— Հակապո՞չ, ա՛յդ ինչ բան է:

— Այ, որտեղ որ կանգնած ենք ես ու դուք:

— Սեր կանգնածը պոչ չէ՞:

— Ոչ. հակապոչ է:

— Բացատրեցե՛ք, խնորեմ:

— Բացատրությունը պարզ է: Նայեցե՛ք:

Ահագին հերթ էր կանգնել մի դռնակի առջև, ուր դրամ են
ստանում և փոխադրում (եթե ստանում են և փոխադրում),
Բազմության մեջ հերթը հասել էր մի քեռու, որ եկել էր կոչնագրով
դրամ ստանալու:

Մառայողը հարցաքննում էր.

— Ինչպե՞ս է ձեր անունը:

— Ի՛մ անունս:

— Այո, ձեր անունը:

— Իմ անունս Մոսեսով է:

— Ի՞նչ ազգանունդ է, ձեր անունն ասացեք.

— Անունս Ակոփ է:

— Ո՞վ է ձեզ ուղարկել այս փողը:

— Փո՞ղը:

— Հա, փողը, ո՞վ է ուղարկել:

— Ով է ուղարկել փո՞ղը:

— Հա, հա՛, փողը ո՞վ է ուղարկել:

— Խասկցա: Փողը զրկողը իմ խնամին է:

— Ձեր խնամու ազգանունն ի՞նչ է:

— Խնամու ազգի անո՞ւն:

— Հա, ձեր խնամու ազգանունը:

— Խնամու ազգի անուն վալլահ չըմ գինա: Համա մեր գե-
ղացոց անուն գինամ, Մկա, Ապրե կա, Խաստուր կա, Թևաթո-
րոս կա:

— Իր անունն ի՞նչ է:

— Ո՞ւմ անուն:

— Խնամող անունը:

— Խնամուս մեր գեղացիք զըմմեն կը ճանչնան: Առաջ քաղաք կապրեր: Ախպեր չէ իրա Ղուրդուղուլի մեջ մկա խանութ ունի:

— Դու խնամուզ անունն սաս:

— Խնամուս անուն Սեթոն է:— Բարեկամս դարձավ ինձ և փսփսաց:

— Հիմա հասկանում եք, ինչ ասել է հակապոչ:

— Այո, այո, առաջ մենք էինք ծառայողների առաջ հերթի կանգնում, հիմա նրանք են ժողովրդի առաջ հերթի կանգնում և համբերությամբ սպասում, որ բազմությունից մարգիկ մեկ-մեկ առաջ գան, պարզեն իրենց լինելը, հայտնեն թե ո՞վ է իրենց խընամին, թե ո՞ւր է ապրում հիմա, ի՞նչ է անում խնամուս եղբայրը, եղբոր եղբայրը, և այսպիսով, թե առաջ պոչի մեջ էինք ծերանում, հիմա հակապոչի մեջ պիտի ծերանանք:

Բայց մի բան լավ է:

Մեզ հետ ծերանում է և ինքը... ծառայողը:

Տեղն է:

1926 թ.

ՄԵՂ ԸԼԵԻ, ԱԶՔԵՐՈՒՎ ԿՊՉԵԻ, ԱՂՃՈ...

Այդ առավոտս իմ հարևան մանրավաճառ Աղճոն իր կնկան հիմնավոր կերպով ձեռնեց:

Հետոն էլ մեջ քաշեց հայկական հայհոյանքների առձեռն բառարանը, հետո այդ դեն դրեց, վերցրեց հայհոյանքների Հայկազյան բառարանը, դրանից էլ շոտհանալով՝ ձեռք առավ հայհոյանքների բարբառային համեմատական բառարանը և վերջապես անցավ հայհոյանքների արմատական «Աճառայանին», որ նոր մի փոքրը հանգստացավ:

— Աղճոն կատաղել է,— ասացին հարևաններն ու քվեցիկներանց բակը:

— Այ, ես քու հոր հոգին ու հավատը, քո հոր մեռելը,— գոռում էր Աղճոն:

Սվ չգիտեմ կինն ի՞նչ ասաց, ի՞նչ շատաց՝ հաճեկարծ Աղճոն վերակատաղեց և իր բառարանների մի երկրորդ տպագրությամբ նորից հարձակվեց իր կնկա վրա ու սկսեց օճառել: Մի ֆիզկուլտ ևս:

Վրա հասա:

— Աղճո, էս մեկն էլ ինձ բախշի, Աղճո, սպանեցիր, Աղճո, կողակիցդ, կեիկդ է...

— Թող,— գոռում էր Աղճոն,— Թող, ես սրա հետ ժամ տանողի, սրա հետ պսակողի հոգին ու հավատը... Թողեք մի շան սատակ անեմ, է'...

— Քաղաքացի Աղճո, բան եմ ասում... քաղաքացի Աղճո, լսի, քաղաքացի Աղճո, վախտը երկուս արա...

— Մի քանի հոգով հազիվ զսպեցինք այս մարդ ու կնիկն իրարից, որ իսկապես այնպիսի մի հոգի, մի մարմին էին դառած այդ րոպիկին, որ անհնար էր իրարից պոկել:

Բռնեցի Աղճոյի թևը:

— Քաղաքացի Աղճո, ի՞նչ կա, ի՞նչ է պատահել:

— Տո, ընկեր ջան, հոգի ջան, քրիստոնյա ջան, եղբայր ջան... Ախր երկու անգամ գնացել եկել եմ էջմիածին, 4 օրվա առուտոր անելու համար ահագին քրեհ եմ տվել, խանութ եմ բռնել, էս ուխտավորի փիս ժամանակը, օխտը տարի արանքում, հենց է՛ք է որ ապրանքս զցում եմ ֆուրգոնը, որ գնամ էջմիածին առուտորի՝ էս շան կնիկն իր տղին Քանաքեռ է ղրկել: Օգնական չունեմ, քրիստոնյա, խղճացող չունեմ, հավատարիմ չունեմ, մուշտարին ձեռից գնաց... ահագին ազգը ձեռից գնաց, քրիստոնյա ես, երձեց գիշեր է չեմ քնել...

— Ին, լավ Աղճո, ապրանքդ ուրիշ օր կծախես:

— Ի՞նչ է ասում... էսպես սլուշայ էլ մեկ էլ յարեղից կճանկեմ, էս ապրանքն էլ ո՞ր օրն եմ սաղացնելու... Գիտի տեսնես, թե ոնց է մուշտարին ծովի պես լցվել, առուտուրը ոնց է եռում, ոնց է շարխի պես դառնում... աբառոտ է, որ մաշենա...

Ու հանկարծ ուշանալը հիշելով:

— Աման, աման, աման, աման... պա, պա, պա, պա... տես, խաթուն, տես թարսվելը, տեստը տնաքանդությունը...

Ու վազվզում է ներս ու գուրս, խփում ձիերին, հայհոյում նրանց տիրոջը, ժամ, պատարագ, հոգի, հավատ, հայհոյանքների

ցուցակով անցնում է առարկաներին՝ արկղներին, միջի պարանքներին, այս ցուցակի կարգով մոտենում է ինձ թե չէ՝ ձեռքը բռնում եմ:

— Աղճո, լսի, բան եմ ասում:

Աղճոն հանկարծ հուսահատ աղաչական դեմք է ստանում ու իր բկից «մանուշակ» բռնելով ասում է.

— Ընկեր ջան, հոգի ջան, հատուկ ներողություն կխնդրեմ, իսկի ժամանակ չունեմ, գործս մնաց, մի խանգարի, հալս հալ չէ:

Ու սկսեց այնպես արագ ապրանքը նետել սալին, կարծես խուճապ սկսվեց քաղաքում:

Հուսահատությունը էլի բռնեց, էլի կատաղեց Աղճոն ու շախք՝ քացի տվեց մի արկղի. թրախ, — մյուսին, բամբ՝ իր հրեխին, թրամփ՝ մյուսին...

Հենց այդ փիս, մետասաներորդ ժամին, հակառակի պես տղան էլ Քանաքեռից վերադարձավ ու բակը մտավ:

Աղճոն էր՝ ապրանքը թողեց ու ձեռնարկելով հայհոյական բառարանների մի շքեղ, մշակված, պատկերազարդ վերահրատարակություն՝ հարձակվեց իր տղի վրա ու աջնպիսի մի ֆիզիկական դաստիարակություն հասցրեց գլխին ու մեջքին, որ տղան տակառի պես թավալվոր գնաց գետնի վրայով:

— Քո հոր հոգին ու հավատը... առուտուրի եռուն ժամանակը տուն ես քանդում:

Դաստիարակությունը ձեռաց ազդեց. ֆիզիկապես գոնե: Այնպես որ՝ տղան լացակումած վեր կացավ ու սկսեց օգնել հորը, որ ապրանքները կապեն գցեն ֆուրգոնը:

Աղճոյի բարկությունն էլ մի փոքր իջավ, ինչպես ընդունված է լիակատար ծեծից հետո:

Ֆուրգոնը պատրաստ էր, ձիերը լծած, ապրանքը դարսած:

— Դե, եկեք, նստեցեք, — հրամայեց Աղճոն կնկանն ու երեխաներին:

— էս ո՞ւր, Աղճո, — հարցրին անցորդները:

— Մեռոնեփեք, — ասաց Աղճոն:

— Ընտանիքո՞վ ես գնում:

— Հա, մեռնիմ իրեն, խոստացել եմ... իրան օրը մոմ պիտի վառեմ:

— Երնակ աչքերիդ, Աղճո, — լացակումեց մի հարեանուհի:

— Խխթխթխ. թրխկթրխկ...

Ո՞վ է:

Դուռը ծեծում են միջանցքից:

Մարո է մնացել դուրսը:

Ո՞վ է: Արդեն նվազն սկսված է. միևնույն է. մարդ է մնացել դուրսը: Թխթխթխթխ... Ո՞վ է, է: Ախր նվազն սկսված է: Միևնույն է: Մարդ է մնացել դուրսը. թխթխթխթխ...

Հնար չկա: Ով որ է՝ ներս պիտի գա:

Խոսք չկա: Մարդը փող է տվել:

Ջղային դուռը հիստերիկ ձայնով ճամփա է տալիս և ներս է մտնում մի մսալի գույգ:

Քավոր Ակոփը — ոմն ղանթարական առևտրական և գաւառագիտուն՝ իր կնկա՝ Թանկագիզի հետ:

Դո-մի-սուլ, դո-մի-սուլ, դո-մի-սուլ, դո-մի-սուլ...

— Շը՛շ...

— Не мешать!

— Հայերեն խոսեցեք:

Իզուր: Զույգը սայլի նման, ֆիզիկապես քշում է դեպի նստարանների շարքերը և տեղավորվելու ծանր պատրաստություն է տեսնում: Բայց արդյոք պիտի գտնե՞ն տեղը... Արդեն մի բազմություն շուռ է եկել և մտահոգված մտիկ է տալիս այս պատահարին, մինչ պատահարը տրամադիր չէ արագ լիկվիդվելու:

Դե, երբ իսկական հայ լուսավորչական մարդը, այսինքն բուն արմատական «մեր ցեղի» մարդը, որ շորս հազար տարվա համառ աշխատանքի հիմնավոր շենք է՝ էլ որ Թորգոմյան շառավիղն է, որ թատրոն, դասախոսություն, կոնցերտ մտնելիս մի դեսուդեն մտիկ շտա, մշմշալով չփնտրի իր տեղը, ու երբ գտնի՝ ճոճացնելով շնտի աթոռի վրա:

— Բո՛ո... Գասպար նիկիտիչ, բարով. դու էլ էստեղ ես:

— Աստծու բարին: Դե, նստի, նստի: Բարով, տիկին Քանկազի:

— Բարով:

— Քավոր Ակոփը, քրտինքը սրբելով դառնում է Գասպար նիկիտիչին:

— է՛, ոնց ես:

— Ջանսաղություն:

Գասպար Նիկիտիչը Թանկագիզ խանուսին:

— Ո՞նց ես, տիկին Թանկագիզ:

— Շնորհակալ եմ, լավ եմ: Բա՞ վառիկեկեն ո՞ւր աս:

— Վառիկեկեն գնաց Դոլարովենց: Լոտո կար էս իրիգում:

Ես էլ չէի իմանում, ուր գնամ... (Քավոր Ակոփին) է, հո լավ լավ ես:

— Կանք, փառք աստծու:

— Հետո գարու մազանդեն իմացա՞ր:

— Հա: Փթին երկու կոպեկ իջավ: Համա էն շուն-շան որդի քուր, որ ոտ չխփեր՝ ապարանցին ճանկիցս չէր պրծնի:

Քավոր Ակոփը ֆուրգոնի պես՝ իր աթոռը, հետո նաև իմ աթոռը և այդպես փոխազդելով նաև հարևան աթոռները՝ ճոճուցնելով, վրաս ընկնելով, թեև իր տակը գցելով շորս կողմն է մտնի տալիս ու հանկարծ բեղերն ականջիս քսելով, ետ է շուռ գալիս:

Մարդն ուզում է իմանալ, թե ուրիշ ո՞վ կա, ո՞վ չկա, ի՞նչ կա, ի՞նչ չկա:

— Ըհը՛, — հազում է ու կոկորդն է մաքրում նահապետական ձայնով:

Տեսավ բավական ծանոթներ կան: Հանկարծ քոլորովին շուռ է գալիս ու թեև պյոկում:

— Ո՛հո՛, Գրիշա, բարով:

Գրիշան ժպտում է և ուսերիս հենվելով ու ականջիս մեջ շնչելով դառնում է քավոր Ակոփին:

Ակոփը մշմշում է, ինչպես շոգեմեքենա և հեալով:

— Պարտիան եկավ:

— Եկավ էլ, գնաց էլ:

— Դուն ու քու աստվածդ:

— Խալ:

— Ես ասի, ուշացած ապրանք է, վրադ կմնա:

— Փի հի... կոպեկրատիվ է: Զեռաց «Ֆլուր» եղավ: Մեր դուրանի վերևի երկու աչքը բաց ենք անում: Նոր պարտիա է գալիս:

Դո-ֆա-լա, դո-ֆա-լա, դո-ֆա-լա, դո-ֆա-լա...

Թխկթխկ, թխկթխկ:

Ո՞վ է...

Դուրը վիջում է և ներս է մտնում նազելաշուք Մարոն: Հիմա

պիտի գնա իր տեղը, թե՞ պիտի կանգնած մնա դուռն մոտ: Ոչ գընում է իր տեղը և ոչ կանգնում դուռն մոտ: Գալիս է կանգնում է ուղիղ քո դիմաց:

(Ինչպես պայմանավորվել էր տանը հայելու առաջ):

Հարմար մոմենտին պետք է լիներ նրա «մուտքը» և միզանսցենան» այդպես է, որ պիտի կազնի մեջտեղը: Մի կողմից թեղ ընկած է քավոր Ակոփի մեջքի ու քո արանքը, մյուս կողմից Գրիշան է շնչում ծոծրակիդ, սրան միանում է և սրահում նստածների ճոճուցը:

Դե արդեն հայոց ազգը թատրոն գալիս է էնպես մի լավ, ազատ հազալու և խնչելու: Եվ, ինչպես ընդունված է, նրա քեֆը բացվում է ճիշտ այն ժամանակ, երբ վարագույրը բացվում է: Եվ եթե նա համեմատաբար լուռ է կոնցերտի սկզբին՝ որ նշան է, թե ժանգոտ տրամադրություն մեջ՝ երբ դաշնամուրի նվագն ըսկրսում է (այսինքն երբ դուգուկն սկսում է) «դամարնուրը» թուլանում են, քեֆը շաղանում է, սկսվում է զոդ ու սափեն, մարաքենն ու Ակոփը շախկարա է կոփում:

— Սան յսիշի...

Իսկ եթե մի քիչ անհարմարություններ է դգում նվագից, դեմքը թեթև թթվացնում է ու աղաչական կերպով գլուխը ծռում է դեպի նվագողը:

— Աշի, մի «Սոնա բաջի» ածա է...

Դո-մի-սոլ, դո-մի-սոլ, դո-մի-սոլ, դո-մի-սոլ...

Շատ բան դիտվա անցավ այդ գիշերը: Աչքովս եկան շարան շարքով անցավ հին հարսանիքներ, ուխտագնացություն, պարեր, քեֆեր, աղմուկ, հարայհրոց, շախ, ուռա, պատառաքաղների շրխկ-շրխկոց, շշերի վրա խորոված, գինու ուումբիներ, քառու... ու թամազան, որ բաղնիսի ձուլնով գոռում է:

— Կոմսյանիա, բաժակներդ լիքը...

Ու այսպես գիշերն այս մտապատկերներով, մտքերով, ապրումներով նստած էլի քավոր Ակոփի մեջքի հետևը, դիմացս՝ ալրաթաթախ Մարոն, քամակիս՝ ղանթարի Գրիշան, մի քիչ հեռու աչքերը խփած Թանկագիզ խանուսը:

Կարծեմ՝ հղոն Պետրին ինչ-որ սոնատ էր նվագում:

ՀԱՆԴԻՍԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ

Համառոտ եկեղեցական պատմություն Հայոց: Խախաբախություններ և Երկպառակություններ: Ֆայրսնի Մուկուշի արգումենտացիան չի օգնում: Ազգամիջյան կոիվներ: Միջամտություն: Զինադադար: Արժեքների վերագնահատություն:

Տեր Զորաբարեի քահանան վերցրեց գինու բաժակը.

— Սրբալույս մեռոնի օրհնության այս հանդեսին իմ աղաչանքս այն է, որդիք, որ այս նեղություններն անցնեն, և հաստատ մնա մեր սուրբ եկեղեցու հիմքը. ամեն:

Խմում է.

— Անուշներ:

— Զանդ անուշ:

— Սաղ ըլեք:

Տեր Զորաբարեիը ժրեց.

— Հենց էս առավոտ էր... լուս ու մութը նոր իրարուց կբաժրվեր, սրբալույս խորանի պատի քովն կանցնեի, մեկ էլ տեսա, որ իրեն սուրբ պատկերը քարի վրա քաշված էր:

— Ո՛ւմ պատկերը, — հետաքրքրվեցին քեֆ անողները:

— Իրեն, սուրբ Կարապետին:

— Սուրբ Կարապետին:

— Աշեցի տեսնեմ, ինքն է տեղովր, մորուքը փառավոր...

Գումրեցի Վաղոն քիթը վեր քաշեց.

— Ինքը, սուրբ Կարապետը... Հեշ չեմ հավատա:

— Չէ, օրհնած, մեր աչքերով տեսած բան կըսեմ: Չտեսած հեշ կըսե՞նք:

— Սխալ ես: էդ ըսածդ սուրբ Կարապետը չէր եղնի: Տեսածը ուրիշ սուրբ էր:

— Չէ, օրհնած, ինքը սուրբ Կարապետը, չե՞մ ճանաչի ինչ է:

— Դուն սուրբ Կարապետին որտե՞ղ ես տես, որ կըսես սուրբ Կարապետն էր:

— Ինչո՞ւ չեմ տես որ... արժանավոր ենք եղե՞ տեսել ենք, սո՞ւտ կըսեմ:

— Զանըմ, ով գիտե՞ ինչ ային-օյին, գաղթական սուրբ ես տես:

— Չէ, օրհնած, էդպես մի ըսե:

— Է, սուրբ Կարապետը աչք չունի, իրեն արժանավոր տեղը չի ճանաչե՞, շուրն էր մնացել, թե Վաղարշապատու դռագա ժամին էր մնացել:

— Այ-հույ... սուրբ Կարապետը հառաչ ու հառաչ՝ հեշ միտք չունի գալու, էդ խաբարները դու ընձեն առ. էն իրեն տեղը ծանոթ նստած է: Թե բան է, աշխարհք է, իջավ, էն հեշ ուրիշ տեղմ չի իջնի. գուքա, դյուզ-դյուզ մեր Գյումրվա Փրկչի ժամը կիջնի: Այ-հույ, Գյումրին մեռե՞ր է, որ սուրբ Կարապետը դուրս մնա, երթա գաղթականի պես Վաղարշապատու ժամի քյոշեքը իջնի:

Սեղանակիցներից մինը, որ աշտարակցի էր՝ ծանր ու մեծ առարկեց.

— Սուրբ Կարապետը, դրուստ ա, որ իր տեղը ծանոթ նրստած ա, էդ խաբարը մենք էլ ենք իմանում, ամա թե որ իր քեֆը գալ ուզեց՝ մեր Մողնվա ս Գևորգը չի թողնի ու ընչանք Գյումրին մին չի քնա: Կգա ու իր հնկոր տունը կիջնի — ս. Գևորգի կշտին: Վաղոն միայն կողքանց մտիկ տվեց աշտարակցու երեսին ու «ծը» արեց լեզվով:

— Խի՞ է «ծը» անում, դրուստը կուզես — հենց էդ ա:

— Մտքեդ շանցնես:

— Խի որ: Դրուստ չի՞ ասածս:

— Չհավատաս: Ս. Կարապետն իր շճանչցած տեղը չի երթա. էն զակոանիչնի սուրբ է. ամեն տեղ լայեղ չի էնե. ահան, շեք հավատա, Մուկուշին հարցուցեք: Մուկուշ, — դարձավ գյումրեցի ֆայթոնճիին, — դուն ու քու հոգիդ, էդպես չէ՞:

Ֆայթոնճի Մուկուշը բեղերը սրբեց ու հաստատեց.

— Էդպես է, ոչ թե Վաղոյին խոսքը թագավորեցնելու հմար կըսեմ... ինչ որ դրուստ է՝ էն կըսեմ: Սուրբ Կարապետն ըսեր է, ուրիշ ժամ հեշ աչքս չի երևա, թե գամ՝ գաթի Գյումրվա Փրկչը կուզամ:

Արգումենտացիան շատ հիմնավոր էր, ուստի և պետք է լռեին, բայց ընկերներից մինը, որ վաղարշապատցի էր, մեշ ընկավ.

— Ախպեր, մեր վաղարշապատի ժամին ինչ ա ըլի, որ ըսկի հավան չես: Տեսե՞լ ես՝ խոսում ես, թե հենց ընենց...

— Ի՞նչ պիտի տեսնեմ, — աչքերը շոնց վաղոն — վաղարշա-

պատը տեսնեմ՝ հերիք է: Էս ձեր նեղ ուլիցներով սուրբ կանցնի՞:

Այ օղու, էջը ըմ խրրթկվի մեջը՝ տասը տարի դուրս չեք կրնա քաշե: Քաղաքի հաշի՞վ է վաղարշապատը: Բանի անուն տուր:

— Է՛, քո Գյումրին ինչ ա որ... — (Տնալ է տալիս) «Մկո, շաղգամ, փուրչուլուղ կուտես... ձմերուկի ծառ տեսե՞լ ես»: Էս չի քո Գյումրին, դրա ֆոթին...

Վաղոն կա տազեց:

— Դե, դե, հիմի քու Վաղարշապատդ ու էջմիածինդ իրար խառնեցի, հա՛... —

— Ո՞ւմ իրար կխառնես արողի մունչով, քու դինն ու մասսարը...

Ու սկսվեց տուրուղմբոցն առանց դեսպանները ետ կանչելու:

— Թողեք վառեմ պիտի Վաղարշապատը, — գոռում էր Վաղոն ու վրա հասնում:

Գրսից լույսը քաբարչին վրա հասավ և մի քանի կողմնակից մարդկանց հետ նրանց բաժանեց իրարից՝ Բագրատունյաց նախարարութունն Արշակունյաց Թագավորութունից:

Կղերն էլ իր կողմից միջամտեց և մի կերպ զսպեցին նրանց ու հեռացրին. նստացրին պատերի տակ:

Զինադադարը հաստատվեց:

— Վաղո, Գևորգ, ամոթ չէ՞ ախպեր տղեք չե՞ք:

— Փիրսըզներ, — գոռում էր Վաղոն, — դո՞ւք էլ եք մարդ դառն:

— Վաղո, հերիք է:

— Մո, սուս է, էս վաղարշապատցիք չէին, որ Հայոց Թագավորութունը կործանեցին... ես էսոնց ազգ ըսողի հոգին ու հավատը...

— Վաղո, հերիք է...

Բայց ցուցակը դեռ չէր սպառել:

— Մո, դուք չգիտեք, թե ի՞նչ մարդիկ են էսոնք: Էսոնց օխտը պարտը ես գիտեմ: Քրիստոս որ երկինք համբարձավ՝ սապոգների մեկը Հուգան քաշեց ոտքեն, մեկն էլ վաղարշապատցիք:

— Լավ, լավ... ձեր ժամերի ու սրբերի... ախպեր տղա չեք...

Վաղո, գե վերջ տուր, եթե աստված կսիրես...

— Գինի լցրեք...

Մեջ քաշեցին կավոզներին:

— Դե, վերցրեք՝ թե ախպեր տղա եք: Վաղո, դե մարդ ես, վերջ տուր:

Վաղոն սրտնեղեց:

— Ի՞նչ պիտի վերջ տամ: Սիրտ էր՝ մի անգամ ելավ, ըսինք, տվինք քամուն: Ախպեր տղա ենք, կլսենք էլ, մտեհան էլ կանենք: Գինի տվեք:

— Գևորգ ջա՛ն, խո շնեղացար: Ես քու հոգուտ սատկեմ: Ախպեր տղա չե՞նք: Գիտե՞ս, ես քու մեծ ախպերդ եմ. էս օր ինչ էլ ըսեմ՝ խոսքս քու քովդ կանցնի...

Կենացդ...

— Տո՛ւշ...

— Տո՛ւշ... խմե, ես ատ սուրբ Կարապետ հնարողի հոգին ու հավատը:

1928 թ.

ՉՍԼՓԱ

— Դյադյա, ի՞նչ է նշանակում Չսլփա:

— Չսլփա, — սթափվեցի մտքերիցս և սուր մտիկ տալով ինձ դիմող մի խումբ աշակերտներին, որ նույն գնացքով Երևան էին գալիս, և հիշելով նախկին վարպետութունս՝ անվերապահ և իսկույն բացատրեցի:

— Չսլփա նշանակում է հատուկ մի տեսակ դեղատիտ, որ բանում է միմիայն Աղձնյաց լեռներում, գլխավորապես հուլիս ամիսներին, որ քաղում են օգոստոսի վերջերին միայն և ձմեռը դործ են ածում մայասիլ կոչված կամ թուֆք հիվանդության դեմ: Խորենացին հիշում է այդ բույսի մասին: Կա նաև Փարպեցու մեջ: Լայնատերև, փշամորթ բույս է. թևեր դեղնավուն, կարմրի խփող:

Ու սկսեցի իսկույն մտածել, թե ի՞նչ է նշանակում Չսլփա: Աշակերտները ծիծաղեցին և սկսեցին մեկ-մեկու «ոխ, ոխ» անել:

— Տեսար, դյադյան էլ չգիտե:

Ես սկսեցի դիրքս պաշտպանել:

— Դուք ինչպե՞ս ասացիք...

— Չսլփա:

— Այդ է, այդպես է, — ասացի ես, — չսլփա բույս է, միայն Հայկազյան բառարանի նախկին հրատարակության մեջ ակնարկություն կա չսլփա բառի մասին, որ նշանակում է նաև մի որևէ կամ հատուկ տեսակի գրաստ օրինակ՝ էշ, որով գնում են լեռները այդ դեղախոտը բերելու, որ խոտը չջարդվի:

Աշակերտներն աչքերիս էին մտիկ տալիս և սատանաների պես ժպտում:

— Իհարկե, — ավելացրի ես մի փոքր ուշքի գալով, — չսլփա բառը լայն առում ունի — նշանակում է նաև երբեմն դեղագործ, որ գրաստով ճամփա է ընկնում Աղձնյաց կամ երբեմն և ուրիշ լեռները այդ դեղախոտը բերելու, որ պատահում է նաև հովիտներում, մինչև անգամ Աբովյան փողոցի առուների եզերքին...

Տղաները էլի սատանայի պես պսպղացնում էին աչքերը:

— Չէ, դյադյա չգիտեք:

— Այդպես է, ինչպե՞ս չգիտեմ, ինձ պիտի սովորեցնե՞ք:

Բայց լակոտները սկսել էին ինձ պատին սեղմել:

— Չէ, դյադյա, չսլփան ուրիշ բան է:

Ես չէի ուզում կոտորվել:

— Տղաներ, — սաստեցի ես, — պետք է իրեն լուրջ պահել:

Տղաները ծիծաղելով հեռացան և մոտեցան մի գյուղացու:

— Բիձա, ի՞նչ բան է չսլփա:

Բիձան գլուխը շարժեց ու ասաց.

— Չսլփա, չեմ իմանում: Արփա գիտեմ, արաբա գիտեմ, թափա գիտեմ, համա չսլփա չեմ իմանում: Քրդի կնկա անուն կլինի:

Լակոտները ծիծաղեցին և մոտեցան ուրիշների:

Ես սկսեցի մտածել, թե իսկապես ի՞նչ է նշանակում այդ չսլփան: Չ-ն՝ հասկացանք — բացասական մասնիկ է, իսկ այդ սլփան:

Եվ ինչ լավ էր, որ դպրոցում չէր...

Աշակերտները նորից մոտեցան ինձ.

Գիտեք դյադյա դուք չսլփա եք գնում:

— Ո՞վ, ե՞ս:

— Այո:

— Ես Երևան եմ գնում:

— Ուրեմն դեպի Չսլփա եք գնում:

— Կարծում եք, Չսլփա սեղի՞ անուն է:

— Ապա իսկ: Տեղի անուն է, և դուք նստել եք հենց նույն վագոնում:

— Իմ վագոնը Չսլփա՞ է գնում... Երևան չի՞ գնում — մի քիչ վախեցա ես:

— Այ տեսեք դյադյա, վագոնի վրա, դրսից ձեր տակին գրած է:

Գլուխս դուրս հանեցի պատահանից ու նայեցի դուրս — այո, Չսլփա: Ավելի շփոթվեցի:

— Վաղո՞ւց է այս բանը գրած և վազոնի վրա:

— Վաղուց, — ասացին ճամփորդները:

Ուրեմն ես տարիներով Չսլփա եմ գնում և բանից սեղյակչեմ... ինչ հետամնացություն:

— Որտե՞ղ է Չսլփան:

— Ուլուխանլի նոր անունն է, — ենթադրեց մեկը:

— Չէ, էջմիածին կայարանի անունն է:

Հասկացա, այդ մեր աշխարհագրական անունները մշակող և գեղեցկացնող հանձնաժողովի նոր անվանափոխությունն է. խանական, կրոնական անունները փոխել են, բայց... Չսլփա... ճաշակ է հա...

— Բայց ինչ բան է այդ Չսլփան — կհարցնի ընթերցողը համբուրությունը հատած:

— Չսլփա... այդ մեր հին հարազատ, վաղածանոթ Ջուլֆան է:

Ապա ինչո՞ւ են դարձրել Չսլփա: Ո՞վ է դարձրել:

Իհարկե հայերեն տառերն անգամ չիմացող մի պատահական օտարազգի կամ տգետագույն հայ, որին հանձնել են գրել վագոնների վրա:

Այդ երկաթուղային հայերեն է, երկաթուղերեն է, որ պատկանում է հարեթական մի անհայտ ենթաճյուղի: Երկաթուղային էսպերանտո — հատկապես մեր գյուղացիների համար:

Մեր բաներն այդպես են: Մի ժամանակ այդ Չսլփան բոլոր հայերեն գրությունների մեջ էր, պաշտոնատներում: Բայց հայե-

բենի բանն այդպես է: Ունենք երկաթուղային վարչություն, ունենք անունների, տերմինների հանձնաժողովներ, ունենք պետական լեզու և դեկրետ այդ մասին, բայց... գնում ենք Չսլիա՝ Ամբողջ վարչություններ, հանձնաժողովներով, հանձնաժողովների նիստերով, ա՛հ ես օր Թիֆլիսից ճամփա ենք ընկնում դեպի Չսլիա, Չսլիայից դառնում Թիֆլիս:

Մեր գրությունները, մեր պատերի ազդերը, հայտարարությունները հիվանդ են այդ շսլիիզմով, որը բժշկելու համար հարկ չկա գրաստով գնալու Աղձնյաց լեռները բերելու համար «չսլիա» գեղարխտը, այլ հարկավոր է մի փոքր գրագիտություն և մի փոքր էլ... հակողություն:

1926 թ.

ԱՂՃՈՆ ԵՎ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՐՈՂԸ

Որովհետև միջազգային իմպերիալիզմը պատերազմ է պատրաստում Ս. Միություն դեմ...

Ս. Միությունն էլ պատրաստվում է իմպերիալիստական օտնձգությունների դեմ:

Հո չի՞ կարելի ասել իմպերիալիստներին, թե «եկեք և մեզ կլանեցե՞ք»:

Իմ բարեկամ Աղձոն էլ է պատրաստվում միջազգային իմպերիալիզմի դեմ:

Աղձոն չի վախենում նրա հարվածներն ընդունելուց:

Պատերազմ չի ուզում, բայց պատրաստ է պաշտպանվելու:

Ահա թե ինչպես:

Մեծ եռանդով տան անկյուններն է լցնում ուտելիքներով:

Սկսել է հացամթերման մի ահագին գործ:

Մթերում է ձեռն ընկած հացը:

Արդեն ամառվանից սկսել էր ցորեն գնել, որ աշնանը հասա՛վ կատաղի չափերի:

Երբ ցորեն էր հավաքում՝ մի մասը ալյուր էր շինում, լավաշ թխում, ուտում, իսկ մնացածը պահում էր պաշար:

Հետո սկսեց լավաշը թխել... չուտելու համար:

Սկսեց բանկոտայի հաց ուտել, լավաշը պահեց պաշար:
Հետո էլ սկսեց հացի մի մասն ուտել, մյուս մասը պահել պաշար:

Հիմա էլ սկսել է հաց ձեռք բերել ամեն տեղից:

Բանկոտայից:

Գյուրջու քարվանսարայից:

Տներից:

Քաղաք եկող դյուղացիներից:

Գյուղ գնացող քաղաքացիներից:

Անձամբ հերթ պահելով հացի պոչերում:

Իր ընտանիքի անդամներին կանոնեցնելով զանազան պոչերում:

Ուրիշ հերթ կանգնողներին խնդրելով, որ իր համար հաց վերցնեն:

Բացի այդ՝ մթերում է նաև յիսես, գարի, ոսպ, բրինձ:

Պանիր, յուղ, ձեթ:

Կարտոֆիլ, սոխ, սխտոր:

Ձավար, կորկոտ, լոբի:

Ինչ որ կարելի է ուտել, ինչ որ կարելի է ծամել, ինչ որ կարելի է կոկորդից ներս լցնել:

Այսպիսով, իմպերիալիստների դավերի դեմ Աղձոն պատրաստ է:

Երեք տարի կարող է պաշարվել՝ առանց հացի նեղության:

Երեք տարի կարող է դիմադրել իմպերիալիստական գրոհին իր տանը նստելով և մթերած պաշարը... ծամելով:

Եվ ահա այդ բոլոր պաշարն Աղձոն պահում է, որ ուտի այն ժամանակ երբ այդ ուտելու ժամանակը գա:

Իսկ այդ ուտելու ժամանակը կգա արև ժամանակ, երբ իր կարծիքով ամբողջ քաղաքում ոչ մի կտոր հաց չի լինի:

Չի լինի հաց նաև ամբողջ գավառում:

Առաջ սովից կկոտորվեն իր հարևանները:

Հետո կկոտորվի ամբողջ գավառը:

Հետո ամբողջ երկիրը սովամահ կլինի:

Ոչ մի մարդ չի մնա կենդանի ամբողջ երկրում, կմնա միայն Աղձոն, որ իմպերիալիստների հարվածների ժամանակ ապաստով կնստի իր տանը և կսկսի ուտել պաշարած հացը:

Կազատվի միայն Աղճոն. մինչև որ իմպերիալիստները պարտավեն, սկսվի նոր կյանք, նոր աշխատանք, կհասնի նոր հացը, կառատանա, և Աղճոն կարիք չի ունենա պաշար տեսնելու:

Բայց առայժմ այնքանը լավ կլինի, որ Աղճոն իր ընտանիքով կենդանի կմնա:

Եվ այդպիսով, պաշտպանված կլինի Ս. Հայաստանը:

Ո՛ր, Աղճոն այլևս չի վախենում իմպերիալիստների դավերից:

Աղճոն պատերազմ չի ուզում, բայց... բայց Աղճոն պատրաստ է:

1927 թ.

ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱ—ԳԱՅԼԵՐԻ ԼԻԳԱ

Ո՛ր գեղը անկուշտ, ազա՛հ գազան է, ամենքը գիտեն:

Սար ու ձոր՝ գիլի փոր:

Գելը հենց մի բերան ուտում է: Գիշեր-ցերեկ:

Գցեք առջևը տասը կոոպերատիվ՝ ձեռաց կիսոնի:

Փորի հաշվապահություն, կերածի հաշվետվություն չունի: Որ կերավ, պրծավ, էլ հետևից վերստուգիլ հանձնաժողով չես դրկելու, հաշիվները քննելու:

Գեղը մի գործ ունի մենակ, էդ որսն է: Որսի հետևից է ման գալիս թե՛ մենակ, թե՛ խմբով: Խմբով ման գալն էլ չկարծեք թե նրանից է, որ գելի մեջ ընկերական հոգի կա:

Ո՛չ, Գելի դարդը հենց մենակ իր բողազն է ու իր փորը:

Վախտը գիտի. թե կարաց որսն իր ընկերներից թաքուն ճանկ գցել՝ էն է մենակ ման կգա, մենակ կճանկի, մենակ էլ կմաքրազարդի:

Բայց երբ տեսավ, որ որս ճանկելը ուրիշներից է կախված ու իրեն էլ բաժին կհասնի՝ խմբի մեջ կմտնի:

Դիվանագետ է: Իր գործը բռնել գիտի:

Գելերը խմբով ման գալիս, երկար ճամփա են կտրում: Մի որսի համար մի գիշերվա մեջ 50--60 վերստ անցնելը դատարկ բան է գելի համար:

Սար ու ձոր ոտնատակ կտան, գեղ, գոմ, ճամփա, անտառ տակնուվրա կանեն: Թե մի բան ճանկացին՝ էն է էն՝ կմաքրազարդեն, իսկ եթե ամբողջ գիշերը ման են նկել ու բան չեն ճանկել՝ իսկական թամաշան հենց էլ տեղ է:

Չորս բոլոր են անում ու երեսները դեպի իրար, քամակները հետև արած՝ կանգնում մնում են: Աչքերը՝ զցում են իրար աչքի ու տեղներից ժած չեն գալի:

Հևավից մտիկ տվողը կասի, թե. էս ի՞նչի՞ են սրանք էսպես հանգիստ, անշարժ կանգնել իրար մտիկ տալիս: Տեսնես ի՞նչի՞ վրա են միտք անում, ի՞նչ են խոսում գելավարի:

Ուրիշ պատճառ չկա: Ամեն միևը աշխատում է, որ իր քամակը լավ պահի, որովհետև քամակը որ լավ չպահեց՝ մին էլ տեսար կշտի հարևանը քամակը հափտեց:

Բայց տեսարանն էնպես է, կարծես քաղցր զրից են անում. աշխարհի խաղաղությունն վրա են խոսում ու իրար հետ սեր են անում:

Ո՞նց չէ: Ամեն միևը մտքումն էս է ասում.

— Ի՞նչ համով է սանհեր բրդոտը:

Մյուսն էլ մտիկ տալով քավոր պոչատին՝ մտքումն ասում է.

— Ի՞նչ լավ բրդեր ունի անիծածը: Հա՛փ անես ու խժռես: Մեկելն էլ թե.

— Ա՛խ, կշտիս կաղնած էս Բիզ Ականջը քոմակ աներ ինձ, էն Պոչատին հափռի:

էս են մտածում գելերը իրար մտիկ տալով: Բայց որ խոսում են իրար հետ՝ շատ քաղաքավարի, բարեկամավարի ժպտալով, քաղցր զրից են անում:

— Տղերք ջան, հո ախպեր տղա ենք, չէ՞:

— Այ տղա, էդ առելու բան ա՞: Բա որ ախպեր-տղա չլինենք՝ էլ ընչի համար ենք իրար հետ ման գալի:

— Քավոր Պոչատ, ո՞նց ես, ո՞նց:

— Խեղճ եմ: Իշտահս կտրվել ա՛:

— Չէ, լավ ես, լավ: Դուր ես: Ղոչաղ կաց: Ես ըստի եմ:

— Աստված բարի տա, մեր խնամի Մաղկաթավալը լավ բարեկամություն ա անում:

— Այ քու տունը չբանդվի. տո տնածակ. խնամի Մաղկաթավալը բարեկամություն հմար իր զուխը վեր դրած ունի:

— Բու խելքին ինչ ասեմ: Տո, մենակ խնամի Սողկաթավալն ա մեր միջին: Բա սանահեր Մոխրառեխը, որ հրես կշտիս կանգնած ա: Գիտե՞ս ինչ ազիզ բարեկամ ա: Բերնի թիքեն կհանի քեզ կուտացնի:

— Ախպեր ջան, հախ աստծու որ խոսենք. հավասարական ամենքս էլ լավ ենք: Աստված մեր բարեկամությունը, մեր սերը էսպես հաստատ պահի: Այ էսպես միասին, մի սիրտ, մի հոգի, խաղաղ ապրենք — էս ա իմ աղաչանքը աստծուց: Ինչ ունենք բաժանելու:

ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ

էսպէս քաղըր զրից անելով ասում-խոսում են մեր գելերն ու աչքի տակով իրար մտիկ տալով՝ բերանների ջուրը գնում է: Եվ աչքները շորս արած զարավուլ են քաշում:

— Տղերք ջան, — ասում է խնամի Սողկաթավալը, — եկեք ուխտ դնենք, որ միշտ էսպես իրար բարեկամ-ընկեր մնանք:

— Ո՞նց ուխտ դնենք:

— Այ էսպես, աստծուն մտիկ տանք ու երդում ուտենք, — ասում է Սողկաթավալն ու աչքերը բարձրացնում դեպի երկինք: Հենց էդ ասելն ու անելն էր: Մին էլ հափ, քամակիցը սանահեր Մոխրառեխը ըոխեց Սողկաթավալին:

Պրծավ. գլուխդ ապրի, գնաց Սողկաթավալը գելերի փորը հարսանիք անելու և աղիքների մեջ էքսկուրսիա սարքելու:

Մաքրազարդում են ու էլի շարունակում քաղցր զրիցը էն մասին, թե էս ինչ գեղում, էս ինչ գոմում լավ որս կա, ու իրենք սրտակից բարեկամներ են:

Ահա սրան կասեն Ազգերի լիգա: Ահա սա է բուրժուական պետությունների բարեկամությունը: Սա է նրանց խաղաղությունը, նրանց սերը, իրար կշտի հաշտ ապրելը:

Գայլերի խաղաղություն, գայլերի համերաշխություն, գայլերի լիգա:

Սանահեր Անգլիան մտիկ է տալիս քավոր Ֆրանսիային, բեռի Ամերիկան էս երկուսին, խնամի Ճապոնիան աչքը Ամերիկայից չի հեռացնում, ափսոսանք-տղա Իտալիան նայում է ազիզ բարեկամ Անգլիային, իսկ մամուր գաշլիք կեհաստանը, Ռումինիան, Հարավ-

սլավիան, Չխոսողական ժպտում են մեծ գելերին: Լավ, անուշ ընկեր-բարեկամ:

— Քավոր Ֆրանսիա, լավ որս եմ ճարել — Խորհրդային Միությունը. ի՞նչ կասես, չգնա՞նք:

— Որտե՞ղ ա, սանահեր Անգլիա. առաջ ընկի, գնանք: Բայց երկուսն էլ վախենում են դուռըները մեզ անեն ու բաժանենը իրար:

— Քեռի Ամերիկա, դնացեք ճաշ անուշ արեք. շատ համով Միություն ա:

— Շնորհակալ եմ, խնամի Անգլիա ջան, կուշտ եմ: Հլա դու անուշ արա:

— Այ՛ջի, գնա մի պատառ վերցրու: Ավել պատառը փոր լի ծակի:

— Իտալիա ջան, համեցեք գնա մի թիքա կեր:

— Ատամս ցավում է, Անգլիա ջան:

— Այ տղա, կեհաստան, ջահել տղա ես. գնա մի պատառ վերցրու, քաղցրն ա, է՛:

— Գիտեմ, որ քաղցրն ա պատառը, բեռի Անգլիա ջան, ամա շատ մենձ ա, կարում չեմ թե կտրեմ: Մի ջիշ կտրի տուր:

Անգլիայի մերը շմոնի: Իհարկե, պատառը քաղցրն է, բայց ո՞նց է կտրում: Չաղ, համեղ պատառների շատ կան, բայց հաշիվներ էլ շատ կան: Քամակի հարց կա: Քամակն էլ քաղցր բան է: Մին էլ տեսավ քավոր Ֆրանսիան ըոխեց: Սա ըրոխի, բեռի Ամերիկան կըրոխի:

Բայց մարդիկ քաղցր զրից են անում: Ու գելերի նման շորս բուր արած՝ խաղաղ, հաշտ ասում, խոսում, ծիծաղում են:

— Ֆրանսիա ջան, ո՞նց ես: Չէ, լավ ես, լավ:

— Իտալիա ջան, ես ըստի եմ: Ղոշաղ կաց:

Թող էս գայլերի լիգան էսպես քաղցր զրից անի: Մենք մի բան չենք մոտանա:

Գելի քամակը:

1827 թ.

ԱՄԱՌԱՆՈՅԱՅԻՆ ՀԱՆԳԻՍ

— Եկել եք ամառանոց հանգստանալո՞ւ:

— Անհանգստանալո՞ւ, այո՛, — ասաց նա տխրությամբ: — Այո, այո, անհանգստանալու: Եվ ասացնե՛ք խնդրեմ, մի՞թե հանգիստ կարող եք կոչել մի ամառանոցային կյանք, երբ ապրում եք մի սենյակում, որի մի կողքի սենյակում ապրում է թիֆլիսցի ընտանիք, մյուս կողքի սենյակում մի լենինականցի՝ ընտանիք, առաստաղից վրա տանտիրոջ ընտանիքը, բակում, դիմացը, տանտիրոջ հարևանի ընտանիքը, նրա կողքին իր կենդանիների ընտանիքները, երբ քո դուան շեմքին պառկած է տանտիրոջ պամփոը, սենյակից լցված են հավ ու ճիվերով, երբ այս բոլոր ընտանիքներն իրենց երեխաներով ճղավում, բղավում են, երբ տանտիրոջ ընտանիքը դեռ կեսգիշերից զարթնում է, զարթեցնում է մյուս ընտանքներին ու ամբողջը միասին սկսում են առաստաղը ճոճոացնել, քթքթացնել, դոփել, թակել, երբ իջնում են բակն ու սկսում են փայտ ջարդել, գերանդի սրել, տախտակ սղոցել...

— Ընկե՛ր, մի քիչ շո՛ւնչ քաշեք...

— Երբ ամբողջ օրը փողոցով անցնող սայլերը, ձիերը, ավտոմոբիլները, ֆուրգոնները զղրղում, սուլում, թնդացնում են ողջ թաղը... երբ հարևան ընտանիքներից գցում են ծուխը սենյակից ու շորս կողմ ծուխ, փոշի, ճենձերահոտ, ճանձ, բզզոց, հաշոց, կըլկըլոց... երբ հարևանից մեկը թառը բերում է պատուհանից տակ ու սկսում է ծնկուսացնել, դգել, դժվժացնել, երբ մյուս սենյակում մյուս հարևաններից զլում են «Աղջի բախտավորը», երբ պատշգամբից տակ հավաքվում են հարևան գաղթական կանայք իրենց երեխաներով ու սկսում են ծվալ, ծղրտալ, դովոալ, երբ...

— Ընկեր, մի քիչ հանգստացեք...

— ...Ինքնատեղի հոտն ամեն կողմից քթից խփելով՝ պատշգամբից վրա սկսում են աղ ծեծել, երեխա թակել, թընկթընկացնել, գժվացնել նրանց... Այո, մի՞թե կարելի է հանգիստ կյանք կոչել, երբ բակում մի ուրիշ ընտանիք պատշգամբում ճաշկերույթ է սարքում ու հավաքվում են՝ 15—20 հոգի, սկսում են ուտել, խըծոնել, ասել-խոսել, ծիծաղել, կշկշալ, երգել, գոռալ զուռնա-դհոլ բերել, ծվացնել, թնդացնել, կանչվըռտել, պոռչտալ, պատառաքողները շշերին զարկել, սեղանը բռնցքահարել, ոտերով դոփել, ցատ-

կել, թռչկոտել, պատշգամբը թակել, ծեծել, կոտրել...

— Ընկե՛ր, մի քիչ հանգստացիր...

— Զարդել, գժվել, եռալ, ծեծկվել, կատաղել, վայրագանալ, դժոխային թնդուններով լցնել բակը, իմ սենյակը, ամբողջ թաղը, գյուղը... Աղմուկ, աղաղակ, գոռում-գոչում, անտանելի բոռոցներ՝ ծղրտոցներ... ճաշը դառնում է թեյ, թեյն ընթրիք, երեկոն դիշեր, գիշերը լուսադեմ է ամբողջ ժամանակը «Հո՛յ նազանըմ», «Քեզի մեռնեմ», «Լեփ հո-լե-լե»: Ամբողջ ժամանակը ոտքի, ձեռքի, դանակի, պատառաքողի զարկեր, հարվածներ սեղանին, շշերին, հատակին, դուան, պատուհաններին, ճաղերին, բաժակներին...

— Ընկե՛ր, մի քիչ...

— Մատուցարաններին, մինչև որ սկսում են այլևս մոլեգնել, կատաղել, խելագարվել, փրփրել փոթորկել, պատառոտել, բզկտել, փշրտել, ցրիվ տալ ամեն ինչ...

— Ընկե՛ր...

— Чорт их возьми.

— Ընկե՛ր...

— Դրանց հե՛րն անիծած...

— Ընկե՛ր...

— Կորչի՛ կոսմոգրաֆիան...

— Ընկե՛ր...

— Դեպի Հաբեշտա՞ն... դեպի արևելյան բե՛ռ... դեպի լուսնի ակումբը...

Խեղճը խելագարվեց...

1927 թ.

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

— Ինչպե՞ս եք գտնում մեր երկիրը, — հարցրեց մի օր ամերիկացին մի կարմրամորթ հնդկի:

— Լավ շտեսա, — պատասխանեց կարմրամորթը:

— Ինչո՞ւ:

— Ես նավի նկուղումն էի, նավապետը շթողեց ափ դուրս գալ:

Նավի ծակից նայեցի և միայն մի փողոց տեսաւ: Վնաս չունի, լավ
երկիր է:

Քաղաքի անունն ի՞նչ էր:

— Լիսաբոն:

— Գուցե ուզում ես ասել Նյու-Յորք...

— Չէ, ասացին Լիսաբոն է:

Ամերիկացին այնպես զարմացած նայեց կարմրամորթին,
որ սա ևս բերանը բաց արած սկսեց մտիկ տալ խոսակցին:

— Ինչո՞ւ եք զարմանում, — ասաց կարմրամորթը, — ես չեմ
տեսել ձեր երկիրը՝ չեմ կարող ասել, թե ինչպես էր: Իսկ դուք
ինչպե՞ս եք գտնում մեր երկիրը:

— Ձեր երկիրը:

— Այո, դուք հո ամեն օր տեսնում եք:

Ամերիկացին կանչեց իր ծառային և հրամայեց կարմրա-
մորթին տանել խոհանոցի հետև և մի քիչ ծեծել:

Այդ ամերիկացին աշխարհագրական պրոֆեսոր էր:

Ամեն բան կարող էր ներել, բայց Ամերիկայում ապրող ոչ
մի արարած չէր կարող ներել մի այդպիսի տգիտություն:

Չիմացվեց վերջը, թե կարմրամորթը աշխարհագրություն սո-
վորեց թե չէ, բայց վերջերս աշխարհագրագետ ամերիկացին ամե-
րիկյան գործերի հետ Չինաստան էր դնացել:

Շանհայի բանտերն այցելելիս ուզեց մի քիչ հարցուփորձ անել
չինացի բանտարկյալներին: Մոտեցավ անկյունում նստած մի խա-
ղաղ շինացու և ասաց.

— Հետաքրքիր է իմանալ, թե ինչո՞ւ համար մտաք մեր տե-
րիտորիան:

— Սոված էի, ուզում էի աշխատանք գտնել: Ի՞նչ իմանալի
Տարիներով մեր շինացիները մտել են ձեր տերիտորիան և բան
չեք ասել: Ինքս երեք տարի բանել հմ:

— Որտե՞ղ:

— Չիկագոյի գործարաններում:

— Գուցե ուզում եք ասել Շանհայ:

— Ոչ, Չիկագո, հիշողությունս լավ է:

Աշխարհագրագետը դարձյալ զարմացած նայեց շինացու երե-
սին: Չինացին նույնպես զարմացավ ամերիկացու վրա:

Վերջը շինացուն ևս մի քիչ թակեցին իր անհաճո պատու-
խանների համար:

Թե ի՞նչ պիտի դուրս գա այս աշխարհագրության դասերից՝
առայժմ ոչինչ չի կարելի ասել, բայց որ աշխարհագրության գա-
սատուները միշտ թույլ են լինում լեզվից, և դերանունները միշտ
սխալ են գործածում, դա փաստ է:

Ահա այդ դերանունների կոիվն է, որ այս բոլորք-
ված է Չինաստանում... տգետ աշխարհագրագետների պատճառով:
1927 թ.

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

ԼՈՒԻՍՆ, 17 հունվ.— «Կիրակի, ամսի 16-ին, Չեմբեռլենը մի
ժամով գնաց Արտաքին գործերի մինիստրություն և պարապեց
պետական գործերով: Չինական գործերի առթիվ նա ընդունեց
զխավոր շտաբի պետի արտակարգ զեկուլցը: Անգլիայում առաջին
անգամ է պատահում կիրակի օրվա հանգիստը խախտող նման
գեպը»:
Ռադիո-հեռագիր

«Թը՛խկ, թը՛խկ, թը՛խկ...»:

— Ի՞նչ բան է:

— Չինացի ապստամբներ են: Կրակեցին անգլիացի անցորդ-
ների վրա:

Կրակեցին և հետևանքը... «Չորս շինացի սպանված է, երեքը
վիրավոր»:

— Ի՞նչ է ասում...

— Այո...

«Չը՛խկ, չը՛խկ, չը՛խկ...»:

— Իսկ սա՞ ինչ բան է:

— Նորից շինացի ապստամբներ են: Կրակում են եվրոպա-
կան թաղում ապաստանած անգլիացի կանանց և երեխաների
վրա:

Հետևանքը:

կարգանք լրագրերը:

«Չինական փողոցներից ապստամբները կրակ բաց արին եվրոպական թաղում դիրք բռնած անդլիական գործերի վրա: Սպանված են... հինգ շինացի և յոթը վիրավոր»:

Ահա քեզ և հետևանքը:

Մի ուրիշը.—

«Անդլիացի նավաստիների ափ իջած ժամանակ մի շինացի բանվոր ատրճանակը կրակեց ուղիղ նավաստու կրծքի վրա:

Չինացին տեղնուտեղը վայր ընկավ սպանված»:

«Ամսի 20-ին Շանհայի գլխավոր փողոցներում տեղի ունեցավ հարյուր հազարանոց բանվորների և ուսանողների հսկայական ցույց, որ սկզբում խաղաղ բնույթ էր կրում: Բայց ցուցարարների ամբոխը, անցնելով անդլիական դեսպանատան առջևով, կրակ բաց արեց դեպի դեսպանատան պտուհանները: Սպանված են 7 շինացի և 8 շինացի վիրավոր»:

— Ոչինչ չեմ հասկանում:

— Շատ պարզ է: Ատրճանակը բացվելիս գնդակը դուրս է թռչում և սպանում մարդու:

— Այո, բայց ինչու՞ կրակում են շինացիները և սպանվում են... շինացիները:

Այդ մասին, իհարկե, արժեք մտածել, բայց ի՞նչ օգուտ այդ տեսակ մետաֆիզիկական հարցերի գլուխ կտրելուց. միևնույն է՝ լպիտի պարզվի բանի բնույթը, որովհետև եթե սկսես մտածել այն մասին, որ շինացու արձակած գնդակը թռչում է ուղիղ գծով՝ իրամասին, որ շինացու արձակած գնդակը թռչում է ուղիղ գծով՝ իրականի մեջ ուղիղ գիծ գոյություն չունի: Չափանիշը պիտի լինե՞ր լույսի ճառագայթը, բայց նա էլ վերջ ի վերջո կոր է. այնպես որ՝ բացատրությունը այս է. գնդակը թռչելով գնում է կոր գծով և բացատրությունը այս է. գնդակը թռչելով գնում է կոր գծով և վերադառնում է դեպի շինացին: Այս էլ նշտեյնի թեորիան է, ոչ ոք չի հասկանա... Պարզապես աստծու բանն է այս: Աստված ստեղծել է երկու տեսակի ազգեր, ընտրյալ և ստոր:

Ստորները դեղին, սև, կարմիր ազգերն են և մեկ էլ ածուխից և մրից սևացած ածխահատներն ու բանվորները:

Մնացած բոլոր սպիտակներն ընտրյալներն են:

Եվ ահա այդ աստվածն է կամենում, որ երբ շինացին գնդակ է արձակում անգլիացու վրա՝ սպանվի... շինացին:

Դրա համար էլ կապիտալիստական Անգլիան խիստ բարեպաշտ կրոնական է և սուրբ է սլահում աստծու կիրակին:

Արժե պահել այդ կիրակին:

Աստված կապիտալիստին ասում է.

«Վեց օր աշխատեցրու (բանվորներին), յոթերորդ օրը հանգրստացիր և (կեր նրանց աշխատանքը):

Բանվորների համար ասում է.

«Վեց օր աշխատիր (կապիտալիստների համար) և յոթերորդ օրը հանգստացիր (ստամոքսդ):

Իսկ Չինաստանի գործերի համար Արտաքին գործոց մինիստր Չեմբերլենն ասում է.

«Վեց օր սպանիր շինացիներին, յոթերորդ օրը հանգստացիր (իրենք իրենց կսպանեն):

Իսկ շինացիներին ոչինչ չի ասում, որովհետև նրանք աստված չեն ճանաչում:

Ահա թե ինչու կիրակին սուրբ է ամեն մի կապիտալիստ անգլիացու համար:

Այդ օրերը չի կարելի գործ կատարել. չի կարելի պաշտոնատուն գնալ, բացարձակապես արգելվում է հիմնարկ բանալ, պետական գործերով ընդունելություններ, տեսակցություններ անել: 0-յ, 0-յ, 0-յ, 0-յ, աստված կպատժի:

Կիրակի օրերը չի կարելի սպանություն գործել: Ավելին դեռ. չի կարելի սպանվել անգամ:

Եվ ահա, երբ շինացիները, այդ ստոր հեթանոսները, իմանալով, որ անգլիացին իր գլուխը կկտրի, բայց կիրակի օրն սպանություն չի կատարի, վեր են կենում քրիստոնյա անգլիացիների վրա և ցույցերով ստիպում են կիրակի օրը գործ կատարել, մեռնե՛ն — երբ կիրակին հանգստի օր է:

Եվ ահա քանի որ շինացիք խախտում են քրիստոնյաների սուրբ օրենքը, ուղղակի սպանվում են:

— Բայց ի՞նչպես են քրիստոնյա անգլիացիք թույլ տալիս իրենց... խղճին կիրակի օրը շինացի սպանվի: Իրո՞ւմ մարդ գոնե...

— Թույլ են տալիս, որովհետև շինացիք... կիրակի չունեն:

Իհարկե, այսպիսի բացատրություններով դարձյալ լավ չի բացատրվի այն «տեխնիկական մանրամասնությունը», թե վերջ ի վերջո ինչպես է պատահում, որ գնդակն արձակում է շինացին և

սպանվում է շինացիներ: Ասում են՝ հրացան արձակելիս բերանը դեպի իրենց կուրծքն են բռնում և կոթը տալիս են անգլիացիներին ձեռքը...

Ասում են՝ երևի մի այդպիսի բան կա: Բայց և հարց ես տալիս, թե մի՞թե շեն տեսնում հրացանի կոթը որն է, բերանը որը: Ստիպվում ես վերջ է վերցն այդպես հասկանալ, որովհետև շինացիներին աչքերը ծուռ են...

Գիտե՞ք ինչ կա: Թողնենք այդ առեխնիկական մանրամասնությունները, որոնց գաղտնիքները լավ է իմանում Անգլիայի արտաքին գործոց մինիստր Չեմբերլենը: Եվ եթե կարիք լինի՝ կարելի է նրանից իմանալ այդ բանը: Այդ չէ՛ հետաքրքրականը: Հետաքրքրականն այն է, որ մոտ օրերս բարեպաշտ Չեմբերլենը խախտել է...

— Հա՛:

— Խախտել է Անգլիայում շտեմբլած մի բան...

— Ի՞նչ:

— Մի բան, որ չի կարելի խախտել և դարերի ընթացքում չի խախտվել: Չեմբերլենը Մեծ Բրիտանիայի արտաքին գործոց մինիստրության շենքում կիրակի օրը ընդունելություն է ունեցել:

Առաջին դեպքը պատմության մեջ:

— Ինչպես է պատահել...

— Ոչ, ասեք ի՞նչ է պատահել: Որովհետև ինչպես շատ պարզ է: Կիրակի առավոտը երբ հեռագիր է ստացվել Շանհայից, և հեռագիրը տվել են Չեմբերլենին, անկողնից վեր է ցատկել, շարվարը հագել է և վազել մինիստրության շենքը: Դա ի՞նչպես է Բայց ի՞նչ է պատահել ահա խնդիրը: Ես գոնե չգիտեմ: Ում հարցրի՞ ոչ ոք չգիտեի:

Բայց Չեմբերլենը գիտեի: Եվ լավ գիտեի: Լավ գիտեի, թե ինչ նշանակություն ունի այդ դեպքը, որ ստիպում է քրիստոնյա Անգլիայի մինիստրին խախտել սուրբ կիրակին:

Արդյոք շինացիներին աչքերը դրստվե՞լ են, զուցե գտել են հրացանի կոթը, զուցե զնդակները դադարում են էյնշտեյնի մեթոդով թռչել:

— Ինչ որ է, մի առեխնիկական մանրամասնությունն է պատահել Շանհայում:

Շուտով կիմանանք, թե ինչ է պատահել Շանհայում, բայց ի՛նչ:

որ պատահել է, փաստն այն է, որ առաջին անգամ Անգլիայում կիրակի օրը մինիստրության մեջ ընդունելություն է լինում:

Այստեղ զարմանալու ոչինչ չկա:

Մարդիկ միշտ ծնվում են... առաջին անգամ, մեռնում են առաջին անգամ:

Եվ աշխարհիս հեղաշրջումները, ուսուցիչները պատահում են առաջին անգամ:

Մի օր կկործանվի Անգլիայի կապիտալիստական իրավակարգը, և այդ կիսնի առաջին անգամ:

1927 թ.

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ասում են «վեշքաշ ձիու ատամներին շեն նայու!»:

Դա ճիշտ է, եթե միայն այդ ձին չէ նվիրված... Թանգս բանին:

Ընկ. Պաղատիկյանի հետ փորձանքներ շատ են պատահում:

Ընկ. Պաղատիկյանը նրբանկատ, բարի և միաժամանակ շատ քաղաքավարի մարդ է:

Ճիշտ է, քչակեր է և նուրբ բաներ սիրում է: Բայց դա մի՞թե արատ է:

Բայց և մի տեղ ճաշի հրավիրված ժամանակ բավականին նեղվում է:

Նախ և առաջ ճաշն ուշ են բերում: Անոթի պահում են, պահում, և երբ սեղանը բաց են անում և հրավիրում, մի ամբողջ ժամ խեղճին ստիպում են օղի, կոնյակ խմել և «զակուսկա» ուտել: Պաղատիկյանը, որ ախորժակ է պահում հարիսայի՝ աշխատում է խուսափել «զակուսկայից»: Բայց տանտիկինը մի կողմից, տանտերը մյուս՝ զոռում են հա զոռում:

Պաղատիկյանը նրբանկատ մարդ է, քաղաքավարություն է պնդում, ուտում է կալբասո: Եվ սպասում է հարիսայի, բայց...

Մտիպված է զիջելու և այդ էլ ուտելու:

Ես որ լինեի Պաղատիկյանի տեղը, ուղղակի կասեի, ջանքմ,

ինձ հրավիրել եք հարիսայի և մինչև հարիսան ստիպում եք ուրիշ բաներով կշտանալ: Բայց ես այս բաները չեմ սիրում: Իրոք զուգահեռ չունի՞մ: Պա՞րտքս ինչ է: Եթե չեմ սիրում — նշանակում է զուգահեռ չունի՞մ: Կամ հարիսան բերեք, կամ գլխարկս տվեք, գնամ իմ չեմ սիրում: Կամ հարիսան բերեք, կամ ախորժակս կտրվեց: Հմի ո՞նց եք բանին: Ահա այս բաները կերա, ախորժակս կտրվեց: Հմի ո՞նց եք — հարիսան չեմ ուտում:

Բայց խեղճ Պաղատիկյանը քաշվող մարդ է, ուտում է խեղճը: Դեմքը թթվացնում և համարա թե էլ չի սպասում հարիսային:

Ընկեր Պաղատիկյանը արդեն բոլորովին կուշտ է, երբ իսկապես ներս են բերում հարիսան: Ճիշտ է շատ նուրբ, լավ հարիսա, բայց Պաղատիկյանը միայն մեղամաղձությամբ նայում է նրան:

— Ընկեր Պաղատիկյան, վերցրեք ձեր բաժինը:

— Ես կուշտ եմ... իսկապես ասած:

— Յա, ի՞նչ է ասում հանաք եք անում:

— Ճիշտ եմ ասում, կուշտ եմ:

— Երի հա... տո, էս ինչ տեսակ մարդ եք եղել:

Այո այդպես է, ի՞նչ անի մարդը, ուրիշ, պահեստի ստամո՞քս բերի հետը... Քաղաքավարություն արեց մարդը, բերած զակուսկին ընդունեց, քաղաքավարություն բանեցրեց մինչև վերջը, բայց ասում ենք քաղաքավարություն, քաղաքավարություն՝ դե վերջապես քաղաքավարություն էլ սահման ունի: Ճիշտ է, քեզ սիրալիություն են անում, վերջապես «փեշքեշ» ճաշ են տալիս:

Բայց ասում եմ. «փեշքեշ ձիու ատամներին չեն նայում», եթե միայն թանգարանի համար չէ:

Այս օրերս Երևանի պետական թանգարանը մի նվեր ստացավ արտասահմանից, մի մեծ քառակուսի բան, փաթաթված, խնամքով կապկպված: Մի բավականին զգալի գումար էլ ճամփու վերագիր վճար արվեց և բերվեց թանգարանի այդ անձանթ նվերը:

(Ո՞վ է իմանում ինչ երևելի վարպետի հազվագյուտ նկար պիտի լինի):

Բաց են անում, և աչքը բարին տեսնի. մի շրջանակով կտավ վրան ներկված է մի այգի: Մեջը էջմիածնի վանքը: Կողքին գաղթական սրբեր: Վերև դեկոտե հրեշտակներ: Փոսի վրա երկու գլուխ շաքար, որ պիտի հիշեցնեն Մասիսները:

Նվեր... Հայաստանի Պետական թանգարանին:

Դե նվեր է, սրտից բխած բան: Բան չկա, կպատահի: Բայց նվիրատվի կողքին ոչ ոք չկար, որ ասեր նրան, թե լավ ես անում, որ ուղարկում ես, նվեր է՝ պիտի ընդունեմ, մարդիկ քաղաքավարի են, բայց չէ... քաղաքավարությունն էլ ախր.. Պետական թանգարանում, ճիշտ է, ներկեր շատ կան, բայց նրանք նկարչության վրա են բանեցրած և ոչ թե ցուցանակի:

Մի քիչ է: Պաղատիկյանին խնայե՛ք...

1927 թ.

ՓՈՇՈՒ ՏԵՔՍՏԻԼ ԳՈՐԾԱՐԱՆ

Անշուշտ, գիտեք բոլոր կուլտուրական նորամուծությունների պատմությունը:

Օրինակ, գիտեք, թե ինչպես հալածվեց մեր երկիրը առաջին անգամ կարտոֆիլ բերող և մշակող մարդը:

Ուտելիք էր բերում մարդը, համեղ, օգտակար, էժան սնունդ: Բայց ուզում էին սպանել նրան:

Դիտեք նաև, թե ինչ ծաղրի հանդիպեց առաջին շոգենավ հնարողը:

Ո՞վ շգիտե թե 60—70-ական թվականներին ինչ ատելություն և բացարձակ թշնամության էին հանդիպում այն մարդիկ, որ մեր երկրի խուլ անկյուններում դպրոց էին բաց անում:

Գալիլեյը գիտեք, որ բանտարկվեց երկրի և արևի հարաբերության իր նոր ճշմարտությունը քարոզելու համար:

Այսպես է նորամուծությունը, նորույթի հոգեբանությունը, նորություն բերողի բախտը: Մաղր, հալածանք, թշնամանք, դիմադրություն:

Այս ամենքը գիտեք, բայց այն էլ գիտեք, թե ինչպես այդ կարտոֆիլը, դպրոցը, շոգենավը, աստղաբաշխական ճշմարտու-

Յյունը վերջ ի վերջո հաղթում են, ընդունվում, հալածողներն իրենք մատնվում են ծաղրի և մինչև անգամ հալածանքի և մարդկային հասարակութունն սկսում է օրհնելով վայելել և կարտոֆիլը, և շոգինավաճ, և դպրոցը, և ամեն մեծ ճշմարտություն:

Հիմա էլ այդ բարիքները հալածողներին համարում են տգետ, հնամուլ, խավարամիտ, նորություն ընդամի:

Ահա այս տգետ, հնամուլ, խավարամիտ բառերն այնպես են վախեցնում մարդու, այնպես մարդ քաշվում է նոր գյուտերի, նորամուծությունների, նոր ճշմարտությունների թշնամի համարվելուց, որ ստիպված է լինում երբեմն լսելու, թե կարիք կա խոսելու երկամտրեստի ավտորուսի բերած նորամուծության... դեմ, ներողություն... մասին:

Ուզում եմ գրել, բայց վախենում եմ հանկարծ ինձ տպետ, խավարամիտ կոչին:

Գիտության և տեխնիկայի թշնամի կոչին:

Ասեն՝ ես դեմ եմ ճանապարհների հաղորդակցության նորագույն միջոցներին:

Դեմ եմ փոխադրական միջոցների մեխանիզացիային:

Հակառակ եմ, որ մեր քաղաքի փողոցներում դրոգա մեծ քաղաքի տեխնիկայի ձայնը:

Ո՛վ է իմանում, հազար բան:

Ու այսպիսով թողի մտադրություն:

Ասեցի, արի կլինի մի տրակտատ, գիտական մի դիսերտացիա գրեմ թոքերի, օդի և շնչառության մասին, ապա խոսեմ վատ օդի մասին և վերջը, շատ հեռվից տարտում կերպով այնպիսի փոշու մասին:

Եվ ասեմ, որ փոշին էլ կարող է երբեմն թոքերին վնասել:

Հետո գրեմ աչքի հիվանդության մասին, որ առաջ է գալիս մթան մեջ կարգալույց, բանելուց, կեղտից և փոշին էլ կոչեմ կեղտ, թող հասկացողը հասկանա, թե խոսքիս ծայրը ո՞ւր է գնում, ո՞ւմ է դիպում:

Սրանից հետո՝ ասացի գրելով, գրելով մի օր էլ հասկացե՛՛մ, որ փոշին բարձրացնում են մարդիկ, ձիերը, կառքերը, թերևս գուցե ավտոմոբիլները, և, եթե չենք սխալվում, նրկամտրեստի ավտորուսը:

Բայց ձեռք թափ տվի:

— Այլի, բան չունե՛ս, աստված շատ բարի տա ավտորուսին, ինչ ուզում է անի, մի խոսի, ուզում ես որ խավարամիտ կոչին:

Բայց բանն էլ հենց նրանումն է, որ ավտորուս շատ եմ սիրում: Եվ ինչո՞ւ շարիս Մայրը 15 կոպեկի Տալիս ես ու ձեռաց բուլվարից մինչև Նորքի տակը: Գիտեք ի՞նչ հարմարություն է հիվանդանոցի, համալսարանի, զբոսանքի համար: Վաղն էլ հաղորդակցությունը կլայնացնեն մինչև կայարան և քաղաքի ուրիշ մասերն էլ--ահա քեզ իսկական մեծ քաղաքի պատկեր: Հրաշալի բա՛ն: է ավտորուսը տրամվայ շունեցող քաղաքի համար: Ավտորուսն իր հետևից տրամվայ կրերի, դա էլ, բնությունը եթե հաջողի, շուտով կլինի:

Ճշմարիտ խոսք: Ես էլ շատ ուրախացա (ինչպես ամբողջ քաղաքը), երբ լսեցի, որ քաղաքում ավտորուսներ պիտի երթնեկեն:

Բայց ուրախությունը ե՞րբ է հավիտյան եղել: Ուրախությունը հետևում է տխրություն, հիացման՝ հիասթափություն, ոգևորության՝ սառնություն, վայելքին՝ դառնություն: Քուր ու խպպեր» — այ այսպես են բախտն ու անբախտությունը:

Առաջին անգամ որ գնացի ավտորուսը տեսնելու՝ ավելի շուտ փոշին տեսա, քան ավտորուսը: Այնպիսի մի փոշի էր բարձրանում ավտորուսից, որ նայեցի, նայեցի և տրոշեցի, որ սա ոչ թե մարդատար ավտոմեքենա է, այլ փոշու տեքստիլ գործարան:

Ի՞նչ կարիք ասենք փոշու, այն էլ այնպիսի մի փոշու, որ ամբողջ Աբովյանը ծածկում է մի ինչ-որ նախաստեղծյան քառսի մեջ:

— Հաշվեցինք, որ օրական 50 անգամ գնում գալիս է ձեր ավտորուսը,-- ասաց մի օր Վաղարշապատում ապրող բարեկամս:

— Ինչի՞ց գիտեք:

— Հաշվել ենք, փոշուց երևում է ավտորուսի գնալն ու գալը:

Հարց է ծագում, չէ՞ր կարելի փոշու գեմ հնար գտնել և մեջ ապահովել նախ՝ փոշուց և հետո՝ ավտորուսից, եթե սա շարունակ պետք է փոշի բարձրացնի:

Լավ է ավտորուսը, դա նորամուծություն է, բայց վատ է փոշին, դա էլ հնամուծություն է: Չի կարելի մի քայլ առաջ գնալ, մի քայլ ետ: Ավտորուսը պիտի գա նրանից առաջ մի ուրիշ բան

ապահովելուց հետո, մի ուրիշ բան էլ հետը անելով: Այդ ուրիշ բանը մեր փոշին է, մեր քաղաքի սիրահարը:

1927 թ.

ԹԱՓԱՆՑԻԿ ԱՐԱՐԱԾՆԵՐ

Հերոզոտն ասում է, թե եգիպտացիք թույլ չէին տալիս խոզարածներին տաճար մտնել, խոզարածներին ոչ աղջիկ էին տալիս և ոչ էլ աղջիկ առնում նրանցից:

Հարց է առաջ գալիս:— Կա՞վ. այդպես որ խոզարածներին աղջիկ չէին տալիս և աղջիկ չէին առնում նրանցից. պետք է, որ խոզարածների սերունդը վերջացած լիներ, նրանց հետ խոզը, ապա ինչպե՞ս հասան մինչև մեր օրերը թե՛ խոզը, թե՛ խոզարածը...

Թափանցելով — կասեմ ես:

Այո, խոզը թափանցիկ է և մինչև անգամ կենդանիների մեջ ամենաթափանցիկը խոզն է:

Նա Հերոզոտի օրերից մինչև մեր ժամանակներն անցավ բոլոր արգելքները, բոլոր սահմանները: Մարդիկ դարերով ճիշտ է՝ «խոզ», «խոզ» ասել են, բայց միշտ էլ... կերել են խոզի համեղ միսը, և խոզը անցնելով բոլոր արգելքները. մինչև անգամ անցավ մարդկանց բերանի միջով, գնաց կոկորդը և այնտեղից դեպի ստամոքսը:

Այսպիսով, խոզը թափանցում էր և իր հետ թափանցեցնում էր խոզարածին:

Ահա թե ին՞ու մնաց և կա խոզն ու խոզարածը: Հիմա խոզարածներին թույլ են տալիս ամեն տեղ մտնել: Ոչ թե միայն թույլ են տալիս, այլև խնդրում, համոզում են մտնել, լինել ամեն տեղ:

Եվ խրճիթ-ընթերցարան:

Եվ ակումբ:

Եվ պրոֆմիսթյուն:

Եվ բանֆակ:

Եվ թատրոն...

Ժամանակիս խոտելի արարածները... ուրիշ տեսակ մարդիկ են:

Հիմա կա խոզից և խոզարածից ավելի թափանցիկ մի բան: — Հայաստանի սպեկուլյանտը:

Նա շատ տարբեր է եգիպտացի խոզարածից: Տարբեր է նրանով, որ մինչ խոզարածի մոտ թափանցողը խոզն էր միայն, և խոզարածը նրա շնորհիվ պահվում էր, բայց սպեկուլյանտի մոտ այդպես չէ: Նախ և առաջ թափանցիկ է ոչ միայն նրա արտադրության գործիք ապրանքը, այլև թափանցիկ է և ինքը, սպեկուլյանտը:

Մինչդեռ սպեկուլյանտի ապրանքը թափանցում է կոոպերատիվ խանութի դռներից դուրս, հետո մասնավոր տներից ներս, ապա տնե-տուն, փողոց-փողոց, գեղե-գեղ — սպեկուլյանտն ինքն էլ է թափանցում իր ապրանքի հետ:

Նա մտնում է կոոպերատիվ խանութի դռանը հերթի կանգնած մի «աղքատ կնոջ» մարմնի մեջ և նրա միջով մտնում է խանութ. հետո մտնում է մի «աղքատ տղայի» մարմնի մեջ, դարձյալ ապրանք տանում, ապա մտնում է «մշակի» մարմնի մեջ, հետո «գյուղացու» մարմնի մեջ: Եթե որևէ արգելք է լինում, թափանցում է կոոպերատիվի անդամի մարմնի մեջ, մինչև անգամ թափանցում է կոոպերատիվի ծառայողի մարմնի մեջ և կրկին նույն գծով, մարմնից թափանցում և դուրս է գալիս... եգիպտացոց տաճարից:

Առանց որ եգիպտացիք իմանան...

Ի՞նչ խոզարած կարող է համեմատվել այս թափանցիկ արարածի հետ:

Ահա, այսպիսով, մեր ժամանակի «խոզարածը» թափանցում է ներքին բնագավառները:

Սա մի տեսակ «ներքին առևտուր է», միայն մի քիչ ուրիշ ծայրից:

Երբեմն էլ սպեկուլյանտը փորձում է թափանցել և արտաքին բնագավառները:

Արաքս գետի վրայով, տկի նավակով փորձում է թափանցել Պարսկաստան՝ տանելով իր ապրանքը:

Այս էլ նրա «արտաքին առևտուրն է», իհարկե մի քիչ ուրիշ տեսակ...

Առաջին դեպքում երբեմն թափանցելով, զնում, մտնում է մի «աջնպիտի տոն», որ թափանցիկ չէ ոչ դրսից, ոչ ներսից և մնում է աչնտեղ:

Իսկ երկրորդ դեպքում նա ենթարկվում է երկու տեսակ թափանցողության:

Կամ ինքն է թափանցում սահմանապահների գեղակների միջից, կամ գեղակներն են թափանցում նրա միջից:

Բանկոտպի անդամներ, փակեցեք ձեր աչքերը, ականջները, քթերն ու բերանները և մի թողեք, որ այդ անցքերից սպեկուլյանտը մտնի ձեր մարմնի մեջ:

Հակառակ դեպքում սպեկուլյանտը մեր կոտպերացիայի ապրանքը և ամբողջ կոտպերացիան ձեր «չանից» կհանի...

1927 թ.

ՆԱՎԱՅԻՆ ՅՈՒՅՑ

Նրազիրներից իմանում ենք, որ Անգլիական կառավարությունն իր ռազմանավերն ուղարկում է Բալթիկ ծովը:

Ասում են պետք է նավերը գան, շրջեն Բալթիկ ծովը, այցելեն Բալթիկ պետությունների նավահանգիստները:

Եվ գուցե այդ արանքում մի պատիկ էլ մտիկ տան ՍՍՀՄ-ի կողմը:

Մտիկ տան ու գնան:

Բայց ինչո՞ւ են գալիս Բալթիկ ծովը. այսինքն ՍՍՀՄ-ի ափերի կողմը, ասենք միանգամից պրծնի գնա:

Այո, ինչո՞ւ են գալիս:

Քմբակոծելու, պատերազմելու:

Պատերազմ չեն հայտարարել:

Գուցե ուզում են ՍՍՀՄ-ի ափերը տեսնե՞լ:

Որ իմանան, թե ի՞նչ կա, ի՞նչ չկա ՍՍՀՄ-ում:

Այդ առանց նավատորմի էլ գիտեն:

Սաղ ըլի լրտեսությունը:

Թե ասեմ «ապստամբական տրամադրությունները ճնշելու համար», ինչպե՞ս անում է Անգլիական կառավարությունն իր գաղութների և կիսագաղութների — Հնդկաստանի, Չինաստանի, Եգիպտոսի վերաբերմամբ:

Բայց որքան, որ աշխարհագրությունն ենք սովորել՝ գոնե այնքանը գիտենք, որ ՍՍՀ Միությունն անգլիական գաղութ չէ:

Թե ասես Անգլիական կառավարությունը դուրս է գալիս բաց ծովը, այնպես, մի քիչ օդ աննելու:

Դե, լավ բան է պառլամենտական և մինիստրական տաք վեճերից և փշացած մթնոլորտից հետո ծովի սառը օդը երբ գիպում է մարդու ճակատին (մանավանդ երբ նա մի քիչ պնդի կողմն է...), ուշաբերում է մարդուն և խելքը տուն բերում:

Թեև ծովային օդի այդ ուշաբերող հատկությունը շատ կասկածելի է, որովհետև Անգլիան ամենամեծ ծովային պետությունն է: Չէ, օդի բան չէ:

Անգլիական նավատորմը գալիս է Բալթիկ ծովը ցույցի պես մի բան անելու, մի բան հասկացնելու Բալթիկ պետություններին և մի քիչ էլ... մեզ:

Իբր թե տեսեք, ես այսքան նավ ունեմ, այսքան թնդանոթ կա վրան, այսքան դյուլմանոց ունեմ կարող եմ նետել և այլն, և այլն:

— է՛, ունիս, ունիս,— կասենք մենք, ունիս,— ասոված ավելի տա, շուգողի աչքը դուրս գա, ո՞վ է բան ասում:

Բանն այդ չէ:

Բանը որ հասնի ցույց տալու, այն ժամանակ ամեն բան պետք է ցույց տալ:

Այ, թող Անգլիական կառավարությունն իր բանվորներին, իր հանքագործներին, իր հնդկացիներին, չինացիներին, աֆրիկյան ցեղերը լցնի նավերն ու բերի տա մեզ:

Բանն այն է, որ Անգլիական կառավարությունն իր նավատորմն ուզում է ցույց տալ մեզ և վախեցնել:

Դե, դա մի քիչ անհարմար բան է:

Ցույց տալու չի՞նի, ցույց տալու տեղը որ գա, մենք էլ մեր ճշգրիտ սարերը ցույց կտանք:

Օրինակի համար...

Իհարկե:

Նավերդ բերում ես մինչև ՍՍՀՄ-ի փոքրը, է՛, քարշ տուր տեսնեմ մինչև Ուրալի սարերը: Մինչև Սիբիր, տեսնեմ ո՞ւմ տակը կծակվի:

Չէ, ի՞նչ հարկ կա պարծենալու և իրար անհարմար բաներ ասելու:

Ես որ լինեի, Անգլիական կառավարությանը կասեի:

— Սիրելիս, նավերդ եթե բերում ես ոչ թե պատերազմելու համար, այլ ցույց տալու կամ մեզ վախեցնելու համար, միտք չունի:

Ինչ հարկ կա ահագին հեռուներից քարշ տալ այդ նավերը և բերել օրերով ման ածել Բալթիկ ծովի փոքրում:

Ուղարկել ես ուզում, ուղարկիր այդ նավերի ցուցակը:

Մինչև անգամ այդ էլ պետք չէ:

Գրիր, թե շատ նավեր ունեմ:

Այսքանը հերիք է. կիմանանք, որ հա, լավ է, ունես:

Թե չէ, բանվորներին, հանքագործներին, դաղութային ժողովուրդներին տանդ թողած՝ նավերը բերելով և ՍՍՀՄ-ի փոքրում դժվժացնելով, փոր չի կշտանա, անուշ չա՛ն:

1927 թ.

ԿՐԿՆԱԿՈՇԻԿՆԵՐ ԵՎ ԿՐԿՆԱՆԳԱՄՆԵՐ

— Այս ի՞նչ բազմութուն է ներսը, երկաթուղու տոմսակ են ծախում:

— Ո՛չ, կրկնակոշիկ են ծախում: Այս բանկոտպի մեծ խանութն է:

— Բայց ինչո՞ւ կրկնակոշիկը ժամանակին է ստացվել:

— Չգիտեմ:

Ներս ենք մտնում բարեկամիս հետ: Սարսափելի ամբոխն այնպիսի խուճապով է ընկել կրկնակոշիկի վրա, որ երկու գոր-

ծակատար ամեն մի բոսիսին հինգ գույգ կոկնակոշիկ տալով՝ չեն կարողանում բավարարել բազմությանը:

— Ի՞նչ են անելու այսքան կրկնակոշիկը, — հարցնում է մեզ մի շփոթված մարդ:

— Ի՞նչ պիտի պատահի, — հարցնում է մի երկրորդը շվարած:

— Գետառը նորի՞ց պիտի լցվի քաղաքը, — դիմում է երրորդը տարակուսանքով:

— Երևի Երևանում ցեխի հեղեղ պիտի լինի — աշխատում եմ բացատրել ես:

Շփոթվածներն անցնում են: Գալիս է ավելի շփոթված մեկը: — Ո՞վ է այն նեգրը, — հարցնում է իր կողքին կանգնած մի ուրիշ շփոթվածի:

— Այդ մեր թաղի բժիշկն է, — պատասխանում է հարցապընդվածը:

— Այդ սև մա՞րդը:

— Այո՛:

— Ասում եք մեր թաղի բժի՞շկը: Հնդեվրոպական ցեղի՞ց:

— Այո՛:

— Ուրեմն նեգր չէ՞:

— Ջանք, ինչ նեգր, լուսավորչական հայ է:

— Ապա ինչո՞ւ է սև:

— Սև չէ, ցեխոտ փողոցից անցնելով փնացել էր բաղնիք:

— Բաղնիք փնացողը ցեխոտ կլինի:

— Բաղնիքից դուրս գալով նորից ընկել է ցեխը:

— Մոտենանք, կարծեմ կրկնակոշիկ է առնում:

Մոտենում ենք:

— Մարդու կրկնակոշիկ ունի՞ք:

— Ուրիշ բանի կրկնակոշիկ կլինի՞, Մարդու կրկնակոշիկ ենք ծախում:

— Դե, տվեք մի գույգ:

— Ո՞ր համարն եք ուզում:

— Չգիտեմ, մեծը տվեք:

— Համեցեք, 12 համարը:

— Շատ փոքր են. մեծը տվեք:

— Վերցրեք 13 համարը:

- Շատ մեծը տվեք:
- Բայց որքա՞ն մեծ:
- Եսի՞մ: Տվեք մի 50, 60, 100, 200 համարանոց կրկնակոշիկ:
- Այդքան մեծը չկա:
- Բժիշկն սկսեց զոռոտալ:
- Այս ի՞նչ կոոպերատիվ է. կրկնակոշիկ եք ծախում, թե մատնոց. պիտի խեղդե՞ք մեզ ցեխի մեջ...
- Ամենամեծն այս է, ուրիշը շունենք, գրել ենք շուտով կատանանք:
- Բժիշկը գայրացավ ու կրկնակոշիկները զարկեց սեղանին:
- Մոտեցա իրեն:
- Ընկե՛ր,— ասացի,— նավային ընկերության անդամ հո՞ չեք. նավատորմիդ հո չեք սարքելու, վերցրե՞ք սրանք, շատ մեծ են արդեն:
- Փոքր են, սիրելիս, փոքր են,— գանգատավոր շեշտով ասաց բժիշկը,— եթե իմանաք ինչ տեղեր եմ այցելում:
- Այո, բայց նրանցից մեծն ինչնիրիդ է պետք: Հիմնարկութուն հո չեք դնելու մեջը, կամ ընտանիքով բնակվելու այնտեղ:
- Ինչո՞ւ հիմնարկութուն դնեմ մեջը, Էդբայր, ինձ կդնեմ մեջը, եղբայր, ինձ կդնեմ մեջը:
- Ձե՞զ:
- Այո... ամբողջովին պիտի հագնեմ, մինչև վիզս: Դրա համար է, որ ասում եմ մտորու կրկնակոշիկ տվեք: Մյուսը ոտքի կրկնակոշիկ են:
- Բժիշկը հեռացավ:
- Մենք գործակատարին մի կողմ քաշեցինք:
- Ասացեք խնորհմ, ընկեր, այս բժիշկը հոգեկան հիվանդ հո չէ՞:
- Այո, արդեն սկսել է ուղեղի խանգարում ունենալ:
- Ինչու չեն տանում հոգեբույժի մոտ:
- Հենց ինքը հոգեբույժ է:
- Երևի ցեխի՞ց է խելագարվել:
- Ոչ այնքան ցեխից, որքան կրկնակոշիկային պանիկայից:
- Իսկապես այս ի՞նչ մոլուցք է, այնպես են վրա ընկել

- կրկնակոշիկ առնելու, կարծես ամբողջ ընտանիքներ, գերդաստաններ, ամբողջ Հայաստանն ուզում է կրկնակոշիկի մեջ մտնել:
- Սարսափելի բան է,— գանգատվեց գործակատարը,— մարդ կա, որ արդեն իր երեք սերնդի համար կրկնակոշիկ է առնում: Վագոններով, զնացքներով կրկնակոշիկ ենք բերում՝ ձեռոց հնձվում է:
- Ի՞նչ է բուն պատճառը:
- Բուն պատճառը կրկնանդամներն են:
- Կրկնանդամե՞րը:
- Այսինքն անդամների կրկինները:
- Նոր տերմինոլոգիա է, բացատրեցեք խնդրեմ:
- Պարզ բառ է, ինչպես որ կրկնակոշիկը կոշիկի կրկինն է, այնպես էլ կան կոոպերատիվի անդամների կրկինը — պարզապես նրանց հարեկանները, բարեկամները, խնամիչների խնամիչները. պարզապես նրանց գրքույկից օգտվողները:
- Ա-հա...
- Նայեցեք այս բազմության: Սրանց մեծ մասը կրկնանդամներ են: Բայազետից, Լենինականից, Ղամաբլվից, Աշտարակից թափվել, եկել են մեր խանութը և այստեղ ևեթ սարքում են իրենց աղջիկների բաժինքն ու փեսացուներին շորերը:
- Եթե ձեր խանութում մի փոքր էլ զագս ունենալիք, կդառնար հարսանիք:
- Այո, զոռնան է պակաս:
- Լավ, ի՞նչ միջոցներ եք ձեռք առնում այս լուսավորչական կրկնադամության դեմ:
- Բռնում ենք այդպիսիներին, բայց ի՞նչ օգուտ. այնպիսի բազմություն է գալիս, որ պետք է մի առանձին բյուրո հիմնել դրանց համար:
- Առանձին խանութ սարքեցեք դրանց բռնելու համար:
- Չի օգնի, այդ առանձին խանութն էլ պետք է մի առանձին խանութ սարքի:
- Ինչո՞ւ կոոպերատիվի գիտակից անդամներին չեք խընդրում, որ խթատեն իրենց անգիտակից ընկերներին այդ հանցանքի համար:
- Դժբախտաբար գիտակիցներն են այդ «կրկնանդամության» պատճառը:

- Կանչեցեք խանութ, խրատեցեք այդ գիտակիցներին:
- Ո՞վ է տեսնում նրանց երեսը:
- Որտե՞ղ են որ:

Իրենց տանն են մնացել և ցեխի պատճառով չեն կարողանում խանութ գալ և կրկնակոշիկ առնել, իսկ մինչև որ կարողանան կրկնակոշիկ առնելու գալ՝ արդեն կրկնանդամները կսպառեն ողջ կրկնակոշիկներն ու մնացած ապրանքն էլ:

— Տեղն է նրանց, բարեկամս, ձեզ մի բան ասե՞մ: Այս կրկնանդամները, ինչպես երևում է, այնպիսի մի ցեխի հեղեղ են, որ առաջարկուս եմ բերել տալ մի խոշորագույն կրկնակոշիկ և կոոպերատիվ խանութը հագցնել, որպեսզի նա կարողանա այդ ցեխից անց կենալ, գնալ իր բանին:

1927 թ.

ՄԱՄՈՒՆ

Տարօրինակ է լրագրի, մամուլի կյանքը:
Կատարյալ արկածների շարք, հեքիաթ, մետամորֆոզա:
Կենտրոն տեղում լույս է տեսնում:

Խմբ. պարտանն անդուլ եռուզեռ է: Խմբագրական կոլեգիա, աշխատանք, հոգվածագիրները գալիս են լցվում: Փոստ, հեռագիրներ, նամակներ: Այստեղ խմբագրական կոլեգիան է հոգվածները ջոկում, կրճատում, հարմարեցնում: Այնտեղ ստիլիստն է աչքերը տարածության մեջ շոտ մի «ավելի հարմար բառ» որոնում: Մի կեղմ աշխատակիցն է զայրացած բողոքում իր հոգվածում սպրդած վրիպակների մասին:

Մեջտեղում տպարանի աշխատակիցն է տնկվել և հոգեառի պես նյութ է ուզում: Տպարանում գրաշարն է սխալվում, սրբագրիչն էլ թոնթորալով ուղղում: Մեքենա, մամուլ, էքսպեդիցիա, փոստ և ահա լրագիրը վերջապես գնում է ընկնում Ղառղա-Բազար:

Հիմի Ղառղա Բազարում:

Գյուղացիք հավաքվել օդայում. նստել են ծալապատիկ պատի երկարությամբ: Պատահաբար նստած է մեջներին մի հյուր, անցորդ ոմն:

Ասում են, խոսում:

Եվ ահա խոսակցության ժամանակ նրանցից մինը ձեռք տանում է ծոցը, հանում է մի ծալած լրագիր:

«Լրագիր... կուլտուրական կենտրոնից մի բարեկամ: Լույսի լուսո... վերջապես»,— մտածում է անցորդ ոմնը և ժպտում լրագրի կողմը:

Գյուղացին բաց է անում լրագիրը, մի պատառ կտրում տալիս է կողքի նստածին: Սա էլ մի պատառ կտրում տալիս է իր կողքի նստածին: Նա էլ կտրում տալիս է իր կողքի նստածին: Եվ այսպես իրարու թավազա անելով մի պատառ լրագիր՝ հանում են թաշկինակների ծայրին, փաթաթած սև թուփունք. լազաթին խնամքով փաթաթում, անց են կացնում մուշտուկներին ու հանգստագույն կերպով սկսում են ծխել և հետո էլ զրույց անել, Բազարի օրվա շար ու բարուց:

— Այ տղա իմ սելն էլի կոտրվեց էդ անիծած քանդված կամուրջի վրեն:

— Տո, դու ջուրն ասա, ջուրը, գեղը ջուր շունի խմելու, ջրելու: Կոտրվեցինք է:

— Էս մեր խանութպանն էլ հո մեզ կերավ:

Ու ֆսֆսացնում են էն մեր մամուլը... Հետո այն անցորդ ոմնը քաղաքի լրագրում նկարագրում է սույն «ջերմ» ընդունելությունը, որ մամուլը գտել է գյուղում, հիշում է «կուլտուր-տրեգեր» գյուղացու անունը, որ առաջին անգամ լրագիրը մտցնում է դառողաբարցիների մուշտուկները: Շրջակա գյուղերում ծիծաղում են: Լուրը հասնում է Ղառղա-Բազար: Քաղաք գնացող մեկի ձեռքով «կուլտուր-տրեգերը» բերել է տալիս այդ լրագրի համարը և խրնամքով ծալելով դնում է դռակի տակը: Այստեղ լրագիրն ստանում է իրականության մամուլի առաջին սխմոցը, հետո գյուղում դպրոց է բացվում:

Կոոպերատիվ խանութ:

Փոկ:

Խրճիթ-ընթերցարան:

Գյուղթղթակից:

Սա սկսում է կամաց-կամաց գրել, թղթակցել լրագրին: Կամաց-կամաց մտնում է գյուղական իրականություն մանրամասների մեջ:

Ու քննադատում է, քննադատում է կոոպերատիվ խանութի բացերը, քննադատում է Փոկի վարչությունը, քննադատում է գյուղխորհրդին, քննադատում է դեպի կուպակները ցույց տրված անտարբերությունը:

Գե մարդու սիրտն այդպես է ուզում:

Ասած է «Արվեստը դժվար է, քննադատությունը՝ հեշտ»: Եվ ահա մի օր էլ մեր գյուղթղթակցին մի հիմնավոր ծեծ են ուտեցնում կամ ասենք, մի քիչ սպառնում են: Եվ բանից դուրս է գալիս, որ արվեստը դժվար է, քննադատությունն էլ դժվար է: Պետք է դրա համար պատրաստություն ունենալ... մեջքի և ծոծրակի:

Այստեղ էլ գյուղթղթակցին է գրվում մամուլի տակ: Եվ հասարակական մտքի առաջին շփումն սկսվում է հասարակական բռնությունների առաջին շփումով, բայց լուրը հասնում է լրագրին, հրապարակվում է դեպքը, և դործն ընկնում է ժողովատարան:

Ինչևհ Ղառղա-Բազար: Մարդիկ դալաթ արին մի լրագիր ծխեցին, դու էլ քմեներից բերիր: Հիմի ստիպված բերել են տալիս լրագիրը, որ տեսնեն, թե բանն ինչով է վերջանում:

Հետզհետե նորանոր դեպքեր են պատահում և դատաբազարցիք լրագիր կարդալ տալով՝ նկատում են, որ լրագրի մեջ, բացի խախտներից, ուրիշ լավ բաներ կան իրենց գյուղի քանզված կամուրջը շինելու մասին. գյուղը ջուր բերելու մասին, ինչ: Ինչ: Ֆիկացման մասին, ոացիոնալ տնտեսության մասին:

Եվ ահա Ղառղա-Բազարը, որ առաջ ծխեց լրագիրը, հետո դրեց դռակի տակ, հետո ծեծեց նրա թղթակցին, հիմի արդեն նամակ է գրում լրագրի էքսպեդիցիային:

«Լրագիրներն ուշանում են, խնդրում ենք վերջ տալ անկարգությունն»:

Հիմի էլ Ղառղա-Բազարն է ընկել մամուլի տակ և ճնշվելով կաղապարվում է նրա մտայնությամբ, նրա գաղափարներով:

Նույն պատմությունն է և գործարանային հեռավոր և մտավոր վայրերում:

Թղթակցին դուրս են անում, թղթակցին սպառնում, խոտվում են լրագրից, խմբագրությունից — անհանգստանում են նրա հոգվածներից, դիմադրում, հետո գրադվում և վերջը դառնում լրագրի բարեկամը:

Մամուլը կյանքի հայելին է:

Շատերը նրա մեջ տեսնում են իրենց... ուռած քիթը և կարծելով, թե հայելին է ուռած՝ խփում են հատակին և ջարդում:

Բայց ուռած քիթը մնում է:

Վերցնում են մի ուրիշ հայելի. նայում են մեջը — էլի քիթն ուռած է: Էլի են ջարդում: Վերջը իրենց ուռած քիթի համառությունից համոզվում են, որ հիվանդն իրենց քիթն է, դիմում են բժշկին: Ասում է. «Բանն ասելը չէ, բանն անելն է»:

Ոչ:

«Շատ անգամ բանն ասելն է»:

Տեղեր, դեպքեր կան.

Մամուլն այն «վատամարդն է», որ ասում է ճշմարտությունն այնտեղ, ուր «բարեխնամ լուսություն է»:

Մամուլն այն ջրի կաթիլն է, որ կամաց-կամաց, ամեն օր, ամեն ժամ, ամեն րոպե այնքան է կաթում իրականության քարի վրա. որ ծակում է:

Մամուլն այն ամենօրյա, ծանոթ, սովորական դառած պատմությունն է, որ վերցնում կարդում են և դեն դնում:

— Հին պատմություն է, հետաքրքիր բան չկա:

Մյուս օրն են կարդում:

— Հին պատմություն է, հետաքրքիր բան չկա:

Երրորդ օրն են կարդում:

Եվ «հետաքրքիր բան չկա» ասելով այնքան են կարդում, կարդում, որ յուրացնում են աշխարհիս իրադարձությունների իմաստը, լցվում գիտակցությամբ, կամքով և անում այն, ինչ-որ մամուլն ասում է:

1927 թ.

ԻՆՉ ԳՈՐԾ ՈՒՆԵՍ ԱՅՍՏԵՂ

Մենք մի խիստ ուսուցիչ ունեկինք՝

Ամեն տեղ հետևում էր մեզ՝

Չէր պատահի, որ մի տեղ լինելիս, մի բան խաղալիս կամ վըրա չհասներ, կամ վրաներս չբարկանար։

— Այստեղ ի՞նչ գործ ունեք։

Գնում էինք եկեղեցու հետևն ութթուրմա խաղալու։

Մեկ էլ տեսար խիստ կերպարանքով ներս մտավ։

— Ահա, այստեղ եք. ի՞նչ բան ունեք այստեղ։

Փախչում էինք հեռու փողոցները։ Բայց ահա խաղի թունդ ժամանակը վարժապետի խոժոռ կերպարանքը և դաժան ձայնը։

— Այս ո՞րտեղ եմ տեսնում ձեզ, ի՞նչ եք անում այստեղ։

Հանգիստ ու դադար չկար։

Ոչ մի տեղ չեղավ, որ մեզ չհետևեր խստապահանջ վարժապետը։ Բոլոր տեղերը փորձեցինք։ Գնացինք դպրոցի բակը, չեղավ՝ անգամ դասարաններում վրա կընկներ և կհարցներ։

— Ի՞նչ գործ ունեք այստեղ։

Բայց մեր հալածանքը միայն նրանից չէր։

Շուկայում մրգավաճառներ կային, որ երևի վախենալով, որ մենք կարող էինք իրենց տաշտերից միրգ թոցնել (ճիշտն ասած չէինք մտածում), հենց հեռվից տեսնելիս մեզանից մեկին, ասենք՝ մի քար վերցնելիս, կգոռար։

— Վայ, վայ, վայ տեսաք ի՞նչ արեց։ Տեսաք ի՞նչ արեց։

— Ի՞նչ, ի՞նչ, — ձայն կտային մյուս վաճառականները։

— Քար վերցրեց։

— Քա՞ր... քա՞ր... քա՞ր։ Բռնեցե՛ք...

— Բռնեցե՛ք, — գոռում էր ամբողջ շուկան։

Իսկ մենք «պուկ» փախչում էինք լեղապատառ։

Շատ լավ սխտեմ էր մեզ փախցնելու։

Մեզանից և ոչ մեկը մի անգամ զլխի շրնկավ մտածելու, թե այդ ինչպես է, որ վարժապետն ամեն տեղ մեզ նկատում է, թե «չպետք է լինել» և որտեղ է, որ «կարելի է լինել»։

Չհասկացանք նաև այն մրգավաճառներին, թե ինչո՞ւ էին ամեն բան վերցնելիս, ամեն ինչի ձեռ տալիս գոռում մեզ վրա։

Բայց մենք վախենում էինք։

Միայն մեզանից մեկը շատ հետո «կասկածելի», «խուլ» փողոցներով անցնելիս՝ երբ խոժոռ վարժապետին հանդիպեց և նա հարցրեց, թե ի՞նչ բան ունիս այստեղ, ինքն էլ նրան հարց տվեց։

— Այստեղ ես ոչինչ չունեմ, բայց եթե սա վատ տեղ է՝ իսկ դու ի՞նչ բան ունես այստեղ։

Հիմա այս խստապահանջ վարժապետի և խորամանկ մրգավաճառների դերն են ստանձնել եվրոպական կառավարությունների անգամներն ու ամբողջ եվրոպական «բարձր» հասարակությունը։

Մեկ էլ տեսար հանկարծ ահապին իրարանցում։

— Ի՞նչ է պատահել։

— Անիմանալի բան։ Անհուսանելի բան։ Անհնարին, շտենըրված, ապշեցուցիչ բան։ Որ իմանաք, չեք հավատա։ Կասե՛ք՝ սուտ է, զրպարտություն է։

— Բայց ասացեք, տեսնե՞ք, ի՞նչ է պատահել։

— Հաբեշտանի Ջիբուզի քաղաքի տներից մեկի ուղղակի մեջը պատուհանի առջև մի ուս կոմունիստ է երևացել։

— Հաբեշտանում, ի՞նչ է ասում...

— Ջիբուզիում...

— Քաղաքի տներից մեկում...

— Տան մե՞ջ...

— Պատուհանի առջև...

— Այո, սպասում ենք լրացուցիչ տեղեկությունների։ Հետևյալ օրը։

— Տեղեկություններ եկա՞ն։

— Եկան։ Ճիշտ էին մեր ստացած տեղեկությունները։ Ջիբուզիում ուս կոմունիստ է երևացել։

Հետևյալ օրը։

— Լրացուցիչ տեղեկություններ եկա՞ն։

— Եկան։ Եվ գիտե՞ք ինչով է զբաղվելիս եղել ուս կոմունիստը։

— Ինչո՞վ։

— Անբրևակայելի, վրդովեցուցիչ բանով։ Գնացել է Հաբեշտան և ուսումնասիրում է ցորենի ծննդաբանությունը...

— Չէ՛է՛է՛...

— Տեղեկություն տրվա՞ծ է մեր գործակալներին Հնդկաստանում այդ մասին։

— Հայտնովա՞ծ է Մոսկվա, Սովետական կառավարության:

Հետևյալ օրը:

— Աղվաճստանում մի ուս կոմունիստ է երևացել:

Մի ուրիշ օր:

— Կանտոնում տեսել են մի ուս կոմունիստի: Ի՞նչ է շինում

նա այնտեղ:

Եվ Անգլիան, որ ամեն տեղ քիթը խոթում է մեր խոժոռ վարժապետի պես՝ մեզ հետ ուզում է նույն սխտեմով վարվել:

— Ի՞նչ եք շինում այստեղ:

Եվ իրավունք ունի:

Մարդն ուր էլ որ գնում է, հանդիպում է ուս կոմունիստի:

Եվ գարմանում է, և գաքրանում է, և արյունը գլխին է խմում, և գոռում է:

— Զարմանալի բան է, որ գնում եմ, կամունիստներին եմ հանդիպում, ի՞նչ գործ ունիք այստեղ:

Զի՞ լինի որ մի օր էլ այդ կոմունիստը հարցնի նրան.

— Իսկ դուք ի՞նչ գործ ունեք այստեղ:

Անգլիան (ինչպես և մյուսները) ամբողջ աշխարհն իրենցն են համարում: Կանտոնն էլ իրենցն է, Պեկինն էլ իրենցն է, Բոմբեյն էլ իրենցն է, Իրենք կարող են ամեն սեղ լինել, իրենք կարող են ամեն բան անել, Բայց հենց շվաքո երևա մի որևէ Ավստրալիայի Պերթ քաղաքում կամ Սաոուցյալ օվկիանոսի մի սառույցի վրա՝ աչքերը խոժոռում են.

Ի՞նչ բան ունեք այստեղ:

— Իսկ դուք ինչ ունեք, եթե տեղն «անկարգ» է: Իսկ եթե «կարգին» տեղ է, ինչո՞ւ ես չպիտի լինեմ այնտեղ:

Բայց Անգլիան խորամանկ մրգավաճառի պես էլ է վարվում մեզ հետ:

Հենց Սաոուցյալ օվկիանոսում տեսավ թե չէ՝ գոռոտոցք գցում է, որ չլինի թե հանդիպի Կանտոնում էլ, հետո էլ Բոմբեյում, հետո էլ Լոնդոնում...

Վերջն էլ լորդերի տներն մեջ...

1927 թ.

Բյուրոկրատիզմի տեսակները շատ են, և քանի որ շատ է խոսվում բյուրոկրատիզմի մասին, հիշենք նրա տեսակներից մի քանիսը:

Կա արտադրական բյուրոկրատիզմ կա լուսավորչական բյուրոկրատիզմ, վարժապետական բյուրոկրատիզմ, բնավորության բյուրոկրատիզմ, տրոպիկական բյուրոկրատիզմ, ներհայեցողական բյուրոկրատիզմ, նախանձախնդրական բյուրոկրատիզմ և այլն, և այլն: Մինչև անգամ բյուրոկրատական բյուրոկրատիզմ:

Եվ որովհետև բյուրոկրատիզմի մասին մի մեծ ուսումնասիրություն ենք պատրաստում, որ տասնհինգ տարում հույս ունենք ավարտելու՝ այստեղ համառոտակի մեջ քննենք այն բյուրոկրատիզմի օրինակները, որոնցով օժտված ենք մենք:

Ամենուրեքստիված (և հարագատ) տեսակը մեր երկրում տրոպիկական կամ արևմտալիստական բյուրոկրատիզմն է:

Ինչպես գիտե՞ք, թե՛ Արևմտյան Եվրոպայում և թե՛ Ռուսաստանում շատ է գրվել, մինչև անգամ երգվել Արևելքը: Բանաստեղծները շարունակ գեղեցիկ են ծանրախոհ, լուսնիտ, խոկուն, նիրհուն Արևելքի մասին: Քանի նկարիչներ անմահացրել են իրենց կտավի վրա այդ հոյակապ պատկերը: Նստած է արևելցին քուրմի պես, աչքերը կիսափակ, մշուշոտ երազների մեջ, միտքիկ մտքերը ծովում խորասույզ և լսողությունը դարձրել է միջտիեզերական լուսնյան հեռավոր զոզանջներին:

Ի՞նչ է մտածում արևելքի այս առեղծված մարդը:

Ոչինչ:

Ոչինչից ոչինչ:

Չլինի՞ իսկապես կարծում եք, թե իր ունկը խոնարհեցրել է գեպի տիեզերական փիլիսոփայությունը:

Պարզապես թամբալություն է անում:

Շոգոց, մալարիացից, ափիոնից, անգործությունից թմրել, բունը տանում է:

Ահա ճանճը բզզաց, բզզաց և եկավ նստեց նրա աչքի աղ-քերակի վրա և սկսեց ծծել: Մեր արևելցին, որ «թամբալությունից էլին քեռի է ասում», ուզում է կարծես քշել ճանճին, բայց թամբալությունը գալիս է: Ինք ճանճ իրար հետևից գալիս են նստում

ներա աչքի վրա: Ճիշտ է՝ նեղվում է մեր արևելցին, բայց միայն նայում է, աչքերը կիսախուփ, քիթը կնճռած: Ի՞նչ է մտածում: Մտածում է, թե ի՞նչ կարիք կա իսկապէս քշելու այս տասը ճանճը: Սրանք քշես, մյուսները պիտի գան ծծելու: Գոնե սրանք թող ծծեն կշտանան և հանգիստ նստեն: Գոնե ուրիշ ճանճեր տեսնելով, որ տեղն զբաղված է, էլ չեն գա նստելու նրա աչքի վրա:

Լավ է տասը ճանճ, քան հազար ճանճ:

Լավ է մի ճանճ, քան երկու ճանճ:

Բայց ամենից լավ է ոչ մի ճանճ քան որևէ ճանճ:

Ուրեմն և ոչ մի շարժում մի անի:

Արևելյան փիլիսոփայություն, թեկուզ վաճառական, թեկուզ գրագիր, թեկուզ պետական պաշտոնյա, արևելցին միշտ գործը ձգձգում, դանդաղեցնում է և վերջը կանգնեցնում, որ իր հանգիստը չվրդովվի:

Արևելյան թամբախանաները (ծուլների համար շինած տները) ավելի լավ օրինակ են այս ճանճականության:

Թամբախանայում մի օր հրդեհ է ընկնում: Եվ ահա թամբախաներից մինը փոխանակ վեր կենալու և դուրս փախչելու, նվում է միայն:

— Օգնեցեք, տարեք դուրս, այրվում եմ:

Իր կողքին պառկած մի ուրիշ թամբախան տնքում է.

— Իր... գան... քեզ տանելու... ասա... ինձ էլ... տանեն...

Լավ է ասել Բուդդան:

«Լավ է քալել, քան վազել:

«Լավ է նստել, քան քալել:

«Լավ է պառկել, քան նստել:

«Լավ է քնել, քան պառկել:

«Բայց ամենից լավ է մեռնել, քան քնել»:

Ճանճիզմ... թամբախություն...

Ահա այս ճանճիզմն է, որ իբրև հիվանդություն պատճառ է դառնում այն տրոպիկական բյուրոկրատիզմին, որից շատ կղբանենք մեր հիմնարկների մեջ:

— Ընկեր, գրեցեք իմ թուղթը, մի ժամ է կանգնած եմ, — ասում է գյուղացին իր սեղանի մոտ անշարժ նստած օրինեսալիստին:

— Սպասեցե՛ք:

— Բայց ես շտապում եմ:

— Վաղը եկեք, այսօր դժվար թե հասնի:

— Ախր վաղն էլ որ գամ, նույնը պիտի ասեք:

— Չէ, կլինի:

— Կլինի՞:

— Կլինի, կլինի, կամաց-կամաց: Կամ:

— Ուրեմն ինչպե՞ս անենք, ընկեր վարի:

— «Կխոսենք» այդ մասին:

— Հիմա խոսենք:

— Լավ «կմտածենք» այդ մասին:

— Հիմա մտածենք:

— Դիմում տվեք:

— Ախր ինչ դիմում, մի խոսք է, ասեք անենք:

— Լավ, եկեք վաղը «խորհրդակցենք» այդ մասին:

Այս տրոպիկ բյուրոկրատիզմն այս անձի հանգստյան համար է:

Ինչպես ասացինք՝ կա նաև արտադրական բյուրոկրատիզմ: Այս էլ թղթեր արտադրելու տեսակն է: Ինչ տեսակ թուղթ ուղում է լինի, միայն հիմնարկը շատ ստանա ու շատ ուղարկի: Գրում է, ստանում, դիզում թե՛ իր հիմնարկի և թե՛ ուրիշ հիմնարկի թղթերի պահարանները:

Այս «գործ» ստեղծելու համար է:

Լուսավորչական բյուրոկրատիզմ. այս իրար հետ «ինադ» ընկած հիմնարկությունների գրադիտության տեսակն է, երբ մեկը մյուսի վրա է գցում մի գործ և համառորեն շարունակում գրել իրար՝ ամիսներով իր «ինադն» առաջ տանելու համար:

Սրան մի քիչ նման է վարժապետական բյուրոկրատիզմը, միայն մի տարբերություն. մինչդեռ լուսավորչական բյուրոկրատիզմն «ինադ» է անում գրությունների բովանդակության համար, վարժապետական բյուրոկրատիզմն ավելի ձևի, ոճի և լեզվի համար է ձրգձրգում:

Բնավորության բյուրոկրատիզմ: Այս էլ այն տեսակ բյուրոկրատիզմներից է, որի տերը շատ նորմալ մարդ է, ամեն բան հարթ տանում է բայց մի մեխ ունի, հենց բանը հասավ թե չէ այդ մեխին, սկսում է վիճել, շեղվել ձգձգել և գործը հեռացնել ափերից, սատանան գլխե, թե որ օվկիանոսները:

Ներհայեցողական բյուրոկրատիզմն էլ այն է, որի տերը մանրում, վերլուծում, ճշուղավորում է գործերի նյութը: Հասնում է մինչև հյուլեարանության... մինչդեռ տեխնիկական ծառայողի կոշիկների մասին չ'խոսքը:

Նախանձախնդրական բյուրոկրատիզմ. սրա տերը սաստիկ շատ է շտապում, սաստիկ շատ գործեր է ուզում անել, գնում է դեսուդեն, անհանգստացնում է ամենքին և ամեն ինչ: Դեպքեր շատ են պատահում հիմնարկում, բայց գործ չ'կա:

Բյուրոկրատական բյուրոկրատիզմը դա այն կլասիկ, հին բյուրոկրատիզմն է, որ գիտակցաբար, սիստեմատիկ կերպով ձրգ-ձգում, ուռցնում, խճողում է գործերը, որպեսզի բյուրոկրատիզմը լինի, որպեսզի հիմնարկությունը լինի, որպեսզի ինքը լինի:

Այս բոլոր բյուրոկրատիզմները թեև շատ համառ հիվանդու-թյուններ են. բայց վերջապես բուժելի են: Ամենից դժվար բու-ժելին լուսավորչական բյուրոկրատիզմն է, որ հայկյան ցեղային հատկություն է, պետք է ցեղը փոխել: Վարժապետականը՝ դաս-տիարակության հարց է. շատ էլ դժվար չ'է:

Ներհայեցողական և նախանձախնդրական բյուրոկրատիզմը նույպես բուժելի է, թեև ջանք է պահանջում:

Բնավորության բյուրոկրատիզմը հեշտ է բուժել: Պետք է մի անգամ վրան թունդ գոռաս:

Դժվարը տրոպիկ բյուրոկրատիզմն է, որ պահանջում է երկա-րառև սրսկումներ: Բայց ամենից դժվարը տրոպիկ բյուրոկրատիզ-մի ծածուկ տեսակն է, որի գոյությունը շատ անգամ չի հայտնվում՝ եթե արյունն անգամ ջննել տաս:

Սրա պալլատիվ բժշկության ձևը կա:

Օղափոխություն...

1927 Բ

Զեխոսովակիայի արտաքին շրժոց մինիստր, ազգային սոցիալիստ Բենեշն այս օրերս ընդունեց մեղալիստ բանվորների պատգամավորներին, որոնք նույնպես ազգային սոցիալիստ պար-տիայի մեջ են և հկել էին նրա նոտ սահանջելու, որ Զեխոսովա-կիան ճանաչի Սովետական Միությանը:

Բենեշը պատասխանեց, որ... Բայց նախ և առաջ մի քանի խոսք հենց իրա՝ Բենեշի, մասին: Այս մարդուց դժվար է մի քիչ բան հասկանալը, տարօրինակ է մի քիչ, այնպիսի հայտարարու-թյուններ է անում երբեմն, որ չգիտես վարժություններ է անում վեց ամիս հետո խելագարվելու, թե խելագարված է եղել և պատ-րաստություններ է տեսնում հետզհետե առողջանալու:

Բայց մազալու մարդ է:

Ուղղակի կոմիկ:

Իր Արտաքին գործոց մինիստրի պաշտոնում եղած բոլոր ժա-մանակ, որքան անգամ որ հարց է դրվել Սովետական Միությունը ճանաչելու և իրեն հարց են տվել, թե ե՞րբ կճանաչվի Սովետական Միությունը՝ Բենեշը հանկարծ վեր թռչելով պատասխանել է.

— Խորհրդային Միությունը, հա, շատով կճանաչվի:

— Շուտով:

— Այո, շուտով:

— Բայց հաստատապես ե՞րբ:

— Հաստատապես՝ մոտ ժամանակներս:

Անցնում է մի քանի ամիս, մի տարի:

— Ե՞րբ է վերջապես ճանաչվում Խորհրդային Միությունը:

Բենեշը դարձյալ վեր է թռչում տեղից և միամիտ ժպիտով պատասխանում է.

— Այ, մի քիչ հետո:

Բենեշը այն մարդուն է նման, որի հետ ճանապարհին պա-ռահմամբ ուղևկից դառած՝ հարցնում ես.

— Բարեկամ, Բողազբյասան հասնելու շա՞տ մնաց:

— Բողազբյասանին ի՞նչ մնաց որ... այ, էստեղ է, քթի տակ:— Ու քթի ծայրով ցույց է տալիս մի հարյուր սածենի շափ տեղ:

— Բա՞նի ժամ ճամփա ունենք դեռ:

- Կես սհաթ էլ չի քաշի. մոտեցել ենք:
- Գնում ենք կես ժամ. երկու ժամ, երեք ժամ:
- Բարեկամ, Բողազքյասանդ ո՞ւր մնաց:
- Էս ա, էս յառն էլ անցնենք, հրես կերևա:
- Անցնում ենք մի բլուր, երեք բլուր, երկու սար:
- Բողազքյասանդ չկա, բարեկամ:
- Տեսա՞նք, մտնում ենք հրես Բողազքյասան, ասում ես չկա՞:
- Չես իմանում ձեռն է առել ձեզ, թե պլուխը կորցրել է, գնում

ենք, գնում, — Բողազքյասանը չկա ու չկա:
 Ահա մեր Բենեշը էլ ճիշտ այդ բողազքյասանցին է: Դրա համար է, որ երբ բանվորները նրան հարցրին, թե երբ պիտի Չխոսլովակյան կառավարությունը ճանաչի Սովետական Միությունը, Բենեշը պատասխանեց.

- «Ճանաչումը տեղի կունենա հարմար մոմենտում»:
- Հրաշալի պատասխան, որ թե՛ պարզ է և թե՛ որոշ:
- Ճանաչում ընդունո՞ւմ է Բենեշը:
- Ընդունում է:
- Տեղի պիտի ունենա՞:
- Այո՛, պիտի ունենա:
- Ի՞նչ ժամանակ: Նշանակվա՞ծ է ժամանակը:
- Այո, մոմենտում:
- Ո՞ր մոմենտում:
- Հարմար մոմենտում:

Դե, իհարկե, ինչպե՞ս կարող է ճանաչումը տեղի ունենա անհարմար մոմենտում:

Բայց հարմար մոմենտն էլ ո՞րն է:
 Դա Բենեշը գիտե, կամ ավելի ճիշտը Բենեշն է, որ չգիտե: Ինչպես այն բողազքյասանցին, որի «սհաթը» մի առաձգական խոսք է:

Իհարկե, եթե Բենեշը խելագարության պատրաստություններ չի տեսնում՝ ճիշտն այն է, որ նա ձեռն է առել: Քանի՞ տարի եղավ, որ հասնում է դեռ Բողազքյասան:

- Բայց ո՞ւմ է ձեռն առել:
- Եթե իր հայրենակիցներին — դա իր բանն է:
- Եթե Եվրոպայի «հասարակաց կարծիքին» — դա էլ Եվրոպայի հասարակության բանն է: Բայց եթե Սովետական Միությանն է

ձեռն առել. թող Բենեշը նեղություն չկրի: Բողազքյասանի ճամփան իրենից հարցնող չկա:

Մի փոքրիկ հարց էլ, և վերջացնենք համառոտ Բենեշի պատմությունը:

Հետաքրքիր է, թե ինքը Բենեշը ի՞նչ է մտածում իր մեջ. ուզո՞ւմ է ճանաչել Սովետական Միությունը:

- Իհարկե ին՞չը չի ուզում:
- Բայց մի օր կճանաչի՞ Սովետական Միությունը:
- Այս մասին ին՞չից հարցրեք:

Մի օր կճանաչի: Այդքան խելք ունի Բենեշը: Ձուր չէ, որ այդքան տարի է Արտաքին գործոց մինիստր է: Նա գիտե, որ ուզենալը դեռ նշանակություն չունի: Փաստը որ կա՝ պետք է ճանաչես:

Դրա համար էլ ձգձգում է, դեռ չի ճանաչում, երբ հասնի այդ փաստին՝ խելացի և ռեալիստ մարդու պես ասի.

- Այ, ահա էս էլ քեզ Բողազքյասան, նոր որ հասանք:
- Այսինքն Չխոսլովակիայի սովետականացման օրը:

1927 թ.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔ

Բանվորների առաջնորդ Ալբերտ Թոմասը հարսանիք ուներ այս օրերս:

Համեստ աշխատավոր մարդու էր տալիս իր աղջկան: Լավ, ձոխ ընթրիք, ծախս բան...

Հինգ հարյուր մարդ էր հրավիրված, որոնց մեջ Բոլդույինը, Կոյդ Ջորջը և այլ այսպիսի քաղաքական «ընկերներ» և «բարեկամներ»:

Հարսանիքը շատ մտերմական բնույթ ուներ և սրտալի անցավ: Այսինքն ի՞նչ կա որ, պիտի ասեք:

Ոչինչ: Ո՞վ է բան ասում: Աղջիկ է, հասել է, մարդու պիտի գնա, էհ, կարգ է, օրենք է, պիտի կատարվի:

Անգլիական մամուլը, հախ աստծո, ջերմ վերաբերմունք ցույց տվեց այդ հարսանիքին և ի պատիվ իրենց՝ անկեղծորեն ջերմ վերաբերմունք ցույց տվին այդ դեպքին և տասնյակ ֆոտոուպորտյորներ լուսանկարեցին հարսանիքի կարևոր և պատմական հրե-վայթները:

Այդ լուսանկարներից երեքը դրված են մեր առջև:

Նրանցից մեկում լուսանկարված է հարսանքավոր կույր Ջորջը, որ ցիլինդրը գլխին, կոկ հանգնված դուրս է գալիս իր տան դռնից և շտապում է Թոմասենց տուն:

Երկրորդում լուսանկարված է ինքը՝ Բոլդուինը, իր կնոջ հետ թեանցուկ, նույնպես շտապում են հարսանիքի:

Երրորդը՝ Թոմասի աղջիկն է իր փեսացուի հետ:

Սրտաշարժ լուսանկարներ են:

Ինչպես տեսնում եք՝ մեր բանվորների առաջնորդ Ալբերտ Թո-մասի քեֆը վատ չէ:

Եվ ինչո՞ւ վատ լինի:

Վերջին ժամանակներս ճիշտ է մի փոքրիկ կասկած ուներ, թե միզաքար ունի: Բայց քիմիական վերլուծումը գտավ, որ դա միզափամփուշտի հասարակ բորբոքումն է, որ և անցել է արդեն:

Չէ, փառք աստծու, ջանն առողջ է:

Այդ միզաքարն էր միայն, որ նրան շատ մտահոգութուն էր պատճառում: Հիմի այդ էլ որ չկա՝ այնպես ուրիշ մի առանձին հոգս չունի:

Նյութականն էլ վնաս չունի, շատից-քչից կա:

Կա, որ հինգ հարյուր մարդով հարսանիք է սաբքում և լորդի Գրավիքում:

Էլ ինչո՞ւ համար քեֆը լավ չլինի:

Եվ վերջապես սրտի բան չի՞:

Բայց հարսանիքի ժամանակը մեզանում աշունքին է:

Աշունքին, երբ դաշտային աշխատանքները վերջանում են, բերքը, պտուղը բերած լցրած են լինում հորերը, գինին ածած է վնում կարասները, քիչ-միչ էլ փող է շարժվում:

Հետո սրտներն էլ շեն է լինում:

Ճիշտ է՝ նշանվող տղայի կամ աղջկա ամուսնության (ալ-սինքն էշի առակի) խոսքը գարունը վախից սկսում է կամաց-կամաց: Բայց իսկական խոսքը բացվում է աշնան վերջը, երբ Թա-

նան ապերը Նոյեմբար բաջու հետ քուն մտնելիս և իր կոնատակը քորելով հորանջելիս՝ Նոյեմբար բաջին նրա կողը բզում է:

— Մյրը, նախշունին ուզող կա, հի՞նչ ըս ասում: Կամ՝

— Պա մյրը Թյունի կանաչ-կարմիրը կապըմ չը՞նք:

Այս է կարգը:

Աշունքին:

Թե չէ գարնան մեջը, ամառը հարսանի՞ք, ի՞նչ խաբար է:

Բայց Ալբերտ Թոմասը դաշտային աշխատանք չունի շինացի գյուղացիների նման, ոչ էլ աշխատավարձի հարցեր ունի կան-տոնցի բանվորների նման:

Կամ հենց թեկուզ Անգլիայի հանքագործների նման:

Փառք աստծու, այդ կողմից նա հանգիստ է:

Շատ կանոնավոր և անվրդով կյանք է վարում: Գործն էլ քիչ:

Առավոտները պիտի քիչ լրագիր կարդա:

Գե շինական դեպքեր են, Հնդկաստանի գործեր:

ՍՍՀՄ...

Անախորժ է, բայց պիտի կարգա:

Հետո շաբաթը մի անգամ պիտի գնա գերագույն խորհրդի շինութայն բակը, գլուխը մի անգամ պատուհանից ներս խոթե-լու համար՝ տեսնելու, թե ով կա, ով չկա:

Երբեմն պիտի բանախոսի բանվորական հավաքությունում:

Կիրակի օրերը պիտի եկեղեցի գնա:

Ճիշտ է, սա էլ գործ է, բայց դժվար չէ:

Հետո՝ ընդհանուր դրությունն էլ լավ է:

Փառք աստծու, հանքագործների գործադուր վերջացավ:

Զինական կոնցեսիաները պաշտպանված են անգլիական զրահա-նավերով ու զորքերով:

Շանհայում հանգստություն է:

Նանկինի ռմբակոծված շինացիները ուումբերի հարվածների հետևանքով ոչ մի շարժում չեն անում:

Նույնպես անշարժ են բանտերի խուցերում սեղմած բանվորները:

Մի քիչ բանվորների գլուխները շատ են կտրում Զինաստա-նում, բայց դա էլ թրի սուր լինելուցն է: Կթթանա, կտեսնեն, որ էլ չի կտրի, թարգ կանեն:

Այնպես որ դրուժյունն ընդհանրապես վատ չէ և հարսանիքի համար աշնանն սպասելու կարիք չկա:

Ինչ որ է, ներողութիւն եմ խնդրում, որ նյութից շեղվեցի, և թողնենք տխուր մտքերը, շատ ուրախ հարսանիք եղավ. պար, զուռնա, սազանդար, ծափ, շախկարա, տուշ... (Իհարկե անգլերեն):

Լյուդ Զորջն ու Բուդուլիներ մի-մի լավ շաբաշ տվին...

Բախտի բան է:

1927 թ.

ԱՄՍՎԱ ՕՐԱԳԻՐ

Խեղճ ալբանական ժողովուրդ: Խեղճ Ալբանիա:

Հանգիստ քնած իր համար: Մի առավոտ վաղ եկան ձայն տվին, թե վեր կաց:

Թարժած եղած վեր կացավ:

— Ի՞նչ կա:

— Վեր կաց: Մբռեթ՝ պիտի ունենաս:

— Մբռեթ: Չեո քաշիր մբռեթս գիտեր:

— Չէ, մբռեթ պիտի ունենաս: Ալբանական սեփական մբռեթ,

որ քեզ կառավարի:

— Յանի որ շունենամ, ի՞նչ կլինի:

— Չէ, պիտի ունենաս, պիտի դառնաս առանձին, անկախ

պետութիւն:

— Լոիր, էդ մբռեթն իմ ոչխարների հետ կապ ունի՞:

— Ոչ մի կապ:

— Դե որ էդպէս է, շուգեցինք էդ մբռեթը:

— Չէ, պիտի ունենաս:

— Ալլահ, ալլահ գոռի բա՞ն է:

— Զոռի բան է, եվրոպական մեծ պետութիւններն են վճռել

որ Ալբանիան պիտի դառնա անկախ իշխանութիւն:

— Ասել է շախտի կարողանամ շուգեցալ:

1 Իշխան:

— Չէ:

— է, հիմի ես ոնց անեմ:

— Ո՞նց պիտի անես, մբռեթը պատրաստ է: Վաղը գալիս է: Սեծ պատվով ընդունիր և դառիր յաղատ ու անկախ պետութիւն:

Ալբանիան դուխը ծեծեց:

— Տեսա՞ր իսթան: Տեսա՞ր քաշելիքը: Հիմա ես ո՞նց եմ դառնում անկախ իշխանութիւն. ո՞նց է լինելու իմ ոչխարների բանը:

Այսպիսով խեղճ Ալբանիան դառավ ազատ ու անկախ պետութիւն: Սա մի 14—15 տարի առաջ էր: Եվ խեղճն այն օրից սկսած անկախութիւնն է անում: Ընկել է տալիսի և Հարավսլավիայի ճանկերը: Սրանք էլ Ալբանիան իրար ձեռքից խլելուց զատ գործ չունեն: Իրար են տալիս, իրարից առնում, մտնում Ալբանիա, դուրս գալիս: Եվ խեղճ Ալբանիան ոչխարներին է նայում՝ Իտալիան է գլխին տալիս: Անկախութիւնն է նայում, Հարավսլավիան է քացով տալիս:

Վերջին օրերս էլ Իտալիայի և Հարավսլավիայի դիվանագիտական հարաբերութիւնները շափազանց սրվել են: Ասում են պիտի իրար հետ կռվեն... Ալբանիայում:

Ալբանիան էլ մտիկ է տալիս սրանց ու ասում.

— Թե ես եմ Ալբանիան, բա սրանք ո՞վքեր են: Թե սրանք են Ալբանիան, բա ե՞ս ով եմ:

Հունիս 19

Չեթ-օճառ գործարանի արտադրական զննումը վերջացավ: Եղան մի քանի առաջարկներ, խնայողութիւնն ունեցողի, գների իջեցման, ութ ժամվա լրիվ աշխատանքի, հիմնական շտատի պարզման և այլնի մասին:

Մի փոքրիկ դիտողութիւն էլ կար մաքրութիւնն մասին:

Անհարմար չէր՝ դիտողութիւնն ստանար մի գործարան, որ... օճառ է արտադրում:

Հունիս 20

Իրիանը հանկարծակի անսպասելի կերպով տեղից վեր թռավ և «ներողութիւն» ասելով հեռացավ Ազգերի կրգայի նիստից դեպի Փարիզ:

Նստաշրջանը խանդարվեց:
Ի՞նչ էր պատճառը: Փո՞րը ցավեց հանկարծ. թե հիշեց, որ տանը սեղանի վրա մոռացել է իր սիրունու նամակը, և բարեկամները կարող են կարդալ:

Լրագիրներինց ոմանք ասում են՝ աչքերի հիվանդությունն էր պատճառը:

Բայց տրախոմա ըկավ, ծերության հեռատեսությունն ըստացավ, թե՞ կարճատեսություն եկավ վրան: Լավ, բայց ժնևում ակնաբույժ չկա՞ր, եթե ակնոցի կարիք ունեիր:

Ասում են Չեմբեռլենն առաջարկեց իր ակնոցը, Բրիանը վերցրեց և փորձեց, բայց աչքին չեկավ:

Ի՛հարկե չի գա:

Համարի հարց կա:

Հունիս 22

Լրագիրները տեղեկացնում են, որ Չեմբեռլենը հերթական անհաջողություն ունեցավ Ազգերի Լիգայի նստաշրջանում: Սա փաստ է:

Ե՛լ չկա, չեն ուղում կռվել Միության հետ, զոոի՞ բան է:

Բայց մինչև ա՞ր պիտի տանի Չեմբեռլենն իր համատությունը: Այսքան հաճախությունը պետք կգար անառիկանդ բանաստեղծ կամ տաղանդավոր եպիսկոպոս դառնալու համար և ոչ թե դիվանագետ:

Հիմա ի՞նչ պիտի անի Չեմբեռլենը:

Մտում է մի միջոց, որ պետք է ասել՝ շատ աղբու է:

Թող Չեմբեռլենը դիմի Քենդլերբերիի արքեպիսկոպոսին և սրա միջոցով բոլոր անգլիսկան եկեղեցիներում միօրյա աղոթք կարդալ տա աստծուն, որ սա կործանի Սովետական Միությունը:

Իսկ եթե սա էլ չօգնեց՝ կմնա վերջին և ամենազործնականը. թող Չեմբեռլենը հեռվից արագ վազելով գա և իր պինդ ճակատը զարկի Կրեմլի քարին:

Որը կտարեց՝ կտարեց...

Հունիս 23

Ամենը հո ամենը, իլլահիմ էս մեր Ֆինլանդիան:

Հուլիաներ է փոխանակում Միության հետ էլվինգրենի գեղքի առթիվ:

Էլվինգրենը բռնվել է լրտեսության մեջ, հայտնել է, որ ինքը ռուս տարագիր է և ոչ մի քաղաքաշիություն չունի: Լրտեսությունը հաստատվել է և դեռ համար մի քիչ գնդակահարվել է:

Հետո վերջը դուրս է գալիս, որ (բերանս պապանձվի)... Ֆին է եղել:

Պրա համար է ահա, որ Ֆինլանդիայի կառավարությունն իրար է անցել:

Լավ. հիմի ուզածն ի՞նչ է, որ Ֆին լինելն առաջուց իմանալինք էլ, ի՞նչ պիտի անեինք: Ամբողջ Միությանմբ մոխիր ցանեինք զլիններիս, Միության բոլոր գնացքները 15 ռուպե կառգնեցնեի՞նք ի պատիվ այդպիսի աղնվազարմ հյուրի, ողբասացներով և մեղալականներով Ֆինլանդիա ուղարկեինք նրան և ամբողջ Միությանմբ ծնկաչոք լիարվեինք Ֆինլանդիայի դռների առջև և աղաչեի՞նք.

— Ներեցեք մեզ, որ էլվինգրենը լրտեսում էր մեր երկիրը:

— Կռվե՞լ է ուզում մեզ հետ Ֆինլանդիան, ուղո՞ւմ է վերականգնել հին ռեժիմը և ինքն ընկնել նրա ոտքերի տակ, ձանձրացե՞լ է «անկախությունից», թե՞ փորն է ցավում «ազատությունից»:

Ես որ լինեի՞ Ֆինլանդիային կասեի.

— Ի՞նչ Լեհաստանին, Ռումինիային մի նայիր: Նրանք խելքերնին տվել են Անգլիայի ջրերին: Տեղդ ծանր նստիր, գործիդ նայիր, ի՞նչ բան ունես, ջանում:

Ձուր տեղը թուղթ փայցնելով փոր չի կշտանա, անուշ ջան:

1927 թ.

ՈՒՏԵԼՈՒ ՀԱՐՅԸ

Նա կարծում եմ, ընթիցող, որ դուք էլ եք ինձ պես, ուտելքի խնդրում: Ինչպես և ամենքը: Այսինքն առավոտը թեյի հետ մի բան ենք ուտում, ճաշին էլ մի կերակուր, իրակապահին էլ մի թեյ, մի բան, և օր է, անց է կենում վնաս:

Հիմի ա՞վ է մաքից անց կացնում վերջնի որոշի, թե ինչ

անուն դնենք մեր կերածին: Այդ քերականներն են, հայկաբանները և վիպասանները, որ մտածում են այդ մասին, և մինչ մենք հանգիստ փորով պառկում քնում ենք՝ քերականները, հայկաբաններն ու վիպասանները վեճ են սարքում մեր կերածի մասին, քերականներն ասում են՝ նախաճաշիկ, ճաշ, երեկոյան ճաշ, հայկաբաններն ասում են՝ նախաճաշ, ճաշ, ընթրիք, վիպասաններն ասում են՝ ճաշիկ, ճաշ, իրիկնաճաշ, չեն համաձայնվում իրար հետ, սկսում են կռվել, լրագրերում իրար դեմ գրում և վերջն էլ թշնամանալով իրար հետ՝ դադարում են բարեկեցուց և սկսում են իրար դեմ գրքեր գրել:

Սա դեռ ոչինչ: Անգլիական, ֆրանսիական, ամերիկյան և այլ երկրների բուրժուաները խնդիրը շատ ավելի են ծանրացրել:

Նրանք ուտում են մեթոդոլոգիայով:

Անգլիացի կամ ամերիկացի բուրժուան օրինակ, առավտը, որ վեր է կենում նախ և առաջ ոչ թե ուտում, այլ ընդունում է մի բրեկֆրաստ, այսինքն նախաճաշ: Նախ քիմքը քաղցրացնում է սլաշատ արընջընով, որ նշանակում է շերտակտոր նարինջներ: Ապա ընդունում է պլումս-սալոր կամ արընջջուտ — նարինջի ջուր: Հետո բերում են բլտո — այսինքն կսորագ, այնուհետև ընդունում է՝ սլաշատ բեյկըն — ապխտած խոզաճարպ կամ սլաշատ բեյկտն — սապխտած խոզաճարպ ձվածեղով: Հետո հրամցնում են հեամ ընդ եզրս — խոզապուխտ և հավկիթ, ապա ստեյկ միդիում, այսինքն տավարաշերտ՝ միջակ, հյութալի:

Վայելելով այս բրեկֆրաստը՝ մեր բուրժուան «թեթև ստամոքսով» վեր է կենում և գնում գործի:

Ժամը 12-ին սկսվում է լինչը, այսինքն ճաշը: Հրամցնում են քանդրոպ, այսինքն սեխ, որ ախորժակը բացվի, հետը լինում է նաև ւտորքերի ուխտ կրեմ, այսինքն ելակ կրեմով: Ապա բերում են բիթ սուպ — տավարի մսաջուր կամ շիկն սուպ — ճտի սուպ, սիկն սուպ, սլաշատ տրմեյոս (շերտակտոր տոմատ), ֆրայտ մակոն, այսինքն տապակած ձկն տեսակը, սամբլ — կարմրածուկ, ֆրայտ եկըն — տապակած ճուտ, թրրկի, այսինքն հնդուհավ:

Վատ չէ:

Երեկոյան սկսում է սրպըռը, այսինքն ըրիկնաճաշը: Հրամցնում են շիկն սալատ — նտով սալատ կամ շիկըն սալատ ուխտ մայոնեզ — ճտով սալատ մայոնեզով: Ապա բերում են պոռ

չապ, այսինքն խոզ տապակած, հետո լեմ չափ — մատաղ ոշխարի՝ տապակած:

Իհարկե, չենք հիշում գինիները, բազմատեսակ խմիչքները, որ միշտ պիտի լինեն, որպեսզի պատաններն անուշ կուլ գնան: Ահա այս բրեկֆրաստը, լընչը, դընըռ, սրպըռ, այնպիսի խստությամբ են պահվում, որ չի կարելի փոխել, դա օրենք է:

էհ, այս դընըռ, սրպըռը լավ, բայց որտեղից է այդքան ձուկը, ոշխարը, խոզը, թռչնեղենը, ընդեղենը և այլ անվեջ բարիքը, որ գիշեր-ցերեկ ամբողջ բուրժուական աշխարհն ուտում է, հա ուտում, անվերջ զխթվում:

Որտեղից որ է, երկի այնտեղ համ շատ կա այդ բաներից, համ էլ երկի չեն ուտում, չեն սիրում ուտել և ուղարկում են Անգլիա:

Պետք է ենթադրել, որ Աֆրիկան, Հնդկաստանը, Չինաստանը բարիքի ամբարներ են, բայց բնակիչները կամ ճաշակ, կամ ախորժակ չունեն: Օրինակ՝ շինացին առավտը որ վեր է կենում՝ ուտում է բրինձ խաշած, կեսօրին որ սովածանում է՝ ուտում է խաշած բրինձ, իսկ երեկոյան ուտում է բրինձ, որ խաշած է լինում:

Սա էլ վատ չէ, բազմատեսակ է քերականորեն, բայց պետք է ընդունել, որ անգլիական ճաշն ավելի լավ է:

Հիմա շինացիները կամաց-կամաց փորձում են ճաշել: Նրանք էլ ատամների տակը միս գցեցին և տեսան, որ համեղ է: Վերջերս էլ որոշեցին փնտրել իրենց բառարաններում նախաճաշի, ճաշի և ընթրիքի անունները, ժամեր նշանակել, լավ կերակուրները դնել առաջնորդ և բառարանին նայելով կամաց-կամաց սկսել ուտել:

Ահա այս լուրն է, որ բուրժուական աշխարհում մեծ իրարանցում է գցել:

— Ինչպե՞ս, շինացիք էլ են ուզում ուտել: Աչքերս լույս, դու մտիկ տուր թամաշին՝ թե շորս հարյուր միլիոն շինացիները ուզենան բրեկֆրաստ, լընչ, դընըռ, սրպըռ անել: Էդ հո աշխարհ կուտեն:

Ջուր են եվրոպացի միսիոներները շինացիներին քարոզում, թե. «Ոչ միայն հացիվ կեցցե մարդ, այլ բանիվ տյառն»: Ո՞վ է լողը, շինացիք խոսք չեն ուզում ուտել, այլ ուղղակի ճաշ, ընթրիք...

Չինական հարցը սա է: Անգլիացին շատ է ուտում. ամբողջ

Արաբիան, Աֆրիկան, Հնդկաստանը, Կանադան, Ավստրալիան, Չինաստանը մի քանի անգամ մտել է նրա փորը և դուրս եկել: Եվ ահա նավերն ու գործերը ուղարկել է Չինաստան, որ շթողնեն չինացիներին բրեկֆրստ, լընչ, դընըռ ու սըպըռ ուտել, այլ թողնեն, որ անգլիացիք ուտեն:

Սրա վրա է Չինաստանի կոֆվը:

1927 թ.

ԿԱՏԱՂԱՍԾ ՇՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ

Ինչպես հայտնի է, Երևանում ապրող կամ աշխատող մեկին եթե ուրիշ ոչ մի դեպքում այնքան չի հաջողվում Թիֆլիս գնալ, մի դեպք կա, որ եթե պատահեց՝ նրան հարկադրանքով ուղարկում են Թիֆլիս:

Դեռ ճամփու ծախս և օրապահիկ էլ են տալիս:

Դա այն դեպքն է, երբ կատաղած շունը կծում է նրան:

Այդ բախտն էլ ո՞վ ունի ամեն անգամ: Ամեն բույն ձեռքի տակ պատրաստի կատաղած շուն որակողի՞ց գանես, որ ազդրդ դեմ անես կծելու:

Այսպես թե այնպես կատաղած շան կծածներ լինում են, որ գնում են Թիֆլիս, Պաստերի կայանը, սրսկվում և վերադառնում Երևան կամ շարունակում են պարպել իրենց ընթացիկ գործերով, կամ ինչպես մեկն արեց, կատաղում են և կծելով մեկ ուրիշի, իրենք (ինչպես և պատահեց) մեռնում են:

Այս քանի օրերս էլ մի քանի տարօրինակ մարդիկ հայտնվեցին քաղաքում, որ չեն ուզում կատաղած շունը իրենց կծի Մինչև անգամ ուզում են, որ այս մասին գրվի:

Գրելը վնաս չունի բայց այս վերջիններս այնքան են ահաբեկված, որ կարծում են թե քաղաքը լցված է կատաղած շներով: Եվ կասկածով նայում են ոչ թե բոլոր շներին, այլև մարդկանց՝ ենթադրելով, թե նրանք գաղտնի կատաղություն ունեն:

Բարեկամներդցս մեկն այն օրն ինձ ձեռ շտվեց՝ երեկ կասկածելով, թե ես էլ գաղտնի կատաղած եմ:

Հնդհակառակն, մյուսն էլ խնդրեց, որ իրեն բարեկիս ձեռ տամ, ուզենալով ստուգել, թե արդյոք ես իրեն կատաղած եմ համարում, թե ոչ:

Հիմա ես էլ եմ զգուշանում այնքան, որ սիրտս կասկած գցեցին:

Սրսկվածներից մեկին պատահեցի փողոցում:

— Բաբե ձեզ, — ասաց ու կանգնեց դիմացս:

— Աստծու բարին, — ասացի ես, մի քիչ հեռու կանգնելով, որ հանկարծ չկծի:

Խոսեցինք քաղաքի անցուղարձներից: Շատ նորմալ խոսում էր:

— Ի՞նչպես էր Թիֆլիսում, — հարցրի ես (բայց միշտ թեև պատրաստ, որ եթե հանկարծ հարձակվի վրաս կծելու, թերևս պաշտպանվեմ):

— Շատ լավ, — պատասխանեց նա:

Կարճ կտրեցի և հեռացա... ո՞վ է իմանում, հանկարծ մի խաթա պատահի:

Այո, ես էլ դարձա վախեցողներից մեկը, և շարունակ զգուշանում էի:

Բայց վերջին օրերս մի բան իմացա, որի պատճառով որոշել եմ էլ տանից դուրս չգալ:

Ասացին, որ Ազգերի էիզան համաշխարհային կոնգրես է հրավիրելու կատաղած շներին դեմ պայքարի միջոցներ մշակելու համար:

Ազգերի Լիգա՞ն:

Այո, որովհետև կատաղած շների փաստը համաշխարհային երևույթ է: Պատերազմի հետևանքով ահա տասը տարուց ավելի է, որ ամբողջ աշխարհում շները կատաղած են:

Արևմտյան բանն ընկեր է Ազգերի Լիգայի՞ն, նա՞ պիտի մեզ ապաստի կատաղած շներից:

Ես խորհուրդ եմ տալիս ամեն զգուշավոր մարդու՝ տան պաշտպանել և փակվել տանը, որովհետև երբ Ազգերի Լիգան պիտի կատաղած շներին դեմ պայքարի — կատաղած շները երբեք չեն վերջանա:

Ի՞նչ պայքար կատաղած շների դեմ, երբ գլխավոր պատճառը

— պատերազմը չի վերացվելու: Իսկ պատերազմը վերացնելու համար պետք է վերացնել... Ազգերի կիզան:

Իսկ եթե Ազգերի կիզան վերացնեն էլ որտեղից կլինի պատերազմը և սրա հետևանքը՝ կատաղած շները:

Ահա թե ինչո՞ւ համար Ազգերի կիզան ուզում է կռվել ոչ թե պատերազմի. այլ կատաղած շների դեմ: Դա շատ խելացի բան է, որովհետև այդպիսով հավիտյան անխախտ կմնա երեք բան՝ պատերազմը կատաղած շները և Ազգերի կիզան:

Ահա թե ինչու համար որոշեցի տանից դուրս չգալ, մինչև վերջանան կատաղած շները, պատերազմը և Ազգերի կիզան:

1927 թ.

ՈՎ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Է

Երբ մենք բոլորս աշխարհ ենք գալիս, մի քիչ սնվում ենք, մի քիչ մեծանում, մի քիչ էլ խելք ենք ձեռք բերում՝ նստում ենք մեզ համար ճաշում և (հանգստյան օրը) վերցնելով գավազաններս գնում ենք զբոսնելու: Է՛, ճանապարհ է՝ պատահում ենք մեր լավ բարեկամ Գասպարին:

— Հը, Գասպար խեր ըլի, ո՞ւր էսպես բարով:

— Հենց ընենց, դուրս եմ եկել ման գալու:

— Գնանք միասին, լավ եղանակ է:

Մի հատ «Սավետսկի» եք թավազա անում Գասպարին և գնում եք Զանգվի կամուրջը կամ ասենք՝ Խորում-Բուլախ:

Նստում եք գարնան ախորժ արևի տակ, մի քարի վրա ու զրից եք անում՝ բանկոտպից, ձեր հիմնարկի վարիչից, բյուրոկրատիզմից, գեսից-դենից ու վերջն էլ Գասպարը խոսքը տանում, տանում, շուտ է տալիս փիլիսոփայության վրա: Թե՛ ինչ բան է աշխատանքը, կյանքը որտեղից ծագեց, ինչո՞ւ համար ենք ապրում: Դուք էլ մի բան պատասխանում եք, այնպես մի տարտամ բան, թե, օրինակ, ապրում ենք, որ արդար մարդ լինենք, կամ՝ ապրում ենք, որ հասկանանք բնության գաղտնիքները, կամ՝ ապրում ենք ճշմարտություն ձեռք բերենք:

Բայց երևակայեցեք ձեր զարմանքը, եթե այդ ժամանակ մի մարդ ձեր խոսակցությունը լսի և ձեզ մի այնպիսի նորություն հայտնի, որ դուք ապրում եք նրա համար, որ երբ Տիբեթի՝ Դալայ-Լամայի մեջքը քոր գա և չկարողանա գիշերները քնել՝ ոսկրե քորիչով մեջքը քորեք...

— Ո՞նց թե:

— Ապա՞:

— Այ տղա, դրո՞ւստ ես ասում:

— Քրիստոս: Սուտ ասելու ի՞նչ ունեմ:

Այստեղ հարցը մի քիչ հեշտ է լուծվում, որով չորս կողմ նայելով և տեսնելով, որ ապրում եք Միություն մեջ՝ բնածաղ եք տալիս և թեք ընկնելով քարի վրա, սկսում եք նիրհել.

— Դալայ-Լամայի հերն էլ էնտեղ անիծած:

Բայց երևակայեցեք, որ շինացու խնդիրն այսպես դատարկ առակ չէ: Այնտեղ շինացին օրը տասը անգամ փոփոխում է իր կյանքի նպատակը:

Գարունքին նա նրա համար է որ բրինձ ցանի, ամառը նրա համար է, որ բրինձ ջրի, իսկ աշնանը նրա համար է, որ այդ բրինձը ուղարկի Լոնդոն:

Բայց Հյուսիսային Միացյալ Նահանգների աշխատանքի մի-նիստը Գեիսը նոր կյանքի նպատակ է գտել շինացիների համար: Միանգամայն հուսահատվելով Ամերիկայի արդյունաբերության գերարտադրության կամ թերսպառման հեռապատկերներից՝ ասել է.

«Եթե չորս հարյուր միլիոն շինացիներից ամեն մեկին համոզենք, որ նա իր հագուստի ծայրերը ավելացնի մի դյույմով՝ մենք կարող ենք մեր տեքստիլ գործարանները բանեցնել տարվա 12 ամիսն էլ:

Ահա թե ինչո՞ւ համար են 400 միլիոն շինացիները:

Այ, իսկական աշխատանքի միևնույն: Մարդն աշխատանք է ստեղծում նախ իրենց գործարանների համար, հետո նավերի համար, որ այդ ավելի դյույմ կտորը տանեն Չինաստան, հետո շինացիների համար, որ ավելի կուլիություն անեն վճարելու այդ ավելորդի դրամը և շինացի դերձակների համար, որ ավելի կարեն:

Առաջին տարին մի դյուլմ կավելացնեն:
Երկրորդ տարին էլ թծ.
— Հսիք, Զո-Յգու-չու, մի դյուլմ էլ ավելացրու:
— Ինչո՞ւ:

— Մնկներդ երևում են:
— Թող երևա:
— Զէ, ամոթ է:

— Ամո՞թ է, լավ, բերեք ավելացնենք:
(Աշխատանքի մինիստր Գեխը նոր տեքստիլ գործարաններ է շինել տալիս...):

Հետևյալ տարին էլի գալիս են Զո Յգու-չուի մոտ.

— Հը էլի՞ ավելացնեմ:
— Հա, հա, ավելացրու, թող սրունքներդ շերկան:
— Լավ, բերեք տեսնենք:

Ավելացնում է խեղճ Զո Յգու-չուն և դառնում է կատարյալ կնիկմարդ:

Տեքստիլ արդյունաբերությունը ծաղկում է Ամերիկայում:
Գեխի ախորժակը բացվում է.

— Գնացեք ասացեք մի դյուլմ էլ ավելացնեն:
— Զո Յգու-չու լսիր:
— Հը:

— Մի դյուլմ էլ ավելացրու:

— Ոտներդ հասավ, է:

— Ոչինչ, ոչինչ, առողջության համար լավ է, ավելացրու:
Ավելացնում է:

Եվ այսպիսով, քանի Ամերիկայի արդյունաբերությունը ծաղկում է, այնքան Զո Յգու-չուն երկարացնում է իր փեշը: Եվ ամբողջ Չինաստանում մարդիկ սածեններով երկար փեշերը քարշտալով և փոշու ամպեր բարձրացնելով՝ գնում-գալիս են փողոցներով: Վերջն այնքան են երկարացնում, որ ամեն շինացի ըստիպված է լինում հերթի սպասել փողոցների ծայրերին, որ մեկ-մեկ անցնելով իրեն հերթ հասնի, այնպես են իրար փեշ կոխում, պատռում: Եվ այսպես խճճվում են իրենց հագուստի մեջ և շեն կարողանում դուրս գալ փողոց:

Մինչ Ամերիկայում ծաղկում է տեքստիլ արդյունաբերու-

թյունը, քեֆ է տնում բուրժուազիան, և կանայք ավելի լրբանալով, կարճացնում են իրենց փեշերը... արդեն ծնկներից վեր:

Ահա թե ինչու համար են շինացիները:

1927 թ.

«ՅՈՒՐ ԶԱՓԻՐ, ՄԵԿ ԿՏՐԻՐ»

Օստեն Զեմբուլները խելացի մարդ է:

Եվ ոչ միայն խելացի, այլև հեռատես:

Հետո՝ «չափավոր»:

Այսինքն չափում է, Եվ չափում է անգլիական առածի բառացի մտքով:

Յոթը չափում է՝ մեկ կտրում:

Զարմանալի էլ չէ:— Ղեկավարել Բրիտանական կայսրության արտաքին քաղաքականությունը, գործ ունենալ հազար ու մի կնճատ խնդրի հետ՝ հանաք բան չէ: Խելք պիտի ունենալ: Եվ չափել, չափել, առավոտից մինչև կեսգիշեր չափել:

Եվ ահա, երբ վերջերս հանդես եկավ իր պարտիայի, պետական գործիչների, «երկրի ազի» առջև՝ մարդը վեր կացավ և պարզ քրիստոնեական խոսքով թվեց այն բոլոր ստուգումները, թե ինչո՞ւ հարկավոր չէ խզել հարաբերությունները ՍՍՀՄ-ի հետ:

— Լսեցեք պարոններ:

— Լուսթյուն, պարոն Զեմբուլները խոսում է:

— Լսեցեք պարոններ, թե ինչո՞ւ մենք չենք կարող մեր հարաբերությունները խզել ՍՍՀՄ-ի հետ.— Առաջին: Լեկարնոյի ոգու համար դա կունենա ճակատագրական հեռանք: Երկրորդ՝ Գերմանիան կրնկնի Միության գերկը: Երրորդ՝ խզումը չի ապահովի Անդլիան կոմունիզմից, սովետական ֆոնդերն առաջվա պես կհոսեն Անգլիա: Չորրորդ՝ անգլիական պրոլետարիատից զանգվածներ կանցնեն կոմունիզմի գիրկը: Հինգերորդ՝ խզումը չի կանոնավորի Միության պարտքերի անգլիական պահանջատերերի

հարցը՝ Վեցերորդ՝ անգլիական բոլոր բանվորական հոսանքները կմխանան:

Ահա, պարոններ, այսպիսով ես բարվոք եմ համարում, ինչպես անգլիական հին իմաստուն առածն է ասում, յոթը շափել և մեկ կտրել: Այս յոթը արգումենտը...

— Դուք շափեցիք վեց, իսկ ո՞ւր է յոթերորդը,— ձայն տվեց մի պնդաճակատ:

— Մի խանգարեք,— շարունակեց Չեմբեռլենը,— իհարկե, ջենտլմեններ, ես ձեզ հետո ավելի մանրամասն կխոսեմ այս իմ թված յոթը շափերի մասին, որով դուք...

— Այսինքն վեց շափերի...

— ...Իմ թված յոթը շափերի մասին, որով դուք ավելի խորամուխ կլինեք այն դժվարություններին, որ պարունակում են իրենց մեջ այս իմ տված յոթը շափերը:

— Ջանքմ, վեց շափեցիք,— գոռում է պնդաճակատը,— յոթերորդը ո՞րն է, ասացեք:

— Մի խանգարեք,— նկատում են ունկնդիրները:

— Թողեք Չեմբեռլենը խոսի:

— Չեմբեռլենը ճիշտ շափեց, յոթը շափեց:

— Ես իմ ականջովս լսեցի, վեց շափեց,— պնդում է պնդաճակատը:

— Այ՛շի, թող արեք, մի էս զահրումար զեկուցումս տամ էլի, ըխտավորի էջ հո շի զոում, ոչ բարով մինիստր ենք, թող արեք էլի...

— Թողեք միստր Կլաուն, թողեք խոսի մարդը:

Պնդաճակատը համառությամբ առաջ է վազում դեպի ամբիոնը:

— Սրանք որ էսպես են ասում՝ քիչ է մնում տրաքվեմ. է, ախր վեց շափեց, է, վեց. քառ շենք, լսեցինք, իշի տեղ եք դնում մարդու, ի՞նչ է: Վերջապես հաշի՞վ չէ, հաշվեցեք:

— Լավ, հաշվեցեք,— ասում են,— այ առաջինը՝ Լոկարնոն, երկրորդը՝ Գեմանիան, այդպես չէ՞:

— Հա, հա, ասա:

— Երրորդը՝ Անգլիայի կոմունիզմը և խորհրդային ֆոնդերը՝

— Չորրորդը՝ մեր պրոլետարիատը կանցնի կոմունիզմի գիր-

կր շինգերորդը՝ պարտքերը, վեցերորդը՝ բոլոր հոսանքների միացումը: Էսպես չէ՞ր:

— Հա, հա:

— Է, յոթերորդը:

— Յոթերորդն էլ ասաց:

— Ո՞նց թե ասաց, ահա ես թվեցի, բոլորը վեց էր:

— Սր,— ասաց,— դուք շիմացաք:

— Պրովոկացիա է դա, ստախոսություն է, այդ տեսակ բան տեղի չի ունեցել,— գոռում է պնդաճակատը:

— Անցնենք գործի:

— Անցնենք գործի, միստր Չեմբեռլեն, շարունակեցեք.

— Ո՞նց շարունակի...

— Շարունակեցեք, շարունակեցեք:

— Այսպես ուրեմն, մեզ ստիպում են խոհեմ լինել այս յոթը արգումենտները:

— Վեց,— գոռում է կատաղի պնդաճակատը:

— Յոթը գոռում է սրահը:

— Այս յոթը արգումենտները միանգամայն համապատասխան են անգլիական հին իմաստության, որ ասում է յոթը շափիր, մեկ կտրիր:

— Վեց շափիր, մեկ կտրիր դուրս եկավ:

— Ախր, ջենտլմեն ջան, լսեք է...

— Ի՞նչ լսեմ, տրաքեցրիք ինձ, վեց շափեց, հիմա զոռով ուզում եք յոթ ընդունել, սա ազնվությո՞ւնն է:

— Վեց էր, բայց «յոթն» էր:

— Չեմ հասկանում, վեցը ո՞նց յոթն էր:

— «Յոթն» էր (աչքով են անում):

— Յոթը... շեմ հասկանում:

(Աչքով են անում):

— Ջանքմ, ի՞նչ կա, ասացեք բարձր ամենքն իմանան: Յոթերորդը ո՞րն է:

(Աչքով են անում):

Մեկը մատով իր մոտ է կանչում պնդաճակատին և ականջին ասում է.

— Ջենտլմեն, Չեմբեռլենը յոթն, այսինքն վեց՝ այսինքն յոթը, այդ յոթերորդը իսկապես շասաց, բայց պետք է հասկանալ,

պրուկտարական հեղափոխութիւնն է, որ կրօնկի Անգլիայում և Եվրոպայում...

— Ը՛մ...

— Հը՛մ...

— Հա:

— Հասկացա՞ք:

— Հա, հը՛մ... (Հազում է պնդաճակատը) հասկացա...

Խհարկե...

— Հաշիվներ կան, ջանքմ:

— Հիմա հասկացա:

Պնդաճակատը գնաց, նստեց իր տեղը, սրահում լուսթյուն տիրեց, և Չեմբեռլինը շարունակեց.

— Այո, պարոններ, մենք ստիպված ենք, «յոթը» շափելու և մեկ կտրելու, որովհետև... հասկանում եք... էլի:

— Հասկանալի է...

1927 թ.

ԺԱՄԱՆԱԿ

Անցավ հին տարին, եկավ նորը:

— Չգիտեմ նկատեցի՞ր, ընթերցող:

Երևի նկատած կլինես:

Բայց մարդիկ կան, որ տարին մի անգամ էլ չեն մտածել ժամանակի մասին և ոչ էլ տեսել. հանկարծ մտիկ են տալիս, որ կողքներին ինչ-որ բան է շարժվում:

— Այ տղա, էն ի՞նչ բան է:

— Ժամանակը վազում է:

— Ո՞ւր է վազում:

— Ո՞վ է իմանում, երևի գործից ուշացել է, վազում է, որ հասնի: Կամ գուցե մի բան է պատահել: Ուզում ես, գնանք հետը, տեսնենք՝ ինչ կա:

— Բան չունես,— ասում է երևանցին և վերարկուի մեջ կծկըված մտնում է տուն:

— Մինչև մյուս տարի:

— Չգիտեմ ով է ասել, թե ժամանակը ոսկի է:

— Կամ՝ ժամանակը փողից էլ թանկ է:

— Ով է ասում:

— Ժամանակը ամենաէժան բանն է Երևանում:

— Դեռ ինչ էժան, ձրի է: Զուր է, որ վազում է կոանտներից, կոանտներն էլ բաց են, և ժամանակը հոսում է օր ու գիշեր:

— Գոնե փողով բաց թողնեին, ժամանակաշափ շինեին:

Այսինքն ժամացույցը:

Բան չունե՞ս:

Անցյալ օրն իր տան մեջ խաղաղ կախվեց ժամագործը:

Մի ժամանակ լիզա կար Երևանում, որ այնքան ժամանակ կորցրեց լիզան կազմակերպելու վրա, որ ժամանակ չէր լինում լիզայի համար...

Բայց եթե իմանար երևանցին, թե ժամանակը ինչքան թանկ բան է:

Եվ ինչպես է թռչում:

Այո, թռչում, փախչում է ժամանակը սարսափելի թռիչքով:

Ինչպես վայրի, կատաղի ձի ու ամեն բան ուզում է թափ տալ իր վրայից:

Ամուր կպիր մեջքին:

Եվ գոույշ:

Ընկա՞ր վրայից... պրծար, էլ չես նստի վրան:

Վայ թե քնած ես եղել ժամանակի կարպետի վրա, գիշերը քեզ թափ է տալիս, գնում ու քեզ թողնում շոր գետնի վրա:

Բանաստեղծներ, ժամանակին հասցրեք ձեր ոճերը:

Նրանք շուտ են խոնհանում:

Գիշերը քնում ես սկսնակ, առավոտը վեր կենում, որ հին գրող ես:

Ասում են Փարիզում մի ամուսին իր կնոջ համար նոր գըլ-խարկ է առել և վազում է տուն:

— Ո՞ւր եք վազում:

— Շտապում եմ գլխարկը հասցնեմ կնոջս՝ քանի մոդան չի փոխվի:

Իսկ Բեռլինում ասում են՝ մի ամերիկացի նստած է ճաշարանում և մի դուլարով ճաշում է:

Ժամանակը թռչում է:

Թռչում է և մարկն ընկնում է ու դուլարը բարձրանում:

Եվ ամերիկացին մինչև այսօր դեռ նստած է ճաշարանում և ճաշում է իր մի դուլարով:

Խուճապ է, խուճապ, համաշխարհային խուճապ, սլացող ժամանակի պատճառով:

Ամենքը լեղապատառ վազում են նրա հետևից...

(Երևանցին քնեց արդեն):

Ամենքը ժամանակի գերին են:

«Ամեն բան նայում է ժամանակին և ժամանակը ոչ մի բանի չի նայում» — ասում է առածը: Իսկ ես կասեմ. ամեն ֆելիետոնիստ նայում է խմբագրին, և խմբագիրը ոչ մի ֆելիետոնիստի չի նայում»:

Հասցնենք...

1927 թ.

ՂԻՇ ԶԻՐԱՍԻ

Եգիպտոսի անգլիական գերագույն կոմիսար լորդ Լյուդե եգիպտական կառավարությունից պահանջեց, որ սա իր վրավերցնի անգլիական օկուպացիոն զորքերի ծախքերի մի երրորդը:

Ահա սրան է, որ կասեն՝ դիշ քիրասի:

Այսինքն ատամի վարձ:

Հին պատմություն է, բայց հիշենք:

Շատ առաջները սուլթանական Տաճկաստանում ենիլերի անունով մի հատուկ զորք կար:

Ասենք՝ особный отряд:

(Ականջը խոսի...):

Այդ ենիլերները սովորություն ունեին շուտ-շուտ «հյուր»

գնալու մի որևէ խաղաղ մարդու տուն և տանտերից պահանջելու, որ սա ճոխ ճաշ տա իրենց:

Տանտերն էլ տալիս էր (կհամարձակվե՞ր), ենիլերիններն ուտում էին, խմում, լավ հղփանում և, երբ հեռանալու ժամանակը գալիս էր, կանչում էին տանտիրոջը և հրամայում, որ դիշ քիրասի տա: Այսինքն փող՝ իբրև վարձ, որ իրենք կերան տանտիրոջ ճաշը:

Մի խոսքով՝ ատամի աշխատավարձը: Չէ՞ որ ենիլերինները, ճիշտ է, կերան, բայց ատամներն էլ լավ աշխատեցին:

Ամեն աշխատանք պետք է վարձատրվի:

Ահա այդ աշխատանքի վարձատրության սկզբունքն է, որ ուզում է կիրառել լորդ Լյուդը: Սա էլ ժամանակիս ենիլերին է, «հյուր» է գնացել Եգիպտոսի ժողովրդի մոտ:

Միայն մի խոշոր տարբերություն կա լորդի և ենիլերինների միջև: Այն է, որ ենիլերինները նվազ ազահ էին, ավելի քիչ ժամանակ էին մնում հյուրընկալի տանը, ավելի քիչ հողով էին «հյուր» գնում և ավելի քիչ էին փող պահանջում իբրև ատամնավարձ:

Լորդ Լյուդն ուրիշ բան է: Նա Անգլիայից եկել է՝ ծանրումեծ բազմել է Եգիպտոսում և տարիներով դուրս չի գնում:

Եվ ուտում է, փառավորապես քեֆ է քաշում Եգիպտոսի ժողովրդի հաշվին: Իր հետ բերած զորքն ու մարդիկ էլ անգործ չեն:

Մի կողմից Եգիպտոսի ժողովրդի արտադրանքն են բարձում անգլիական նավերի վրա և ողջն ուղարկում Անգլիա, մյուս կողմից օկուպացիոն զորքն է ուտում Եգիպտոսի ժողովրդի հացը, երրորդ կողմից էլ ինքն է ընկել նրանց ճաշի վրա իբրև «հյուր»: Ու խժոռում է:

Ահա բերում են փլավը: Լորդը հափ է անում ու վերջացնում, փասիան են բերում, այդ էլ է խժոռում:

— Բաստուրմա բերեք, — ձայն է տալիս լորդը Եգիպտոսի ժողովրդին:

Բերում են ու գեռ բկից ներս չմտած բաստուրման՝ գոռում է.

— Քյուֆտան վազեցրեք:

Վազեցնում են քյուֆտան:

Դա էլ մաքրում է ձեռաց ու աչքը զցում դռանը:

— Հը, ուրիշ ի՞նչ կա:

— Օպալամա տոյմա:

— Հասցրեք:
 Հասցնում, դնում են առաջը, դիմկվում է դա էլ:
 — Է՞, ուրի՞շ ինչ կա:
 — Իզմիր քյուֆթասի:
 — Իզմիր քյուֆթասի՞,— հարդե:
 Դնում են առաջը:
 Կոխվում է:— Ուրի՞շ:
 — Թաս քյարարի կա:
 — Թաս քյարարի՞:— Յալլա:
 Բերում են թաս քյարարին:
 — Մյո՞ւսը:
 — Լուլա քյարարի:
 — Լուլա քյարարի բերեք:
 Տրաքվում է դա էլ:
 — Մի էսքան կտոր խորոված չկա՞:
 — Կա:
 — Դեսը:
 Ու բերում են, բերում, բերում խեղճ եզիպտացիք:
 Ի՞նչ անեն, շատ էլ ուզում են շքերեն, շատ էլ շունեն, իրենք
 իսկ սոված են, բայց օկուպացիոն գործը շրջապատած, անզիրա-
 կան ռազմանավերը գլխներին կանգնած՝ արի, եզիպտացի
 ժողովուրդ, մի՛ բեր:
 Քանի՞ գլուխ ունեն:
 Սպասում են, որ մի հնար լինի ազատվեն «հյուրից»:
 Առայժմ զոռ են տալիս առատորեն բերելու, որ լորդն ուտի,
 տրաքվի, ռադ լինի, կորչի գնա:
 Բայց լորդն ուտում է վիշապի պես և չքվելու իսկի միտք
 չունի: Այնքան էլ ազահորեն է կերել, որ արդեն հեռում է: Քրտինքն
 աղբյուրի պես շռում է երեսից:
 Եզիպտոսի ժողովուրդն էլ կանգնած սպասում է:
 Լորդը տնքում է.
 — Օօ՞ֆ...
 — Հա, ի՞նչ եղավ, լորդ էֆենդի:
 — Շունչս կտրվում է: Այս ստամոքսս շատ է ծանր: Օֆ, բե-
 րեք...
 — Ի՞նչ:

— Օդ, օդ բերեք. խեղդվում եմ:
 — Մի քիչ դուրս գալիր շունչ քաշելու:
 — Շունչ քաշելո՞ւ:
 — Այո, շոգ է Եզիպտոսում, մի քիչ Անգլիա գնա, հովացիր,
 ման արի: Համ կմարսես կերածդ, համ էլ օդ կառնես:
 — Ման գա՞մ, հը՞...
 — Հա, հա, ման արի: Ափսոս չէ, հոգի է ման գալը:
 — Չէ, մնա թող: Ռահաթ-լոխում բերեք:
 Սկավեց նորից...
 Բերում են ռահաթ-լոխումը: Լամլամ է: Քշեց, պրծավ:
 — Փախա՞վա չկա՞:
 — Կա:
 — Մի բլո՞ճա բերեք:
 Բերում են, ներս զարկեց դա էլ:
 — Ինչ եմ ասում... գաթալից, սուջուխից, մի քիչ ֆատա,
 բաղամ չկա՞:
 — Կա:
 — Դե պապամ դեսը:
 Ուտում է, ուտում է, ուտում է: Արդեն այնքան է կերել, որ
 ուսերը բարձրացել են, ականջները տնկվել, ձայնը փոխվել է:
 — Մի քիչ...
 — Ի՞նչ:
 — Մի քիչ բաս...
 — Բա՞ս...
 — Մի քիչ բաստեղ բե...
 Չայնը կտրեց:
 — Բաստեղ բերե՞նք:
 Չի կարողանում խոսել: Միայն հավանության ճշան է անում:
 Բերում են բաստեղը:
 Լափում է ու հետն էլ ձեռով է անում, որ բերեն:
 — Ի՞նչ բերենք:
 Ձեռով է անում:
 — Ղատալի՞ֆ:
 Հավանության նշան է անում:
 Երբ բերում են՝ նշան է անում, որ իրեն պատվեցնեն: Պատ-

կեցնում են և նա բերանը բաց բռնած՝ հասկացնում է, որ զատա-
կիՔը կոկորդից ներս խոթեն:

Եգիպտոսի ժողովուրդը նստում է լորդի գլխավերևը և մատ-
ներով ներս է խոթում զատալիՔը լորդի կոկորդից:

Խոխոռում է արդեն:

Խեղդվե՞ց... (Ինչ ուրախութուն):

Չէ, շարժվում է, ափսոս, նշաններ է անում ինչ-որ:

— Սո՛ւրճ:

«Այո»-ի նշաններ, բերում են:

Հրամայում է, որ նստեցնեն:

Բարձեր են դնում կռնատակերին ու քամակին և կիսովին
նստեցնում են:

Սուրճը լցնում են բերանը: Խմում է, բայց էլ հալ չկա, քունը
տանում է: Դնում են ցած, ու լորդը խոնփացնելով ու տնքալով
քնում է:

— Իշալլահ, պիտի տրաքվի:

— Տրաքվեց. պրծավ:

— Հը, երևի լուսաբացին կտրաքի: Ոչ, առավոտյան վեր է կն-

նում լորդը:

— Զորքին ճաշ տվեք:

— Տվել ենք լորդ էֆենդի:

— Փլավ տվեք:

— Տվել ենք:

— Ուրեմն խորոված տվեք, բաստուրմա տվեք, գաթա, մեղր,
մի խոսքով տվեք, տվեք, մի բոպե մի կանգնեք, ամեն բան տվեք:

— Ամեն բան տվել ենք:

— Կերա՞ն:

— Իրենց հալալ, լավ իշտահով կերան:

— Ատամներով լավ ծամեցի՞ն:

— Շատ լավ ծամեցին:

— Խեղճ, քանի ծամ ծամեցին:

— 15 ժամ:

— Ես քանի՞ ժամ ծամեցի:

— Դու էլ 15 ժամ:

— Շատ է: Ատամները բոլորովին մաշվեցին: Ուրեմն տվեք
ատամների վարձը:

— Ատամների վա՛րձը, այս էլ քեզ նոր խաթա:

— Ինչքա՞ն:

— 8 ժամ սովորական ծամելը, 7 ժամ էլ արտածամյա ծա-
մելը, ընդամենը 15 ժամ ատամի աշխատանք, գնացե՛ք քարտու-
ղարիս հետ հաշվեցե՛ք և այսօր ևևթ բերեք դիշ քիրասին: Իմա-
ցա՞ք: Հիմա մի քիչ պասուց տու՛մա բերեք: Հը, ինչո՞ւ նոթելոդ կի-
տեցիք:

— Չէ, այնպես...

— Չէ, նոթերդ այնպես կիտեցիք, կարծես այդ փողն իմ զըր-
պանս պիտի գնա կամ Անզլիան մեծ շահ ունի դրանից: Այդ փո-
ղով պետք է կերակրենք ձեր երկիրը պահող զորքը: Այստեղ ի՞նչ
կա նոթերը կիտելու:

— Բայց ախր զորքը

— Հա, ասացեք:

— Ախր զորքը մեր ինչի՞ն է պետք...

— Զորքը ձեր ինչին է պետք... Ապա, որ ֆրանսիացիք գան
ձեր երկիրը գավթելու, ո՞վ պիտի պաշտպանի երկիրը:

— Ֆրանսիացիք ինչի՞ են գալիս մեր երկիրը:

— Կգան, ֆրանսիացիք էլ կգան, իսպանացիք էլ կգան: Դրա
համար եմ ասում որ ուրիշները գալու տեղ, ավելի լավ չէ մենք
գանք:— Չէ, զուր եք նեղանում, զորքը լավ բան է: Ոչինչ որ չլի-
նի, մեր զորքը ձեզ պաշտպանում է ձեզանից:

— Մեզանի՞ց...

— Հա, ձեզանից: Հանկարծ մի օր վեր կենաք ու ապստամ-
բեք մեր դեմ, ի՞նչ կլինի ձեր դրութունը, եթե ամբողջ երկիրը
ամբակոծենք: Կավ, չէ՞ որ մեր զորքը ձեզ պահում է ապստամ-
բությունից և... ամբակոծումից: Դե, բերեք դիշ քիրասին:

Եգիպտացիք գնացել են խորհուրդ անելու, որ բերեն դիշ քի-
րասին:

Տեսնենք ինչ դիշ քիրասի է:

Չգիտեմ ինչ կբերեն այսօր, բայց վաղն անզլիական ատամ-
ներն իրենց կերածի համար անշուշտ կստանան մի լավ արժանի
դիշ քիրասի: Մի այնպիսի դիշ քիրասի պիտի ստանա անզլիական
կապիտալիզմը Եգիպտոսի ժողովրդից, որից նրա ատամները այն-

պէս պիտի ջարդուփշուր լինեն, որ աշխարհիս երեսին ոչ մի
ատամնաբույժ չկարողանա տեղը դնել:
1927 թ.

ԿԵՆՑԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Օտար տեղից առաջին անգամ Երևան ընկնող մարդն այնպէս
պիտի կարծի. թե իրեն ամեն կողմից հալածում են:

Այնքան պլակատ է կայցրած պատերի, դռների վրա, կարծես
տները զրահավորված լինեն:

Բոլորը հրաման ու հրահանգ:

«Հատակին չթքել»:

«Մաքրություն պահպանել»:

«Գործը վերջացրի՞ր՝ գնա»:

«Ոտները մաքրել»:

«Առանց զեկուցման ներս չմտնել»:

«Կրագիրը շտանել»:

«Իերթերը կարդալուց հետո տեղը դնել»:

«Բարձր խոսել»:

«Հերթի կանգնել»:

«Չեղք չտեղմել»:

«Հայերին ձեռք չտալ»:

«Սառալոգին մասնավոր խոսակցութիւններով չզբաղեցնել»:

«Իրերին ձեռ չտալ»:

«Չծիսել»:

«Քիտարկներն ու վերարկուները հանել»:

«Կրկնակոշիկներով սրահ չմտնել»:

«Նորորդ զանգից հետո ներս չմտնել»:

«Նրաժշտութիւնն նվագի ժամանակ դուրս չգալ»:

«Հազարիս բերանը թաշկինակով բռնիր»:

«Դուռը ծածկիր»:

Մի հրամայական տոն, մի դաժան ոճ «դու»-ով դիմումն—
բռնի՛ր, գնա՛, ծածկի՛ր...

Այնպէս որ՝ անսովոր մարդը չի իմանա ինչպէս վարվի:

Այս շանել, այն անել, այն անել, այս շանել:

Հարց է առաջ գալիս.

— Լավ, ապա ի՞նչ անել:

Ման չգա՞լ, չխոսե՞լ, չնստե՞լ, չշարժե՞լ, չշնչե՞լ, չլինե՞լ...
Որոշ բան չի կարելի ասել այս հարցերի վերաբերմամբ:
Ո՞վ գիտե:

Բանն այն է, որ Երևանում կենցաղի կանոնները մի բիշ
խառն են:

Մարդը գիտե, որ կարելի է ասել, խոսել, ծիծաղել: Բայց դա-
լիս է գիշերվա ժամը 1-ին, կանգնում է պատշգամբի տակ և
սկսում է ժամերով խոսել, երգել, բոռալ:

Գիտե, որ կարող է շալվարը թափ տալ, պատշգամբն ավելի:
Բայց ավլում ու շալվարը թափ է տալիս վերևից ուղիղ գլխիդ
վրա:

Քյուֆթան ծեծում է առաստաղիդ վրա:

Հետդ խոսելիս՝ շարունակ թքում է բիրանիդ մեջ:

Քրտնած ձեռք խոթում է ձեռիդ մեջ:

Տասը հոգով կտրում են դռան մուտքը, ճամփա չեն տալիս:

Մատը քթի միջից հանում և մեկնում է քեզ:

— Ցտեսություն:

Այո, տգեղ աեսարաններ: Բայց ես ի՞նչ անեմ: Իրականու-
թյունը սա է:

Այնպէս, որ երևանյան պլակատները ոչ թե շատ են, այլ
ընդհակառակը՝ քիչ են:

Եվ ավելացնեմ, պլակատները պիտի կայցնել ոչ միայն պա-
տերին, դռներին, այլև հատակներին, առաստաղներին, մայթերին,
նստարաններին...

Որպեսզի ապահով լինես հիմնարկում, փողոցում:

Վատ չէր լինի, եթե պլակատները լինելիս կայցրած մարդ-
կանց վրա ևս: Ամեն մարդ թող իր պահանջները տպել տա և պը-
լակատները կայցնի իր ուսերին, կրծքին, մեջքին...

Որովհետև մարդիկ կան, որ ամեն տեղ միևնույն եղանա-
կով են մոտենում:

Ճիշտ է, մարդը մարդու համար վիճակագրական բյուրո է:

— Գնացի՛ր կի՛նո:

— Ո՞ր գնացքով եկար:

— Տոմսակ ծախող օրիորդը շա՞տ ուշացափ:

— Երբ պահանջեցի՞ր՝ տվե՞ց տոմսակ:

— Կապրիզներ շարա՞վ:

— է, ինչպե՞ս եղավ, որ կապրիզներ շարավի:

Եվ այլն:

Ոչինչ, սա բնական է:

Բայց պատահում է, որ գրասենյակում նստած ես և քա-

ասուն մարդ պիտի ընդունես երկու ժամում և տասը մարդու հետ պիտի բանակցես գործի մասին:

Եվ ահա թունդ ժամանակ գալիս է, նստում և անկետային թերթը գնում առաջդ:

— է՛, պատմեցեք, տեսնե՞ք, քանի՞ հոգով էիք երեկ գնացել Սեան: Քանի՞ ժամ մնացիք: Ո՞ր ժամին վերադարձաք:

Պատահում է, որ շտապում ես հիմնարկ, ժողովի, գեկուցման, փոստ, բժշկի մոտ և ըստ շե կարող կորցնել:

Բռնում է օձիքդ.

— Ո՞ր ես գնում, ժողովի՞:

Ժամը քանիսի՞ն պիտի լինես այնտեղ: Հիմա ժամը յո՞թն է ար, ժամացույցդ ճի՞շտ է: Շատ անգամ էլ տրամադրութունդ լավ չէ:

Արդեն տասը մարդու պատահել ես և պատասխանել, թե ո՞ր ես գնում, ինչի՞ ես գնում, երեկ որտե՞ղ էիր, ժամացույցդ առաջ է, թե՛ ևտ... մի քիչ ներքև ես գալիս՝ նույն հարցը, նույն պատասխանը: Մարդ մտածում է պլակատներ շինել տա ու վրայից կախի:

Եվ եթե պլակատ կախելը սովորութուն դառնա Երևանում՝ ես պլակատներ տպել կտայի և համարակալած կկախել կրճեխ: Թող ով ուզում է կարգա պատասխաններս ու էլ շահարցնի:

Պլակատները հետևյալներն են.

1. «Բարև ձեզ» — «Աստծու բարին»:

2. «Ո՞ր եք գնում» — «Հիմնարկ, ժողով, նիստ, բժշկի մոտ, գեկուցման, վերջապես միևնույնն է, ուշացել եմ, ժամանակ չուենեմ»:

3. «Քեֆդ ո՞նց է» — «Շատ լավ է, շնորհակալ եմ»:

4. «Ո՞րտեղից եք գալիս» — «Կարևոր չէ»:

5. «է՛, ի՞նչ կա, ի՞նչ չկա» — «Ոչինչ էլ չկա, ինչ պիտի լինի»:

6. «Լավ եղանակ է» — «Տեսնում եմ»:

7. «Շոգ է» — «Տեսնում եմ»:

8. «Ցուրտ է» — «Տեսնում եմ»:

9. «Վատ եղանակ է» — «Ըհը՛»:

10. «Քամի է» — «Համար 6-րդ պատասխանը»:

11. «է, ուրի՞շ» — «Տես՝ հինգերորդ պատասխանը»:

12. «Կարդացի՞ք Հիքսի հայտարարութունը» — «Հերն էլ անիծած»:

13. «Հո լավ՝ լավ եք» — «Այո, այո, լավ եմ»:

14. «Չաղացել եք» — «Երկի»:

15. «էդպես, ասում եք լավ եք, էլ հետո՞» — «Հետո ոչինչ»: Իսկ հարցիդ առաջին մասի վերաբերյալ կարգա 8-րդ և 13-րդ պլակատի պատասխանները»:

16. «Ինչո՞ւ եք լղարել» — «Միսկարդիա ունեմ, ֆուրգոններ են անցնում պատուհանիս տակով գիշերները, շարունակ «Աղջի բախտավոր» եմ լսում... և վերջապես այս յոթը քարի արանքում քեզ ինչպե՞ս բացատրեմ, թե ինչո՞ւ եմ լղարել: Մի խոսքով՝ ես բժիշկ չեմ, գնա բժշկին հարցրու»:

17. «Ինչ էի հարցնում... հա» — «Լավ, դրա մասին հետո»:

Ահա այսպիսի բազմաթիվ պլակատներով զրահավորված միայն՝ կարելի է շտապել գործի Աբովյան փողոցով և տեղ հասնել 5 րոպե ուշացած:

Հինգ րոպե՝ պլակատները կարդալու համար:

Առանց դրան չես ազատվի Աբովյան փողոցի կենվորներից, որոնք չգիտես ինչու հետզհետե ճոխացնում են իրենց անկետային թերթիկները:

1927 թ.

ՄՈՒՍՈՒՆԻ

Տեսել ե՞ք Մուսոլինիի նկարը:

Ի՞նչ դաժան, ահարկու կերպարանք ունի:

Տեսնողներն ասում են, որ իսկականում ավելի դաժան և ահարկու է:

Հանդեսների, պառլամենտական նիստերի ժամանակ, ճառասելիս կամ փողոցներով անցնելիս նա հիշեցնում է հին հռոմեական պատրիկի:

Նա Կեսար է, մի քիչ ավել, մի քիչ պակաս:

Նա մարմնացնում է Հին Հոռմը, ուզում է վերականգնել Հին Հոռմեական կայսրությունը: Եվ այդ ուզում է անել ոչնչացնելով իսպառ բանվորական շարժումը վերականգնելով ստրկությունը և կեսարների ինքնակալությունը:

Մի խոսքով արտակարգ մարդ է. այնպես չէ, ինչպես՝ օրինակ՝ ես կամ իմ բարեկամ Գրիգորը, որ երբ հանդիպում ենք իրար, շատ հասարակ խոսում ենք իրար հետ:

- Բարև, ընկեր Գրիգոր:
- Ասածու բարին:
- Ո՞ւր ես գնում:
- Տուն եմ գնում: Իսկ դու ո՞ւր ես գնում:
- Ես էլ տուն եմ գնում:
- Գե միասին գնանք, ճանապարհներս մեկ է:

Միասին գնում ենք տուն և այդ ընկերն ոչ ես եմ կարծում, որ իմ ընկեր Գրիգորը հոռմեական պատրիկ է ոչ էլ Գրիգորն է կարծում թե ես Կեսար եմ: Ընդհակառակը՝ ամեն մեկս մի-մի ֆունտ կարտոֆիլ կամ կաղամբ ձեռներես տուն ենք գնում, ու ես գիտեմ, որ Գրիգորը քյոսամահմադցի է, նա էլ գիտե որ ես էլ գրա նման մի տեղացի եմ:

Ու հասարակ, խաղաղ բաժանվում ենք իրարից գնում տուն: Կամ՝ վերջապես ո՞վ գլուխ ունի հոռմեացի Կեսար լինելու, որ երկրներ նվաճես, պատերազմներ վարես, որ՝ սատանի ականջը խուլ, մի կացնով էլ գլխիդ տան ու... (ավելի լավ է չվերջացնեմ):

Բայց Մուսուլիներն ուրիշ բան է: Նա բանվորական շարժում է ուզում խեղդել, կայսրություն է ուզում ստեղծել, Եմեն ու Շանհայ է գործեր ուղարկում:

Ահա թե ինչո՞ւ է նրա դեմքը ահաբեկ:

Բայց այս օրերս էլ մի ուրիշ բան իմացա և գաղտնիքը բացվեց:

Դուրս է գալիս, որ Մուսուլիներն միայն ժողովրդի առաջ է ահարկու դեմքով հանդես գալիս: Տանը բոլորովին հասարակ, ողորմելի կերպարանք ունի:

Տանն այսպես է:

— Փո՞րդ է ցավում, — հարցնում է Մուսուլիների կինը:

— Աման, աման, աման — տնքում է Մուսուլիներն, — վախում եմ տիֆ լինի:

— Զէ, չէ պողեր, տիֆից փոր կցավի՞:

— Ի՞նչ իմանամ շատ եմ վախում: Մի բաժակ թեյ որ խմեմ, հո չի՞ վնասի:

— Խմի, խմի, վախիլ մի, ի՞նչ վախուկն ես: — Եվ Մուսուլիներն վախվախով մի բաժակ թեյ է խմում...

Խեղճ, ողորմելի, հասարակ մարդ:

Եվ այդ մարդը փողոցներում դաժան և ահարկու դեմքով սարսափեցնում է մարդկանց:

— Ինչո՞ւմն է գաղտնիքը:

— Գաղտնիքը դերասանության մեջ է:

— Մուսուլիներն պարզապես դերասանություն է անում:

Եվ (նկատեցեք ուշադրությամբ) շատ անգամ ամբողջ ժամերով օրերով դուրսն է, հասարակության առաջ: Ուրեմն ամբողջ ժամերով, օրերով նա իր դեմքին դաժան արտահայտություն է տալիս:

Դուք ասե՞ք՝ ինչպե՞ս չի հոգնում, ինչպե՞ս է կարողանում ունեբերը, քիթ ու բերանը կնճռոտած պահել: Այ համբերություն:

Անցյալ օրն ասացի, արի մի ես էլ փորձեմ, տեսնեմ ինչքան ժամանակ կարող եմ դաժան դեմք շինել: Վերցրի հայելին, նստեցի դիմացը, ժամացույցը դրի կողքիս և սկսեցի դեմքս ծռվելով դաժան արտահայտություն տալ: Համ նայում էի դեմքիս, համ էլ ժամացույցին: Երևակայեցեք, հազիվ կարողացա երեք ընկեր դիմանալ: Նախ որ՝ շունչս կտրվեց, սիրտս նեղացավ: Շատ որ զոռեցի աչքերս դուրս պրծան, այտերս փքվեցին ու հանկարծ այնպես ծիծաղից փռվեցի հայելու վրա, որ կինս վախեցած վեր թռավ տեղից:

— Ի՞նչ պատահեց...

— Ոչինչ, ուզում էի Կեսար դառնալ:

Այդպես էլ շահողվեց, Գրիգորին էլ ասացի, նա էլ փորձեց. բան դուրս չեկավ: Տեսանք, որ դատարկ բան է, ձեռք քաշեցինք: Բայց Մուսուլիներից կարո՞ղ է դուրս գալ Կեսար:

Այո, կարող է, դերասանական մեթոդով:

Մուսուլիներն առաջնակարգ դերասան է: Ինչպես բոլոր կեսարները՝ ծիշտ է ներոնն էլ դերասան էր, բայց Մուսուլիներն նրանից հազար գլխով բարձր դուրս եկավ:

Նախ՝ ներոնը խալտուրային դերասան էր, մտածում էր միայն

իլ խաղի մասին և ապա ուշ շէր դարձնում խմբի վրա: Մուսուլի-
նին ինքը ոչ միայն մեծահասակներ գերասան է, այլև անսամբլա-
յին դերասան է: Նա ահագին դրամ է ծախսում իր ֆաշիստա-
կան խումբը մեծացնելու և ուժեղացնելու: Միլիոններ է ծախսում
խմբի բոճիկների, նրանց գարգերոթի, գրիմի, բուտաֆորիայի,
տեխնիկական ուժերի վրա: Ռոճիկներն իր ժամանակին: Հետո
նուղղութիւնը: Մինչ ներոնը կեղծ-կլասիկ էր՝ Մուսուլինին ռեա-
լիստ է: Նա միջազգայնական է:

Այն օրը մի պատկերազարդ հանդեսում տեսա նրա ամերիկե-
յան — «Կու-Կլուքս-Կլան» ստուդիայի խմբանկարը: Խաղում էին
մի պատմական դրամա միջնադարյան դիմակներով — սրածայր
զլխարկներ, երկար զգեստներ և խաչաձև դաստակ ունեցող սրեր:
Տեսնես քանի՞ փորձ են ունեցել, ով գիտես: Նույնքան փորձ,
որքան և իրենց դերասանապետը՝ Մուսուլինին:

Բայց ո՞ւմ համար են վերջապես այս բոլոր բեմադրութիւննե-
րը, որ տալիս է Մուսուլինին իր բազմաթիվ խմբերով Իտալիայում,
Ֆրանսիայում, Գերմանիայում, Ամերիկայում, Անգլիայում, Լեհաս-
տանում: Ո՞ւմ են ուղղում վախեցնել...

Նրանք ուղղում են վախեցնել բանվոր դասակարգին: Այս բո-
լոր ծամածոթութիւնները, քիթ ու պոռնիկ ծոմոնելը, ունքերը վրա
տալը, աչքերը չոնելը — բոլորը բանվորներին վախեցնելու հա-
մար է:

— Վախենո՞ւմ են բանվորները:

Բանվորները չեն վախենում: Նրանք սովորում են հետզհետե
այդ բեմադրութիւններին, վարժվում են Մուսուլինիի և իր խմբի
միմիկական խաղերին:

Մուսուլինին էլ ստիպված է ավելի դաժան դեմք շինել, նստել
հայելու առաջ, վարժվել ավելի դաժանորեն ծոմոնելու իր քիթ ու
բերանը:

Բանվորները դրան էլ կվարժվեն:

Մուսուլինին ստիպված կլինի ավելի ծոմոնել իր բերանը: Հետո
ավելի, ավելի, ավելի, այնքան որ մի օր էլ բանվոր հանդիսա-
կանները կվազեն բեմ ու ձեռները գցելով նրա բերանին՝ այնպես
կճղեն, որ Մուսուլինիի դեմքը դառնա իսկական Կեսարի դեմք...

Եվ այդ բեմադրութիւնը Մուսուլինիի համար կլինի առաջին
բեմադրութիւնը, ուր նա կթողնի «պայմանական թատրոնը» և

ներկայացում կտա ռեալիստական ուղղութիւնով, հետը խառնելով
մի փոքր էլ... նատուրալիզմ:

Ոչինչ — այդ բանվորներին դուր կգա:

1927 թ.

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԵՓՈՂՈՎ

Պատկառազու մի ուղտ՝ նամակաթղթի ճակատի աջ ան-
կունում: Ուղտի վրա արևելյան մի գորգ: Ուղտը գնում է և ո՞վ
գիտե թե ուր: Ուղտի տակին էլ տպած է — Sample washing
free... նմուշ լվացումը ձրի:

Եվ իսկապես՝ ձախ անկունում գրած է.

Գորգերի՝

լվացում,

նորոգում,

ներկում,

խուզում, արդուկուս

արևելյան մեթոդով

(by oriental method)

Արևածագի ճառագայթներ են ցայտում երկինք, որոնց մի-
ջից Վահագնի պես ծնունդ է առնում

Sam Jigarjian et Co.

Մամ Ճիլբրճյան և ընկ.

Առևտրականները արևելյան ամեն տեսակ գորգերի, արևել-
յան հողաթափերի a fulle line — լեցուն գիծ — ամեն տեսակի...

Քաղաքից դուրս պատվերներին ճշտագույն ուղադրութիւն...
Արևելյան մեթոդով...

Հյուսիսային Միացյալ Նահանգները: Միրակուզ քաղաքը
Onondaga փողոց: — Հնդիկների, բնիկ ամերիկացիների լեզու
է սա, որ ով գիտե ինչ լեզունդար պատմութիւն ունի:

Նամակն ուղղված է՝

Հորեկար Մանուկ Միքայելյանին, որ նոր է վերջացրել իր

շնորհավորանքների ընդունելությունը և զգայուն է ու քաղաքավարի դեպի ամենքը և ամեն ինչ:

Մեծարգո Մ. Միխայելյան

Երևան, Հայաստան

Ձեր գրական ազգանվեր գործունեության քսանհինգամյա հոբելյանին առթիվ հայրենաբաղձ հայրորդիս հոգեթովի խանդավառությամբ և շիրմադին շնորհավորանքիս բույլը կառաքեմ ձեզի և կբարեմաղթեմ երկարաձիգ տարիներու ժրջան շարքե մը հաջորդիմավորեք հոգնավաստակ հիսնամյակ մը:

Այս առթիվ խոնարհաբար կիսնդրեմ հաճել ինձի հայտնելու, թե որպիսի հոբելյանական նվեր մը կփափագեիք, որ մատուցանեի ձեզի այս երկրեն:

Ընդունեք, մեծահարգո վարպետ, խորին հարգանացս հավաստիքը:

Հարգանքներով՝

Հայրենակարոտ՝ Սեդրակ Ճիյերճյան:

Ո՞վ է սա, ի՞նչ մարդ է:

Հայրենակարոտ՝ Սեդրակ Ճիյերճյան:

Գորգերի լվացող, նորոգող, ներկող, խուզող, արդուկող, արևելյան մեթոդով:

Ի՞նչ պատասխանել:

Եվ հոբելյար Միքայելյանի երևանյան համեստ բնակարանում հարցեր են զարթնում.

— Այ, ջանքմ, հոբելյարին կհարցնեն՝ թե ինչ նվեր է ցանկանում:

— Հա, է, նվիրում ես՝ նվիրիր, հոբելյարն ի՞նչ կարող է սեղանի մասին:

Բայց պետք է պատասխանել մարդուն, անհարմար է, կենդանա...

Ի՞նչ կա որ վերջապես:

Պարզ, անկեղծ հոբելյարին վայել յի պատասխան յերբ, իբրև տաղանդավոր հոբելյարից անկեղծ հարգողին:

Դե, տարօրինակ երկիր է Ամերիկան: Ձևերն անսովոր են և մասշտաբներն ամերիկյան: Եվ քանի որ մարդը լվանում, ներկում նորոգում, խուզում է արևելյան մեթոդով. թող նվերն էլ լինի ամերիկյան մեթոդով:

Մեծարգո ընկեր Ճիյերճյան:

Խորապես զգացված եմ Ձեր ջերմ շնորհավորանքից և բարեմաղթությունից: Ես տվել եմ իմ ժողովրդին և մայրենի գրականությանն այն ամենը, ինչ որ կարողացել եմ:

Ինչ խոսք, որ ես միայն շնորհակալ կարող եմ լինել Ձեր ցանկության արտահայտությունից: Հիրավի ամեն մի ջերմ խոսք, սրտագին վերաբերմունք թանկ է ինձ համար և այդքանը բավական է մի հոբելյարի համար: Բայց քանի որ Ձեր ցանկությունը հարգելի է ինձ համար և միաժամանակ չեմ կամենում վշտացրած լինել Ձեզ՝ թույլ տվեք անկեղծորեն և պարզ առաջարկել Ձեզ տեղափոխելու իմ գրվածքներիս անտիպ ժողովածուն:

Ձեզ հարգող՝ Մանուկ Միխայելյան

Դարձյալ ուղտը, որ մեջքին գորգը փռած գնում է չգիտես ուր: Դարձյալ Sam Jigarjian et Co-ն լվանում, նորոգում, ներկում, խուզում է արևելյան մեթոդով:

Դարձյալ արևի ճառագայթների միջից դուրս է լողում ձիւրճյան Արամի առևտրական տունը:

Արևելյան հողաթափեր... onondaga հնդիկ միստիկական փողոց:

Մի անգամ նմուշ լվացումը ձրի...

«Հարգելի պարոն Մ. Միքայելյան»

կհաստատեմ Ձեր օգոստոս 10 թվակիր նամակին ստացումը: Ի պատասխան Ձեր նամակին կուզամ կրկին անգամ խնդրելու Ձեզ, որ տեղեկացնեք, թե որչափ ծախքի պետք կա Ձեր երկասիրությանց տպագրության համար, և արդյոք Երևան, թե Ամերիկա կուզեք, որ տպագրվեն զանոնք:

Ընդունեցեք մեծահարգո վարպետ և այլն, և այլն:

Սեդրակ Ճիյերճյան

2. Գ.— ոգեթրթիւ, բամբուսանվանգ, գեղգեղանաց ձոն ընկալա մեր ծեր Մասյաց պատկեր կրող նամակադրոշմը եթե փակցունեիք Ձեր նամակին պահարանին (ծրարին) վրա մեծապես պիտի թեթեւանիք հայրենյաց հոգեբաղձութիւնս:

Նույն

Մեծահարգո ընկ. Ս. Ճիյերճյան, Ձեր սեպտեմբերի 15-ի թվակիր նամակը ստացա: Շտապում եմ ուղարկել իմ ժողովածուի նախահաշիվը, որ կազմել է մի հրատարակիչ: Գիրքը պիտի լինի մաքուր, շապիկը կապույտ գույնով, արևելյան ճաշակով և իմ անմիջական հսկողութեամբ պիտի տպվի Երևանում:

Ձեր ցանկացած նամակադրոշմները, որոնք արդեն դուրս են եկել գործածութիւնից՝ ուղարկում եմ ներսիակ:

Հարգանքներով՝ Միքայելյան

Գարձյալ ուղտը արևելյան մեթոդով: Սամ Ճիյերճյան և ընկերութիւն, Հնդկների փող. տելեֆոն, յանկիններ, ամերիկյան մասշտաբ...

Հարգելի պ. Միքայելյան, ստացած ըլլալով Ձեր վերջին նամակը՝ կը փութամ շնորհակալութիւնս հայտնելու Ձեզի, կը խընդրեի հաճել ինձ հայտնելու, թե ի՞նչ են Ձեր գրվածքներուն նյութը:

Միաժամանակ հաճեցեք թիֆլիզին մեջ գտնվող հայ գրատան մը հայտնել հասցես՝ որպեսզի իրենց մեկ գրացուցակն ուղարկեն ինձ:

Ընդունեցեք և այլն:

Սեդրակ Ճիյերճյան

2. Գ. Ալևոր ծեր Մասյաց նամակադրոշմներն ընդունեցի հայրենակարոտ սրտիս գերաթրթիւ հրճվանքով մը: Հաճեցեք երկու հատ ևս ուղարկել միայն փակցնելով զանոնք պահարանին (ծրարին) վրա:

Նույն

— Այ, տղա, այս մարդը մարկաճի է:

— Մարկաճի՞, ինչպե՞ս:

— Պարզապես նամակագրութիւնն է պահպանում, որ ծրարի վրայի մարկաները պոկի, մարկայի կոլեկցիոններ է, պրծավ գընաց:

— Անկարելի բան է:

— Կարելի է, սիրելիս, կարելի է:

— Ի՞նչ եք ասում, այդ աստիճանի լի՞րբ... — գարմանում է հորելյարը:

— Այո, արևելյան մեթոդով — by oriental method:

— Եվ այդքան խաբեբա՞:

— Ամերիկյան մասշտաբով: Մարդը կարգին տպագրեց. մարկաներդ էլ հիմի սրբում, լվանում, արդուկում և գրքի մեջն է դնում... արևելյան մեթոդով:

— Բայց ЧОРТ ВОЗЬМИ, ես մի նամակ էլ թիֆլիսի Պետհրատի գրախանութին եմ գրել, որ նրան գրացուցակ ուղարկեն:

— Ոչինչ, Սիրակուզի ուղտը հիմի էլ կըքի թիֆլիսի գրախանութի առաջ: Դա էլ այդ տեսակ մեթոդով ուղտ է:

— Ի՞նչ պիտի անել այդ լրբին:

— Ոչինչ, պիտի լռես:

— Բայց Միքայելյանը շկարողացավ լռել:

Հարգելի «պարոն»:

Գործածութիւնից ընկած մարկաները կոլեկցիոններների համար արժեքավոր դարձնելու փորձն անելու ոչ մի ցանկութիւն չունեմ:

Մ. Միքայելյան

Եվ նամակն ուղարկեց Սիրակուզ՝ մի մարկա ևս, որ անհրաժեշտ է, կպցնելով ծրարի վրա, որով և տպագրվեց իր մարկաների լիակատար ժողովածուն:

Այսպես է «Սամ» Ճիյերճյան ընկերութիւնը լվանում, նորոգում, ներկում և խուզում գորգերը, մարդկանց հավատը, Ս. Հայաստանը և ամբողջ աշխարհը:

1927 թ.

Ղատիկ որ ասում են, աչքիս առաջն է գալիս քաղաքների շուկաները, մեղրաշաղիս, յուղաթաթախ, գինու, կուրասի, թըխվածքների, մրգեղենների, կանաչիների հոտով ծանրացած... Մսեր՝ կովի, ոչխարի, գոմեշի կուրասներ, վիշինանե՛ր... Ականջիս մեջ ձողում են խոճկորները, ճշում են գլխիվայր կախված հեղկական, հայկական, վրացական և ամեն ազգի հավերը, գառները մայում են, լուռ ձկների փոխարեն էլ գոռում են նրանց տերերը և գովաբանում (եթե ձկները բանաստե՛ղծ լինեին)...

Այնպես չէ՞, ընթերցող, որ երբ Ղատիկ են ասում, մարդ պատկերացնում է մի լայն բաց արած սեղան՝ վրան գաթա, նազուք, պասկա, սաքոդինկա, փքավ, իսպանաղ և այլն, և այլն, և այլն:

Եվ մարդը, այդ քննության պարծանքը, իմաստության բնականունը, էականների թագավորը կատաղի մտւոցքով վրա է ընկնում այդ սեղանին ու խուճապային մոլուցքով սկսում է ուտել և՛ ձուկը, և՛ հավը, և՛ խոճկորը, և՛ գառը միածին, և՛ քեղ, եթե պատահմամբ ընկնես նրա ափսեի մեջ:

Ուրեմն ի՞նչ է զատիկը:

Պարզապես դաստրոնոմիա, ստամոքսի տոն, բիրաճի կենցաղ:

Զգիտեմ, ընթերցող, գնալո՞ւ եք թաթախվելու:

Եթե գնալու եք, այն ժամանակ զգույժ կացեք: Դուք ուտելու եք մի կարմիր ձու, որի մեջ սպիտակ է: Զգույժ կացեք կարմիր բողկից, նրա մեջ ևս սպիտակ է:

Դա կարմիր կենցաղ չէ, դա ճերմակ կենցաղ է՝ միայն նեփկած:

Մի թաթախվեք գառկահան կենցաղի մեջ, մի ուտիր կարմիր ձու, կարմիր բողկ, կարմիր գաթա, կարմիր հնդուհավ, կարմիր ձուկ:

Սրանց բոլորի մեջ սպիտակ է:

Այո՛, մի թաթախվեք: Ո՛չ հայտնի, ո՛չ էլ ծածուկ, եթե ոչ դուք ինքներդ կզառնաք ներկած ձու:

Կենցաղը չի կարելի ներկել:

Նա ինքն իր միջոցով սիտի լինի կամ ճերմակ, կամ կարմիր:

Հույս չունենաք, թե ծածուկ թաթախվելուց բան դուրս կգաս: Որովհետև ինչքան էլ թաթախված տեղից կարմիր ձու, բողկ, գաթա, հնդուհավ կերած բերանդ սրբելով դուրս գաս, քեզ կմատնի կարմիր գինին, որ կնեղի քեֆդ: Այդ ներկը կանցնի մի ժամում և աակին կմնա ճերմակ քիթդ:

Ուրեմն ի՞նչ ուտել, ի՞նչ կենցաղով ապրեք

1927 թ.

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ցարական ժամանակ հայերի ձեռքով թալանված մի թուրք գյուղ: որի անունը Թոփալ Հասանլու էր՝ «հաշտության բանակցությունների ժամանակ» հայց ներկայացրեց, որ թալանը վերագարձվի իրեն:

Հակառակորդ կողմը համաձայն էր թալանը վերադարձնելու, բայց հրաժարվում էր վերադարձնելու մի առարկա, որ Թոփալ Հասանլու գյուղը դրել էր թալանի ցուցակի մեջ:

Մի դաշնամուր...

— Մերժել, չպետք է տալ:

— Ինչո՞ւ, ջանքմ:

— Այդ տեսակ բան չէր կարող լինել թալանի մեջ:

— Ինչո՞ւ, ջանքմ:

Արգումենտը պարզ էր:

Ինչպես կարող էր դաշնամուր լինել մի գյուղում, որի անունն էր Թոփալ Հասանլու:

Բայց իրոք դաշնամուրը եղել էր մի թուրքի տանը:

Սակայն մերժվեց կատեգորիկ կերպով:

Ոմանք ծիծաղում էին Թոփալ Հասանլու գյուղի պահանջի վրա, ռմանք էլ կամենալով «օբյեկտիվ» լինել՝ մտածում էին՝ գուցե ճիշտ է, ու իրենց մտքում կրկնում էին:

— Թոփալ Հասանլու և դաշնամուր — չի սազում: Չէ, սուտ է: **Չի** եղել:

Անունների հոգեբանություն — սարսափելի բան:

Օրինակ՝ ով կզնա Թանկազիզ Քյալլափաշայանի պլաստիկական պարերը դիտելու:

Մինչդեռ ասենք Թանկազիզ Քյալլափաշայանը նազելաշուք պարուհի է:

Տեղերի անուններն էլ միևնույն ցավով են տառապում:

Տեսնում ես մի ծաղկափթիթ ձոր: Բայց անունը՝ Ղանլի-դարա (արյունոտ ձոր):

Մի ուրիշը՝ «Բողազ-Քյասան» (կոկորդ կտրող):

«Ղոնաղ-Ղոան» (հյուր սպանող):

«Դալի-Ղարդաշ» (գիժ եղբայր):

«Իլան-Չալան» (օձ գողացող):

«Քյալ-Ալի» (ճաղատ Ալի):

«Քյոսա-Մահմադ» (գոշ Մահմադ):

Կամ ինչպես մեր հարևան երկրներում.

«Էշակ Մեյդան» (իշի հրապարակ):

«Ղառղա բազար» (ազուսվի շուկա):

Սա ի՞նչ անուններ են: Կատարյալ ռոմանտիկա, միջնադար, ֆեոդալների, ավազակների սխրագործությունների վայր է եղել այս երկիրը:

Բայց այս սարսափելի, երբեմն և նվաստացնող անունների հետ ի՞նչ կապ ունի մեր սոցիալիստական երկիրը:

Մեր շինարարությունը պիտի ծավալվի, զարգանա, մեր գյուղերը մեծանան, քաղաքակրթվեն, շատերը պիտի դառնան ավաններ, ոմանք քաղաքներ, մեր ձորերը, դաշտերը պիտի լցվեն մըշակված ագարակներով:

Երևակայում եք փոստ-հեռագրատուն, էլեկտրականություն, դպրոց, թատրոն, թանգարան, ռադիո և (հեռի ձեզանից) Բողազ-Քյասան՝ կոկորդ կտրող...

Եվ լրագրում էլ կարդում եք. «Բողազ-Քյասանի կոնսերվատորիան այս տարի ընդլայնել է իր ձայնի մշակման դասարանը»:

Կամ «Բողազ-Քյասանի ամբուլատորիան իր քթի և... կոկորդի հիվանդությունների բաժնի համար հրավիրել է պրոֆեսոր այսինչին»:

Ի՞նչ կսազի գնալ այդ կոկորդ կտրող քաղաքը ձայնի մշակելու կամ (ո՛վ սարսափ) կոկորդ բժշկելու:

«Ղոնաղ-Ղոանի» (հյուր սպանող) երկրորդ մեծ հյուրանոցի շենքն ավարտվեց»:

Ավելի վատ... Ինչ սարսափելի կլինեն, եթե շորորդն ավարտվի:

«Ղանլի-Դարալի՝ արյունոտ ձորի սանատորիան»:

«Ղանլի Դարաշի՝ գիժ եղբոր մանկավարժական կուրսերը»:

«Քյալ-Ալիի լողարանների բացումը տեղի կունենա այս ամսին»:

«Իշակ մեյդանի հրապարակի խաղերը»:

«Իլան-Չալանում (օձ գողացող) բացվեց ապահովագրական գանձարկղի բաժին»:

«Մուլլա-Քյասումի հակակրոնական պրոպագանդան հաջողությամբ պսակվեց: Ոչ մի հավատացյալ»:

Չեմ կարծում: Իսկ մոլլա՞ն:

«Քյոսա-Մահմադ»... գոշ Մահմադ: Ո՞վ է այդ անմորուք Մահմադը, որ նախ իր վրա է վերցրել մի քանի հարյուր մորուքավոր մարդկանց գյուղի անվան մատակարարումը և վերջապես մա՞րդ գտան — Քյոսա՞-Մահմադ...

Կամ «Կարմիր Ավետարանոց»:

Չուզեցինք — թեկուզ Կարմիր:

Իսկ ի՞նչ կասեք Թայ Չարուխին (տրեխի մի հատը): Երեվակայո՞ւմ եք մի հատ տրեխի անուն ունեցող գյուղն ապագայում դառնա քաղաք, ունենա կաշվեղենի արդյունաբերող գործարաններ, կոշկեղեն մատակարարի ամբողջ Անդրկովկասին:

Թույլ տվեք վերջացնելու ցանկը մի վերջին անունով.

«Ղուր-դու-ղու-լի»:

Ապագայում կարդում եք.

«Ղուր-դու-ղու-լու ստուդիայի առողջանության պրոֆեսոր այսինչը եկավ Երևան»:

էլ ինչո՞ւ է գալիս...

Փակենք ցանկը՝ չվախեցնելու համար մեր երկրի զանազան վայրերը «հյուր» եկող օտարականներին, մեր «կոկորդի» հիվանդություն ունեցողներին, բժշկվողներին, մանավանդ երեխաներին:

Այդ անուններից մեծ մասը կամ սարսափելի են կամ տգեղ, կամ նվաստացնող և, վերջապես, անհարմար մեր դարաշրջանի համար:

Այդ հանգամանքով է, որ մեր տեղանուններն ընկել են ներգործող կրոնական կից հանձնաժողովի մեքենայի մեջ — «ժամանակին անհամապատասխան անուն ունեցող քաղաքները, ավանները, գյուղերը վերանվանելու խնդիրն ուսումնասիրելու համար»:

Խնդիրն ուսումնասիրված է արդեն...

Ալեքսանդր Մակեդոնացին իմանալով, որ Ալեքսանդր անունով իր մի պինվորը շատ է վախկոտ՝ կանչեց մոտը և ասաց նրան.

— Կամ սիրտդ փոխիր, կամ անունդ:

Մեր գյուղերին և այլ վայրերին էլ պետք է ասել.

— Կամ անունդ փոխիր, կամ կուլտուրայդ:

Բողազ-Քյասան, Իլանչալան, Ղոնաղ-Ղուան, Ղանլի-Գարա...

այս ավազակային ժամանակների անունները պետք է փոխվեն սոցիալիստական ժամանակում:

Իհարկե, դրամն ունի և իր հակառակ կողմը:

Ունենք գեղեցիկ անուններով գյուղեր, որոնց անունը հարմար չէ... տվյալ գյուղին.

Օրինակ՝ Վարդաբլուր:

Որքան գիտենք այդ գյուղում այնքան վարդ չկա, որքան ավելի ազր, փաշի և այլն:

Այսպիսի գյուղերի անունն էլ պիտի փոխել՝ աալով նրանց մաքրությանը հարմարվող մի այլ անուն, կամ այդ գյուղը պիտի հարմարվի իր անվան... ուղղելով իր սխալը:

1927 թ.

ԱՆՊԼԻԱՆ ՇԱՀԵՐ ՌԻՆԻ

Կարո՞ղ եք երևակայել, ընթերցող, որ դուք Ս. Հայաստանի մի՞ ասենք Քյոսամահմադ գյուղում, կամ ավելի խոր գետեք, նու, ասենք մի Ղառղավանք, Ադիաման, Յարբուղու՝ ձեր համա-

գյուղացիների հետ մի արևկող տեղ նստած՝ մի կողմից ձեռքիդ ձիպոտի ծայրով գետնի վրա խաղեր ես քաշում, մյուս կողմից էլ զրույց ես անում հետները, օրինակ, այսպես թե.

— Աղաջան, եկ էս ձմեռ իմ էլը բանի դնենք երկուսիս տան գործի համար, փետի, ջաղացի, քաղաքը ձու-մու տանելու, գարնանն էլ քո արտում, երկուսս կիսրար գարի ցանենք:

Աղաջանն էլ, մի-երկու անգամ շիբխին տալով, ծուխը պըն-չածակերից գուրս փչելով, գլուխը ամբամբացնում է ու քեզ ասում է.

— Ղաբուլ եմ:

— Յոլա գնանք, հը՞, Աղաջան, Ի՞նչ կասես:

— Բա յոլա պիտի գնանք: Է՞հ, ուրախ ես:

Աղաջանի համար էլ լավ եղավ՝ գարու և իշի գործն էլ դը-րբտովեց:

Հետո շիրուխներդ մին էլ եք լցնում ու զրից անում դեսից-գենից, շարքացանից, շաղացանից, կոուպերասիվից, գյուղխոր-հուրդների ընտրությունից:

Վերջն էլ վեր եք կենում գնում ձեր տները: Ու սպասում գարնան՝ կա՞վ, հա՞շտ, խաղա՞ղ, քա՞ղցր:

Ի՞նչ ունեք հաշտ ու քաղցր շինելու Պառկում եք քնում:

Օր է՞ անց է կենում, գնում է:

Առավոտը վաղ դռան կողմը մի ղալմաղալ է ընկնում:

— Այ տղա, էն ո՞վ է,— Աղաջա՞ն, դո՞ւ ես: Ի՞նչ կա, խե՞ր է:

— Մի դուրս արի գեղամեջ, ինչ-որ մարդիկ են եկել:

— Ի՞նչ են ուզում:

— Բա՞ն են հասկանում... բլբլացնում են, բլբլացնում են՝ զլխի շենք ընկնում:

Դուրս ես գալիս գեղամեջ, խալիսը հավաքվել, մտիկ է տալիս, ինչ-որ շեկ օտարականների, որ գլխներին «զգրաստի — պոաշ-չալ» դրած, ծխամորճերը շթթունքների՞ն՝ կանգնել են: Մի տեսակ էլ խոսում են, կարծես բիրանների մեջ տաք-տաք կարտոֆիլ է ընկել, այրում է, ուզում են դուրս գցել, շեն կարողանում:

Այ տղա, մի վարժապետին իմաց արեք, գա:

Գալիս է վարժապետը: Հախ աստծու, լեզուները հասկանում է քեչ-միչ:

— Ի՞նչ կա,— հարցնում է:

— Չեմբեուլենի մարդիկն ենք:
— է, հա՛, բանն ինչո՞ւմն է:
— Բանն էն է, որ զինվորական այցելությամբ եկել ենք
ձեզ մոտ: Անգլիան շահեր ունի, պետք է պաշտպանենք:
— Անգլիան շահեր ունի՞:
— Հրաման քեզ:
— Քյոսամահմադո՞ւմ:
— Հա, Քյոսամահմադում Անգլիան շահեր ունի:
— Թլի հա՛, հետո՞:
— Հետո — ջանսաղություն: Պետք է պաշտպանենք Անգլիայի
շահերը:

— Ի՞նչ շահեր են:
— Շահերն էն են, որ ձեր բուրդը, տավարի կաշին, ձուկը,
բամբակը, եղը, պանիրը, անասունը Անգլիային պիտի ծախեք
Անգլիայի նշանակած գներով:

Ձեր հանքերի շահագործումը պիտի տաք Անգլիայի կապի-
տալիստներին:

Մենակ Անգլիայից պետք է ապրանք առնեք:

Անգլիական գաղութ պիտի հիմնվի Քյոսամահմադում, և
դուք ձեր գեղատեղի կեսը պիտի կտրեք տաք նրանց, որ ապրեն:
Այդ տեղը պիտի լինի էքստերիտորիալ մարզ:

Եվ որպեսզի անգլիական քաղաքացիների տներից բան չգո-
ղանաք՝ մենք մեր ոստիկանությունը պիտի դնենք անգլիական
մասում:

Կուլակների գեմ դուրս չպիտի գաք:

Հանքերի բանվոր դուք պիտի տաք:

Բանվորները 15 ժամ պիտի աշխատեն:

Գործադուլ, պահանջ, ցույց չպիտի անեք՝

Եթե չհնազանդվեք՝ մեր զորքերը կգան և Քյոսամահմադի
բմբուլները երկինք կհանեն:

— Ըհը՛մ... տեսա՞ր, այ թե ի՞նչ էր եղել բանը... և, ով է
այդ կարգադրություններն արել:

— Չեմբեուլենը:

— Չեմբեուլենը: Լավ: Բայց կարգադրություն որ արել է՝
իրավունքով է արե՞լ, թե այնպես ինքն իրան, խոսք է, ասել է:

— Ինքն իրենից ո՞նց կարող է ասել: Թուղթ կա, մտիկ արեք,
տեսեք:

— Ի՞նչ թուղթ է, տեսնենք:

— Համեցե՛ք:

Սոցից հանում է մի դեղնած, ծալծլած թուղթ, 1616 թվակա-
նին գրած, դրոշմած, անգլիական կնիքը գրած:

Կարդում է՝ Անգլիայի և Քյոսամահմադ գյուղի մեջ կոն-
վենցիա:

Մի շարք պարտավորություններ Քյոսամահմադ գյուղի կող-
մից:

Մի շարք իրավունքներ Անգլիայի կառավարության կողմից:

— Ինչպե՞ս է կնքվել այս պայմանը...

— Պայմանը կնքվել է այսպես: Մեր գորաբաժինը 1616 թը-
վականին մտել է Քյոսամահմադ: Հրացաններն ուղեցել է կրակել
ձեր պապերի վրա: Ձեր պապերը դեմ են վազել և խնդրել են
չկրակել: Անգլիացիները մեծահոգիորեն խնայել են ձեր պապե-
րին, միայն մի պահանջ են դրել, որ Քյոսամահմադ գյուղը մի
կոնվենցիայով պարտավորվի Անգլիային: Ձեր պապերն ընդունել
են:

Գլուխդ բան չի մտնում...

Քեզ համար հանգիստ, միամիտ նստել քո Քյոսամահմադ
գյուղում ապրում ես, այդ գյուղում ծնվել ես, մեծացել և Չեմ-
բեուլենի երեսը մի անգամ էլ չես տեսել: Ոտդ մի անգամ Անգլիա
չես դրել: Անգլիայի մասին որ խոսք է եղել՝ գիտուն մարդկանց
հարցրել ես, որտե՞ղ է, ասել են, է՛է՛է՛, ո՞վ է իմանում ո՞ր ջհան-
գամի ծերը: Միտքդ ես փորփրում, որ հիշես, թե պապդ կամ
պապու-պապդ հո Անգլիայի հետ գործ չի ունեցել և լավ հիշում
ես, որ նրանք ոչ մի գործ չեն ունեցել: Հիմի հազիվ ես իշիդ գոր-
ծը դրստել, այս մարդիկ եկել են, թե Անգլիան հետո հաշիվներ
ունի:

Ի՞նչ հաշիվ ունիմ հետը...

Ախր ո՞ր Չեմբեուլենը, ո՞ր իմ էջը:

Ահա ձեզ մի վայրենի ֆանտազիա, որ օրինակի համար մեջ
բերի:

Բայց սա վայրենի ֆանտազիա չէ մի Զինաստանի, մի Հնդկաստանի, մի Աֆրիկայի, մի Պարսկաստանի, մի Արաբիայի համար:

Դրանցից ամեն միըն մի Քյոսամասմադ են: Ամեն տեղ մտնում է Անգլիան, ամեն տեղ Չեմբեռլենի «մարդիկը» առավոտ վաղ, դեռ շները տեղից վեր չկացած՝ կանգնում են գաղութային ժողովուրդների գլխին:

— Չեմբեռլենն ասավ՝ պարտքերդ տվեք:

— Ի՞նչ պարտք, ո՞վ է պարտք արել, ի՞նչ հաշիվ ունեք, ախր, ո՞ւր Չեմբեռլենը, ո՞ւր մեր էջը... — Անգլիան չի լսում: Ուղարկում է իր զորքերը...

Ամսիս 8-ին կարդացինք լրագրերում, որ Զիբրալտարից 2 ականակիր նավ է ուղարկել Չեմբեռլենը Օպորտոն (Պորթուգալիա)՝ «անգլիական շահերը պաշտպանելու համար»:

Այնտեղ էլ «շահեր ունի»... Եվ վերջապես որտեղ շունի: Կարո՞ղ է աշխարհիս երեսին մի կտոր հաց, մի երկու կոպեկ շարժվել, որ Անգլիան ձեռքը հափ շանի՝ խլելու: Եվ լավ արհեստ է, ախպեր: Մանավանդ լավ երես է, դուք այդ ասեք: Մտիր ուրիշի գրպանը, թե շահեր ունեմ մեջը: Դա՛ հո պապս էլ կուզենա, բայց ո՞ւմ աշխատանքն է ուզում խլել:

Ժամանակը չէ՞ որ բոլոր «գաղութային ժողովուրդները», բոլորը միասին շինացիների պես վեր կենան Չեմբեռլենի դեմ, վզակոթին տալով դուրս գցեն իրենց երկրից:

— Ի՞նչ է ուզում, «շահե՞ր ունի» — տվեք գրա վզակոթին, տվեք, դուրս գցեք, թող ռազ ըլնի գնա:

Հերիք եղավ: Եվ վերջապես՝ ո՞ւր Չեմբեռլենը, ո՞ւր մեր էջը:

1927 թ.

ՄԱՍՆԱՎՈՐԻՆ ՈՒՏՈՂՆԵՐ

Երևանում ապրողների խոսակցությունը լսելիս երբեմն տարօրինակ տպավորություն ես ստանում:

Օրինակ, մեկն ասում է.

— Մասնավորին կերա՛ ստամոքսս փշացավ: Մյուսն էլ պատասխանում է.

— Բանկոտպին թողած՝ մասնավորին ինչի ես ուտում: Նա համ սխտորով է, համ թարմ, իսկ սա ով գիտի ինչից է: Մեծած բան, արի իմացիր:

— Սա՞ ինչ խոսակցությունն է, — մտածում ես, — գիտեիր, որ մասնավոր վաճառականի է և բանկոտպի խանութներ կան, որոնցից կարելի է երջեկ առնել, ուտել, բայց մասնավորին կամ բանկոտպին վարչությունը, ապարատով և անդամներով ուտել՝ դա միայն Երևանում կտեսնենք: Վերոհիշյալ ձևով խոսողներից մեկին կատակով հարցրի.

Ընկեր, ներողություն, ինչպե՞ս է պատահում, որ մասնավորը ստամոքս է փշացնում:

Նա լուրջ պատասխանեց.

— Մասնավորի միսը կասկածելի է, վատն է լինում:

— Եվ շա՞տ եք ուտում մասնավորին:

— Ո՛չ, երբեմն էլ բանկոտպին եմ ուտում:

Բնական խոսակցական լեզու, ոչինչ չի նկատում մարդը՝

— է, լավ, ներհեք, մի հարց էլ, դուք պատահաբար միջին աֆրիկացի չե՞ք:

— Ո՛չ, երևանցի եմ:

— Զարմանալի է:

— Ինչո՞ւ եք զարմանում:

— Այնպես, ուզում եմ զարմանալ: Ընկեր, սա ի՞նչ լեզու է: Այսպես մասնավորից որ սկսել եք ուտել, վերջն էլ բնդհանուրին կուտեք, ի՞նչ կմնա մեջտեղ...

Հիմի բացատրենք երևույթը:

Մարդը կրճատում է իր խոսքը:

Ասենք՝

«Մասնավոր խանութպանի խանութի միսը կերա»:

«Մասնավոր խանութպանի միսը կերա»:

«Մասնավորի միսը կերա»:

«Մասնավորինը կերա»:

«Մասնավորին կերա»:

Ինչպես է՝ մեր խեղճ բանկոտպին:

Հասկանալի է:

Մարդը շարունակ լսում է «Ժողտնտխորհ», «կուլվար», «կուտնտեսական» ու ինքն էլ նույն ինքնը խոսող զննում է:

— Բառերի կրճատման դե՞մ ենք:

— Բառերի կրճատման կողմնակից ենք:

— Դա խնայողություն է էներգիայի և ժամանակի:

Բայց կրճատման տեղը կա, հարմար բառերն ու նրա ձևերը կան: Եվ, վերջապես, վարպետը կա:

Այսպես՝ վատ չեն կրճատված պրոֆմիտություն, գործկոմ, հրամկազմ, կուտնտեսություն...

Վատ չեն թեկուզ, քաղուսավար, սոցդասավար, շրջգործկոմ:

Բայց սրանք շարունակվելով կրճատվել դառել են.

Գլխաքաղուսավար, գավգլխաքաղուսավար և այսպես կրճատվելով, «կրճատվելով» սոցդասգլխավարչություն, շրջհարկհանձնաժողով՝ այնքան են երկարել, որ հարկ կա այս բառերը ուղղակի կրճատելու:

Վերջ ի վերջո սա էլ վնաս չունի:

Սրանք հատուկ հիմնարկների անուններ են, կազմակերպություններ են, առանձնահատուկ բառեր, որ կարելի է կրճատել, և որը արվում է հատուկ մարմինների կողմից:

Բայց ինչ կասեք այն կրճատումներին, որ արվում են տարերային մարմինների կողմից, որ կրճատում են, հա կրճատում:

Բառերի կոտորած է:

Վրա հասնողը հարձակվում է բառերի վրա, գլուխները կըտրում, խոթում է իրար մեջ:

Ու առաջ է գալիս թատերաքննադատություն, պրոֆպրոպագանդիստություն...

Ես էլ կասեմ.

— Գնճան... (գնալու ճանապարհ) բարեկամս էլ թող ասի.

— Խմջուր (խմելու ջուր):

Շուտով կսկսենք իրար չհասկանալ: Կարիք պիտի ստեղծվի բառարանների և մեզ չպիտի օգնեն ոչ Հայկազյան բառարանը, ոչ Աճառյանի արմատական բառարանը, ոչ էլ որևէ հանրագիտական բառարան: Գլուխը քարով է տվել սանսկրիտերենը, զենգիրենը, հին բարձր գերմաներենը, նոր ցածր ֆրանսերենը...

Սա դեռ ընթերցվածներիս համար: Իսկ ինչ է լինելու դուր-

դուղուլեցի բատրակ Աղաջանի դրությունը: Նա, որի ականջին շարունակ բզդում են այդ զարհուրելի երկար կրճատումները:

Բառը գաղափար է, հոգեբանություն է, Բառը դպրոց է, մտածողության առջև պատկեր է, բառն ինքն ուսուցիչ է:

Օրինակ, շատ լավ կլինի, որ դուրդուղուլեցի բատրակ Աղաջանը, որ նոր է մտնում քաղաքական և կուլտուրական կյանք, այսինքն նոր է սկսում միտքը բանեցնել բառերի և նրանց նշանակության վրա, շարունակ թող նրա ականջին հնչեր լրիվ՝ փոխադարձ օգնության «կոմիտե»: Այսինքն տնտեսության, կարիքի, դասակարգային պայքարի, սոցիալիզմի վերելքի մեջ փոխադարձ ես, դու, նա, բոլորս իրարու օգնության՝ այսինքն դրամ, ուժ, կարողություն, կյանք տվող մի կոմիտե՝ այսինքն կազմակերպություն, հրահանգի, օրենքի, հաշվի մեջ ամփոփված մի մարմին, մի կամք:

Սա պատկեր է, մտածել է տալիս, որովհետև հասկանալի է, ամեն ռուպե հնչում է կենդանի ձայնով:

Բառերի կրճատումն իր տեղը ունի, իր մարդը, իր ժամանակը:

Եվ չափը:

Թե չէ բառերի կրճատման (բառակրճատման...) հիվանդությունն այնպես բռնել է ամեն մի «մասնավորին կամ բանկոպին» ուսողի, որ շուտով մենք ոչ մի բառի երես միամիտ չենք նայի և կընկնենք այն երկու գավառեցիների օրը, որ մի անգամ գավառից Երևան գալով, կանգնեցին մի հիմնարկի առաջ և ուզում էին դռան վրա նայելով իմանալ, թե ինչ հիմնարկ է:

Դռան վրա գրած էր.

«Մուտք»:

(Յա օխտն անոն սուրբ Կարապետ):

Տեսնես ի՞նչ կարող է նշանակել:

Մեկը կարդում է.

«Մայրաքաղաքի ուսանողական տնտեսական քարտուղարություն»:

Մյուսն ասում է.

— Ոչ, դա նշանակում է «Միացյալ ուսուցման տարրական քաղաքականություն»:

Շատ զոռեցին բան հասկանալու, բան դուրս չեկավ: Զարմա-

ցան բառի դժվարությունն վրա: Բայց ավելի զարմացան, երբ իմացան, որ մուտք նշանակում է «մուտք»:

Նրանք շատ էին եղել Երևանում և շատ էին լսել, որ վաղվա հետաքրքիր նշանակում է «Խորհրդային Հայաստան» թերթը, բայց որ մուտք նշանակում է մուտք՝ առաջին անգամ էին լսում:

Այո, այո, այնտեղ կարող եք հասցնել բանը, որ մենք էլ մի օր առաջին անգամ իմանանք և զարմանաք որ:

«Խնամի Հակոբջանը գնաց Քյոսամահմադ՝ ուրիշ ոչ մի բան չի նշանակում, քան է պարզապես «խնամի Հակոբջանը գնաց Քյոսամահմադ»:

1928 թ.

ԴՌՈՒԲԱՆ

«Զին-Արևելյան երկաթուղու... Դուբանը պահանջ առաջադրեց երկաթուղու կառավարիչ ընկ. Եմշանովին. հանձնել երկաթուղու վարչությունը իր՝ Դուբանի կողմից նշանակված անձնավորության... Դուբանի կողմից հեռացվել են պաշտոններից սպասարկության և քարշի պետը...»

Լրագրներից:

Եվ շարունակ կարգում ես... «Դուբանը հրամայեց, Դուբանը գրավեց, Դուբանը քշեց, Դուբանը ձերբակալեց...»:

Ի՞նչ մարդ է այդ Դուբանը, որ այդպես գրավում, խլում է ուրիշի սեփականությունն օրը ցերեկով հարգոյապատիվ հասարակության աչքի առաջ...

Զես իմանում ինչ ասես:

Ի՞նչ կասեք, եթե մեկը ձեռները կոխի ձեր գրպանը պարզապես, հանի ձեր քսակը և դնի իր գրպանը. և երբ դուք դառնաք նրան, թե.

— Դա ի՞նչ է նշանակում:

Պատասխանի.

— Իմ կարծիքով բոլոր վիճելի հարցերը պետք է լուծվեն փոխադարձ համաձայնությամբ:

— Փոխադարձ համաձայնությամբ...

— Այո, բոլոր վիճելի հարցերը փոխադարձ համաձայնությամբ:

— Քսակս տուր, ի՞նչ փոխադարձ համաձայնություն: Ձեռդ կոխես գրպանս, քսակս հանես դնես գրպանդ և «փոխադարձ համաձայնություն»:

— Կարելի է անկեղծ քննարկման ենթարկել վիճելի հարցերը:

— Է, լավ, դնենք, բայց հապա դեռ քսակս տո՛ւր:

— Կխոսենք այդ հարցի մասին:

— Ո՞նց թե կխոսենք: Քսակս ինչո՞ւ դրիր գրպանդ, դու էս ասա:

— Դեպքերն անհրաժեշտ դարձրին ձեր քսակի վերաբերմամբ ձեռք առնել ներկա միջոցը, բայց դա չի կարող ազդել երկու անձնավորության մեջ գոյություն ունեցող դիվանագիտական հարաբերությունների վրա:

Ահա այսպիսի անանցանելի, անհույս, լիրբ... մինչև «ե, օ, ֆ»:

Ի՞նչ է մնում ձեզ անել... խուլիզանի հետ հո իսկույն ֆիզիկական դաստիարակության միջոցների չեք դիմում: Նախ՝ փորձում եք վերջնագիր տալ, այն մտքով, թե՝ եթե խլածդ չվերադարձնես, այս կանեմ, այն կանեմ: Եվ տալիս եք՝

Տեսեք ինչ է ասում.

— Մեր կարծիքով ձեր քսակը չի կարող վերադարձվել ձեզ, սակայն ձեր մյուս պահանջները կարող են բավարարվել բանակցությունների շնորհիվ և ոչ թե վերջնագրի ձեռով:

Այս էլ քեզ նախալուծյան, լրբության հյուսիսային բեռը, հասա՞ր, էլ տեղ չկա գնալու:

Հիմա ի՞նչ խոսես:

Մտածում եմ, եկ մի հարց տանք մեզումեզ. քսակս խլել դրել է գրպանը, պահանջում եմ քսակս, չի տալիս քսակս — էլ իմ «մյուս պահանջները» որո՞նք են տեսնես, որ կարող են բավարարվել:

Գուցե այս խուլիգանն սպասում է, որ ես պահանջեմ շալվարս էլ հանել:

Կամ՝ պահանջեմ, որ թույլ տա գնամ էլի մի քսակ բերեմ, որ գրպանիցս հանի՞, կամ՝ գլխի՞ս նստի...

Որո՞նք են սրա կարծիքով իմ «մյուս պահանջները»՝ աստծու սիրույն:

Հիմա երևակայեք, այդ խուլիգանի անունն էլ Դուբան է և կանգնած մտիկ է տալիս ձեզ:

Ի՞նչ կասեք:

Ես կարծում եմ, որ եթե դուք քիչ թե շատ գործ եք ունեցել ապուշների, խելագարների, կիսահիմարների և նմանների հետ՝ իսկույն կասեք.

— Դուբա՞ն... Դուբա՞ն... սրան մի բան պակաս է:

Կդառնաք նրան և կասեք.

— Դուբան, ջանս, ինձ լսիր, ես չգիտեմ, թե դու սովորական լրբից ինչով ես պակաս կամ արտասովոր ավազակից ինչով ավելի, բայց, սիրտդ չմնա՝ քեզ մի բան պակասում է:

— Ի՞նչ:

— Մի բան, մի տեսակ բան, որ չեմ կարող տեղը բերել, հենց լեզվիս ծայրին է: Բանն անվանդ մեջն է: Կամ դու ճիշտ որ Դուբան ես, իսկական Դուբինան հետևդ կանգնած է:

Կանգնած է հետևդ և քեզ սովորեցնում է անել բաներ, որ կարող է անել ճիշտ է՝ քեզ պես Դուբանը, բայց կարող է ասել, որ անես՝ մի իսկական Դուբինա:

Ո՞վ է այդ Դուբինան, որ քեզ դրդում է այդպիսի լրբութուններ անել:

Ասա, եթե դու սովետական լեզուն չես հասկանում առանց թարգմանություն և թարգմանության վրա էլ երկու օր ես կորցնում, մենք չինարեն հասկանում ենք և ձեռաց հասկանում ենք, թե ով է այդ Դուբինան: Եվ ահա՝ Դուբան ես թե Դուբինա, թե՛ դու, թե՛ քո հետև կանգնածը, որ անգլերեն է խոսում կամ այլ լեզվով՝ մենք սովետական պարզ լեզվով ասում ենք ձեզ. զգուշ՝ ձեր դուբինայական խելապատակի համար կան ֆիզիկական փայտե դուբինաներ ոչ միայն սովետական երկրի բանվորների, գյուղացիների, այլև այն բանվորների և գյուղացիների ձեռքն, որ կանգնած են այդ բազմատեսակ դուբինաների հետև՝ Զինաս-

տանում, Անգլիայում, Ֆրանսիայում, Ամերիկայում և այլուր:
— Կտաս քսակս: Այո, այո, քսակը կտաս դեսը:
Դուբինա...

1929 թ.

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԵՆՔԵՐ

Անեկդոտը մի այսպիսի բան է պատմում լոռեցիների մասին:

(Խեղճ լոռեցիներ, ինչով են մեղավոր, ուրիշ գավառեցիներ կրթման լոռեցիներին են վերագրում այն թերությունները, որ հենց իսկն այդ գավառներին է սազում, ոչ թե լոռեցիներին: Բայց ինչ որ է՝ առական անխոտելի է):— Անեկդոտը պատմում է, որ մի անգամ լոռեցիներն ուզենալով եզր մորթել և նկատելով, որ դրա համար դանակ է պետք և տեսնելով, որ դանակը տան կտրանն է ընկած՝ եզր թոկերով կապած բարձրացրել են կտուրը, տարել դանակի մոտ:

Ի՞նչ է սա: Նպատակասլացո՞ւմն: Ռացիոնալիզացիա՞, Երևի: Թերևս կարիք լիներ ապագայում եզները դանակի մոտ տանելու գործում մի քիչ էլ տեխնիկա մտցնել: Այսինքն՝ սարքել եզ բարձրացնող մեքենա, վրան տեղավորել եզը, բարձրացնել, վեր գնել դանակի մոտ:

Այսինքն գործի մեխանիզացիա:

Որտեղի՞ց միտս ընկավ այս անեկդոտը, այս ասենք՝ լուրիզմը:

(Լավ, լավ, դեմ չեմ, թող լինի ապարանիզմ, շիրակիզմ, երեվանիզմ, զանգեզուրիզմ...):

Այս լուրիզմը միտս ընկավ ընկեր Բինգյուլի «Անտնտեսավարության հետևանքով» թղթակցությունից («Խորհրդային Հայաստան», № 103), ուր ընկերը ճիշտ և շատ տեղին դատապարտում է Աշխրոսայի շենքի նորոգման անտնտեսավարությունը, 60.000 ռուբլի ծախսը, անձրևների ջուրը ծծող կտուրը, անպետք կատարողները, հյուանների անբարեխղճությունը, զուգարանների բացա-

կայութիւնը և այլն, սակայն, մի քանի կետերում ընկնում է մի փոքր լոռիզմի թեքման մեջ: Նա գրում է.

«Շենքի դրսի մասն ամբողջովին ապակուց է պատրաստվել, և գործազուրկները ներս մտնելու ժամանակ միմյանց հրելով՝ ապակիները կտորել են»:

«Մինչդեռ այնտեղ կարելի էր ապակու փոխարեն փայտից պատ շինել»:

«Շենքի ներսը կիսով չափ կտրված է, որպեսզի գործազուրկները չխանգարեն աշխատակիցներին, բայց վերին մասը մնում է բաց և աղմուկից հնարավոր չի լինում աշխատել»:

«Դռների բռնիչներն արդեն կտորվել են՝ դեռ երեք ամիսը չլրացած»:

Ես չեմ կարող մեղադրել ընկեր Բինգյուլին՝ շենքի վրա այս տեսակետով նայելու համար, դա մի տեսակ հոգեբանութուն է, որ մարդ ակամա ձեռք է բերում մեր Երևանի իրականութան մեջ:

Իսկապես: Ինչպե՞ս անենք, որ մեր ապակիները չկտորվեն, դռների կոթերը չփշրվեն, աշխատողներին չխանգարեն:

Ընկեր Բինգյուլը գտնում է, որ «շենքը անհարմար է գործազուրկներին լրիվ սպասարկելու տեսակետից»:

Ուրեմն գործազուրկների շենքը պիտի լինի գործազուրկներին հարմարեցրած պլանով՝ թե ինչպե՞ս...

Դուք երևակայում եք, թե գործազուրկների ինչ շենք պիտի ունենաք, եթե հաշվի առնենք, որ շենքը պիտի հարմարվի գործազուրկներին:

Դե գործազուրկը բուռն է, դայրացած և ֆիզիկական բուռն շարժումների կուտակումն ունենալով բռնածը (դռան կոթը) ջարդում է, (մոտեցած պատուհանին) փշրում, կանգնած (սենյակում) գոռոզում:

Ուրեմն պետք է պատուհանները լցնել քար ու ավազով ապակիները թաքցնել, դռան կոթերը հանել, գրասենյակի գործազուրկներից բաժանել երկաթբետոն հաստ պարիսպով:

Կարծում եք սա հարմարեցրած կլինե՞ր մեր կենցաղի՞ն: Երանի թե միայն կենցաղի հարմարութան խնդիր լիներ: Կշիռները շուգուն տներ և կպրծնե՞ինք:

Ո՛չ, այս լոռիզմը մեզ կտաներ այնտեղ, որ ստիպված կլի-

նեինք շենքը հարմարեցնել միևնույն սովետական մարդու տալիսեր հոգեբանական վիճակին:

Շենքը պետք է շինե՞ինք հոգեբանական մեթոդով:

Չէ՞ որ վերոհիշյալ գործազուրկը գործ ստանալով Աշխուր-սայի շուգունն շենքի մեջ՝ հետևյալ օրը իբրև ապահով սովետական ծառայող՝ համեցե՞ք՝ գնում է համերգ լսելու Կուլտուրայի տան սրահում:

Դե ապահով ծառայող է, տրամադրութունը բարձր, ուրախ... և համերգի կատարման ժամանակ ասում. խոսում, ծիծաղում է...

Ի՞նչ շենք պետք է լինի այստեղ տվյալ քաղաքացու համար, որ երեկ դռներ էր ջարդում, այսօր համերգ: Չուզունե տներ կշիռենք, բայց շուգունն համերգ կլինի՞:

Տեսնում եք հոգեբանութունը փոխվեց, և իր հերթին փոխեց և շենքի նյութական ձևավորումը:

Երևի համերգի սրահում էլ կարիք կլինի շինել այնպիսի հատուկ ապարատներ, որ լսելի դարձնելով միմիայն համերգի ձայնը՝ խլում են և շեղոքացնում ունկնդի հասարակության ղալմաղալը:

Այսինքն՝ ղալմաղալիներ:

Եվ այսպես՝ առաջ գնանք:

Կինոյի շենքն ինչպե՞ս պիտի լինի...

Կրկեսն ինչպե՞ս պիտի լինի...

Երբ դռներում կուտակված քաղմութունը ներս է խուժում և իրար բոթելիս՝ անցնում է բռնցքամարտի:

Երևի այստեղ էլ պետք կլինի շինել առաստաղներից կախած մի տեսակ մագնիսացած բարձեր, որ հենց բուռնցք ուզում ես իջեցնել քեզ բոթող քաղաքացու կարկածին՝ բարձը խլում է բռնուցքը և շեղոքացնում հարվածը:

Այսինքն՝ բռնցքաշեղոքներ:

Ո՛չ, ես կարծում եմ, որ հոգեբանական մեթոդով շենքեր չեն կարող շինել: Դա մեր տունը կքանդի:

Սա լոռիզմ է: Սա նշանակում է եզ մորթելու լոռիստական մեթոդ, որի ոչ տեխնիկական, ոչ մեխանիկացիան, ոչ էլեկտրիֆիկացիան մեզ չի փրկի:

Պետք է մտածել մի ուրիշ հնար գտնելու:

Գոնե ես կարծում եմ, որ կա հնարը:

Փոխանակ եզր տանելու դանակի մոտ, պետք է կամաց-կամաց փորձենք դանակը տանել եզան մոտ:

Աշխրորսայի շենքը պետք է լուսավոր լինի և ունենա մեծ պատուհաններ (այո, այո, թեկուզ ասպակիներով), գրասենյակը շպետք է պարսպով բաժանել մասսայից:

Հասկացնենք մեր գործազուրկին.

Միրելիս. քո բոլոր արածից — դուան կոթը, ասպակիները կոտրելուց և բարձր գոռգոռալուց — գործ չի ստեղծվի: Օրական, որ ութ հարյուր դուան կոթ կոտրես՝ մեր շինարարությունը դրանով չի բարձրանա:

Ցած խոսիր: Մեղմ: Համբերիր: Կլինի:

Իսկ համերգ գնացած ժամանակ.

Միրելիս, աֆիշի մեջ գրած էր, որ այսօր համերգ կա, բայց գալով այստեղ, տեսնում եմ, որ դալմադալ կա: Հիմա ո՞ր մեկիդ լսեմ: Կամ դու լռիր, կամ երգիչը: Երկուսիդ միասին անհնար է լսելը: Վերջապես ես երգչին եմ վճարել, ոչ թե քեզ...

Միևնույն քաղաքացուն՝ կրկեսում:

— Միրելիս, այս գլուխս, որ ուզում ես բռունցքով ջարդել՝ ինձ պետք է: Ուրիշ գլուխ չունեմ, մի ջարդիր: Ախր մի քնձոտ կրկեսի համար չեմ կարող գլուխս տուրը տալ: Վերջապես գլուխս չեմ կարող չուզունից շինել տալ — եղածը սա է:

Այո, այո: Ոչ թե շենքերը պիտի հարմարեցնենք մեր բուսի տրամադրության, ոչ թե շենքային հոգեբանության, այլ մեր կրթությունը, տրամադրությունը պիտի հարմարեցնենք մեր շենքերին:

Հակալոռիզմ:

1929 թ.

ԿԵՂՏԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Հին երազահաններ կային, գրքեր, որ բացատրում էին, որ եթե երազում այսինչ բանը տեսնես՝ զարթնելուց հետո գլխիդ ինչ կպատահի:

Օրինակ, «եթե մեռել տեսնես՝ շատ կապրես»: Կամ աղջիկ տեսնելն՝ անբախտություն է»: «Եթե տունը փլչի՝ տանից մարդ կմեռնի:

Եվ այս շարքում կարելի էր կարդալ նաև հետևյալ գոհարները.

«Սապոն տեսնելը՝ կսկիծ է և նեղություն»:

«Կեղտ տեսնելը՝ փող է»:

«Ոջիլը՝ հարստություն է»:

Չենք կարծում, թե կուլտուրական մարդը ոչ թե միայն իրականության մեջ, այլև երազում կեղտ ու ոջիլ տեսնելով փող և հարստություն սպասի: Բայց արի տես, որ մեր հին հասարակության մեջ կեղտն ու ոջիլն այդպիսի մեծ ու անսպասելի պատվի են արժանանում:

«Ոջիլները Քրիստոսի գառներն են», — այսպես էր ասում հին ավանդություն պատմողը խանդաղատանքով լցված դեպի այդ արարածը: Եվ ոջիլը բազմանում էր ինչպես երկնային առատություն: Նա այնքան սովորական էր դառել, որ այլևս... հարազատ էր: Նա ընտանի միջատ էր:

Իսկ սապոնը... «Սապոնը՝ կսկիծ էր ու նեղություն»:

Որտեղից էր գալիս այս «խորհմաստ փրկիսոփայությունը»:

Տգիտությունից, խավարից և պատմությունից: Հին բռնակալների, նրանց ավազակ պաշտոնյաների, անիրավ ու կողոպտիչ հարկահանների աչքից խուսափելու և իր տան հարստությունն ու իր անձը թաքցնելու համար երկրի բնակիչը կեղտոտ էր պահում իր տունը, հագուստը, մարմինը: Կեղտը ծնում էր ոջիլ, ու ահա այս երկու ֆակտորները դառնում էին բնակչի համար «պաշտպանողական գույներ»: Կողոպտիչն անց էր կենում կեղտոտ տան ու կեղտոտ մարդու մոտից ու մարդը պաշտպանում էր թե՛ իր անձը և թե՛ իր հարստությունը: «Իարվինիզմ»:

Ինչո՞վ ուրեմն ճիշտ չէր երազահանը, թե՛ կեղտը փող է և ոջիլը՝ հարստություն... էլ ինչպե՞ս հին մարդը շղիմեր կեղտին ու ոջիլին և հետզհետե մինչև անգամ շիրիբ այն: Եվ սապոնն էլ չզառնար կսկիծ ու նեղություն:

Եվ առաջ կար ուղղակի կեղտոտություն: Կեղտից զզվելը մեծ ամոթ էր, թերևս աղետ:

— Ո՞նց է նոր հարսդ, Թանկազիզ բաջի:

— Տունս քանդվեց — հիվանդ է:
— Քա ընչի՞, ինչո՞ւ է հիվանդ:
— Զզվող է, աղբ, ոչիւ չի կարում տեսնի, տեղովը պատիժ դառավ:

— Վայ, ափսոս... բա ո՞նց եք անելու:
Զեմ իմանում, աստված հասնի:
Առողջ մարդը շպիտի զզվի կեղտից, — այս էր հին բնակչութեան կենցաղի իմաստութիւնը:
Մինչև անգամ կեղտն ընդունվում էր իբրև... առողջութեան պատճառ... միջոց...

Նայում էր առողջ գյուղացին նիհար ուսուցչի վրա և ծիծաղում նրա վրա.

— Ըհա, դու շաբթե՛նը մի անգամ լողանում ես, իսկ ես տարիներով ջրի երես շեմ տեսնում, բա դու ի՞նչի՞ ես էդպես հիվանդ, ես՝ առուջ:

«Փաստը» փաստ էր, — ուսուցիչը նիհար էր, գյուղացին՝ առողջ: Հիմի դուք այստեղ ինչ կուզեք մեջ բերեք. — Մեշիկով, պրոֆեսոր Կոխ, Պիրագովյան համագումարներ, բժշկասանիտարական մի ամբողջ փրկիստփայլութիւն...

Կեղտը պինդ նստել էր հին հասարակութեան մարմնի ու հոգեբանութեան մեջ և դուրս չէր գալիս:

Ասլարանում մի գյուղ կոչվում էր Զամուլու (ցեխոտ) և ոչ մի անհարմարութիւն չէր զգում իր անունից:

Փամբակում կա մի գյուղ՝ Համամուլու (բաղնիք ունեցող): Այսինքն գյուղն աչքի է ընկել մի ինչ-որ տարօրինակ, անսովոր, չկուղած բանով. բաղնիքով և այդ անունն էլ կրում է: Բայց չէ՞ որ դա հեգնանք է: Ինչպես մի մարդու անունը դնես լվացվող...

Հակառակի պես էլ պատահում են պարագոքսալ կորիքներ: Մի բժիշկ, շատ տարիներ առաջ, գնացել էր մեր շրջաններից մեկը՝ ուսումնասիրելու բնակչութեան առողջապահական վիճակը: Եվ ի՞նչ էր գտել: Մի գյուղի բնակչութեան մեջ տարածված էր աչքի հիվանդութիւնը — տրախոման, մյուսում՝ շատ քիչ: Զարմանալին այն էր, որ առաջին գյուղն անհամեմատ մաքրասեր էր, ամեն տուն բաղնիք ուներ, մինչ երկրորդը կեղտոտ էր և անբաղնիք: Ինչո՞ւմն էր հանելուկը: Ահա թե ինչում: — Առաջին գյուղի ամեն մի տուն ընտանիքի բոլոր անդամների համար ուներ մի

ընդհանուր երեսուրբիչ, մինչ երկրորդի ընտանիքը շուներ և ոչ մի երեսուրբիչ, այլ ամեն մեկն ուներ իր... մի անհատական հագուստի փեշ: Առաջներում երեսուրբիչը տարածում էր հիվանդութիւնը, իսկ երկրորդում փեշը կղզիացնում էր այն:

Ուրեմն... ուրեմն կորչի երեսուրբիչը, կեցցե հագուստի փեշը: Գնա տրաքվիր:

Այսպիսով, հնում կեղտը, փնթիութիւնը, զզգված հագուստը ոչ միայն հալածվում էր, այլև քաշալերվում: Ժամանակի ընթացքում մոռացվեց կեղտի պաշտամունքի պատմութիւնը և մնաց մի տեսակ հարգանք, հարազատութիւն դեպի կեղտը: Իսկ վերջն էլ դառավ սովորութիւն: Մարդկանց աչքը տեսնում էր կեղտը, ամենուրեք, համայնապարփակ կեղտը և ընտելանում դրան:

Մեր սովետական քաղաքի և գյուղի կենցաղի մեջ շատ բան է հիմնովին փոխվել: Սապոնը չի վախենում տնկրը մտնելուց, Հագուստն այլևս չի մնում խանութներում: Կլանվում են՝ շապկացուն, թաշկինակը, կրկնակոշիկը, երեսուրբիչը, պնակը, պատառաքաղը, օդեկոտնը... Մեռել է այն սերունդը, որ իր կյանքում երկու անգամ էր լողանում. մեկ՝ մկրտութեան ավագանում և մեկ էլ դազաղ մտնելուց առաջ: Անհետացել է այն մարդկանց կատեգորիան, որ շապիկը մի անգամ էր հագնում՝ երբ այն նոր էր և մի անգամ հանում՝ երբ այն արգեն փտել, զզգվել և ինքն էր թափթփվում:

Սա ճշմարիտ է: Մեր քաղաքի բաղնիքներում զժվար է տոմս ձեռք բերելը, կոլխոզներում բաղնիքներ են երկացել և լվացքի առաջը գործում է:

Բայց կեղտոտութիւնն այն մատղաշ ծառերից չէ, որ հեշտ ու բոլոր արմատներով հանես: Նա բազմադարյան կաղնի է. ինչքան հանում ես՝ դեռ արմատները մնում են: Դեռ մեր մասսան չի ազատագրվել կեղտապաշտութեան մնացուկներից: Մեզանում կեղտոտ ու մաշված հագուստը չթափորութեան նշան չէ, այլ կեղտոտութեան:

Ուժգին հարված դրա գլխին: Թող ոչ ոք մեզանում չկարծի այլևս, որ իրան կհարգեն, եթե նա կեղտոտ է ապրում, կեղտոտ է հագնւում, չի լողանում, չի լվացվում: Մենք պարտավոր ենք հարգելու սովետական մարդու անձնավորութիւնը միայն, բայց ոչ երբեք նրա կեղտոտ մարմինը և հագուստը: Պետք է ստեղծել այն-

պիսի մթնոլորտ, որ կեղտոտ հագուստի, կեղտոտ տան, կեղտոտ բակի, հիմնարկի, հրապարակի համար այդ կեղտ կրողներն ու տարածողները ամաչեն, ճնշվեն, ստիպվեն մաքուր լինել:

Կեղտը մարդու թշնամին է: Կեղտը հիվանդություն կդառնա, հիվանդությունը կհարվածի նույնպես, ինչպես տանկը, ավտոմատը, հրանոթը: Մեր սանիտարական մարմինները կեղտի վրա պետք է նայեն իբրև մոռնիցիպալ գործի ամենամեծ շարիքի վրա:

Սակայն միամտություն կլինի կարծել, թե կեղտը կվերանա մի պարտադիր որոշումով և լրագրի մի հոդվածով: Ավելի միամիտ բան է մի անգամ հարցին անդրադառնալը բավարար համարել: Կեղտապաշտությունից կեղտատյացության հասնելը պահանջում է դպրոցների, մոնիցիպալ հաստատությունների, մամուլի և այլ օրգանների աշխատանք:

Կա և խնդրի մի ուրիշ կողմը: Ինչո՞ւ կեղտոտել, որ մաքրվելու կարիք լինի: Մեր փողոցները, տները, սենյակները, հագուստը, մարմինը անխնա կեղտոտում ենք: Կեղտոտում ենք ոչ հարկադրաբար: Հիմնարկ ենք մտնում կոշիկները չմաքրելով դռանը՝ Փողոցներում թափում ենք ամեն տեսակ աղբ: Զրի ծորակների գլխին փռում ենք ամեն տեսակ լվացք: Տրամվայի վագոն ենք մտնում ամեն տեսակ կեղտ բերելով ներս:

Կեղտը պիտի ատվի, արհամարհվի, ծաղրվի և գլխավորապես պատժվի: Թող ոչ ոք չարդարանա պատերազմով: Պատերազմի ժամանակ էլ կարելի է մաքուր մնալ: Հենց մաքուր պիտի մնալ, որովհետև պատերազմ է: Ուրեմն փոխենք երազահանի բացատրությունն այսպես.

«Ոչիլը՝ կեղտ է և խայտառակություն»:

«Կեղտը՝ հիվանդություն է և մահ»: Իսկ «Սաւոնը առողջութուն է»:

1942 թ.

Մի դերասան կար Թիֆլիսի հայ թատրոնում, երկու ձեռքերը երկու գրպաններում, գլուխը կախ, մռայլ, սրբնթաց անցնում էր մայթերով, առանց շուրջը նայելու: Տրագիկ էր... Մինչև օրս աչքից և ականջից չի հեռանում նրա խաղն ու արտասանությունը բեմում: Անհուշ բերդն է, Արշակ հայոց արքան շղթայակապ ընկած է անկյունում: Իսկ նա Ալանոզանի (կարծես այդ էր անունը) դերում, սպանում է Արշակին:

— «Անհուշ բերդի մեջ ես, Արշակ, և քո շղթաներն այնքան են ծանր»:

Բայց ինչպե՞ս էր խաղում, ինչպե՞ս արտասանում... Թըշնամիս շտեսնի: Մեջքը կռացնում էր բորենու պես, մի բուռնցքը փորի կողքին սեղմում, մյուսը երկարում ինչպես բոքսյոր, դեպի Արշակը և վարի շրթունքը ցցելով՝ դնճրտում:

— Անհյուրիչ բեհեռթի մեջն էս էառուշնայյիիիքի... և քո շղթանեղ էայնքէային են ծանրոռոռո...»:

Համապատասխան ծամածուռ բերանն ու այլակերպ միմիկան լրացնում էին այս զարհուրելի ասացվածքը: Երկու բան էր հնարավոր այս արտասանության հանդեպ: Կամ զայրանալ և հեռանալ թատրոնական սրահից, կամ մնալ և լիաթոք ծիծաղել: Գերադասում էինք վերջինը: Եվ Արշակի տրագեդիան դառնում էր մի հիասքանչ կոմեդիա: Անպետք բան չկա աշխարհում:

Իսկ հնչունասերումը (ինտոնացիան): Ինչ բան է դա, տեր աստված... Բայց հնչաբերման մասին բերենք մի այլ տեսարան, ուրիշ երկու դերասանների խաղից: Երկուսն էլ ամենանշանավոր մեր դերասաններից: Մեկը վիրավոր ընկած է Ավարայրի դաշտում իբրև Վարդան Մամիկոնյան և ճարճատուն պաթետիկ ողբաձայնով ճամբարտակում է ճոռոմ տեքստը:

— «Ճայթումնքը եռկնից շանթահառ և շեշտ հառվածքն հայրենասեռո դյուցազանց թող իջնեն թշնամյաց գլխին...»:

Եվ հենց այն է Վարդանը մահասարսուռ ցնցումներով պարտավում էր ընկնել մեջքի վրա և «օ՛հ, Հայաստան, Հայաստան» գոչելով մեռնել, որից հետո դահլիճում պիտի ժայթքեր որոտընդոտ ծափահարությունը՝ հանկարծ, որտեղից որ էր, հարուստ ընտանիքի չքավոր ազգականի պես անկոչ և ժամանակից առաջ

ներս մտալ Եղիշեն ու հինհինաց՝ «Հյու-հյու-հյու» անելով, կեղծ կլասիկական լացով ձայնեց.

— Վառթաաաա՛ն...

Վարդան Մամիկոնյանը զգալով իր դերասանական փառքի վտանգվելը՝ ձեռաց անցավ խոսքերի ունակիվմին՝ պահելով սակայն նույն կեղծ հնչաբերումը, ինչ-որ ճայթմունքն եռկնից»-ի ժամանակ.

— Ոո՛ո՛ո՛ո՛ Եղիշե, ժամ չէ՛է՛ նեռոսս գալու, ժամ է դուռոսս գնալու և ապա նեռոս գալու»:

— Հեռանաաա՛մ այս այրունային դաշտից,— ասաց անշնորհք մուտք անող Եղիշեն և դուրս գնաց բեմից:

Վարդանը մեռավ, և արցունքների հեղեղի միջից ճայթեց ծափահարությունը: Հասարակությունը ոչինչ չնկատեց: Ի՞նչ էր պատճառը, շատ բան: Բայց գլխավորն այն էր, որ կեղծ հնչաբերումով մի անգամ ողողված ականջը այդ հնչյուններից ընդարմացավ. այլևս հաշիվ չէր տալիս, թե ինչ են ասում: Եթե այդ ձայնով Վարդանը անգամ ասեր. «Երկու շահի ինձ փող տուր» կամ «ես պուճուր, յարս պուճուր»՝ ոչ ոք չէր նկատի... Դյութական բան է դերասանական արվեստը:

Այդպես էր կրթվում թատերական հասարակությունը հնում:

Այդ օրերից անցել է մոտ քառասուն տարի, և թվում է արտասանության այս զարհուրելի ուռն-ն, որ կարող էր տասը ֆուրգունի ձիեր կանգնեցնել՝ այսօր պիտի դառնար հիմար արվեստի մասին ծիծաղելի հուշ միայն:

Սակայն այսպես չէ դժբախտաբար: Իհարկե, մեր բեմից և էստրադայից անհետացել է վերոհիշյալ սահմուկիչ ղեճրտոցը՝ Բայց... հետքեր կան: Հնի հետքեր և նոր հոռի սովորություններ, որ սպասում են իրենց... նկարագրողին:

Գեղեցիկ բացառությունները եթե թողնենք մի կողմ՝ մեր դերասանների և արտասանողների մի մասը չի կարողանում հեշտությամբ բերանից բաց թողնել ն և մ տառերը: Հենց բերանն է ընկնում սրանցից որևէ մեկը՝ դուրս չի ընկնում մինչև մի լավ հիմնավորապես շտրոքվի և շծամծմվի:

Իրբեմամմաննն մամմահաբեր դիվականն մամի հողմմմմ...

Այնքաննն դժգոյննն է լուսննկանն...

Ամեներկայում, Եվրոոոոպայում... Թուք եք մեղավոր... փարձացրեք ցեր ցայնը քարելին չափ որաթալից...

Ոմանք կարդում կամ արտասանում են ոչ աչքի առաջ ունենալով իմաստն ու նշանակությունը, այլ առիթ են գտնում մի երաժշտական ձայնական կոտակման: Արտասանում են արագ, երգելով, մուտալով, ջարդուփշուր անելով իմաստի շեշտը, թե՛ խոսքի նշանակությունը, թե նպատակը, որի համար արտասանվում է նյութը բեմում կամ էստրադայում:

Ճիշտ է՝ հասարակության մեջ կա չհասկանալու... հաճույք: Հաճույք, որ ինքը լսում է մի ինչ-որ խրթին, անհասանելի, խորիմաստ բան: Սակայն դերասանի և արտասանողի մեջ էլ կա չըհասկացվելու հաճույք: Որոտընդոստ ծափահարությունը գալիս է քաջալերելու թե՛ մեկին և թե՛ մյուսին...

Եվ առաջ է գալիս «նոր արվեստ» տրագիցիա:

Ոչ, ոչ, ոչ, ոչ, ոչ, ոչ...

Այո, այո, այսպայ յո...

Կամ՝

Դուք եկաք (ա՞) ... լսում եք ինձ (ա՞) ...

Սույն հարգելի սովորությունները ստեղծել են հին գավառական համլետներն ու օթելլոները, կարդոնեթ թագավորներն ու սոսնձե հերոսները: Բայց ոչ մարդիկ բեմի կամ էստրադայի վրա: Ամենաանկասկած նշանը անտաղանդությունը:

Պայքար հանուն պարզ, մարդկային արվեստի:

1946 թ.

ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՄՈՏԻՎՆԵՐ

Կավելացնե՛ի նաև բարքեր, գրախոսություններ, շինական ցերեմոնիաներ, ավելորդաբանություններ, ժամանակի կորուստ և...

Ավելի լավ է անցնենք նյութին:

Մհա ձեզ հեռախոսից օգտվելու ոմանց ձևը:

— Ջր՛նգ, զր՛նգ, զր՛նգ, զր՛նգ... — Լսում եմ: — Ալլո:
— Լսում եմ: — Ալլո, ո՞վ է խոսում: — Չեմ խոսում, լսում եմ: — Ո՞վ է լսում, ո՞ւմ եք ուզում:

— Ո՞ր համարն է Ձերը: — Ո՞ր համարն եք ուզում:
— Ի՞նչ հիմնարկ է: Ի՞նչ հիմնարկ եք ուզում: — Ասացե՛ք ո՞րտեղից է դա: — Ձե՞րը որտեղից է: — Դուք ո՞վ եք: — Իսկ դուք ո՞վ եք: — Ալլո: — (Լռություն): — Ալլո: — (Լռություն):

Կարծում եք վերջացա՞վ: Երկուսն էլ դավադրորեն սպասում են լուռ: Պիտի կարծեք, թե գտնվում եք նախապատմական դարերի թանձրավուտ, ճախինաճախճախուտ, տրոպիկական, անտառախիտ, վայրի անդնդախոր մի բավիղում, խավարագիշեր դաժան մի տարածամի. երբ երկու նախամարդիկ իրար հանդեպ հեռուն կանգնած, իրար են ձայնում՝ վախենալով իրար հանդիպել, և շեն կաողանում որոշել բարեկամն ու թշնամին՝ մինչև լուսանում է և երկուսն ահա հանկարծ տեսնում են, որ օհո, ցեղակիցներ են, նույնպես և վերոհիշյալ հեռախոսողները: Կարծում եք իմաստ ունի՞ր ամեն մեկին թաքցնելը, թե ինքն ով է: Ոչ: Ամենևին, ոչ թաքցնելու բան ունեն, ոչ էլ դրա կարիքը: Պարզապես գավառական ֆաստն:

Եվ ահա վերջապես մեկը զիջում է և հայտնում, թե ով է ինքը:

— Յա՛, Հակոբն է, վա՛հ, Գևորգ դո՞ւն ես: — Հա, այ մարդ դու ես եղել, ասա ո՞նց ես: — Փափախիս տակին ապրում եմ: Դո՞ւ ոնց ես: — Է՛, կամ էլի, արևը փետով քշում ենք, օր ենք անցկացնում: Որտե՞ղ ես, շես երևում: — Ջրազված եմ, Գևորգ ջան: Առողջությունդ ո՞նց է: — Դո՞ւր եմ, քեֆիդ մտիկ: — Հետո: — Հետո այդպես էլի: (Մի փոքր պաուզա):

Հանկարծ՝ զր՛նգ, զր՛նգ, զր՛նգ, հետն էլ ալլո՛, ալլո՛, ալլո՛:
— Մի՛ խանգարեք, ը՛նկեր. խոսում են: — Ալլո՞: — Ձեզ ասեցի մի խանգարե՛ք, — լա՛վ, կսպասեմ:

Հակոբը դանդաղ որոնում է ընդհատված նյութի ծայրը. — Ի՞նչ էի ասում: Հա՛: Որ շէիր երևում, ասացի մի զանգահարեմ, իմանամ թե ո՞նց ես: — Լավ արիր, անուշ ջան: — Լսի՛ր, Պալավիկիդ վերցրու այս երեկո եկեք մեզ մոտ: Նորից՝ զր՛նգ, զր՛նգ, զր՛նգ... Ալլո՛, ալլո՛, ժամանակ անցկացնենք: — Հրամանդ:

— Ընկեր, ասացին, թե մի խանգարեք: — Կարևոր գործ կա

այստեղ: — Կարևոր գործ կա այստեղ, խնդրում եմ շխանգարեք: — Ալլո՛, ախր ես շատ շտապում եմ: — Մենք էլ շատ ենք շտապում: Մի խանգարեք: Հա, Հակոբ ջան: Այդպես: — Այդպես: — է, ասում ես, հո լավ լավ ես: — Վնաս չունի: — Ուրի՞շ:

— Ջանսաղություն:

— Լա՛աաա՛վ: Այդպես: Հը՛մ:

— Հը՛մ... (Խոսելու նյութ չկա այլևս, վաղուց ժամ է լսափողը վայր դնելու, մարդ է սպասում, ժամանակը խոհանոցում բաց թողած ծորակի ջրի պես գնում է): Հը՛մ, հա՛: (Փշում է լսափողում):

— Հա՛ (Փշում է լսափողում):

— Է՛, ցը, Գևորգ ջան, սը՛խ կաց:

— Սը՛խ եմ անուշ ջան: Յը՛: (Վերջապես):

Հիմա երկրորդը: Ջր՛նգ, զր՛նգ, զր՛նգ:

— Լսում եմ: — Գարեգինին կանչիր: — Այստեղ Գարեգին չկա: — Սիմոնին կանչիր: — Սիմոն էլ չկա: — Ապա ո՞վ կա: — Ես ինչ իմանամ: Ախր դուք ո՞ւր եք զանգահարում:

— Հացի տրեստ, մեկնումեկին կանչիր: Շուտ, ասա փայտը ստացվել է: — Ընկեր, ո՞ւր եք զանգահարում, ախր ո՞ւմ... Մի իմացե՛ք՝ հետո, լսեցեք: (Ձի լսում): Ալլո, ալլո: — Կանչեցեք Գարեգինին... — Ընկեր, այստեղ ոչ մի Գարեգին չկա: — Ապա ո՞րտեղ է: — Բնության մեջ: — Ինչո՞ւ է գնացել: — Որովհետև բնությանից դուրս ուրիշ ոչ մի տեղ չկա բնության մեջ:

Այսպես անվերջ, մինչև լսափողը դնում ես ցած:

Հիմա էլ հեռախոսը՝ զր՛նգ, զր՛նգ, զր՛նգ: Սպասիր, որ անջատեն: Գարեգինին կանչողը դեռ կանչում է: Անցնում է հինգ րոպե: Դեռ շեն անջատել, վերցնում ես լսափողը: էլի՛, Գարեգինը որտե՞ղ է:

Հիմա ուրիշը:

— Ալլո՛, ալլո՛: — Լսում եմ: — Ռենտգե՞նն է: — Ընկեր Մովսիսյան: — Ո՛չ, մասնավոր բնակարան է: — Ո՞վ է խոսում: — Դեմիրճյանը: — Անունը: — Դերենիկ: — Ո՞ր համարն է ձերը: (36 — 36): Բա՞ն ունեք ասելիք: — Ո՛չ, ընկեր Մովսիսյանին եմ զանգահարում: — էլ ինձանից ի՞նչ եք ուզում: — Ոչինչ: — Ուրեմն դա ռենտգենը չէ: — Բացառապես ոչ: — Ուրեմն սխալվել եմ: —

ծրվե՛... մտածում է, մտածում և վերջապես վճռում, որ ինքը Դե-
միտրճյանին չի զանգահարում, այլ Մովսիսյանին:

Չորրորդը:

Վեցդաշտյան ցանքաշրջանառության գյուղատնտեսական
կուլտուրաների պլանավորման հետ որ հաշվում եք նորմավորումը
չեք մտածում որ... — Ընկեր, դեռ լսեցեք, պետք է ավելացնել
նաև... — ընկեր, ո՛ր եք զանգահարում... — Դուք ո՛վ եք: — Այ-
սինչը: Դե այդպես ասացեք: (Ու բարկացած զարկում է լսափողը
քթիդ տակ):

Հինգերորդները: Զանգահարում է մեկը:

— Ամբուլատորիա՞ն է: — Այո: — Մի ընկեր Անուշյանին
կանչեք: — Նա ինքն է: (Իսկույն մի ուրիշը ընդհատում է նրան) —
Ընկեր Անուշյա՞ն: — Լսում է Անուշյանը: (Երրորդն է միջամբ-
տում): — Ընկեր Անուշյա՞ն: — Լսում եմ, լսում եմ: (Հետո շոր-
րորդը)...

Սկսում են կռվել և ինչ է դուրս գալիս, որ շորան էլ ընկեր
բարեկամ մարդիկ են և իրար են որոնում այդ օրը: Եվ գտան:
Սկսվում է խմբական զրույցը այս և այն նյութի, այս և այն անձ-
նավորության, այս և այն խոսակցության մասին:

Վերջապես վերջինը:

Զեր համարը, ասենք՝ 40—40 է: Բայց ձեզ հետապնդում է
40—30 համարը: — 40—30 համա՞րն է: Ո՛չ, 40—40: — Ներեցե՛ք
(Զանգահարում են): — 40—30 համա՞րն է: — Ո՛չ, 40—40:

— է՛է՛է՛, փակեցե՛ք: (Զանգահարում է): — 40—30 համա՞րն
է: — Ո՛չ, ո՛չ, ո՛չ:

— Նու շորա... Ինչո՞ւ, ես ի՞նչ մեղավոր եմ: (Զանգահ-
րում է) — 40—30 համա՞րն է: — Ո՛չ, ո՛չ, ընդհակառակն, ամեն-
վին, բոլորովին էլ ոչ, 40—30 համարը չէ, 40—20 չէ, 40—10 չէ,
40—00 չէ և երբեք էլ չպիտի լինի, այլ միայն և միայն միջո և
բացառապես 40—40 է: Պրծա՞նք:

Ոչ... զանգահարում են: Զանգահարում են 40—30 համարով
գիշեր-ցերեկ, միշտ, բացառապես, հատկապես, համառորեն, ան-
գիմազբեկորեն...

1966 թ.

ԱՄԵՐԻԿԱՆ «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ»

Հետաքրքրական կլիներ հարցնել Տրումենին, թե ինչ է կար-
ծում, արդյոք խաղաղության է ձգտում նա, թե՛ պատերազմի:

Մենք տեսնում ենք, որ նա ումբեր է թափել տալիս կորեա-
ցիների գլխին: Սա խաղաղությանն է:

Կամ՝ կոլորադյան բզեզներ է ցանում դեմոկրատական երկր-
ների կարտոֆիլի վրա:

Սա խաղաղությանն է:

Տրումենը ամեն առիթով Ատլանտյան պակտը բացատրում է
իրև խաղաղության ձգտող մի պատ:

Եվ իրոք. եթե դիտես աշխարհի բոլոր դաշտերը, կտեսնես,
որ ամենուրեք օդանավակայաններ են կառուցվում. «Խաղաղ շի-
նարարություն է»:

Նույնպես՝ նավերով խաղաղ աեղափոխվում են անվասնզ
պայթուցիկ նյութեր, աշխարհի շատ նավահանգիստներ դարձ-
վում են ռազմական բազաներ, ֆաշիստական գերմանական նախ-
կին բանակը անաղմուկ վերակազմվում և համալրվում է...

«Խաղաղություն» չէ, ապա ի՞նչ է սա:

Բայց Կորեա ուղարկված զորքերը, ոմբակոծիչները, հրանթ-
ները և պարզապես պատերազմական գործողություններ... Այս-
տեղ թույլ տվեք հին անեկդոսը մեջ բերել:

Մեկը ճանապարհ գնալիս հյուր է ընկնում մի ուրիշի տանը:
Հյուրընկալը սրան շատ մեծ սիրով հյուրասիրում, պատվում, ճաշ
է տալիս: Ծաշը վերջանում է, և հյուրը շնորհակալություն հայտ-
նելով, հրաժեշտ է տալիս հյուրընկալին և կրկին ճանապարհ
ընկնում: Հյուրը որ հեռանում է, հյուրընկալը հանկարծ նկատում
է, որ իր աքլորը չկա: Կասկած է ընկնում սիրտը, թե սա ճամ-
փարդի արածը կլինի: Հասնում է հետևից, հայտնում կասկածը
ճանապարհորդին: Սա երգում-կրակ, աստված-երկինք, — «բանից
տեղեկություն չունեմ, ոչ աքլոր եմ տեսել, ո՛չ էլ վերցրել»:
Հյուրընկալը լսում է, լսում, ինքն իրեն զարմանում, տալիս, առ-
նում, բայց վերջը չկարողանալով զսպել իր զարմանքը, ասում է.

— Հավատում եմ, որ դու շես տարել: Բայց... այ, էս աքլորի
պ՛ուր, որ գրպանիցդ դուրս է ընկել, շատ է զարմացնում ինձ:

Հիմա Տրումենն է:

Շարունակ խաղաղությունից է խոսում, բայց աքլորի պուր
դուրս է ընկել արդեն նրա գրպանից:

Համառ պոչ...

Եվ ամերիկյան ումբակոծիչները ումբակոծում են Կորեայի
խաղաղ բնակչությանը:

— Աստված, երկինք, ծով, ցամաք, սա պատերազմ չէ:

Տրումենը երբեմն էլ հարցը շուտ է տալիս ինքնապաշտպա-
նության վրա:

— Է, ինչ կա, վատ միտք չէ: Լավ գաղափար է.— ինքնա-
պաշտպանություն:

Այո, ինքնապաշտպանություն, օրինակ... Կորեացիներից,
Կորեայի ժողովրդից, որը կարող է ձեռնալողով կտրել-անցնել
հաղաղ օվկիանոսի մի-երկու ոտք տարածությունը և... գրավել
Ամերիկան:

Այդ շատ հավանական վտանգը կա նաև Վիետնամից, Ֆիլի-
պիններից և վերջապես Չինաստանից:

Վատ գաղափար չէ:

Այդպես էր մտածում նաև հանգուցյալ ֆաշիստական Ճապո-
նիան: Զորքերը բերել, լցրել էր Մանջուրիա՝ թե այստեղ անկար-
գություն է, կյանքի ապահովություն չկա, պետք է կարգ ու ապա-
հովություն հաստատել այս երկրում:— «Ինչ անկարգություն, ինչ
կյանքի անապահովություն»: Մարդիկ խաղաղ ապրում էին Մանջու-
րիայում և ոչ ոքի կյանքին էլ չէին սպառնում: Անկարգությունն ու
անապահովությունը Մանջուրիա բերին իրենք՝ ճապոնացիները,
սկսեցին կոտորել, ճնշել, կողոպտել: Եվ Տրումենն էլ այդպես է
«խաղաղեցնում» Կորեան, Տայվանը, Վիետնամը, Ֆիլիպինները:

Բայց չեխոսովակյան կարտոֆիլի մեղքն ի՞նչ է, որ ենթարկ-
վում է կոլորադյան բզեզի հարձակմանը: Թե ամերիկացիները
հանդեպ իրենց բզեզների այդպիսի սրտացավություն ունեն, որ
նրանց ուղարկում են դեմոկրատական երկրների բանջարանոց-
ները կերակրվելու:

Ահա թե որտեղ է իսկական խաղաղասիրությունը և էականի
բարօրության մասին հոգացողությունը: Մեծ «հումանիզմ»:

Ո՛չ, կորեացիները չեն սպառնում Ամերիկային: Չեն սպա-
ռնում Ամերիկային նաև վիետնամցիները, ֆիլիպինցիները, լինա-
ցիները, ոչ էլ սպառնում է չեխոսովակյան կարտոֆիլը:

Ամերիկային, այսինքն ճիշտը՝ Ուոլլ-Ստրիտին սպառնում է
իսկական խաղաղության կոչը, որին ունկնդրում են աշխարհի բո-
լոր ժողովուրդները: Խաղաղությունն սպառնում է պատերազմի
հրձիգներին, որոնք ճիգ են թափում աշխարհի ամբողջ աշխատա-
վորության վզին փաթաթել հնազանդություն, ստրկություն,
նրան ստիպել անտրտունջ աշխատել տերերի համար, չբողոքել,
լսել... այսինքն՝ իսկական ամերիկյան «խաղաղություն»:

Այս մտքով Տրումենը և «խաղաղության» կողմնակից է:
Նրանք այս «խաղաղությունն» են ուզում բերել խաղաղ օվկիա-
նոսին, որը չի հաջողվի: Խաղաղության մարդկային օվկիանոսը
ինքը կխաղաղեցնի աշխարհը:

1950 թ.

ՄՂՁԱՎԱՆՁ

Չեք կարող պատկերացնել, թե ինչպիսի զարմանալի բան
տեղի ունեցավ: Դուրս էի գալիս շուկայի դռնից, մեկ էլ տեսնեմ
ինձ է նայում մի մարդ: Նայում է խորը, երկար և ինչ-որ շատ
կասկածելի: Ուժեղ տպավորվեցին թանձր բրդոտ մորուքը, կոշտ
բեղերը և... աչքերը: Օ՛, այդ աչքերը... Բայց լավ է դեպքը պատ-
մեմ:

Ես անց կացա: Մի անգամ էլ ետ նայեցի՝ տեսնեմ շարունա-
կում է ինձ նայել: Անցա դիմացի մայթը: Նայում է: Հասա փողո-
ցի անկյունը: Նայում է:

Մտածեցի թե ո՞վ պիտի լինի, ինչո՞ւ է այդպես լարված նա-
յում ինձ: Սկսեցի հիշողությունս քրքրել. արդյոք դրան չե՞մ տե-
սել որևէ տեղ: Կարծես Օդեսայում, թե՛ Վենետիկում: Թեև Վենե-
տիկում տարիներն իրար չեն բռնում: Կամ պետք է, որ տեսած լի-
նեմ Լենինգրադում: Բայց հասարակ շորերը, փափախը ինչ-որ
չեն բռնում:

Այս բոլորը շատ գեղեցիկ: Բայց ինչո՞ւ է ինձ նայում: Կաս-
կած չկա, գործ ունի հետս...

Մյուս անգամ նրան պատահեցի Մարքսի փողոցում: Դեմից էր գալիս: Անցա մոտով՝ կանգնեց, հայացքը սևեռեց աչքերիս մեջ, կարծես բան էր ուզում ասել, շասաց... Ծն շտապ հեռացա: Չէ՛, ով որ է՝ ուղղակի հետևում է ինձ: Ինչ անել, գնա՞լ, մտանա՞լ իրեն, հարցնել թե ինչու է նայում: Ի՞նչ դուրս կգա: Կասի՛ մարդ եմ, նայում եմ: Ձեզ ինչ: Մանավանդ, եթե... մտադրություններ ունի...

Մի օր էլ տեսնեմ՝ կանգնել է կողքի փողոցի անկյունում, ծխախոտ է ծխում: Տես, ասում եմ, ինչ խորամանկություն: Ինչ ծխախոտ, ինչ բան, ինձ է հետևում:

Մի առավոտ էլ, (օ՛, այդ առավոտը...) վաղ դուրս էի գալիս տանից, տեսնեմ մեր տանից երկու հարյուր քայլ հեռու հավը ձեռին կանգնած է... Անցա, նայեց ինձ, ժպտալու պես արեց (անախորժ ժպիտ) և... ես արագ անցա:

Անժխտելի է, պարզ է, որոշակի պարզ, — հետևում է ինձ:

Մի օր էլ դուռը ծեծեցին: Մոռացել էի նրան: Գնացի դուռը բաց արի... սարսափ: Նա, ինքը, ուղղակի նա... իսկ տանը ոչ ոք չկա, հարևանս էլ գնացել է գործի:

Ներս մտավ սենյակս: Ծն ուղղակի քարացած մնացի տեղում: Նա կանգնեց սենյակի մեջտեղ և շատ հեզ ձայնով ասաց.

— Ներողություն, ընկեր Ն., մի խնդիր ունեմ:

— Ի... ի... ի... ի՞նչ եք ուզում....

— Մի պատմության գիրք չունե՞ս, տաս՝ կարդամ:

— Պա... պատմության գիրք, այո... բա... բայց դու ո՞վ ես...

— Ծն ձեր տան դռնապանն եմ:

— Դռնա... ի՞նչ է ասում... պանը... Մեր տան դռնապանը, — զարմացած, շփոթված, ուրախացած լիտոսեցի ես, — ինչ ես ասում, այսօրվանի՞ց:

— Ո՛չ, վեց տարի է, ընկեր Ն., — մի՞թե չես ճանաչում:

— Վայ, ինչ հրաշալի բան: Մեր դռնապանը: Ապա ես քեզ բազրո՞ղի չեմ տեսել մեր տանը:

— Որտեղի՞ց պիտի տեսնես: Առավոտը վաղ գնում եմ գործի, իրիկունները գալիս տուն, քեզաբա՞ծ ընկնում, քնում:

— Ի՞նչ գործի ես գնում:

— Ձեռքի վրա առնում-ծախում եմ: Պարապ մնալով բան չի դուրս գա:

Տվի գիրք: Նայեցի վրան՝ անվնաս արարած:

— Այ, շատ շնորհակալ եմ, էս բանի անգամ է, մոտիցս անց էիր կենում, ուզում էի խնդրեմ մի գիրք տաս կարդալու, էն է քաշվում էի:

— Ուրեմն գի՞րք էիր ուզում... Վա՛յ, ինչ հրաշալի բան... Իսկ ես կարծում էի, թե գիրք չես ուզում: Ի՞նչ հրաշալի բան:

Դուրս եկանք սենյակիցս Էդբայրաբար:

— Լավ, ասացի ես, — դու իբրև դռնապան կարծեմ քեզ միչ հոգում ես բակի մաքրության մասին:

— Հա, մաքրություն, բան, ընդրա խոսքը մին-մին ըլում է տան վարչության մեջ: Ինչպես չէ:

— Այս մեր աղբի արկղը, չորս կողմը կեղտ, ցեխ: Բա մեքենա չի՞ գալիս աղբը կրելու դուրս:

— Հա՛, պատահում է, որ մեքենա էլ է գալիս:

— Ախր, ողջ աղբը ցրվել, լցվել է բակը: Սա հիվանդության բույն է:

— Չէ՛ է՛, ընկեր Ն.: Աղբը որ մարդու հիվանդացնի, բա ես հիմա քառասուն անգամ մեռել էի: Աղբի բանը ըսենց է. — միտքը չպիտի փոխես: Միտքդ որ չփոխեցիր՝ ազատ պա-ա-ա-առկի աղբի մեջ, բա-ա-ան չի լինի: էդ աղբի մեքենան էլ ավելորդ բան է: Աղբին ձեռ չպիտի տաս: Ասա ինչո՞ւ: Աղբը որ կա՝ ինքը իրեն մաքրում է: Ասա ո՞նց: Ծն էն չեմ ասում, որ շունը մաքրում է, խոզը մաքրում է, անձրևը, քամին մաքրում են: Ամեն բանից լաա՛վ մաքրում է մարդու ոտը: Քսում է, քսում, տանում է դուրս: Այ, էն աքլորի գլուխը Ռոստոմյանենց տանից հիմի սաղ քաղաքով կաա՛նցնի, կգնա Ձանգուն:

— Երևի աքլորի գլուխն էլ դու ես կտրել:

— Վա՛յ, չէ՛, ընկեր Ն., ճանճ չեմ կարա սպանի, չէ թե աքլոր:

— Ի՞նչ հրաշալի բան... ուրեմն դու մեր դռնապանն ես: Լսիր, ի՞նչ հրաշալի բան...

Գնաց: Անհուն խանդաղատանքով նայեցի ետևից: Սարսափելի մի օպտիմիզմ պարուրեց էությունս: Փառավորվես, կյա՛նք: Ազատվեցի: Ի՞նչ հրաշալի բան:

Հրաշալին՝ հրաշալի: Բայց սա ի՞նչ երևույթ էր: Վեց տարի է մարդը մեր տան դռնապանն է, և ոչ ես եմ նրան տեսել մի անգամ, ոչ նա է իրեն տեսցրել ինձ:

Եվ ես նրան տանից բացի ամեն տեղ տեսնելով՝ մտքով գրնում եմ Օդեսա, Լենինգրադ, Վենետիկ: Հազար բաներ ենթադրել եմ, նույնիսկ վախեցել, զարհուրելի տպավորություն ստացել և այս ամենը՝ եղել է նրա դռնապան լինելու հանգամանքից: Եվ նայում ես իրեն՝ սարսափելի առողջ է, կարմիր այտերով, ժիր աչքերով և հանգիստ հոգով:

Մի խոսքով դռնապան է:

1955 թ.

Վ Ի Գ Ե Կ Ն Ե Բ

ՌԱԾԻԴ

Նա եկավ մրրիկի պես, զգզզեց երկրի զգեստները, մտավ քաղաքները, գոռաց, որոտաց, հետո անցավ-դարձավ խուժեց ձորերը, խոյացավ բարձրավանդակները, զարկեց լեռնաստանի հյուղերին, թափ տվեց լեռնցու ալաշուխների թևերը:

Դուրս թափվեցին բներից ստորերկրյա ուժերը՝ ոմանք զարհուրած, ոմանք շփոթված:

Ոմանք էլ սուր մտիկ տալով մրրիկին՝ բնազդորեն կռահեցին նրա հարազատ շունչը և ոգևորված դուրս եկան հանդես:

Դարերը զարթնեցին լեռների վրա ու վեր նստեցին: Ժամանակ է... Աշխարհքը պիտի փոխվի տակից վեր:

Վայրի լեռնաստան: Երկնքի մի լույծ կտոր — լիճը սարերի շուրջ — պարի մեջ ընկել՝ սարսուռում է: Հեռվում մթին սևինքներ — դա գյուղերն են, որ խանձվում են ափերին: Չիրխին են տալիս նրանք, մտորում, հետո աչքերը փակում:

Գունատվում է լիճը, պելանում, աչքերը սառն ապակի՝ պցում երկինք: Անշարժանում է, մեռնում:

Բայց ահա տակից, թե այն ափից կապարի մի շերտ ակոսեց նրա դեմքը: Լիճը զարթնում է, աչքերը թարթում: Ի՞նչ պատահեց: Գույնը կանաչում է, սևանում, աչքերը կծկվում են, շնչառությունը բարձրանում է, և ահա փղձկում է նա, շաշում, գոռում, կատաղի կրճտում է ճերմակ ատամները՝ կրծելով ափերի փեշերը: Այդպես է լիճը, այդպես է հողը, այդպես է գյուղը — միշտ շարժվում, ապրում...

Հասան բեկը մի անգամ միայն դուրս եկավ տանից, այն էլ

պիտի գնար իր ամուսնացած հիվանդ որդուն՝ Ալուն տունեքու Որդին ապրում էր ձորում, և բեկը պիտի անցներ գեղամիջով:

Հին օրերի «գլավնու» շենքի ճակատին կարմիր դրոշակ կար, վրան գրած. «Կեցցե խորհրդային իշխանու...» մնացածը քամին ծածանում էր:

Հասան բեկը, որ երբեք քայլելիս չէր շտապի՝ «թեկուզ հարազատ որդին հրդեհի մեջ լիներ», ետ ընկած լայն ճակատը բարձր բռնած, խոշոր, մշուշային աչքերը ղայմուխի շեղ ունքերով ստվերած և բարակ գավազանի կոթը մարմնից հեռու պահած անց կացավ շենքի առջևով: Այնտեղ, շեմքին, քամակը դեպի դուրս կանգնել էր Ռաշիդը՝ իր բատրակը, երկու թևերով կողքին ներքուստը խտտած՝ նայում էր ներս: Աղմկալից, քրտնած ժողով կար այնտեղ: Հասան բեկը զգուշացավ ավելի մտտեմալ տունք: Ներքից մի խոպոտ ձայն, որ ինչպես երևում էր այդ օրը շատ էր պատռել կոկորդը, քրտնամխած ու շնչապառ գոռում էր.

— Հողը տերությանն ա, տերությունը ժողովրդինն ա, ժողովուրդն էլ բանվոր, գեղացի խալխ ա. էլ բեկ չկա՛, էլ աղա չկա, էլ աղսախկալ չկա: Դրանց իզն ու թողը պիտի կտրենք...

Ներսը լուռ էին, բայց զգացվում էր, որ լիքն էին: Զայնը պատռում էր վճիտ օգը և պղտորում Հասան բեկի սիրտը: Ահա բաց դռան արանքից երևացին նստարաններին շարքով լուրջ նստած գյուղացիներ, որ երկու ձեռքերը երկու ծնկներին դրած՝ բերանաբաց լսում էին նոր խոսքեր, նոր հեքիաթ...

— Հողը մերն ա, իշխանությունը մերն ա... Կորչեն բեկերն ու աղաները, կորչեն հարուստները, կեցցե խորհրդային իշխանությունը...

Ավելի մի երկու թույլ ծափահարություն մի քանի ձեռքերից, որ անսովոր էին ծափահարության, միայն դրան հետևեց խուհուհու:

Հասան բեկը տեսավ, թե ինչպես Ռաշիդը ծիծաղեց և թափով բամբից ընկերոջ ուսը: Հետո ետ նայեց, տեսավ Հասան բեկին, բայց ուշը նրա վրա չէր. կարծես Հասան բեկը չէր բեկը, այլ ինչ որ հեռու տեղ ապրող «բեկորի» մասին էր խոսքը:

Հասան բեկի դեմից մի պատահաբար գյուղացի էր վազում, որ սաստիկ հետաքրքրված, ժպտալով նայում էր ժողովի կողմը՝ նա հարգանքով և ուրախ բարևեց Հասան բեկին.

— Բարի օր, Հասան բեկ:— Հասան բեկը բարևն առավ ու ետ նայեց: Պատահաբար գյուղացին վազեց, դունչը դրեց Ռաշիդի ուսին, սկսեց նայել ներս:

Այնուհետև Հասան բեկը նստում էր տանը և ծխում: Պաշարը թաքցրին: Սկսեցին սպասել հետագա լուրերին: Հասան բեկի տղաները՝ Հյուսեիներ, Ալին, Քյարամը փնում էին գյուղամեջ, գալիս շփոթված, տարակուսական ժպիտներով:

— Ասում են՝ շեն մնա, կգնան, Երևանում խառն ա:

— Հա՛...— կես հուլիսով, կես անհույս նայում էր Հասան բեկը տղաներին:— Պաշարը, պաշարը... պի՛նդ պահեք պաշարը: Հրացանները լավ յուղեք, քեշաների մեջ փաթաթեք, թաքցրեք գոմի օճորքում:

Ուրիշ անգամ.

— Ոչ որի ձեռ շեն տալու,— ասավ Քյարամը բարձրաձայն, անհոգ:

— Ո՞նց թե,— ճակատը կնճոցեց Հասան բեկը:

— Իշխանությունը մնում ա, ով ինչ ունի՝ նրանով պիտի ապրի, չբավորին, հարուստին հավասար իրավունք ունեն... մեկնակ էր:

— Ալլահը բերնիցդ լսի... բայց պաշարը, ապրանքը, խոսք-մոսք, ծպտուն— չլինեմ չլմանամ... Մի տեսնենք որտե՞ղ ենք, ո՞ր ենք գնում:

— Այլի, ասում են սովից կոտորվում են, շեն մնա,— բարձրաձայն ծիծաղեց Քյարամը, ամենաջահելը տան մեջ, ու դուրս գնաց:

Եվ գյուղում այդպես էլ խոսվում էր: «Կգնան, շեն մնա»— կարծես «նրանք» դրսից էին եկել, կարծես նրանք կենտրոնից եկածներ էին: Եվ այդպես էլ երևում էր սկզբում: Գալիս էին գավառական քաղաքից, ճառում, խոսում, կարգադրում, գնում:

Կառավարական տան ճակատն արյան պես ներկվում էր կարմիր դրոշակով: Ասել է հանդես կամ մեծ ժողով կա: Հետո դրոշակը ցած էին բերում— հանդեսը վերջացավ: Կարծես թե հենց սա է հեղափոխությունը, բացի այդ էլ ոչինչ չէ լինելու, ոչինչ չի փոխվելու, ամեն բան պիտի մնա իր առաջվա տեղը:

Դե, աշխարհը այդպես էլ է: Եվ Հասան բեկը կամաց-կամաց իր զավուխի աչքերն ու սուր գոմնչը սկսեց հանել որջից դուրս և

երևալ գեղամիջու՞մ: Պառավ գայլը դունչը ցցեց օդի մեջ, սկսեց հոտոտալ — որտեղի՞ց է սողոսկում վտանգը: Ինչ-որ բաներ բաների նման շեն: Գայլն ու գառը կալմեջ են եղել մի փարախում, գամփռները կանգնած են, ու գայլը մտածում է. ինչու՞մն է բանը: Ի՞նչ պիտի լինի հետո: — Սպասեց:

Ամիսներն ամիսներին բոթբոթելով անցնում գնում են քարվանի պես, լի օրերի փնջի մեջ դուրս են բացվում կարմիր կակաշներով զարդարված տոն օրեր, գյուղի ջահելները խմբվում են գյուղխորհրդի շենքի առաջ, դժվժում, գոռում, երգում: Հետը օրն անցնում է, ամեն մարդ իր հոգսին, իր բնի մեջ խլուրդի պես իր հողի փորփորոցի հետ:

Գալիս է ամառը, գնում են սար: Էլի ալաչուխ, խաղաղ, ծաղկալի կյանք: Մոտակա սարերը շիբիին են տալիս — այդ յուրդերն են: Այնտեղից լսվում է շների հաչոցը, ձգվում է կովերի բառաչը՝

«Չանցա՞վ արդյոք... ժամանակը չէ՞ կամաց-կամաց ապրելու: Արդեն բոլորովին «հանդարտեց»: Բայց ծեր գայլին չես խաբի: Հանդարտելը հանդարտեց, բայց ուրիշ տեսակ: Կարծես գնաց մտավ հողի տակ ու հիմի էլ այնտեղ է փորփրում: Չայնը չկա, բայց գետինը փսփսում է: Գյուղը կրակին դրած կաթսայի պես է: Զուրը դանդաղ, հազիվհազ սկսում է պճպճալ: Վերևը սառն է, անշարժ: Ներքևը սկսում է տաքանալ: Զուրը պտտվում է:

Ինչ-որ բան է սկսվելու...

Հասան բեկը տազ է արել, չկա, չի երևում, ապրում է իր տանը, իր համար, նա ոչինչ չունի դրսի հետ: Գիշեր-ցերեկ իր որջը քաշված ծանր-թեթև է անում, կշռում, մինչև ուշ գիշեր: Ահա իր օդայից լսվում է նրա խոպոտ, դառը հազը — ասել է արթուն է, մտածում է:

Ցերեկը միայն, երբեմն դուրս է սողում բնից, գնում գեղամեջ, Պտույտ է տալիս հեռվից: Աչքերը մշուշ են — ոչ հեզանք, ոչ համակրանք: Նրանք բարևում են՝ ոչ սառը, ոչ ջերմ: Նա ընդունում է զգուշավոր դիմագծերով, լարում է ուժերը՝ պահելու լեզոք, հավասարակշիռ դիրք: Զլինի՞ թե մի ստվեր, մի անզգույշ խոսք, մի մատնիչ շարժում խախտի այդ հավասարակշռությունը, և սարերի ու ձորերի այդ հին բեկը, ազնվական գայլը նվաստանա իր «էլի» առաջ:

Մի անգամ գեղամիջով անցնելիս, դեմ առավ միտինգի

Մայիսի մեկն էր. այդ տարի առանձին շուքով տոնվեց: Գյուղացիք գնացել էին և՛ մասնակցելու, և՛ «Յամաշի»: Ծառախոսները գյուղից էին: Խոսում էր շոբան Ալեքսանդրը: Նա երևի հեշտ էր կարծել խոսելը և հիմի, երբ բարձրացել էր կտուրը և իրեն հառած հարյուրավոր աչքերը տեսել՝ աչքերը խժի-բժի էին անում: Նա հետը խոսում էր, հետը կոտրած ժպտում իր անճարակույթյան վրա:

— Մեր կառավարությունը մեզ հրամայում ա, որ, ասենք, մենք հիմի չքավոր, մշակ, շոբան... ասենք, մեկ պիտի դառնանք, ոնց որ սարի ոչխարը: Ինչ որ հրամայում ա մեր շոբանը՝ մենք պիտի լսող կատարող ըլենք: Հիմի մեր շոբանը մեզ հրամայում ա, որ բեկերին խեղդենք... Յաշա՛սըն:

Հասարակությունը ծիծաղեց: Հարյուրավոր դեմքեր՝ մրկած, կեղտոտ, բայց ուրախ դարձան դեպի Հասան բեկը. որ դեմ էր առել միտինգին և չէր կարողանում անցնել: Գյուղացիք ծիծաղեցին: Բեկն էլ կնճռեց ժեռատ բերանը և ինքն էլ ծիծաղեց բորենու նման:

Չէ, կարծես խոսում են միայն, թե աշխարհքը չքավորինն է, հարուստը պիտի շնչվի: Նոր խոսք է, պիտի խոսվի սրանից հետո: Իսկ հին կյանքը պիտի գնա իր ճամփով: «Դե կյանքը մի ճամփա ունի, որով գնացել է աթաղան-բարաղան»:

Հասան բեկը սկսում է ըմբռնել նոր կյանքի իմաստը: Դա հին կյանքն է հին իմաստով:

Եվ սկսում է հուսադրվել... Հեռվից հեռու պտտվում, աչքի տակով մտիկ է տալիս անցուդարձին, խմում է եղածը, գողանում երևույթը, կռահում կիսատը, անորսալին ու «հը՛մ» անելով դառնում տուն:

Մուռումուռ փողոցներում իրար են դիպչում գյուղացիք: Նըրանք անարտահայտ աչքերով նայում են իրար, խոսում, չհասկացվելու համար հեռանում իրարից՝ ամեն մեկը չիմանալով, թե ինչ կարծիք մնաց դիմացինի մեջ իր մասին:

Հարուստները սմքել իրար են նայում, խոսում աչքերով, որ լեզուն անպատասխանատու է, և ամեն մեկը քաշվում է տուն:

Բայց ստորերկրյա ուժերի ձեռքը սկսեց իրան ավելի զգացնել տալ: Հողը շարժվել սկսեց, անհաստատանում է, սահում. կարող է ոտի տակից դուրս գալ, գնալ...

Մարդիկ, որոնց ոչ մի խոսքը չէր լսվել առաջ, ինչպես չէր լսվել, որ եզր խոսի, հիմի գեղամիջում գոռում էին: Գնում էին հանգերը, մտիկ տալիս սրա նրա հողին. անցնում հարուստների արտերի մոտով, խուզարկում տարածութունը... Հողն ու այդ մարդիկ իրար հետ փսփսում, դավադրում էին, պատրաստում ինչ-որ մի ուրիշ փուլում, վերջնական խորտակում:

Եվ դա պիտի լինի վերջը:

Հասան բեկն այդ զգում է: Եվ աչքերը մթան մեջ մերկացրած դաշույնի պես պաղ-պաղ ցուլացնելով ծխում է ու ծխում: Անշարժ է: Կարծես քարե առարկա, և ծուխն է միայն կենդանի, ծուխն է միայն ապրում այդ արձանի մեջ:

Ենները հաշիցին: Քյարամը դուրս թռավ, շների հաչոցը կբտրեց:

— Ղասում, Մուսա, Իսմայիլ բեկերն են,— դռնից ներս ասաց Քյարամը:

Հասան բեկը դրսովեց, ուղիղ նստեց տեղում, մութաքան մոտ քաշեց, հազաց: Ենրս մտան երեք հասակավոր մարդիկ ու ծանրումեծ ողջունելով առաջ եկան: Հասան բեկը արժանապատիվ ձևերով հրամցրեց նրանց գորգի վրա նստել: Հարգանքի հարցն ու բարեը սկսեց: Հետո լոնցին:

Նրանք մոռյլ հանգստությամբ տեղավորվեցին գորգի վրա և սկսեցին ծխել: Սպասում էին, որ Հասան բեկը խոսի առաջինը:

— Ֆալա֊գ...

Սա պատասխան էր նրանց շտված, բայց լոնլյայն արտահայտած հարցին:

— Է՛, ի՞նչ կա, ի՞նչ չկա: Քաղաքում ո՞վ ա եղել:

— Ծ՛ս,— պատասխանեց Իսմայիլ բեկը, հինայած մտքով և սեխանման գլխով նիհար մի մարդ,— շորս օր ման եկա՞ս ընտած են հաստատո՞ւ:

Հասան բեկը խոսքը փոխում է.

— Մարը ձյուն ա էկել:

— Հա՛, վաղ ցրտեց,— հաստատեց Ղասումը՝ աչքը պաղեցնելով բուխարիկի կրակի վրա:

Գուրբը մթնեց: Օճորքի նեղ պատուհանից ասողը կրակի

թիթեռի պես սկսեց դողդողալ եթերքի մեջ: Մինչ խրճիթի ներսում խավարը նոթերը կիտեց անկյուններում: Օդի մեջ մլլում էր պաշարեղենի, ծխի և լույս շտեսած կարասիքի ծանր հոտը:

Ներս մտավ մի երիտասարդ գյուղացի, կապարի դեմքով, արևառ, առողջ:

— Ի՞նչ կա,— թաքցրած նեղսրտությամբ հարցրեց Հասան բեկը, առանց նայելու նրան:

Երիտասարդը ունքերը վրա տվեց.

— Հասա՛ն բեկ, եկել եմ ասելու, որ շեմ գնա Քյուրդիստան տախտակ բերելու:

Հասան բեկը հազաց: Ծատ էր կոպիտ: Բայց պատասխանը Հասան բեկի անշարժ կեցվածքն էր միայն և գետնին հառած աչքերը:

— Նոր եմ իջել ձիուց, գնացել էի փետի. ամա քու տղեն՝ Հյուսեինը, կպել է, թե գնա տախտակ բեր:

Հասան բեկը պատվին չսեպեց բարկութուն արտահայտելու: Միայն անտարբեր ձայնով հարցրեց.

— Չե՞ս կարում բերի:

— Որ ուզեմ կբերեմ, դրուստն էս ա, Հասա՛ն բեկ. ամա տախտակ բերելը իմ գործի մեջ չկա. ես տավարին եմ մտիկ տալի:

— Օմարը կբերի, գնա բանիդ,— ասաց Հասան բեկը սառը:

— Օմարը ո՞նց կբերի, Օմարը ինձ քոմակ ա անում տավարին մտիկ տալու: Օմարը որ գնա՞ նրա գործն ո՞վ անի: Երկու գործը ես ո՞նց անեմ: Թող Հյուսեինը գնա:

— Հա՛, Հյուսեինը կգնա. մի բան կանենք,— համբերատար ձայնով ասաց Հասան բեկը,— դու մարդու պես խոսի, մարդու պես գործդ արա, քեզանից պվելի աշխատանք չեն ուզում: Դե, գնա գործիդ:

Երիտասարդը դարձավ, որ գնա: Ուզում էր բան ասել, բայց թողեց, հեռացավ, մոռյլ ու գլխիկոր:

Հասան բեկը լոնց: Հազաց միայն: Մյուսները ծխեցին գառն ու գանդաղ:

— Ֆալա֊գ,— դառնացած բաց թողեց ծխի հետ Հասան բեկը՝ կրանց լարված ու լցված աչքերին նայելով,— ինչ որ աստծուց ա, ի՞նչ կարաս անի:

Խաղաղ ու մտասույզ աչքերից հազիվ դուրս էր նայում նրա նենգավոր միտքը, որ անթափանցելի մշուշի մեջ թաքնված էր Ի՞նչ էր այս մարդու համոզմունքը, Ի՞նչ էր մտադիր անելու, Ի՞նչ դիրք էր բռնելու «նոր կառավարութեան» հետ, գտե՞լ էր իր համար նոր հնարքներ նրա հետ կապեր հաստատելու՝ ինչպես հին կառավարութեան պաշտոնյաների, նահանգապետների հետ:

Նա խոսում էր, բայց բան չէր ասում դեռ: Նրա ետ ընկած երկար ճակատը, կախված դեմքը դեռ գաղտնիքներով էր ստվերավորված:

Կեսգիշերից անցնում էր: Տանեցիք իրենց բաժնում վաղուց քնել էին: Իսկ հյուրերը ընթրել պրծել՝ հիմա ծխում էին, ընկողմանելով կեղտոտ բարձերին ու մութաքաներին: Քամին ոռնում էր բուխարիկի մեջ, ուր կրակը լափելով ինքն իրան՝ հանգստանում էր արդեն: Միայն երբեմն բոցկլտալով արյունի ներկով լուսավորում էր նրանց դեմքերը, և նրանց ստվերները անհեթեթ խենթապար էին բռնում պատերի վրա:

— Հապա՞, աղալար, — աչքերը կրակին պաղեցնելով ասաց Հասան բեկը, — մի՞նչ էլ էստե՞ղ պիտի հատնեմ: Աղբրի ջուրը պստիկ ա, ամա որ լցվում ա, ուղտ ա քշում: Մեր ճամփեն շատ երկարացավ:

— էդպես ա, նշանով խոսեցիր, — դրսովեց տեղում Իսմայիլը:

Ուրեմն սկսվում էր, Հասան բեկը մի բան պիտի ասեր:

— Ասած ա, թե էս խմորը շատ ջուր կվերցնի: Գուք ըստեղ զոռի բան շունեք: Հալա զոռի օրը չի հասել. էսպես հալա զնալու եք:

— Գրուստ ա, ծերը չի երևում, — հաստատեց Իսմայիլը:

Մուսան գլուխը հավանականորեն շարժեց: Մյուսը՝ Ղասումը, իր միակ փոքրիկ աչքը, անհասկանալի աչքը տնկած նայում էր մի անորոշ կետի:

Հասան բեկը զգում էր նրանց զգուշավոր լուռությունը: Նա հասկանում էր, որ նրանք խոսք էին ուզում բանալ իրենց նոր դրութեան մասին: Պետք էր մի բան ասել, թեկուզ ոչինչ շատելու համար:

Նա աչքերը զցեց հատակին, ծխեց և պատրաստվելով խոսել՝ միայն համրիչը թափ տվեց մատի շուրջը և հառաչելով ժպտաց:

— Բանն էսպես ա, աղալար՝ Հիմի դուք էն առաջվա երիշով չեք կարա զնա: էս խալխի վրա ձեր էն հին լեզուն չի բանի, էն լեզվի, էն ֆանդի տեղը չի: Խալխն ուրիշ ա հիմի: Առաջ մենք ուզում ենք, որ հարուստն ու աղքատը ըլի, ամա շերևա: Աղքատը հիմի հավասարութեան հասավ և մեզ քշեց: Հիմի ուզում ենք, որ հավասար ըլինք, շունքի որ հիմի կարող ենք աղքատից էլ դհա ներքև ընկնենք:

Հյուրերը կենդանացան: Հասան բեկը խոսեց վերջապես:

— Շատ տեղին, նշանով ասիր, Հասան բեկ, — հուզված շընչառութունը հազիվ պահելով ասաց Իսմայիլը:

Հասան բեկը շարունակեց.

— Հիմի մենք գորտի պես պիտի ապրենք — ջրումն էլ, շորումն էլ: Ոնց որ գորտը ջրի տակ տիղմը պղտորում ա կամ գլուխը ջրից հանելիս գորտախալու արանքից ա հանում, որ շերևա՛ էնպես էլ մենք պիտի խառնվենք շքավորին:

Մուսան շեշտ, կլոր երեսի մկանները կծկելով ու վայրի կատվի աչքերը պսպղացնելով, նայեց Հասան բեկին:

— Ասելը՝ լավ ասիր, Հասան բեկ, համա հրես հողի նոր բաժանությունը մոտենում ա: Զքավորը առաջ կընկնի, լավ հողերը կվերցնի, հլա մերից էլ մի բան կառնի կոնի տակը: Սրա՞ն ինչ կասես:

Հասան բեկը լռեց:

— Զքավորը զոռում ա, — շարունակեց Մուսան — ո՞նց շերևանք: Հողը կզնա ձեռից, դրանից ետը կուզես երևա՛, կուզես՝ ոչ:

Հասան բեկը բութ հայացքով նայեց նրան, քննեց ու իր մեջ ժպտաց: Նա մենակ այս գիշեր չէր, որ գլուխ է կտորել այդ հարցի վրա: Քանի՞ գիշերներ է լուսացրել: «Հը՛, հո՞ղը կզնա ձեռից» — դրա որոշումն ուներ նա... բայց դիտմամբ լռեց՝ հետախուզելու համար դիմացիներին:

Միայն ասաց.

— Հա՛, դժար ա: Մի մարդու բան չի թե անի:

Հետո դառն ժպտաց.

— Հը՛, հո՞ղը... այ՛լի՛, մարդը հողով ա մարդ: Հողի ձեռին ենք խեղճացել: Թե չէ ջուհար որ ըլի, կոնեիք ջեպդ ու կեր-

Քաջի օլթա-օլթա կկորչեիր: Առաջ հողն էր հապուած քեզ, հմի էլ հողն ա փախչում, պտի հետեկից գնաս:

Հասան բեկը թեթև կարմրեց: Հյուրերն աշխուժացան:

— Չէ, պետք ա մեր հողը պահենք ու մի բան էլ ավելի ձեռք քցենք:

— Այլի՛, դու ասա ո՞նց ենք եղածը պահում ձեռներինս:

— Թե չենք պահի, հո կորած ենք: Ընտանիքը մեծանում ա, ծախսը շատանում:

— Կոխվ հո չենք անելու:

— Բա առանց կովի բա՞ն կրլի:

Հասան բեկը ձեռքը բարձրացրեց.

— Համբերեք, աղալար: էդ կոխվը՝ կոխվ, ամա մեր առաջվա կոխվը պրծավ: Առաջ ուժը մեծինն էր, հիմի պստիկինն էլավ: Սշխարհքը փոխվեց, դուք էլ պտի փոխվեք: Դուք նրանց զենքը չեք կարա վերցնի: Դուք պտի վերցնեք է՛ն զենքը, որ աթաղանբարադան մնացել ա ձեզ: էդ աղաթն ա, թայֆան, կնկա նամուր, արնի վրեժը, իրար քցելը: Հիմիկվա իշխանությունը ջահելի իշխանություն ա: Ջահելը արնի հետ ա խաղում, ջահելի սիրտը կրնկա նախանձի հետ ա: էս ա՝ ձեր զենքը զրաղից ա: Դուք պտի ջահելը առաջ քշեք՝ ինքներդ զնաք հետեկից: Ջահելին ջահելի ձեռքով պտի վեր քցեք, չքավորին չքավորի ձեռքով բաժան-բաժան անեք ու մեջ ընկնեք, կաղնեք գլխներին:

— Դրուստ ա, — ասաց Ղասումը՝ միակ աչքով մտիկ տալով նրանց, — արնի դուշմանը քառասուն տարի դուշմանի հետև ման կգա — հի՛ն բան ա:

Հասան բեկը բացվեց: Հին գիշատիչի փորձառու սպիները շատ բան կարող էին ասել: Նա զգաց իր հեղինակությունը:

— Համա ասեմ ձեզ: Իշխանությունը թվանքի կոթ ա: Ում ձեռքը որ ընկավ՝ վայ էդ թվանքի բերնի գեմ կաղնածին: Հիմի թվանքի կոթը իմ ու ձեր նոքարների ձեռքն ա ընկել: Կոթն էլ մեկի ձեռքն ընկավ՝ էլ նրա աչքը քեզ թշնամի ա տեսնում ու ինքն էլ թշնամի դառնում քեզ: Բանի որ լա՛վ գիտի՝ դավաճանի փոխվել կա, մին էլ տեսա՞ր կոթը շատ էկավ ընկավ քու ձեռքը... էն վախտը ո՞նց ա նրա բանը... էր ա, հա՛... Մեք քեզանք՝ կոխվ կա, իմացե՛ք:

Ղասումը ճակատագրեց իր միակ աչքը, իսկ Ասսան արմրաքմբացրեց գլուխը և հասաչեց.

— Բա՛ս...

Ու քանի քանդում էր խոսքի կծիկը, ախքան երևում էր նրա ճարտար կծկած մտքի թելը: Ունկնդիրները աղի ջրի պես խոնում էին նրա խոսքերը և ավելի ծարավում:

Առաջին անգամ այս ամբողջ տարին բեկերն զգացին, որ ներքին մի ձեռք կապել է իրենց անտեսանելի թելերով: Պրանք, հին գալչերը, որ առաջ մենակ-մենակ էին ման գալիս անտեսում, հրր որսն առատ էր, հիմի թեև ազահ, թեև դարձյալ գալչ, այս ձմռան ամառություն և սովի բնազդից սարսափած՝ ահա իրար էին եկել և կենդանական բնազդով խմբվում էին: Նրանք հասկացան իրար: Հասկացան, ինչպես գալչերը, որ իրար մոտենալով շքան են կազմում և հետույքները ետ պահելով դնչերը իրար են մոտեցնում՝ համենայն դեպս: Հասկացան նաև — ինչպես գալչերը, — որ կյանքի և մահվան այս անողորմ կովի մեջ նրանք այժմ իրաց հետ են:

Նվ ոչ ոք այլևս վտանգավոր չհամարեց բաց խոսելու:

— Հասա՛ն բեկ, — ասաց Իսմայիլը հուզված, — մեր աչքը դուման ա կոխել: Մենք բան չենք տեսնում: Ո՛ւր ենք գնում, ո՛ւր ա վերջը — չենք իմանում: Մենակ մի բան գիտենք, որ դու մեր մեծն ես, մեր խրատողը: Աստված քեզ խելք ա տվել, ճամփան գիտես: Տար մեզ, տեղ հասցրու, ու թող էս ըլի քու խելրաթն ու ոխտը: Դու առաջ ընկի, մենք կգանք հետեկից:

— Դրուստ ա, — հաստատեցին մյուսները:

Սա կ՛ համաձայնություն էր, և՛ ուխտ: Թայֆան օձերի պես կծիկ էր դառնում, փաթաթվում իրար:

Անուհետև դարանամուտ դավն սկսեց սողոսկել, սահել, տեղափոխվել. քողարկվել:

Գյուղը սովորական մի կյանք մշակեց իր համար: Գյուղխորհուրդ, ՓՕԿ, վարկային ընկերություն, ժողովներ, ընտրություններ, կոմբիլ, կոմերիտ բջիլ, հաշվետու կամպանիաներ, կոոպերատիվ... լեռնային վայրի գյուղի կյանքը սկսեց պնդվել, որքանով որ պնդանք կարելի էր համարել այդ խլուրդների բների իրականության համար այդ նորությունները:

Ասպարեզը մնացել է գյուղի ջահել-ջուհուլի, «այնոյին» մարդկանց: Հարուստը քաշվել է մի կողմ, մյուս գյուղացիներից ոմանք առաջ են եկել, ժողովներում ասում-խոսում են, ոմանք էլ կրթկնում են ամենքի ասածը՝ իրենցը շին ասում:

Բայց դավը փորսող է տալիս և ամենաթույլ շարժում նկատելուն պես սակվում, սուտմեռուկ է տալիս: Սարդերը գյուղի խոռոչներում ցանցում են իրենց ոստայնները: Սովերն ու մուլը թաքցնում են ոստայնի թելերը՝ Երբեմն միայն դեպքերի քամին թելերը շարժելիս՝ թելը պցում է արևի շողի մեջ, թելը պսպղում է, ժպտում և իսկույն թաքչում:

Մահ կա այդ ժպտի մեջ...

Հասան բեկը՝ իր թայֆի մեծ սարդը քաշվել է անկյուն, փրսփրսում է իր համախոհ բեկերի և կուլակների հետ: Գործի վրա են — երկար, դանդաղ, հաստատ գործի:

Օրերը գետի պես հոսում են՝ գլորելով հատակին քարերը: Գլորվում է կլորացած քարը, հղկվում, վարժվում: Դիմադրում է անկյունավորը, կանգնում: Բայց հոսանքը մաշում է նրա խորդուբորդ անկյունները, և քարը մի քիչ հղկվելով, փորձում է շարժվել: Շարժվում է և հղկվում:

Այդպես եղավ և Հասան բեկի և նրա թայֆի հետ:

«Հղկվեցին» և սկսեցին գլորվել: Նրանք սկսեցին հասարականալ: Սկսեցին երևալ: Արտաքուստ ինչ-որ կարելի էր զիջել՝ զիջեցին, քողարկելու համար կարևորը՝ ներքինը:

Հասան բեկը տվեց առաջին օրինակը: Նա դառավ խոսկան, հաղորդակից: Արտաքուստ էլ փոխված էր, կապան զեղնել էր, խոնացել:

Երբ պետք էր գյուղխորհրդից թուղթ, գրություն վերցնել,

— է՛հ, դուք շեղաք մեզ պես, մենք եղանք ձեզ պես, — կատակել սկսեց նա հավաքվող շքավոր գյուղացիների հետ: Եվ ասածը շուտ էր տալիս.

— Բարեբարացանք՝ բարեկամացանք:

Բայց այդ հասարակ, հաղորդակից և ըստ երևույթին, ինքնասիրության արտաքուստ բթացման տակ փքվում, կծկվում էր օձը, հպարտ կուլակ բեկը:

Նրա բեկական ընտանիքը կուչ եկավ իր ազնվական մեկուսացման մեջ, պատենավորվեց միկրոթի պես: Կին տալ կին առնել շքավորների հետ՝ հնուց չկար, այժմ առավել ևս:

Ամռան վերջի արևը բաց լիմոնի ներկը թափելով քարերի, խրճիթների, դեմքերի վրա, սովերների թանաքով լցնում է նրանց խոռոչները: Յորենի, գարու տերերը արջերի պես թափահարելով գնում են դեպի կալերը: Գործի ետ ժամանակն է:

Ռաշիդը — Հասան բեկի այն բատրակը, որ չէր ուզում Քյուրդիստան գնալ տախտակի, — քրտնքի կայլակները խորոված դեմքին՝ դեզերն է քանդում կալի վրա:

Ներքևում կանգնած է Յուսուֆը, որ խուրձերը դիզում է կալի մի կողմը: Նա բարկացած սև ածուխի աչքերը պցում է վերևից իջնող խուրձերի վրա և եղանով հարվածում նրանց:

Իսկ կամի վրա կանգնած է Մուխտարը՝ մաղձոտ աչքերով նայում է Ռաշիդին և հանդարտ ճիպտում եզներին և մակույկին կանգնած նավաստու պես վեր ու վար անում ցորենի նոր շաղ տված խուրձերի վրա:

Եկավ Հասան բեկը, գավազանի ծայրով շոշափեց ցորենի հասկերը, բորենու պես խնձղաց ինքն իրեն, աչքի տակով զգույշ նայեց Ռաշիդին, հետո մյուսներին և նստեց դեզի շվաքի տակ: Հարևան կալից եկավ Ղասումը, նստեց նրա կողքին:

— Հը, ինչալլահ, — ասաց ու մեջքը տվեց դեզին, — ձմեռս սոված շենք մնա, լավ հունձ ա: Հացը բոլում ա:

— Կամաց-կամաց: Սաղ ըլի կառավարությունը, — պատասխանեց Հասան բեկը բարձր, — կառավարության օգնությունը որ կա, հունձն էլ լավ կըլի, ամեն բանն էլ: Չքավորին Պտիկ ա տալի, հարստին էլ չի մոռանում: Դե, աղքատն էլ ա պետք, հարուստն էլ:

Ռաշիդը բամբակաղ տվեց, նայեց Հասան բեկին, եղանով խուրձը բարկությամբ շարտեց ներքև ու արհամարհական խայթոցով ասաց.

— Հարուստն ինչի՞ ա պետք:

— Հարուստն ինչի՞ ա պետք. — Հասան բեկի մշուշալի աչքերը սևեռուն նայեցին բատրակին:

— Հա՛, աղքատն իմացանք — վար ա անում, ցանում, հըն-

ձուժ, կախում... հարուստն ինչի՞ ա պետք — ուտելու համար...
Ու եղանն օդի մեջ պահած՝ սպասեց պատասխանի: Մի վայրկյան նրա կծող աչքերը հանդիպեցին Հասան բեկի սառն ու լոր աչքերին:

Բատրակները բերանաբաց ծիծաղեցին:

Հասան բեկը խուլ ձայնով շարեց.

— Հացի համար... տերութեան հացը երկնքից հո չի ընկնում, տերութունը հարստի հացով ա պահվում:

Ռաշիդը հարցական նայեց Հասան բեկին, որ ատելութեան նետը զսպեց, բայց մեխեց իր խոսքը.

— Բա՛... հարուստը որ պետք չըլեր՝ վաղուց էին թրի քաշել: Սրան բալչեկի կասեն: Որ պահում են՝ ասել ա հարուստը պետք ա:

Ռաշիդը զայրացավ: Բայց Հասան բեկը վրա բերեց.

— Դու, բալա՛մ, հլա ջահել ես, չես հասկանում:

Այո, լավ չի հասկանում, բայց զգում է Ռաշիդը, թե որտեղ է ճշմարտութունը: Չի իմանում մենակ, թե կոճակը ոնց մերը գցի: Հագուստը նոր է, անսովոր:

Իսկ բեկը՝ շարութեան թույնը ատամի տակին զսպեց, պահեց այն լեռների մարդու դարանամուտ համբերությամբ՝ լարելով վրեժը.

«Սպասի՛ր, օրը կգա՛...»:

Եվ վեր կենալով՝ Ղասումի հետ հեռացավ նրանց կալը նրանց հեռանալուց հետո Ռաշիդը բարկացած մտածեց, որ բեկի ասածի դեմ պետք է որ լավ պատասխան լինի: Չի կարող բանվորի, գյուղացու տերութուն լինել և հարստով գոյութուն պահել: Մի բան կա:

Ճաշ բերին: Բատրակները գործը թողին, դանդաղ մոտեցան առվին, երեսները շոփ-շոփ լվացին ու թևքերով սրբելով եկան նստեցին դեզի ստվերի մեջ:

— Շունը լավ ա իմանում խոսքի ոլորքը, — ասաց Յուսուֆը Ռաշիդը զրուխը շարժեց և հեզնորեն ժպտաց.

— «Տերութունը հարստի հացով ա պահվում»... բա հարստի հացն ո՞վ ա աշխատում...

— Այ՛ն, ի՞նչ ես կպել էդ շանից՝ պոկ չես գալիս, — նկատեց մուսլի Մուխտարը, — հա՛ցդ կեր:

— Բա ո՞նց թե, սա վեր կենա էնպես խոսա, ոնց որ մի վախտ էր խոսում:

— Մի վախտ ի՞նչ էր, հիմի ի՞նչ, — մուսլ շեշտով նկատեց Մուխտարը, — աղքատը մնաց աղքատ, հարուստը՝ հարուստ:

— Էդ ա է՛, — գոչեց Ռաշիդը, — որ էկան գլխներին մի հատ բաժփեցին և էլի թողին: Պետք ա մի լավ տային...

— Դրուստ ա, լավ տվին, — ասաց Յուսուֆը, — շունը մի քաղով չի սատկի:

— Է, լավ, — դարձավ Մուխտարը Ռաշիդին, — հիմի ուզածդ ի՞նչ ա:

— Ուզածս էն ա, որ, այ, էգուց էլօր էլի հողաբաժանք ա: Ո՞նց ենք անում: Չենք թողալու հո, որ սեահողը տան սրանց ու ավազը քցեն չքավորի առաջ: Էդ սեահողը իմ ու քու արնով ա ջրվել: Պետք ա առնենք դրանց ձեռից, տանք չքավորին:

Նյութն սպառվեց: Հայհոյելով վեր կացավ Ռաշիդը և գործի անցավ: Նրան հետևեցին մյուսները:

Ռաշիդը վաղուց էր գրված կուսակցության թեկնածու և կուսակցության մեջ նրա ընդունվելը օրերի խնդիր էր: Նոր էին դիմում տվել նաև Յուսուֆն ու Մուխտարը մի քանի ուրիշ բարակների ու չքավոր գյուղացիների հետ, որոնց մասին լավ կարծիք կար կուսարջիցում:

Ռաշիդը, Մուխտարն ու Յուսուֆը շունենալով լծկան, սերմացու՝ իրենց հողերը կամ վարձու էին տալիս կամ կիսարար և իրենք բատրակութուն էին անում:

Մուխտարը միայն երբեմն փնթփնթում էր.

— Կոմունիստ էլ կդառնանք, ամա գեղի աղքատութունը չենք վերացնի:

— Ի՞նչ ես դու էլ ամեն բանի գլխին բայդուշի պես վայտալի, — բարկանում էր Յուսուֆը, — կըլի, ամեն բան կըլի:

Եվ հուսադրվելով, ինքն էլ աչքերը ճպճպացնում էր:

Իսկ Ռաշիդը պաշարված էր անհանգիստ մտքերով: Լավ չկարողանալով յուրացնել գյուղի դասակարգային պայքարի ընդհանուր ծանոթ օրենքները, ընթացքն իր սկզբով ու վարխանալով՝ նա իր բատրակային քնազգով կուսում էր այդ ընթացքի մեջ պատա-

հող բացառիկ, տեղական մոմենտները: Կուլակությունը նրա աչքի փուշն էր: Կուլակությունը հայտնապես ատամնե՛րն էր կըր- ճըտում շքավորների վրա... Եվ Ռաշիդին թվում էր, թե «վերևում» չեն տեսնում: Իսկ եթե տեսնում են՝ զարմանում էր, թե ինչու չեն իսկույն ոչնչացնում այդ փուշը: «Քշեն գյուղից՝ վերջանա գնա»...

Մի անգամ, երբ շքավորական խորհրդակցությունը վերջացել էր և կուսհրահանգիչը՝ Ահմեդ Իսմայիլովը, ակնոցավոր, նուրբ և գունատ դեմքով մի երիտասարդ, զրույց էր անում Ռաշիդի, Մուխտարի, Յուսուֆի և Օրուչի՝ կոմբըիջի քարտուղարի հետ, խոսք բացվեց կուլակների մասին: Ռաշիդը հարցրեց.

— Ե՞րբ ենք դրանց հուպ տալիս:

— Նրանց բավական հուպ տվել ենք,— պատասխանեց Ահ- մեդ Իսմայիլովը,— և, իհարկե, ավելի պիտի հուպ տանք: Բայց ի՞նչ բանում: Կուլակի գլուխը հո չենք թոցնի: Կուլակին հուպ կտանք տնտեսության մեջ, ինչպես քաղաքականում հուպ ենք տվել: Դա էլ չի նշանակում, թե նրա ունեցածը կխլենք: Մենք այն- պես կանենք, որ շքավորը նրա կախումից դուրս գա բոլորովին և իր տնտեսությունն ուժեղացնելով հուպ տա: Այ, հարկերի արտո- նությունները, ՓՕԿ-ի, վարկային ընկերությունների օժանդակու- թյունը, կոլեկտիվ տնտեսությունները, գյուղատնտեսության քարձրացումը,— ահա կուլակին հուպ տալու միջոցները:

— Դժար բան ա,— մտածեց Ռաշիդը:

— Հա՛, հեշտ չի:

— Երկար ճամփա ա, շքավորը չի դիմանա, կը չոքի:

— Ինչո՞ւ:

— Այլի, էստեղ սար աշխարհք ա, սարի խալխ... էստեղ 4աշիվներն ուրիշ տեսակ են: Պետք ա կուլակների ատամները հանել:

— Կուլակների ատամները հանած են: Մենակ այն կա, որ նրանք վերջին դիրքերում դեռ նստած են ու խուլ դիմադրում են: Հարձակումը որ սկսենք՝ նրանք պիտի կռվեն: Եվ թունդ: Ահա այստեղ մեծ դեր ունի միջակը: Նրան պետք է թեքենք մեր կողմը և նրա հետ միասին հուպ կտանք կուլակին:

Ռաշիդը մտածմունքի մեջ ընկավ: Նրան չէին հասկանում: Նա գլուխը բարձրացրեց և նայեց Իսմայիլովին:

— Չէ՛, էդ ասածներդ գլուխս չի մտնում: Էդ կուլակներին բո-

լորին պետք ա գեղից խուկել, որ շքավորը հանգիստ իր գործին մտիկ տա:

Իսմայիլովը ծիծաղեց.

— Էդ ո՞ւր գնացիր, ընկեր:

— Դրուստ եմ ասում: Միջակին էլ շատ մի հավատաք: Նրա ուշքը կուլակի կողմն ա: Միջակն էլ երես տալու բան չի:

Իսմայիլովը ձեռքը բարձրացրեց.

— Չէ՛, չէ՛, չէ՛. միջակի հարցում զգույշ: Գյուղի հիմնական դեմքը միջակն է: Լավ ջոկեցեք միջակը կուլակից և միջակին չխրտնեցնեք:

— Էդ ա, ես էլ էդ եմ ասում միշտ,— վրա բերեց Օրուչը:

Իսմայիլովը խրատեց.

— Միջակի հետ զգույշ: Հետո՞ գյուղ է, հազար թելերով խճճված... կուսակցական, խորհրդային մարմինն հազար կեղտ է կալում: Գյուղացին էլ լավ չի հասկանում իր օգուտը: Հաճախ ինքն է կռվում իր դեմ: Պետք է նրան հասկացնենք: Այդ էլ կա- մա՛ց-կամա՛ց:

Օրուչը, որ մի քիչ տհաճությամբ էր լսում Ռաշիդի ծայրա- հեղությունները՝ հորանջեց:

— Է՛դ ա, կամա՛ց-կամա՛ց:

Իսմայիլովը վերջացրեց.

— Դո՛ւք, սիրելիք, կուլակության դեմ կռվելու մի միջոց ունեք — ուժ տվեք շքավորության կազմակերպման, ՓՕԿ-ին, վար- կային ընկերության: Մենք պետք է հենվենք շքավորությանը, միանանք միջակին — կռվենք կուլակության դեմ:

Ռաշիդն ու մյուս շքավորները գնացին տուն:

— Լա՛վ տղա է,— ասաց Իսմայիլովը,— բայց մի քիչ տաք գլուխ ունի ու անփորձ է:

— Քյալլագյոզ է,— բարկացավ Օրուչը,— հը, «սար աշ- խա՛րհք ա»: Հենց նրա համար, ո՞ր սար աշխարհք ա՛ պետք ա գործը զգույշ առաջ տանենք: Ամենքին կուլակ ասելով՝ միջակին էլ կը հանենք մեր դեմ:

Կուսհրահանգիչը գնաց շրջկենտրոն: Մնացին կուսակցության և կոմերիտական բջիջները, շքավորական խմբակը, թույլ ՓՕԿ-ը,

համարյա գոյութուն շունեցող վարկային ընկերությունը, գյուղ-խորհուրդը — կուսակցական, խորհրդային այս կազմակերպու-թյուններն իրեն փոքր ու մեծ ժայռեր գյուղական ծովի տարերքի մեջ: Այդ ժայռերը թույլ չէին ծովի ֆիզիկական ալիքների դեմ, բայց գծվարանում էին ծովի խաղաղ, քիմիական լուծման դեմ: Կենցաղը կաշուն, մածուցիկ, նախապաշարումները, մտավոր ցած մակարդակը տատանում, թուլացնում էին նրանց դիմադրական ուժը:

Իսկ առօրյան, խաղաղ առօրյան մոռացնել էր տալիս կոփվել, որը ոչ թե թուլանում, այլ պրկվում, սաստկանում է, որ հեռավոր լեռնաշխն գյուղի առօրյան անգամ կապված է ուրիշ հեռավոր մի Չինաստանի քաղաքական փոթորիկների հետ:

Կուսհրահանգիչը չէր կարողանում հասնել իր շրջանի գյուղերի բոլոր գործերին: Աշխատում էր, մաքառում, սովորեցնում — բայց գործը մեծ էր, կոմբոլչը՝ թույլ: Գյուղի վիշապի՝ տարերային մանր սեփականատիրության մի թևը, ճիշտ է, բռնված էր սոցիալիստական իրավակարգի մեքենայի սեղմիչով և քաշվում էր դեպի կարգ ու կազմակերպություն, բայց վիշապը իր մարմնի ազատ մասով դեռ գալարվում, թափահարվում էր իր անկարգության, տարերայնության անարխիկ բնագոյներով:



Գյուղխորհրդի շենքի առաջ ցեխը վաղուց էր կոփվել այնտեղ խմբվող գյուղացիների տրեխների տակ: Նրանք հաճախ էին իրիկ-նապահերին հավաքվում այդտեղ ու ղռվում մինչև մութն ընկ-նելը: Այնտեղի ցեխի — հողի պես էլ կոփվում էր խմբվող գյուղացիների միտքը:

Օրը թեքվում էր, գյուղացիք օրվա գործից հոգնած նստել էին խորհրդի դռանը, որ հեռվից Ռաշիդը երևաց:

Նա հոգնած, կարմրած մոտեցավ սրանց: Նստողների մեջ էին Յուսուֆը, Մուխտարը, մի քանի ուրիշ չքավորներ, Օմարը, Խուրշուդը, Բայրամն ու միշակներ՝ Մոյունը, սրա հարևան Ղա-մանը, որոնք եկել էին օրվա նորություններ գողանալու, որը թեև միևնույնն էր, բայց նրանց մշտական կոփման ենթակա լինելով հրատապ էր — հողը ի՞նչը...

— Շը, ո՞նց էք, վար անո՞ւմ եք էս տարի, — հարցրեց Ռա-շիդը:

Մուխտարը ճիպոտով քանդում էր հողը:

— Ես տվի կիսրարով:

— Կիսրարով բան կդառնա՞, ե՞րբ ես ի՛նքդ վարում, — վեր-գովվեց Ռաշիդը:

— Ո՛ւր ա սերմ: Սերմ էլ թե ունենա՞ եկ տափդ վարի՛, ցա-նածոց ցաքի՛, հասածոց կա՛լսի... որտեղի՞ց...

— Բա դո՞ւ, — դիմեց մի ծերունի: Մերուկը հանգիստ վեր նայեց:

— Լծկանը թանկ ա: Բեկը պլոկում ա:

— Կտրվի բեկի հոտը, հա՛... — Մուխտարը կռան տակը քո-րեղով ձայն տվեց:

— Այ տղա, ո՞նց ա կտրվում բեկի հոտը, որ էլի բեկի ձեռ-քին ենք մտիկ տալի:

— Բա ո՞նց գիտեիր: Աղա, բանվորի տերություն որ ասում են՝ էդ մեր գեղի համար չի ասած:

— Ո՞նց թե մեր գեղի համար չի ասած, — աչքերը շոնց Ռա-շիդը: — Հարստի օրը սևացել պրծել ա, դուք էլի բանվորի օրն եք լաց ըլում: Գործիդ մտիկ, լա՛վ կըլի:

— Լավ կըլի՛ ա՛վելի լավ, — փնթփնթաց Մուխտարը, — հա-մա որ հլա սրա ծերը տեսնում շենք... Քանի գնում ա՛ բեկն ա՛վե-լի ա ոտն առաջ դնում:

— Մենք էլ բոլորս մին կըլենք՝ մե՛րն առաջ կգնենք, — բար-կացավ Ռաշիդը:

Մուխտարն ա՛վելի բարկացավ: Վեր թռավ տեղից և մեղտե-ղում ցցվեց:

— Շը՛, առաջ դիր: Ի՞նչ ունենք: Լծկան շունեմ, սերմ շունեմ, էն մինը լծկան ունի՛ հիվանդ ունի տանը: էն մեկէլն աշխատող ձեռք շունի: Բոլորը որ իրար գցես, մի քյուլֆաթի սթար չի անի:

— Բա գյուղավարկն ընչի՞ համար ա, ՓՕԿ-ն ինչացո՞ւ յա: Այ սրանց փեշից կրանենք ու լծկան ա, գութան, սերմ ա՛՝ քիչ-քիչ ստի կկադնենք:

Մուխտարը կարծես ցավից վնգաց:

— Այ տղա, գյուղավարկն ինչ ունի՛ ինչ տա. ՓՕԿ-ն ինձանից, քեզանից բեթար, ո՞նց ես կաղնում, տափոց ուժից ընկած ջհաննա-մի էլ ծերին՝ թե կարենաս փեյնես: Մի երևացող տեղ չի, թե լծկա-նատերը հավանի՛ արենդով վերցնի: Տավար էլ թե ունես՝ խոտ-

հարբող սարի ծերին: Որ մի՞նն ասես: Հրե՛՛ն՛՛ս Բայրամը, Ղարան կիսատկլոր, որ էրես՝ շորահոտ չի գա, ո՞նց ես ոտի կաղնացնում:

— Ռաշիդը դառնածպիտ նայեց Մուխտարին և շարացավ:

— Դրուստ ա, գյուղվարկ, ՓՕԿ՝ անունը կա, ամանումը չկա, գրա համար էլ ասում եմ, որ պտի միանանք, իրար քոմակ անենք: Հետն էլ ՓՕԿ-ին ուժ տանք, գյուղվարկի համար դիմում տանք: Այ, հրես ես գալիս եմ: Գալի՞ս ես:

Մուխտարը գնաց նստեց հեռու քարին, նստեց ու սկսեց կոնատակը քորել:

— Իմ գալն ի՞նչ... իմ ու քու քոմակով բան կդառնա՞... Տասը մարդ կարալ շես իրար բերի, բարշացնի՝ էնպես են սաղ գեղը իրար դուշման: Բա՛ ինչ ես մտիկ տալիս: Դրուստ եմ ասում: Հին ո՞ր սրտեերում հենց էն ա իրար բուսուն են պահում, որ իրար արուն խմեն: «Քոմակ»:

Լռեցին: Մուխտարի ասածի մեջ կծկվում էր հին ճշմարտությունը: Լեռնային գյուղի ճշմարտությունը:

Ռաշիդը շատ լավ էր հասկանում գյուղացու իներտ բնույթը և ցավը. մի մարդ՝ հազար պակասություն: Գրկից, բարեկամ, հարազատ իրար միս են կրծում, թշնամանում մի կտոր ապրուստի համար: Սահմաններն անհարմար, մեկի արտը մյուսի տավարի ոտի տակ, մեկէլի՛նը կտոր-կտոր, հեռու, մինչև քաղում ես՝ կրծում են, ուտում, տրորում:

Ոչ, հարստի հերը չի անիծվում: Կարծես ավելի լավ եղավ Ապրանքը շատացավ: Հացը ճերմակեց: Հագուստ, գործիք, ամանեղեն, նավթ, շաքար: Չքավորի ձեռքն էլ է ընկնում նրանցից, բայց բեկի ու կուլակի տան ծուխն ամեն օր լիզում է օդը, և տապակածի ճենճերահոտը լողում գեղամիջով: Ուտում են, խժոռում, տրաքվում և բարձր խոսելով անցնում դառնում խալխի մեջ Գնում են քաղաք, խորջինները լցնում, ետ գալիս տուն:

— Բա լավ, որ ըտենց եք ասում, — կոնատակը քորելով ու արևից շշմած աչքերը բանալով ասաց քրքրված Դուրսունը, — ըտենց որ ասում եք, բաց ո՞նց ա ըլելու մեր բանը:

— Ոնց ա ըլելու, — գոռաց Մուխտարը: — էն ա ըլելու, պտի գան, պտի ասեն, պտի անեն:

Ռաշիդը հանգիստ նայեց Մուխտարին:

— Այ տղա, ով էլ գա ասի՝ անողն էլի մենք պտի ըլենք:

— Ո՞վ մենք...

— Չքավոր խալխը: Բա ո՞նց ես ուզում, տանձը վերևից բերանդ ընկնի, կոթն էլ դեպի վե՛ր: Օձի բերանից աշխարհք ա դուրս գալիս, հեշտ բան ա՞: Պտի կոխվ տաս: Հետո մենակ հո չենք, կուսակցություն կա:

— Լավ, ի՞նչ ա ասում կուսհրահանգիչը:

— Ինչ ա ասում կուսհրահանգիչը: Կուսհրահանգիչը չքավորի խումբ ա, որ գա քու գործն անի՞: Այլի՛, — և Ռաշիդը ժպտալով կոանում է Մուխտարի ուսը բռնած, նայում աչքերին, — զլխի՛ ես, կուսհրահանգիչը քեզանով ա, ինձանով ա: Կուսհրահանգիչը փող ա կտրո՞ւմ, բերի՛՛ երգիկիցդ վեր ածի...

— Դրուստ ա, — զարթնում է քնից քրքրված Դուրսունը, — հրահանգիչն ինչ ունի, ինչ ա՛նի քեզ — նրա շալվարը քոնից ծակ... Մենք պտի անենք:

— է, լավ, հերիք ա, — վեր կացավ Մուխտարը, — հը, ես գալիս եմ Ֆեյդան, ասեք՝ անեմ: Կուզեք կոխվ անենք, էդ բեկերին, կուլակներին խոխկ տանք գեղից:

— Պահ, էդ ուր գնացիր, — հառաչեց Դուրսունը, — կարծես էն ա ասիր ու արիր:

— Կանե՛նք, կամաց-կամաց, — ասաց Ռաշիդը:

— էդ ա, է — «կամաց-կամաց» — ու Մուխտարի փուքն իջավ:

— Սիրտդ լեն պահի, Մուխտար, — ասաց Յուսուֆը ժպտալով, — աշխարհքս լեն ա:

— էհ, ի՞նչ եմ անում լեն աշխարհքը, որ ոտնամանս նեղ ա, — դառնացավ Մուխտարը:

Նախիրը բառաչելով՝ կարմիր գետի պես հոսեց գեղամիջով՝ փչելով թրիքի հոտ, փոշի ու ճանճերի ամպը...

Չքավորները վեր կացան տեղներից առանց գործնական եզրակացություն: Նրանցից երկուսը՝ Խուրշուղն ու Բայրամը՝ երկուսն էլ Հասան բեկի հեռավոր ազգական՝ իրար աչքով արին ու քթների տակ ծիծաղեցին:

Խուրշուղն ասաց.

— Սոված փորով բեկ ու կուլակ են խոկում:

— Ի՞... — արեց Բայրամն ու վեր կացավ:

— Գնանք, գնանք, խոսալով փոր չի կշտանա:

Նրանք էլ հեռացան:

— Արջն օխտը մասալա գիտի, օխտն էլ տաճի փերին, — մամուսը Ղամարը, երբ իր ընկերի՝ Սոյունի հետ լուռ լսելով այս բոլորը՝ հեռանում էին:

— էդ ա, հենց մի գլուխ իրենց կուռն են տաշում:

— Ամա խեղճ են. մեզը փուշ օխտը հատիկ: Բան չեն բաշարելու: Զոռն էլի էն կուռն ա շուռ գալի: Վարավորդ ես անում, — ստուգելու համար հարցրեց Ղամարն ու կողքանց աչքի տակով մտիկ տվեց Սոյունին:

Սա հանելուկային աչքերը գցեց հեռուն.

— Հլա տեսնե՞նք, կերևա՛...

Մթնածոռեց: Սարերի պատովածքներից մթան գետերը հոսեցին դուրս, լցվեցին լճի երեսին: Քամին շնկշնկաց, և լիճը արտնդելով սկսեց դեմքը կծկել: Նրա վիշապներն սկսեցին սողոսկել ափերի խիճերի վրա:

Լճափի ճամփով չորս ձիավոր էին գնում: Միճը Հասան բեկն էր, մնացած երեքից մինը Ղասումի հարևան Սոյունն էր, որ չնայած իր բավական ուռճացած տնտեսության՝ «միջակ»-ի անուն ուներ: Մյուսը, Ասաղը մի երեսուննոց սրիկայադեմ երիտասարդ՝ շուտ-շուտ ուղղում էր գոտկից կախած խանչալը: Սրանց հետևից անխոս, ինքնամոտի գնում էր Հասան բեկի շորանը՝ Ալի-Նարին:

Նրանք դուրս էին եկել մեծ ճամփից, ընկել լճափի բարակ շավիղները:

Նրանք երթեմն գանդաղեցնում էին ձիերի ընթացքը, — երբ պահանջվում էր կենտրոնանալ, — բաց էին անում խոսքի կծիկը, ձայներն իջեցնում, ու հետո կրկին լռելով՝ շարունակում ճամփան:

Իսկույն ձիերն իրենց գլխու ոտն էին վերցնում ու գնում կիսավազ՝ վխվխացնելով ձիավորների փափախները և վարից վեր ծակծկելով օդը:

Բոլորի ուշադրության կենտրոնը Հասան բեկն էր, որի խոսքերը զանազան խնդիրների շուրջը՝ նրանց զբաղեցնում էր և կարճում ճամփան:

Գյուղից դուրս լինելով՝ նրանք մի տեսակ զոհարան էին զգում

իրանց «կյանքից», ընկել էին «փիլիսոփայություն» մեջ, բնության տարերային կյանքի մեջ:

Նրանց համար գվարճալի էր լսել, թե ինչ է ասում «նախկին տեր»-ը, որի բեկ անունը մնացել էր իբրև մականուն, որի ուժն անցյալումն էր:

— Զի՛ մնա, աչ մինին չի մնա, ո՛չ հողը, ո՛չ ոտը, ո՛չ իշխանությունը, — հանկարծ համարձակ նետեց Հասան բեկը:

Բոլորը ականջները սրեցին: «Հին գայլն այսքան համարձակ ու շիտա՛կ:

— Գյազա՛, — շարունակեց նա անորոշ հասցեի, — գաս իշխանությունս իդես, կայքս խլես, օրենքս խլես: Լա՛վ: Բայց վերջն էլ գաս կնիկս խլե՛ս, նամուսս խլե՛ս...

Սոյունը ժպտաց. «Տես է՛, քավթառին: Համարձակություն էլ է անում, ասելիքն ազատ ասում, բայց ինչպես վերջը ուղիղ շուռ է տալիս տեղը գցում: Ծիշտ է ասում — կնիկ, նամուս, ո՞նց կրունս էս աղվեսին»:

Ասաղը անհանգիստ սև սաթի աչքերը պսպղացրեց՝ ինչպես կատուն զորովող զնդակ տեսնելիս: Նա ձին մտրակեց ու մոտեցրեց Հասան բեկի ձիուն: Սա կողքանց նայեց նրան և լռելով ընկավ մտքերի հետ, կարծես մոռանալով իր ասածը: Հետո, կարծես խիզախ պաշտպանելով իր միտքը՝ հարցը դրեց.

— Ասում եմ, էլի՞. ահա՛ — կնի՛կը, կնիկը ո՞նց կտաս: Ես վացցունն անց մարդ՝ ասենք ես նամուսս ազատած պրծած եմ: Բա ջահելը ո՞նց կանի, ջահելը իր նամուսը կզնի խալխի ոտի տա՛կ:

Ասաղը շշմեց այս համարձակ ու իրեն համոզող խոսքի հարվածից:

— Այլի, — շարունակեց Հասան բեկը, — եկան գեղի ջահել ջնուքին առաջ քաշեցին, ասին՝ մոլլա, աղսակալ, բեկ չկա, տվին սրանց իշխանությունը վեր գցեցին, գրին հարկերը վճարեցին, ձայնազուրկ արին՝ իրենք դառան գեղի իշխանավոր: Լա՛վ: Մեշխտն անարգեցին — էս էլ թող Ալլահը ինքը վերցնի: Ամա որ ուզում են կեանոց չադրան, նամուսը պատռեն, տանեն կնկան գցեն ժողով-նեքը, գուռը քթիդ վրեն կողպեն — սրան կդիմանա՞ք:

Ասաղը վրդովվեց: Մյուսները հետաքրքրվեցին և թողին, որ կրկուսը փոսեն այս մասին:

— Ես չեմ դիմանա,— ասաց Հասան բեկը պատասխանելով նրանց տեղ,— դաշաղ կընկնեմ, կերթամ օլքա-օլքա կկորչեմ, նամուսս չեմ գցի ոտքի տակ: Ասադ,— դարձավ նա վերջապես ճիշտ հասցեին,— մարդ կարող ա օրենքն ու մեշխուր թողնի, մարդ ասոված էլ կուրանա, բայց իր կնկան չի ուրանա: Էս մեկը դրուստ ա: Ասադը ինչ-որ անախորժ մտքից խայթվեց և շրթունքները սեղմելով մուսլվեց:

— Դրուստ ա,— սրտանց ասաց Ասադը քնից զարթնածի պես:

— Էդ եմ ասում, հա՛, հա՛...

Ասադը հանկարծ ձին մտրակեց, հավասարվեց Հասան բեկին և վճռական կերպով ասաց.

— Բեկ, մի կնիկ ունեմ: Թե նրա նամուսը մինչև վերջը պահեցի, էդ էլ ինձ համար հերիք ա, մնացածը հող ա, հարստութուն ա, հաշիվ չունեմ: Ես կնկա գիժ եմ:

Հասան բեկը ականջները սրեց.

— Հա՛, Բա որ սկսեն կնանոցը հավաքել, ո՞նց ես անում:

— Չեմ թողնի, ի՞նչ ես ասում, բեկ:

Հասան բեկը բերանը ծովոց.

— Այ՛ղի, թողնո՞ւմ եմ, որ կնիկը իր հալին մնա՞... կնիկը որ իրան պահի, դրուստ ա, շատ էլ նրա նամուսին դիպչել չես կարող, ամա որ հազար բանով խաբում դուրս եմ քաշո՞ւմ... կընկա դիմացկունությունն էլ անվերջ հո չի: Մի տեղ կկտրվի՞:

— Էդ ա, է՛, որ մարդու սիրտը պղտորում ա:

Հասան բեկը լռեց: Նրա երկարավուն գանգի մեջ այդ ղուպին պտտվում էին այնպիսի մտքեր, որ Ասադի համար թունավոր էին ինչպես հաշիվը, և ծերուկը հետզհետե վարակում էր նրան այդ ախտով...

Ասադը նայեց նրա աչքերին, ուզենալով թափանցել նրանց հատակում լողացող մտքերը:

Հասան բեկը շարունակեց:

— Կնիկդ մեկին հավատաս, մեկէլին հավատաս, հո աշխարհին չես կարա հավատա, չես բաց թողնի կնկանդ, որ գնա աշխարհք ման գա, դառնա տուն: Հիմա բանն էն ա, որ կնկան աշխարհք եմ հանում — էստեղ ա է՛, սատանի շարխը... կասկածը գցում եմ սիրտդ. ո՞նց չկասկածես: Կնիկդ չի ուզի գնալ՝ կգան

սիրտը կգողանան: Կուզի գնալ, չես թողնի՝ կքաշեն կտանեն: Կսեղմես՝ կփախչի...

— Կսպանեմ,— գռչեց Ասադը խռովահույզ կերպով:

Նրանք հիմա գնում էին լճի խիճերի վրայով: Քամին սկսեց փոփոացնել նրանց յափնջու փեշերը: Ցրտում էր:

Հասան բեկը աչքը գետնին՝ սկսեց նորից.

Դրա համար եմ ասում, որ նրանց չի մնա: Իշխանությունը իմ ինչի՞ն ա պետք: Ե՛րբ եմ ես իշխանություն դեմ կաղնել: Ապուպայերից սկսած շատ ենք տեսել իշխանություն: Հարկի, հողի, ապրանքի վեճ շատ ենք ունեցել, կոխվ արել: Գյոռխանեն որ գնաս՝ ապուպայերից սկսած մինչև հերս՝ թաղվածի կեսը կամ արյան վրեժի համար ա պառկած, կամ նամուսի: Էդ բանում ես հպատակ չեմ: Ղաշախ կընկնեմ, կգնամ Պարսկաստան, օլքա-օլքա կկորչեմ, նամուսս չեմ տա:

— Դրուստ ես ասում,— ասաց Ասադը ոգևորված:

— Դրուստը դրուստ ա, համա դու խալխին հասկացրու, որ ուզում եմ խրճիթում կնանոց հավաքել, մարդ ու կնիկ իրար գցել: Կոմուն եմ ուզում սարքել:

— Ո՞նց թե կոմուն,— հարցրեց Սոյունը:

— Երևանա կողմերում սարքել են: Տները խառնել են իրար, մարդ ու կնիկ սաղ իրար բերել, մեկտեղ ապրեցնում են: Մեր գեղում էլ կը սարքեն:

— Էդ ո՞վ կգնա...— քմծիծաղ տվեց Ասադը:

— Ո՞վ, Դո՛ւ, էս մեկը, էն մեկէ՛լը:

Ասադը թունավորվեց ծերուկի դեղահատերից: Ծիշտ է, նա իբրև շքավոր գյուղացի, հենց իբրև գյուղացի մտերմաբար էլ խոսելիս ոչ իր դասակարգի մարդու հետ՝ իր մի կողմը զգույշ էր պահում — համենա՛յն դեպս... իհարկե, գիտեր, որ բեկի միտքը՝ ինչ էլ որ լինի՝ նենգավոր է վերջապես: Բայց նրան դառնացրեց այն, որ ծերուկի ասածի մի մասը նրա համար ճիշտ էր, համոզիչ: Նա լսել էր կոմունի մասին, ինչպիսի անհեթեթ գույներով որ ներկայացնում են հեռավոր, խուլ անկյուններում այդ կոմունը, տեսել էր «խրճիթները», ուր կանայք սովորում են, ինչպես որ կարող էին տեսնել կրքոտ, խանդոտ երիտասարդի աչքերը:

«Այո, այս մեկը դրուստ է ասում»:

Ականջ էր դնում Սոյունը այս բոլորին և աշխատում էր

«գորադ» մնալ: Մի քանի անգամ նա հը՛մ, հը՛մ արեց, ժպտաց: Նրան հասկանալի էր Ասադի ներքին հուզմունքը—տաքզուխ, կրթոտ երիտասարդը գեղեցիկ կնիկ ունի: Բայց զգուշ պահելով իրեն բոլոր կողմերով՝ Սոյունը լսում էր՝ զրույցից գողանալով այն, ինչ պետք էր իրեն:

Լոնցին և մյուսները: Նրանց զրույցի տեղ ավելի բարձր լըս-վեց ալիքների արագ աստմատիկ շնչառությունը խճերի վրա, ձիերի վազքը և ութմիկ նվոցը:

Դարձյալ նրանցից ամեն միւրը թաղվեց իր ներքին մշուշալից անորոշության մեջ: Գնում էին նրանք և ամեն մեկի զգուշավոր, միշտ «մի կողմով» երևացող միտքը խուզարկելով այդ մշուշի մեջ մոտակա իրերն ու կիրպարանքները՝ թափանցել էր շանում հեռավոր մի գալիք, և բացի տարտամ ձևերից ոչինչ չէր տեսնում դիմացը, ինչպես իրենց լեռների թավուտներում, ուր հաճախ քայլել է նրանցից ամեն մեկը՝ միշտ սպասելով և միշտ շիմանալով, թե որտեղ է թաքնված դարանը: Նրանց գյուղացի ուղեղը ստեղծած ուներ ներկա կյանքի պատկերը. դա տեսնում էր, բայց նրան պետք էր դրա հետևը թաքնված թելերն ու խճճանքը, այս ամենի իմաստը, որ լավ կշռեր իր անելիքը:

Եվ ահա այդ խճճանքի մասին խոսում էր լեռների հին, փորձված գայլը և իր սառը, կոշտ ճանկերով շոշափում էր նրանց հոգին...

Սոյունը փորձող մարդու պես ժպտաց, ծոծրակը քորեց և անվստահ հարց տվեց Հասան բեկին.

— Լավ, Հասան բեկ, բա սրա վերջը ի՞նչ ա ըլելու: Ո՞նց ես դու վարավորդ անում:

Հասան բեկը բոլորովին շմատնեց, որ նկատում է նրա հե-տաքրքրությունը: Ասադը նորից խթեց ձիու ասպանդները, մոտե-ցավ Հասան բեկին:

— Վե՛րջն ընչիդ ա պետք,— հեգնորեն հարցը դարձրեց Հա-սան բեկը Սոյունին:

— Բանը վերջն ա,— ասաց Սոյունը, — հիմիկվանք ի՞նչ...

Հետո մի փոքր էլ համարձակվեց.

— Ես ընենց եմ վարավորդ անում, որ հիմի ազքատին առաջ են քաշում,— էս դրուստ ա: Հարստին սեղմում են,— էս էլ «

գրուստ: Ամա վե՛րջը, վե՛րջը ի՞նչ ա ըլելու: Քու խելքն ի՞նչ ա կտրում...

Հասան բեկը լավ թափանցելով իր շրջապատողներից ամեն մեկին հուզող թաքուն միտքը՝ չվախեցավ համարձակ ու ճիշտ խփել նշանին.

— Վերջի էն ծերը էս ծերից ա երևում: Բանը հարստի, ազ-քատի մեջ ա: Ասում են՝ հարուստ, միջակ, չքավոր — չէ՛: Դե հի-մի քանի հարուստ ես՝ գլխիդ պտի տան, ազքատ ես՝ առաջ պտի քաշեն: Բա միջակի բա՞նը՝ կասեր: Միջակը թե հարստացավ՝ գլխին կտան: Ամա էն էլ կա, որ՝ թե չքավորն էլ ուզեց ազքատու-թյունից դուրս գա՛ նրա էլ գլխին կտան:

— Էդ ի՞նչ դուրս էկավ,— տարակուսեց Սոյունը:

— Դուրս եկավ, որ հիմի հարստության թշնամի են: էհ, հարստի ու միջակի բանը հեշտ ա: Կասեն «կար՝ հիմի չկա»: Դու ազքատի բանն ասա ո՞նց ա ըլելու, որ առաջ գոնե հարստից մի բան պոկում ապրում էր: Հիմի ումի՞ց ա պոկելու: Վերջը ազքատություն ա... — Սակայն և իսկույն մշուշապատեց. — Դու՛րան ա, ո՞վ ա իմանում ոնց շուռ գա: Ծակտի գիր ա: Չտեսած-ներս որ տեսանք, ասել ա՛՛ է՛լ շտեսածներս պտի տեսնենք:

— Է՛դ ա, է՛, որ վերջը շես իմանում, թե ո՛ւր ա հասնելու, ի՞նչ ա ըլելու:

— Բա՛... վե՛րջն ա բանը: Վե՛րջը շենք իմանում՝ համբերում ենք, որ իմանանք՝ ո՞նց կհամբերենք: Հը՛... հիմիկվանից ամեն մեկս իր անելիքը կանի, իրար կգզենք, է՛ բալամ, շատ եմ աշ-խարհք ման էկել, սար ու ձոր տեսել, գլխովս քամի շատ ա անց կացել: Ա՛յ, թվանքն ի՞նչ ա... Տա՛սը տարի քամակիդ ման կտ-ծես՝ մենակ մի օր պետք կգա: Համա էդ մի օրը ո՞նց իմանաս: Է՛ն որ տասը տարի ձեռիցդ վեր շես դրել՝ հյա գիշերներն էլ գըլ-խատակիդ ես պահել—մեկ էլ էնպես մի սհաթի դու՛րմանը զեմդ կկաղնի, որ տասը տարվա մեջ հենց մենակ էդ սհաթին թվանքդ դրել ես պուճախում: Ա՛յ վերջը. ի՞նչ իմանաս...

Ունկնդիրները կաշկանդվում էին:

— Դրուստ ա,— ասաց Սոյունը,— դու՛րան ա, ո՞վ ա իմա-նում ոնց շուռ գա: Տակը որ էլավ գլուխ, գլուխը տակ, կարող ա նորից շուռ գա:

— Ամեն բան ալլահից ա: Ասել ա էս էր ալլահի ուզածը:

Այ շուտ տվեց, ասել է էդպես պտի ըլի: Վաղն էլ որ ուրիշ կերպ շուտ տա՝ էնպես պտի ըլի: Ամա ինչ որ էգուց ա ըլելու, էդ ոչ ով չի իմանա, էդ իմանում ա ժամանակը: Ասած ա՛՝ ամեն բան ժամանակին ա մտիկ տալի, ժամանակը հեշ բանի մտիկ չի տալի: Ես իմը վճռել եմ, թող էսօր էլ կաղնի իմ դեմ, ես էլի դեմ չեմ կաղնի: Ինչքան կարամ, իմ ուժն ու կարողությունն էլ ձեռից բաց չեմ թողնի: Էսօր էլը խելքահան ա ըլել, էգուց խելքի կգա:

Մուլթն ավելի խոժոռվեց լճահովտում: Լիճը հագիվհազ պարզում էր իր խունացած արճճի դեմքը: Միայն վերևը լայն բացվեց ևրկնքի լույծ պատուհանը, և աստղերը սկսեցին ծիկ անել իրենց ոսկի թարթիչներով:

Ճամփորդները լռեցին: Հոգնածությունը թե տարտամ մտքերը կտրեցին նրանց խոսքի թելը, և նրանք ոտ վերցրին:

Այս բոլորի մեջ անխոս, լռահոս ջրի պես հետևից գալիս էր Ալի-Նաբին:

Նրա մտայլ աչքերը միշտ գետնի մի գծով տող քաշելով, վեր չէին բարձրանում: Նրա ցից քունքի վրա ուղիղ գծով շեշտված սպին՝ խանչալի արձանագիրը — դեմքին խստագույն լրջություն էր տալիս: Ոչ մի մկան չէր շարժվում նրա դեղնավուն այդ դեմքին: Ցախ-ցախ բեղերի ու վատ խուզած մորուքի արանքներում պողպատի պես սեղմված էին նրա զուսպ շրթունքները, որ երբեք տրամադիր չէին բառ բաց թողնելու իզուր: Միայն աչքերն էին, որ ուշ-ուշ ճպում էին: Երբ նա մի փոքր ետ մնաց թամբը ուղղելու՝ Սոյունը հարցրեց Ասաղին.

— Լսիր, Ասա՛ղ, էն ի՞նչ պատմություն ա Ալի-Նաբու և Ռաշիդի ախպոր մեջ:

— Չեմ իմանում,— փսփոսաց Ասաղը,— մի անգամ Ալի-Նաբին ու Ռուշանը գնացած են ըլել որսի, Ռուշա՞նն ա թվանքը կրակել Ալի-Նաբու վրա, թե՛ թվանքն ա հանկարծ բացվել:

— Ի՞նչ ա ասում Ալի-Նաբին:

— Բա՛ն կիմանաս Ալի-Նաբուց...

— Ո՞նց են իրար հետ:

— Լավ են էրևում:

Հասան բեկը հը՛մ արեց ու լռեց՝ գուշակելով գաղտնի դիտակալության մի գործ Ալի-Նաբու և Ռաշիդի եղբոր մեջ: Ու ոսկով լի քսակ գտնողի պես թաքցրեց այդ գաղտնիքն ու լռեց:

Մթան մեջ, քամու շնչի հետ մի ծխահամ եկավ. խոպոտ հաշեց մի ծեր շուն: Փոքրիկ մի ճրագ ծակից խավարը, օրորվեց, բաց ու խուփ արեց ու կուլ գնաց:

Հասան բեկը ձին կանգնեցրեց.

— Ի՞նչ եմ ասում, Ասաղ:

Ասաղը ձին հավասարեցրեց նրան:

— Կհասնենք տուն, ձիերը քաշի գոմը և դնա Ղասում աղին սաս, որ կոոպերատիվից իր ուզածները բերել եմ:

— Գլխիս վրա:

— Տուն շես գնա: Կգնաս Քյարամի, Հյուսեինի հետ հաց կուտես՝ հետո: Իմացա՞ր:

— Իմացա:

Մտան գետնափոր խրճիթների և աթարի բուրգերի մեջ: Ծնե՛րը զարթնեցին:

Ասաղը ընթրիքից հետո գնաց իր խրճիթը, որ մեջքը տված ծուռումուռ փողոցին՝ բերանն արել էր մյուս խրճիթներին:

Շունն ուրախ եկավ խառնվեց նրա սրունքներին:

Նա մոտեցավ դռան, ալանջ դրեց և հետո հանկարծ ամուր թակեց: Իսկույն ներսից կինը վազեց դուռը բանալու:

— Քնած չէի՞ր:

— Քնած էի,— քթի տակ փնթփնթաց կինը թարժած եղած:

— Լա՛վ շուտ իմացար...

Ասաղը լուցկին խփեց, նայեց ներս, իր կնոջը և դուռը ինքը փակելով, կոշտ ձայնով ասաց.

— Գնա տեղդ:

Կինը վազեց մտավ անկողին: Նրա սև ու ճապուկ օձի մարմինը կծիկ դառավ վերմակի տակ:

Ասաղը նայեց նրա մրոտ, բայց գեղեցիկ, արևառ դեմքին և անհասկանալի գայրույթով ատամները սեղմեց: Ուզում էր բան հարցնել, չէր իմանում ինչ: Հանեց շորերը, գցեց թոնրափին, արխալուղը ծալեց դրեց բարձի տակ և վերմակը քաշեց վրան: Կինը քնեց:

Ասաղը մեջքի վրա պառկեց և գլուխն առավ թևերի տակ: Սկսեց մտածել: Ճամփի գրույցը արդեն հիվանդացրել էր նրան:

Նա, որ իր ներքին խոռվքների համար ոչ ոքի չէր գիմել բացատրություն՝ այսօր անսպասելի մի զրույցում բացատրվեց: Նա հասկացավ, որ իրեն տանջողը իր խանդն է, խանդը՝ նոր տեսակի, անհասկանալի: Նա խանդում էր իր կնոջը, բայց ո՛ւմ գեմ — ոչ մի փաստ չուներ իր մտքում, թեև շատ էր կնոջը տանջում հնարովի փաստերով ավելի նախազգուշության, քան թե մեղադրելու համար: Նրան տանջում էր խանդը բոլոր մարդկանցից, ամենքին մտացածին կերպով մոտեցնելով իր կնոջը: Նրան պաշարել էր այդ խանդը, բայց նա փոխանակ հանգցնելու, ավելի էր արծարծում. աշխատում էր միշտ տեսնել նրան, ինչպես օձին, որից և՛ փախում ես, և՛ հետաքրքիր ես տեսնելու: Նա վաղուց սկսել էր խանդով զբաղվել՝ ինչպես սկսում են ծխել, խմել: Դա և՛ թույն էր, և՛ հաճելի — ինչպես հաշիշը:

Խանդը միշտ թարմ էր պահում նրա մեջ իր կնոջը գեղեցիկ տեսնելու զգացումը: Երեակայելով իր կնոջը ուրիշների գրկում նա ավելի էր լցվում կրթով:

Նա կպավ կնոջ լույծ տաք մարմնին և զարթեցրեց նրան...

Իսկ հետո սկսեց զայրանալ կնոջ վրա: Ի՞նչ էր ուզում նրանից՝ լավ հաշիվ շտվեց: Ասել նրան, որ չգավաճանի իրեն՝ հին խոսք էր և անգոր, թեև զրանով ազդում էր իր կնոջը և նրան երկյուղի տակ պահում: Նա տարտամորեն զգում էր, որ իր կնոջից ուզում էր պահանջել մի բան, որ կինը չէր կարող կատարել նրա համար — չքացնել «խրճիթ»-ները, կանգնեցնել շաղրան հանելու և կնոջն ազատագրելու հեռվից մոտեցող արշավը և վերջապես՝ որ չքացներ նրա սրտի գալարվող, անախորժ մատներով շոշափող սողունը — խանդը...

Նա ուզում էր, որ այդ բոլոր կրքերի հնոցը լուծեր իր անզոր, բայց իր համար գեղեցիկ կինը:

Օձերի կծիկների պես գալարվում է գյուղը, գալարվում դանդաղ, անաղմուկ: Նրանք պիտի պրկվեն մի օր, որ սեղմեն, խեղդեն իրար կամ սա կամ նա: Նրանց մարմինները դեռ չեն շոշափում իրար: Նրանք երկու գասակարգ են, իրար կողքի, իրար մեր նրանցից ամեն մի կծիկը դեռ ինքն իր մեջ է խճճված անհատանհատ, թայֆա-թայֆա...

Մինչև լույս գիշերները Հասան բեկի նվազ ճրագը լուսավորում է դարանակալների խոժոռ դեմքերը: Նրանք անվերջ փոփոխում են: Նրանց մեջ կարելի է տեսնել մի երիտասարդի, խրճիթավար կոմերիտական Հեյդարին, որ քաղցր-մեղցր ժպտով, կանացի շարժումներով ինչ-որ բաներ է բացատրում նրանց: Սովերի պես մթնշաղին մեկ-մեկ նրանց տան մոտով սահում և հանկարծ կուլ է գնում նրանց տան բակում Ալի-Նաբին և գիշերը լուսացնում գոմում:

Իսկ ցերեկները գեղամիջին կարելի է երբեմն պատահել Հասան բեկի որդի Հյուսեինին, որ բարձր քրքջում է Ռաշիդի հետ, որը նոր էր ընդունվել կուսակցության մեջ: Հանելուկային է դառել գյուղխորհրդի նախագահ Զաֆարը: Ո՛ւմ հետ է, ի՞նչ բանի է — ոչինչ չի հասկացվում: Գյուղում ինչ-որ բան է կատարվում. նա թաքնված է փոփոցների, հայացքների վարագույրի հետև...

Հեյդարը շուտ-շուտ էր գալիս Հասան բեկենց տուն: Նրա կապարագույն արատավոր դեմքը միշտ տհաճ մի ժպիտ ուներ, որ վատ էր սքողում նրա խարդախ մտքերը: Նա այս տանը արդեն տան մարդ էր: Հասան բեկը շատ էր կանչում նրան և հաճախ իր որդիների հետ զրույց էր կազմակերպում: Դա լինում էր ճաշերին և ընթրիքներին: Հեյդարի միջոցով իմանում էին լուրեր, տեղեկություններ: Նրա մոտ բաց էին անում իրենց «գաղտնիք»-ները:

Մի գիշեր Հասան բեկն ասաց.

— Մի գաղտնի գործ ունեմ, Հեյդար, քեզ մոտ ուզում եմ բաց անեմ:

— Ի՞նչ կա, բեկ:

— Ամեն ժամանակ իր սազն ունի: Ա՛յ, տե՛ս, Հեյդար, դու որ կոմերիտ ես դառել — ժամանակի հրաման ա: Ես իմ ժամանակի սազն ածեցի պրծա. հիմի ժամանակ է, որ Հյուսեինը, Բայրամն ու Ալին իրենցն ածեն: Կառավարությունը վեր բան ա. որ եկավ՝ պտի խոնարհվենք: Ի՞նչ անեն սրանք, որ լավ ըլի: Ի՞նչ կասես:

Հեյդարը չնայած իր թուլամորթ բնույթին, բնազդով կուսակց Հասան բեկի միտքը:

— Շատ դրուստ ես ասում: Հյուսեինը, Ալին ու Բայրամը հին կյանքով չեն կարող ապրել: Պիտի մտնեն կուսակցության մեջ:

— Այ ապրես, էդ եմ ասում: Ծս գնացող եմ, սրանք մնացող: Աշխարհքը նորում ա: Ուզում եմ, որ դրանով իմ էլին մի գուտ տամ, որդիքս զոհ բերեմ նրան:

Ուշ աշունը, թեև օդի մեջ սառնության մի կծող նշույլ կար, բայց արևկող տեղերում քաղցր ջերմություն էր պահած դեռ:

Հասան բեկն ու Ղասումը նստել էին վերջինիս տան դռանը և դիտում էին արևի տակ փռած ցորենը: Կողքի տան դռանը նըստած էր Սոյունը, որ նույնպես արևկող էր արել:

Ղասումը մտիկ տվեց նրան և ձայն տվեց:

— Հը՞, Սոյուն, հողը փեջնո՞ւմ ես գարնան:

— Ո՞վ ա իմանում, տեսնենք:

Ու Սոյունը աչքերը հեռուն գցեց մտածկոտ: Ղասումը մտիկ տվեց նրա ճղրիկ աչքերին, որոնց մեջ ոչ մի միտք չէր փայլում:

— Բա առանց փեջնելու կրլի՞:

— Հողաբաժանք է ըլելու, ի՞նչ իմանամ ո՞ւմ կընկնի իմ հողը: Տեսնենք ի՞նչ կըլի:

Ղասումը քթի տակ ժպտաց:

— Ի՞նչ պիտ ըլի: Ինչ որ կուզես՝ էն էլ կըլի:

— Էդ ո՞վ ա իմանում: Հող բաժանողը հո ես չեմ ըլելու:

— Բաժանողը դու չես ըլի, քու մարդը կըլի: Մին չի՞:

— Ո՞վ ա իմանում իմ մարդը ո՞վ ա:

— Էդ ա, է, որ պետք ա քու մարդը ճարես:

Այդ ըոպեին մյուս տան պատի տակից ծուլ-ծուլ վեր կենալով մոտենում էր երկրորդ հարևանը՝ Կատիրը:

— Հը՞, հողի բանն եք ասո՞ւմ... Բա՛ր աշողում:

— Աստծու բարին, — խուլ պատասխանեց Ղասումը և դարձավ կրկին Սոյունին, — դրա ճարը կա:

— Հա՛, ո՞վ ա իմանում, տեսնենք: Ու երկդիմի ժպիտով առաջ եկավ դեպի խոսակիցները: Հավաքվեցին մի քանի հոգի ևս և սկսեցին զրույցը, որ ավելի շուտ նման էր թղթախաղի, ուր խաղակիցները աշխատում են թղթերը լավ ծածկել:

Բայց զրույցն արժարժվեց: Դա գյուղի անհատնում նյութի շուրջն էր — հողի, որ բնազդի պես ուժեղ, կաշկանդող ձեռքով քաշում է ամեն գյուղացու:

Լուռ էր միայն Հասան բեկը: Միայն երբեմն աչքերի ցուլերը լուսարձակի պես պտտեցնելով խոսակիցների աչքերի մթության մեջ, նրանց տակին թաքնված մտքերն էր խուզարկում: Նա լավ էր հասկանում երկդիմի Սոյունին, նրա ամեն տատանումը, այս «բարեկամից» այն «բարեկամը»: Բայց դեռ սպասում էր, որ նա բացվի: Եվ վերջը Սոյունը բացվեց:

— Ինձ ոչ հողն ա վախացնում, ոչ էլ հողաբաժանքը: Ամա որ շես իմանում, թե ո՞ւմ հետ գնա՞ս... թե չքավորի հետ ես գնում՝ վախում ես նրա զոռը քեզ խեղճացնի: Հարստի հետ ես գնում՝ նրա հետ էլ շես կարող ոտ մեկնել: Էստեղ ի՞նչ կանես...

Հասան բեկը ուղղակի կտրեց:

— Չքավորը միջակի հետ էնքան կկենա, ինչքան որ միջակի զոռը քիչ ա: Միջակը զոռը քիչ ավելացրեց թե չէ՝ չքավորը պիտի հուպ տա: Ամա հարուստը միջակին կպահի, որ ինքն էլ մնա: Զոռը զոռի դադրը կիմանա:

Ղասումը գլխի շարժումով հաստատեց նրա խոսքը:

— Աղալար, — շարունակեց Հասան բեկը, — միջակը հարըստանալ կուզի՞ թե չէ: Թե միջակը միջակ ուզի մնա՝ էլ ո՞ւր ա աշխատում: Միջակի ուտողը ավելանո՞ւմ ա թե չէ, էդ ինչո՞վ ա լցնելու էդքան բերանը: Ամա որ ուտողն ավելացավ՝ էդ հո ասել ա աղքատացար: Էլ ո՞ւր մնաց միջակդ... Ախր ի՞նչ խելք ա թե գեղը աղքատ չպիտի մնա, գեղը պտի հարստանա:

— Դրուստ ա, — ասացին բոլորը թեթևացած:

Ազդեց:

— Համա, — մատը բարձրացրեց Հասան բեկը, — զառի գինը զարգյարը կիմանա: Հարստությունն ունեցողը կպահի հարստությունն ունեցողին: Դուք պտի մեզ գաք:

Ձայն չհանեցին, բայց զգացվում էր, որ համաձայն էին: Այսինքն՝ համաձայն «միջակաբար»:

«Ո՞վ գիտե, տեսնենք»:

Եվ երբ ցրվում էին, Հասան բեկն ասաց

— Կգան մեզ հետ, ամա «ոսկոր բերող շունը ոսկոր էլ կտանի»:

Քյարամը, Հասան բեկի կրտսեր որդին, գեղեցիկ երիտասարդ, ավելի խորամանկ քան խելացի՝ սուսուփուս կյանք էր վա-

րում: Նրան կարելի էր հաճախ տեսնել «խորհրթում» լրագիր կարգալիս (Հասան բեկն ու իր երեք որդիները գրագետ էին): Միայն երբեմն երեք գյուղացիները հավաքվում էին, պաղում պատի տակին՝ Քյարամը շատ անգամ փոխարինելով Հեյդարին՝ կարգում էր լրագիրը և բացատրում գյուղացիներին: Նա խոսում էր հանդարտ, խելացի, բայց վերջ ի վերջո նենգորեն:

— Պետք ա առաջ քաշեն աշխատողներին, ասել ա՝ իշխանության համար աշխատողներին: Բոլորն էլ աշխատում են իշխանության համար, ասել ա՝ բոլորն էլ հավասար են: Հարուստն էլ աղքատն էլ — գյուղացիներ են: Գյուղացին հարստացնում ա տերությանը: Ասել ա գյուղացիները տերության համար հարագատ են:

Չնայած Հասան բեկի ձախը վերականգնելու համար դիմում կար տված ուր հարկն է, բայց նա գեղամեջ չէր գնում, ավելորդ մտքերի տեղիք չտալու համար: Մեջ էին ընկած նրա երեք որդիները, որոնք թեկնածություն դիմում էին տվել կուսակցության մեջ ընդունվելու:

Չղջիկների պես — «ոչ մուկ, ոչ թռչուն» — մթնշաղի մեջ թռչում էին սրանք, աշխատելով ընտելացնել իրենց կերպարանքը գյուղացիների աչքին:

Սրանց փոխարեն Հեյդարը նոր ընդունված էր կուսակցության մեջ՝ գյուղի անկյուններում փսփսում էր Օրուչի մոտ:

— Ձա՛նրմ, կուզակն ու միջակը ո՞վ ա ջոկում: Կուսհրահանգիչն էլ չի իմանում... Տղեն ուսումի տվեց — կուլա՞կ ա: Իստակ շոք ա հագնում — կուլա՞կ ա... Խորտնացնենք՝ վեր կենա քոյի գնա ուրիշ տե՞ղ, գլխացավանք դառնա՞: Միջակին էլ ո՞նց ես տանում շքավորի հետևից, թե պտի ստիպես որ աղքատանա...

— Ո՞վ ա ասում, — դեմ է առնում Օրուչը, — միջակի հարբտանալուն կուսակցությունը դեմ չի:

— Բա՛, էդ եմ ասում: Կուսակցությունը կուզի որ գեղն աղքատանա՞... Միջակին պտի թողնես հարստանա, որ ուզենա մեջ հետ գալ: Հասան բեկն ես ասում, շատ էլ որոշ չի — կուլա՞կ ա թի միջակ: Տնտեսությունը քայքայվում ա:

— Ուզոն ինչքան էլ սատկի՝ կաշին մի իշաբեռ ա:

— Ես էլ էի ասում. ամա էդպես չի: Էս տարվա հաշվառումը ցույց կտա: Բան չունեն, մնացել ա հին սեփականատերի հպար

տությունը — չեն ուզում ցույց տան թե ընկած են Գովլաթդան դուշգյուն ջանըմ: Աղքատ՝ հպարտ: Հայրը կոտրված ա, որդիներն էլ նոր մարդիկ են: Պետք է ազատենք հին աղաթներից: Բան չեմ ասում, պետք ա լավ մտածել էս մասին:

— Բա ի՞նչ ա ասում Ռաշիդը:

— Ռաշիդը գիժ մարդ ա, ջանը՛մ: Մի անգամ նովրուզ բայրամի օրը Հասան բեկը նրան նվեր շտվեց՝ նեղացավ: Ախր ինչի՞ համար պիտի նվեր տար: Նրա համար, որ Ռաշիդը նրա բատրա՞կն ա. Ռաշիդն անգիտակից ա, նվեր, ոշվաթ շատ ա սիրում:

Օրուչը հաստ շրթունքները ծոմոնց.

— Չեմ իմանում, ախպեր:

— Հետո՞ քեզ մի բան էլ ասեմ, — ու Հեյդարը ձայնը ցածրացրեց, — էս որ մենք սաղ գեղը շորս կողմից կրակ ենք տալի՞ խալխն ածում մեջը, էսքան գազանը որ պատին ենք սղմում ու դեմը կաղնում՝ սրա վերջն ո՞ւր ա գնում:

Օրուչը մտածեց այդ մասին: Հեյդարը կուսեց, որ նա հասկացավ իր ակնարկը: Շարունակեց.

— Գիտե՞ս ինչեր են ասում մեր մասին կուզակները: Հը՞, զարմանալի մարդիկ են նրանք էլ...

— Ի՞նչ, — սրվեց Օրուչը:

Հեյդարը նշանակալից մտիկ տվեց Օրուչին.

— Ասում են՝ Օրուչը, Հեյդարը, մյուսները թե մեզ էն տեղը հասցնեն, որ էրեխեքս սովից պտի կոտորվեն՝ կգնանք սաղ քուսթլաթով սարից վեր կգցենք մեզ: Էս գիտես ինչ ասել ա՞...

Օրուչն իր մեջ թարգմանեց դրա իսկական իմաստը: Հեյդարն ավելացրեց.

— Բա ուզում ես որ բանն էդտե՞ղ հասնի: Էդքան դաշաղը որ գլխից ձեռ վերցնել տաս ու գցես սարերը՝ ո՞վ ա դրանց ջուզար տվողը — կուսհրահանգի՞չը, թե ես ու դու...

Օրուչը Հեյդարի երկյուղը թեև շափազանցրած՝ բայց որոշ լափով ճիշտ էր գտնում:

— Էս տեսակ գործերի միջին արուն կա: Կուսհրահանգչին ի՞նչ կա որ... Ամա ասենք նա ինքն էլ էր ասում «կամաց-կամաց»: Գրուստն էլ էդ ա, այլի՞...

Օրուչը ընայած իր անակտիվ բնավորության, ազդեցիկ էր

կուսքջիջում: Նրան համարում էին գյուղի իրականութունը լավ իմացող, տակտով երիտասարդ: Նա առանձնապես զգայուն էր դեպի միջակ տնտեսությունները — ինքը միջակ էր: Ուստի և «արյունով» պաշտպանում էր միջակի քաղաքականությունը, և իրեն այդպես էլ համարում էր. — ժայրահեղությունները զսպող կուսակցական: Ահա թե ինչո՞ւ միշտ չափավորում էր Ռաշիդի եռանդը, որին նա համարում էր վայրենի, անկարգ և աշխատում էր ընկերների միջոցով նրա «փեշը քաշել»: Ռաշիդի ասածները կուլակների մասին նա ճիշտ էր համարում իր մեջ, մյուս կողմից հնարավոր էր կարծում Հեյդարի երկյուղները կուլակների տեսքի մասին: Բայց զգում էր, որ իրենց վրա էր հոսում կուլակների և միջակների մի մասի դիմադրական տարերքը: Միջակի և շքավորի դաշինքը նա ընդունում էր, բայց թերահավատ էր շուտ իրագործվելուն: Մյուս կողմից էլ կուսհրահանգչի ասածները՝ «չխրտնացնել, զգույշ լինել, կազմակերպել, կամաց-կամաց», — այս ամենը կաթվածում էր նրա կամքը, և նա չէր իմանում, թե ուր թեքվեր: Հետո՞ նա շատ բան էր սպասում «վերելից» — կկարգադրեն, կգան, կանեն, կարվի... կուսքջիջի մյուս անդամներն էլ նրան էին լսում: Գյուղական նահապետական կարգապահության նման մի բան էր թագավորում այդ բջիջի մեջ: Ընդունում էին Օրուջի հեղինակությունը, նրան համարելով մի մարդ, որ լավ էր կապում գյուղի հազար ու մի խճճված թելերի ծայրերը:

Ուստի և երբ Օրուջը գանգատվում էր Ռաշիդից՝ ասում էին.

— Ռաշիդի փեշից պետք ա քաշած: Նոր ա մտել կուսակցության մեջ, ուզում ա տակնուվրա անել գեղը:

Ու «փեշից քաշում» էին:

— Դու հլա խամ ես...

Գյուղում կամաց-կամաց սկսեցին խոսել, որ Հասան բեկը տնով տեղով «մոտեցել է կուսակցության»: Առաջ ժպտացին, հետո սկսեցին տարակուսել, վերջն էլ գլուխները շարժեցին.

«Ո՞վ ա իմանում, աշխարհք ա»... Իսկապես. ի՞նչ չէր տեսել լեռնային գյուղը հին աղաթների ժամանակ: Հին գյուղը՝ արյան վրեժի, դավերի, ատելության ու նյութական հաշիվների անթիվ թելերով խճճված հին գյուղը...

Եվ մարդիկ լռեցին... «Հիմի էդպես ա. գելն ու գառը միասին են արածում»:

Մի երեկո Հեյդարը ուրախ-ուրախ ներս մտավ Հասան բեկի օդան:

— Հը՛, խեր ա՞... —

Գործը գլուխ ա գալի,— ասաց Հեյդարը շնչասպառ,— ընտրական հանձնաժողովը վերականգնում ա մեր ձայնը... բունը, Ղասումինը, Մուսայինը, Իսմայելինը... Ձեզ կհաշվեն միջակ, Զաֆարի հետ էլ եմ խոսացել, Օրուջի հետ էլ:

Հասան բեկը կնճռեց իր փորձված ձակատը: Բախտը շուտ էր գալիս...

Եվ իրոք ընտրական հանձնաժողովն աշխատում էր վերականգնել ձայները...

Ռաշիդը գեղամիջում բռնեց Օրուջին.

— Լա՛վ: Ասել ա ընտրական հանձնաժողովի, գյուղխորհրդի, կուսքջիջի առաջ Հասան բեկն ու իր ընկերները դառան միջակ... Լա՛վ գործի վրա ենք:

— Տնտեսություններն էդպես ա,— մեղմ ու մոռյլ պատասխանեց Օրուջը:— Կուլակը հո միշտ կուլակ չի: Տնտեսությունը նվազեց՝ դառնում ա միջակ:

Ռաշիդը ծուռ-ծուռ մտիկ տվեց նրան:

— Ի՞նչ ես ծուռ-մուռ մտիկ տալի: Բա հո փափա չի՞ — գեղի գործ ա: Կուսհրահանգչին ասել ա՞՝ շխրտնացնել անկուսակցական մասսային: Կուլակը միջակ ա դառնո՞ւմ — ավելի լա՛վ... Թող քայքայվի:

— Ձայնը վերականգնում ես, թե քայքայվի՞:

— Դու ի՞նչ ես ուզում, ախպեր: Տնտեսությունները քայքայինք, գեղն աղքատացնենք, թե ինչ ա սոցիալի՞զմ ենք շինում: Հլա խամ ես, սխալ ես:

— Իսկի էլ. Հասան բեկը կուլակ ա:

— Կուլակ չի: Դրուստ ա՞՝ ուժեղ միջակ ա: Ամա որ ընկնի մեր ազդեցության տակ՝ մեզ հետ կգա:

— Ձի գա: Հենց հիմի էլ նա կուլակ ա: Դարտակ բաներ ես ասում, կուլակը հեշտ հալով միջակ չի դառնա: Հը՛, Հասան բեկը,

Ղասումը, Մուսան, Իսմայիլը միջա՞կ... Խելքդ հացի հետ ես կե-
րե՞լ...

Օրուըը բերանը ծոցց Բաշիդի վրա.

— Դու շատ ես զոռում. տես, չկտորես:

— Այ տղա, էդ ի՞մ գործն ա մենակ, որ էդպես ես խոսում:
էդ բոլորիս, գեղի գործն ա՛ զգույշ: Շատ մի՛ զոռի: Տեսնենք ինչ
կասեն ընկերները:

— Տեսնենք:

Նույն օրը երեկոյան բջիջի ժողովում քննվեց հարցը: Շատ
շուռումուռ տվին՝ կուլակ, միջակ, քայքայված կուլակային տըն-
տեսություն, ուժեղ միջակային տնտեսություն, վերջը եկան այն
եզրակացության, որ Հասան բեկի, Ղասումի, Մուսայի և Իսմայիլի
տնտեսությունները ճիշտ է, ուժեղ են, բայց չի կարելի նրանց
կուլակ համարել:

Բաշիդը բողոքեց այս որոշման դեմ և հայց դրեց, որ այս
ամենի մասին տեղեկություն տրվի շրջանային կենտրոն:

Օրուըը զգուշացավ հակառակվելու և որպեսզի գործը չմեծա-
նա և աղմուկ չբարձրանա՝ առաջարկեց, որ գրեն կուսհրահանգ-
չին:

— Գրենք, թող կարգադրեն: Մենք մեր պարտականությունը
կկատարենք: Իրենք գիտեն ինչ կանեն:

Որոշեցին գրել իրենց տարաձայնության մասին:

Սրբ գուրս էին գալիս ժողովից և Օրուըն ու Բաշիդը գնում
էին իրենց տները, որ նույն ճամփի վրա էին, Օրուըը տիտուր նկա-
տեց.

— էս խալխի գործ բռնողը պետք ա գլխից ձեռ քաշի:

— Բա՞. պետք ա, բա ի՞նչ, — վրա բերեց Բաշիդը:

Բայց Օրուըը չէր ուզում գլխից ձեռ քաշել:

Հեյդարը անձնական գործերի պատրվակով մի օր գնաց
շրջանային կենտրոն: Կուսհրահանգիչը հարցրեց գյուղի գործերի
մասին, և Հեյդարն սկսեց զանգատվել Բաշիդից, որ նա քայքա-
յիչ դեր է խաղում բջիջում, իր անհամբեր, սխալ վերաբերմունքով
դեպի միջակները:

— Բաշիդը շատ ա մեջքներս կտորում՝ միջակին ու կուլակին
մի տախտակի վրա դնելով:

Կուսհրահանգիչը հարցրեց Հասան բեկի և մյուսների տըն-
տեսության մասին:

— Ձանրմ, ասում են կուլակ: Նրանց որ բեկ են ասում՝
անուններն ա: Տնտեսությունները քայքայված ա:

— Լավ: Բաշիդն ուր մտիկ ա տալի՞ աչքին կուլակ ա էրեւում:
Քնած տեղը կուլակ ա տեսնում:

Կուսհրահանգիչը ծիծաղեց:

— Ոչինչ, ես կգամ մի օր և կխոսենք այդ մասին:

Եվ հետո խոսեց այն մասին, որ իհարկե կուլակի և միջակի
տարբերությունները որոշելիս պետք է զգույշ լինել, քայլազյուզու-
թյուններ չանել: Չի կարելի միանգամից կտորել գյուղի դիմա-
դրական ուժերի գրոհը — պետք է նախ լավ կազմակերպել շքավո-
րությունն ու միջակությունը:

Կուսհրահանգիչը Բաշիդի մասին այն էլ ավելացրեց, որ չի
կարելի նրան թույլ տալ ամեն գործում անհատական գիծ տանե-
լու. բայց չի կարելի նրան էլ ճնշել: Նա էլ իր ճշմարիտ բնագո-
նեքն ունի...

Հնարական հանձնաժողովը վերականգնեց (թեև մեծ դժվա-
րությամբ, բայց Հեյդարի մեքենայություններով և Օրուըի տա-
տանվող ձեռնտվությամբ) Հասան բեկի, Ղասումի, Մուսայի և
Իսմայիլի ձայները: Եվ մի գեղեցիկ օր Հասան բեկն ու իր ընկեր-
ները դառան «միջակներ»:

«Տնտեսությունը փոխվել ա, ազերքն էլ բաժանվում են»:

Հասան բեկը զգույշ պահեց իրեն, դուրս չեկավ գեղամեջ:
Կա և աչքի հոգեբանություն...

Հենց նույն օրը, երբ հայտնի դառավ Հասան բեկի ձայնի վե-
րականգնումը՝ նա իր տան կողքի գերանին նստած էր, որ կա-
մաց-կամաց, իբ հետևից եկան Սոյունը, Ղամարը, Խուրշուդը,
Բայրամը և այլ «միջակներ» ու շքավորներ և ակնածանքով նստե-
ցին նրա շուրջը:

Հասան բեկի հմայքը ձեռաց զորացավ: Նա լուրջ արժանա-
պատվությամբ համբիշը քաշեց:

— Բա՞, էսպես ա: Անցած օրին օր չի հասնի: Էն անցուկ՝ էն մոռցուկ: Հմի դառանք աշխատավոր: Ունևոր էի, ամա որ տղերքս բաժանվում են՝ էլ ինչ ունևոր: Կտոր-կտոր են անում ինձ: Զբաժանվել էլ չի ըլի: Զահեկներ են, ուզում են իշխանության, կուսակցության օգուտ տան: Զահեկի ճամփին քար շեն քցի: Ի՞նչ անեմ ես՝ գնացող, նրանք մնացող:

Լոեցին, լոեցին և ապա մտածեցին.

— «էդպես էլ դրուստ ա դուս գալի»...:

— էդպես ա, — հաստատեց Սոյունը, — այ տե՛ս Ռաշիդը, քո տանը մեծացած մշակը էսօր-էսօր կոմունիստ ա դառնում. դու որ միջակ դառնաս՝ ի՞նչ կա...

— Բալա՛մ, — հառաչեց ու քաղցր ծոր տվեց Հասան բեկը, — հիմի ամենքս էլ կոմունիստ ենք — էլ բեկ, աղալար, նաշալնիկ չկա: Հիմի ամենքս էլ հավասար ենք: Թե մի քանի կովի ու եզան երեսից անունս պիտի կուլակ ըլի ու կառավարության աչքից ընկնեմ՝ գեղին փեշքաշ: Գու՛թան ա, լծկան ա, ով կուզի թող տանի բանացնի, թող մեջներս հավասարություն ընկնի: Հիմի բոլորս մեկ ենք:

Վերջին խոսքերը նա զգաց, որ լսողները լավ գողացան: Գարունը մոտենում էր, լծկանի ու գու՛թանի պակասը շատերի մեջքը կտորո՛ւմ էր:

— Հիմիկվանից դենն էլը իմն ա, ես էլինը: Ունեցածս էլ էլինը: Կտա՛մ, ախպեր, սար սարի չի հանդիպի, մարդ մարդու կհանդիպի: Հի՛ն խոսք ա:

Ռաշիդը կամաց-կամաց լողալով գյուղի տարերքի մեջ՝ ինքն էլ զգում էր, որ այդ տարերքը թևերին ուժ է տալիս. դժվար է կտրել անցնելը: Այն, ինչ որ լույսի պես պարզ էր, և թվում էր հեշտ է չբավորին հասկացնելը թե չբավոր պիտի մնա — բավական դժվար էր եղել...

Նա զգում էր, որ գյուղի գործն այն հորը ընկած ծանր քարերից է, որի հանելը ուժի՛ խելքի և համբերության բան է: Նա ոչինչ չէր տեսել, որ առանց ճիգի, լարման, պայքարի գլուխ գար: Դառն չբավոր կյանքը նրան սովորեցրել էր մի բան, որ ամեն ինչ պահանջում է՝ ջանք, քրտինք, արյուն — թե չէ կյանքը ոչինչ ձրի մ

տալիս: Սարերի շրթանը, գյուղի բատրակն այնքան էր տրեխի պես զարկվել, տրորվել իր տիրոջ՝ Հասան բեկի ոտքի տակ, այնքան էր տեսել քարակոշտ ու ցեխ, որ լավ գիտեր, որ կյանքի ոչ մի քաղցրություն, անգամ գարեհացի մի մգլած պատառը, ինքն իրան չի ճարվի — պետք է կովով ձեռք բերես: Նոր կյանքը տալիս է այդ կովի իրավունքն ու հարմարությունները — կոհ՛վ:

Ռաշիդի կապարի շրթունքները սեղմվում են, հետո ուռչում:

Նա մտքում ինչ-որ բաներ ունի: — Բջիջում լավ շեն հասկանում բանի էությունը՝ թեև այնտեղ կան լավ տղաներ: Պետք է չբավորներին լավ կազմակերպել և քաշել կուսակցության մեջ:

Ու միառժամանակ տազ է անում:

Հասան բեկն ու իր նենգավոր ստվերը՝ Ղասումը, նստած բուխարիկի մոտ՝ ծխում էին: Մի քիչ հեռու նստած էին Խուրշուդն ու Բայրամը, որոնց մի հանգով կանչել էր Հասան բեկը: Զբավորները պետք էին եկել... Եվ ահա Ղասումի մի հատիկ աչքը, պատածակից նայող դավադիր աչքի պես, զննում էր երկուսին: Խոսում էին դեսից դենից: Բայրամը — խոշոր, քսու աչքերով շարունակ Հասան բեկից Ղասումին էր նայում, Ղասումից Հասան բեկին և համաձայնվում նրանց ամեն խոսքին: Մյուսը վայրի, զուսպ աչքերով նայում էր իրեն դիմողին և հարցականորեն սպասում: Երկուսն էլ Հասան բեկի չբավոր հեռու ազգականներից էին, որոնք նրա տանը համարյա չէին եղած:

Ընթրիք բերին: Ծոխ ու առատ փլավը՝ ճերմակ լավաշներով ծածկած՝ գրգռեցին շոես գյուղացիների ախորժակը աճելի, քան այն խոստումները, որ անում էր Ղասումը:

— Բանն էս ա, որ հողը շատ-շատ որ ասում են՝ շատ ա մի տասնհինգ մարդու համար: Ամենքի համար քիչ ա: Պիտի կոհվ գցեն, տան մի թայֆի ձեռ, մեկելներին թողնեն մատները լպտեղով: Հիմի մենք ուզում ենք իմանանք. ի՞նչ են ասում, ո՞ւմ են ուզում գցեն Հողկոմի մեջ:

— Զեմ իմանում, — աղա, — ասաց փլավի միջից Բայրամը՝ քսու, խոշոր աչքերը կիսաժպիտ բարձրացնելով և հաստ շրթունքներին փայլեցնելով փլավի յուղը:

— Ո՞նց չեք խմանաւմ: Բա սվ Հողկոմի մեջ ա, նա էլ բաժանողն ա:

Բայրամը տարված կենդանական մղումով՝ կուլ էր տալիս փլավը և լավաշխառն. խոշոր պատառները դժվար կուլ տալուց կարմրել էր միայն:

— Իմանայիք լավ կըլեր: Թե պիտի ամեն թայֆա, ամեն գերդաստան իր մարդը առաջ քշի, որ հողի լավ պատառները ճանկի՝ մենք էլ մեր ճարը տեսնե՞ք, դուրսը շմանաք: Բողոք տանք, որ թայֆան վերացնեն:

— Թայֆան ո՞նց ես վերցնում, Ղասում աղա,— խոսեց բարկացած շեշտով մյուսը՝ Խուրշուդը:— Թայֆան աթադան-բաբադան բուն դրած ցեց ա, ի՞ծի ցավ...

— Բա ո՞նց պտի ըլի մեր ճարը, թե բանն ընկնի խնամության, թայֆի: Ո՞նց պտի ըլի: Մենք էլ գոռ կանենք, մեր մարդուն առաջ կըշենք:

— Դժար ա,— ուրախացավ Ղասումը,— կոխիվ կբացվի, արուն կթափվի: Լավն էն ա — անուշ-բարիշ գործ բռնենք: Հողն ու անուշ-բարի՜շ... Բա ես թող կանեմ, որ թայֆա-թայֆա գան ու բերնիս հողը հանեն ուրիշին տա՞ն:

— Հա, սոված հո կոտորվելու շենք: Պետք ա ձեր մարդը գտնեք: Լավ հող իմացող, ամենքի բարեկամ, աչքը կուշտ մարդ Թե չէ չքավորը լավ գիտեք՝ աչքը հարեանի վրա ա:

— Քեզ կընտրենք, Ղասում աղա՛, քեզնից լավը չկա: Ղասումի մի աչքը ժպտաց պողպատի սառնությամբ.

— Ձե՛, ես ի՞նչ. ես հողից հասկանում եմ, ամա դրանում լավը Հասան բեկն ա: Էն էլ թե ուզի մեյգան գալ:

— Հասան բեկին էլ ընտրենք, քե՛զ էլ՝

Լոեցին:

— Լավն էն է,— ասաց Ղասումը,— որ ձեզ ընտրենք՝ դուք ձեր հոգսը քաշեք, մեր էլ բարեկամությունը մի՛ մոռանաք: Հասան բեկը ձեռքը բարձրացրեց: Լոեցին:

— Դրուստն էլ էդ ա: Ով կըլի ըլի, մենտե՞ք մեր բարեկամն ըլի: Մենք բողոքս մեր չքավորներին կընտրենք, մեր մարդուն: Անք մարդը որ մեզ օգուտ էլ չտա՝ ուրիշի տալիք վնասը հո չ տա: Բայց ուրիշ չքավորը մեզ էլ կվնասի, մեր չքավորին էլ:

Խուրշուդն ու Բայրամը լոեցին: Այս նկատելով՝ Ղասումը մանյովը արավ.

— Տեսեք, միտք արեք ձեր մեջ, խոսացեք, ա՛յ, դո՛ւք, ձեր բոլոր բարեկամները... մեր բարեկամները, լավ խորհուրդ արեք, եկե՛ք: Թե մեզ կընտրեք՝ մենք ձեզ կպահենք, ձեզ կընտրեք՝ դուք մեզ պահեք: Եղա՞վ:

— Նշանով խոսեցիր,— ասաց Խուրշուդը համոզված:

Հետո սկսեցին զրուցել, ծիծաղել: Ներս եկան Ալին, Հյուսեինն ու Քյարամը: Կեսգիշերից անց դուրս եկան Հասան բեկի տանից: Ճամփին Բայրամը հարցրեց Խուրշուդին.

— Հը՞, ի՞նչ կասես:

— Այ աղա, քեզ ի՞նչ ա պետք: Լավ հող, շատ հող — էդ չի՞:

— Ասենք էդ ա:

— Դե ինչ որ խալիսը քեզ չի տա՝ էս մարդիկ կտան:

— Իրենք կվերցնեն:

— Այլի, թող վերցնեն: Իրենք քվոր են: Քիչը քիչ կվերցնի: Չքավորը շատ ա, կբաժանեն, ամեն մեկիս բան չի ընկնի: Քեզ ի՞նչ ա պետք — հավասարությունն թե հող:

— Ինձ հողն ա պետք, հո՞ղը, հավասարությունը ոտների՞ս ա: Հրե՛ն տնով տեղով տկոթ եմք:

— Հա՛, դե էդ եմ ասում, էլի՞... ձայնդ տուր Հասան բեկին, քաշվիր կրադ:

— Բա վե՛րջը:

— Վերջն էն կըլի, որ Հասան բեկը թեկուզ ընկնի էլ՝ չքավոր չե՛ս — հալա դու քո հողի տերը կըլե՛ս նազդի վրա: Չեռիցդ ո՞վ ա հողը խլում, սարսա՞ղ:

Բայրամի գլխում նստեց այս նենգավոր միտքը:

— Է՞դ ա,— հողը. հավասարությունը. հետո՞...

— Այլի, ջհանդամը քու հավասարությունդ:

Նրանց դուրս գնալուց հետո Հասան բեկն իր տղաներին ասաց, որ կանչեն Ալի-Նարուն և իրենք հեռանան:

Մի քիչ հետո ներս մտավ Ալի-Նաբին, իր շեղ ունքերի տակից շախկալի աչքերով նայեց հավաքվածներին: Հետո ցած ու հաստատ ձայնով ասաց «բարի իրիկուն» ու կանգնեց՝ բուժ մատը գոտի մեջ:

Հասան բեկն ու Ղասումը թեթև բարեկցին:

— Նստի՛ր,— ասաց Հասան բեկը մեղմ:

Չհարցրեց թե ինչո՛ւ են կանչել իրեն, այլ անշարժ նստած սպասեց: Ըստ երևույթին շատ հանգիստ էր:

— Ալի-Նաբի,— հանկարծ, առանց պատրաստութեան սկսեց Հասան բեկը,— ա՛յ ինչ պիտի ասեմ քեզ: Հողը բաժանելու են: Մենք ուզում ենք գեղումը բարիշուքուն գցենք: Ի՞նչ կասես սրան:

— Շատ էլ լավ կանեք: Բարիշուքունը լավ բան աս,— հանդարտ, բայց անտարբեր պատասխանեց Ալի-Նաբին, առանց ցույց տալու թե զարմանում է այդ անակնկալ հարցի վրա:

— Գիտե՞ս, Ալի-Նաբի, խելքն էն չի, որ իմանանք, թե էսօր քեզ ու ինձ ինչն աս օգուտ. խելքն էն աս, որ հիմիկուց իմանանք թե վերջն ի՞նչ աս մեզ օգուտ:

Ալի-Նաբին կանգնած ջրի պես սառն նայեց Հասան բեկին՝ չտալով իր աչքերին ոչ մի իմաստ:

— Բանն էն աս, որ շուտով հողաբաժանություն աս: Գիտե՞ս մեր խալիսը. հիմիկվանից իրար են անցնում, հին թշնամությունները թաժացնում, էգուց էլօր արուն պտի թափվի: Հիմի մեր խելքն էնպես աս կտրում, որ հին ժամանակն անցած աս. մեր էլը պտի միաբանվի, հավասար կաղնի ու իրար պահի: էլ թայֆի, դուշմանություն ժամանակ չի: Դու կհասկանաս ինչ եմ ասում: էլ հարուստ-աղքատի ժամանակ չի:

— էդ խոսքը շատ դրուստ աս,— քողարկվեց Ալի-Նաբին:

— Հա՛... ասելս էն աս, որ դու, Բայրամը, Խուրշուդը, հրե՞ս իմ տղաները մին ըլեք և ձեզ պահեք ու մեզ էլ օգնեք, որ հողաբաժանությունը անուշ-բարիշ վերջացնենք, դուշմանությունը թողնենք...

— Ես դուշման չունեմ,— ասաց Ալի-Նաբին և աչքի ծերով գննեց Ղասումի մեկ հատիկ աչքը:

Սա և Հասան բեկը քննող աչքերը մեխեցին նրա թաղիքի պես անթափանց դեմքին և լոեցին:

— Բա էն ինչի՞ համար էր Ռուշանը թվանքը պարպել վրե՞դ,— հարցրեց թույլ շեշտով, զգույշ...

— Ռուշանը թվանքը լցրել էր, պահել ձեռին, հանկարծ թվանքն ինքն իրան բացվեց: Փորձանք էր:

Հասան բեկն ու Ղասումը իրար նայեցին և հանգստացան.— «Ուրեմն մի բան կա...»:

— Հա՛, ասել աս իրար դուշման չեք:

— Չէ՛, ի՞նչ ես ասում,— ու դիմակի պես 'ժպտաց: Մեր գայլը նենգորեն մտիկ տվեց ավազակաբարո շորանին և նրա միտքը հասկանալով՝ սկսեց ծածկել իր միտքը:

— Ա՛յ էդպես, ա՛յ էդ լավ աս, որ դուշման չեք իրար հետ,— ասաց նա երկզմի ուրախությամբ.— մենք վախում էինք թե կըրված եք: էդպես բարի՛շ կացեք:

— Ի՞նչ ունենք բաժանելու: Ռուշանը իմ ախպերն աս: Հասան բեկը մտածեց մի քիչ և հանդարտ խոսեց.

— Գիտե՞ս ինչ կա: Ռուշանը թայֆա աս սարքում: էլ ինձ մտիկ չի տալիս, որ նրան խրատեմ: Իր բանն աս, ինչ ուզում ասանի: Բայց դու գիտես թե թայֆաբազուկությունից ինչ դուրս կգա: Գեղի իշխանությունը կառնեն իրենց ձեռը ու վա՛յ նրանց դուշմանին: էգուց էլօր հողաբաժանություն աս, գեղի նախագահի ընտրություն աս. ո՛ւր կգնա մեր բանը, թե գեղի տերը Ռաշիդը դառնա: Պետք է թայֆաբազուկության վերջ տանք ու Հողկոմի մեջ էնպես մարդ ընտրենք, որ գեղին հավասար մտիկ տա:

Ալի-Նաբին հոտն առավ, որ այստեղ մի բուրբուկն ուրիշ բան կա, քան թայֆաբազուկության, գյուղի խաղաղության հարցը: Նա հասկացավ, որ դավը ոչ թե Ռուշանի դեմ է, այլ Ռաշիդի դեմ և Ռաշիդի անունը տալը պարզապես հենց այդ բանը ծածկելու համար է: Սարբրում անցկացրած իր գայլի կյանքը իր բազմաթիվ թակարդներով նրա խորամանկությունն այն աստիճան չէր սրել, որ նա զգացներ թե հասկացավ, թե ինչ են ուզում իրենից: Նա գլուխը ներս քաշեց իր որջը ու տազ արած սպասեց, թե ինչ դուրս կգա այս պատմությունից:

— Ռաշիդը լավ տղա աս,— ավելացրեց Հասան բեկը,— մենակ գիժ աս: Հետո Ռաշիդը ինքը էս բաներն անողը չի. նրան սովորցնում են: Ո՞վ աս սովորցնում:

Նրանք լոեցին: Ալի-Նաբին չէր ուզում բացվել, և այդ գիտեին: Եվ այդ կարևոր էլ չէր: Հասան բեկի և Ղասումի համար կարևոր էր թունավորել այս լեռնականի առանց այն էլ թունավորված հոգին: Այս տարտամ խոսակցությունն այն առավելությունն ուներ նրանց համար, որ հետագա անհաջողությունների մեջ ոչ մի բանով պատասխանատու չէին:

«Գյուղի հին մեծերն ուզում են խաղաղություն պահել հողա-

բաժանութիան ժամանակ և... իրենց բաժին հողն ստանան ամենաշատը»:

Ալի-Նաբին գյուղում չէր երևում շատ. սարի մարդ էր: Մանկուց սարի կյանքին սովորելով՝ չէր ուզում հողին կաշել: Ձմեռը նրա համար արձակուրդ էր, ամառը՝ գործ: Նա էլ հեռավոր բարեկամ էր Հասան բեկին, բայց ոչ մի հարաբերություն չունեիր հետը: Նա ուներ իր բարեկամները — մեկը նրանցից Մաշադի Սոյունն էր, որի «գլավնի» եղած ժամանակ տավար էր փախցնում նրա դիտություններ և նրա դրած փրկանքով հո գարձնում տերերին: Ռաշիդենց հետ հին թշնամություն ուներ: Ռաշիդի պապը բռնել էր տվել Ալի-Նաբու հոր գողացած եղները և հանձնել Մաշադի Սոյունին: Սա հո էր դարձրել, բայց փրկանք չստանալով սովորեցրել էր Ալի-Նաբուն, որ նրա եզներն արածացնելիս ժայռից գլորի և ասի, որ իրենք են գլորվել: Ալի-Նաբին կատարեց պատվերը: Ոչինչ չկարողացան իմանալ: Կասկածը մնաց կասկած և կարծես մոռացվեց:

Բայց Ալի-Նաբին զգուշ նայում էր այդ պատմության կողմը և չէր կարողանում գողանալ գաղտնիքը — կասկածում են թե ոչ: Ռուշանը ոչինչ չէր խոսում այդ մասին:

Եվ ահա մի անգամ, երբ Ռուշանի հետ որսի էին գնացել ու անտառի բացատում իրարից հինգ քայլ հեռու աչքները հառել էին որսի կողմը՝ հանկարծ կողքից պայթեց Ռուշանի երկճուղ հրացանը, Ալի-Նաբին վիրավորվեց: Ալի-Նաբին նստեց, ուզեց պահել իրեն, բայց նվաղեց: Հենց այդ րոպեին անտառի բացատը մտան երկու գյուղացիներ: Ռուշանը վա՛յ գողալով վրա վազեց:

— Ինչի՞ խփեցիր, — հարցրին գյուղացիք Ռուշանին:

— Հանկարծ էր, աչքս դուրս գար, — ասաց Ռուշանը և սկսեց հառաչելով կապել Ալի-Նաբու վերքը:

Գյուղացիներից մեկը վազեց գյուղ, սայլ բերին, Ալի-Նաբին արդեն Ռուշանի և մյուսի ձեռքերի վրա գալիս էր՝ սփրթնած ու մոռալ:

— Էս ո՞վ ա խփել, ասա արի՛նը թափեմ, — կատաղած վրա վազեց Ալի-Նաբու եղբոր որդին:

Ալի-Նաբին թույլ, բայց հանգիստ ձայնով նվազ.

— Անկարծ էր, ձեռ շտաս:

Գյուղացիք հանգստացրին պատանուն: Ռուշանը ներս գնաց:

Երկար նստեց վիրավորի կողքին, գլուխը կախ նայեց, կուրծքը ծծեց:

Բայց քանի շատ էր ծեծում իրան ու ափսոսում, Ալի-Նաբին հանգստացնում էր ավելի:

— Այ՛շի, ի՞նչ ես գլուխդ կորցնում. տղամարդ չե՞ս, փորձանք էր՝ պատահեց. ի՞նչ անենք:

Ռուշանի մեջ մտավ կասկածի օձը — «կհավատա՞, որ անկարծ էր»: Իսկ Ալի-Նաբին հաշվեց, որ եթե գյուղացիք շհասնեին վրա՝ երևի երկրորդ անգամ կկրակիր. և գյուղացիք խանգարեցին խուսիթյունն իմանալու: Մի կողմից էլ լավ արին: Ալի-Նաբին կենդանի մնաց, նա կարող է վրեժը հանել: Ուստի և աշխատում էր, որ այդ մասին չխոսվի:

— Ռուշանը իմ ընկերն ա, Ռուշանը որ ճակտիս էլ կրակի՛ չեմ հավատա թե ուզում ա սպանի:

Բայց նա վճռել էր, որ կամ Ռուշանը կամ Ռաշիդը «գնալու են»:

Եվ ահա Հասան բեկի խաղերը նրան զցում են վրեժի ճամփի վրա: Գիտե՞ն նրանք այդ վրեժի մասին, կասկածո՞ւմ են, արտաբուստ նշանակություն չունի: Բայց Ալի-Նաբին գործակցելով, նրանց մինչև «քայլը» բարվոք է համարում լռել: «Քայլից» հետո է՛լ — լռել: Հին իմաստություն է:

Բշիշը Ռաշիդի առաջարկով որոշեց թեկնածուներ, որ պիտի անցկացնեին հողկոմի ընտրության ժամանակ նրա կազմի մեջ:

Որոշվեց որ Օրուչը և գյուղխորհրդի նախագահ Զաֆարը առաջարկեին քվեարկելու Հեղկոմի կազմի մեջ, իսկ երեք հոգի էլ հասարակությունից կընտրվեն իբրև «հողաճանաչ» մարդիկ:

— Ովքե՞ր պիտի ըլեն հասարակությունից, — հարցրեց Ռաշիդը: — Էդ էլ առաջարկենք:

Օրուչը վճռապես հակառակեց.

— Առաջարկելը՝ կառաջարկենք, ամա հասարակության բերանը լավ չի որ փակենք: Թող հասարակությունն ինքը ընտրի:

— Հասարակության բերանը ինչի՞ ենք փակում: Բա ո՞նց... կուպակներն անցկենան...»

— Ինչի՞ կուլակները: Միջակները կանցկենան: Ո՞նց կթողանք: Հետո՞ հրահանգ ունենք, ջանքմ...

Ի՞նչ հրահանգ էր, և արդյո՞ք հրահանգը լավ էր հասկացել Օրուշը, բայց այն օրից, ինչ Հեյդարը բավական թափանցիկ հասկացրել էր Օրուշին կուլակների սպառնալիքը, սա գլուխը կորցրել էր:

— Ի՞նչ հրահանգ ա,— հարց տվեց Ռաշիդը,— հրահանգն ասում ա հողերը տվեք կուլակներին:

— Այ տղա, ո՞վ ա հողը տալի կուլակներին: Հողկոմի կազմի մեջ հրես ես կըլիմ, Ջաֆարը — էդ հերիք չի՞:

— Բա որ հասարակությունն ուրիշ ցուցակներ բերի՞:

— Բա դու էլ ասում ես հասարակության բերանը փակե՞նք,— բարկացավ Օրուշը,— տեսնե՞ք ի՞նչ ա ըլում ժողովում: Ռաշիդը բուռն կերպով բողբոջեց այս մտքի դեմ:

— Դուք կուլակներին կանցկացնեք:

Բոլորը վրդովվեցին: Վերջերս Ռաշիդին շատ էին մեղադրում, որ նա ճնշում է գործ դնում բջիջի վրա, ինքնասածի է, հիմի էլ բողբոջեցին, որ նա ուզում է ճնշել նաև գյուղի հասարակության կամքը, որ նա պարզապես բռնանում է ամենքի վրա:

Եվ այս մտքով էլ գրեցին շրջանային կենտրոն:

Շրջանային կենտրոնից գրություն եկավ, որով խորհուրդ էին տալիս Ռաշիդին՝ զսպել իրեն և լսել ընկերներին: Ռաշիդն էլ լռեց:

Հողկոմի ընտրության կամպանիան անցկացնելը հանձնվեց բջիջի «չափավոր» անդամներից մեկին, Միրզային, որի միջոցով Օրուշը շափավորում էր թե՛ տաքագլուխ Ռաշիդին, և թե՛ բջիջի մյուս շատ երիտասարդ անդամներին:

—

Ձյան մեջ ընկել է գարնան ցեցը, հալումաշ է լինում: Գետինը լճափին խավարել, գոմշի նման քրտնել՝ շոգի է արձակում:

Հողը տեր է կանչում: Կեսգիշերին օդում զանգատավոր կղզում են կուռնկները:

Գյուղխորհրդի շենքի բակը կաթսայի պես եռում է: Ժողով է: Պատերի տակ իրար գլխի են բարձրանում:

Գյուղխորհրդի նախագահ Ջաֆարը և Օրուշը առաջարկվեցին

քվեարկվելու, որ հողկոմի կազմի մեջ մտնեն. հասարակությունից էլ երեք հոգի պիտ ընտրվեին:

Միրզան՝ ժողովի նախագահը, բացատրեց.

— Խալիսն ում կուզի, ում ճանաչում ա, ով որ գեղի շահերն իր աչքի լսի պես թանկ ա ասում՝ նրան էլ պտի ընտրի: Հասկացա՞ք՝

— Հասկացա՞նք,— ձայն է տալիս ժողովը միաբերան:

Բայց ո՞վ է գյուղի շահերն իր աչքի լսի պես թանկ համարում:

Յուսուֆը ձայն է ուզում.

— Մեր գեղի հողերը տեսակ-տեսակ չեն: Մեր մարդիկ են տեսակ-տեսակ: Հողը մին ա, հողը հալալ ա, մարդն ա հարամ: Էնպես մարդ պտի ընտրենք, որ մեր մեջ արուն չգցի: Չքավորը շատ ա լացել հարուստի ձեռին: Էլ հերիք ա:

— Հա՛, շատ տեղին կաթացրիր,— ձայն տվեց Դուրսունը,— հարուստը մեզ պետք չի:

Բայց բազմության մեծ մասը բերանը ջուր է առել և ունքերի տակից նայում, սպասում է:

Դուրս եկավ կապկանման Հեյդարը: Նա աղջկա պես խուշիկ-մունջիկ գալով՝ քաղցր-մեղցր դարձավ ժողովին.

— Յուղաշա՛ր: Մեր գյուղը շատ կարիքներ ունի: Ամենից շատ նրա կարիքը հողի մշակությունն է: Մենք գութան, լծկան քիչ ունենք, սերմացու շատերը չունեն, հողերը մնում են պարապ: Շատ հող ստանալն էլ նույնն է, ինչ որ շտանալը՝ քանի որ մեզանում չքավորը չի կարողանում ինքը մշակել:

— Թող տան, մենք գիտենք մեր բանը,— կօհեց Յուսուֆը:

— Սա ո՞ւմն ա քնացնում,— անհանգստացան մի քանի չքավորներ:

— Յուղաշա՛ր,— կաթվածահար ժպիտը արատավոր, կնճռոտ դեմքին՝ գուհեց Հեյդարը,— ես ուզում եմ հողը չքավորի ձեռն անցնի: Բայց ես ուզում եմ, որ հողաբաժանությունը կատարեն հողից բան իմացող մարդիկ: Մեզ խելացի մարդիկ են պետք, գյուղի բանիմաց մարդիկ են պետք:

— Մեզ պետք են էնպես մարդիկ, որ մեր մեջ արուն չգրցեն,— գոռաց Յուսուֆը:

— Հա, դրուստն էգ ա,— ասաց Մուխտարը:— Հոգի մեզ արուն կա:

— Հողակուշտ մարդիկ են պետք,— խառնում է Խուրշուղը:

— Բ՞նց, կուլակնե՞ր,— ձայն տվեց Ռաշիդը բազմության մեջ հետու տեղ կանգնած:

Հեյդարը կարթը գցեց.

— Մեզ կուլակներ պետք չեն, մեզ պետք են էնպես մարդիկ, որ չքավորին ու միջակին իրար հետ կապեն, իրենք մեջը շահ չունենան և որ գլխավորն է՝ հողագետ լինեն, փորձված:

— Դրուստ ա,— գոռաց Բայրամը:

Այս չքավորները, իսկական չքավորների տպավորություն են թողնում: Ժողովը լսում էր նրանց:

— Անունենե՛ր ասեք:

— Անունենե՛ր, անունենե՛ր:

Ժողովը ժպտում է, շփոթվում:

— Ալի-Նարի,— ասաց մի գյուղացի ու ինքն էլ զարմացավ իր ասածի վրա:

— Հա՛, գտա՛ր... չորանը հողագետ... Մարդիկ ասեք, որ քան հասկանան:

— Իսքանդար աղա,— ձայն տվեց մի սեխանման մարդ:

Բոլորը ծիծաղեցին...

Օրուջը հանդարտ բացատրեց.

— Ընկերներ, չորանն է՛լ կարող ա, բատրակն էլ, չքավորն էլ, միջակն էլ: Բայց բանն էդ չի: Հողաբաժանությունը լուրջ բան է: Լոխմա չի, որ անուշ-անուշ բաժանեք: (Ծիծաղ): Արտատեղի-րը, հողի տեսակը, զըռ հողը, ուժից ընկածը... շատ բան կա, ընկերներ:

— Դրուստ ա,— զորքի պես ձայն տվեց ժողովը միաբերան:

— Դրա համար էլ պետք ա ընտրենք էն մարդկանց, որ նախ՝ հողաճանաչ, փորձված են ու հետո՝ հալալ գործի կանցնեն ու ձեր շահերը կսլաշտպանեն, ձեր մեջ կռիվ չեն գցի:

— Յուղաչ Հասանը,— ձայն տվեց քաջալերված Խուրշուղը:

— Աղաներից հեռու,— պատասխանեց Ռաշիդը:

— Յուղաչ Հասանը ձայնազուրկ չի,— քաղցր ծորեց Հեյդարը կանացի ձայնով:— Նա կարող ա ընտրվի ու ընտրի:

— Ամեն միջակ իրավունք ունի,— ասաց Զաֆարը:

— Ի՞նչ անենք որ միջակ ա,— գոռաց Յուսուֆը.— Հասան բեկը հարուստ ա, հարուստների կողմն էլ կքաշի, մեզ պետք չեն հարուստ միջակները:

— Դրուստ ա,— հաստատեցին չքավորները,— Մուխտարը, Դուրսունը, Կադիրը:

— Թե Հասան բեկի պես միջակները պետք է ընտրվեն՝ միջակներին է՛լ չենք ուզում,— գոռաց Յուսուֆը.— Մենք չքավորներս կընտրվենք, ձեզ չենք հարցնի: Էդպես չի՞, յուղաչա՛ր:

— Էդպես ա,— ձայն տվեց ժողովը միաբերան, բայց անորոշ շեշտով: Ու սկսեցին դավալը.

— Այշի, կորցրո՛ւ, միջակի հերն էլ անխժած:

— Զորանք ըլի, միջակը չըլի՛:

Անկյունում բազմությունը կծիկ դառավ, իրար գլխի հավաքվեցին:

— Արո՛ւն կթափենք՝ թողալ չենք թե միջակ անցնի: Ռա՛ղ արեք:

— Դո՛ւք ուղ եղեք — գոռում են միջակները:

— Ընկերներ, ընկերներ, ընկերներ... Ամոթ է, իրար մի՛ վիրավորեք: Հանգի՛ստ:

Օրուջը բացատրեց.

— Ընկերներ, մենք իրավունք չունենք այդպես վիրավորելու միջակին: Միջակն էլ մեր բարեկամն ա: Մենք մեր կուլով միջակի դեմ՝ կարող ենք նրան խրտնացնել, քցել կուլակի կողմը: Ընկերներ, մենք էդ իրավունքը չունենք, ընդհակառակը՝ մենք ուրախ ենք, որ մեր բարեկամ միջակը գա և մեզ հետ աշխատի:

— Դրա համար էլ ուզում ենք, որ Հասան բեկն անցնի Հող-կոմի կազմի մեջ — գուցեց վճռական շեշտով Ղասումը, այլևս չվախենալով իր «միջակությունից»:

— Յուղաչար՝ Հասա՛ն, Ղասո՛ւմ, Մուսա՛, — ձայն տվին կազմակերպ շեշտով Խուրշուղը, Բայրամը և մի քանի համախոհ-ներ Հասան բեկի թայֆից:

Պայանծված բերանները բացվեցին և սկզված թշնամու պես, որ վիճակի փոփոխությունից սիրտ է առնում՝ ժողովականների մեջ Հասան բեկի կողմնակիցները հանկարծ հարձակվեցին.

— Հասա՛ն, Ղասո՛ւմ, Մուսա՛.—

Գրան հետեւեց ուրիշ անունների խառն ու անկարգ համադար-
կեր:

Ժողովը տակնուվրա եղավ: Հնչվեցին անուններ, որ երբեք
հասարակութեան մեջ չէին հնչվել և կարծես անհարմար ու ծիծա-
ղելի էին:

Բայց այդ բոլորի մեջ սկսեց տոն տալ Խորշուղի խմբի ձայ-
նը, որ անսպասելի կերպով աջողութուն ունեւր:

— Յուրաշ Հասան, յուրաշ Ղասո՛ւմ, յուրաշ Մուսա՛,—
սկսեց տարափել ժողովը համարյա միաբերան: Միջակներն
ականջները սրեցին: Զոռն անցնում է կուլակների կողմը:

Ռաշիդը մեջ ընկավ, որ խանգարի այդ թեկնածութունը և
չբավորական խմբակից մարդիկ առաջ քաշի: Բայց ստացվել էր
տարօրինակ բան: Հասան բեկի կողմն էին անցել չբավորները:
Խորշուղին իր խմբով հայտնի էր իբրև չբավոր: Միջակներն էլ,
Սոյունը, Ղամարը իրենց խմբով շրջվեցին կուլակների կողմը և
ծանրացրին հակակշիռը: Ռաշիդը նոր զգաց, որ ուրիշ բան է
հաղթել կարծելը, ուրիշ բան՝ հաղթելը: Պարզ է՝ իրենք կազմա-
կերպված էին: Օրուջն էլ սկսեց տատանվել: Գյուղի դիմադրու-
թյունը ազդեց նրան: Նա գլուխը բոլորովին կորցրեց՝ միաժամա-
նակ անդրադարձնելով գյուղի բոլոր դժվարութուններն իր ան-
ձում...

— Յուսոֆ, Մուխտար, Ռաշի՛դ,— գոռացին այս կողմից
մի քանի հոգի:

— Հասան, Ղասո՛ւմ, Մուսա՛,— թնդաց ժողովը:

Ստիպված քվեարկեցին: Անցան վերջինները... Մափահարու-
թյունից թնդաց շենքի բակը:

Յուսոֆը բերանը բաց նայեց.

— Այ տղա, էս ի՞նչ դուս էկավ...

— Էն դուս էկավ, ինչ որ միշտ էլ դուս ա էկել,— դառն շեշ-
տով փափախր զարկեց իր թևին Մուխտարը և հեկուկ դուրս փնաց
ժողովից:

Չբավորները խմբվեցին Օրուջի գլխին և ինչպես մեղրա-
ճանճեր սկսեցին խայթել նրան:

— Էս ի՞նչ բան էր:

— Բան չկա, բան չկա, մենք մեջն ենք,— ասաց Օրուջը կո-
տրրված,— միջակին չպետք է խրատացնենք:

Ժողովը դեռ տաք էր, չէր ցրվում: Հասան բեկը շրջապատվեց
բազմութեան ալիքով, որ ծփալ սկսեց նրա շորս կողմը. այդտեղ
էին և կողմնակիցները, որ հեռում էին, շարացած չբավորները: Նաև
հարուստ թշնամիները, որ շարախնդաց նայում էին Հասան բեկին:

— Այ՛լի, հալալ ախպոր պես կբաժանենք հողը, գեղը խաղա-
ղութուն կգցենք,— ասաց Մուսան:

— Ինչալլա՛հ,— ձայն տվին մի քանի կողմնակիցներ:

— Բա չբավորի բա՛նը ոնց ա ըլելու— կիսաձայն շնջաց
մի ծերուկ:

— Էնքան հող կտանք չբավորին, ո՞ր աչքը լիանա,— խոսեց
ավելի բարձր Ղասումը, որի գիշատիչ աչքը ճպճպում էր հուզ-
մունքից,— էնքան տանք, որ ցանել չկարենա:

— Առաջ չբավորին կկշտացնենք, վերջը հարուստին,— պըն-
դեց Մուսան:— Վախի՛լ մի՛ք, օղուլար: Հասան բեկը ձեր հերն ա,
հալալ բարեկամը...

— Կապրենք՝ կտեսնենք,— ասաց մի կասկածամիտ հակա-
ռակորդ և հեռացավ:

— Ինչալլա՛հ, ինչալլա՛հ.—

Արձանագրութունը վերջանում էր: Վեր կացավ տեղից հա-
սան բեկը և իրեն զամված հայացքների դիմաց աչքերը գետնին
գցած, հանդարտ եղանակով ասաց.

— Օղուլա՛ր, յուրա՛շլար, կարդա՛շլար... Հողը հողագործին
ա, հողագործը տերութեան: Ես գնացող եմ, դուք՝ մնացող: Թե
կարացի մի օգուտ կտամ ձեզ, էնպես կգնամ: Իմ աչքը հողից
կուշտ ա, ես չբավորի աչքը կկշտացնեմ: Էդ ա իմ մուրազը:

Ժողովը ծափահարեց: Մափահարեց միանգամից, իրենից
անկախ, կարծես մի անծանոթ ուժ մտավ նրանց ձեռքերի մեջ և
ստիպեց ակամա ծափահարել:

Ուժը շուտ եկավ, թվանքի կոթն անցավ Հասան բեկի թայֆի
ձեռքը:

Կեռնային ժողովուրդը բնազդորեն, ձեռաց կռահեց գալիքը և
տազ արեց:

— Այ՛լի, աշխարհք ա, ո՞վ ա իմանում ոնց շուտ կգա:

Մի մասը հուսադրվեց, մյուսը սպասեց թե ինչ դուրս կգա,
իսկ չբավորները մոմոացին և լռեցին: Միայն Յուսոֆը ձայն

տովեց. «Սառը կացնին ասամ՝ էնդուր ես կարենում ինձ կտրել, որ կոթոյ ինձանից աս»:

Ժողովը դուրս պայթեց դռնից, թափված ջրի պես տարտղնեց գյուղի զանազան ուղղութեամբ և ճապաղեց:

Հասան բեկը, Ղասուժը, Մուսան ընկան հողկումի կազմի մեջ...

Հողկումն իր նիստերն սկսեց: Եկան գավհողբածնի ներկայացուցիչը, գավառային երկրաշափը, շափրարը և անցան գործի:

Ձննում են, շափում հողերը: Ամբողջ օրերով գյուղացիք գնում-գալիս են գյուղխորհուրդ, հանդերը, դավառում, գոռում, հայհոյում...

Չափրարը լուռ է: Հայված քմծիծաղը դեմքին՝ նա կիսաձայն խոսում է երկրաշափի հետ: Սա ծոծրակն է քորում, իսկ էքսպիրտ Հասան բեկը՝ Ղասուժի ու Մուսայի հետ վարժ լեզվով և բանիմացի արագութեամբ ցույց են տալիս հողերը, տեղերը, հատկութեանները:

Ու էլի նիստեր, փսփսոցներ...

Հողկումի կազմում Օրուջը բավարկան պասիվ դիրք բռնեց: Գործի գլուխն էին անցել Հասան բեկն ու իր արբանյակները, որոնց գործիքը, սակայն, Ջաֆարն էր՝ գյուղխորհրդի նախագահը — մի խորամանկ, բայց չերևացող արարած: Հողերի նորմաների մասին սա էր տեղեկացնում Օրուջին, որ շատ քիչ էր գնում հանդը անձամբ ստուգելու: Ըստ շնչերի նորմաները խախտված չէին, և Օրուջը դրանով էլ հանգիստ էր... Փաստական գրութեանը գիտեին Հասան բեկն ու իր արբանյակները...

Իսամայիլովը գնացել էր Երևան, և նրա տեղը պիտի նշանակվեր նոր կուսհրահանգիչ:

Գյուղում սպասում էին նորին, բայց սա էլ ինչ-որ ուշանում էր:

Ռաշիդի մեջ բան բեկվեց և բեկվեց միանգամից, ինչպես ամբողջական մարդու մեջ, որ նման է պողպատի՝ միաձուլումուր, բայց բեկման մեջ որոշ:

Նա գիտեր, որ հասարակական ժողովի վճռի դեմ կարելի էր պայքար սկսել: Դրա համար կար գյուղխորհուրդ, կուսբյուր: Գործը

կարելի էր գցել շրջգործկոմ, կուսքարտուղարին, ավելի հեռուն, — բայց նա զգաց, որ իր շրջապատը դեռ շատ թույլ է ուժեղ գործ բռնելու համար: Հասկացավ, որ այս գործումն էլ, ինչպես իր բարակութեան դաման միջավայրում, պետք են դիմացկուն, վճռական մարդիկ: Դրա համար էլ ժողովից հետո լռեց, ներս գցեց զայրույթը, վճռեց կուլակների դեմ ձեռնարկել շքավորների կազմակերպման, նրանց հետ սկսելու նոր պայքար, նոր գործ, հիմնավոր գործ...

Հողերը բաժանեցին: Հողատերերը գնացին կանգնեցին իրենց արտերի գլխին: Ժպտալից մտիկ տվին փոզած, պառկած հողին, որ իր գոմշի դուրս պրծած աչքերի խավար իմաստով նայում է իր նոր տերերին: Այդ աչքերի մեջ և՛ խոստում կա, և՛ սաստում: Ո՞ւմ է սիրում հողը, չես իմանում: Դառն, հին մտքերն են կըրկընկում նոր հողերի տեր շքավորների գլխում:

— «Ո՞նց եմ հերկում, ո՞նց եմ ցանում, ո՞նց հնձում...»:

Եվ շքավորները իրար հետևից վարձով են տալիս իրենց հողերը կուլակներին... շունչը 6 կոտ:

Դրա փոխարեն բուճացել է Հասանի թայֆան: Նրանց ուժեղ գովաճանները տաքացած պատռում են անծանոթ հողերը: Մուսուփուս հողի մեջ են գցում սերմը և դրա հետ էլ մի գաղտնիք: Հողը անձայն պահում է այդ ավանդը — գաղտնիքը:

Հողաբաժանութունը մոռացվեց կարծես: Հասան բեկի թայֆան տարեց-տարի կատաղում է:

Աչք են բաց արել նրա բարեկամ շքավորները: Հասան բեկի գովաճաններն ու լծկանները նրանց բավական օգնել են: Սերմից էլ բաժին է հանած:

Օրերն սկսեցին հաջորդել անաղմուկ, իրար նման:

Գյուղի որջանման խրճիթներից ելումուտ էր անում մրկված, դարմանաթաթախ, փոշոտ, պատառոտված առօրյան և հայհոյելով, փնթփնթալով ու գոռալով աշխատում:

Չքավորներն իրենց հացի հետևից լինելով՝ մոռացան գյուղի ընդհանուր, հասարակական խնդիրները, դպրոց, խրճիթ: ՓՕԿ-ը ճապաղել էր, ֆոնդերը լզարել: Կոոպերատիվը քաշ էր գալիս մի կերպ: Կարծես մի ձեռք մթան մեջ սողում, քայքայում էր սրանց:

Գյուղի գործերը մեքենայացան մի շարք մարդկանց ձեռքին: Նրանք բանում են կուլակների համար:

Ռաշիդն ու Յուսուֆը համառոտեցին և ճար-ճուր անելով հերկեցին իրենց արտերը և ցանեցին: Բայց մյուսները՝ Մուխտարը, Ղարան, Գուրսունը և հարյուրավոր չքավորներ իրենց հողերը կամ կիսարոով, կամ վարձով տվին կուլակներին, միջակներին:

— Հարուստն էլի՛ պետք եկավ,— ասաց դառնացած Ղարան: Նրա կողքին նստած Մուխտարը բերանը ծոցե.

— Այլի, մենք շնորի պես ենք. կզնանք գեղի միջին դես-դեն կհաշանք ու էլի կգանք կուլակի դուռը...

— Էդպես ա ըլել, էդպես էլ կըլի:

— Էդպես ա ըլել, էդպես չի ըլի,— կտրեց Ռաշիդը,— ուրիշ բան կըլի:

— Ոտներս էլ չի ըլի,— քմծիծաղ տվեց Մուխտարը:— Հրես հող էլ ունեմ, ամա էլի կուլակի դուռն բատրակ եմ:

— Էդ նրանից ա, որ հողդ չես վարում, չես ցանում: Ադա՛, կուլակն ուզո՞ւմ ա, որ դու հողդ վարես-ցանե՞ս, լծկան ունենա՞ս էդպես որ ըլի, ո՞վ ա նրա հողը վարելու, ո՞վ ա նրա լծկանը վարձով վերցնելու: Կուլակին բատրակ ա պետք, բատրակ, գըլ-խի ե՛ս... Քանի բատրակը կա՝ կուլակը կա, քիչ-քիչ պետք ա բատրակը հողին կպչի, որ կուլակը վերանա:

— Բա կուսակցությունն ինչ ա անում,— հարցրեց Մուխտարը,— կուսակցությունն ո՞ւր ա:

— Այ, էդ որ ասում ես՝ կուսակցությունն ուր ա — կուսակցությունը հենց ըդտեղ ա, էդ ա, գտար: Այլի, կուսակցությունն ի՞նչ ա. կարծում ես մի քանի հոգի՞ն են: Կուսակցությունը մենք ենք, բոլորս, ես, դու, սա, չքավորը, միջակը, որ կաղնած ենք կուլակի դեմ: Սպասի՛՛ հլա...

— Այլի, սպասերն էլ անցավ, ժամանակն էլ: Հրեհն սաղ հանդը բռնել են. էս արտն ո՞ւմն ա — Հասան բեկինը. էն արտն ո՞ւմն ա — Հասան բեկինը:

— Գեղի բանը միշտ էդպես ա,— հաստատում է ծերուկներից միինը:

Ռաշիդը կատաղում է, շրթունքները կրծում:

— Տեսնո՞ւմ ես, Յուսուֆ, ոնց են խեղճացել:

— Նո՞ր ենք խեղճացել. խեղճը միշտ էլ խեղճ ա:

— Այլի, սրանք տղամա՞րդ են, փափախ ունեն գլխերի՞ն Գնանք. — նեղանում է Յուսուֆը:

Հեռանում են:

— Էդ ա է՛, կզնա՛ք. ուտողներդ քիչ, ձեռներդ տաք տեղից ա դուս գալի. բա մե՛րը չեք հարցնում, որ թրթուրի պես խժոռւմ են, խժոռւմ... Հարցրու դո՛ւ... որտեղի՞ց...

Գայլը պտտվում է հոտի շորս բոլորը, այսօր մի ոչխար, վաղը մի այծ, և ախորժակը կատաղում է: Սիրտ է առնում հաշոդությունից և սկսում հաճախ երևալ: Եվ մոտեմոտ է անում: Արյունը գայթակղիչ է. գայլը հարբում է նրա շոգուց, աչքերը մշուշ են լցվում:

Եվ ահա օրը ցերեկով իրեն գցում է հոտի մեջ:

Ահա այդպես՝ տնտեսապես ուժեղացնելով իր դիրքերը՝ 1926 թվին թայֆան ընտրել տվեց Հասան բեկի որդի Քյարամին գյուղխորհրդի քարտուղար: Բացի այդ, իր բարեկամներով ցանցեց գյուղի կազմակերպությունները՝ ՓՕԿ, գյուղվարկ, կոոպերացիա...

Չզարմացան: Այդպիսի անակնկալներ շատ էին տեսել լեռնալին գյուղում:

Գյուղը հիշում է շրջանի հին գլավա Մաշադի Սոյունին, որի կազմակերպությունը հեռու գյուղերից տավար էր քշում կորցնում անտառների թավուտներում, և «գլավին» գիշերը տիրոջը իր մոտ կանչելով խոստանում էր գտնել, եթե «գտնելու ծախսը տերը հանձն առներ»: Վարձն ամբողջ արժեքի կեսն էր, մեկ երրորդը...

Եվ «գողությունների» այդպիսի արագ բաց անելուն ի պարգև Մաշադի Սոյունի կուրծքը զարդարված էր նահանգապետից տված բազմաթիվ մեդալներով:

Մարդասպանություն, աղջիկ փախցնել, արյան վրեժ, դատարանների շենքերի մաշումն, կլլաուղներ, սուտ երգում, բանտ, Սիրիբ, հետո այնտեղից փախուստ, դաշաղություն, կաշառք, գարձյալ արյուն...

Գյուղը այս բաները հիշում է...

«Այլի, շատ մի՛ խոսի... ո՞վ ա իմանում ի՞նչ կա տակինս»:

Ռաշիդը շատ չի խոսում: Գլուխը կախ Հասան բեկի գոմն է մաքրում, տավարը ջրում, գնում տոմս: Երբեմն նրան կարելի է տեսնել հանդում, ձեռքերը գրպանները դրած՝ շվացնելով ման է գալիս: Կանգ է առնում մի արտի գլխին, նայում, տնտղում, կո-

շիկով փշրում հողի կոշտը ու անտարբեր նայելով հեռուն, անցնում-գնում:

Հետո սուլելով նստում է մի քարի, ծխում է իր համար: Հասկերը գլուխ գլխի են խփում, փսփսում: Մղրիդներն արագ-արագ խփում են սալին իրենց մուրճիկները:

— Ի՞նչ ես անում, Ռաշիդ,— հարցնում է շորան Ալեքսիբը ձիով սարից իջած՝ այգտեղից անցնելով:

— Ոչի՞նչ... հենց էնպես...

Ու սուլելով մեղմ նայում է հեռուն:

Ալեքսիբը գնում է: Ոտքով նրա հետ եկող Յուսուֆը ետ է մնում և մտաբանում Ռաշիդին:

— Հս ո՞ր ես եկել հանդը, ի՞նչ կա:

Ռաշիդը կանգնում է, բռնում նրա ուար և շուռ տալով մյուս կողմը՝ ձեռքով ցույց է տալիս մի արտ:

— Հս քանի՞ կոտ կըլի:

— Մեկ, Հը՞, Չկա՞:

— Սը՞... մեկ օրավար էր, երբ ես էի հերկում: Չեմ իմանում հմի ով ա հերկել: բայց ա՛յ, էն մեծ կտորը ավելացրել են:

— Ո՞ւմ արտն ա:

— Ղասումի արտերից միսն ա:

— Բա Հասան բեկինը, Մուսա աղինը...

— Փորները լավ տոզել են: Բուրբը չափեցի աչքով: Նորմից ավել ա:

— Ա՛յ ես դրանց...

Նստեցին, ծխեցին:

— Բա էս էսպես էլ պտի մնա՞,— հարցրեց Յուսուֆը Ռաշիդի գեմքը զննելով:

— Չի մնա:

Ու Ռաշիդի աչքերը պսպղացին:

— Էդ օձի թագավորի գլուխը չքավորի ոտի տակ պիտի չբռչիս ել տամ... Հլա չավա՞շ...

Գյուլխորհրդի շենքում չքավորական խմբակը աղմկալից մի ժողով էր սարքել. Ռաշիդը գրել էր Հասան բեկի գեղժումների հարցը հողերի բաժանման մեջ, և Յուսուֆի հետ ցեղացած երկաթով տոգորում էին ժողովը:

Ռաշիդն ուզում էր չքավորության խոսքը տանել կուարջիչ:

— Բա կուլակները միջակի մորթի հագնեն ու գան ընկնեն խալխի մե՞ջ — հրահրում էր Ռաշիդը, — բոլորի արտերը մթան միջին կճանաչեմ: Չափն էլ գիտեմ, շունչն էլ գիտեմ: Դրանք զավթել են հողերը, նորմից ավել վերցրել, տվել են իրենց բարեկամներին՝ տոզում, չքավորը մնացել ա դառն ու գատարկ: Հերիք չի՞: Ի՞նչ եք սսկվել:

— Այ տգա, ախր մենք էլի ենք դրանց հետ գործ ունենալու, — կախում է ծերուկ մի գյուղացի, — տեսեք, կմնաք դատարկ: Ախր դրանք որ մեզ լծկան, գուժան շտան՝ էլ տեղներս ո՞վ ա...

— Մեր տերը մենք ենք, — մեխեց Ռաշիդը. — էստեղ կուսակցություն կա, վախիլ միք, մենակ չեք:

— Դրուստ ա ասում, — սիրտ առան մշուսները, — էս ո՞ր ժամանակն ա, էս ո՞ւմ իշխանությունն ա, մերը չի՞: Բաց անենք գործը:

— Բողոք տանք հողբաժնին. ի՞նչ իրավունքով են կուլակները նստել մեր հողերի վրա:

— Ընկերներ, ի՞նչ եք ասում: Թե հմի էլ սուս կենաք, ասեք թե բողազներս պետք ա դուս ճղենք: — Վեր կացավ տեղից մի հասակավոր գյուղացի, որի դեմքին միայն մերկ ջլերն էին մնացել, ախքան լղար էր նա, և հանդարտ ասաց.

— Ոտներդ գնում եք օձի պաշին, գլուխը թող անում, որ ազատ շուռումուռ գա՞ ու ետ գառնա կծի՞ ձեզ... Գյուլխորհրդի նախագահ գտեք հլա...

— Նախագահը կա՞, հրես նախագահը, — տաքացած գոչեց Յուսուֆը, որի բարկությունը մի վայրկյանում կայծակի նման շեշտեց նրա մեջ այդ միտքը՝ արագ, հեշտ, հասկանալի, — ա՛յ ձեզ նախագահ, — ցույց տվեց Ռաշիդին. — հողերն է՛լ գիտի, աղաներին է՛լ ա ճանաչում: Հրե՛ս, նախագահը կա, գու թո՛նն ասա, ի՞նչ ես ասում:

— Առաջ նախագահն ընտրեցեք, դրեք մեր մարդը, թող նա գնա բաց անի հողի գործը:

— Ահա՛ ընտրեցինք՝ էդ է՛լ ենք անում, էն է՛լ:

— Դրուստ ա, էդպես ա, — գոռում է ժողովը ուրախացած:

Նախագահը ժպտում է և կարգի հրավիրում տաքացած Յուսուֆին.

— Լա՛վ, Լա՛վ, ժամանակը կգա՝ կանենք: Քեզ կընտրենք նախագահ:

— Չէ՛, նախագահը սա պտի ըլի: Սա առաջից կգնա՛, սա իր գլուխը կդնի:

— Անցնենք հարցին...

— Յուզաշլար, բողոքո՞ւմ ենք:

Ղովոցն ընկավ:

— Տեսե՛ք, միասին պտի ըլենք, — գոռաց Յուսուֆը, — համաձայն եք... ո՞վ ա դեմ: Ոչ ո՞ք: Շատ լավ: Ո՞ւմ ուղարկենք, ո՞վ կազմի դիմումը:

— Ռաշիդը, Յուսուֆը, Աշրաֆը:

Վճիռն արձանագրվեց: Լեռնցի շքավորությունը լավ գիտեր, թե ինչ է նշանակում բացարձակ դուրս գալ այն լեռների խորշերում, ուր դաշույնը սողոսկելով բարձերի, դեզերի տակ, պատերի արանքներում, փայլում է մութ գիշերներին:

Եվ բնազդաբար իրար կպան, բարձր գոռացին իրար սիրտ տալու համար:

Գեմքերը կարմրած, քրտնած, հեալով դուրս եկան տաք ժողովից:

Բողոքի ամպը մոմռալով շքավորների ժողովից դուրս եկավ, գոռաց գյուղի ընդհանուր ժողովում: Գյուղն իրար անցավ:

Երբ Հայդարը վազելով գնաց Հասան բեկին հայտնեց լուրը, թե շքավորական խմբակը բողոք է տվել գյուղխորհրդին հողերի մասին, Հասան բեկը օձի կծածի պես վեր թռավ և գունատվեց.

— Ո՞վ է բաց արել...

— Ռաշիդը:

Հասան բեկն սկսեց անցուդարձ անել օդայում: Նրա աչքի առաջ այժմ պարզ կանգնեց իր բատրակի կերպարանքը, որ պոկ չէր գալիս իր երևակայությունից: Այո, լավ էր դիտել իր ժամանակին «իր ծոցում տաքացած օձին», բայց բանի տեղ չէր դրել Ահա թե որտեղ պետք է նա ճեղքը ծածկեր...

— Հը՛մ, էդպես էր եղել բանը...

Բուքերը տեսած հին ճամփորդը առանց յափնջու ճամփա էր ընկել սարում: Արև է, ասել էր, ի՞նչ պիտի պատահի. մինչև բուքը

վեր կենա՝ կանցնեմ սարը: Ահա՛ մարդկային թուլության հետևանքը — բուքը վեր կուցավ:

— Կանչի՛ր Ղասումին... շո՛ւտ:

Մինչ Ղասումը կգար՝ ներս մտավ Հասան բեկի հարևանը, որի հետ Հասան բեկը շատ էլ մոտ չէր:

— Էս ի՞նչ ա արել քու Ռաշիդը: Միթամ շնչապատկանից ավել հող ես տվել սրան-նրան: Վա՛յ, անամոթ: Գրան որ անդանակ մորթես՝ քիչ ա:

Հասան բեկը հավաքեց իրեն.

— Ռաշիդը գիժ ա. գիժ-գիժ դուրս ա տվել: Ես նրան բան չեմ անի, ամա ինքը կամաչի: Տան չրաղը էդպես կըլի: Աստծուց թող ամաչի:

Հարևանը գնաց ժողով: Իսկ հեռվից հասնում էր գյուղացիների ձայնը.

— Այ տղա, եկե՛ք, եկե՛ք, ժողո՞վ...

Շնեքն իսկ հաչեցին անսովոր կերպով:

Եկավ Ղասումը: Նրա մի հատ աչքը միայն մի բան էր ասում, մի սառը և դաժան բան: Վրե՛ժ:

Գյուղխորհրդի բակը խցկվել, խեղդվում էր բազմության հոծ զանգվածից:

Նորությունը նորություն չէր: Նորությունը Ռաշիդն էր, որ սիրտ էր արել հայտաբերելու կուլակների արարքները և գլխից ձեռ վերցրել: Եվ որովհետև ուժ էր շուռ գալիս մյուս կողմը, բազմությունը բնազդով գնում էր լցվելու այդ ուժի մեջ:

Նախագահ Ջաֆարը գոռում էր քրտնամխած, որ կարգ պահի: Սակայն մեղվի փեթակը շուռ էր եկել և մեղուն կասաղել: Սփրթնել է և կոմբիջի քարտուղար Օրուջը: «Ահա քնելու հետևանքը»:

Նախագահ ընտրեցին և ժողովն սկսվեց:

Բայց բազմությունը ալեկոծված է:

— Մեր հացը դրել եք կուլակի բերանը... հողերը զավթել եք, տվել հարուստներին:

— Քյասիբը թողել եք դատարկ...

— Ընկերներ՛, ընկերներ՛, ախր...

Յուսուֆի կարմիր երեսը պայթում է արյունից: Զի լսում:

- Հողաշափ բերեք, թող շափեն:
- Ընկե՛ր Յուսուֆ, ախր շափված հող ա, ո՞նց կարող են...
- Աղալարության, բեկության իսկական վերջը հիմի յա,

հերիք ա, ջաններս բեզարե՛ց...

Ներս է մտնում Հասան բեկը՝ մռայլ, բայց հանգիստ: Հայացքը գետնին է: Ժողովը հորձանք է տալիս գետի պես, վշշում, աղմբկում: Հասան բեկին շրջապատել էին թայֆայի մարդիկ, որ եկել էին հայտնապես կովի տրամադրությամբ: Բայց Հասան բեկը նայում է նրանց և աչքերով սաստում: Նրանք մոմռալով ներս են խցկվում և կանգնում նրա շուրջը՝ պատի պես:

Նրան հարցուփորձ են անում կողքի կանգնածները, և ընդհանուր աղմուկի ալիքներին նա հանդարտ ու հավասար ձայնով խփում է.

— Յուղաշափ, կարդաշափ... հողերն էնտեղ են, դավթարներն էստեղ. նաֆարը 6 կոտ, ավել չեմ տվել: Իմ ընտանիքը 8 նաֆար ա: Գնացեք մտիկ տվեք դաֆթարներին: Թե ավելի կա՝ ավելին ձեզ...

— Ավելցուկնե՛րը, ավելցուկնե՛րը: Է՛ն ասա...

— Ավելցուկ չկա: Ո՞րտեղից... Հետո, կարդաշափ, ինսա՛ֆ ունեցե՛ք... ձեռովս չեմ շափել, ձեռովս չեմ բաժանել... Չափար կար: Ինչ շափել ա՛ էն եմ տվել...

— Բերե՛ք դավթարները, բերե՛ք, հաշվեցե՛ք...

— Յուղաշափ... ախր դա ի՛նչ էստեղ քննելու բան է... լսեցե՛ք...

— Քննե՛ք, գանգա՛տ տվեք, թող գան շափեն... Քանդե՛ք էս բույնը...

Սա առաջին փայլատակումն էր, որ մի բոպե լուսավորեց լեռնային գյուղը, հանդերը, սարերը և իսկույն սուզվեց սև ամպերի մեջ, ու մութը ծածկեց ամեն բան: Գյուղն սկսեց ալեկոծվել, և Զաֆարն զգալով իր մեծ պատասխանատվությունը, ինքնապաշտպանության բնազդով ուզեց սվաղել գործը:

Բայց զարնան գետը ուռեց, կոտրեց իրեն կաշկանդող սառույցը, ընդունեց իր մեջ ուրիշ վտակներ և ահա միաբերան հեղեղելով անցնում է: Քարեր, ժայռեր են գլորվում:

Արագ բարձրացավ շքավորական հեղեղը և արագ է գործում արդեն:

Նախ Զաֆարին և Հասան բեկի որդուն՝ Քյարամին գյուղխորհրդից հեռացնելու հարցը դրին: Բացվեց, որ ՓՕԿ-ի և գյուղվարկային վարչությունների հետ կասկածելի կապեր հաստատելով, քայքայել էր նրանց:

Ռաշիդին ընտրեցին գյուղխորհրդի նախագահ...

Արագ, վճռական, հեշտ:

«Հողի գործը» գնաց կենտրոն...

Մեծ իրարանցում է ընդարձակ հանդում: Ծկել են հողերն ստուգելու: Եվ շնայած ձիավոր միլիցիան շրջում է բազմության մեջ՝ բազմությունը — գյուղի շքավոր, միջակ, կուլակ տարրերը, կոմունիստ, կոմերիտ, ծեր, կին, տղամարդ — թափվել են հանդը և մահակներով զինված ընկել հանդերը, փոթորկի պես պտույտ են գալիս: Հողի հոտը զարթեցրել է նրանց հոգում քնած վայրի բնազդները, և ահա նրանք պոռկվում են նախամարդու լեզվով — գոռում են: Կովի դաշտ է, ու կոհվն այդ դաշտի համար է: Վազում են, գետինը դոփում, և հողը խոփոտում է նրանց սոքերի տակ:

Ռաշիդն անորոշ ժպիտը քթի տակին թաքցրած, ձեռքերը գրպանները, աչքի տակով նայում է շափարարին:

— Գրեցի՞ր: Քանի՞ դուրս եկավ. — ու ժպտում է:

— 30 կտոր:

— Երեք շնչի՞ն, — ակամա բարձր ձայն է արձակում Մուխտարը և բերանաբաց նայում Ռաշիդին:

Գոռոտոցն ընկել է մյուս արտերը. այնտեղից ձայն են տալիս իրար, աչքի շափով շափում հողերը և ինչ որ գիտեին, լսել էին՝ բոլորը կատակ է դուրս գալիս փաստի դիմաց: Հասան բեկի թայֆան ուղղակի բռնել էր ամբողջ հանդը:

— Ժողով արեք. հենց էստեղ հաշիվը տեսե՛ք...

Բայց Ռաշիդը շափարարի և գյուղխորհրդի անդամների հետ անցնում է հետևյալ արտը:

Հասան բեկը դեղնել է, և նրա մի քանի օր շածիված կգա-

կը ջղածգորեն ցնցվում է: Նա ժողատ բերանը կափկափելով բացատրութունն է տալիս.

— Առաջվա շափրարի շափը մեծ էր. հմի փոքր ա: Սխալ կա մեջտեղ: Ծս շափից բան չեմ հասկանում, ջանճմ:

Չափրարը ծխախոտը շրթունքների մեջ սեղմած, աչքերը ծխից կսկծացնելով գրի է առնում շափը:

Ռաշիդը անխոս կանգնած է նրա մոտ:

— Քանի՞ս եղավ:

— Դեսյատին ու կես:

— Գրի՛ 9 կոտ...— գոռում են չքավորները միաբերան:

— Վայ, վայ, վայ, — գլուխը թափ է տալիս Սոյունը, զգալով, որ չքավորները գոռում են:

— Ախր, ասում եմ շափը փոքր ա, չա՛փը փոխեցեք, ջանճմ,— խոսում է Հասան բեկը՝ շարացած նայելով Սոյունին...

— Չափը էն շափն ա...

Ծվ շափրարը ժպտալով ու մշմշալով գրում է:

Բազմութունը հետզհետե օղակում է սրանց:

— Մի իրե՛նը, իրե՛նը շափե՛ք, որ աչքը կոխենք:

— Սպասեք մի Մուսա աղինը պրծնի՛ հրես գալիս են էնտեղ:

— Ա՛յ տղա, Ղասումից բռնեք՝ էկեք հասեք սրան...

— Չափե՛ք, ախպեր, թե ավել ա՛ իրավունք ունենք վերցնելու,— ասում է Սոյունը հեզ ձայնով:

— Աբուռ ունեցեք, հարիֆլար,— գոռում է Հասան բեկը Սոյունի կեղծավորութունից խոցված և արդեն ինքն իրենից ելած,— չե՛ք հասկանում. ասում եմ առաջինի շափը մեծ էր, սրանը՝ փոքր...

— Ո՞նց չէ, հմի է՛լ ես պատռում մեր բերանը: Չափը շափ ա. մեծը ո՞րն ա, փոքրը որը.— գոռում են չքավորները դեմքերի մկանները ուռեցնելով:

— Ամո՛թ ա, քաշվե՛ք, ի՞նչ եք ուզում պատվավոր մարդուց.— վրա են գալիս Հասան բեկի կողմնակիցները:

— Ո՞նց թե, ախր էս անհյու՛ւ բան ա, որ արել են. մեզ խայտառակել,— գոռում է Սոյունը:

Բազմութունը պառակտվեց, կանգնեց կիսաշրջան կիսաշրջանի դեմ ու սկսեց ոռնալ: Մի կողմ Ռաշիդն էր իր չքավորական խմբակով, որ սկսում էր ստվարանալ Հասան բեկին լքած Սոյունի

խմբով — միջակ տարրերով, մյուս կողմ Հասան բեկի թայֆան էր իր 16 կուլակներով և մի քանի «չքավորներով», ինչպես խուրջուղը, Բայրամը: Մի քանի կուլակներ էլ, որ հին թշնամութուն ունեին Հասան բեկի հետ, մեկուսի կանգնած, շարախնդում էին:

Պարզվեց, որ Հասան բեկի թայֆան կուլ էր տվել մոտ 350 դեսիատին:

Չափրարն էլ էր զարմացել:

Գյուղը սփրթնեց: Այդքան չէին կարծում:

Կռիվ շեղավ: Չքավորները շատ էին և արդեն հաղթել էին: Հասան բեկը նշան տվեց իր թայֆայի ակտիվին՝ Ասադին, Ալի-Նարուն, խուրջուղին՝ զսպել իրենց: Թայֆան տազ արեց: Դա նշան էր, որ նա խրամատվում է և պատրաստվում դարանամուտ կովի: Ուստի և նահանջեց...

Մի քանի օր շափում էին: Չափեցին, վերջացրին, եկան գյուղխորհուրդ: Ամբոխը լցվել էր:

Հասան բեկը գունատ, բայց զարմանալի զուսպ նայեց Ռաշիդին.

— Չափրարի մեղքը գցեցիր իմ վրա. էդ ոչինչ: Բայց որ դու, տանս մեծացած տղա, ինձ խայտառակ արիք խալխի առաջ, հալա՛լ ա քեզ, բալամ: Ծս ապրուստ ունեմ, իմ հացը Հողկոմի միջին լեր. շնորհակալ եմ, որ էս հասակիս ինձ ազատեցիր խալխի գործից...

Հետո դարձավ ժողովականներին.

— Միևչև հիմի մենք էինք կառավարում, թող սրանից դենը Ռաշիդը կառավարի: Մեզ հանձնում եմ իրեն, իրեն էլ ալլահին: Մնաք բարով:

Տպավորութունն թողնեց ներկաների վրա: Ոմանք հառաչեցին անորոշ:

Պարտվածը ինչ-որ ներքին ուժ ունեք, որ դուրս էր բերում պարտութունից հետո: Լռեցին:

Հասան բեկը խոստովանքով սրբում էր մեղքը իր ձեռքով և դրանով սրբում էր չքավորների կատաղութունը:

Աղվեսը պոչը քաշեց և գնաց տուն:

Միայն նրա հետևից աչքերի նետը լարած՝ նայում էր Ռաշիդը և հաշվի առնում, թե ո՞ր դարանից կարող է վերագառնալ պարտվածի նետը:

Կոնսյան մարդու բնագրը խոսեց նրա մեջ, և նրա սրտի մեջ մի բան զարթնեց — հետեւել վրեժի շարժումներին:

Բայց բազմութեան աղմուկը և գործերի այդ ընթացի հոգսերը խլեցին նրան այդ խորհրդածութիւնից, և նա ընկավ պտտովոջ հորձանքի մեջ, գնաց լողալով...

Նավթի նվազ ճրագի մարմրոցի և կիսամթան մեջ դողողում էին Հասան բեկի տանը հավաքված մի խումբ մարդիկ, որոնց մեջ էին Ղասոււմը, Մուսան և մի շորս-հինգ ուրիշ հոգի՝ Իսմայիլը, Թաղին, Իսքանդարը և այլ հարուստներ:

Հասան բեկը կայտել էր: Նրա ձայնը սպառնալի շեշտով կտրում էր օդը:

— Աղալա՛ր, դանակը դեմ են արել, հուպ են տվել պատին: Սրանից դենը էլ տեղ չկա: Էսօր իմ նոքարն ա, էգուց քո նոքարը, մեկել օրը նրա նոքարը: Սա գեղովի, աշխարհովի ա: Մեզ ուզում են էնպես ջնջեն, որ էլ իղներս ու թողներս չմնա: Էս հո մեր վե՛րջն ա...

— Բա Հեյդարն ի՞նչ ա ասում,— հարց տվեց կուլակներից ամենատեղյակը՝ Թաղին:

— Բանն էնպես չի ծոված, որ Հեյդարը դրստի: Էստեղ խելք ա պետք: Խե՛ղք բանեցրեք: Մեր նոքարները մեր գլխի տերն են դառել... Մի տարի առաջ թե հարուստ ու աղքատ կար, ու հարուստը աղքատին բաժին էր հանում, հիմի աղքատին էնպես ա հարստացրել՝ որ չի թողնում, թե հարուստը աղքատի պես էլ ապրի: Զնջել են ուզում մեզ, գլխի՞ եք. թե չէ: Դանակը ոսկորի՞ն ա հասել: Ի՞նչ եք ասում, աղալա՛ր...

Ղասոււմն իր մի հատիկ աչքը տնկեց բոլորի վրա:

— Քյալբալան գրուստ խոսեց: Էդ ա՛՝ երկար խոսելու քան չկա էստեղ — ինչ: անկու եք՝ արեք:

— Ինչ պտի անենք, ասեք՝ անենք,— խոսեց Թաղին,— Հիմի մենք մի կրակի մեջ ենք ձեզ հետ էրվում:

Մյուսները հավանութիւն տվին:

— Հախ ասածու, էդպես ա...

— Կկաղնե՞ք մեզ հետ, քոմակ կանե՞ք,— հարցրեց Ղասոււմը սփրթնելով:

— Կկաղնե՞ք, էլ փնջե՞րս ա մնացել, հողը գնաց ձեռք-ներիցս:

— Ղուրանի վրա երգվեք:

Երգվեցին:

— Արուն պտի թափվի.— մերկացավ դաշույնի պես Հասան բեկի միտքը.— Մենք կանենք: Դուք էլ քոմակ արեք մեզ, գեղը կաղնացրեք:

Վճռեցին, ուխտեցին և հանգիստ նստեցին տեղները:

Ուրեմն սկսվում էր նոր խաղ...

Հասան բեկի վրա հոգնածութիւնն եկավ: Հարվածը շատ էր աննախընթաց: Իր բատրակը իր դեմ:

Պոցված էր նրա սիրտը, շամփրած...

Ու նրա միտքը լեռնային կածաններով, անտառների շավիղներով սողում գնում է Գանձակ, Երևան, իջնում է Մուղան կամ Արաքսի ափերը: Հետո այնտեղից էլ թռչում է այն կողմ, ուր հետու հորիզոնում ծովի կապույտ ալիքների պես խոյանում են երկինք Պարսկաստանի լեռները՝ փերուզ, տեալական գույնով: Այն կողմ Թեհրանն է, Սպահանը, Մեշհերը...

Այնտեղ մրրիկ չկա...

Եվ Հասան բեկը երբեմն հրազում է այնտեղի մասին:

Կանչեց մի օր էլ իր որդիներին իր մոտ և հայտնեց, որ ուզում է գնալ Պարսկաստան քյալբալա դառնալու:

Մի քանի ժամանակից հետո հաջողվեց գյուղխորհրդի մի քանի անդամների միջնորդութեամբ անցագրի հարցը հարուցել համապատասխան հիմնարկներում:

— Թող ջհանդամվի գնա. էլ նրանից մեզ վնաս չկա, ատամները շարդեցինք,— ասին գյուղխորհրդում:

Հասան բեկը կանչեց որդիներին, խրատեց, որ նախ և առաջ Ռաշիդի հետ հաշտվելու հնար գտնեն, մոտենան նրան և ցույց շտան ոչ մի վիրավորանք, մինչև իր վերադարձը:

— Հետքը կարեք, որ մենք թշնամի ենք, թշնամի ուենեք: Թե ողջ դարձա տուն՝ կամ աշխարհքը փոխված կըլի, կամ անե-
թքը կանենք: Մեր ճամփան էլի երկարացավ: Համբերանքներդ ծով արեք, մինչև տեղ հասնենք...

Եվ 500 ո. ոսկի դրամով Հասան բեկը՝ ինչ-որ ներքնապես ինքնովին հասկացված մի մաքրության կարոտ հոգով, դողահար կղակին արցունքների կաթիլները դողողացնելով՝ ճամփա ընկավ Պարսկաստան՝ քայլալա դառնալու:

— Չոփ ըլեի՝ աչքիդ կպչեի,— ասաց նրա կինը մնաս բարեկրպակին:

Իսկ մոլլա Ախունդը դողահար շրթունքները հպեց նրա դողահար շրթունքներին, և երկուսը իրար խառնեցին աղի, բայց նրանց համար շատ քաղցր արցունքի կաթիլները:

Հասան բեկը գնաց: Նրա որդիներն սկսեցին գյուղում սուսուփուս սվաղել անցյալի անհարմար ու անպարկեշտ բացվածքները: Մինչև անգամ անկեղծության տվին:

— Պառավը հին մարդ ա. չէր հասկանում Ռաշիդի արածը: Ռաշիդն իր պարտքը կատարեց խալիսի առաջ: Նրանից մենք նեղացած չենք: Իրավունք էլ չունենք, քանի որ կոմունիստ ենք գառնալու:

Գյուղխորհուրդը մեջտեղ բերեց հողի գործերի մատյանը նրանից երևում էր, որ Հասան բեկը լավ հողամասերը հատկացրել էր իրեն և իր թայֆային, մի մասն էլ իր կողմնակից Սոյունի նման միջակներին, իհարկե նաև բաժին էր հանել և չքավոր խուրշուղին, Բայրամին և մի քանիսին...

Ավելցուկ հողերը տրվեցին ֆոնդի: Հետո դրանից բաժին հանվեց չքավորներին: Միջակներին շատ չնեղացրին...

Օրուջը հեռացվեց կուսբջիջի քարտուղարությունից: Հեղափոխությունը կուսակցությունից...

Հանդերը կանաչեցին դարձյալ, հետո դեղնեցին, ոսկու հեղեղը վեր կացավ գնաց հանդի վրայով՝ տակը թաղելով անցյալի արարմունքն ու Հասան բեկի հիշողությունը: Գյուղացիք ժպտացին նոր հունձի վրա և սկսեցին մոռանալ «դեպքը»:

Բայց «դեպքը» իսկապես պահ էր տված հողին: Թաղված էր միայն նրա մեջ: Ինչպես որ Հասան բեկի՝ Ալու ջրաղացի առաստաղում թաքնված փամփուռները:

Խանչալը ճերմակ կրճտուն ատամները թաքցնում է պատյանի մեջ և պողպատե լուռության մեջ սպասում է:

Ինչի՞...

Դաշտը ժպտում է, ծաղիկները նախշուն գլուխներն օրորելով բամբաշում, «գրող են չափում» իրար: Տակին լսում է հողը և նրա դավը: Ի՞նչ դավ, ո՞ւմ դեմ...

Ալին՝ Հասան բեկի պատվերի համաձայն, սկսեց հինել ուտախը: Ասադին շուտ-շուտ կանչում է իր տունը, որ ջրաղացի մոտ է, հյուրասիրում է, ասում, խոսում:

Մի ճաշից հետո էլ ասաց Ասադին.

— Ասա՛դ, դու լավ տղա ես, ամա կնոջդ հետ յուրա չես գնում:

— Ո՞նց,— լարվեց խանդոտ երիտասարդը:

— Շատ ես նեղացնում. կարող է փախչել Ռաշիդի կուշտը:

— Ո՞նց,— արագ շուռ եկավ նրա կողմը Ասադը:

— Այ տղա, չե՛ս տեսնում՝ ո՞նց ա գեղի կանանց մեջ փրսփրսոցն ընկել: Ժողով են ուզում, խրճիթ են ուզում: Էնպես մի՛ արա, որ կնկանդ դուրս քաշեն, երեսը պատեն:

— Ի՞նչ եմ անում կնկաս, որ դուրս քաշեն կամ չքաշեն:

— Մոտիկ հարևանի տուն գնում-գալիս ա. մի՛ խոսի, թող գնա-գա:

— Ո՞ւմ մոտ ա գնացել:

— Մի քանի տեղ տեսել եմ... էրեկ տեսա Ռաշիդի տան կուշտը... Ես հո նրա համար չեմ ասում, որ կնկանդ ծուռ մտիկ տաս: Էդ մին ա, թե դու ինձ էդ բանն ասես իմ կնկա մասին: Մե՛նակ ասում եմ՝ էդպես ծրարի-պրարի բաների հետևից մի՛ ընկնի: Խելքն էդ ա:

— Ինչի՞ համար ես ասում,— անհանգստացավ Ասադը:

— Գրուստը կուզե՛ս. նրա համար, որ էդ քոփօղլի Ռաշիդը շուն մարդ ա: Այ, հարց ա դրել կանոնց քաշելու խրճիթ՝ գիր սովորեցնելու, չադրան դեն գցելու համար: Տե՛ս, սարթ կըլես կնկադ հետ՝ կգնա կընկնի էդ շան ձեռը:

— Ո՞նց թե կգնա, կչարդեմ:

— Հիմի ուրիշ ժամանակ ա, կգնա: Ի՞նչ գործ ունես, ախպեր: Ո՛չ խրտնացրու կնկադ, ո՞չ էլ շարդես: Էն մարդը շուն մարդ ա, իշխանություն ունի ձեռին, ինչ ուզի՝ կանի: Խելո՞ք կաց:

Հետո խոսքը փոխեց: Բայց Ասադը շփոթվեց. ինչացո՞ւ էր

այս խոսակցութիւնն: Նա խմեց այդ թուֆնը, լուռ կացավ և հանկարծ վեր թռավ:

— Ո՞ր:

— Տուն:

— Դե, տե՛ս, ինչ որ ասի՛...

Ասաղը գնաց տուն սաստիկ այլայլված: Առաջին անգամ իր կնոջ մասին խոսք էր լինում. մինչև հիմա իր կնոջ մասին ինքն էր մտածում միայն: Եվ ահա ուրիշներն էլ ինչ-որ ակնարկներ են անում: Ուրեմն մի բան կա:

Գյուլնարան շնկատեց նրա այլայլմունքը: Ասաղը նստեց և ինչպես խանդոտ ամուսին՝ ուզեց խորամանկութուն բանեցնել, խոսք դուրս քաշել, լսել նրան, բայց ինչպես միշտ՝ այս անգամ էլ գեռ չսկսած պայթեց:

— Հը՛. ինչի՞ ես զարգարվել, էլի ո՞ւմ ես տեսել փողոցում:

— Գլուխս եմ վացել, ո՞ւմ պիտի տեսնեմ:

Ասաղը լռեց: Սկսեց դիտել իր կնոջը: Նոր գեղեցկութուններ տեսավ այս անգամ նրա փափկած մազերի մեջ, որ սև ամպերի պես սքողում էին նրա պղնձագուլն լուսնի դեմքը: Նա ճապով իրան ուներ, արագաշարժ էր ու, շնայած իր կեղտոտ, փոշոտ շորերին, թվում էր, թե այ, հենց հիմի այդ լաթերը վրայից հանես, հագցնես ազնիվ զգեստներ՝ հեքիաթական հպարտ գեղեցկութամբ նա դուրս կլողա:

Ասաղը կանաչեց խանդից ու կրքից: Նրան սկսեց տանջել և դուր գալ այդ խանդը, նորից սկսեց հարբեցողի պես խմել ու այրվել իր ախտով: Սկսեց մտովի իր կնոջը երևակայել ուրիշ գրկում, հետաքրքիր, խորասույզ երևակայել այդ տեսարանը և խանդի կատաղի կրքից խայթվելով՝ վեր թռավ տեղից:

Նա հիվանդ է խանդով ու չի նկատում այդ: Առաջներումն էլ նա երևակայում էր դավաճանութան տեսարաններ և իրեն թուճավորում: Հիմա այդ թուֆնը դառել է պահանջ: Բայց հիմա ամբողջ առաջ գնալով՝ կոնկրետացնում է իր երևակայությունը և իրական համարում այդ: Եվ վաղուց նա լարված հետևում էր կնոջը, որ բռնի նրան: Կինը գիտեր այդ, բայց մոռանում էր շուտ-շուտ: Երիտասարդ կյանքը հետաքրքիր թիթեռի պես թռչում է ծաղիկ-ծաղիկ, երբեմն էլ նստում է ցեխի վրա:

Լուրեր են գալիս Երևանի, Բաքվի կանանց մասին, որ շարա-

ները նետում են: Նա, իհարկե, սարսափում էր դրանից, բայց հետաքրքրվում էր տեսնել այդ կանանց: Եվ ուզում էր իմանալ, թե ի՞նչ են անում դրանց ամուսինները: Ահա ինքը, որ շարառանի և շարունակ ծեծի ու բռնութան սպառնալիքի մեջ է, ի՞նչ կենի եթե շարառան նետի: Ի՞նչ համարձակություն:

Ասաղն սկսեց Ռաշիդին հայհոյել, առանց պատճառն ասելու: Գյուլնարան գիտեր նրա այդ սովորությունը, որ նա հենց առանց պատճառի պիտի հայհոյանքով սկսեր: Ամեն անգամ լսում էր, բայց այս անգամ հետաքրքրվեց:

— Ռաշիդն ի՞նչ ա արել:

— Ռաշիդն ի՞նչ ա արել... Ռաշիդն ուզում ա, որ բոլոր կանիք շարառաները գցեն, ուզում ա բոլորին հավաքել տա խրճիթ, կարգացնել տա, դուրսը բարձր-բարձր խոսել սովորացնի, որ կնիկը ում հետ ուզենա խոսի, ապրի. ուր ուղենա, գնա, դուրս գա մարդամեջ՝ ազատ, անամալ խոսի, պատիվը ծախի...

— Պատիվը ո՞նց ծախի:

— Պատիվը ո՞նց են ծախում, սարսա՛ղ:

Գյուլնարան սաստվեց, բայց և հետաքրքրվեց: Սպասեց, թե էլ ի՞նչ կասի Ասաղը:

Ասաղը շարունակեց.

— Ռաշիդն ուզում ա, որ կնիկը դուրս գա, ընտրություն կատարի, ոնց որ հիմի անում են ճերեսները պատռած» կնանիք: Գիտե՛ս ինչեր են անում Երևանի, Բաքվա կողմերը: Վեր են կենում, գնում քաղաք, զանգատ տալիս իրանց մարդու վրա: Կնիկը ժողով ա գնում, օրերով նստում տղամարդկանց միջին, ասում, ծիծաղում, քսվում... թու, հարամզաղեք: Էդպես կնիկը, որ իր պատիվը չի իմանում՝ թքել եմ նրա մարդու տղամարդկության վրա: Կնիկը տղամարդուց է:

Գյուլնարան սսկվեց: Բայց այդ լուսնությունը դուր չեկավ Ասաղին:

Երկար փնթփնթում էր նա և ուզում էր, որ կինը խոսի, նյութ տա իր խանդին: Իսկ Գյուլնարան զգուշանում էր, թեև նրան էլ սկսեց հետաքրքրել այդ «երեսը պատռած» կանանց պատմությունը: Զնգանում նստած բանասրկայալի պարզ բնազդով Գյուլնարան զգում էր, որ այսպեղ մի ուրիշ բան կա, որ այդքան կանայք չէին վերցնի ու միանգամից պատիվները կորցնի: Դա հասարակ «երեսպատռածություն» չի...

Հանկարծ Ասադը շհամբերելով՝ հարցը ուղղակի դրեց.

— Հը, դո՞ւ ինչ ես ասում: Ուզո՞ւմ ես խրճիթ գնաս...

Գյուլնարան զարմացավ և ժպտաց:

— Թե ուզում ես՝ կթողնեմ:

Գյուլնարան տարակուսեց և շհասկացավ: Բայց բերանից բաց թողեց.

— Թե թողնես՝ կգնամ:

— Լա՛վ, ի՞նչ ես անելու էնտեղ:

— Ինչ որ կասեն՝ կանեմ:

— Կասեն տղամարդկանց հետ ժողով պիտի անես. կանե՞ս:

— Չեմ իմանում:

— Կասեն Ռաշիդի ծոցը պտի մտնես. կմտնե՞ս...

Գյուլնարան գունատվեց: Ասադը վեր թռավ տեղից, և, հարձակվելով նրա վրա, վար գցեց ու սկսեց հարվածել:

— Այ բու խրճիթը, բող, աննամուս... ո՞ւր էիր էրեկ...



Հասան բեկը Պարսկաստանից վերադարձավ քյալբալա: Նա մեծ գորովանքով ընդունվեց իր տանեցոց և հարուստ բարեկամների կողմից: Չնայած ճամփի դժվարություններին, նա հոգով-մարմնով վերածնված էր: Նիհարել էր և սևացել, բայց մշուշալի աչքերի մեջ հիմա ցուլում էր մի կրոնական երանություն:

Գյուլի տեսքն էլ կարծես փոխված լիներ: Առաջվա պես չէր զգացվում մեծ «աղետը»: «Հողի գործը» կարծես մոռացված էլ էր:

Պարսկաստանում թարմացած և կրոնական բովում ջեռուցած Հասան բեկն սկսեց պատմել այնտեղ ապաստանած Ադրբեջանի բեկերի մասին, ներկայացրեց Արևելքը իր քաղաքներով, «ազատ կյանքով», խաների պերճ, փարթամ կենցաղով, տեղեկությունով, թե այնտեղ ի՞նչ գաղափար ունեն Միություն մասին...

Նրա հին դիրքը, որ խախտվել էր հողերի պատմությունից հետո, սկսեց նորից վերականգնվել: Կամ հաշտվել, մոռացել էին: Կամ մոռացել էին նրա համար, որ չէին տուժել, այլ տիրացել էին: Մարդիկ սկսել էին հագնվել, ուտել, դրստվել...

Գյուլի ծերերը, աչքի ընկնող գյուղացիք, մոլլան հաճախ

գալիս էին Հասան բեկի մոտ և ջերմեռանդ սիրով լի աչքերը հասած նրան՝ նայում էին ժամերով և երանությամբ լցվում...



Հասան բեկը դեռ Պարսկաստանի տպավորության տակ է: Չի զբաղվում գյուլի գործերով: Ռաշիդի խոսքը չկա դեռ մեջտեղ: Ալին է միայն աշխատում կամաց-կամաց: Աշխատում է մոտենալ Ռաշիդին:

Մի անգամ Ռաշիդը նրա ջրաղացի մոտով անց էր կենում: Ալին կանգնեցրեց նրան:

— Այլի, էնքան մոռացար՝ մոռացար, որ բարեկամությունն է՛լ մոռացար: Հերս սխալ բան բռնեց: Քեզ ի՞նչ արեց: Դու էդ բանն արիր, հո հորս իրա դեմ շարի՞ր: Խալիսի գործ էր: Ուզում ես՝ խալիսի համար կովե՞ք իրար հետ, բայց բարեկամությունը պահենք: Շատ ես հպարտացել:

— Գործս շատ ա, Ալի՛,— ասաց Ռաշիդը:

— Ախր մենք էլ կուսակցություն մեջ ենք ուզում մտնել: Չենք ուզում խալիսի առաջ էնպես դուրս գանք, միթամ հորս պատճառով գյուլի շքավորին թշնամի ենք: Կասեն՝ հրես, միջակը չի ուզում շքավորին ձեռք տալ:

— Լավ, ես ի՞նչ եմ անում:

— Ի՞նչ ես անում: Արի՛, գնա՛, խոսի՛, բարեկամ կաց: Ջհանդամը, հերս ինչ արավ՝ արավ: Այլի, ես կուս-թեկնածու եմ, հեր մեր շեմ ճանաչում: Էս քանի օրերը մեր Քյարամի հարսանիքն ա, պտի գաս, թե բարի՛շ ես...

— Ես բարի՛շ եմ,— ակամա, բայց կեղծ ասաց Ռաշիդը:

— Թող խալիսն էլ իմանա, որ բարի՛շ ես: Արի՛:

— Լավ, տեսնեմ:

— «Տեսնեմ», չէ, անպատճառ արի՛:

Ռաշիդը հեռացավ: Ճամփին միտք էր անում, թե ի՞նչ է նշանակում այս մոտեմոտ անելը: Որ առհասարակ իրենից վիրավորված են,— հասկանալի է, բայց արդյոք այս հրավերքները մի որոշ նպատակ ունեն... Ռաշիդը սարերում ու ձորերում, իր ժողովրդի մեջ ծնված մարդ՝ լավ գիտեր, որ իրենց լեռներում ներել չկա: Որակալը արյունով է հանգցնում իր ոխը:

«Տեսնենք ի՞նչ են ուզում անել»,— մտածեց Ռաշիդը իր մեջ

և ժարտաց շրճորի շրճի պես մոռնի փայլեցնելով աչքերը. — «Տեսնենք որտե՞ղ են դնում թակարդը»:

Ու ինքն էլ գայլի արթնությունը զգուշ է դնում ոտքը՝ ամեն մի արճեստական, տարօրինակ առարկայից խուսափելով:

Պրոշում է բռնել թակարդը: Դա նրան զվարճացնում է և հագուրդ տալիս իր ատելությունը դեպի իր նախկին տերերը:

Մի օր էլ Հասան բեկը նրան կանչեց իր մոտ: Գնաց: Միայն բարտուղարին ասաց, որ գնում է Հասան բեկի տուն:

— Այ տղա, ո՞րտեղերք ես ման գալի,— բարեկամաբար ժպտաց Հասան բեկը, երբ Ռաշիդը ներս մտավ:

— Ինձ կանչել էիր,— ասաց Ռաշիդը հանգիստ և կանգնեց օղաչի դռան:

— Հա՛, կանչել եմ, գործ ունեմ հետդ: Առա՛ջ եկ, նստի: Ռաշիդը նստեց և զգուշություն համար շնայեց շորս կողմը, այլ անհոգ դիրք տվեց իրեն:

Օղաչում Հասան բեկն էր իր երեք որդիներով:

— Գեղի գործերը ո՞նց են,— հարցրեց հասարակ ու անտարբեր ձայնով Հասան բեկը:

— Լավ: Հասան բեկը լռեց, Եվ փոխանակ սկսելու՝ կարգազրեց, որ թեյ բերեն:

Հյուանիներն ու Քյարամը գնացին հոգալու թեյի մասին:

— Գիտե՞ս ինչ, որդի,— սկսեց Հասան բեկը,— իմ մի ոտք գերեզմանումն ա, ես անցա, գնացի... պտի մնաք դու, Ալին, Քյարամը, Հյուանիներ: Դուք ջահել եք, կյանքը ձեր առջևն է: Դու ինձ հետ թշնամի չես — էդ գիտեմ: Էն որ սաղ գեղամիջումն և բղավես, թե դու իմ թշնամին ես, չեմ հավատա: Քանի որ դու կուսակցական ես դառնալու: Էն էլ որ արի՞ր՝ էն քո պարտքն էր: Ես իմ կողմից հանգիստ եմ: Մենակ ուզում եմ, որ Ալու, Հյուանիներն ու Քյարամի կողմից էլ հանգիստ ըլեմ: Նրանք կուսակցություն մեջ են մտնում: Նրանք իմ ճամփով շեն գնում: Հիմի իմ ազածն էն ա, որ դու, Ալին, Հյուանիներն ու Քյարամը բարիչ ազադե՞ր: Եկ, որդի, էս գիշեր էս տան մեջ վերջացնենք մեր վեճը...

— Ես սարի ավազակ չեմ,— ասաց Ռաշիդը,— ես արյան վրեժ չունեմ, որ վերջացնենք: Գեղի գործ ա, ես գեղի գործն եմ փաստարում: Թշնամին թշնամի է իր գործի համար:

— Խեղոք խոսեցիր: Դե որ էդպես ա, էգուց Քյարամի հարսանիքն ա, թե սրտումդ բան չունես, ե՛կ:

Եվ մտածեց. «Թող մտածի, որ այստեղից ողջ է դուրս պրծնելու և ոչինչ չի պատահի այս գիշեր...»:

Իսկ Ռաշիդը մտածեց. «Ուրեմն այս մարդիկ ինձ համար «էգուց» ունեն «մտքներում»:

Միամտվեց:

Թեյ խմեցին, խոսեցին դեպի-դեպի, և ուշ գիշերին Ռաշիդը գնաց տուն:

Ռաշիդը կոպիտ, անդյուրաշարժ, բայց հաստատ կացնի նրման տաշում է գյուղական գործը: Հին հովիվը, հետագայում բատրակը, որի սոված ստամոքսը սովորում էր այլևս չուտել, բայց կուշտ լինել, տարիներով աշխատանքի աղորթի տակ աղացվել ու ջարդոտվել էր — չես իմանում, թե ո՞րտեղից էր ծծել իր մեջ երկաթի մկաններն ու ծով համբերանքը:

Գյուղը, թարմացած, հողակուշտ գյուղը, ոչ գոհ է, ոչ էլ դժգոհ նրանից: Այսօր ավելի ունի, քան երեկ: Բայց այսօր ախորժակն ավելի է, քան երեկ... Հազար բերան բացվում է — լցրու մեջը: Գյուղ է, կարիքը շա՛տ:

Եվ ահա պատի թերթում տողեր՝ «Գյուղխորհուրդը չի մտածում կամուրջի մասին: Հեղեղը տարավ՝ նորը չկա: Սայլերը խըրվում են ցեխի մեջ: Նախագահ, քնած ես, գարթնի՛ր»:

Այս մեկը ճիշտ է: Կամուրջը նորոգված չէ:

Բայց որ շորան Ալեքսանդրը պինդ պայմանագիր է կնքել իր տիրոջ հետ, որ Դուրսունը վերակազմ ՓՕԿ-ի միջոցով կովի աեթ է դառնել, որ շքավորներից շատ-շատերը արդեն իրենք են վարում-ցանում իրենց արտերը աշխուժացած վարկային ընկերության միջոցով, որի նախագահը Յուսուֆն է, հետո, որ կոոպերատիվն աշխուժացել է, կամ, վերջապես, որ գյուղի ճանապարհը պարհակային կարգով դրսուվեց, մաքրվեց — սրա մասին պատի լրագիրը չի խոսում: Խայլան էլ լռում է: Գոհ է, չի գգում, որ գոհ է և չի էլ հաշտնում: Գյուղն աչդպես է, անտակ հոր. լցրո՛ւ, չի լցվի:

Գյուղում կարծես Ռաշիդը չի էլ երևում: Եվ իրոք, հիմի շատերն են ակտիվացել, չքավորութունը խառնվում է գյուղի գործերին, ու Ռաշիդը չի երևում: Յուսուֆը, Մուխտարը և շատ չքավորներ ընդունվել են կուսակցության մեջ:

Բայց քիչ-քիչ լուրեր էր շրջում, որ Ռաշիդը կաշառք է ուտում: Շատերը չեն հավատում, քչերը կասկածում են: Բայց չհավատացողի սրտումն էլ խոսքի տեղը մնում է հանած մեխի տեղի պես:

Հողված է լույս տեսնում լրագրում այն մասին, որ Ռաշիդը բայրամի տոնը կատարել է, խմել, հարբել: Մի ուրիշ հողված, որ Ռաշիդն անչափահասի ամուսնության վկայական է տվել:

Հասան բեկի վերադարձի առաջին թարմ ամիսն անցավ: Լուրը հերքվում է: Բայց մեխի տեղը մնում է... Եվ Հեյդարը շարունակում է խփել նորերը...

Իրական Պարսկաստանը երազացավ, և երազական ծննդավայրը իրական դառավ իր կծու, կոպիտ և անուրախ ձևերով:

Առաջին հարվածը հենց Ռաշիդը տվեց: Երևան հանեց միսհարկի ժամանակ Հասան բեկի թաքցրած հաշվառման օբյեկտները — 2 կով, 40 ոչխար, մի ձի:

Սրա համար Հասան բեկը տուգանվեց և խայտառակվեց գյուղի առաջ:

Քյալբալա Հասան բեկը...

Բայց այս հարվածը մեկը չէր: Գալիս էր ավելի մեծ հարված: Գա տնտեսական հարվածն էր: Անհատական հարկ, ձայնագրկում, հողաշինարարության ժամանակ հողերի նոր դասավորության վտանգ, որի մասին խոսվում էր: Հետզհետե մութ կերպով սկսեց գործադրվել կոլեկտիվ տնտեսության ուրվականը, որի մասին չափազանցրած ու այլանդակ լուրերը սողոսկում էին այն լեռնաստանը:

Հասան բեկը Ռաշիդի մեջ տեսնում էր մի համառ թշնամի, որ նրան հարվածում է թե՛ ատելությունից և թե՛ վախից: Սվինամարտի ժամանակ երկու թշնամիներից ամեն մեկն շտապում է առաջ ինքը տալ մահացու հարվածը և ազատվել հարվածից: Այստեղ արդեն խուսափելու տեղը չի. մեկը պիտի հաղթվի, որ մյուսն ապրի: Ետ դառնալն ուշ է:

Եվ հետո Ռաշիդը մենակ չի. իր հետևից բերում է Ռաշիդնե-

րին: Գա մի վիշապ է հազարգլխանի: Պետք է կտրես որբան հասցնես:

Քյալբալան կապտեց, մոայլվեց լճի պես, սկսեց տակից փրփրել: Մոռացել է կրոնական էքստազը — ապրուստը վտանգված է, — հայհոյում է Ռաշիդին.

— Ես էդ շան ցնկնածին շանաստակ անել կտամ, հառո՛մ-զադա, քյոփօղլի...

Ու վճռեց, որ հասել է վերջին հարվածի օրը:

Գեպքերն սկսեցին շտապել: Ստվերների պես տնետուն են սահում Հասան բեկի թափափ մարդիկ, որոնք ստվարացել են վերջին ժամանակներս: Մոտ 16 կուլակներ սթափվել են վերջին ամիսների փորձերից և գայլերի ոհմակի պես խմբվել Հասան բեկի շուրջը:

Գլխավոր վայրը Հասան բեկի տունն է: Գնում են, գալիս, փսփսում: Մի բան վճռված է, շտապում են: Ալին շուտ-շուտ է տեսնվում Ասադի և Ալի-Նաբու հետ: Ասադը վագրի պես է նայում: Անհանգիստ է: Վագրի պես էլ փորը գետնին քսելով սողոսկում է իր տեղի վրայով և այնտեղից մտիկ տալիս Ռաշիդենց տան կողմը, ամեն ընդհանուր սպասելով, որ Գյուլնարան կարող է այնտեղից դուրս գալ: Մթնշաղի վարագույրի միջից նա նկատում է մի ինչ-որ անորոշ գույնի շագրա, որ դուրս է գալիս Ռաշիդենց տանից և սահում-անցնում տան հետևի կողմը: Ո՛վ է դա...

Ասադը խելացնոր վազում է դեպի այն կողմը: Ոչ ոք չկա: Իսկ Գյուլնարան տանը չէ: Ասադը կատաղում է, տանջվում: Եվ մտածում է. «Ի՞նչ են ընկել հողի, իշխանության ու հազար մի բանի հետևից... երանի էս ցավը չունենայի»: Եվ միայն մի բան է ուզում հիմի, ծարավի է մի բանի. չլինի Ռաշիդը, որ չլինեն իր կասկածները: Միայն թե ազատվի խանդի այդ այրող նոպաներից՝ ամեն ինչ կանցնի:

— Բա ո՞ւր ա գնուցել շան ծիծ կերածը...

Ու քայլերն ուղղում է զոբանչի տունը:

Ալին սրբեց խանչալը, դրեց թաղիքի տակ, շնայած որ պատից քաշ էր արած մի ուրիշ դաշույն, բոլորովին ազատ:

Հետո կնոջը կանչեց մոտը: Կինը դժգոհ նայեց նրան և ասաց.

— Վախենում եմ խաթա դուս գա, Ալի:

— Քու գործը չի, շան աղջիկ, ինչ ասում եմ՝ արա:

— Ախր ո՞նց ասեմ Ասադի քրոջը, թե Գյուլնարան Ռաշիդի տունն ա փնացել. ո՞վ կհավատա:

— Դու ասա տեսել ես:

Կինը զարմացավ Ալու համառության վրա և նայեց նրան քննող աչքերով:

— Ի՞նչ ես մտիկ տալի, պետք ա ասես, որ Ասադն էլ իմանա ու կեկա գյամը քաշի:

— Ախր նրա կնիկը ի՞նչ ա անում, որ գյամը քաշեն:

— Նրա կնիկն ուզում է առաջ ընկնի, շադրան պատռի. կնանոց դուս քաշի: Շատ էլ ես կոմոնիստ եմ դառնում: Թող ահեմ, որ՝ ասենք՝ դու շադրանդ պատռես, հարամվե՞ս:

— Չադրաս որ պատռեմ՝ կհարամվե՞մ:

Բայց Ալին այնպիսի ավազակադեմ, արնակալած աչքերով կանգնեց նրա դիմաց, որ կինը սաստվեց:

— Հա՛, դե՛, էդպե՛ս,— խոսեց խուլ ձայնով Ալին,— էդպես կասես Ասադի քրոջը: Իմացա՞ր:

Լռությունը հասկացնում է՝ «իմացա»:

Ռաշիդը հոգնած, ջարդված գնաց իր խրճիթը: Պատերը ծամածուռ խորշումներով նայեցին նրան: Նա նստեց թոնրի ափին, պաղ քարին: Պառավ մայրը ջահրի վրա կոացած՝ թեղ էր մանում, իսկ կինը աման էր լվանում: Ընտանիքը լուռ էր: Հոգնած Ռաշիդն սկսեց հորանջել:

— Ասադի կնիկն ասում ա, որ մարդը շատ ա նեղացնում իրեն,— ասաց Ռաշիդի կինը:

Պառավը բարեմտորեն հանդիմանեց.

— Ա՛յ աղջի, ի՞նչ քու բանն ա, ի՞նչ ես խառնվում ուրիշ գործին:

— Ասում եմ, էլի՛,— արդարացավ կինը,— իմ ասելով, Ռաշիդի իմանալով Ասադին ի՞նչ վնաս կամ նրա կնկան ի՞նչ օգուտ:

Ռաշիդը հորանջեց ավելի լայն և հորանջելիս կափկափեց կզակը.

— Տեղս գցի՛:

— Բա բան չես ուտո՞ւմ, ա՛յ որդի:

— Չէ, իսկի հալ չունեմ:

Պատկելն ու քնելը մեկ եղավ:

Դուրսը բավական մթնել էր, որ Գյուլնարան փախչելով վազում էր ձորը, Ալիենց տան կողմը:

Ալու կինը նայեց ձորաբերանին և նկատելով Գյուլնարայի շադրանի ֆոֆոցը, հասկացավ, վրա վազեց.

— Հա՛, ի՞նչ ա, Գյուլնարա:

Գյուլնարան լացակումած, սարսափած գոչեց.

— Օջախդ եմ ընկել, Ֆա՛թմա, ինձ ուզում ա սպանի... ազատի՛:

Ֆաթման բռնեց նրա ձեռքից և քաշեց իրենց տան կողմը, իսկ Գյուլնարան ետ-ետ նայելով՝ կատվի պես կպչում էր նրա իրանին.

— Ֆաթմա՛ ջան, Ֆաթմա՛ ջան, էկավ, հմի կգա... վախում եմ:

— Վախիլ մի՛, հմի կկանչեմ Ալուն: Նե՛րս մտի:

Ֆաթման վազեց ջրաղաց և դռնից ձեռքով կանչեց Ալուն: Սա խոժոռած դուրս եկավ, կնոջը տարավ մի կողմ: Խոսեցին:

— Տար Ռաշիդի տուն, ես բան չեմ կարա անի, կառավարության գործ ա: Ասադը կգա, կսպանի, ես չեմ կարա ազատի:

— Հը՞. էդպես անե՞նք...

— Հա՛, հա՛, տար Ռաշիդի տունը, մինչև Ասադի հերսը թջեցնենք:

Ֆաթման մտածեց: Վազեց տուն, և մի բուլբուլ անց ձորի մի բարակ շավղով Ֆաթման ու Գյուլնարան ժայռերի արանքով կատաների պես սողոսկելով՝ վազեցին Ռաշիդենց տուն:

Ռաշիդը վեր թռավ տեղից և ուզում էր քաշվել դուրս, բայց Գյուլնարան ընկավ նրա մոր ոտքերը:

— Անա՛ ջան, ասա տղիդ՝ ինձ ազատի մարդիս ձեռից. սպանում ա... խանչալ քաշեց վրես:

Ռաշիդը բլուզը հագավ ու դուրս թռավ: Ֆաթման գնաց տուն, Գյուլնարան կծկվեց անկյունում:

— Վախիլ մի՛, բալա ջան,— հանգստացրեց Գյուլնարային Ռաշիդի մայրը.— կառավարություն կա, քեզ բան չեն կարա անի:

Հետո մի քիչ անհանգիստ նայեց Ռաշիդի կնոջը՝ Զավահիրին.

— Աղջի, ո՛ւր գնաց Ռաշիդը... մի բան չանե՞ն...

Ու ինքը վեր կացավ, գնաց դուրս: Զավահիրը դուռը ներսից կողպեց:

Քիչ անց գյուղխորհրդի անդամները կատարածունների հետ գնացին գյուղխորհրդի գրասենյակը, հետը տանելով Ասադին և դաշույնը դնելով սեղանի վրա՝ արձանագրություն կազմեցին:

Գյուղն իրար անցավ՝ իմանալով անսովոր լուրը — որ Գյուլնարան իր ոտքով փախել է Ռաշիդի՝ տղամարդու մոտ և խնդրել է իր մարդուց ազատել իրեն:

Սկսեցին շշուկները.

— Ղախպություն ա, կեղծավորություն, ի՞նչ ծեծ, ի՞նչ բան. երեսը պատռել ա, ուրիշի ծոցն ա ուզում մտնի,— թքեցին մի քանի Ասադի կողմնակիցներ և հեռացան գյուղխորհրդից: Այնտեղ էր և Հասան բեկը, որ կանգնել դիտում էր: Նրան մոտեցան մի քանի գյուղացիներ.

— Հասան բեկ, էս ի՞նչ բան ա, Ռաշիդն էս ինչե՞ր ա անում: Ուրիշի կնիկը ո՞նց ա թողնում մտնի իր տունը:

Հասան բեկը խաղաղ ու հասարակ ձայնով ասաց.

— Ռաշիդը մաքուր տղա յա: Վախիլ մի՛ք: Ասեք թե Ասադը տաքգլխություն չանի, վնասի. էրկուան էլ ջահել տղերք են, ավստոս են:

Ու հառաչեց.

— Փորձանք ա, բալամ, փորձանք: Ի՞նչ անեմ, ծեր մարդու չեք լսում, ձեր խոսքն եք առաջ քաշում: Ո՛ւր հասա՞նք:

Հետևյալ օրերը Հասան բեկի թայֆան գաղտուկ տարածում էր ամենազգվելի բամբասանքներ Ռաշիդի մասին: Նրանք ափոստում էին Ռաշիդին և Ասադին, ասում էին «ուրիշի բերանից լսած» խոսքեր, և այդպիսով բամբասանքը տարածվում էր՝ չհասկացվելով թե ում կողմից: Խանդոտ երիտասարդների երևակայությունը

կլանում էր ամեն կասկածելի լուր և ինքն էլ զարդարելով այդ լուրը՝ վերջը շէր ճանաչում դրա իսկական հեղինակին — նույն ինքն իրեն:

Ասադին դատեցին, խանչալը դրին գործերի մեջ, իր պատիժն էլ թեթև արին՝ աչքի առաջ ունենալով նրա տգիտությունը և տաքգլխությունը: Մի խոսքով՝ գործին ընթացք չտվին, վճռեցին գյուղավարի...

Գյուլնարան տուն չգնաց, Ռաշիդից տեղափոխվեց իր քեռու տունը, այնտեղից էլ ճամփա բնկավ Գանձակ, իր հոր մոտ:

Ասադը դեղնեց ոխի և խանդի տանջանքներից: Մտքում դրեց անպատճառ վրեժխնդիր լինել Ռաշիդից: Եվ սկսեց շուտ-շուտ գնալ Ալու մոտ:

Մի օր Քյարամը գնաց Ռաշիդի մոտ և ասաց, որ Ալին կանչում է նրան: Գյուղխորհրդումն էր:

— Լա՛վ,— ասաց Ռաշիդը,— գնա, կգամ:

Առաջ գնաց տուն: «Չէ, դրանք անպատճառ մի բան ունեն մտքներում» — մտածեց Ռաշիդը: Մի քիչ վատ դգաց այդ մտքից: Մեկ ուզեց շփնալ: Բայց հետո էլ մտածեց, որ եթե չգնա՝ կարող է ընդմիշտ փակել գաղտնիքն իմանալու պատուհանը: Նա գիտեր, որ անդգույշ քայլ է անպայման գնալը, ոխիկ, որ կարող է շատ վատ վերջանալ: Բայց նա վստահ էր իր բնազդին և լավ համարեց գնալ հետախուզելու:

Երբ մոտեցավ Ալու տանը, տեսավ, որ նա նստած է դռանը:

Ալին դիտմամբ նրան ներս շտարավ, այլ սկսեց անցուդարձ անողների աչքի առաջ խոսել նրա հետ և բարձրաձայն դժգոհել իր հորից:

— Ախր մին ա, էգուց-էլօր կոմունա կըլի, հողերը կխառնեն իրար, միասին կապրենք գեղգեղովի: Ի՞նչ պատիժ էր խրվեց հողի պատմության մեջ ու մեզ խախտառակեց:

— Լավ, հիմա դու ի՞նչ ես ուզում,— հարցրեց Ռաշիդը մեղմ շեշտով:

— Էն եմ ուզում, որ գեղացոց հասկացնես մեր անմեղությունը:

— Ի՞նչ են ասում գեղացիք:

— Գեղացիք քեզ ու մեզ ուզում են կռվացնեն. ստեր են հնարում, թե մենք քեզ վրա փիս բաներ ենք խոսում: Միթամ մենք ասում ենք, թե դու կաշառք ես վերցնում, անառակ ես... հազար մի բան: Թշնամի շատ ոսնենք:

— Հա՛, խոսում են:

— Խոսում են, որ դու հակառակվես ու մեզ շթողաս կուսակցություն մեջ մտնենք: Դու որ փիս խոսես, մենք կորած ենք: Հե՛րն անիծած կայքի ու ամեն բանի: Դո՛ւս կգամ գեղից: Ես ուզում եմ կուսակցության մեջ մտնել: Մա՛ն օլում, Ռաշիդ, պիտի օգնե՛ս:

— Սպասենք... տեսնենք... մի բան կարվի,— անորոշ պաասխանեց Ռաշիդը և մոռացվեց:

— Թե որ շրնդունվեմ կուսակցության մեջ՝ գլուխս մահու կտամ — խաչտառակություն աս:

Նրանք երկար խոսեցին այդ մասին, և Ալին հենց մի գլուխ բերում կանգնեցնում էր այդ մտքի վրա՝ վանելու համար իսկականը:

Մի երեկո Հասան բեկը կանչեց Ռաշիդին իր մոտ: Պլանը կաղմած էր և հայտնած Ալուն: Սա պիտի գնար Ռաշիդի մոտ, մի կողմ կանչեր և դիտմամբ գաղտնի փսփսալով պիտի կանչեր նրան իրենց տուն ուզ գիշերին: Գաղտնիքը պիտի բացատրվեր նրանով, որ Հասան բեկը վախենում է իր հարուստ բարեկամներից, թե նրանք կչարախոսեն, որ Հասան բեկը մոտեմոտ է անում իր թշնամուն: «Ձեն հավատում, որ մենք թշնամի չենք, և չեն ուզում, որ բարեկամ ըլինք»: Անշուշտ Ռաշիդը կկասկածեր այս կոնսպիրատիվ և «վատ սարքած» հրավերից, կամ կմերժեր, որ ասել է՝ հասկանում է իրենց միտքը, կամ իր հետևից պոչ թողնելով կղար իրենց տուն: Այնտեղ խաղաղ գրույց կանեին, հայրը կխնդրեր Ռաշիդին օգնել որ իր տղաները մտնեն կուսակցության մեջ, սա էլ ճիշտ է, խոսքով կհամաձայնեիր, մտքով՝ ոչ, բայց թե՛ սա և թե՛ դրանում հսկող պոչը կնկատեին, որ ոչ մի վտանգ չկա այս տանը Ռաշիդի համար:

Մանյովրը հաջողվեց: Ռաշիդը խոստացավ գալ և իրոք եկավ՝ հետևից մի քանի հոգի պոչ թողնելով:

Հասան բեկը նրան ընդունեց սովորական խաղաղ հայացքով:

Նրա պլանները կախած էր դաշույնը, որ առաջ չկար: Ներսն էր և Ալի-Նաբին, որ դաշույնը կախ՝ նստած էր դռան մոտ:

Ռաշիդը շփոթվեց... Իրոք որ շատ էր առաջ գնացել իր հետախուզման մեջ: Բայց ուշ էր: Նա գուպեց սրտի տագնապը, բայց ուշքը դուրսն էր, տան շորս կողմը, ուր սովերների պես սահում էին իր ընկերները:

Հասան բեկը նայեց Ալի-Նաբուն և ասաց.

— Դու մի՛ սպասի էլ. փնա քնի՛: Առավոտը վաղ կգաս, նամակը կտամ, կտանես Քյուրդիստան:

— Գլխիս վրա,— ասաց Ալի-Նաբին և վեր կացավ, գնաց դուրս:

Ռաշիդը լսեց դռան բացվելը, շների մոմոցը և Ալի-Նաբու քայլերի ձայնը, որ հեռանում էր:

Այնուհետև Հասան բեկը սկսեց ուղղակի աղաչել Ռաշիդին, որ սա օգնի գոհե մի բանում — փակի իր շարակամների բերանը, որ ուզում են իր տունը քանդել:

— Որդիքս բաժանվում են, Քյարամը գլուխն առնում աս փնում կորչելու, ես ծեր մարդ եմ, ո՞նց անեմ: Տունս քանդվում աս: Ռաշիդը խոստացավ, որ կանի՝ ինչ կարելի է անել, և մտքում ծածաղեց «խենթացած ծերուկի» միամիտ քայլերի վրա:

«Ձլինի՛ թե դրուստ, ուզում են կուսակցության մեջ մտնել»: Ներս մտան Քյարամը, Ալին և Հյուսեինը: Ալին զինված էր խանչալով: Ընթրիք բերին: Ռաշիդը հրաժարվեց մնալու: Չպնդեցին, շխնդրեցին անդամ: «Թող թույնի կամ ստորաքարշության կասկած չտանի»:

Ռաշիդը դուրս եկավ շփոթ մտքերով: Նա մի կողմից ծիծաղում էր Հասան բեկի որդիների կուսակցության մեջ մտնելու անզոր փորձերի վրա, որով ուզում էին իրենց կորցրած դիրքերը վերականգնել, մյուս կողմից էլ տարակուսեց. «Ղլինի՛ ծերուկը ինքն է վախում հակառակորդից»:

«Արդեն անելունն արի, էլ ի՞նչ մնաց անելու» — ասաց մըտքում և անցավ բակից:

«Թե մնան իրենց հալին... ո՞վ ա իմանում»:

Կեռնցի բատրակը հարցը դրեց և թողեց կիսատ... «Տեսնենք»:

— Բարի գիշե՛ր,— ասաց իրեն ճամփու գնող Ալուն:

— Բարի գիշե՛ր:

Ռաշիդը սուզվեց գիշերային խավարի մեջ: Փողոցում երեք-
ցին ընկերների սովերնները:

— Հ՞ր, Ռաշի՞դ...

— Ես եմ:

— Հա՛, փորացալին ի՞նչ ա:

— Փորացալը հասկանում եմ. շատ ա ուզում իր տղաներին
կուսակցության մեջ ընդունել տա:

— Հա՛, դրա համար ա ձեռք ու ոտք ընկել: Իսկ մենք քեզ
ըստեղ թաղեցինք պրծանք:

— Բո՛ւ, չէ, չէ մի, պողե՛ր:

— Բա որ կալմեջ անեին քե՞զ...

— Ես հասկանում եմ դրանց միտքը: Հիմի չեն ուզում ինձ
ձեռ տալ, հլա ուզում են կուսակցության մեջ մտնի, ու էն կռնիցը
խփել...

— Կուսակցություն — իշտահներին թող քացախ խմեն:

— Քյոփոզլիներ... կերած կերակուրնե՛րը տես...

Ցրվեցին տները:

Ռաշիդին ճամփու դնելով՝ Ալին կանգնեց, որ տեսնի, թե ո՞վ

է իր դեմից եկողը:

Սովերը մոտեցավ Ալուն:

— Ով էր Ալի...

— Ռաշիդը:

— Ո՞րտեղից էր գալիս էսպես ուշ:

— Մեր տանն էր: Ղոնախ էր եկել, — ասաց հասարակ ձայ-
նով Ալին. «Թող կարծի, որ Ռաշիդը անվախ, մտերմի պես գնում-
գալիս է»:

— Մենա՞կ էր:

— Հա՛, մենակ:

Սովերը գլուխը շարժեց.

— Բա էնքան բաներից ե՞տը:

— Բարիշած ենք, Օմար: Հերս բարիշեց մեզ համար: Ախր
մենք հիմի թեկնածու ենք: էլ դուշմանություն չի կարելի:

Երբ Ալին մտավ օդան, Հասան բեկը նստած էր լուռ: Չէին
խոսում նաև Քյարամն ու Հյուսեինը:

— Թող անիք՝ ես կվերջացնեի, — ասաց Քյարամը:

Հասան բեկը վեր նայեց:

— Վե՛րջը...

— Վերջը էն կըլեր, որ շանսատակ կանեի, կվերջանար:

— Հասա՛ որ պոչը թողած ըլեր տանը կամ ընկերների մոտ:

— Բան չունե՛ս. «ո՞վ ա տեսել, ո՞վ ա իմացել»:

— Չէ, բալամ, էդպես հեշտ չի...

— Բա ի՞նչ ա ըլելու վերջը: Դա կռիվն սկսել ա ու մինչև
վերջը պտի տանի: Ախր մի մտածի. ո՞նց ենք մտնելու կուսակ-
ցության մեջ, մեր ամեն ոտը դնելիս՝ քարը պիտի գցի առաջներս:
Դու ծերացի էս, ամա մենք շահել ենք, ի՞նչ ա ըլելու մեր օրը
քառասուն, վացցուն տարի...

Հայրը խայթվեց: Նա գիտեր այդ, բայց այսպես պարզ ու
սուր չէր պատկերացրել:

Անդունդի ահռելիությամբ բացվեց մատաղ հարազատի կյան-
քը քառասուն, հիսուն տարի... Եվ սարսափեց...

Եվ առաջին անգամ կյանքում այ՛պես խոցվեց, որ արտա-
սուքները գլորվեցին աչքերից:

Գայլը լաց էր լինում:

Լաց եղավ և գայլի ձագը՝ Քյարամը:

— Բա ես ո՞նց ապրեմ: Իմ հողն էլ կառնի, պատիվն էլ,
կյանքն էլ հարամ կանի: Բա ես դրան չվերջացնե՞մ:

— Գնա քնի՛, բալաս, գնա քնի՛, մի դուռ կբացվի: Մի բան
կանենք:

— Չէ, ե՛ս պիտի անեմ, որ սիրտս հովանա:

Հասան բեկի որդի՛ն ապագա հացի հոգսի համար լաց էր լի-
նում: Հասան բեկը երևակայության մեջ տեսնում էր իր որդուն
աղքատ, մուրացիկ, և սիրտը մղկտում էր: Բայց նա սրբեց ար-
ցունքները մեղմ ու հեզնորեն ասաց.

— Ասածդ կըլի, Քյարամ, մենակ էնպես, որ իրան-իրան
կըլի, խելացի ձեռով, սպասի՛ր:

Բայց ինքն էլ չհասկացավ՝ ինչպես, հանկարծ թռիչք արեց.

— Հերի՛ք ա, վախտն ա, ասեք մեկ-մեկ գան:

Գիտեին ովքեր պիտի գային:

Ալին գնաց կանչելու:

— Դուք հեռացեք ներս:

Քյարամն ու Հյուսեինը հասկացան և հեռացան քնելու:

Մի քիչ անց իրար հետևից եկան Ղասումը, Մուսան, գյուղի

մողլան ու Իսմայիլը, Թաղին, մի քանի կուլակներ, որոնք վերջերս հաճախ էին լինում Հասան բեկի տանը: Վտանգը խմբել էր սկսում նրանց...

Նրանք գիտեին, թե ինչ կլինի կանչելու նպատակը: Վերջերս այդ մասին ակնարկներ լինում էին:

Ժողովը հանդիսավոր էր և խորհրդավոր: Մողլան արտակարգ հուզման մեջ երբեմն-երբեմն ծանր հոգոց էր հանում:

Մինչև լույս փսփսացին, ծանր ու թեթև վերդիր արին ու վճռեցին, որ հնար չկա, ետ գնալ չի լինի, կանգնել չի լինի, առաջը մահ է: Պետք է խփել — գուցե ճար լինի կովի մեջ:

Եկավ և Ալի-Նաբին, մռայլ նստեց օդայի անկյունում: Նստած մտածում էին և ամեն մեկն զգում էր, որ այս վերջին խորհրդակցությունն է:

— Հասան բեկը սկսեց թուփները թափել:

— Ի՞նչ եք սակվել մնացել: Էս թուրը մենակ ի՞մ գլխին ա իջնում: Հարուստը աղքատանում ա, աղքատն էլ սովի դուռն ա ընկնում: Պիտի խլին ամեն բան — առաջ իմ հողերը, վերջը ձեր հողերը: Ձեր կնանոց պտի հավաքեն, ձեզ տանեն մեծ-մեծ տները փակեն, հայի, ռուսի, մլթոնու հետ խառն ապրեք: Ի՞նչ եք սակվել, ամենքդ մի կուռը նստել:

Զխոսեցին:

— Գնացե՛ք ուրիշ տեղեր — տղամարդ, կնիկ-մարդ, մեծ ու սլստիկ խառն ուտում են, քնում, վեր կենում: Աբուռ չկա, նամուս չկա: Բա ես տղամարդ եմ, ես քյալբալա՞ եմ, ես օրե՞նք, հավատ եմ ճանաչում, որ թողել եմ իմ էլը կրակի մեջ:

Ու հետո դարձավ Քյարամին, Ալուն, Հյուսեինին, որ չհամբերելով ներս էին եկել, և նրանց հետ եկած Ասադին:

— Բա դուք տղամարդ եք, փափախ ունե՞ք գլխներիդ: Ա՛յ Ասադ, բա դու ո՞ր օրվա տղամարդն ես, որ կնիկդ փնա գիշերը մնա Ռաշիդի տանը ու էնտեղից կորչի փնա, քեզ ասի, որ էլ քեզ կնիկ չեմ: Կնի՛կ առ սրանից ետը: Էդ ո՞ր կնիկը կմնա կշտիդ, երբ իմանա, որ իր տղամարդու զոռը իր վրա չի բանում էլ:

Ասադը կարմրեց և սկսեց շնչատել:

— Ես հարուստ, դու աղքատ: Ինչի՞ համար են քեզ սխմում: Գնացիր կնիկդ ետ ուղեցիր: Ինչի՞ քեզ տվին դատարան: Ասե՛լ ա՛ ի՞նչ ունենե՞ք տանք իրանց: Հո՞ղ, կնի՛կ, նամուս... Ախպեր, հա-

րուստ չենք կարում ապրել, աղքատ է՛լ չապրենք, էս ի՞նչ դուլում ա: Ձեզ հետ եմ — մեզ կջնջե՞ն, փմնաք անգլո՞ւսի:

Բողբը պապանձվել էին: Հասան բեկը արծարծում էր առաջ-խաղացումը:

— Ես չեմ ասում, որ գնաս խանչալը կօխես Ռաշիդի փորը: Ես իմ բախտն եմ լաց ըլում: Իմ բատրակը իմ հողերս խլի՞, անհատական հարկերը վրես դնի՞, ինձ վրա գանգատ տա, մարդամեջում ինձ խայտառակի՞:

Լոնց և դողահար ձեռքով սկսեց փնտրել թուփների տուփը: — Բա ո՞նց ենք անում, Հասան բեկ, — հանկարծ բորբոքվեց Ասադը:

— Ո՞նց ենք անում, — մեջ մտավ Քյարամը, — էգուց էն շունը գալու է Ալու ջաղացը ալյուրը տանելու: Կտանք շանսատակ կանենք, պրծավ գնաց: Գալի՞ս ես:

— Գալիս եմ:

Երկու տաքզուլուսները վեր կացան, իրար ձեռք տվին:

Լուսթյուն տիրեց: Հասան բեկը հառաչեց:

— Ասա՛դ, դու, Ալի-Նաբին, Քյարամն ու Հյուսեինը կանեք: Թե չբացվեց, հո ձեր ու մեր բախտը. թե բացվեց, դու, Ասադ, կանես քո վրա: Կասես կնկա պատճառով արի: Գու չբավոր ես, ջահել, տաքզուլուս: Քեզ պատիժ կտան մի երկու տարի, բաց կըթողնեն՝ կմոռանաս: Իսկ ես կարողությունս ջուրը կածեմ, քեզ կաղատեմ: Ղուռանը վկա, ահա երդում եմ ուտում: Գնա, արա. ջահել ես, կղիմանաս, տուն կդառնաս՝ իմ տղեն ես: Նրա համար եմ ասում, որ եթե իմ տղերքը բռնվեն, մենք էլ ենք կորած, դու է՛լ: Կասես — մենակ եմ արիլ:

Ասադը բռնկվեց:

— Հավատս վկա, Մահմեդի գերեզմանը վկա, վրես կառնեմ: Թող մենակ նրա արունը խմեմ:

Ասադը վճռական թափ տվեց գլուխն ու հպարտ կանգնեց մեջտեղ:

— Վաղը օրը ցերեկով արեք, — ասաց խուլ ձայնով Հասան բեկը, — վերջը կասեք, թե սպանող ըլեիք՝ գիշերը կանեիք մեր տանը: Մթաթա հասկանո՞ւմ եք...

Ասադը ոչ զսում էր, ոչ հասկանում: Նրան պետք չէր թվում և ոչ մի փառալստի զգուշավորություն:

Նա այրվում էր վրեժից:

Ալին՝ շնայած որ պատից քաշ էր արած դաշույնը՝ թախտի տակից հանեց մի ուրիշ դաշույն, տվեց Ասադին: Սա վերցրեց և կիսովին քաշեց: Դաշույնը ցույց տվեց իր անձայն գովառող շան ատամի սպիտակ ցոլքը:

— Ալի-Նարի՞,— մոտեցավ Ասադը անկյունում նստած Ալի-Նարուն,— գալի՞ս ես...

— Ո՞վ ա իմանում,— անորոշ ասաց Ալի-Նարին,— աստծու քան ա...

Եվ ուսերը վեր քաշեց:

Մութ անկյունում լուռ էր Հեյդարը...

Ջինջ առավոտ էր:

Ռաշիդը դուրս էր եկել տնից և դռանը կանգնել, մտախոհ նայում էր դեպի ծուռումուռ փողոցները:

— Ի՞նչ կա, Ռաշիդ,— բահն ուսին մոտեցավ նրան մի գյուղացի և կանգնեց:

— Ուրիշ,— խաղաղ ժպտալով նրան նայեց Ռաշիդը և տընտըղեց ոտքից գլուխ:

— Հը՞, արտիդ գլխին ե՞ս:

— Հա՛, կաղնեցի արտիս գլխին:

— Տես, մեզ շխայտառակես, վարուցանքդ գլուխ հանես, վարկալին ընկերությունը օգնեց: Հողն էլ լավն ա:

— Ի՞նչ ես ասում, Ռաշիդ, էս ա լծկանն ստացա, դու տես ոնց եմ էրեխի պես պահում իմ արտը:

Խոսակիցն ալն չքավորներից էր, որ այս տարի նոր էր սկսում ինքը վարել վարկալին ընկերության ձեռնտվությամբ:

— Էդ հողը հինգ տարի ես իմ ձեռքով եմ փեղնել,— ասաց Ռաշիդը,— Հասան բեկի սրտի ծերը շատ պիտի մղկտա...

— Մղկտում ա՛ մղկտա... դու հանդը գնա, տես ոնց են մերոնք վարում: Էս տարի սաղ մերոնք վարում են: Հրե՛ս, գնում են:

Դեպի այս կողմը շուռ տվին մի խումբ գյուղացիներ, որ լծկաններով ու գութանով գնում էին հանդը: Յուսուֆն էր, Մուփտարը, Ալեքսեյը, որ թողել էր շորանությունը, և մի խումբ ուրիշ

չքավորներ, որ ժողովներում գողգողալուց հետո հիմի լռել էին և հոգածու լուրջ շտապողությամբ գնում էին հանդը:

— Բարի օր, Ռաշիդ, հը՞, ի՞նչ ես կանգնել. էշդ կորցրե՞լ ես...

Ռաշիդի արճիճի շրթունքները բացվեցին, և նրանց միջից փայլեցին նրա ճերմակ ատամները:

— Այ տղա, ասում են էն յալը, որ Հասան բեկից առել ես տվել թաղուն, բեկը շատ ա կատաղել:

Ռաշիդը դարձյալ ժպտաց:

Խումբը գնաց: Ռաշիդը ետ նայեց դեպի դուռը:

— Տոպրակը տուր, անա՛:

Ռաշիդի մայրը դուրս բերեց մի սևացած տոպրակ, որ նոր էր կարկատել, պոկել թելը և տվեց նրան:

— Քիչ բե՛ր, մնացածը ես ու Ջավահիրը կբերենք: Էնքան որ էսօր հաց թխեմ:

— Լավ:

Ռաշիդը տոպրակը նետեց ուսերին, գնաց ձորը, Ալու ջրաղացը՝ ալյուր բերելու:

Առավոտը ջինջ, թափանցիկ աղբրաջրի պես խաղաղ կանգնել է գյուղի, հանդերի ու սարերի վրա: Ծամփի վրա հանդարտ ճրվողում էին ճնճողուկները: Գյուղը հանգիստ ծխում էր, և հանդերից հասնող կովերի բառաչն ու հոտաղների խուլ աղմուկը քաղցր հալվում էին այդ խաղաղության մեջ:

Գարնանամուտը տոնվում էր բնության մեջ, բնական ծեսով:

Ռաշիդը մեղմ սուլելով, ինչպես նրա սովորությունն էր, գլուխը կախ, քարերին նայելով իջավ ձորը և սկսեց մոտենալ ջրաղացին:

Հանկարծ վեր նայելով ջրաղացի հետև, ձորի շարունակություն մեջ նկատեց Ալուն, որ քարի հետև կանգնած ծիծաղելով իրեն ձեռքով էր անում:

Ռաշիդը գնաց նրա մոտ:

Ալին նստած էր գետակի ափին և լվացած կարմիր թաշկինակը փռել էր քարին, կարծես սպասում էր, որ շորանա:

— Ի՞նչ ես անում էստեղ,— հարցրեց Ռաշիդը:

— Աղլուխս լվացել՝ դրել եմ շորանա: Նստի՛,— ասաց Ալին,— ցորենը հլա չի աղացված: Հմի կպրծնեն:

Ռաշիզը մնաց կանգնած:

Ալին պառկեց գետնին:

— Լսի՛ր, Ռաշիզ, ասում են՝ թեկնածուների ցուցակը պտի գնեն գեղի կոմունիստների առաջ: Պարզ ասա, մեզ համար ի՞նչ վկայություն պտի տաս:

— Դե կդնեն՝ կխոսանք էդ մասին:

— Դե, քեզ տեսնեմ, մեզ շխալտառակես... Հա՛, մեկ էլ մի բան, ամա մարդու շասես, — Ալին վեր կացավ, շորս կողմ նայեց և պատրաստվեց ասելու ինչ-որ գաղտնիք: Հանկարծ նրա աչքերը շարժպիտ նայեցին Ռաշիզի վրա, խլեց ձեռքերը և սկսեց քաշել դեպի գետակի ափը: Ռաշիզը ընդոստ շարժումով իրեն ետ քաշեց, բայց Ալու պողպատի ձեռքերը կպել էին նրա ձեռքերին:

Սկսեցին քաշքշվել, թափ տալ իրար: Ոչ մի ձայն, բացի նրանց հետքը և խիճերի գոռոռոցը:

Իսկույն քարերի հետևից բուսան Քյարամը, Հյուսեինը, Ալի-Նաբին, Ասադը, որոնցից վերջինը առաջ գցեց իրեն և խանչալը պլտկած, բերանը ծոմոելով հարձակվեց Ռաշիզի վրա: Սկսեց ցատկոտելով պտույտ գալ նրա շորս կողմը, հետո նշան դրեց փորին և շունչը փուքսի պես դուրս փչելով՝ ընդոստ հարվածեց: Ռաշիզը սուք ծղրտաց, բայց իսկույն ձայնը խզելով կծկվեց փոքի վրա: Հետևյալ հարվածների ժամանակ նա ավելի թույլ ցնցումներ էր անում: Նա վնդաց, ատամները կրճտեց ու սկսեց նոր թափով մաքառել Ալու ձեռքից պոկվելու համար: Ալին քացով տվեց նրա փոքին, բոթեց թափով ու խուպտ ձայնով ասաց.

— Դե՛, յալլա՛, ճղե՛ք...

Խումբը վայրկենապես ցրվեց, ընկավ քարերի արանքն ու սղտակեց դեպի գյուղ:

Հեռվից դռներ բացվեցին աքազ-արագ, ինչ-որ կանայք փողոցը կտրեցին փախան իրենց տները: Տներից գուրս պրծան տեսանդիստ գլուխներ:

— Ա՛յ տղա, հարա՛յ տվեք, ա՛յ տղա, հարա՛յ...

Գոռաց մի գյուղացի և տուրակը նետելով իր կնոջ երեսին վազեց դեպի գեղամեջ: Շները հաշեցին ու վեր կացան տեղներից: Կտուրներից ու դեզերի արանքներից գյուղացիք պոկվեցին դեպի ձորը:

Ու մինչ սրանք ձորաբերանից նետվում էին հերթե՛՛ հարաշիզը օրորվելով շարժվում էր դեպի գյուղը, նրանց հանդեպ, նա գտնատ էր, ձեռքերը դողում էին: Դիմհար տալով խոշոր քարերին՝ նա գերմարդկային ճիգ էր անում առաջ գալու:

— Ա՛յ տղա, ա՛յ տղա, ա՛յ տղա, — շփոթված ու շարժա-նալով ասել ճի՛նչ է պատահել, մոտ վազեց գյուղացիներից մինքր:

— Զե՛ս տեսնում... Խփեցին... — լփոտեց Ռաշիզը և դեմքը ծամածուրով ցավից՝ նստեց քարին:

Նրան բռնեցին: Նա փլվեց ինքն իր վրա — պառկեցրին:

— Ո՛վ խփեց, — հեիհե վազելով մոտ՝ հարցրեց խորհրդի քարտուղարը:

— Հասան բեկի տղերքը... Ասադը, Ալի-Նաբին...

Աչքերը փակեց:

Կացակումած, շնչասպառ վրա վազեց Ռաշիզի ղոքանչը և նստելով գլխավերևը՝ ձեռքով բռնեց նրա գլուխը: Ռաշիզի մատներից արյուն էր գալիս, որ սկսում էր թանձրանալ, սևանալ: Խեղ փորի տակը թրջվում էր...

— Ա՛յ բու տունդ քանդվի, ո՛վ էր... — հարցնում էին նորա-նոր եկողներ և գլուխները կոխում կանգնածների թևերից ներս՝ նայելու:

Կատաղի, զնդակի պես մեջ նետվեց Յուսուֆը, նայեց Ռաշիզին, գոռաց ու դամփոխ պես ետ վազեց:

— Աղա, կանչեք, ձեն տվեք տղերանց, վազե՛ք, — ծղրտաց նա վայրի ձայնով և ոռնաց դեպի հանդերը:

— էհե՛ե՛ե՛յ...

Ռաշիզը ծանր ու դողդոջուն շնչով օդը թոքերն էր քաշում: Գյուղխորհրդի քարտուղարը գրեց Հասան բեկի որդիներին, Ասադին, Ալի-Նաբու անունները և ճիգ էր անում Ռաշիզին ստորազրել տալու:

Հեռու դաշտում վերուվար էին ոտոտառում հինգ ձիավոր: Միլիցիան էր, որ գալիս էր կատաղի:

Յուսուֆը կարմիր կակաշ դառած, աչքերի բիբերը ահռելի ցլթով այս ու այն կողմ էր վազում և բռնելով մեկ Սոյունի, մեկ Խուրշուդի օձիքը՝ գոռում էր սպառնալի թե՛ նրանց, թե՛ ամբողջի վրա:

— Ո՛վ էր, ո՛վ տեսավ, ասեք, թե չե՛՛ աղիքների կթափեմ: Ամբողջ պապանձվել էր:

— Ա՛յ տղա, ո՞վ կըլի, նրանք են, էլի՞...— գոռաց Մուխտարը և շրթունքները կծելով պոկվեց դեպի Ալու տունը:

— Տվե՛ք, դրանց քոքը կտրեք,— գոռաց Յուսուֆը և վազեց Մուխտարի հետևից:

Բահերով զինված ամբոխը, որի մեծ մասը չքավորներ էին, ընկան Յուսուֆի և Մուխտարի հետևից դեպի Ալու տունը:

Դուռը, որ խորամանկորեն բաց էր, հիմի ստիպված փակվեց: Ամբոխի մեղրաճանճի թաքունը ծեփվեց տան դռանն ու կըտրանը: Բահերով սկսեցին թակել դուռը:

— Դո՛ւս, շուն շան որդի, դո՛ւս: Կտուրը պոկում էին, կարծես ուզում էին այնտեղից թափվեն ներս: Պատից քարեր էին գլորում:

— Դո՛ւս, գլխներիդ կթափենք տունը, դո՛ւս արեք... Ամբոխը եկավ, ծով կապեց: Նրանք պապանձված, հեխհ նայում էին չքավորներին, որ կատաղի գոռոցներով պատրաստ էին ծվատել ամեն ինչ: Ինքնադատն անխուսափելի էր:

— Այ տղա, ետ քաշեք դրանց,— գոռաց գյուղխորհրդի քարտուղարը, երբ կատարածուններն ու խորհրդի անդամները հավաքվել էին: Նրանք առաջ անցան ամբոխին զսպելու: Բայց հնար չկար մտնելու հեղեղի հոծ հորձանքների մեջ:

Ձորաբերանից գնդակների պես ներքև թռան միլիցիոներները, որոնցից առաջինը գլխարկը պոկված, մազերի փունի աչքերին թափված նետվեց ուղիղ ամբոխի մեջ: Փրփրած ձիու շունչն ու քրտնքի հոտը խփելով ամբոխին՝ ճղեց, խրվեց մեջ և գետնի քարերը սմբակների տակ շարդելով գոռաց ու կանկառավ Ալու տան դռանը:

— Ետ քաշվեք, ե՛տ, ե՛տ...— գոռաց շնչասպառ միլիպետը մտրակը օդի մեջ թափ տալով ցած թռավ:

Ամբոխը խմբվեց նրա շորս կողմը:

— Սրա՛նք են, Հասան բեկի տղերքը, սրա՛նք են, բռնե՛ք...

— Սպասե՛ք, յուղաշլա՛ր, սպասե՛ք... քաշվե՛ք...

Միլիցիոներներն սկսեցին ցրել ամբոխը, որ ետ քաշվելով իսկույն կրկին օղակում էր նրանց:

Միլիպետը մոտեցավ դռան և հանդարտ ծեծեց:

— Բա՛ց արեք դուռը...

Դուռը կիսովին բացվեց, դուրս նայեց Ֆաթման: Միլիպետը

ներս նայեց: Դռան հետևից առաջ եկավ Ալին: Նա սփրթնած նայեց միլիպետին և լռեց: Միլիպետը շուտ եկավ դեպի միլիցիոներները:

— Ժողովուրդը հեռացրեք:

— Քաշվեք, յուղաշլա՛ր, հե՛ռու կաղնեք...

Ներս մտան երկու միլիցիոներ և ձեռքակալեցին Ալուն: Սա լարված հանդարտությամբ, բայց խուլ հարցրեց.

— Ի՞նչ ա ըլել, ինչի՞ եք բռնում:

Մի միլիցիոներ մնաց այնտեղ, Ալու մոտ իսկ միլիպետը մյուսների հետ ձի նստեց, քշեց դեպի գյուղը: Ամբոխը հետևեց նրան:

Շները հաչեցին Հասան բեկի դռանը, բայց վախենալով ամբոխից՝ փախան կտուրը:

Դուռը բացվեց, և գաճի պես սպիտակ դուրս եկավ Հասան բեկը: Նրա հետևից դուրս նայեց և Հյուսեինը:

— Ի՞նչ խաթա յա, ո՞վ ա արել,— կակազեց Հասան բեկը,— ախր աչքիս դուս գալն ուզում էի, Ռաշիդի սպանվելը ոչ...

— Քավթառ շո՛ւն,— գոռաց Յուսուֆը,— արուն կթափե՞ս...

— Սո՛ւս կացեք, յուղաշլա՛ր, մի՛ խոսեք,— սաստեց միլիպետը:

Ամբոխը մոմռաց և սկսեց կիսաձայն հայհոյել, անիծել:

Հասան բեկի տանը վայնասուն ընկավ:

Նույն կարգով ձեռքակալվեցին Ղասումը, Մուսան: Քյարամը կորել էր Ալի-Նաբու հետ...

Ռաշիդը ուշքը կորցրեց: Մեռնում էր: Ամբոխը նորից լցվեց ձորը:

Բլրի ծայրից երևաց նրա կորաքամակ մայրը, որ սայթաքելով վազում էր ձորը: Նա հասավ Ռաշիդի ընկած տեղը, հեռվից նայեց, ցնցվեց և հանկարծ ոչ մարդկային վայրի ձայնով կռնչաց, ընկավ Ռաշիդի փորի կողքին, գետնի վրա: Արյունը թրջեց նրա ճակատը, նա դողահար վեր նստեց, ծնկաչոք նայեց որդուն, ծր-ղըրտաց ու սկսեց հառաչել, զոռ անել, որ լացը գա: Արցունք չկար: Հետո հանկարծ փլվեց:

Ու սկսեց պառավ ձայնով մի բայաթի, մի ողբ, ոռնոց:

Սկսեց անիծել Ռաշիդի բախտը՝ օրուց-մանկուց սև: Անիծեց այն օրը, որ ծնեց Ռաշիդին, որ ցավերով բալուլեց ու ցավերով

մեծացրեց նրան: Հետո սկսեց գովել նրա հասակը, նրա անունը, որ Ռաշիդ է, ասաց, որ իր Ռաշիդը ջիվան կյանքը սևացրեց, որ քյասիբի օրը լուսանա:

Ու պառավի խուպոտ ձայնը մայր-գայլի վայրի շնչով կաղ-կանձում էր, կտրատում նրա սիրտը, ուզում էր այնտեղի արյունը դուրս պոռթկացնել:

Նրա խորշումած, սև բերանը դուրս էր ժայթքում մի գանգատ, որ այդ այլանդակված, շարշարված մարմնի մեջ կուտակված էր հին օրերից, անգամ դարերից՝ բնկության ու բռնության դեմ:

Ու այն «քյասիբները», որոնց լուսացած օրը երգում էր նա իր որդու դիակի վրա՝ այդ Յուսուֆը, Մուխտարը, Դուրսունը և Յուսուֆները, Մուխտարները, Դուրսունները, անուններ՝ միանուն, միասիրտ՝ շրջապատել էին Ռաշիդին ու նրա մորը, մտիկ էին տալիս հերոսին, որ աչքերը չուած նայում էր իր մահվան:

Կեսօր էր, որ քննիչը ավարտելով արձանագրությունները՝ վեր կացավ տեղից.

«Վերջացավ. պահել կալանքի տակ»:

Գյուղխորհրդի շենքը պաշարող ամբոխն սկսեց ցրվել: Հասան բեկը, Ղասումը, Մուսան, Ալին և Հյուսեինը կալանավորվեցին:

— Օձաճուտը կորավ՝ Քյարամը,— գոռաց Մուխտարը,— օձաճուտը գտեք, կմեծանա, կգա՛...

— Էլ էդ օձը իր պորտով չի կարա անցնի էս սարերը,— ձայն տվեց Յուսուֆը.— Ռաշիդը դրա համար չմեռավ, որ օձաճուտերը գան:— Աւ բահը թափահարեց օդի մեջ:— Թող գան ու տեսնե՛ն...

Զբավորները մոմոացին և սկսեցին խմբվել գիակից հեռու կալի մեջ...

Դոզդվն սկսվեց...

1929 թ.

Փողոցը ամայի ձգվում էր Երևանի Գետառի ափով, ուր աք-նակներն ամբողջիկների պես իրար թևանցուկ արած ծուռումուռ կանգնել էին գետի գծով:

Տները լուռ էին, կյանքը թաքնվել էր նրանց մեջ ու սակվել: Այգիների հողե պատերը արկվա՝ նրա նարնջով դեղնել՝ կեսօրին թաքցնում էին մոռ ու ճերմակ նորածաղիկ ծառերը: Ապ-րիլը փչում էր նրանց ճյուղքերի վրա և փթթեցնում կոկոնները:

Մի երիտասարդ թրքուհի էր շտապ ու մանրիկ սահում գե-տափի շավիղներով: Նրա մատղաշ ուսերի ու հասակի վրա ծաղ-կած շադրան ալիք-ալիք վետվետելով մատնում էր մի բարակ ու կարկառուն իրան:

Նա շադրան դեմքին օղակել և նուրբ ու պիրկ մատներով կզակի տակ հանդույց էր բռնել: Եվ այդ շրջանակի մեջ ամփոփ-վել էր նրա փղոսկր դեմքը, նշաձև աչքերն ու մութ ծիծեռնաթև, սլացիկ ունքերը:

Նա մտախոհ՝ գետնին էր նայում, բայց միտքն ուրիշ տեղ էր: Երբեմն միայն ցնցվում, ինչ-որ խոռվքի մեջ ետ-ետ էր նայում՝ զգալով, թե ինչ-որ այնտեղ մեկն իրեն է հետապնդում:

Բայց ոչ ոք չկար: Տներն էին միայն կարկամ քարացած՝ նա-լում նրան իրենց միջնադարյան պատուհաններով, որ ամայի էին՝ ինչպես քարայրներ:

Թրքուհին ստվերի պես սահեց, գնաց ու հասնելով մի այգու՝ կանգնեց, նայեց եկած ճամփի գծով ետ ու ապա դուռը հրելով մը-տավ ներս: Այգում մի քանի տնակներ կային: Մոտենալով մե-կին, բաց արեց դռան կողպեքն ու անցավ մի փոքրիկ սենյակ: Լայն ու ծանր տախտի վրա նետելով շադրան՝ նստեց տաբուրե-

տին և մնաց անշարժ, ձեռքին շթի փաթեթը, որ գնել էր բանկոտպից:

Մտախոտով էր: Աչքերը հառած մի կետի նայում էր հատակին և ինքն իրեն խոսում կարծես: Հարց էր տալիս իրեն և պատասխանը չկար կարծես:

Հանկարծ լսեց այգու դռան շխկոցը: Ցնցվեց, վեր կացավ, մոտեցավ դռանը և արանքից նայեց:

Մի երիտասարդ տղամարդ էր եկողը, արագ ու ըստ երևույթին դայրացած:

Երբ ներս էր մտնում՝ կինը բաց արեց դուռը, այնպես որ երիտասարդը կարծես օդի մեջ մտավ ներս:

Երիտասարդն անխոս զնայց նստեց պատուհանին ու սկսեց դուրս նայել: Նրանք երկար ժամանակ մնացին այսպես անշարժ և թվում էր թե խոսում են իրար հետ, այնքան մտքերը թափանցիկ էին և իրար հասկանալի:

Երիտասարդը փնշաց, վեր կացավ, մի անգամ անցավ սենյակի միջով և ապա կանգնեց կնոջ առջև:

— Ժողովի՞ց ես գալիս...

Կինը նրան նայեց լիքը աչքերով և լռեց:

Երիտասարդն սկսեց ծխել և ման գալ սենյակում:

Ըստ երևույթին հարցը հին էր և նման պատասխանը նույնպես:

Երիտասարդը կողքանց մտիկ տվեց կնոջը, ծխախոտը դեռ կիսատ դեն գցեց, ապա վառելով նորը՝ զնայց էլի նստեց պատուհանին ու հառաչեց: Կինը պայծառ լուսալի աչքերով գրկեց նրա տխուր դեմքը և կրկին խորասուզվեց իր մտքերի մեջ: Երիտասարդը ծուխը դառնագին քաշեց թոքերը և այրվելով մղկտաց:

— Էլ ի՞նչ կյանք է, երբ մարդու իր կնիկը իրենը չի:

Երիտասարդը մայրական ջերմությամբ զգաց իր կնոջ շնչից, որ դիպավ նրա քունքին: Նա մի պահ մեղմեց կնոջ հպվածքից:

— Ինչո՞ւ ես էդպես խոսում. Ասադ, — ասաց Նիգյարը գուրգուրոտ ձայնով, — բա ես ո՞ւմ կնիկն եմ:

— Չեմ իմանում:

— Բա ամոթ չի՞, ժողովի գնալով ուրիշի կնիկ գառա՞:

— Չեմ իմանում, — բորբոքվեց Ասադը, — որ ժողով ես գե՞նում՝ աչքերս մթնում է, ուրիշ բան ես դառնում:

Նիգյարը շոյեց ամուսնու մազերը:

— Ոչինչ էլ չեմ դառնում: Ինչ որ եմ՝ էլի էն եմ:

Կնոջ փայփայանքը շոյեց Ասադի վերքը: Նա ուզում էր զըրկել կնոջ դալար իրանը, բայց, — առաջին անգամ իր ամուսնության մեջ — քաշվեց նրանից: Նրա մեջ զարթնել էր ինչ-որ ինքնասիրություն, օտարոտի զգացմունք իր կնոջ առջև: Կնոջ՝ որին նա սիրել էր միայն և ուրիշ զգացմունք չէր տածել:

Երբ ամուսնացան — երեք տարի առաջ — Նիգյարը մեղմ ու հնազանդ գազել էր: Սիրում էր Ասադին. նրա համար էլ թողեց դպրոցը, թեթևամտորեն զնայց սիրո հետևից: Ապրեցին երկու տարի սիրո մեղմ երջանկության մեջ: Ասադը, որ սիրելով Նիգյարին և ծուլանալով թողել էր դպրոցը և ապա մտել կոոպերատիվ ծառայելու՝ թողեց նաև ծառայությունը և սկսեց «քեֆ քաշել» հոր ուղարկած գրամներով: Նրանք միջակ այգետեր էին: Բայց ահա վերջին տարին դեպքը ծեծեց նրանց անդորր տնակի դուռը և Նիգյարին կանչեց դուրս: Նյա ընկերները, դպրոցն ավարտելով մտել էին ակումբ և ձեռքով էին անում, կանչում Նիգյարին: Եվ Նիգյարը, որ մեղմաբարո էր ըստ երևույթին, հոգու խորքերում ինչ-որ աներևույթ մտքերի խլրտում ուներ: Ուսման սերը, որ կարկամել, սառել էր Ասադի սիրուց՝ սկսել էր վառվել նորից: Եվ ահա, երբ ընկերները նրան ակնարկեցին ակումբ մտնել և ուսումը շարունակել՝ նա զարթնել էր երջանիկ քնից:

Ասադը ձեռքը տարավ դեպի գլուխը, ազատեց Նիգյարի գլխի քաղցր ծանրությունից և շարժվեց տեղում:

— Ասա՛դ, ի՞նչ կա, — գուրգուրոտ փսփսաց Նիգյարը և դեմքը հակելով Ասադի դեմքին սկսեց նայել նրա աչքերի խորքը:

Ասադը լուռ ու կշտամբանքով մտիկ տվեց նրան և չպատասխանեց:

— Չես ուզում, էլի, որ գնամ ակումբ, — խոսեց մեղմաժպիտ Նիգյարը և սկսեց նրա մազերը շոյել:

— Հը՞, — կրկնեց Նիգյարը:

Ասադը գլուխը շարժեց բացասական և մռայլվեց:

Նիգյարը բաց թողեց նրան և մի վայրկյանում ամբողջ գուրգուրանքը սառած, լուրջ ու անկիրք ետ գնաց նստեց տաբուրետի վրա:

Ու ապակե հայացքով սկսեց նայել Ասադին:

Հետո աչքերը պաղած հատակի մի կետի վրա. կարծես խորհրդածելով ասաց.

— Ուսումդ կիսատ թողիր, ընկերներ ճարեցիր, խելքից հանեցին քեզ, դուրս բերել տվին կոոպերատիվից, դարձրին անգործ...

— Ծս իմ քեֆն եմ քաշում,— գոռաց Ասաղը,— ո՞ւմ փողն եմ ուտում, իմ հոր փողը չի՞:

Նիգյարը շարունակեց.

— Աշխարհքից կտրվեցիր, հիմի էլ ինձ ես ուզում կտրել մարդամիջից: Անջախ մի լույս աշխարհք եմ դուրս գալիս, բան եմ տեսնում:

— Հա՛... էդ քո Ֆաթմա՞ն է լցրել գլուխդ, նա՞ է քեզ էդ պես դուրս քաշում: Ծս էն զանջըղի հախից կգամ:

— Ասա՛դ, Ասա՛դ, ամոթ չի՞ էնպես մաքուր աղջկան, իմ ընկերուհուն, անպատիվ խոսքեր ես ասում,— աղաչական ձայնով կշտամբեց Նիգյարը: Հետո ժպտաց.

— Ծս ուսման սերը փոքրուց ունեի: Ֆաթման ինձ շատ բան է սովորեցնում. բայց ես էլ իմ խելքն ունեմ, Ասադ: Ծս տեսնում եմ, որ ես էլ կարող եմ արհեստ սովորել, գործ անել: Իմ ընկերուհիները, դասընկերուհիները գնում են ակումբ, սովորում, աշխարհք են դուրս գալիս, ես ինչո՞վ եմ պակաս:

— Նրանց աչքը դուրսն է: Մարդ ե՛ս փնտրում:

Նիգյարը սառեց մնաց արձանի պես: Նա այդպես էր, երբ վիրավորվում էր:

Լռեցին:

Դուրսը, այգում նորեկ գարունն իր գործի վրա էր: Հովը ցընցում էր սալորենիների ճյուղերը և ծաղիկների ձյունը փշում արոտի վրա: Ահա և «բաբաչաստի» շտաշտոցը դիմացի ընկուզենուց: Փողոցից լսվեց երկխաչի լացը: Բայց ոչինչ չէր խանդարում ամուսինների ծանր լուռությունը:

Նիգյարը վեր կացավ, չիֆի փաթեթը դրեց տոլարը, հանեց շոբերը, հագավ ամենօրյան և սկսեց տան գործին նայել: Կարծես դրանով պիտի սկսվեր խաղաղ մասը նրանց կենակցության: Նա վառեց պրիմուար և ջուր դրեց վրան, հետո անցավ ճաշի պատրաստության:

— Ասաղը վեր կացավ:

— Ո՛ւր,— հարցրեց Նիգյարը:

Ասաղը կանգնած մնաց մի պահ և խուլ ձայնով պատասխանեց.

— Չգիտեմ: Ձհանդամը:

— Չայխանա չգնաս:

— Ինչի՞ չգնամ:

— Հենց էնպես: Ընկերներիդ կպատահես:

— Ծս էլ հենց ընկերներիս եմ ուզում պատահեմ,— շար շեշտով խոսեց Ասաղը:

Նիգյարը լռեց և մեղմ նայեց նրան:

Ասաղը սպասում էր, թե Նիգյարը մի բան էլ ավելացնի: Մի բան, որ հանդուստացնի իր խոռվքը: Նա հիշեց իր սիրահարության առաջին օրերը, երբ Նիգյարից էլի սպասում էր մի խոսք, որից կախված էր նրա կյանքի ու մահվան հարցը— այնքան սիրում էր Նիգյարին: Հետո տիրեց Նիգյարի սիրուն, հանդարտվեց և մոռացավ իր առաջին սիրո մտատանջը, վստահ տեր դառավ Նիգյարի հոգուն և մարմնին:

Բայց հիմա կարծես առաջին սիրահարության տարակույսները վերադարձել էին— նա կրկին անգամ Նիգյարին տիրելու հոգով էր տոգորված: Տիրելու՛— կարծես Նիգյարը մի թանկագին իր էր և ընդունակ միայն տիրվելու:

Ասաղը հույս ուներ, որ ընկերներին պատահելու սպառնալիքը գոնե կարող էր մի փոքր մեղմել Նիգյարի համառությունը: Բայց զուր: Նիգյարը ոչինչ չասաց, կարծես հաշտվեց այդ մտքի հետ:

Ասաղը դուրս գնաց և դուռը խփեց հետևից:

Նիգյարը դուռը բացեց և հետևից կանչեց.

— Ասա՛դ:

— Ասաղը կանգնեց մոայլ:

— Ի՞նչ կա:

— Ճաշին շուշանատ:

Ասաղը շուռ եկավ՝ գնաց այգու դռնով դուրս:

Նիգյարը մտախոհ անցավ տնային գործերին: Ետևով տարվեց նրանց հոգսով և սկսեց մոռանալ ամուսնու հետ ունեցած անախորժ խոսակցությունը:

Ներս մտավ մի ոչ երիտասարդ կին, հարևանուհին: Նա կատ-

վի աչքերով մտիկ տվեց Նիգյարին, կարծես ուզում էր գողանալ նրա գաղտնիքը:

— Ի՞նչ ասաց Ասաղը, — հարցրեց նա՝ կարծես Նիգյարին հարցաքննելու էր եկել:

— Ոչինչ:

— Չի ուզում էլի՞, որ ակումբ գնաս:

Նիգյարը չպատասխանեց իսկույն: Հետո, քիչ անց ինքն իրեն հետ խոսելու պես մոմոաց.

— Կուզի, ի՞նչ պիտի անի որ...

— Հալբաթ որ կուզի... որ գնում ես՝ ի՞նչ կարող է անի... փորձող աչքերը Նիգյարին հառած խոսեց հարևանուհին:

Բայց դեմքին մի խորամանկ և շարախինդ ժպիտի փայլ կար: Սպասում էր մի էֆեկտավոր նորություն ամուսինների կյանքի մեջ, որ գրգռում էր նրա հետաքրքրությունը:

Բայց Նիգյարը ոչինչ չպատմեց: Հարևանուհին ինքն սկսեց.

— Հիմի կնանիք ակումբ էլ են գնում, թատրոն էլ ու ամեն տեղ էլ: Ո՞վ է հիմի մտիկ տալիս թե ի՞նչ կասեն: Հիմի նոր օրենք է:

Նիգյարն աչքի տակով մտիկ տվեց նրան և էլի ոչինչ չպատասխանեց:

— Դե ասենք՝ ի՞նչ կա որ, — շարունակեց հարևանուհին, — քու մարդը ուսումից հասկացող մարդ է, ջահել է, հակառակ է քեզ, բայց չի ծեծում: Այ իմպանների բանն ասա, որ մարդս սեյիդ է, ինչ ասի՝ պիտի լսեմ, կատարեմ:

— Որ ուզես՝ չես կատարի, — պատասխանեց Նիգյարը հանգիստ:

— Ո՞նց չեմ կատարի: Կսպանի ինձ:

— Չի սպանի: Հիմի էն ժամանակը չի:

Հարևանուհին աշխուժացավ.

— Բա լավ: Թե էդքան հեշտ բան է նոր օրենքով ապրելը, ինչի՞ չես կարում մարդիդ համոզես, ինչի՞ եք կոչում գիշեր-ցերեկ:

— Չենք կոչում: Համոզում եմ:

— Բա որ չհամոզվի՞:

Եվ հարևանուհին շարախինդ ժպիտով նայեց Նիգյարին:

— Կհամոզվի:

— Խոսքի, չհամոզվեց ու կամ չթողեց կամ ինքը հեռացավ:

— Չի հեռանա:

Հարևանուհին լռեց մի պահ և ապա քննող հայացքը մեխելով Նիգյարի աչքերին՝ հարցրեց.

— Շա՞տ եք սիրում իրար:

Նիգյարը ժպտաց մեղմ ու տխուր:

Նրանք լռեցին: Պրիմուսի խշշոցն ու գետի վշշոցը միախառն անդուկով օրորում էին սենյակի լուսթյունը: Նիգյարը դեսուդեն էր ընկնում իր տնային գործով զբաղված, իսկ հարևանուհին մըտիկ էր տալիս նրան, չափում ոտքից գլուխ՝ կարծես առաջին անգամն էր տեսնում: Եվ իրոք՝ Նիգյարի գողտրիկ, կառուցիկ ոտքերը, նրա ճոճուն իրանը և գիշեր ունքերը առանձին գրավչություն ունեին այդ պահին: Նայեց նրան հարևանուհին, յուրովի ժպտաց և գլուխն օրորեց.

— էս տեսակ գործերի մեջ սիրուն կնիկ լինելը խաթա բան է, Նիգյար: Զգո՛ւյշ կաց:

Նիգյարն ընդոստ ետ նայեց նրան:

— էդ ինչո՞ւ ես ասում:

— Շատ ես սիրուն, ցա՛վդ առնեմ: Ափսո՛ս ես:

Եվ իրոք, հարևանուհին մտատանջ մտքերով էր ասում այդ: Նիգյարը ոչինչ չպատասխանեց: Հարևանուհին վեր կացավ և մի փոքր ևս շորս կողմ նայելով՝ գնաց դուրս:

Նիգյարը կարկամած նայեց նրա հետևից, մնաց այդ դիրքում, մտախոհ, արձանացած և ապա անցավ իր գործին:

Ասաղը մտախոռով դուրս գալով տանից՝ գնաց գետափով վեր, ապա ծովեց դեպի քաղաքամեջ:

Զգիտեր ո՛ւր գնար:

Նիգյարի հետ ունեցած կարճատև խոսակցությունը, որ առաջինը չէր և ոչ վերջինը՝ նրան դուրս մղեց տանից: Նա այդպես էր անում հաճախ, իմանալով որ դա ազդում է Նիգյարի վրա ավելի, քան տանը մնալը և երկար վիճելը: Նիգյարը սկսում էր անհանգստանալ, և երբ Ասաղը վերադառնում էր տուն, տեսնում էր իր վարմունքի ազդեցությունը:

Բայց վերջին ժամանակներս նա նկատել էր, որ այդ գնալ-

կորչելը նույն ազդեցութիւնը չի առնում, որ: Նիգյարը փոխվել է ինչ-որ: Ուստի և շուտ-շուտ հեռանում էր տանից՝ անկարող լինելով տանել այդ անտարբերութիւնը Նիգյարի կողմից:

— Հը՞, ի՞նչ ես ման գալիս,— լսվեց նրա կողքից մի ծանոթ ձայն, և մի բլուզավոր, կեպին զլխին երիտասարդ՝ մազերի փունջը կեպիի տակից ճակատին թափած, կանգնեց նրա մոտ:

Դա նրա ընկերն էր՝ Ալեքսանդրը, չայտանաների մշտական հաճախորդը: Նա կարմրած աչքերով մտիկ տվեց Ասադին և ծուխը բերնից փչելով ձեռքերը գրպանը դրած կանգնեց:

— Ի՞նչ կա, ո՞ւր,— կրկին հարցրեց նա:

— Հենց էնպես: ման եմ գալիս:

— Տանի՞ց ես գալիս:

— Հա:

— Գնա՛նք:

Նրանք գնացին գետն ի վեր:

Ճամփին Ալեքսանդրը շուտ-շուտ կանգնում նայում էր փողոցների կողմը:

— Ի՞նչ ես մտիկ տալի,— հարցրեց մեքենաբար Ասադն առաջ անցնելով և ընկնելով գետափի քարերի մեջ:

— Մի սիրուն կնիկ տեսա եքեկ, երեսը բաց: Շան քածը մի աչքեր ունեք, որ խելքս մաղեց: Ընկա հետևը: Գնաց, գնաց մտավ ահաւրբ: Տեսնես ո՞ւմ կնիկն է: Ման եմ գալիս՝ չեմ կարում տեղը գտնեմ:

Ասադը նրան նայեց անախորժ զգացումով:

— Որ տեղը գտնես՝ ի՞նչ ես անելու,— հարցրեց Ասադը:

— Տեսնենք, ուզում եմ ճանկա գցեմ:

Ասադն անհանգստացավ: Ո՞վ էր կինը և ո՞ւմ կինն էր— գա միևնույն էր. բայց նա խանդ զգաց և միաժամանակ՝ վերավորանք—չդիտեք այն կնո՞ջ, թե նրա ամուսնու ինքնասիրութիւնը հասցրած:

«Ձէ, Նիգյարը չի լինի, Նիգյարին ճանաչում է շունը»,— մտածեց Ասադը, բայց չհանգստացավ: «Գարող է սա Նիգյարի մասին էլ նույնը մտածել և անել»,— շարունակեց նա: Հետո հարցրեց.

— Ի՞նչ կասես. չադրա՞ն լավ է, թե բաց երևուց:

— Բաց երեսը լավ է: Չադրի տակ բան չի երևում, որ աչքդ սիրի: Իսկ բաց տեսնում ես ու հավանում:

— Ուրիշի կնկա՞ն:

— Ումը կուզի լինի, մի հաշիվ է: Մեր փնտրածը կնիկ է: Լավ բան հնարեցին չադրան գցելը:

Ասադը շար հայացքով դիտեց ընկերոջ լկտի դեմքը և երեսը շուտ տալով գնաց առաջ՝ խորասուզվելով իրեն տանջող մտքերի մշուշում:

«Ձէ, Նիգյարին չե՛մ տա սրանց ձեռքը. Նիգյարը չադրան չի՞ գցելու»— վճռեց նա, զգալով, որ դա միակ միջոցն է ազատվելու խանդի այրվածքից:

Նրանք ծովեցին դեպի ներքևի փողոցները և մտան մի թեյարան:

Այնտեղ լցվել էր շուկաների մշտական հասարակութիւնը: Հին խանութպաններ, սպեկուլյանտներ, անգործ, անհայտ մարդիկ և մուշաներ: Նարդիների շրխոցը, ծխի կապույտ քողի մեջ կորած, մոռայլ, ապատիկ դեմքերը, նարգիլի ընկերակցութեամբ երկար ժամեր ապրող մեծավոր մտասույզ տիպերը և թեյատան տիրոջ քրմական լրջութիւնն իր ահագին սամուգարի հետև—այդ ամենն Ասադի համար մոռացութեան հարմար անձեյուն էր: Նա սիրով գնաց նստեց մի խմբի մոտ, որ նարդի խաղացողներին շրջապատած՝ հետևում էր նրանց մրցութեան:

— Որտե՞ղ ես, քյոփօղլի,— նկատեց Ասադին մի սրիկայազեմ երիտասարդ, որ աչքը մի վայրկյան խաղացողներից պոկելով՝ նայեց Ասադին:

Ասադը չպատասխանեց և դառնալով թեյարանատիրոջը՝ թեյ ապսպրեց:

Խաղացողները տարված իրենց խաղերով՝ գրգռվել էին ծայր աստիճան և զարերը գցելիս կամ քարերը շարելիս՝ շրխկացնում էին, զարկում նարդու տախտակին, հետը թունդ հայհոյելով զարին, քարերին ու հանախորդներին:

Նրանք բոլորը բոթորոված աչքեր ունեին և հոգնած գեմքեր: Ունեք փոստա ձայներ էին հանում: Անքուն գիշերների և ցոփութեան քուրք հատկանիշ երևույթները:

Ասադն փոք մտքերի հետ էր: Ալեքսանդրը մի քիչ մտիկ տվեց

ընկերների խաղին, մի քանի խորհուրդ տվեց սրան ու նրան, ապա ետ քաշվեց և թեյ պահանջելով՝ նստեց Ասադի կողքին:

— Է՛, ի՞նչ ես նոթերդ կիտել,— դիմեց Ասադին:

Ասադը չպատասխանեց:

— Գիտեմ, մտել ես կնկանդ փեշերի տակ: Հերիք է, տղա-մարդ կաց: Ի՞նչ ես ջուրը քաշվել,— լրացրեց Ալեքսանդրը, գուշակելով Ասադի մտահոգության պատճառը:

Ասադը մտիկ տվեց Ալեքսանդրին, ուզեց պատմել իր ներքին ցավի մասին, բայց սպասում էր, որ Ալեքսանդրը դարձյալ ստիպի: Բայց Ալեքսանդրը չվերադարձավ իր հարցին: Մինչ Ասադը մարդ էր փնտրում, որի առջև բանար իր սիրտը:

— Գիտե՞ս ինչ, Ալեքսանդր: Ես քեզ իբրև ընկերի կասեմ, մի՛տրդ պահիր: Ես դարդ ունեմ, որից չեմ իմանում ոնց եմ պրծնե-լու:

— Ի՞նչ դարդ:

— Կնիկս ուզում է շողրան գցի:

— Ուզում է շողրան գցի՞, թողնո՞ւմ ես:

— Չեմ ուզում:

— Չես ուզում՝ պրծավ գնաց: Էլ ի՞նչ դարդ:

— Բայց կնիկս ուզում է: Ա՛յ, ցավն ինչ է:

— Բա դու ի՞նչ տղամարդ ես, որ կնկադ ուզելուն ես նայում:

Թող ուզի, ուզի՝ կենա:

— Չի լինում: Վախենում եմ գնա:

Գնա՞: Ո՞ւր պիտի գնա: Հո՞ր տունը: Կթակեն ետ կուղարկեն:

Ասադին ծակեց այս կոպիտ ընթացքը մի խոսակցության, որ նա չէր ուզի Ալեքսանդրի հետ ունենալ: Եվ ընդհանրապես նա նիգյարի կամքի վրա էր պես հասարակ չէր նայում: Սիրում էր նիգյարին և չէր ուզում սիրտը կոտրել: Եվ եթե հակառակեր էլ շողրան գցելուն, ուզում էր համոզելով անել և ոչ թե զոռով:

Ասադը դեռ գոհ էլ չէր, որ ինքը ընկել է այդ ցոփ ու լկտի ընկերների շրջանը: Բայց ինչ-որ ակամա շարժումով նա իրեն ընկած էր տեսնում նրանց ընկերության մեջ և չէր կարողանում պոկվել: Նրանցից Ալեքսանդրն իր դարոցական ընկերներից էր, որը ստահակության համար արտաքսվել էր դեռ ստորին դասարաննե-րից մեկից: Մյուսներն Ալեքսանդրի ընկերներն էին, որ հետո նրա միջոցով դարձան նաև Ասադի ընկերները: Նրանք հինգ հոգի էին

Ներկուր նախկին վաճառականների որդի, որ հիմի այգետեր էին— Սադրին ու Սաֆարը: Մյուս երեքը Երևանի դաշտի գյուղերից էին— նախկին կավածատերերի որդիներ, որ հիմի ապրում էին իրենց տան իրերի մնացորդները ծախելով: Մեկի անունը Ջաֆար էր. սա խմբի պարագլուխն էր: Նրա խոսքերով էին շարժվում մյուս երկուսը— Մամուդն ու Ալին՝ իբրև գյուղացիներ, և այսպիսով, խմբի հեգեմոնիան վերցրել էին «գյուղացիները»:

Ասադը, որ նույնպես գյուղացի էր, Արաքսի ափից, անզգալի կերպով ենթարկվում էր Ջաֆարին, որի խոսքը հեղինակություն էր խմբի մեջ:

Ջաֆարը մարս արեց Սադրին և հաղթական ու շար հայացքով նայեց նրան: Սա բարկացած ետ հրեց նարդին ու թեյ պահանջեց: Մյուսները ետ նստեցին: Ապա նայելով Ասադին՝ սկսեցին ծաղրել նրան.

— Քյոփոզլի, կնկադ թողնում ես, որ ակումբ գնա՞,— նկատեց Ջաֆարը՝ աչքի տակի կապուտցած դեմքը լկտիորեն դարձնելով Ասադի վրա:

Ասադը կարմրեց.

— Ո՞վ է թողնում որ գնա:

— Ո՞վ է թողնում, ա՛յ, դո՛ւ: Տեսնող եղել է: Գնում է, ի՞նչ ես թաքցնում, սարսա՛ղ,— վրա բերեց Սաֆարը:

Ասադի ինքնասիրությունը վիրավորվեց:

— Իմ կնիկն ակումբ չի գնա: Չեմ թողնի:

— Մի կնիկ, որ քեզ պես ջնջոց տղամարդ ունենա, ակումբ էլ կերթա, ամեն տեղ էլ:

Ասադը բարկացավ.

— Բերանդ մաքուր պահի, շո՛ւն շան որդի, իմ կնիկն ուր էլ գնա, նամուսով է:

— Դե, որ նամուսով է, թող չգնա:

Ասադը վճռական ձայնով խլացրեց նրան.

— Չի էլ գնա. կտեսնես:

— Կտեսնեմ: Էն է՛լ կտեսնեմ, ոնց կգնաս ակումբի դռանը կանգնեցաս, մինչև կնիկդ դուրս գա ակումբից:

Այս ամենը խորապես վիրավորում էր Ասադի նուրբ սիրտը, բայց չէր ուզում ընթացք տալ իր ներքին ձայնին, որ միշտ դրդում էր նրան հեռանալ այդ խմբից: Նա միայն պաշտպանողական

դիրք բռնած՝ դեռ շարունակում էր պաշտպանել իրեն և իր կնոջը, բայց ընկերներն աշխարհ շարունակում էին նրա սիրտը: Ասադն զգում էր, որ Եփզայրի անունը ցեխոտվում էր այդ կեղտոտ մթնոլորտի մեջ, ուստի և աշխատում էր պաշտպանել նրան: Բայց սրտի խորքում զգում էր նաև, որ ինքն էլ համաձայն չի Եփզայրի նոր փորձերին. և էպպես ընկերներին համախոհ է այդ բանում: Թո՛ղ որ իր ըզգացումներն ազելի բարդ էին և այլն: Կամքը թուլացել էր, և զսպանակները լավ չէին գործում: Ահա այս քանի՜ անգամ էր, որ նա վճռում էր հեռանալ այդ փշացած ընկերությունից, բայց դեռ նրա մեջ էր, և այդ լիտի տղաները կեղտոտ ձեռքերով շոշափում էին իր և Նիզյարի մաքուր զգացումները:

Բայց ի՞նչ էր սպասում իրեն: Ի՞նչ էր անելու Նիզյարը: Պիտի նետե՞ր շաղրան, մտնե՞ր հասարակության մեջ, թե՞ պիտի անսար Ասադի արգելքներին և մնար տանը:

Նիզյարը, իր գեղանի Նիզյարը, թռչում էր ձեռքից: Այդպես էր պատկերացնում իր դրությունը Ասադը:

Եվ շէր իմանում ինչի՞ն կառչեր, ո՞ւմ դիմեր, ի՞նչ աներ:

Տղաները վեր կացան: Ճաշի ժամանակ էր:

— Գնանք ճաշարա՞ն,— հրահանգեց Ջաֆարը:

— Գնա՛նք:

Եվ խումբը դուրս եկավ թեյարանից:

Ճամփին խոսում էին պատահած կանանց մասին, սրախոսում, ակնարկներ ուղղում նրանց: Ասադը կատաղում էր. կարծես այդ բոլորը իր հասցեին է:

«Ի՞նչ կլինե՞ր Եփզայրի դրամբյուրը, երբ շաղրան գցի ու անցնի սրանցպեսների մոտով» — մտածեց նա և մի ինչ-որ ծակաց զգաց սրտում: Դա և՛ խանդ էր, և՛ ինքնասիրություն, և՛ շարունակուն՝ ընկերների հանդեպ:

Առան ճաշարան և առանձնացան սենյակի խորշում: Պահանջեցին փիթի և գինի:

Մի կես ժամ անց արդեն նրանք կուշտ ու գինով էին: Ձայները բարձրացան. նրանք սկսեցին բարձր-բարձր քրքջալ, հայհոյել, ծաղրել՝ մյուս ճաշողներին, բացառա՞ծ ժառանգներին, նրանց կամանց:

Հետո խոսք բացվեց Ասադի վրա: Այնքա՞րքը պատմեց նրա և Նիզյարի սրված հարաբերությունների մասին:

Ջաֆարն արհամարհանքով նայեց Ասադին.

— Տես, քո գլխին տղամարդու գտակ է դրա՞ծ թե կնկա լալալ:

— Ինչի՞ ես ասում,— գրգռվեց Ասադը:

— Կնկադ բաց ես թողնում ձեռի՞ց,— հարցրեց Ջաֆարը շեշտակի:

— Ինչի՞ եմ բաց թողնում:

— Չադրան թողնում ես, որ գցի՞:

— Որ գցի ի՞նչ կլինի:

— Ի՞նչ կլինի: Որ գցի՞ էլ քոնը չի:

— Բա ո՞ւմն է:

— Իմը սրանը, խալխինը: Շա՛ն որդի, դու իմ աչքի զարավալն ես, չէ՞ ի՞նչ, երեսը բաց ես անում ու ուզում, որ խալխը կընկղ ձեռիցդ շխլի:

Ասադը զինաթափ էր լինում:

Նա համաձայն էր ներքուստ: Միայն արտաքուստ ջանում էր պաշտպանվել: Նա տեսնում էր աշխարհ, թե ի՞նչ վիճակ էր ըստեղծվելու իր համար, եթե Նիզյարը երեսը բանար:

Եվ վերջին ժամանակները նա միայն մի բանի մեջ էր կենտրոնացրել իր ուշքն ու միտքը — Նիզյարի գեղեցկություն, Եփզայրին դիտելու որպես կնոջ, որպես առարկայի: Տարիներ ապրելով մեղանական կյանքով՝ նա ուրիշ ոչինչ չէր տեսնում Նիզյարի մեջ, բայց եթե միայն կին ու հաճույք: Չէր հասկանում Նիզյարի մղումների բուն պատճառը: Տղամարդու սեռական զգացումը կուրացրել էր նրան:

Եվ նա հիվանդագին հայացքով էր նայում կյանքի վրա: Ծրա համար մի նպատակ կար միայն — Նիզյարին թաքցնել իր ծաղկավոր շաղրայի տակ, մտնել այդ շաղրայի ստվերի մեջ, ապրել իր Նիզյարի հետ, — մենակ, հեռու դիտող և դառող աչքերից:

— Տղամա՛րդ կաց, խո՛սքդ արա, մի՛ թողնի կնկանդ ակումբ քա, շաղրան գցի,— խոսեց Ջաֆարը:

— Որ շա՞ի՞,— տարակուսեց Ասադը:

— Մեծի՛, քո խո՛սքն արա: Վախի՛՛ մի, որ ծեծես՝ կլախի Ասադն ինչ-որ անմիտ քաջալերանք զգաց: Եվ մտածեց:

«Ճիշտն էլ սրանց ասածն է. ես շատ եմ քնքուշ Նիգյարի հետ»:

— Էդ ա,— համոզեց Ալեքսանդրը,— ինչքան կոշտ լինես կնկանըդ հետ՝ էնքան քեզ կլսի: Հին ճշմարտությունն է: Խմի՛:

Գինին գրգռելով Ասադի նյարդերը՝ նոր ուժ լցրեց նրա մարմնի մեջ: Նա քաջալերվեց, զգաց, որ վճռականությամբ կարող է կտորել Նիգյարի համառությունը:

Եվ վճռեց կտրուկ միջոցներով արգելել Նիգյարին ակումբ գնալ:

— Էդ է, դրուստ եք ասում, պետք է կոշտ լինել: Ինչքան փափուկ ես վարվում՝ էնքան կինը համառում է,— խոսեց աշխույժ եղանակով Ասադը և սկսեց խմել:

Եվ արդեն Նիգյարին համոզելը նրան հեշտ թվաց: Նա ուրախացավ և մտերմություն զգաց դեպի ընկերները:

Օրը թեքվում էր: Երիտասարդները վեր կացան և վշտացած ու դանդաղ շարժվեցին դեպի թեյարան:

Նոր հաճախորդներ էին եկել լցվել այնտեղ: Նոր թեյ էր պատրաստվում: Իսկ պատի տակ երկար սաքուփ վրա հանդիսավոր կեցվածքով նստած էր աշուղների դաստան, որ սարքի էր գցում սազ ու դաֆը:

Ջաֆարն ու մյուսները նստեցին իրենց սովորական անկյունում և բուժ ու կուշտ հայացքները հռոտելով հաճախորդներին՝ ըսկըսեցին կիսանիրհուն դիրքերով սպասել աշուղների երգին ու թեյին:

Մթնեց: Թշթշող սամովարը ներս մտավ հանդիսավոր հյուրի պես: Հաճախորդները աշխուժացան:

Մի քիչ անց՝ աշուղն սկսեց ճնկճնկացնել իր սազը: Տիրեց հանդիսավոր լուռություն: Եվ թեյի բաժակները ծնկների ու ավերի վրա՝ հաճախորդներն սկսեցին ունկնդրել աշուղին: Սա սկսեց դեռ նվագել: Նրան ընկերակցեց դաֆը:

— Այ սաղ օլ,— լսվեց այս և այն կողմից՝ աշուղին քաջալերելու համար:

Նրա շեշտ ու կաս-կարմիր դեմքը ժպտաց, կույր աչքերը կծկվեցին և երանությամբ մտիկ տվին առաստաղին, և նա սկսեց «Աշուղ Ղարիբ» հեքիաթը. երգախառն շղթայով ձգվեց, արծարծվեց ու սկսեց գերել ունկնդիրներին:

Երիտասարդ խումբը տարվեց աշուղի հեքիաթով, և կես զինով հայացքներն հռոտ՝ նրանք լսում էին ու հետևում:

Միայն Ասադը հետաքրքիր ու զգաստ՝ ունկնդրել սկսեց աշուղին՝ նրանից սպասելով իրեն կրժող ցավի դարմանը: Նա պատկերացնում էր աշուղ Ղարիբին, զգում էր նրա տանջանքը օտարության մեջ, նրա կարոտը գեղեցիկ Սանամին, նրա արկածալից ճամփան մինչև Թիֆլիս և վերջապես նրա մուրազին հասնելը:

Նրան թվում էր, թե ինքն էլ Ղարիբի պես հեռու է իր Սանամից: Եվ մտքում երանի էր տալիս Ղարիբին, որ թեև հեռու է Սանամից, բայց գիտե, որ նա հավատարիմ է իրեն:

«Ո՛ւր Սանամը, ո՛ւր Նիգյարը»,— մտածեց երիտասարդը դառնորեն և դիտեց: Նրան թվաց թե արդեն կորցրել է Նիգյարին և զարմանում էր, թե որքան երկար են թվում այն ժամերը, որ անց է կացրել Նիգյարից հեռու:

«Տեսնես ի՞նչ է անում նա հիմի, տանը, մենակ»— մտածեց Ասադը և մղվեց դեպի տուն: Այո, գնա տուն, տեսնի ի՞նչ փոխվեց, ի՞նչ կասի հիմա Նիգյարը:

Եվ առանց խոսելու ընկերների հետ, աննկատելի դուրս եկավ թեյարանից և գնաց տան ուղղությամբ:

Գինին չէր հարբեցրել նրան, բայց մի քիչ աշխուժացրել էր նրա նյարդերը: Նա տրամադրված էր խոսելու, պատմելու, լաց լինելու, սիրելու...

Հասավ իրենց տան դռանը: Փակ էր: Դուրս եկավ հարևանը: Ասադը նայեց իր բնակարանի կողմը: Ծրագ չկար: Տագնապեց.

— Նիգյարը տանը չի՞:

— Չէ,— մեխեց հարևանը:

— Բա որտե՞ղ է:

— Չեմ իմանում:

Ասադը զգաց, որ թուրքը շորանում է բերանում: Նա վիրավորվեց. «Ինչպես թե չի իմանում: Այդպիսի բանը ինչպե՞ս չեն իմանա»,— մտածեց բարկությամբ, կարծես հարևանը պարտավոր էր հետևելու Նիգյարին:

Ասադը ետ դարձավ և սկսեց արագ-արագ քայլել: Ո՛ւր էր գնում, ինքն էլ չգիտեր: Նայեց դեսուդեն, գուցե մի տեղ երևա Նիգյարը, կամ պատահի ծանոթ մեկը և տեղեկություն տա, թե ուր է նա: Նա սկսեց քայլերն արագացնել:

«Չլինի՞ որեւէ տղամարդու հետ է՝ գնացել...»,— անցավ այս միտքը նրա ուղեղի միջով և նետի պես ծակեց:

Եվ ո՞վ է նա, որ տարել էր նրան: Ի՞նչ բան ունի նրա հետ Նիգյարը:

Ասադն սկսեց հորինել մի ամբողջ պատկեր, գայթակղութուն, դավաճանություն: Ենթադրություններ թվաց ճիշտ, իրական: Բնաստ, և նա սկսեց շնչատել հուզմունքից: Բուպեները երկարացան, սկսեցին խեղդել նրան իրենց ծանրաշարժ ընթացքով: Նա ուզում էր գոռալ:

«Ահա թե ի՞նչ է եղել նա. տես ինչե՞ր է անում»:

Բայց ինչպե՞ս գտնի, որտե՞ղ գտնի, ո՞ւմ դիմի: Ետ դարձավ տուն: Հարեանը կրկին դուռը բացեց և մի քիչ էլ փնթփնթաց. գնաց իր բնակարանը: Ասադը կանգնեց դռան մեջ և սկսեց դիտել գետափի երկու ուղղությամբ: Մերթ-մերթ ինչ-որ սովերներ էին սահում նեղ-փողոցներով և հալվում մթության մեջ: Երբեմն երևում էր մի կնոջ կերպարանք, որ դավադիր շարժումով դուրս էր ցատուած փողոցի անկյունից, գալիս էր, գալիս և հանկարծ կորչում մյուս փողոցի մեջ:

Նիգյարը շկար, շէր երևում:

«Չէ՛, պարզ է, մեկի մոտ է»,— այրեց այս միտքը հրաշեկ շամփուրի նման Ասադին:

Նա վրեժով ու ատելությամբ լցված դեպի «այն մարդը», որի մոտ էր անշուշտ Նիգյարը՝ միաժամանակ հետաքրքրիկ էր տեսնելու նրան, այդ երջանիկ էակին, որ տիրել էր Նիգյարին:

Խանդի զգացումը ճնշեց ու ստորացրեց Ասադին՝ զարթեցնելով նրա մեջ գազանային բնագոյներ—սպանել, ոչնչացնել հակառակորդին և ետ խլել իր սեփականությունը: Նա ատելության և սիրո խառն զգացումով լցվեց դեպի Նիգյարը: Պատրաստ էր ըստ պանելու նաև նրան:

«Ա՛խ, ի՞նչ լավ կլինենք՝ որ նա չլինենք աշխարհքիս երեսին»,— մտածեց Ասադը և հառաչեց:

Եվ իրոք՝ Նիգյարը նրա համար այդ պահին միայն տանջանքի աղբյուր էր: Նա երանությամբ նայեց մթության մեջ անցնող մի ծերուկի, որ միամիտ գծում էր տուն:

«Մա ոչ սիրում է, ոչ խանդում»,— ասաց Ասադը լսելի ձայնով և դարձյալ հառաչեց:

Հուսահատությունը խեղդել սկսեց նրան: Ի՞նչ անի հիմա... մոտեցան երկու կանայք. նրանցից մինը նման էր Նիգյարի ֆիզուրային: Մի՞թե նա է: Ասադն առաջ դնաց: Այո—նա էր:

— Հը՞, Ասա՞դ, դո՞ւ ես,— մտերիմ ձայնով հարցրեց Նիգյարը և կանգնեց:

Կանգնեց և ուղեկցուհին:

— Գնանք ներս,— դարձավ նրան Նիգյարը:

Ուղեկցուհին ցած ձայնով ասաց, որ շտապում է տուն: Նիգյարը շպնդեց: Նրանք բաժանվեցին: Նիգյարը ներս մտավ այգու դռնից:

— Ինչո՞ւ էիր դռանը կանգնել,— հարցրեց Նիգյարը:

Ասադն ուրախությունից չպատասխանեց: Նա գտած էր համարում Նիգյարին և միայն լուռ հետևեց նրան մինչև բնակարանը: Նիգյարը իր բանալիով բացեց դուռը, և նրանք ներս մտան: Լամպը վառվեց շուտով, և սենյակը լցվեց լույսով և ուրախությունով:

— Որտե՞ղ էիր,— հարցրեց Ասադը:

— Ընկերուհուս մոտ,— ասաց Նիգյարը,— ինչո՞ւ շեկար ճաշեմ, գո՞ւ ուր էիր: Էլի թեյարա՞ն էիր գնացել:

Ասադը միայն հառաչեց: Նիգյարին տեսնելը այնպես էր ուրախացրել նրան, որ հառաչանքն ավելի ուրախության զգացումից դուրս թռավ: Նա գոհ էր և երջանիկ, որ մի քիչ առաջվա առգնապը, խանդի վայրենի զգացումը, ենթադրյալ դավաճանություն տեսարանն ու ոսոխը—այդ բոլորը ցնդել էին ինչպես կոշմար, ծանր հրազ ու տեղը մնացել էր հասարակ մի իրողություն: Նիգյարը աջատեղ էր, անդավաճան, մտերիմ:

Նա գրկեց իր կնոջը և սկսեց բորբոքված համբուրել նրան: Նիգյարը մի քիչ զարմացավ, բայց տեղի տվեց: Բայց ցրիվ էր նա: Նրան պաշարել էին ուրիշ մտքեր: Երևում էր, որ ընկերուհու տանը ինչ-որ վճռական խոսակցություն էր եղել: Դա զգացվում էր նրա զուսպ ու մի քիչ սառն վարմունքից: Մտն ոչ Ասադի հանդեպ, այլ ամբողջ իր շրջապատի, ներկա կացության:

Նիգյարը փոխվում էր ժամեժամ, դառնում էր օտարոտի Ասադի աչքում: Միաժամանակ թվում էր ավելի ու ավելի գեղեցիկ, թանկ՝ ինչպես ձեռքից գնացող, կորչող մի բան:

— Քեզանից գինու հոտ է գալիս,— նկատեց Նիգյարը, ո՞րտեղ էիր:

— Ճաշարանում,— մոռյլ պատասխանեց Ասաղը՝ ձայնի գրգռված շեշտով:

— Ընկերներդ չես ուզում թողնել, էլի՞:

— Չէ:

Ասաց Ասաղն ու սպասեց էֆեկտին: Բայց Նիգյարը ցրված էր խոսում, ըստ երևույթին չազդեց: Հետո արտասանեց.

— Դու գիտես. ի՞նչ կարող եմ անել:

— Ի՞նչ պիտի անես,— բորբոքվեց Ասաղը,— դու քո անելիքն անում ես:

— Ի՞նչ եմ անում:

— Գնում ես ակումբ, ժողով, շաղրադ գցելու ես, դառնալու ես խալխի կնիկ:

— Ո՞նց թե խալխի կնիկ: Ես ուսում եմ առնելու, մարդամեջ մտնելու: Մնացածը՝ էլի էն եմ, ինչ որ էի:

— Էլ էն չես: Դու հիմի փոխվել ես: Հենց իրիկունս էն չես, ինչ որ էիր առավոտը: Ի՞նչ եք խոսել ընկերուհուդ մոտ, ովքե՞ր կային էնտեղ:

— Ուրիշ աղջիկներ ու կնանիք: էլի ժողով կար: Մեզանից մի քանիսը վճռել են ակումբ գնալ, սովորել:

— Չաղրաները գցել:

— Չաղրաները գցել: Ինչի՞ ես դեմ՝ չեմ հասկանում: Տես, քանի՞ քանիսն են գցել: Իմ բոլոր դասընկերուհիները գցել են: Մենակ ես չեմ, ինչի՞ ես զարմացել, իրար անցել, Ասա՛ղ:

— Ամեն բան կտանեմ, էդ մեկը չեմ կարող տանել,— ընդոտ շարժումով վեր կացավ տեղից Ասաղն ու գնաց նորից պատուհանի մոտ:

— Ինչո՞ւ, պատճառն ի՞նչ է:

— Պատճառն էն է, որ դու պիտի դառնաս մի մատ մեղր խալխի մեջ: Ամեն մի գյաղա աչքը պիտի տնկի վրադ ու հազար մի կեղտոտ բաներ մտքումն անց կացնի:

— Դու խանդում ես:

— Չգիտեմ, ես մեռնում եմ:

— Բա ո՞նց պիտի անես, երբ շաղրան գցեմ:

— Չեմ թողնի, ինձ կսպանեմ:

— Չես սպանի: Կսովորես: Ամենքն էլ էդ են ասում, բայց սովորում են:

— Սարեսար կընկնեմ, կփախչեմ էստեղից:

Նիգյարը լռեց: Նրա թախծալի աչքերում նկատելի էր թե հաստատ վճիռ իր անելիքի մասին և թե մտատանջություն՝ Ասաղի վերաբերյալ:

Ասաղը վեր թռավ տեղից և մոտեցավ Նիգյարին.

— Լավ, դո՞ւ ինչի ես ուզում շաղրադ գցել: Ուրիշներին ես մտիկ անում:

— Ես սովորել եմ ուզում: Ի՞նչ վատ օրի են ընկերուհիներս, որ երեսները բաց գնում են սովորելու: Ես ինչի՞ ես մնամ: Դպրոցում առաջին աշակերտուհին էի: Սիրում եմ ուսումը:

— Չի՞ լինի, որ երեսդ ծածկած մնա ու էնպես սովորես: Նիգյարը ծիծաղեց.

— Էդ ո՞նց կլինի: Ուզում ես ծիծաղատեղ դառնամ: Ինձնից տգետները շաղրաները գցել են, ի՞նչ կասեն ինձ: Հետո ի՞նչ կլինի, որ շաղրան գցեմ: Ինձ հո չեն ուտի:

— Կուտեն: էլ ինձ չես սիրի:

Նիգյարը մոտեցավ Ասաղին և գլուխը թեթև բռնած ուզում էր համբուրել նրան, բայց Ասաղից բուրող գինու հոտը խրտնեցրեց նրան:

— Փո՛ւհ, գինու ինչ վատ հոտ է գալիս քեզանից: Ամոթ չի՞, որ խմում ես:

— Ըհը՛, սկսեցի՛ր զզվել ինձանից:

Ասաղը զայրացավ և հրեց Նիգյարին:

— Որ խմես՝ կզզվեմ:

— Ուրիշները չեն զզվում:

— Չզվում են, բայց լռում են: Իսկ ես անկեղծ ասում եմ: Մի՛ խմիր, զզվելի է:

— Ես տղամարդ եմ, ի՞նչ ուզեմս՝ կանեմ:

— Ամեն վատ բան անես՝ թե տղամարդ ես: Չէ, Ասա՛ղ: Դու խմելը կթողնես ու կգաս ինձ հետ: Դու էլ սկսիր կարդալ, դու էլ մտիր գործի, գնա ակումբ, ճամփեղ փոխի:

Ասաղը սանձահարվեց Նիգյարի հանդարտ խոսքերից: Նիգյարի վարմունքի մեջ նա նկատեց հոգատար վերաբերմունք նաև

իր նկատմամբ: Ուրեմն Նիգյարը մենակ շի ուզում մտնել նոր աշխարհ, նա մտածում է և Ասադի մասին:

Եվ Ասադը լռեց: Մի պահ նրան թվաց, թե Նիգյարը ճշմարիտ բան ասաց, և ինքը կարող է անել նրա ուզածը: Կարծես կնճիող պարզվեց գրանով:

Նրանք ընթրեցին: Խոսք բացվեց առօրյա հոգսերի մասին: Փոխանակեցին մի քանի մաքեր, և կարծես կյանքն առավ իր նախկին սովորական կերպարանքը:

Հետո Նիգյարը փոել սկսեց անկողինը: Ասադը, որ սենյակում անցուդարձ էր անում և ծխում՝ սկսեց դիտել իր կնոջը, որ ճկուն ճյուղքի պես կռանում ու ձգվում էր անկողինը հարդարելու: Այդ ժամանակ նրա հպարտ կարապի վիզը երկարում էր դեպի հատակը և գիշեր խոպոպները օձերի պես կախվում էին ներքև: Ասադը դողում էր հուզմունքից: Նրա մեջ կրակվեց դարձյալ խանգաղ, որ նա զգում էր կնոջ համար՝ շիմանալով ում հանդեպ: Նա վախ էր զգում՝ մտածելով, որ Նիգյարը պիտի երևա ամենքին և գրավի ամենքին: Եթե անգամ նա ոչ մեկի գոհը չգառնա՝ Ասադի համար հերիք է միայն ուրիշների նայելը և ցանկալը իր կնոջ հրապույրներին:

Ասադը հուզմունքից հազաց և ձեռքը սեղանին խփելով գոչեց.

— Չէ, չեմ ուզում ակումբ գնաս, չե՛մ ուզում երեսը բանաս:

Նիգյարը վախեցած նայեց նրան և զարմացավ:

Բայց Ասադն այլալված էր և խոսելն ավելորդ էր նրա հետ: Նիգյարը լռեց ու սկսեց հանվել: Հանվեց և Ասադը: Ծրագրը հանգցրին:

— Արյուն կթափեմ, չեմ թողնի, — ասաց խապոտ ձայնով Ասադը. ուժով սեղմեց Նիգյարի ձեռքը:

Նիգյարը լռեց, այդպես երկար ժամանակ մնացին անշարժ, լարված, հետո ձեռքը տարավ նրա ճակատին և շոյեց.

— Չէ, լա՛վ կըլնես, Ասադ, դու լավն ես:

Իրիկնապահ էր:

Նեղ փողոցը երկու կողմից հողի պատերով եզերված՝ գնում էր դեպի քաղաքի գետեզրը: Անցուդարձ չկար: Միայն մի թյուրք րոստանչի անխռով նստած իր ազանակի վրա՝ կանաչի էր տանում

քաղաքամեջ: Գետեզրից երկու թրթուհիներ եկան մտան այդ փողոցը: Նրանցից մինը երեսը բաց էր, միայն շալովին գլխին կպած, մյուսը շաղրաջով էր, բայց մտնելով փողոցի ամայության մեջ՝ բացեց երեսը:

Նիգյարն էր: Նա ուրախ քրքշալով ու կատակելով գնում էր ընկերուհու հետ:

Նրանք մտան մի մեծ շենքի բարձրապարիսպ բակը: Դիմացը ռնավոր շենքի ճակատը ցույց էր տալիս, որ այնտեղ ապրում կամ ապրել է ինչ-որ մեծատուն:

Դա նախկին խանի տունն էր: Այժմ թյուրք կանանց ակումբը:

Նիգյարն ու ընկերուհին մտան շենքի դռնից և բարձրացան վեր: Ծենապակած աղյուսները գույնզգույն շերտերով աշխուժացնում էին սանդուղքի առաստաղը:

Վերևն աղմուկ կար: Եվ իրոք՝ երբ ներս մտան նախասենյակ՝ տեսան թրթուհիների և պատանիների մի բազմութուն, որ լցրել էր սենյակներն ու սրահը:

— Ահա, Նիգյարն էլ եկավ, — խոսեց ուրախ ձայնով մի աղջիկ, որի կարճ կտրած մազերն ու բաց երեսը չէին թաքցնում սակայն, որ գալիս է թյուրք կանանց խավար տարերքից:

— Հավաքույթն սկսվում է, Ձեյնաբ խանում, — հարցրեց նրան Նիգյարի ընկերուհին:

— Այ, շուտով, շուտով, մնացին մի քանի հոգի: Գնացեք սրահը:

Նիգյարն ու ընկերուհին մտան սրահը և տեղ գրավեցին նրստարաններից մեկի վրա:

Արահը դասարանի էր նման՝ նայելով իր աշակերտական նստարաններին: Բայց պատուհանների գունավոր ապակիներն ու առաստաղի սագաֆե և այլ քարերի գույնզգույն քանդակազարդերն ու ռճական խազերը նրան հանդիսավոր տեսք էին տալիս: Դիմացը բեմն էր, մի անկյունում գրատախտակը: Մի դաշնամուր, մի դրոշակ, հայելիներ, պլակատներ, կենինք, դիագրամներ — այս ամենը իրար կողքի՝ սրահին տալիս էին տարօրինակ աշխույժ:

Ծնատարանները երկշար էին, և մի շարքը բռնել էին կանայք ու աղջիկները, մյուսը՝ երիտասարդներն ու մի երկու հասակավոր տղամարդիկ:

Խուլ մուտոցը բռնել էր սրահն ու մյուս սենյակները: Ամենքն ուրախ էին ու հանդիսավոր:

Նստարանների դիմաց սեղանի հետև նստած էին թյուրք կոմերիտներ, որոնց մեջ և մի կոմերիտուհի: Նրանք խորհրդակցում էին:

Նստարանների կանանց շարքում լուսթյուն էր: Հպարտ կեցվածքով աղջիկներ, սուսուփուս, շադրայավոր ու շալովի կապած կանայք, լրջութուն էին տալիս հավաքույթին: Տղամարդկանց շարքն ավելի աշխույժ էր: Այստեղ նստած կրթոտ դեմքերով պատանիներ կատակում էին, ծիծաղում և գողունի նայում կանանց կողմը:

— Ընկերներ, բոլորն էլ եկել են, սկսենք,— ասաց մի սև երիտասարդ՝ նախասենյակից ներս մտնելով: Նրա կարճ խուզած գլուխը կոշիկի վրձինի պես կարծր էր ու խիտ: Մրահոն աչքերով նա շփեց երկշարք նստարաններն ու մոտեցավ նախագահական սեղանին:

Նիգյարը լարվեց և արմունկները հենելով սեղանին՝ աչքերը հռեց այն կողմը:

Կոմերիտիության հատուկ բյուրոն այդ օրը հավաքույթ էր կազմակերպել բացատրելու, թեկնածու նոր անդամների ընդունման կարգի մասին խոսելու:

Թեկնածուներ շատ կային: Աշխույժը մեծ էր: Նրանցից էր և Նիգյարը, որի թեկնածու գրվելը դեռ գաղտնիք էր, որ միայն ընկերուհին՝ Ֆաթման գիտեր, այն էլ այն պատճառով, որ նա կոմերիտիության անդամ էր, երկու տարվա ստաժով և երաշխավորներից մեկն էր Նիգյարի համար:

Հավաքույթն աշխուժացավ: Խոսում էին ամենքը, միասին, կտրելով իրարու խոսքը, այնպես որ նախագահն ստիպված էր ներողամիտ ժպտով զանգահարել: Ոմանք զրուցում էին իրար հետ. տղաները կատակներ էին անում իրար հետ և աշխատում էին սրախոս լինել: Միայն հետևի նստարաններին լուրջ նստած էին մի քանի բանվորուհի կանայք. նրանցից երկուսը ծծկերները կրծքներին և լուրջ հետևում էին անցուդարձին:

Զեկուցող կոմերիտուհին բացատրեց կոմերիտիության նը պատակներն ու ընդունման կարգը: Նա երգեցիկ ձայնով և փառաբանող շեշտով համոզում էր զեն գեղ շադրան, սովորել, մտնե-

լով կոմերիտիության շարքերը՝ լուրջ պատրաստվելու՝ թեկնածու թյունից անցնելու իսկական անդամության:

Նիգյարը լսում էր խանդավառ ուշադրությամբ: Նա մոռացել էր Ասադին, իր տունը, իր առօրյան: Հին, աշակերտական սերը դեպի ուսումն ու լուսավոր աշխատանքը զարթնեց նրա մեջ այնպիսի ուժով, որ թվում էր, թե այլևս ոչ մի բանի համար տեղի չի տա:

Հետաքրքրության համար եկել էին կողմնակի երիտասարդներ ու կանայք և նստել հետևի շարքում: Նրանցից ոմանք թաքցրած շարույթյամբ էին նայում ներկաների վրա: Բայց նրանց հետևող չկար:

Նախագահը հայտնեց թեկնածուների ցուցակը. որի մեջ էր և Նիգյարին: Սա կարմրեց և գլուխը կախեց: Աննկատելի կերպով նա արդեն բացել էր դեմքը, որի վրա նշաձև հոնքերի և էկզոտիկ աչքերի շքեղությունը դեպի իրեն էր գրավել ամենքի ուշը:

Նիգյարը ետ նայեց բնազդաբար:

Զարմա՞նք թե սարսափ... Հետևի նստարաններից մեկի հետևը նկատեց Ասադին, որ դեղնած, պղնձադեմ արձանի պես անշարժ՝ դիտում էր սրահը:

Նա դեմքը շրջեց դեպի նախագահական սեղանը, բայց էլ ոչինչ չէր տեսնում: Գողի զգացումով նա սեղմեց Ֆաթմայի ձեռքը և աչքով արեց, Ֆաթման ետ նայեց և նկատելով Ասադին՝ փսփրսաց:

— Բան չկա. մի բան կանենք, մի՛ շփոթվի:

— Լավ չեղավ,— շշնջաց Նիգյարը,— ի՞նչ պետք էր էստեղ գալը...

— Հենց միանգամից թող ամեն բան իմանա, վերջանա գընա,— ասաց Ֆաթման վճռական ձայնով:

Նիգյարը շփոթացավ: Նա բնազդորեն երեսը կիսովին ծածկեց և կծկվեց: Իր բոլոր անելիք քայլերը— շադրան գցելը և կոմսոմոլ մտնելը, որ նրան հեշտ էր թվում հեռվից, Ասադի բացակայությանը, այս րոպեիս բարձր ժայռի պես կանգնեց նրա առջև՝ իբրև մի անմազլցելի ճանապարհ:

Թե ի՞նչ էր կատարվում շուրջը, չէր լսում: Նա միայն զգում էր սրտի բաբախոցը: Ասադի ֆիզիկական զգում էր նա ուսերի վրա,

զգում էր նրա այրող հայացքը, որ հիմի անշուշտ շեշտակի հար-
վածում էր նրան:

Զվարթ գեկուցումը, կատակախառն ռեպլիկներն ու ծիծաղը
սաստկացան: Հանկարծ պայթեց ծափահարութիւնը: Կարդացին
ցուցակն այն աղջիկների, որ մտնում էին կոմերիտմիութեան թեկ-
նածուկների շարքը: Նրանց մեջ կային և շադրայավորներ, որոնցից
մի քանիսն իսկույն հանեցին շադրան:

Նրանց տակից, իբրև ծառերի ծաղիկներ ծիծաղեց, լույս աշ-
խարհ դուրս եկան մատղաշ դեմքերի կարմիր խնձորները և ժրպ-
տացին հասարակութեանը:

Ծափահարութեան տարափը դեռ չկտրված՝ նախագահը ձայ-
նեց հանկարծ նաև Նիգյարի անունը: Ֆաթման նրան գրգեց կող-
քից, որ վեր կենա: Նիգյարը կարկամեց, կծկվեց ավելի և մնաց
նույն գիրքի մեջ:

— Հա՛, ի՞նչ եղավ, — հարցրեց նախագահը. — ամաշո՞ւմ է:
Բոլորը ծիծաղեցին և ծափահարութիւնը զլեց:

— Ասեք վե՛ր կենա: Ընկեր Բայրամ կզի, վե՛ր կացեք, մի՛
քաշվեք. — ձայն տվին դեռից-դեռից:

Նիգյարը լաց էր լինում:

— Է՛հ, շեղավ, էդպես կոմսոմոլ չի լինի: Լավ մտածեցեք
ձեր անելիքի վրա, — հանդիմանեց նախագահը և ներողամիտ
ժպտով սպասեց հետևանքին:

Ֆաթման զոռեց արդեն.

— Դե՛, վեր, ամոթ է: Մի՛ վախի, վե՛ր, — Նիգյարը աչքերը
սրբեց և վեր կացավ: Ֆաթման ձեռքը գցեց նրա շադրային, որ
բանա, բայց նախագահն արգելեց.

— Ո՛ւ, մի՛ զոռեք, ինքը թող բանա, թե ուզում է:

Նիգյարը դե՛ն գցեց շադրան և երեսը բացեց: Ծափահարու-
թիւնների տարափը սաստկացավ կարկտի պես և խլացրեց Նի-
գյարի հոգեկան խոռվքը:

Ասադի աչքերը մթնեցին: Նա հանկարծ վեր կացավ և ճեղքե-
լով բազմութեանը՝ իջավ ներքև և այնտեղից դուրս թռավ մոմա-
լով:

— Սպասի՛ր, քա՛ծ, աղիքներդ կթափեմ... —

Ու գնաց փողոցի կիսամութի միջով: Նրա աչքերը կարմրած
էին, դեմքը այլանդակ ծովել էր: Նա հեռում էր և շապույում, կաթ-

ծեա որևէ տեղ հասնելով միայն կարող էր ազատվել տագնապից:

Նա գնաց շուկա, թեյարանը՝ հույս ունենալով այնտեղ գտնել
ընկերներին: Նայեց թեյարանի դռնից, ոչ ոք չկար, բացի մի մշա-
կից, որ խաղաղ հաց ու պանիր էր ուտում: Ընկավ շուկայի ան-
կյունները, որոնելով ընկերներին: Այդ բուպեին նրան այնպես էր
թվում, որ եթե նրանց չգտնի՝ կարող է կաթվածահար լինել:

Նիգյարի վարմունքը, նրա ամեն բան թաքցնելը, նրա վճռա-
կան քայլը, կոմսոմոլ մտնելը, շադրան գցելը՝ թեև տատանվելով,
և առհասարակ այնքան հեղ վերաբերվելը Ասադի հետ, շնայած,
որ այդպիսի քայլ էր անելու, այս ամենը նրան թվացին դավադիր
ու դավաճան կեռոջ շարագործութիւն:

Ասադը խաբված էր զգում իրեն, հիմարացրած: Պարզապես
Նիգյարը նրան խայտառակեց. Ասադի նամուսը ոտնատակ տվեց:

Նա այդ բուպեին զգում էր այն ատելավառ սերը, որ հանդես
էր գալիս խանդի ժամանակ, երբ Ասադը պատրաստ էր մի վայր-
կյանում և՛ համբուրել, և՛ սպանել Նիգյարին:

Շուկայի կեղտոտ ու ցեխ փողոցներից մեկում մի կասկածե-
լի ճաշարան կար, որ իր նեղլիկ դռնով լիտի ակնարկներ էր անում
և կանչում Ասադին: Գնաց մտավ այնտեղ, ընթրիք պահանջեց՝
գինով: Ու դեռ ընթրիքը չտված՝ գինին սկսեց իրար հետևե քաշել
բերանը: Դա թեթևացնում էր մի պահ՝ թմրեցնելով սաստիկ զրո-
գրոված ջղերը:

Նա հաշիվ չէր տալիս իրեն՝ լավ իմանալու համար, թե վերջ
ի վերջո ի՞նչ մի սարսափելի բան էր եղել: Նիգյարը դառնում էր
կոմերիտուհի և գցում շադրան: Հո Նիգյարը մնո՞ւմ է իր կինը՝
եթե ինքն ուզենա... Ներքին մի բնազդական ձայն նրան համո-
զում էր հակառակը: Որ Նիգյարի և Ասադի ճամփաբաժանն ըս-
կափում է, որ Նիգյարը գնում է ուրիշ աշխարհ, դա էլ ամուսին
չի լինի իրենից տարբեր մարդու համար: Ո՞վ է իմեռում ի՞նչ է
սպասում Նիգյարին այսուհետև: Ո՞ւմ է լսելու և ինչե՛ր է սովո-
րելու: Հիմա Նիգյարը խոսք ունի, ցանկութեան ունի, և իրավունք՝
կատարելու իր ցանկութեանը:

Նվ Առաջին սկսեց պատկերացնել նոր Նիգյարին, ուսում
առած Նիգյարին, որ գնում է նոր ճանապարհով: Ասադն զգաց Նի-
գյարի ուժը և ճնշվեց: Բարոյալքված, անձնատուր եղած՝ նա ըս-
կաբեց մտածել մի ելքի մատին միայն, որ նրա ձեռքին էր, — դա

Նիգյարին կամ իրեն սպանելն էր, եթե միայն դա կարող էր ելթ լինել:

Նա հարբեց, սկսեց փնթփնթալ, մոմռալ և հայհոյել: Ճաշարանատերն անտարբեր ու մռայլ մտիկ էր տալիս նրան և սպասում հեռանալուն: Ասադն օրորվելով վեր կացավ, վճարեց և դուրս եկավ ճաշարանից:

Այլևս նա պատրաստ էր մի որևէ վճիռ ի կատար ածելու Որոշեց մի բան անել—բայց ի՞նչ, ինքն էլ չէր պատկերացնում: Ու քայլերն ուղղեց դեպի տուն: Սակայն գնալով և մի բան անելու մասին մտածելով՝ մտքովը չէր անցկացնում ավելի սարսափելի փաստի մասին, որ առջևը ցցվեց փշի պես— երբ տան այգու դուռը բաց արեց, տեսավ որ իրենց սենյակի պատուհանը մուժն է:

Ուրեմն Նիգյարը չի եկել: Եվ արդեն կեսգիշեր էր: Ո՛ւր կարող է լինել: Մի՞թե դեռ ակումբում: Գնաց դեպի ակումբ: Բացեց դարբասի մեծ դուռը: Նայեց: Ակումբը նույնպես մուժն էր: Բուժ գործիքի հարվածի պես այս դեպքը շշմեցրեց և սթափեցրեց Ասադին: Գինովությունն անցնում էր: Նա ուզում էր ցավից գոռալ: Շտապ քայլերն ուղղեց դեպի կողմնակի փողոցները՝ ենթադրելով, թե մի որևէ տեղ կպատահի Նիգյարին: Բայց որտե՞ղ: Տներն ու այգիներն իրենց փակ դռներով ու մուժ պատուհաններով կույր ճակատագրի պես մտիկ էին տալիս Ասադին և անողոք անտարբերությամբ ճնշում նրա սիրտը:

Մի՞թե մի մարդ չի կարող պատահել և ասել նրան, թե ուր է կորել Նիգյարը:

Նա արագ ծխում էր ու թքում՝ ավելացնելով քայլերը: Նրան թվում էր, թե Նիգյարն այդ պահին ծաղրում է իրեն ուրիշների մոտ, որ Նիգյարը զգալով իր գերազանցությունը Ասադի մոտ՝ արդեն բաժանվել է նրանից:

Մի՞թե չպիտի տեսնի նրան, չպիտի բացատրի իր ստորացումը, ինքնասիրության վիրավորանքը:

Նորից գնաց տուն, հույս ունենալով, որ Նիգյարը եկած կըլինի: Անհուն կարոտով սպասում էր այն երջանիկ վայրկյանին, որ դուռը բաց կանի և կտեսնի իր սենյակի պատուհանի ոսկի լույսը, հաճելի, ընտանի, մտերիմ...

Բայց երբ այգու դուռը բացեց, և սենյակի մուժ պատուհան:

ըր մռայլ նայեց նրան՝ քիչ էր մնում ուշաթափվի հուսահատությունից: Կանգնեց դռան մեջ և սկսեց նայել փողոցին, սպասելով թե զուցե այս անգամ ևս նախորդ անգամվա պես Նիգյարը երևա Ֆաթմայի հետ:

Սակայն զուր էր սպասում: Փողոցներում քնում էր մթությունը, և մարդ արարած չէր խլրտում ոչ մի կողմից: Քաղաքը, գաղտնիքներով լի անողոք քաղաքը, թաքնվել էր տների մեջ ու ծածկում էր ամեն ինչ Ասադի աչքից: Ամեն ինչ թշնամի էր նրան այս գիշեր:

Բակից մի թրխկոց լսվեց: Ասադը գլուխը ներս կոխեց դարբասի դռնից և նայեց: Մի տղամարդ էր գալիս հարևան տնից, մոտեցավ: Դա հարևանն էր:

— Ասա՞դ:

— Հա, ինչ կա, ո՞ւր է Նիգյարը:

— Նիգյարը բանալին ուղարկել է մեր տուն, որ քեզ տան:

— Ինքն ո՞ւր է...

Եվ Ասադն զգաց, որ սիրտը մարում է:

— Չգիտեմ. մերոնք կիմանան երևի: Գնա տուն, քնի, առավոտը կհարցնեմ:

Ասադը կարծես մի փոքր հանգստացավ:

«Ուրեմն մտածել է իմ մասին»: Եվ այն հույսով, որ առավոտը կիմանա՝ նա բանալին առավ և մտավ իր սենյակը:

էլ ճրագ չվառեց: Շորերով ընկավ մինդարի վրա ու մնաց այդպես անշարժ: Քունը չէր տանում. միակ դարմանը իր այդ գերազրգիռ վիճակին՝ ծխախոտն էր, որ իրար հետևից վառում էր: Սենյակը լցվեց ծխով:

Մինչև արշալույս մինդարի վրա շուռումուռ էր գալիս Ասադը և մոմռում: Երբեմն ուզում էր գոռալ: Բայց նվում էր միայն և չոր աչքերով լաց լինում:

Լուսաբացին քնեց հիվանդագին քնով:

Ակումբում գրական-երաժշտական երեկույթ էր գրվել նոր թեկնածու կոմերիտականների առթիվ: Եվ երբ Նիգյարը շագրան հանել էր մյուսների հետ, շրջապատվել էր նոր ծանոթներով:

Նիգյարը տխուր էր և տարակուսանքներով լի: Չէր իմանում

ինչ է սպասում քրեան, երբ ակումբից դուրս գալով կհանդիպի Աստ-գին: Ու երբ նայեց նստարանների հետևի շարքը և բազմութան մեջ շտեմավ Ասադին՝ մի անախորժ բան նախազգալով՝ գիմեց Ֆաթմային:

— Ես էս գիշեր տուն չեմ կարող գնալ. նա ինձ կսպանի:

— Սպանելը չի սպանի, բայց կարող է գիպչել,— պատա-խանեց Ֆաթման,— գնանք մեր տուն:

Երեկույթը վերջանալուն պես Ֆաթման նիգյարի ձեռքից բռնած տարավ դուրս:

Ճամփին անցան նիգյարենց տան առաջով: Բաց անելով դարբասի դուռը, նիգյարը նայեց բակը: Ոչ ոք չկար: Ասադը չէր եկել: Գնաց հարևանուհու պատուհանը ծեծեց: Դուրս եկավ հարևանուհին:

— Սանամ, Ասադը եկավ:

— Չէ, ի՞նչ կա, նիգյար,— կաշուն հետաքրքրությամբ մոտեցավ Սանամը:

— Մի քիչ նեղացած է ինձանից: Ես Ֆաթմայենց տանը կլի-նեմ գիշերու: Բանալին տուր Ասադին՝ երբ գա:

— Բա էդպես կըլի՞,— հարցրեց Սանամը տարակուսած և ինչ-որ ներքին ուրախությամբ, որ հետաքրքիր բան է պատահել:

— Կըլի, կըլի, տո՛ւր բանալին իրեն, իսկ եթե որ հարցնի՝ ասա Ֆաթմայենց տանն եմ:

— Շա՛տ բարի, կասեմ,— վերցնելով բանալին՝ ասաց Սա-նամը,— մենակ ես չեմ տա բանալին, թող Հասանը տա:

— Մին է:

Նիգյարը դուրս եկավ բակից և վազեց Ֆաթմայի կողմը: Եր-բանք փնացին գետեզբով և կանգ առան մի մեծ ու փակ տան առ-ջև: Դրսից նա նման էր փոքրիկ ամբոցի՝ իր հաստաբետստ պո-րըսպով և բարձրադուռն դարբասով, որի կամարը զարգարված էր քանդակներով: Ֆաթման դուռը ծեծեց:

— Ո՞վ է,— լսվեց ներսից:

— Ռուստամ, մենք ենք, բա՛ց արա:

Մի տասը տարեկան տղա քաց արեց դուռը, որ ճանաչաց հին օրերի եզանակով և փակվելով՝ տան մեջ տարավ նիգյարին ու Ֆաթմային:

Մտան առջևի տան բակը, որ իր շուրջը քաջած ամբողջ բնա-

կարածով կազմում էր տանտիրոջ հյուրասենյակների սխառնը: Այդ բակը արտաքին աշխարհի համար էր: Իսկական տունը խոր-քի բակումն էր, որ բացվում էր առջևի բակից տանող մի դռնով:

Ֆաթման նիգյարին տարավ խորքի բակը: Նա այնտեղ էր սպրում իր մոր և եղբոր՝ Ռուստամի հետ:

Ամբողջ տունը հարուստ մեծատան սեփականությունը չէր կազմում այլևս: Ծանոտերը, Ռուստամ «ազաճ», տպրում էր հյու-րասենյակներում, խորքի տան մեջ ունենալով մի սենյակ միայն: Մնացածը գրավված կամ վարձով էր տրված զանազան կենդանի-րի:

Ֆաթման բարձրացավ տան պատշգամբը և մտավ հենց առա-ջին սենյակը՝ կանչելով նիգյարին ներս:

— Բարի իրիկուն, տես՝,— ասաց նիգյարը բավական երի-տասարդ կնոջը, որ Ֆաթմայի մայրն էր: Սա մի փոքր զարմա-ցած նայեց նիգյարին:

— Հը. շաղրաղ գցե՞լ ես: Ասադը գիտի՞:

Նիգյարը ժպտաց ու գլխով արավ:

— Օյինները կսկսի՞ հիմի,— ժպտուն մտահոգությամբ նա-լիով նիգյարին՝ խոսեց Ֆաթմայի մայրը:

— Ի՞նչ օյին, ինչ բան. շատ կղտոի՞ նիգյարը կթողնի նը-րան,— մեջ մտավ Ֆաթման:

— Չէ՛, չի թողնի,— ժպտալով և քննելով նիգյարի հայացքը՝ ասաց Ֆաթմայի մայրը,— թողնելը չի թողնի, ասա թե ո՞նց պի-տի սիրուն առնի: Հը՞, նիգյա՛ր, շա՛տ ես սիրում Ասադին:

Նիգյարը տխուր նայեց Ֆաթմայի մորը:

— Է՛հ, ո՞վ է իմանում. սերն էլ մի խախա է:

— Դատարկ բան է,— կտրեց Ֆաթման,— ուսում առ, մար-գանեց մտի, գործ արա, սերն էլ կմոռանաս. քո գլուխն էլ:

Ֆաթմայի մայրը գլուխն օրորեց.

— Մի՛ առի. Ֆաթմա, առանց սիրու ո՞նց կըլլիս Աարգ ու կնիկ ո՞նց կապրեն առանց սիրու:

— Թող շապրեն: Անպատճառ մա՛րդ պիտի ունենան գլխիս կազնած:

Ֆաթմայի մայրը շանչեց Ֆաթմայի երեսին ու կատակով վը-րա բերեց.

— Կտեսնեմ ոնց կանես՝ երբ մարդը գեթիգ կաղնի:

— Օ՛, նրա աչքն էլ: Ես մարդը ի՞նչ եմ անում: Նիգյարի օրն եմ ընկնելու, որ ամեն բանի համար դողում է:

Փաթմայի մայրը սուփրա փռեց խոնշայի վրա: Նստեցին մի բան ուտելու:

— Կեր, Նիգյար, կեր, լավ կըլի: Ասադն էդպես չի մնա,— սիրտ էր տալիս Փաթմայի մայրը:— Վաղամեռիկ մարդս էլ էդպես էր, չէր թողնի, թե մեր տան գլխով թռչուն թռչի: Բայց երբ մեր հին հարևանի կնիկը մարդու աչքի առաջ խաբեց նրան՝ ասում էր. «Լավն էն ա՛՛ կնկա նամունն իր ալլահին պես»:

Այդպես խոսում էին ամուսնության, սիրո, ընտանիքի մասին: Ռուստամը թեք ընկավ դռնակին ու շորերով քնեց: Թեք ընկավ և Փաթմայի մայրը մի անկյունում կուշ գալով: Փաթման ու Նիգյարն էլ մտան մի ընդհանուր անկողին ու մեջքների վրա պսակած, մթան մեջ խոսում էին:

Պատուհանի ապակուց այն կողմը ծաղկափթիթ սալորենու ճյուղքի տալից դրփում էր մի կապտավուն աստղիկ, հեռո՛ւ, հեռո՛ւ, ինչպես երազ, ինչպես մտքի թռիչք: Խաղաղ էր գարնան ջինջ երկնքում, և Նիգյարն անսովոր խոռվքի մեջ դիտում էր նրբան: Երկու աշխարհ էր տեսնում նա իր առջև և հետևը: Մեկը հին, խավար, հեքիաթի ջադուներով ու հրեշտակներով լի աշխարհը, ուր կա կիրք, նախանձ, տարփանք, ատելություն, բռնություն, այ էն աստղն իր հրաշքների ծովում, ջեննաթի հուրիների հրեղեն երազներով, մյուսը իրական, ջերմ, ընկերական, պարզ և ազատ՝ գրքերի, մտքերի, գործի աշխարհը, ուր ամենքը հավասար են, իրար պաշտպանում են, շինարարում են, մաքրում երկրի երեսը: Եվ նա, Նիգյարը, դրանց մեջտեղն է հիմա, անցնում է նոր աշխարհը: Նա կոմերիտ թեկնածու է: Նա դեն է գցել չաղբան, ակումբի անդամ է, պիտի գնա իր կիսատ թողած ուսումը շարունակելու ի՞նչ պիտի անի Ասադին: Թողնի՞, հեռանա՞ նրանից: Սիրո՞ւմ է նրան իսկապես, թե սովորության կապով կապված է նրա հեռ և անհարմար է զգում խզել այն:

Հիշեց իրենց առաջին օրերը, երբ երկուսն էլ աշակերտ էին: Որքան քաղցր էին առաջին սիրո սարսուռները, որքա՛ն թեթևամիտ էին՝ թողնելով դպրոցը և քաշվելով մի տուն՝ ապրելու համար: Միայն սիրո համար:

— Ի՞նչ ես մտածում, Նիգյար:

— Է՛հ, ինչ ասես:

— Քնի՛, վաղը կմտածես:

— Չեմ կարողանում. սիրտս հանգիստ չի:

— Կսովորես. առաջին օրն է դժվար:

— Չգիտեմ ի՞նչ պիտի անեմ Ասադին:

Փաթման կիսովին նստեց և թեքվեց Նիգյարի դեմքին:

— Լսիր, Նիգյար: Դու հիմի կոմերիտ ես դառնում. պիտի գնաս ակումբ, սովորես, աշխատանք տանես, մարդամիջում երեվաս: Հիմի որ Ասադը շատ հակառակի՝ չե՞ս թողնի նրան:

Նիգյարը ըպատասխանեց:

— Ո՞նց եմ թողնում նրան,— քիչ հետո հարց տվեց Նիգյարը՝ իրրև պատասխան:

— Վախենո՞ւմ ես:

— Չէ՛:

— Դե բա էլ ի՞նչ կա: Սիրո՞ւմ ես:

Նիգյարը էլի լռեց:

— Երևում է սիրում ես:

— Դե, սիրտ է, ո՞նց ես կտրում դեն պցում:

— Ի՛հ, ձեր սիրտն էլ ու... հազար տղամարդ իմ աղատությունը չարժեն: Սիրելը բան չեմ ասում. սիրի. բա որ ճամփիդ առջև քար է պցո՞ւմ:

Նիգյարը շուտ եկավ դեպի Փաթման:

— Գիտե՞ս ինչ, Փաթմա. թե մի ճար լիներ՝ նրան էլ քաշեինք մեր կողմը:

— Հա՛, էդ ուրիշ բան,— նստեց տեղում Փաթման,— թե էդ կարենաս անես, շատ լավ բան կըլի: Բայց կարո՞ղ ես:

— Դժվար է: Շատ է խանդոտ:

— Խանդոտ կոմերիտ պետք չի մեզ: Թող դնա իր շայխանեն: Հլա դեռ դու իսկի կոմերիտի շնորհք չունես. քեզ պետք է դաղենք, կոփենք, գլուխդ փոխենք: Դու դեռ խանում-խաթուն կընիկ ես:

— Բա ինչո՞ւ ինձ քաշեցիր ձեր մեջ,— ծիծաղեց Նիգյարը:

— Քաշեցի, բանի որ դիտեի ուսում սիրելի, գիտեի, որ մեզ համակրում ես: Վերջապես մեր պարտքն է դրսից նոր ուժեր կանչելը, սովորեցնելը:

Գիշեր էր անցնում: Ընկերուհիները հոգնեցին և լռեցին:

Տաթման քնեց իսկույն ևեթ: Միայն Նիգյարը դեռ երկար ժամանակ հոգեկան տազնապի մեջ աչքերը բաց նայում էր պատուհանից դուրս, սալորեհու ճուղքերին, որոնց ծաղիկների արանքում ոսկե մեղունների պես թռվոտում էին նոր աստղեր, ինչոր անհասկանալի, հավերժական ժպիտով կրակված:

Ասադը զարթնեց ու իսկույն զգաց պատահած դժբախտության խայթը, որի ցավը թմրել էր քնի մեջ:

— Օ՛ֆ, ինչո՞ւ զարթնեցի,— մռմռաց նա և վեր թռավ տեղից:

Դեռ վաղ էր, հարևանները քնած, վեր կացավ, հագնվեց և սկսեց ծխելով արագ-արագ ման գալ սենյակում: Առավոտը մի փոքր կազդուրված նյարդերը նրան հույս էին տալիս, թե գոնե մի ելք, մի նոր կացութուն կգա և նրան կհանի այս հուսահատությունից: Եվ այն միտքը, որ շուտով կտեսնի Նիգյարին, կխոսի հետը, կզտնի ընկերներին, մի բան կիմանա նրանցից՝ հանգստացրեց Ասադին:

Հարևանը պատուհանը ծեծեց:

Ասադը դուրս թռավ:

— Հա, ի՞նչ կա:

— Սանամն ասում է, որ Նիգյարը Տաթմայենց տանն է:

— Տաթմայենց տա՞նը,— ուրախացավ Ասադը և դուռը կոպելով՝ դուրս թռավ բակից:

— Խաթա բան չանես,— Ասադ,— գոչեց հետևից հարևանը:

Բայց Ասադը չլսեց: Նա ուղղակի թռչում էր գետեզրով, դիպչելով պատերին և քաթերը գլորելով գետը: Հասավ Տաթմայենց տուն, դուռը ծեծեց: Տանտերը բաց արեց դուռը, մռայլ նայեց Ասադին և ետ գնաց: Ասադն արագ անցավ խորքի տան բակը և բարձրացավ պատշգամբը:

Ներսից Տաթմայի մայրը նկատելով Ասադին՝ դուրս շտապեց և դեմ գալով:

— Բարի լույս, Ասադ, դո՞ւ ես,— ասաց ու կանգնեց դիմացը:

— Ո՞ւր է Նիգյարը,— խեղդված ձայնով հարցրեց Ասադը և ներս նայեց:

Տաթմայի մայրը փոխանակ պատասխանելու՝ նրան մի կողմ քաշեց:

— Եկ, բան եմ ասում:

— Ի՞նչ ես ասում, շուտ կանչի, ի՞նչ է անում ներսը:

— Լսիր. Ասադ, էդպես չի ըլի. ամոթ է. դու խելոք տղա ես. ի՞նչ ես կրակվել. խեղճ կնիկը ջուրը մաղվեց: Սաղ զիշերը չի քընել:

— Ինչի՞ չի գալիս տուն. բաժանվո՞ւմ է ինձանից, հա՞, թողնո՞ւմ է տունը...

— Ոչ բաժանվում է, ոչ թողնում. հանգիստ կաց ու լսի:

— Հա, լսում եմ, ի՞նչ է ասում, ի՞նչ է անելու:

Դուրս եկավ Տաթման և հանգիստ ու հաստատ նայեց Ասադին:

— Բարև, Ասա՛դ: Ի՞նչ ես իրար անցել: Եկ ներս, կարգին խոսենք: Ի՞նչ կա, ի՞նչ է եղել. կնիկդ կոմերիտ է դառնում: Դու հոչես կարող նրա ճամփան փակել: Ամեն մարդ ազատ է հիմի:

— Գիտեմ որ ազատ է,— նոթերը կիտեց Ասադը,— բայց ես ասելիք ունեմ Նիգյարին: Ի՞նչ է, չի՞ ուզում ինձ տեսնել: Ես փալա՞ս եմ, մարդ չե՞մ:

— Ո՛չ, դու փալաս չես. դու մարդ ես. բայց դու շատ բան չես հասկանում, քանի որ տղամարդ ես, հին տեսակի տղամարդ: Գնանք հետս, Նիգյարն էնտեղ է: Նա հենց ուզում էր քեզ տեսնի: Տաթման առաջ ընկավ, նրան հետևեց Ասադը, սրա հետևից գնաց Տաթմայի մայրը:

Նիգյարը գունատվեց և պատկերի պես անշարժ կանգնած մընաց Ասադի դիմաց: Ասադը ևս արձանացավ:

— Ահա՛, դե խոսենք,— ասաց Տաթման:— Տիրեց լռություն: Վերջապես Ասադը խեղդված, իրեն իսկ անճանաչելի ձայնով՝ հարցրեց:

— Թե կոմերիտ էիր դառնում՝ ինչի՞ չէիր ասում ինձ:

Նիգյարը լուռ մնաց:

— Այսքան ժամանակ ապրում էինք իրար հետ, ամեն գաղտնիքդ ասում էիր, ի՞նչ է պատճառը, որ սա գաղտնիք էիր պահում, խաբու՞մ էիր ինձ, հա՞:

Տաթման առաջ եկավ:

— Ահա գաղտնիքն իմացար: Հիմի ի՞նչ ես անում, թե առաջ

ինչ անեիր: Բանը բանից անցել է, Նիգյարը թեկնածու է. հիմի ի՞նչ ես վճռում. հո սպանելու չես:

— Մենք ի՞նչ ենք, որ մարդ սպանենք,— հեգնեց Ասաղը,— մենք ի՞նչ իրավունք ունենք իրենց ասածի կանանց վրա, մենք հեշ ենք, ոտի ցեխ:

Նիգյարն առաջ եկավ և բռնեց Ասաղի ձեռքը.

— Ասա՛ղ, ինչո՞ւ ես էդպես խոսում: Ինքդ էլ էիր իմանում, որ միշտ ես ուսումի համար մտածում էի, ինչ որ քեզ շատ անգամ ասել եմ: Ինչի՞ ես հակառակվում... դու իմ մարդը չե՞ս, ի՞նչ անպատիվ բան եմ արել: Երես բաց անելը ի՞նչ մի հանցանք է, որ էդպես կրակվել ես:

Ասաղը տեսնելով Նիգյարի մեղմութունը՝ սկսեց սիրտ առնել և տոնը փոխեց.

— էդ ամենը պիտի ինձ հարցնեիր՝ հետո անեիր: Կարելի է ես հավան չեմ ասածիդ:

— Ծս գիտեի, որ հավան չես:

— Դրա համար էլ ծածուկ արիր:

— Դե, էլ եղածն եղել է, ես թեկնածու եմ:

Ասաղը կատաղեց.

— Դո՛ւրս կգաս կոմսոմոլից: Դո՛ւրս բերել կտամ քեզ:

— էդ խոսքերը թող, Ասա՛ղ,— մեջ մտավ Ֆաթման,— ի՞նչ բան ունիս ուրիշ գործի մեջ խառնվելու:

— Նիգյարն ուրի՞շ է, Նիգյարը իմ կնիկն է: Ծս չեմ թողնի, որ նա մտնի կոմսոմոլ: Դա մեր ընտանիքի բանը չի: Դուք մտեք կոմսոմոլը, մեզ թողեք մեր բանին:

— Զուր ես արյունդ պղտորում, Ասաղ,— հանգիստ եղանա՛ կով շարունակեց Ֆաթման:— Նիգյարը իրավունք ունի ինչ որ ուզում է անի:

— Գնանք տո՛ւն,— հրամայեց Նիգյարին Ասաղը՝ ինքն իրենից դուրս գալով:

— Չէ, Ասա՛ղ, թո՛ղ,— խոսեց հեզ ձայնով Նիգյարը,— ես հետո կգամ:

— Գնանք տո՛ւն, ասում եմ քեզ,— կրկնեց Ասաղը և վրա պրծավ դեպի Նիգյարը:

Ֆաթման մեջ մտավ:

— Ի՞նչ ես գոռում. կարգի՛ն:

— Քա՛ծ, չե՞ս լսում, որ ասում եմ, գնանք տուն,— գոռաց Ասաղն ու խլեց Նիգյարի ձեռքը:

Նրա ձայնից հարևանները հավաքվեցին պատշգամբում: Ասաղը սկսեց քաշքշել Նիգյարին: Սա ընդդիմանում էր: Ֆաթման մեջ ընկավ, որ Ասաղի ձեռքից պոկի Նիգյարին, իսկ Ֆաթմայի մայրը բռնեց Ասաղի ուսից:

— Թո՛ղ, Ասա՛ղ, մի՛ անի, թող...— Ներս վազեց տանտերը և ուժով կպավ Ասաղին:

— Բա՛ց թող, ադա՛, բա՛ց թող:

— Միլիցիա՛ կանչեք,— լսվեց պատշգամբից:

Տանտերը դուրս նայեց:

— Չէ՛, չէ՛, չէ՛, պետք չի:

Ու Ասաղին ուժով պոկեց Նիգյարից:

— Թողե՛ք, ես դրան մաս-մաս պիտի անեմ,— գոռում էր Ասաղը զազազած:

Տանտերը գրկեց Ասաղին և ուժով դուրս տարավ, հասցնելով պատշգամբ՝ մտավ թևը ու քաշեց իր սենյակը:

— Գնանք, ամոթ չէ՞, տղամարդ չե՞ս,— հանդիմանեց նա շեշտ նայելով Ասաղի աչքերի մեջ:

Ասաղը գոռով գնաց տանտիրոջ հետ և հեկուկ ընկավ աթոռի վրա:

— Իս տղամարդ չեմ, ես ոտի փալաս եմ,— մղկտաց նա և զըլուփը ծածկեց ձեռքերի մեջ:

Տանտերը դուրս եկավ պատշգամբ, համոզեց հավաքվածներին, որ միլիցիա չկանչեն.

— Ամոթ է, մուսուլման չե՞ք, ի՞նչ միլիցիա:

— Մուսուլմանի բան չկա,— միջամտեց Ֆաթման,— մենակ թող հանգստանա, էդ ուրիշ բան է:

Տանտերը մոռյլ նայեց Ֆաթմային և գնաց Ասաղի մոտ: Ներս մտնելով ֆշշաց.

— Շա՛ն ծիծ կերածներ, էլ նամուս ու ամոթ թողի՞ք... Սրանից դենը էլ ի՞նչ կնիկ, էլ ի՞նչ դին, ի՞նչ մասսաբ: Ոտի տակ ընկանք, ջուրը տարավ մեզ:

Ու սկսեց զայրացած ման գալ սենյակում: Նա ավելի էր կըրակվել, քան Ասաղը:

Մի քիչ որ հանդարտվեց՝ արդեն անցավ բուն խնդրին — Ասադին.

— Ի՞նչ բան ունիս, այլի. մի ավելի խոսք էլ կասես՝ բանս զցեն, մի բան էլ դու կմնաս պարտական: Կնկանիցդ ձեռք քաշի. երեսը բաց արավ՝ խերը տես: Հա՛յ գիտի զոս, հա՛յ գիտի մեր վախտ:

Տանտիրոջ վրդովմունքը հանգստացրեց մի փոքր Ասադին: Սա վեր նայեց.

— Հիմի ի՞նչ անեմ ես, ի՞նչ մահու տամ իմ գլուխը: Ես ի՞նչ տղամարդ եմ էլ...

— Տղամարդ ես՝ համբերի ու վերջն էլի մտքինդ արա: Օր էլի՛ կա:

Տանտերը պղտոր-կապույտ աչքերով նայեց պատուհանից դուրս և մոռյլ երազանքով հառաչեց: Նա կրոնամուլ էր. նա զգում էր իր երակներում մարգարեի ցեղի հրաբորբոք արյունը: Սրբազան կաստան կորցնելով իր իրավունքները արտաքին աշխարհի մեջ՝ ներքին կյանքում դեռ կենսունակ էր զգում իրեն: Եվ վանգակն ընկած կենդանի թռչունի պես թափահարում էր իր թևերը, դիպչում պատեպատ, մտորում, շարանում, սպասում, որ «օրը գա»:

Դուռը ճռռաց: Տանտերը գնաց դեպի այն կողմը: Շենքի մեջ ցցվեց հարևան թուրք ծառայողի կերպարանքը: Նա կոտրած ժպիտով ներս նայեց:

— Հը՞, Ռուստամ աղա՛, ի՞նչ է պատահել,— ասաց նա ու առաջ եկավ:

— Ի՞, ջահելութուն: Կնիկը կոմսոմուլ է մտել՝ դարդ է անում: Այլի ի՞նչ կա, հիմի ամենքը կամ կոմունիստ են դառնում, կամ կոմսոմուլ: Հինն անցնում է. նոր աշխարհք ենք մտնում:

— Հալբաթ որ,— կցեց ծառայողը լուրջ դեմքով,— կոմսոմուլ է դառնում՝ դառնա թող, ինչի՞ ես արգելում, ա՛յ բալամ:

— Ես էլ էդ եմ ասում,— վրա բերեց Ռուստամ աղան:

Ու ծիծաղելով նայեց Ասադին:

Նրանք սկսեցին խոսել ուրիշ հարցերի մասին: Մառայողը ակնարկեց միայն, որ լավ ծխախոտ է «ստացված». եթե Սեյդի ուզում է՝ իրիկվան կրերի:

Սեյդը հավանության նշան արեց գլխով:

Մառայողը գնաց:

— Ի՞նչ անեմ հիմի ես, ինձ խե՛ղք սովորեցրու, Ռուստամ աղա,— լուրջ և զգաստ խոսեց Ասադը:

— Կնկադ ուզում ես թողնե՞ս, թե ինչ...

— Չեմ կարողանում. կապված եմ:

— Վատ է:

— Ասում եմ փախցնեմ մի տեղ, զոռեմ, ետ կենա իր ճամփից:

— Համբերի, մի բան կմտածենք: Արի մոտս էս երկու օրս: Հիմի գնա տուն և էլ մի՛խոսի. թող կնիկդ գա տուն:

— Կարո՞ղ եմ շխոսեմ, սիրոս կհամբերի՞:

— Զո՛ւ արա, համբերի՛: Մի բան կանեմ: Տեսնում եմ, մեղք ես:

Ասադը վեր կացավ, որ գնա, բայց Ռուստամ աղան նստեցրեց կրկին:

— Սպասի, թեյ խմենք. բան ունեմ ասելու:— Ասադը մնաց: Ռուստամ աղան դուրս նայեց և դուռը ծեծելով կանչեց տանեցոց, պատվիրեց թեյ տան:

Երբ թեյը բերին, Ռուստամ աղան սկսեց զանազան բաների մասին խոսել, բայց ոչինչ էական չասաց: Պարզապես ուզում էր Ասադին հանգստացնել և այնպես ճամփել:

Վերջապես Ասադը գնաց: Ռուստամ աղան իր կնոջ միջոցով հաղորդեց Ֆաթմայի մորը, որ Նիգյարին թողնի տուն գնալու, բանի որ Ասադը համոզվեց հանգիստ պահել իրեն:

Ֆաթման տհաճ վերաբերվեց այդ միջամտությանը: Նա կասկածեց, որ Ռուստամ աղան կարող էր թունավոր խոսքերով «հանգրստացնել» Ասադին: Եվ Նիգյարին խորհուրդ տվեց մի օր էլ ըստ պասել՝ հետո գնալ տուն:

Նիգյարը տխուր համակերպվեց:

Մի օր հետո Ֆաթմայի ուղեկցությամբ Նիգյարը եկավ տուն: Ասադը տանն էր: Նա տեսնելով Նիգյարին վերադառնալիս՝ կրկին զբաց վաղաժամուրթ ուժը, սեփական առավելութունը, որ նման դեպքերում վերադառնում էր նրան: Նա մոռյլ ու անհամբեր նայեց Նիգյարին և աչքերը կախեց: Ֆաթման մոտեցավ նրան.

— Ասա՛դ, ահա նիգյարը եկավ: Նա քեզնից չի բաժանվում. բայց ուզում է, որ հաշտ ապրեք: Նա կոմերիտուհի է դառնալու,— էս իմացած եղիր ու հաշտվիր:

— Դառնում է թող դառնա,— խորամանկ համակերպությամբ ասաց Ասադը:

— Էղպես է: Դու պետք է հասկանաս. որ հիմի առաջվա ժամանակը չի: Բաքու, Տաշքենտ, Սամարղանդ, ամեն տեղ շաղրան գցում են, ակումբ են գնում, սովորում, կոմերիտ դառնում: Նիգյարը առաջինը չէ: Դու էլ քիչ-քիչ կարգի՛ արի: Կարդացել ես, դպրոց ես տեսել: Ի՞նչ ես ընկել շայխանաները լոթի-փոթի տղերանց հետ: Գիրք կբերեմ կարդացեք, միասին կկարդանք:

— Ինձ էլ կոմերիտ կդարձնեք,— հեգնեց Ասադը:

— Ո՛չ, չենք դարձնի. դու դեռ շատ բան ունես անելու, որ կոմերիտ դառնաս:

Ասադը բորբոքվեց. բայց զսպեց իրեն: Ֆաթման մի քիչ էլ զրուցեց նիգյարի ու Ասադի հետ. հետո վեր կացավ գնալու:

— Դե, ձեզ տեսնեմ, խելո՛ք կացեք,— ասաց նա ընդհանուր կերպով ու դուրս գնաց:

Նիգյարն ու Ասադը մնացին անհարմար վիճակում իրար դեմ: Անխոս անշարժ, ընդարմացած:

Ասադը նայեց նիգյարին: Այրվել էր դեմքը, ցորենի գույն էր ստացել: Զաղրայի հետ ցնդել էր նրա մորթու լույսը, նիգյարի նախկին երազական դեմքը դառել էր իրական: Անսովոր զգացումներ էր զարթեցնում այդ կոնկրետ շոշափելի կինը. ազատ վիճակի կինը: Ո՛չ, դա նիգյարը չէր. դա նոր էակ էր: Ասադը չէր կարողանում հաշիվ տալ. թե ի՞նչ է զգում. սե՛ր թե արհամարհանք դեպի այդ նոր էակը:

— Ասա՛դ, ինչի՞ ես տխուր,— խոսեց նիգյարը այնպիսի եղանակով՝ կարծես չէր իմանում Ասադի խռովության պատճառը:

— Էլ մի՛ հարցնի,— թափ տվեց ձեռքը Ասադը,— ես էլ խոսք չունեմ. հիմի իրավունքը քոն է:

— Հանգստացի, Ասա՛դ, ամեն բան լավ կլինի: Դու էլ կըմտնես մեր շարքերը:

— Ե՛ս,— և Ասադը զարմանքով ու հեգնանքով նայեց նիգյարին,— ես չափառն եմ, ես փողոցի մարդ եմ: Դու ես ուսումովը, դու խելոքը:

— Հանգստացի, Ասա՛դ,— մեղմ շոյող ձայնով ասաց նիգյարը և մոտեցավ Ասադին:

— Սրան, է՛,— արեց Ասադը և շփոթված, բայց և շոյված վեր նայեց:

Նիգյարը բռնեց Ասադի գլուխը և սկսեց փայփայել:

Կնոջ բուրմունքը, մատների քնքուշ հպվածքը և ջերմ շունչը, որ փչում էր Ասադի մազերին՝ կրկին զարթեցրին նրա մեջ ծանոթ սարսուռը: Նա մեղմեց և թույլ տվեց: Բայց ինքը ոչ մի շարժում չարավ, թեև բուռն ցանկություն զգաց փարվելու նիգյարին և համբուրելու նրան:

— Դե՛նը,— ասաց նա շոր ձայնով:

Նիգյարը հեռացավ: Ինչ-որ ցրիվ ու ապակե աչքեր ուներ նա: Կարծես դրան էր սպասում: Սա դուր չեկավ Ասադին և նա զղջաց իր արածը: Բայց շուզեց կոտրվել՝ կրկին կանչելով նիգյարին իր մոտ:

Վեր կացավ և գլխարկն առավ:

— Ո՛ւր:

Ոչինչ չպատասխանեց: Գնաց դուրս: Ճամփին հաշիվ տվեց իրեն: Առաջին անգամը: Հարց տվեց իրեն. սիրո՞ւմ է նիգյարին, կարո՞ղ է թողնել նրան, հեռացնել: Կարո՞ղ է մնալ նրա հետ, զգալ իր գրկում մի կոմերիտուհու, որ հետզհետե օտարանում է ակումբի մթնոլորտում: Կարո՞ղ է սեղմել կրծքին մի այդպիսի վտանգավոր, դավաճան էակի, որ կարող է ամեն օր պոկվել այդ կրծքից, թողնելով իր հետքը — սիրո, անփոխարինելի սիրո վերքը:

Ասադի սիրտը լցվեց նոր տանջանքով: Երկու օր լավ էր. զայրույթն ու կոիվը խլացրել էին նրա մեջ սիրո զինաթափող զգացման կայծը: Նրանք անցան, հիմի սկսվեցին սիրո խաղաղ տարակույսներն ու խաղերը:

«Չէ, մի բան պիտի անել, թե չէ՝ կգժվեմ».— մտածեց Ասադը:

Նա գնում էր ընկերներին գտնելու:

Մեյզանի կողմերում նրան պատահեց Զաֆարը, որ գնում էր դեպի Զանգվի ձորը:

— Ո՛ւր ես, շան որդի,— դիմեց Ասադին ու կանգ առավ, — հպարտացել ես, հա՛:

— Ինչո՞ւ պիտի հպարտանամ:

— Կնիկդ կոմսոմոլ է:

Ասադը վիրավորվեց.

— Հալա ո՞վ է ասում, թե կնիկս կոմսոմոլ է, մեկ էլ ի՞նչ հպարտանալու բան է կոմսոմոլ կնիկ ունենալը:

— Եսի՞մ: Ես ունենայի՛ կտայի աղիքները կթափեի: Ի՞նչ տգամարդ ես:

— Ո՞նց թե: Կոմսոմոլ դառնալով կնիկս ի՞նչ դառավ, ի՞նչ ես գուրս տալիս:

— Չե՞ս իմանում, որ հարցնում ես: Ո՞ւր է նամուդը: էդ հո ասել է՝ մի մատ մեղրի պես կնիկը դնել կոմսոմոլի առաջ, որ լպտեն:

— Սխալ ես: Իմ կնիկը քո ասածներից չի, — բարկացած ու լուրջ ասաց Ասադը՝ զգալով սակայն, որ նրա համար ճշմարտություն էր ասում:

Նա էլ այդպես էր մտածում, բայց այդպես կոպիտ չէր ձեւակերպում: Եվ զայրանում էր ավելի նրա համար, որ Զաֆարը ճիշտ էր պատկերացնում Նիզյարի նոր վիճակը:

Բայց և այնպես՝ նա հակաճառում էր և պաշտպանում Նիզյարին:

— է, դո՛ւ գիտես, — եզրակացրեց Զաֆարը, — իմ կնիկը հո չի, որ դարդ անեմ:

— Քո կնիկը որ մտնի կոմսոմոլ՝ ի՞նչ կանես:

— Մաս-մաս կանեմ: Ես պոռնիկ չեմ ուզում պահել:

Ասադը խոցվեց հոգու խորքում: Այրվելով՝ լռեց ու մոռացվեց: Պատվի, խանդի, ինքնասիրության զգացմունքները մի դառն խառնուրդով ցնցեցին նրան: Նա ճնշվեց, կծկվեց: Այն բանը, որ լսեց Զաֆարի բերանից՝ իր մտքերն էին. բայց մտածելիս այնքան չէր տանջվում, որքան ուրիշի բերանից լսելիս: Նրա մեջ դարձյալ զարթնեց գազանը: Ուզում էր տուն դառնալ և բռնել Նիզյարի կոկորդից, հաշիվ պահանջել: Նա զգում էր խանձող խանդի այրումը, պատկերացնում էր Նիզյարին պատահական մարդկանց գրկում, սերը նրանց բաժանելիս, նրանցով հրապուրված, նրանց տրված ամբողջովին: Ասադի համար խանդն ավելի տանջալից էր, քան սերը: Սերը կարկամեցնում է,

իսկ խանդը բորբոքում, արծարծում, խենթացնում: Եվ Ասադը, որ առանց սիրելու խանդում էր բոլորովին նոր պատահած ամեն մի կնոջ, իր սիրած կնոջ հանդեպ չէր կարողանում մի բուպե հանդարտվել:

Զաֆարի խոսակցությունը, նրա հեղինակավոր տոնը, վայրենի դեմքը ազդում էին Ասադին: Որքան էլ տարբեր էին իրենց զգացման աշխարհներով, բայց Զաֆարի և Ասադի բնազդների մեջ նման բաներ կային: Ասադը ետ չէր կենա Նիզյարին զոռով ստիպելու, որ արած քայլերից հրաժարվի, բայց Զաֆարի պես չէր կարծում, թե դա հնարավոր բան էր:

Ասադը կանգ առավ.

— Լավ, ասա, ի՞նչ անեմ:

— Դու գիտես, — պատասխանեց Զաֆարը, — էդ քո նամուսի գործն է, ի՞նչ ասեմ: Ես կսպանեի:

Ասադը հառաչեց.

— Ո՞նց սպանեմ:

— Է՛հ, կաց էդպես, — սառը կտրեց Զաֆարը: Գնացին:

— Լսի՛ր, Զաֆա՛ր: Ասում եմ փախցնեմ:

— Ո՞ւր, սարսաղ:

— Մաքու:

— Հը՛մ, Մաքու: Դու մարդ փախցնո՞ղ ես:

— Կարծում ես չե՞մ կարող:

— Տե՛ղդ, շան որդի, Մաքուն ո՞ւր, դու ո՞ւր: Կարող ե՞ս Արազը կտրես անցնե՛ս:

— Կարող եմ: Կանեմ. կտեսնես:

— Արա՛, թե տղամարդ ես: Իմ խելքը բան չի կտրում քեզանից:

— Ո՞ւմ միջոցով անեմ, ի՞նչ ես կարծում: — Եվ Ասադը քննող աչքերով նայեց Զաֆարի լկտի ու վայրենի դեմքին՝ սպասելով մի բարի խոսք, որ նրան հանգստացներ:

Բայց Զաֆարն անսիրտ էր:

— Սը՛, քու բանը չի:

— Ի՛նչ մարդ կա՞, որ ինձ տանի:

Զաֆարը ծամեց.

— Ո՞վ է իմանում: Կա: Կըլի:

— Կասե՛ս տեղը:

Ջաֆարը սառն ու մռայլ նայեց նրան.

— Ես չեմ իմանում:

— Էդ ինչ մարդիկ են:

— Կոնտրաբանդ տանող-բերող մարդիկ: Վաճառականներին հարցրու, թե չվախենան, ասեն, էն է՝ կիմանաս:

— Սեյիդ Աբբասը չի՞ իմանա:

— Կարող է, ի՞նչ ասեմ, բայց լավ է՝ հեռու մնաս, խաթալու գործ է: Հետո՞ քեզ ո՞վ կվստահի որ...

— Կփորձեմ:

— Դու գիտես: Ես քո տեղ՝ Արազի էն կուռը անցնելու տեղ մի կնկանից կանցնեի ու նրան կղրկեի «Արազի էն կուռը»: Սարսաղ քյոփօղլի, ձեռքիցդ ի՞նչ է գալիս որ...

— Բերանդ մաքուր պահի,— շեշտեց Ասադը:

— Կորի՛, շա՛ն որդի,— արհամարհանքով նայեց կողքանց Ջաֆարը և լեզվի ծայրը ատամների մեջ սեղմելով՝ սուր թքեց մի կողմ:

Իշան ձորը, անցան կամուրջը և շոսելով գնացին Դալմայի այգիները: Մուռումուռ արահետները քարե բարձր պարիսպների միջով փախչելով գնում էին դեպի ձորափ: Հասան մի այգու և դուռը ծեծեցին: Դանդաղ առաջ եկավ ծեր բաղմանչին և դուռը ծուլ բանալով՝ հտ գնաց: Ջաֆարը կողպեց դուռը, և նրանք առաջ գնացին:

Այգու խորքում, սալորենու շվաքի տակ նստած էին Ալեքսանդրը, Սաֆարը, Սադրխը, Մահմուդն ու Ալին — անբաժան սրիկաներ, որ ամեն եղանակին գիտեն ո՛ւր անցկացնել ժամանակը: Նրանք թուղթ էին խաղում և գեղեցիկ այգու ծաղկափթիթ ծառերի ճյուղերն ու այդ օդը լցնում էին իրենց կեղտոտ հայհոյանքներով: Սադրխն ու Սաֆարը՝ երկուսն էլ թեև աչքետեր էին, բայց հաճելի էին համարում մյուսների հետ զնալ օտարի այգի և այգեպանին վախեցնելով մտնել ներս ու ժամանակ անցկացնել: Նրանք քիչ առաջ տրորել էին մատաղ արտուր իրենց վայրենի աթուրմայով:

Եվ հիմի, թղթադրամներն ու արծաթ-դրամները խոտի վրա կիտած՝ խաղում էին և շարունակ հայհոյում, վիճում, հրում իրար:

Երբ Ջաֆարն ու Ասադը մոտեցան՝ խաղամուղները վեր նայեցին, և նրանցից Սադրխը նետեց Ասադին.

— Հը՛, կնիկդ տվիր խախի՞ն...

— Լեզուդ քե՛զ պահի: շան որդի,— ծվաց Ասադն ու բռունցքը սեղմած վրա վազեց Սադրխին: Սա թղթերը թափեց ու վեր թռավ: Ոչ ոք չխանգարեց: Երկուսը ազատ զգալով իրենց՝ կպան իրար ու սկսեցին բռնցքահարել իրար: Սադրխի հարվածները թուլանում էին. մինչ Ասադը գոռում էր: Նրանք սիթմով խորդում էին միայն և դրանով խանգարում լուսթյունը:

— Ապա՛, ապա՛, ապա՛,— մեկ-մեկ լսվում էր Ջաֆարի մռայլ ձայնը, որով քաշալերում էր մեկ սրան, մեկ նրան: Եվ երբ Ասադը սկսեց հաղթել՝ համակրանքը անցավ նրա կողմը:

— Դե, հերիք է, քաշե՛ք,— կարգադրեց Ջաֆարը: Իսկույն վրա պրծան և սկսեցին քաշել: Սադրխին պոկեցին, ու մինչ նա գոռում էր, որ ձեռքներից դուրս պրծնի և հարձակվի Ասադի վրա՝ սա ինքը ընկավ նրա վրա ու սկսեց նորից հարվածել: Այն ժամանակ Ջաֆարը զայրացած գոռաց Ասադի վրա.

— Քաշվի՛, շո՛ւն շան որդի, չե՛ս լսում:

Ասադը դադարեց: Երկուսն էլ այրունլվա եղան: Դեմքերը կարմրեց արյունից:

Հետո էին ու օձիքները կոճկում: Ասադի կուրծքը պատառված էր և շապիկը ներկվել էր արյունով:

— Սպասի՛,— սպառնաց Սադրխը,— քու կնկան կտեսնեմ մի օր:

Դրան հետևեց Ջաֆարի շառաչուն ապտակը, որ ծեփվեց Սադրխի գլխին:

— Ինչի՞ հս խփում,— ծղրտաց Սադրխը:

— Սո՛ւս, շան որդի՛,— սաստեց Ջաֆարը: Մյուսները անտարբեր էին և պառկելով խոտի վրա՝ սկսեցին ծխել ու ծիծաղել: Իսկ Ալին սկսեց ձայնը ծոր գցելով վեր քաշել բայաթին: Նա լավ ձայն ուներ: Բոլորը լռեցին և խոտերի վրա պառկած ունկնդրում էին նրան: Ասադը աչքի տակով նայեց Սադրխին, որի աչքի տակն ուռել, կապուտկել էր: Բայց կարծես Սադրխը մոռացել էր վերքը — նա ականջ էր դնում Ալու երգին, որ իրոք գեղեցիկ էր:

Ջաֆարը կարգադրեց, որ գինի բերել տան այգեպանին, կանչեցին սրան և հայտնեցին իրենց կամքը:

— Ախր ես գործ ունեմ, ո՞ւր գնամ:

— Գնա, շատ մի՛ խոսի, քավթառ,— սաստեց Ջաֆարը: Մեր այգեպանը փնթփնթաց և դրամն առնելով դուրս եկավ այգուց:

Ուշ երեկո էր, որ սրիկաների խումբը քեֆ էր անում այգում: Ասաղը հարբեց: Սաղըխին մեջ քաշեցին և հաշտեցրին Ասաղի հետ, բայց Սաղըխը մտքում դրեց վրեժխնդիր լինել Ասաղից:

Երբ քեֆը վերջացավ, և այգուց դուրս գալով խումբը տուն էր վերադառնում՝ ճամփին Ջաֆարը մի կողմ քաշեց Ասաղին և ասաց.

— Տուն չգնաս, երբ սրանք քաշվեն ե՛կ ինձ մոտ:

— Ո՞ւր:

— Կտեսնես:

Ասաղը հասկացավ, որ Ջաֆարը կարևոր բան ունի ասելու: Լոնց: Ու երբ տղաները բաժանվեցին տնե տուն՝ Ջաֆարը Ասաղին տարավ դեպի Դամուրբուլաղի կողմերը:

— Ախր չես ասում, թե ո՞ւր ենք գնում,— հարցրեց Ասաղը:

— Շա՛ն որդի, հալթաթ մի բան գիտեմ, որ տանում եմ:

Դու արի, քեզ ի՞նչ:

Նրանք կանգ առան մի մեծ տան առջև: Ջաֆարը դուռը ծեծեց: Մի ծերուկ բաց արեց դարբասը և տեսնելով Ջաֆարին՝ ծանոթի անտարբերությամբ նայեց նրան և ներս թողեց, ինքը գնաց մտավ մի ծակուռ:

Ջաֆարը մթան մեջ առաջ ընկավ և Ասաղին տարավ այգու խորքը, ուր մի տնակ կար առանձին պալաճ: Այնտեղ ճրագ կար: Մոտենալով դռանը, Ջաֆարը շվացրեց: Դուրս եկավ ավազակադեմ մի երիտասարդ և աչքերը բացելով մտեցավ Ջաֆարին և մտիկ տվեց Ասաղին:

— Ղոնաղ եմ բերել,— ասաց Ջաֆարը:

— Աչքիս վրա. համեցեք,— մոմոաց անծանոթն ու դուռը բաց անելով՝ հրավիրեց ներս: Նա մոայլվեց:

Գետնի վրա, խսիրին փռած մինդարի մոտ, սամովար էր դրած, մոտը պղտոր, կեղտոտ բաժակներ: Անկյուններում զա-

նազան լաթեր ու հոտած մի անկողին, որ փաթաթած էր ինչպես պատահել էր: Մանր հոտը բռնել էր փոքրիկ սենյակը:

Նստեցին գետնի և մի տաբուրետի վրա: Ոչ մի առանձին խոսակցություն: Բոլորը ընդհանուր խնդիրների մասին էր: Բայց Ջաֆարի և հյուրընկալի հայացքներն արդեն խոսում էին բուն նյութի մասին: Հետո Ջաֆարը իբր թե խոսքի համար՝ պատմեց նաև Ասաղի մասին: Հեռավոր ակնարկ արեց այն մասին, որ նա ուզում է Մաքու փախչել և հետը տանել իր կնոջը:

— Հա՛, դժվար բան է,— փակ ձայնով ասաց հյուրընկալը և սպիազիծ դեմքը դարձրեց դեպի պատուհանը,— դժվար է, դժվար է՝ երբ մարդ չի իմանում՝ ոնց դուրս գա խաթից:

Ջաֆարը մի մանյովը արավ.

— Ի՞նչ կասես, Ջամի՛լ, իսկի հնար կըլի՞, որ մեկի միջոցով էս մեր տղան անց կենա Արազը:

— Չեմ իմանում, կարելի է, կարելի չի, ի՞նչ ասեմ: Էն կողմերում եղել եմ, բայց չեմ տեսել ոնց են անում:

Ջաֆարը խորիմաստ նայում էր Ջամիլին:

— Էնպես մի մարդ չե՞ս իմանում, որ օգնի էս մեր ախպեր տղին,— ասաց Ջաֆարը:

Ջամիլը սառը մերժեց.

— Չէ, ո՞րտեղից: Էդ տեսակ բաներից հեռու ենք: Խաթա բան է:

Լռություն տիրեց:

— Իսկ Արազի կողմերում կարելի՞ է ճարել վալադ, որ անցկացնի:

— Ո՞վ է իմանում, հիմի շատ խիստ է, ասում են:

Ջամիլը քարի պես կարծր էր: Նա բնականորեն զգուշանում էր և իրենից հեռացնում ամեն կասկած, որովհետև Ասաղին չէր ճանաչում և միայն Ջաֆարին էր վստահում: Երբեմն նրան տալիս էր որևէ կոնտրաբանդ ապրանք ծախելու, բայց միշտ ասել էր. թե ինքն էլ ուրիշից է գնել: Ջաֆարն էր միայն կասում, որ նա ինչ-որ կապ ունի անմիջական կոնտրաբանդիստների հետ և անգամ երբեմն անց է կենում Արազը. բայց Ջամիլը և ոչ մի ակնարկ չէր արել այդ մասին:

Ջամիլը շատ զայրացավ Ջաֆարի վրա, որ անծանոթ Ասաղին բերել էր իր մոտ և ուղղակի խոսում էր այդպիսի

խնդիրները մասին, բայց զսպեց զայրույթը, որովհետև նրան որոշ բաներ, թեկուզ կոնտրաբանդ ապրանք, վստահացել էր, և երկուսի մեջ մի փոքր գաղտնիք կար:

Ջամիլը հասկացավ Ջաֆարի միտքը, որ առաջարկում էր Ասադին անցկացնել Արաքսից և շուգեց բոլորովին էլ մերժել և վերավորել նրան:

— Արազն անցնողներ եղել են,— ասաց նա վերջում, երբ տեսավ, որ իրենից ձեռ են քաշում արդեն,— բայց իմ գիտեցածով քաղաքում դժվար է վալադ ճարել: Վալադները Նախիջևան են լինում, Շարուրում: էն տեղերք փնտրեցեք:

Ու մի փոքր լուսթյունից հետո ավելացրեց.

— Համա փող շատ կգնա:

— Փողը ջհանդամը, կճարենք,— ասաց Ջաֆարը:

— Դե որ կճարեք՝ գնացեք Նախիջևան, կպատահեք վալադի: Չայխանեքում նստեք՝ կերևան:

Ջաֆարը հասկացավ, որ Ջամիլը սրանից ավելի ոչինչ չի ասելու, ուստի և խոսքը փոխեց առօրյա բաների մասին: Մխեցին մի քիչ և դուրս եկան Ջամիլի սենյակից:

— Դատարկ բան է, սա գործ տեսնող չի,— ասաց Ասադը:

— Կարող է, բայց զգուշանում է,— բացատրեց Ջաֆարը,

— շունը գլխի ընկավ, որ ուսումնական ես:

Ասադը ծիծաղեց:

— Ի՞նչ ես ծիծաղում, շա՛ն որդի, ուսման փիս հոտը գալիս է վրայիցդ: Ամենքը խրտնում են:

— Մի քիչ կարդալ իմանալով ուսումնական դառա՞նք,— նկատեց Ասադը:

— Մին է, ուսումն էնպես փիս բան է, որ մարդու կպավ թե չէ՝ էլ հոտը չի քաշվի:

— Ասել է՝ ինձնից վախեցավ:

— Դե, դու օտար մարդ ես:

— Քեզնից կբաշվե՞ր, եթե մենակ գնայիր:

— Ինչո՞ւ պիտի քաշվեր. մենք ընկեր ենք: Նա ինձ էնպես ապրանքներ է հավատացել: Չէ, դու ուրիշ մարդ ես:

Ասադը դառնացավ և մի փոքր էլ զարմանքով մտածեց այդ մասին:

— Թ՛քած ուսման մեջ,— հանկարծ խոսեց նա,— որ իսկի զարդալ շիմանայի՝ ավելի լավ կլիներ:

— Մին է. էլի ուրիշ մարդ կըլեիր:

— Ինչո՞ւ,— զարմացավ կրկին Ասադը:

— Դու կոմսոմոլ ես:

— Ծ՞ս...

— Բա էլ ո՞վ: Վերջը կգնաս կոմսոմոլ: Քեզնից դարաշուխալու չի դուրս գա:

Ասադը խոր վերավորվեց Ջաֆարի այդ սառն ու անկեղծ խորթությունից, որով նա անջրպետ էր գնում իր և Ասադի մեջ: Նա զգում էր, որ ինքն օտար է Ջաֆարին, որքան էլ միևնույն ճամփով գնում են այսօր:

— Ես կոմսոմոլ չեմ դառնա իսկի՞,— վճռական ձայնով ասաց Ասադը:

— Մին է. շես դառնա, բայց մեզ էլ շես գա:

— Դուք ի՞նչ եք որ:

— Մենք շափխուն ենք. զլուխներս ծախած մարդ: Մի կնկա համար զլխներս լաշակ չենք զցում:

— Ես գցո՞ւմ եմ. շե՞ս տեսնում, ի՞նչ եմ ուզում անել կընկաս:

— Ո՞վ է իմանում, կանե՞ս մինչև վերջ, թե կիսաճամփին ետ կկենաս:

— Բա ինչո՞ւ ես ինձ օգնում:

— էդ մեր թասիբի համար: Չենք ուզում, որ մեր աղջիկը կոմսոմոլի փայ դառնա: Մենք Նիգյարին ենք փախցնում, չէ թե քեզ:

Ասադը դարձյալ վերավորվեց Ջաֆարի այս արհամարհանքից, բայց լռեց: Նյարդերը շատ էին հոգնած: Բայց անգամ այս խոսքերը նրա մեջ զարթեցրին խանդ դեպի այդ Ջաֆարը, որ մտածում է Նիգյարի մասին: Ասադն անիծեց իր վիճակը, որ ստիպված էր ամենքին մասնակից անել իր կնոջ գործին, մտածել, շոշափել տալ իր ներքին հարցերը — իր սերը, իր կինը, նրա հրապույրները, երևան հանել Նիգյարին, դարձնել հրապարակի աչքի առարկան, մինչ նա կուզենար նրան թաքցնել յոթը ամրոցի մեջ՝ հեռու կրթոտ աչքերից, որոնց նայելն անգամ Նիգյարի վրա կեղտ էր գցում:

Այգպես էր գգում Ասաղը:

Երբ հասան քաղաքամեջ՝ Ջաֆարը բաժանվեց Ասաղից:

— Համբերի՛, մի բան կանենք,— նկատեց նա գնալիս:

— Չհամբերեմ, ի՞նչ պիտի անեմ,— հուսահատ պատասխանեց Ասաղը և կարոտ զգաց տանը, Նիգյարին:

Քայլերն ուղղեց դեպի տուն: Իարբասը՝ փակ էր, և երեկոն ուշ: Չուզեց դուռը թակել: Բարձրացավ պատի վրա և ուզում էր ներս թռչել, բայց տեսավ, որ լուսամուտը մուխն էր: Արդյոք տա՞նն էր Նիգյարը թե ուրիշ տեղ... և ումնից կարելի է իմանալ: Բոլորը քնած են:

Թռավ ներքև համենայն դեպս: Մոտենալով պատուհանին՝ ներս նայեց: Ոչինչ չէր երևում: Կամացուկ ծեծեց ապակին: Մթան մեջ մի բան խլրտաց: Դա — Նիգյարի շապկի սպիտակությունն էր:

— Ո՞վ է, լսվեց Նիգյարի օտար շեշտով ձայնը:

— Ես եմ, Ասաղը:

Նիգյարը դուռը բացեց և Ասաղին ներս առավ: Նրան լավ չէր տեսնում Ասաղը, բայց զգալով նրա շունչն ու բուրմունքը՝ անմիջապես սթափվեց իր այդ օրվա կոշմարից: Ինչ-որ մտերիմ մի ձեռք սրբեց նրա աչքերից թունավոր մշուշը, և նա զգաց իրեն նախկին, սովորական մթնոլորտում: Կամպը վառեց: Նիգյարը պառկած էր մեջքի վրա և թևերը դրել գլխատակին:

Ասաղը լուռ նստեց տարուրետի վրա և նայեց Նիգյարին:

Նա չէր քնում: Ուզեց խոսք բանալ, խոսել, ոչինչ դուրս չեկավ: Ու հանկարծ հարցրեց.

— Ինձ թողնո՞ւմ ես, Նիգյար:

— Ես ոչինչ չեմ ուզում,— խուլ պատասխանեց Նիգյարը,— ես դրա վրա չեմ մտածում:

— Ուզում ես ասել՝ ես կամ չկամ՝ միևնույնն է:

— Ինչո՞ւ: Ես շատ եմ մտածում քո մասին:

— Ի՞նչ ես մտածում:

— Ի՞նչ ասեմ. շատ բան:

— Ուզում ես դառնամ կոմսոմո՞ւլ:

— Ո՞վ է իմանում:

— Դու հո գտել ես քո ճամփան:

— Գտել եմ, ճիշտ է:

— Դե, էլ իմ մասին ինչի՞ ես մտածում:

Նիգյարը շպտաստախանեց, բայց լռեց: Ոչ այն պատճառով, որ կուզենար մի վիրավորիչ խոսք ասել ու չէր համարձակվում: Ոչ: Նիգյարը նրան կուզենար մտերմական խոսքով հանդարտել, համոզել, տանել իր հետ: Բայց նրա մեջ ստեղծվում էր մի նոր կյանք, ստեղծվում ճարտար: Նա նրբին թելերով մի ոստայն էր հյուսում իր հոգու մեջ, որի հեզ թելերում ուզում էր փաթաթել Ասաղին: Եվ դա բնազդորեն, ոչ գիտակ: Ատելով Ասաղին՝ նա տեսնում էր նրա խանդը, բռնկումները, զազանային կրքերը, որից չէր վախում թեև, բայց հանգցնելը ժամանակի էր սպասում: Նա կնոջական բնազդով զգում էր, որ հարկ չկա դիմադրել կամ բռնանալ: Նրա նշածև աչքերի ու երգեցիկ խոսքի մեջ զգացվում էր մի ինչ-որ հեզահամբույր մեծ ուժ, որ հալեցնում էր Ասաղի դաժանությունը: Նիգյարը համբեր ու մեղմ տանում էր Ասաղին իր ճամփով և ոչ մի նշանով չէր մատնում իր այդ ձգտումը:

Նա սպասում էր Ասաղի վերջին գալարումներին:

Բայց դեռ որքան պայթար կար, և ով գիտե, գուցե աղետալի...

Նիգյարի այս բնազդական կնոջական տակտը, այս գաղտնի շարժումը Ասաղն ընդունում էր իբրև դավաճանական քայլի խորամանկ քողարկումն: Նրան կատաղեցնում էր դեռ այս հանդարտությունը:

Ասաղը հանվեց և գնաց պառկեց Նիգյարի մոտ:

— Ախր ի՞նչ է լինելու իմ ու քո վերջը,— մոմոաց Ասաղը,— դու ինձ ճամփից հանեցիր, Նիգյա՛ր. դու ինձնից հեռանում ես, գնում ես ուրիշին:

Նիգյարը թևը գցեց նրա գլխատակը և լռեց:

Ասաղը երջանիկ և տարակուսանքով համբուրեց այդ թևը: Նրան չէր հագեցնում այդ համբույրը: Նա Նիգյարին համարում էր ձեռքից թռած թռչուն: Ո՞վ է իմանում վերջին համբույրներն են: Չկա վստահություն, չկա միամտություն, թե Նիգյարը կմնա իր կիսը:

— Գնո՞ւմ ես ակումբ,— հարցրեց Ասաղը տխուր լրջությամբ:

— Գնում եմ, Ասա՛ղ, աշխատում եմ: Սկսել ենք պարապելը:

Ասադը նյութը փոխեց.

— Բա ինչո՞վ ես կերակրվում. դրամը չհատա՞վ:

— Ֆաթմայից վերցրի. կտամ, ոչինչ:

— Բոլորովին օտար մարդ ու կնիկ դառանք. ո՛ր է մեր օջախը, մեր միասին կյանքը:

Նիգյարը սեղմեց Ասադի գլուխն ու ոչինչ չասաց:

Ասադը զինաթափ էր լինում այս սեղմումից: Նա մեղմանում էր, զգում սիրո երջանիկ հպվածքը իր բորբոքված գրկին, բայց միաժամանակ դժբախտ էր համարում իրեն՝ որ ահա սիրած կնոջ փայփայանքը, անգամ սերը չի կարողանում նրան թվալ փայփայանք ու սեր:

Ճամփաբաժանը տանջում էր Ասադին: Վաղվա օրն ու հեռավոր ապագան նրա աչքին նկարում էին անուրախ պատկերներ: Նա տեսնում էր Նիգյարին՝ մազերը կտրած, բլուզը հագին, գոտկով ու ուսափոկով, թևանցուկ արած ուրիշների հետ գնում է վագոնով դեպի Բաքու, Բաթում, Մոսկվա... Իսկ ինքը՝ նստած է շայխանաներում մի խումբ լոթիների հետ — նույն նարդին, նույն թղթախաղը, նույն հայհոյանքը...

Ո՛չ, Նիգյարը ձեռից գնացած է:

Եվ երբեք Ասադը այդքան կոնկրետ չէր զգացել Նիգյարի սեփականություն լինելը: Սեփական, իբրև թողուն, որ ձեռքից գնում է: Նիգյարը հիմի ուզում է ազատ լինել, այսինքն՝ էլ ո՛չ սեփական:

Ինչպե՞ս կարելի է դրան հաշտվել: Ի՞նչ սարսափելի է այդ ազատությունը: Այդ գեղեցկության, հրապույրի, փայփայանքների, ահա այս ջերմ, քնքուշ թևի, վառ մարմնի ազդեցությունը: Թող մոտենա՞ ով կուզի. թող վայելե՞ ում հաճելի է:

Ասադը ցնցվեց ու վեր կացավ նստեց:

— Հա՛, ի՞նչ է, Ասա՛դ,— հարցրեց հանդարտ ձայնով Նիգյարը:

— Ես ինձ կսպանեմ. չեմ դիմանա. հենց էս բոպեխս կսպանեմ ինձ:

— Չես սպանի. քնի՛, քնի՛,— բռնելով թևից պառկեցրեց Նիգյարը և փաթաթվեց նրան:

Ասադը թուլացավ և աչքերը փակեց:

Նրան տանջում էր իր անուժ, անմիտ, անգարձան տանջանքը:

— Ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ,— մրմջում էր դժբախտ երիտասարդը՝ իսկապես սիրո ցանցերի ու վայրենի բռնկումների միջև:

— Մի՛ գնա ընկերներիդ մոտ. կա՛ց տանը, կարդա: էդպես որ անես՝ քեզ շատ կսիրեմ:

Նրանք գրկախառնվեցին: Ասադի համար կարծես մի լույս շողաց մութ զնդանների մեջ: Նա մի պահ ջերմություն զգաց, քաջալերվեց ու համբուրեց Նիգյարին խոր, կարոտալի, մտերմորեն...

Բավական ուշ էր, երբ վարձեցին: Նիգյարը վեր թռավ անկողնից և սկսեց հագնվել: Նրա փղոսկրե մարմինը շապկի թևնոցներից փայլում էր մութ լույսով:

Ասադը կարծես նորանոր հրապույրներ էր տեսնում Նիգյարի մեջ: Բայց ամեն մի նոր հրապույրը նրան ավելի նյարդայնացնում էր, քան ուրախացնում:

Գիշերվա հաշտությունը մնաց գիշերվա մեջ: Առավոտը նոր տրամադրություն փչեց Ասադի խանդոտ, կրքոտ հոգուն: Նա զգաց իր ամենօրյա հիվանդության նուպան: Դա անհասցե, անպատճառ, անառիթ խանդն էր, որ չէր մարում նրա սրտում: Ընդհակառակն՝ քանի նայում էր Նիգյարին, այնքան մեծանում, գալարվում էր այդ կանաչ օձը:

Նա այլևս հիվանդ էր այդ ախտով, ուրիշ ոչինչ չէր զգում, չէր մտածում:

Իսկ կյանքն առաջ էր մղում իր դեպքերը — Նիգյարը հաճախելու էր ակումբի դպրոցը, ժողով, ինքը պիտի մնար տանը կամ գնար շուկա և շափտի տեսներ, թե ինչ է կատարվում այն աղետալի ակումբում, պիտի սպասեր, թե երեկոն ինչպես է վերադարձնում իր Նիգյարին...

«Ի՞նչ կյանք է սա... ինչպե՞ս պիտի դիմանամ...» — մտածեց Ասադը և կուլ տալով ծխախոտի դառը ծուխը՝ երկար հառաչեց:

Նիգյարը կողքանց նայեց նրան և քթի տակ ժպտաց:

— Կավ կլինի, Ասա՛դ, մի՛ մտածի:

Ասադը վեր կացավ: Ու քանի հագնվում էր, այնքան մոռանում էր հաշտության մոմենտները և իրական, կոպիտ օրը կանգնում նրա առջև՝ նոր դեպքերի սպառնալիքով:

Նա զգաց, թե ինչպես է անցնելու միակերպ, անգործ իր օրը և գազազեց:

Նիգյարը կզնար ակումբ: Դա արդեն նա ինքն ասաց: Դա գործ է, քայլ, որ նա անելու էր: Իսկ ի՞նչ էր անելու ինքը՝ Ասաղը: Զուր ու անպտուղ թափառումներ — ուրիշ ոչինչ: Նրան զայրացնում էր և մի ուրիշ բան, որ առաջ հաշվի չէր առնում, նոր սկսեց անդրադառնալ: Դա այն է, որ Նիգյարը կարծես միայն իր մասին էր հոգ տանում, իր ճամփան էր բաց անում և բացի իր քայլերի համար ազատություն պահանջելը, ուրիշ հոգ չունեցր:

Ապա Ասա՛ղը... ինչո՞ւ չէր հոգում Ասաղի համար... ինչո՞ւ չէր կանչում Ասաղին՝ գնալ իր հետ, չէր հարցնում, թե ի՞նչ է անելու Ասաղը...

«Նա իր գլխի մասին է մտածում, ես ջհանգամը» — մտածեց Ասաղը և դառնացավ:

«Շատ լավ. ես էլ կմտածեմ իմ մասին» — մտածեց բարկացած:

Եվ միտքը փայլեց՝ ինչպես խավարի վարագույրը ճեղքող կայծակի հարված: Ինչո՞ւ գնալ Նախիջևան, Զուլֆա...

«Ե՛կ խաբով տանեմ մեր գյուղը, այնտեղից հեշտ է Պարսկաստան»:

Եվ իսկույն մի ուրիշ միտք: Խաբելով, համոզելով ետ պահել Նիգյարին Կոմերիտմիության ճամփան բռնելուց, ազդել նրան և տանել ուրիշ ընթացքով:

Եվ իսկույն սկսեց հաշտ ու խաղաղ տոնով գրուցել Նիգյարի հետ: Նախ դրամ հանեց դրեց սեղանի վրա և պատվիրեց Ֆաթմայի պարտքը տալ, հետո ասաց, որ ճաշ պատրաստի և սպասի իրեն:

— Կգա՞ս տուն, — հարցրեց Նիգյարը:

Ասաղը նայեց նրան և ժպտաց.

— Ի՞նչ պիտի անեմ. հո չեմ ընկնելու ճաշարանները: Հերիք է: Պետք է խելոքանամ:

Նիգյարը ծիծաղեց.

— Ուրեմն հաշտվո՞ւմ եմք:

— Հաշտվում ենք, Նիգյա՛ր ջան, ե՛կ համբուրեմ քեզ:

— Վախենամ մինչև տեղից դուրս գալի քաշե հաշտությունը:

— Չէ, Նիգյա՛ր ջան, խոսք եմ տալիս:

Ու համբուրեց Նիգյարին:

Նիգյարը չհավատաց, բայց ցույց տվեց, թե անկեղծի տեղ է դնում Ասաղի նոր դիրքը և թույլ տվեց, որ նա համբուրի իրեն այդ խոստումով:

Նրանք բաժանվեցին տարօրինակ մի զգացումով: Նիգյարը մի փոքր զարմացած նայեց նրա հետևից և անցավ սենյակը հավաքելուն:

Մի քանի օր ոչ մի անախորժ խոսակցություն չեղավ ամուսինների մեջ: Ասաղը իրեն զուսպ էր պահում: Մինչև անգամ գիրք վերցրեց և սկսեց կարդալ: Նիգյարը տարակուսեց թեև, բայց ուրախ էր, որ առայժմ փոթորիկ չկա:

Մի օր երեկոյան էլ Ասաղը հայտնեց, որ ուզում է գյուղ գնալ — Արաքսի ափը:

— Գնամ տե՛սնեմ այգին ի՞նչ են անում մերոնք:

— Գնա, Ասա՛ղ, մի քիչ էլ ման կգաս, մերոնց կտեսնես:

— Եթե գործդ թեթևանա, մի քանի օրով էլ դու եկ. — փորձեց Ասաղը:

— Ես ի՞նչ անեմ գամ, ամեն օր ակումբ եմ գնում:

— Մի քիչ էլ դու օդդ փոխիր. լավ չէ միշտ քաղաքում մնալը:

— Չէ, Ասա՛ղ, չեմ գա. դու գնա ու շուտով ե՛կ:

— Դու գիտես: Բայց եթե միտքդ փոխեցիր՝ լուր ուղարկիր կամ հենց ե՛կ, մի երկու օր:

— Լավ:

Հետևյալ օրը Ասաղը ճամփա ընկավ երկաթուղով դեպի իրենց գյուղը՝ Արաքսի ափին:

Գնացքը դանդաղ թեև, բայց փոխելով տեսարան տեսարանի հետևից՝ գնում էր դեպի հարավ: Ասաղը վազոնի պատուհանի մոտ նստած դիտում էր նորականաչ դաշտերն ու ծաղկած այգիները: Ծառերը շաղրայավոր նախշուն կանանց նման շարան-շարան գնում էին զանազան ուղղություններով և Ասաղի երեակայության մեջ վառում Նիգյարի գեղուղեջ հասակը, երբ նա շաղրայի մեջ ծեփծեփվում էր պատերի սակով: Եր-

զանիկ էր այն ժամանակ Ասաղը և օրերն աննկատելի, հոսում էին իբրև պխորժ երգ, ինչպես առվի ուրախ գլորումն: Իսկ ի՞նչ է հիմա — Նիգյարը, դառել է մի թունավոր գեղեցկություն: Նրա բոլոր հրապույրները միայն տանջանքի բույն են, որ ամեն բուսի այրող խանդ են զարթեցնում և տանջող սեր:

Ասաղը հառաչեց և մտածեց թե ի՞նչ լավ կլիներ, որ Նիգյարին իսկի տեսած ու սիրած շլիներ:

Նայեց Մասիսի կապույտ լանջերին, նրա ոտքերի տակ փռված ամայի դաշտերին և սիրտը ուռեց անզուսպ կարոտից — լինել այնտեղ, իր Նիգյարի հետ, գցել ծաղկավոր շաղրան նրա հողանի ուսերին և անունից ջնջել կոմերիտականի հրնշյունը: Նիգյարը Ասաղի կինն է, ուրիշ ոչինչ: Նա պարտեզի ծաղիկ է, մայիսյան վարդ, որ կոկոնից դուրս է նայել միայն բուրելու և արբեցնելու, և ոչ ոք, ոչ մի էակ նրան մոտենալու իրավունք չունի. քան միայն նրա միակ պաշտամունքի առարկան, նրան պաշտողը, — Ասաղը: Այնտեղ դարբասները չեն բացվում կանանց դուրս քաշելու համար, պարիսպները իրենց քարե գրկերում դարերով պահում են պապենական օրենքները, մարդ գիտե թե ինչպես պիտի ապրի այսօր, վաղը, հիսուն տարի հետո... Եվ ոչ թե այնպես, ինչպես այստեղ է, ուր օրը նոր՝ լուրը նոր, քանդվել ու քանդվում է ամեն բան՝ սեփականություն, օրենք, կապ, սրբություն, աստված, հոգի, սեր, առաքինություն...

Գնացքը մոտենում էր այն վայրերին, ուր Ասաղը հույս ուներ գտնել իր ներքին ցավի դարմանը — փախցնել, տանել Նիգյարին հեռու, հեռու, փարատել նրա ցնորքներն ու հիվանդ մտքերը, դարձնել այն հին Նիգյարը, որ Ասաղի սիրո համար թողեց դպրոցը և դառավ շաղրայավոր սիրուն կնիկ:

Հասնելով իրենց գյուղը՝ Ասաղը շտապեց մտնել իրենց տունը և կանգ շառնել ծանոթների մոտ, շխտել հետները:

Մնողները վարմացան, որ նա առանց Նիգյարի էր:

— Բա ո՞նց, նա հենց մենակ պիտի մնա տանը, առանց քեզ:

— Նա առանց ինձ էլ կապրի. նա հիմի կոմսոմոլ է:

— Կոմսոմոլ... հողը գլխիս, — մղկտաց Ասաղի մայրը և ծնկները ծեծեց:

Ասաղի հայրը հազաց և վեր կացավ տեղից, սկսեց անցուդարձ անելով ծխել: Հետո անխոս դուրս գնաց:

— Տուներնիս քանդվեց, բալա ջան, — գլուխն օրորեց Ասաղի մայրը, — Նիգյարը գնաց ձեռներինս:

Ասաղը շխտեց այլևս: Գնաց պառկեց մինդարի վրա ու քնեց: Հետևյալ օրը տնից չէր հեռանում:

Եվ մի երեկո հորը հայտնեց, որ ուզում է Նիգյարին փախցնել Մաքու: Հայրը համաձայնեց. խոստացավ դրամ տալ՝ թեկուզ դրա համար ստիպված էր ծախելու իր սակավաթիվ անասուններն ու այգու համեստ բերքը:

Մի գիշեր էլ հայրը ներս բերեց մի արևառ, սև տղամարդու և ուղղակի ասաց, որ նա մաքսանենգ է և Ասաղին ու Նիգյարին կանցկացնի Արաքսից՝ եթե Նիգյարը գա և ձայն չհանե:

— Ո՞նց կանես, որ ձայն չհանե, — հարցրեց մաքսանենգը:

— Կսպանամ սպանել:

— Զի լինի: Պիտի խաբով տանենք:

— Ո՞նց խաբենք:

— Այ, պետք է մտածել: Էնքան, որ ջրի կեսն անցնենք, հետո ինչքան կուզի թող պոռա:

Ասաղը մտածեց:

— Հա՛, հա՛, — հաստատեց Ասաղի հայրը, որ ըստ երևույթին առանձին կապեր ունենալով մաքսանենգի հետ:

— Կանցկացնեմ, բե՛ր: Մենակ շուտ, քանի լուսնակը չի երևացել:

— Ես վաղն ևեթ կգնամ քաղաք:

Մաքսանենգը մնաց, թեյ բերին, սկսվեց ընթրիքի պատրաստությունը, և մաքսանենգը պատմեց Մաքվի և Թավրիզի մասին: Ասաց, որ այնտեղ շատ մուսավաթներ կան, նրանք Ասաղին պաշտոն էլ կտան, այնպես որ Ասաղը սոված չի մնա Պարսկաստանում:

Հետո պայմանավորվեցին Նիգյարին փախցնելու տեղի և ժամանակի մասին, եթե Ասաղը հաջողեցնի Նիգյարին համոզել:

Կեսգիշերին դուրս եկան տնից՝ Ասաղի հայրը, Ասաղը և մաքսանենգը և գնացին Արաքսի ուղղությամբ ոչ շատ հեռու մի ամայի այգի, որի ավերակ հնձանը ցույց տալով մաքսանեն-

զը՝ նշանակեց հանդիպման կետը: Այստեղ պետք է գալին գիշերը ժամը երկուսին Ասաղն ու Նիգյարը և մաքսանենգի հետ գնալին՝ ուր որ նա կտաներ:

Ապա Ասաղի հայրը բահը ուսին դրած և ոտքերը մերկ ու քշտած առաջ ընկավ ու երեքը վերադարձան գյուղ՝ իրրև թե գնացել էին առու բաց թողնելու:

Ոչ ոք չպատահեց: Եկան տուն, մաքսանենգը գնաց իր անհայտ տունը:

Այնուհետև ամեն երեկո Ասաղին կարելի էր տեսնել ափերակ հնձանի մոտերքը զբոսնելիս: Նրա մեջ զարթեցին արկածախնդիր հերոսի բուռն կրքերը — կտրել գետի փխրուն ալիքները, կռիվ տալ տարերքի հետ և կրակոտ նժույզի վրա տանել, փախցնել իր երազական Նիգյարին, տանել նրան Պարսկաստան, Արաբիա, մարգարեի հայրենիքը, հարավի կրակոտ երկրները, ապրել ազատ ու վայրենի կյանքով: Արաքսը չէր երևում ամբողջովին: Միայն երբեմն հեռվից, մի որևէ բլրի, թմբի փլվածքից պսպղում էր նրա ծակող աչքը և կանչում Ասաղին:

Այդքան մոտ երջանկությունը և այդքան ինքը հեռու գրանից...

Գյուղում Ասաղը մոռացավ քաղաքի ճնշումը — նոր կյանքի հաղթական, պարտեցնող ընթացքը, իր անվստահությունը: Գյուղում նա զգում էր, որ կարելի է վերադառնալ հին սովորույթներին, և եթե Նիգյարը գյուղում լիներ՝ հեշտ կհամոզվեր թողնել կոմերիտմիությունը:

Այո, միայն թե կարելի լիներ նրան համոզել, որ գյուղ գալ ել Ասաղը նամակ գրեց Նիգյարին՝ գալ գյուղ մի երկու օրով: Գրելիս նա այնքան սաստիկ էր ցանկանում Նիգյարի գալը, որ ուղղակի հավատում էր թե նա կգա: Ախր ինչպե՞ս կարելի է մերժել այս այգիների ծաղկափթիթ, հովասուն անկյունները, այս երգեցիկ թռչունների ընկերակցությունը, Արաքսամերձ դաշտերի բաց պղնձագույն հեռաստանը և մնալ փոշոտ քաղաքի փողոցներում՝ ինչ է կոմերիտ ես դառնում:

Ասաղն ուղղակի աղաչում էր Նիգյարին գալ տեսնել, թե ի՞նչ լավ է այստեղ զարուհի:

Որքան եղավ Ասաղի զարմանքը, երբ իրիկնամուտին Նի-

գյարի ճոճուն հասակը մտավ դռնից ներս: Դա երազի պես քաղցր էր, դա մի ընծա էր Նիգյարի կողմից: Գլխին մետաքսե թաշկինակը կապած, որով բերանը կիսովին փակ էր — փոքրիկ տուրք անցյալին — Նիգյարը նայեց տնեցիներին իր նշած և աչքերով և մեղմ բարևեց:

Ասաղի ծնողները կարկամեցին այս տեսարանի առջև: Իրենց հարսը, նահապետական տան հարսը, երեսը կիսարաց ճերս էր մտնում — առաջին դեպքը այդ տան մեջ: Բայց խոհեմաբար ցույց շտվին ոչինչ, մինչև կմտածեն թե ինչ անեն:

Նիգյարն սկսեց պատմել քաղաքի նորություններից, բայց աչքը շարունակ կեսրարի ու կեսուրի կողմն էր:

Նրանք դուրս գնացին:
— Քեզ համար եկա, Ասա՛ղ, թե չէ սրանք ինձ տեսնելու աչք չունեն. երևում է, — ասաց Նիգյարը և ձեռքի բողջան բաց անելով սկսեց հանել թեյ, շաքար և կոնֆետ, մի քանի թաշկինակի հետ:

— Փեշքաշ ես բերել, — ծիծաղեց Ասաղը:
— Հա, ի՞նչ անեմ, — ժպտաց Նիգյարը, — գիտեմ, էնպես բան եմ արել, որ ոչ մի փեշքաշով չեմ ծածկի:
Ու հառաչեց.
— է՛հ, ի՞նչ արած, ընկել ենք դժվար ճամփա, պիտի գնանք:

Բայց քանի անցնում էին առաջին ընթացքը՝ Նիգյարը նոր էր զգում, որ ինքն ընկել է մի իսկական թշնամական դարանի մեջ: Գյուղացիք բուրձ շարունակում էին նայել նրան՝ երբ նա գյուղ էր մտել կապոցը մի ձեռքին, մյուսով բերանը կիսափակ: Իսկ այստեղ ինքն իր ոտքով եկել մտել էր նահապետական կեսրոջ և կեսրարի որջը:

Նիգյարն սթափվեց: Հասկացավ, որ ինքը մենակ է այդ առձեռ, և եթե կա մեկը, որ պիտի պաշտպանի իրեն՝ դա Ասաղն է, — նա, որ ինքը հակառակ էր Նիգյարի քայլերին:

Նոր տեսավ, թե ինչ դժվար կացության մեջ էր և այժմ միայն հասկացավ, թե որքան խիզախ քայլ էր արել, որը քաղաքում չէր զգացվում: Բայց այստեղ, կիսավայրենի գյուղում, կրոնամուլ, խավար մարդկանց մեջ:

Եվ Նիգյարը բնազդաբար փարվեց իր փրկության սյունին՝

Ասադի սիրուն, միակ ո՛րը ժպտում էր այդ խավարի մեջ, միակ ո՛րը ներում է ամեն ինչ այս աշխարհում և իր քնքուշ կապով կապում, հովանավորում է և՛ թշնամուն, և՛ օտարին, և՛ անկարելին, և՛ անսպասելին:

Անցավ առաջին գիշերը:

Սկեսարը չէր խոսում Նիգյարի հետ, չէր էլ ցույց տալիս ոչ մի անհամբույր արտահայտություն: Միայն սկեսուրն էր, որ սկսեց մեղմակի հարձակվել Նիգյարի վրա.

— Լա՛վ, ինչի՞դ էր պետք կոմսոմոլը, — ասաց նա համոզիչ ձայնով, — հա՞ցդ էր պակաս, տո՞ւն շունեիր, թե՞ մարդդ չէր պահում քեզ:

— Ո՞վ է բան ասում, անա՛, — պատասխանեց Նիգյարը մեղմ, — հաց ու մարդը ջոկ, սա ջոկ: Ծս ուսում եմ ուզում:

— Ուսումդ ինչո՞վ էր պակաս, հերիք չէ՞ր: Մարդ առաք՛ պրծար, էլ ո՞ւմ համար էր ուսումդ:

Ուսումն ինձ համար էր, անա՛: Ուսումը մարդու համար հո չէր: Այ, տե՛ս, լա՛վ է ձեր էս ապրուստը, էս խավար միտքը, գեղացու էս շարշարանքը: Ուսում որ լինի, գեղը կիմանա իր ճամփան, գեղացու զլխին ամեն մարդ շի կանգնի ու բզի, գեղացին ինքը իր տերը կլինի: Հետո՞ ուսումը մեզ՝ կանանց համար է, որ մեր իրավունքներն իմանանք. չթողնենք որ մեզ ոտի տակ գցեն, տրորեն: Մենք էլ մարդ ենք:

Ասադի մայրը զայրացավ, բայց զուսպ շարությամբ նայեց Նիգյարին:

— Ի՞նչ, Ասադը քեզ քանի՞ անգամ է տրորել ոտի տակ, էդ ասելու խո՞սք էր, աղջի՛:

— Ծս իմ ու Ասադի համար չեմ ասում, անա՛. ես ուսում եմ անում, որ ուրիշ կանանց օգնության հասնեմ:

— Ուրիշի դարդը քե՞զ են տվել: Որ ասում ես Ասադը հաշտ ու լավ է հետո՞ կա՛ց քո բանին, զլուխդ ինչի՞ ես գցում խաթի մեջ ու խեղճ տղիս սարեսար անում:

Նիգյարը մոայլվեց.

— Ծս նրան սարեսար չեմ անում:

Ու լռեց՝ զլուխը կախ, տխուր դիրք ընդունելով: Զգացվում էր, որ մնացածը չէր ուզում ասել: Ասադը միշտ նկատել էր, որ հենց խոսքը գալիս է հանգում իր հարցին, թե ի՞նչ պի-

տի լինի իր վիճակը՝ Նիգյարը հանելուկային ձևով կիսատ էր թողնում և անբացատրելի հայացքով նայում մի կողմ: Այդ հայացքում և՛ տխրություն կար, և՛ սեր, և՛ հույս, և՛ ինչ-որ մի մեղմ շարձումներ: Ասադն հետզհետե նկատում էր, որ Նիգյարի մեջ մի վճիռ կա իր մասին, որ նա միշտ ծածկում է մետաքսե նուրբ բողբոջով: Եվ Ասադը նոր էր սկսում հարց տալ իրան — թե ինչո՞ւ Նիգյարն ուղղակի չէր թողնում իրեն... Մի՞թե նա վախում էր Ասադից: Մի՞թե Ասադը լուրջ փորձեր է արել սարսափահար անել Նիգյարին:

Չէ, Նիգյարը սիրում է — պարզ է:

Եվ անհա գյուղի մթնշուրտը, հին ու վայրի կյանքի մնացորդները, Նիգյարի ներկայությունը՝ այնպես՝ կարծես էլ նա ոչ մի բանի հետ կապված չէ, քան Ասադի հետ. այս ամենը վերադարձրին Ասադի նախկին վստահությունը, որ Նիգյարը սիրում է իրեն և կվերադառնա առաջվա կյանքին: Նա սկսեց հեռավոր ակնարկներ անել կատակով, որ Նիգյարը դուրս գա թեկնածությունից: Նիգյարը հասկանում էր այս կատակների լրջությունը և մեղմ ժպտում:

Դռան մոտ շունը գոմոաց:

Ասադն ու Նիգյարը նայեցին դուրս: Շունը հանկարծ հաշեց ու թռավ դեպի մի պատանի, որ կեղտոտ բլուզի վրայով մի ուսափոկ էր անցկացրել և զխաբաց կանգնել արևի տակ՝ զգուշանում էր շնից:

— Հյուսիսին է, — հարցրեց ինքն իրան Ասադը:

— Նա է, — ժպտաց Նիգյարը և դուրս եկավ:

Եկողը կոմերիտ էր, շիկահեր, կարմրադեմ մի տղա, որի գեմքի մորթը այրվել թափվում էր, իսկ հոնքերը շեկությունից մերկ էին երևում:

Նա առողջ ատամները ցույց տալով ժպտաց Նիգյարին և առաջ եկավ:

Նիգյարը շանը ետ կանչեց:

— Յուղա՛շ Նիգյար, բարո՞վ ես եկել. քեզ սպասում ենք. գնանք խրճիթ:

— էս ըոպեիս, Հյուսեին, — ասաց Նիգյարն ու ներս գալով, փոխեց զլխի թաշկինակը:

— Ո՛ւր, — ասաց Ասադը:

— Խրճիթ, կանչեցին, տեսնեմ ինչ կա,— շտապ խոսելով ծպտաց նիզյարը:

Նա աշխուժացել էր:

Ասաղը վեր կացավ տեղից.

— Ծս էլ կգամ:

— Գնանք:

Խրճիթը մի փոշոտ, խարխուլ մարագ էր, հողե հատակով և ծակ-ծակ հողե պատերով: Փայտի անտաշ դարակներին մի քանի փետուտած զրքեր էին դրած, իսկ պատից կախված էին «Կզըլ Շաֆագ» թերթի կեղտոտ համարները: Պատերին կպցրած էին մի քանի անճոռնի դիագրամներ ու լենինի նկարը:

Երբ նիզյարը ներս մտավ՝ սակավաթիվ պիոներներն ու կոմերիտները, բոլորն էլ արևառ, մրոտ, մեծ մասը բոկոտն՝ ժրպտացին ու ծափահարեցին:

Ոչ մի աղջիկ չէր երևում նրանց մեջ:

— Աղջիկներ չկա՞ն ձեր մեջ,— հարցրեց նիզյարը:

— Կան, բայց քաշվում են, շեն գալիս,— ասաց Հյուսեհինը:

— Պետք է բերեք, էդպես չի լինի,— ասաց նիզյարը:

— Զի ըլում. շատ ենք աշխատում, բայց մեզ դիմադրում են:

— Ո՞վ:

— Ամենքը: Մենք էլ զոռով ենք մնացել: Քառասուն հոգի էինք, մնացել ենք տասնհինգ. բոլորն էլ դուրս եկան: Կապ չկա կարգին: Քաղաքից մարդ չի գալիս,— գանգատվեց Հյուսեհինը և ճակատը սրբեց:

Տղաները քշված, ճնշված դեմք ունեին: Երևում էր, որ նրանք հալչում էին գյուղի տարերքի մեջ:

Հարցուփորձ արին քաղաքի մասին, և նիզյարը՝ աչքը միշտ մի խոշորակն պիոների վրա, որ զարմացած ու խորազին իրեն էր նայում՝ սկսեց պատմել քաղաքի մասին:

Ասաղին զարմացրեց նրա տեղեկությունները:

Որքա՞ն խորն է գնացել նրա հավատքը դեպի նոր կյանքը, որքա՞ն լուրջ է փոխվել նա:

Ասաղը տխրեց:

էլ ինչպե՞ս պետք է համոզեր նրան Արաքսն անցնել... Ասաղին դա հիմի թվում էր մի անիրական երազ, հիվանդագին հոգու զառանց:

Բայց նա միաժամ զգում էր անծանոթ բաներ ևս: Նիզյարն օտարոտի էր իր խոսելու, մտքերի մեջ: Մի՞թե սա այն փակ ու անտեղյակ էակն է:

Որտեղի՞ց այսքան գիտելիքներ...

— Մերոնց հետ կապը թույլ է,— գանգատվեց մի նեղաճակատ, սև կոմերիտական,— մենք շենք իմանում ինչ են անում Երևանի մեր ընկերները. էլ շեմ ասում Բաքվի, Նախիջևանի ընկերների մասին, որոնցից տեղեկություն չունենք:

— Հայ ընկերներն էկան մի ամիս առաջ, զեկուցեցին, էն էր ու էն, մնացինք էլի մենակ,— կցեց երկրորդը, որ անկյունում նստած կոնակն էր քորում:

— Հայ ընկերներն էլ որ շըլեին՝ իսկի շէինք էլ կազմակերպվի:

— Ուզում ենք կապ պահել, սովորել, առաջ գնալ, մեզ մտիկ տվող չկա:

Այսպես գանգատվում էին գյուղացի տղաները, իսկ Ասաղը տարօրինակ բաներ էր զգում: Ի՞նչ ընտանիք է սա, որի մեջ մտնում են հայեր. Ազրբեջանի, Նախիջևանի թյուրք կոմերիտները կապ են ուզում ունենալ այս գյուղից ամբողջ Միուսթյան հետ: Ովքե՞ր են սրանք, ո՞վ է սրանց քաշել, գրավել այսպես...

Նիզյարը խոստացավ, որ քաղաք վերադառնալով՝ կխոսի այդ մասին կենտրոնում, որ մարդ ուղարկեն գյուղ:

Տղաներն ուրախացան:

Երբ դուրս էին գալիս՝ հեռու պատի տակ նստոտած ծերերը մտայլ ու անխոս նայում էին նրանց կողմը: Տեսնելով նիզյարին՝ նրանցից մինը թքեց գետնին և փնթփնթալով վեր կացավ, մտավ տուն:

— Սելիդն է,— կես կոմիկ ու կես երկյուղով փսփսացին կոմերիտները նիզյարին,— երեսդ որ բաց է՝ կատաղում է:

— Կսպանի էլ, թե մի «խալվաթ» տեղ ուստ բերի:

— Էն էլ ո՞նց,— ծիծաղեցին մյուսները: Անցան:

Հասնելով տուն՝ նիզյարն ու Ասաղը մտան ներս:

Օրն անցավ ըստ երևույթին խաղաղ ու հաշտ: Տանը տիրում էր սովորական առօրյան: Ասադի մայրը խնամք էր ցույց տալիս տղին ու հարսին: Սառը, բայց բավական մտերիմ խոսում էր Նիգյարի հետ: Չէր խոսում միայն Ասադի հայրը: Նա մի բերան ծխում էր և նայում մի կետի: Դառնությունը էր լցված. բայց քանի որ գիտեր որդու մտադրությունը Նիգյարին փախցրնելու, և հետո զգուշանում էր աշխարհ հակառակ կանգնել Կոմերիտմիության՝ իրրև միջակ գյուղացի, վախենալով, դիրքը կորցնելուց նա ոչ մի կերպ ցույց չէր տալիս ներքին զայրույթը: Միայն շուտ-շուտ գնում էր գյուղամեջ և ժամերով կորչում: Ինչ-որ այգիների անկյուններում, հյուղերի մեջ գաղտնի տեսակցություններ ուներ մաքսանենգների հետ:

Նա սպասում էր Ասադին, որ նշան տա Նիգյարին փախցրնելու:

Ուշ երեկոյան պահին էր, ընթրիքից հետո: Ասադի ծնողները գնացել էին ուրիշ տեղ և ուշանում էին:

Ասադը, որ պառկել էր տախտին՝ խոսք բացեց իրենց վիճակի մասին: Նիգյարը նրա մոտ նստած լսում էր ուշադիր, բայց հանգիստ: Ենթադրելով, որ Ասադը իր հին գանգառները պիտի կրկնի՝ մի փոքր ձանձրույթ էր զգում: Նրան սկսել էին սրտնեղություն պատճառել Ասադի համառ հարձակումները:

— Ի՞նչ ես կամենում ինձնից, Ասադ,— ասաց նա նոր ձայնով, որ մինչև այդ անսպասելի էր նրանից,— դու ուզում ես թողնե՞մ Կոմերիտմիությունը:

Ասադը զգուշացավ.

— Ես ամենից առաջ ուզում եմ իմանալ, թե դու իսկապես ի՞նչ գտար Կոմերիտմիության մեջ:

— Ինչ գտա՞: Մի՞թե չես իմանում:

— Իմանում եմ. ուզում ես՝ ուսում առնես. ուզում ես ազատ կյանք: Չգիտեմ ինչո՞վ չէիր կարող տանը կարգալ, գրել, մեկ էլ ով էր գլխիդ կակալ ջարդում: Է՛հ, Նիգյար, ամեն բան լավ իրար խառնեցիր:

Նիգյարը լրջացավ.

— Ասա՛դ, ինչի՞ ես քեզ տանջում, ինձ էլ. հասկացիր. ուզում եմ ուսում, արհեստ սովորեմ՝ որ գնամ ինձ համար

ճամփա բանամ, մտնեմ խալխի մեջ, սովորցնեմ, մի բանի պետք գամ: Ուզում եմ իմ գլխի տերը լինեմ...

— Իմ մուննաթը չքաշես, էլի՛:

— Թեկուզ հենց էդ...

Ասադը խոցվեց, խոժոռ մտիկ տվեց Նիգյարին:

— Քեզ ո՞վ էր մուննաթ անողը մինչև հիմի: Մի օր բերնիցս գանգատ լսե՞լ ես, որ երեսովս ես տալիս...

Նիգյարը ժպտաց այնպես մեղմ, մտերմորեն, որ Ասադը խոսքը կտրեց:

— Մուննաթը հիմի չես անում, բայց մի օր կանեիր: Ես ուզում եմ ուսում առնեմ. դու հո չէիր կարող էդ էլ քո վրա առնել: Այ, արհեստ եմ ուզում — դու որտեղի՞ց կարող էիր էդ էլ տալ ինձ: Հետո՞ ուզում եմ Բաքուն տեսնեմ: Էդ ծախսերը դու կանեիր:

— Կանեիր:

Նիգյարը հառաչեց.

— Է՛հ, հի՛մա ես ասում. ժամանակը որ գար՝ չէիր անի: Եվ ես ինչպե՞ս բերան բանայի, թե էս է ինձ պետք. էն է հարկավոր: Չէ, Ասադ, հիմի ինձ էնքա՛ն բան է պետք, որ դրանցից ոչ մինը քո ձեռից չի գա: Էդ ե՛ս պիտի անեմ, ե՛ս: Հիմի բոլոր կանիք էդպես են անում: Մենակ հո ես չեմ:

— Է՞դ են սովորցնում ակումբում,— հարցրեց սառը Ասադը:

— Էս էլ ու շատ բաներ էլ,— ժպտաց Նիգյարը:

Ասադը լռեց: Զգաց, որ այդ ձևով ճամփա չի կտրի: Նա բռնեց Նիգյարի ձեռքը և տարավ դեպի շրթունքները:

— Նիգյա՛ր,— ասաց նա հանկարծ,— դրուստ ասա, ինձ սիրո՞ւմ ես հիմի:

Նիգյարը նրան նայեց կոմիկ դեմքով.

— Չէ՛:

— Սուտ ես ասում:

— Չէ՛, չեմ սիրում: Դու շատ համառ ես:

— Թե համառ չլինե՞իր...

— Ա՛յ, թե իմ ասածներն անեիր...

— Ի՞նչ...

— Նորից սկսեիր կարգալ-գրել, թողնեիր ընկերներիդ, փոխվեիր ու...

— Մտնեի կոմերիտմիութեան մեջ...

— Ո՞վ է իմանում... հենց թեկուզ էր...

Ասադը լռեց և ապա հառաչեց.

— Չէ, էդ մեկը մեր բանը չի: Ես խանդոտ եմ, կոմերիտ-
եներին չեմ սիրում. նրանք քեզ կփշացնեն:

Նիգյարը ծուռ նայեց Ասադին:

— Ուրիշ էլ միտք չկա գլխումդ. հենց միալար էր ես
կրկնում:

— էդ է, է՛... էդ է, որ սիրտս ուտում, կտոր-կտոր է
անում.— ու Ասադը կիսով վեր նստելով՝ վայրի աչքերը
զարձրեց Նիգյարին:

Նիգյարը մտասույզ նայեց հատակին:

Ի՞նչ պիտի լինի սրա վերջը...

— Նիգյար,— ընդոստ շարժումով նստեց տեղում Ասադը,—
ե՛կ, գնանք Պարսկաստան:

Նիգյարը զարմացած նայեց Ասադին:

— Գնանք Պարսկաստան, ի՞նչ ուզում ես՝ արա է՛նտեղ:
Ուտում, արհեստ ես ուզում՝ էնտեղ սովորի, արա՛ ինչ սիրտդ
ուզում է: Մենակ գնա՛նք, հեռանա՛նք էս երկրից: Ես էստեղ
կմեննե՛մ:

Նիգյարը շոյեց Ասադի գլուխը:

— Չես մեռնի, կսովորես: Ի՞նչ գործ ունենք Պարսկաս-
տան: էստեղ ինչո՞վ է վատ:

— էստեղ հարամ է եղել մեր կյանքը. ո՛չ ընտանիք կա, ո՛չ
ապրուստ, ո՛չ ազատութուն:

Նիգյարը լռեց:

Հը՞, Նիգյար՞ր...

Նիգյարը տխուր նայեց Ասադին.

— Ի՞նչ զառանցում ես, Ասա՛դ: Ո՞վ է մեզ Պարսկաստան
թողնողը, և Պարսկաստան գնալով՝ ի՞նչ պիտի շահենք:

— Իսկ էստեղ ի՞նչ ես շահում, գնալով էդ անառականոցը:
Նիգյարը վեր թռավ տեղից:

— Ի՞նչ էլի՞ սկսեցիր, Ասա՛դ: Ամոթ է, հերիք է վերջա-
պես: էդպես կասես՝ կգնամ:

Ասադը մեղմեց.

— Չէ, էդպես էլ չեմ ասի: Մենակ քեզ խնդրում եմ, նիգ-

յար: Ե՛կ, համաձայնի. գնանք Պարսկաստան, վալադը պատ-
րաստ է, մեզ հենց էս գիշեր կանցկացնի Արադը:

Նիգյարը աչքերը շոյեց.

— Լո՞ւրջ ես ասում, Ասադ:

— Լուրջ:

Նիգյարը կանգնեց պատուհանի առջև և դուրս նայելով՝
սկսեց խոսել.

— Ասել է, մեր մեջ կապը կտրվում է: Քո միտքը Պարս-
կաստանն է, էլի հինը, էլի առաջվանը:

— Ասել է, չես գալիս.— սուր դրեց հարցը Ասադը:

— էդ չըլնելու բան է: Ես հենց էսօր կգնամ քաղաք:

Ներս մտան Ասադի ծնողները և մոռյլ նայելով Նիգյարին՝
լուս նստեցին տախտի վրա:

Հայրն սկսեց ծխել և քուլա-քուլա ծուխը փունջ-փունջ
դուրս ցայտելով նրա ալեխառն մորուքի ու բեղերի միջից
նրան տվին խոր, մոլեռանդ կերպարանք: Նա դեմքի արևատ
մկանները լարելով մտիկ տվեց Նիգյարին և ասաց.

— Ինչո՞ւ ես իմ տունը քանդում...

Նիգյարը լռեց:

— Ինչո՞ւ ես իմ տղին պցում սարեսար, քարեքար,— շա-
րունակեց նա պղտոր աչքերը ճպճպացնելով և դողալով:— Իմ
հարսը կոմսոմո՞նլ, իմ տղի կնիկը երեսը բաց ման գա՞: Բա
ո՞ւր է իմ նամուսը...

Նիգյարը շարունակում էր լռել:

— Հողը կրակ է դառել ոտներին տակին, խայտառակ եմ
ըլել սաղ գեղի առաջին. հերիք չի՞...

Նիգյարը նայեց Ասադին, սկեսրոջը և իրան գտավ ինչ-որ
զատարանի մեջ: Նա քաշվեց խոսելուց. բայց հանգիստ ասաց.

— Ես «ձեր օջախը չեմ ուզում խայտառակել». ես Ասադին
կազատեմ...

— Ի՞նչ կանես, որ կազատես, ա՛յ աղջի,— միջամտեց
Ասադի մայրը,— երեսդ բաց արիք, խալխի միջին երեսցիր—

էլ նո՞ր պիտի ազատես... մի մատ մեղր դառանք:

— Կգնամ, կազատվի Ասադն է՛լ, դուք է՛լ:

Ասադը վեր թռավ.

— Չեմ թողնի, որ գնաս: էլ հերիք է:

— Էս տանից սաղ շես պրծնի, դանջը՛ղ,— մումուաց Ասա-
դի հայրը,— կմնաս ու խելքդ գլուխդ կհավաքես:

Նիգյարը վախեցած նայեց շուրջը: Զգաց, որ խոհեմ քայ-
լով միայն կարող է հանդարտեցնել նրանց կրքերը: Ուստի և
յոնց:

— Խելքդ գլուխդ կհավաքես, շադրան էլի գլխիդ կբա-
շես... Բայց թե դուրսը բան ես խոսացել՝ առաջ քեզ կսպանեմ,
հետո ինձ: Էս լա՛վ իմացի:

Ու կատաղի հայացքը մեխեց Նիգյարի տարակուսող աչ-
քերի մեջ:

— Էդպե՛ս, իմացի, որ ես գլխից ձեռ վեր կալած մարդ եմ:
Ասի՛ կանեմ: Նալլաթ էս ձեր կարգերին էլ, ձեր ամեն բանին
էլ: Մուրտանեցիք աշխարհքը, խարաք արիք: Ո՛չ օրենք մնաց,
ո՛չ հավատ, ո՛չ նամուս...

Նիգյարը ձեռներով ծածկեց դեմքը: Նա արտասովում էր:

— Կսի՛, ա՛յ բալամ,— միջամտեց Ասադի մայրը,— մեծ է,
վնաս չունի, կասի է՛լ, կսիրի է՛լ, մի՛ նեղանա, սիրտը ցա-
ված է: Տղես էլ մեղք է: Մ՛տ դառի էդ ճամփից:

Նիգյարը լուռ արցունքներն էր պահում աչքերի մեջ:

Ասադի հայրը վեր կացավ տեղից և մտեցավ Նիգյարին:

— Էս է՛ ասի, պրծա: Տանից դուրս չգաս, բան չխոսես: Թե
չէ՛ արյուն կթափեմ, հա՛:

Ու բարկությունից դողահար ձեռը տարավ քիսան՝ թուփուն
հանելու:

Նիգյարը հեկեկում էր:

— Ձե՛նդ, քա՛ծ: Ինչ որ ասում են՝ լսի ու էդ լացը թող:
Թե չէ՛ էս է՛ կառնեմ ոտիս տակ:

Ոչ ոք տեղից չթնդաց, Նիգյարը, որ Ասադի մոտ միշտ
ազատ էր զգացել մինչև այդ՝ չնայած նրա գծտուփյուններին,
այս անգամ իրական գազանը տեսնելով իր առջև՝ սարսափեց:

Ասադի հոր կապարե մկանները, նրա վայրի, մոլեռանդ
դեմքը, վազրի աչքերը չէին կատակում և ոչ էլ հույս կար
մեղմացնելու: Նիգյարը սթափվեց իր երազներից: Նոր զգաց,
թե ինչ ծանր քայլեր էր արել մինչև այս երեկո:

— Ի՛նձ նայի,— կատաղի աչքերը գամելով Նիգյարի աչ-
քերի մեջ՝ մումուաց Ասադի հայրը,— թե դուրսը լուր ես տվել՝
էս տան տակ սաղ-սաղ կթաղեմ: Գուրս չգնաս:

Ասաց ու դանդաղ դուրս եկավ սենյակից, դուռը հետևից
փակելով՝ ինչպես բանտում:

Նիգյարը գլուխը թաղեց մութաքի մեջ և լաց եղավ: Նա
դողում էր սարսափից և զայրութից: Նա խոցված էր հոգու
խորքում: Ուրեմն Ասադը ոչ թե պաշտպանում է նրան, այլև
դրա համար կանչեց գյուղ:

Առաջին անգամ նա խորթություն զգաց Ասադի հանդեպ՝
խառն վիրավորանքի հետ:

Ասադի մայրն աշխատում էր մեղմել ամուսնու կոպտու-
թյունը՝ համոզելով, որ նա ստիպված է այդպես խոսել, բայց
Նիգյարը չէր լսում, նա միայն հեկեկում էր դառնազին:

Ասադը լուռ էր: Սպասում էր այդ անցուդարձի ալդեցու-
թյան: Նա զգում էր, որ իր և Նիգյարի մեջ ինչ-որ մի բան
փլվեց այդ րոպեին: Փոխվատահուփյուն, հարգա՞նք, կար-
ծի՞ք իրար մասին — ինչ-որ մի արժեքավոր բան: Եվ ուզում
էր վերականգնել այդ փլվածքը: Բայց կարկամել էր: Նրա մեջ
գլուխ էին բարձրացրել և՛ խոհեմության, սիրո, երկյուղի
զգացմունքը դեպի Նիգյարը, որ նրան կարող էր կորցնել, և՛
խանդի, Նիգյարին փախցնելու, տիրելու և բռնության վայրի
բնազդը:

— Նիգյա՛ր,— խոսեց նա իր համար անսպասելի վճռա-
կանությամբ, բայց կարծես մեկի դրամամբ,— մենք էսպես
չենք կարող ապրել, հերիք է: Ես պնդում եմ, որ համաձայնես՝
զնանք Պարսկաստան: Ես ինձ կսպանեմ հենց այստեղ ևեթ՝
թե չգաս:

— Ախր մեղք է տղաս,— միջամտեց Ասադի մայրը մղկը-
տալով,— տես ի՞նչ է դառել: Ի՞նչ դառավ քեզ համար էդ անի-
ծած ուսումը: Գնա հետը Պարսկաստան, ազատվիր էդ ան-
պատիվ նոր բաներից է՛լ ու էս ցավերից է՛լ:

Նիգյարը գլուխը բարձրացրեց և արտասովախառն աչքերով
նայեց Ասադի մորը:

— Ես ոչ մի անպատիվ բան չեմ արել: Բա՛ց թողք ինձ:
Ես գնում եմ իմ հոր տունը:

— Նիգյար,— շեշտեց Ասաղը սպառնալի և երկյուղած:

— Չէ՛, Ասա՛ղ, մեր մեջ ամեն բան վերջացած է: Դու ուրիշ ճամփա էս բռնում: Մեր կյանքն էստեղ բաժանվում է: Ծա իմ մտքում դրածն անելու եմ, իսկ դու կանգնելու ես ճամփիս առաջ: Գնա քեզ համար քո ուզած կնիկը գտիր, ապրիր: Ծա ուրիշ մարդ եմ:

Ասաղն առաջին անգամ Նիգյարի խոսքերի մեջ զգաց օտար էակի սառը շունչը: Դա անողոք էր, դանակի պես կտրում էր և մղկտացնում նրա սիրտը:

— Նիգյար, մտածիր ի՛նչ ես անում: Ինչպե՞ս կարող եմ քեզ թողնել: Ասա, դո՛ւ ո՞նց ես թողնում ինձ: Դու ինձ շե՞ս սիրում:

Նիգյարը չպատասխանեց: Միայն վեր կացավ և սկսեց իր շորերը հավաքել:

— Ո՛ւր...— անհանգիստ դիմեց նրան Ասաղը,— ո՛ւր ես գնում:

— Թո՛ղ, ես քաղաք եմ գնալու:

— Գնացք չկա, ո՛ւր ես գնում գիշերով:

— Չեմ իմանում. բռնիք քարտուղարի մոտ:

Ասաղն ուժեղ բռնեց նրա ձեռքը:

— Էդ շե՛ս անի:

— Թո՛ղ ինձ, Ասա՛ղ: Հո սպանելու շե՞ք ինձ հեր ու որդի:

— Նստի՛ր, շեմ թողնի:

— Ասա՛ղ, մարդ ես:

— Չէ՛, ասի, շե՛մ թողնի:

Նիգյարը զայրացած նստեց Ասաղի տախտի վրա և արձանացավ՝ ինչ-որ վճիռ կայացնելով մտքում: Նրա աչքերը սպառնալի նայում էին պատուհանից դուրս:

Ասաղի մայրն զգաց Նիգյարի այդ վճիռը և սկսեց կռծկել իր ամուսնու սպառնալիքները:

— Քեզ էստեղ դիպչող չկա, աղջի՛. էն ինչ որ քեզ ասաց սկեւարարը՝ գառաբեկ խոսք էր. նա մարդու վրա ձեռք բարձրացնող չի: Չգնաս ու կոպես էլ գանգատվես: Մենակ՝ լավ չես անում: Էդ արածներդ մեր տունը քանդում են:

Նիգյարը ոչինչ չպատասխանեց:

Գիշերն անցավ լարված ու անբուռ:

Նիգյարը շխոսեց Ասաղի հետ, թեև նրանք մենակ էին սենյակում: Ասաղի ամեն խոսքին միայն պատասխանում էր.

— Մի՛ խոսի, քնի՛, էգո՛ւց կերևա ամեն բան:

Առավոտ վաղ Նիգյարը վեր կացավ և շորերը հավաքեց մի կապոցի մեջ:

Ասաղը բռնեց նրան.

— Նիգյար, մի՛ անի էդ բանը: Դու ինձ կսպանես:

— Չեմ սպանի: Մի՛ բռնի ինձ:

— Չէ՛, կբռնեմ: Չեմ կարող:

Ներս մտավ Ասաղի մայրը, տեսնելով կապոցը Նիգյարի ձեռքին՝ նեղացավ.

— Աղջի, դու էլի՞ կողքի ընկար: Ի՞նչ քո ասածին ես:

— Ես ձեռք տանը մնացողը չեմ, որ սպանեք ինձ,— հաստատ ձայնով պատասխանեց Նիգյարը:

— Մեզ խա՛ղք մի՛ անի, ամոթ ունեցիր: Ի՞նչ կասի գեղը: Առանց էն էլ մի մատ մեղր ենք դառել:

— Գեղը թող ասի, ինչ կուզի:

Սենյակի դուռը շրփալով բացվեց, և ներս ընկավ Ասաղի հայրը՝ ճիպոտը ձեռքին: Նրա դեմքի երակները լարվել էին, ուռել: Նա փրփրոտ շրթունքները բարկությունից դողահար՝ գոռաց.

— Հերիք չէ՞ վառես մեզ, քա՛ծ, դախապ՛, դու ո՞ւմ նամուսին ես դիպչում:

Ու ճիպոտով ձաղկեց Նիգյարին:

Ասաղն ու մայրը գրկեցին զայրութից վայրենացած ծերունուն: Սա օդի մեջ մի հատ էլ ձաղկեց ճիպոտով ու ջանում էր պոկ գալ և հարձակվել Նիգյարի վրա:

— Մի՛ անի, ափո՛ւ, մի՛ անի,— վախեցած զսպում էր Ասաղը:

— Թողեք շա՛ն սատակ անեմ դանջղին,— խեղդված ձայնով գոռում էր Ասաղի հայրը:

Նիգյարը փախավ մյուս սենյակը:

Ասաղի մայրը վազեց հետևից և դրսի դուռը փակեց: Հետո նորից եկավ գրկեց ամուսնուն և Ասաղի օգնությամբ հրում էր դեպի տախտը:

— Ա՛յ, մարդ, ի՞նչ ես անում, թո՛ղ:

— Թո՛ղ, ափո՛ւ, մի՛ անի,— մաքառում էր Ասաղը:

Մի կերպ քշեցին տախտի վրա և նստեցրին:

— Խելքդ գլխի՞դ է,— հանդիմանում էր Ասաղի մայրը,— ճիպոտը քաշելով ամուսնու ձեռքից:

— Ախր մտածիր ի՞նչ ես անում,— կցեց Ասաղը, զգալով հոր կոպտությունը:

Հայրը կատաղի նայեց Ասաղին.

— Ի՞նչ, հորդ վրա ես բարկանո՞ւմ, շա՛ն զավակ: Դո՛ւրս կորեք երկուսդ էլ իմ տանից: Ես էլ հարս չունեմ, որդի չունեմ:

— Ի՞նչ ես ասում, ա՛յ մարդ,— վրա բերեց Ասաղի մայրը:

— Հենց էս բոպեխս ու՛ր հղեք: Ո՞նց, սա ինձ խրատներ տա՞: Ոտի տակ գցելու, էն դանջղին տրորելու տե՞ղն է, հորը խրատներ է տալիս: Դո՛ւրս, շան ծնունդներ: Չեմ ուզում ո՛չ բող, ո՛չ էլ բողի մարդ: էս բոպեխս ուղ էլեք:

Ծերուկը հաստատ էր խոսում:

Ասաղը վեր կացավ ու գլխարկ, շոր վերցրեց:

— Ա՛յ բալամ, ախր էս ի՞նչ զուլում էր բերիք մեր գըլխին,— լաց եղավ Ասաղի մայրը:— Վառվե՛ր կոմսոմոլը, գետնի տակն անցներ էս կրակները մեր գլխին վառողը: Ի՞նչ են մեզ էրում, փոթոթում:

Ու սկսեց ծնկները ծեծել:

Իսկ ծերուկը դողահար շրթունքները ծամելով անիծում էր այն օրը, որ զավակ ունեցավ.

— Զավակ ունեցողի օջախը քանդվի, շո՛ւն դառնա, գելի փայ լինի:

Ասաղը գնաց մյուս սենյակը և աչքով արավ Նիգյարին:

Սա մոռյլ ու շարացած նայեց Ասաղին, որը բաց անելով դուռը՝ առաջ ընկավ:

Նիգյարը հետևեց նրան:

Գյուղացիք խեթ-խեթ մտիկ էին տալիս Ասաղին ու Նիգյարին, որ լուռ ու խոռվ դուրս եկան տանից և քայլերն ուղղեցին դեպի երկաթուղու կայարանը, որ հեռու էր և չէր երևում այգիների հետևից:

Ճամփին դեռ երկար չէին խոսում Ասաղն ու Նիգյարը:

Երկու կողմ փոված էին բամբակի հերկերը: Առունները

պղտոր սուրճի պես լցվել թափվում էին իրենց տաշտից: Օդի մեջ մլլում էր սալորիների և դեղձենիների ծաղկահոտը: Այգիների հողե պատերը իրար գրկած ու ընդմիջելով պաշարում էին սիզավետ արոտներ ու այգիներ, որոնց մեջ վարժություն էր անում նորեկ «Բաբաչըստը»՝ սուլելով իր դեռ անվարժ արիտը:

Որքա՛ն հանգիստ էր բնությունը, որքա՛ն հավասարակշիռ: Մինչև Ասաղի սիրտը լցված էր տարակուսանքով, վշտով և դառն սիրով: Վիրավորված ու խոռված էր նաև Նիգյարը, որ նույնպես իբրև նորեկ էակ ոտք էր դնում իր գարնանային օրերը այն դեղձենու պես, որ ահա փթթել է մոռ ծաղիկներով: Բայց, ինչպես վաղաժամ ծաղկած ծառ, որին դեռ պաշարել ու սպառնում են բոլորովին էլ շնահանջած ցրտերը՝ նա, Նիգյարը, և՛ դողում էր այն սառնաշունչ քամուց, և՛ միաժամ ժպտում էր դեմ եկող գարունքին:

Ոչ, Նիգյարը միայն զայրացած էր, վիրավոր: Նիգյարը հույսով լի էր ներքուստ, և հանգիստ շողը փայլում էր նրա զայրալի, բայց կենսալի աչքերի լճակներում:

Հասնելով քաղաք՝ Նիգյարը ուղիղ գնաց Ֆաթմայենց՝ շնայած, որ Ասաղը շատ աղաչեց այդ բանը շանել:

— Ասել է՛ բաժանվո՞ւմ ես ինձանից:

— Էդպես է երևում, որ մենք միասին չպետք է ապրենք:

— Վերջի՞ն խոսքդ է:

— Վերջին:

— Զփոշմանես,— Ասաղն այս ասաց դատարկ տղամարդկային պատվասիրությունից զրդված միայն:

— Չեմ փոշմանի,— հաստատ վճռով ու հասարակ պատասխանեց Նիգյարը և ներս մտավ Ֆաթմայենց տունը:

Ֆաթման տանը չէր: Նա եկավ մի քանի ժամ հետո: Տեսնելով Նիգյարին՝ մոտ եկավ և ձեռքը բռնեց:

— Հը՞, ի՞նչ կա, կովել հո չես Ասաղի հետ:

— Կովել եմ,— պատասխանեց Նիգյարը և ժպտաց:

— Ավելի լավ: Բաժանվի, վերջ տուր: Դուք միասին ապրող չեք:

Նիգյարը տխուր նայեց և կարծես ինքն իրան՝ մրմնջաց.

— է՛ր:

Յաթման նայեց Նիգյարի աչքերի մեջ.

— Նիգյար, ես զարմանում եմ քեզ վրա: Տեսնում ես, որ իրար հետ յուր շեք գնում: Ինչո՞ւ չես բաժանվում: Վախո՞ւմ ես — Վա՛խ, — ժպտաց տխուր Նիգյարը, — ինչի՞ց պիտի վախենամ: Մի մահ չի՞:

— Բա ինչի՞ ես դեմ առել: Բաժանվի գնա:

— Չեմ կարող, — և Նիգյարը աչքը պաղած նայեց մի կետի:

— Սիրո՞ւմ ես Ասադին:

— Չեմ իմանում... խղճում եմ... հա՛, սիրում եմ:

Յաթման շանչեց Նիգյարին:

— Ը՛ր, էդ է, աչքդ քոռացնողը: Սե՞րս որն է, շանքմ: Կտրի դե՛ն պցի:

Նիգյարը ներողամիտ ժպտաց և սիրով նայեց Յաթմային:

— Բա որ միշտ էսպես իրար հետ յուր շգնա՞ք, — հարցրեց Յաթման:

— Որ յուր շգնանք, — դարձյալ ժպտաց Նիգյարը:

— Թե խոսքի՞ շգնաք: Ո՞րը կզգես դեն. մարդո՞ւղ թե կոմերիտմիությունը:

— Ինչի՞ ես հարցնում:

— Բա ո՞նց չհարցնեմ. բանը գնում է էդտեղ:

— Բանը որ էդտեղ հասնի...

Դարձյալ ժպտաց:

— Հը՛:

— Իհարկե Ասադին կթողնեմ:

— Հա՛, դե էդպես ասա, — հանգստացավ Յաթման, — հիմի թեյ խմենք:

Ու անցավ թեյի պատրաստությանը:

Ասադը վերադարձավ տուն, բացեց դուռը, ներս մտավ նստեց մի պահ և նորից դուրս եկավ՝ քայլերն ուղղեց դեպի քաղաքի հյուսիսային մասերը՝ շանալով չհանդիպել ընկերներին:

Նա հոգու դատարկություն և հոգնություն էր զգում: Նիգյարի վճռական խոսքերը նրա համար ավելի տանելի էին, քան անորոշ դրությունը:

Ուրեմն Նիգյարը թողնում է իրեն:

Ասադը կարիք էր զգում միախառնուրտ: Հոգեկան փերը

պահանջում էր երկար ապաքինում: Կոությունն ու առանձնությունը կանչում էին նրան:

Նա ընկավ այգիների պատերի արանքներն ու գնալով հասավ մի թմբի, որի վրա կանաչը ժպտալով նայում էր կապույտ երկնքին: Գնաց պառկեց այնտեղ և հայացքը երկնակապույտ մեջ սուլած՝ մտածում էր իր անելիքի մասին: Ոչինչ չէր որոշվում, ոչ մի միտք չէր կապվում մյուսին: Նիգյարը գնում է — մի միտք միայն տխուր թախիծով տոգորում էր նրան: Եվ ուրիշ ոչինչ:

Բայց ո՞ւր չբացավ խանդը: Կարծես չի եղել: Ինչպե՞ս հանգիստ է Ասադը: Թող Նիգյարը գնա, ում հետ ուզում է ապրի: Երբ իրեն չի սիրում, էլ ի՞նչ հաշիվ թե ում հետ է նա:

Ասադը ուրախացավ, որ խանդի կանաչ օձը սատկել էր իր մեջ: Մերը հեշտ է մեռցնելը, սերը սանձվում է. դժվար բան է խանդը: Ահա նա չկա — ուրեմն լուծվեց խնդիրը:

Դիմացը, հեռուն շենքեր էին բարձրանում իրենց պատերի շուրջը տախտակամածներով: Այնտեղից թրխկոց էր լսվում. Երևանի մշտական ձայնը, որ տիրում է ամբողջ օրը:

Ինչքա՞ն տներ են շինում... ո՞ւմ համար է: Ի՞նչ են այդքան շինարարության ջերմի մեջ տանջվում այս նոր մարդիկ: Ի՞նչ են այդքան հոգում «խալխի» համար, անհանգիստ անում այդ «խալխին», ուզում են տիրել կյանքի բոլոր անկյուններին, շարժել ամեն ինչ: Խառնել են իրար ամեն ինչ, քանդում են հիմքից տուն, ընտանիք, կնոջը, սերը, իր կյանքը: Ի՞նչ է հիմի Ասադը. մի պարապորդ, մենակ, անպե՛տք ուրիշներին և իրեն: Ունի մի քանի ընկեր, որոնց հետ կապ չունի, որոնք ապրում են իրենց կյանքը, փշացնում երիտասարդ հասակը: Ոմանց չի էլ սիրում Ասադը. ինչպես և նրանք իրեն:

Իսկ Նիգյարը, այդ ծաղկափթիթ ծառը գնում է իրենից:

Որքա՞ն տխուր է կյանքը առանց նրան:

Եվ ո՞ւր է գնում, ի՞նչ սեր է այդ, որ մղում է նրան դեպի նոր մարդիկ, նոր ասպարեզ, ուր նա պիտի աշխատի, հոգնի, տառապի թերևս, մինչ նրան զարդարում էր Ասադը և պահում՝ ծաղկի թաղարի պես:

— Ինչո՞ւ է թողնում իրեն Նիգյարը: Ինչո՞ւ էդպես նվազեց նրա սերը:

Օրը թեքվում էր, որ Ասաղը վեր կացավ տեղից և վերագարձավ քաղաքամեջ:

Մեծ փողոցն ընկնելով, նրա տրամադրությունն աշխուժացավ: Անցավ թմրությունը — նա սկսեց դես-դեն նայելով որոնել ժանոթների կամ ընկերների:

Հանկարծ դեմից անցորդների օրորուն անտառի արանքներում ծանոթ ճոճումով երևաց ու ծածկվեց Նիգյարի կարկառուն հասակը: Նա մի պահ կորավ բազմություն մեջ, ապա կրկին ճեղքելով շարքերը՝ առաջ եկավ:

Նա մենակ չէր: Նրա հետ գնում էր մի թյուրք երիտասարդ՝ կեպիով և կապույտ բլուզով: Երիտասարդը ինչ-որ պատմում էր թե սրախոսում, որից Նիգյարը ժպտում էր, միաժամանակ մտիկ տալիս վիտրինները: Երիտասարդի դեմքը ոգևորված էր, նա լարել էր իր բոլոր ունակությունները հաճելի և հետաքրքիր լինելու Նիգյարին, խոսելիս շարունակ դիտում էր նրա ճոճուն հասակն ու լանդիշագույն թաշկինակի մեջ շրջանակած նշաձև աչքերը:

Նիգյարն այնպես էր գնում, կարծես օտար ու անհոգ արարած, որի համար գոյություն չունի Ասաղը իր գժբախտության անհատակ անդունդով:

Ասաղը կարկամեց, մնաց տեղնուտեղ գամած, և վազրի պես դարանակալեց մարդկանց մեջ՝ պատրաստ հարձակման: Նիգյարն ու երիտասարդն անցան, և եթե նրանք տարված չիներին իրենց ջերմ զրույցով՝ անշուշտ կնկատեին Ասաղին: Բայց անցան օտարի պես, որ նայում ու չի ճանաչում, չի տեսնում:

Մի՞թե իրոք շտեմավ Նիգյարը...

Ուրեմն այդպես էլ անկարեկից պիտի անցնի իր մոտով, ապրի, աշխատի, ուրախանա, երջանկանա առանց Ասաղի:

Իբրև թե Ասաղը չի է՛լ եղել աշխարհքում: Իբրև թե մեռած է նա:

Ո՞վ է այն երիտասարդը: Եվ որտեղի՞ց էլ ձեռաց բռնեց: Մի օր չէ՞, որ Նիգյարը հեռացել է, կամ հեռանալու փորձ է արել: Ուրեմն ամեն կողմից պատրաստ են հարձակվելու և խլելու այն վարդը, որ թողնված է անպաշտպան թեկուզ մի օր...

Ասաղը քար կտրեց այս մտքից: Նա երբեք այդպես սուր

չէր զգացել կորուստի, ափսոսանքի, խանդի, սիրո այրումն իր երիտասարդ սրտի մեջ:

Առաջ խանդը երևակայական էակների հասցեին էր: Առաջ նա տանջում էր, բայց մի հույս էլ հետն էր գնում — այն, որ Նիգյարը ոչ ոքին չի գնա: Բայց հիմա... Ո՞վ է այդ երիտասարդը: Բուռն հետաքրքրությունը կրակեց Ասաղի էությունը — հետաքրքրություն օձի հանդեպ, որ հանկարծ երևում է խոտերի մեջ: Ուզում ես հարձակվել, զարկել, զգուշանում ես, խուսափում մի կողմ, բայց և սաստիկ հետաքրքիր ես լավ դիտելու: Թշնամու հրապույրը:

Ասաղը գնաց հետևներից: Ուր կանգ էին առնում, դիտում վիտրինները՝ Ասաղը ևս կանգնում էր մարդկանց շարքերի հետև և սպասում, որ շարժվեն: Հանկարծ կորցրեց... Ո՞ւր մտան: Խանճա՞ծ: Ասաղն առաջ վազեց: Եվ ոչ մի խանութում չկային: Նորից ետ դարձավ: Ոչ, չեն երևում: Ո՞ւր թաքնվեցին: Ասաղը քրտնեց կասկածից ու խանդի կատաղությունից: Նա ուզում էր գոռալ, վազել, բռնել երիտասարդի բկից և խեղդել:

Չէ, ուր որ են՝ մոտիկ շենքերից մեկումն են: Բայց ի՞նչ գործ ունեն անծանոթ շենքերում մենակ: Ի՞նչ են անում հիմա...

Ասաղը զգաց, որ խելքը կորցնում է: Նրա բորբոքված ուղեղը սկսեց հնարել ֆանտաստիկ պատկերներ գաղտնի տների, ուր հավաքվում են ցոփ կոմերիտներ քեֆ անելու, խմելու և կանանց հետ խառնակյաց օրգիաներ սարքելու:

Եվ ինչպես կորցրածի անհույս գլուտ՝ հանկարծ տեսավ Նիգյարին Հայգրքի խանութի առաջ տետրակներ ու թղթի այլ փաթեթներ ձեռքին: Երիտասարդը բաժանվել էր ուզում Նիգյարից: Դա պարզ էր. նա լուրջ ու գործնական էր նայում և շտապում էր:

Ասաղը բուզկի հետևը կանգնած՝ կիսովին գլուխը թեքել էր նրանց կողմը և լսում խոսակցությունը:

— Ե՛րբ ես գնում Բաքու, — հարցրեց Նիգյարը երիտասարդին:

— Հենց այս երեկո:

— Երեկ եկար և էսօր գնո՞ւմ ես:

- Գործս շատ է: Չեմ կարող ավելի մնալ:
- Ակումբ չե՞ս գա:
- Չեմ կարող, կիսա տանը սպասում է, կնեղանա, թե ուշանամ: Իրերն ենք կապելու: Գլուխ քորելու ժամանակ չունենք: Էս էլ մեր օրը: Մնա՛ս բարով:
- Գնաս բարո՞վ: Բարի ճանապարհ: Զեյնաբին շատ ու շատ բարև՛:
- Մնաս բարո՞վ:

Երիտասարդը պարզ ու անմեղ հայացքով նայեց Նիգյարին և ձեռքն արագ թոթվելով վազեց մեյդանի կողմերը:

Իսկ Նիգյարը քայլերը ուղղեց ակումբի կողմը:

Ուրեմն հասարակ անմեղ հանդիպումն: Նա կին ունի, շտապում է մոտը գնալ, Նիգյարն էլ մտել էր գրախանութ...

Ասաղը մի փոքր հանգստացավ և ուզում էր Նիգյարի հետևից հասնել, բայց այնքան խորն էր ապրել վերջին տասը րոպեն, որ կարիք էր զգում գնալ մի կողմ և շունչ քաշել, հանդարտվել:

Գնաց Զանգվի ձորը:

Մի քանի օր Ասաղն անցկացրեց ինչպես ջերմախտի մեջ: Անկողինը տրորելով շուռումուռ էր գալիս: Վեր կենում, ման գալիս սենյակում և ծխում անվերջ, անխնայ:

Նա դեղնած վարդի դեմք ուներ: Աչքերը նայում էին թունավոր հայացքով:

Հարևանը գալիս նստում էր մոտը, խոսում դեսից-դենից, աշխատում մխիթարել, քաջալերել, որ ձեռ քաշի դարդից:

— Էդպես է, կինը ոտը դուրս դրեց՝ նրանից օգուտ չկա, նա օտարի փայն է:

Այս ուղղակի խոցում էր Ասաղի սիրտը՝ զարթեցնելով նրա թունավոր հիվանդությունը — խանդը:

Մի օր փողոցում հանդիպեց Ֆաթմային: Կանգնեցրեց.

- Բա Նիգյարը չի՞ գալու տուն:
- Չեմ իմանում. իրեն հարցրու, — ասաց Ֆաթման:
- Ի՞նչ համոզիր թող գա տուն:
- Դա իր գործն է. ես ո՞նց խառնվեմ:
- Բա ինչո՞ւ ես տեղ տվել տանդ:
- Ի՞նչ անեի. փողոց շարտեի:

— Ուղարկի մոտս:

— Չեմ կարող: Ինքը թող գա: Նրա ձեռից չեմ բռնի՝ թե գա: Բայց քանի որ գալ չի ուզում — ես կպահեմ նրան, մինչև թոշակ որոշելը:

— Նրան թոշակ պիտի տան:

— Կարող են: Նա շուտով գործ էլ կունենա:

Ասաղը ճնշվեց: Նյութական ուժը, որով նա հույս ուներ ճնշելու և սանձելու Նիգյարին՝ անպետք էր դառնում:

Նա մոմոաց ինչ-որ անկապ բառեր, որ ավելի իրեն էր վերաբերում, քան Ֆաթմային և հեռացավ նրանից:

Պետքատրոնում թյուրքական ներկայացում կար: Հայախառն թյուրք բազմությունը խցկվել էր սանդուղքներն ու դուռը: Կանայք՝ շաղրայավոր, անշաղրա, մեծ ու փոքր, գյուղացիներ, բանվորներ և ուսանողություն՝ աշխույժ մուտոցով հոսում էին ներս:

Ասաղը վաղօրոք տոմս վերցրած՝ մոայլ ու սրտատրոփ մտավ շենքը, անհանգիստ աչք ածեց շորս կողմ՝ որոնելով Նիգյարին, որ կարծում էր այնտեղ կլինի:

Բազմությունը հրահրում էր ամենքին, աշխուժացնում, քաշում:

Ասաղը մտավ սրահ: Խոնավ տաք օդը հարյուրավոր լարված դեմքերի արտահայտության հետ զարկեցին նրա դեմքին, և նա ճնշված առաջ գնաց՝ իր տեղը գրավելու:

Առաջին շարքում առանձին աթոռների վրա նստած էին ինչ-որ պարսկական հյուպատոսի հյուրեր: Մի կին, կարճահասակ ու լիքը՝ համարձակ ու եռանդուն դեմքով, երեսը կարծես աչքեր միայն լինեին, և շոր ու ցամաք երեք տղամարդ՝ սև ու գույնը ու անբիծ, մաքուր օձիքներով:

Հետևից դուրսում էր տեղական թյուրք հասարակությունը Ֆամաշավորի ուրախ գրույցներով:

Նայեց Ասաղը՝ Նիգյարը չկար: Սկսեց որոնել: Հետևի, վերևի աթոռներին նստածները պարզ երևում էին: Ամեն կարգի մարդիկ ներկա էին: Մեծ մասը երիտասարդություն էր. ուսանողներ, աշակերտներ, աշակերտուհիներ, բանվոր-բանվորուհիներ, տրեխավոր բատրակներ, մի երկու նախկին մարդիկ՝ վաճառականներ՝ իրենց շաղրայավոր կանանցով: Աղմկում էին

աշակերտները և երեխաները: Զանազան անկյուններից լսվում էր ծծկերների ծվոցը: Իսկ կոմերիտները, որոնց մի մասը տարազով էր, կարգ էին պահպանում դռան մոտ, միջանցքում:

Նրանց մեջ կային Ասադի նախկին ընկերներից, որ նրա մոտով անցնելիս չէին նայում վրան: Դա վերագրեց նրանց գոռոզության: Եվ այն է՝ մտքում հայհոյում էր նրանց, որ մեկը՝ իր նախկին դասընկերը, ածուխի աչքերը պայծառ պսպղացնելով կոացավ նրա դեմքին,

— Ասադ, ազա՛ էս դո՞ւ ես:

— Ես եմ. Ահմե՛դ, ո՞նց ես,— խոսեց Ասադը մոտիկից գիտելով ընկերոջ տարազը, որ նրան սազում էր: Կարծես՝ երիտասարդ գինվորական լիներ:

Ահմեդը նստեց Ասադի կողքին՝ ազատ աթոռին և կուրծքը դարձնելով նրան՝ էլի նայեց աչքերի մեջ ու ժպտաց.

— Մեռա՛ծ, փոխվել ես: Ի՞նչ բանի ես:

— Պարա՛պ:

— Էլ չե՞ս կարդում:

— Ի՞նչ:

— Գիրք, լրագիր: Բա սպեկուլյա՞նտ ես դառնալու, **թե՛** դառել ես:

— Հապա չէ:

— Տնտեսություն ունես գյուղում, չէ՞:

— Հայրս ունի:

— Օգնո՞ւմ է:

— Օգնում է, ես աշխատանք չունեմ:

Ահմեդը բզեց նրա փորին.

— Հը՞, կուլակ հո չես ուզում դառնալ: Հայրդ ձայնադո՞ւրկ է:

— Չէ: Միջակ է:

— Դե. էլ ի՞նչ կա: Ե՛կ կամաց-կամաց մեզ մոտ, պարապ մնալով ի՞նչ գուրս կգա:

Ասադը դառը ժպիտով նայեց նրան:

— Ի՞նչ ես մտիկ տալիս:

— Է՛հ, ո՞վ է իմանում:

Ահմեդը կրկնեց.

— Ե՛կ մեզ մոտ. մեր տո՛ւնը արի: Կխոսենք: Գիրք

կտանք, լրագիր: Բաժանորդ կգրենք: Իմացա՞ր: Մեռա՛ծ, չի երևում դպրոց ես գնացել: Տեսքդ փոխվել է:

Ասադը հեզանքով հեռացավ.

— Հա՛, մենք ուրիշ մարդ ենք, դուք՝ ուրիշ:

Հետո խոսքը փոխեց.

— Կանանց ակումբ գնո՞ւմ ես

— Ինչի՞ ես հարցնում:— Բայց հանկարծ վեր թռավ,— հա՛, է՛, լսիր, կի՞նդ ախր ակումբում աշխատում է: Էդ ո՞նց է, որ դու մի կողմ ես քաշված:

— Ես խավար մարդ եմ,— հեզեց Ասադը:

Ահմեդին կանչեցին: Նա վեր կացավ ու ձեռքով խփեց Ասադի ուսին:

— Եկ մեր տուն: Բան ունեմ ասելու:

Զանգակը հնչում էր: Ահմեդը հեռացավ: Բեմի վարագույրը ճեղքվեց: Բացվեց: Բայց ներկայացում չկար: Բեմի և բամպի մոտ, հետևի ալ վարագույրի առջև մի փոքրիկ սեղան կար՝ երեք աթոռով: Մեջտեղը նստած էր մի թախծադեմ, սև, կարճահասակ երիտասարդ, որի երկու կողմը բռնել էին Փաթման ու Նիգյարը:

Ասադի աչքերը մթնեցին, ինչ-որ մշո՞ւշ թե ծուխ եկավ սքողեց բեմը, սեղանը, նստածներին ու Նիգյարին:

Մեջտեղ նստածը, որ նախագահն էր, սկսեց խոսել ներկայացման նյութի մասին, բացատրեց պիեսի իմաստը, որ թյուրք կնոջ ազատագրությանն էր նվիրված: Գովեց պիեսի՝ հեղինակին, որ ապրում է Բաքվում և ապագա է խոստանում:

Ասադը նայում էր Նիգյարին, որ նստած էր պատկերի նման անշարժ, վեր կացավ, նշի աչքերը խոնարհ՝ թարթիչների նետերը լարած դեպի հատակը, ունքերի թռիչքը ճակատի տակից: Նա գեղեցիկ էր իր կարկառուն ուսերով, որոնց վրա կրծկըվել էին նրա գիշերագույն հյուսքերի օձերը:

— Եվ իբրև նոր ազատագրված թրքուհի խոսքը տրվում է ընկեր Նիգյար Բայրիմ-կզուն,— վերջացրեց նախագահը, և սրահը թնդաց կոմերիտների հարձակողական ծափահարություններից, որին արձագանքեց սրահը:

Ասադը հուզմունքից խեղդվեց ու ճնշվեց:

Նիգյարը վեր կացավ և մի քայլ առաջ գալով հազաց եր-

կարավուն ափի մեջ և մի ձայնով, որի մեջ բնական թախիժ կար և քաղցր էր՝ սկսեց.

— Յուզա՛ շար... Խորհրդային իշխանությունը ամենքին լույս բերեց, ամենքին ուրախացրեց, ուրախություն բերեց նաև թյուրք կանանց, նրանց աչքերը բաց արեց, նրանց բանվորի մուրճով շինած շղթաները բանվորի մուրճով էլ կոտրեց, նրանց շվանները մանգաղով կտրեց, նրանց...

— Բրավո՛, ուոա՛,— թնդաց սրահը՝ ծածկելով նրա մեկանուշ ձայնը, որ երգում էր, քան խոսում:

Նիգյարը շփոթվեց: Եվ ոչ մի մկան չխաղաց նրա դեմքին: Նրա երգեցիկ ձայնը հավասար, անկեղծ, մի փոքր էլ ամաչկոտ ու կարծես զուրգուրոտ, աղաչական՝ նորից հնչեց սրահի կամարներում: Նա բացատրեց, կարծես անգիր արած ոտանավոր, ազատ ու անխափան՝ կնոջ ազատագրման նշանակությունը: Խոսեց Արևելքի ազատագրված կանանց զոհերի մասին և վերջացրեց.

— Մեր սրտագին ողջույնը այս պիեսի հեղինակին և մեր քաղցր բարևները Արևելքի բոլոր ազատագրված ու ազատագրվող կանանց:

Հետո առանց հատուկ շարժման լուց ու ետ սահեց իր տեղը՝ աչքերը միշտ կախ, ինչպես որ իր խոսած ժամին:

Սրահը դողդաց ծափերի, ուռանների և բացականշության տարափից:

Առանձնապես աղմկեցին կոմերիտներն ու պիոներները՝ գոփելով հատակին ու զոռալով.

— Յաշարն, կեցցե՛ ընկեր Նիգյարը:

Ասաղը, երկյուղած, ականածալից տրամագրության մեջ էր: Նա պատկառանք զգաց դեպի Նիգյարը և ներքին սուր ցավ:

Նիգյարը նրա համար կորած էր թվում հավիտյան:

Խոսեց նաև Յաթման: Նրա՝ տղայի ձայնը համարձակ մտրակեց սրահի տարածությունը: Նա սկսեց ծաղրել տղամարդկանց համառությունը, տգիտությունը և սկսեց սպառնալ բռնակալ ամուսիններին: Խիզախ հայացքը պտտեցնելով սրահում նստածների վրա՝ կարծես պրոժեկտորով որոնում էր թունավոր խոսքի նետերը: Բայց այդ թվում էր. նա միայն խոսում էր ընդհանուր ձևով:

Ասաղը լսեց նրան խորին ատելությամբ և մտքում հայհոյեց: Հիմա պարզ էր նրա համար՝ թե ով է Նիգյարին գլխից հանողը:

— Ղանջըդ, շան աղջիկ, սպասի՛,— մոմոաց Ասաղը և աչքերը կախեց հատակին:

Բանախոսությունը վերջացավ:

Ներկայացումն սկսվեց իսկույն, և կարծես շարունակությունը լինի բանախոսության: Բեմում պատկերացավ թյուրք կինը, բռնակալ ամուսինը, կնոջ փախուստը, վերածնություն, ամուսնու զղջումն ու տանջանքները:

— Իմ օրին է նա էլ,— մրմնջաց Ասաղը դիտելով խանդոտ բռնակալ ամուսնու զալարումները:

Իսկ երբ ներս թռավ Մոսկվայից վերադարձած կինը, վերածնված, ուսում առած, ազատ կինը, սրահը պայթեց ծափերից: Դերասանուհին նազելի նոճու պես ճկվեց ու գլուխ տվեց հասարակության, որ դեռ երկար ոռնում էր ու թնդում:

Ամենքը, ամեն ինչ լցվելով մի ընդհանուր հունի մեջ՝ ետ է դառել և հաղթական հոսում դեպի մի օտար ապագա: Գոչում, թնդում են, ուրախ, անհոգ, շեն հարցնում ո՛չ կամքդ, ո՛չ ներքին ցավդ: Քշում են նաև քեզ՝ շթողնելով քեզ քո ցավի հետ, քշում են ծիծաղելով, անկարեկից, շնայելով վրադ, չլսելով գանգատդ: Եվ դու չկարողանալով ետ ճեղքել հոսանքը, հակառակ գնալ՝ ակամա քշվում ես ու շես մասնակցում նրանց ընթացքին...

Խնջ պիտի լինի Ասաղի վերջը: Քանի՞ տարիներ պիտի անցնեն այսպես, որ կյանքը վերջանա պրծնի այս շփոթված վիճակից:

Ասաղը սրտնեղեց ու զուրս եկավ թատրոնից: Մթության մեջ դեռ աչքին երևում էր Նիգյարի պատկերը՝ արդեն օտար, անկարեկից, նոր մտքերով տոգորված: Խախի՛ Նիգյարը...

Գնաց Գետառի կողմերը, Նիգյարի անցնելիք ճամփով: Եվ նստելով մի կիսավեր այգու պարսպի վրա՝ սպասեց նրա գալուն: Բայց հետո էլ կասկածեց թե կգա: «Գուցե գնան մի տեղ քեֆի»,— մտածեց նա և վեր թռավ օձի կծածի պես: Հետ դարձավ դեպի թատրոն: Երբ հասավ, արդեն թատրոնի պատուհանները մութն էին գանգի աչքերի պես: Դուռը փակ էր, և

ապակիների միջով դուրս էր նայում խավարի ծամածուռ դեմքը՝ մռայլ ու շարժ:

Թատրոնը լուռ էր, աղետալի, տանջալի թատրոնը, որ այս երեկո կլանել էր Նիգյարին, դավելով Ասադի դեմ: Ետ դարձավ Ասադը և արագ-արագ գնաց եկած ճամփով: Գետառի ափին, նեղ արահետների վրայով օրորվում էին երկու սիլուետներ: Արագացրեց քայլերը և Նիգյարի բնորոշ տատանումը մատնեց նրան: Ասադը վազեց և հետևից խեղդված ձայնով տվեց նրա անունը:

Ֆաթման ու Նիգյարը կանգ առան՝ տարակուսած, թե ի՞նչ անեն:

— Ի՞նչ ես ուզում,— հարցրեց Ֆաթման անհանգիստ:

— Նիգյարին բան եմ ասելու:

— Գնանք տանն ասա:

— Չէ, էստեղ կասեմ,— ու դարձավ Նիգյարին,— ե՞րբ ես

տուն գալու...

— Տո՛ւն...— և Նիգյարը տատամսեց:

— Հա՛, ե՞րբ ես ինձ մոտ գալու:

— Ինչի՞ ես ուզում, որ գամ:

Ֆաթման քաշեց Նիգյարի թևից:

— Կա՛ց, ո՞ւր ես քաշում,— ասաց Ֆաթմային Ասադը,— մի՛ վախեք, ես մարդասպան չեմ, ես ուզում եմ իմանամ, թե հերիք չի՞, որքան մնաս ուրիշի տանը: Ասա, ե՞րբ ես գալու:

— Չգիտեմ... գուցե գամ... ախր ի՞նչ անեմ գամ,—

ծամծմեց Նիգյարը շփոթված:

— Իմ կինը չե՞ս, իսկապե՞ս բաժանվել ես:

— Ախր մին չի՞ տանը, թե էստեղ,— հավաքեց իրեն Նիգյարը,— ուր էլ լինենք միասին՝ իրար չենք բռնում: Լավ չի՞ էստեղ մնամ:

— Չէ, պիտի գաս տուն. հենց հիմի՛, գնանք:

Ֆաթման լարվեց և գործի անցավ:

— Գնա՛նք, բան եմ ասում: Քայլենք:— Ու քաշեց Նիգյարին: Գնացին:

— էս գիշեր մնա թող, Ասա՛դ: Նիգյարը քեզ հետո պատասխան կտա:

Խոսելով ու հակաճառելով հասան Ֆաթմայեց տան դուռը: Ֆաթման կանգնեց Ասադի ու Նիգյարի մեջտեղ և ասաց.

— էդպես զոռով բանի չի հասնի, Ասա՛դ: Թող Նիգյարը գնա ներս, մտածի, էնպես քեզ պատասխան տա:

— Ես չեմ կարող համբերել. նա հիմի պիտի տա պատասխանը,— պնդեց Ասադը:

— Հիմի քեզ ի՞նչ պատասխանի, հիմի ո՞նց գա տուն,— և Ֆաթման դուռը ծեծեց:

Դուրս եկավ Ռուստամ աղան.

— Ո՞վ է:

— Մենք ենք,— ասաց Ֆաթման,— գնա նե՛րս, Նիգյար:

— Ղախպա, շա՛ն աղշիկ, հերիք չի՞ իմ կնկան դո՛ւրս քաշես,— հարձակվեց Ասադը Ֆաթմայի վրա, բայց Ֆաթման ներս ընկավ Նիգյարի հետևից:

Ռուստամ աղան բռնեց Ասադին.

— Թո՛ղ, բան չունի՛ս դրանց հետ:

— Սպասի մի դրա օրը սևացնեմ,— խեղդված ձայնով գոռաց Ասադն ու ճիգ արեց Ռուստամ աղայի գրկից դուրս պրծնելու: Նրա ձեռքին դողում էր մերկացրած բեբուլթը:

Ռուստամ աղան պինդ սեղմեց Ասադին իր կրծքին և աշխատում էր դանակը խլել ձեռքից: Ու մինչ ներսից կենդանի դուրս էին թափվում՝ Ասադը հնազանդվեց Ռուստամ աղային և նրա հորդորանքով ներս մտավ նրա բնակարանը:

Ռուստամ աղան կենդանիներին հորդորեց, որ ցրվեն ու ինքը եկավ ներս:

— Դու խելքդ կորցրել ես, ինչե՞ր ես անում,— հանդիմանեց Ռուստամ աղան,— քեզ ասի էլ թե ե՛կ մոտս: Որ ասում են՝ լսի՛: Ախր էստեղ մենք էլ մարդ ենք, տեսնում ենք հալդ, սրտներս մղկտում է: Գիտեմ, դու էլ մեզ նման ես, կրակում էրվում, խորովվում ես: Եկ, նստի՛, խոսենք, ճա՛ր անենք: էլ ո՞ր օրվա մարդ ենք ու ի՞նչ մուսուլման ենք: Նստի՛, նստի՛. սարսաղ հո չե՞ս, դանակ ես քաշում: Լավ է՛ շտեսան:

Ասադը գլուխը ձեռների մեջ՝ հեռում էր հուզմունքից: Նստեց, ընկավ աթոռի վրա ու կախվեց հատակին:

— Ի՞նչ անեմ, ի՞նչպես պրծնեմ էս կրակից:

Ռուստամ աղան հառաչեց և նստեց նրա կողքին՝ տաքուրեւոր քաշելով մոտ:

Բավական երկար լսեցին: Հետո Ռուստամ աղան բռնեց նրա ձեռքը և թափ տվեց.

— Լսի՛: Ինձ ահանջ դիր:

Ասաղը գլուխը բարձրացրեց և նայեց Ռուստամ աղային: Սա սուր և օտարոտի հայացքը շեշտեց Ասաղի աչքերի մեջ.

— Դու տղամա՞րդ ես, թասիբ ունե՞ս:

Ասաղը բութ նայեց Ռուստամ աղային.

— Ինչի՞ ես հարցնում. թասիբ էլ ունեմ, նամուս էլ:

— Դե սր թասիբ ու նամուս ունե՞ս, էլ ի՞նչ ես կախ ընկել մի կնկա փեշից:

— Բա ի՞նչ անեմ, սիրտս չի պոկվում նրանից:

— Էլ ի՞նչ տղամարդ ես: Ես քո տեղ հազար կնիկ էի վանդել, հազար կնիկ էի առել:

— Աչքիս ուրիշ կնիկ չի գալիս:

— Կա՞, որ գա: Դրա համար էլ ասում եմ՝ վեր կաց, գնա Բաքու: Էնտեղ կնիկ էլ կգտնես, գործ է՛լ: Մի՛ մնա էս քանդվածում:

— Չեմ կարող:

— Չո՞ւ արա, գնա՛: Էնպես կնանիք տեսնես Բաքու, որ խելքդ գնա: Քեզ բան եմ ասում. մի՛ վախի, վե՛ր կաց գնա: Ես էնտեղ բարեկամներ ունեմ, գնա մոտները, նրանք քեզ ամեն ճամփա ցույց կաան: Չես ուզի մնալ էս երկրում, — և Ռուստամ աղան ձայնը մեղմեց փսփսալու շափ — քեզ կենքորանք ճամփով կանցկացնեն Պարսկաստան:

— Ի՞նչ անեմ Պարսկաստան, երբ կինս հետս չի:

— Գնա, տես մեր երեւելիներին, մտիր նրանց շարքերը, գո՛րծ արա... Ժամանակները կփոխվեն, էսպես չեն մնա: Հետո արի, ինչ օւզում ես արա: Գնա՛, գնա՛, մի վախտ կորիք էս տեղերից:

Ու ձեռքը դրեց Ասաղի ուսին.

— Տես ի՞նչ օրումն ենք: Դու անկնիկ, նամուսդ ոտի տակ, ես՝ քանդված, թալանված: Ո՛չ հավատ են թողնում, ո՛չ աղաթ, ո՛չ կնիկ, ո՛չ ապրուստ... Ի՞նչ է մեր օրը:

— Դրուստ ես ասում, — սթափվեց Ասաղը, — մեր օրը շահ օր է:

— Շունն ափսոս չի՞, շունը պատիվ ունի, բույն ունի, իր ոսկորն ունի, կարող է հաշել, — մենք ի՞նչ, ձեններս փորներս, քակուտների մեջ, ոտնատակ, անպատիվ... Մուսավաթի օրով էս բաները երազներումս էլ կտեսնեի՞նք... Հա՛յ գիդի Մուսավաթ...

Ու Ռուստամ աղան հառաչելով բաց թողեց Ասաղի ուսը, սկսեց շրջել սենյակում: Հետո ծխախոտը հանեց տվեց Ասաղին:

— Գնա՛, Ասա՛ղ, գնա՛: Գնա Բաքու, էնտեղ մերոնցից կան, տես նրանց, անցիր Պարսկաստան, նրանց էլ տես — վերջը կերևա:

— Է՞դ է ճարը, — ասաց Ասաղը, վեր կենալով, — պիտի կորչեմ էստեղից:

Ռուստամ աղան աշխուժացավ:

— Գնա՛, լա՛վ կրի, ցավդ էլ կմոռանաս: Նոր կնիկ կառնես: Չառնես էլ՝ գործի կմտնես — խալխին օգուտ կտաս:

Վերջին խոսքերն ասաց առանձին ծաղրալի շեշտով ու կամաց: Հետո փսփսոցով հասցե տվեց, խոսեց Բաքվի մասին, ախնարկեց ինչ-որ «գործերի» մասին, որ այնտեղ կատարվում են: Եվ մի դուռ՝ գավաճանության դեպքի համար՝ բաց թողեց.

— Ես ինքս չեմ տեսել, բայց գիտեմ, որ Մուսաֆաթից շատ մարդ է մնացել Բաքու: Եթե ես ջահել լինեի, կմտնեի նրանց շարքերը: Բայց դու գնա՛, տես՝ — դու կարող ես:

Ասաղն ինչ-որ թեթևություն զգաց նոր փորձերի հանդեպ մի փոքր սրտի թրթիռի հետ: Կարծես ելք է բացվում իր համար՝ դուրս գալու միևնույն վանդակի պատերին անդուզ զարկվելու տանջանքից: Դա քայլ էր նոր գործողության — պետք էր անել, զբաղվել, թեկուզ վիշտը մոռանալու համար:

Նրանք երկար խոսեցին: Հետո Ռուստամ աղան Ասաղին դրամ տվեց, բարեկամական նամակ գրեց իր «մարդկանցից» մեկին, հանձնարարելով, որ Ասաղին օգնեն «գործ» գտնելու: Ասաղը տխուր համակերպությամբ առավ նամակը և հրածեշտ տվեց Ռուստամ աղային:

— Նիգյարի կողմից բան-ման կլինի՞՝ գրիր, — ասաց Ասաղը Ռուստամ աղային:

— Հա՛, հա՛, անհող կացու կա՛վ է՝ մոռանայիր: Նա էլ քո խարջը չի:

Ասաղը սեղմեց Ռուստամ աղայի ձեռքը: Սա համբուրեց Ասաղին:

— Ղոջաղ կացու Ամեն բան կփոխվի, էսպես չի մնա,— ասաց նա կամաց ու հուզված:

Նրանք բաժանվեցին սենյակի դռան մոտ: Ասաղը դուրս եկավ բակից: և դուռը հետևից կողպեց Ռուստամ աղայի եղբայրը:

Ասաղը գնաց տուն՝ պատրաստվելու, որ հետևյալ օրը գնա Բաքու: Նա մինչև անգամ չվացնում էր:

Չէ՛, կարծես փրկվում է...

Հետևյալ օրերից մեկում Ասաղը տան բանալին Ֆաթմայի եղբոր հետ միասին ուղարկեց Նիգյարին, պատվիրելով ասել նրան, որ ինքը գնում է Բաքու անորոշ ժամանակով:

Քաղաքից մեկնելիս նա կարոտ էր դգում: Կարծես ընդմիջտ հրաժարվում էր ոչ թե քաղաքից, այլև կյանքից: Տխուր, թախծալի հայացքներով անկյուն առ անկյուն հետ էին հոսում ծանոթ տները, քարերը, ծառերը: Աչքի էին ընկնում ծանոթներ, անծանոթներ, որոնք իրենց կյանքի հոգսով մղված՝ չէին հարցնում թե ինչի՛ է հեռանում Ասաղը: Ո՛չ ոքի պետք չէր ո՛չ նրա վիշտը, ո՛չ նրա կորուստը:

Երևի այդպես էլ մեռնում, գնում են մարդիկ: Ապա Նիգյարը... որ չեկավ, չհարցրեց թե ո՞ւր է հեռանում, ինչո՞ւ: Նա, ամենաթանկ էակն աշխարհում, ամենաէժան կերպով բաց է թողնում նրան, որ գնա կորչի, չբանա՛ իբրև թե չի սիրել նրան, չի համբուրել, չի սպասել, չի կարոտել:

Ասաղը հառաչելով մտավ վազոն և տեղավորվելով պատուհանի մոտ՝ սկսեց ծխել: Մանր թառանչ էր քաշում շոգեմեքենան և դողում:

Գնացքը շարժվեց, կայարանը ետ հոսեց՝ տանելով իր հետ Ասաղի անցյալը: Սկսվեց ապագան, կծիկը բաց արեց Ասաղի համար: Դաշտերն սկսեցին երերալ ու սյուն-սյուն, ծառ-ծառ հաշվել իրար հետևից: Հեռվից քիչ-քիչ երևաց Արաբսի աղոտ շունչը՝ բարակ մշուշը, որ փոխված էր Մասիսների ոտքերի վրա: Իսկ Մասիսների օդապար գազաթները

կարկառվեցին ուղիղ ու հպարտ: Ասաղը պապիրոս պապիրոսի հետևից ծխում էր ու անլսելի հառաչում: Եթե չքաշվեր՝ արտասովելու շափ հուզվել, լցվել էր:

— Հիվա՞նդ ես,— հարցրեց մի նախիջևանցի թյուրք, որ նրա դիմաց նստած կապկպում էր խուրջինը:

— Հա՛,— ասաց Ասաղը ակամա և տխուր, շուգելով ոչինչ ավելացնել:

Այնուհետև ճանապարհն իր մանրիկ, բայց զբաղեցնող հոգսերով Ասաղին մոռացնել տվեց առաջին ժամերի թախծը, և նա սկսեց մեկ-մեկ լսել խոսակիցներին ու խոսել ինքն էլ: Թեև մոռացության թմրեցնող մշուշի մեջ՝ հանկարծ վայրկեանական պարզությամբ նրա աչքերի առջև կանգնում էր Նիգյարի սլացիկ հասակը և Ասաղին քաշում ետ, դեպի Երևան, ծաղկած այգիների երջանիկ արահետները:

Կարոտը իր սուր դանակը խրում էր մինչև նրա հոգու խորքը:

Եվ Ասաղը հուզմունքից խեղդված վեր էր կենում և հենվելով պատուհանին՝ բարձր խոսում Նիգյարի հետ, հանդիմանում, աղաչում նրան, նայում ե՛տ, ե՛տ, դեպի մշուշում սուզվող Մասիսները, կապտած Երևանի հեռասյունները:

— Հա՛յ գիդի վաթան,— հառաչեց Ասաղը նայելով դեպի այն կողմը, և արցունքները պղտորեցին այդ ջինջ հեռուները: Բայց գնացքը անողոք գնում էր, վազում դեպի ապագա:

Այդպես էլ չի՞ գնում Նիգյարը, բոլոր նրանց հետ, որ նույնպես ճամփա ընկած գնում են դեպի ապագա, դեպի նոր կյանք:

— Սոցիալի՞զմ — ի՞նչ բան է դա, որ կանչում է իր Նիգյարին, նրանց քանդել է տալիս տուն, ընտանիք, հավատ, ազաթ, սեր, իրավունք, սովորություն:

Ասաղը լսել է այդ սոսկալի բառը: Բայց Ասաղը հիմի մտածում է դրա մասին: Ի՞նչ է այդ ուժը, որ միացրել է հազար հազարներ, ամեն տեսակ «միլլաթ», խառնել իրար ողջ մարդկությունը և տանում է այս գնացքի պես:

Տեսնես ինչպե՞ս է Բաքվում, թյուրքերի վաթանում: Տեսնես ի՞նչ են անում այնտեղ թյուրքերը: Նրանք է՞լ այդպես

անողոք են դառել, խիստ, քանդարար, ինչպես այս հայերն են: Բա նրանք ի՞նչ են մտածում, ո՞նց են նրանք նայում այսպիսի բաների վրա:

Ասաղը հետաքրքրվում է, ուզում է տեսնել «յուրայիններին» — տեսնել թե ի՞նչ են անում, ի՞նչ են վճռել:

Այսպես՝ հազար ու մի մտքերով, հարցերով լի Ասաղն անցավ Քիֆլիսը. մտավ Գանձակ, թափանցեց Մուղանը, և ահա Կասպիականը նայեց նրան իր կայույտ, օտարասառն ժպիտով: Անջուր մետաղագույն աղուտները, կապտագույն բլուրները, խոշոր հայացքներով իբրև մեռելի աչք պաղել էին շուրջը: Կրկին դաշույնի պես մերկացավ ծովը, լայնածավալ բացվեց, բլուրներ դեմ առան գնացքին, և ահա հեքիաթի քաղաքի պես բացվեց ու շենքերի հպարտ մոնումենտներով կարկառվեց և լայնարձակ ձգվեց Բաքուն:

Բաս ձայներով մոմոում էին հեռավոր փողոցները, զնգում, գղրգում: Էլեկտրիկները սուր նվվոցներով սուրում էին փողոցների երկայնքով: Մայթերից հոսում է անվերջ բազմությունը, որ շտապում, վազում է՝ չես իմանում ուր:

Իսկ հեռուն հորիզոնի շրթունքին շղթաները հպած սաքսընում է պազպաջուն ծովը, որի վրա օրորվում է նավերի շարժական անտառը:

Գնում է Ասաղը փողոցից փողոց, ինչպես երազում: Հարցուփորձով անցավ կենտրոնական մասը և բարձրանալով բլուրը՝ կանգ առավ մի ցածրիկ տան առջև: Հարցրեց մի ինչոր Մուխթարի:

Դնից դուրս եկավ մի մուսլի երիտասարդ և հայտնեց, որ Մուխթարն այստեղ չի:

— Բա որտե՞ղ է:

Երիտասարդը կասկածով և անբացատրելի ատելությամբ հարցրեց.

— Ինչի՞ ես հարցնում:

— Ես Երևանից եմ եկել:

— Կավ, բայց ինչի՞դ է պետք Մուխթարը:

— Նամակ ունեմ Ռուստամ աղայից: Ճանաչո՞ւմ եք:

Երիտասարդը մեղմեց մի փոքր: Հետո ցած ձայնով ասաց.

— Մուխթարը չեկայում է: Անմեղ տեղը բռնել են, բայց շուտ չեն բաց թողնի: Տվե՛ք նամակը:

Ասաղը նայեց երիտասարդին.

— Իու Մուխթարի ի՞նչն ես:

— Եղբայրը:

Ասաղը նամակը սվեց: Երիտասարդը ներս կանչեց Ասաղին և դուռը փակեց:

Կեղտոտ տախտին թափթփված բարձերն ու շորերը՝ զանազան իրերի հետ՝ փոշոտ հատակն ու ցեխոտ դուռ-պատուհանը վկայում էր, որ այս տանը կին չկա:

Երիտասարդը հրավիրեց նստելու:

Ասաղը նստեց և իրերը վար դրեց:

Երիտասարդը բացեց նամակը և կարդաց: Հետո աչքի տակով զգույշ նայեց Ասաղին և լռեց: Ուզում էր մի բան ասել, բայց տատամսում էր: Վերջը զսոռեց և դարձավ Ասաղին.

— Ներս՛ղ կլինես, ես մեր տանը քեզ չեմ կարող տեղ տալ: Մենք, դրուստ է, խաթա բաների մեջ խառը չենք, բայց չեկայի աչքը էս տան վրա է: Քեզ կտեղավորեմ շայխանում: Էդպես լավ է:

— Ոնց որ քեֆդ է,— համակերպվեց Ասաղը,— մի տեղ լինի՛ մեկ է ինձ համար:

— Գործ կգտնենք,— ասաց երիտասարդը խորամանկ կես ժպիտով, որ ամեն բան ասում էր՝ առանց փաստորեն մատնելու: Եվ ավելի անվնաս գործելու համար խոսքը՝ ավելացրեց.

— Մի կերպ ապրուստ կճարես:

Երիտասարդը հարցուփորձ արավ Երևանի մասին — կոպերատիվների, մթերքի, գյուղացիների, ցանքսի, ապրանքի մասին:

— Իզդիրից էլ ապրանք ստացվո՞ւմ է:

— Զգիտեմ, երևի:

Երիտասարդը դիտող աչքերով նայեց Ասաղին ոտից զլուխ և լռեց:

«Անտեղյակ է»,— վճռեց ու որոշեց իր դիրքը նրա հանդեպ:

Երբ մթնեց, դուրս եկան տանից և իջան դեպի կենտրոնը: Ապա նստելով տրամվայ՝ գնացին կայարանի կողմերը և մտան

Մի շայխանա: Այստեղ Ասադն իր իրերը տվեց թելարանատիրոջը, թեյ խմեցին միասին և դուրս եկան քաղաք: Գնացին ծովափ:

Ասադի գլուխը պտտվում էր հոգնածությունից և տպավորություններից:

Երիտասարդը, որի անունը Աբի էր՝ սկսեց լկտի ակնարկներ ձգել բուլվարում զբոսնող գեղեցկուհիների վրա և նրանց հասցեին խոսքեր շարտել:

— Ի՞նչ քեֆ կքաշվեր սրանց հետ:

Եվ աչքերը կրկին ցուլացնելով հառաչեց.

— Սրանք են, որ բաց չեն թողնում մարդու. թե չէ հիմի վաղուց Պարսկաստան էի:

Ասադը ժպտաց ու նկատեց, որ իրոք կանայք շատ էին գրավիչ. հպարտ հասակներով, փարթամ, մեծսրտանի՝ նրանք լողում էին, սահում ասֆալտի վրայով և բուրում շուրջը մեղկությամբ ու քայքայիչ զգայնություններ:

— Սրանք ավելի են ուժեղ, քան կոմունիստները, — նկատեց Աբին:

Ասադը հետաքրքիր նայեց նրան.

— Ո՞նց թե:

— Սրանք խելքից հանում են մերոնց էլ, կոմունիստներին էլ: Խաթան սրանք են: Բայց սրանց միջոցով շատ կոմունիստ է կիսաճամփին շոքել: Բաքուն դարձնողը սրանք են: Ի՞նչ գումարներ են խլում սրանք: Ինչե՞ր չեն անել տալի սրանք:

Ասադն զգաց, որ Աբուն ևս նույն զգայական տազնապն է տիրել, ինչ որ իրեն: Ո՞րտեղից որտեղ — էլի կինը գալիս է կանգնում մարդկանց գործերի մեջ և խելահաս անում:

Նույն նիզյարը չէ՞ր, որ պաշարել էր իր ամբողջ էությունը: Ասադը ճնշվեց այս գեղուհիների հրապույրներից և մտածեց, որ ամենուրեք կինն է տիրում մարդուն, կինն է մղում, թոցընում վեր, նետում անդունդ:

«Սրանք են քաղաքը դարձնողը», — կրկնեց մտքում Աբու խոսքը: «Այնտեղ նիզյարն էր դարձնում ինձ, այստեղ էս կանայք՝ քաղաքը»:

Ուշ երեկոյան վերադարձան թելարան և Աբին հրածեշտ տալով Ասադին՝ անհետացավ:

Ասադը քնեց մեռելի պես և առավոտը վաղ զարթնեց կոտորուքով. որ ամբողջ մարմինը կաշկանդել էր: Մալարիան էր՝ սկսվում էր նոպան:

Վեր կացավ, թեյ խմեց և դուրս եկավ: Ամբողջ ժամեր չէր իմանում թե ուր գնա և ի՞նչ անի:

Հասնելով կենտրոն՝ կանգ առավ մի բարձր շենքի առջև, որի ճարտարապետական խաղերը նրա ուշքը գրավեցին: Պալատ էր կարծում: Եվ այն է՝ ուզում էր հարցնել թե ի՞նչ շենք է՝ կողքից մի ձայն լսեց.

— Բա՛հ, Ասա՞դ էս դո՞ւ ես:

Շուռ եկավ: Մի կոմերիտ. արևառ ու սև դեմքով ժպտաց: Մանթ կերպարանք էր: Ասադը մոտ գնաց:

— Յուսո՞ւֆ, դո՞ւ ես:

— Բա էլ ո՞վ: էս ո՞նց ես ընկել Բաքու, ա՛յ տղա, — հարցրեց Յուսուֆը բռնելով Ասադի ձեռքը և աչքերի մեջ սուր նայելով:

— Երեկ եկա Երևանից: Դու ի՞նչ ես անում էստեղ:

— Ես երկու տարի է Բաքու եմ, սովորում եմ կուսակցական դպրոցում:

— Տե՛ս, տե՛ս, տե՛ս:

— Բա ի՞նչ, Երևանի դպրոցով բա՞ն կդառնա: Դո՞ւ էիր, որ թողիր դպրոցը: Ափսո՞ս:

Հին դասընկերը մտավ Ասադի թևը:

— Գնանք, գնանք, ցույց տամ Բաքուն: Ու մղեց դեպի Ասադին գրավող շենքը:

— Գնանք էստեղ, մարդ պիտի տեսնեմ, հետո ման կգանք: Վա՛յ, մեռած Ասադ, վա՛յ:

— Սա ի՞նչ շենք է:

— Սրան ասում են «Արևելքի մարգարիտ». դա կանանց ակումբն է:

Մտան շենքը: Դա բազմահարկ հսկա փեթակ էր, ուր զընգում էր կյանքը:

Ընդունարանի երկար նստարաններին շարվել էին թրքուհիներ շաղրայավոր և կիսաբաց դեմքերով:

— էստեղ է՞լ շաղրա կա դեռ, — հարցրեց Ասադը մի տեսակ զարմանքով:

— Կա, բայց սրանք հերթի են սպասում,— ասաց Յուսուֆը,— պիտի մտնեն ակումբ: Կսովորեն արհեստ, գրագիտություն և դեն կգցեն: Զնդանից մի դուրս գան՝ մնացածը հեշտ է: Արդեն մե՛րն է:

Անցան վարչության գրասենյակը: Այնտեղ լցվել էին թրքուհիներ՝ կապույտ սպեց հագուստներով, կարմիր գլխանոցներով, ոմանք էլ փուշի թաշկինակները վզին փաթաթած: Նրանց դեմքերը համեստ էին ու վստահ: Կազմվածքի, դեմքի վրա սակայն կար դարավոր ստրկացման հետքը — շարժումներն անվարժ էին, քայլվածքն անհարթ: Իրար հետ խոսում էին խնամիների նման — քաղցր ու երգեցիկ, բարեկամաբար: Կային և լեզվանիներ, նաև ռուսերեն խոսողներ: Ոմանք ռուսների էին նման:

Յուսուֆը վարչուհու հետ խոսեց, ինչ-որ համաձայնություն եկավ և ապա մտնելով Ասադի թևը՝ մոտեցրեց վարիչուն:

— Իմ դասընկերը՝ Ասադ Ֆահրադ-օղլի, Երևանից:— Սանամ խանում, ակումբի վարչուհին:

Սանամ խանումը ժպտով ողողեց Ասադին և լայն ու կլոր դեմքը բռնեց նրա դեմքին՝ այնպես սիրալիկ և ուրախ՝ կարծես Ասադը սպասված և հաճելի հյուրն էր ակումբի:

— Յուսուֆ տվեք հյուրին մեր արհեստանոցները,— ասաց Սանամ խանումը,— թող տեսնի և Երևանում պատմի մեր կանանց:

Ու ծիծաղելով դիմեց մի շարաձճի թյուրք աղջկա, որ մանրիկ սև աչքերը պսպղացնում էր Ասադի վրա.

— Հյուրերին իջեցրու ներքև, ասա թող ցույց տան:

Իջան ներքև, արհեստանոցները: Բազմաթիվ բաժիններում կարի մեքենաների ահագին շարքերի հետև նստած էին թրքուհիները և զորդացնում էին ներքնահարկը իրենց կուլեկտիվ կարով: Կոֆտաներ, ժանյակներ, բլուզներ, ասեղնագործ դարդալաթեր, շապիկներ՝ հասարակ ու շքեղ: Կարուհիները զվարթ ու առողջ տեսքով ծիծաղում էին ու բարձրացնում արհեստանոցների տրամագրությունը:

— Երեկվա չադրայավոր ստրկուհիներն են, հա՛, լա՛վ իմացիք, Ասադ, սրան հորհրդային իշխանություն կասեն:

Սրանք էլ զնդան շեն գնա, մեկ որ ընկել են լույս աշխարհ: Արհեստ, ուսում ունեն, կապրեն, «տիրոջ» պետք չունեն: Հա՛, տեսնո՞ւմ ես...

Ու պինդ սեղմելով Ասադի թևը՝ ցնցեց:

Ասադը շշմել էր ու մի անախորժ բան էր զգում: Ինչ-որ մի սխալանք, մի ուրիշի՞ կողմից, թե ի՞ր — չէր կարող, չէր մտածում որոշել:

Ու մինչ կանգնած դիտում էր՝ նկատեց, որ մի դեմք կապույտ աչքերը ունեթրի եզերքից նրա ուղղությամբ լարած նայում էր մտերիմ ու փաղաքշող մի լույսով:

Քրոջ նման... Ասադը ախորժ անգործություն զգաց այդ հայացքից և մեղմեց՝ իբրև սաստիկ ծարավից հետո զովարար ջրի շոյանքն ընդունող մարդ: Կյանքը մտերմացավ ինչ-որ:

«Այսպես էլ կարելի է, ի՞նչ կա որ...» — մտածեց Ասադը: Եվ կոտրվեց ինչ-որ:

Բարձրացան վերև: Մտան դասարանները, դիտեցին բեմը, սրահը, զինանկյունը, ընթերցարանը: Գեղարվեստի այլ բաժինները ճնշում էին Ասադին իրենց փարթամ ու համարձակ գործերով — գորգեր, թաշկինակներ, աթոռներ, խաղալիքներ:

— Հայաստանումն էլ պիտի սարքենք էսպես բաներ — ասաց Յուսուֆը,— այ, կտեսնես:

Դուրս եկան ակումբից: Վերջին անգամ Ասադը նայեց ընդունարանին, շարված կանանց, որոնցից մի քանիսի գրկում ճշում էին ծծկերները: Սրանց վիճակված էր մանկուց լաց լինել և սնվել հասարակական վայրերի միջանցքներում ու ընդունարաններում:

Դռնից դուրս գալով Ասադը զգաց, որ այդ շենքում կատարված է այնպիսի մի գործ, որի առաջն առնել չի կարող և ոչ մի ուժ:

«Գնում են, բոլորը գնում են, մենք մնում ենք», — դառնորեն խոսեց ինքն իրեն Ասադը և հազիվ լսելի հառաչեց.

Փողոցի անկյունում Յուսուֆը հարցրեց.

— Դու հո դեռ երկա՞ր ես մնում Բաբու:

— Զգիտեմ, գործ եմ փնտրելու:

— Ասել է երկար: Դե, ե՛կ ինձ մոտ, կխոսենք: Հը՞,

կգա՞ս,— ու փորձող աչքերը ժպիտով մեխեց Ասադի աչքերի մեջ:

— Կգամ,— պատասխանեց Ասադը,— հասցեդ ասա:

Յուսուֆն ասաց: Նրանք բաժանվեցին:

Ասադը գնաց ծովափ և այնտեղից էլ տրամվայ նստեց: «Ո՛ւր կտանի, թող տանի»:

Տրամվայը գնաց հոսեց քաղաքի փողոցներով: Ասադը չէր կարողանում կանգ առնել իրար հետևից հպարտացող բարձր շենքերի վրա: Նրանք նոթերը կիտած նայում էին Ասադին և հայացքները նրան խոժոռած՝ ճամփու դնում: Իսկ մարդիկ վազում-վազում — վերջ չկար: Ո՛ւր են գնում, ինչի՞,— ո՞վ իմանա: Լեզգիներ, ռուս բանվորներ, հրեաներ, հայեր, թյուրք երիտասարդներ, աղջիկներ, կարմիրբանակայիներ, խոժոռ ու խոշորերես կիրգիզներ, և ազգերի, ցեղերի բաբելոնյան խառնուրդ: Բոլորը փունջ-փունջ, խումբ խմբի հետևից կծկվում, բացվում, խոսում, ղուվում, դնում են:

Մագազիններ, կինոներ, թատրոններ, «Ազգիզը», արհեստանոցներ, պահեստներ: Ասադը ինքնամոռաց վիճակի մեջ նայում էր այդ ամենին և չէր զգում ոչ անցյալ, ոչ ապագա: Հոգնելով գնաց մի թեյարան մտավ, ուր թրքուհիները թեյ էին մատուցում — հասարակ, պարզ: Թեյ խնդրեց և սկսեց դիտել իր շուրջը:

Հենց նոր էր խմում թեյը, որ դռների մոտ լսվեց.

— Ա՛յ, ո՞ւր է Ասադը, դո՞ւ ինչ ես ասում:

Ու Յուսուֆի հետ ներս շտապեց Ասադի մյուս դասընկերը, մի շեկ, կլորերես երիտասարդ՝ Նաբին, որի հետ շատ մոտ էր եղել Ասադը:

Նրանք համբուրվեցին:

— Այ, գետի՛նը շմտնես դու, էս ի՞նչ լավ արիր, եկար: Գիտե՞ս ինչքան տեղին ու ժամանակին եկար: Քեզ համար գործ ենք ճարել, Ազգիզում: Հենց նոր:

— Ազգիզո՞ւմ:

Բացատրեցին:

Ասադը տատամսեց և սկսեց մտածել:

— Հը՞, դժգոհ ես:

— Չէ՛, ինչո՞ւ,— և սկսեց վերդիր անել:

— Բայց ի՞նչ շուտ գտաք տեղը, կրա՞կ եք,— զարմացավ Ասադը՝ մի փոքր հաշտվելով իր նոր վիճակի հետ:

— Սրան Բաբու կասեն: Եկար թե չէ՝ կբռնեն: Մարդ շատ է պետք: Գիտե՞ս ինչ գործ կա: Շան պես աշխատում ենք — հանգիստ չկա:

— Երեկոյան էլ ձեր Հայաստանի պատգամավորությանը պետք է տեղավորենք: Օ՞Ֆ, էս տոները մեզ կուտեն,— ճմլկոտաց Յուսուֆը:

— Ի՞նչ պատգամավորություն, ի՞նչ տոներ — հարցրեց Ասադը անտեղյակ ու միամիտ:

— Ո՞նց թե ինչ տոներ են,— խեթեց Նաբին,— խորհրդայնացման տասնամյակն ենք տոնում, սարսա՛ղ: Մայիսի մեկն էլ քթերիս տակին: Վառելո՛ւ ենք, վառելո՛ւ, Ասա՛դ:

Ու պինդ զարկեց ափով Ասադի ուսին,— քեզ էլ քարշ կտանք կոմսոմոլիա, վինտերդ շուռումուռ կտանք, կլծենք գործի:

Ասադին անհաճո թվաց այդ գլխիվայր, թավալզոր արագությունը իր վիճակի:

«Սրանք հենց մի գլուխ քարշ են տալիս, չեն հարցնում կամքը», — ասաց մտքում Ասադը: Ու շտապում էր խմել:

— Դե, շուրամի՛շ արա, պրծի, ի՞նչ ես պառավի պես լակում,— սաստեց կատակով Նաբին,— էս Հայաստան չի, արաբեղ թող, մենք մաշինա ենք նստել:

Ասադը վեր կացավ, վճարեց ու դուրս գնաց նրանց հետ:

— Գնում ենք Լենինի տեքստիլը. կգա՞ս:

— Ինչո՞ւ չէ. տեսնեմ ի՞նչ կա:

— Օ՞հ, ի՞նչ կա: Սիրուն բանվորուհիներ կան, որ ուշքդ գնա:

Միծաղեցին ու նստեցին տրամվայ: Ապա էլեկտրական գնացքով ճամփա ընկան, որ շատ էլ հաճելի չէր Ասադի համար իր մրոտ ու մազութոտ տներով ու գործարաններով: Բայց նրան ճնշում, զարմացում էր հսկայական, անվերջ, իրար հետ շղթայված մեծ գործը, որ կոչվում էր արդյունաբերական քաղաք:

Հասան տեքստիլը: Դա մի հսկայական մեջեմեջ շենք էր: Նաբին ու Յուսուֆը մտան գրասենյակ, և շուտով դուրս եկան

մի հասակավոր շեկ տղամարդու հետ, որ ուսերեն կատակելով նրանց հետ՝ կանգ առավ միջանցքում:

— Սա էլ մեր նորեկ ընկերն է,— ասաց Յուսուֆը՝ ցույց տալով Ասադին:

Նրանք ծանոթացան:

— Լավ, վնաս չունի, ինձ հետ կարելի է, գնանք,— ասաց շեկը, որ ուս էր, և Ասադի աչքերի մեջ թափանցիկ նայելով՝ հրավիրեց նրան ներս:

Գնացին գործարան:

Տոթ էր բավական: Ընդարձակ, լուսավոր սրահում հարյուրավոր իլիկներ ու փոկեր, անիվներ ու այլ լծակների հետ վիզվիտում, հոռում, գղրղում էին: Բանվորուհիները կակաչների պես լցվել էին սրահը՝ ինչպես դաշտի մեջ և խայտաբղետ խաղ էին սկսել իլիկների, կծիկների ու անիվ-փոկերի ետքի հետ: Սակայն նրանք լուրջ էին, ուշադիր, կարմրած:

Աշխատանքը հեռում էր, մոմոռում:

Անցան շարքերի միջով: Տղա, աղջիկ, հայ, ռուս, թյուրք, միասին մի գործի մեջ իրար հետ ջանում, մանում էին աշխատավորի հագուստը: Այստեղ էլ Ասադն զգում էր այն կախարդական ձեռքը, որ խմբել, իրար էր բերել հազար հազարավորներին ու տանում էր «այնտեղ» — ո՛ւր, Ասադը զարմանում էր «այնտեղի» ուժի վրա, որ քաշում է սրանց ևս:

Մի ռուս բանվորուհի աչքով արեց Ասադին, երբ սա մատը մոտեցնում էր իլիկին՝

— Չկծի, զգո՛ւյշ,— նետեց կապտաշյան Ասադին:

Սա քաշվեց և գնաց ժպտալով: Դուր եկավ կատակը:

Դուրս եկան գրասենյակը: Նաբին ու Յուսուֆը խոսքի բռնվեցին տեղկոմի հետ՝ այն մասին, թե ի՛նչ կարգ է մշակված Ադրբեջանի տասնամյա տոնակատարմանը եկող պատգամավորություններին երկաթուղու կայարանում հանդիսավոր ընդունելության համար: Ասադին զարմացնում էր մի բան:

«Ուրեմն սրանք լուրջ գործի՞ են անցել: Ադրբեջանը հասա՞տ խորհրդայնացած է»:

Այո, Յուսուֆն ու Նաբին միայն դրա մասին էին հոգում: Եվ էլ ուրիշ հոգ չունեին, ինչպես այն Երևանի Սեյիդը, ինչ-

պես Բաքվում՝ Աբին և ուրիշ շատ-շատերը, որ սպասում են բուլճարիկների գնալուն:

Դադարի շշկը տվին, և ըոպե շանցավ — դուրս, բակը թափվեցին քրտնամած բանվորներն ու բանվորուհիները: Նրանց լուրջ ու մտահոգ դեմքերը հիմի պայծառացան և հոգնած ժպիտներով փայլեցին: Նրանք թափ տալով իրենց շորերը, քրտինքը սրբելով վազեցին այս ու այն կողմ, շարվեցին նստարանների վրա, խմբվեցին ջրի տակառի շուրջը, հանեցին որտեղից որ է՝ իրենց պաշարները և սկսեցին ազահորեն ուտել:

— Մի՛շա, ա՛յ Միշա,— կաթի բաժակը մրոտ ձեռին՝ վազելով դեպի մի ռուս բանվոր՝ գոռում էր հաստաշուրթ մի երիտասարդ թյուրք բանվոր:

— Что ты орешь, чорт! — գոռաց ավելի բարձր ռուս բանվորը, որը կանգնած էր ջրի հերթի:

— Իսբաժի մայեսթրո, լի՞ն զաֆթրա իթյոմ վստրեչադ արմիան,— ասաց թյուրք բանվորը:

— Բա՛ռինի եղու՞թ՝ շոո՞ լի,— կատակեց լրջո՞ւմ բանվորը:

— Արմենսկի մաթուշկի, տեղեզացիա: Թուշ փութիմ իգրաթ,— ծիծաղեց թյուրք բանվորը ձեղքելով հաստ շուրթերը և ցցելով սպիտակ ատամնաշարը:

— Ա ոտ ի շոոտ, ստախտ տամ,— ասաց ռուս բանվորը և ջուրը խմելով թյուրք բանվորի հետ գնացին դեպի հրեա՝ սաստիկ լրջո՞ւմ «մայեստրոն», որ գործարանի բանվորական օրկեստրն էր ղեկավարում: Նա պեղանտ խստությամբ պատվիրում էր երաժշտախմբին լավ պատրաստել վերջին մարշը, որ տոների համար սովորեցնում էր: Եվ արդեն հիմիկվանից նախատում էր երաժշտախմբին:

— Գիտե՞մ թե ոնց եք լախանկանների պես նվազելու:

— Ախր մայե՛ստրո, մի սպասի, նվազենք հետո ասա,— ասաց մի հայ բանվոր երիտասարդ՝ ծիծաղելով:

— Մալլի՛, տմբլալի՛,— սաստեց նրան մայեստրոն,— նո՛ւ, նո՛ւ, սկազանո, սղելանո, պո՛նյալի, տեպեր ուբիրա՛յտես:

Նաբին ու Յուսուֆը տեղկոմի հետ պայմանավորվեցին պատգամավորներին ընդառաջ գնալու կարգի մասին և Ասադին կանչելով՝ դուրս եկան գործարանից:

— Էսօր մեզ հետ շատ տեղեր պիտի լինես, Ասադ,— ասաց Յուսուֆը,— տես, չհոգնես:

— Ոչի՛նչ, ուզում եմ տեսնել Բաքուն:

Ճամփա ընկան դեպի «Իլլիչի բուխար»:

Հասնելով տեղ՝ մտան բուրգերի անտառը: Գրասենյակը, ուր պետք է անցնեին նաբին ու Յուսուֆը, լցված էր ինչ-որ հյուրերով, որոնց հետ սիրալիք խոսում էր մի ակնոցավոր թյուրք ինժեներ:

Հյուրերը Ուրալի և Գրոզնու հանքագործների պատվիրակության անդամներ էին: Եկել էին ծանոթանալու Ազնեֆթի նավթահանքերի հետ — նավթ ստանալու և մշակելու գործի, որ նոր բան էր Ուրալի համար:

Ինժեները, մի կոպտադեմ հասակավոր մարդ, որի այտը ջարդված էր — հանքը փորելիս քար էր դիպել և նրա ժպիտը դարձնում էր խիստ ու անախորժ — մտերմաբար կատակում էր պատվիրակության հետ.

— Այ, եթե Ուրալի նավթն էլ գա ու մերի հետ լցնենք նավերը՝ մենք իմպերիալիստներին կշոքացնենք:

— Բա ի՛նչ,— վրա բերեց Ուրալի պատգամավորներից մեկը՝ պսպղուն աչքերը կկոցելով,— խորհրդային նավթը ամենալավ թնդանոթն է:

Ինժեները, որ նախկին բուրային բանվոր էր և խորհրդային ինժեներ՝ թեևանցուկ անելով նրան՝ քաշեց դեպի հանքերը:

— Եկե՛ք ձեզ ցույց տանք, թե ո՛նց ենք ծովի ջուրը նավթ շինում:

— Ո՞նց թե,— զարմացավ պատգամավորներից մեկը:

— Ծովի հատակից նավթ ենք հանում,— բացատրեց մի կարճահասակ ծուռվիզ տեխնիկ, ժպտալով նրա զլխի շքնկներու վրա:

Նաբին ինժեների և վարիչի թույլտվությունը խնդրեց, որ Ասադը պատգամավորության հետ գնա ծովափ նոր փորվող հանքը տեսնելու: Պայմանավորվեցին հանդիպել իրար գրասենյակում, նաբին ու Յուսուֆը գնացին տեղիումի հետ տեսնելու:

Ասադը պատգամավորների հետ գնաց ծովափ: Հասնելով

տեղ՝ նա հետաքրքիր աչքերը լայն բաց արեց ծովի մեջ փորվող հանքահորի բուրգի վրա:

Այնտեղից դրդոց էր լսվում: Դա հսկայական քլունզն էր, որ հարվածում էր երկրի կրծքի մեջ ու ծովում: Այնտեղից լսվում էին կշրտոցներ ու ջարդվող ժայռի ղումոցը:

Գետինը բողբոջում էր գազանի պես ղնճրտում: Հետո խորդյունը կտրում էր մի պահ և փոկերը սահելով վեր ու վար՝ դուրս էին քաշում քլունզը, որ խողովակների միջից ժայթքեցնում էր սև ցեխ ու ջարդված քար:

Բանվորները լարված ու խիստ հետևում էին գործին: Ասադը նայում էր: — Եվ ոչ մի ուրիշ բան չէր դբաղեցնում այդ բազմալեզու աշխատավորներին՝ բացի մի նպատակից — հանքը, փորելը, նավթը: Նրանք տաքացած էին, ուստի և չէին նկատում այցելուներին, այլ մոռյլ ու մտահոգ հետևում էին փորման գործողություններին: Կարծես նրանք սովորական մարդիկ չէին, այլ հատուկ նպատակի մարդիկ, հատուկ մեկաններով, հատուկ մարմնով ու հոգով: Նրանք մեծ գործի վրա էին: Նրանք հարձակվել էին երկրի վրա խորդացնելու և նավթը քաշելու ահագին խորությունից: Նրանք ճարտար ու մեծ մասշտաբի մարդիկ են: Իրենց գործի հերոսները, որոնց չի վախեցնում հորի խորությունը, ծովի ջուրը, մեքենաների ահագին մուրճերն ու բարդ կառուցվածքը: Նրանք անվեհեր մարտիկներ են ֆրոնտի կրակի գծում և գիտեն իրենց արհեստը — կոխվ բնության դեմ:

«Այ՛շի, ո՞վ է էստեղ հարցնում միլլաթ, դին, ադաթ,— մտածում էր Ասադը,— սրանցից ո՞վ է ինձ պես դարդ անում մի կնկա սիրով»:

Ասադը երազի պես հիշեց Նիգյարին, իր վշտերը Երևանի լուռ ու քնկոտ այգիների մեջ ու դառը ժպտաց.

«Ինչի՞ եմ եկել, ի՞նչ եմ տեսնում»: Ասադը մտաբերեց, որ եկել էր Բաքու տեսնվելու Ռուստամ աղայի «մարդկանց» հետ, կապվելու այն գաղտնի գործին, որի հայրերը երկրից դուրս են: Մի գործ, որ պիտի կատարվի երկրի «ազատության» համար: Ազատ՝ սեփականություն ունենալու, հարստանալու, տեր լինելու իր գույքին, կնոջը, ապրելու աղաթներով:

Բայց ի՛նչ է դուրս գալիս: Ասադը չի գբաղվում ~~խաղաղ~~

գործով և շարունակ ման է գալիս քաղաքում՝ մղված նրա այլազան, հետաքրքիր կողմերով: Քաղաքը խփում է հսկայական աղբյուրի պես, եռում, հյուսվում, ստեղծում: Առավոտից առավոտ, գիշերից գիշեր նա մշտարթուն կոփում է, ապրում: Հարյուր հազարավոր ջլապինդ բազուկներ ուռչում, լարվում, քաշում, մղում, քանդում, զարկում են: Եվ ոչ ոք չի նայում Ասադի կողմը, չի նկատում նրա հոգին, նրա մտադրությունը, նրա «նոր գործը»:

Այդ գործը չկա էլ, նա ծուխ է, որ ցնդում է այս քաղաքի հարյուր հազարավորների աշխատանքի աղմուկից:

Ասադը չէր մղվում Արու կողմը գնալու: Խղճի խայթ էլ չէր զգում: Նայելով այս քաղաքի կյանքից «այն կողմը»՝ նա զգում էր, որ «այս կողմում» շատ բան է կանգնած: Մասսաները, իր ընկերները, Նիգյարը, — ամբողջ կյանքը:

Եվ իր վիշտը մի տեսակ հանդարտվում, փառակալում էր անբոց կրակի պես: Նրան տիրել էր մի կազդուրիչ հոգնություն և տարօրինակ անտարբերություն դեպի Նիգյարը: Նաև դեպի ինքը: Հոսանքը, որի մեջ ընկել էր՝ տանում էր նրան, զբաղեցնում, մոռացնում էսը, այդ տանջող, համառ, մշտարթուն եսը:

Հանքերի գիտումը երկար տևեց, Ասադը չսպասեց վերջանալուն, վերադարձավ գրասենյակի կողմը: Եվ որովհետև նաբին ու Յուսուֆը դեռ չէին եկել՝ նստեց դռան աստիճանների կողքին՝ սպասելու նրանց:

Նրանք շատ ուշացան, Ասադն սկսեց սրտնեղել. «Ի՞նչ երկար են զբաղվում»: Ուզում էր վեր կենալ նրանց որոնելու: Բայց ահա ծիծաղելով, քրտնամխած վազելով գալիս էին նրանք մի խումբ կոմերիտ բանվորների հետ, որ նրանց ճամփու գնելով՝ ընկերակցել էին մինչև գրասենյակ: Կոմերիտները գոռոռալով, իրար բռնելով մտան գրասենյակ:

— Սա ո՞վ է, — նստեց մի թյուրք երիտասարդ բանվոր՝ Ասադի հասցեին:

— Էլը կորցրել, ման է գալիս, — ծիծաղեց մյուսը:

Նրանք անցան: Նաբին ու Յուսուֆը մոտեցան Ասադին:

— Դե, ե՛լ գնանք: Վերջացրինք:

— Օ՞ֆ, տոն շեզավ, խաթա եզավ, — ձգվեց Նաբին ու հորանջեց:

Ասադը ժպտաց:

— Խաթա որ է՝ էլ ո՞ւր ես մտել մեջը:

— Տո՛, ինձ հարցնող կա՞: Քշում են: Գործ է, պիտի արվի: Էլ օղլի է, է՛, հոգնել չի հարցնում, — ասաց Նաբին ու առաջ ընկավ:

Նրանք ճամփա ընկան դեպի քաղաք:

— Ե՛կ ինձ մոտ գիշերի, Ասա՛դ, — ասաց Նաբին, — հյուրանոցը քեզ կուտի:

Ասադը սիրով ընդունեց:

Հասան տոնակատարման օրերը: Բաբուն լարվում էր: Ամբողջ Անդրկովկասը կրակե թելերը գցում էր դեպի Բաբու և կապվում նրա կրակների հետ: Աղբբեջանը տոնելու էր իր խորհրդայնացման տասնամյակը, որին միանում էր մայիսմեկյան տոնը:

Շենքերի հպարտ կորպուսները գեղազարդվում էին կրակե գծերով ու դրոշակների բոցերով: Հեղափոխության նախատոնական երեկոները հրահրում էին քաղաքը: Բնակչությունն շտապում էր սպառել խանութների պաշարը, հիմնարկները պատրաստվում էին ելույթելու, լրագրերը բաց էին թողնում բոցավառ կոշիռ և հեռագրեր: Երկաթուղու կայարանում թընդում էին բանվորական հյուրընկալ կոլեկտիվների օրկեստրները՝ Անդրկովկասի լեռներից, քաղաքներից ու գյուղերից եկող պատգամավորների համար:

Քաղաքը ցնցվում էր ու բաս ձայնով մոլտում անվերջ: Բաբուն ուռչում էր, լցվում, ալեկոծվում:

Խորհրդայնացման տասնամյակը միացվեց մայիսմեկյան տոնին: Եվ իբրև երկու կրակե գետեր՝ այդ երկու տոները միախառնված՝ մայիսմեկի առավոտյան դուրս եկան ավերից՝ մեծ քաղաքի հեռավոր ծայրերից ու մտան քաղաքի զխավոր փողոցները:

Նաբին ու Յուսուֆը շտապեցին իրենց կոլեկտիվը, խորհուրդ տալով Ասադին գնալ տեղ բռնել Կոմունարների այլու մաս: Տվին մուտքի տոմս և իրենք վազեցին:

Ասաղը գնաց փողոցներով և հասնելով տեղ՝ Կոմունարների այգու մոտ, կանգնեց:

Հեռվից մոտեցող մասսաների շունչն զգացվում էր: Միլիցիոներները շղթա կապած արգելում էին բնակչությանը անկարգ լցվելու գլխավոր հունի մեջ, որով պիտի անցկենար հարյուր հիսուն հազար բանվորություն, ծառայակազմ, հիմնարկների ներկայացուցիչներ, բացի զորքը:

Մայթերը լցվեցին: Տների պատուհաններն ու պատշգամբները փեթակների պես ծեփվեցին դիտող բնակչությանը: Երթն սկսվեց:

Հեռավոր շեփորները, թմբուկները, օրկեստրների թնդյունները մոտեցան:

Ահա օրկեստրի մարշի հետ համաշափ օրորվելով եկան անցնելու նավաստիները՝ քամահար պղնձադեմ երիտասարդներ՝ վճռական հայացքներով:

Այնուհետև իրար հետևից ձգվեցին հետևակների գնդերը, որ գալով աճեցին ու համրատատան անցկացան:

Տրիբուններից սկսեցին զորքի մեջ նետել կրակն լողուններ, և գնդերը թնդացրին Բաքվի մոնումենտալ շենքերը խրոխտ ուռաներով:

Ահա և հեծելազորը: Առջևից սանձակոծ շուրթերը կրծոտելով՝ սիգապանձ պարով ոստոստում, գալիս էին հրամկազմի արաբական երիվարները: Նբանք քամու պես կթռչեին՝ եթե նրանց սանձը բաց թողնվեր: Բայց հեծյալները քաշում էին սանձը և նրանք ծառանում էին կատաղի, հրացայտ աչքերը ցուլացնելով, և քամին փոփոացնում էր նրանց բաշը:

Հեծյալներին հետևեց հրետանին: Ծանրամարմին ձիերը՝ բաշերն ու սմբակափնջերը քամուն՝ թնդացրին սալահատակը լեռնային, դաշտային հանոթների անխվներով: Մահվան ֆաբրիկաները իրենց պողպատի մոմոոցը տարածում էին հեռավոր փողոցները: Օղբ լցվեց զենքերի, սմբակների, ոտքերի, օրկեստրների, լողունգ նետողների ու բարձրախոսների անդուլ ժխորով, որոնց մեջ ծփում էին հեռավոր զուռնաները, շվինները, դոփում դափերն ու թմբուկները:

Նայում էր Ասաղը և աչքերը շաղվում: Ահա գալիս են թյուրքեր, հայեր, ռուսներ, լեզգիներ, գերմանացիներ, կիրգիզներ,

պարսիկներ, լեռնային այլազան ցեղեր — բանվորներ, ծառայողներ: Գալիս էին գյուղացիներ՝ կոլտնտվորները, նոր հողից պոկված, իրենց ձիերի, սայլերի վրա:

Անցնելու եկան ազատագրված թրքուհիները խայտաբղետ փնջերով: Բանվորուհիներ՝ կրակն զլխանցնելով, ծաղիկների դաշտի պես, որ վեր կացած հոսում է:

Բալախանի, Սուրախանի, Բայիլով, Սև ու Սպիտակ քաղաքներ, բազմաթիվ գործարաններ, նավամատուցքը, պրոֆմիությունների գծով եկել են երթը լցնելու կարծրամարմին, պողպատ բանվորներով:

Երթը տաքացավ: Մասսաները՝ ինչպես հակառակ հոսանքներով իրար մեջ անցնող ջրեր՝ սկսեցին իրար կողքի ընթանալ մեկը հետ, մյուսը առաջ:

Մի կողմից հոսում էր բանվորությունը, մյուս կողմից կողքով անցնում էր գյուղացիությունը: Վերջինները ձիավորված էին: Երեք-երեք անցնում էին շարքի մեջ: «Սուրուն, սուրուն» զոռում էին նրանք ու քշում ձիերը, սայլերը դոփելով ու ջարդելով:

Հոսանքներն սկսեցին լողունգներ նետել իրար, որից դիմացի հոսանքն այնպես էր պայթում, ինչպես բոմբ զցվեր նրանց մեջ:

Ասաղը զարմացել էր: Մի՞թե վերջ չունի այս մարդկային անտառը, որ տեղահանվել գնում է իր առջևով: Որտեղի՞ց աճեցին սրանք:

Նայեց: Ահա եկան անցնելու կանանց բազմություններ սպիտակազգեստ, ձյունե թաշկինակները զլխներին, վրան կիսալուսինը — կարմիր մահիկը: Դրանց մեջ կան թրքուհիներ, ռուսուհիներ, հայուհիներ...

Մի՞շտ միասին, միշտ ազատ, միշտ գնում են... Նիգյարն էլ նրանց հետ...

Բազմությունն անցնում էր քրքշալով, երգելով: Առջևից զուռնա-դհուլ՝ իրենք հետևից պարելով գնում էին արևառ թյուրք գյուղացիներ, բանվորներ: Խմբերը հետևից ծափերով շափ էին տալիս ու քաշալերում:

Ձուռնին հետևում էր կլառնետը, կլառնետին՝ գարմոշկան, գարմոշկային՝ պարկապուկը:

Ասադի աչքերը շաղվեցին ամբողջ երկու ժամ դիտելուց. նրա գլուխը պտույտ էր գալիս՝ ինչպես գետի հոսանքին նայելուց:

Կամաց-կամաց նրան երազ էր թվում այս բոլորը — մի աշխույժ, տարօրինակ և աղմկալի ցնորական պատկեր:

Ո՛ւր են գնում այդ բարձր, նախշած անիվները, գյուղատնտեսական գործիքներ բարձած սայլերը, ձիերի բաշերը կարմիր շթերի հետ ոլորած, թամբի տեղ գույնզգույն մինդարներ դրած ձիավորները:

Մի պատկեր ցնցեց Ասադին:

Հոսեց ներս մի ուրիշ ալիք — թրքուհիների մի բազմութուն, որոնց առջևից հպարտ գնում էր մի կրակոտ թրքուհի՝ դրոշակը ձեռքին: Կարծես բոցավառ ջահ էր բռնել, որ քամուց հրահրվում է ու օդը լիզում, նրա հետևից տարբեր ազգերի կանայք՝ կարմիր պուտ-պուտ թաշկինակները գլխներին, կարծես քամահար տափաստանը խռնվելով, խայտալով ալեկոծվեց ու դուրս եկավ ասիերից:

Դրոշի վրա փոփոում էր պատկերը մեծ կենինի — նրա, ով իր կենդանի ժամանակ դրոշակակիրն էր հենց այս թրքուհու ազատության:

Այնուհետև եկան, անցան հեծանվորդներ, ռազմադիմակ կրող բանվորներ, ձեռքերին մուրճ ու քլունգ, սրանց հետևեցին Ֆիզկուլտուրնիկները իրենց վագրենիներով՝ առողջ, սիգապանծ, մի հեղեղ գեղեցիկ երիտասարդ սերնդի — ռուս բանվորուհիներ, խառն դարձյալ թրքուհիներով, հայուհիներով, լիզողուհիներով:

Անցան կոմերիտներ, զինված կոմերտուհիներ, պիոներներ՝ խմբական դեկլամացիայով:

Թմբուկների, լուղունգների, շեփորների և ուռաների անլուրի սիմֆոնիան քանի գնաց հրահրվեց ու մոլեզնեց, կրակեց մասսաներին, որ իրար դեմ գալով և եզերելով զորատես էին անում իրար, զգում իրենց ուժը:

Մասսաների հարբումն մասսաների տեսքով, գոշերով և տուռներով:

Ասադը հարբեց, մոլեզնեց ինքը ևս և զգաց, որ մի ուժ,

երկաթե ջեռ բազուկ երկարեց դեպի ինքը և սկսեց քաշել-տանել իրեն:

«Այ թե ի՞նչն է քաշում-տանում Նիգյարին»:

Եվ Ասադը նախանձ ու խանդ զգաց դեպի այդ մասսան, որ խլել-տանում էր իր երջանկության առարկային:

Ու Նիգյարը գնում է՝ ուրախ գոչերի, երգերի ու պայքարի աղաղակների մեջ՝ գնում է դեպի սոցիալիզմ:

Իսկ ի՞նքը, Ասադը... Օ՛, Ասադը մնացել է ճամփին, նա ընկել է ոտքերի արանքը և իր վշտի հառաչանքներն է հաշվում, մենա՛կ, անընկե՛ր, լքված, անուրախ...

Ո՛ւր է ուզում գնալ, ի՞նչ է ձեռնարկելու, որ այս երթը չլինի, որ կանգնեն այս մասսաները, շտանեն այն էակին, որը նրան զգացնում է կյանքի իմաստը, ջերմացնում նրա մենավոր կյանքը:

Ու մինչ նա հուզումնալի մտքերով պաշարված, աչքերը պղտոր նայում էր այս մարդկային հեղեղմանը, կանանց բազմության մեջ մի դեմք շողաց: Ի՞նչ, Նիգյար՛ը, մի՞թե նա... Ասադը ճեղքելով տիրող բազմությունը՝ առաջ գնաց: Կանանց փնջերը հոսեցին, եկան և երբ մոտեցան՝ Ասադը հուզմունքից խեղդվեց, և աչքերը մթնեցին: Այո, Նիգյարն է... Նա է, եկել է անշուշտ պատգամավորների հետ: Նիգյարը պատգամավորուհի է...

Նրա դեմքը արևառ էր, մի փոքր վայրի էր թվում Բաքվի կանանց մեջ:

Նիգյարը խանդավառ նայում էր դեպի առաջ, ինչ-որ մի կետի, կարծես մի անտեսանելի լույսի և հափշտակված, էքստազի մեջ գնում էր նրան հասնելու: Նա ոչինչ չէր տեսնում:

Ասադը ուզեց նրան կանչել, բայց ձայնը խեղդվեց շորացած կոկորդոմ: Նա սկսեց հետևել մայթից: Դա շատ դժվար էր: Սկսեց ճեղքել բազմությունը, հրել դեսուդեն:

— Ի՞նչ եք բոթում, — նեղսրտեց մի քաղաքացի մրոտ դեմքով և նյարդային շուրթերով:

Ասադը շնայեց նրան և հուսահատ սկսեց մարդկային ալիքները ճեղքել, որ կարողանա հասնել Նիգյարին, բայց սա հեռացել էր: Ու մինչ Ասադը փողոցի ծայրին վիճում էր իրեն

կանգնեցնող միլիցիոներների հետ անցնելու համար՝ նիզյարը կորավ...

Ասաղը քիչ էր մնում գոռա ցավից: Նա կատաղում էր, ուզում էր հարվածել իրեն պահող միլիցիոներին:

Նրան վերջապես արգելեցին անցնել փողոցը՝ շնայած նրա ցույց տված անձնաթերթին: Վերջապես եկավ ավագ միլիցիոները և թույլ տվեց: Ասաղը վազեց: Բայց որքան նա վազում էր, աչքերով որսում նիզյարի դեղնավուն թաշկինակը՝ ոչինչ չէր երևում: Նիզյարը երազի պես երևաց ու անհետացավ: Հանգավ իբրև մտապատկեր, շող՝ անհուն խավարի մեջ թողնելով Ասաղին:

Ասաղը կսկծից հայհոյում, անարգում, լաց էր լինում: Նա ընկավ ուրիշ փողոցներ, հարցրեց թե ո՞րտեղ կարող էին կանգ առնել պատգամավորուհիները, բայց ոչ ոք պատասխան չտվեց:

Ամբողջ օրը ման եկավ իրարանցման մեջ, բայց որովհետև խելացի կերպով չէր որոնում՝ ոչ մի մի հետք չգտավ:

Շատ ուշ երեկոյան՝ երբ գնաց Նաբու սենյակը՝ նրան գտավ կեղտոտ մահճակալին մեկնված և ոտքերը չոած: Նաբին հոգնել-քնել էր: Չուզեց արթնացնել: Պառկեց քնելու՝ շարդված, հոգնած:

Առավոտյան ուշ Նաբին արթնացավ և ճլմկոտելով նստեց անկողնու վրա.

— Վա՛հ, չեմ է՛լ հանվել: Ամմա հոգնած էինք: Հը՛, թըթ-ված ես, — դիմեց Ասաղին:

Ասաղն անցավ գործի.

— Գիտե՞ս ով է եկել Բաբու:

— Ո՞վ:

— Կինս, նիզյա՛րը:

— Ո՞ւմ հետ:

— Չգիտեմ:

Նաբին մտածեց.

— Ադա՛, չլինի՞ թե պատգամավորուհի է: Երեկ տեսա, երևանցիների մեջ, մի սիրուն, ջահել կնիկ է: Նա՞ է գուցե:

— Որտե՞ղ տեսար, — և Ասաղը վեր թռավ, մոտեցավ Նաբուն

— Ահսպեսում:

— Ասել է՛ կարող ենք գտնե՛լ նրան:

— Ձեռա՛ց:

Երբ գուրս եկան տնից՝ Ասաղին թվում էր թե պնում է կյանքի համար մի մեծ վճիռ տալու: Զգաց մի բան, որ նման է մեծ ծովին մոտեցողի տպավորությանը — տարերքի՞ ուժը, նրա սարսափը, հետաքրքրությունը, թե կախարդիչ գեղեցկությունը:

Նա մի բան էր վճռել. ի՞նչ — լավ չգիտեր և շտապում էր տեղ հասնելու և կատարելու: Նա այնպես էր գնում, ինչպես սիրահարը առաջին խոստովանքն անելու որոշումով:

Նա զգաց մի քաղցր սարսուռ, և սիրտը հաճելի նվաղեց:

Ի՞նչ կասի նիզյարը... Ի՞նչ կանի ի՞նքը... իրե՞նն է դեռ նիզյարը... Ինչպե՞ս պիտի դիմանալ՝ եթե նիզյարը մերժի իրեն...

Գնաց Ահսպես:

Այնտեղ Նաբին իմացավ, որ նիզյարը եկել է Հայաստանի պատգամավորության հետ և իջել է հյուրանոցում:

Գուրս եկան շենքից: Նստելով տրամվայ՝ անցան մի շարք փողոցներ, որ հավիտենության չափ երկար թվացին Ասաղին:

Իջնելով տրամվայից՝ Ասաղն ասաց Նաբուն.

— Նաբի՛, մի բան պիտի խնդրեմ: Որ հասնենք, գտնենք, դու ինձ մենակ թող կնոջս հետ, նրա հետ բան ունեմ խոսելիք:

— Կոված հո չե՞ք, — հարցրեց Նաբին՝ շեշտ նայելով Ասաղին:

— Դանակ հո չունե՞ս հետդ — կատակեց Նաբին:

— Սարսաղ հո չես:

— Դե, լավ. գնա՛, այ դիմացի հյուրանոցն է: Ես ետ եմ դառնում:

Ու հեռացավ ժպտալով Ասաղի վրա:

Ասաղը մենակ զգալով իրեն՝ կորցրեց վստահությունը, կարկամեց: Ուզում էր ետ դառնալ: Կանգնեց մի պահ:

«Ինչ ուժ է դառել նիզյարը... վախեցնում է ինձ», մտածեց նա ու դառնորեն գլուխը թափ տալով՝ գնաց մտավ հյուրանոցի գրասենյակը:

— Ձեր ինչի՞ն է պետք այդ կինը:

— Նա իմ կինն է:

Հարցնողը շեշտ նայեց Ասադի հուզված դեմքին, տատամսեց և ապա վճռեց.

— Լսի՛ր,— դիմեց աշխատակցին,— ընկերը տասներկու համարումն է, կանչիր այստեղ:

Աշխատակիցը գնաց:

Որքա՛ն հուզումնալից և քաղցր էր սպասումը:

Ասադը զգաց, որ սիրտը թռչում է իր բնից: Ու մինչ հյուրանոցի կառավարիչը՝ նույնպես սպասելով Նիգյարին, աչքի տակով դիտում էր Ասադի հուզմունքը՝ սանդուղքներից մի խըշշոց լսվեց: Դա Նիգյարի զգեստի ձայնն էր: Մի ուրորուն ևս, և ահա աչքերը կկոցելով և տիրական ու կարկառուն հասակով սկսեց իջնել դեպի Ասադը: Մեղմ ժպտաց ու շնչաց.

— Ասա՞դ...

— Ես եմ, Նիգյա՛ր...

Բարևեց, բռնեց Ասադի ձեռքը և վեր քաշեց.

— Գնանք ներս, Ասա՛դ:

Ու այս այնպիսի գուրգուրոտ, երգեցիկ ձայնով, որ Ասադին թվաց, թե ամբողջ իրենց անցուդարձը, կռիվը, միայն ծանր երազումն էր և ահա արթնացավ, որ այդ ամենը շքացել է գիշերային խավարի հետ:

Ասադը սպասեց, որ հասնեն համարը և Նիգյարը դուռը փակի: Նա ընկավ Նիգյարի գիրկը.

— Նիգյա՛ր, ներիր արածներս, ես հիմի քեզ հետ եմ...

Նիգյարը գրկեց նրա այրվող գլուխը և մեղմ համբուրելով բաց թողեց և դնաց նստեց անկողնու վրա:

Նրանք իրար նայեցին մի քիչ խորթացած հայացքներով: Որքա՛ն փոխվել էր Նիգյարը. նա լցվել էր լրջությամբ ու օտարացել: Նա ինչ-որ մտքեր ուներ, ինչ-որ նոր հուզումներ, որ նրա դեմքին դրոշմում էին իրենց կնիքը: Միայն աչքերի խորքում, շատ աղոտ կիսամթան մեջ, նկատելի էր մի մտերիմ շող, որ թափանցում էր Ասադի հոգին: Այդ շողը նրա համար էր ջերմանում. դա արդեն նրանն էր: Զգաց Ասադը փրկարար այդ կանչը, հրավերը դեպի նոր կյանքը: Եվ իրեն տեսավ կրկին կյանքի հետ կապված: Կապված Նիգյարի հետ, իսկ Նիգյարի սրտի թելերով՝ կապված այն մասսաների հետ, որ այս օրերս տեսավ Ասադը:

— Ի՞նչ ես անելու, Ասա՛դ:

— Դո՞ւ ինչ ես անելու:

Նիգյարը լրջացավ. մի փոքր անհանգիստ նայեց Ասադին և ապա կարծես խնայելով նրան՝ ասաց.

— Ինձ շուտով կուղարկեն էստեղ, սովորելու: Կգնամ Երևան. հետո կգամ:

Ասադը կարծես ընկավ անդունդը, ուղղակի պոկվեց: «Ի՞նչ, էլի՞ չի սիրում, էլի՞ բաժանման ճամփան»:

— Նիգյա՛ր, ինձ թողե՛լ ևս, պրծե՛լ:

Նիգյարը բռնեց նրա ձեռքը և ինչ-որ անսպասելի և խորթ բարեկամական ժպիտով թոթովեց.

— Ես իմ գործի հետևից ընկնելով հո չեմ թողնում քեզ: Ասա՛դ, դու էլ կզաս Բաքու, գործ կգտնես, կմնաս ինձ հետ ու... կփոխվես:

Ու ժպտաց:

— Մենք միասին կլինենք: Կմտնես կոմսոմոլ:

— Կրակն էլ անցնես, ջուրն էլ — քեզ հետ եմ, միասին, — տաքացած խոսեց Ասադը և սեղմեց պինդ Նիգյարի ձեռքը:

Առաջի՛ն անգամ կյանքում: Որովհետև երբեք ո՛չ մի թյուրե կնոջ՝ և ընդհանրապես կնոջ՝ ձեռքը չէր սեղմել այդ զգացումով:

Այսինքն՝ ընկերական:

1931 թ.

ՔՈՎԱՆՅԱԿՈՒԹՅՈՒՆ

Մանրապատումներ

Խաղ	5
Ստեղծագործը	6
Սովետական ոճը	6
Մայրը	8
Գարուն	8
Ճանճը	9
Լուսանկար	9
Կինտոն	11
Հակառակորդներ	11
Աշխատանքը	12
Երաժիշտ	13
Սեղանը	14
Էքսպոնատներ	15
Մուրացիկը	16
Օ՛, երեխանե՛ր, երեխանե՛ր...	17
Բնություն	18
Անցյալի հուշեր	18
Աբովյանը	19
Անմիտ հարցեր	20
«Արվեստի օրենսդիրը»	20
Կոշկակարը	21
Ջին	22
Անհանգիստ ժողովական	23
Երախտավոր գայլերը	23
Ֆիզիկոսը	24
Պառավը	25
Մրջյուններ	26
Վաղեմի վալս	26
Քրթիչը	27
Պարտիզանի կոչը	27
Երեխայի ճիւղ	28
Ատամներ	29
Պարտիզանի գնդակը	30
Մաղիկներ...	30
Ռադիոհաղորդում	31
Աշուն	32
Հացը	33
Ջավակներ, մայրեր	35
Լքված շունը	36
Հաշմանդամը	36

Վերջին խոսք	37
Ասպետն իր «Օրդենի»	38
Սանոթս	40
Արջը	41
Արցունք	42
Երկրագունդ	42
Մի բույկ	42
Մի շատ պարզ ճշմարտություն	43
Մեքենաները	43
Գարնան անձրև	43
Ներկայացում	44
Մտքեր կլանքի մասին	45
Նվիրական անուն	45
Մի գեղեցիկ աղջիկ	46
Լեզու	46
Մի մազր որդեկորույս	47
Գրադաբան	48
Մահը ինքը	49
Ապրողը	50
ե՛-ե՛-ե՛ս... ե՛-ե՛-ե՛ս...	50
Երեխան	51
Կատուն	51
Կատակներ	52
Մեծ սիրտը	53
Գոգոլի արձանը	54
Բոբոնը	55
Հերոսամայրը	56
Մեր հերոսները	57
Կոմերիտականը	57
Անասունները	58
Գեղջկուհիները	58
Մահը	59
Վիտյուզան	60
Նախիրը	61
Խաղաղության բրիգադը	62
Պատրանք	63

Երգիծանք

Հովհաննես Սևումյան	65
Միշո	69
Իսահակ Ալիխանյան	73
Համարտ անմահներ և հավերժական մահկանացուներ	75
Ղիպտիսիզմ	96

Միամիտ նորեկի արկածները	100
Մովսիսին	106
Պուանկարե-պատերազմը և զարաքիլիսեցի բիձան	112
Դարձյալ մի «նա»	122
Նոր-նոյան լիակատար տապան	124
Վարժապետ	127
Նոր ուղղագրություն	131
Մերկերիոս աղա	136
Պանիկաշի Աղճոն	151
Մեր ծանոթները	153
Սպեց	156
Հեռագիր	163
Գանգատների արկղը	167
Ղայլանի զրույցներ	169
Չակերտների մեջ	170
Հարաբերականություն	172
Կյանքի ծամածուծություններ	175
Երևան	178
Ջղային բարեկամս	183
Ֆելիետոնիստի արկածները	186
Ժամանակակից վարք սրբոց...	194
Ֆանկով	197
Անգործ ֆելիետոնիստ	200
Քղթատար զնացքներ	202
«նա»	204
Նպխկոպոսի մորուքը	205
«Գրանիտ ընկերություն»	208
Տախտիտ տիպիտիտ	233
Շոֆերն ու հետևակը	237
Պոեմ ազնվության	240
Միլիցիան և իր թշնամիները	243
Կուրորտ	246
Էջը և հեծանիվը	250
Աղճոն էջմիածնում	253
Նոր տեսություն արվեստի	256
Հայը ամենաքեզուրը	258
Խորհրդավոր արկղը	261
Բաղնիքը, կենցաղի ոճը և... Լոկարնոյի ուզին	266
Համառոտ իրավագիտություն	269
«Ճաղրեստիք» շարքից	272
Էպիդեմիա	275
Աղբը և իր հեղինակը	279
Երևանյան սոնետներ	281

«Մրցման եմ հրավիրում»	282
Նոստալգիական դոներ	286
Երկաթյա ֆոնդ	289
«Հայերեն լեզու իմանալը ցանկալի է...»	294
«Քաղզրագիտություն» համառոտ	298
Փոստում	299
Պուդրայի, մայթի, պատշգամբի և հրդեհի գործածությունը	
Երևանում	302
Կամ շներրց, կամ շներին	305
Կոնցերտ	307
Բանգյուզիկն ինքնակիցների մրցակիցները	310
Առանց վերնագրի նվեր գրչի մարդկանց	314
Առաջին կարգի, երկրորդ կարգի, երրորդ կարգի... գերեզմաններ	315
Ամանեղենի մագազին Աբովյանի վրա	318
Պռչ և հակապոչ	323
Մեղ ըլի, աչքերիդ կաշի, Աղճո...	326
Ապրումներ դաշնակահար Եզոն Պետրիի կոնցերտին	328
Հանդեսի մասնակցությունը	332
Զսլփա	335
Աղճոն և իմպերիալիստական դրոհը	338
Ազգերի լիզա—զայլերի լիզա	340
Ամառանոցային հանգիստ	344
Դերանունների հարցը	345
Առաջին անգամ	347
Քաղաքավարություն	351
Փոշու տեքստիլ գործարան	353
Քափանցիկ արարածներ	356
Նավային ցույց	358
Կրկնակոշիկներ և կրկնանդամներ	360
Մամուլ	364
Ինչ գործ ունես այստեղ	368
Բյուրոկրատիզմ	371
Բենճը ճանաչում է	375
Անգլիական հարսանիք	377
Ամսվա օրագիր	380
Ուտեու հարցը	383
Կատաղած շները և ազգերի լիզան	386
Ո՞վ ինչի համար է	388
«Յոթը շափիթ, մեկ կտրիթ»	391
Ժամանակ	394
Դիչ քիթասի	396
Կենցաղի կանոններ	402

Մուսուլիներ	405
Արևելյան մեթոդով	409
Կենցաղ	414
Տեղանուններ	415
Անգլիան շահեր ունի	418
Մասնավորին ուտողներ	422
Գուրան	426
Հոգեբանական շենքեր	429
Կեղտապաշտություն	432
«Արտասանության» տառապանքները	437
Հեռախոսային մոտիվներ	439
Ամերիկյան «Խաղաղություն»	443
Մղձավանջ	445
Վիպակներ	
Ռաշիդ	449
Նիգյար	543

Գերենիկ Գեմիրճյան Երկեր երկու գրքով, գիրք երկրորդ
 Дереник Демирчян Сочинения в двух книгах *Книга вторая* (На армянском языке) Издательство „Советакан грох“, ул. Теряна, 91. Ереван 1977 Կազմող՝ Խ. Ս. ՊՈՂՈՍՅԱՆ, Խմբագիր՝ Մ. Ս. Թերզյան Նկարիչ՝ Հ. Կ. Լևոնյանյան Գեղ. Խմբագիր՝ Ան. Վ. Իսախանյան Տեխ. Խմբագիր՝ Ս. Մ. Իրանյան Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Ս. Հովսեփյան Հանձնարված է շարվածքի 18 XI 1976 թ.: Ստորագրված է տպագրության. 18/III 1977 թ.: Թուղթի տպագրական № 1, 60 × 84^{1/2}, տպադր. 20,5 մամ. — 38,13 պայմ. մամ., հրատ. 31,2 մամ.: Պատվեր 1784 Տպաքանակ 50 000 Գինը 2ս. 90կ. «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան — 9, Տերյան 91: ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի ատևարի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան — 9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Меганарта Госкомитета Совета Министров Армянской ССР по делам издательства, полиграфии и книжной торговли, Ереван-9, Теряна, 91.